

ԳՐԻԳՈՐ ՎԱՆՑՅԱՆ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

I



Նվիրվում է

**Վանցյանների գերդաստանի
արժանավոր ներկայացուցիչներ,**

Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ՝

Գրիգոր Պարույրի Վանցյանի

**(ծնվ. 25.12.1922թ., գ. Բեժանո,
մասնագիտությամբ՝ մեխանիկ)**

և

Լորենց Պարույրի Վանցյանի

**(ծնվ. 28.04.1924թ., գ. Բեժանո,
մասնագիտությամբ՝ պանրագործ,**

ԽՍՀՄ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր,

**ԽՍՀՄ Ժողովրդական ցուցահանդեսի
ոսկե և արծաթե բազմակի մեդալակիր)**

ՀՈԲԵԼՅԱՆՆԵՐԻՆ

**Посвящается
ЮБИЛЕЯМ**

**Достойных представителей семьи Ванцянов,
Участников Великой отечественной войны**

Григора Паруйровича Ванцяна

(родился 25.12.1922г., с.Бежано, механик по профессии)

и

Лоренца Паруйровича Ванцяна

(родился 28.04.1924г., с. Бежано, сыродел по профессии,

**орденоносец Трудового Красного Знамени СССР,
золотой и серебрянный многократный медалист**

Выставки достижений народного хозяйства СССР)

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
ИНСТИТУТ ИСТОРИИ

ФОНД “ПОДДЕРЖКА ДЖАВАХКУ”

ЛИТЕРАТУРНЫЙ ФОНД
“БРАТЬЯ АРМЕН И ТАТУЛ ГАРСЛЯНЫ”

ГРИГОР ВАНЦЯН

СОБРАНИЕ СОЧИНЕНИЙ
В ДВУХ ТОМАХ

I
ТОМ



ЕРЕВАН 2015

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

«ՋԱՎԱԽՔԻՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

**«ԱՐՄԵՆ ԵՎ ԹԱԹՈՒԼ ՂԱՐՍԼՅԱՆ ԵՂԱՅՐՆԵՐ»
ԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ**

ԳՐԻԳՈՐ ՎԱՆՅՅԱՆ

**ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ
ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐՈՎ**

I

ՀԱՏՈՐ



ԵՐԵՎԱՆ 2015

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Աշոտ Մելքոնյան
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Սեյրան Վանցյան

Վահագն Սարգսյան
Բանասիրական գիտությունների թեկնածու

Վահե Սարգսյան
Պատմական գիտությունների թեկնածու

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Ашот Мелконян
Академик НАН РА

Сейран Ванцян

Ваагн Саркисян
Кандидат филологических наук

Ваге Саркисян
Кандидат исторических наук

Գիրքը հրատարակվում է
«Արմեն և Թաթուլ Ղարսյան եղբայրներ»
գրական հիմնադրամի
(բարերար՝ *Արմեն Ղարսյան*)
և
«Ջավախքին աջակցություն» հիմնադրամի
(բարերար՝ *Սերգեյ Վանցյան*)
նյութական միջոցներով

Книга издается финансовыми средствами
Литературного фонда
“Братья Армен и Татул Гарсляны”
(благодетель Армен Гарслян)
и
Фонда “Поддержка Джавахку”
(благодетель Сергей Ванцян)

ՀՏԳ 811.19
ԳՄԴ 81.2Հ
Վ 228

**Գիրքը հրատարակության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ
պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը**

Книга издается по рекомендации научного совета
Института истории НАН РА

Ժողովածուն կազմել և հրատարակության է պատրաստել
Վահե Սարգսյանը

Сборник составил и подготовил к изданию
Ваге Саркисян

Վանցյան Գրիգոր

Վ 228 Երկերի ժողովածու երկու հատորով: Հատոր I/ Գրիգոր Վանցյան:
Կազմ. Վ. Սարգսյան.- Եր.: «Գրական հայրենիք» ՓԲԸ («Հայաստան»
հրատ.), 2015, 728 էջ:

Григор Ванцян: Собрание сочинений в двух томах , том1:
/Составитель: В.Саркисян Ер.: ЗАО “Гракан айренник” (изд.
“Айастан”), 2015, 728 стр:

Հատորում ամփոփված են անվանի լեզվաբան, հայագետ **Գրիգոր Վանցյանի (1870-1908 թթ.)** տարբեր տարիներին հրատարակած գիտական և հրապարակա-
խոսական բնույթի հոդվածները, գրքերը, նամակները, ինչպես նաև հեղինակի
առաջին գիրքը՝ «Հայ հեղինակները» (Թիֆլիս, 1910, 4-րդ հրատարակություն): Հե-
ղինակի գործերի առաջին համահավաք ժողովածուն է: Նախատեսված է պատ-
մաբան-ազգագրագետների, լեզվաբանների, ինչպես նաև ընթերցասեր լայն շր-
ջանների համար:

В томе обобщены научные и публистические статьи, книги, письма
известного лингвиста, армяноведа Григора Ванцяна, изданные в раз-
ные годы, а также первая книга автора “Армянские авторы” (Тифлис,
1910, IV издание). Первое целостное собрание трудов автора предна-
значено для историков-этнографов, лингвистов, а также широких кру-
гов любителей чтения.

ՀՏԳ 811.19
ԳՄԴ 81.2Հ

ISBN 978-5-540-02371-9

© «Ջավախքին աջակցություն» հիմնադրամ,
«Արմեն և Թաթուլ Ղարսյան եղբայրներ» գրական հիմնադրամ, 2015
©Фонд “Поддержка Джавахку”, литературный фонд
“Братья Армен и Татул Гарсляны” 2015
© Վահե Սարգսյան, կազմ., Ваге Саркисян, составитель, 2015

ԳՐԻԳՈՐ ՎԱՆՅՅԱՆ. ԿՅԱՆՔՆ ՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՂԻՆ*

Ընդամենը 38 տարի է ապրել սույն երկհատորյակում գետեղված աշխատությունների հեղինակը: Խոսքը լեզվաբան, գրաքննադատ, հայերենի ու հայոց պատմության նվիրյալ ուսուցիչ Գրիգոր Վանցյանի մասին է: Ուսուցիչ, որն իր կարճատև կյանքի ընթացքում հասցրեց հրատարակել լեզվաբանական, գրականագիտական, պատմագիտական ու դասագրքային մեծարժեք գործեր, ժամանակի մամուլի էջերում գետեղել գրախոսականներ, գիտական հրապարակախոսական և այլ բնույթի հոդվածներ ու ակնարկներ:

Հիմնականում երկու հանգամանք է մեզ ստիպել կյանքի կոչել Գ. Վանցյանի ուսումնասիրությունները մեկ ամբողջական գրքով հրատարակելու վաղուց հասունացած մտահղացումը: Առաջինը՝ նորօրյա սերունդը կարող է առավել հեշտությամբ ծանոթանալ իրենից հարյուր տարի առաջ ստեղծված լեզվաբանական և գրականագիտական նվաճումների հետ, ուսումնասիրել տվյալ ժամանակի հայագիտական ընկալումներն ու տվյալ ոլորտի գիտական զարգացվածության աստիճանը: Երկրորդը՝ Գ. Վանցյանի աշխատությունների հայագիտական արժեքն այսօր էլ՝ շուրջ մեկ դար անց, բնավ չի խամբել. նշյալ գործերն արդիական են և՛ հայագիտական, և՛ լեզվաբանական, և՛ հայրենաճանաչողական կողմերից քննելիս:

* Տե՛ս նաև Վ.Սարգսյան, Գրիգոր Վանցյան. կյանքն ու ստեղծագործական ուղին, Պատմաբանասիրական հանդես, N 1 (198), 2015, էջ164-182:

Գրիգոր Խաչատուրի Վանցյանը ծնվել է 1870 թ. Ախալքալաքի գավառի Բեժանո գյուղում¹:

Մանուկ հասակում մի կարճ շրջան սովորել է Սբ. Մինաս եկեղեցուն կից գործող ծխական դպրոցում: Նրա ծնողները, ապրելով նյութական չափազանց սուղ պայմաններում, ուսումնառության հարցում գրեթե ոչնչով չեն կարողացել օժանդակել իրենց որդուն, և վերջինիս մանուկ հասակից իր հովանու տակ է վերցրել քեռին՝ ուսումը բարձր գնահատող գյուղական ուսուցիչ՝ Գևորգ Խուդավերդյանը (մահացել է 1892 թ.), Գրիգորի սիրելի Հոպալիկը (փաղաքշաբար այդպես էր նրան դիմում Գրիգորը): Վերջինիս ջանքերով էլ Գ. Վանցյանը 1885թ. աշնանն ընդունվել է Ներսիսյան դպրոցի 2-րդ դասարան (այնտեղ սովորել է 1885–1890 թթ.): Գ. Վանցյանի ներսիսյանական և հետագա տարիների նվիրյալ ընկերներից մեկը՝ ալեքսանդրապոլցի Սիմե-

1. Գ. Վանցյանի կենսագրական որոշ տեղեկություններ զետեղված են «Բագմավեպ» ամսագրում (1910, թիվ 1, հունվար, էջ 35–38): Հ. Զ. Չրաքյանը, ընդառաջելով իր բարեկամ, Ջավախքում տասնամյակներ ապրած և ստեղծագործած վաստակաշատ մտավորական Ջալալ Տեր-Գրիգորյանի (Մալյումյան) խնդրանքին, հենց վերջինիս ուղարկած նյութերի հիման վրա էլ «Բագմավեպում» հրապարակում է Գ. Վանցյանի կենսագրականը՝ լուսանկարով համդերձ: Արսեն եպիսկոպոս Դլտճյանը (ավագանի անունով Սիմեոն), որպես Գ. Վանցյանի ներսիսյանական տարիների մտերիմ ընկեր, Հովհ. Թումանյանին նվիրված հուշագրության մեջ իր պարտքն է համարել անդրադառնալ նաև Թումանյանի՝ այդ շրջանի (1880-ական թվազյանների վերջեր) չորս ամենամոտ ընկերների՝ Արամ Առաքելյանի, Դաթիկո Շահլամյանի, իր և Գրիգոր Վանցյանի կենսագրականներին (Թումանյանը ժամանակակիցների հուշերում (այսուհետև՝ ԹԺՀ), Երևան, 1969, էջ 268–284): Գ. Վանցյանի համառոտ կենսագրականին են անդրադարձել նաև գրականագետ Արամ Ինճիկյանը (Ա. Ինճիկյան, Հովհաննես Թումանյան. Կյանքի և ստեղծագործության պատմությունը (1869–1899), Երևան, 1969, էջ 224–225), բ. գ. թ. Վ. Մաղալյանը (Վ. Ս. Մաղալյան, Հայ տեղական մամուլը և գրատպությունը Վրաստանում (1885–1990), Երևան, 2012, էջ 83), Գ. Վանցյանի տոհմի շառավիղ, «Ջավախք» հանրագիտարանի հեղինակ և գլխավոր խմբագիր, Ջավախքի ինտերնետային պորտալի (www.javakhk.am) հիմնադիր Սերգեյ Խուդավերդյանը [*«Ջավախք»*, 2 (8), մարտ, 1995: Կենսագրական հոդվածը հրապարակվել է Գ. Վանցյանի հայրենի Բեժանո գյուղի դպրոցը վերջինիս անունով անվանակոչելու առթիվ Ս. Խուդավերդյանի ունեցած ելույթի հիման վրա]:

ոն (Արսեն) Գլտճյանն իր հուշերում պատմում է. «Վանցյանի գյուղացի ծնողքն անկարող էին նույնիսկ ամենաչնչին միջոց հայթաթել իրենց որդու ապրուստի համար, ուստի և քեռին, իր խիստ աղքատ միջոցներից ամսական ուղարկում էր երբեմն 3, երբեմն 4 ռուբլի: Ահա այդ դրամով Վանցյանը ապրում էր, դպրոց հաճախում և իր աշխատասիրությամբ լավագույն սովորողների շարքը մտնում: ... Նյութական գոհողությունների գնով (իր վաստակածի 25 տոկոսը, ինչպես պատմում էր Վանցյանը) նա ամեն ինչ անում էր, միայն թե կարողանա օգնել քրոջ որդուն, նրան մարդ դարձնել»²: Ս. Գլտճյանի վկայությամբ, Գ. Վանցյանը, իրենց զանգեզուրցի ընկեր Արամ Առաքելյանն ու ևս մեկ ընկեր Ներսիսյան դպրոցում ուսանելու տարիներին ապրել են Թիֆլիսի Սերեբրեննայա փողոցում գտնվող մի բնակարանում՝ շուրջ 3 տարի գտնվելով նյութական ծանր պայմաններում, մինչև որ դպրոցի հոգաբարձությունը Ա. Առաքելյանին նշանակել է թոշակ, իսկ իրեն ու Գ. Վանցյանին ընդունել դպրոցի գիշերօթիկ աշակերտների շարքը³: Մինչ այդ, երկու ընկերները՝ Ս. Գլտճյանն ու Գ. Վանցյանը, շաբաթ և կիրակի օրերին երգել են Թիֆլիսի Մուղնու Սբ. Գևորգ եկեղեցում ու դրա դիմաց ստացել շաբաթական վարձավճար:

Ներսիսյան դպրոցում սովորելու տարիներին Գ. Վանցյանը մտերմանում է ապագա բանաստեղծ Հովհաննես Թումանյանի հետ⁴:

Երբ վերջինս նյութական ծանր դրության պատճառով ուսումը կիսատ թողած (Ներսիսյան դպրոցում սովորել է 1883–1887 թթ.) աշխատում էր Վրաստանի ու Իմերեթիայի թեմական կոնսիստորիայում, եկեղեցում երգելու բերումով ծանոթանում և մտերմանում է Ս. Գլտճյանի հետ: Այնուհետև Հովհ. Թումանյանը վերջինիս ծանոթացնում է իր ներսիսյանական դասընկեր, Թիֆլիս վերաբնակված ախալցխացու ընտանիքից սերված Դաթիկո Շահլամյանի հետ: Շուտով այս

2. ԹԺՀ, էջ 275:

3. Նույն տեղում, էջ 276:

4. Գ. Վանցյանի և Հովհ. Թումանյանի մտերմության, «հնգյակի» ձևավորման ու ընկերների միջև ձևավորված կապերի մասին հիմնական տեղեկությունները քաղել ենք Միմեոն (Արսեն) Գլտճյանի վերը նշված հուշագրությունից, մի դրվագ էլ վերցրել ենք խմբակի մեկ այլ անդամի՝ Արամ Առաքելյանի պատմածից (ԹԺՀ, էջ 268–290):

«եռյակին» միանում են ևս երկու ներսիսյանականցի՝ Արամ Առաքելյանն ու Գրիգոր Վանցյանը: Այսպիսով՝ 1888 թ. գարնանից (1887–1888 ուսումնական տարվա կեսեր)⁵ միմյանց գրեթե հասակակից հինգ հայ ներսիսյանականներ (որոնցից մեկը՝ նախկին) մտերմանալով, սկսում են հաճախակի հավաքվել Թիֆլիսի Նորաշենի փողոցում գտնվող Դ. Շահլամյանի սենյակում, որը գտնվում էր Հովհ. Թումանյանի ապրած բնակարանի վերնահարկում: Փաստորեն, սկզբից «եռյակի», կարճ ժամանակ անց նաև «հնգյակի» կողմից Դ. Շահլամյանի սենյակում ձևավորված գրական-գեղարվեստական այս խմբակը (տե՛ս այդ մասին ստորև) հետագայում պետք է հիմք դառնար շուրջ մեկ տասնամյակ անց Հովհ. Թումանյանի տանը ձևավորվելիք «Վերնատան» համար⁶: Ավելին, Ս. Գլտճյանն այն անվանում է Հովհ. Թումանյանի՝ ցարդ անծանոթ ու անհայտ մնացած առաջին «Վերնատունը», որտեղ և կոփվել է ապագա արձակագրի, գրական, ազգային ու հասարակական գործչի, մեծն լոռեցու բանաստեղծական տաղանդը: 18–19 տարեկան երիտասարդներից կազմված նորակազմ «հնգյակի» երեկոները Դ. Շահլամյանի սենյակում անցնում էին բուռն քննարկումների մթնոլորտում: Հովհ. Թումանյանը կարդում էր իր նոր գրած բանաստեղծությունները, որոնք արժանանում էին ներկայների հիացմունքին կամ դիտողություններին. ապագա բանաստեղծը դարձել էր «հնգյակի» առանցքը, և այդ ճանապարհով են հղկվել նրա սիրված մի շարք բանաստեղծություններ ու գործեր: Նորաստեղծ խմբակի անդամ Ա. Առաքելյանն ահա թե ինչպես է նկարագրում իրենց առաջին հանդիպումը. «Նշանակված օրը հավաքվեցինք Շահլամյանի մոտ: Այնտեղ էր և Հովհաննես Թումանյանը: Մեր խոսակցությունը Թումանյանի գրվածքների շուրջն է պտտվում: Վերջում առաջարկեցինք հրապարակ բերել իր գրվածքները և հնարավորություն տալ մեզ ծանոթանալու: Թումանյանը համեստո-

5. **Հովհաննես Թումանյանի**, կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1869–1908), Երևան, 2010, էջ 42:

6. **Ա. Բաղդասարյան**. Վերնատուն՝ «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», 1990, N5, սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 24:

րեն հրաժարվում էր, պատճառաբանելով, թե մի առանձին արժեքավոր բան չեն ներկայացնում այդ գրվածքները: Մեր համառությանն ու պնդումներին նա ստիպված եղավ զիջել: Իսկույն նեթ գնաց և իր բնակարանից, որ նույն տան միջին հարկումն էր գտնվում, բերեց գրելու թղթի թերթերից կարած մի մեծ տետր, մատիտն էլ թելով վրան կապած: Տետրը ձեռքեծեռք անցավ, և թերթել սկսեցինք ու կարդալ մեկը մյուսի հետևից «Շունն ու Կատուն», «Արև ու Լուսին», «Ամառվա գիշերը գյուղում», «Գութանի երգը», «Աղոթք», «Հին օրհնություն», «Մարո», «Ալեք», «Նահատակ», «Լոռեցի Սաքուն» և մեկը մյուսից գեղեցիկ ու գողտրիկ ոտանավորները»⁷: Այնուհետև, 1889 թ. խմբակը որոշում է հրատարակել 20-ամյա Հովհ. Թումանյանի բանաստեղծությունների առաջին ժողովածուն և ձեռնամուխ է լինում դրա կազմմանը⁸: Նրանց հետ չի պահում անգամ նյութական միջոցների խալառ բացակայությունը. վերջիններս որոշում են մեկնել գավառներ (Ա. Առաքելյանը՝ Ախալցխա, Գ. Վանցյանը՝ Ախալքալաք, Ս. Գլտճյանը՝ Շիրակ, իսկ Հովհ. Թումանյանն ու Դ. Շահլամյանը մնում են Թիֆլիսում) և կազմակերպել հրատարակվելիք գրքի բաժանորդագրությունը: Ահա այս ճանապարհով է լույս աշխարհ գալիս Հովհ. Թումանյանի առաջին գիրքը՝ Սի քանի տարի անց՝ 1893 թ. ապրիլի 8-ին, Գ. Վանցյանը Հովհ. Թումանյանին Ախալքալաքից գրած նամակով, խոսելով բանաստեղծի առաջին շրջանի բանաստեղծություններից մեկի՝ «Կանչի» մասին, իր հիացմունքն է հայտնում հետևյալ խոսքերով. ««Կանչը» ամեն տեղ ֆուրոր է անում. «Это действительно высокохудожественное произведение». Եթե, Հով-

7. **Ա. Առաքելյան**, Ընկերոջս հիշատակին.– ԹԺՀ, էջ 288: Այս մասին տես նաև «Աղոթք» բանաստեղծության (գրվել է 1887 թ. փետրվարին) ծանոթագրությունը. **Հովհ. Թումանյան**. Երկերի լիակատար ժողովածու (այսուհետև՝ ԵԼԺ), հ. 1, Երևան, 1988, էջ 546–547:

8. **Ա. Ինձիկյան**. նշվ. աշխ., էջ 230:

9. Տես **Հ. Թումանյան**. Բանաստեղծություններ, Մոսկվա, 1890, 98 էջ: Հովհ. Թումանյանի աշխատանքների տպագրման գործում իր ընկերների նվիրվածության մասին է պատմում «հնգյակի» անդամ Արամ Առաքելյանը (ԹԺՀ, էջ 285–290):

հաննես ջան, ուրիշ ոչ մի բան չգրեիր, այդ ստեղծագործությունդ բավական էր քեզ բանաստեղծի կոչմանն արժանացնելու: Ունիս, այո՛, ուրիշ գեղեցիկ բաներ, ունիս և շատ թույլ բաներ, բայց «Կանչը», դա գլուխգործոց է, դա մի գոհար է»¹⁰: 1901 թ., երբ Հովհ. Թումանյանը հանգստանում էր Ախալցխայի Ուրավել առողջարանում, նամակներից մեկում նշում է, որ այնտեղ ոչ միայն ճանաչում են իր բանաստեղծությունները, այլև շատերն անգիր գիտեն իր «Եթե կաս, աստված» («Կանչ» բանաստեղծության առաջին տողն է) ոտանավորը¹¹: Հավելենք նաև, որ ընկերները մեծ վիշտ ապրեցին, երբ Գ. Շահլամյանը, գտնվելով հոգեկան ծանր ապրումների մեջ, 1894 թ. ինքնասպանությամբ հեռացավ կյանքից: Հետագայում՝ 1908 թ., նույնը պետք է տեղի ունենար նաև «հնգյակի» մեկ այլ անդամի՝ Գ. Վանցյանի հետ:

Գ. Վանցյանի և Հովհ. Թումանյանի պատանեկան տարիների հարաբերությունները հետագայում ծնունդ տվեցին բանաստեղծի մեկ այլ անմահ ստեղծագործության՝ «Փարվանա» բալլադին: Ջավախքում Փարվանա լճի և կրակի մեջ այրվող քիթռների մասին տարածված գրույցները Հովհ. Թումանյանն առաջին անգամ լսել է Գ. Վանցյանից: Այս մասին խոստովանում է ինքը՝ բանաստեղծը, «Իմ մի քանի գրվածքների բացատրությունը» վերնագրի «Փարվանա, Վանցյան և Փշրանքներ թե Ջավախքի բուրմունք» ինքնակենսագրական գրառումների մեջ (Հովհ. Թումանյանն այստեղ հիշատակում է այն սկզբնաղբյուրները, որոնց շնորհիվ մտահղացել է գրելու իր այս կամ այն գործը)¹²: Իսկ Հովհ. Թումանյանի ժառանգների ընտանեկան արխիվում պահվող N 8 (3) ծոցատետրում բանաստեղծը «Փարվանային» վերաբերող այսպիսի գրառում ունի. «(Գրիգորն է լսել

10. **Հովհ. Թումանյան**. Ուսումնասիրություններ և հրապարակումներ, հ. 4, Երևան, 1985, էջ 313, հմմտ.՝ Հովհ. Թումանյան. ԵԼԺ, հ. 1, էջ 566: 1891 թ. փետրվարին գրված այս բանաստեղծությունը ժամանակի գրաքննությունն արգելել է տպագրելու «Մուրճ» ամսագրում, որի պատճառով այն առաջին անգամ տպագրվել է բանաստեղծի հիշյալ ժողովածուում:

11. **Հովհ. Թումանյան**. ԵԼԺ, հ. 9, Երևան, 1997, էջ 251–252:

12. **Է. Ջրբաշյան**. Հ. Թումանյանի ինքնակենսագրական գրառումները, ՊԲՀ, 1966, N 1, էջ 184, 186:

Ախալքալաք): Փարվանա (կրակի թիթեռ) թագավորը մի աղջիկ է ունենում, ասում է՝ ով որ կրակ բերի, նրան կտամ: Դա գալիս է, կրակի շուրջը պտտվում, որ կրակ տանի և միշտ ընկնում է մեջը, այրվում»¹³: «Փարվանա» լեգենդի մշակման նպատակով Հովհ. Թումանյանն առաջին անգամ Գանձա է այցելել 1901 թ. օգոստոսի 22–25-ը, օգոստոսի 23-ին այցելել է Գանձայից ոչ հեռու գտնվող Փարվանա լիճ¹⁴:

Այցի մասին տեղեկություններ իրենց հուշերում հանգամանորեն ներկայացնում են Վ. Տերյանի ավագ եղբայր Ջավախեցին, ինչպես նաև Ջավախքում հայտնի մտավորականներ Ջալալ Տեր-Գրիգորյանը (Սալլույանը) և Վարդան Շահպարոնյանը¹⁵: Ջավախեցին, որը Գանձա և Փարվանա այցի ողջ ընթացքում ուղեկցել է Հովհ. Թումանյանին, իր հուշերում մանրամասն նկարագրելով բանաստեղծի՝ Ջավախքի բնության տեսարաններից ոգեշնչված ապրումները, բարձր տրամադրությունն ու արտաբերած խոսքերը, ավելացնում է, որ «Փարվանայի» նախերգանքը բանաստեղծը գրել է իրենց իսկ տանը՝ երեկոյան ընթրիքի սեղանի շուրջ բոլորած գանձացիների առջև, Փարվանա լճի ափից վերադառնալուց անմիջապես հետո¹⁶:

Գ. Վանցյանի և Հովհ. Թումանյանի միջև մամակագրական կապը շարունակվում է հետագայում, երբ Գ. Վանցյանը 1890-ական թվականներին արդեն ուսուցիչ էր, այնուհետև ուսանող: Նամակների բովանդակությունը հիմնականում վերաբերում է երկու մտերիմ ընկեր-

13. **Հովհ. Թումանյան.** Ուսումնասիրություններ և հրապարակումներ, հ. 5, Երևան, 1998, էջ 253, հմմտ.՝ հ. 2, Երևան, 1969, էջ 420, 459, հմմտ.՝ Հովհ. Թումանյան. ԵԼԺ, հ. 2, Երևան, 1990, էջ 545, 558:

14. **Հովհ. Թումանյան.** ԵԼԺ, հ. 9, էջ 274–275, 277, 601: 1901 թ. օգոստոսի 21-ով թվագրված և Ախալքալաքից Օլգա Թումանյանին ուղղված մամակում Հովհ. Թումանյանը նշում է. «Նամակս հենց վերջացրի, ուզեցի փակել, մի գյուղից մարդիկ եկան հրավիրելու իրենց գյուղը. չկարողացա ոչ մի կերպ մերժել. վաղը գնալու եմք» (նույն տեղում, էջ 275): Իր մեկ այլ մամակում բանաստեղծը նշում է, որ Գանձայում մնացել է 3 օր (նույն տեղում, էջ 277):

15. **Ջ. Տեր-Գրիգորյան,** Ախալքալաքյան հանդիպումներ.– ԹԺՀ, էջ 400–415, **Վ. Շահպարոնյան.** Ամոռանալի օրեր.– ԹԺՀ, էջ 416–422, **Ջավախեցի.** Փարվանայի ափին.– ԹԺՀ, էջ 423 – 436:

16. **Ջավախեցի,** նշվ. աշխ., էջ 423–436:

ների միջև տեղի ունեցող գրքավոխասանակությանը, Հովհ. Թումանյանի անդրանիկ ժողովածուների տպագրության և բաժանորդագրության հարցերին¹⁷, Գ. Վանցյանի՝ գավառներից արված թղթակցություններին, հետաքրքրվել են ինչպես իրենց, այնպես էլ մյուս ընկերների վիճակով: Գ. Վանցյանն իր մամակներում հաճախակի անդրադարձել է նաև Հովհ. Թումանյանի ստեղծագործությունների քննության հարցին, երբեմն ահա նման հորդորով դիմել բանաստեղծին. «... Չմոռանաս նախկին ուղղությունը, չմոռանաս այն ժողովուրդը, որ քեզ ծնել է. երգի՛ր ժողովրդի ցավն ու վիշտը, հոգսն ու թշվառությունը: Սաքոներիդ ձեռից բաց չթողնես»¹⁸: Մեկ այլ նամակում Թումանյանի ստեղծագործությունները բնութագրում է որպես «ժողովրդական ոգու արտահայտություն՝ արվեստով արտաբերված»¹⁹: Հայրենիքում չորս տարի ուսուցչությամբ զբաղվելուց և իր ուսումնասիրությունների համար դաշտային նյութեր հավաքելուց հետո Գ. Վանցյանը մեկնում է Մոսկվա, ապա՝ Ս. Պետերբուրգ, որտեղից էլ՝ Ա. Արասխանյանի միջնորդությամբ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի հոգաբարձությունն իր որոշմամբ ու միջոցներով նրան ուղարկում է Գերմանիա, որտեղ պետք է սովորեր մանկավարժություն²⁰: 1895–1899 թթ. Գ. Վանցյանը սովորում է Բեռլինի համալսարանում, որը, չնայած ուսումնառության հաջող ընթացքին, ցավոք, չի կարողանում ավարտել, քանի որ Ներսիսյան դպրոցի հոգաբարձությունը չի ցանկանում ևս մեկ տարով երկարացնել Գ. Վանցյանի ուսման շրջանը, որպեսզի դրանով վերջինս կարողանար գրել իր դիսերտացիան ու ներկայանար քննության²¹:

Բեռլինից ևս շարունակվում է Գ. Վանցյանի նամակագրությունը

17. Նամակներից մեկը՝ թվագրված 1892 թ. փետրվարի 18-ով, վերաբերում է Թումանյանի անդրանիկ ժողովածուի երկրորդ հատորի տպագրմանը, որի առթիվ Գ. Վանցյանը մասնավորապես գրում է. «Գրքիդ II հատորի այդպիսի շուտափույթ տպագրության հանձնելը ինձ զարմացնում է, հույս ունի՞ս, որ ծախքդ հանես, կամ առաջին գրքիդ ծախքը հանեցի՞ր» (*Ա. Բնճիկյան*, նշվ. աշխ., էջ 319–320):

18. Նույն տեղում, էջ 249:

19. Նույն տեղում, էջ 250:

20. «Բազմավեպ», 1910, թիվ 1, հունվար, էջ 36:

21. ԹԺՀ, էջ 276:

Թումանյանի հետ: Հատկապես հետաքրքրական է 1895 թ. դեկտեմբերի 18-ին նրա գրած մամակը, որտեղ պատմելով Գերմանիայում իր ուսանողական կյանքի, գերմանացիների կենցաղի ու սովորույթների մասին, մասնավորապես գրում է. «Չգիտեմ, քեզ ի՞նչ է պատահել. քնարդ լռեցրել ես: «Հորիզոն» մի՞թե այլևս չպիտի հրատարակեք: – Բաց արա քնարիդ ձայնը լսենք և ուրախանանք: Գեթ մամակ գրի՛ր, երկա՛ր, մանրամասն: Թիֆլիսից չենք ստանում համարյա ո՛չ լրագիր և ո՛չ մամակ. ուստի երևակայիր, որ քու մամակը եթե բազմաբովանդակ լինի ամեն տեսակ մեր ներքին և արտաքին կյանքին վերաբերող լուրերով, Բեռլինի ամբողջ հայ ուսանողության շնորհակալությանը պիտի արժանանաս»²²: Գ. Վանցյանի և Հովհ. Թումանյանի միմյանց ուղղված մամակներից մի քանիսը հրապարակվել են «Թումանյան. Ուսումնասիրություններ և հրապարակումներ» նյութերի ժողովածուների հատորներում: Յավոք, որոշ մամակներ չեն պահպանվել, իսկ մնացած մասը գտնվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, Հովհ. Թումանյանի ֆոնդում²³:

Ինչպես նշեցինք, Գ. Վանցյանը Ներսիսյան դպրոցում ուսումնառությունից հետո ուսուցչությամբ է զբաղվել հայրենի Ջավախքում՝ Ախալքալաքում՝ միաժամանակ աշխատակցելով Թիֆլիսում լույս տեսնող «Մուրճ» ամսագրին²⁴: Դեռևս ուսանելու տարիներին նա մեծ հետաքրքրություն է ցուցաբերել լեզուների ազգակցության, առանձին ժողովուրդների ծագումնաբանական խնդիրների նկատմամբ, կատարել ուսումնասիրություններ բոշաների շրջանում և երկու մասով հրատարակել է «Հայ բոշաներ» աշխատությունը²⁵, որը հանդիսացել է նրա առավել ծավալուն աշխատանքի մի մասը. «... Մեր աշխատա-

22. **Հովհաննես Թումանյանի** կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1869–1908), էջ 257:

23. Գ. Վանցյանի և Հովհ. Թումանյանի՝ մամակագրության մասին մանրամասն տեղեկությունները տես Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1869–1908), էջ 104, 105, 117, 120, 152, 153–154, 168–169, 171–172, 179, 180, 182, 185, 186–187, 188, 192, 196, 201, 208–209, 257:

24. Գ. Վանցյանի՝ «Մուրճ» ամսագրին աշխատակցելու մասին հիշատակությունը, տես «Մուրճ», 1892, թիվ 9, էջ 1382, 1894, թիվ 10, էջ 1520 և այլն:

25. «Մուրճ», 1892, թիվ 7–8, 9:

կից պ. Գ. Վանցյանը գրում է մեզ՝ թե այդ հոդվածը հանված է իր մի ավելի ընդարձակ աշխատասիրությունից...»²⁶: Հետագայում «Մուրճ» ամսագրում տպագրված այս աշխատությունը թարգմանվում է ռուսերեն և ընդգրկվում «Կովկասի տեղանքի և ցեղերի նկարագրության նյութերի» բազմահատոր ժողովածուի մեջ²⁷: Ռուսերեն այս տարբերակն էլ իր հերթին թարգմանվել և տպագրվել է Փարիզում լույս տեսնող «Բանասեր» հանդեսում²⁸: Գ. Վանցյանի այս աշխատանքի առթիվ կենսագիր Հ. Զ. Չրաքյանը գրում է. «Կարելի է ըսել թե նա Ախալքալաքի և շրջակա գյուղերուն մեջ ցրված ամեն մեկ Հայ-Բոշա ընտանիքի մեջ մտած է, ուսումնասիրած է անոնց նիստ ու կացը, կենցաղը, սովորությունները, ընտանեկան կյանքը և գլխավորապես Բոշաներու լեզուն»²⁹: Շուրջ երկու տարի անց՝ 1894 թ., Գ. Վանցյանը հրապարակում է բոշաների մասին իր անտիպ աշխատության մի նոր հատված «Պատմական ակնարկ բոշաների անցյալից» խորագրով³⁰, ուր հեղինակն անդրադառնում է այդ ժողովրդի անվան, ծագումնաբանական, Հայաստան մուտքի և զբաղեցրած բնակավայրերի, նաև քրիստոնեացման խնդիրներին: Չնայած «Մուրճ» ամսագիրը, ինչպես և վերջինիս անվան հիշատակումն արգելված էր Օսմանյան Թուրքիայի տարածքում և այնտեղ լույս տեսնող մամուլում, այդուհանդերձ, Գ. Վանցյանի սույն հոդվածը նույն ժամանակ ամբողջապես արտատպվում է Կ. Պոլսի «Հայրենիք» օրաթերթում³¹: Բեռլինում ուսանելու ժամանակ՝ 1897 թ., դարձյալ «Մուրճ» ամսագրում տպագրում է հայ բոշաներին նվիրված ևս մեկ աշխատանք³², որտեղ գնչու-բոշաների հոգեբանական, սովորութային գծերը քննելուց զատ, անդրադառնում է նաև վերջիններիս մտավոր ունակությունն-

26. «Մուրճ», 1892, թիվ 9, էջ 1382:

27. Г. Ванциан, Армянские цыгане.— Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. 29, отд. 1. Тифлис, 1901, с. 45–70.

28. Հայ գնչուներ (Գ. Վանցյանի), ռուս. թարգմ.՝ Մ. Մարենճյան. «Բանասեր», հ. 9, N11, Փարիզ, 1907, էջ 34–52:

29. «Բազմավեպ», թիվ 1, հունվար, 1910, էջ 35:

30. «Մուրճ», 1894, թիվ 7–8, էջ 1066–1088:

31. «Մուրճ», 1894, թիվ 10, էջ 1520–1521:

32. «Մուրճ», 1897, թիվ 10, էջ 1394–1403:

րին, գիտության, արվեստի մեջ ունեցած դրսևորումներին: Հեղինակն այստեղ թվարկում է տարբեր ազգերի մի շարք հայտնի անձանց անուններ, որոնք ծագումով այս ցեղից են: Հայերի մեջ Գ. Վանցյանն առանձնացնում է Հարություն վարդապետ Ալամդարյանին, Քերովբե Պատկանյանին (Հ. Ալամդարյանի քրոջ զավակը, բոշայական ծագումը՝ մորական կողմից ծագումով բոշա) և աշուղ Հանես-օղլուն (ծննդյան անունով՝ Պողոս): Հայ բոշաների մասին նրա հոդվածաշարը ավարտվում է «Մուրճում» 1899 թ. տպագրած գրախոսականով³³, որտեղ հեղինակն անդրադառնում է Վրթանես Փափագյանի հրատարակած և հայ բոշաների կյանքը ներկայացնող աշխատությանը³⁴: Գրախոսականում Գ. Վանցյանը թե՛ քննադատում է այդ աշխատանքը՝ անելով անհրաժեշտ դիտողություններ, թե՛ նշում է առավելություններն՝ արժևորելով դրանք:

Ախալքալաքում Գ. Վանցյանի ուսուցչության տարիները (1890–1894 թթ.) ներկայացնող մի փոքրիկ դրվագ է հիշատակում Հովհ. Թումանյանի ուսանողական տարիների մտերիմներից Հովհաննես Խիզանյանը, որը 1894 թ. ամռանը Անդրեաս Բարխուդարյանի հետ որոշել է գնալ Անի³⁵: Վերջիններս ընտրել էին Թիֆլիս–Միխայլովո (այժմ՝ Խաշուր) կայարան (երկաթուղով) – Բորժոմ–Բակու–Իրան–Ցխրա–Ծղարոյի լեռնանցք (Թռեղքի լեռներ) – Ախալքալաք (ոտքով) երթուղին: Հովհ. Թումանյանը Գ. Վանցյանին և իրեն ծանոթ ախալքալաքցի այլ ուսուցիչներին ուղղված նամակներ է հանձնում Հովհ. Խիզանյանին: Դրանցում բանաստեղծը պատվիրում է պատշաճ ընդունել և աջակցել Հովհ. Խիզանյանին ու իր ընկերոջը: Բնականաբար, արձագանքը լինում է սպասվածից ավելին. «Ախալքալաքում մենք սիրալիր ընդունելություն գտանք տեղական մտավորականության՝ ուսուցիչների կողմից, որոնց թվում էին Ջալալ Տեր–Գրիգորյանը, Գրիգոր Վանցյանը և Սեդրակ Աղաբալյանը. վերջիններս միա-

33. «Մուրճ», 1899, թիվ 9, էջ 1079–1081:

34. Տե՛ս **Վ. Փափագյան**, Հայ բոշաներ (Ազգագրական ուսումնասիրություն), Թիֆլիս, 1899, 99 էջ:

35. **Հովհ. Խիզանյան**, Բանաստեղծի հետ. ԹԺՀ, էջ 374–378:

ցան մեզ, և մենք ուղևորվեցինք Ալեքսանդրապոլ»³⁶, – գրում է Հովհ. Խիզանյանը:

1890-ական թվականներին և 1900-ական թվականների սկզբներին Գ. Վանցյանը լեզվաբանությանն առնչվող հոդվածներով հանդես է գալիս «Մուրճ» (Թիֆլիս), «Հանդես ամսօրյա» (Վիեննա), «Անահիտ» (Փարիզ) և այլ հանդեսներում, որոնք հետագայում հիմք դարձան գրքի ամբողջական հրատարակման համար: Բացի վերը նշված բնույթի հոդվածներից՝ նա մամուլում հանդես է գալիս նաև Ջավախքի ուսումնարաններին և ուսուցիչներին, քահանայական խնդիրներին, ջավախահայության ծեսերին ու սովորույթներին, Բաքվի, Եվրոպայի հայությանն առնչվող, տարբեր ցեղերի ծագումնաբանությունը ներկայացնող, փիլիսոփայական հարցեր շոշափող մի շարք հոդվածներով, գրախոսականներով, թարգմանություններով և այլն³⁷:

Եվրոպայից հայրենիք վերադառնալուց հետո Գ. Վանցյանը շուրջ մեկ տարի աշխատում է Երևանի թեմական դպրոցում³⁸, որից հետո նրան հրավիրում են Թիֆլիսի առևտրական դպրոցում հայերեն դասախոսելու, որտեղ էլ աշխատում է մինչ իր եղերական վախճանը:

Մեր նյութի շարադրանքի ժամանակագրական սկզբունքը չխախտելու համար անդրադառնանք մի դրվագի, որը վերաբերում է Գ.

36. Նույն տեղում, էջ 377:

37. Եվրոպայում սովորելու տարիներին Գ. Վանցյանը ակտիվորեն օժանդակել է Թիֆլիսի հայկական մամուլի խմբագրություններին՝ վերջիններիս տեղեկություններ հայտնելով Եվրոպայի տարբեր բուհերի հայ ուսանողների թվի, տեղաբաշխվածության և այլնի մասին. «Չայնակցելով մեր հրավերին՝ ուսանողների մասին ստատիստիկական տեղեկություններ տալ՝ մեր աշխատակից պ. Գրիգոր Վանցյանն ուղարկել է մեզ ցուցակներ ձմեռվա կիսամյակի հայ ուսանողների Բեռլինի, Հալլեի, Ստրասբուրգի և Մարբուրգի համալսարաններում և Դարմշտատի պոլիտեխնիկումի՝ նոցա վերաբերյալ յոթ հարցերի պատասխաններով: Թողնելով այդ ցուցակների հրատարակումը զալ անգամին՝ առայժմ տալիս ենք հետևյալ թվանշանները. Հայ իսկական ուսանողների թիվն է Բեռլինում 26, Հալլեում 3, Ստրասբուրգում 1, Մարբուրգում 1, Դարմշտատում 3» («Մուրճ», 1898, թիվ 4, էջ 583):

38. Հ. Ք. Չրաքյանը գրում է. «Երևանու թեմական դպրոցը նախ օգտվեցավ տարի մը Վանցյանի ուսուցչութենեն, իր վերադարձին (Եվրոպայից (Բեռլինից), ուր ուսանում էր – Վ. Ս.), վասն զի հետո հրավիրվեցավ Թիֆլիզու առևտրական դպրոցին մեջ հայերեն դասախոսելու և այդ պաշտոնին մեջ ալ մեռավ» («Բազմավեպ», 1910, թիվ 1, հունվար, էջ 36–37):

Վանցյանի և հայ մեծանուն երաժշտագետ Կոմիտաս Վարդապետի միջև տեղի ունեցած մի անախորժ դեպքի: 1900 թ. սկզբներին³⁹ դեռևս անհայտ հանգամանքներում Կոմիտասի մասին մամուլում հրապարակվում է անստորագիր հոդված, որտեղ հոդվածագիրը ոչ դրական գույներով ներկայացնելով Բեռլինից նոր վերադարձած հայ երաժշտագետին՝ եզրակացնում է. «Երեք ու կես տարում կոշկակարություն սովորել չի կարելի, չէ թե երաժշտություն»⁴⁰: Այս անստորագիր հրապարակումը անհայտ հանգամանքներում վերագրում են Գ. Վանցյանին: Կոմիտասի աշակերտներից մեկը՝ երգիչ Վահան Տեր-Առաքելյանը, «Անհիշաչար մարդը» խորագրով իր հուշագրության մեջ պատկերավոր ներկայացնում է ինչպես վերոնշյալ հրապարակմամբ պայմանավորված Կոմիտասի ապրած վիշտը, այնպես էլ՝ 1900 թ. ապրիլյան մի կիրակի Էջմիածնում, Կոմիտասի մոտ տեղի ունեցած հանդիպումը, որին անակնկալ ձևով միացել են նաև վիպասան Վրթ. Փափագյանը և Գ. Վանցյանը. «...Ներս մտավ վիպասան Վրթանես Փափագյանը, ձեռքին ջութակի ֆուտլյար, և կարճահասակ, գիրուկ մի մարդ, որին ներկայացրեց Փափագյանը, Կոմիտասի հետ ողջագուրվելուց հետո, ասելով. «Հայ-քոշաների բանասեր Գրիգոր Վանցյան»: Վերջինս կարմրեց և իր մագոտ աջով ամուր սեղմեց մեր ձեռքը, մնալով կանգնած՝ մի տեսակ շփոթված դրությամբ»⁴¹: Հանդիպմանը Կոմիտասը դաշնամուրով նվագում և երգում է Ժողովրդական երգեր,

39. Կոմիտասը Բեռլինում սովորում է շուրջ երեք տարի և հայրենիք վերադառնում 1899 թ. սեպտեմբերին (Ռ. Թերլենեզյան. Կոմիտաս, Երևան, 1992, էջ 31): Վահան Տեր-Առաքելյանը, ում հուշագրությունից տեղեկանում ենք Կոմիտասի և Գ. Վանցյանի հանդիպման մասին, նշում է, որ այդ հանդիպումը տեղի է ունեցել ապրիլ ամսին, Կոմիտասի արտասահմանից վերադառնալուց 6-7 ամիս անց: Իսկ հանդիպումից շաբաթներ առաջ մամուլում հրապարակվել էր խնդրո առարկա հոդվածը (տե՛ս Կոմիտաս: Ժողովածու՝ նվիրված Կոմիտասի ծննդյան 60 ամյակին, կազմեց Ռ. Թերլենեզյանը, Երևան, 1930, էջ 96-101):

40. *Կոմիտաս*, Ժողովածու... էջ 97, հմմտ.՝ **Ռ. Թերլենեզյան**. նշվ. աշխ., էջ 53, հմմտ.՝ **Ի. Յոլյան**. Կոմիտաս, Երևան, 1969, էջ 31:

41. **Վ. Տեր-Առաքելյան**, Անհիշաչար մարդը.՝ Կոմիտաս. Ժողովածու..., էջ 98, հմմտ.՝ **Ռ. Թերլենեզյան**. նշվ. աշխ., էջ 54: **Վ. Տեր-Առաքելյանի** հուշագրությունն ամբողջությամբ տե՛ս նաև **Վ. Տեր-Առաքելյան**. Անհիշաչար մարդը.՝ Կոմիտասը ժամանակակիցների հուշերում և վկայություններում, Երևան, 2009, էջ 49-53:

որոնք կախարդում են ներկաներին: Այնուհետև արագորեն նոտագրում և դաշնամուրի վրա կատարում է իր խնդրանքով Վրթ. Փափագյանի կողմից ջութակով կատարած քրդական «Լուրդալուրը», որն առաջացնում է ներկաների, այդ թվում՝ Գ. Վանցյանի զարմացական բացականչությունը: Հանդիպման ավարտին Գ. Վանցյանը ներողություն է խնդրում Կոմիտասից, իսկ վերջինս այսպես է արձագանքում. «Երկու կոպեկ տուր, հողվածի դառնությունը տանք քամուն»: «Հայր սուրբ ջան, երկու էլ, տասներկու էլ կտամ, միայն ներեք ինձ», – լինում է Գ. Վանցյանի պատասխանը: «Ոչ, ճիշտ երկու կոպեկ», – կրկնում է Կոմիտասը: «Մի քանի տարվա ընթացքում այդպես հավաքված երկու կոպեկներով Կոմիտասը Պարիզում հրատարակեց «Հայ Զմար» գեղջուկ երգերի իր առաջին ժողովածուն»⁴², – այսպես է ավարտում իր հուշագրությունը Վ. Տեր-Առաքելյանը:

Գ. Վանցյանի և Կոմիտասի վերոնկարագրյալ հանդիպման և՛ փաստը, և՛ հանդիպման բնույթն արդեն իսկ վկայում են, որ Գ. Վանցյանը հազիվ թե հանդես գար մման հողվածով: Հիրավի, եթե Վանցյանը քեն քշեր Կոմիտասի հանդեպ և նպատակ ունենար ոչ իր անունից պախարակելու նրան, ապա հազիվ թե այցելեր վերջինիս և բարեկամաբար սեղմեր նրա ձեռքը: Միաժամանակ, տաղանդավոր լեզվաբանի ու հայրենապաշտ անձնավորության կողմից հազիվ թե չնկատվեր Կոմիտասի տաղանդը և կասկածի տակ առնվեր Կոմիտասի կողմից «ներք տարում երաժշտություն սովորելու» իրողությունը: Այս հանգամանքները, կարծում ենք, հաստատում են, որ նշյալ անստորագիր հողվածը գրվել է Կոմիտասի դեմ գործող բոլորովին այլ անձնավորության, խմբագրության կամ հաստատության պատվերով, իսկ թե ինչու է շրջանառվել Գ. Վանցյանի անունը, դժվար է ասել: Ինչ վերաբերում է Վանցյանի ներում հայցող խոսքերին և դրանցով նշյալ գրությունը փաստացի իրեն վերագրելուն, ապա դրանով վերջինս, ըստ երևույթին, կամեցել է շուտափույթ հարթել կմնռոտ պահը և, առավել մոտիկից գգալով Կոմիտասի բնավորության գծերը, չի կամեցել ծավալվել խնդրի բուն էության մեջ:

42. Վ. Տեր-Առաքելյան, Անհիշաչար մարդը. Կոմիտաս: Ժողովածու..., էջ 101:

1900–1901 թթ. Գ. Վանցյանը հոդվածներով, գրախոսականներով և ակնարկներով հանդես է գալիս Թիֆլիսի «Տարազ» հանդեսում⁴³, իսկ 1904–1905 թթ. Թիֆլիսի «Լուսն» ամսագրում հրապարակում է երեք աշխատանք, որոնցից երկուսը լեզվաբանական են («Նյութեր հայերենի մշակության համար», «Լուսն», 1904, թիվ 5, էջ 180–184, «Հայերենը մշակելու նյութեր», «Լուսն», 1905, թիվ 1, էջ 101–104), մեկը՝ իմաստասիրական բնույթի («Փիլիսոփայական գրույցներ», «Լուսն», 1904, թիվ 1, էջ 94–110): Եթե հաշվի չառնենք «Լուսնայի» մեջ տպագրված վերոբերյալ երեք գործերը, ինչպես նաև «Մշակում» և գերմանական որոշ թերթերում⁴⁴ հրատարակված սակավաթիվ հոդվածները, ապա, կարելի է ասել, որ Եվրոպայում ուսումնառությունից հետո Գ. Վանցյանն այնքան էլ ակտիվորեն հանդես չի եկել մամուլում, փոխարենը հայ հանրության դատին է հանձնել մի շարք արժեքավոր գրքեր և ուսումնական ձեռնարկներ:

Բռնիցից վերադառնալուց հետո՝ 1900-ական թվականների սկզբներից հիմնականում ապրելով և գործելով թիֆլիսյան մտավորականության միջավայրում՝ նա շարունակում էր մնալ նաև ջավախահայ մտավորականության հարազատ ընկերը, որի վկայություններից մեկն էլ նշանավոր բանաստեղծ Դազարոս Աղայանի գրական և մանկավարժական գործունեության քառասնամյա հոբելյանի նշումն է. ցարական ռեժիմի անբարենպաստ պայմաններում և ոստիկանության վերահսկողության ներքո Թիֆլիսի Վերայի թաղամասի «Ֆանտազիա» այգում 1902 թ. մայիսի 19-ին տեղի է ունենում Աղայանի 40-

43. Գրիգոր Վանցյանն այս հանդեսում ստորագրել է «Գ. Վ.» տարբերակով, ունի նաև «Վնց., Գ.» ստորագրությամբ գործեր (տե՛ս **Հ. Բ. Հովակիմյան**, Հայոց ծածկանունների բառարան, Երևան, 2005, էջ 726: Բառարանում կա վրիպակ՝ Գ. Վանցյանի հայրանունը նշված է Քրիստափոր. իրականում՝ Խաչատուր է):

44. Գերմանական թերթերում Գ. Վանցյանի տպագրված հոդվածների վերաբերյալ տեղեկությունը հայտնում է «Բազմավեպի» հոդվածագիրը՝ չնշելով թերթերի անունները (տե՛ս «Բազմավեպ», 1910, թիվ 1, հունվար, էջ 37): Ինքը՝ Գ. Վանցյանը, իր «Պատմական քերականություն արևելահայ լեզվի» (Թիֆլիս, 1906) գրքի առաջաբանում տալիս է մեկ թերթի անուն՝ “Zeitschrift für Armenische Philologie” տեղեկություններ չհայտնելով թերթի հրատարակման վայրի ու թվականի վերաբերյալ:

ամյա հոբելյանին նվիրված հանդիսություն, որտեղ ներկա են գտնվել ժամանակի մտավորականության, գրական, ազգային, հասարակական և քաղաքական գործիչների շուրջ երկու հարյուր ներկայացուցիչներ: Ախալքալաքի մտավորականությունը ևս գումարում է ժողով, որպես հոբելյանական հանդիսության մասնակիցներ ընտրում Հովհ. Թումանյանին և Գ. Վանցյանին՝ այդ մասին նամակով տեղեկացնելով Թումանյանին. «Պարոն Ղազարոս Աղայանի գրական ու մանկավարժական գործունեության 40-ամյա հոբելյանի հանդեսին Ախալքալաքի հայ հասարակության կողմից ներկայացուցիչներ ունենալու համար տեղական ինտելիգենցիայի ներկայացուցիչները՝ ժողով կազմելով պատգամավորներ ընտրեցին Ձեզ և Գրիգոր Վանցյանին: Հարգանքով խնդրում ենք, հարգելի՛ պարոն, բարեհաճեցեք հանձն առնել այ. Գր. Վանցյանի հետ միասին ներկա լինել հիշյալ գրական հանդեսին և Ախալքալաքի հասարակության կողմից շնորհավորել պատկառելի հոբելյարի բեղմնավոր գործունեության 40-ամյակը, մատուցանել մեր երախտագիտական զգացմունքներն ու հարգանքները, նաև մեր տեղական մի խումբ աշակերտների ու աշակերտուհիների կողմից ստորագրված ուղերձը: Աշակերտների թվում ստորագրվել են և մի քանի օտարազգիներ իրենց մայրենի լեզվով, այն է՝ հունարեն և ռուսերեն:

Եթե Ձեզանից որևէ մեկը հարգելի պատճառով չկարողանա հանձն առնել մեր ներկայացուցչությունը, ապա խնդրում ենք հայտնել այ. Հովհաննես Կարապետյանին, որ փոխարինե ձեզնից չհամաձայնվողին»⁴⁵: Ղ. Աղայանին հիշյալ հոբելյանի առթիվ բանաստեղծություն է նվիրում աշուղ Ջիվանին, իսկ ելույթներով ու հոդվածներով հանդես են գալիս Շիրվանզադեն, Լեոն, Երվանդ Շահազիզը, Լևոն Սարգսյանը, Ավետիք Արախանյանը, Հովհ. Թումանյանը և Գրիգոր Վանցյանը⁴⁶: Յավոք, Գ. Վանցյանի, նաև Թումանյանի և այլոց՝ հոբելյարին նվիրված հոդվածները գրաքննչական կոմիտեն արգելում է

45. **Ս. Հովհաննիսյան**, Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության պատմությունը (1900–1912 թթ.), Երևան, 2012, էջ 66:

46. Նույն տեղում, էջ 67:

տպագրել⁴⁷, որի պատճառը Աղայանի կուսակցական պատկանելության համար 1895–1900 թթ. բանտարկված լինելն էր⁴⁸: 1905 թ. Գ. Վանցյանը Թիֆլիսում հրատարակում է «Հայ հեղինակներ» (264 էջ) գիրքը, որն ունեցավ բարեփոխված և հարստացված թվով 5 վերահրատարակություն (II տպագրություն, Թիֆլիս, 1906, 320 էջ, III տպագրություն, Թիֆլիս, 1909, 382 էջ, IV տպագրություն, Թիֆլիս, 1910, 384 էջ, V տպագրություն, Թիֆլիս, 1913, 384 էջ, VI տպագրություն, Թիֆլիս, 1914, 384 էջ): Գրքի բարեփոխումներն ու հարստացումներն իրականացվել են մինչև III տպագրություն. սկսած IV տպագրությունից մինչ վերջին՝ VI տպագրություն, ներառյալ նաև III տպագրությունը, Գ. Վանցյանի մահից հետո 1909–1914 թթ. իրականացրել է Գ. Վանցյանի այրին՝ Մ. Վանցյանը, հրատարակությունները հիմնականում վերատպվել են՝ չկրելով փոփոխություններ: III–VI տպագրություններում անփոփոխ բերված է հեղինակի առաջաբանը, որը գրվել է մահվան նախօրյակին՝ 1908 թ. հունվարին, Թիֆլիսում: Ինչպես նշում է «Հայ հեղինակների» առաջին հրատարակության առաջաբանում ինքը՝ Գ. Վանցյանը, իր «նպատակն է երկու կամ երեք ամփոփ հատորներում տալ մեր գրականության և լեզվի զարգացման պատմությունը, հեղինակների կենսագիրներով և նրանց լավագույն երկերից հանած նմուշներով՝ սկսած հնագույն անցյալից մինչև նորագույն ժամանակները»: Անհերքելի է, որ միջնակարգ դպրոցների համար նախատեսված այս գիրքը լույս աշխարհ էր եկել ժամանակի պահանջով: Հավելենք, որ «Հայ հեղինակներ»-ում տեղ

47. Նույն տեղում, էջ 588: Գ. Վանցյանի և այլոց հոդվածները, ինչպես և մի շարք ոտանավորներ ու հոբելյանին նվիրված այլ նյութեր, որոնք գրաքննությունն արգելեց տպագրել «Տարագ» հանդեսի հոբելյանական բացառիկ համարում, հանդեսի խմբագիր և հրատարակիչ Տ. Նազարյանը լույս ընծայեց տարիներ անց՝ 1911 թ., «Տարագ» հանդեսի մայիս-հունիսյան միացյալ համարում, որտեղ հիշյալ նյութերը տպագրվում են Աղայանի մահվան առթիվ գրված այլ նյութերի հետ միասին: Գ. Վանցյանի նշյալ հոդվածը տե՛ս նաև «Գլազարոս Աղայանը ժամանակակիցների հուշերում», Երևան, 1967, էջ 94:

48. Գլազարոս Աղայանը ձերբակալվել է 1895 թ. սեպտեմբերի 7-ին՝ հնչակյան կուսակցությանը պատկանելու մեղադրանքով, արքունիկ Նոր Նախիջևան, ապա՝ Գրին:

գտած նշանավոր մի շարք հեղինակների գործերից առաջ, այդ նույն հեղինակների կյանքի ու գործունեության, գրական հայացքների և այլնի մասին ներկայացնող աշխատանքների հեղինակը հենց Գ. Վանցյանն է: Խ. Աբովյանի, Ռ. Պատկանյանի, Մ. Նալբանդյանի, Պ. Պռոշյանի, Բաֆֆու, Դ. Աղայանի, Դ. Ալիշանի կենսագրություններին շաղխված՝ կարելի է տեսնել վերջիններիս գրական գործերի մասին բավական խորքային դատողություններ ու եզրահանգումներ, որոնք ինքնին խոսում են Գ. Վանցյանի լայնախոհության և գիտական բարձր ձիրքերով օժտված լինելու մասին: «Հայ հեղինակներ»-ում ներկայացվել են նաև Գ. Վանցյանի ճամփորդական հուշագրությունները, որտեղ հեղինակը պատմում է եվրոպահայության որոշ հատվածների հետ իր հանդիպումների ու տպավորությունների մասին («Լեհաստանի հայերը», «Այց Լեմբերգի հայերին»), բոլաներին առնչվող ազգագրական հոդվածները և այլն: Բնականաբար, գրքի առաջին հրատարակության լույսընծայմանը հետևեց մամուլի արձագանքը՝ մի շարք գրախոսականներով, որոնցում մերթ ծավալուն վերլուծությունների միջոցով դրվատվեց⁴⁹, մերթ քննադատվեց⁵⁰ Գ. Վանցյանի աշխատանքը:

49. «Մուրճ», 1905, թիվ 4, էջ 174–185: Գրախոսն այսպես է ավարտում իր ծավալուն գրախոսականը. «... Շեշտում եմ, որ պ. Վանցյանի «Հայ հեղինակները» գնահատելի և դասատուներին հանձնարարելի աշխատություն է: Թո՛ղ հորինողի այս «առաջին փորձը» փորձեն ուսումնարանները և տեսնեն, թե այս գիրքը որքան հարցասիրություն առաջացրեց աշակերտների մեջ դեպի հայ հեղինակներն ու նրանց երկերը» (տե՛ս նույն տեղում, էջ 185): «Հայ հեղինակների» III տպագրությունը դրվատել է նաև «Հանդես ամսօրյա» հանդեսը (1909, թիվ 12, դեկտեմբեր, էջ 383): Գրքի մասին դրվատանքով են արտահայտվել նաև «Լումա», «Աշխատանք», «Тифлисский листок», «Новое обозрение» ամսագրերն ու թերթերը, որոնց նյութերը գետեղված են «Գրպանի ուղղագրություն» գրքույկի «բ» և «գ» հրատարակություններում («Тифлисский листок»-ի գրախոսականը նույնությամբ գետեղված է նաև Գ. Վանցյանի «Հայոց պատմության» երկրորդ և երրորդ հրատարակությունների հավելվածում, «Լումայի» և «Աշխատանքի» նյութերը՝ «Դպրոցական քերականություն» գրքի երկրորդ, բարեփոխված տպագրության (առանց թվականի) հավելվածում):

50. «Բազմավեպ», 1905, մայիս, թիվ 5, էջ 233–238:

1906 թ. Գ. Վանցյանը տպագրում է իր «Պատմական քերականություն արևելահայ լեզվի» քերականագիտական ընդարձակ աշխատությունը, որի առանձին հատվածներ, ինչպես արդեն նշեցինք, ժամանակին լույս էին տեսել մամուլում⁵¹: Գրքում հեղինակն անդրադառնում է մարդկային լեզվի ծագմանը, հնդեվրոպական լեզուներին, հայերենին (գրաբարյան, արևելահայ և արևմտահայ ձևերին) առնչվող ամենատարբեր հարցերին, հայ քերականական մտքի ձևավորման վրա ազդեցություն գործած որոշ կրթօջախներին և այլն: Գրքի լույսընծայումը, անշուշտ, ժամանակի հայ գիտական և կրթամշակութային կյանքի կարևոր իրադարձություններից էր: «Բազմավեպ» ամսագիրը գրքի հրատարակման առթիվ տպագրում է ընդարձակ գրախոսական, որն ավարտվում է հետևյալ պատկերավոր խոսքերով. «Գր. Վանցյանի հետ կշռջինք ո՛չ միայն մերձավոր անցյալին, այլև խորագույն հնության մեջ: Իր գիրքը կրթություն մ' է և զբոսանք. հաճոյական է ինչպես դալարագեղ դաշտի մը մեջ հնախոսական պեղում մը»⁵²: Նույն ամսագիրը շուրջ երեք տարի անց գրում է. «Վանց-

51. Թվարկենք լեզվաբանությանն առնչվող հիմնական հոդվածները. «Հայերենի նվազանությունը [կարդացված Բեռլինի հայ ուսանողական ժողովում 1896-ին և Հայդելբերգի հայ ուսանողական համագումարում 1897 թ. ապրիլի 10-ին]» («Մուրճ», 1897, թիվ 6, էջ 829–847), «Հայերեն դերանունների սեռը [Նվեր «Մուրճ»-ի տասնամյակին]» («Մուրճ», 1898, թիվ 10, էջ 1507–1514: Հոդվածը քննադատվել է մամուլում. տե՛ս «Լեզվի մի համեստ դաս», «Արարատ», 1899, թիվ 1, էջ 40–42), «Հայերենը մշակելու նյութեր [(Կարդացած Բեռլինի հայ ուսանողական ժողովում. 1897)]» («Մուրճ», 1899, թիվ 2–3, էջ 278–281), «Նա և այն» դերանունների կիրառությունը» («Մուրճ», 1899, 4–5, էջ 436–438), «Նյութեր հայերենի մշակության համար» («Մուրճ», 1899, թիվ 6, էջ 614–618), «Հնչմունք և գիր» («Մուրճ», 1899, թիվ 11–12, էջ 1424–1430):

52. «Բազմավեպ», 1907, հունիս, թիվ 6, էջ 273–276 (գրախոսականը, որպես հավելված, կրճատումներով ներառված է նաև Գ. Վանցյանի «Հայոց պատմություն: Ծխական դպրոցների համար: Պատկերագրող» գրքի երկրորդ և երրորդ հրատարակություններում): «Պատմական քերականություն արևելահայ լեզվի» գրքի մասին մատենախոսական կարճ ակնարկով է հանդես գալիս նաև «Մուրճը» [(տե՛ս «Մուրճ», 1906, թիվ 9, էջ 156–157: Մատենախոսականը զետեղված է նաև Գ. Վանցյանի «Դպրոցական քերականություն» գրքի երկրորդ, բարեփոխված տպագրության (առանց թվականի) հավելվածում, նաև «Գրականի ուղղագրություն» գրքույկի «բ» հրատարակության (առանց թվականի) հավելվածում):

յանի հիշատակը կապված պիտի մնա այսուհետև իր Պատմական քերականության հետ. ուրեմն մահարձանի չի կարոտիր»⁵³: 1906 թ., «Պատմական քերականություն արևելահայ լեզվի» գրքի տպագրությանը զուգահեռ, Ալեքսանդրապոլի «Շիրակ» տպարանում լույս է տեսնում Գ. Վանցյանի «Դպրոցական քերականությունը»: 52 էջանոց այս գրքույկը նախատեսված էր պետական և ծխական դպրոցների համար և կարևոր տեղեկություններ էր հաղորդում հայերենի քերականության մասին: Գրքույկն ունեցավ երկրորդ՝ բարեփոխված և հարստացված տպագրություն, որը, սակայն, անթվակիր է: Դրանում զետեղված որոշ նյութերի թվագրումից և առաջաբանից կարելի է եզրակացնել, որ այն տպագրվել է հեղինակի մահվան նախօրյակին՝ 1907 թ. վերջին կամ 1908 թ. սկզբին:

1906 թ. լույս է տեսնում Գ. Վանցյանի «Գրականի ուղղագրություն» գրքույկը: Հեղինակը առաջաբանում գրում էր, որ իր նորաստեղծ գրքույկն «... ամեն մի աշակերտ պետք է ձեռին ունենա սխալներից խուսափելու և ուղղագրությանը շարունակ ընտելանալու» համար: Այն կարճ ժամանակ անց ունեցավ երկրորդ, բարեփոխված հրատարակություն (գրքույկի վրա բացակայում է հրատարակման թվականը): Մինչ իր մահը՝ 1908 թ., Գ. Վանցյանը պատրաստում է գրքույկի երրորդ՝ կրկին բարեփոխված տարբերակը, որը հետմահու՝ 1914 թ. հրատարակում է կինը: Գրքույկը ծավալուն գրախոսականով գովաբանում է «Մշակը»⁵⁴, իսկ Գ. Գասպարյանն իր «Հայ բառարանագրության պատմություն» աշխատության մեջ նշում է հետևյալը. «Հայերեն աշխարհաբար գրական լեզվի ուղղագրական առաջին բառարանը «Գրականի ուղղագրությունը» կազմել է Գրիգոր Վանցյանը՝ «Գրականի ուղղագրությունը», սահմանափակ բառաքանակով աշխատություն է, բաժանված 4 հիմնական մասի, առանձին-առանձին տրված է Ե, Ո, Հ և Ռ-տառերի ուղղագրությունը: Յուրաքանչյուր բաժնից առաջ տրված է համառոտ կանոն՝ բնորոշում և ապա Ե-ով գրվող

53. «Բազմավեպ», 1910, թիվ 1, հունվար, էջ 38:

54. «Մշակ», 1906, թիվ 193: Գրախոսականից մի փոքրիկ հատված ներառված է **Գ. Վանցյանի** «Դպրոցական քերականություն» գրքի երկրորդ, բարեփոխված տպագրության (առանց թվականի) հավելվածում:

բառեր՝ ալեխառն, ալեկոծ, աղետ–178 բառ, Ռ-ով գրվող բառեր՝ ակոս, աղոթք, աղոթասեր, աղոն...– 186 բառ, Հ-ով գրվող բառեր՝ հագնալ, հագուրդ, հախճապակի, հախտուն...– 107 բառ, Ռ-ով գրվող բառեր՝ ագռավ, աթոռ, աթոռակալ, ախոռ, ականակոռ, ամառ – 230 բառ, ընդամենը՝ 701 բառ: ... Գ. Վանցյանի «Գրպանի ուղղագրությունը» լավ ընդունելություն գտավ և ունեցավ մի քանի հրատարակություն»⁵⁵: Այսուհանդերձ, ինչպես ժամանակի յուրաքանչյուր նորույթ, Գ. Վանցյանի «Գրպանի ուղղագրությունը» ևս գերծ չմնաց քննադատությունից⁵⁶:

1906 թ. Թիֆլիսի հայկական դպրոցների աշակերտությունը ստանում է նոր նվեր. լույս է տեսնում Գ. Վանցյանի «Հայոց պատմություն: Ծխական դպրոցների համար: Պատկերազարդ» գիրքը (80 էջ), որտեղ հայոց պատմությունը ներկայացվում է հայ ժողովրդի ծագումից՝ Հայկ Նահապետից մինչև Բագրատունյաց թագավորության անկումը՝ Գագիկ Բ (1045 թ.) և սելջուկյան արշավանքները Հայաստան: Ձեռնարկի Բ տպագրությունը, որը կազմված էր երկու մասից, տեղի է ունենում 1908 թ. («Հայոց պատմություն (Ծխական դպրոցների համար), Բ տպագրություն: Պատկերազարդ», 152 էջ), որտեղ արդեն հեղինակն ամբողջացնում է հայոց պատմությունը՝ ներկայացնելով հայոց ծագումնաբանությունից մինչ իր ապրած ժամանակահատվածը՝ 1900-ական թվականների սկզբների կովկասյան անցքերը: «Հայոց պատմության» առաջին հրատարակությունը Բ տպագրության առաջին մասն է, իսկ երկրորդ մասը ներառում է Կիլիկյան թագավորության ստեղծումից մինչ 1905 թ. իրադարձությունները: Ամենավերջում հեղինակը գետեղել է «Հայոց թիվը և պարապմունքը ներկայում» փոքրիկ հատվածը, որտեղ կարևոր հաշվումներ է անում ամբողջ աշխարհում սփռված հայության թվակազմի վերաբերյալ՝ եզրակացնելով, որ 1900-ական թվականների սկզբներին երկրագնդի վրա ապրող հայության թիվը կազմում է մոտ 3 միլիոն: «Հայոց պատմության» Բ տպագրությունը հեղինակի կինը Թիֆլիսում նույնու-

55. Գ. Գաապարյան, Հայ բառարանագրության պատմություն, Երևան, 1968, էջ 464:

56. «Զարկ», 1906, N 5, էջ 75–76, N 6, էջ 89:

թյամբ վերահրատարակում է 1909 (երրորդ տպագրություն, 143 էջ) և 1912 (չորրորդ տպագրություն, 142 էջ) թվականներին: Բոլոր հրատարակություններում նույնությամբ բերված է հեղինակի պատգամը. «Դուք, սիրելի աշակերտներ, որ սովորում եք Եգիպտոսի, Բաբելոնի, Ասորեստանի, Մարաստանի, Հրեաների, Պարսից և այլ բազմաթիվ ազգերի պատմությունները, շատ անգամ դիմել եք ինձ հարցնելով. — վարժապետ, ինչո՞ւ չենք սովորում հայոց պատմություն, ե՞րբ պիտի սովորենք մեր սեփական պատմությունը: — Ակամա լռությունից հետո, այս գիրքն է ահա, որ պիտի պատասխանե՞՞ծեր հարցերին, ուր համառոտ ու կարճ, պիտի գտնեք Ձեր Նախնյաց գործերի պատմությունը»: Գ. Վանցյանը «Հայոց պատմությունը» շարադրել է հայրենասիրական բարձր ոգով, ուր ոսկեղենիկ հայերենի, հայ ճարտարապետության և նախնյաց մեծագործությունների թվարկման միջոցով ձգտել է ազգային հպարտություն սերմանել պետականագուրկ վիճակում ապրող իր աշակերտների շրջանում՝ վառ պահելով նրանց հոգում ազգային զարթոնքի և պետականություն ունենալու հույսերը: «Սիրենք ու սովորինք, մեր ազգի պատմությունը, սիրելի մանուկներ...»՝ ահա հեղինակի բարձրագույն հորդորը: «Հայոց պատմությունը» ևս արժանացավ քննադատության. գրախոսություն, որն ավելի շատ նման էր չարախոսության⁵⁷:

1907 թ. Գ. Վանցյանը կազմում և Թիֆլիսում լույս է ընծայում «Հայ լեզու: Պատկերազարդ այբբենարանը» (64 էջ): Ձեռնարկը կազմված է երկու մասից. Ա մասը կազմում է բուն Այբբենարանը, Բ մասը՝ «Ընթերցարանը», որտեղ զետեղված են մի շարք մանկական կարճառոտ պատմվածքներ, բանաստեղծություններ, առածներ, շուտասելուկներ, հանելուկներ, մայրերին, տարվա եղանակներին, տարբեր կենդանիներին նվիրված այլևայլ նյութեր: Բնության, առարկաների, գանազան կենդանիների պատկերներով հարուստ այս Այբբենարանը Գ. Վանցյանի՝ տվյալ ժամանակի հայ կրթական կյանքում ունեցած մեծագույն ավանդն էր:

Հայ ականավոր գիտնական, կովկասագետ, հայագետ Արտաշես Աբեղյանն իր գործերից մեկում, նպատակ ունենալով չեզոքացնել

57. «Երկիր», 1906, թիվ 40:

1930-ական թվականներին եվրոպական երկրներում ապրող հայության շուրջ գերմանական ուժերի կողմից ստեղծված վտանգը, գերմանացի այլ գիտնականների գործերի շարքում հիմնավորում է հայ ազգի հնդեվրոպական կամ արիական ծագումը՝ մեջբերումներ կատարելով նաև Գ. Վանցյանից⁵⁸: Մեկ այլ մտավորական, արվեստի խոշորագույն գործիչ, նկարիչ Եղիշե Թադևոսյանը 1935 թ. գրի առած իր հուշերում, նկարագրում է Թիֆլիսի Հայոց առաջնորդարանում կայացած խորհրդակցությունը, հանդիպմանը ներկա ժամանակի խոշոր մտավորականների՝ Աբգար Հովհաննիսյանի, Շիրվանզադեի, Ղ. Աղայանի, Պ. Պռոշյանի և Հովհ. Թումանյանի կողքին հիշատակում է նաև Գ. Վանցյանին: Հավելենք, որ խորհրդակցությունը տեղի է ունեցել 1904 թ. Վիրահայոց թեմի ժամանակավոր առաջնորդ Գարեգին Հովսեփյանի հրավերով և նվիրված է եղել հայ մշակութային ու հասարակական որոշ խնդիրների քննարկմանը⁵⁹: Գ. Վանցյանի աշխատանքներն իրենց գործերում հիշատակել են նաև ակնավոր լեզվաբաններ, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Գուրգեն Սևակը⁶⁰, Գևորգ Ջահուկյանը⁶¹, պ. գ. դ. Էդուարդ Դանիելյանը⁶² և այլք:

Գ. Վանցյանը, ելնելով իր լեզվաբանական հետազոտություններից և լատինական մի շարք լեզուների համեմատական քննությունից, ժամանակին հանդես է եկել նաև հայերենի մեջ քերականական որոշ ճշգրտումներ մտցնելու առաջարկներով: Դրանցից մեկը, օրինակ, վերաբերում է հայերենի դերանվանաձևերի մեջ սեռի կիրառման հարցին: Բերելով մի շարք լեզուների օրինակներ և տալով հիմնավորումներ՝ Վանցյանն առաջարկում է որպես «նա» դերանվան իգական ձև, վերստին կիրառության մեջ մտցնել «նե» ձևը⁶³: Նա նշում է,

58. **Ա. Աբեղյան**, Հյուսիսային տիպերը Հայաստանում (հայկականություն, արիականություն), Երևան, 2001, էջ 30–38:

59. **Հ. Թումանյան**, Արվեստի մասին, Երևան, 1969, էջ 206:

60. **Գ. Սևակ**, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 67, 354:

61. **Գ. Բ. Ջահուկյան**, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը (համառոտ ուրվագիծ), Երևան, 1969, էջ 279:

62. **Է. Դանիելյան**, Շուշիի տեղը հայ տպագրական գործի մեջ. Հայկական տպագրությունը դարերի միջով (հոդվածների ժողովածու), Երևան, 2014, էջ 88:

63. **Գ. Վանցյան**, Պատմական քերականություն արևելահայ լեզվի, Թիֆլիս, 1906, էջ 235, 240:

որ այդ դերանվան իզական մման ձևի կարիքը շատ վաղուց է նկատվել, և, ելնելով այդ համգամանքից, այն գործածել են Ս. Մալխասյանը և Մ. Աբեղյանը. «... մի դերանուն, որ հմարելի էր դեռ Դավիթ Անհաղթը Ե. դարում, կազմելով նե, ներա, իներանե և այլն... Դրա շնորհիվ է, որ Դուրյանի պես բանաստեղծն իր գլուխգործոցի մեջ երգում է «...թույլ տրվին, որ միշտ ըզնե երագեն»⁶⁴։ Նկատենք, որ մեր օրերում Նե դերանունը, որպես հատուկ անուն, դանդաղորեն տարածում է գտնում աղջիկների շրջանում⁶⁵։

Ավարտելով մեր խոսքը մեծանուն ուսուցիչ, գրականագետ ու լեզվաբան Գ. Վանցյանի մասին՝ ասենք, որ 1908 թ. մայիսի 5-ին նա ինքնասպան է լինում։ Ինքնասպանությունից առաջ թողած մամակում Գ. Վանցյանը խնդրում է իր մահվան համար ոչ մեկին չմեղադրել⁶⁶։ Հուլարկավորությունը տեղի է ունենում մայիսի 9-ին, աճյունն ամփոփվում է Թիֆլիսի Խոջիվանքի գերեզմանատանը։ Անխոս, Գ. Վանցյանի մահով հայ դպրոցը կորցնում է իր մեծագույն նվիրյալին, կրթական կյանքի ամենաառաջադեմ կազմակերպչին, լուսավորու-

64. Նույն տեղում, էջ 235։ Խոսքը «Տրտունջ» բանաստեղծության մեկ տողի մասին է։

65. Հարցախույզով պարզեցինք, որ «Նե» իզական դերանունը որպես հատուկ անվանում օգտագործելիս մարդիկ գլխավորապես հիմնվել են Պ. Դուրյանի գործերի մեջ իզական սեռի համար գործածվող նե (նա) դերանվան և հատկապես նրա «Նե» վերնագրով բանաստեղծության վրա։ Իրականում, ինչպես նկատում է Գ. Վանցյանը, այս դերանունը հիշատակվում է դեռ V դարից (Դավիթ Անհաղթ) և հասնում մինչ XIX–XX դարեր (Պ. Դուրյան, Ս. Մալխասյան, Մ. Աբեղյան, Գ. Վանցյան և այլք)։

66. Յուլյա Խանգադյանին ուղղված մամակում Վահան Տերյանը հայտնում է. «Երեկ ինքնասպանություն է գործել Գրիգոր Վանցյանը» (**Վ. Տերյան**, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1963, էջ 208, հմմտ.՝ **Վ. Տերյան**, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1975, էջ 258)։ Գ. Վանցյանի ինքնասպան լինելու բոլոր տեղ է գտել նաև «Մշակում»։ «Սրտի կսկիծով մի անսպասելի և ցավալի լուր ենք հաղորդում։ Մայիսի լույս 5-ի գիշերը ինքնասպանություն գործեց գրագետ և Թիֆլիսի առևտրական դպրոցի ուսուցիչ Գրիգոր Վանցյանը։ Հանգուցյալը մի մամակ է թողել, որով խնդրում է ոչ ոքի չմեղադրել» («Մշակ», 1908, 97)։ Տե՛ս նաև «Արաբատ», 1908, մայիս-հունիս, Ե.–Զ., էջ 600։

քյան բնագավառի կարկառուն գործչին: «Հանդես ամսօրյայում» գետեղված նրա մահախոսականում կարդում ենք. «Այս կորովի ուժը պարտված կյանքի դառնության անհայտ հոսանք է մը: Մայիս 5-ին յուր և կյանքի մեջ եղած հարաբերությունը կըխզե 40 տարեկան (ըստ երևույթին պետք է լինի՝ 38 տարեկան – Վ. Ս.) հասուն հասակին մեջ: Գ. Վանցյան ազգային կրթված դեմքերեն էր. Ներսիսյան վարժարանը ավարտելով հաջողած էր Եվրոպա յուր ուսումը կատարելագործելու անցնիլ, ուսկից դառնալով՝ Տփղիսի առևտրական դպրոցի մեջ հայերեն լեզվի դասատուություն կ'ըներ: Հայ ուսուցչության առաջադիմության բարեխիղճ մարդիկներեն էր, որուն կորուստը նոր կազմակերպիլ սկսած միության զգալի վնաս մըն էր: Գ. Վանցյան հայ գրականության մեջ ալ ձեռնհաս ուժ մըն էր...»⁶⁷:

Գ. Վանցյանի ինքնասպանության հանգամանքները մինչ օրս անհայտ են: Եղած վարկածները (Գ. Վանցյանի գաղափարական հայացքները⁶⁸, ցարական ռեժիմը, անձնական կամ ընտանեկան հարաբերությունները և այլն), որոնց պատճառով նա կարող էր գնալ նման ծայրահեղ քայլի, ավելի շատ ենթադրություններ են, դրանցից որևէ մեկի վրա դժվար է կենտրոնանալ:

Երկհատորյակում Գ. Վանցյանի գործերը գետեղել ենք ժամանակագրական կարգով՝ ելնելով հրատարակման թվականներից: Լեզվաբանությանն առնչվող գործերը, որոնք հիշատակեցինք վերևում, չենք գետեղել՝ նաև նկատի ունենալով, որ դրանք հիմնականում ներառված են սույն գրքերում տեղ գտած «Պատմական քերականություն արեւելահայ լեզուի» գրքում: Փաստորեն, երկհատորյակը ներառում է Գ. Վանցյանի հիմնական 6 գիրք-գրքույկները (ինչպես նշեցինք, այս գործերը վերահրատարակվել են մի քանի անգամ, և մենք ընտրել ենք դրանցից առավել ամբողջական տարբերակները), ինչ-

67. «Հանդես ամսօրյա», 1908, թիվ 7, էջ 224:

68. «Հայկական սովետական հանրագիտարանը», տալով Գ. Վանցյանի կարճառոտ կենսագրականը, հայտնում է, որ նա «գաղափարապես հակված է եղել դեպի դեմոկրատիզմն ու մարքսիզմը» (հ. 11, Երևան, 1985, էջ 279):

պես նաև մամուլում հրատարակված աշխատանքները՝ հոդվածներ, գրախոսականներ, ակնարկներ, մամակներ, թարգմանություններ, որոնք դասավորված են առանձին բաժիններով, յուրաքանչյուր բաժնի նյութերը կրկին դասավորված են ժամանակագրական կարգով:

Բոլոր գործերը վերահրատարակվում են անփոփոխ կերպով: Նախկինում հրատարակված գիրք-գրքույկները վերահրատարակվում են լուսապատճենման եղանակով, որոնց տիտղոսային էջին, բնականաբար, երևում են հեղինակի, առանձին դեպքերում նաև հրատարակչի անուն ազգանունը, գրքի վերնագիրը, հրատարակման վայրն ու թվականը: Մամուլից վերցված գործերի պարագայում, որոնցում ևս միջամտություններ չեն կատարված, նշյալ տեղեկությունները զետեղված են նյութի վերջում: Երկհատորյակի վերջնամասում խորհրդանշական ձևով զետեղել ենք Գ. Վանցյանի բոլոր գրքերի (ներառյալ բոլոր վերահրատարակումները) շապիկների կամ տիտղոսաթերթերի լուսանկարները: Ինչպես վերևում նշեցինք, Գ. Վանցյանն իր մի շարք գրքերի վերջում հավելվածատիպ ձևով զետեղել է իր նախորդ գրքերի վերաբերյալ մամուլում հնչեցված գրախոսականները կամ կարծիքները: Այդպիսի գրքերի վերահրատարակման հետ միաժամանակ անփոփոխ կերպով բերված են նաև այդ կարծիք գրախոսականները: Երկու վերահրատարակության («Դպրոցական քերականութիւն (Բարեփոխում՝ երկրորդ տպագրութիւն)» և «Գրպանի ուղղագրութիւն» (Բ. տպագրութիւն), որոնց այլ տարբերակներն են ներառված ժողովածուներում, այդպիսի հավելվածները բերված են երկրորդ հատորի վերջնամասում (տե՛ս «Հավելված 1»):

Սույն երկհատորյակը Գրիգոր Վանցյանի գործերի հավաքագրման առաջին փորձն է: Իհարկե, հատկապես ժամանակի մամուլի էջերում հնարավոր է լինեն վերջինիս հեղինակությամբ տպագրված և մեր աչքից վրիպած որոշ հոդվածներ կամ հրապարակումներ, որոնց ամբողջացումը սույն գործերի հետ հետագայի խնդիր է:

Հուսով ենք, որ այսուհետ հատկապես ջալախասիայ նորոյա սերունդն առավել մոտիկից կծանոթանա իր լեռնաշխարհի մեծերից մեկի՝ Գ. Վանցյանի կյանքին և ստեղծագործական շառաչուն գործունեությանը, մի լայնահուն ընթացք, որը, ցավոք, ընդհատվեց անժամանակ մահով:

1994 թվականից հայրենի Ջավախքի Բեժանո գյուղի դպրոցը կրում է իր արժանավոր զավակ Գրիգոր Վանցյանի անունը: Սույն ձեռնարկը թող դառնա երկրորդ պատվանդանը, որի վրա հավերժանալու է Վանցյանների փառահեղ գերդաստանի ներկայացուցիչներից մեկի՝ Գրիգոր Վանցյանի անմահ անունը:

Ջավախքի Բեժանո գյուղից սերված Վանցյանների տոհմաճյուղի անվանի մարդկանց թիվը եզակի չէ. և, Ջավախքում, և, ՀՀ-ում, և, նախկին միութենական մի շարք հանրապետություններում հայտնի են ավիատոր-օդաչուներ, գիտնականներ, ժողովրդական տնտեսության, արտադրության և այլ ոլորտների անվանի ներկայացուցիչներ, որոնք կրում են Վանցյանների տոհմի փառահեղ ազգանունը:

ՎԱՀԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

1 մայիսի 2014 թ.

ք. Երևան

ՀՈԴՎԱԾՆԵՐ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ՄԵՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ԵՒ ՈՒՍՈՒՑԻԶՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ամեն մի անհատի, հասարակութեան և թէ հիմնարկութեան բարեկեցութիւնը պայմանաւորում է նորա տնտեսական ապահովութեան չափով,- ուր չկայ տնտեսական ապահովութիւն, այնտեղ չի կարող լինել և յարատև, կանոնաւոր և օգտաւէտ գործունէութիւն. մասնաւոր անհատների եռանդն ու գործունէութիւնը, որով բարձրանում է մի հիմնարկութեան անունը, դադարելուց յետոյ՝ ընկնում է և հիմնարկութիւնը, եթէ նա նիւթական միջոց չունի մշտապէս իւր մէջ պահելու այնպիսի ոյժեր, որոնք միշտ բարձր կարողանային պահել հիմնարկութեան անունը:- Այս տեսակէտից նայելով, մեր ուսումնարանների ամենախոշոր պակասութիւններից մինը պէտք է համարել նոցա տնտեսական անապահովութիւնը - աղքատութիւնը. նոքա ըստ մեծի մասին գուրկ են եկամտի կանոնաւոր աղբիւրներից: Ուսումնարանների հետ անխզելի տնտեսական և բարոյական կապերով կապւած են ուսուցիչները, ուստի ուսումնարանի այս կամ այն դրութիւնը ազդում է նաև ուսուցիչների վերայ անմիջապէս: Անապահով ուսումնարանի ուսուցիչը շատ քիչ ջոճիկ է ստանում և այն էլ ամիսներ սպասելուց յետոյ. այդպիսի դէպքեր չեն կարող պատահել ապահովւած ուսումնարաններում և եղածներն էլ պէտք է անհատական կամայականութեան վերագրել: Այսպէս ուրեմն, ապահովելով ուսումնարանը - կը նշանակէ ապահովել ուսուցչին - իսկ ուսուցչին ապահովելով, մենք կապահովենք մեր սերնդի դաստիարակութեան գործը, պահանջելով, որ նա նւիրի իւր կոչմանը, թողնելով մեզ հոգալ նորա նիւթական պահանջները կանոնաւոր և մարդավարի վարձատրութիւնով:

Մեր ուսումնարանական գործը գեղեցիկ հիմունք ունի, նա կառավարում է (մանաւանդ առաջ) Ժողովրդի ընտրեալների ձեռքով. այդ ընտրեալները, հոգաբարձուները, յանձնառու են լինում հոգալ ուսումնարանի տնտեսական կարիքները:

Բայց հոգո՞ւմ են այդ կարիքները - ի հարկե ո՛չ:

Բացառութիւնների մասին չե՛մեր խօսքը:

Մեր ուսումնարանների հէնց հիմքը խախտու է, յուսալ թէ հոգաբարձութիւնը կը հոգայ ուսումնարանի նիւթականը, կը նշանակէ ամբողջ կառուցանել օդում. դա ցոյց է տւել մեզ տարիների փորձը:

Եւ շատ բնական է: Մեր հասարակութիւնը դեռ այնքան ստոր աստիճանի վերայ է կանգնած, նա դեռ այնքան տհաս է, որ բացի բացառիկ անձնաւորութիւններից, հասարակական խնդիրները անձնականից վեր դասող, հասարակութեան ցաւերով հետաքրքրող անձնաւորութիւններ մշտապէս դեռ ևս չի կարող տալ. դա նորա ուժերից վեր է: Մենք գանգատում ենք, որ առհասարակ չունենք լաւ հոգաբարձուներ, բայց մոռանում ենք, որ լաւ հոգաբարձու կարող է տալ միայն լաւ հասարակութիւնը: Մենք ունենք ժողովուրդ, ունենք ամբոյս, խուժան - ինչ ուզում էք անւանեցէ՛ք, բայց հասարակութիւն, այդ բառի լայն մտքով, մենք դեռ ևս չունենք:

Բարեխիղճ հոգաբարձու կունենանք այն ժամանակ, երբ կունենանք լաւ և կրթւած հասարակութիւն.- դա ժամանակի և քաղաքակրթութեան է կարօտ: Այսպիսով մեր ծխական ուսումնարանները ի դէմս հոգաբարձութեան (նոյն և ժողովրդի) կորցնում են մի զօրեղ գործօն-ֆակտոր, որ կարող էր նորա նիւթականի հայթայթողներից ամենահիմնաւորը դառնալ:

Սորանով մենք չենք ուզում ասել, թէ դէմ ենք հոգաբարձութեան. ընդհակառակը մենք յարգում ենք սկզբունքով նորա գոյութիւնը. որպէս ժողովրդի իրաւունքի ներկայացուցիչ՝ նա անհրաժեշտ է. սակայն նա համապատասխան չլինելով իւր կոչմանը, պէտք է ուսումնարանների ապահովութեան մասին մտածէ նաև մի այլ մարմին - Ուսումնարանական մասնաժողովը: Նա պիտի ունենայ մի դրամազլուխ, մի հիմնական ֆոնդ, որով նպաստ հասցնել կարողանայ աղքատ ուսումնարաններին և բոլոր ուսումնարանների նիւթականը մի ընդհանուր հաւասար բիջէտով պահպանէ: Թէ ի՞նչպէս կարելի է կազմել այդ ֆոնդը, մենք մատնանիշ կանենք հետևեալ աղբիւրները:

Ա. Էջմիածինը եկամուտի աղբիւրներ շատ ունի, թէև նոքա բոլորը անկանոն և անարդիւնք են մնում:

Այդ աղբիւրներից մինը սակայն շատ կանոնատուր է և ապահով. դա պակներից առնող «աթոռահաս» կոչող տուրքն է: Թէ ո՞ր է ծախսում այդ արդիւնքը, հաստատ չգիտենք (կարծեմ կոնսիստորի ծառայողներին է տրուում), սակայն չենք կարծում, թէ դա աւելի կարևոր տեղ ծախսւէր, քան ուսումնարանները: Մեր ցանկութիւնն է այդ մշտատև, ժողովրդի աճելութեան հետ աճող տուրքը յատկացրած տեսնել մեր ուսումնարանների նիւթական ապահովութեանը: Եւ ի՞նչ գեղեցիկ գաղափար. ամեն մի անհատ պարտատուր է լինում իւր ամուսնութեան օրից մի չնչին տուրք վճարել իւր ապագայ որդոց ուսման համար: Այդպիսով՝ օրինակ միայն Ախալքալաքի վիճակը ուսումնարանական ֆոնդին կը տայ 2000 ռուբլի (տարեկան 400 պսակ միջին հաշով ամեն մինը 5 ռուբլի):

Բ. Կանոնատուր եկամտի մի երկրորդ, բայց ոչ այնքան դիրին ձեռք բերելի, միջոց պէտք է համարել մեր եկեղեցական գումարները: Եկեղեցիների ամենամեծ մասը սեպիական դրամ ունի, որ երբեմն տասնեակ հազարների է հասնում. դժբախտաբար այդ փողերի ամենափոքր մասը միայն ապահով տեղ է. մեծ մասը կորստի է մատնում: Եթէ հնարատուր լինէր այդ փողերը հաւաքել և մի հիմնական դրամագլուխ կազմել, դա անտարակոյս, մեր ուսումնարանների ապահովութեան հիմքը կը դառնար: Էջմիածինը, սակայն, եթէ ոչ դրամագլուխը, գէթ այդ դրամների %-ի մի մասը կանոնաւորապէս միշտ կարող է պահանջել յօգուտ ֆոնդի, մանաւանդ այն եկեղեցիներից, որոնք ոչ մի ուսումնարանի չեն նպաստում: Ախալքալաքի վիճակի եկեղեցիները միայն 35000 ռ. ունին (դա պաշտօնականն է, որ երևի իսկականից շատ քիչ է): Եթէ այդ փողերից առնի տարեկան միայն 3 %, կանէ 1050 ռուբլի:

Գ. Երրորդ աղբիւրը պէտք է համարել մոմավաճառութիւնը, որի արդիւնքը թէև վաղուց, Ներսէս Ե-ի ժամանակից, յատկացրած է ուսումնարաններին, բայց հսկողութեան թուլութեան պատճառով շատ չնչին է, որովհետև եկեղեցիների ամենամեծ մասը գործ է ածում անկնիք-չորյլատրած մոմ: Ըստ իս, դորա առաջը կարելի է առնել այսպէս. սահմանել, որ ամեն մի երեցփոխ ամեն տարի պարտատուրի առնազը մի փութ թոյլատրած մոմ գործ ածել և արդիւնքի կէսը յատկացնել ֆոնդին. այդպիսով Ախալքալաքի վիճակի 72 եկեղեցիները ամեն տարի պարտատուր կը լինեն ֆոնդին վճարել 1440 ռ., հաշուելով, որ մի փութ մոմը առնուում է 20 ռ., ծախսում է միջին թուով 60 ռ. (40-80), գուտ արդիւնք մնում է 40 ռ., որի կէսը 20x72 (եկեղեցով) կանի 1440 ռուբլի:

Դ. Բացի դորանից յօգուտ նոյն ֆոնդի կարելի է ամեն մի եկեղեցուց մի որոշեալ տուրք ստանալ 3-7 ռ., որ տարեկան միջին հաշուով կանի 5 ռուբլի: Այդ հաշուով Ախալքալաքի վիճակը դարձեալ կը տայ 350 ռ. տարեկան: (Մեր օրինակները վերցնում ենք Ախալքալաքից, որովհետև միայն այդ վիճակի պաշտօնական վիճակագրութեանը ծանօթ ենք):

Կան ի հարկէ և ուրիշ շատ աղբիւրներ, բայց առայժմ նոցանից օգտուելը դժուար է: Առանց դորան էլ, մենք հաւատացած ենք, վերոյիշեալ եկամուտները այնքան միւթ կարող են տալ, որ ուսումնարանների մեծ մասը կապահովեն: Տեսնում ենք, որ միայն Ախալքալաքի վիճակը այդ հաշուով ֆոնդին պիտի տայ տարեկան 2840 ռ.: Եթէ դորանից 1840-ը իբրև նպաստ տայ այդտեղ եղած կամ բացւելի ուսումնարաններին, ամեն տարի ֆոնդին կը մնայ գուտ 1000 ռուբլի:

Երբ այսպիսով Էջմիածինը միջոց կունենայ աղքատ ուսումնարաններին օգնելու, այն ժամանակ հնարատր կը լինի «Երկրորդ կոպար» անուանեալը ոչնչացնել, որը ծագում է հէնց ուսումնարանների աղքատութիւնից: «Առաջին կոպարը» կը լինի այն ժամանակ ուսուցիչների վարձատրութեան հիմքը, որով զգալի կերպով նորա ռոճիկը կը բարձրանայ (ամեն մի դասին 5-10 ռ.):

Դա ի հարկէ չի կարող արգելք լինել, որ ապահոված ուսումնարանները աւելի լաւ վարձատրեն ուսուցիչներին:

Ի դէպ՝ առաջնակարգ և երկրորդական առարկաների մասին. որքան անհրաւեցի է որ ներկայ կոպարների կարգով նոյն աշխատանքը տարբեր գներով է վարձատրուում, նոյնքան օրինաւոր է առարկաների ա. և բ. կարգի բաժանումը և նոցա տարբեր վարձատրութիւնը, որ առաջնորդած է աշխատանքի համեմատ վարձատրելու սկզբունքով (թէն ոչ լիակատար): Այսպէս՝ լեզւի ուսուցիչը ամբողջ օրը ուսումնարանում չարչալուելուց, կոկորդն ու կեանքը մաշելուց յետոյ, մի քանի ժամ էլ շարունակ տանը պիտի զբաղի տետրակներ ուղղելով, մինչ, օրինակ, գծագրութեան ուսուցիչը թէ դասին մի մեծ աշխատանք չունի, որքան էլ նա բարեխիղճ լինի, և թէ տանը նա բոլորովին ազատ է հոգսերից: Ի հարկէ չի կարելի այդ երկուսին էլ միատեսակ վարձատրել մասնաւոր մեր ուսումնարաններում, ուր տիրապետում է առարկայական սիստեմը: Դա գուցէ հնարատր լինէր, եթէ մենք գործադրել կարողա-

նայինք դասարանական սիստեմը, որ ներկայ հանգամանքներում անիրագործելի է, հենց օրինակ շատերի ցենզ չունենալու պատճառով:

Ներկայ հանգամանքներում առարկաները հաւասար վարձատրել՝ կը նշանակէ խրախուսել գրութիւնը, գծագրութիւնը և այլն ի վնաս լեզուների:

Դորա առաջը կարելի է առնել նորանով միայն, որ ամեն ուսուցիչ առաջնակարգ դասերի հետ պարտաւոր լինի մի որոշ չափով երկրորդական դասեր ունենալ: Այդ դիրքին իրականանալի կը լինի մեր առաջարկութեամբ, որովհետև միմիայն գրութիւնն ու գծագրութիւնն են մնում երկրորդական, որոնց դասերի թիւը քիչ է և հեշտութեամբ կարելի է միացնել առաջնակարգ առարկաներին:

Երկրորդական դասերը, մանաւանդ իբրև աւելի դիրքին, կարելի է տալ նորաւարտներին, որոնք մի երկու տարի ծառայելուց և փորձութիւն ձեռք բերելուց յետոյ միայն լաւ է որ իրաւունք ստանան առաջնակարգ դասեր աւանդելու:

Չմոռանաք ասել, որ կանոնադրութեան մէջ առարկաները բարեխղճաբար չեն բաժանուած կարգերի: Ախալքալաքի մանկավարժական ժողովը (ինն հոգի) միաձայն ցանկութիւն յայտնեց առաջնակարգ համարել հետևեալները, աչքի առաջ ունենալով լոկ աշխատանքի ըստ արժանոյն գնահատութիւնը. հայերէն, ռուսերէն, քաբանութիւն, ձեռագործ, բնագիտութիւն. երկրորդական՝ գծագրութիւն և գրութիւն:

Երգեցողութեան մասին ձայները բաժանեցան - ոմանք համարում են առաջին, ոմանք երկրորդ. մենք մեծամասնութեան հետ վերջինների կողմն ենք:

Իսկ կրօնի մասին խօսք էլ չի կարող լինել:

Այս ցանկով երկու նոր դասեր են մտնում առաջնակարգ առարկաների շարքը (երգեցողութիւնով կը լինի երեք), որով բնականաբար երկու (կամ երեք) ուսուցչի ռոճիկ աւելանում է սովորականից:

«Երկրորդ կոպարի» վերջանալը, այլ և մի քանի առարկաների առաջնակարգ դառնալը, կարծեմ, քիչ թէ շատ կը նպաստեն ուսուցչի նիւթական ապահովութեանը: Սակայն ուսուցիչը իրան երբէք ապահով չի կարող համարել, քանի որ շարունակում է գոյութիւն ունենալ

այժմեան նորա ստորացուցիչ, վարձկան դրութիւնը: Ուսուցչի այժմեան դրութեամբ, այս համագամանքներում, մենք նորան պաշտօնեայ չենք կարող համարել, այլ ժամանակաւոր վարձկան միայն: Ինչքան էլ մի ուսուցիչ լաւ տեղ ունենայ և լաւ ռոճիկ ստանայ, նա չի կարող իւր անձը ապահով համարել, քանի որ ծառայում է վարձկանի պայմաններով, նա գիտէ, որ ոչ իւր ներկան է ապահով, ոչ ապագան: Թէկուզ տասնեակ տարիներ ծառայէր, մէկ էլ տեսար, իբրև մի հասարակ վարձկան, մի ծառայ, քեզ դուրս արին ուսումնարանից, շատ անգամ առանց որ և է հիմնաւոր պատճառի: Այդ վիճակին ենթակայ են մեր բոլոր ուսուցիչները՝ ամենայնեւորից մինչև ամենաառաջինը: Օրինակները սակաւաթիւ չեն:

Ուսուցիչների հետ հասարակութիւնը վարւում է որպէս առարկայի հետ, որպէս ծառայի հետ: Այսօր պիտանի ես կամ յարմարել կարող ես, ծառայի՛ր. վաղը ծերացար կամ ուզեցիր քո մարդկային իրաւունքները պաշտպանել, եալլա՛ փողոց: Այդպիսի անապահով կեանքը ի հարկէ շատ էլ գրաւիչ չէ. ուստի իւրաքանչիւր ուսուցիչ, առաջին յարմար ընդհանր, աշխատում է թողնել ուսուցչութիւնը և մի այլ աւելի ապահով պաշտօն գտնել: Այդ իսկ պատճառով մեզանում հազուադիւր եմ հին ու փորձած ուսուցիչներ:

Թէ ուսուցիչների թափառականութեան և թէ ուսուցչութեան ընկած անունը բարձրացնելու և ապահովելու միակ հիմնական միջոցը մենք համարում ենք ուսուցիչներին պաշտօնեայ և ո՛չ վարձկան ճանաչելը: Ուսուցիչների վիճակը խաղալիք չլինելու համար թեմական տեսուչների և հոգաբարձուների ձեռքում, նոցա պիտի նշանակէ «Ուսումնարանական մասնաժողովը», և այն օրից, երբ նա նշանակւեց ուսուցիչ, պիտի ճանաչի հայոց ուսումնարանների մշտական պաշտօնեայ. նորա դիրքը անխախտելի պիտի լինի, նորա տեղը ոչ ոք իրաւունք պիտի չունենայ բռնելու. նորան հրաժարեցնելու կամ տեղափոխելու իրաւունքը պիտի պատկանի միմիայն մասնաժողովին: Թափառում է հայ ուսուցիչը, որովհետև երբ ամառը եկաւ, որպէս ժամանակաւոր վարձկան-բանուոր, նա իւր ծառայութիւնը վերջացած է համարում և որոնում է մի այլ տեղ: Այդպիսի բան չէր լինի, եթէ նշանակւած լինէր մշտապէս, որպէս այդ լինում է բոլոր լուսաւոր աշխարհի ուսումնա-

րաններում: Նա մի անգամ նշանակեց, պիտի միշտ ճանաչի պաշտոնի մէջ և անպաշտօն չպիտի մնայ, քանի որ նա չի արձակել ապացուցած յանցանքի համար և կամ չի հրաժարուել անձնական ցանկութեամբ: Մեզանում բոլոր ուսուցիչները ամառը արձակուում են և հրաիրում ըստ բարի կամեցողութեան թեմական տեսուչների և հոգաբարձուների: Վա՛յ նորա հալին, ով որ եօլա գնալու ընդունակութիւն չի ունեցել. նոցանից շատերը մնում են անպաշտօն, շատերը զգաւած հեռանում են, շատերի տեղն էլ նորերն են բռնում:

Երբ այդպիսով ուսուցիչը կը ճանաչի մշտական, անփոփոխելի պաշտօնեայ, նորերին տեղ կը տրի այն դէպքում, երբ ազատ տեղ կը լինի. նոքա պիտի հաշուեն կանդիտատներ բացելի տեղերի համար:

Դորա փոխարէն ուսուցիչն էլ կապաւած պիտի լինի իւր պաշտօնատեղի հետ մշտապէս, առանց Ուսումնարանական մասնաժողովի թոյլատրութեան նա տեղափոխուելու իրաւունք չպիտի ունենայ: Հէնց այդ պատճառով հարկաւոր է, որ ուսուցիչներին նշանակէ միայն մի մարմին - Ուսումնարանական մասնաժողովը. եթէ ոչ, այժմս գոյութիւն ունեցող եղանակով մի թեմում յանցաւոր ճանաչուած և արձակաւոր մի այլ թեմում աւելի պատուաւոր տեղ է գտնում: Ուսուցիչների տեղափոխութիւնն էլ պիտի Ուսումնարանական մասնաժողովի միջոցով լինի:

Մեր այս առաջարկութիւնը, բացի կողմնակի բազմաթիւ լաւ հետեւանքներից՝ կունենայ նաև այս հետեւանքները:

Ա. Հասարակութիւնից, հոգաբարձութիւնից և թեմականներից ուսուցչի անկախ դառնալը նորա դրութիւնը հաստատ հիմքերի վերայ կը դնէ հասարակութեան մէջ և կը բարձրացնէ նորա նշանակութիւնը. ուսուցիչը կը դառնայ հասարակութեան իսկական, հաւասար անդամներից միւնը, նա կախումն չունենալով ոչ ոքից, ստիպուած չի լինի դաւաճանելու իւր համոզմունքներին - նա միջոց կունենայ իւր մարդկային պահանջները, առանց երկիւղ կրելու, առաջ տանել կեանքի մէջ:

Բ. Աչքի առաջ ունենալով, որ ծառայութեան տեղը դիրութեամբ չի կարող փոխել, նա պիտի աշխատի այնպիսի վարմունք ունենալ, որ ամէն չտայ ժողովրդի և պաշտօնակիցների դժգոհութեան: Ներկայիս կռիւները և ուսուցիչների ընկած պատիւը մենք վերագրում ենք ուսուցիչների թափառականութեան. «Բան չունիս, հօ եկող տարի այստեղ մնալու չեմ, ինչ ուզում են թող ասեն», յաճախ ենք լսել պաշտօնակիցներիցս:

Գ. Մի խումբ, շարունակ կամ սակավ փոփոխութեամբ մի տեղ մնալով, ի մօտոյ ճանաչելով թէ ուսումնարանների և թէ հասարակութեան կարիքները, դիրութեամբ կարող է հոգալ այդ կարիքները. չենք ասում այլ ևս այն, որ ուսուցիչների փոփոխութիւններից առաջացած ցաւալի ազդեցութիւնը ուսման գործի վերայ՝ կը վերանայ միանգամայն:

Դ. Թէև մեզանում վաղուց արծարծուած է ուսուցչական կասսաների խնդիրը, բայց մնացել է անգործադրելի դարձեալ ուսուցիչների վարձկանութեան, թափառականութեան շնորհիւ, որ իսկոյն կարող է իրականանալ, երբ մի խումբ երկար կը մնայ միևնոյն տեղը:

Ե. Այժմեան ուսուցիչների սովորական ծախսերից մի քանիսը իսպառ կը վերանար, որպիսիք են պաշտօնի համար եղած հեռագիրների և ճանապարհների ծախսերը: Ես ահա չորրորդ տարին է ուսուցիչ եմ և միայն ճանապարհաձախս ունեցել եմ մօտ 300 ռուբլի: Կողմնակի ընթերցողի համար գուցէ դա անհաւատալի երևայ, բայց պաշտօնակիցներիցս ոմանք թերևս զարմանան էլ խնայողութեանս վերայ, որ այդքան քիչ եմ ծախսել:

Ուսուցչին մշտական, անփոփոխելի պաշտօնեայ ընդունելուց յետոյ նորա դիրքը ապահովում է, բայց ապագան մնում է դարձեալ անորոշ. նա էլ մարդ է, ի հարկէ չէ կարող մինչև մահուան օրը իւր պաշտօնը շարունակել, ուստի հարկաւոր է մտածել և նորա ապագան ապահովելու՝ կենսաթոշակի մասին: Եթէ Ուսումնարանական մասնաժողովը ընդունէ այն միջոցը, որ մենք առաջարկում ենք, այսինքն վերոյիշեալ եկամուտներից կազմի ուսումնարանական ֆոնդ, այն ժամանակ այդ ֆոնդի գուցէ և խոշոր մասը հնարաւոր լինի յատկացնել ուսուցիչներին որպէս կենսաթոշակ: Այդ ֆոնդի աղբիւրների վերայ կարելի է աւելացնել նաև որոշ % ուսուցիչների ռոճիկներից: Ամեն մի ուսուցիչ ուրախութեամբ կը վճարէ այդ %-ը, որ իւր ապագայի ապահովութեան միակ յոյսը պիտի լինի:

Ուսուցիչների ապահովութեան երկրորդ կարևոր կէտն էլ նոցա որոց կրթութեան գործն է: Նկատուած է, որ ամեն մի ամուսնացած ուսուցիչ, մանաւանդ եթէ նորա կինը վարժուիչ չէ, աշխատում է թողնել ուսուցչութիւնը, որոնելով այնպիսի պաշտօն, որով ծածկել կարողանայ իւր մեծացած ծախսերը. կամ եթէ նա չի ուզում թողնել ուսուցչութիւնը՝

դժարանում է ամուսնանալ, աչքի առաջ ունենալով, որ իւր ապագայ որդոց կրթութիւն տալու միջոցներից գուրկ է ինքը: Դա մեր ամենապակասատր կողմն է: Ուսուցիչը, ուսման կարապետը, միջոց չունի իւր որդոց դաստիարակութեան ծախսը հոգալու: Հասկանալի է, որ ուսուցիչների որդոց կրթութեան գործը ապահովել՝ կը նշանակէ նպաստել նոցա ամուսնանալուն: Այդ կարելի է այլէս. օրէնք դնել, որ ուսուցիչների որդոց Ներսիսեան դպրոց կամ Դեմարան ընդունեն ձրի որդեգիր և եթէ հնարատր է, աւարտելոց յետոյ էլ միջոց տան ուսումը շարունակելու:

Ուսուցիչների կենսաթոշակի մի աղբիւր էլ պէտք է ընդունել ուսումնարանների բիւջէտը. հարկատր է պարտաւորեցնել, որ ամեն մի ուսումնարան իւր բիւջէտից գէթ 1 % յատկացնէ ուսուցիչների պենսիային: Այդպիսով օրինակ Ախալքալաքի ուսումնարանները իրանց տարեկան 5000 ռ. բիւջէտից մի՞թէ չեն կարող որպէս նպաստ 50 ռ. (1 %) դրան յատկացնել ամեն տարի: Ապահոված ուսումնարաններից ի հարկէ միշտ աւելի շատ % կարելի է ստանալ: Գլխատրն այն է, որ հիմքը դրի. աղբիւրներ ժամանակի ընթացքում շատ կը գտնուին: Մեր քահանաները (Թիֆլիզի) արդէն ունին մի փոքրիկ դրամագլուխ և ամեն տարի համարեա կտակներ են լինում նորա օգտին. ուսուցիչների ապահովութիւնը կարծեմ աւելի կը հետաքրքրի հասարակութեան և կողմնակի մուտքեր շատ կ'ունենայ կտակներից, ընկերութիւններից և այլն:

Ուսուցիչների ներկան և ապագան այդպէս ըստ կարելոյն ապահովելոց յետոյ, հասկանալի է, որ իրաւունք կ'ունենանք նոցա կողմից էլ պահանջելու բարեխղճութիւն, անձնւիրութիւն և իւր պարապմունքի մասնագիտութիւն: Դժբաղդաբար այժմս մենք չունինք թէ Ներսիսեան դպրոցում և թէ Դեմարանում ոչ մի մանկավարժական դասարան, ուր մեր ուսուցչացուները, նախքան պաշտօնի մտնելը, քիչ թէ շատ ծանօթանային իրանց մասնագիտութեանը:

Այդ կարիքը չափազանց զգալի է:

Ներսիսեան դպրոցը փակել է 7-րդ մանկավարժական դասարանը այն պատճառով, որ իբր թէ մանկավարժ չկայ. բայց իւր ահագին միջոցներով, եթէ նա կամենար, փակման օրից մինչև այսօր տասնեակ մանկավարժներ կարող էր տալ: Ներսիսեան դպրոցը աւելի դիւրութեամբ կարող է բաց անել այդ դասարանը, որ բացառապէս պիտի նւիր-

լի մանկավարժութեան: Այդ մանաւանդ անհրաժեշտ է այն պատճառով, որ դեռ ևս Ճեմարանը հարկաւոր րեպուտացիան չունի, և Ներսիսեան դպրոցը ասարտողներից հագիւ է պատահում, որ Ճեմարանում շարունակեն իրանց ուսումը: Դա ի հարկէ չի խանգարի, որ Ճեմարանն էլ մանկավարժական դասընթաց ունենայ լսարաններում:

Երբ կը բացուեն այդ դասարանները, կարելի է որոշել, որ միմիայն այդ դասարաններից ասարտածները ուսուցիչ ընդունեն: Ով որ ուսուցչութեամբ չալիտի պարապի, ի հարկէ այդ դասարանում կարող է չմնալ: Նոյնը պէտք է ասել և վարժուիիների մասին. մենք չունենք ոչ միայն հայոց լեզուի, այլ նոյն իսկ կանոնաւոր հայերէն գիտցող վարժուիիներ: Խիստ կարևոր է ունենալ նաև գէթ մի հատ միջնակարգ ուսման ծրագրով օրիորդաց ուսումնարան, եթէ միայն դա հնարաւոր է, որտեղից դուրս գային հայ վարժուիիներ: Այս խնդիրը խորին ուշադրութեան է արժանի:

Վերև շօշափած խնդիրները մենք համարում ենք մեր ուսումնարանական գործի հիմքը. միւս երկրորդական խնդիրների վրայ կանգ չենք առնի. թեմական տեսուչների և ասագ ուսուցիչների սահմանը, որպէս նաև հոգաբարձութեան այս կամ այն դիրքը պիտի դրուի այլ հիմունքի վրայ:

Մեզ թերևս պատասխանեն, որ շատ մեծ ուշադրութիւն ենք դարձրել ուսուցիչների ապահովութեան վերայ: Բայց առանց այդ ապահովութեան երբէք իր կոչմանը համապատասխանող ուսուցիչներ չենք ունենայ: Հաւատացած ենք, որ այդ ապահովութիւնը գրաւական կը լինի բարձրագոյն կրթութեամբ անձերի համար էլ, որ սոքա ուսուցչութեան նւիրեն իրանց, մինչ ներկայ պայմաններում դա անիրականանալի է: Մեր յօդածի երկրորդ պակասաւոր կողմն էլ թերևս համարի այն, որ Ուսումնարանական մասնաժողովին մեծ դեր ենք յատկացնում, այսինքն մեծ իշխանութիւն ենք կենդրոնացնում նորա ձեռքում: Բայց ուրիշ կերպ, առանց կենդրոնացման անհնարին են այս բարենորոգումները: Մեր ուսումնարանները այս խառնակ դրութիւնից կարող է ազատել միմիայն հաստատ կազմակերպւած մի մարմին, որպիսին պիտի լինի Ուսումնարանական մասնաժողովը:

«Մուրճ», 1894, N 1, էջ 133-141

ՕՐԷՆՔ ԵՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ (Քահանայական խնդրի առթիւ)

Սկսած Լուսաւորչի օրերից՝ մինչև մեր ժամանակները, դարերի այս երկար շարքում մեր հոգևոր գործերը կառավարել են և ըստ մեծի մասին դեռ կառավարում են միմիայն տրադիցիայով - աւանդական սովորութիւնով, եթէ յիշելու չլինինք սուրբ հարց և հայրապետների զանազան ժամանակներում և պարագաներում տուած կանոնները, որոնք համարեա երբեք իրական և ընդհանուր գործադրութիւն չեն ունեցել շնորհիւ այն հանգամանքի, որ ժամանակի դարաւոր կնիքը և հնութեան փոշին նրանց մատնել են մոռացութեան... իսկ շատերն էլ արդէն անպէտք, նոյն իսկ վնասակար են ներկայիս պահանջներին...

Պատմական աղետալի ժամանակները, հայոց հայրապետութեան անհաստատ ու վտանգալից կացութիւնը, հայերի բռնադատած վիճակը, մասամբ նաև հայ հոգևորականութեան թուլութիւնը ժամանակ և նպաստամատոյց պայմաններ չտւին նրան ի մի կազմակերպելու՝ մեր հոգևոր գործերը կանոնաւորապէս վարելու համար և վերոյիշեալ կանոնները ամփոփելով հրատարակելու իբրև մի օրինագիրք, կոդէկս, որով պիտի ղեկավարէին թէ իրանք և թէ իրանց յաջորդները:

Ի հարկէ, այդ ուղղութեամբ եղել են փորձեր. Ս. Գրքի պատւերները միացրած եկեղեցու ս. հարց կանոնների և ժողովրդի աւանդական սովորութիւնների հետ ի մի ամփոփելով տալ ժողովրդին իբրև օրինագիրք, որ պիտին է Մխիթար Գօշի և այլոց միջնադարեան օրինագրքերը. բայց դրանք ընդհանուր ընդունելութիւն և գործադրութիւն, եթէ չենք սխալում, երբեք չեն գտել. նրանք աւելի ազդեցութիւն և իրական գործադրութիւն են ունեցել Հայաստանից դուրս հայկական գաղթավայրերում՝ Լեհաստանում, Ռուսաստանում, նոյն իսկ Վրաստանում, քան բուն Հայաստանում:

Այսպէս ուրեմն, դարերից ի վեր մեր ներքին հոգևոր գործերը կառավարելու համար իսկապէս մենք մի օրինագիրք չենք ունեցել այդ բառի իսկական իմաստով:- Այստեղ չենք յիշում յայտնի «Պոլոժենիան»¹,

1. Сводъ законовъ. Изданіе 1857 года. т. I. часть I. книга третія. О управленіи духовныхъ делъ христіанъ Армяно-Грегоріанскаго исповеданія.

որովհետև դա վերաբերում է միմիայն Ռուսաստանի հայերին և այն էլ որոշ սահմաններով միայն: Մեզանում իշխել է ըստ մեծի մասին միայն կամայականությունը, հաճոյքը, քմահաճությունը, ինչ ուզում էք անուանեցեք: Իբրև ասիական ժողովրդի իսկական տիպար, մեր գործերի կառավարությունը ըստ մեծի մասին եղել է և է անկանոն, հակառակ և ամեն տեսակ պատահականության արդիւնք, քանի որ նրա հիմքը խախտու է եղել, քանի որ չկայ խիստ սահմաններով որոշած օրէնքը: Մենք չունենք յարատև, անեղծանելի և սրբացած օրէնք, այլ միայն կամայականություն... Ուր չկայ օրէնք, հարկաւ չի կարող լինել և դիսցիպլինա, գործերի յաջորդական հետևողականություն, հրահանգների և վճիռների միատեսակություն, պարտականությունների իրաւունքների փոխադարձ յարաբերութեան սահման: Այսօրայ գօրեղ, քաղաքակիրթ և յառաջադեմ ազգերի կազմը անխախտ է մնում միմիայն կանոնաւոր օրէնքի և լաւ կազմակերպութեան շնորհիւ:

Օրէնքն է, որ մեղաւորին պատժում է, գրպարտւածին արդարացնում, ճշմարտութիւնը պաշտպանում, պարտաճանաչութիւնը խրախուսում, պարտազանցութիւնը դատապարտում և առհասարակ մարդկային փոխադարձ յարաբերութիւնների արթուն դեկավար հանդիսանում: Չի կարելի երևակայել մի լաւ, կազմակերպւած և կանոնաւոր հաստատութիւն կամ հիմնարկութիւն, որ յարատևել կարողանար առանց օրէնքի, կանոնի և լաւ կազմակերպութեան:

Սուրբերը միայն անցեալումն են գոյութիւն ունեցել. ներկայումս, երբ մարդկային հասարակութիւն, ուրեմն և ազատ կամքի վրայ հիմնւած փոխադարձ յարաբերութիւն կայ, պիտի լինի և օրէնք, իրաւունքների, պարտականութիւնների և փոխադարձ յարաբերութեան պարզ ու որոշ սահման: Չկայ այդ սահմանը, - ամեն ոք ազատ է ուրեմն ըստ իւր քմահաճութեան գործել, և այդ քմահաճութիւնն է, որ խեղդել է շատ գեղեցիկ հիմնարկութիւններ և խեղդում է մեզանում ամեն բան:

Ոչ միայն այդ. վերջին դարերում մեր հոգևորականութիւնը այնքան է ընկել, նրա կազմակերպութիւնը, փոխադարձ կապն ու յարաբերութիւնը այնքան թուլացել են, որ նա երբեք չի ունեցել միաբանութիւններ այդ բառի իսկական մտքով, այն ձևով, օրինակ, որպիսին գոյութիւն ունի մեր կաթոլիկ եղբայրակիցների՝ Վենետիկի և Վիեննայի

Մխիթարեանների մէջ... Հայ հոգևորականը իրան երբեք չի համարել միաբանութեան անբաժանելի անդամ. միաբանութեան և առհասարակ հայ հոգևորականութեան շահերը նա համարել է իբրև մի օտար, խորթ, իրան չվերաբերեալ, իւր անձնականին հակառակ շահեր, ուստի և նա մտածել և գործել է ըստ մեծի մասին ոչ թէ յօգուտ, այլ ի վնաս այն եղբայրութեան, այն դասակարգին - միաբանութեան, որին խոստմամբ և երդումով յաւիտենական անդամ է գրւած: Դրանից է ծագում ահա այն տխրալի երևոյթը, որ մեր վարդապետների, եպիսկոպոսների և, ցաւ է ասել, նոյն իսկ կաթողիկոսների երբեմն մեծամեծ կարողութիւնները, արժէքաւոր թղթերն ու թանկագին գոյքերը բաժին են դառնում զանազան հաջիների, խնամիների... և ազգականների, ո՛չ միայն կենդանութեան ժամանակ, այլ և մահուանից յետոյ:

Մենք չունենք առհասարակ օրէնք մեր նեքին գործերին վերաբերեալ, չունենք նաև, չեմ ասում խիստ, զինուորական մի կազմակերպութիւն մեր հոգևորականութեան մէջ, այլ նոյն իսկ հասարակ, սովորական մի կազմակերպութիւն, որի անդամները հասկանալ կարողանալին իրանց եղբայրութեան շահերի ընդհանրութիւնը, այն եկեղեցու շահերի միութիւնը, որին ծառայելու նրանք պարտաւորւել են կամաւոր ուխտով և երդումով...

Ի՞նչ կարող է լինել այդպիսի մի հիմնարկութեան, մարմնի կամ ամբողջ հոգևորականութեան գործունէութեան հետևանքը, երբ նա տոգորւած չէ մի ընդհանուր գաղափարով, երբ նա միացած չէ շահերի ընդհանրութեամբ. երբ նա չունի մի որոշ և յարգելի կազմակերպութիւն, երբ այդ անկազմ մարմինը, բացի այդ բոլոր պակասութիւններից, չունի նաև իւր գործունէութեան սահմանները որոշող օրէնք, կանոն. երբ նրա բազմաթիւ, ցան ու ցիր անդամները տգէտ են, ողորմելի և կաշառակեր...

Չունենք օրէնք, չունենք նաև կազմակերպութիւն, կամ չունենք կազմակերպութիւն, չունենք նաև օրէնք. առանց կազմակերպութեան օրէնքը կը մնայ միայն մեռեալ տառ, իսկ առանց օրէնքի չի կարող գոյութիւն ունենալ յարատև կազմակերպութիւն: Այդ երկու գաղափարներից որն էլ վերցնէք, առանց միւսին՝ ապարդիւն, անօգուտ և անպէտք են, իսկ առանց այդ երկուսի գոյութեան՝ չի կարող գոյութիւն ու-

եննալ ո՛չ մի բարեկեցիկ հիմնարկություն, մանաւանդ երբ նա բարդ պարտականությունների և իրաւունքների ղեկավար է, որպիսին է մեր հոգևորականությունը:

Այս տեսակետից նայելով, մեր հոգևոր գործերը ամբողջովին գտնուում են խաօսի մէջ. օրէնք չլինելուցն է քահանայական խնդրի, հասու չհասի, ընտրական գործի, ուսումնարանական կազմակերպութեան, հոգևոր կառավարութեանց տնտեսական և առհասարակ միւս մասերի ներկայիս կարկամ-խառնաշփոթ և հակասական դրութիւնը:

Այս կամ այն անհատն, ի հարկէ, շատ բան կարող է շինել շնորհիւ այն հանգամանքի, որ նա պատահաբար լուսամիտ, խոհուն, հեռատես և ժողովրդի ու եկեղեցու շահերին նւիրած անձնատրութիւն է. բայց, չնոռանանք, որ այդպիսի անհատները բացառութիւն են. նրանք, որպէս և նրանց գործունէութիւնը, ժամանակաւոր են միայն. այդ գործունէութիւնը յարատև, արդիւնաւէտ չի կարող լինել, երբ նա պաշտպանւած ու խրախուսւած չէ օրէնքով:

Տգէտ քահանաների խնդիրն, օրինակ, անցեալ տարի Սինոդի մի գեղեցիկ կարգադրութեամբ արխիւ տրուեց այլ ևս երևան չգալու յոյսով, բայց այսօր մեր ամբողջ մամուլն ու հասարակութիւնը կրկին ստիպւած է նոյն հին երգը երգելու, ինչ որ երեսուն տարիներից ի վեր հազար ու մի ձևերով քննւած ու դատապարտւած էր: Այդ մեռած խնդիրը չէր կարող երևան գալ, եթէ մեր հոգևորականութիւնը մի քիչ միայն հետևողականութիւն, մի փոքր յարգանք ունենար հէնց դէպի իւր որոշմունքը, մի փոքր յաջորդական և հեռատես լինէր իւր գործողութիւնների մէջ... Սկզբունքով էլ, կարգադրութիւնով էլ որոշւած էր տգէտ քահանայ չձեռնադրել. պրծաւ գնաց... Սովետատրութիւնները աւելորդ են. հիմա հարցը շինել են մի գորդեան հանգոյց, թէ ի՞նչ կը նշանակէ կրթւած քահանայ (!!??):- Կարդացէ՛ք մեր հոգևոր սեմինարիաների ծրագիրը և կը հասկանաք, որ նրանք կազմւած են կրթւած քահանաներ տալու համար. խնդիրը պարզ է. եթէ նրանց ծրագիրը մի քիչ հին և պակասաւոր է, պէտք է փոփոխել և լրացնել և ով որ այդ ծրագիրը, անցած կը լինի, նրան մենք կանւանենք կրթւած քահանայ, համեմատաբար միայն ի հարկէ:

Մեզանից շատերը քահանայական խնդրին այնպես են վերաբերում, որ կարծես աշխարհիս երեսին մի չեղած, չտեսնում և տիեզերական նշանակություն ունեցող խնդիր պիտի լուծեն: Նայեցէ՛ք ձեր շուրջը, պարոններ, եթէ ընդունակ էք լաւ օրինակի հետևելու, այդպիսի օրինակներ շատ կան. վերցրէ՛ք կաթոլիկ, յոյն, ռուս, վրացի հոգևորականութիւնը, հետևեցէ՛ք միմիայն նրանց, որովհետև այդ կողմից մենք բոլորից յետ ենք:

Վրաց սեմինարիան, որ ուսման ծրագրով համապատասխան է մեր ճեմարանին, բացառապէս միայն քահանաներ է տալիս վրաց. ի՞նչն է պատճառը, որ նրա սաները գնում են գիւղ, իսկ մեր սեմինարիստները կամ ճեմարանականները՝ ոչ. հարկաւ օրէնքի և կրթական ցենզի պահանջը, որ վրաց մէջ կայ, իսկ մեզանում՝ չկայ: Այստեղ խօսք չի կարող լինել *fin de siecle*-ի նիւթապաշտ ուղղութեան մասին, որի պատճառով որպէս թէ մեր շրջանաւարտները հրաժարում են քահանայութիւնից. հապա ինչո՞ւ վրացի շրջանաւարտները չեն հրաժարում, քանի որ նրանց սեմինարիան Թիֆլիսի նման մի շռայլ քաղաքում է գտնում, իսկ մեր ճեմարանը Էջմիածնի նման մի համեստ վանքի բակերում...

Թողնենք վրացոց. հոգևորականութիւնով մենք յետ ենք նոյն իսկ մեր հայ կաթոլիկ եղբայրակիցներից, որոնք Կովկասում մինչև վերջին տարիներս չունեն ինքնուրոյն անկախ հոգևոր կառավարութիւն. չունեն հոգևոր սեմինարիաներ, բայց ունին մի գորեղ հոգևորականութիւն: Համեմատեցէ՛ք այդ մեր տգէտ եղբայրակիցների գիւղական հոգևորականներին մերայիւնների հետ, դիտեցէ՛ք նրանց գործունէութիւնը, ուղղութիւնը և կը տեսնէք, որ նրանք անչափ բարձր են մերոնցից. թէև սակաւաթիւ, ցանուցիր, առանց մօտաւոր իշխանութեան հսկողութեան, սակայն մի ոգով, մի ուղղութեամբ տոգորած, մի սերտ կազմակերպութեամբ միացած նրանք կարող են միայն զարմանք յարուցանել:

Վերցրէ՛ք, օրինակ, Ախալքալաքի գաւառը, ուր ապրում են բազմաթիւ հայեր, հայ կաթոլիկներ և վրացիներ. համեմատեցէ՛ք և տեսէ՛ք. վրաց գիւղերում կան ճեմարանական լիակատար կրթութեամբ քահանաներ. կաթոլիկներն ունին միջնակարգ կրթութեամբ իրանց գործին հմուտ և բանիբուն քահանաներ, իսկ այդ գաւառի ազգաբնակչութեան գերակշռող տարրը - Լուսաւորչականները՝ յիսուն և ինը քահա-

նաների մէջ չունին և ո՛չ մի քահանայ, որ դպրոցի երես տեսած լինէր: Երևակայեցէք, որ քահանան, ըստ բանաստեղծի ասութեան, պիտի լինի «հովիւ անխոնջ Քրիստոսի հօտի. երկնաբեր գանձին արթուն դէտ. միջնորդ Աստուծոյ, մարդկան ազգի հետ»...

Կրկնում ենք, վրաց մէջ կրթւած անձերն են ձեռնադրուած քահանայ, որովհետև արգելք կայ տգէտների առաջ և պահանջ կրթական ցենզի, իսկ մեզանում չեն ձեռնադրուած, որովհետև չկայ թէ այդ արգելքը և թէ օրէնքի նշանակութիւն ստացած խիստ պահանջը. խտրութիւնն ու պահանջը իրանք կը ստեղծեն կրթւած քահանայացուներ:

Այդ դէպքը մեզանում նոր չէ. երբ եղել է խիստ պահանջ, նա ունեցել է հետևանք, միայն տևական չլինելով կորցրել է իւր նշանակութիւնը: Այսպէս օրինակ, Գէորգ Դ-ի ժամանակ գիւղական քահանայացուներից պահանջուած էր ձայնագրութիւն, և մենք յիշում ենք տասնեակ տիրացուներ, որոնք մի տարի շարունակ ձայնագրութեամբ էին պարապում քահանայ դառնալու համար և իրօք դարձան էլ: Եթէ դուրս հետ լինէր նաև կրթական ցենզի պահանջը, ապա նրանցից շատերը դրանից էլ կը պատրաստուէին: Մենք ժամանակին հետևելու, նրա պահանջները յարգելու և, մի բան որոշելուց յետոյ՝ հետևանքին սպասելու ընդունակութիւն քիչ ունենք: Սիմոնը կրթական ցենզ նշանակեց քահանաների համար, և մի տարի չանցած, արդէն մենք հրաշքներ ենք սպասում: Սպասեցէ՛ք, պարոններ, համբերութիւն ունեցէ՛ք մի քիչ և կը տեսնէք նրա բարերար հետևանքները: Մենք անձամբ տեսանք չորս տիրացուներ, որ յոյսերը կտրելուց յետոյ անցեալ տարի որոշեցին սեպտեմբեր ամսից պատրաստուել մի խումբ ուսուցիչների մօտ Ներսիսեան դպրոցի չորրորդ դասատան քննութիւն տալու համար. բայց եկաւ սեպտեմբերը, նոր քամի փչեց և նրանք տեսնելով՝ որ առանց պատրաստուելու էլ քահանայ կարող են լինել, թողին իրանց մտադրութիւնը:

Հասկանալի է, եթէ Սիմոնի որոշմունքը անփոփոխելի մնար, փորձի համար գէթ մի հինգ վեց տարի, այնուհետև միայն կարելի կը լինէր նրա օգտի կամ վնասի մասին խօսել. այդ որոշմունքի շնորհիւ, անտարակոյս, ընդունակ և պատրաստի տիրացուներից շատերը ուղղակի քննութեամբ կարող էին քահանայ դառնալ: Ուր ջոկողութիւն, ընտ-

րութիւն չկայ, այնտեղ չի կարող առաջ գալ ո՛չ մի լաւ բան, դա բնական օրէնք է. օրինակը աչքերիս առաջն է, մի քանի տարւայ ընթացքում խալիֆա վարժապետներն ու խալիֆայութիւնը պատմութեան նիւթ դարձան, շնորհիւ օրէնքի պահանջման. մի տասն-քսան տարուց յետոյ կարող ենք և այս քահանայական ծեծած խնդիրն էլ պատմութեան արխիւին յանձնել, եթէ յարգել կարողանանք ժամանակի պահանջը և հետեւեմք հարևաններիս գեղեցիկ օրինակին:

Մենք ակամայ կանգ առանք այսքան երկար քահանայական խնդրի վրայ. այս ամենը բերում ենք իբրև պատահական օրինակներ հասարակութեանը զբաղեցնող խնդրի առթիւ: Մեր յօլածի նպատակը միայն քահանայական խնդիրը չէ, այլ մեր բոլոր հոգևոր գործերի կանոնաւորման խնդիրը, որոնք անխզելի կերպով կապւած են իրար հետ, ինչպէս մի ամբողջ մարմնի օրգանական մասերը, լինի դա քահանայական, ուսումնարանական, հաս ու չհասի, տնտեսական և այլն:

Այդ խնդիրներից շատերն իսկապէս եղել են շատ վաղուց, քրիստոնէութեան առաջին օրերից, որպիսին էր քահանայականը, հաս ու չհասը և այլն. քահանաներին և հոգևորականներին ողբում է իւր անգուգական երկի մէջ դեռ հայկական Հերոդոտը - Խորենացին:

Դարերը չեն կարողացել լուծել այդ խնդիրները և ահա, շնորհիւ կեանքի միանգամայն նոր պայմանների, երոպական քաղաքակրթութեան նոր և զօրեղ ազդեցութեան, այդ խնդիրները երևան են գալիս առաւել բարդւած, կնճռւած և անյետաձգելի լուծումն են սպասում: Հների վրայ աւելացել են նորանոր խնդիրներ, կեանքի նոր պայմանները պահանջում են հնումը չնախատեսուած օրէնքներ: Այդ բոլորը կենդրոնանում է մեր հոգևորականութեան և էջմիածնի ձեռքը, որ շնորհիւ իւր ներկայ կազմակերպութեան՝ չի կարողանում ո՛չ միայն այդ բոլոր խնդիրների առաջն առնել, լուծումն, ուղղութիւն տալ ու դեկավարել, այլ շատ և շատ յետ է մնում այդ պահանջներն հասկանալուց... Իրողութիւնն այն է, որ մեր հոգևոր դասը թէ իւր կրթութեամբ, թէ հասկացողութիւնով և թէ աշխարհայեցողութեամբ աշխարհականներից շատ յետ է մնացել, այնպէս որ այն, ինչ հոգևորականութեան անմիջական պարտականութիւնն է կատարելը, նա մոռանում է այդ, որ ժողովրդի լուսամիտ դասին առիթ է տալիս թէ բողոքելու և թէ յիշեցնելու, պահանջելու նրա պարտաճանաչութիւնը:

Չեզ պարզ օրինակ. մեր թէ առաջնորդների և թէ Սինոդի անդամների մէջ, չենք ասում բարձրագոյն, միջնակարգ կրթութեան տէր անձեր էլ չկան...

«Մորճ»-ի (N 3) մէջ գեղեցիկ է նկատում պ. Արասխանեանցը, թէ միայն կրթած քահանաներով չի՝ նորոգւի մեր հոգևորականութիւնը, այլ այդ նորոգութիւնը անհրաժեշտ է և կուսակցօն հոգևորականութեան համար: Եւ նա պնդում է որ քահանայական դասի վերանորոգումը նոյն իսկ հոգևոր կառավարչական մարմնից, վարդապետներից ու եպիսկոպոսներից պէտք է սկսել:

Երբ ծառի արմատը անառողջ պայմանների մէջ է, նրա եզների և պտուղների առողջութիւնը ժամանակաւոր և պատահական միայն կարող է լինել... Նորոգութիւնը հիմքից է հարկաւոր, այլապէս նոր կարկատանը կարող է պատառել հին տիկը:

Այս ամենից յետոյ մենք այն կ'ասենք, որ հարկաւոր է ժամանակի պահանջը յարգել և մեր բոլոր գործերում մտցնել առհասարակ նորոգութեան, կանոնի և սահմանադրութեան ոգի:

Մեր եկեղեցին ժողովրդական եկեղեցի է. առանց ժողովրդի հեղինակաւոր մասի ձայնին կարգադրութիւն անելը հակառակ կը լինի այդ ժողովրդի աւանդական սովորութեանը և եկեղեցու ոգուն: Ուստի այս ամեն խնդիրների վերաբերեալ պէտք է մշակւեն որոշ կանոններ, հրատարակւեն՝ մամուլի և ժողովրդի հասկացող մասի թեր և դէմ կարծիքն իմանալու համար և ապա այդպէս քննադատութեան բովից անցնելուց յետոյ՝ հրատարակւեն իբրև օրէնք:

Ի հարկէ այդ օրէնքը այն ժամանակ միայն պատկառանք կ'ազդէ և արդիւնք կ'ունենայ, երբ նա կը համապատասխանէ ժողովրդի և ժամանակի պահանջին և բարձր կանգնած կը լինի կուսակցական շատ անգամ կորստաբեր միտումներից: Մեր հոգևորականութիւնը չի ուզում կարծես մի քիչ բարձր կանգնել կուսակցութիւններից և օգտւել այդ կուսակցութիւնների մշակած խնդիրներից ժողովրդի կարիքն ու հոգսը լրացնելու համար, այլ նա ինքը յաճախ զոհ է դառնում այդպիսի կուսակցական միտումների...

Օրէնքի հետ անհրաժեշտ է խիստ կազմակերպութիւն, առանց որին օրէնքը կը մնայ միայն տառ, երբ նա չի գործադրուի մարդկային

յարաբերութեանց ժամանակ. կազմակերպութեան համար գեղեցիկ օրինակ են եւրոպական հիմնարկութիւնները. մեր հոգևոր գործերն այսօր այնքան բարդւած են, որ նրանց կանոնաւորելու համար անհրաժեշտ են առանձին վարիչ մարմիններ:

Այս ամենը, ի հարկէ, դիւրին իրականանալի չեն, մանաւանդ այն պատճառով, որ Էջմիածինը դեռ առաջնորդներ չի գտնում թեմերը թափուր չթողնելու համար. բայց չափտի մոռանանք, որ այդ մարմիններից և պաշտօններից շատերը, որպիսի են տնտեսականը, ուսումնարանականը և այլն, կարելի է յանձնել դրա համար ժողովրդից ընտրած աշխարհականներին, որոնք այդ մասերում հաւանականօրէն աւելի ձեռնհաս են, քան նոյն իսկ հոգևորականները¹:

Միայն հիմնաւոր-Էական նորոգութիւնը առհասարակ մեր բոլոր ներքին գործերում կարող է բարձրացնել մեր հոգևորականութեան ընկած պատիւը, միայն հետևողական, արդարամիտ և օրինաւոր գործունէութիւնը կը կապէ ժողովրդին իւր եկեղեցական կարգերի հետ, այլապէս ներկայիս խառնաշփոթ դրութիւնը, բացի զգանքից ու արհամարհանքից, ոչինչ չի կարող ներշնչել ժողովրդին:

Այսօր խլանում, խեղդում է ժողովրդի արդարացի ձայնը հոգևոր դասի բազմաթիւ ապօրինութեանց առթիւ: Կարդացէք առաջնորդների, յաջորդների և քահանաների վրայ ուղղւած բազմաթիւ խնդիրները, որոնք ըստ մեծի մասին մնում են անպատասխան. հետևեցէք հաս ու չհասի կենսական և գայթակղեցուցիչ խնդրին իւր բազմաթիւ ապօրինի հետևանքներով... «Ոչ յօրինակ այլոց»... Քննեցէք եկեղեցական գումարների, վանական կալւածների անկոնտրոլ, անհաշիւ դրութիւնը. դիտեցէք առհասարակ մեր բոլոր ներքին գործերի անգոյն, ողորմելի և կորստաբեր ընթացքը, և կը գաք մի տխրալի, յուսահատական եզրակացութեան. արդարը հալածւում, գործը խափանւում, դրամը յափշտակութեան և աւարի նիւթ դառնում, մի խօսքով այստեղ տիրապետում են բուն ասիական կարգերը... սիւմնականութիւն, կաշառակերութիւն, խնամիութիւն, եօլայականութիւն...

1. Տես «Մուրճ», պ. Ա. Արասխանեանցի յօդածը. Դպրոցական-վարչական րեֆորմ, ուր այդպիսի մի առաջարկութիւն արւած է ուսումնարանների ուսումնական մասի կառավարութեան համար:- Ծան. Հեղ.

Եւ ասացէք խնդրեմ, այս խառնաշփոթ դրութեան մէջ, երբ անհատի պատիւը, իրաւունքը, դիրքը և անունը անաղարտ մի որոշ դիրքի և սահմանի մէջ պահելու համար ո՛չ մի գրաւական չկայ, երբ անհատը կախումն ունի ո՛չ թէ օրէնքից, այլ կամայականութիւնից և խնամիտութիւնից. երբ անհատի ստորաքարշ պաշտօնակիցը մի ըոպէում կարող է տապալել նրան և չունի օրէնք, որով արդարանալ կարողանայ,- այդպիսի հանգամանքներում առհասարակ ո՞վ է գծել իւր «սաղ գլուխը աւետարանի տակ դնել», ո՞վ կը տայ հոգևորականութեան անունը, երբ մի լիբր լրագրական սուտ¹ կարող է թէկուզ ժամանակաւորապէս խախտել անհատի դիրքն ու պատիւը, երբ ապացուցած յանցաւոր քահանան, Սևանի փոխանակ, պարզևով է վերադառնում իւր տեղը. երբ դատը չքննած՝ քահանան բանտարկւում է և առաջնորդը զլանում է բողոքելու այդ մասին. երբ նոյն առաջնորդը քահանայ է ձեռնադրում քրէական յանցաւորին... Այս է ահա մեր ներքին գործերի պատկերը:

Յիշենք դարձեալ մի խնդիր, որ անցեալ տարիները ուղղած էր հոգևոր կառավարութեան. դա խնդիր չէր, այլ կատարեալ մի յանդիմանութիւն, բողոք՝ մեզանում տիրապետող կարգերի դէմ: Խնդրատուն կարծեմ հինգերորդ աստիճանի չհասութիւն ունէր, որին չէին թոյլ տալիս ամուսնանալու: Նա հաւաքել էր այդպիսի դէպքերի 89 օրինակ այդպիսի ամուսնութիւնների, իսկ իրան մերժում էին. ուստի նա մօտաւորապէս այս էր գրում. «Եթէ դա օրէնք է, ուրեմն թոյլ տուէք ինձ ևս օգտուելու այդ օրէնքից, իսկ եթէ կամայականութիւն, ապա ես չեմ ցանկանալ զոհ լինել կամայականութեան և ո՛չ էլ դրա համար նպաստ կը տամ ճեմարանին»: Թոյլատրութեան համար կարծեմ 100 ռ. էր պահանջում յօգուտ ճեմարանի: Յիրաւի ժամանակի խիստ պահանջը չէ, մանաւանդ գիւղական դասի համար, որ հաս ու չհասը կենսական խնդիր է դարձրել, այլ այդ ապօրինի թոյլատրութիւններն ու մի որոշ կանոնի չհետևելը, որոնք, իբրև գայթակղեցուցիչ օրինակ, հիմք են դառնում ժողովրդի մոլորութեան և ապա արդարացի տրտունջին: Այն որ թոյլ է տրւած հարևանին չորրորդ աստիճանում, չի թոյլատրում իրան հինգերորդում, ի՞նչ պիտի մտածէ այդ մասին ժողովուրդը:

1. Յիշեցէք Արսէն աբեղ. Գլտճեանի դէպքը, որին սպանութեան մէջ էին գրաւարտում:

Վերևն էլ ասացինք, որ մեր խօսքը միայն քահանայութեան չի վերաբերում, որի մասին ձեռնհաս անձերն արծարծեցին իրանց կարծիքը. սորա մէջ շօշափում մի քանի կէտերը մինչև անգամ դուրս եկան մամուլի մէջ, երբ մենք այս յօդածը բարեկամներիս շրջանում կարդալուց յետոյ արդէն արտագրում էինք. այո՛, միայն քահանայութեան մասին չէ մեր խօսքը. այլ առհասարակ բոլոր մեր հոգևոր գործերի վարչական կանոնաւորութեան, իրաւունքների և պարտականութիւնների սահմանադրութեան, ընդհանուր օրէնադրութեան է վերաբերում: Խնդիրը առհասարակ պէտք է աւելի լայն մտքով հասկանալ. դա մեր հոգևոր գործերի վարումն է, լինի դա քահանայական, տնտեսական, ուսումնական և այլն... Մէկը առանց միւսի անկախօրէն մշակել չի լինի, մարմինը անդամալոյծ կը լինի, երբ նորա օրգանները իրանց զարգացմամբ համապատասխան չեն իրար...

Այսօր մենք ահագին գործեր, խնդիրներ և հասուն պահանջներ ունենք, որոնք սպասում են շուտափոյթ լուծման, որոնց և ո՛չ մինը իւր ներկայութեամբ չի համապատասխանում կեանքի պահանջներին. ընտրական գործը, ուսումնարանական խնդիրը, հաս ու չհասը, տնտեսականը, քահանայականը, կուսակրօն հոգևորականութեան խնդիրը և այլն և այլն... Բոլորը հասունացած պտուղներ են, որոնց եթէ քաղող չլինի, ոտնատակ կը գնան:

Ժամանակը և ժողովրդի պահանջը անչափ առաջ են գնացել, կեանքի պայմանները հիմնովին փոփոխել են, շատ հին կարգեր և սովորութիւններ անդառնալի կերպով կորցրել են իրանց նշանակութիւնը: Տրադիցիան - սովորութիւնը - այլ ևս չի կարող բաւարարութիւն տալ ժողովրդի ներկայ կացութեանը. ժամանակը դրել է իւր անխուսափելի պահանջը, որին պէտք է բաւարարութիւն տալ, ապա թէ ոչ, նա իւր առաջն եկած արգելքը խորտակելով կ'անցնի. պէտք է յարգել կեանքի նորանոր պայմանների պահանջը, այլապէս ժողովուրդը երես կը դարձնէ այն հիմնարկութիւնից, որ իւր պահանջները յարգել չգիտէ:

Մենք չենք ուզում գրչի մի հարածով լուծել այդ բարդ խնդիրները, այլ մատնանիշ լինել այդ խնդիրների մեծութեան, ամբողջութեան նուցա փոխադարձ կապի վրայ, որոնց լուծումը պէտք է որոնել օրէնքի և կազմակերպութեան մէջ, որ մեզանում չկայ: Տէք օրէնք, տէք կազ-

մակերայութիւն և ժամանակն ու կեանքը կը լուծեն այդ խնդիրները, ի հարկէ, քանի շուտ, այնքան լաւ. մանաւանդ այդ խնդիրներից մի քանիները գէթ տեսականապէս բաւականաչափ արծարծել է մամուլը, ինչպէս օրինակ ծխականների և եկեղեցու յարաբերութիւնը («Արձագանք»), դպրոցական-վարչականը («Մուրճ»), ընտրողականը («Մուրճ», «Մշակ»), քահանայականը (ամբողջ մամուլը):

«Մուրճ», 1894, N 5, էջ 780-791

ՀՈՒՄՆԻԹԵՐ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ

Անտարակոյս հայոց մէջ չափազանց զարգացած է անհատականութիւնը. նոյն իսկ աւելի, քան պէտք էր: Հայի պատմական անմիաբանութիւնը նորա խիստ զարգացած անհատականութեան հետեանք պէտք է համարել: Որքան դա կորստաբեր և վնասակար է եղել մեր անցեալի վերաբերութեամբ, սակայն չի կարելի չխոստովանել, որ դա ապացոյց է հայ անհատական ինքնուրոյնութեանը, խելքին և ընդունակութեանը: Դա ցոյց է տալիս, որ հայը իբրև անհատ ոչխար չէ, ոչ էլ մրջին, այլ նա ապրել ու գործել է իբրև բանական արարած, այնպէս, ինչպէս իւր խելքն ու բանականութիւնն են թելադրել: Նա, անհատականութիւնը կորցրած, չէ՛ հետևել հասարակութեան երամական ընթացքին... Այդ նորա բոլոր առաւելութիւնն է իբրև անհատ և նորա ամենամեծ պակասութիւնը իբրև հասարակութեան անդամ: Նորա անհատական զարգացումն է, որ հային դասում է աշխարհիս ամենաընդունակ ազգերի շարքը:

Սակայն, մի ազգ, որ դարերով գուրկ է եղել ինքնուրոյնութիւնից, ճնշւել, հալածւել ու կոտորւել է, չէր կարող իւր գոյութիւնը պահպանել, եթէ նորա մէջ իսպառ մեռած լինէր հասարակական-համայնական ոգին:

Եւ իրօք, մի քիչ խորը դիտելով հայ կեանքը, խնդրին մի քիչ բազմակողմանի նայելով՝ այն եզրակացութեանն ենք գալիս, որ հայը մարդկութեան մի բացառիկ անդամը չէ, որ ամեն մի հայ, ինչքան էլ նա ինքնուրոյն լինի, կապւած է իւր համայնքի հետ պարտականութիւնների և իրաւունքի մի ամբողջ ցանցով, որից ազատւել նա չի կարող, որին նա պարտական է հնազանդելու հէնց իւր գոյութեան համար: Այդ ամենից լաւ պահպանւել է և անմիջապէս աչքի է ընկնում հայ ազգի ստուար մեծամասնութեան և նորա ամենաընտիր ներկայացուցչի - հայ գիւղացու մէջ:

Նրա տնտեսական կեանքը և բարեկեցութիւնը արդիւնք են մի շարք բուն համայնական և աստղիացիական ընտիր սովորութիւնների, որոնք հայ գիւղացու գոյութեան և տոկունութեան խնդրում ամեն-

նաստաջնակարգ դեր են խաղացել և դեռ խաղում են: Հայ համայնքը և նորա գոյութեան էական պայմանները դժբաղդաբար շատ քիչ են ուսումնասիրւած, այն էլ միմիայն ռուսաց Հայաստանում.- հողի տիրապետութիւնը, օրինակ, որ կէս համայնական բնատրոթիւն ունի, ջրի, ախպենի, այգու և բանջարանոցի իրաւունքը, անհատի իրաւունքը դէպի իւր համայնքը և ընդհակառակը, համայնքների փոխադարձ իրաւունքները և պարտականութիւնները մնում են իրանց ամբողջութեամբ դեռ ևս առանց ուսումնասիրութեան. եղածն էլ պարտական ենք ռուս կառավարութեան պաշտօնապէս կատարած ուսումնասիրութիւններին: Մինչդեռ հայ բանահիւսութիւնը այսօր ահագին գրականութիւն ունի, ուսումնասիրւած և բաւական նիւթեր են հաւաքւած զանազան գաւառներից,- հայ համայնքի մասին ինձ յայտնի չէ և ո՛չ մի առանձին տպած հայերէն աշխատութիւն, որ ի հարկէ բաւական ցաւալի երևոյթ է: Հայի բազմանդամ ընտանիքը, օրինակ, որ այնքան գովասանքի նիւթ է դարձել, մինչև օրս դեռ չի ուսումնասիրւած գիտականօրէն¹:

Այս յօդւածի նպատակն է մեր ձեռքում եղած հում նիւթերը հայ գիւղացու համայնական սովորութիւնների մասին լոյս հանել, յուսալով, նախ՝ մասամբ նիւթ մատակարարել մասնագէտ բանասէրներին, մասամբ մատնանիշ լինել և ճանապարհ բանալ այսպիսի նոր նիւթեր հաւաքելու համար: Մեր ունեցածը իւր տեսակով այնքան քիչ և կցկտուր է, որ կարող է լոյս տեսնել միմիայն իբրև հում նիւթ և ոչ իբրև որոշ ուսումնասիրութիւն: Մի որոշ սխառեմի բերելով նոցա՝ կարելի է բաժանել երկու մասի. ա) բուն համայնական սովորութիւններ. երբ համայնքը միանում է ֆիզիքական ուժով-աշխատանքով և կամ փողով՝ նիւթապէս օգնելու իւր մի անհատին և բ) երբ համայնքի անհատները միանում են մի ընդհանուր գործ գլուխ բերելու (կապակցութիւն, աստցիացիա):

Միացած աշխատանքը առաջ է գալիս այն ժամանակ, երբ համայնքի մի անդամը միայնակ անկարող է մի որ և է գործ գլուխ բերել. ուստի և հասարակութիւնը - հարեանութիւնը - անմիջապէս օգնութեան է հասնում իւր անդամին նորա կարիքը հոգալու, սկսածը գլուխ

1. Մասամբ, սակայն, այդ կատարւած է պ. Յակոբ Մեղաւորեանի գեղեցիկ աշխատութեամբ. Etude ethnographique et juridique sur la famille et le mariage armeniens. Lausanne. 1894.- Ծան. Խմբ.

բերելու և ձեռնարկածը վերջացնելու. օրինակ. Բարձր-Հայոց ժողովուրդը ապրում է ահագին հողէծածկ տներում. որպէս զի դա դիմա-նայ անձրևներին և ահագին քանակութեամբ եկող ձիւնին, հարկատր է կտուրը մի երկու արշին բարձրութեամբ հողով ծածկել, որ մի ընտա-նիքի անդամների ուժերից վեր է, եթէ աչքի առաջ ունենանք, որ դա հարկատր է քրոցներով-ուսերով կրել տանիք և այն՝ մի կամ երկու օր-ւայ մէջ, որպէս զի քամին և անձրևը չցուեն քիչ հաւաքած հողը. ուստի և երբ որ տունը կազմ ու պատրաստ է և միայն մնում է հողը վրայ տալ, տան տէրը հաւաքում է հարևան երիտասարդներին, որոնք մի-ացած ընդհանուր ոյժերով մի օրւայ ընթացքում ամբողջ տունը ծած-կում են հողով և կոխտտելով պնդացնում¹:

Նոյնը բայց առաւել հանդիսատր և մեծ չափերով կատարում է ջրաղաց շինելիս, որի քարերը (ջաղացաքար, և ոչ պատերի) բերելուն մասնակցում են հարևանները իրանց սայլերով, եզներով և մարդկան-ցով: Իգդիրում, որ ջուրը Արաքսից է ստանում, ջաղացների հունը շատ շուտ տիղմ է բռնում, որի մաքրողը նոյնպէս համայնքն է (թէև ջաղացները հայոց մէջ մասնատր սեփականութիւն են լինում). տեղի բարբառով դա կոչւում է «փուշտա» և կատարում է մեծ հանդիսով, գոռնայի նւագածութեամբ: Ձիթահանքի քարը բերելու ժամանակն էլ, որ իւր մեծութեամբ ու ծանրութեամբ ահագին ոյժ է պահանջում, տեղի է ունենում համայնքի անհրաժեշտ աջակցութիւնը մարդով, սայլով և լծկանով: Մեղրիում, ուր ճանապարհները վատ են և սայլ չի բանում, տան գերանները, ջաղացի և գերեզմանի քարերը գիւղացիք իրանց ուսերով են կրում 30-40 մարդ միաժամանակ, որոնց նոյնպէս նւագածութիւն է առաջնորդում:

Արտը պարարելիս, երբ հաւաքւած աղբը պէտք է արտը կրել, Ղա-րաբաղում և Ուդիների մէջ (Վարդաշէն) նոյնպէս օգնութեան է գալիս համայնքը սայլ-եզնով: Պռոշեանի նկարագրութեամբ Աշտարակում այգու մատը կտրելը կատարում է համայնքի օժանդակութեամբ, որի վերջին՝ աշխատողները ճաշից զատ ընտիր մրգեղէններից պատ-րաստած խոնջա են ստանում, որ «խէշ-փունջ» է կոչւում: Շատ գիւղե-

1. Ասում են, որ Չանգեգուրում տան ամբողջ շինութիւնը հիմն ի վեր հա-մայնքն է կատարում:

րում գերեզման փորելն ևս համայնական է, մանաւանդ ձմեռայ ցրտերին, երբ մի ժամկոչը դժարութեամբ կարող է գլուխ բերել գործը: Այդպիսի համայնական աշխատանքի պայմաններն այն են, որ ըստ մեծի մասին նոքա կատարում են զուռնայի նսագածութեամբ, եթէ իհարկէ, յարմարութիւն կայ. դա նպաստում է աշխատողների զարթոթեանը և գործի յաջող ու եռանդուն առաջ գնալուն. շատ անգամ լծած եզների կամ գոմէշների պոզերից ու ճակատներից և կամ ձիթահանքի ու ջաղացի քարի վրայից կարմիր թաշկինակներ են կախում իբրև դրօշակներ, և եթէ աշխատանքին մասնակցողների մէջ լաւ խաղ ասող կամ սրախօս մէկը կայ, որ գիտերում հագագիւտ չեն, աշխատանքը ընդունում է մի կատարեալ խնջոյքի բնատրութիւն: Ինչ կարծիք, որ այդպիսի օրերում գործատիրոջ պարտքն է աշխատողներին սովորականից մի քիչ աւելի փարթամ ճաշ տալ. տեղ-տեղ, ուր գինի կայ, խմիչքն ևս ճաշի վերայ աւելի նպաստում է աշխատողների զարթոթեանը:

Կան **աշխատութիւններ**, որ բուն ընտանեկան բնատրութիւն են կրում և իրանց թեթևութեամբ յատկացրած են կանանց. բայց երբ դա այնքան մեծ է, որ մի ընտանիքի կանայք անկարող են միանգամից այդ բոլորը կատարել, իսկոյն առաջ է գալիս մէճի կամ միջի կանչելու սովորութիւնը: Բարձր-Հայոց բարբառով այդպէս է կոչում համայնական աշխատանքի այն ձևը, ուր մասնակցում են միմիայն կանայք և աղջիկներ: Համայնութիւնը հայ գիտացու մէջ արտայայտում է այդպիսով ո՛չ միայն տղամարդկանց մէջ, դրսում, այլ և կանանց մէջ, ընտանիքում: Օրինակ երբ ոչխարի բուրդը խուզած պատրաստ է մանելու և գգելու, ապա տանտիրուհին աղջկանցից մէճի է անում, որ գգում, մանում են: Գգելը սովորաբար կանանց է պատկանում իբրև առաւել փորձառութիւն պահանջող, իսկ մանելը աղջկանց: Այդպիսի դէպքերում աշխատում են առհասարակ այնքան հոգի կանչել, որ հնար լինի բոլոր գործը մի օրում վերջացնել. ինչ կարծիք, որ նախաճաշն ու ճաշը այն տանն են անում, ուր հաւաքւած են աշխատելու: Աղջկանց «մէճիները» բացի գործատիրոջ օգուտից այն առաւելութիւնն ունեն, որ նախ մրցութիւն, ապա փորձառութիւն ու վարժութիւն են տալիս անփորձ աղջկանց. նոցանից շատերը իրանց տանը մնալով շատ անգամ զուրկ պիտի մնային այն վարժութիւններից, որոնք անհրա-

Ժեշտ են ամեն մի գյուղացու կեանքում, որպիսին է զգելն ու մանելը: Եւ որովհետև դոքա այնպիսի աշխատանք են, որ չեն կաշկանդում լեզուն ու միտքը, ուստի մէճիները այն պայմաններն են, որոնցով ծաղկում է գիւղացի աղջկայ սրախօսութիւնը, հանաքը, հանելուկը և դիտողութիւնը, երբեմն նաև նորա անպաճոյճ, պարզ երգը:

Հաւաքական աշխատանքը այնտեղ չի՝ ճնշում, չի՝ բթացնում, այլ զարթացնում է հոգին, զարգացնում միտքը, սրում դիտողութիւնը, մրցութեան շնորհիւ զարգացնում ընդունակութիւնները, ուստի և զարմանալի չէ, որ մէճին աղջկանց համար կատարեալ հարսանիք է:

Ախալքալաքի գիւղերում (Էրզրումից գաղթած) աշնանը կամ զարմանը սովորութիւն կայ մեծ քանակութեամբ էրիշտա պատրաստելու, որ նոյնպէս առանց մէճիի չի կարող գլուխ գալ: Երեկոյեան տան տիրուհին հաւաքում է մի խումբ աղջիկներ, որոնք խմորն են հունցելու: Առաջ ալիւրը «բաղաղ» են անում, ապա երբ քիչ ջուրը առած է լինում, հանում են տաշտից և դնում յատկապէս դորա համար պատրաստած տաւարճողների մէջ, որ այժի մորթուց է լինում պատրաստած: Ապա աղջիկները երկու-երկու բարձրանում են այդ կաշեայ տոպրակների վերայ, սկսում են ոտներով հարածել մինչև խմորի կանոնաւոր հունցելը: Ոտերի հարածները առանձին տակտ ու վարժութիւն ունին և շատ կենդանի բնատրութիւն են կրում. դա և՛ պար է, և մարմնամարզական վարժութիւն, որ գործին անձանօթ մարդը չի կարող կատարել: Այդ «մէճին» լինում է գիշերը, որ խմորը առաւօտ վաղ պատրաստ լինի. աղջկերքը գործը և ընթրիքը վերջացնելուց յետոյ գիշերում են գործատիրոջ տանը: Առաւօտ վաղ նոքա ցրում և նոցա փոխանակ հաւաքում են կանայք, որոնք էրիշտա կտրել գիտեն: Կանանցից ոմանք պատրաստի խմորը գնդում, ոմանք բաց են անում, ոմանք էլ բաց արած խմորը մի քանի ծալ անելով սկսում են էրիշտա կտրել (ճիշտ ինչպէս ծխախոտն են կտրում). մի քանիսը կտրածը տանում են արևի տակ չորացնելու և ապա բովելու: Էրիշտան հայկական մականարոնն է, որ գործ են ածում միմիայն փլաւ եփելու, բրնձի կամ բլղուրի հետ խառն կամ առանձին:

Վերը մենք տեսանք համայնական աշխատանքի այնպիսի ձևը, ուր միմիայն տղամարդիկ են մասնակցում, որը Ղարաբաղի բարբա-

ռով հարաքաշ է կոչում: Դորա մի այլ ձևը որ արտայայտում է միմիայն կանանց և աղջկանց մասնակցութեամբ, Բարձր-Հայոց բարբառով «մէճի» է կոչում. այժմ կը տեսնենք նորա երրորդ ձևը, ուր մասնակցում են ամեն սեռի և հասակի անձինք և որը, որքան մեզ է յայտնի, գոյութիւն չունի Բարձր Հայքում, այլ Երևանեան նահանգում և, եթէ չենք սխալում, կոչում է միջի. Մեղրիում օրինակ, գարնանը երբ բամբակի արտը վարում են, կանանց և երեխանց են հաւաքում, որոնք հետեւելով արօրի ընթացքին, հողը մաքրում են «խոզանից»: Դա տեղի բարբառով կոչում է «խզնահան»: Բամբակը քաղիան անելիս էլ հարեան կանանցից մէճի են անում, գործին օգնելու, ինչպէս նաև «հատադունի» և «շաղաքադի» ժամանակ, որ կատարում են կանայք ու երեխայք: Վերջերս երբեմն դա վարձով էլ է լինում: Բամբակը «կուկում»-ից հանելիս՝ որ տանն է կատարում.- աշնանը, մրգերի ժամանակ՝ մէճի հաւաքած մեծ ու փոքրին հասուն միրգ են բաժանում, և մինչև ուշ գիշերը նստած աշխատում են, ոմանք հեքիաթ և այլ հետաքրքրաշարժ բաներ են պատմում, որ բունները չտանի և զարթ աշխատեն: Նոյնպիսի խառն և ուրախ մէճի է լինում այգեկութիւն, մանաւանդ «քոժոժաքաղին», որ տօնախմբութեան նման մի բան է: Մեղրեցին այդ օրը անպատճառ մի ուլ պիտի մորթէ մէճին հիւրասիրելու, որ առաջուց յատուկ այդ օրւայ համար ջոկում և պահում է անդրանիկներից. դա կոչում է «քոժոժի մատաղ»:

Այսպէս մի շարք օրինակներից մենք տեսնում ենք, որ բուն անհատական-մասնաւոր գործերը, որոնք կարճ ժամանակի բայց բազմաթիւ ձեռքերի են կարօտ, գլուխ են գալիս բուն կոմմունական ձևով, համայնքի ազատ աջակցութեամբ: Այդ համայնքի անդամը գիտէ, որ իր տունը անձածկ պիտի չմնայ, երբ սկսում է նորա շինութիւնը. կամ ջաղացի քարերը պիտի բերին և տեղը դրին երբ ձեռնարկում է ջաղաց հիմնել. անհատը որոշ պայմաններում, որոշ հանգամանքներում իր յետը զգում է մի խոշոր ոյժ, մի հիմնաւոր նեցուկ, որ նորան չի թողնում ցած գլորելու, որ ձեռք է մեկնում նորան օգնելու, երբ անհրա-

1. Այս յօդածի մէջ Մեղրիի մասին յիշածներս բոլորը ինձ հաղորդել է պ. Ա. Վաչեանը:

Ժշտ է ճանաչում այդ: Ինչ կարծիք, որ համայնքի աջակցութիւնը հնումը անելի շատ, անելի ներգործական և ընդարձակ էր քան թէ այժմ. ինչ կարծիք, որ առաջ ոչ միայն համայնքը պարտական էր անհատի տունը հողով ծածկել, այլ և տուն շինել նորան, ո՛չ միայն ջաղացի քարը բերելուն օգնել, այլ և ջաղաց կառուցանել ընդհանուր համայնքի համար, ինչպիսին գոյութիւն ունի ռուսաց մէջ և որպէս այժմ կատարում է Իգդիրում, ուր, երբ Արաքսը յորդանալով կտրում է այգիները հոսող առուն, համայնքը ամբողջովին, տանուտիրոջ առաջնորդութեամբ գնում է այգիների ջուրը նորից բերելու. «Արագ է գնում», ինչպէս ասում են տեղացիք, ընդհանուրի գործը ընդհանուրն է հոգում միացած ուժերով: Համայնքը իւր լրութեամբ այժմ պահպանել է իւր նախկին կոմմունական կազմակերպութեան հետքերը միայն եկեղեցիների, ճանապարհների, ջուր բերելու և ուսումնարան շինելու վերաբերութեամբ, որոնք գլուխ են գալիս ընդհանուր միացած ուժերով և ծառայում են ընդհանրութեանը: Մնացեալ մասերում, ինչպէս վերևը տեսանք, նորա դերը բաւական սահմանափակ է, սակայն օգնում է իւր անդամին նաև նիւթապէս, երբ նա մեծ ծախսի մէջ է, աշխատելով գէթ մասամբ թեթևացնել իւր հարևանի ծախսերը, լինի դա հարսանիք, ծնունդ և կամ մահ:

Հարսանիքը գիւղացու վերայ ահագին ծախսեր է բարդում շնորհիւ շատ անպէտք սովորութիւնների և հարսանիքի երկար տևելուն, երբ նա պարտաւոր է ահագին քանակութեամբ գինի և արաղ գնել կամ իւր ունեցածից գործածել, մի քանի կով ու եզ մորթել և մեծ քանակութեամբ իւղ, պանիր ու հաց բանացնել: Ախալքալաքի գաւառի գիւղացիների ամենամեծ մասը եթէ պարտքի և վաշխառուների ճանկն է ընկնում՝ դորա պատճառը հէնց այդ հարսանիքի, նշանդրեքի և խնամութեան կորստաբեր սովորութիւններն են. այդ գաւառում ընդհանրապէս ամեն մի ամուսնութիւն՝ ինչպէս մեզ անձամբ բազմաթիւ օրինակներ են յայտնի, իւր յետևից բերում է մի քանի հարիւր ռուբլի պարտք: Դեռ լաւ է, որ կան մի շարք ընտիր համայնական սովորութիւններ, որոնք մեղմացնում և նպաստում են այդ ծախսերը հոգալուն, այլապէս հարսանիքը անփող գիւղացու համար տնտեսական անկումն կը նշանակի: Այսպէս օրինակ, հարսանիքի սկզբի օրը հարևան կանայք հրաւ-

իրում են գաթաուր, և ամեն մի կին այդ օրը իւր հետը բաւական կարագ է բերում, որով հարսանիքի գաթան է պատրաստում:

Այդպէս նաև մաղար իջեցնելու սովորութիւնը ահագին օգնութիւն է աղջկայ հօր համար: Մաղարը (մակա՞ր) մի խումբ ձիաւոր երիտասարդներ են, կամաւոր կերպով գիւղից հաւաքւած, որոնք ուղևորում են հարսը պսակի բերելու, եթէ նա մի ուրիշ գիւղումն է: Ինչ կարծիք, որ աղջկայ տիրոջ համար շատ դժուար է այդքան հիւր միաժամանակ իջեցնել և կերակրել թէ՛ նոցա և թէ մանաւանդ նոցա ձիերին: Աւանդական սովորութեամբ աղջկայ տէրը առհասարակ ազատ է ծախսերից և հարսանիքի բոլոր ծախսը ընկնում է տղայի վերայ: Այդտեղ ահա համայնքի անդամներից շատերը վաղօրօք պատրաստութիւն են տեսնում «մաղար իջեցնելու» և նոցա գալուն պէս ամեն միւր մի չորս հինգ ձիաւոր հիւր հրաւիրում է իւր տունը, ուր ընթրում և ուրախութիւն են անում. այդպէս մաղարը բաժանում է հինգ-տասը տուն խումբ-խումբ, մինչ առաւօտ գլուճայի հրաւերը, երբ նոքա կրկին միացած հարսին առաջնորդում են դէպի իրանց գիւղը: Բայց հարսանիքի մէջ ամենից արժանին ուշադրութեան՝ սաչու-ի կամ կանչ-ի սովորութիւնն է: Դա մի տուրք է, որ սովորաբար պսակից յետոյ ճաշի սեղանի վերայ հարսանիք հրաւիրւածները տալիս են հարսանքատիրոջ. պատահում է, որ այդ կանչը հարիւրների է հասնում և բաւական թեթևացնում է հարսանքատիրոջ ծախսերը: Առաջին ընծայաբերը լինում է միշտ կնքահայրը կամ խաչեղբայրը, որ սովորաբար 3-10 ռուբլի է տալիս. ապա հերթով, ըստ աւագութեան և պատիւ՝ նաև միւսները: Կանչի հետ միասին հարսնւորները պարտաւոր են նաև քահանային ու գլուճաչուն ևս նպաստներ տալ, որ կրկին թեթևացնում են տանտիրոջ ծախսը. այլապէս թէ նւագախումբը և թէ քահանան եթէ այդ կողմնակի եկամուտը աչքի առաջ չունենային, ահագին վարձատրութիւն պիտի պահանջէին տան տիրոջից: Այդ սովորութեան մնացորդները պահպանւել են նաև քաղաքներում: Ախալքալաքում, օրինակ, հարսի հագուստը օրհնելուց յետոյ, որպէս նաև եկեղեցում, պսակից յետոյ քահանան խաչ-համբոյր է ստանում անխտիր բոլոր հրաւիրեալներից: Նւագածուններին ու խոհարարին վարձատրելը հօ պարտաւորութիւն է: Հարսանիքը առհասարակ ամենից լաւ է պահ-

պանել հայ ժողովրդի նախկին կոմմունական կեանքի հետքերը. տեղ-տեղ նա պատկանում է ամբողջ համայնքին. այդտեղ մասնակցում են ամենքը և իւրաքանչիւրը. Ախալքալաքի գիղերում, երբ պսակող գոյգը եկեղեցի է գնում, ճանապարհին շատ անգամ կանգնեցնում են պսակի ամբողջ ընթացքը, որպէս զի հարսանիքի հետ ո՛չ մի կապ չունեցող այս կամ այն օտար փեսացուին, որոնք շատ անգամ այդտեղ ներկայ էլ չեն լինում, իրանց (փեսացուի) բարեկամների կողմից ընծաներ տրւին:

Տեսնում ես մի հարս կամ կին, որ հարսանիքումն էլ չէ, տան գործը կիսատ թողած, **լուր օրւայ** հագուստով շտապում է ի լուր հասարակութեան մի նախշուն շապիկ, փուշի, գուլպա կամ գօտի ընծայել իւր այս ինչ ազգականի փեսային և վերադառնալ իւր գործին: Դադարում է զուռնան, կանգ է առնում ընթացքը, լռում են հանդիսականները, և տղամարդկանցից մինը, ընծայած առարկան ձեռին բռնած ի ցոյց հասարակութեան, հազար ու մի գովասանքով յիշում է, որ այս ինչ հարսը կամ կինը իւր այս ինչ փեսային ահա այս պատուական ընծան է տալիս, «ապատա՛, ապատա՛, շէն է ու շէն մնայ»:

Գիւղում գտնւած բոլոր նշանաւոր գոյգերը այդպիսի հարսանիքներին առհասարակ ընծաներ են ստանում իրանց հեռու կամ մօտիկ ազգականներից և այն՝ ի գիտութիւն համայնքի:

Ուշադրութեան արժանին այն է, որ ծննդկանին կերակրելն ևս համայնական պարտք է համարում: Ուժասպառ ծննդկանին ինչ կարծիք որ հարկաւոր է սննդաբար կերակուր: Ամեն ընտանիք ի հարկէ միջոց չունի այդպիսին պատրաստելու, ուստի և քառասունքի ընթացքում ամեն մի «տղոցկան», հարուստ լինի թէ աղքատ, հարևաններից թարմ պատրաստած կերակուրներ է ստանում: Տատմայրը, որ «դայեկ» է կոչւում, իւր վարձը ստանում է նոյնպէս ծննդկանի այցելուններից: Համայնքը կարծես դորանով ողջունում է իւր նոր անդամի աշխարհ գալը և նորա մօր խնամելը իւր վզին է առնում մինչև կազդուրւիլը. նա դորանով կարծես ուզում է հասկացնել, որ նորածինը միայն իւր ծնողներին չի պատկանում, այլ ամբողջ համայնքին:

Այդ մի կարգ բուն կամ կէս կոմմունական բնաւորութիւն կրող սովորութիւնները արդէն նոր տնտեսական պայմանների շնորհիւ բաւա-

կան թուլացել և նսեմացել են, թէև նոցա պահպանել է ժողովուրդը հազարատը տարիներ, իբրև իւր նախկին համայնական կեանքի փայլուն փշրանքներ, որոնք, դժբաղդաբար, իբրև նախապատմական ժամանակի և ստոր կուլտուրայի արդիւնք, տեղի են տալու նորագոյն քաղաքակրթութեան առաջ: Անշուշտ, եթէ հնարատը լինէր, եթէ ոչ այդ սովորութիւնները ամբողջովին, գէթ նոցա ոգին, համայնականութեան գաղափարը կենդանի պահպանել մեր ժողովրդի մէջ, որ նորան դիրքին լինէր ըմբռնել ընկերավարական ուսման նորագոյն վարդապետութիւնը, որը իւր հիմունքներով կռթնում է հէնց մարդկութեան նախկին համայնական կենցաղի վերայ, չափազանց ուրախալի կը լինէր. սակայն յուսալ դոցա յարատևութեանը բաւական դժար է, որովհետև մեր աչքի առաջ, մի 15-20 տարի առաջ գոյութիւն ունեցող համայնական սերտ կապերը այսօր զգալի կերպով թուլացել են: Այն, որ երէկ ամբողջ համայնքն էր անում, այսօր սահմանափակում է շատ անգամ միայն ազգականների և մօտիկ հարևանների մէջ. իսկ վաղը միւս օրը կասկածելի է նորա գոյութիւնը:

Աւելի յուսալի է այն սովորութիւնների պահպանութիւնը, որոնք ատենի բարձր քաղաքակրթութեան արդիւնք են և կրում են ընկերական-աստղիացիայի բնատրութիւն. դոքա մասամբ յիշեցնում են ռուսական *арте́ль*-ը (արտէլ), մասամբ եւրոպական բանուորների միութիւնները, իհարկէ, սաղմային դրութեան մէջ:

Այդպէս է կատարում խոտ հարելը. ամբողջ մարգագետինը կամ «չայիրը» բաժանում է ըստ համբայութեան (համբա-չարեք) մի քանի բաժնի, և համբայութեան անդամները խոտը հարում, հաւաքում և դիզում են միասին, ապա վիճակով բաժին անում, համապատասխան համբայութեան աստիճանին. ինչ կարծիք, որ ամեն մի ընտանիք իւր ստանալիք խոտի համաձայն մարդիկ է ներկայացնում. շատ ստացողը շատ, քիչ ստացողը համապատասխան սակաւութեամբ: Խոտհարի ընթացքում նախաճաշ, ճաշ և «էտինք-հաց» աշխատողները բոլորը միասին են անում, ամեն միւր ներկայացնում է իւր ունեցածը. խոտը չկայ, թէ մէկը գարի և ցամաք հաց ունի, միւսը պատուական կերակուր:

Գիւղի սահմաններից դուրս ևս, երբ գիւղացիք տեղ են վերցնում խոտ հարելու, սակաւ է պատահում, որ ջոկ-ջոկ հարեն. սովորաբար

միանում են մի քանի ընտանիք, միաժամանակ փողը վճարում և ամեն միևնույն իր տուած գնի համեմատ աշխատատեղեր է ներկայացնում մինչև խոտի հարել դիզելը, երբ վիճակով բաժանում՝ ապա ջուրը տուն են կրում: Այդ աշխատանքի ընթացքում ևս նոքա գործում են ինչպես մի տան անդամներ, նոցա ճաշը միասին է, հարստի և աղքատի խտիր չկայ:

Մարաղա գիւղում (Խոյի գաղթականներ Ղարաբաղում) միանում են մինչև անգամ բոստան (բանջարանոց) ցանելիս: Մի քանի ընտանիք միացած գութան են լծում և վարում համայնական հողի մի մասը և բանջարեղէն ցանում: Այդտեղ ընդհանուր է և՛ հողը, և՛ սերմը, և՛ աշխատանքը. ջրում են մի երկու անգամ հերթով կամ միասին և քաղհան են անում նոյնպէս միասին: Հասած բանջարեղէնը հաւաքում են դարձեալ միասին և բաժանում, եթէ չենք սխալուի, համաձայն գութանում լծած եզների թիւն: Այստեղ, ինչպէս տեսնում է ընթերցողը, միութեան հիմքն ու բաժանարարը եզն է:

Նոյնը աւելի բարդ և աւելի կատարելագործւած ձևերով արտայայտում է գութանի միութեան մէջ Բարձր Հայքում:

Այդտեղ գութանին լծում են 10-12 զոյգ եզ կամ գոմէշ, այնպէս որ շատ քիչ ընտանիք կարող է միայնակ գութան լծել. ուստի սովորաբար գութան լծելու համար միանում են 5-10 ընտանիք: Պատահում է, որ գութանը մի ընտանիքի է պատկանում, իսկ բոլոր լծկանը հարեաններին: Իրաքանչիւր երկու զոյգ եզին հարկաւոր է և մի հոտաղ, մի մաճկալ, և 8-12 լուծ: Միութեան բաժանարարը (единица) զոյգ եզն է. այսինքն մէկ զոյգ եզ ունեցողը մէկ օր իրաւունք ունի արտը վարելու, երկուսը՝ երկու և այլն. բայց այդտեղ բաժին ունի նաև գութանը, որ հաւասար է երեք բաժանարարի (այս դէպքում երեք օր) և մաճկալը՝ գութան վարողը - երկու բաժանարար: Հոտաղը ոչինչ չի ստանում: Թէև գութանի միութեան մանրամասնութիւնը ես լաւ չեմ յիշում և այս էլ հաղորդում եմ ստուգութիւնը վերապահելով, սակայն ինձ թւում է, որ գութանի տիրոջ օգուտը այդտեղ համեմատաբար մեծ պիտի լինի: Գութանորը իւր օրւայ հացը ստանում է նրանից, ում արտը վարում է, այսինքն հերթով կերակրում են միութեան անդամները: Վերջին տարիներս պատահում է, որ այդպէս միացած գութանը վար-

ձով-փողով ուրիշի արտերն ևս վարում է, որոնք գութանի մէջ մաս չունին, և փողը բաժանում է իւր անդամներին. այդտեղ ևս ի հարկէ, բաժանարարը լուծ եզն է, բայց դորա մանրամասնութիւնները ես չգիտեմ և ստուգելու էլ առ այժմ միջոց չունիմ:

Գիւղական այդպիսի միութիւնների մէջ, եթէ չեմ սխալւում, գութանը առաջին երևոյթն է, որ իբրև գործիք (մեքենայ) վարձ է ստանում.- այդ տեսակէտից նա արժանի է խորին ուշադրութեան: Գիւղացոց մէջ գործիքը վարձով տալու գաղափար անգամ չկայ. ուրագ, կացին, գերանդի, եղան, սայլ, մինչև անգամ եզներ միմեանց փոխ են տալիս առանց որ և է վարձի ակնկալութեան: Շատ բացառիկ դէպքերում կարող է հարևանը դրացուն մերժել մի գործիք փոխ տալու. և չի էլ կարող մերժել, որովհետև մի ժամ յետոյ ինքն է շտապում հարևանից մի բան ուզելու և նոյն մերժումն կ'ստանաւ: Տան կարասիքը ևս, պղինձ, ամանեղէն, անկողին, հասեր և խալիչա, անխտիր փոխ են տալիս կանայք:

«Խաբ ու խազ»: Բայց ամենից նշանատրը, ամենից հետաքրքրականն ու կարևորը համայնական միութեան մէջ «խաբ»-ի սովորութիւնն է, որ իւր տեսակով գուցէ եզակի է ամբողջ աշխարհում. նորա էութիւնն այն է, որ մի խումբ հարևաններ միացնում են իրանց ունեցած կաթը հերթով նորանից իւր ու պանիր պատրաստելու: «Խաբը» հարցասիրական է և այն տեսակէտից, որ նա, այսպէս ասենք՝ գիւղական միութիւնների ամենազարգացած ձևն է ներկայացնում. նորա հիմքը աշխատանքը, անհատը կամ լծու եզներն ու հողը չեն, ինչպէս վերևի միութիւններինը, այլ եթէ կարելի է այսպէս անուանել՝ գիւղական կապիտալը, գործադրութեան համար պատրաստի արդիւնքը՝ կաթը: Այդ միութիւնը Բարձր Հայքում կոչւում է «խաբուխազ», կամ հասարակօրէն «խաբ». Իգդիրում դորան ասում են «կաթ-չափ», որ ըստ իս աւելի լաւ է արտայայտում նորա էութիւնը:

Գարունը բացւելուն պէս գիւղացի կանայք ժողովում են խաբը սկսելու. եթէ գիւղը մեծ է, նոքա բաժանւում են մի քանի խմբի, սովորաբար 20-30 տուն, իսկ եթէ փոքր է՝ հէնց ամբողջ գիւղը կազմում է մի խաբ:

Առաջին և ամենադժար խնդիրն այն է, թէ ո՞վ պէտք է «մայր» կամ «խաբ-գլուխ» լինի, այսինքն առաջին անգամ ո՞վ պիտի հարևանների կաթը պարտք վերցնի, և ապա հերթով նոցա վճարի: Թէ

սովորութեամբ և թէ յայտնի տնտեսական պատճառներով մայր է դառնում նա, ով շատ կաթ ունի. բայց ի հարկէ շատ յաճախ պատահում են հաւասարաչափ կով ու ոչխար ունեցողներ, որոնցից ամեն միւր խուսափում է մայր դառնալուց, որովհետև կաթը գարնանը ջրալի է լինում, ուրեմն և մայր դարձողի համար վնասակար, քանի որ նա ստացած վատ կաթի քանակութեամբ վերադարձնելու է հարևաններին ապագայում աւելի լաւ և իւղալի կաթ: Այդտեղ, ի հարկէ, քէարկութիւն չի լինում, բայց երբ մեծամասնութիւնը մէկին ստիպեց մայր դառնալու, նա սովորաբար համաձայնում է, յետագայում մի քանի առաւելութիւններ ունենալու պայմանով: Պէտք է նկատել, որ ոչխարի կաթը առանձին խաբ է ունենում, կովիւնը առանձին և շատ հազիւ է պատահում, որ միևնոյն ընտանիքը «երկու կաթին» էլ մայր դառնայ միաժամանակ:

Երբ մայրը ընտրեց, հարևանները ամեն առաւօտ և երեկոյ կաթը «խաբ են բերում». այսինքն փոխ են տալիս մօրը, որոշ ամանով և չափով: Եթէ, օրինակ, բոլոր մասնակցողները միասին 20 ընտանիք են, մայրը (պարտք վերցնողը) դուրս գալով, կը մնայ 19 պարտատու, որոնցից ամեն միւր ջոկ-ջոկ ճիպոտներ-«խազեր» ունին, որոնց վերայ նշանակում են տւած կաթի քանակը հետևեալ կերպով. հարևան A-ն օրինակ մի որոշ աման ունի, որով ամեն օր կաթ է բերում և մի որոշ ճիպոտ-«խազ», որը կոխում է մի հարթ տեղում դրած իւր ամանի մէջ մինչև յատակը. մի երկու անգամ ստուգելուց յետոյ դանակով մի փոքրիկ փոս է փորում խազի այն կէտում, որը ցոյց է տալիս այդ օրւայ կաթի քանակը: Նոյնն են անում B. C. և այլն իրանց ամաններով և խազերով: Պէտք է չմոռնալ, որ խազն էլ ունի (ես այսպէս եմ անւանում) ոտ և գլուխ. չի կարելի մի օր նորան գլուխն ի վայր կոխել կաթի մէջ, մի այլ անգամ ոտն ի վայր, այլ միշտ միևնոյն ոտի կողմից, որ շփոթութիւն չառաջանայ: Այդ խազը համապատասխանում է պարտատիրոջ մօրիակին. նոյն այդ խազով և նոյն ամանով նա իւր հերթին յետ է ստանում իւր պարտքը:

Կաթնամօր դժարութիւնն այն է, որ նա բոլոր հարևաններից պարտք է առնում, նա բոլորին զուտ պարտապան է. այժմ, երբ հերթը գալիս է միւս հարևաններին, նա՝ առաջին՝ պիտի աշխատի իւր

պարտքը տալ, երկրորդ՝ պարտքի տակ գցել հարևանին, որ մի այլ անգամ ևս կարողանայ կաթ առնել:

Երկրորդ կաթ առնողի դուրքեան դժարութիւնը պակաս է առաջինից այն պահանջի չափով, որ նա ունի առաջինից շնորհիւ իւր տուած կաթի քանակութեան. այսինքն երկրորդ հերթակալը պարտք է առնում ոչ թէ 19 տանից ինչպէս առաջինը, այլ միայն 18 տանից, իսկ մի տանից (առաջին կաթնամօրից) նա յետ է ստանում իւր տուածը: Երրորդ հերթակալը արդէն պարտք է ստանում միայն 17 տանից, իսկ մնացեալ երկուսից միայն իւր տուածի վճարը և այլն... Այսպէս ամենավերջին հերթակալը՝ որ և ամենից քիչ կաթ ունեցողն է լինում, ստանում է միմիայն իւր տուածը, որովհետև բոլորին շարունակ նա միայն կաթ է տուել և պարտաւորեցրել. այժմ իբրև վերջինը ստանում է վճարը: Երբ նա իւր բոլոր տուածը յետ ստացաւ, ապա վերջանում է մեծ խաբը և սկսում է «փոքր խաբը».- միևնոյն կարգով միայն այն տարբերութեամբ, որ այժմ ժամանակամիջոցը աւելի կարճ և կաթը աւելի քիչ է լինում: Փոքր խաբի էական պայմանն այն է, որ հերթակալները յետ են ստանում միմիայն իրանց պարտքը և նոր պարտքի տակ չեն մտնում, որովհետև այլ ևս ժամանակ չկայ վճարելու, քանի որ աշունը հասած է լինում:

Թողնելով խաբի կազմակերպութեան մանրամասնութիւնները առանձին հիմնաւոր ուսումնասիրութեան, այստեղ անցողակի պարտք են համարում ուշադրութիւն դարձնել այդ վերին աստիճանի կարևոր և օգտակար սովորութեան էական հիմունքների վերայ, որ ամենալայն եղբայրական-ընկերական բնատրութիւն ունի. թէև բոլոր անդամները հաւասար ընկերական իրաւունքներ ունին, բայց համայնքի աջակցութիւնը միշտ լինում է չքատրի կողմը, իսկ չնչին գրկանքներն ու պարտականութիւնները միշտ ընկնում են ունևորների վերայ: Խաբի հիմքը ո՛չ թէ անհատի շահախնդրութիւնը, այլ ընդհանրորէ օգուտն է. նա չի ծառայում տապալելու, այլ օգնելու և պահպանելու:

Խաբուրների մէջ առհասարակ մի ընդհանուր ձգտում կայ՝ ըստ կարելոյն շատ պարտք տալ ուրիշին, իսկ առանձնակի ամեն մի հերթակալի ցանկութիւնն է, ըստ կարելոյն, քիչ պարտքի տակ ընկնել. այդ երկու հակառակ ձգտումներն են խաբի մէջ խոչընդոտ յարուցանողները, և որովհետև համայնքի բոլոր անդամները հաւասար կաթի

տէր չեն, բնականաբար այն բարդութիւնն է առաջ գալիս, որ շատ կաթ ունեցողները կարող են մի քանիսին այնպիսի պարտքի տակ գցել, որի վճարելը հերթակալի ուժերից վեր է: Նա պահանջում է, որ կաթի հերթը իրանից վերացնեն, բայց մեծամասնութեան կարծիքով մա դեռևս պարտական է և կարող է կաթ վերցնել, եթէ չլինին մի երկու շատ կաթ ունեցողները. ուստի և «խաբը» պարտաւորեցնում է ունևորին մի երկու օր կաթը տունը պահել, պարտք չտալ, մինչև հերթը մի ուրիշին կը գայ: Կաթը տանը պահելը գրկանք է տան տիրոջ համար. դա այնքան շատ չի կարող լինել, որից իսկոյն իող կամ պանիր պատրաստել կարողանայ, ուստի և տանը մնացածը առձեռն գործածութեան մէջ կորչում է անհետ: Այդ գրկանքը խաբի շնորհիւ պարտաւոր է կրել ունևորը իւր աւելի չքաւոր հարևանի և ընդհանրութեան դիրութեան համար:

Խաբի հիմնական էութիւնն և օգուտն այն է, որ մասնաւոր տների կաթը քիչ-քիչ գործածելով չփչանայ, չկորչի, որ այդ փոքրիկ քանակութիւնը բազմաթիւ ձեռքեր, ժամանակ և ծախս իզուր չգործածէ: Բարձր Հայքի ժողովուրդը թէև մեծ մասամբ ունի ոչխար ու կով, բայց առանձինն դոքա այնքան քիչ են լինում, որ նոցա կաթից ջոկ-ջոկ առած դժար է միաժամանակ իղ և պանիր պատրաստել. եթէ կաթը տանը մնայ՝ ամեն գնացող եկող կ'ուտի և անհնար կը լինի ի մի հաւաքել ձմեռայ պաշար պատրաստելու, որ այնքան կարևոր է այդ ժողովրդի համար, որի երկիրը ամբողջ վեց եօթը ամիս ձիւնով է լինում ծածկւած. այդ միջոցին մա առանց այն էլ՝ զուրկ մսեղէնից՝ մեծ կարիք ունի իղեղէն կերակրի, որը և նորա սննդեան առաջին միջոցն է:

Փրկարար խաբը վերացնում է բոլոր այդ արգելքները. մէկ կով և մի քանի ոչխար ունեցողն անգամ այդ պատական սովորութեան շնորհիւ կարողանում է բաւականաչափ «մասխուլ» (պաշարի իղ-պանիր) պատրաստել ձմեռայ համար: Ամեն մի ընտանիք իւր ամենօրեայ կաթը քիչ-քիչ հարևաններին տալով՝ իւր հերթին միաժամանակ այնքան կաթ է ստանում, որ մի քանի օրւայ մէջ պատրաստում և պաշարում է և՛ իւր տարեկան իղը, և՛ պանիրն ու վազնատը (լսա):

Այս էլ պէտք է ասենք, որ խաբը մագաչափ չի անցնում անհատի ազատութեան սահմանը և չի բռնանում նորա ազատ կամքի վերայ.

նա չի՝ պահանջում որ անհատը ամեն օր և ամեն անգամ իւր բոլոր կաթը բերի. ամեն ոք ազատ է տանել այնքան, ո՛րքան կամենում է և ե՛րբ կամենում է, որովհետև խաբը այդտեղ ո՛չ մի վնաս չունի, այլ նա, ով քիչ է մասնակցում: Դա մի խնայողական ընկերություն է, որի անդամները օգուտ ունեն շարունակ, բայց գրկանք և գործողութեան սահմանափակումն երբեք կամ խիստ հազիւ. այն էլ գրկանքը միշտ ունևորի վզին է ընկնում, ուրեմն այնքան զգալի չի կարող լինել, մանաւանդ դա չափազանց կարճատև է լինում:

Խաբի տուած օգուտը աւելի շօշափելի անելու համար վերցնենք մի գիւղական թաղ կամ մի ամբողջ գիւղ, որ, օրինակ, բաղկացած է 25 տանից և միացել է խաբ անելու. այսինքն ամեն մի ընտանիք ապահով է, որ ձմեռայ համար մի քանակ պաշար է ունենալու, որը առանց խաբի երևակայել անգամ չէր կարող: Այդ բաւական չէ՝ եթէ խաբը գոյութիւն չունենար, 25 տուն ամեն օր թոնիր պիտի վառէր նորան տաքացնելու, 25 հոգի պիտի զբաղւէր կաթնից իւղ, մածուն կամ պանիր պատրաստելու. 25 խնոցի պիտի ծառայէր կաթը հարելու, պիտի բազմաթիւ մանր-մունր ամանների մէջ լցնէր. դատարկելուց՝ քամելու, տաքացնելու կամ սեր քաշելու համար՝ նա կաթիլ-կաթիլ թափւելով պիտի պակասէր, շատ անգամ և փճանար, ամեն օր գործ ածող ամանները պիտի մաշէին, փճանային և պէտք ունենային շուտ շուտ կլայէկի, և այլն և այլն... այսինքն այդտեղ երևան են գալիս բոլոր այն վնասներն ու պակասութիւնները, որ յատուկ են մանր արդիւնաբերութեան, մինչդեռ խաբը զուրկ լինելով բոլոր այդ վնասներից՝ ներկայացնում է ահագին առատելութիւններ, այն բոլորը, ինչ որ իսկապէս յատուկ է մեծ արդիւնաբերութեան. 25 հոգու փոխանակ, խաբի շնորհիւ՝ կաթնով զբաղւում է միայն մէկը. 25-ի թոնրի փոխանակ վառւում է միայն մէկը. և այդպէս բոլոր մնացած ծախսերն ու պակասութիւնները կրճատւում են 25 անգամ: Եթէ գիւղացի կնոջ գործ ածած վառելիքը (եթէ նա խաբին չմասնակցէր) օրական հաշւենք միայն 5 կոպէկ առաւօտ և երեկոյ կաթը տաքացնելու, նորա աշխատանքը պանիր, իւղ պատրաստելու, և տեղաւորելու, ամանի կլէկը և մաշիւիլը, սապոնը, ջուրը և այլն հաշւենք նոյնպէս 5 կոպ., երկուսը միասին ուրեմն 10 կոպ., կ'ստանանք, որ 25 տունը օրական խնայում է 2 ռ. 50 կոպէկ.

բայց խաբը տևում է չորս ամսից անելի, այսինքն 120 օր. ուրեմն ամբողջ կաթնային սեզոնում խաբը շահում է 300 ռուբլի: Բայց գոյություն ունի սովորաբար երկու խաբ՝ կովի և ոչխարի կաթի համար ջոկ-ջոկ. գցենք որ մի 150 ռուբլի էլ ոչխարի խաբից է խնայում. $300+150=450$ ռուբլի. եթե դա բաժանենք մեր վերցրած 25 տան վերայ, կ'ստանանք, որ ամեն մի տուն միջին հաշով խաբի շնորհիվ շահում է 18 ռուբլի. գիտացու համար դա մի ահագին գումար է, որը նա վաստակում է առանց արեան քրտինքի, լոկ ընկերավարական միութեան շնորհիվ: Այդ հաշիւները՝ իհարկէ, գիտացին չի՛ անում և չի՛ էլ նկատում այդ օգուտը, քանի որ դա շօշափելի չէ նորա համար. շօշափելին այն է, որ նա վերջ ի վերջոյ ծննուայ համար կարգին պաշար է ունենում:

Խաբը մի առանձին ուշադրութեան է արժանի և այն տեսակէտից, որ նա հայ կնոջ ստեղծագործութիւնն է. տղամարդը այդտեղ մազաչափ անգամ մասնակցութիւն չունի. դա իւր ծագմամբ, զարգացմամբ և տեսականութեամբ հետևանք է միմիայն հայ կնոջ տնտեսագիտական հմտութեան: Վերին աստիճանի հետաքրքրական է տեսնել խաբւոր կանանց վէճը, ժողովները և գործողութիւնը, որի մնամը ինձ թւում է, որ ամբողջ աշխարհում գոյութիւն պիտի չունենայ: Ով հաւատ չունի կնոջ ինքնուրոյն գործունէութեան, նորա հասարակական և ընկերական բնագոյի վերայ, թող գնայ Բարձր Հայքի գիւղերը և ուսումնասիրէ այնտեղ հայ կնոջը:

Հայ համայնքը ուսումնասիրելիս առհասարակ ո՛չ միայն մոռացութեան չպէտք է տալ հայ կնոջը, այլ աշխատելու է ըստ կարելոյն լա՛ւ որոշել նորա տեղն ու դերը, որ անշուշտ, ինչպէս խաբի պատմութիւնն է ցոյց տալիս, մեր կարծածից շատ անելի նշանաւոր է, մանաւանդ որ նոյն կիները Հայաստանի մեծ մասում տղամարդու հաւասար մասնակցում է դաշտային աշխատանքներին: Եւ ըստ իս, դա ո՛չ միայն բարձրացնում է հայ կնոջը մեր աչքում իբրև մի ֆակտորի, որը հայ ազգի տնտեսական կեանքում առաջնակարգ դեր է խաղացել և դեռ խաղում է, այլ և հիմնաւոր գրաւական է տալիս, որ նա ընդունակ է՝ ընտանեկան նեղ շրջանից դուրս ևս՝ բուն հասարակական գործունէութեան:

«Մուրճ», 1896, N 1, էջ 88-106

ԱՐԵՒՈՐԴՈՑ ԽՆԴԻՐԸ

Ժ-ԺԲ դարերի մի երկու համարեա պատահական հատուածներում մեր մատենագիրների մէջ յիշում է մի ժողովուրդ «Արևորդիք» անունով, որ յետոյ Շնորհալին դասում է հին Հայոց կարգը՝ իբրև նոցա հեթանոս մնացորդներ:

Ի՞նչպէս նոքա հեթանոս մնացին, ի՞նչպէս յանկարծակի երևան եկաւ հայ ազգի այդ մնացորդը Արևորդի անունով, պատմութիւնը մեզ ոչինչ չի ասում: Ի՞նչ աղբիւրներ հիմք եղան Շնորհալուն նոցա հայ անուանելու, որպիսի՞ պայմաններ նպաստեցին նոցա այնքան երկար ժամանակ հեթանոս մնալու և մի միայն ԺԲ դարում քրիստոնէութեան դիմելու. այդ ևս մնում է մթին ու խաւար: Մենք լիովին անտեղեակ էինք մնալու այդ ժողովրդի էութեան մասին, եթէ բաց ի Շնորհալու յայտնի թղթից ուրիշ մի քանի թէև հատուկտոր՝ բայց ըստ իս աւելի հաւաստի և ծանրակշիռ վկայութիւններ չունենայինք մեր մատենագիրների մէջ:

Արևորդոց մասին մեզ առաջին պատմական տեղեկութիւն տուողը Մագիստրոսն է Ժ-ԺԱ դարում: Նա «Պատասխանի թղթոյն կաթող. Ասորոց» գրութեան մէջ մի խումբ աղանդների մասին յիշելուց յետոյ հետևեալն է ասում. «Աւաղիկ Պոլիկեանքդ, որք ի Պօղոսէ Սամոստացոյ դեղեալ, յորժամ ձեռնարկեալ հարցանեմք՝ ասեն թէ քրիստոնեայք ենք՝ և զաւետարանն և զառաքեալն սաղմոսեն յամենայն ժամ. եւ յորժամ հարցանեմք եթէ ընդէ՞ր ո՛չ մկրտիք՝ զոր հրամայեաց Քրիստոս եւ առաքեալքն. ասեն ո՛չ գիտէք դուք զխորհուրդս մկրտութեան. մեզ ո՛չ է փոյթ մկրտիլ քանզի մկրտելն մահն է. եւ Յիսուս ոչ ասաց յընթրիսն վասն պատարագի, այլ վասն ամենայն սեղանոյ: Եւ ասեն զՊօղոս սիրեմք եւ զՊետրոս անիծեմք. եւ Մովսէս զԱստուած ո՛չ ետես, այլ զՍատանայ, եւ ասեն արարիչ երկնի եւ երկրի զսատանայ եւ ամենայն մարդկային սեռի եւ ամենայն ստեղծուածոց, եւ ինքեանք զինքեանս անուանեն քրիստոնեայս. ահա եւ այլ ոմանք ի Զրադաշտ մոզէ, մոզք պարսկականք եւ այժմ՝ ի նոցունց դեղեալք Արեգակնապաշտք, զոր Արևորդիսն անուանեն եւ ահա են յայդմ գաւառի (ի Մի-

ջագետս) բազումք, եւ ինքեանք քրիստոնեայք զինքեանս յայտնապէս կոչեն. բայց թէ որպիսի մոլութեամբ եւ անառակութեամբ վարին, զիտեմք՝ զի ոչ ես անտեղեակ: Են ոմանք յանիծեալ ազգեդ Թոնդրակեցեաց, որք անուանեն զինքեանս Կաշեցիք եւ այն են չարութեան արմատ»¹:

Այստեղ դիտմամբ բերի Արևորդիներից առաջ և յետոյ գրուած հատուածները, որ ինչպէս կը տեսնենք, մեծ շփոթութեան առիթ են եղել հետագայ մատենագիրների համար: Եթէ բաց ի Մագիստրոսի այս թղթից մեզ որևէ ուրիշ տեղեկութիւն չհասնէր Արևորդոց մասին, ինչ կարծիք, որ մենք նոցա բոլորովին իրաւունք չէինք ունենայ հայ անուանելու, ինչպէս որ դա այժմ սովորաբար ընդունուած է իբրև հետևանք Շնորհալու թղթի, մինչ Մագիստրոսը պարզապէս խօսում է մի ժողովրդի մասին, որին Արևորդի են անուանում առանց յիշելու նոցա ծագումը, ազգութիւնը կամ առաջուց ինչ կրօնի պատկանիլը: Մի բան միայն խիստ բացորոշ է. Արևորդիք ո՛չ Պայլիկեան աղանդաւորների են պատկանում և ո՛չ էլ Թոնդրակեան-Կաշեցիներին: Սոքա քրիստոնեայ հերձուածողներ են. սոցա վեճը վերաբերում է քրիստոնէութեան այս կամ այն դաւանաբանութեանը. մինչ Արևորդոց կրօնը հիմնովին տարբեր է. նոցա չի կարելի աղանդաւոր կամ հերձուածող անուանել.- նոքա արևապաշտներ են:- Սիակ կապն ու մմանութիւնը, որ կայ Արևորդոց և քրիստոնեայ աղանդաւորների մէջ, դա նա է, որ Արևորդիք ևս երևի արտաքուստ միմիայն «իրանց անուանում են քրիստոնեայ»: Թէ որքան ստոյգ է Արևորդոց զրադաշտեան մոգերից դեղուիլը, այդ ա՛յլ խնդիր է, միայն նոցա կրօնը անշուշտ շատ մման էր Զրադաշտականութեան, պաշտաման առաջին առարկայ արևն ունենալով: Նոյն իսկ խիստ տարակուսելի է Մագիստրոսի «եւ այժմ ի նոցունց (ի մոգունց) դեղեալ» խօսքերը. միթէ մինչև ԺՎ դարը գոյութիւն ունէ՞ր Զրադաշտականութիւնը և ա՛յն ուժով ու ծաւալով, որ ազդել կարողանար ուրիշ ժողովրդների վերայ...: Այս «այժմ» խօսքը եթէ պատահական չէ, առիթ է տալիս մտածելու, որ Արևորդիք դորանից առաջ մի այլ կրօն ևս պիտի ունեցած լինէին, որ անշուշտ քիչ թէ շատ տարբերում էր Զրադաշտականից. անտարակոյս դա բոյսերի կոլտն

1. Այս հատուածը հանել ենք հանգ. Էմինի ձեռագրից Պ. Խալաթեանի սիրալիք թոյլտուութեամբ՝ Մոսկուայում:

էր, որ ինչպէս յետոյ կը տեսնենք, նոքա շարունակում էին մինչև ԺԴ դարը: Այսքանը պէտք է Մագիստրոսի հետ ընդունել, որ Արևորդոց կրօնը շատ նման էր հին Պարսից դէնին. բայց զարմանալին այն է, որ Արևորդոց նա չի նոյնացնում նաև Պարսից հետ. նա նոցա չի անուանում նաև զրադաշտեան, այլ պարզ «Արեգակնապաշտք»: Թէ՛ իբրև արևապաշտ և թէ՛ իբրև քրիստոնէայ Արևորդիք մնում են Մագիստրոսի որոշմամբ՝ ինքնագոյ, ինքնուրոյն մի ժողովուրդ. այդ չենք տեսնում յաջորդ մատենագիրների մէջ: Մագիստրոսից անմիջապէս յետոյ երկրորդ վկայութիւնը պատկանում է Ալաւկայ որդի Դաւթին, որ Շնորհալուց քիչ մի առաջ (ԺԲ դար) յայտնապէս կ'ըսէ, թէ «Պայլիկեանք կամ Մծղնեայք Արուիորդոց ազգն է»¹:

Վերևը մենք դրինք Մագիստրոսի բանիբուն բացատրութիւնը Պայլիկեանց մասին և այն տարբերութիւնը, որ կար նոցա և Արևորդոց մէջ. Դաւիթ վարդապետը ո՛չ մի խտիր չի տեսնում այդ երկուսի մէջ, և պարզապէս նոյնացնում է նոցա: Անշուշտ նա Մագիստրոսի գրածը կից և միաժամանակ Պայլիկեանցների և Արևորդոց մասին կարդացել և շփոթել է մոռացմամբ.- Եթէ Արևորդիք յար և նման էին Պայլիկեանց, հապա ի՞նչ պատճառով գոյութիւն ունէր երկու տարբեր անուն. անշուշտ, դա ծագում էր Պայլիկեանց և Արևորդոց էական զանազանութիւնից, որ շփոթել է Դաւիթ վարդապետը. ըստ Մագիստրոսի Պայլիկեանք դեղուած էին Պօղոս Սամոստացուց, իսկ Արևորդիք զրադաշտեան մոգերից, այդ մոռանում է Դաւիթը: Սակայն, թերևս Արևորդիներից նոքա, որոնք ծանօթ էին Պայլիկեանց, հետևեին նաև վերջիններիս, քանի որ ինչպէս վարը կը տեսնենք, նոցա համար մի մեծ նշանակութիւն չի ունեցել անունով այս կամ այն կրօնին հետևիլը: Չնայելով այդպիսի շփոթութեան, Դաւիթն ևս Արևորդոց հայ չի կոչում. նա ընդհակառակը ատելի է որոշում՝ նոցա ճանաչելով իբրև մի ինքնուրոյն ազգութիւն.- «Արուիորդոց ազգ»:

Միսալի և շփոթութեան առաջին քայլը պատկանում է Դաւիթ վարդապետին, երկրորդ և ատելի մեծը Շնորհալուին, որ ժամանակի կարգով երրորդ յիշատակողն է Արևորդոց: Հետաքրքրական է, որ դեռ ևս

1. «Բազմավէպ», 1894, հտ. ԾԲ. Հին հաւատք Հայոց յօդուածից ենք առնում այս և հետագայ մի երկու հատուածները:

Մագիստրոսի ժամանակ իրանց քրիստոնեայ կոչող Արևորդիք մի դար յետոյ գալիս են Շնորհալու մօտ Հայոց եկեղեցին ընդունելու, որոնց մկրտութեան և բարոյական կրթութեան մասին նա գեղեցիկ պատուէրներ է տալիս Սամոսատի քրեպիսկոպոսին իւր «յաղագս Արեւորդեացն դարձի» թղթին մէջ: ...«Գիտելի է ձեզ, զի վաղ ուրեմն եհաս ի ձէնջ զիր առ մեզ յաղագս Արեւորդեացդ որ ի քաղաքի ձերում բնակեն, եթէ կամին և աղաչեն ի հօտն Քրիստոսի խառնել զնոսա. զի որպէս ազգաւ եւ լեզուաւ ի տոհմէ Հայոց են, յօժարին եւ հաւատով եւ հոգով ի նոյն միաբանութիւն հաւասարեսցին ընդ նոսա: Եկին և առաջի մեր ի նոցանէ. եւ զնոյն բանս աղաչանաց խօսեցան ընդ մեզ. եւ մեր ծանուցաք նոցա գոր ընթերցեալ էաք ի գրոց վասն դիւապաշտ աղանդոյ նոցին եւ գոր լուեալ էաք ի համբաւէ յընդելակցաց նոցին զգանազան չարիս բանիւ եւ գործով զնոցանէ... այսպէս եւ Արևորդիքդ յազգս մեր ի մասին սատանայական խաւարին մնացեալք, ոչ կամցեան լուսաւորիլ աստուածային լուսովն ի ձեռն լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի, այլ սիրեցին զխաւար եւ ոչ զլոյս մինչեւ ցայսօր ժամանակի: ...Որպէս եւ դոքա որ առ մեզ եկին, յուրաստ եղեն երդմամբ մեծաւ ի չար աղանդոց անտի, եւ նգովեցին բերանօք իւրեանց որ զայնպիսի ծածուկ անաստուածութիւն ունիցի յինքեան. եւ գոր ինչ սահման եղաք նոցունց յանձն առին կատարել զամենայն: ...Իսկ եթէ ստութեամբ լինիցի դարձ նոցա, որպէս եւ կարծեն բազումք զնոցանէն, դարձեալ անդրէն ի փսխածն իւրեանց դառնան, մեզ եւ ո՛չ մի ինչ վնասէ»:

Այստեղ Արևորդիք երևում են մի բոլորովին նոր դերի մէջ. Շնորհալին նոցա «ազգաւ և լեզուաւ ի տոհմէ Հայոց» է անուանում, որոնք Լուսաւորչի ժամանակ որպէս թէ խուսափել էին մկրտութիւնից և մինչև Շնորհալու օրերը մնացել հեթանոս: Այս վերջին կարծիքը ակներև սխալ է. որովհետև դեռ Շնորհալուց շատ առաջ Մագիստրոսի վկայածով Արևորդիք գէթ արտաքուստ «ինքեանք քրիստոնեայք զինքեանս յայտնապէս կոչեն»։ Դաւիթ վարդապետն ևս նոցա շփոթում է քրիստոնեայ աղանդաւորների հետ։- Գալով Արևորդոց հայութեան խնդրին, որի առաջին արծարծողը Շնորհալին է հանդիսանում, պիտի ասենք, որ նա դորա համար՝ որքան մեզ յայտնի է մատենագրութիւնից՝ ո՛չ մի հիմք չունէր։- Նա մատնանիչ է անում ինչ որ մի գրութե-

ան վերայ, «գոր ընթերցեալ էաք ի գրոց վասն դիւսպաշտ աղանդոյ նոցին», որ անշուշտ Մագիստրոսի թուղթն է լինելու. որովհետև Արևորդոց աղանդին նուիրած առանձնակի գիրք գէթ անունով յայտնի չէ մեր մատենագրութեանը, չենք էլ կարծում, որ դա գոյութիւն ունեցած և կորած լինի: Նորա կարդացած աղբիւրները ուրեմն լինելու էին Մագիստրոսի և Դաւթի թողած հատուածները, ուր սակայն խօսք անգամ չկայ Արևորդոց հայութեան մասին, ուր նոքա ճանաչում են իբրև մի առանձին ժողովուրդ «ազգ»: Պարզ է, որ Շնորհալին կարդացել է այդ թղթերը և մոռացել. որովհետև՝ թողնենք ազգութիւնն ու լեզուն՝ կրօնի վերաբերեալ ևս նա հակասում է և՛ Մագիստրոսին, և՛ Դաւթին, նա Արևորդոց առանց այլևայլութեան համարում է հայեր, որոնք «ոչ կամեցան լուսաւորիլ... ի ձեռն սրբոյն Գրիգորի»... ո՞ր տեղից է քաղում նա այս տեղեկութիւնները, որոնք լի են տարակուսանքով, մեզ յայտնի չէ, սակայն դժուար չէ բացատրել նորա սխալը: Դեռ Շնորհալուց մի դար առաջ Արևորդիք իրանց քրիստոնեայ են անուանում, այդ մի դարու ընթացքում նոքա անտարակոյս աւելի ընտելացան քրիստոնէութեան և հայութեան, այնպէս որ նոքա ինքնին պատգամաւորներ են ուղարկում Շնորհալու մօտ հայերի հետ միանալու համար. և ի՞նչ տարակոյս, որ իրանք իրանց հայ պիտի անուանէին իբրև առաւել նպաստաւոր և պատուաւոր անուն: Այդ մեզ չպիտի զարմացնէ, որովհետև կաթոլիկ հայերի մէջ կային՝ որ իրանց ֆրանկ էին անուանում, մինչ Ուտիք - թէև ծագմամբ և լեզուով օտար,- իրանց հայ են կոչում: Այդ հանգամանքը բնականօրէն կարող էր Շնորհալու սխալի պատճառներից մինը լինել. մանաւանդ երևի պատգամաւորները լաւ էլ հայերէն էին խօսում (ինչպէս այսօր Ուտիների մեծամասնութիւնը), որի համար ևս նոցա «ազգաւ և լեզուաւ ի տոհմէ հայոց են» ասում է: Կարևորն այն է, որ Շնորհալին փաստերը չի՝ յեղաշրջում, նա չի՝ ասում որ իւր կարդացածը Արևորդոց լեզուի կամ ազգի մասին է, այլ նոցա «դիւսպաշտ աղանդի», և իրաւ, վերևը մեր բերած վկայութիւնները վերաբերում են միմիայն Արևորդոց աղանդին և ոչ նոցա ծագմանը. մնում է կարծել, որ մնացեալը Շնորհալու անհատական կարծիքներն են, թէ Արևորդիք հայ են կամ հայ-հեթանոս: ...Սակայն, նա մի երկրորդ հիմք ևս ունէր Արևորդոց հայ համարելու. նորան յայտնի էր հին Հայոց արևապաշտ

լինելը. յայտնի էր և այն, որ նոցա մէջ յարգի էր նաև սօսի ծառը իբրև պաշտաման առարկայ. այժմ նոյն երևոյթները տեսնում է Արևորդոց մէջ, ուստի և այդ արտաքին նմանութիւնը անելի ևս համոզում է նորան, որ Արևորդիք հին հեթանոս հայերի մնացորդն են:

Մի ուրիշ, զուտ քաղաքագիտական հանգամանք ևս կարող էր Շնորհալուն առիթ տուած լինել Արևորդոց հայ անուանելու. ոչ թէ սխալով, այլ գիտակցօրէն: Ինչպէս երևում է պատմական վկայութիւններից՝ այդ ժողովուրդը կասկածելի վարք ու բարքի տէր է եղել. թեթևամիտ, անխտիր արևապաշտութեան և քրիստոնէութեան հետևող, կէս կնքուած, կէս անկնունք.- մանրամասնութիւնները ստորև:- Դոցա չէին կարող Հայերը սիրել. այդ երկուսի մէջ մեծ խտիր կար, թէկուզ ըստ Շնորհալու նոքա հայախօս լինէին: Ահա այդ խտիրը վերացնելու, նոցա ընդ միշտ հայերի հետ եղբայրացնելու, նոցա քրիստոնէութեանը և հայութեանը անելի ևս հարազատացնելու համար Շնորհալին հայերին գրում է, որ նոքա ևս մեր ազգիցն են, որ մեր երկուսի մէջ խորթութիւն չկայ: Այդ բանը ի հարկէ Արևորդոց շատ դուր կը գար, Հայերն ևս չէին կարող հաւատ չընծայել այնպիսի մի հեղինակաւոր անձի վկայութեանը, որպիսին էր Շնորհալին: Դա պարզ երևում է հէնց Շնորհալու խօսքերից. «Եւ ի վերայ ամենայնի եւ զանունն զոր ունին ի նախնեաց իւրեանց Արևորդիք կոչելով, յայսմ հետէ փոխեցեն եւ ի Քրիստոսի մեծ եւ սքանչելի անունն անուանեցին՝ քրիստոնեայք»: Եթէ խնդրին նայենք մի այլ կողմից, կը տեսնենք որ ո՛չ մի հաւանականութիւն չկար մինչև Շնորհալու օրերը հայ-հեթանոս մնալու. հայ-հեթանոսութեանը մենք վերջին անգամ պատահում ենք Ե դարում, Մեսրոպի Ժամանակ, որը և նա խեղդեց տալով նորան մահուան վերջին հարուածը: Իսկ Վարդանանց պատերազմը քրիստոնէութեան յաղթանակի կատարեալ արտայայտութիւնն էր քաղաքական և կրօնական տեսակէտից: Գրիգորների, Ներսէսների, Սահակ-Մեսրոպների ջանքերից յետոյ ի՞նչպէս կարող էին հայ-արևապաշտներ մնացած լինել մինչև ԺԲ դարը. միանգամայն երկմտելի և տարակուսական է:

Չմոռանանք, որ հայ-հեթանոսութիւնը ունէր զօրեղ և կազմակերպած հոգևորականութիւն, մինչդեռ Արևորդի-հայերի մէջ նորա հետքն

անգամ չի երևում: Շնորհալին իւր մանրագնին, հեռատես և կարևոր քթոթին մէջ այդ տարրը չէր կարող մոռացութեան տալ, որ ամենից զօրեղ հակառակորդը պիտի լինէր նոր կրօնին: Նա մէկ-մէկ յիշում է Արևորդի կանանց վարքն ու բարքը, նախատեսում է, որ Արևորդի կարող են գայթակղիլ հնոց վատ քահանաների վարմունքից, մանրամասն հրահանգներ է տալիս նոցա բարոյական դաստիարակութեան համար, տղամարդոց, կանանց և երեխայից ջոկ-ջոկ, բայց ոչ մի խօսք չի ասում քրոմների կամ մոգերի մասին, որ Արևորդի չէին կարող չունենալ եթէ հայեր էին: Ընդհակառակն, մենք ԺԴ դարուց վկայութիւն ունինք, որ նոքա քրմութիւն չունէին, այլ «աւանդութեամբ ուսուցանեն հարքն գորդիսն իւրեանց, գոր նախնիք նոցա ուսեալք էին ի Զրադաշտ մոգէ»:...

Շնորհալու վկայութեան հաւաստիութիւնը հիմնաւորապէս թուանում է և այն պատճառով, որ նա ծանօթ չէ Արևորդի ժողովրդին և նորա կացութեանը անմիջապէս, այլ նոցա պատգամատրոներին միայն: Նա ասում է. «Ընթերցեալ էաք ի գրոց վասն դիւապաշտ աղանդոյ նոցին և գոր լուեալ էաք ի համբաւէ յընդելակցաց նոցին զգանազան չարիս բանիւ և գործով զնոցանէ»:...

Նորա գրատր աղբիւրները շատ աղքատ էին, ինչպէս տեսանք վերևը: Իսկ ընդելակցաց (ծանօթների) հաղորդածները վերաբերում էին «գանազան չարիքների» և ոչ Արևորդից ազգութեանը կամ ծագմանը:

Այսպէս թէ այնպէս՝ Արևորդոց առաջին անգամ հայ անուանողը միայն Շնորհալին է առանց որևէ պատմական հիմունքի, առանց անձնական ծանօթութեան բուն ժողովրդի և նորա կացութեան հետ, որը և հիմք է դառնում հետազաններին, որոնք ծանօթ էին Շնորհալու քթոթին՝ նոյնը կրկնելու աւանդաբար, մինչ մեծամասնութիւնը դարձեալ լռում է այդ մասին:

Չորրորդ վկայութիւնը պատկանում է Մխիթար կաթողիկոսին, որ գրում է Պապին, թէ «այն ատեն (ԺԴ-ի կիսում) Մանազկերտում Արեւորդիք կային»... Նոյն ԺԴ դարում Մխիթար Ապարանեցիին գրում է. «Են ոմանք Հայկազեանք եւ հա(յ) լեզուա¹ Արեւապաշտք եւ կոչին

1. «Զի ազգաւ եւ լեզուա ի տոհմէ հայոց են», Շնորհալի:

Արևտրդիք. սոքա չունին ոչ գիր եւ դպրութիւն (եթէ հայ են ինչո՞ւ չունին). այլ աւանդութեամբ ուսուցանեն հարքն զորդիսն իրեանց, զոր նախնիք նոցա ուսեալք էին ի Զրադաշտ մոզէ՝ անդրուշանին պետէ՝¹ եւ ընդ որ (կողմն) երթայ արեգակն՝ ընդ այնմ երկրպագեն, եւ պատուեն զծառն Բարտի եւ զՇուշան ծաղիկն եւ զԲամբակին եւ զայլսն, որ զդէմն իրեանց շրջեցուցանեն ընդդէմ արեգականն. եւ նմանեցուցանեն զինքեանս նոցա՝ (ծաղկանց) հաւատով եւ գործով բարձր եւ անուշահոտ եւ առնեն մատաղ մնջեցելոց եւ տան զամենայն հասս Հա(յ) երիցու: Սոցա առաջնորդն կոչի Հագրպետ և իւրաքանչիւր ամի երկու անգամ կամ աւելի՝ ամենեքեան այր եւ կին ուստր եւ դուստր, ժողովին ի գուր մի յոյժ խաւարին եւ (երևի ուզում է ասել)...» (խառնակին):

Արևտրդոց մասին մեզ հասած տեղեկութիւններից ամենաթանկագինը պատկանում է այս անձնատրութեանը, որ վերին աստիճանի կարևոր մանրամասնութիւններ է հաղորդում նոցա կրօնի և սովորութիւնների մասին: Ինչպէս երևում է պատմութեան ռճից՝ նա ի մօտոյ ծանօթ պիտի լինի Արևտրդոց, որով ևս առաւել բարձրանում է նորա արժէքը, սակայն ոչ ամէն հաղորդածի վերաբերեալ: Այն ամէնը՝ ի հարկէ, որ նա կարող էր աչքով տեսած լինել և գրած, անշուշտ չեն կարող ենթարկուիլ ո՛չ մի կասկածանքի, որոնք մանաւանդ հաստատում են և այլ աղբիւրներից. բայց ինչ որ չի կարող դիմանալ քննադատութեան, դա այն է՝ որ նա չի բաւականանում տեսածը պատմելով, այլ մտնում է պատմական բացատրութիւնների մէջ ևս. այսպէս՝ նորա ասելով գոյութիւն են ունեցել հայեր-Արևտրդիք, որոնց նախնիքը ուսած են եղել իրանց կրօնը բուն Զրադաշտից «ի Զրադաշտ մոզէ անդրուշանին պետէ» (??):

Վերևը դրած ծանօթութիւնից երևում է, որ Ապարանեցին ծանօթ է եղել թէ՛ Շնորհալու և թէ՛ Մագիստրոսի թղթերին և ամենաբարեխիղճ կերպով միացնում, ամբողջացնում է նոցա հաղորդածը. Շնորհալու հետ նա ընդունում է, որ Արևտրդիք հայ են, իսկ Մագիստրոսի հետ, թէ նոքա Զրադաշտական են: Սիւայն նա մոռանում է, որ ըստ Մագիստ-

1. «Ահա եւ այլ ոմանք ի Զրադաշտ մոզէ՝ մոզք պարսկականք եւ այժմ ի նոցունց դեղեալք Արեգակնապաշտք՝ զոր Արևտրդիսն անուանեն», Մագիստրոս:

րոսի՝ Արևոդդիք դեղուած են ո՛չ Զրադաշտից իրանից, այլ նորա յաջորդ մոգերից, մինչ Ապարանեցին վերագրում է դորան բուն Զրադաշտին: Բայց գալով իրողութեանը, ինչ որ նա աչքով տեսածն է գրում, հերքում է առաջին գրածը, ասելով որ Արևոդդիք գիր ու դպրութիւն չունին: Երկուսից մէկը. եթէ Արևոդդիք իսկական հայ են, ապա չէին կարող գիր ու դպրութիւն չունենալ. իսկ եթէ խորշում էին քրիստոնէական գրերից ու դպրութիւնից և առաւելապէս հետևում էին Զրադաշտականութեան, ապա նոյնպէս պիտի ունենային գիր ու դպրութիւն, քանի որ այդ կրօնն ևս առանց գրի ու դպրութեան չէր: Այսպէս տեսնում ենք, որ քանի գնում Արևոդդոց ծագման խնդիրը առաւել կնճռում է և բարդւում, թէև բոլոր սխալ կամ ստոյգ տեղեկութիւնները բղիտում են միևնոյն աղբիւրից, Մագիստրոսից կամ Շնորհալուց, թէև ինչպէս կը տեսնենք, մեծամասնութիւնը Արևոդդոց հայ լինելը չի պնդում, ճանաչելով նորան մի ուրոյն ժողովուրդ: Բայց հէնց այդ «հայ» անունը որ գտնում ենք միմիայն Շնորհալու և Ապարանեցու վկայութիւնների մէջ՝ կից Արևոդդի կոչման հետ, ցոյց է տալիս, որ այդտեղ մի ինչ կայ, մի կասկածելի կէտ, որ հարկատու է պարզել: Իսկական հայը կարիք չունի վկայութիւնների իւր ազգութեան մասին. այն ինչ, երևի՝ Արևոդդիք և հայ հոգևորականներից ոմանք կարիք էին գգում այդ ապացուցանելու և կասկածը փարատելու: Խորթ կամ ապօրինի ժառանգը միայն կարիք ունի իւր ծագումն ապացուցանելու և ոչ հարազատը: Այսօր նոյն երևոյթը կրկնում է և ուտիացի ու բոշա ժողովրդների վերաբերեալ, որոնք յաճախ կոչւում են «ուտիացի-հայք» «հայ-բոշաներ», իսկ «մաղագործ հայք» ևն պաշտօնական անուն է դարձել. այդպէս կրօնական և լեզուի միութեան շնորհիւ երկու բոլորովին տարբեր ծագում ունեցող ժողովրդներ՝ ինչպիսի են Բոշաներն և Ուտիք, հայ են կոչւում:

Եւ անհասկանալի է մնում թէ ինչո՞ւ իսկական հայը պիտի Արևոդդի կոչէր իրան. միթէ այն պատճառով որ նա արևապա՞շտ էր. հապա ինչո՞ւ նախնի արևապաշտ հայերն ևս այդպէս չէին կոչւում քրիստոնէութիւնից առաջ, մինչ նոցա կարծեցեալ յաջորդները ԺԲ դարուց յայտնում են այդ նորատարազ անունով: Արևոդդի անունը, ինչպէս երևում է, յատուկ ազգութեան անուն է և ոչ կրօնի, որովհետև այդ անուան հետ միասին մենք համարեա՛ր բոլոր վկայութիւնների մէջ

պատահում ենք և նոցա կրօնի անուանը, որ նշան է թէ Արևորդի բառը չէր կարող և նոցա կրօնը նշանակել: Այդ կոչումը եթէ նոցա կրօնի անունն էր, քրիստոնէութիւն ընդունելուց յետոյ պիտի կորչէր վերանար, մինչ Արևորդոց քրիստոնէայ դառնալուց մի քանի դար յետոյ մատենագիրները նոցա յիշում են այդ անունով միայն իբրև ուրոյն ժողովուրդ և համեմատում են թուրքի, հայի հետ.

«Կիմն՝ ոչ պժգայ յԱրետորդոյ,

«Ոչ ի թուրքէ, ոչ ի հայէ,

«Չով որ սիրէ՝ հաւատն այն է», -

ասում է «Թըլկուրանցի Յովհաննէս պուէտն ու հայրապետը» (ԺԴ դար): Այս տողերի մէջ հայը, թուրքը և Արևորդին դրուած են իբրև վերին աստիճանի տարբեր առանձնապատուկ ազգութիւններ, իբրև համեմատական ամենախոշոր կոնտրաստ:

Նոյն ԺԴ դարու վերջերը Թոմաս Մեծփեցին հետևեալն է գրում Լէնկ-Թէմուրի մասին. «Եկն ի Մէրտին (Սիջագետք) աւերեաց զքաղաքն եւ չորս գեղ Արևորդի կռապաշտ զՇօլն, զՇըմըղախ, զՍաֆարի, զՄարաղի¹ ի սպառ կործանեաց: Եւ յետոյ դարձեալ սատանայի հնարիւք բազմացան ի Մէրտին և յԱմիթ»: «Յորոց գտանին մինչեւ ցայժմ ի սահմանս երկուց գաւառացս որք են ի Սիջագետս» աւելացնում է հայր Ինճիճեանը իրանից (Հնախօսութիւն, հտր. Գ., 161 եր.):

Ապարանեցու վկայութիւնը Արևորդոց պաշտած բոյսերի մասին՝ լրացնում է «ծաղկաբան երգիչ» Դաւիթ Սալաճորցին հետևեալ հետաքրքրական տողերով. «Սինձն, Իրիցուկն ու Եղըրդակն կու սպասեն Արետորդուն. Նոցա երամն ուրիշ է, կու շրջին զօրն հետ արետուն»:

Արևորդոց մասին մեզ հասած տեղեկութիւնները ահա այս հատուկորդ հատուածներն են միմիայն, որոնք ի մի ամփոփելով աշխատենք պարզել նոցա ազգութեան խնդիրը:

Սակայն, նախ քան այդ՝ մատնանիշ լինինք մի ծանրակշիռ կէտի վերայ, որ մենք մոռացանք վերևը շեշտելու: Դա հայերի զարմանալի սառը վերաբերմունքն է դէպ ի Արևորդիքն ու նոցա կրօնը, որ անբացատրելի կը մնայ, եթէ իրօք Արևորդիք հայ էին:

1. Հետաքրքրական է այս անուանց բացատրութիւնը, որոնք հայկական չեն երևում և որոնցից մի քանիսը Պարսկաստանում կան:

Մի յայտնի ճշմարտություն է, որ կրօնական բաժանումը մի ազգի անդամների մէջ միշտ կատաղի հալածանքի և ճնշման է ենթարկւում, մինչդեռ մի օտար ազգութեան տարբեր կրօն ունենալը ո՛չ մի հալածանք կամ շատ քիչ հալածանք է յարուցանում. այսպէս մինչդեռ հայ հոգևորականութիւնը աշխատում է թոնդրակեցութիւնը խեղդել իր սաղմի մէջ, չի կարող նորա մասին սառն ու հանգիստ խօսել. նգովք, բանադրանք և հալածանք է յարուցանում հայ-աղանդատորների դէմ, նոցա գիտէրը աւերում տակն ու վրայ է անել տալիս, Արևորդոց վերաբերում է մի սառն անտարբերութեամբ: Արդ եթէ թէ՛ Թոնդրակեցիք և թէ՛ Արևորդիք հայ են և երկուսն էլ խոտոր ճանապարհի վերայ, բնականօրէն երկուսն էլ ենթակայ պիտի լինին միևնոյն վիճակին, որ սակայն չենք տեսնում: Մագիստրոսը միևնոյն թղթի մէջ մինչ խօսում է Արևորդոց մասին, սառն է և անտարբեր. բայց երբ գալիս է Թոնդրակեցոց, իսկոյն փոխում է արտայայտութեան ոճը անուանելով նոցա անիծեալ, չարութեան արմատ և այլն (տես վերևի հատուածը): Շնորհալու վերաբերմունքը մինչև անգամ հասնում է անտարբերութեան. «իսկ եթէ ստութեամբ լինիցի դարձ նոցա (Արևորդոց ի քրիստոնէութիւն)... եւ դարձեալ անդդէն ի փսխածն իրեանց դառնան, մեզ եւ ոչ մի ինչ վնասէ»: Այս հանգամանքը, ըստ իս, ամէնից պարզ ցոյց է տալիս, որ Արևորդիք հայ չէին, և իբրև օտարական, վարակիչ կամ վտանգաւոր չէին կարող լինել բնիկ Հայերի համար, չնայելով որ նոքա բաւական էլ բազմաթիւ էին. Մէրտին, նորա մօտի չորս գիտէրը, Սամոսատ, մինչև անգամ Մանագկերտ Արևորդիք կային. բայց իբրև քրիստոնէութեան և ազգային ամբողջութեան անվտանգ օտարականներ՝ ապրում էին առանց հալածուելու, մինչ բնիկ հայ աղանդատորները, հայ-կաթոլիկները, վերջերս նաև հայ-բողոքականները գերծ չեն մնացել խիստ հալածանքից: Հենց այդ պատճառով էլ Դաւիթ Ալաւկայ որդու վկայութիւնը՝ թէ «Պալիկեանքն կամ Մծղնեայք Արուիորդոց ազգն է»՝ լիովին անհիմն պէտք է համարել: Ի վերջոյ ութ անձանց վկայութիւնները ԺԱ-ԺԴ դարերից՝ մեզ հետևեալ եզրակացութեանն է բերում:

ա. Նոցանից վեցը Արևորդոց մասին խօսում են՝ իբրև ինքնուրոյն ժողովրդի մասին. բ. Միայն Շնորհալին է նոցա հայ անուանում առանց որևէ հիմունքի, պատճառ դառնալով և Ապարանեցու սխա-

լին. գ. Արևորդոց վարքուրարքի, կրօնի և սովորութիւնների նկարագրից երևում է, որ նոքա հայ չէին և չէին կարող մինչև ԺԴ դարը հայ-հեթանոսներ գոյութիւն ունենալ:

Ուսումնասիրելով մեզ հասած տեղեկութիւնները Արևորդոց մասին, այն եզրակացութեան ենք գալիս, որ նոքա մի օտար նորամուտ ժողովուրդ են: Նոցա Արևորդի անունը, որ խորին արևելեան կնիք է կրում, այն համագամանքը, որ մատենագիրները նոցա դեղուած են համարում Ջրադաշտականներից, ցոյց է տալիս, որ Արևորդիք Միջագետք և Հայաստան գաղթել են արևելքից - Պարսկաստանից: Նոքա ունեցել են «առաջնորդ», որ կոչւում էր «Հազըրպետ»: Դա անշուշտ նոցա ցեղապետն է եղել. այսինքն ունեցել են ցեղական կազմակերպութիւն:

Ջարմանալի են նոցա կրօնի մանրամասնութիւնները. հոգևորականութիւն չեն ունեցել. պաշտում են արևը և այն ծաղիկները որոնք «զդէնս իրեանց շրջեցուցանեն ընդդէմ արեգականն». ուրեմն ամենից առաջ արևածաղիկը, արևահատը. նաև՝ ինչպէս վկայութիւն ունինք՝ շուշանը, բամբակը, սինձն, եղդակն, իրիցուկը, նաև բարտի ծառը:

Դորա հետ միասին նոքա իրենց անուանում են քրիստոնեայ, տալիս են հայ քահանայի հասոյթը: Յամենայն դէպս երևում է, որ խիստ ճաշակով ժողովուրդ են եղել Արևորդիք՝ պաշտելով արևն ու յիշեալ ծաղիկները, ինչպէս վկայում է Ապարանեցին. նոքա «նմանեցուցանեն զինքեանս նոցա (ծաղկանց) հաւատով եւ գործով բարձր եւ անուշահոտ»:

Բաց ի դորանից՝ նոքա բոլորի զարմանքն են յարուցանում իրանց վարքուրարքով: Շնորհալին նոցա պատուիրում է «ի բաց կալ ի սպանութենէ, ի շնութենէ, ի պոռնկութենէ, ի գողութենէ, ի նենգութենէ ընկերաց, ի յարբեցութենէ, ...եւ ոչ միայն զայլոց իրս ոչ գողանալ, այլ եւ իւր յարդար ստացուածոցն տալ կարօտելոյն...: Նոյնպէս եւ կանանց պատուէր տուք ի կախարդութենէ եւ ի դեղատուութենէ եւ յամենայն դիւական աղանդատութենէ ի բաց կալ... նոյնպէս եւ որ զպիղծ եւ զաղտեղի իրս ի կերակուրս կամ յըմպելիս խառնեալ՝ տայ ուտել քրիստոնէի վասն դիւական սիրոյն... եւ զգուշացուցէք զնոսա յամենայն աշապիսի բժժագործութենէ»¹:

1. Ընդհանրական թուղթք Ս. Ներսիսի Շնորհալոյ, Երուսաղէմ, 1871, էջ 223-227:

Մագիստրոսի և Ապարանեցու հաղորդածները աւելի ևս պարզում են Շնորհալու ասածները: Ի մէջ այլոց, եթէ հաւատանք Մխիթարին, նոքա սովորութիւն են ունեցել տարին մի քանի անգամ խառնակութեւլ, ինչպէս այսօր մի քանի ռուս աղանդաւորներ: Սակայն, Արևորդոց կրօնն, որ մօտենում է ֆետիշութեան, նոցա ցեղական կազմակերպութիւնը և վարքութարքի նկարագիրը ցոյց են տալիս, որ նոքա կանգնած են քաղաքակրթութեան նախնական աստիճանների վերայ. նոքա դեռ ևս չունին գիր, դպրութիւն և հոգևորականութիւն. իսկ քաղաքակրթութեան այդ աստիճանում հասարակական խառնակեցութիւնը՝ եթէ իրօք գոյութիւն է ունեցել՝ հետևանք չէ վարքութարքի ապականութեան, այլ էնթօգամիայի հետաւոր մնացորդն է, որը գոյութիւն է ունեցել բոլոր ազգերի նախապատմական շրջաններում: Արևորդիք ԺԱ-ԺԴ դարերի մէջ գտնւում էին իրանց քաղաքակրթութեան այն շրջաններում, որի մէջ այժմ գտնւում են Ամերիկայի, Ափրիկէի և նոյն իսկ Հնդկաստանի շատ վայրեցիներ:

Այս հանգամանքն ևս յենարան է տալիս հաստատելու, որ Արևորդիք հայ չէին. դա հակասում է հայի քաղաքակրթութեան պատմութեանը. ԺԱ-ԺԴ դարերում Հայոց մէջ չէր կարող ցեղական կազմակերպութեան և էնթօգամիայի հետքեր մնացած լինել, ինչպիսին տեսնում ենք Արևորդոց մէջ: Հայերը անյիշատակ ժամանակներից հաստատաբնակ էին, իսկ Արևորդիք եթէ բռնազբօսիկ չէ մեր այս բացատրութիւնը, թափառական. «Նոցա երամն ուրիշ է, կու շրջին զօրն հետ արևուն», ասում է Դաւիթ Սալաճորցին Արևորդոց մասին, որով աւելի ևս հաստատւում է նոցա ցեղական կազմակերպութիւն ունենալը:

Զարմանալին այն է, որ Արևորդիք կրակապաշտ չեն, որ Պարսից ու Հայոց հին կրօնի հիմքն էր. և առ հասարակ եղած վկայութիւնների հիման վերայ շատ դժուար է Արևորդոց պաշտամունքը նոյնացնել հին Հայոց կամ Պարսից կրօնի՝ զրադաշտականութեան հետ: Չունենալով հոգևորականութիւն, գիր և դպրութիւն, լինելով թափառական, նոքա անշուշտ չունէին և չէին կարող ունենալ մեհեաններ, բարդ կրօնական ծիսակատարութիւն, որ կապուած է որոշ քաղաքակրթական պայմանների հետ, ուստի և շատ դէպքերում նոքա դիմում են հայ քահանային և տալիս են նոքա հասոյթը:

Դասակարգային միակ անունը, որ պատահում ենք նոցա մէջ, «Հազարպետն» է, նոցա «առաջնորդը» կամ ցեղապետն, ինչպէս քրդական կամ եգիպտական շէյխը:

Ամփոփելով այս ամէնը, հետևում է, որ ա. Արևորդիք հայ չեն, բ. Նոքա քրիստոնէայ աղանդատը ևս չեն. գ. Նոցա կրօնը զրադաշտականութեան հետ ևս նոյնացնել չէ կարելի. դ. որ մեր ունեցած ներկայ նիւթերով առ այժմ դժուար է պարզել նոցա ծագումը:

Բերլին, 1895 թ., Նոյեմբեր 10

«Հանդէս ամսօրեայ», 1896, Յունուար, քիւ 1, էջ 12-19

ԿԵԱՆՔԻ ՃԱԳՈՒՄԸ

Ըստ պրոֆեսոր Ֆեռնորնի (Verworn) (Allgemeine Physiologie. Jena. II Auflage)

Կար ժամանակ, որ մեր երկիրը մի տաք մարմին էր, իւր մօր - արևի նման, որ մինչև հիմա էլ իւր բոցավառ ճառագայթներով տաքացնում և լոյս է տալիս մեզ: Ամենապինդ քարերը, ամենաամուր մետաղները, որ հիմա մեր երկրի սառած կեղևի մասերն են, այն ժամանակ հրահալ դրութեան մէջ էին՝ և բոցավառ գագերի մթնոլորտը բոլորում էր երկրի հալած միջուկը: Այդ բոցավառ զանգւածի տաքութիւնը հասնում էր հազարաւոր աստիճանների:

Թէ իրաւ, երկրագունդը զարգացման մի այդպիսի շրջան է անցել, այսօր ընդունում են բնական գիտութիւնների բոլոր ճիւղերը. աստղաբանութիւնը և ֆիզիկան, երկրաբանութիւնը և էտլոյցիան, հանքաբանութիւնը և քիմիան համաձայն են այդ կէտին:

Եւ իրաւ, ժամանակիս հետազօտութիւնը հեռադիտակի և սպեկտրալ անալիզի միջոցով ուղղակի մեր աչքի առաջ դրեց այն, որ հիմա էլ տիեզերքում ամեն տեղ զարգացման նոյն ընթացքն է կատարում, ինչ որ մեր երկիրն է մի անգամ կատարել, և հիմա էլ ամեն տեղ հանդիպում ենք ուրիշ երկնային մարմինների վերայ երկրիս կատարած զարգացման բոլոր աստիճաններին:

Այս հանգամանքը ահա, որ մեր երկիրը մի ժամանակ այնպիսի դրութեան մէջ էր, ուր կեանքը գոյութիւն ունենալ չէր կարող, որովհետև այն ժամանակ երկրի տաքութիւնը անասելի մեծ էր, երկրի երեսին ո՛չ մի կաթիլ ջուր գոյութիւն չունէր և կեանքի-ապրուստի պայմանները լիովին բացակայ էին, այս հանգամանքը, կրկնում ենք, կեանքի ծագման մասին մտածելիս, պէտք է հաշիւ առնել և աչքից երբէք բաց չթողնել:

Արդ՝ դիտենք այն տարբեր կարծիքները, որոնք գիտական հիմունքներով զանազան գիտնականներ արտայայտել են կեանքի ծագման մասին:

ա. Նախաձագման հիպոթեզ (Urzeugung, Archigonie, Abiogenesis, Generatio Spontanea):

Նախաձագման հիպոթեզը իւր էական գծերով հետևեալն է: Որովհետև մեր երկրի զարգացման մէջ մի ժամանակ կար, որ կենդանի միւթը նորա վերայ գոյութիւն ունենալ չէր կարող, ապա, կենդանի միւթը, երկրի զարգացման մի աւելի ուշ ժամանակ, երբ երկրի կեղևը արդէն պաղել էր և կեանքի ապրելու պայմանները կային, անկենդան միւթից պիտի առաջանար ինքնաձին կերպով:

Այդտեղից ծագում է հետևեալ հարցը. ի՞նչ յատկութեան տէր էին առաջին օրգանիզմները (կենդանութիւն ստացած միւթը) և ո՞րպիսի պայմանների մէջ նոքա առաջացան:

Հին դարերը, նոյն իսկ Արիստոտելի նման բազմահմուտ հանճարը, կարծում էին, որ որդերը, միջատները, նոյն իսկ գորտերը առաջ են գալիս տլից (տղմից): Ուշ, Ռեդի և Սամմերբրամի հետազոտութիւնները միջատների զարգացման մասին ցոյց տւին այդ կոպիտ կարծիքի սխալ և հիմնագործի լինելը: Նախաձագման թէօրիան սակայն մի նոր յենակէտ առաւ մանրադիտակի գիտով, որը գիտնականների առաջ մի բոլորովին նոր աշխարհ բաց արաւ:

Նորա շնորհիւ մարդ առիթ ունեցաւ տեսնելու, որ անկենդան միւթի վերայ մի բոռ ջուր ածելուց յետոյ բազմաթիւ մանր կենդանիներ էին առաջանում, որոնք այդ պատճառով մինչև հիմա էլ ջրի որդ (ինֆուզորիաներ) են կոչում: Եւ դոքա նախաձագման կամ ինքնաձնութեան թէօրիայի լաւագոյն ապացոյցներն էին մանաւանդ իրանց ամենապարզ և հասարակ կազմութեամբ, պատկանելով մինչև այդ գիտութեանը յայտնի եղած կենդանիների ամենաստորին կարգին:

Սակայն, այս անգամ էլ դուրս եկաւ, որ այդ ստորին կարգի օրգանիզմները նախաձագմամբ կամ ինքնաձնութեամբ չէին առաջանում, այլ զարգանում էին այն սերմերից, որ առաջուց մեր թափած ջրի մէջ էին ընկել կա՛մ օդից, կա՛մ ամանից և կա՛մ մեր ձեռներից: Միլնէ, Շւան, Շուլցէ, Հելմհոլց և այլ գիտնականներ ցոյց տւին, որ երբ մարդ ձեռի միւթերը եփելով կենդանի սերմերից ազատէ, չթողնէ որ օդի միջից թափած ջրի տեղը նոր սերմեր ընկնեն, այն ժամանակ ինֆուզո-

րիաներ (ջրի որդեր) չեն առաջանում: Երբ վերջապես մեր օրերում մանր օրգանիզմներից ամենամանրը - բաքտերիաները - գրաւեցին գիտնականների ուշքը, բաքտերիոլոգների հիմնադիր հանճարեղ Պաստէօրը և ապա Ռոբերտ Կոխը հիանալի մեթոդներով ցոյց տւին, որ այդ կենդանիներն էլ երբէ՛ք իրանք իրանց անկենդան նիւթից չեն ծագում, այլ միշտ առաջ են գալիս կենդանի սերմերից. ուր նոցա սերմերը մահացրած կամ ոչնչացրած են, այնտեղ չի՛ կարող առաջ գալ ո՛չ մի կենդանի օրգանիզմ, թէկուզ կեանքի գոյութեան պայմանները գտնուէին իրանց լրութեամբ և կատարելութեամբ:

Այս վիճաբանութեան հետ, թէ արդեօք անկենդան նիւթից կարո՞ղ է ինքնիրան կենդանի օրգանիզմ առաջանալ, մինչև վերջին ժամանակները շարունակւում էին լաբորատորիաներում արհեստաբար կենդանիներ առաջացնելու փորձերը: Մեր օրերում այդ փորձերը կապւած են Պուշէի անուան հետ, որը պնդում էր, թէ անկենդան նիւթից արհեստաբար կարելի է միավանդակ (միաբջիջ, einzellig) օրգանիզմ - ստորին կարգի սունկեր կամ բաքտերիաներ առաջացնել, եթէ կարևոր նիւթերը յարմար պայմանների մէջ դրեն: Այդ պնդումը հիմնովին ջրեց Պաստէօրի և Կոխի անհերքելի փորձերով: Այդ կարծիքը քիմերական է մանաւանդ այն պատճառով, որ օրգանիզմի քիմիական կազմութիւնը, յատկապէս կենդանի սպիտակուցի կազմութիւնը առժամանակ գիտութեանը լիովին անծանօթ է:

Նախաձագման թօրիան գիտական հիմքի վերայ դրեց Հէկկէլը: Նորան չի՛ հետաքրքրում այն հարցը, թէ այսօր արդեօք նախաձագումը գոյութիւն ունի՞՞ թէ ոչ. նա դեռ 30 տարի առաջ պնդում էր, որ կենդանի նիւթը երկրի ծագման մի որոշ ժամանակում մի անգամ անկենդան նիւթից պիտի առաջ գար, որովհետև կար մի ժամանակ, երբ երկիրը մի այնպիսի դրութեան մէջ էր, որ կեանքը չէ՛ր կարող գոյութիւն ունենալ: Եւ այդ ժամանակը, երբ կեանքը սկիզբն առաւ, ըստ Հէկկէլի՝ մթնոլորտում պատող գոլորշիների թանձրանալուց կաթիլ և անձրև գոյանալուց առաջ չէ՛ր կարող լինել: Ինքնիրան առաջացած օրգանիզմն էլ, ըստ Հէկկէլի, դեռ վանդակ (բջիջ, Zelle) չէր, այլ ամենաստորին, ամենապարզ մի օրգանիզմ, ինչ որ միայն երևակայել կարելի է, «միանգամայն համասեռ (հոմոգէն) կազմազերծ (structurlos) և անձև

մի սպիտակուց»։ Թէ ինչպէս առաջացաւ այդ նախնական օրգանիզմը, այդ թողնում է Հէկկէլը մի կողմ, շեշտելով այն հանգամանքը, որ երկրի զարգացման այն շրջանը, երբ կեանքն առաջացաւ, և այն ժամանակւոյ մթնոլորտի, ծովի և ցամաքի պայմանները որպէս նաև նոցա փոխազդը (Wechselwirkung) մենք իսկի երևակայել անգամ անկարող ենք։ Իւր այդ նախնական, ամենապարզ, ամենատարրական և հասարակ կենդանի օրգանիզմը Հէկկէլը անուանում է «մոնէր», որից ապա ծագած պիտի լինեն վանդակաւոր օրգանիզմները, որոնցից, ապա, էւոլյուցիայի շնորհիւ, ամբողջ կենդանի աշխարհը։

Այս տեսութիւնը չնայելով իւր պարզութեանն ու հասարակ լինելուն, շա՛տ կողմերից յարձակման ենթարկուեց և առիթ տուաւ նորանոր թեօրիաների։

բ. Կեանքի տիեզերական լինելու թեօրիան (Kosmozoen-Theorie)

Վերջին ժամանակները նախածագման դէմ դուրս եկաւ այն կարծիքը, թէ ամբողջ տիեզերքում ցրած են կենդանի սաղմեր (սերմ, Keim), որ յայտնի գիտնական Պրէյերը կոսմոցոէն-տիեզերասաղմ, տիեզերական կենդանի է անուանում։ Այդ թեօրիայի հիմնադիրը Հ. Ն. Ռիխտերն է։ Նորա ելակէտը (Ausgangspunkt) այն յայտնի երևոյթն է, որ ամբողջ տիեզերքում ցրած են անթիւ մանր մարմիններ, որոնք իրանց ճանապարհին հանդիպած մեծ մարմիններին քսուելով անցնում են և կամ, եթէ ձգողութիւնը մեծ է, ընկնում են այդ մարմինների վերայ։ Արդ՝ այդ փոքրիկ պինդ մարմինները կարող են կենդանի սաղմեր տեղափոխել երկնային մի մարմնից, ուր կեանքը գոյութիւն ունի, դէպի մի այլ մարմին, ուր նա գոյութիւն չունի. տեղափոխել, ասենք օրինակ, երկրից դէպի լուսինը, ուր եթէ այդ սաղմերը նպաստաւոր պայմաններ գտնեն, մասնաւորապէս չափաւոր տաքութիւն և խոնաւութիւն, կարող են աճել, և ելակէտ դառնալ մի ամբողջ երկնային մարմնի կենդանիներով բնակւելուն։

Տիեզերքի այս կամ այն մարմնի վերայ, ըստ Ռիխտերի, շարունակ գոյութիւն է ունեցել կեանքը բջիջների մէջ. կենդանի բջիջի գոյութիւնը տիեզերքում յաւիտենական է նիւթի պէս. «Omne vivum ab aeternitate e cellula», - ասում է Ռիխտերը։ Օրգանաւոր կեանքը այդպիսով սկիզբ չունի, այլ շարունակ մի երկնային մարմնից անցել է միւսը։

Երկրի վերաբերմամբ Ռիխտերը չի՝ ուզում լուծել այն հարցը, թե ինչպես այնտեղ կեանքը առաջացաւ, այլ թէ նա ինչպէս մի ուրիշ երկնային մարմնից մեր երկիրը հասաւ: Դորա պատասխանն էլ մենք տեսանք, որ նա լուծում է տիեզերքում թափառող փոքրիկ մարմինների (ընկնող աստղերի) միջոցով, որոնք կենդանի տարրը հասցրած պիտի լինեն երկիր, ուր նպաստաւոր պայմանների մէջ աճելով նա սկիզբն է եղել երկրի կենդանիներով ու բոյսերով լցւելուն:

Թէ կենդանի սաղմը մթնոլորտի միջոցով կարող էր անվնաս երկիր հասնել և շփումից առաջացած հսկայական տաքութիւնից չայրւել, Ռիխտերը ապացուցանում է նորանով, որ երկրի վրայ ընկնող փոքրիկ մարմինների - մետէօրների - վրայ նկատւած են ածուխի, փտած մարմինների (humus) և նոյն իսկ նաւթային նիւթերի հետքեր, որոնք առանց այրւելու հասել են երկիր, հասկանալի է ուրեմն, որ կենդանի սաղմերն էլ կարող էին անվնաս մնալ:

Իսկ տարակոյսի ենթակայ չի կարող լինել այն երևոյթը, որ կենդանի սաղմը առանց իրան վնասելու կարող է երկար ճամբորդել տիեզերքում. դորան վկայ են կեղծ-մահու (scheintod) երևոյթները և մանրէների (միկրոբների) սերմերը, որոնք շատ երկար ժամանակ պահպանում են իրենց կեանքի գոյութիւնը անվնաս կեղծ-մահու մէջ, առանց ջրի և առանց կերակրի:

Սի քանի տարի յետոյ, Ռիխտերից անկախ, Հելմհոլց և Վիլիամ Թոմսոնը քննում էին նոյն հարցը, թէ արդեօք չէ՞ր կարող կեանքը մի ուրիշ երկնային մարմնից մեր երկիրը հասած լինել. և երկուսն էլ գտնում են, որ դա մի ֆանտազիայի խաղալիք չէ, այլ բուն գիտական հարց է:

Հելմհոլցը ասում է. «Մետէօրները երբեմն պարունակում են ածխաջրածնի միութիւններ. ածխածինը կենդանի սաղմի բնորոշ տարրն է. ո՞վ գիտէ, գուցէ այդ մարմինները (մետէօրները), որ լի են ամբողջ տիեզերքում, տարածում են կենդանի սաղմ այնտեղ, ուր մի որևէ երկնային մարմին արդէն յարմար պայմաններ ունի նոցա պահպանելու: Եւ այդ կեանքը իւր սաղմով մեր կեանքին ազգակից պիտի համարենք, որքան էլ նա իւր ձևով մերինից տարբեր լինի, շնորհիւ տարբեր պայմանների գոյութեան»: Հելմհոլցը չի ժխտում այն, որ մետէօրները կարող են սաղմի տեղափոխող հանդիսանալ, քանի որ

շարժումից առաջացած սաստիկ շփումից տաքանում է միայն նոցա արտաքինը, իսկ ներքին մասը մնում է պաղ: Կոսմոցոեն - տիեզերասաղմի - թեօրիայի մասին Հելմհոլցն ասելացնում է. «Ես չեմ ուզում վիճել նորա դեմ, ով այս թեօրիան անհաւանական, այո, մինչև անգամ շա՛տ անհաւանական է գտնում. բայց երբ մեր բոլոր փորձերը զուր են անցնում անկենդան նիւթից արհեստաբար կենդանի օրգանիզմ առաջացնելու, ապա մի լիովին ուղիղ-գիտական միջոց է, երբ մենք հարց ենք տալիս՝ արդեօք կեանքը երբ և իցէ սկի՞զբն է ունեցել, արդեօք նիւթի պէս յաւիտենական չէ՞ նա, և թէ արդեօք նորա սաղմերը մի երկնային մարմնից դէպի միւսը չե՞ն տեղափոխւել և այնտեղ զարգացել, երբ նպաստաւոր պայմաններ են գտել: Իսկական ալտերնատիւր յայտնապէս հետևեալն է. օրգանական (բոյս, կենդանի) կեանքը կա՛մ մի որևէ ժամանակում սկիզբն է առել և կամ գոյութիւն ունի յաւիտեանս յաւիտենից»:

գ. Պրէյերի թեօրիան կեանքի յաւիտենականութեան մասին

Պրէյերը հակառակ է թէ՛ նախածնութեան և թէ տիեզերասաղմի թեօրիաներին. և հետևեալ պատճառներով: Նախածնութեան թեօրիայի դեմ նա ասում է. եթէ մարդ ընդունում է, որ էտլիւցիայի (զարգացման) մի որոշ ժամանակում մի անգամ կենդանի սուբստանցը (նիւթը) անկենդան նիւթից առաջացաւ, ապա մարդ կարող է պահանջել, որ նոյնը այսօր էլ տեղի ունենար: Այդ նպատակով կատարած բազմաթիւ փորձերը սակայն միշտ պսակւել են անաջողութեամբ: Եթէ նախածնութեան թեօրիան ընդունում է, որ կեանքի առաջանալը կարելի էր ամենահին ժամանակում, իսկ հիմա ոչ, դա էլ միանգամայն անհաւանական է, որովհետև «նոյն պայմանները, որոնք կեանքի պահպանութեան համար կարևոր և հիմա իրական են, պէտք է կենդանու առաջին անգամ ծագելու ժամանակ էլ իրապէս գոյութիւն ունենային. այլապէս նախածնութեան արդիւնքը չէր կարող ապրել»: Մարդ չի՛ հասկանում իսկապէս, թէ հիմա ի՞նչ բան է պակաս, որ նախածնութիւնը դադարել է մեր օրերում տեղի ունենալուց:

Պրէյերը տիեզերասաղմի թեօրիան էլ չի ընդունում, որովհետև նորա կարծիքով դա հարցը չի լուծում, այլ միայն յետաձգում է. այն է՝ կեանքի ծագումը այդ թեօրիան մեր երկրից տեղափոխում է մի որ և է

այլ երկնային մարմնի վերայ, ուր սակայն դուած հարցը մնում է նոյն դրութեան մէջ անլուծելի:

Ի նկատի ունենալով ամենօրեայ փորձը, որ բոլոր օրգանիզմները շարունակ առաջ են գալիս իրանց նման օրգանիզմներից և մինչև օրս դեռ չի հաստատուել, որ մի օրգանիզմ առաջանար ինքն իրան - առանց ծնողների, Պրէյերը մի հարց է առաջարկում. թէ արդեօք նախածննդեան թէօրիան հարցի սխալ դնելու արդիւնք չէ՞, երբ նա պահանջում է, որ կենդանի սուբստանցը (նիւթը) մի անգամ անկենդան միութից պիտի ծագած լինի. և թէ արդեօք ուղիղ չէ՞ր լինիլ եթէ հարցը բոլորովին դորա հակառակը դուէր:

«Գուցէ անկենդան միւթն է առաջացել կենդանականից»: Բոլոր օրգանիզմները առաջանում են միայն կենդանի օրգանիզմներից. անօրգան, անկենդան միւթը (հող, մետալներ) որպէս մենք ամեն օր տեսնում ենք, առաջանում է ո՛չ միայն անկենդան, այլ և կենդանի միութից, որից նա բաժանուում է ինչպէս մեռած տարր, կամ որի մահից յետոյ նա մնում է որպէս մեռած աճիւն: Այդ նախաբանով Պրէյերը այն կարծիքն է յայտնում նախածնութեան թէօրիայի դէմ, որ ժամանակով կենդանի միւթն է առաջինը. իսկ անկենդանը ծագել է նորա զատանքից (Ausscheidung): Նա ընդունում է, որ կեանքը յաւիտենական է. Omne vivum e vivo.- Այս երևոյթը երբեք բացառութիւն չի՝ ունեցել:

Այս թէօրիայի հետևանքները շա՛տ հարցասիրական են: Եթէ կեանքը երբե՛ք անօրգան միութից չի ծագել, այլ մի՛շտ առաջացել է կենդանի սուբստանցից, ապա նա պիտի գոյութիւն ունենար և այն ժամանակ, երբ երկիրը մի հրահալ և բոցավառ մարմին էր: Այդպէս էլ կարծում է Պրէյերը. ուստի և նա «կեանք» գաղափարը սովորականից շա՛տ ընդարձակ ըմբռնելով, ո՛չ միայն այսօրայ կենդանի սուբստանցն է կենդանի համարում, այլ և այն բոցավառ կրակը, որ պրոտոպլազմ-օրգանիզմներից շա՛տ առաջ գոյութիւն ունէր: «Եթէ մարդ իրան ազատում է, ասում է Պրէյերը, այն սխալ և անիրական մտքից, թէ ներկայ պրոտոպլազմայի յատկութեամբ միայն կեանքը կարող էր գոյութիւն ունենալ և այն հին՝ միայն յարմարութեան համար հնարած կարծիքից, թէ նախօրօք լոկ անօրգան (անկենդան) միւթը կարող էր գոյութիւն ունենալ, ապա դժուար չէ մի քայլ աւելի հեռու գնալ և կեանք-

քի անսկիզբ լինելը ճանաչել. «omne vivum e vivo». Այս դիտողություններով Պրեյերը հետևեալ պատկերն է տալիս կեանքի մասին: Երկրի ամբողջ բոցավառ մասսան մախօրօք մի հսկայական օրգանիզմ էր: Այն ահագին շարժումը, որի մեջ նա գտնուում էր, նորա կեանքն էր: Իսկ երբ երկիրը սկսեց պաղիլ, ապա սկսեցին գատիլ այն նիւթերը, որոնք այլ ևս հեղուկ դրութեան մէջ չէին կարող մնալ, որպէս, օրինակ, մետալները, որոնք ամբողջ օրգանիզմի կենդանի շարժմանը չէին կարող մասնակցել, որից և կազմեցաւ առաջին անօրգան (անկենդան) մասսան: Այսպիսով երկրի բոցավառ-հեղուկ նիւթը նորա կենդանի տարրն էր. իսկ սառած մասը - անկենդան: Այս երևոյթը շարունակելէ, մինչև որ երկրի մասերը պաղելով-սառելով հետզհետէ լիովին մահացան և ապա առաջացան գազային և կաթիլային տարրերի միութիւնները (Verbindung), որոնք հետզհետէ նմանում էին մախասաղմին (պրոտոպլազմա), որը մեզ ծանօթ կեանքի հիմն է կազմում:

«Երկրի տաքութեան պակասելու հետ աւելի և աւելի բարդ կապակցութիւններ, քիմիական միաւորումներ, աւելի ու աւելի բարդ մարմիններ, խառնաշփոթութիւններ, ցանցակերպ մէկից-միւսին անցնող երևոյթներ առաջանալով, այն էլ միշտ բազմացող բաժանումներով ու զատումներով, հիմք տւին բոյսերի և կենդանիների մախնական ձևերին:

«Այսպիսով մենք չենք ասում, թէ մախասաղմը ինքնին երկրի կազմութեան սկզբից գոյութիւն ունէր, ոչ էլ այն, թէ անսկիզբն մի որ և է երկնային մարմնից երկիր ընկաւ, և ոչ էլ այն, թէ նա պլանետների վրայ անօրգան նիւթից է ծագել, այլ մենք պնդում ենք, որ տիեզերքի անսկիզբն շարժումը կեանք է, և պրոտոպլազմայի ծագումը - այդ կեանքի մի մնացորդը՝ փոփոխուած պայմանների մէջ: Ծանր մետալները, որ մի ժամանակ այդ հսկայ կեանքի մասերն էին, սառելուց յետոյ է՛լ չհալեցան, չմտան այս նոր փոքրիկ (սաղմային) կեանքի շրջանակը: Նոքա հին, բոցավառ կեանքի վաղաժամ մահուան մնացորդներն են, ա՛յն կեանքի, որի շունչը գուցէ լուսավառ երկաթի գոլորշի էր, որի արիւնը հեղուկ մետալն էր, որի կերակուրը գուցէ մոլորակներն էին»:

դ. Պֆլուգերի թեօրիան

Պֆլուգերն էլ մի բազմահմուտ աշխատության մէջ¹ մանրօրէն ուսումնասիրելով կեանքի ծագման հարցը, այն կարծիքն է յայտնում, որ կենդանի սուբստանցը (նիւթը) երկրիս վերայ ինքնիրան առաջացել է անկենդան սուբստանցից:

Այս գիտնականի թեօրիան այն առաւելութիւնն ունի, որ նա միայն սպեկուլացիօններով չի զբաղում, այլ հարցը պնդօրէն կապում է ֆիզիօլօգիական (բնախօսական) և քիմիական յայտնի իրողութիւնների հետ և խիստ գիտականօրէն լուսաբանում է իւր բոլոր մասերով: Յայտնում էմ, որ նորա թեօրիան չեմ կարող այստեղ ներկայացնել «Մորճ»-ի ընթերցողների համար, որովհետև այն հասկանալու համար պէտք է քիմիայից որոշ աստիճանի պատրաստութիւն ունենալ. ուստի նոքա թող բաւական միայն Պֆլուգերի հանած եզրակացութիւններով: Կեանքի հիմքը նա գտնում է մի քիմիական մարմնի մէջ, որ ցիան (cyan) է կոչում. իսկ այդ մարմինը՝ յայտնի է քիմիայից, որ առաջ կարող է գալ միայն ամենախիստ տաքութեան մէջ: Ուստի Պֆլուգերը բնական է գտնում, որ կեանքի հիմքը սկիզբն պիտի առնէր դեռ այն ժամանակ, երբ մեր երկիրը տաք-հալած դրութեան մէջ էր:

1. Pfluger: "Ueber die physiologische Verbrennung in den lebendigen Organismen" - I'flugerischer Archiv, Bd. 10. 1875.

ՔՆՆԱԿԱՆ

Կեանքը յաիտենակա՞ն է արդեօք, թե սկիզբն ունի:

Կեանքի ծագման մասին երկրի վերայ՝ յիշեալ թեօրիաների մէջ երկու միմեանց հիմնովին հակառակ կարծիք կայ, որ գեղեցիկ կերպով արտայայտում է Հելմհոլցի դրած ակտերնատիւի մէջ. «օրգանական կեանքը կա՞մ մի որևէ ժամանակ սկիզբն է առել և կամ յաիտենական է»: Մի երրորդ՝ միջին ճանապարհ չկայ. ով կեանքի ծագումն ունենալն է ընդունում, չի կարող նորա յաիտեան լինելն ընդունել. ով կեանքի յաիտենութեանն է կողմնակից, հակառակ պիտի լինի նորա սկիզբ ունենալուն:

Քննենք կեանքի յաիտենութեան թեօրիան:

Այդ թեօրիան ասում է, որ կեանքը անսկիզբն է և մի մոլորակից անցնում է դէպի միւսը, անվերջ շարունակելով իւր գոյութիւնը: Այս կարծիքը ուղղակի հերքել համարեա՛ւ անկարելի է, քանի որ մենք դեռ ևս չենք ապացուցել, թէ իրօք սաղմների փոխանցումը մի երկնային մարմնից դէպի մի ուրիշը անկարելի է. թէև անուղղակի կարելի էր պնդել, որ շա՛տ անհաւանական է կեանքի յաիտեան լինելը, քանի որ օրգանատուր և անօրգան մարմինների համեմատութիւնը ցոյց է տալիս, որ առաջինները բաղկացած են նոյն քիմիական նիւթերից, ինչ որ անօրգանները, և տարբերում են միմեանցից միայն իրանց քիմիական կապակցութիւններով: Կենդանի սուքստանցի կարևորագոյն կապակցութիւնները.- սպիտակուցատուր մարմինները - սկզբունքով՝ հակադիր չեն անօրգաններին և տարբեր են նոցանից նոյնքան, որքան անօրգանների զանազան քիմիական կապակցութիւնները միմեանցից: Եւ եթէ օրգանատուր մարմինները յաիտենական են, ապա, հետևօրէն մտածելով, յաիտենական պիտի լինէին նաև շա՛տ հանքային կապակցութիւններ (Verbindung), որպէս որձաքարը, ֆելդսպատը (Feldspat) և այլն. եթէ այդ տեսակէտով մի քիչ հեռուն գնայինք, պիտի այն անմիտ եզրակացութեանը գայինք, որ առհասարակ բոլոր քիմիական կապակցութիւնները յաիտենից գոյութիւն ունին. կա-

պակցություններ, որոնք ամեն օր հարիւրներով և հազարներով կատարում են մարդկանց ձեռքով քիմիական լաբորատորիաներում: Քանի որ օրգանատր և անօրգան մարմինների քիմիական կապակցությունների մէջ սկզբունքի տարբերություն չկայ, նոցա ծագման մասին էլ բնականօրէն սկզբունքով տարբեր թէօրիաներ պիտի չառաջանան. կա՛մ երկուսն էլ յախտենական են, և կա՛մ երկուսն էլ սկիզբ ունին. որովհետև մենք հաստատ գիտենք անօրգանների ծագում ունենալը, բնական է ուրեմն, որ օրգանատրներն էլ մի որևէ ժամանակ պիտի առաջացած լինեն:

Բոյսերի ֆիզիոլոգիայից յայտնի մի հիմնական երևոյթ էլ լիովին հակառակ է այն ենթադրութեանը, թէ կեանքը անօրգաններից չի ծագել. մի յայտնի իրողութիւն է, որ այսօր էլ բոյսը շարունակ սննդում է անօրգան նիւթերից (ածխաթթու, ջուր, ծծումբ և այլն). երբ մարդ գարնանը փոքրիկ հումտը գետնի մէջ է թաղում և ամառը նորանից առաջացած ահագին բոյսն է դիտում, նորա համար ակներև է, որ բոյսը իր այդ ահագին մարմնի կենդանի տարրը առել և կենդանացրել է իրան բոլորող անօրգան (անկենդան) նիւթերից: Եւ երբ ձմեռը վրայ է հասնում, նոյն կենդանի բոյսը համարեա՛ւ ամբողջովին մեռնելով՝ դառնում է մի անօրգան (անկենդան) մարմին:

Այստեղ աշկարա տեսնում ենք օրգանատր և անօրգան մարմինների անբաժան կապը, ուր կենդանի նիւթը ծագում է անկենդան նիւթից և կրկին մեռնելով, լուծում, դառնում է անկենդան: Իրաւացի է յայտնի բուսաբան Նեգելիի (Nageli) նկատողութիւնը, թէ «մեր հաստատ գիտեցածն այն է, որ անօրգանը (անկենդան) օրգանատրի (կենդանի) մէջ դառնում է օրգանատր սուբստանց. և օրգանատր սուբստանցը դառնում է լիովին անօրգան կապակցութիւն,- այսքանը բաւական է, որ պատճառականութեան օրէնքով հետևցնենք օրգանատրի ծագումը անօրգանից»:- «Նախածնութիւնը հերքել, նշանակում է հրաշք ընդունել»:

Կեանքի յախտնութիւնն է ընդունում և Պրէյերը, միայն բոլորովին այլ մտքով. նորա թէօրիան, սակայն, շատ հետևողներ չունեցաւ:

Նա ասում է, որ կենդանի սուբստանցը առանց ընդհարման ծագում է այն սուբստանցից, որ մի ժամանակ հրահալ դրութեան մէջ էր.

մենք իրաւունք չունենք այդ վերջինը մեռեալ անւանելու, որովհետև իրօք կեանքի և մահւան մէջ, որպէս անօրգան և օրգանաւոր մարմինների մէջ, մի բաժանարար սուր գիծ չկայ, և առհասարակ այդ բաժանումը կամայական է:

Եւ որովհետև այդ սուբստանցը տիեզերական նիւթի մի մասն է, որը յաւիտենական շարժման մէջ է, ապա ուրեմն կեանքը, որ շարժման մի բարդ երևոյթ է միայն, նոյնպէս յաւիտենական է, որպէս մատերիան (նիւթը):

Պարզ է, որ նախածագման և Պրէյերի թէօրիաների տարբերութիւնը նոցա տարբեր հասկացողութիւնն է կեանքի մասին: Առաջինը սովորական ձևով կենդանի է անւանում միայն օրգանաւոր նիւթը՝ անօրգանի յանդիման, իսկ Պրէյերը «կեանք»ը խիստ ընդարձակ է ըմբռնում և տիեզերքի բոցահալ նիւթն էլ կենդանի է համարում: Եթէ կեանք գաղափարը այդպիսի ընդարձակ մտքով ըմբռնենք, ապա մնացեալ հետևութիւնները, որ հանում է Պրէյերը, հասկանալի կը լինին: Սակայն դա իր անյարմարութիւններն ունի:

Այն գաղափարը, որ մենք արտայայտում ենք կենդանի բառով, ծագել է ներկայի կենդանի օրգանիզմների և անկենդան մարմինների ճիշտ, գիտական և համեմատական դիտողութիւնից: Այդ բաժանումը ունի միայն մի՝ արմատական կէտ. դա սպիտակուցաւոր մարմինների նիւթի փոխանակութիւնն է: Այն է, սպիտակուցաւոր մարմինները, որ նաև կենդանի օրգանիզմ են կոչւում, ընդունակ են սննդւելու, սննդածը մարսելու և աւելորդութիւնները իրանցից զատելու: Ո՛չ մի անօրգան (անկենդան, օր. մետալներ) մարմին սպիտակուց չունի: Ընդհակառակը ամեն մի օրգանիզմ սպիտակուց ունի, և այդ սպիտակուցի կերակրւիլն է (Stoffwechsel), որով նա տարբերում է անկենդան մարմիններից:

Այս միջոցը թէև տարրական, պրինցիպական չէ, բայց միակ հաստատուն միջոցն է, որով մենք բաժանել ենք կարողանում անկենդան նիւթը կենդանականից:

Եթէ այս կէտը բաց թողնենք աչքից և Պրէյերի պէս այն մարմիններն էլ կենդանի անւանենք, որոնք սպիտակուց չունին, որպէս հրահալ մարմինները, ապա մեր գտած որոշումը լիովին կորցնում է իր

նշանակությունը, և օրգանաւոր ու անօրգան մարմինների բաժանումը դառնում է անկարելի:

Պրէյերը մի լռիկ ենթադրութիւն էլ է անում, թէ հրահալ նիւթերը նիւթի փոխանակութիւն ունէին, որ ո՛չ մի դիտողութեան վրայ չի հիմնւած. թէև մի կողմից այն էլ անտարակուսելի է, որ այդ հրահալ նիւթերը մի ներքին՝ և այն էլ շա՛տ գօրեղ շարժման ընդունակութիւն ունէին, միւս կողմից կեանքն էլ ինքնին մի բարդ շարժումն է, որին ամեն մի մոլեկուլային շարժում սկզբունքով ազգակից է: Եւ սակայն, այն շարժումը, որ արտայայտում է կեանքի մէջ նիւթի փոխանակութեամբ, մի շատ բնորոշ երևոյթ է: Այդ այն է, որ կենդանի սուբստանցը շարունակ մաշւում է, զատում (ausscheiden) կամ հեռացնում է իրանից սեփական մարմնի հնացած մասերը, նորա տեղը ընդունելով նոր մասեր, որոնցով շարունակ նորոգում է իւր մարմինը, կազմելով ատոմների նոր խմբեր: Բոլոր կենդանի սուբստանցի ամենաբնորոշ յատկութիւնն է այս մաշիլն ու նորոգիլը, կամ զատելն ու ընդունելը (ausscheiden-aufnehmen): Թէ նոյն շարժումը, այն է մաշիլն ու նորոգիլը գոյութիւն է ունեցել նաև հրահալ նիւթերի մէջ և անընդհատ շարունակւելով եկել հասել է մինչև մեր օրերը կենդանի օրգանիզմների մէջ, շա՛տ տարակուսելի է: Այսօր էլ երկրի մէջ կան հրահալ նիւթեր, որոնք երբեմն երևան են գալիս հրաբուխների մէջ, թէև այդ նիւթերը երբեմն ջրի նման հոսելով հրաբուխից առաջ են սողում երկրի երեսին և ցոյց են տալիս շարժման մեծ ընդունակութիւն, բայց նոքա չունին նիւթի փոխանակութիւն, ուստի և մենք իրաւունք չունինք այդ նիւթերը կենդանի անուանելու: Որքան էլ ոգեհարուստ, ուշագրաւ և ազդու է Պրէյերի թէօրիան, սառը դատելուց յետոյ չենք կարող համաձայնիլ նորան, մեր երկրի նախկին հրահալ նիւթերը ամբողջովին կենդանի համարելու նկատմամբ: Այստեղ ուրեմն գալիս ենք այն եզրակացութեան, որ կենդանի սուբստանցը մի անգամ առաջացած պիտի լինի այն սուբստանցից, որ մենք սովորաբար կեանքից գուրկ ենք համարում:

Ե. Կենդանի սուբստանցի ծագումն ու էությունիւն ըստ Ֆեռուրնի

Վերևի թէօրիաները դնելուց և քննադատելուց յետոյ, պրոֆ. Ֆեռուրնը տալիս է իւր թէօրիան կեանքի ծագման մասին, որ Պֆլիւգերի

ու Հեկկելի թեորիաների նորաձևությունը կարելի է անուանել, ուր նա հետևեալ մտքերն է զարգացնում:

Պֆիլզեի արտայայտած կարծիքի համեմատ մենք կարող ենք խոշոր գծերով մի մօտաւոր գաղափար տալ կեանքի ծագման մասին երկրի վրայ: Կեանքի արմատներն հասնում են այն հնագոյն ժամանակներին, երբ երկրի կեղևը դեռ հրահալ դրութեան մէջ էր: Այն ժամանակ առաջացած ցիանի կապակցութիւնները այն հիմնական նիւթերն էին, որոնցից սկիզբն առաւ կեանքը: Լինելով դիւրին լուծուող, նոքա յարաբերութեան մէջ պիտի մտնէին ածխածինի բազմատեսակ կապակցութիւնների հետ, որոնք նոյնպէս կրակին են պարտական իրանց ծագումը: Երբ երկիրը պատող գոլորշիները խտանալով և պաղելով սկսեցին հեղուկ-անձրևի պէս ցած գալ արդէն բաւականաչափ պաղած երկրի վրայ, կրակից ծագած յիշեալ կապակցութիւնները քիմիական տարբերութեան մէջ մտան ջրի և նրա մէջ լուծւած աղերի ու գազերի հետ, որից և առաջ եկաւ կենդանի սպիտակուցը:

Այս առաջին կենդանի սուբստանցը, որը ինքնածին կերպով անկենդան սուբստանցից առաջացաւ, դեռ շատ պարզ էր և տարբերութիւններ չունէր: Շատ հաւանական է, որ նա դեռ բջիջի ձև չունէր, այսինքն նորա գոմարը դեռ չէր բաժանւած միջուկի (Kern) և պրոտոպլազմայի (նախասաղմ), այլ իւր բոլոր մասերով համասեռ (gleichartig-homogen) էր, ինչպէս այդ Հեկկելն էր ընդունում իւր մոների համար:

Այս է ահա այն հաւանական դրութիւնը, որ այսօր կարելի է անել կենդանի սուբստանցի ծագման մասին: Այն պայմանները, որոնք նպաստեցին այդ կեանքի առաջանալուն, մեզ համար այնքան անծանօթ և մթին են, որ աւելորդ և անհիմն է այդ մասին երկարաբանելը: Կենդանի սուբստանցի գոյութիւնը իբրև իրողութիւն ընդունելուց յետոյ՝ մենք կանգ ենք առնում այն հաստատ հողի վրայ, որտեղից սկսելով Լամարկն ու Դարւինը հիմք դրին իրանց թեօրիային. իսկ Հեկկելն ու Վայսմանը իրանց աշակերտների հետ նոյնը շարունակելով հաստատեցին ծագման (Descendenz) թեօրիան, որը բացատրում է մեզ կեանքի կրած էվոլյուցիան մինչև մեր օրերը:

Բացատրենք այդ թեօրիայի էակէտերը երկու խօսքով:

Ներկայումս երկրի վրայ գոյություն ունեցող բոլոր կենդանի օրգանիզմները - հազարաւոր կենդանիներն ու բիւրաւոր բոյսերը - ծագում են այն պարզ և հասարակ սաղմից, որի առաջնաւոր անկենդան նիւթից վերը նկարագրեցինք: Իրապէս ուրեմն բոլոր կենդանիները արեւակից են և մի ծագումն ունին: Պատմական ժամանակի համար այդ երևոյթը բացատրելու առանձին հարկ չկայ, քանի որ ամեն օր աչքով տեսնում ենք այն սովորական իրողութիւնը, որ ամեն մի կենդանի շարունակ ծագում է իւր նման կենդանիներից:

Այն ինչ, այն միլիօնաւոր տարիներն ու դարերը, որ անցել են կենդանի սաղմի առաջնաւորց մինչև մեր օրերը, մեր աչքով չենք տեսել և նորա մասին պատմութիւն էլ չունինք: Այդ ժամանակի համար ահա հարկաւոր են ապացոյցներ. և բնութիւնը դորա համար պահել է թանկագին վկայութիւններ: Ինչպէս մի հին արձանագրութիւն կամ հին դրամ մեզ տեղեկութիւն է տալիս մի որ և է թագաւորի կամ անցքի մասին, որ պատմութեանը յայտնի չէ, այնպէս էլ քարաբանութիւնը (Versteinerungskunde-Palaeontologie) մեզ անկասկածելի տեղեկութիւններ է տալիս երկրի վրայ ապրած այն կենդանիների և բոյսերի մասին, որոնք մի ժամանակ ապրել են և ներկայիս կենդանիների նախահայրերն են: Երկրաբանութիւնից յայտնի է, որ երկրի կեղևը զանազան շերտերից է կազմւած, որ իւր հնութեան համեմատ բաժանւում է հինգ գլխաւոր մասերի, որոնք ըստ հնութեան կոչւում են առաջին - ամենահին շերտ, երկրորդ, երրորդ, չորրորդ և հինգերորդ՝ ամենավերջին շերտը, որի վրայ մենք ենք ապրում: Արդ՝ այդ շերտերի մէջ պահւած-քարացած կենդանիների և բոյսերի մնացորդներն ու կմախքը աշկարա ցոյց են տալիս օրգանաւոր աշխարհի աստիճանական զարգացում. ո՛չ, ի հարկէ, լրապէս և կատարելութեամբ, որովհետև բոլոր կենդանիների հետքերը չեն պահւած և երկրի կեղևը ամբողջովին չի փորւած ու ուսումնասիրւած: Մանաւանդ ստորին կենդանիներից շատերը չունէին այնպիսի ամուր կմախք, որ ազատ մնային փչանաւլուց և միլիօնաւոր տարիներ դիմանային ժամանակի կործանիչ ուժին: Բայց ով կուրացած չէ գերբնական ուժերի հաւատով, պիտի համոզի, որ ամբողջ օրգանաւոր աշխարհը, ա՛յն որ մի ժամանակ ապրել և մեռել է, և թէ ա՛յն, որ այսօր ապրում է, մի՛ ծագումն ունի, և մի-

այն դարերի հսկայական շարքն ու արտաքին պայմանների ահագին ազդեցությունը նոցա ամեն միմին տուել է մի որոշ տիպային ձև ու ապրուստի եղանակ: Այդ քարացած կենդանիների ցոյց տուած յատկանիշ կողմը այն է, որ երկրի շերտերի դասատրութեան հետ նկատելի է և կենդանիների ու բոյսերի զարգացումը. ամենահին շերտերի մէջ նկատելի են ստորին կազմութիւն ունեցող կենդանիներ, միջին շերտերում կենդանիների կմախքը ցոյց է տալիս ատելի զարգացած ձևեր, որ աստիճանաբար բարձրանալով ամենավերջին շերտում նկատում ենք կենդանիների ամենազարգացած խմբեր, որոնց թւում է մարդուն:

Համեմատական անդամահատութիւնը (*Vergleichende Anatomie*) դորա մասին տալիս է երկրորդ հիմնաւոր վկայութիւնը: Նա ցոյց է տալիս որ զանազան կենդանիների նոյն օրգանները որոշ նմանութիւն ունին իրար հետ (օրինակ, մարդու ականջը նման է կապկի ականջին), որ նշան է, թէ նոքա մի ժամանակ արեւակից պիտի եղած լինին:

Այդ համեմատութիւնների շնորհիւ գիտնականները այն եզրակացութեանն էին եկել, որ թռչուններն ու սողունները մօտ ազգականներ են: Ուղղակի ապացոյց չկար դորա համար: Եւ ահա գտնուում է երկրի շերտերում մի քարացած կենդանի, աղաւնու մեծութեամբ (*Archaeopteryx macrurus*), որը թռչունի և թէ սողունի յատկութիւններն ունի միևնոյն ժամանակ, որովհետև նա ունէր մողեսի բերան, ատամներ և ողնաշար մի երկար ազիով, բայց մարմինը ամբողջովին ծածկւած էր թռչունի փետուրներով: Գիտութեանը այսօր այդպիսի հարիւրաւոր օրինակներ են յայտնի:

Երրորդ կարևոր վկայութիւնը բոլոր կենդանիների արեւակցութեան մասին տալիս է էմբրիօլոգիան կամ անհատի սաղմաբանութիւնը: Ամեն մի ձուի սաղմ, մինչև հասունանալը և իւր ցեղին յատուկ տիպային ձև ընդունելը անցնում է զարգացման ահագին աստիճաններ: Այսպէս՝ թիթեռի ձուն դառնում է բոժոժ, թրթուր և ապա թիթեռ, որոնք գործին անտեղեակ մարդոց կարող են բոլորովին այլ կենդանի թաւ, մինչև նոքա միևնոյն կենդանու զարգացման զանազան աստիճաններն են: Յայտնի է, որ որդիքը ժառանգում են ծնողների յատկութիւնները: Դորանից դժար չէ եզրակացնել, որ կենդանի սաղմն էլ կարճ ժամանակով անցնելու է զարգացման այն աստիճանները, որոնցով անցել են նորա նախնիքը հազարաւոր և բիւրաւոր տարիների ընթացքում:

Այսպիսով ամեն մի կենդանի էակ իր սաղմային զարգացման ժամանակ, օրինակ մարդը մօր արգանդում, անցնելու է այն աստիճանները, որոնցով մարդկությունը անցել է իր կեանքի երկարատև և դանդաղ ընթացքում, սկսած պրոտոպլազմայից մինչև ինքը մարդը: Այնպես որ, դիտելով մարդու սաղմի զարգացումը մօր արգանդում, կարող ենք տեսնել այն զարմանալի նմանությունը, որ կայ բոլոր ստորին կենդանիների և մարդու սաղմի մեջ: Հեկկելը իր «Բնական ստեղծագործություն» գրքի մեջ պատկերներով ցոյց է տալիս կաթնասուններից ոզնու (*Amoebion*), պարկակենդանու (*Beutelthier*), եղնիկի, կատուի, կապկի և մարդու նմանությունը սաղմային զարգացման երեք աստիճաններում: Առաջին աստիճանում այդ կաթնասունների սաղմերը բոլորը նման են ձկան և միևնույն ժամանակ միմեանց այնքան, որ մարդու, կատուի և մնացեալ կենդանիների սաղմերը անկարելի է զանազանել միմեանցից: Տարբերություն նկատելի է միայն զարգացման աւելի ուշ՝ երկրորդ աստիճանում միայն. երրորդ աստիճանում միայն կարելի է այդ սաղմային կենդանիները զանազանել, թեև նոցա մեջ եղած նմանությունը դարձեալ ակներև է... Այս հանգամանքը ցոյց է տալիս, որ բոլոր կաթնասունները ծագում են միևնույն ընդհանուր նախնիքից և սաղմի զարգացումը (*Ontogenie*) իր նախորդների անցած զարգացման աստիճանների կրկնությունն է: Այնպես որ, միայն սաղմի զարգացումը դիտելով մենք մօտաւորապէս կարող ենք ասել, թէ մի որևէ կենդանի ինչ ծագումն ունի և կենդանիների ո՞ր ցեղին աւելի մօտ ազգական է: Այսպէս ուրեմն, քարաբանությունը, համեմատական անդամահատությունը և սաղմաբանությունը ձեռք ձեռքի տուած գալիս են հաստատելու այն ֆակտը, որ բոլոր օրգանիզմները մի՞ ծագումն ունին, և ցոյց են տալիս այն ճանապարհը, որով այդ կենդանիներն անցել են իրանց զարգացման ընթացքում, հասնելով մինչև կենդանիների «թագաւոր» մարդը:

Այդ ուսումնասիրությունների հիման վրայ կենդանի օրգանիզմների ցեղաբանությունը հետևեալ պատկերն ունի:

Առաջին կենդանի տարրից, որ Հեկկելը մոներ է անւանում, առաջացաւ միաբջիջ սուբստանցը, որ բաղկացած էր մի միջուկից և պրոտոպլազմայից - այսպէս անւանեալ՝ պրոտիստները: Պրոտիստներ-

րից առաջացան մի կողմից բոյսերը, միւս կողմից կենդանիները: Այդ բաժանումից առաջացաւ այն մեծ տարբերութիւնը, որ կայ բոյսերի և կենդանիների մէջ. այն է, բոյսերը կերակրոււմ են անօրգան նիւթերով, իսկ կենդանիները օրգանաւոր: - Այդ ստորին կարգի կենդանիներից առաջացաւ ամբողջ կենդանական աշխարհը աստիճանական զարգացմամբ, որպէս նաև բուսական աշխարհը ստորին կարգի բոյսերից (Protophyten): - Այսպիսով՝ բուսական և կենդանական աշխարհը իւր բիւրաւոր ձևերով ու տեսակներով միմեանց հետ կապուած են նեղ-աբնական կապերով:

Թէ որպէս և որտեղից առաջացաւ այն հսկայական տարբերութիւնը կենդանի օրգանիզմների մէջ, թէ ի՞նչպէս Հէկկէլի նախնական պարզ, հասարակ և անձև սաղմը (մոնէրը) զարգացման այնպիսի հսկայական քայլեր կատարեց և ձևերի մի աներևակայելի բազմատեսակութիւն առաւ, բացատրում է մեզ Դարւինի համբաւաւոր թէօրիւն, որ բնական ընտրութիւն է կոչոււմ (Selectionstheorie):

Դարւինի ելակէտը հետևեալն էր. յայտնի է, որ միևնոյն տեսակի կենդանիները - նոյն իսկ միևնոյն ծնողների զաւակները ունենալով միևնոյն տիպային ձևերը, այնուամենայնիւ քիչ թէ շատ տարբերոււմ են միմեանցից: Պատճառն այն է, որ զաւակը միայն հօր կամ մօր սաղմի արդիւնք չէ, այլ նոցա խառնուրդի. նա չի՛ ժառանգոււմ միայն հօր կամ մօր, այլ այդ երկուսի յատկութիւնները այս կամ այն չափով խառնուած: Բնականօրէն, զաւակը չի՛ կարող բացարձակ հօրը կամ մօրը նմանել:

Միւս կողմից նա ենթակայ է արտաքին պայմանների զօրեղ ազդեցութեանը, որոնց շնորհիւ նա իւր ծնողներից և իւր ցեղի միւս կենդանիներից տարբերուելու նոր վայրկեաններ է ստանում: Այսպիսով նման կենդանիները ուզում են ապրել. նման կենդանիները նման էլ կերակուր են ուզում, և այդ կերակրի պատճառով նոցա մէջ ծագում է մրցութիւն, կռիւ, որ հայերէն գոյութեան կռիւ է կոչոււմ. - կենամարտ (Kampf ums Dasein.- struggle for life): Կռիւ մէջ, հարկաւ, յաղթողը, զօրեղը ապրում է, իսկ յաղթողը մահուան դատապարտոււմ: Այսպիսով ապրում են նոքա, որոնք մի առաւելութիւն ունին և արտաքին պայմաններին աւելի են յարմարոււմ. իսկ նոքա, որոնք այդ արտաքին

պայմաններին չեն կարող յարմարիլ, բնականօրէն մեռնում են:

Զարգանալու, աճելու և իրանց սերունդը շարունակելու մնում են ուրեմն միայն զօրեղները, արտաքին պայմաններին յարմարողները, աւելի ընտիրները, որոնք և շարունակում են կենդանի օրգանիզմների գոյութիւնը: Այդ ընտրութիւնը թոյլերի և զօրեղների մէջ, արտաքին պայմաններին յարմարելու և իրանց կեանքը շարունակելու ընդունակութիւնը,- այդ է ահա, որ կոչւում է բնական ընտրութիւն (Naturliche Zuchtwahl.- natural selection): Ակներև է, որ օրգանիզմները ապրելու համար յարմարած պիտի լինին արտաքին պայմաններին և նորա բիւրաւոր ձևերն ու տարբերութիւնները արդիւնք են միայն այդ պայմաններին յարմարելուն:

Դիտելով կենդանի օրգանիզմների կատարած փոփոխութիւններն ու զարգացումը մի կողմից մինչև ծաղկաբոյսերը (Bluthenpflanze), միւս կողմից մինչև ողնաւորները, նկատում ենք այն աչքի զարնող երևոյթը, որ կենդանի օրգանիզմը պարզից, հասարակից առաջանալով, միշտ բարդւել և զարգացել է, ամենաչնչին կարիքի համար ստեղծելով առանձին օրգան՝ շարունակ առաջադիմել, կատարելագործել է:

Շատերը այս հանգամանքի մէջ ուզում են Աստուծոյ մատը տեսնել, այն, որին հէնց է՛ն գլխից Դարւինի թէօրիան հակառակ է եղել: Օրգանիզմների էւոլյուցիան չունի ո՛չ մի նպատակ. նա արդիւնք է բնական երևոյթների համախմբման. նա պիտի առաջանար, երևան գար անհրաժեշտօրէն, քանի որ արտաքին պայմանները իրանց լրութեամբ որպէս մի պատճառական անհրաժեշտութիւն պահանջում են նորա տեղի ունենալը: Սի որ և է նպատակ տեսնել բնական երևոյթների մէջ, դա միայն մարդու գործն է. բնութիւնը չի՛ ճանաչում ո՛չ ծայր, ո՛չ վախճան և ո՛չ որ և է նպատակ. պէտք է միշտ գիտակ լինել, որ այն կարծիքը, «թէ մարդը աւելի կատարեալ է քան ամէօրը» (ամենաստորին կարգի կենդանի), կը մնայ միշտ կամայական, որին երբէ՛ք իրականութիւնը չի՛ համապատասխանում: Եթէ մենք զարգացումը կատարելութիւն ենք անուանում, դա միայն պայմանական արտայայտութիւն է: Աշխարհը չունի ո՛չ մի նպատակ, որին նա ձգտել կարենար.- այնտեղ մի բան կայ միայն. յաւիտենական զարգացում, այսինքն անվերջ փոփոխութիւն»...

Եթէ այս բացատրութիւններից ծագող եզրակացութիւնները հանենք, մեզ համար պարզ և հասկանալի պիտի լինի, որ կեանքը իւր ծագման առաջին օրից արդիւնք է երկրիս արտաքին պայմանների:

Կեանքը մեր երկրի զարգացման մի գործօնն է թաքանական մտքով. կենդանի սուբստանցը, քանի որ մեր երկիրը հրահալ դրութեան մէջ էր առանց պաղած կեղևի, չէր կարող գոյութիւն ունենալ: Բայց պիտի առաջ գար միևնոյն անխուսափելի անհրաժեշտութեամբ, ինչպէս ամեն մի քիմիական կապակցութիւն, եթէ կարևոր պայմանները ներկայ են: Կեանքի ձևն ու կազմութիւնն էլ պիտի ենթարկուին ա՛յն աստիճան փոփոխութեան, որքան արտաքին պայմանները փոխուծ են երկրի զարգացման ընթացքում: Կենդանի սուբստանցը երկրի մատերիայի (նիւթի) մի մասն է լոկ: Այդ մատերիայի կենդանի սուբստանց դառնալը երկրի զարգացման մի նոյնպիսի արդիւնք էր, որպէս ջրի առաջանալը. մի երևոյթ, որ անհրաժեշտօրէն առաջ եկաւ երկիրը կազմող մասսայի պաղելուց...

«Մուրճ», 1898, N 7-8, էջ 1031-1051

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ՄԵՐ ԳՐԱՔԱՐՔԱՌՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Այդ հարցը Պոլսի թե Բուզարիայի մի հայ թերթ էր յարուցել.- «Հանդես Ամսօրեան» տեսնելով դորա անկարելիութիւնը՝ մերժել էր. Պ. Աբեղեանը «Արարատի» Թ, Ժ և է համարներում (1897) շատ հիմնաւոր պատճառներով ցոյց էր տուել մեր գրաբարբառների բաժանում-մից առաջացած վնասը, նոցա միութեան կարևորութիւնը և մատնանիշ արել այն ճանապարհը, որ արևմտեան լեզուն որոշ զիջումներից յետոյ հասկանալի կ'ըստնար Կովկասեան Հայերին: Պ. Մանդինեանը (Արարատ, 1898, Գ. և Գ.) մի հմտալից յօդուածով ցոյց է տալիս, որ Պ. Աբեղեանը՝ Ա. հարցը միակողմանի է դրել, ի նկատի ունենալով միայն երկու լեզուների ստուգաբանութիւնը, Բ. սխալ, կարծելով, որ Արարատեան լեզուն արևմտեանից ատելի զարգացած է, Գ. կողմնակալ, միայն զիջումներ պահանջելով արևմտեանից: Վերջ ի վերջոյ սակայն, երկուսն էլ գալիս են այն եզրակացութեանը, որ լեզուներն հիմա միացնելն անկարելի է, այլ պէտք է միայն մօտեցնել: Մենք խորհուրդ կ'տայինք ընթերցողին անպատճառ կարդալ յիշեալ յօդուածները, մանաւանդ Պ. Մանդինեանինը, ուր լաւագոյն կ'ետը պէտք է նկատել երկու բարբառների համեմատութիւնը, որտեղից ամեն մէկը պարզօրէն պիտի տեսնի արևմտեան բարբառի նրբութիւններն ու առաւելութիւնները:

Ինչքան էլ տարօրինակ երևայ, այսօր մի դառն իրողութիւն է մեր երկու գրաբարբառ ունենալը: Պատմական Հայաստանը այդպիսի բան չի՝ տեսել. հարիւրաւոր իշխաններ, միմեանցից անկախ մի քանի տէրութիւններ ունեցած ժամանակն էլ, նա ունեցել է ազգային միութեան երկու մեծ օղեր, մի՛ գրական լեզու և մի՛ եկեղեցի. եթէ կրօնական բաժանումը շատերին ցաւ է պատճառում, մեր լեզուների բաժանումը, մեզ, նոր սերնդիս համար, թւում է միանգամայն տարօրինակ և մեր լեզուաշէնների անհեռատեսութեան մի ցաւալի ապացոյց:

Պ. Մանդինեան ասում է, որ Նազարեանից ու Նալբանդեանից առաջ արևելեան հայերէնն արդէն խօսւում էր Ներսիսեան դպրոցում

և Լազարեան ճեմարանում: Դորանով չարդարացան նրանք. Պարսկաստանումն էլ այսօր անշուշտ մի խօսուն հայերեն կայ, դա իրանւնք չի՛ տայ, որ մի նոր Նազարեան կամ Նալբանդեան հիմք դնեն մի Պարսկահայ գրական լեզուի: Եկեղեցին իւր մէջ ծագող աղանդի հետ կռուել է, գրաբարը նոր ծաղկող աշխարհաբարի դէմ կատաղի կռիւ է մղել, բայց սկզբից և ետ մի աշխարհաբար ունենալու հեռատեսութիւնը չեն ունեցել մեր լեզուի հիմնադիրները, և մենք կատարուած իրողութեան առաջ կանգնած, արուեստական միջոցներով ենք ուզում նորա առաջն առնել: Այդ միջոցն էլ լեզուները միմեանց մօտեցնելն է համարում: Սակայն, երկու առարկայ մօտեցնելուց առաջ, պիտի չափենք նոցա մէջ եղած տարածութիւնը, նոցա ծանրութիւնը, և դորա վերայ կատարուելիք ծախսի քանակը. մի խօսքով մենք պիտի ընտրենք օգտակարն ու հնարատրը: Եթէ միւր ծանր է և շարժման տեղը անյարմար, իսկ միւսը թեթև ու աւելի շարժուն դիրքի մէջ, հասկանալի է, տարրական խելքն էլ պիտի վերջինը առաջինին մօտեցնէ. առհասարակ դանակն են տանում եզան մօտ և ոչ հակառակը.- Այս տեսակէտը կարևոր է, որ մենք, ամեն մի վճռից առաջ, անկողմնակալ և անաչառ կերպով դիտենք մեր լեզուների դիրքը. մեր եմ ասում, որովհետև այստեղ իմ և քո չկայ. Դուրեանը մեզ նոյնքան սիրելի է, որքան Պատկանեանը արևմտեան հայերին, որովհետև նրանք երկուսն էլ մերն են, նրանց երկուսի լեզուն էլ մեր սրտի, մեր հոգու հարազատ արդիւնքն է. ուստի մենք ամենայն սառնութեամբ պիտի աշխատինք որոշել մեր լեզուների փոխադարձ յարաբերութիւնը. թէ արդեօք իրերի բնական ընթացքը նոցանից 1) որի՞ն է առաւելութիւն տուել, 2) որի՞ դերը աւելի ներգործական է, 3) մեր ազգային գիտակցութիւնն ու մտածութեան ուրոյնութիւնը որի՞ մէջ աւելի է երևան գալիս, և 4) նոցանից ո՞րն աւելի ունի կենդանի լինելու պայմանները: Ինձ թուում է որ սոքա են մեր լեզուների դիրքն ու նոցա կարևորութիւնը բացատրող ծանրագոյն վայրկեանները: Եթէ այս հարցերին ուղիղ պատասխանել կարողացանք, ապա, ըստ իս, մօտիկ ապագայի համար գէթ, մենք մեր ուժերը ներածին չափ պիտի աշխատինք զիջումները թոյլից պահանջելու, թէև մենք հաւատացած ենք, թէ արհեստական զիջումները միշտ էլ պիտի մնան անաջող փորձեր:

Պ. Մանդինեանը ցոյց է տուել արևմտեան լեզուի առաւելութիւնները համոզիչ համեմատութեամբ, սակայն դորանով հարցը չլուծուեցաւ. միթէ մեր աշխարհաբարը համեմատուել կարո՞ղ է իւր փարթամ նախորդի՝ գրաբարի հետ, սակայն գրաբարը տեղի տուաւ. միթէ նոր յունարէնը համեմատուել կարո՞ղ էր իւր փարթամութեամբ և պերճութեամբ յայտնի հին յունարէնի հետ, որին յաղթեց. միթէ ռոմանական նոր լեզուները մի քանի դար առաջ համեմատուել կարո՞ղ էին լատիններէնի հետ, որ նոքա տապալեցին: Յաղթողը լեզուի հարստութիւնն ու ճոխութիւնը չէ: Յաղթողը ժամանակն ու խօսող ժողովուրդն է: Այստեղ, սակայն, պայմաններն արտաքուստ հաւասար են. մեր երկու գրաբարքառներն էլ մանուկ, երկուսն էլ խօսուող, երկուսն էլ փոխադարձ յարաբերութեան որոշ չափով նաև փոխադարձ կռուի մէջ են. Յաղթութեան մասին առ այժմ խօսք չի կարող լինել. այն էլ է յայտնի, որ արևմտեանը աւելի փարթամ է. ո՞րն է կենսունակ, ո՞րն է ազդող. այս է հարցը. անտարակոյս արևմտեանը: Կենքը, որ մասնակի համեմատութիւններից շատ աւելի լաւ ուսուցիչ է, համոզիչ կերպով վճռել է այդ և ամէն օր մեզ ցոյց է տալիս, որ մենք շարունակ տպում և արտատպում ենք արևմտեան լեզուով յօդուածներ ու գրքեր, այնինչ Պոլսեցիք, նոյն իսկ Նոր-Նախիջևանցիք կարիք են գգում մեր գրքերն ու յօդուածները թարգմանելու: Ի՞նչու նրանք իրանք մի այդպիսի նեղութիւն են պատճառում, իսկ մենք ոչ: Պատասխանը մի քանի կարող է լինել. կա՛մ նրանք մեր գրածը չեն հասկանում և կամ մեր լեզուին չեն հաւանում: Իսկ մենք, եթէ չենք թարգմանում, թէ՛ հասկանալ պիտի կարողանանք և թէ հաւանելիս պիտի լինինք: Կրթուած Ռուսը առհասարակ գիտէ գերմաներէն և օգտուում է նրա գրականութիւնից. կրթուած Գերմանացին ո՛չ ռուսերէն գիտէ, ոչ էլ նրանից օգտուելու կարիք է գգում. Այդ է իրերի բնական ընթացքը և լեզուների ուժաչափը. հասկանալի է, որ ռուսերէնը անհամեմատ թոյլ է գերմաներէնից. եթէ նոյն համեմատութիւնը նեղ չափերով վերցնելու լինենք, պիտի տեսնենք մեր լեզուի թուլութիւնը արևմտեանի յանդիման իրերի բնական ընթացքով վճռած, և մեր բազմաթիւ փոխառութիւնները յայտնի ապացոյց են դորան. հեռագիր, լրագիր, թղթակից, երկաթուղի, հեռախօս, արտասահման, հեծանիւ և ուրիշ բազմաթիւ ընտիր ուսումնական

բառեր մենք պարտական ենք միմիայն արևմտեան լեզուին. ուր մենք փորձել ենք ուրիշ ինքնուրոյն բարդութիւններ կազմելու, այնտեղ երևում է մեր կատարեալ բոքիկութիւնը: Իսկ թէ Հայի մտածութիւնը աւելի անարատ է երևում արևմտեան բարբառի մէջ, քիչ թէ շատ լեզուի ճաշակ ունեցողն ու մեր լեզուներով զբաղուողը տարակոյս ունենալ չի՝ կարող: Մենք չենք կարող երկու գոյգ մի կիմտ գրողներ հաշուել, որ մաքուր, անարատ հայերէն գրէին, բայց արևմտեան գրողների մեծագոյն մասը հայերէն գրողներ են: Եթէ մեզանում մաքուր հայերէն գրողներն են բացառութիւն, արևմտեանի մէջ ընդհակառակը: Չմոռանանք, որ մեր ամենամեծ վիպասանը, Բաֆֆին՝ և ամենամեծ հրապարակախօսը՝ Արծրունին, իրանց օտարաբան լեզուով, միմեանց հաւասար էին: Այստեղ էլ ուրեմն, առաւելութիւնը արևմտեան բարբառի կողմն է: Յետոյ, լեզուի կենդանութեան հարցը: Լեզուն կենդանի է միայն մարդկանց բերանում. ինչքան էլ մի լեզու հարուստ, փարթամ և պերճ լինի, ինչպէս մի յունարէն, մի լատիներէն կամ մի հին հայերէն, նորա վիճակը մոռացութիւնն է, որովհետև նա խօսող չունի, և մի լեզուի վիճակը կատարելապէս կարելի է որոշել նորա խօսողների թուով: - Ռ՞վ և ո՞րքան հոգի են արևելեան գրաբարբառով խօսում,- իմ հաշուով հազիւ մի երկու հազար հոգի¹: Այսօր ուտիերէն խօսողների թիւը աւելի շատ է, քան արևելեան հայերէն. կարո՞ղ ենք մենք մի այդպիսի լեզու կենդանի անուանել. հազի՛ւ: Հռչակաւոր Ներսիսեան դպրոցի ուսուցիչներից սկսած մինչև վերջին գործակատարը օտար լեզուով են «ծեքախօսում». ծանօթացէք մեր խմբագիր հրատարակիչների հետ, մեր այսպէս անուանեալ «ինտելլիգենցիայի» հետ, մտէք անուանի հայ ընտանիքները, խօսեցէք հայ վարժուիիների, հայ գրագէտների հետ, բոլորը, բոլորը օտարախօս են: Բացառութիւնների մասին չէ, հարկաւ, խօսքը. բացառութիւնը սովորաբար հաստատում է եղած իրողութիւնը: Մենք պիտի չմոռանանք Հրատ. ընկերութեան մի յայտնի նիստը, ուր մի Պռօշեան յանդիմանութիւն էր ստանում օտար լեզու հասկանալ չկարողանալու համար. բնորոշ, շա՛տ բնորոշ են այս երևոյթները, և ոչ ոք աւելի չի արհամարհում իր

1. Մօտաւորապէս նոյն կարծիքն է յայտնում հայերէն խօսողների թուի մասին և Պ. Արասխանեանը «Մուրճ»ում:

լեզուն քան հայ «ինտելլիգենտ»ը.- սա էլ փարիսեցիութեան մի նոր տեսակ է, գրել, քարոզել, խրատել որ ուրիշները սովորեն, բայց իրան միշտ հեռու պահել քարոզածից. Քաթիպայի, Նազարեանի և Սունդուկեանի զաւակները իրանց հօր գործերին միայն ռուսերէն քարգ-մանութիւնից են ծանօթ:- Երկարելն աւելորդ է:

Պետերբուրգ, Մոսկուա, Խարկով, Բերլին և այլ տեղեր հայ ուսանողների մեծամասնութիւնը հայերէն չի խօսում և շատերն իսկ չեն էլ հասկանում հայերէն: Մայրենի լեզուի տգիտութեամբ փայլում են ի մասնաւորի հայ ուսանողուհիք, մեր ապագայ մայրերը... Մեզանում դեռ մի հայ կին չերևաց, որ հայերէն մի որ և է բան արտադրէր. Տիկին Խատիսեանի և իշխանուհի Արդութեանի գործերի բնագիւղը ռուսերէն է:- Սի լեզու, որ կիներ չի՛ խօսում, որ մանկանոցի, օրօրոցի և ընտանիքի սեփականութիւնը չի՛ դարձել, նորա գոյութիւնն ու ապագան սաստիկ կասկածելի է: Եւ հայ հասարակութեան հոգեբանութեան հետ մի քիչ ծանօթ անձի համար շատ էլ գրաւիչ չէ՝ այդ ապագան, եթէ իրերը այս ընթացքով շարունակուին:

Հարց է հիմա, արդեօք արևմտեան լեզուն խօսու՞մ է: Պոլիս տեսած չունիմ, բայց ինչ որ եզրակացնել կարելի է գրականութիւնից, լեզուի թեթևութիւնից, ձևերի ճկունութիւնից և արտայայտութիւնների կենդանութիւնից, այն է, որ այդ լեզուն կենդանի շրթունքների յայտնի հետքեր է կրում. և մինչև անգամ կնոջ շրթունքների հետքեր:- Անտարակոյս Պոլսումն էլ մի ստուար դասակարգ թրքերէն է խօսում նոյն իսկ ընտանիքում (հայ «բուրժուա»ն միշտ օտարախօս է, ուր էլ որ նա լինի), բայց նոցա քաղաքական և հասարակական պայմանները այնպէս են, որ հայերէնը մի մեռած լեզու չի՛ մնացել ինչպէս մեզանում... Թէ հայերէնը նոցանում ընտանիքի լեզու է, երևում է նրանից, որ նոքա արտադրել են ո՛չ միայն կին վիպագիր ինչպէս տիկին Տիսաբն է կամ տիկին Սվաճեանը, այլ և այնպիսի տաղանդաւոր հրապարակախօս որպէս Տիկին Սիբիլն է, և բաւական է միայն Թիֆլիզի բեմը տեսնել, համոզուելու համար որ եթէ մի երկու ուղիղ հայերէն խօսող դերասանուհի կան, Պոլսեցի են:

Գանք հիմա ժողովրդին, որ ոչ կարդալ գիտէ, ոչ էլ կատարելապէս հասկանալ է կարողանում մեր հնարած լեզուն:

Մեր ժողովրդի ամենից առողջ, ամենից ընդունակ մասը, անտարակոյս Ղարաբաղցիք են. ձեռնարկող, անձնավստահ, եսական, բայց և մինչև ոսկորների ծուծը օտարամոլ: Դեռ ազին իր մինթանան չի՝ փոխել, դեռ որդիքը չեն մոռացել իրանց հօր փալանը, որով հայրը միլիոններ է դիզել, բայց հայերենը նոքա վաղուց են մոռացել: Ես մի Ղարաբաղցի չտեսայ, որ հայերեն կարգին խօսել իմանար: Իսկ մեր կրթուածների մէջ Ղարաբաղցիք ամենամեծ տոկոսն են կազմում: Եթէ ի նկատի ունենանք արևելեան բարբառներով խօսող ժողովրդի թիւը, ապա նա 7-8 հարիւր հազարից աւելի պիտի չլինի, մինչ արևմտեան բարբառներով խօսող հայերի թիւը հաւանօրէն միլիոն ու կիսից մինչև երկու միլիոն պիտի հասնի, եթէ նորանց մէջ հաշուենք Ղարս, Ալեքսանդրապոլ, Ախալքալաք ևայլն, իրանց բազմահայ գաւառներով, որոնք իբրև Տաճկաստանցի գաղթականներ, բոլորն էլ արևմտեան բարբառով են խօսում, թէ չլիշենք նաև Օլթին, Արտահանը, Խրիմը և Նոր Նախիջևանը ևայլն: Ուրեմն, արևմտեան լեզուն, ժողովրդի թուով երկու անգամ գերազանց է արևելեանից: Այս կէտը ծանրակշիռն ու ամենակարևորն է, որովհետև ինչպէս ասացինք, կենդանի լեզուի կարևորութիւնը կախում Է նորա խօսողների թուից: Յետոյ չպիտի մոռանալ արևմտեան հայերի գերազանցութիւնը լեզուի և ճաշակի վերաբերմամբ: Նրանք առ հասարակ խօսելու ընդունակութիւն ունին. «հոս-հոս» ասելով մենք հասկանում ենք նաև շատախօս. դա էլ ընդունակութիւն է, շատախօս լինելու համար լեզու պէտք է ունենալ, իսկ լեզուին տիրելու և իրանց մտքերը լաւ արտայայտելու համար ընդունակութիւն... Սի Խրիմեան, մի Սրուանձտեան, մի Նարբէյ մեզ համար մնում են տիպար խօսողներ, որոնց նմանը մենք ո՛չ ունենք, ոչ էլ ունենք:

Մոռանալու չէ և այն, որ մեր լեզուի մեծագոյն հիմնադիրները, Նալբանդեան և Քաթիպա, և նորա առաջին քերականութիւն կազմող՝ Պալասանեան, արևմտեան Հայերից էին. և այսօր մեզանում հայ գրականութեամբ և լեզուով զբաղողներից յայտնիները դարձեալ արևմտեան հայերից են՝ Խալաթեան, Կոստանեան, Տէր-Սկրտչեան, Մալխասեան և այլն: Մենք տասնեակ բառարաններ ունենք երոպական լեզուների համար, և ոչ մի բաւարար բառարան ռուսերէնի հա-

մար. դա մի շա՛տ բնորոշ երևոյթ է. հարիւրաւոր համալսարանականների մէջ, մի Յովհաննիսեան և մի Եաղուբեան են փորձել բառարաններ կազմելու, թէև երկուսի մասնագիտութիւնն էլ լեզուաբանութիւն չէ՛: Դրանք երկուսն էլ արևմտեան Հայերից են (Ալեքսանդրասպոլ և Ախալքալաք). մայրենի լեզուի սերն ու նրա ուսումնասիրութեան բնագոյը անհամեմատ աւելի հին ու զօրեղ է արևմտեանների մէջ. մենք ամեն բանում նրանց աշակերտներն ենք:

Մեր արծարծած անկողմնակալ դիտողութիւններից եզրակացնելը դժուար չէ, որ իրերի բնական ընթացքը բոլոր կարևորագոյն և արմատական առաւելութիւնները տուել է արևմտեան բարբառին. արդ՝ հարկ կա՞յ այդ առաւելութիւնների դէմ կռուելու,- երբեք: Երբ հարցը միմեանց մօտենալն է, երբ մենք տեսնում ենք արևմտեան բարբառի առաւելութիւնը, ամենախելացի միջոցն այն է, որ օգտուինք նորա առաւելութիւնից, աշխատինք նմանել նորան, վերցնենք նորանից այն, ինչ որ մեզ հարագատ ու պիտանի է թոււմ, և ջնջենք մեր լեզուից այն տարրերը, որոնք խորթ, օտար ու անճաշակ են:- Պ. Աբեղեանի մեթոդի սխալն այն է, որ արևմտեաններին խրատ է տալիս այս կամ այն ձևով մեզ մօտենալու. աւելի խելացի կ'լինէր, եթէ նա մեզ խրատէր արևմտեանի այս կամ այն առաւելութիւնից օգտուելու:

Առանց լեզուների միութիւնն ի նկատի ունենալու, մենք տարիներ շարունակ զբաղած ենք եղել մեր լեզուի մշակութեան խնդրով և զարմանալին այն է եղել ստացուած արդիւնքներից, որ ինչ որ մեր լեզուում ուղղել, կռկել ու պարզել հնարաւոր է եղել, հետևանքը շա՛տ ու շատ տեղերում նման է դուրս եկել արևմտեան ձևերին:

Բերլին, 10 Օգոստ. 1898

«Անահիտ», 1899, փետրուար, թիւ 4, էջ 133-136

ՆԱԽԱՀԱՅԵՐԷՆԻ ՀԵՏՔԵՐ ԶՕԿԵՐԷՆՈՒՄ

Մեր լեզուի զարգացման հետ հարևանցի ծանօթին էլ յայտնի է, որ գրաբարի այ երկբարբառը կենդանի բարբառներում երևան է գալիս ամփոփուած որպէս ա, է կամ ի, օր. այս, աս, էս, էսիկ, իսիկ, իսի. գայլ, գալ, գէլ (գիլու). սայլ, սալ, սէլ և այլն: Լեզուների զարգացման մի տարրական կանոնն է այս, որ սովորաբար նորը հնից աւելի կարճ և աւելի մաշուած է լինում: Զօկերէնը (Ագուլիսի բարբառ) սակայն, այս ընդհանուր կանոնին տեղ-տեղ կարծես չի ուզում հնազանդիլ¹: Շատ բառեր, որոնք ա, է կամ ի ունին այլ բարբառներում, նա պահպանել է այ գրաբարի անարատութեամբ. ինչպէս օրինակ, մայր, հայր և այլն: Իսկ մի շարք այլ բառերում, նոյն իսկ գրաբարի կարճ և ամփոփ ձևը նրանում լայնացել, երկարացել է: Օրինակ տէր՝ զօկերէնում դառել է տայր, միս՝ մայս, սպիտակ՝ սպայտակ, սիրել՝ սայրել և այլն:

Այս բառերի վերաբերմամբ վերևի կանոնը դառնում է անկայուն, որովհետև նոր զօկերէնն աւելի երկար ու լայն ձևեր է ներկայացնում, քան հին գրաբարը:

Ի՞նչպէս բացատրել այս երևոյթը: -Ենթադրել, թէ զօկերէնը միւս լեզուներին անծանօթ և հակառակ կանոնով է զարգացել՝ անհաւանական կը լինէր, որովհետև նորա մնացեալ տարրերում ամփոփման կանոնը կատարելապէս պահպանել է իւր զօրութիւնն և այն շատ աւելի ազդու կերպով, քան մնացեալ բարբառներից շատերում: Այս պատճառով գնալ՝ զօկերէնում կարճանում է լեզուի զարգացման ընթացքին համեմատ դառնալով նօ՛լ, իսկ քիթ, արդէն ամփոփ ձևը երկարանում է, դառնալով քայնթ, նոյն զարգացման հակառակ: - Սա հակառակ է ո՛չ միայն ամփոփման յայտնի կանոնին, այլև տարրական տրամաբանութեանը: Մեզ անկարելի է թոււմ, որ շարունակ կիրառութեան մէջ գտնուող մի ձև, փոխանակ մաշուելու, աճէր, լայնանար - դառնալով իւր նախորդից աւելի անգործնական և կիրառութեան անյարմար: -Եւ մենք մեր բոլոր բարբառների մէջ չենք կարող գտ-

1. Տես Սարգսեան՝ Զօկերի բարբառը:

նել մի նմանօրինակ երևոյթ, ուր գրաբարի է կամ ի լայնանալով դառնար այ: Սա տրամագծօրէն դէմ է մեր բարբառների զարգացման ընթացքին, ուստի և այս հանգամանքը մեզ իրաւունք է տալիս այլ ենթադրութեան դիմելու: Գուցէ մի նախնական, կորած մի արմատից են ծագում գրաբարի և գօկերէնի այս տարբեր ձևերն և կամ գուցէ հէնց գօկերէնն է, որ պահպանել է այդ բառերի արմատականը, իսկ գրաբարն ենթարկուել է ձևափոխման: Այս վերջին ենթադրութիւնը մի քիչ համարձակ է գուցէ, լինելով պատմական իրողութեան հակառակ, բայց քանի որ մենք չունինք հին արմատական ձևը, քանի որ գօկերէն ձևը չենք կարող հանել գրաբարից, ներելի է մի բոլորովին հակառակ փորձ անել.- գրաբար ձևերը հանել գօկերէնից: Այն հանգամանքը, որ գօկերէնը պահպանել է շատ բառեր գրաբարի անարատութեամբ, խօսում է այս ենթադրութեան օգտին, որովհետև դա նշան է այդ երկուսի ժամանակակից լինելուն:

Մենք սակայն, մի քայլ ատելի առաջ ենք ուզում գնալ, ենթադրելով, որ գօկերէն ծայծ բառն է հինը, որ դառնալով ծած, ծա՛ծ, ծէ՛ծ, գրաբարում հասել է ծի՛ծ ձևին: Ընդհ, գրաբարի այս բառի պէս, որ աս, ա՛ն, էս ապա իսի է դառել բարբառներում: Եթէ այս ենթադրական ձևերից գէթ միւնը գտնենք մեր միւս բարբառներում, ապա մեր ասածն ատելի հաւանական կը դառնայ: Դարաբաղի բարբառը, բարեբախտաբար պահպանել է այդ ձևերի զարգացման միջին աստիճանը: Ուր գօկերէնը այ ունի, գրաբարը ի, Դարաբաղի բարբառն ունի է. գօկերէն տայկ. Դարաբաղ տէկ. գրաբար տիկ. այսպէս նաև՝ մայս-մէս-միս. (սայրտ)-սարտ-սէրտ-սիրտ.- Սրանք արդէն ենթադրական չեն, այլ երեքն էլ իրական, երեքն էլ կենդանի զանազան բարբառներում: Եթէ մենք գրաբար բոլորովին ունեցած չլինէինք, ապա կենդանի բառերի այս համեմատութիւնը մեզ պիտի համոզէր, որ գօկերէն ձևը հնագոյնն է: Որ նոյնն առանց տարակոյսի հաստատել կամենանք նաև գրաբարի վերաբերմամբ, պիտի ջանանք մեր ասածի հետքերը գրաբարի մէջ որոնել:

Տէր բառը գրաբարում զարտոտի-տարականոն հոլովմունք ունի. տե-առն, ի տե-առնէ, տե-արք, և այլն... այս հոլովներից պարզ երևում է, որ այդ բառը կազմուած է տե կամ տի մասնիկից և այր (առն, արք)

բառից, ճիշդ որպես տի-կին, տի-եզերք բառերը¹: Արդ՝ այդ հոլովներից դժուար չէ եզրակացնելը, որ տեր-ի նախնական ձևը պիտի լիներ տիայր կամ տայր.- Չօկերենում հենց այսօր էլ պահուած է այս վերջինն անարատութեամբ, որից ամփոփուելով ծագել է նորագոյն գրաբար ձևը՝ Տայր-տար, տեր:

Այստեղ զօկերենի ճշդութիւնն ու հնութիւնն արդէն հաւանական ենթադրութիւն չէ՛, այլ նոյն իսկ գրաբարից վկայուած մի իրողութիւն:

Այսպէս նաև գրաբար հետևեալ բառերի նախնական ձևերը ներկայացնում է զօկերենն ու Ղարաբաղի բարբառը. մայտք-մէտք-միտք. հայն-հին. ծայծ-ծէծ-ծիծ, մայս-մէս-միս. սպայտակ-սպիտակ. տայկ-տէկ-տիկ. քայն-քի. քայնք-քինք²-քիք. կնայկ-կնէգ-կնիկ. կծայկ-կծէկ-կծիկ: Այս վերջին երկու բառից երևում է, որ մեր ակ և իկ փաղաքական մասնիկը միևնոյն ծագումն ունին և նախնի -այկ մասնիկի ամփոփումն են տարբեր աստիճաններով:

Եթէ այս ամենը ճիշդ է, ապա կարող ենք մի քիչ ւաւելի հեռաւոր ենթադրութիւնների դիմել: Նախ տեսնում ենք, որ զօկերեն որոշ ձևեր այնքան հին են գրաբարից, որքան վերջինս մեր մնացեալ բարբառներից:

2. Որ գրաբարի և մեր մնացեալ բարբառների է և ի ունեցող բառերից շատերը՝ նախահայերենում հաւանօրէն այ երկբարբառն ունէին դրանց տեղը:- Օրինակ՝ վերևի բացատրութեան համեմատ՝ գաւառական խէթ-խիթել (խէթ նայել) բառերն ենթադրել են տալիս մի նախորդ, որ է, ի հնչիւնների տեղ այ պիտի ունէր.- խայթ-խայթել.- որի գոյութեան տարակոյսը փարատում է, որովհետև իրօք այդ բառերը պահուած են գրաբարում, միայն մի քիչ տարբեր նշանակութեամբ: Այդպէս էլ ընել, էնել և անել ենթադրում են մի այնել արմատական ձև, որ բարեբախտաբար պահուած է մեր միջնադարեան ռամկօրէնում³:- Հոգ չէ, որ դա էլ ծագում է գրաբարի առնել բայից:- Եթէ ռամկօրէնը

1. Այս տի- մասնիկն որպէս երևում է, աւելանալով բառերի վրայ՝ նշանակում էր մեծ, զօրաւոր, ահագին. տէր=մեծ մարդ, իշխան. տիկին=մեծ կին, իշխանուհի. տիեզերք=մեծ եզերք - անեզերք:

2. Թիֆլիզի բարբառը պահել է այս միջին ձևը:

3. Տես Հ. **Յովնանեանի** «Հետազոտութիւնք նախնեաց ռամկ.»:

պահած էլ չլինէր այդ միջին աստիճանը, մենք դեղուկցիայով պիտի ընդունէինք նորա գոյութիւնը:

Ճիշդ նոյն կերպով գրաբարի և գօկերէնի համեմատութեամբ պիտի գտնենք նախահայերէն ձևերը: Տէր ասացինք ծագում է տայր ձևից, իսկ տիրել, անտարակոյս, ենթադրում է մի տայրել - նախորդ, որի աւելի ամփոփ հետքերը տեսնում ենք գաւառական տարել (gagner = gewinnen) բայի մէջ: Զօկերէնի սայրել-ը հարկաւ ենթադրում է սայր գոյականը, որից ելած է սէր:

Հարկաւ, գօկերէնը չէր կարող բոլոր նախահայերէն բառերը միևնոյն անարատութեամբ պահպանել, սակայն այս օրինակները ցոյց են տալիս, որ մենք կարող ենք մի քիչ աւելի առաջ գնալ, համեմատութեամբ գտնելու այնպիսի նախահայերէն ձևեր, որոնց մասին հաստատ վկայութիւն չունինք գրաբարում, օրինակ, միանգամայն հաւանական է, որ գէտ կամ գիտենալ, դէտ կամ դիտել, գայտ-գայտենալ, դայտ-դայտել էին հնումը:

Նոյն պատճառներով գօկերէնի կաղց և աղծ բառերը չէին կարող ելած լինել գրաբար կաթն և օձ բառերից: Ընդհակառակն, հաւանօրէն կաղց կարճանալով դառել է կաց և կաթ. իսկ աղծ-ամ-օձ: Դ-ի կորուստը տես գաւառական աղջիկ-աղջի-աջի կամ կռել-կոճ բառերում, իսկ ա-ի օ դառնալը՝ արլար-արլոր, գնալ-նօլ:

Այս տեղից ծագող եզրակացութիւնները շա՛տ հարցասիրական են.- ա. գօկերէնի վերաբերմամբ, որ լինելով մի վերին աստիճանի յառաջադէմ ձևափոխուած բարբառ, եղել է միևնոյն ժամանակ վերին աստիճանի պահպանողական, անարատ պահպանելով այնպիսի ձևեր, որոնք շատ հին են արդէն մեռած գրաբարից:

բ. Գրաբարի վերաբերմամբ, որ իւր ժամանակակից բարբառների մէջ ամէնէն զարգացածն ու ամենաշատ ձևափոխման ենթարկուածն է եղել, որովհետև, ինչպէս տեսանք, մի քանի ձևերով նա մեզանից 1500 տարի առաջ աւելի կատարեալ ու մաշուած է, քան այսօրուայ գօկերէնն ու Վարաբաղի բարբառը:

Ժընև. Մարտ 1899 թ.

«Հանդէս ամսօրեայ», 1899, Մայիս, քիւ 5, էջ 147-149

ԻՄ ՔՆՆԱԴԱՏՆԵՐԻՆ

Այս տարի յունարին ես մի անտիպ գործ էի ներկայացրել Պոլիս՝ Իզմիրեան մրցանակին, «Հայերէն ուսումնասիրութիւններ» վերնագրով: Դա յանձնւած է եղել Վերապատելի Մենելիշեանի քննութեանը, որ իր եզրակացութիւնները նորերս տպագրել էր Սուրիանդակի մէջ: Այդ քննադատութիւնը, ահա, հիմք առնելով, Մշակը ներկայ տարւայ 168 N-ում մի հայեոյալից պարսաւ կարդաց մեր հասցէին: Խտացնելով հ. Մենելիշեանի քննութեան ամենասուր և ամենակծու կէտերը, այդ լրագիրը համեստութեան և չափը ճանաչելու մի հիանալի դաս է տալիս մեզ... Մշակ լրագիրն է այդ դասը տողը:

Մենք պատասխանում ենք Վերապատելու քննութեանը կէտ առ կէտ, ինչ որ բերւած էր Մշակում:

1) Խօսելով հայերէնի մագալմութեան մասին, մեր գործի առաջին գլխում, ասել էինք, որ նա բարձր է սլաւո-գերմանական լեզուներից մագալմին տեսակէտով: «Կոկորդական և քմական բաղաձայներու կուտակում կայ հայ լեզւի մէջ. և այս պատճառաւ քաղցրահնչութիւնը շատ կը կրէ». պատասխանում է Վերապատելին: Նոյնը չկա՞յ արդեօք սլաւո-գերմանական լեզուների մէջ, և այդ լեզուներից ո՞րն է մերիներից բարձրը. գերմաներէ՞նը, հոլլանդերէնը, անգլիերէնը, բոլգարերէնը, լեհերէնը, ռուսերէնը, ո՞րը... թող փաստօրէն խօսի Վերապատելին: Մերը մի կոնկրետ առաջադրութիւն է, կոնկրետ էլ հերքումն է հարկաւոր, և ոչ թէ բառերի զբօսանք: Կարդացե՞՞լ է արդեօք Պատելին պ. Աճառեանի յօդածը, ուր երիտասարդ գիտնականը «թւաբանական հաշուով ցոյց է տալիս հայերէնի ներդաշնակութիւնը»: Այս տողերը գրելու ձանձրոյթը պիտի չ'ունենայի, եթէ ինձ լա՛ւ հասկանային. խնդիրն այն է, որ հայերէնի դուրեկան լինելու մասին, որպէս խօսում լեզւի, ես մի վերջնական կարծիք չեմ համարձակւել յայտնելու, ասելով, որ նրա «առողջանութիւնը դեմ կազմակերպւած չէ»:- Այլ բան է մագալմութիւնը. թող ընթերցողը կարդայ նոյն այդ վերնագրով մեր յօդածը: **Մուրճ, 1897 թ., N 6:**

2) «Աւելի զարմանալի է ւ և վ գրելու համար ըսածը, մէկը կամ միւսը պէտք է «բոլորովին դադրի գործածելուց»: Ուրեմն պէտք է գրել տրա (=վրա), ւառել (=վառել) և կամ գավազան, ավարտել: Լեզուն զարգացնել կրկայ պարզապէս սովորելով, գործածելով և ոչ՝ անկոչ վիրահատութիւններ ընելով»:

«Զարմանալի է» այո, Ձեր տրամաբանական ուստիւնները այս փոքրիկ հատուածի մէջ, ուր սկսում էք խօսել «գրերու» մասին, բայց մի երկտողից յետոյ գիրը դառնում է «լեզու», և գրի կրճատումը Դուք համարում էք լեզուի «անկոչ վիրահատում», որ պէտք է «սովորի՛լ, գործածե՛լ, զարգացնե՛լ»... Սի՞թէ Դուք չէք զանազանում գիրը հնչիւնից և լեզուն ուղղագրութիւնից. մենք ի՞նչպէս վիճենք Ձեզ հետ:

Սակայն, դա մի ակներև թիրիմացութիւն, կամ տարօրինակ տրամաբանութեան արդիւնք է. վերագրել մեզ այն, որից խուսափելով խուսափել ենք: Խօսելով ւ և վ հնչիւնների մասին, մենք ասել ենք, որ ւ-իւնը այսօր այլ ևս գոյութիւն չունի իբրև ինքնուրոյն հնչիւն. «նա լիակատար վ է բառերի մէջը և վերջը, իսկ բառերի առաջը նա չի՝ գործածուում»: Ապա՝ յիշելով այդ հնչիւնների առթիւ ծագած վեճը, մենք ասել էինք անցողաբար, այն էլ պայմանական եղանակում, իբրև մի կողմնակի հանդիսատեսի կարծիք, թէ այդ բանակոյիւր տրամաբանական կը լինէր այն ժամանակ, եթէ մարդ վերացնէր կորած հնչիւնի նշանն էլ (ւ) ուղղագրութիւնից*:

Եւ դրանից անմիջապէս յետոյ որպէս զի մեզ անհեթեթ եզրակացութիւններ չվերագրեն, աւելացրել էինք:

«Իմ նպատակը չէ՝ այստեղ հայերէնի ուղղագրութիւնը շօշափել և այս կամ այն կուսակցութեանը յարել. ինձ հետաքրքրողը գիրը կամ տառը չէ՛, այլ բուն հնչիւնը ինչպէս որ նա գոյութիւն ունի կենդանի շրթունքներում և ո՛չ գրքերում. մեր յօդուածի համար կարևորն այն է, որ մենք այսօր մի հնչիւն ունինք.- վ. ինչպէս էլ դա գրուի, խնդիրը չի փոխուի, եթէ հնչումն ուղիղ է»:

Այս տողերը կարծեմ հասկանալի լինելու չափ պարզ են: Եթէ ուղղագրական որևէ նորմուծում մեր համոզմունքը լինէր, անմիջապէս կը գործադրէինք:

* ւ-ի ուղղագրութեան մի ծառայութիւնը արդէն այն պիտի համարել, որ նա վերացրել է ու-ն (վ-ի հնչիւնի համար), թողնելով միայն ւ և վ: - Ծան. Խմբ.:

3) Երբ Ձեզ համար, Վերապատելի, «խաղողը» գերադասելի է հաղող ձևից, չե՛նք վիճի. դա ճաշակի խնդիր է. սակայն, մեր կողմն է կենդանի ժողովրդի միլիոնատոթ բազմությունը, որ հաղող է գործածում շարունակ՝ ու դուք ինքներդ տալիս էք դրա լուսագոյն ապացոյցն ասելով, որ «արևմտեան հայերու մէկ մեծ մասը չի կրնար խ-ն հնչել»:- Նշանակում է այդ հնչիւնը տեղ-տեղ արդէն հոգեվարքի մէջ է. բնական օրէնքին պէտք չէ դիմադրել, այլ ճանաչել և ընդունել... Սակայն, երբ Դուք ասում էք, թէ ես առաջարկում եմ «խաչ»-ի տեղ հաչ ասել կամ գրել, դա առասկալը անբարեխիղճ վարմունք է Ձեր կողմից. այդպիսի բան մենք չե՛նք ասել: Ի դէպ, խորհուրդ կը տալիսք այդ հնչիւնի մասին կարդալ հայերէնի Altmeister Բագրատունու քերականութիւնը, ուր ահա թէ ինչ է ասւած. «խ, հ, դ, թանձրացուցեալ են յոյժ զբարբառն ի բերան ռամկին. բայց առ կիրթս և գիտունս մեղմելի են ըստ առաջիկայ տեսութեանց»*, ուր և ապա բերում են օրինակներ: Բագրատունին կարծում է, թէ այդ հնչիւնները խտացած են ռամկի բերանում, որ կրթածները ւաւելի մեղմ պիտի հնչեն. մենք ցոյց ենք տալիս, որ դրանք բազմիցս մեղմացել են ռամկի մօտ, որ պիտի ընդունենք: Վերապատելի Մէնելիշեանը հակառակ է թէ՛ Բագրատունուն և թէ ռամկին, այսինքն կենդանի արտասանութեանը. և կոպիտ ձևը նրան ւաւելի դուրեկան է ու սիրելի, քան նորն ու փափուկը... Չե՛նք վիճում:

4) Շա՛տ վշտացել է Վերապատելին մեր ասածից՝ թէ «բոքիկ գրագէտին մէկը արդէն բարդել է ճարտարախօս, որ ամեն բանով յետ է ճարտասան ձևից»: Մեր տգիտութիւնը ցոյց տալու համար պատելին յիշում է, որ դա 1400 տարւայ հնութիւն ունի, և մոռանում է դրա կողքին դրած «արդէն»-ը: Եթէ Վերապատելի Մէնելիշեանի չափ հմուտ չենք մեր բառերի տարիքին, առձեռն բառարան գէթ ունինք մեր սեղանի վրայ, որտեղից դժուար չէ՛ իմանալ այս կամ այն բառի գրաբարին պատկանելը: Սակայն, մեր նպատակը չէ՛ եղել բառերի «ծննդական վկայականը» տալ, այլ նրանց համեմատական արժէքը գեղար-

* Ժողովրդական հաղող ձևը անցել է արդէն գրականութեան մէջ, թէև դեռ ևս ընդհանրացած չէ: - Ծան. Խմբ.:

** Հ. Արսէն Բագրատունի, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, 1852, եր. 656:

ւեստական և քերականական տեսակետներով: Մենք ցոյց ենք տւել, որ «ճարտասան» բառը բարդողը ճաշակ և հմտութիւն է ունեցել. իսկ դրա համեմատութեամբ «ճարտարախօս» բարդողը բոքիկին մէկն է եղել. սրա դէմ բան ունի՞ք. սխալ է մեր կարծիքը, հերքեցէ՛ք: Թէ այդ բառը բարդողը այսօր է ապրում կամ հինգերորդ դարումն էր - մեզ համար նա մնում է բոքիկ. իսկ թէ հնութիւնից հասած ամեն մի բան Դուք կատարեալ էք համարում, դա էլ շատ լաւ է բնորոշում Ձեր ճաշակը, որ արդէն վերեն էլ բաղդ ունեցանք տեսնելու...

5) «Կայ աւելի «գարհուրելին»». այդ այն է, որ մենք չենք զանազանում դայեակը մանկաբարձից. գրաբարում դրանք տարբեր նշանակութիւն ունին. մենք տգէտ ենք: Չենք ուզում դաս տալ Պատւելուն, յիշեցնելով, որ բառերն էլ ունին իրանց կեանքն ու զարգացումը և եմթակայ են յարատև փոփոխման. դրա շնորհիւ ահա հին դայեակը ռամկի բերանում այսօր նշանակում է մանկաբարձ (Hebamme):

Վերապատւելին չի՛ կարող մի ռամիկ ցոյց տալ, որ հասկանալի մանկաբարձ բառը իր հին նշանակութեամբ. ներկայ հայերէնում դա նշանակում է մանկան-բարձ (համեմատի՛ր մանկապարտէզ = մանկան պարտէզ): Այն ինչ ես ցոյց կը տամ հարիւրհազարատու ռամիկներ, որոնք գործ են անում դայեակ կամ տատմէր - նախնի մանկաբարձի մտքով. հարցրէ՛ք Արգրում, Դարս, Ալեքսանդրապոլ, Ախալցխա, Ախալքալաք և այլուր... մանկաբարձ՝ մեռած բառ է. աշխարհաբարում նախնի նշանակութեամբ գործածելը հիմնովին սխալ է. իսկ դայեակ կամ տատմայր - կարճ, ընտիր և կենդանի են: Եւ այս կէտում մեզ ձայնակից է Հայկազեան բառարանը, որի հեղինակութեան առաջ, յուսով ենք, պիտի խոնարհի Վերապատւելին: Ահա թէ ինչ է գրւած այնտեղ. «Մանկաբարձ - բարձօղ զմանուկ յարգանդէ մօրն, ծնուցիչ, դայեակ, դայեկ». ընդգծումը բնագրինն է:

Յաւալին այն է, Պատւելի, որ Դուք դիտմամբ թէ անգիտութեամբ շարունակ մոռանում էք մեր ուսումնասիրութեան նիւթը, որ աշխարհաբարն է. Դուք շարունակ մտածում էք 1400 տարի ետ, իսկ ես խօսում եմ ներկայիս, 19 դարու հայերէնի մասին. մի՞թէ այդ երկուսը Դուք չէք զանազանում միմեանցից:

6) Ուրիշի գործն այդպէս դատափետողը, կարծեմ, աւելի համեստ և զգոյշ պիտի լինէր և հայագիտութեան այնպիսի փայլուն օրինակ պիտի չտար, որ ծաղրելի են դարձնում իրան. ծիծաղելով մեր առաջարկի վրայ, Վերապատելին մի նոր բարդութիւն է տալիս. «ծխավաճառ»։ հայերէն դա նշանակում է ծուխ-վաճառող. սրամիտներից մինը, իմ հարցին պատասխանելով, նկատեց, որ դա կարող է նշանակել և մի քահանայ, որ վաճառում է իր ծխականին: Վերապատելի քննադատի կարծիքով դա նշանակում է եղել ծխախոտ վաճառող: Ահա ձեզ հայերէնագիտութեան նմուշներ:

7) Հրատարակ. ընկերութիւնը, Պատելի, Չեր ջատագովին պէտք չունի. բաւական է հարցնել Աղայեանին, Պոօշեանին, Շիրանգաղէին, Փափագեանին, Յովի. Թումանեանին, և այլոց, իմանալու համար թէ այդ ընկերութիւնը ինչ օյիմներ է խաղացել նրանց գլխին. սրանցից և ոչ մէկն է գոհ:

8) Ոճը ինքը մարդն է, և բնորոշ է Վերապատելու ոճը, նրա քաղաքավարի արտայայտութիւնները. գուր չէին նրանք հիւրասիրել Մշակի էջերում. դրանք գուցէ և ներելի են: Բայց ինչ որ դատապարտելի է, որի համար մենք բառ չենք գտնում անուն տալու, այդ այն է, որ միւր իրան թոյլ է տալիս հրապարակօրէն, առանց հեղինակի համաձայնութեան, քննելու մի գործ, որ անյայտ է հասարակութեանը, դեռ անտիպ է: Պատելի Մէնէվիշեանը, իր բառերով ասենք, «յանդուգն, յախոտն և համարձակ» վճիռներ է կայացնում հասարակութեան առաջ մի գործի մասին, որ հասարակութիւնը չի ճանաչում: Այս է ահա դատապարտելին... Թող համբերութիւն ունենայիք մի քիչ, մինչև գործիս տպագրւելը և ապա գալուստներդ բարի, շնորհի անէիք ամենակծու և ամենասուր քննութեամբ մեզ պատելու, պիտի հաճութեամբ լսէինք:

«Մուրճ», 1899, N 9, էջ 1107-1111

ՔԱՕՍ

Եթե ես նկարիչ լինեի, ո՛չ մի տեղ այնքան բազմազան և զբաղիչ նիւթ չըզտնէի իմ վրձինի համար, ինչպէս Բագու, հայոց եկեղեցու բակում: Պայծառ, բնորոշ է այդ բակի պատկերը կիրակի օրերին: Խուռն բազմութիւնը ամբողջովին բռնել է այդ բակն ու հարեան մայքերը: Բանուր, գործակատար, ուսուցիչ, դերասան, գրագէտ, միլիօնատէր աղա և մուրացիկ կանգնել են խումբ-խումբ իրանց դասի և դիրքի համաձայն: Աղքատների մի ահագին բազմութիւն պատնէշ է բռնել եկեղեցու դռանը, զարդարուն տիկիները սեթևեթ անցուղարձ են անում դէպի եկեղեցի, որի դռներից, մերթ ընդ մերթ դուրս են ցայտում շարականի բեկորներ... և լսում է դորդալի կառքերի գոռգոռոց, որ երբեմն կանգ են առնում աղային ցած բերելու Աստծոյ տաճարը, և հիւանդոտ մուրացիկի պաղատանք, որ ձեռք մեկնած հաց է աղերսում... Ֆոնի վրայ երբեմն երևում են հաստ ու բարձր մարմիններ, պինդ ու ամուր վզերի հետ, աղքատ ու եղկելի արարածներ, հիւանդ ու վտիտ մարմնի մէջ... Յափռած ու ինքնագոհ ծոծրակները տեղի են տալիս նազ ու վիատ աչքերի առաջ և կոշտ ու սևացած բազուկները խառնում են ձեռնոցների մէջ խնամամած թաթիկների հետ...

Ամեն մարդ և ամեն բան կայ այդտեղ. Հայաստանի բովանդակ գաւառներն ունեն իրանց ներկայացուցիչներն այդտեղ, սկսած համեստ մշեցուց մինչև եսամոլ դարաբաղցին, մուրացիկ վանեցուց մինչև հոսիս պոլսեցին, իրանց բարբառներով, տարազներով, քթերով ու ծոծրակներով... Չըզիտես, զբօսարան է սա, եկեղեցի, կլուբ, թէ մի «քաօս»... Մօտենում ես սրան, գործ է որոնում, հարցնում ես միւսին՝ դարձեալ գործ է որոնում, երկրորդը, երրորդը, չորրորդը, գործերի ու միլիօնների աշխարհում այսքան էլ անգո՞րծ...

Եւ ահա, մի ծանօթ կերպարանք, որ ամբոխը ճեղքելով բարձրանում է դէպի եկեղեցի. Քաօսի ճարտար նկարիչն է դա, Շիրվանգահէն, որ ինձ թուում է եկել էր իր գրքի մի պակաս գլուխը լրացնելու, դիտելով հայոց եկեղեցու բակը... Նրա քայլերն շտապ են ու անհաստատ, հայեացքը տարտամ ու երերուն, նա կարծես գոյներ ու մո-

մենտներ է ջոկում, պատկերը կարծես նրան թույմ է խառնակ, անոթոշ, անկերպարան...

Նա էլ անգործ է, փսփսում է ականջիս մի ծանօթ, գործ է որոնում... ամիսներ շարունակ, Բագու ընկած, նա գործ է որոնում... հայ գրականության նշանատր տաղանդներից մինը, գործ է որոնում... Հապա նրա տաղանդը, նրա գրիչը, նրա տասնեակ հատորներն ու տասնեակ տարիների աշխատանքը մի՞թե գործեր չեն, և կամ բաւարար գրական չեն, որ նրան այստեղ - հարիւր հազարաւոր հայերի մէջ մի գործ հայթայթէին... Սա անհաւատալի է, բայց սա իրողութիւն է, մերկ իրողութիւն... Դրա համար ահա խոնարհւած է նրա հպարտ գլուխը, տուն, ընտանիք, երեխաներ հաց են ուզում. դրա համար, այն կապոյտ աչքերը, որ այնքան փայլուն ու կրակոտ էին մի ժամանակ, այսօր ինձ հանգած թւացին. դրա համար, թախծալի անորոշութիւնը թագաւորել էր նրա դէմքի վրայ, և ժամանակով փարթամ ու խնամքոտ մազերը խռիւ էին եկել նրա ուսերն ի վայր:

Ես չուզեցայ մօտենալ նրան. այստեղ, Բագում, հայ գրագէտներս ճիշտ Ադամ-Եւայի դրութեան մէջն ենք մեղսագործութիւնից յետոյ, այն բացառութեամբ, որ մենք թէ՛ դրախտից ենք արտաքսւած և թէ դժոխքից.- Ո՛չ Աստծոյ երեսը նայել կարող ենք, ոչ սաթայելի, և ոչ էլ մարդկանց: Իմ հանդիպումը պիտի ամաչացնէր ու վրդովէր Շիրվանին, ուստի ես բաւականացայ միայն հեռից դիտելով նրան... և ծանր ու ճնշող էր այն տպաւորութիւնը, որ ես ստացայ նրանից:

Եկեղեցու երզը սկսեց մարիլ, կառքերը դողդալով սկսան հեռանալ. ամբոխն սկսեց ցրիլ, աղքատներն արդէն դադարել էին մուրալուց. եկեղեցու դռները ճռնչալով փակւեցան... Եկեղեցու բակում տիրող քաօսը պարզեց ու անյայտացաւ...

Ես ակամայ յիշեցի Շիրվանի Բաօսը, որ կարդացել եմ և սաստիկ գոհ մնացել. այսօր միայն, մի տարուց յետոյ, ես զգացի, որ մի կարևոր գլուխ պակաս է այն գրքում, և հեղինակը վաղ թէ ուշ պիտի լրացնէ այն, նկարագրելով հայ եկեղեցու բակը, և անգործ վիպասանին, նկարագրելով տաղանդը, որ գործ է մուրում և ուսումն ու հպարտութիւնը, որ գլուխ է խոնարհում ծոծրակների առաջ:

Ես հաւատացած եմ, որ Շիրվանը, նախային ցնցոտիների միջից, պիտի որոտայ և գրիչը իր ճակատի քրտինքի մէջ թաթախելով պիտի մրէ հարուստ-գործատէրերի երեսը. ես համոզւած եմ, որ դագաղի միջից (Աստուած հեռու անէ այդ օրը), զարդարւած պսակներով ու ճառերով, վեր պիտի բարձրանայ մի օր նրա յիշատակը և պիտի թքէ Բագւի հայերի վրայ, որոնք միլիոնների ու պերճանքի մէջ ո՛չ միայն չուզեցան ապահովել մեր աղքատ գրականութեան մի-երկու սպասաւորներին, այլ և մի պախարակելի անտարբերութեամբ դիտում են նրա վիճակը:

Ես երանի տւի սև բանտրին, որ իր ցնցոտիներով հաց է աշխատում. երանի տւի վերջին մուրացկին, որ իր վիճակին հաշտւած ապրուստ է մուրում. երանի տւի և՛ հարուստին ու կրեզոսին, որ միլիոնների մէջ ընկերոջը հոր է դարանում, գողանալու և ատելի փարթամանալու համար, և այդ երանութիւնների մէջ վա՛յ տւի քեզ, Քաօսի հեղինակին, որի տաղանդը ո՛չ հաց ունի, ոչ վա՛րձ...

Գ. Վ.

«Տարագ», 1900 թ. հուլիսի 9, N 26, էջ 366-367

ԼԱՐԵՐ (Արձակ բանաստեղծություն)

Յախտենական խաւարը դալկացել էր նրա ճակատին.- նա կոյր էր, նա լուռ էր. հոգու գոյգ հայելիները չէին փայլում նրա կերպարանքի վրայ:

Նրա մատները դող ելան քնարի լարերի վրայ.- նա երգիչ էր. և լարերը թրթռացին: Ահա նրանք ձայնում են, և հնչիւնների մի աղբիւր, ամպի պէս թեթև, բիւրեղի պէս անարատ, սկսաւ ցոլալ օդի մէջ: Ձիւնի մման վարանում են այդ հնչիւնները, դողդողում և հալում: Եւ լարերը լեզու առած լաց են լինում և երբեմն նրանք ժպտում են որբի մման արտասուքի միջից և մորմոքում են...

Դիտում եմ քնարը, նայում եմ երգչին և ո՛վ պատրանք, նա այլևս կոյր չէ՛. մի գոյգ մեծ, իմաստալի աչքեր հմայում են ինձ. խոր են այդ աչքերը - ծովի պէս գրաւիչ են, կոյսի մման...

Մենք սկսեցինք իրար նայել և իրար հասկանալ.- կաշկանդիչ էր այդ աչքերի հայեացքը և ազդու, նա գրաւել էր իմ ուշն ու միտքը...

Յանկարծ քնարի վերջին հնչիւնը դողաց, վարանեց և մարաւ. գոյգ աչքերը որ այնքան ահարկու, խոր և կրակոտ էին, յանկարծ անյայտացան: Ես վեր նայեցի երգչի երեսին և դարձեալ սարսափով տեսայ յախտենական խաւարի թագաւորութիւնը:

Սարսափով զգացի, որ դա մի պատրանք էր, լարերի խօսող հնչիւնները ես ընդունել էի երգչի աչքերի տեղ:

Գ. Վ.

«Տարազ», 1901 թ. հունիսի 24, N 23, էջ 254

ԱՅՑ ԼԵՄԲԵՐԳԻ ՀԱՅԵՐԻՆ

1899 թ. Եւրոպայի հայ ուսանողական համաժողովը մի գրութիւն ստացաւ Լեմբերգից, ուր մի խումբ հայ ուսանողներ, որոնց գոյութեան մասին ո՛չ մի գաղափար չունէինք, յայտնելով իրանց կացութիւնը (ազգայնութեան մոռանալը, մայրենի լեզուի և եկեղեցու կորուստը, կաթոլիկ կղերի ճնշումը ևայլն) աղաչում են հայ ուսանողներին օգնութեան հասնիլ, սովորեցնել իրանց հայերէն, մեր այդ մեծանուն և փարթամ գաղթականութեան գէթ վերջին բեկորները փրկելու նպատակով:

1899 թ. յունիսին Եւրոպայից հայրենիք վերադառնալիս իմ ճանապարհին ընկնում էր Լեմբերգի վրայով, ուստի առիթից օգուտ քաղելով, ուզեցի այցելել տեղական հայերին և դիմեցի Աւգուստ Թեոդորովիչին, որի հասցէն ինձ յայտնի էր:

Թեոդորովիչը հայի պէս ինձ հիւրասիրելուց յետոյ՝ առաջնորդեց պ. Մանուկեհիչի մօտ, ուր երկու սենեակում չորս հայ ուսանող միասին են ապրում: Մի ժամից յետոյ տասնից ատիւի ուսանողներ արդէն շրջապատել էին ինձ.- Հայեր, այնպիսի վառւած ու տոգորւած հայե՛ր, որոնց նմանը ես երբե՛ք չեմ տեսել. Նալբանդեան, Աբովեան և Նազարեան կարդալիս, ես գուր եմ որոնել նրանց տիպերն և առհասարակ 50-60 թականների երիտասարդութիւնը մեր ժամանակներում. տեսնելով Լեմբերգի հայ ուսանողներին, իմ երևակայածը գտայ կենդանի իրականութեան մէջ... սրանց ոգին, միամիտ հաւատը և զարմանալի ոգևորութիւնն ու սէրը ինձ յիշեցնում էր յիսուն թականների մեր երիտասարդութիւնը...

Մի կողմից նրանք ուշ ու միտք դարձած՝ ուզում են անթիւ հարցերով գաղափար ստանալ մեր կացութեան մասին, նրանք հրճում են, լսելով որ հայերի մեծամասնութիւնը դեռ հայերէն է խօսում, ժողովրդի մեծ մասը դեռ հողագործ է... որ ունինք մամուլ, դպրոցներ ու կրթւած մարդիկ. որ կաթոլիկութիւնը մեզ համար վտանգատր չէ՛... միւս կողմից ամեն ջանք ու ճիգ թափում են ցոյց տալու, որ իրանք էլ դեռ հայեր են, լա՛ւ հայեր, թէև կաթոլիկ ու լեզուն մոռացած: Մարդ ուղարկեցին և բերել տւին «Հայոց դպրոցից» միակ հայ տղան, որ դեռ չէ՛ մո-

ռացել մի քանի հայերեն բառեր, իսկ երբ նա սկսեց հայերեն մեկ-երկու համարել, նրանց հիացմունքը հասաւ հրճամբի: Խեղճե՛ր, չըզիտեն, թէ քանի-քանի հայ ընտանիքներ դիտմամբ ջանք են թափում մոռանալու հայերէնը... նրանք ուզեցին ինձ հայավարի հիւրասիրել և բերին բուժէն (աճու միս), որ միմիայն տեղացի հայերի կերակուրն է. դա պատրաստում է այժի մսից և մի տեսակ երշիկ է... Ճաշից յետոյ, երեկոյեան հայերի թիւն հասաւ մօտ 12-ի. կանչեցին միակ հայ զինւորին, որին էլ յանձնաժամ տեղական գօրքի պաշարը գնելու և մատակարարելու գործը, շնորհիւ իր աշալոջութեան:

Ինձ ստիպեցին, որ ազգային տաղեր երգեմ, և նոյն երեկոյեան գրի առան ու սովորեցան «Բամբ որոտանը», որ նրանց սաստիկ դուր եկաւ: Նրանց ոգևորութիւնն այն աստիճանի է հասել, որ որոշել են միջոցները ներածին պէս Հայաստան գալ, հայ աղջկայ հետ ամուսնանալ և հայերէն սովորել: Ոմանք ձեռ են քաշել իրանց ընտրած աղջիկներից, հայ աղջիկ ուզելու մտադրութեամբ: Կարծելով թէ ինձ համար անդուրեկան է նրանց կրօնը - կաթոլիկութիւն, օգտուելով կանոնիկոս Թէոդորովիչի բացակայութիւնից, բացատրում էին, որ առաջին յարմար թուպէին նրանք պատրաստ են մայրենի եկեղեցու գիրկը դառնալ: Ես նրանց հասկացրի, որ անցել են կրօնական մոլեռանդութեան դարերը. թէն ցաւալի է այն, որ հայերից շատերը կաթոլիկ են դարձել, բայց և այնպէս, նրանք մեզ համար նոյնպիսի հարազատ ու սիրելի եղբայրներ են ինչպէս և լուսաւորչականները, միայն իրանց հայ զգան և հայ ճանաչեն...

Այդ երեկոյ, թատրոն չլիներ լու պատճառով, ինձ տարան ցիրկ. այնտեղ էլ ընթրիքի և ապա իրանց մօտ ննջելու: Առաւօտ կանուխ ես ինձ հրաւիրողներին թողնելով քնած՝ շտապեցի կանոնիկոս Թէոդորովիչի մօտ, որին գտայ պարապելիս: Երիտասարդ հոգևորականը մի լաւ գրադարան ունի, յատկապէս հայերին վերաբերեալ գրքերի եւրոպական բոլոր լեզուներով. հին լեզուներից զատ նա ազատ խօսում և գրում է ֆրանսերէն, գերմաներէն, իսկ լեհերէնը նրա մայրենի լեզուն է: Չընայելով որ մայրը լեհ է, նա է տեղական հայութեան հոգին ու եռանդը, գրում է լեհական և գերմանական թերթերում և առանձին բրոշիւրներ ունի նւիրած հայոց խնդրին... Ազատ կարդում է հա-

յերէն, միայն շատ քիչ բան է հասկանում. նրա ցանկութիւնն է կարելւոյն չափ շուտով Հայաստան գալ հայերէն սովորելու, որի համար նա ուզում է մինչև անգամ ուսումը կիսատ թողնել: Իմ բարի խորհուրդն էր համոզել, որ նա առաջ վերջացնի ուսումը՝ ապա վերջապէս նւիրի հայերէնի ուսումնասիրութեան:

Հետևեալ օրը ճաշից առաջ հարկ էր այցելել տեղական մի քանի հայերի. միմին (արձանագործին) տանը չըգտանք, երկրորդը - վաճառական, շատ սիրալիր ու զարմացած ընդունեց «հայի» այցելութիւնը. երրորդը պրոֆեսոր, Յովհաննէս Բոլոցի ասպետ Անտոնիչ, պատկանում է տեղական արիստոկրատիային, դասախօսում է գեղարեստի պատմութիւն և յայտնի գիտնական է:

Նա մեզ ընդունեց վերին աստիճանի սիրալիր, իր գրասենեակում, ուր հաստ գրքերով ծանրաբեռնած սեղանի շուրջը սուրճ հրամցուց: Մի քանի վայրկեանից յետոյ սիրալիր խօսակցութիւնը դարձաւ ընկերական, կարող եմ ասել եղբայրական: Հասկանալի է, խօսակցութեան նիւթն ինչ կը լինէր... ինձ հետաքրքրողը Լեհաստանի հայերն էին, իսկ պրոֆեսորի ցանկութիւնն էր կարելւոյն չափ շատ տեղեկութիւններ ստանալ մեր մասին:

Իմ խօսակցութիւնն ինչպէս երևում է լաւ տպատրութիւն թողեց պրոֆեսորի վրայ, որովհետև երբ ոտքի ելանք մեկնելու, նա համարեա զօրով ստիպեց, որ նոյն երեկոյեան անպատճառ իրան կրկին այցելութեան գնանք և նա մի այնպիսի ընդունելութիւն ցոյց տուաւ, որ ես պէտք է մինչև ականջներս կարմրէի: Մեր մտնելը, նկատելուն պէս՝ նա վերկացաւ տեղից և խորը կերպով գլուխ տուաւ, որի պատճառով ամբողջ լսարանը՝ օրիորդներ ու երիտասարդներ, հայեացքներն ուղղեցին դէպի մեզ: Դասախօսութիւնից յետոյ նա մեզ առաջնորդեց իր աշխատանոցը... և բաց արաւ մի խումբ ստուար կարտոններ, որոնց վրայ գիտնականի հոգածութեամբ ու խնամքով արտահանած էին բոլոր այն արձանագրութիւնները, ծաղկանկարներն ու քանդակները, որ երբ և իցէ ստեղծել են Լեհաստանի հայերը: Մինչ այդ, պրոֆեսոր Անտոնիչը մանկական պարզութեամբ խնդրեց լսել իր երգածը և հաւաստիացնել, արդեօք ճիշտ է եղանակը... և յիսունամեայ գիտնականը սկսեց երգել «Մեր հայրենիք թշուառ անտէր»... մի այնպիսի

տենչանքով որ կարելի էր լաց լինել, եթէ մարդ չամաչէր: Այդ երգը նա սովորած է եղել Վենետիկի հայրերից, առանց հայերէն գիտենալու:

Լսելով որ տեղական հայ ուսանողները ուզում են հայերէնի ուսուցիչ հրաւիրել, նա սաստիկ ուրախացաւ ատելացնելով, որ աշակերտներից մինն էլ ինքն ու իր որդին պիտի լինին:

Նա իբրև յիշատակ ինձ տուաւ մի փոքրիկ բրոշիւր Լեհաստանի հայերի մասին, որ իր գրածն է, և քաղած է «Աւստրո-Ռուսարիան պատկերով ու խօսքով» յայտնի գործից, և պետական հրատարակութիւն է:

Նոյն երեկոյեան ժամը 10-ին, 12-ի չափ երիտասարդ հայերը երկաթուղու կայարանն եկան ուրախ երգերով և յոյսերով ճանապարհ ձգելու «Հայաստանցի բարեկամին», ուղարկելով իրանց լաւագոյն իղծերն ու ցանկութիւններն իրանց հեռաւոր եղբայրներին...

Երկաթուղին սլանում է և առանձնացած օթեակում շարունակ մտածում են, երա՞գ էր այս ամենը, թէ իրականութիւն...

Գ.ր. Վանցեան

«Տարագ», 1901, «Իլլիւստրասիօն», N 22/VI, էջ 44-45

ԱՐԵՒՈՐԴՈՅ ՄԱՍԻՆ ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

«Հանդէս Ամսօրեայ»ի մէջ 1896 թուին Թիւ 1. մենք աշխատել էինք ցոյց տալու, որ Արևորդիք Հայեր չեն, ինչպէս սխալմամբ հաղորդում է մեզ Շնորհալին: Մեր այս ենթադրութեան համար մի քանի կտրուկ ու վճռական ապացոյցներ գտանք վերջերս D. Chwalsohn-ի «Die SSabier und der SSabismus», St. Petersburg, 1856 աշխատութեան մէջ, որ ահա բերում ենք թարգմանաբար:

Գարստէն Նիբուրը հետևեալն է պատմում իր ճամբորդութեան մասին, որ կատարել է 1766ին Միջագետքում. «Յակոբիկների համայնքին են պատկանում նաև Արևորդիք («Schemsia»). բութ է՝ թէ դրանք պահպանել են այն կրօնը, որ այս երկրում (Միջագետք) ոչ միայն քրիստոնէական, այլ և մահմետական կրօնից առաջ տիրապետողն էր:

«Մի մարդ ինձ հաւատացնում էր, որ իւր երիտասարդութեան ժամանակ շրջակայ լեռնոտ - երկրի գիւղերից շատերն այդ կրօնն էին դաւանում: Հիմա, ինչպէս կարծում են, գիւղերում այլ ևս Արևորդի չկայ, Մարդինում միայն (Mardin) բնակւում են դեռ հարիւրի չափ գերդաստաններ երկու առանձին թաղերում, որոնք սրանից մի քանի տարի առաջ մի առանձին համայնք էին կազմում. մինչև որ Սուլթան Մուստաֆան (հաւանօրէն Գ.ը մեռած 1773ին) բոլոր քրիստոնէաներն ու Հրէաները բռնի մահմետական դարձնելու միտքն յղացաւ. որին մասամբ բաւականութիւն տալու համար հրամանը այսպէս վերանորոգուեցաւ. Ապագայում ո՛չ մի հպատակ առանց հաւատոյ գրքերի իրաւունք չունի գոյութիւն ունենալու: Այսինքն սուլթանի հպատակը մահմետական, քրիստոնէայ և կամ հրէայ պիտի լինէր, որովհետև վերջիններս էլ Դուրանից ճանաչուած հաւատոյ գրքեր ունին:

«Եզդիները, Դրուզները, Նասրանիներն և այլ օտարադաւանները, որոնք իրենց շէյխերի և էմիրների իշխանութեան տակ լեռնային երկիրներումն էին բնակւում, այս հրամանին ուշ չդարձրին: Արևորդիք սակայն, սաստիկ թոյլ էին և թոյլ այլ ապրում էին քաղաքներում, ուր շուտով կարող էին մահմետական պաշտօնեաների ուշադրութեանն ենթարկուել:

«Ուստի նրանք ենթարկուեցան Տիարալեքիի Յակոբիկների պատրիարքին, այդ օրից անուանում են իրենց քրիստոնեայ և հագնում են քրիստոնեի պէս, թէև նրանց քրիստոնեութեանը մէջ իրենց գաւակները մկրտել տալուց աւելի բան չի արտայայտում:

«Նրանք սովորութիւն չունին բազմութեամբ եկեղեցի յաճախելու. սակայն, մի քանիսը նրանց կողմից հոգածութեամբ յաճախում են եկեղեցի, որ մարդ մեղադրելու իրաւունք չունենայ, թէ իրենց կրօնական պարտքը լաւ չեն կատարում:

«Նրանց մեռելն էլ Յակոբիկներու քահանան է թաղում, որին հրաւիրում են մեռածի դիակը դազադում ամփոփելուց և պինդ գամելուց յետոյ, որ ապա թաղում է Արևորդոց գերեզմանատանը: Կարճ, նրանք ապրում են իբրև միջակ կրօնական համայնք և մինչև անգամ Յակոբիկներու հետ երբեք չեն ամուսնանում: Նրանց կրօնի հիմունքների մասին մի հաստատ բան իմանալ չկարացի: Մարդինի քրիստոնեաներն ասում են, որ նրանք իրանց տան ամենալաւ դուռը միշտ արևելեան կողմն են շինում և իրենց երեսները դէպ ի արևն են դարձնում աղօթքի ժամանակ, իրենց մեռելների մագերէտ փետքում են և մեռելի բերանը մի քանի դուկատ են դնում:

«Հարսանիքը թէև Յակոբիկ հոգևորականի ձեռով է կատարում, բայց և այնպէս, ամուսնացեալներին ման են ածում փողոցում, ինչպէս կարծում է նրա համար, որ մի մեծ քարի մօտով անցընեն, որին նրանք մեծ պատիւ են տալիս...»

Մինչև այստեղ Նիբուրը, որի ասելով Տիարալեքիումն էլ Արևորդիք կան:

Մօտաւորապէս նոյնն է հաղորդում միսսիօնար Սութգատը (Southgate) Շէմսիների մասին 1837ին.- Մօտ մի դար առաջ, ասում է նա, Շէմսիները կամ արևապաշտներն իրանց կրօնն ազատ դաւանելով ապրում էին Միջագետքի գիւղերում, Մարդինի մօտերը (մի 15 ընտանիք էլ Տիարալեքիում): Մի անգամ, երբ Մարդինի Փաշան 1762ի մօտերը նրանց կրօնի մասին տեղեկութիւն ստացաւ, որ Շէմսի են, յայտարարեց, որ նա բաց ի կօրանից և հին ու նոր կտակարանից այլ կրօն չի ճանաչում և չի կարող թոյլ տալ:

Նրանցից ոմանք մահմետական դարձան, ուրիշներն էլ բերին Մարդին և մահուան երկիւղ տուին, մինչև որ Ասորի եպիսկոպոսը նրանց յայտարարեց իբրև իր Յակոբիկ հօտի մի մասը: Այդպէս էլ համարում են դրանք մինչև օրս, թէև իսկապէս մի բոլորովին այլ ժողովուրդ են:

Նրանք յաճախում են Յակոբիկ եկեղեցին, պաս ու տօն կատարում են նրանց հետ, երեխաներին մկրտում են և հազնում են քրիստոնէի պէս, սակայն երբէք նրանց հետ չեն ամուսնանում, այլ միմեանց: Նորերում նրանցից ոմանք ուզեցին ասորա-կաթոլիկ դաւանութեան յարել, առանց սակայն իրանց առանձնութիւնները թողնելու և Ասորի քրիստոնեաների հետ ամուսնութեան մէջ մտնելու:

Նրանք պնդում են քրիստոնեաներից տարբեր ծագում և տարբեր սովորութիւններ ունենալը:

Թաղման համար թէև կանչում են քրիստ. հոգևորական, բայց նրա հեռանալուց յետոյ, սկսում են իրենց գերդաստանի մէջ գաղտնի ձևականութիւնները կատարել. որ սակայն, իրանք չեն խոստովանում, որպէս նաև իրանց աղօթքն արևին ուղղելը: Տարւոյ մէջ նրանք մի մեծ տօն ունին, երբ մի մեծ անուշահաց են թխում: Այդ հացի չորս կողմը նրանք առ ժամանակ ուրախ պտոյտ են կատարում, ապա յանկարծակի մարելով կրակը, ամէն միւր ջանք է թափում այդ հացից մի կտոր փախցնել: Նրանք խոստովանում են այս տօնի գոյութիւնը, բայց մերժում են նրանց վերագրուած գիշերային սանդարապետական տօներն ու այլևայլ ձևականութիւնները...

Ստորև մենք առիթ պիտի ունենանք հայկական հին և նոր աղբիւրներից մի քանի տեղեկութիւններ բերելու Շէմսիների կամ Արևորդոց մասին, ինչպէս սրանք անուանում են Հայերից:

Այդ տեղեկութիւններից երևում է, որ Շէմսիները 11 և 12 դարերում բաւական բազմաթիւ էին Միջագետքում և իրանց պաշտամունքի մէջ Փոքր Ասիոյ հնագոյն հեթանոսութեանց հետքերն էին պահել, ինչպէս օրինակ ծառերին պատիւներ տալը:

Սակայն, հէնց այսքանն էլ բաւական է համոզուելու համար, որ Շէմսիները հեթանոսներ էին և միայն առ երեսս քրիստոնէութիւն էին ընդունել, մահմետականների աչքին փոշի փչելու համար:

Մի այլ ճամբորդ Dupre, որ 1807-9 Պարսկաստան և Միջագետք այցելեց, Մարդինի ժողովրդի մասին խօսելով ասում է, որ այնտեղ 800 կռապաշտ կայ, որոնք Շեմսի են կոչում, այսինքն արևապաշտ. նրանք իրանց Իսմայելի սերունդ են համարում. չունին ո՛չ տաճար, ո՛չ դպրություն և նրանց կրօնական պաշտամունքը արտայայտում է մի-այն ծնրադրութեամբ արևի առաջ:

Այս տեղեկություններին, գրքիս հեղինակը կցում է երես 292-ում հայ աղբյուրներից հանած հատուածներ, որ մենք անկախօրէն քննել ու լուսաբանել ենք «Հանդէս ամսօրեայի» մէջ (1896. Թիւ 1):

Իր բազմահմուտ աշխատութեան վերջում գրքիս հեղինակն ենթադրութիւն է յայտնում, որ Հարրանացոց կամ Սաբեացոց մնացորդները Շեմսիները կամ որ նոյնն է, Արևորդիք են:

Այդ ենթադրութիւնն ապացուցանելու փաստեր չի՛ բերում հեղինակը: Սակայն, ով ծանօթ է Հարրանացոց հէնց Ghwalsohn-ի գրքից, պիտի միանգամայն բացասէ այդ ենթադրութիւնը: Հարրանացիք մի ծաղկեալ ժողովուրդ են. մեծ պետական մարդիկ, հմուտ բժիշկներ ու գիտնականներ, հարուստ գիր ու դպրութիւն ունեցող:

Նրանց կրօնը, որ մի ինքնուրոյն աղանդ է, կազմուած քաղդէական, պարսկական, հրէական, քրիստոնէական, նոր պղատոնեան և գնոստիկեան ուսմունքներից,- Արևորդոց պարզ արևապաշտութեան հետ բաց ի պատահական նմանութիւններից այլ առնչութիւն ունենալ չէր կարող...

Այս ենթադրութիւնն այնքան անհիմն է, որ մենք մի առանձին կարիք չենք տեսնում այն հերքելու համար փաստեր բերել:

Խնդիրն այն է, որ Արևորդիք մինչև օրս մնում են մի տեսակ հանելուկ.- Շնորհալին նրանց համարում է հայ. Ghwalsohn-ը՝ Հարրանացի, Հ. Ինճիճեանը՝ Եգիպտի. Պրոֆ. Եղիազարեանը, որ հմուտ է Եգիպտիների լեզուին, հերքում է այդ կարծիքը. մենք էլ մոլորութիւն էինք ունեցել «Մուրճ»ի մէջ ենթադրելու, որ Արևորդիք բոշաներ են¹... և դրա համար բաւական նպաստաւոր հանգամանքներ կային:

1. «Մուրճ», 1894, պատմական ակնարկ բոշաների անցեալից:

Այսօր էլ, սակայն, կարելի է կրկնել այն, ինչ որ մենք արտայայտել էինք մոյն խնդրի առթիւ (տարիներ) առաջ մոյն այս «Հանդիսի» մէջ.- Ա. որ Արևորդիք հայ չեն, մոքա քրիստոնեայ աղանդաւոր էլ չեն. ո՛չ զրադաշտական, ո՛չ էլ Հարրանացի (Սաբէացի): Բ. Սեր ունեցած ներկայ նիւթերով դժուար է պարզել նոցա ծագումը:

Թիֆլիզ, հոկտ., 1900 թուին

«Հանդէս ամսօրեայ», 1901, փետրուար, թիւ 2, էջ 42-44

ՆԱԽԱՀԱՅԵՐԷՆԻ ՀԵՏՔԵՐ ԶՕԿԵՐԷՆՈՒՄ

Հանդիսիս 1899-ի 5-երորդ թում (էջ 147-149) մենք փորձ արինք ցոյց տալու, որ զօկերէնի և Ղարաբաղի բարբառի մի քանի ձևերը գրաբարից աւելի հին պիտի լինին: Այն ժամանակ Ս. Սարգսեանցի գեղեցիկ աշխատութիւնը¹ չունէինք մեր ձեռին, ուր ի միջի այլոց մի շարք նոր բառեր ենք գտնում, որոնք նոյնպէս նախահայերէնի հետքեր են կրում. մայրութ-միրութ-մօրութ, մաջին-միջին, իրաբ-հերիբ, հանգ-հինգ, մտակ-մտիկ, կռայռ-կռիւ, պղայն-պղինձ, պայտք-պէտք և այլն...

Այդ ամենի հետ մենք ի նկատի չէինք ունեցել մի շատ կարևոր երևոյթ, որ առաջին անգամ մեր ուշադրութիւնը գրաւեց Երիւանում. դա էական բայի երրորդ դէմքն է: Այնտեղ ասում են. գնում ա. գալիս ա. ասում ա. տալիս ա. լալիս ա. բերում ա. և այլն:

Ստուգելով տեսանք, որ նոյն հնչմունքն ունին Ղարաբաղի և զօկերի բարբառը: Սարգսեանցն իւր գրքի մէջ ասում է, որ դա պէտք է գրել այ, որովհետև, ինչպէս յայտնի է, հնդկ-եւրոպական լեզուներից շատերում բայի 3 դէմքը վերջանում է -ով, որը Հայոց լեզւում հաւասար է յ-ի. այն էլ է յայտնի, որ միավանկ բայերում այդ յ-ն թէև գրւում է, բայց չի հնչւում. օր. գայ, տայ, կայ, լայ և այլն. ուրեմն վերևի բառերն աւելի ճիշդ կարելի էր գրել. գնում այ, գալիս այ, բերում այ և այլն. ինչպէս որ, իրօք, տեղ տեղ նոյն ձևով գրել է Շրէօտերն իւր քերականութեան մէջ:

Մեր նախորդ յօդուածից գիտենք, որ զօկերէնի այ-ը բառերի մէջ աւելի հին և նախնական է, քան գրաբարի է-ն. ուստի և ա՛յս դէպքում, էական բայի երրորդ դէմքն է՝ ծագել է զօկերէնի, կամ որ նոյն է, Արարատեան բարբառի այ-ից. նմանութեան օրինօք կարելի էր ենթադրել, որ դորա յոգնակի երկրորդ դէմքն էլ (էք) նման ծագում պիտի ունենայ: Դորան գրաւոր ապացոյց մենք գտնում ենք «Քնար Հայկականի» մէջ. «Ողբ Ջուղայեցոց» մի երգում (եր. 134), որ գրւած է 1605 թուին, պարզ ու մաքուր աշխարհիկ լեզով, ուր հանդիպում ենք

1. Սարգսեանց, «Ազուլեցոց բարբառը (Զօկերի լեզուն)», Մոսկվա, 1883 թ.

հետևեալ ձևերին. գնաման աք (էք), մոռանում աք, ո՞ւմն աք թողման, ողջ աք... և այլն:

Այս տեղից պարզ երևում է որ ներկայի Արարատեան բարբառն էլ (ինչպէս նաև Ղարաբաղի և գօկերի բարբառներն) այլ էր այն լեզուից, որ կոչւում էր Ոստինիկ և խօսւում էր նոյն Արարատեան դաշտում, քանի որ այդ բարբառը դեռ այսօր պարունակում է ձևեր, որոնք հին են գրաբարից:

Այդ հին տարրերից մինն էլ, մեզ թւում է, որ շեշտը պիտի լինի:

Գրաբարի շեշտը, մեր ներկայ արևմտեան բարբառների և գրական լեզուների մման բառի վերջին վանկի վրայ է ընկնում: Այն ինչ, գօկերի, Ղարաբաղի և Արարատեան բարբառներում մի քանի բացառութեամբ շեշտն ընկնում է նախավերջին վանկի վրայ: Քանի որ հարցն համեմատական հնութեան վրայ է, խնդիր է ծագում, ո՞րն է արդեօք հինը: Պէտք է նկատել, որ գոյութեան կռուի մէջ, ներկայում, այս շեշտն երբ ընդհարման է գալիս արևմտեան բարբառների հետ, տեղի է տալիս և հետզհետէ կորչում է: Նոյն իսկ Արարատեան բարբառը, որ կենսամարտի մէջ իւր հարևանների հետ՝ գրեթէ անպարտելի է, շեշտի վերաբերմամբ միշտ տեղի է տալիս արևմտեան բարբառների առաջ: Ապացոյց՝ արևելեան գրական լեզուն, որ հիմք ունենալով Արարատեան բարբառը, գործ է ածում արևմտեանի շեշտը:

Լեզուի զարգացման ընթացքը, պարզ է, որ տանում է դէպ ի վերջավանկ շեշտը, ուստի դժուար է կարծել, թէ արարատեան կամ գօկ բարբառի շեշտն աւելի նոր լինի:

Ի նկատի ունենալով, որ այս բարբառներն հին հնչմունքն ու արտասանութիւնն աւելի անարատ և մաքուր են պահել, ի նկատի ունենալով, որ սոքա գրաբարից էլ աւելի հին տարրեր են պահպանել իրանց մէջ, անհաւանական չի լինի, եթէ կարծենք, որ սորանց շեշտն էլ աւելի հին է, քան գրաբարինը:

Այս յօդուածը պատրաստ էր, երբ կարդացինք Պ. Meillet-ի մի նկատողութիւնը. Une Question (Բանասէր. Հ. Ա. գիրք Դ.), ուր հետևեալ հարցն է տրւում:

1. L'accentuation de l'imperatif sur l'initiale est-elle ordinaire a Tiflis? et l'imperatif se distingue-t-il a cet egard des autres formes du verbe?

2. La meme accentuation est-elle attestee dans d'autres dialectes?

Այս երկրորդ հարցին կարելի է պատասխանել, որ զօկերենում «շեշտը դրում է միշտ վերջից սկսած երկրորդ վանկի վերայ» (Ազուլեցոց բարբառն, եր. 49). բացառություններ կան, բայց ո՛չ բայերի մեջ. մոյն կանոնին ենթակայ է և Արարատեան բարբառը: Ուստի՝ զօկերենն Երևանի և Թիֆլիզի բարբառի հետ պարզում է այն, որ գրաբար հրամայականում շեշտը հաւանօրէն վերջին վանկի վրայ չէր, այլ նախավերջին, ինչպէս ճիշդ դիտել է Պ. Մէյէն իւր նկատողութեան մեջ. որ մի նեցուկ է մեր վերևի ենթադրութեանը շեշտի վերաբերմամբ:

Թիֆլիզ, 1900 թ. Հոկտեմբեր

«Հանդէս ամսօրեայ», 1901 թ., մայիս-հունիս, թիվ 5-6, էջ 180-181

ԵՒԳԻՆԷ
ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆ ԵՐԵՔ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ
ՇԻՐՎԱՆՁԱԳԷԻ*

Առաջին տեսարանը իրաւաբան Ալավերտեանի դահլիճն է, ուր հաւաքուած հիւրերը խօսում են օրուայ չարիքի մասին: Չարիքն էլ այն է, որ մի ոմն Արաբաջեան սաստիկ տանջելով իր կնոջը, նորան հասցրել է ինքնասպանութեան: Ալավերտեանը, որ գործին լաւ ծանօթ էր, բացատրում է, որ կնոջ տանջանքի պատճառն էր նորա օրինորդ ժամանակ կատարած սխալը. այս պատմութիւնը այնպէս վատ է ազդում նրա կնոջ Եւգինէի վրայ, որ գրեթէ ուշաթափում է: Հիւրերը ցրում են. որոնց մէջ, տիկին Կալամբարեանը չարամիտ ժպիտով ցոյց է ուզում տալ, թէ Եւգինէի անցեալն էլ անարատ չի եղել, մինչ այս վերջինը իր ուշաթափուիլը վերագրում էր կայծակին: Ալավերտեանը բացատրութիւն է պահանջում կնոջ տարօրինակ վարմունքի, տխրութեան, վրդովմունքի և դեղնութեան մասին. կինը լռում է, բայց տանջւում է միաժամանակ և ամուսնու հարցերից խուսափում: Այս հանգամանքը տարակուսանքի մէջ է գցում Ալավերտեանին, բայց իւր կնոջ սաստիկ սիրելուց նա վաճում է ամեն մի կասկած: Այնուհետև Եւգինէի իւր մօր հետ ունեցած խօսակցութիւններից յայտնի է լինում, որ նա իրան անարժան կին է համարում իւր ազնիւ ու մեծահոգի ամուսնուն, նաև տանջւում է իւր ակամայ յանցանքի պատճառով: Այս հանգամանքներում ահա այցելութեան է գալիս Եւգինէի մոլորեցնողը՝ ոմն Գաբօ, և առաջարկում է նորոգել հին կապերը: Այս առաջարկն արդէն բաժակը լցնում է, և նա որոշում է բաց անել ամուսնու առաջ եղելութիւնը: Սարսափահար, Ալավերտեանը քիչ է մնում ընկնի կնոջ վերայ՝ խորտակելու նորան, և հազիւ զսպել կարողանալով իրան, սկսում է տանջուիլ հոգեպէս: Նա սրտանց ուզում է ներել կնոջը. «Բայց ներել կարելի է, երբ կարողանաս մոռանալ այն,- գոչում է Ալավերտեանի քոյր Մարթան,- իսկ այդպիսի խայտառակութիւն երբեք չի կարելի մոռանալ»: Ալավերտեան այդտեղ ո՛չ իրան, ո՛չ էլ կնոջը խայտա-

* Այս յօդուածը պիեսի առաջին ներկայացման առթիւ է գրուած:

ռակուած չի՝ զգում, քանի որ դա մանկութեան մի սխալ է եղած լոկ, այն ինչ նրա քոյրը Մարթան, միակ ելքը ապահարգանն է համարում:- «Ես չեմ կարող ապահարգան պահանջել, քանի որ ուխտած եմ կնոջս. իսկ իմ անցեալը, միթէ ես անարա՞տ եմ, միթէ ես չե՞մ խաբել, ինչո՞ւ ուրեմն նա պիտի ներէ ինձ, իսկ ես ոչ»: Այս խօսակցութեան պահին ներս է մտնում Եւգինէն և յայտարարում է, որ ուզում է հեռանալ մօր մօտ, որպէսզի գէթ դրանով ամոքի ամուսնու ցաւերը: Ալավերտեանը չի համաձայնում. նոյն բոլէին մանկանոցից լսում է օրօրոցի երգ, Եւգինէն ուզում է հեռանալ, բայց չի կարողանում և թուլացած ընկնում է վայր: Ուշքի գալով նա իրան գտնում է ամուսնու գրկում, որ ասում է.- «Համոզմամբ ներեցի ես քեզ և սիրելով մոռանում եմ անցեալը»: Ապա դառնալով քրոջը նա աւելացնում է. «Լսո՞ւմ ես, ես այսպէս եմ ցանկանում. այս է ահա իմ համոզմունքը»:- «Ուրեմն մոռացիր և ինձ», - պատասխանում է մինչ այն «ազատամիտ հայեացքների տէր» ճանաչուած Մարթան և հեռանում եղբօր տանից:

Ինչպէս տեսնում էք, պ. Շիրվանզադէն շօշափում է ըստ երևոյթին մի շատ ժամանակակից հարց և Ալավերտեանի բերանով պաշտպան է դուրս գալիս մի լիովին մարդասէր և ազատամիտ գաղափարի: Ալավերտեանի վարմունքն ու տրամաբանութիւնը ինձ թւում է, որ կատարելապէս արձագանք գտան հանդիսականների մեծամասնութեան սրտում, քանի որ պիեսան մեծ աջողութիւն ունեցաւ և անվերջ ծափերու առիթ տուաւ:

Դա, ինչպէս տեսնում էք, կնոջ իրաւունքների հաւասարման խնդիրն է մարդկանց իրաւունքներին: Այդ հարցն անյայտ և անձանօք չէր մարդկութեան, բայց այն ձևով, ինչպէս մենք տեսանք այս խաղում, կարծեմ մեզանում դեռ ոչ ոք չի՝ շօշափել:

Մենք խնդիրը պարզելու համար ստիպուած ենք մի քիչ շեղուիլ գրական-գեղարուեստական կողմից և ուզում ենք քննադատութեան առնել այս թատերգութեան լոկ գաղափարը՝ գիտական և ընկերական տեսակէտներից, գաղափար, որ այնքան թերուղէմ խօսակցութիւնների առիթ տուաւ հասարակութեան մէջ:

Երբ մենք մարդկութեան երկու սեռի հաւասարութեան հարցն ենք դնում իրաւունքների մէջ, պէտք է, անտարակոյս, միևնոյն հարցը դնենք

և նրանց պարտականությունների, և նրանց էութեան ու կոչման մեջ.- եթէ մենք ուզում ենք խնդրին լուրջ վերաբերուել, պէտք է ուսումնասիրենք, թէ ի՞նչ է կինն ըստ էութեան և ի՞նչ է տղամարդն ըստ էութեան, և ապա միայն, դարերի և հազարատր դարերի մշակած համայնական կազմը տապալելու ջանանք: Մենք պիտի խորամուխ լինինք պարզելու և հասկանալու, թէ մեր պահանջած իրաւունքներու հաւասարութիւնը բոլորում է արդեօք իրերի անհրաժեշտութիւնից, մի պարտք չէ՞ նա արդեօք, մի գոհողութիւն կամ զրկանք չէ՞ մի կամ միւս կողմի համար:

Մենք պէտք է դիմենք բնութեանը, որովհետև չկայ մի աւելի անողորմ անաշտ դատաւոր քան բնութիւնը, իմանալու համար թէ ի՞նչ է տուել նա մեզ և ի՞նչ կանանց: Այդ ամէնը տեսնելուց և ճանչնալուց յետոյ միայն երբ մենք կանգնած ենք բնական, հաստատուն և յաւիտենական օրէնքների վրայ, հիմնենք մեր շէնքը, որ Աւետարանի ասածի նման, «ոչ հողմից տատանուի, ոչ անձրևից փուլ գայ»:

Հարցն այստեղ բաւական նեղ է դրուած: Շիրվանգադէն շօշափել է միայն խնդրի սեռական մասը, ուստի մենք էլ պիտի աշխատինք դորանից շատ չհեռանալ, կարելոյն չափ կանգնելով գիտական հողին վրայ: Արդ, Դարւինը, որի հեղինակութիւնը այսպիսի խնդիրներում վեր է ամեն կասկածից, ասում է որ «արուների սեռական ցանկութիւններն, համարեա բոլոր տեսակներում, աւելի զօրեղ, աւելի ուժգին են քան էգերինը». Լօմբրօզօն, կանանց ամենատաղանդաւոր ուսումնասիրողներից մինը, համաձայնելով Դարւինի հետ՝ պնդում է, որ բազմաթիւ կանայք անձնատուր են լինում համարեա առանց հաճոյքի, և սա հաստատում է թէ՛ փորձառու տղամարդկանց և թէ՛ յայտնի կանանց խոստովանութիւններով: Նա ի միջի այլ բազմաթիւ վկայութիւնների բերում է Մերգիի խօսքերը, թէ «կինը ցանկանում է սիրուիլ տղամարդուց, բայց անձնատուր է լինում ինչպէս մի գոհ. ես ճանաչում եմ շատերին, որոնք զգում են զուգակցութիւնից, թէև պաշտում են իրանց ամուսիններին, ճանաչում եմ օրիորդների, որոնք բախտ և ուրախութիւն էին որոնում ամուսնութեան մեջ, բայց որոնք միայն ձանձրոյթ գտան այնտեղ...»

Միշլէն ասում է, որ «յիմար են, որոնք կարծում են, թէ կինն անձնատուր է լինում ֆիզիքական սիրուց դրդուած: Փորձառու մարդկանց

շատ լաւ յայտնի է, որ կնոջ յաղթելու առաջին պայմանն է հաճոյակատարութիւնն ու բարութիւնը»:

Մարդը երբէք նպատակ չէ կնոջ համար, այլ միջոց. կնոջ նպատակն է զաւակը. սա այնքան գեղեցիկ կերպով արտայայտուած է Աստուածաշունչի մէջ, ուր անգաւակ Հռաքելը գոռում է Յակոբ նահապետի երեսին. «Տուր ինձ մի որդի, թէ չէ ես կը մեռնիմ»: «Մարդը կնոջ համար մի հովանաւոր է լոկ և իւր զաւակների հայրը», -ասում է Լոմբրոզօն:

Մեռական մուազ հաճոյքն է պատճառ, որ շատ օրիորդներ մի անգամ սխալուելուց յետոյ, հիասթափ՝ երևակայած պատրանքից, դադարում են այնուհետև մոլութիւնից:

Այդ ամենի հետ, կնոջ հոգւոյն մէջ կան գծեր, որ տղամարդու համար միանգամայն անհասկանալի են, ինչպէս օրինակ «կուսութեան զգացումը»: Դա կնոջ համար թագ ու պարծանք է, և այնքան խոր ու արմատական է այդ զգացումը, որ շատեր, ամուսնացած օրիորդներ, հրաժարում են առագաստից իրանց սեփական ամուսինների հետ: Բոլոր ամուսնացած կանայք կարող են հաստատել, որ կանանց մեծամասնութիւնն էլ երկար ժամանակ իրանց ամուսիններին չեն կարողանում ներել այն, որ մոքա ամուսնու ձեռքով զրկուել են այնպիսի մի թանկագին գանձից, ինչպիսին է կուսութիւնը: Միայն տարիներն ու զաւակներն են, որ մոռանալ են տալիս կնոջ իւր անգնահատելի կորուստը: Այդ է ահա պատճառը, որ բոլոր կուլտուրական լեզուները երկու բառ ունին ամուսնացած և ամուրի կանանց համար. դրանք իրանց զգացումներով և էութեամբ միանգամայն տարբեր էակներ են. մոռանցից մին «օրիորդ» է, իսկ միւսը «կին»: Ո՛չ մի կուլտուրական լեզու այսպիսի տարբեր բառեր չունի ամուրի և ամուսնացած տղամարդու համար:

Այդ ամենը կարծես շեշտելու և երկու սեռերի մէջ եղած խրամատը հաստատ և անխուսափելի անելու համար, բնութիւնը մի ֆիզիքական պատուար է դրել, որի միւս կողմը յղութեան ուրուականն է կանգնած իր սարսափներով: Այս բոլորը միասին համախմբուած են պաշտպանելու մի թոյլ էակի անարատութիւնը՝ գրեթէ մի անառիկ բերդի նման...

Այդպէ՞ս է արդեօք ինքը՝ տղամարդը:

Նրան միանգամայն խորթ ու անծանօթ են այն ամենը ինչ որ տեսանք կնոջ հոգու և մարմնի մէջ: Կուսական անարատութեան զգացման հետքն անգամ չկայ տղամարդու մէջ, որին ընդհակառակը, բնութիւնը պարզեւէ է մի տաք ու կրքոտ խառնուածք, նախաձեռնութեան ոգի, վառվռուն և անգուսպ սեռական ցանկութիւն և բուռն վաւաչոտ հաճոյք: Դարւիւնի կարծիքը այսպիսի խնդիրներում գրեթէ օրէնքի նշանակութիւն ունի. «արուն է միշտ, ասում է նա, որ որոնում է էգին». և ի նկատի ունեցէ՛ք, այդ ուժգին կիրքն ու բուռն ցանկութիւնը բնութեան կողմից չեն սահմանափակուած ո՛չ մի պատուարով, ո՛չ ֆիզիքական նեղութիւն և տանջանք, ո՛չ յղութեան սարսափ, ո՛չ զաւակների հոգս և ո՛չ էլ նոյն իսկ մի մեծ բարոյական զրկանք...

Այսպէս ուրեմն, ինքը, բնութիւնը մի մեծ խրամատ է դրել մեր երազած հաւասարութեան մէջ: Կնոջ ցանկութիւնները նուազ են, կիրքը սահմանափակ, սեռական գրգիռն ու հաճոյքը չափաւոր, օժտուած՝ կուսական զգացումով հոգեպէս, և ապահովուած ֆիզիքապէս,- այնինչ տղամարդունը ամէն բանով բուռն, զօրեղ, գերազանց, անգուսպ՝ առանց որ և է բարոյական կամ ֆիզիքական խոշոր պատասխանատւութեան ու կորուստի:

Ո՞վ ուրեմն այս երկու արարածներից ընդունակ է համբերող ու ժուժկալ լինելու... և եթէ մենք բաց ենք անում համբերութեան ու զգաստութեան սահմանները երկուսի առաջ հաւասարապէս, մի անարդարութիւն չէ՞ դա արդեօք բնութեան օրէնքների կամ հէնց հաւասարութեան դէմ, որպէս սկզբունք. այնպէս որ, մեր կրթուած ու դիպլօմաւոր Ալավերտեանը, որ մասնագէտ է մարդկային օրէնքներին և ճարտար իրաւաբան, բնութեան օրէնքներին և իրաւունքներին՝ որոնք յալիտեանական են և անխախտելի, միանգամայն անտեղեակ է երևում:

Բայց կարելի է առարկել, որ մարդասիրութիւնն ու ներքին ձայնը մեզ դրդում են իսկի ուշադրութեան չառնել բնութեան բիրտ ու կոպիտ օրէնքները: Իսկ մեր ներքին ձայնը չի կարող չհամաձայնիլ Ալավերտեանի հետ, որը մեծահոգութեամբ ներում է իր ամուսնու յանցանքը: Մեր դարու լայն ու մարդասէր գաղափարները չեն կարող թոյլ տալ, որ մարդը վայելի ամէն տեսակ ազատութիւն, իսկ կինը ճնշուած ու փակուած մնայ հարեմական կապանքների տակ: Դա դէմ է արդա-

րութեան և հաւասարութեան ամենատարրական հասկացողութեանը, որ եւրոպական լուսաւորութիւնը մտցրել է մեր մէջ:

Ալավերտեանի խիղճն ու բանականութիւնը պահանջում էին, որ նա տուաւ ու փութաւ լռել, ու ներէ, այն պատճառով, որ ինքն էլ անարատ մէկը չէ եղել. «Ես հաւասարութեան երկրպագու եմ, մտածում է նա, կիներս յանցանք և սխալ է գործել, բայց դէ՛ ես էլ մի բարի պտուղ չեմ եղել. հետևաբար մենք քուիտ ենք.- ըստ առածի՝ այժը կտաւէն դուրս»:

Այս գաղափարը կայ օղի, մամուլի և քիչ թէ շատ կրթուած հասարակութեան մէջ, բայց և այնպէս, ամէն մարդ, ինքն իրան, իր սրտի խորքում, մի քիչ այլ կերպ է մտածում: Հեշտ է, իհարկէ, թատրոնում ոգևորուիլ ու ծափահարել ներող և ազատամիտ հերոսին, բայց տոյն «դրաման» ունենալ իր սեփական տանը, տեսնել իւր մօրը, կնոջը, հարսին և կամ քրոջը Եզիմէի դերում, կարծեմ մեզանից ոչ ոք չէր ցանկանայ:

Ի՞նչ է պատճառը, միթէ մեր խելքն ու բանականութիւնը, մեր խիղճն ու համոզումները, մեր ուսումն ու կրթութիւնը բաւական չե՞ն խելդդելու մեր մէջ գազանը և թօթափելու դարերով խտացած բնագործ... և եթէ կայ մի այդպիսի կռիւ կամ տարակուսանք, չունի՞ դա արդեօք մի խոր, ընկերական-բարոյական հիմունք, որը մենք չենք կարող ճնշել հակառակ մեր բոլոր ճիգ ու ջանքերին: Գունի՞ն արդեօք Ալավերտեանի հոգեկան տանջանքները խոր բարոյական պատճառներ: Սի պատրանք չե՞ արդեօք, որ այդ ամէնը մենք վերագրում ենք գազանի չար բնագոյին, որ բղխում է կոյր նախանձից և սնունդ առնում արուի խանդոտ հոգու խորքերում...

Կան գուցէ մեր գիտակցութեան մէջ աղօտ մնացած կայծեր, որոնց գոյութիւնը մենք ուրանալ չենք կարող՝ հակառակ մեր բոլոր համոզումներին:

Արդ, քննենք ու վերլուծենք Ալավերտեանի տրամաբանութիւնը և տեսնենք, համապատասխանո՞ւմ է դա նրա դաւանած հաւասարութեան և մարդասիրութեան սկզբունքներին:

«Ես կնոջս ներում եմ». ինչո՞ւ. որովհետև ես ինքս արատաւոր եմ,- այն ինչ որ ինձ ներելի է, ներելի է եւ նորան, քանի որ մենք հաւասար ենք»:

Շարունակենք այս տրամաբանութիւնը.- «Ես արատաւոր եմ, հետևաբար կիներս էլ կարող է արատաւոր լինել. ես աւագակ եմ, իրաւ-

ունք եմ տալիս նոյնը լինելու ե՛ւ կնոջս. անառակ եմ, թող կիմս էլ անառակ լինի, հրէշ եմ, կարող է կիմս էլ հրէշ դառնալ...»:

Այստեղ անմիջապէս յառաջ է գալիս մի հարց. ես իրաւութեամբ ունի՞մ արդեօք «արատատուր», «կեղտոտ» և «հրէշ» լինելու.- ո՛չ:- Ինչպէ՞ս հապա իմ չունեցածը ես իրաւունք եմ համարում տալու ուրիշին: Սա մի ակնեւր անիմաստութիւն է: Եւ ի՞նչ է իմ տուածն ըստ էութեան. իմ արատը, իմ կեղտը և իմ ապականութիւնը: Ես ստոր եմ եղել, ես քերացել եմ վարք ու բարքի մէջ և ես թոյլ եմ տալիս նոյն քերութիւններն իմ կնոջը. ես հաւասարեցնում եմ նրան իմ արատի, կեղտի, քերութեան և ա՛յն ամենի հետ, ինչ որ ինքս իբրև բարոյական մարդ իրաւունք չունիմ անելու: Պարզ ի պարզոյ ես նորան տալիս եմ անբարոյականութիւն: Իմ տուածը մի դրական արժանիք չէ՛, այլ բացասական կողմը: Հետևաբար այստեղ իրաւունքի մասին խօսք անգամ լինել չի՛ կարող. ա՛յն ինչ որ արդիւնք է մեր թուլութեան ու մեղկութեան տալիս ենք վայելելու մեր կնոջը: Բարձրացում, զարգացում չէ դա կնոջ համար, այլ մի կատարեալ անկում:

Կը ներե՞ր արդեօք Ալավերտեանը, եթէ ինքն անարատ լինէր, եթէ նա իր մարմնի և հոգու բոլոր զանձերը պահած լինէր մի անարատ ընտանիք կազմելու համար: Այն ինչ որ նա է տրամաբանում, մի կատարեալ ծաղր է հաւասարութեան համար. «Ես մեղաւոր եմ եղել, կարող էր կիմս էլ նոյնը լինել».- Կիմս ուրեմն արդարանում է իմ մեղքով: Ուրիշ խօսքով, մենք ներում ենք ոչ թէ մեր կնոջը, այլ մեզ միայն: Նորա յանցանքը ես ծածկում եմ իմիկով. ներում եմ նորան, որովհետև ինքս ինձ ներել եմ... Այս ամէնը ինչպէս տեսնում էք, բուրում է մի կատարեալ մեղկութիւն, մի ստոր եսամոլութիւն, և մի շնական ծաղր... Հերիք չէ որ ես յանցաւոր եմ, ես համարձակում եմ «ներելու» նաև ուրիշին և այդ ուրիշը դեռ «14 շաբի էլ պարտք է մնում ինձ», և այս ամէնը ես ծախում եմ հաւասարութեան, վեհանձնութեան և մարդասիրութեան անուններով...

Սա ինչպէս տեսնում էք, մի շա՛տ ձեռնտու առուտուր է տղամարդու համար. «Ես չեմ կարող քեզ չափ մաքուր լինել, բայց թոյլ եմ տալիս, մինչև անգամ մեծահոգութեամբ ներում եմ, որ դուն ինձ չափ կեղտոտ լինես»:

Ամեն մի անարատ կին պիտի սոսկար այս քարոզից և պիտի բողոքեր մի այդպիսի բարոյականության դեմ, որը նորան ուղղակի դեպի անկումն է տանում: Իբրև շնորհալի դիտող, պ. Շիրվանզադեի աչքից չէ վրիպել մաքուր կնոջ այդ զգացումը: Երբ Ալավերտեան «մեծահոգությամբ ներում է իր կնոջը», նորա քոյրը Մարթան, որ մինչ այդ ատեն «ազատամիտ և լայն հայեացքների տէր մի կին» էր, հեռանում է եղբոր տանից, ասելով. «Մոռանում ես կնոջդ յանցանքը, մոռացիր և ինձ»: Բայց այդ արդարացի, հոգեբանօրէն միանգամայն ճիշդ, հետևաբար և բարձր գեղարուեստական գիծը պիեսայի մէջ ծաղրուած է տաղանդաւոր կերպով, որովհետև դա հեղինակի հիմնական հայեացքին հակառակ է, ուստի իբրև Ալավերտեանի բարձր բարոյականության մի ողորմելի կոնտրաստ ներկայացուած է այնպէս, որ ամբողջ հասարակութեան ծիծաղն է շարժում: Մարթան չէ կարողանում փաստաբանել և ապացուցանել, բայց նա իր հոգու անարատութեամբ շա՛տ աւելի խոր և շա՛տ աւելի հեռուն էր տեսնում քան իւր եղբայրը: Իբրև մաքուր կին, նա ամբողջ էութեամբ զգում էր, որ այդ ներումը եթէ համայնական բնութիւն ընդունէ, պիտի կնոջ ամենասրբազան իրաւունքների հիմը փորէ, լայն ճանապարհ բանալով Գաբօնեւրի առջև. տուժողը այդպիսի դէպքերում պիտի լինեն միմիայն ամենաազնիւ անհատները... Ինքը, «ազատամիտ, կրթուած և լայն հայեացքների տէր» Մարթան, շա՛տ լաւ էր զգում, որ դա իրաւունք չէ, այլ պարտազանցութիւն, մինչ նորա իրաւաբան և այսպիսի հարցերում իրաւագէտ եղբայրը դուրս գալիս է ոչ միայն տգէտ, այլ գրեթէ անբարոյական մէկը, որ իր պարտազանցութիւնը ուրիշին տալիս է իբրև իրաւունք: - Այլ կերպ պիտի զգար ու մտածէր մեր վեհանձն պարոնը, եթէ ինքն էլ Մարթայի նման անարատ և անմեղ լինէր...

Պ. Շիրվանզադէն հարցն այստեղ բաւական նեղ է դրել: Նա վերցրել է կնոջ սխալը նորա ամուսնութիւնից առաջ, որ, ինձ թում է, բաւական հազուադէպ երևոյթ է մեզանում: Բայց հազուադէպ չէ, մինչև անգամ շա՛տ յաճախադէպ է կնոջ սխալը ե՛ւ ամուսնութեան մէջ...

Ռուս հեղինակ Ն. Դանչենկօն այդպէս էլ դնում է հարցը իր «Կեանքի արժէքը» պիեսայում, ուր հերոսուհի տիկինը առանց որ և է հիմնական պատճառների դաւաճանում է ամուսնուն. սիրականը ինք-

նասպան է լինում և ամուսինը ներում է յանցաւոր կնոջը, վախճանալով՝ որ նա էլ կարող է անձնասպանութիւն գործել:

Ինձ քում է, որ պ. Շիրվանզադէն այս խաղը գրել է ռուս կեանքի և գրականութեան ազդեցութեան տակ, ուր, պէտք է ասած, ամենալայն և համբերող հայեացքներ են տիրում այսպիսի հարցերի վերաբերեալ: Այլ կերպ է նայում այդ հարցին ժամանակակից դրամատուրգներից մէկը, Ջուդերման: «Հայրենի տան» մէջ (Heumat) ծերունի զինուորականը հարցափորձի է ենթարկում իր դուստր Մագտային և միևնոյն ժամանակ պատրաստում է սպանել իրան կամ դստեր, սակայն երբ իմանում է նորա արատաւոր լինելը, կաթուածահար մեռնում է: Ի նկատի ունեցէք, որ սա մի հայր է և ոչ մի ամուսին, և չի կարողանում ներել մի աղջկայ, որը ներուելու բոլոր հանգամանքներն ունէր. նա մի դերասանուհի էր, իւր հայեացքներով մի ազատ թռչուն...

Միայն գրականութիւնն ու մամուլը չէ, որ զբաղում է այս հարցով: Դրա վրայ երկար ժամանակ գլուխ են ջարդել նաև օրէնսդիրներն ու կառավարութիւնները:

Ճիշդ Շիրվանզադէի հաւասարութեան գաղափարից դրդուած, ի նկատի ունենալով մանաւանդ անմեղ մանուկների վիճակը, Գերմանիայում մի 10-15 տարի սրանից առաջ մի օրէնք հրատարակեցին, որով ապօրինի զաւակներու հայրերը պարտաւորում էին հոգալու իրենց որդոց ապրուստը: Սակայն, այդ մարդասէր օրէնքը մի զարմանալի հետևանք ունեցաւ: Դրա հրատարակումից յետոյ ապօրինի ծնունդների թիւը զարմանալի կերպով սկսեց աճել: Մինչ այն ժուժկալ ու համեստ Գերմանուհիք սկսեցին իրանց վրէժն առնել տղամարդկանցից՝ բռնցնելով նրանց վզին բազմաթիւ երեխաներ, որոնց կերակրել էր հարկաւոր:

Հաւասարական այդ դառն փորձից յետոյ, օրէնքն ստիպուած էին փոխելու...

Արդ, պ. Շիրվանզադէի գեղեցիկ ու մարդասիրական թատերգութիւնից յետոյ, որին ա՛յնպիսի ջերմութեամբ ծափահարեցինք ամենքս, պատրա՞ստ ենք արդեօք ընդունելու և այն «սիրալիրիզ»ները, որ Գերմանուհիների մման հայ օրիորդներն էլ պիտի ցանկային անել իրանց սիրականներին...

Մենք հարցը քննեցինք, առաջին՝ բնագիտական տեսակետով, և գտանք, որ այս խնդրում կնոջ և մարդու հաւասարութեան մասին խօսք լինել չի կարող: Երկրորդ՝ նոյն հարցը մենք քննեցինք բարոյական տեսակետից, և տեսանք, որ Ալավերտեանի տուածը իւր կնոջ իւր իրաւունքները չեն այլ իւր պարտագանցութիւնն ու ցոփութիւնը, և այստեղ իրաւունքի կամ արդարութեան մասին խօսք անգամ չի կարող լինել: Երրորդ՝ խնդիրը նկատեցինք իւր հետևանքների գործնական տեսակետով և գտանք, որ դա լիովին վտանգատուր է: Ուրեմն, եզրակացութիւն.- խաղի հիմնական միտքը ոչ միայն սխալ, այլ և վտանգատուր է ամեն տեսակետով:- Վերցնելով մի բացառիկ երևոյթ, հեղինակը մեզ մի բարոյականութիւն է քարոզում, որ արդիւնք է թիւրիմացութեան և իրան հետ միասին մեզ էլ այն համոզումն է ներշնչում, թէ Ալավերտեանի կատարածը մի օրինակելի և վեհանձն գործ էր: Այս սխալը, ինչպէս տեսանք, միայն պ. Շիրվանզադէինը չէ. այդ սխալը կատարել են շատ մեծ ու փոքր եւրոպական հեղինակներ. կատարել է, ինչպէս տեսանք, և գերմանական Րայխստակը, ուր Բիսմարկի նման գլուխներ էին իշխում:

Թիֆլիս

3. Գ. Այս թատրերգութեան գեղարուեստական մասին մենք չենք խօսում. նրա առաւելութիւններն այնքան շատ են, որ պակասութիւններն ու թերութիւնները կարելի է միանգամայն անտես առնել: Հեղինակը մշակում է իր գործը՝ երկրորդ ներկայացման համար, որից յետոյ, եթէ ուրիշները մեզ չկանխեն, գուցէ կարողանանք մեր համեստ նկատողութիւններն անել: Խաղի աջողութեան ամենաեռանդուն ծափահարողներից միւսն էինք մենք, տեսնելով մեր առաջին վիպասանին մէջ և առաջնակարգ թատրերգակի շնորհք: Թատրոնից մենք հեռացանք այն հաճելի գիտակցութեամբ, որ Սունդուկեանի տեղը թափուր չի մնալու այսուհետև:

Գ. Վ.

«Անահիտ», 1902 թ., թիւ 3, էջ 60-61, թիւ 4, էջ 87-89

Դ. ԱՂԱՅԱՆՑ

Հեշտ չէ երկատողով բնորոշել մի դեմք, որ գործել է քառասուն տարի շարունակ մեր կյանքի մտավոր ասպարիզում որպես խոշոր գրական տաղանդ, մանկավարժ, գրող ու մտածող:

Աղայանը մեր նորաշեն լեզվի մեջ մտրել է գյուղի և բնության ծոցում բուսած ծաղիկներից ամենեն հոտավետը, ամենեն գունավորն ու հրապուրիչը:

Նա մի չքնաղ լեզվով թոթովել է հայ մանկան հետ, հեգել ու վանկել, երգել է և նվագել. թափառել է հեքիաթների զառանցական աշխարհում և հրճվել, ցած է եկել այցելելու իր երկրի հովվին ու մանկալին և նկարագրել: Երգել է հայ գյուղացու ճախարակն ու խնոցին, թանն ու մածնափրթոշը, գութանն ու արորը:

Ծիտ ու կաշաղակը, սոխակն ու աղունակը, հայրենի բնությունը՝ իր բիրիական վեհության՝ նա նկարագրել է մի անկեղծ, մի բնական այնպիսի հոգեզմայլ հիացմունքով, որպիսին կարող է ունենալ մանկական ջինջ ու մաքուր հոգին...

Ես ողջունում եմ ահա այդ ջինջ, այդ անարատ և մանկական հոգին այս վաթսունամյա ծերունու մեջ և ցանկանում եմ, որ իր դասագրքերի ու երգերի հետ այդ հոգու մաքուր և անարատ թռիչքն հավիտենապես ժառանգություն մնա հայ մանկանը և հայ հասարակությանը: Այսդպիսի հոգիների մենք շատ ենք կարոտ:

1902

Ծանոթագրություն.

Ինչպես Շիրվանզադեի այս հոդվածը, նույնպես և հետագա մի շարք հոդվածներ (Հովի. Թումանյանի երկրորդ հոդվածը, այլև Ավ. Արասխանյանի, Գր. Վանցյանի, Սարիբեկ Տեր-Մելիքսեդեկյանի հոդվածները), և Ջիվանու, Հար. Թումանյանի և Ավետիք Համբարձումյանի ոտանավորները՝ գրված են եղել Աղայանի հորեղյանի առիթով ու տպագրվել էին «Տարագ» հանդեսի առանձին հորեղյանական համարում, բայց այդ համարը գրաքննությունն արգելում և թույլ չի տալիս, որ լույս տեսնի հորեղյանի օրերին: «Տարագ»-ի խմբագիր և

հրատարակիչ Տ. Նազարյանը պահում է բոլոր այդ նյութերը և նույն հաջորդականությամբ հրատարակում իր հանդեսի 1911 թ. մայիս – հունիսյան միացյալ համարում՝ նվիրված Աղայանի հիշատակին, նրա մահվան առթիվ գրված այլ նյութերի հետ միասին: Տե՛ս «Տարագ»-ի հոբելյանական այդ համարի առաջին էջի լուսանկարը: Այդ էջի վերևի ձախ անկյունում և ներքևում՝ խմբագրությունը տվել է հետևյալ տեղեկանք-ծանոթագրությունը.

«Դ. Աղայանի հոբելյանին, կիրակի, 19 մայիսի, 1902 թ. «Տարագ»-ի համար շարված, բայց լույս չտեսած հոդվածները»:

«Ֆանտազիա» այգում մայիսի 19-ին Դ. Աղայանին ողջունելով, Տ. Նազարյան դափնյա պսակով պճնազարդեց հոբելյարի ակեզարդ գլուխը՝ մատուցանելով նրան այդ օրվա առիթով «Տարագ»-ի N-ի հոդվածները՝ ցենզուրայից ամբողջովին ջնջված և չթույլատրված հրատարակվելու, հոբելյանը (Գալիցիոնի օրով) արգելված լինելու պատճառով:

Իհարկե, ինչպես տեսնում ենք, այդ հոդվածներն իրենց բնույթով ու բովանդակությամբ քաղաքական բնույթ չունեն. դրանց հեղինակները որևէ բացարձակ քննադատական խոսք չեն ասում տիրող ռեակցիոն ռեժիմին, հայ ժողովրդի ու նրա առաջադեմ մտավորականության, հայ մշակույթի նկատմամբ դարերի դաժան ճնշման և այդ նողկալի ռեժիմի դեմ պայքարելու մասին, բայց և այնպես «Տարագ»-ի հիշյալ հոբելյանական համարը, որ այդ հոդվածներից էր կազմված՝ արգելվել է:

Ղազարոս Աղայանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 1967, էջ 94, 495:

ՓԻԼՍՈՓԱՅԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ

Սրանից հազարաւոր տարիներ առաջ, Գանգէսի սրբազան ափերին, հնդիկ փիլիսոփաները խորասուզուած յանդուգն մտածութիւնների մէջ, կեանքի, տիեզերքի, իրերի, Աստուծոյ և հոգւոյ մասին, մի մեծ-տիեզերական գիտ արին: Մի գիտ, որ իւր ահռելիութեամբ մեր ամենօրեայ փորձերին արմատօրէն հակասում է: Այդ կրօնաւոր փիլիսոփաները գտան, որ աշխարհը գոյութիւն չունի, այլ միայն հոգին, միայն մարդկային գիտակցութիւնը:

Իրանց մտածման էքստազի մէջ նրանք մոռացան իրանց տեսածը, լսածը, կերածը և շօշափածը, նոքա յայտարարեցին և ուրացան իրերի գոյութիւնը և ամբողջ աշխարհը հրատարակեցին երևակայական:

Մարդկային միտքը այդպիսի մի հսկայական սխալ գուցէ երբեք չէր գործել: Կուլտուրայի ամենաստոր աստիճանի վերայ կանգնած պապուսար և տիեզերքի օրէնքները քննող ու պարզաբանող հանճարը միաժամանակ հակառակ պիտի լինին այդ մոլար մտքին: - Ի՞նչպէս թէ չկա՛յ աշխարհը. հապա արևը, որ ամեն օր մեր աչքերով ենք տեսնում, հապա աստեղազարդ երկինքը, ապա մայիսուայ բնութեան հրաշալիքը կամ ձմեռնային բուքի արհաւիրքը, ապա ձիւն ու կարկուտը, անձրևն ու տարափը, ապա հսկայափառ, ալեգարդ Հիմալայի կատարները և սոսկալի, կիզիչ Սահարայի տապը, վերջապէս մեր անձը, մեր եսը, մեր ուրախութիւնն ու քրքիջը, մեր ահն ու սարսափը, ի՞նչպէս կարող է այս ամենը երևակայական լինել, ի՞նչպէս կարող է սա գոյութիւն չունենալ:

Այդ է մանուկ երևակայութեան հսկաճառութիւնը: Տե՛ս քեզ ինչպէս կ'պատասխանէ գիտունի հանճարը, որ իւր գրասենեակում նստած, ապաւինելով լո՛կ արտաքին օրէնքների անշեղ ուսումնասիրութեանը, գուշակում է ապագան. նախօրօք յայտարարում է անծանօթ տարրերի գոյութիւնը, կանխօրէն որոշում է երկնային մարմինների խաւարման օրը, ժամը, տեղը և վայրկեանը... լծում է էլեքտրականութիւնը, կառավարում է բնութեան ուժերը, ճանաչում է այդ ուժերի նիւթն և էութիւնը, հեռադիտակով զինուած, կարդում է երկնային մար-

միւնների ընթացքը և մանրադիտակի մէջ բաց է անում մի ամբողջ նոր աշխարհ, որ անտեսանելի է մեր հասարակ աչքին: Այդ գիտնականը քեզ և հնդիկ փիլիսոփային ապուշ կանուանէ, եթէ մի վայրկեան, մի ըրպէ կասկած յայտնես արտաքին իրերի գոյութեան մասին և մոլորուած ինչ որ մի հոգու գոյութեամբ յափշտակուես: Հոգի, որ ոչ ոքին չի՛ երևացել, որին ոչ ոք չի՛ տեսել, չի՛ շօշափել, փորձի և քննութեան ոչ ոք չի ենթարկել, որը ո՛չ քիմիական անալիզների է ենթարկում, ո՛չ ֆիզիքական չափ ու կշիռների...

Դա մի խելառ միտք է, մարդկային բանականութեան մի ցաւալի սխալը, ուրանալ ակներևը, իրականը, և ենթադրել ինչ որ մի երևակայական գրեթէ զառանցական աշխարհ:

Հնդկաստանի տաք ու բոցավառ կլիման, հարաւի բնութիւնը իւր վայրենի փարթամութեամբ, Հիմալայի հրաշալի կատարները, սրբազան Գանգէսի կապոյտ ալիքները և կրօնական էքստազով վառուած երևակայութիւնը միայն կարող էին մի այդպիսի ցնորալի միտք արտադրել: Մի պաղ ու սառնարիւն միտք, մի ճիշտ և հաստատուն տրամաբանութիւն չի՛ կարող համակրել մի այդպիսի անկայուն կարծիքի:-

Եւ դորան հակասում է ներկայի գիտութիւնն իւր բոլոր փարթամութեամբ: Բնական գիտութիւնները, որ այսօր առաջադիմութեան հսկայական քայլեր են արել, պարտական են այն հասարակ իրողութեանը, որ կա՛յ արտաքին աշխարհ. այդ աշխարհը կառավարում է որոշ օրէնքներով և հէնց այդ օրէնքների ուսումնասիրութեանն է նուիրուած մեր իմացականութիւնը: Երբ մենք քննում ենք մի երևոյթ, ճանաչում ենք նրա առաջանալու պայմանները, որոշում, գտնում ենք նորա պատճառական առնչութիւնը մնացեալ երևոյթների մէջ, դորանով մենք գործ ունինք միմիայն արտաքին աշխարհի հետ, ճանաչում ենք միայն արտաքին երևոյթների փոխադարձ յարաբերութիւնը: Այդ է բնական գիտութիւնների ծուծն և էութիւնը:

Գտնել տիեզերական երևոյթների մէջ թագաւորող կապը, ցոյց տալ նրանց պատճառական անհրաժեշտութիւնը, բոլոր երևոյթների բարդութիւնները լուծել, հալել մի արմատական երևոյթի մէջ, որ ծնող ու բղիտող է բոլոր մնացեալին, ահա բնական գիտութիւնների նպատակը: Երբ արևը ցոլում է երկնքում և ովկիանոսը մռնչում է կատա-

դուքեամբ, երբ մանկան շրթին անմեղ ժպիտն է խաղում և կուսի սիրտը մի անորոշ տենչանք է մորմոքում, այդ բոլորը բնագետ-փիլիսոփան մի տիեզերական ընդհանուր օրենքով է ուզում բացատրել. ամեն ինչ նիւթ է, ամեն ինչ ոյժ է. և այդ ամենը նիւթի մասնիկների շարժում. թէ՛ մանկան ժպիտը, թէ կոյսի տենչանքը, թէ արևի ճաճանչը կամ ով-կիսանի մռունչը... արդիւնք են նիւթի շարժման...

Չկայ մի այլ աշխարհի բացի արտաքին աշխարհից, չկայ մի այլ երևոյթ, որ նիւթից անկախ գոյութիւն ունենար: Այս է բնագետի հայեացքը. սորա յանդիման ամեն մի առարկութիւն թւում է մի անհիմն գառանցանք, որովհետև հենց այս հիմունքներով զինուած, բնագիտութիւնը վերջին 50 տարիներում այնպիսի առաջադիմութիւն ցոյց տուաւ, այնպիսի հսկայական քայլեր արաւ, որի առաջ ափ ի բերան պիտի մնայ մարդկային հաճմարի ամենայանդուզն երևակայութիւնը:

Սակայն, իրերի գոյութիւնը մերժող փիլիսոփան անդրդուելի է. նա փիլիսոփաներին յատուկ երկայնմտութեամբ լսում է մեր առարկութիւնները և միայն սպասում իւր հերթին, որ մեր կառուցած շինութիւնը մէկիկ-մէկիկ հիմնատապալ անէ:

Բնագետը, որ իւր դիտողութիւններն ուղղում է դէպի արտաքին աշխարհը և բացատրում է այնտեղ առաջացած երևոյթները, կատարում է մի լոկի ենթադրութիւն, որպէս թէ բացատրում է երևոյթները:

Վերցրէ՛ք մի երևոյթ, ասենք մարմինների լայնանալը տաքութիւնից, որ յայտնի է բաղանիսում կօշիկները հագնելուն չարչարող ամեն մի անհատի: Տգէտն այդ երևոյթի վրայ ուղեղ չի՛ մաշում. գիտութիւնը, սակայն, դորանից շինում է մի ահագին հարց. դիտում, փորձում է և գալիս է այն համոզման, որ բոլոր մարմինները մի չնչին բացառութեամբ ենթակայ են այդ երևոյթին և դորանից շինում է մի օրէնք:

Մի ուրիշը, նոյն բաղանիքում, աւագանի մէջ զգալով իւր մարմնի թեթևանալը, մանկան հրճուանքով գոռում է էրիկա, գտայ որ մարմինները ջրում կորցնում են իրանց ծանրութեան մի մասը. մի երևոյթ, որ յայտնի է արար աշխարհին:

Այդ երևոյթներին բնագետը կապում և բացատրում է բազմաթիւ այլ երևոյթներ և դորանից առաջանում է գիտութիւն:

Երեխան երբ իր գնդակը վերև է նետում, գիտե՞լ, որ նա ցած պիտի ընկնի: Յայտնի է, որ բոլոր առարկաները ցած են ընկնում. բիրաւոր այգեպաններ այդ երևոյթի շնորհիւ միայն ապրել են կարողանում, քանի որ խնձորները ծառերից դէպի երկինք չեն թռչում, այլ վայր են ընկնում մարդկանց ճաշակին բաւականութիւն տալու համար: Հազարաւոր տարիների ընթացքում այգեպանները չուզեցան օգտուել այդ հանրածանօթ երևոյթից. և մի Նիւթօնի էր վերապահուած դիտել խնձորի անկումը և նրանից ստեղծել մի տիեզերական օրէնք. խնձորը վայր է ընկնում, ուրեմն ցածումը մի ոյժ կայ: Բոլոր առարկաները ցած են ընկնում, ուրեմն այդ ոյժը գոյութիւն ունի ամբողջ երկրի վրայ: Դորանով չի բաւականանում խնձորի հանճարեղ դիտողը. այլ այդ երևոյթը վերագրում է ամբողջ տիեզերքին. և նորանով բացատրում է բիրաւոր երևոյթներ: Այն, որ մեր երկիրը ցած չի գլորում տիեզերական անդունդի մէջ և փշուր կտոր լինում, այն որ մենք ամեն առաւօտ առիթ ունենք արևի ելքով ուրախանալու և ամեն երեկոյ աստղերի ցոլքով հրճուելու, այդ բոլորը խնձորի ճակատագրական անկման հետ համասեռ միևնոյն երևոյթի արդիւնքն է, որ Նիւթօնն անուանում է մարմինների ձգողութեան օրէնք...

Այդ մի հատիկ երևոյթի մէջ իրանց լուծումն են ստանում բիրաւոր մանրիկ երևոյթներ, մենք գիտենք նոցա առաջանալու պատճառը, մեր գիտութեան ծարաւը յագեցած է. մենք ճանաչեցինք բնութեան զարկերակը, որ ծնող է բիրաւոր երևոյթների... այդ մենք անուանում ենք օրէնք...

Ով մի սրամիտ մանկան, կամ մի բոլորովին տգէտ, բայց ընդունակ մարդու հետ գործ է ունեցել, նկատած կլինի, թէ որքան դժուար է բաւարարութիւն տալը նոցա հարցասիրութեան: Փոքրիկ, 6-8 տարեկան մանուկը, որի հարցասիրութիւնն անտակտ միջոցներով չեն բթացրել, երբեմն հարցերի այնպիսի խորութիւն, իրերի պատճառական կապն իմանալու այնպիսի սրութիւն է ցոյց տալիս, որ ամենախելօք մանկավարժն անգամ ձեռնունայն, մի պատասխան ունի միայն տալու. «մեծանաս, կիմանաս»:

Նա մեծանում է և իմանում է մի ողորմելի բա՛ն, որ իրան հարցասիրող ժամացոյցը, որի մէջ մի կենդանի արարած էր որոնում, որի մե-

քենայական կազմն իր փոքրիկ խելապատակով ըմբռնել անկարող էր, մի բարդ կազմութիւն ունի: Այդ ժամացոյցի մէջ դրուած է մի զսպանակ. զսպանակի մէջ ամփոփուած է մարդկային ձեռքի ոյժ. այդ ոյժը կանոնաւոր կերպով ման է ածում ժամացոյցի անիւները. սրանց վրայ ամրացած սլաքները պտոյտ գալով ժամատախտակի վրայ, ցոյց են տալիս տարածութեան մի որոշ չափ: Այդ տարածութիւնը ուղեղի մի բարդ գործողութեամբ մարդը նոյնացրել, նմանեցրել է ժամանակին: Այդ բարդ, հաճաքեղ միջոցներով մենք որոշում ենք ժամանակը:

Եւ հասունացած մանկան ուղեղը գրեթէ բաւականութիւն ստացաւ: Կարելի էր աւելի հեռուն գնալ. կարելի էր ցոյց տալ, որ մեր ձեռքի ոյժը, որ հաղորդում ենք ամեն օր ժամացոյցի զսպանակին լարելիս, ստացել ենք մեր կերակրից - մեր կերակուրը բաղկանում է բոյսերի կամ կենդանիների մարմիններից. իսկ բոյսերը արդիւնք են երկրի տարրերին և արևի գործողութեանը.- արևի, որ շարժիչն ու սնուցիչն է ամեն կենդանական տարրերի, առանց որին չէր կարող գոյութիւն ունենալ ո՛չ մի կենդանի արարած երկրիս երեսին... Մեր այս հաճաքեղ ստեղծագործութիւնը, ժամացոյցն, ուրեմն, պատճառական արդիւնք է արևի գոյութեան,- եթէ չուզենք աւելի հեռու գնալ և նախանիւթն ու նախնական ոյժն յիշատակել:

Վերևը, քարի ընկնելը, տիեզերական մարմինների փոխադարձ կանոնաւորութիւնը և առհասարակ բիւրաւոր մման երևոյթներ Նիւթոնը վերագրում էր մի տիեզերական ոյժի գոյութեանը, որ նա կոչում է ձգողութիւն: Այնտեղ, երևոյթները պարզում, մի յայտարարի են բերում. այստեղ, ժամացոյցի կազմը, որ նոյնպէս բնական-մեքենական օրէնքների արդիւնք է, մենք վերլուծեցինք, բարդեցինք, բաց արինք երևոյթների մի շղթայ, որ հասնում է մինչև արևը, մինչև ինքը յաւիտենական նիւթը: Երկուսն էլ մի նպատակով միայն. մարդկային հոգու հարցասէր յատկութեանը բաւականութիւն տալու համար միայն: Այս է ահա ամեն մի գիտութեան ուղն ու ծուծը. սորանով է, որ մարդկութեան մեծամասնութիւնը բաւականութիւն է ստանում իր հետաքրքիր հարցասիրութեանը... Միայն սրամիտ մանուկը դարձեալ չի հասկանում ժամացոյցի շարժման պատճառը և փիլիսոփան սկսում է համոզուիլ, որ մարդկային իմացականութիւնը սահմանափակ, սոսկալի սահմանափակ է:

Եւ տեսէ՛ք, ի՞նչ միամիտ բացատրութիւն. քարը ցած է ընկնում, ես վերագրում էի Աստուծոյ նախասահման որոշման, մի ուրիշը սատանայի, մի երրորդն իսկի չի էլ հասկանում և չի էլ կարողանում բացատրել. Նիւթօնն ասում է որ ո՛չ Աստուած է քարը ցած նետողը, ո՛չ սատանան, այլ մի բնական զօրութիւն, որն ինձ նոյնքան անծանօթ, նոյնչափ խորը և անհարազատ է, որքան Աստուած, որքան սատանան. այն, որ ես վերագրում էի բնութեան կամայականութեանը. այն, որ ինձ թուում էր կոյր պատահականութեան արդիւնք, այն, որ ինձ աննպատակ, անտրամաբան էր երևում, և կամ այն, որ ես վերագրում էի տիեզերական, մի գերբնական հանճարի կանխորոշ մտածմանը. այդ բոլորը հերքում է Նիւթօնը և նորա տեղը տալիս է մի մեծ անյայտութիւն: Մի բնական-տիեզերական ոյժ, որից և ծագում է ներկայ երևոյթը: Բայց ես այդ երևոյթը չեմ հասկանում, ասում է մանուկը և ես այդ չեմ ըմբռնում, առարկում է փիլիսոփան:- Դու չբացատրեցիր, չպարզեցիր երևոյթը. կոյր պատահականութիւնը դու փոխարինեցիր օրինաւորութեամբ, որը ինձ համար նոյնպիսի հանելուկ է, որպէս առաջինը. այո՛, նոյն իսկ աւելի մեծ, աւելի խորհրդաւոր հանելուկ: Ես վերցնում եմ շղթայի մի օղը և հարցնում. ի՞նչ է այս: Դու ինձ ցոյց ես տալիս, որ այդ օղը կապուած է այլ օղերի հետ և միմն արդիւնք է միւսի: Ես հարցնում եմ. ո՞վ է Մարկոսը, ի՞նչ Մարկոսը: Դու պատասխանում ես. Մարկոսը Կիրակոսի թոռն է և Թորոսի որդին և այդ բոլորը Ադամի զաւակներն են: Մի անյայտի տեղ դու ինձ տալիս ես մի այլ անյայտ և այդ ամենը Դու անուանում ես գիտութիւն:

Մի՞թէ այդ է մարդկային գիտութիւնը:

Վերցնենք մի քիմիական երևոյթ: Քիմիան այսօր բնական գիտութիւնների թագուհին է համարում. նորանով են ուզում կեանքը լուծել, նորանով են բացատրում բոյսերի, կենդանիների, օրգանաւոր և անօրգան մարմինների բիւրաւոր երևոյթները: Քիմիան ապացուցել է, որ մեր երկիրը և գրեթէ ամբողջ տիեզերքը բաղկացած է 70 չափ նիւթերից, որոնք տարրեր են կոչւում: Այն էլ հաւանական է, դորա համար կան յայտնի նշաններ, որ բոլոր այդ տարրերը արդիւնք են միևնոյն հիմնական նիւթի (urstof) մոլեկուլար տարբեր կապակցութեան:

Արդ՝ ի՞նչ է ուսուցանում մեզ քիմիան. շա՛տ բան, ըստ երևոյթին, իրօք ո՛չ մի բան ըստ էութեան: Նա մեզ սովորեցնում է, որ այդ նիւթերից ոմանք իրար սաստիկ սիրում են. երբ միմեանց հանդիպեցան, մեծ եռանդով միանում են իրենց հետ, այնպիսի եռանդով, որից շատ անգամ կրակ ու բոց է առաջանում: Այլ նիւթեր, ընդհակառակը. իրարատում են. իսկի իրար հետ չեն միանում: Մագնիտի վրայ, դրանցից ոմանք դրական բևեռի մօտ են հաւաքում, ոմանք բացասական...

Շատ ուսանելի և չափազանց հետաքրքիր են այդ երևոյթները. գործին անտեղեակ մարդը երբ մի պրոֆեսորի փորձերի ժամանակ քիմիական լաբորատորիա մտնի, նրան կարող է մինչև անգամ հրաշագործ համարել. և իրաւ, կատարում են այդպիսի հրաշքներ լոկ բնական գիտութիւնների ուսումնասիրութեամբ. այսօր աղամանդ և օրգանաւոր նիւթեր են պատրաստում քիմիայի լաբորատորիաներում: Այսօր, կեանքի հսկայական, առեղծուածային աղբիւրը, արևի լոյսի որի սպառումն ու հանգչելը վաղուց արդէն հաշուել են գիտունները, նոյնպէս մի քիմիական, վերջերս գտնուած մի տարերքի է վերագրում, որն ընդունակ է անսպառ լոյս արձակելու, ուրեմն արևի սառչելն ու կեանքի մարիլը մեր երկրագնդի վրայ դառնում է մի գիտական զառանցանք: Սակայն, այն նիւթերը, ա՛յն երևոյթները և ա՛յն յատկութիւնները նիւթերի, որոնցով գիտութիւնը հրաշք է գործում առանց դիւական ուժերի աջակցութեան, գիտունի, քիմիկոսի համար մի նոյնպիսի առեղծուած են, որպէս և մի հասարակ մահկանացուի: Քիմիան հմարել է ատոմների (հիւլէ) և մոլեկիւլների թէօրիա: Ատոմը նիւթի մանրագոյն, անբաժանելի մասն է. այդ (ատոմ նշանակում է անհատ) ատոմների, հիւլէների միութիւնից առաջ է գալիս մոլեկիւլը, ատոմի որոշ խմբակցութիւն,- իսկ մոլեկիւլների տարբեր կապակցութիւններից ու միութիւններից, բոլոր քիմիական ու ֆիզիքական երևոյթները բնութեան մէջ:

Այստեղ էլ, ինչպէս տեսնում ենք, գիտութիւնը իրան տուած հարցերն առօք-փառօք ամփոփում է բնութեան մի կամ մի քանի հիմնական երևոյթների մէջ, որոնց անունը նա տալիս է, որոնցով նա բացատրում է յայտնի իրողութիւններ, բայց այդ որը ինքը մնում է մի անլուծանելի, անհասկանալի մի առեղծուած, մի յախտենական հանե-

լույս... Սատանան, դևը, Ահրիմանն ու Արամազդը, չարն ու բարին, լոյսն ու խաւարը, որոնցով բացատրում էր այդ երևոյթները դեռ մանուկ մարդկութիւնն իրան բոլորող երևոյթները, չքանում, կենդոնանում են մի յափտենական «անյայտի» մէջ, անուանիր այն «նիւթ», «յափտենական ոյժ», «տիեզերական բանականութիւն» (Welt-Vernunft) այդ միևնոյն է: Այն, ինչ որ ես եմ որոնում, որի էութիւնն ինձ մահու չափ հետաքրքրում է, որին ես հոգով, մարմնով, իմ բոլոր էութեամբ ձգտում եմ, մնում է դեռ անլուծելի...

Վերցնենք մի այլ օրինակ. Լամարկ-Դարւինի թէօրիան: Հասարակ մահկանացուն ամենևին չի՝ հետաքրքրում իմանալու, թէ այսքան կենդանիները, որոնցից մենք օգտւում կամ վնասւում ենք, ո՞ր տեղից և ի՞նչպէս են առաջ եկել: Ս. Գրքի աւանդութեամբ, Աստուած է այդ բոլորի ստեղծողը. «ասաց և եղև»: Մարդու համար միայն բացառութիւն արաւ Աստուած: Բրուտի պէս, նա վեր է առնում մի բուռ հող, շաղախում, մմանեցնում է իր կերպարանքին, փչում է նրա երեսին, և ահա՛, մեր նախապապը պատրաստ էր.- կինը, որ արեւելեան ազգերի մէջ առանձին յարգանքի արժանի չի եղել երբէք, ստեղծագործութեան մէջ էլ միայն Ադամի ներկայութիւնից յետոյ կարող էր առաջանալ, այն էլ նրա քնած ժամանակ:

Որքան էլ միամիտ համարենք այս երևակայութիւնը, չենք կարող ուրանալ մի խորին փիլիսոփայութիւն այս պատմութեան մէջ: Եթէ մի կողմ թողնենք դիցաբանական վարագոյրը, Մովսիսի կարծիքով՝ մարդն արդիւնք է հողի և օդի: Երկու հիմնական տարրեր, առանց որի, հների երևակայութեամբ և հէնց մեր այսօրուայ հասկացողութեամբ մարդը չի կարող ապրել:

Դարւինի թէօրիան և ներկայ գիտութիւնը բոյսերի և կենդանիների առաջնալը ա՛յլ կերպ է մեկնում: Երկրի զարգացման մի որոշ շրջանում, երբ արդէն նրա կեղևը պատրաստ էր, երկրի նիւթերից առաջացան որոշ քիմիական կապակցութիւններ¹, դրանցից առաջացաւ պրոտոպլազման.- կեանքի նախնական սաղմը. դորա էական կազմիչն է ձուի սպիտակուցը:- Դա առաջին կենդանին էր, որովհետև ունէր բոլոր կենդանիներին յատուկ հիմնական գծերը.- պահպանել իւր ձևը իր

1. Տե՛ս մեր յօդուածը. «Կեանքի ծագումը», «Մուրճ»:

սերունդների մէջ, և փոփոխուել տարբեր պայմանների մէջ, այսինքն յարմարուել շրջապատող հանգամանքներին: Այդ, արտաքին պայմաններին յարմարուելն ու փոփոխուելն էր, որ առաջ բերաւ բիւրաւոր բոյսերն ու հազարաւոր կենդանիները: Բնութեան կոյր ոյժն այստեղ էլ փոխարինեց Աստուծուն. սորանով, ահա, մենք բացատրում ենք բիւրաւոր երևոյթները կեանքի մէջ:

Դարւիմի, ինչպէս առհասարակ բոլոր հանճարեղ մարդկանց, մեծութիւնն այն էր, որ նա դիտեց ու մատնանիշ արաւ մի շատ հասարակ և հանրածանօթ երևոյթ.- ժառանգականութիւնն ու փոփոխականութիւնը կենդանի օրգանիզմների մէջ. և այդ երևոյթների հետ կապեց մի հսկայական ցանց այլ երևոյթների, որոնցով նա ապացուցեց կենդանական «տեսակների ծագումը»:

Սակայն, բուն այդ հիմնապատճառները, այդ ժառանգականութիւնն ու փոփոխականութիւնը Դարւիմի թօրիայի մէջ մնում են անբացատրելի, անլուծանելի առեղծուածներ: Ինչո՞ւ որդին ժառանգում է հօր կամ մօր յատկութիւնները, ինչո՞ւ տարբեր պայմանների մէջ նա ենթարկւում է փոփոխման, այդ մեզ չի բացատրում ո՛չ Դարւիմը, ոչ էլ նրա աշակերտներից ո՞ր և է մինը:

Այդ թօրիան լայնացրեց, ընդարձակեց մեր տեսութեան հորիզոնը, որպէս ուրիշ բազմաթիւ թօրիաներ. նա բիւրաւոր երևոյթներ կապեց, կաշկանդեց իրար հետ, ցոյց տալով նոցա փոխադարձ կապն ու ազդեցութիւնը. նա ցոյց տուաւ օրգանաւոր աշխարհի զարգացման պատմութիւնն ամենապարզ և ամենահասկանալի կերպով, բայց այդ հիմնական երևոյթների էութիւնը նա էլ մեզ չբացատրեց:

Այստեղ էլ, մարդկային հանճարը կանգ առաւ այն դռան առաջ, որ բնութիւնը փակել է նրա առաջ յաւիտենօրէն:

Եւ հնդիկ փիլիսոփայի նորագոյն հետևողը, որ հարցասիրութեամբ հետևում էր բնագէտ-գիտնականին, առարկում է. բարեկամ, քո ասածները խելացի են ու համոզիչ. դու իմ առաջ բաց արիր մի հսկայական դաշտավայր երևոյթների և օրէնքների. դու ինձ ցոյց տուիր քո հանճարը, այդ երևոյթներից օգտուելու և նրանց կառավարելու մէջ. դո՛ւ, որ առաջ ստրուկ էիր դրանց, այժմ իշխող և կառավարող ես դարձել. բայց այդ ամենի էութիւնը, ինձ համար և անշուշտ, ամեն մի տրամաբան մտածողի համար մնաց փակ, անյայտ, անմեկնելի:

Դու ասում ես, որ կենդանական աշխարհին առաջացաւ ժառանգ-
այնութեան և փոփոխման կանոններով: Ի՞նչ բաներ են այդ կանոն-
ները, ի՞նչպէս է կատարուում այդ յարմարուիլն արտաքին պայմաննե-
րին. ի՞նչ ատոմային առաելութիւն ունի մի մուկ, որ կարողանում է
սպրել փոփոխուած պայմանների մէջ, մինչ, մի հսկայական մամոնթ
մահուան է դատապարտուում ընդ միշտ...: Այս հարցերի առաջ դու
մնում ես լուռ և անպատասխան:

Յետոյ, մենք դիմում ենք գիտութեան այլ ճիւղերին, օրինակ մի
այնպիսի ճիշտ և հին գիտութեան, որպիսին երկրաշափութիւնն է:

Բաւական է նորա հիմքից մի քար դուրս քաշենք, որ մա հիմնայա-
տակ լինի: Այդ գիտութիւնը հիմնուում է մի քանի ընդունելութիւնների
վրայ, որ ակսիոմաներ են կոչուում. ուղիղ գիծը ամենակարճն է երկու
կէտերի մէջ, որ ամբողջը հաւասար է իր մասերին, որ զուգահեռական
գծերն իրար չեն հանդիպում և այլն և այլն:

Այդ բաները չեն ապացուցուում, այլ ընդունում են ինչպէս ճշմար-
տութիւններ: Կասկածեցիք այդ ընդունելութեան վրայ և ահա փուլ
եկաւ մի ամբողջ, ճիշտ գիտութիւն:

Մի անյայտ, մի անբացատրելի երևոյթ լոյի ենթադրուում է իբրև
յայտնի և դորա վերայ կառուցուում է մի ամբողջ շէնք. այդ է բոլոր
ճիշտ և անճիշտ, բնական և այլ գիտութիւնների էութիւնը:

Բացարձակ գիտութիւն մենք երբեկիցէ ո՛չ ունեցել ենք, ոչ էլ ունե-
նալ կարող ենք. գիտութիւնը միշտ յարաբերական է. մի անյայտը
մենք վերագրում ենք մի այլ անյայտի, կամ բիրաւոր անյայտներ
մենք հիմնում ենք մի հիմնաւոր անյայտի վրայ, որը ենթադրելով
«ակներև» կամ «յայտնի» բացատրում ենք մնացեալը.- նեղ, անբա-
ւարար և ողորմելի է մեր գիտութիւնը:

Երբ գիտութիւնից մենք անցնում ենք դէպի արուեստը, դէպի մարդ-
կութեան մի այլ հանճարեղ մտածողութեան խաղալիքը, այնտեղ ար-
դէն բոլորովին լռում է մեր տրամաբանութիւնը: Մի Լիւզիպի, մի Ռա-
ֆայէլի, մի Անջելօի գործերի առաջ գիտութիւնը ո՛չ մի խօսք չունի
ասելու. նոքա հրաշալի են, նոքա կատարելութիւն են, բայց այն պար-
զել, բացատրել և տարրալուծել անկարող ենք:

Երաժշտութեան մէջ աւելի աջողակ էր գիտութեան դերը. դեռ Պիւթագորոսն հարմօնիան համեմատում էր թուական երևոյթների հետ և որոշ չափով բացատրում նոցա դիօքին ազդեցութիւնը: Հելմհոլցն ուզեց ապացուցանել, որ հարմօնիան արդիւնք է որոշ հնչիւնների միմեանց հետ ձուլուելուն:

Դա մեզ յիշեցնում է քիմիական երևոյթների բացատրութիւնը. ինչո՞ւ որոշ ձայներ, քիմիական տարրերի նման ձուլում են միմեանց հետ, իսկ միւսները ո՛չ. կամ ի՞նչպէս է լինում, որ Բէթհովէնի մի սիմֆօնիա, կամ Լիստի մի ռափսօդիա այնպիսի անասելի բաւականութիւն, աննկարագրելի հրճուանք է պատճառում մեզ, այդ մնում է յաւիտեան անբացատրելի:

Վերջին օրինակն ինձ առիթ է տալիս հարցի մէջ մի քիչ խորը փանցելու: Իրաւ, այդ ինչ մի ցնորալի բան է. այն հնչիւնները, որոնք իմ հոգու առաջ բաց են անում մի բոլորովին նոր աշխարհ, բնութիւնից մեզ չեն տուած. նոքա արդիւնք են մի Բէթհովէնի, մի Վագների և կամ մի Շօպէնի ցնորքներին:

Նոքա խաղ են անում մի գործիքի հետ, հնչիւնների մի որոշ համակարգ դող է հանում օդը. այդ օդի ալիքներն հասնում են իմ ականջին, գրգռում են իմ լսողութեան նեարդերը, որոնք իրանց գրգիռը մի քիմիական գործողութեան միջոցով հասցնում են ուղեղիս և յանկարծ, ես զգում եմ մի երջանկութիւն, իմ առաջ բաց է լինում մի դիօքական աշխարհ, հնչիւնները կաշկանդում են ինձ, ես զգում եմ, ես մտածում եմ և ես երևակայում եմ... լարերը, օդի տատանը և նեարդերիս գրգիռն ինձ ստիպեցին զգալու, մտածելու, հասկանալու և ըմբռնելու:

Ի՞նչպէս հոգիացան այդ նիօքական երևոյթները, ի՞նչպէս առաջ եկաւ զգալու գործողութիւնն իմ մէջ, ո՞րտեղից, ի՞նչ մի հրաշալիքով մեր ուղեղի նիւթն ինձ առիթ տուաւ արտաքին երևոյթը հասկանալու և ըմբռնելու...

Ի՞նչպէս է պատահում, որ քարը, փայտը, սեղանը և պատը չեն ըմբռնում, չեն հասկանում մի սօնատ. իսկ ես հասկանում եմ. չէ՞ որ նորանց վրայ էլ է ազդում օդի ալիքը, հնչիւնների տատանը...

Եթէ աւելի հեռուն ուզենանք գնալ, այդ հարցը պիտի դնենք իր բոլոր էութեամբ. ի՞նչպէս եմ ես ըմբռնում ամբողջ աշխարհը, երևոյթնե-

րի փոխադարձ կապը, ես ինքս ինձ, իմ անձնատրությունը, ի՞նչպես եմ կարողանում ես ինձ զանազանել ուրիշից, ինչո՞ւ արտաքին երևոյթները կարող եմ այդպես տպատրություն թողնել վրաս, վերջապես ի՞նչ կերպ, ի՞նչ ձևով է առաջ գալիս ինքը միտքը, մտածմունքը, կամքը, երևակայությունը և դատողությունը...

Կարլ Ֆոգտն այդ ամենը բացատրում է շատ պարզ և հասարակ կերպով.- «Հոգեկան գործողությունները ուղեղի գործօններն (Function) են. եթե մի քիչ կոպիտ արտայայտենք, մտածությունը յարաբերում է ուղեղին այնպես, ինչպես մեզը երիկամունքին»։ Այդպես էր մտածում անցեալ դարու յիսնական թուերին մի Կարլ Ֆոգտ, և մօտաւորապես նրա նման մի Մօլեշօտ, մի Բիլխներ, և այլն...

Բայց հարցը դորանով ամենևին չպարզուեց։ Այստեղ միանգամայն տարասեռ (հետերոգեն) երևոյթները. մի հոգեկան գործողություն և մի մեզ (մի նիւթական երևոյթ) համեմատում են միմեանց հետ, իսկ տարասեռ երևոյթները համեմատել ո՛չ կարելի է, ոչ հնարաւոր է և ոչ էլ գիտական։

Առանց երիկամունքի, արհեստաբար, մենք այսօր միզանիւթ ենք պատրաստում. բայց քիմիայի լաբորատորիաներում ուղեղ պատրաստել, որը միտք արտաթորէր «մեզի նման», այդպիսի յանդուգն կարծիք ո՛չ մի լուրջ գիտական գլուխ այսօր չի՝ համարձակում արտայայտելու։ Եթե մի այդպիսի հրաշք պատահելու էլ լինէր, երևոյթը կմնար իւր էութեամբ դարձեալ անբացատրելի։ Մենք երբէ՛ք չենք կարող ըմբռնել այն, թէ ի՞նչպես է առաջ գալիս ինքը, ըմբռնելու գործողությունը կամ գիտակցությունը։

Սի երկու տասնեակ տարի Կարլ Ֆոգտից յետոյ, երբ բնական գիտություններով կուրօրէն ոգևորուելը տեղի էր տուել սառն դատողութեան, մի այլ խոշոր բնագէտ ու փիլիսոփայ, Emil Du Bois Reimond իւր մի հանճարեղ ճառի մէջ պարտք համարեց հերքելու Ֆոգտի կարծիքը, գտնելով, որ «մտածելն ուղեղի շէնքի մէջ այնպես պարզ և հասկանալի չէ՝ որպէս զատանքը երիկամունքից»¹։

1. Du Bois Reimond, "Über die grenzen des Naturerkennens".

Մեր գիտությունն առհասարակ աւելի չէ՝ մի հասարակ ծանօթութիւնից. ինչ որ մեզ համար առօրեայ և սովորական է, այն որին մենք ընտելացած ենք, որի պատճառական կապերը նախորդի և յետնորդի հետ մեզ յայտնի են. մենք ասում ենք, որ գիտենք:

Այդ գիտենալը ո՛չ հիմնական է, ոչ արմատական և իւր էութեամբ հաւասար է մի հասարակ ծանօթութեան: Աւելի չէ՝ մեր գիտեցածը, երբ մենք բնական երևոյթների քաօսի մէջ ճանաչում ենք մի յայտնի երևոյթի տեղն ու դիրքը և անուանում ենք այն գիտութիւն:

Տգէտն ու ռաճիկը տեսնում է արտաքին աշխարհում ուժերի մի անթիւ քանակ և իր օգտի ու վնասի տեսակէտից անուանում է բարի կամ չար ուժեր: Մատերիալիստ գիտնականն այդ ուժերն ամփոփում է մի ընդհանուր նիւթի կամ ուժի մէջ, որը ոչ բարի է և ոչ էլ չար. որից նա ո՛չ ահ ունի, ոչ էլ երկիւղ. և շնորհիւ դարերի փորձին ու կուլտուրային, նա այդ ոյժերը կարողանում է կառավարել և նորանցից օգտուել:

Ի՞նչ է Ֆէտիշի պարունակած ոյժը նորա երկրպագուի համար.- մի գօրաւոր անյայտութիւն. ի՞նչ է մատերիալիստի ճանաչած ուժը, նոյնպէս մի անյայտութիւն ըստ էութեան: Տարբերութիւնն այն է մի-այն, որ միմը ենթակայ և երկրպագու է, միւսն իշխող ու կառավարող: Բայց այդ ոյժն ինքնին և ըստ էութեան երկուսի համար էլ մնում է յաւիտեան անբացատրելի, յաւիտեան անհասկանալի մի յաւիտենական անյայտութիւն...

Պատանի երևակայութեան թափը կորցրած և վառվռուն երագնե-րից յուսախաբ, բնական գիտութիւնն այսօր մտախոհ և լուրջ կանգ է առել հին ու մոռացուած մի ծերուկի առաջ, որ փիլիսոփայութիւն է կոչում և նրա հետ միասին կրկնում է մի հին, մի շատ հին երգ:- Մենք տեսանք թէ ինչ էր ասում այդ մասին Դիւ Բուա Ռայմօնի պէս մի հռչակաւոր բնագէտ. որը առաջին անգամ բնագէտների մէջ ձայն բարձրացրեց ցոյց տալու մեր գիտակցութեան նեղ, անձուկ և սահմանափակ լինելը. այսօր, մի տասնեակ տարուց աւելի է գրեթէ, որ նորագոյն բնագէտներից շատերը սառն ու պաղ դատողութեամբ գալիս են ուրանալու նոյն իսկ նիւթի գոյութիւնը, կա՛մ առասկաւն ընդունելու, որ նիւթն իւր էութեամբ անմատչելի և անհասկանալի է մեզ. «բոլոր զգայութիւնները, ասում է այդ գիտնականներից միմը, մեր նեարդերի

գործունեությունն են, և ո՛չ թե առարկաների յատկություններ, ինչպես գործ է ածում սովորական լեզուի մեջ: Լոյսը և գոյնը գոյություն ունին մեր աչքի մեջ և ո՛չ թե արևի կամ ճրագի:

Չայնը ականջի մեջն է միայն. և առանց ականջի, բնութեան մեջ չկա՛յ որևէ ձայն կամ հնչյուն: Մենք անուանում ենք կոշտ ու ցուրտ, տաք ու փափուկ և սորանով ուզում ենք լոկ ասել, որ մեր կաշուի վրայ զգում ենք տաքի, ցրտի, կոշտի և փափուկի տպավորություններ: Մենք խօսում ենք նարինջի մասին և ասում ենք, որ նա դեղին է, բուրախ, փափուկ, կոլոր և այլն. այսինքն, որոշ հանգամանքներում մենք զգում ենք ա՛յն, ինչ որ կոչւում է դեղին, բուրախ, փափուկ, կոլոր և այլն և ապա, ըստ այնմ, մեր մտածման շնորհիւ եզրակացնում ենք. մի բան պիտի լինի, որից առաջանում են այս տպավորությունները»¹: Այդ մի բանն ուրեմն իր գոյնով, հոտով ու ձևով ծնունդ առաւ և կազմակերպուեց մեր ուղեղի մեջ. նորա գոյնը, հոտը և ձևը արդիւնք են մեր ուղեղի: Մեր հոգու միջոցով միայն մենք անդրադառնում ենք արտաքին աշխարհը. դուրսը մենք տեսնում ենք այն, ինչ որ մեր մեջն է, մեր զգացածը, մեր իմացածը: Արտաքին աշխարհն ուրեմն ոչ այլ ինչ է, եթէ ոչ մեր ներքին աշխարհը: Արտաքին աշխարհն իր յատկություններով ուրեմն գոյություն չունի, գոնէ մեզ համար. այլ կայ, և մենք ճանաչում ենք միայն և միմիայն մեր ներքին աշխարհը: Իրերը և երևոյթները լոկ մեր երևակայութեան պատրանքն են, մեր ուղեղի ստեղծագործութիւնը, մեր հոգու զառանցը... մի փառահեղ, մի հրաշալի զառանց... Մեզ համար չկայ մի այլ աշխարհի բացի մեր հոգեկանից: Բէթհովէնի հրաշալի սիմֆօնիաները և Վագների հիմնալի օպերաները գոյություն ունին մեր աչքերի և ուղեղի մեջ միայն. վերցրէք այդ աչքը և այդ ուղեղը և ամեն ինչ կորած է յաւիտեան:

Այդ իսկ պատճառով ամբողջ աշխարհի մեջ ամենից զարմանալին, ամենից հրաշալին մենք ինքներս ենք. մեր կամքը, մեր երևակայութիւնը և մեր գիտակցութիւնը: Մենք մեր էութիւնից ստեղծել ենք մի ամբողջ աշխարհ և այդ առեղծուածի առաջ ծունկ չդաճ ուզում ենք լուծել ա՛յն, ինչ որ անլուծանելի, անհասկանալի և անմատչելի է մեզ ընդ միշտ, որովհետև մեր գիտակցութիւնը սոսկալի սահմանափակ է...

1. Mobius, Das Nervensystem des Menschen.

«Բնագետները կարծում են, ասում է Mobius, որ ամբողջ աշխարհը բաղկանում է վերին աստիճանի մանր մասնիկներից,- ատոմներից,- որոնք զուրկ են որևէ յատկությունից և ազատ շարժում են տարածության մեջ:

Այդ ատոմները խմբակցում-միանում և բաժանում են իրարից - բազմապիսի շարժում և տատանումն ունին: Այդպիսի ատոմների խմբակցության արդյունք է ամբողջ աշխարհը, կենդանի թէ անկենդան, որոնց մեջ և մարդը: Այդպիսի ատոմային խմբակցության արդյունք են մեր նեարդներն և ուղեղը, որոնցով մենք զգում ու ճանաչում ենք արտաքին աշխարհը:

Ատոմների մի խմբակցություն, բնագետի կարծիքով, երբ հանդիպում է մեր նեարդերին, բոթելով նրանց, առաջացնում է մի տատանումն, որոնք մեր նեարդերի մեջ համապատասխանում են մեր տպաւորություններին, այն է լոյս, ձայն, հոտ, համ և այլն... Որքան էլ նպատակայարմար է՝ մի այդպիսի տեսություն, շարունակում է Mobius, բնական երևոյթները մի ամբողջական դիտողութեան ենթարկելու համար, բայց դա մի բացատրութիւն չէ՝ և չի՝ կարող լինել, թէ ինչպէս առաջացաւ լոյսը կամ ձայնը մի խումբ ատոմների շարժումներից:

Զգալը ո՛չ մի ընդհանուր բան չունի այդ շարժման հետ. չկայ մի կանուրջ, որ մէկից կարելի լինէր անցնել դէպի միւսը. սրանք բոլորովին տարասեռ (heterogen) երևոյթներ են. ստուգիւ իրական միայն մեր տպաւորութիւններն ու զգացածը. բնագետի կազմակերպած աշխարհը մի մտացածին բան է, մի փոխադրութիւն զգայական տեսութիւնից դէպի մաթեմաթիքականը, ճիշտ գիտական նպատակների համար: Զգայութիւնն ըստ ինքեան մնում է իբրև հիմք ամեն փորձառութեան և երբէք ենթակայ չէ՝ որևէ բացատրութեան»:

Սրանք մի բնագետի խօսքեր են. այսպէս չէին խօսում մի 20-30 տարի առաջ մի Մօքեշօտ, մի Ֆօգտ, մի Բիւխներ, մի Հէկկէլ, այսպէս են խօսում սակայն այսօր երիտասարդ բնագետների առաջատոր ուղեղները. փիլիսոփայութեան և բնագիտութեան մէջ բացուած անդունդը կարծես փակուած է, և ճիշտ գիտական փորձն ու յանդուգն լայնաթռիչ փիլիսոփայա-դեղուկցիան - ուզում են ձեռք ձեռքի տուած առաջ գնալ...

Մենք տեսանք բնագետի կազմած արտաքին մտացածին աշխարհը - ատոմներ, խմբակցություն և բաժանումն ատոմների և տատանմունք,- սա մի տեսություն է միայն, մի թեօրիա, մի ենթադրություն. մի շատ հաւանական թեօրիա. սա մի ապացուցուած բան չէ, և չի էլ կարող երբէք ապացուցուել. սա է բնագետի արտաքին աշխարհը, ենթադրական աշխարհը, այս երբէք պիտի չմոռանանք,- այդ աշխարհից, այսօր գիտութիւնն ընդունում է, ուղիղ գծով մենք ո՛չ մի տեղեկութիւն չենք կարող ստանալ. չկա՛յ մի կամուրջ, մի հեռագրաթել, որ կարելի լինէր կապել մեր գիտակցութիւնն այդ աշխարհի հետ. այդ տեսական, ենթադրական աշխարհի, որի էութիւնն և ինչութիւնը փակ է մեր առաջ ընդ միշտ, յաւիտեան...

Եթերի տատանմունքը գրգռում է մեր տեսողութեան նեարդը. այդ գրգիռը հասնում է մեր ուղեղին - դա մի գրգիռ է միայն, և մենք տեսնում ենք լոյս. կարելի է առանց եթերի, լոկ աչքին խփելով լոյսի զգայութիւն առաջացնել աչքի մէջ. որևէ գործիքով եթէ շօշափենք ուղեղի որոշ մասերը կարող ենք առաջացնել նոյնպէս լոյս... Այդ լոյսը չկա՛յ արտաքին աշխարհում, դա միմիայն մեր ուղեղի մէջն է, նրա մի յատկանիշը և տևական յատկանիշը. ուստի և առանց արտաքին պայմանների, լոկ կամքի շնորհիւ, մենք կարող ենք վերարտադրել ամեն մի անցեալ տպաւորութիւն: Մենք կարող ենք յիշել ամբողջ պատկերներ, կարող ենք վերարտադրել մեր ուղեղից մեր տեսած ամբողջ աշխարհը. շարադրել ամբողջ պատմութիւններ, մեր մտքով, անգիր. մենք կարող ենք երգել ամբողջ սիմֆօնիաներ և օպերաներ. առանց ճանաչելու արտաքին աշխարհը, հիմնուելով լոկ մեր հոգու այս յատկութեան վրայ, որ կոչւում է յիշողութիւն, մենք ստեղծել ենք ամբողջ գիտութիւններ: Այսօրուայ իմ տեսածն ու լսածը, նման չէ իմ երեկուայ տեսածին ու լսածին. ես յիշում եմ և համեմատում, համեմատում եմ և փորձեր եմ անում, և այդ փորձերի արդիւնքից հանում եմ օրէնքներ և եզրակացութիւններ... այս է գիտութիւնը: Չմոռանանք, այդ փորձերի առարկան էլ իմ հոգու դրութիւններն են, այսինքն իմ յիշողութիւնները, որոնք հոգեկան երևոյթներ են, որովհետև, ինչպէս տեսանք, արտաքին երևոյթներն ինձ համար անմատչելի, անճանաչելի են. ձայնի, լոյսի, տաքի և ցրտի երևոյթներն իմ հոգու երևոյթներն են

և նրա յատկանիշները. որովհետև բնութեան մէջ չկան ո՛չ ձայն, ո՛չ լոյս, ոչ որևէ այլ բան բացի մեր գիտակցութիւնից:- Եւ մեր ամբողջ գիտութիւնը ըստ այնմ հիմնուած է երևոյթների վրայ, որոնք իսկապէս և ըստ էութեան գոյութիւն չունին: Մենք մեր ներքին աշխարհից օրէնքներ ենք հրատարակում արտաքին աշխարհի վրայ, որը ո՛չ տեսնել, ո՛չ ճանաչել, ոչ էլ զննել ու քննել ենք կարող: Այն՝ ինչ որ մենք ենք տեսնում ու զգում, այն՝ ինչ որ մենք ենք կազմակերպում և ուսումնասիրում՝ դա լոկ մենք ինքներս ենք, մեր հոգեկան երևոյթները. որից մենք ստեղծում ենք մի հրաշալի աշխարհ վառվռուն, հարուստ ու փարթամ լոկ մեր ուղեղի գործունէութիւնից: Սակայն ես բաց եմ անում մի հանճարեղ մարդու ուղեղը, և ոչինչ - բացարձակօրէն ոչինչ չեմ գտնում այդ ուղեղում ա՛յն ամենից, ինչ որ նա մտածել և ստեղծագործել է: Ո՛չ մի քիմիական և կամ ֆիզիքական փորձ ինձ թոյլ չի տալիս թափանցել այն հսկայական առեղծուածի խորքը, որ զբաղեցրել է ամենայանդուզն մտքերը մարդկային հանճարի, թէ ինչպէս այս ուղեղի մէջ, որ մի սպիտակուցային զանգուած է լոկ, առաջ է գալիս պատկերների այն փարթամութիւնը, որ մենք աշխարհ ենք կոչում, մտքի այն թռիչքը, որ մենք երևակայութիւն ենք անուանում, դեղուկցիայի այն սլաքը, որ մենք հանճարի ստեղծագործութիւն ենք անուանում: Ինձ համար, դրսից, այդ ուղեղի գործունէութիւնը լոկ ատոմների և մոլեկուլների շարժում է այն, ինչ որ իրա համար, այդ ուղեղի մէջ, դա լոյսի կամ գոյների մի շարայարութիւն է հրաշալի ներդաշնակութեամբ. գուցէ Ռաֆայելի մի անմահ ստեղծագործութիւնը, Բայրօնի մի ըմբոստ երգը և կամ Լիւզիպի մի հրաշալի կոթողը:- Ինչպէս այս ատոմների շարժումը մի քիմիական կամ ֆիզիքական երևոյթ դառնում է մի միտք, մի պատկեր և մի մտածողութիւն մեր ուղեղի մէջ, դա մնում է յալիտեան անհասկանալի, յալիտեան անբացատրելի: Այդ երկուսի մէջ - արտաքին-նիւթական և ներքին-հոգեկան աշխարհների - անհնարին է և աներևակայելի է մի կամուրջ... Այն՝ ինչ որ մենք գիտենք և մենք ունենք, դա լոկ մեր միտքն է և երևակայութիւնը և ամբողջ աշխարհը կամք է ու երևակայութիւն:

«Լումայ», 1904 թ., N 1, էջ 94-110

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎԵԱՆԻ ԿՈՐՈՒՍՏԸ (Մահուան վաթսուումեակի առիթով)

Այս տարի լրանում է յիսունամեակը «Վերք Հայաստանի» տպագրութեան և միևնոյն ժամանակ այսօր, ապրիլի 2-ին, լրանում է վաթսուն տարին այն չարաբաստիկ օրից, երբ Խաչատուր Արովեանը ընդմիշտ անյայտացաւ: Ինքնասպա՞ն եղաւ արդեօք այդ մարդը, կառավարութի՞ւնն անյայտացրեց նրան, ինչպէս ասում են՝ «սև կարեւոր», թե՞ թուրքերը սպանելով թագգրին մարմինը, ինչպէս ընդունուած է վերջերս կարծել, մնում են առայժմ բաց խնդիրներ: Երեք կարծիքն էլ ունեն իրանց կողմնակիցները...

Առանց հերքել կարենալու մէկը կամ միւսը, մեր պարտքն ենք համարում նորից յիշեցնելու այս տաղանդաւոր, միևնոյն ժամանակ մեծ ու տարօրինակ մարդու մահուան վաթսուումեակը, որ մեր մեծ ու փոքր յօբելեանների և տօնախմբութիւնների մէջ ամենից հինը, ամենից արժանատին ու ամենից աւելի մոռացուածն է բաղդի բերմամբ: Արդարև, ամեն ինչ զարմանալի և տարօրինակ է այս մարդու կեանքի մէջ: Ելևէջներն այդ համեմատաբար կարճատև կեանքում այնքան խոշոր են և հսկայական, վայրն ու վերը այդ կեանքի ալիքներում այնքան տարբեր ու ահագին, որ խտացնելիս մարդ շշմում է: Արարատեան դաշտից մինչև Մասիսի անմատչելի կատարը, Էջմիածնի մոնթից մինչև մինիստրներին սեղանակից լինելը, Քանաքեռի շինականից մինչև ժամանակի առաջնակարգ եւրոպական գիտնականներին՝ Պարրօտ, Վագներ, Աբիխ, Հաքստիաուզեն, բանաստեղծ Րօդենշտէտ և այլոց ընկերանալն ու նրանց հրճուանքին արժանանալը: Կուսակրօն սարկաւագութիւնից մինչև գերմանուհու հետ ամուսնանալը և ապա, գրատոր խնդիրքը, գաւակները թողնելու և նորից վարդապետ ձեռնադրուելու իղձը: Փոխարքաներին, կաթողիկոսներին ու մինչև ռուսաց կայսրուհուն ունկնդրուելուց յետոյ, մահանգական դպրոցից զրկուելով գաւառական ուսուցչի պաշտօնին իջնելը և ապա իսպառ արձակուելը պաշտօնից, այս ամենը մի այնպիսի զիգ-զագ է, մի այնպիսի ելևէջ կեանքի ալեկոծութեան, որ վաղ թէ ուշ առաջ պիտի բերէր մի սոսկալի կատաստրօֆա:

Ու պսակուեց այդ կեանքը մի աղետալի վախճանով, որի նմանը խոշոր տաղանդների համաշխարհային պատմութեան մէջ անգամ հագուագիւտ է... Նա անյայտացաւ՝ այդ բառի իսկական իմաստով:

Միջակ ընդունակութիւնների և հակումների տէր մի անհատ՝ այս հանգամանքներում պիտի դառնար մեծամոլ, հպարտ և ֆրագէօր: Այլ էր սակայն Աբովեանի ներքին աշխարհը, այլ էին նրա իղձերը, ցանկութիւնները և իղէալները, որոնք այրում ու տոչորում էին նրա տարաբաղդ հոգին:

Նա ամբողջ էութեամբ նուիրուել էր մի գաղափարի, որ ծնունդ էր առել ժամանակից առաջ. իսկ ժամանակից առաջ աճող ծաղիկը միշտ զոհ է դառնում ձմրան ցրտերին: Նա մտածում էր հիմնել աշխարհիկ լեզու և գրականութիւն, աշխարհիկ դպրոց և դասագրքեր այն ժամանակ, երբ ամենքն զբաղուած էին գրաբարով և ճանաչում էին նրա անխորտակելի հեղինակութիւնը: Հետևանքն այն եղաւ, որ խոշոր ու հագուագիւտ տաղանդով գրուած պօէման - «Վէրք Հայաստանին» - անտիպ մնաց ամբողջ տասնութ տարի և լոյս տեսաւ միայն այն սերնդի ձեռքով,- Աբովեանի աշակերտների, որոնք, ժամանակի բերմամբ հասունացած, գնահատել և հասկանալ կարող էին այդ երկը:

Աբովեանի միւս մանր ու խոշոր գործերը ցարդ չեն անցած քննութեան բովից և մի քանիսը մոյնիսկ չեն էլ տպագրուած կամ կարդացուած ուշի ուշով: Նորերս, թատրոնի յիսունամեակը տօնելիս, Աբովեանի անունն անգամ չը յիշուեց, այն ինչ նա մեր առաջին թատրերգուն է, որ գրել է «Ֆեօօրա» աշխարհաբար պիէսը մէկ գործողութեամբ: Դա, որ զուրկ չէ բեմական արժանիքներից, դեռ երբէք չէ արժանացել հայ բեմում խաղացուելու բաղդին, այն ինչ գրուած է սրանից վաքսուն և եօթ տարի՝ ուրեմն մեր թատրոնի գոյանալուց 18 տարի առաջ: Աբովեանը ժամանակով առաջինն է իբրև վիպասան, թատրերգու, բանաստեղծ, առակախօս, մանկավարժ և դասագրքերի յորինող... այս ամենի աշխարհիկ ըմբռնումով, մանաւանդ որպէս հիմնադիր աշխարհիկ մտածման և աշխարհիկ լեզուի:

Այդ ամեն ասպարէզներում որպէս սկսնակ, նա չէր կարող առաջնակարգ տեղ գրաւել, ներկայ ըմբռնումով: Իր ժամանակ, սակայն, նա եզակի էր և անգուգական: Այսօր, «Վէրք Հայաստանին» գրուե-

լուց ուղիղ վաթսուներեք տարի յետոյ, նա՝ իբրև բնութեան նկարագրող և բուռն զգացումների արտայայտիչ, իբրև առաջնակարգ ստիլիստ՝ իր նմանը չունի մեր մէջ և առանց մի երկիւղի համեմատուել կարող է իր ժամանակի առաջնակարգ երոպացի գրողների հետ: Այդ տաղանդը աւելի մեծանում և ստուարանում է, երբ ի նկատի ենք ունենում, որ նա առաջինն էր և նախորդ չունէր մեր մէջ:

Այս տաղանդը և այս զգացումների բոցը, մասամբ գրուած քոթի վրայ և մասամբ ներշնչուած աշակերտներին, մեծ մասով մնում էին խեղդուած, անելք և լիովին անբաւարար Աբովեանի կրակոտ, բոցավառ և հայրենասէր հոգու մէջ... Ո՛չ մինն այդ գործերից չարժանացաւ տպագրութեան նրա կենդանի ժամանակ: Տպագրած տեսաւ նա միայն մի այբբենարան, ամենից խղճալին իր գործերի մէջ, որ և արժանացաւ լիակատար անաջողութեան և հալածանքի: Մէկը չունէր այդ մարդը, որի առաջ գոնէ ձեռագիր «Վերք Հայաստանին» կարդար, որը խնամքով թագցնում էր այցելուներից որպէս՝ իր խօսքով ասենք՝ «ախմախի» գործ:

Դէպքերի մի տարօրինակ դասաւորութեամբ, մեզ դեռ ևս անյայտ պատճառներով, նրա պաշտօնը ցածրացնելուց յետոյ արձակեցին պաշտօնից:

Որպէսզի մի ռուս չինովնիկ, Աբովեանի նման մէկը, 40 թուականներին, համալսարանական կրթութեամբ և երոպական լեզուների գիտութեամբ, խոշոր և կարևոր ծանօթութիւնների տէր, - արձակուի գաւառական ուսուցչի ողորմելի պաշտօնից, հարկաւոր էին խոշոր, շա՛տ խոշոր պատճառներ, որ ցարդ մնում են միանգամայն խաւար...

Ներսիսեան դպրոցի տեսչութեանը, հակառակ խոստումներին, նա չարժանացաւ: Կուսակրօն հոգևորականների շարքը նրան չընդունեցին... Այսպիսով ներքին սոսկալի անբաւականութիւնները գուգորդուած արտաքին անյաղթելի անաջողութիւնների հետ, պատրաստում էին մօտալուտ կատաստրօֆի պարագաները հետևօրէն և մի անողոր խստութեամբ:

Մանր, գծուծ, մերկանտիլ հայ հասարակութիւնը ներկայիս անգամ ընդունակ չէ ըմբռնելու բացառիկ հոգիների ներքին հրաքուիւր. ևս առաւել ա՛յն ժամանակ, մի պաշտօնանկ չինովնիկի և մի անկեալ մե-

ծութեան առաջ, որպիսին էր Աբովեանը... Ու նրա կորուստը մի անհրաժեշտութիւն էր, որպէս արդիւնք ողբալի հիասթափումների:

Բոլոր կրթուած ազգերը ունեն իրանց սիրելի հեղինակները. իտալացիք Դանտէին ու Պետրարկային, անգլիացիք Շէքսպիրին, գերմանացիք Գէթէին ու Շիլլերին, ռուսները Պուշկինին, Լերմոնտովին, որոնց շիրիմը երկրպագութեան առարկայ է այդ ազգերի համար: Մենք, հայերս, հողի մի թումբ անգամ չունենք Աբովեանի համար, որի վրայ, չեն՝ ասում տարէնը մէկ, այլ այս վաթսուն տարուայ ընթացքում գէթ մի անգամ հաւաքուած մեր յարգանքն յայտնէինք ի դիմաց այն մեծ ժառանգութեան, որ պետական օրէնքով այս տարուանից դառնում է համազգային սեփականութիւն:

Խօսքս «Վերք Հայաստանիի» մասին է, որ այս տարուանից դառնում է ազգային սեփականութիւն, քանի որ լրացաւ արդէն 50 տարին նրա տպագրութիւնից յետոյ:

Այս հանգամանքը գոնէ, վերջապէս, առիթ պիտի տայ զարթնելու հայ հասարակութեանը և մի համազգային տօնախմբութեամբ յաւերժացնելու մարմնով ընդմիշտ կորած, բայց տաղանդով յաւիտեան կենդանի Աբովեանի յիշատակը:

«Մշակ», 1908 թ. ապրիլի 2, N 73

ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼԱԼԱՅԵԱՆՅ, ԵՐԻԱՆԴ.- «Ջաախքի բուրմունք»: Հրատար. Թիֆլիսի Հրատարակչական Ընկերութեան: Թիֆլիս, 1892 թ., տպ. Արօր, Նազարեանի. մեծ ութաձալ, 71 էրես, տառ N 10, գինն է 25 կ.:

Մեր ժողովրդագրական գրականութիւնը մի նոր գրքով ևս հարստացաւ. դա յիշեալ «Ջաախքի բուրմունք»-ն է: Այդ գրքի երևան գալը աչքի է ընկնում առաւել այն պատճառով, որ նորա նիւթը բոլորովին նոր է. դա Բարձր Հայքի, որ մինչև օրս համարեա մնացել էր անուշադիր, ժողովրդեան չափաբերական և արձակ աղօթքների, երգերի և աւանդութիւնների մի հաւաքածու է, քանի որ Ջաախքի, այսինքն Ախալցխայի ու Ախալքալաքի բնակիչները Բարձր Հայքից գաղթածներն են:

Դժբաղդաբար պ. Լալայեանը ո՛չ մի խօսք, ո՛չ մի բացատրութիւն կամ տեղեկութիւն չի տալիս ո՛չ այն ժողովրդի մասին, որի բանաւոր գրականութիւնը իւր աշխատութեան նիւթ է արել, ո՛չ այն աղբիւրների մասին, որոնցից նա օգտուել է՝ և ոչ, որ ամենից գլխաւորն է, այդ բարբառի առանձնայատկութիւնների, արտասանութեան և քերականական կանոնների մասին: Չը կան նոյնպէս բազմաթիւ օտարազգի և բարբառին առանձնայատուկ խօսքերի և դարձածների բացատրութիւնը, որ անհրաժեշտ է գրքի լեզուն հասկանալու համար:

Թողնենք այն հանգամանքը, որ հաւաքածուն ինքնըստինքեան խիստ անկատար է և լուրջ մշակութեան է կարօտ, պ. հաւաքողը մեղանշում է այնպիսի հասարակ, տարրական կանոնների դէմ, որոնց չը գիտեմալը աններելի է ամեն մի անձի, որ պարապում է ժողովրդագրութեամբ: Պր. Լալայեանը չի պահպանել ժողովրդի արտասանութիւնը, անուշադիր է թողել բարբառի շատ քերականական կանոնները, խառնել և աղաւաղել է բառերը, յատկացնելով նոցա այնպիսի նշանակութիւն, որ չունին իսկապէս: Պր. Լալայեանը չը գիտէ, որ Ջաախքում կան այնպիսի գաւառաբարբառներ, կամ նոյն իսկ այնպիսի ինքնուրոյն բարբառներով խօսող գաղթականներ, որոնց բանաւոր գրականութիւնը նա խառնել, շփոթել է Ջաախքինի հետ. չը

հասկանալ նոցա միջի ահագին տարբերութիւնը կը նշանակէ չ'ըմբռնել հաւաքած նիւթի պատմական, լեզուաբանական և ժողովրդագրական ահագին նշանակութիւնը: Այսպէս «Անօրէն մարդկանցից ազատելու աղօթքը», «Ահա մտայ զանկողին գերեզման», Սիրոյ երգերից առաջին չորս տունը, «Դռնէն անցայ բնդիրն էր ծուխ», «Արիք տեսէք աղջկայ կեսուր», «Առաւօտ գարի պոկենք», նաև Պար-երգերից շատերը, Հարսանեաց երգերից առաջին երկուսը և այլն, և այլն չեն պատկանում Ջաւախքին, այլ կամ գաղթած եկտորներն են հետմերը բերել և կամ պատահաբար գիտեցել է մի ջաւախեցի:

Հնտի, մնտի լաւ Թէլինկօ,
Ճտռաֆըտէլ լաւ Թէլինկօ,
Արաճի Մուրատ մուրսի վրատ,
Կարգւեցար ո՞ր է հինատ...

Ի՞նչ նշանակութիւն կամ պարունակութիւն ունին, ի՞նչ լեզուով կամ բարբառով են առաջին երեք տողերը, մենք չը կարողացանք հասկանալ, թէ և Ջաւախքի բարբառը մեր մայրենի լեզուն է, և չը կարողացան հասկանալ այդ բառերը ո՛չ մինը ջաւախեցիներից, որոնց մենք դիմեցինք բացատրութիւն խնդրելու: Օրինակի համար համեմատեցէք և տեսէք «Մեր թագաւորն է աջ խաչ...» (երես 26), որը ոչինչ առնչութիւն չունի Ջաւախքի (նոյն և Բարձր-Հայոց) բարբառի հետ: Մի քանի տեղեր աւելի աններելի սխալներ են արած: Այսպէս՝ (երես 28)

Կովեր ունինք սև ու կարմիր,
Քեզ կթելու մէկ մասն ընտրիր.
Սէր (սեր) ու կարագ շատ պատրաստիր...

Ընդգծեալ երկու տողերը ժողովրդինը չեն, այլ թխովի, կեղծ ու արհեստական: Դռքա մեր գրականական լեզուով են գրած երևի տան պակասը լրացնելու համար: Նոյնը պէտք է ասել նաև (եր. 36) «Պիլպիլ, ի՞նչ ես պառկէ չոխուռ օւայում» երգի առաջին տան մասին, որը թարգմանած է թուրքերէնից կէս գրականական և կէս Ջաւախքի բարբառով:

Գալով բուն նիւթին, որտեղ անթիւ տպագրական սխալներ կան ամեն մի երեսում և այն որ ուշադրութեան չէ առնում և մատնանիչ չէ արւած բառերի արտասանութիւնը, այլ և աղաւաղւած և շփոթւած են թէ ուղղագրութիւնը և թէ բառերը: Չէ՞ որ հարկաւոր է նախ գրել այն-պէս, որպէս արտասանում է ժողովուրդը և երկրորդ, եթէ մեր ունեցած տառերը բաւական չեն բարբառի բոլոր ձայները արտաբերելու, այն ժամանակ տառերի վերայ դրող սովորական փշիկներով կամ նշաններով աշխատում են պակաս ձայները լրացնել¹: Անտարակոյս կարդացած կը լինիք պ. Գ. Խալաթեանի «Հայ ազգագրութեան ծրագիրը»: Ժողովուրդը ասում է գլոխ, գրած է գլուխ և գլոխ. ասում են էրկինք, Մայրամ, գրած է երկինք, Մարիամ և Մայրամ. Իսսուսը գրած է Յիսուս, սուփ կամ սուրփ, գրած է սուրբ, փե՛ր կամ բե՛, գրած է բեր. ասում են Վերուսաղո՛մ, կամ Վերուսաղե՛մ, Էրուսաղե՛մ,- գրած է Երուսաղե՛մ: Հարկաւոր էր գրել քութար, Սա՛րքիս, ա՛շկե՛րտ, ա՛ջբ, Աթամ, մարթ, Կիրակո՛ս, Քրիստո՛ս, Գիրքո՛ր, գրւած է Սարգիս, աշկերտ, և այլն. ինչպէս ընդունւած է գրականութեան մէջ: Գրում է՝ քառասուն (պիտի լինի քառսուն), նէաֆաս (նա՛ֆա՛ս), վել (վե՛ւ), պութաղ (պուտաղ), թագուր (թաքուր), շաղէ (շաղուէ), խազմատար (խա՛զմա՛տար), ճամփներ (ճամփըներ), գալաւայ (գըլաւա), անմման (անլըման), պաքմազ (պա՛քմա՛զ), թանք (թանկ), չը գտնեմ (չը գտնիմ), կամուրջ (կարմունջ), ականջ (անկաճ), մէջ (մէ՛շ), զարկէ (զարնէ), իշտէք (յիշտէկ), ըռանջպար (ըռա՛նջպա՛ր), բարձած (բառցած), դառէ, դարձած (դառցէ, դառցած), իջեցրին (իջեցուցին), ասոնք, իսոնք, ինոնք, մերոնք, մերոնք (հարկաւոր է ասո՛նք, իսո՛նք, ինո՛նք, մերո՛նք, ձերո՛նք)... Մենք սխալների երեսները մատնանիչ չ՛արինք, որովհետև իւրաքանչիւր երեսում տասնեակներով այդպիսի սխալներ կան. օրինակ մենք կը բերենք մի հատւած պարոն Լալայեանի գրած և նորա դիմացը ժողովրդի արտասանածը.

1. Ստորև բերած օրինակներում շեշտի (') նշան ենք դնում այն տառերի վերայ, որոնք գրականականից տարբեր կերպով են արտասանում:

Տպւած է (երես 1)
Թագայ հացի ֆուտ էկաւ,
Ելէք աշեցէք վով էկաւ,
Իրէք, իրէք պոզ ձիաւոր,
Իրէքն ա կանանչ կապաւոր.
Մէկը Յիսուս, մէկը Զրիստոս,
Մէկը մանուկ՝ սուրբ Կիրակոս,
Էկաւ սարով, իջաւ ձորով,
Հրեշտակին դէմը բարով...

Պիտի լինի
Թա՛գա՛ հացի ֆո՛տ (կամ հո՛տ) էկաւ,
Ելէ՛ք աշեցէ՛ք վո՛վ (կամ վե՛ւ) էկաւ,
Իրե՛ք, իրե՛ք պոզ ձիաւո՛ր.
Իրե՛քն ա կանանչ կապաւո՛ր
Մէկը Իսսուս, մէկը Զրիստո՛ս,
Մէկը մանուկ՝ սուրբ Կիրակո՛ս...
Էկաւ (էկա՞ն) սարով, իջան ձորով,
Հըրըշտըկին դէմը բարով...

Արձակ գրածներից աւելորդ են համարում մի նմուշ դնել, թէև այն-տեղ ևս անթիւ սխալներ կան: Մեր կարծիքով այս հաւաքածուն իւր ներկայ ուղղագրութեամբ համարեա անպէտք է ուսումնասիրութեան համար, քանի որ բարբառի բազմաթիւ հնչյունները կորսւած են նորա մէջ և փոխարինւած խորթ և անհարազատ հնչյուններով: Այս բարբառը ունի բացի սովորական «ա»-ից և մի ուրիշ «ա՛» փափուկ (որպէս ֆրանսերէն *la* մասնիկում), որպէս նա հնչւում է բառերումս պա՛քմա՛գ, Ախրքա՛լակ, Արգո՛ւրո՛ւմ: Բացի «ու»-ից և մի փափուկ «ո՛ւ» (ճիշտ համապատասխան ֆրանսիական «u»-ին), որպէս բառումս Արգո՛ւրո՛ւմ: Մինչդեռ «ե»-ն և «ո»-ն գրականական բառերի մէջ հնչւում են որպէս պարզ «ե» և «ո», այս բարբառի բառերում, երբ շեշտը այդ տառերի վերայ է, հնչւում են «ե»-ն ինչպէս յե, իսկ «ո»-ն որպէս մակարդ-

ւած «ուօ», ինչպէս հո՛ր, ձո՛ր, փո՛ր, սո՛խ, սխտո՛ր, կխտո՛ր, մերո՛նք, ասո՛նք, ատո՛նք, և այլն բառերում. «ե»-ն տես բառերումս՝ բե՛ր, փե՛, կե՛ր, փե՛ս, եզնե՛ր, կովե՛ր, հարսնե՛ր, անե՛ր, հողե՛մ, թաղե՛մ, փոխե՛մ, և այլն: Ջաւախքի բարբառը չունի լիակար բ, գ, դ, ջ, և ձ, այլ դոցա փոխանակ բ-ի և պ-ի միջին ձայնը բ-ի տեղ է գործածում, երբեմն բ-ն դառնում է պ և փ (պարի, սուրփ, փեր - փոխանակ բարի, սուրբ և բեր). գ-ի տեղ գործ է ածում թոյլ գ, որ երբեմն դառնում է «կ», և «ք» (գիւղերից մի քանիսում ասում են կարի, փոխ. գարի, քութամ՝ փոխ. կութամ): «Դ»-ի տեղ թոյլ դ, որ երբեմն դառնում է «տ» և «թ»: «Ջ»-ն դարձել է փափուկ ջ, երբեմն նաև «ճ» և «չ» (անկաճ, մէչ), «ձ»-ն դարձել է թոյլ ձ, երբեմն նա հնչում է որպէս «ց» և «ծ»... Մեր մատնանիշ արած բարբառի նրբութիւններից մի քանիսը միայն (ինչպէս ա՛նէա խօսքում) պահպանել է պ. հաւաքողը, իսկ ամենամեծ մասը ո՛չ միայն չեն պահպանւած, այլ և ո՛չ մի տեղ ուշադրութեան էլ չեն առնւած: Կնքում ենք մեր խօսքը, յայտնելով մեր համեստ կարծիքը, որ այդ գիրքը կարօտ է նոր, կանոնաւոր և ուղիղ տպագրութեան, տեղ-տեղ նաև խմբագրութեան, այսինքն դէն գցելով Ջաւախքին ոչ յատուկ երգերը: Այլապէս այդ ժողովածուն շատ թիրիմացութիւնների տեղիք կը տայ:

«Մուրճ», 1892 թ. N 7-8, էջ 1164-1168

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԼԱՍՏԻՎԵՐՏՅԻ վարդապետի Հայոց պատմութիւնը. թարգմանեց Մինաս քահանայ Տէր-Պետրոսեանց: Ալեքսանդրապոլ, տպարան Ա. Մ. Մալխասեանի, 1893 թ., 233 էջ, ութաձալ, գինն է 60 կոպէկ:

Մեր դասական մատենագրութեան զարկ տւեց Խորենացու աշխարհաբարը, որին յաջորդեց Եղիշէի երկրորդ թարգմանութիւնը և այսօր էլ ահա լոյս է տեսել Լաստիվերտցու թարգմանութիւնը: Անտարակոյս, ցանկալի է, որ մեր բոլոր դասական գրածների թարգմանութիւնն ունենայինք աշխարհիկ լեզուով, բայց Կորիւնը, Բիւզանդը, Փարպեցին, Մէքէոսը, Ասողիկը և այլն թողած ձեռնամուխ լինել Լաստիվերտցու թարգմանութեան, մեզ օտարտի է բուռն: Թէև սա ԺԱ դարու միակ պատմիչն է, բայց թէ իւր նշանակութիւնով և թէ պատմական ոճով շատ երկրորդական տեղ է բռնում մեր հին գրականութեան մէջ, մանաւանդ նա աւելի մի ողբերգու վարդապետ է, քան իսկական պատմիչ, որ ամեն մի երևոյթ բացատրում է ժամանակակիցների մեղքերի շատութեամբ և շարունակ ողբում է Հայաստանի թշառութիւնը, անհամար, շատ անգամ անկապ և անտեղի վկայութիւններ մէջ բերելով Ս. Գրքից, որին՝ ինչպէս երևում է, շատ է տեղեակ:

Գրքի բովանդակութիւնից ամենահետաքրքրական կտորներն են Բագրատունեաց անկումը և Թոմդրակեցոց աղանդին նւիրած տեղեկութիւնները:

Լաստիվերտցին առհասարակ նկարագրում է իր ժամանակակից դէպքերը և ըստ երևոյթին ստուգապատում է:

Այս պատմիչը թարգմանւած է նաև ֆրանսերէն:

Աշխարհիկ թարգմանութեանը կցած են 137 ծանօթութիւն և յատուկ անումների մի ցանկ: Վերջինս ամբողջովին քաղւած է Վենետիկեան բնագրից և յարմարեցրած է թարգմանութեան էջերին, որ անշուշտ կարևոր է ուսումնասիրութեան ժամանակ: Ծանօթութիւնները, սակաւ բացառութիւններով, աշխարհագրական անումներին են վերաբերում: Բայց այդ ծանօթութիւնները ցանկալի էր որ աւելի որոշ լինէին. օրինակ՝ բաւական չէ ասել թէ «Խլաթը Բզնունեաց գաւառի քա-

դաքն է» (223 եր.). «Շինին՝ Մանանաղի գաւառի բերդաքաղաք է» (223). «Ապահունի գաւառը Մեծ Հայքի Տուրուբերան աշխարհի գաւառներից մէկն է» (208) (ընդգծումները մերն են), այլ պէտք էր ասել նաև որ Խլաթը գտանուում է Վանայ ծովի ափին և այլն:

Թարգմանիչը նշանակել է Ս. Գրքից քաղած գլուխների և հատուածների տները, որոնք պատահում են բնագրում: Թէև ինքը դրան առանձին արժէք չի տալիս (առաջաբան), բայց իսկապէս դա կարևոր է և մեծ դիւրութիւն կարող է տալ ձեռագիրների համեմատական ուսումնասիրութեան և բնագիրը վերականգնելուն:

Թարգմանութիւնը ընդհանրապէս բաւական աջող է. լեզուն կոկ, պարզ և ընթերցողների մեծամասնութեան համար դիւրամատչելի, այնպէս որ, եթէ յիշելու չլինենք մի քանի չնչին անհարթութիւնները, թարգմանիչը հասել է իւր նպատակին:

Թուղթը և տպագրութիւնը մաքուր են և պարզ. գիւնը համեմատաբար թանկ չէ: Տպագրական սխալները շատ են:

Գ. Վնց.

«Մուրճ», 1894, N 3, էջ 438-439

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ: Կիսամեայ պատկերագարդ. առաջին տարի. Ա գիրք. 1896. Շուշի. քառածալ.

Թէև ազգագրութիւնը նորաբողոքոջ և դեռ ևս չկազմւած մի գիտութիւն է, բայց հայերս այդ մասին բաւականին հում նիւթեր ունինք. Սրուանձտեանի դասական երկերից և մի շար այլ անհատների հարուստ հաւաքածուներից յետոյ՝ ահա երևան է գալիս մինչև անգամ առանձին «Ազգագրական Հանդիսի» մի հաստ հատոր՝ և խոստանում է պարբերական հրատարակութիւն լինել:

Մի փոքրիկ ներածութիւնից յետոյ հրատարակիչ պ. Լալայեանը տալիս է «Հայ ազգագրութեան համառօտ տեսութիւնը».- Այն աստիճան թոյլ, սառն և ողորմելի մի կոմպիլացիա է դա, որ նորա վերայ կանգ առնելը ժամանակի կորուստ կ'նշանակէ. չպարունակելով ո՛չ մի նոր միտք, նա ներկայացնում է օտար ընտիր ուսումնասիրութիւնների մի կարիկատուրան-ծաղրանկարը: Ֆրանսիացոց համար դա կարող էր գուցէ նորութիւնների շարը դասիլ. եւրոպացու ներողամտութիւնը և բռնագթօսիկ համբերութիւնը երբեմն աւելի դառն է քան ամենասատիկ կրիտիկան:

Միանգամայն թարմ, հետաքրքիր և մեր երկրի անցեալը լուսաբանող յօդածներ են պ. Բաբայեանի «Մանիացոց տէրութիւնը» կոմպիլացիան, «Խոջալուի գերեզմանները» - ինքնուրոյն և «Կովկասի տեղը քաղաքակրթութեան պատմութեան մէջ» թարգմանական յօդածները: Վերջինին կցած է հինգ ընտիր նկարուն տախտակներ, որոնցից պարզ երևում է, թէ մեր նախորդները Կովկասում (հաւանօրէն խալդեր) ո՛ր աստիճանի բարձր կուլտուրա են ունեցել: Դժբաղդաբար յօդածի մէջ յիշւած քահամարները չեն յիշւած տախտակների վրայ, այնպէս որ չես իմանում թէ խօսքը ո՛ր տախտակի և ո՛ր պատկերի մասին է: Թարգմանականների թիւն են պատկանում նաև Պետրէի «Մարդաբանութեան պատմական զարգացումն» և Շ. Լէտուրնօի «Ամուսնութեան զարգացումն»: Երկու խնդիրներն էլ միանգամայն նոր և հարցասիրական մեր հասարակութեան համար: Մեր գրականութիւնը այնքան աղքատ է, որ դոյնանման որպիսի թարգմանութիւն

Էլ տանք ընթերցողին, ուրախալի է, բայց թարգմանիչը պիտի աշխատի ընտիրը և գիտութեան վերջին խօսքը տալ թարգմանօրէն. այդ չենք կարող ասել Լէտուրնօի աշխատութեան մասին, ուր ամուսնութեան վերաբերեալ հարուստ և բազմակողմանի տեղեկութիւններ կան, բայց ո՛չ նորա զարգացման պատմութիւնը. նա միայն բտմ է, նկարագրում է, յետոյ էլ աշխատում է մի որոշ եզրակացութեան բերել իւր ֆակտերը, բայց այնպիսի մի մեծ էպօխայի մասին, որպիսին է մայրական իրաւունքը, նա ոչինչ չի յիշում: Թւում է թէ Լէտուրնօին ծանօթ չեն եղել Բախօֆէնի և Մօրգէնի աշխատութիւնները. մանաւանդ վերջինի կլասիքական գործը Հիւսիսային Ամերիկայի վայրենիների մասին, որոնց շնորհիւ միայն ամուսնութեան զարգացումը իւր իսկական լուսաբանութիւնն առաւ: Լէտուրնօն առհասարակ կարծես չի՝ ուզում ընդունել ամուսնութեան զարգացումը մայրական իրաւունքից դէպի հայրականը և էնդոգամիայից դէպի էկզոգամիան. նա ճանաչում է միայն խառնակեցութիւն և միակնութիւն:՝ Դա հնացած գործ է և ուրեմն թարգմանութեան ընտրութիւնը սխալ:

Ինքնուրոյն յօդածներ են պ. Օհանեանի «Կրակը» և Կրպէի «Խծկոնք»-ը: Սակայն, Հանդէսի ծուծն ու էութիւնն է «Ջաւախք» ինքնուրոյն ժողովրդագրական հաւաքածուն, որը իւր առատ և բազմակողմանի նիւթերով մի ահագին գանձ է հայ ազգագրութեան համար: Ազգագրութիւնը մի շատ դժուար և ապերախտ գործ է. նա պահանջում է լուսանկարչի ճշտութիւն մեղուի ժրաջանութեան հետ, բայց և այնպէս շա՛տ անգամ նորա տուած արդիւնքը չի՝ արդարացնում այն ահագին ջանքը, որ թափուել է նորա վերայ, եթէ մանաւանդ բանահաւաքը հմտութիւն ու նրբամտութիւն չունի իւր դիտողութիւնը մի քիչ խորն ուղղելու: Ջանասիրութեան կողմից պ. Լալայեանը արժանի է խորին շնորհակալութեան և գովասանքի. նորա օրինակը ցոյց է տալիս, որ ամեն մի կրթած մարդ՝ եթէ մի քիչ իրան նեղութիւն տայ, կարող է մայրենի գրականութեանը և գիտութեանը իւրովսանն ծառայել. երանի թէ մեր պոռոտախօս ինտելիգէնտները օրինակ առնէին պ. Լալայեանից, որը մի տարի շարունակ ուսուցչութիւնը թողած անցել է ամբողջ Ջաւախքը և մեղուի ժրաջանութեամբ ուսումնասիրել հայ ժողովրդի կեանքը:՝ Ծաղիկներ չեն եղել նորա հաւաքածները և ո՛չ կա-

նաչազարդ դաշտեր ու ձորեր նորա այցելած տեղերը, այլ Ջալախեցու խրճիթը, գոմը, օդան: Ով մէկ օր միայն գիշերելու առիթ է ունեցել այդ օդաներում, նա կարող է հիանալ ու զարմանալ պ. Լալայեանի տոկոնութեան և կամքի վրայ: Թէ որքան հարուստ և բազմակողմանի են նորա հաւաքած նիւթերը՝ այդ լաւ երևում է նոցա գլուխներից, որ կարևոր ենք համարում այստեղ դնել. ա) Պատմական համառօտ տեսութիւն. բ) Ջալախքի տեղագրութիւնը. գ) Հնութիւններ. դ) Բնակիչներ. ե) Վիճակագրական տեղեկութիւններ. զ) Ազգաբնակութեան շարժումն. է) Տնտեսական դրութիւն. ը) Ժողովրդի լուսատրութիւն. թ) Հայ գիւղացիների բնակարանները. ժ) Զգեստ և զարդ. ժա) Ընտանեկան բարք. 1) Ամուսնութիւն. 2) Տղաքերք և կնունք. 3) Մանկանց դաստիարակութիւն. 4) Ընտանեկան կեանք. 5) Գերդաստանի անդամների իրաւաբանական յարաբերութիւնները. 6) Հիւանդութիւն և բժշկութիւն. 7) Ժողովրդական դէղեր. 8) Մահ և թաղումն. ժբ) Հաւատք. 1) Աստուածութիւն, սրբեր և կրօնական գրածներ. 2) Հրէշտակներ և ոգիներ. 3) Աշխարհածնութիւն. 4) Կերպարանափոխութիւն, կախարդներ և կախարդութիւն. 5) Սնոտիապաշտութիւններ. 6) Բաղդ և ճակատագիր. 7) Պաս, ուխտ և ուխտագնացութիւն:

Նաև երկու ժողովրդական եղանակներ երոպական ձայնագրութեամբ պ. Կարա-Մուրզայի:

Այդ գլուխներից վիճակագրական տեղեկութիւնները, ազգաբնակութեան շարժումը և տնտեսական դրութիւնը պ. Լալայեանը քաղել է ուրիշ աղբիւրներից, որոնք արդէն բաւական հին են (1866). մնացեալը ինքնուրոյն գործ է՝ և որոշ տեսակէտից նայելով՝ բաւական լաւ գործ:

Այդ հաւաքածուի մէջ առաջին անգամ պ. Լալայեանը բաց է անում մեր վիպագիրների և գրագէտների գոված «Նահապետական հայ ընտանիքի» ներքին մռայլ պատկերը, նորա մութ և անհամակրելի կողմերը. մի ընտանիք, որի տան անդամները «արնեզնի» հաշտով պիտի հոգան իրանց երեխաների հագուստը (291 եր.). մի ընտանիք, որը կանգնած է լուծման և քայքայման աստիճանի վրայ, որի բարքը ու վարքը ապականւած, ամուսնական սրբութիւնը պղծւած (283-4 եր.), որի անդամների մէջ շահերը այնքան բաժան-բաժան և օտարացած են, որ «գողութիւն» ու խաբէրայութիւն է տիրում (281 եր.):

Այդ բոլորը շա՛տ դառն նորություններ, շա՛տ ճշմարիտ, շատ իրական են դժբաղդաբար, բայց և շա՛տ սխալ, շա՛տ միակողմանի և անորոշ՝ շնորհիլի բանահաւաքի թեթև և ծանծաղ ուսումնասիրութեանը: Գերդաստանի անդամների իրաւաբանական յարաբերութիւնը կարդալիս մարդ այն եզրակացութեանն է գալիս, որ մեր ժողովուրդը դէպի քայքայումն է դիմում. այդպէս է գունատորել պ. Լալայեանը իւր աշխատութիւնը և այդպէս է ճանաչում նա իւր ֆակտերը, չկարողանալով հայի ընտանեկան կազմի էութիւնը հասկանալ և ըստ այնմ դատել: Այդտեղ ահա հարկաւոր էր ֆակտերը մի քիչ խորը տեսնել. չլանալ երևոյթներով, այլ ճանաչել նոցա արմատը, չբաւականանալ հետևանքով, այլ մատնանիշ լինել նորա պատճառի վրայ. այդտեղ բանահաւաքի ուժերը իրան դաւաճանում են:

Հայ գերդաստանը, մասնատրապէս բազմանդամ գերդաստանը, որ շլացրել է թե՛ օտարին և թե՛ հային՝ դեռ մի չճանաչած երևոյթ է: Նա գրաւել է օտարի գարմանքն ու հիացմունքը, հայի գովասանութիւնն ու պարծանքը. նա իբրև մի աւելի աչքի ընկնող, աւելի բարդ երևոյթ՝ ծածկել, վարագորել և յետ է մղել իսկական ընտանիքը: Այժմ քայքայում է այդ գերդաստանը և ի հարկէ ժողովրդին սիրող մարդը, ազգի ապագայ պայծառութիւնը երագողը չի՛ կարող չցատել, չափստաւ:- Սակայն, դա մի բացարձակ սխալ է: Պարզեմ միտքս. ես ժամանակակից հայ ընտանիքի երկու տիպ են ճանաչում Ջաւախքում. և կարծեմ դա ընդհանուր է համայն հայ գաւառներին.- իսկական ընտանիք և գերդաստան. առաջինը մասնատու է, երկրորդը ընդհանուր, առաջինը բաժանարար (единица) է, երկրորդը միութիւն, կապակցութիւն, որ կարելի է բաժանել, որպէս ամեն մի հաւաքական մարմին: Մարդու, կնոջ և երեխաների միութիւնը, քանի որ վերջինները չեն ամուսնացած, ես անուանում եմ ընտանիք. այդ ընտանիքը գոյութիւն ունի Ջաւախքում իւր բոլոր սրբութեամբ, ամենալայն կոմմունական յարաբերութիւններով իւր անդամների մէջ. նորանում չկայ «իմ ու քուկ», որպէս ասում է ժողովուրդը, չկայ և չի՛ կարող լինել նաև «գողութիւն», «արնեզին», կամ դոցա մման ալլանդակ երևոյթներ. իսկական ընտանիքը դա է:

Մուտք գործեց այդ ընտանիքի մէջ մի օտար անդամ - մի հարս, որը ընտանիքի ծառան է, մարդու ստրուկը, կեստրի հլու հպատակը,

որը մինչև անգամ խօսելու իրաւունք չունի տան անդամների հետ, բայց իւր այդ կրաւորական դերի բոլոր կատարելութեամբ նա յեղափոխում, կերպարանագործում է ընտանիքի պատկերը. այդ իրաւագործ արարածը կազմում է մի նոր ընտանիք մահկանան մէջ. և ինչո՞ւ, ի՞նչ է նորա իրաւունքը. նա՛ որ իւր սիրասուն զաւակին «առանց հրամանի իրաւունք չունի ծիծ տալու», ունի մի քանի անձեռնմխելի ոսկիներ և մի երկու կտոր լաթեղէն իբրև սեփականութիւն. «միակ բանը, որի վրայ չի տարածում տան մեծի (իմա՛ գերդաստանի) իշխանութիւնը, դա հարսերի փողն է» (291) ասում է պ. Լալայեանը, բայց չի լրացնում, չի հասկանում այդ արմատական երևոյթի ծանրակշիռ նշանակութիւնը. այդ հարսը այնուհետև մի տէրութիւն է տէրութեան մէջ. ջոկ է նորա սնդուկը, որ կողպէք է ունենում սովորաբար, ջոկ են նորա շահերը, ընտանիքից ջոկում, կտրում և հեռացնում է նա նաև իւր մարդուն, նա հիմք է դառնում մի նոր ընտանիքի: Այդ հարսի մուտ գործած օրից մահկան մէկ ընտանիքը դառնում է երկուս. նորա ամբողջութիւնը այժմ գերդաստանն է, այսինքն ընտանիքների ժամանակաւոր միութիւնը՝ հիմնւած մեծ մասամբ տնտեսական և ֆիզիկական մեծ ուժ ունենալու համար հասարակութեան մէջ, որ անաջող պայմաններում կարող է լուծել, կազմելով մի քանի իսկական ընտանիքներ: Ես գիտեմ գերդաստաններ բաղկացած երկուսից մինչև տասը ընտանիքներից. գերդաստանը այդպիսի ընտանիքների միութիւնն է. նորա կազմութիւնը շա՛տ բարդ է և անդամների յարաբերութիւնը շա՛տ տխրային և բնորոշ. դոցանից, այսինքն գերդաստանի անդամների յարաբերութիւններից, շատերը դիտել և նկարագրել է պ. Լալայեանը, բայց նոցա էութիւնը շա՛տ վատ է հասկացել. և այդ է պատճառը, որ այդպէս ավստասանքով է նկարագրում նորա քայքայումը, որ ժամանակի անհրաժեշտ պահանջն է: Գերդաստանը ճնշում, հերքում ու սահմանափակում է անհատի իրաւունքները. նա խեղդում է իսկական ընտանիքի զարգացումը. նա զօրեղ է համայնքի և հասարակութեան մէջ իբրև մի խոշոր ուժ, բայց թոյլ և անբաւարար ինքն իւր մէջ, իւր անդամների համար. անհատական պահանջը, դորա հետ նաև բուն ընտանիքինը, այժմ անհամեմատ աւելի մեծ և զարգացած է քան սորանից մի 30-40 տարի առաջ. անհատը և ընտանիքը այժմ թոթափել են ուզում իրան-

ցից գերդաստանի ճնշումն ու կապանքը և նա կամայ-ակամայ պիտի ընկնի. գերդաստանը ժամանակիս համար ետ մնացած, աննորմալ երևոյթ է. նա ընկնում է տեղի տալով ընտանիքին, ուր անհատի շահերը աւելի են ապահով, ուր նա աւելի քիչ է ճնշւած, ուր չկան գերդաստանական այլանդակութիւնները... Հայ ընտանիքը յետ չի գնում, այլ առաջ... նա զարգանում է... Յետ գնացողը գերդաստանն է:

Մենք համառօտակի պարզեցինք մեր հայեցակէտը. այստեղ տեղը չէ այդ մասին երկարելու, որի լրիւ լուսաբանութեան համար մի ահագին ուսումնասիրութիւն էր պէտք. ով հայի ընտանիքն ու գերդաստանն է ուսումնասիրում, այդ տեսակէտով պիտի առաջնորդի: Կինը այդտեղ հսկայական դեր է կատարում, իսկ պ, Լ.-ի աշխատութեան մէջ դա համարեա չի երևում. կնոջ իրաւունքի զարգացումը երբ նա հարս է, ապա երեխայ ունի, ապա այրի է և կամ սկեսուր՝ բոլորովին չեն պարզաբանւած հետևորէն:- Բնորոշ կողմեր ունի մանաւանդ այրի կնոջ իրաւունքը և յարաբերութիւնը դէպի այն գերդաստանը, որից հեռանում է և այն՝ ուր մտնում է նորա իրաւունքը դէպի իւր իսկական զաւակները և խորթերը, և այլն և այլն... Հայ ընտանիքի և գերդաստանի մէջ այրի կինը ամենալայն անհատական իրաւունքներն է վայելում իւր համասեռ կանանց մէջ... Հայի գերդաստանը քիչ թէ շատ ճանաչում է պ. Լ.-ն, հէնց նորա փաստերը գերդաստանին են վերաբերում. բայց բուն, իսկական ընտանիքը, նա ո՛չ միայն չի ճանաչում, այլ և նորա մասին բոլորովին յիշատակութիւն էլ չկայ հաւաքածուի մէջ:

Որ հայի գերդաստանն էլ լաւ չի ճանաչում պ. Լալայեանը, այդ ցոյց է տալիս նորա սխալ կարծիքը աւագութեան մասին: Նորա ասելով աւագութեան հիմքը երէցութիւնն է, այսինքն տան երէցն է նաև աւագը՝ «իշխանը»: Սակայն, Ղատօ գիւղում Քոչոյենց գերդաստանը, որ բաղկացած է 60 հոգուց և որը հէնց այսօր «նահապետական ընտանիքի» տիպային ներկայացուն կարող է համարել, որի պատճառով էլ նա վայելում է ամբողջ գաւառի զարմանքն ու յարգանքը, տան աւագ ունի ոչ թէ երէց, այլ երրորդ եղբայր Մաթոս քէհային: Երկու միւս եղբայրները թէև առոյգ ու խելահաս, կառավարութիւնը յանձնել են Մաթոսին (կրտսերին) իբրև աւելի ճարտարին: Ճանճղա գիւղում հօր և մեծ եղբօր ներկայութեամբ Վանցոնց տունը կառավարում է

երկրորդ եղբայր Իսրայելը. նոյնն էին մի քանի տարի առաջ Ալեքսանենց, Խուդավերդենց և այլոց բազմամարդ գերդաստանները: Պատահում է, որ տան «խօսքը» մինին է պատկանում, իսկ տնտեսական կառավարությունը մի ուրիշին. պատահում է, որ երկու եղբայրները միասին են կառավարում. մի խօսքով, այդտեղ դեր ունի երեցութեան հետ մաս ճարտարությունը, փորձառությունը, խելացիությունը, հասարակութեան մէջ ել ու մուտ ունենալու, «ճակատ պարզ անելու» ընդունակությունը: Այնպէս որ եթէ փոքր եղբայրը, կամ հօր կենդանութեանը որդին աւելի ճարտար է հօրիցն ու գործունեայ, ապա երեցությունը խոնարհում է խելքի առաջ և աւագությունը անցնում է փոքրին: Երեցությունը պրինցիպ չէ աւագութեան՝ այլ պայման. ով լաւ և պիտանի կարող է ծառայել գերդաստանին, մա էլ աւագն է կամ «մեծը»:

«Նախնի բարոյականությունը դժբաղդաբար այժմ անհետացել է և անբարոյականությունը հետզհետէ տարածում է» (282 եր.) ասում է պ. Լ.-ն: Դեռ շատ տարակուսական և հիմնագուրկ մի հարց է նախնի բարոյականութեան թուլանալ կամ ամրանալը. ո՞րտեղից գիտէ պ. Լ.-ն նախնի բարոյականութեան մասին, և առհասարակ ի՞նչ մի ստոյգ բան գիտենք մենք մեր նախնիների մասին, որոնք հէնց սորանից 50-60 տարի առաջ էին ապրում. մեզ անյայտ է թէ հայ ժողովուրդը առաջ որքան բարոյական էր ներկայի համեմատութեամբ. այդ մասին մենք ո՛չ մի փաստ չունինք և դա միայն պառաւների ու ծերերի մխիթարություն է անցեալը միայն վարդի գոյներով տեսնել. գիտությունը փաստ է ուզում, իսկ դուք փաստ չունիք:

Եւ ի՞նչ է այն բարոյականությունը, որ դուք դատապարտել էք աշխատում: Դուք չէք որոշում երկու տարրական երևոյթներ - անառակությունը, որ մարմինը ծախում է դրամին, և բուրժուաների լեզուով ասենք՝ «ընտանեկան անհաւատարմությունը», այն որ ժողովուրդը անուանում է «սիրող անել»: Դոքա տարբեր են միմեանցից որպէս երկինք ու երկիր: Պ. Լալայեան չի՛ յիշատակում անառակութեան ո՛չ մի դէպք, որոնք, այո՛, պատահում են թէև շա՛տ հազիւ. բայց «սիրող անելը» անուանում է մա անբարոյականություն:- Յայտնի պիտի լինի, որ ամուսնությունը Ջաւախքում կատարում է ծնողների կամքով, որ ամուսինները շատ անգամ մի-մի զոհ են ծնողական բռնակալութեան.

այն էլ պիտի յայտնի լինի, որ մարդիկ շատ անգամ բնական արատներ են ունենում, անընդունակ են լինում ամուսնական պարտքը կատարելու. այն էլ գիտեք, որ մարդու և կնոջ յարաբերությունը մեծ մասամբ տիրապետի և ստրկի յարաբերություններ են, ուր ընտանեկան սեր չի՝ կարող գոյանալ. նկատեցեք, որ անգլուստի լինելը մի արատ է կնոջ համար, որի պատճառով նա ստիպված է լինում «քարձը փոխելու», ինչպես ժողովուրդն է ասում. և այն ժամանակ հասկանալի կը լինի, որ այդպիսի պայմաններում շատ բնական է, որ կինը դաւաճանէ իւր անընդունակ ամուսնուն կամ ամուսինը իւր ատած կնոջը... Եւ եթէ այդ երևոյթը մի քիչ խորը դիտելու լինեք, կը տեսնեք, որ «սիրող են անում» մեծ մասամբ ընտանեկան դժբաղդները: Ժողովուրդը դա չի անւանում անառակութիւն, այլ «սիրող անել».- սէրը անդատապարտելի է, նա՛ է սերնդի ազնւանալու հիմքը:

Ժողովրդի բարոյականութեան, կամ աւելի ևս լաւ ասել, նորա կուլտուրայի աստիճանը շատ պարզ կ'երևար, եթէ պ. Լալայեանը չմոռանար յանցանքների և նորա տեսակների վիճակագրութիւնը տալ. զարմանալի է, որ այդ կարևոր կէտը բոլորովին չի յիշում այդքան բազմակողմանի աշխատութեան մէջ:

Սակայն այդ աշխատութիւնը բազմակողմանի և հարուստ է ո՛չ թէ որակով, այլ քանակով. սատանաներին վերաբերեալ անցողական սնոտիապաշտութիւններին ահագին տեղ է նւիրւած, իսկ մի այնպիսի էական կողմ, որպիսին է յանցանքների վիճակագրութիւնը կամ ժողովրդի կուլտուրական քարաքտէրը բոլորովին բաց է թողնւած. ի դէպ է նկատել, որ Զաւախքը Կովկասի ամենահանդարտ գաւառներից մէկն է. երեք տարի սրանից առաջ մի ամիս շարունակ Ախալքալաքի բանտում յանցաւոր, իսկ քննիչի մօտ գործեր չկային քննելու.- մի երևոյթ, որ Եւրոպայումն էլ հազիւ կը պատահի: Այդ բաւական չէ՛, պ. Լ.-նը մոռացութեան է տւել նաև համայնքը. մարդը հասարակային էակ է, ասել է Արիստոտելը. առանց հասարակութեան համայնքի, առանց համայնական միջավայրի չէին կարող առաջ գալ բանահաւաքի նկարագրած երևոյթներից և ոչ մինը... Սակայն պ. Լ.-ի ոտը քարի է դէմ առնում այնտեղ, ուր լռում է պ. Խալաթեանի ծրագիրը, որով նա առաջնորդւել է իւր նիւթերը հաւաքելիս:

Առատ նիւթեր կան գրքի մէջ ժողովրդի հաւատալիքի, հարսանիքի, տղաբերքի, կնունքի և այլոց մասին... Որպէս նաև տեղի բարբառով զրոյցներ զանազան պարունակութեամբ:

Բայց ինչ որ մենք ասել էինք 1892 թ. «Մուրճ»-ի 7-8 N-ում «Ջաւախքի բուրմունք»-ի մասին, նոյնն էլ կրկնում ենք և այժմ, որ բարբառի նրբութիւնները, մանաւանդ հնչիւնաբանութիւնը այլանդակւած է: Օրինակներ աւելորդ ենք համարում բերել մատնանիշ լինելով մեր անցեալ քննադատականի վրայ, որից պ. Լ.-ն չկարողացաւ օգտւել: Պր. Լալայեանը բարբառը չգիտէ և այլանդակում է նորա հնչիւնաբանութիւնը, ինչպէս որ այլանդակել է նաև բոշայերէն երգերին¹ «Ջաւախքի բուրմունք»-ի սխալները պ. Լ.-ն իւր պատասխանի մէջ² փաթարում էր Հրատարակչ. ընկ. վզին. իսկ ա՞յժմ ինչ կ'սաւ:

Հաւաքածուի լրջութեանը վնասում են նորա մի քանի լեզուաբանական բացատրութիւնները, որոնք առ սակաւը հաւաքողի բոբիկութիւնն են ցոյց տալիս այդ գիտութեան մէջ. Խըրթըզը նա հանում է վրացերէն էրթիս բառից. դա վրաց ազգասիրական բացատրութիւնն է: Աբուլ սարի՝ իբր թէ նշանակում է քրմապետ. ո՞ր լեզուով:

Կուրիօզների թին է պատկանում և 134-րդ երեսի այս նկարագիրը. ձիւնի և բքի պատճառով «գիւղացիք ամբողջ շաբաթով բանտարկւած են մնում և կերակրում են այն հացով, որ բարեկամները հերթիկը բանում և վայր են կախում». հապա այդ բարեկամները ի՞նչպէս են դուրս գալիս տանից. կամ եթէ դուրսն են մնացել՝ ի՞նչպէս չեն սառչում ցրտից. ո՞հ կարի է առասպելս:

Ընդհանրապէս վերցրած գիրքը իւր ահագին ծաւալով պատկառելի տպատրութիւն է բողնում և եթէ աչքի առաջ ունենանք նորա 6 պատկերները, հինգ ահագին նկարների տախտակները՝ տպագրութեան և թղթի մաքրութիւնը, ապա նա չափազանց էժան է. 2 յուրի:

Ի դէպ՝ պատկերների մասին: Ինչ կարիք կար այդտեղ Վիրխովի և Լէ-Տուրնօի պատկերներին, ես չեմ հասկանում. առաջին՝ Վիրխովի պատկերը աջող չի կարելի համարել. և երկրորդ՝ նա մեծ էտնոգրաֆ

1. «Ջաւախք»-ում բոշաների մասին գրածը թող ընթերցողը համեմատի «Մուրճ», 1892 թ., N 7, 8 և 9. «Հայ բոշաներ» յօդածի հետ:

2. Տպւած «Մուրճ», 1892, N 10:

կամ էտնոլոգ չէ՛. նա մեծ է այլ ասպարիզում: Այդ երկու պատկերը այս հանդիսին շատ քիչ են յարմարում: Դորա էութիւնն ու ծուծը Ջաւախքն է, և նորա ժողովրդի կեանքից ո՛չ մի պատկեր չկայ. ո՛չ հայ գիւղացին, ո՛չ հայ գեղջկուհին, ոչ արհեստաւորը և ոչ մի ընդհանուր տիպային պատկեր: Մի բուրժուա ոսկէ պաճուճ օրիորդի պատկերը գաղափար չի կարող տալ Ջաւախքի ժողովրդի մասին: Փոխանակ Վիրխովի, Լէ-Տուրնօի՝ կարելի էր ջաւախեցու պատկերներ տալ: Դա թէ՛ ցուցամոլութիւն չէր լինի, թէ՛ նորութիւն կը լինէր և թէ հանդիսի նպատակին յարմար ու պատշաճ կը լինէր: Հայ գիւղացու տունը, գործիքները, տեղական կենդանիները, գութանը, սայլը, կարող էին աւելի կարևոր լինել. նոքա ժողովրդի կուլտուրայի շօշափելի, իրական արտայայտիչներն են... Նոքա փոխում են ու կորչում. պէտք է նոցա՛ փրկել կորուստից. Վիրխովների պատկերները երբէ՛ք չեն կորչի:

«Մուրճ», 1896, N 5, էջ 634-641

ՅՈՎՆԱՆԵԱՆ, Վ. Մխիթ. Ուխտէ. Հետազոտութիւնք նախնեաց ռամկօրէնի վրայ. գրեց Հ. Դևոնդ, Մասն Ա, Վիեննա, 1897 թ., ութձալ, 272 եր.

Մեր դասական անուանեալ մատենագրութիւնը, յատկապէս նորա մի քանի ականաւոր ներկայացուցիչները՝ Խորենացի, Բիւզանդ, Ագաթանգեղոս և այլք իրանց պատմական նիւթի կարևորութեամբ, Եզնիկ, Եղիշէ, Փարպեցի և այլք իրանց պերճ ու փարթամ լեզուով այնքան են գրաւել հայ բանասիրութեան ուշը, որ ստորին դարերի մեր ռամկախառն կամ զուտ ռամիկ գրականութիւնը սակաւ բացառութեամբ մնում է փոշու մէջ թաղւած մի անծանօթ գանձ: Եւ իրաւ, մի սովորական բանասէր, որ մեր ձեռագիրների հաւաքածուներին և նոցա բովանդակութեանը անձամբ ծանօթ չէ, բնաւ տեղեկութիւն անգամ չի կարող ունենալ, որ մենք բացի դասականից ունենք և մի այլ թէև ո՛չ այնպէս փայլուն ու վսեմ գրականութիւն, որ «ոսկի» կամ «արծաթ» անունը վայելել կարողանար, բայց իւր պարզութեամբ, իւր ձևերի, ոճերի և բազմաթիւ նոր բառերի գանձով, որից զուրկ են գրաբարը և արդի աշխարհաբարը, մանաւանդ իւր ընտանութեամբ, իւր անմիջական մօտիկութեամբ ներկայի կենդանի բարբառներին, շատ բաներով աւելի օգտակար և պիտանի կարող էր լինել քան ոսկէ դարու երկերը...

Ուստի՝ «Հետազոտութիւնք նախնեաց ռամկօրէնի վրայ» գրքի երևան գալը, ուր նախնի ռամկօրէնի նմուշներ և ուսումնասիրութիւններ կան ժամանակի կարգով, ո՛չ միայն պատմական լուսաբանութեան տեսակէտով, այլ և մեր աղքատիկ աշխարհաբարը հարստացնելու համար գործնական նշանակութիւն կարող է ունենալ, որ և առանձնապէս շեշտում է հեղինակը իւր առաջաբանում:

Այդ ռամիկ գրականութիւնը տարբերում է դասականից ո՛չ միայն իւր լեզուով ու ձևով, այլև նիւթով ու պարունակութեամբ. դասական գրականութեան երկերը անհատական երևոյթներ են, նոցա հեղինակները մեծ մասամբ արտասահմանում կրթւած, ժողովրդից մասամբ հեռացած, բարձր նիւթերով զբաղւած անձեր են:

Նոցա լեզուն պալատական մի նեղ և բարձր շրջանի լեզու էր, գրութեան նիւթը պատմութիւն, փիլիսոփայութիւն կամ կրօնական հարքեր: Նորա մէջ ժողովուրդ չկայ...

Ռամիկ գրականութիւնը ընդհակառակը հայ ժողովրդի մտաւոր կացութեան եթէ ոչ իսկական, գէթ նորա ամենամօտ պատկերն է տալիս միջին դարերում. նորա յատկանիշներից մինն էլ այն է, որ հեղինակները մեծ մասամբ աշխարհական անձեր են, որոնց մէջ նոյն իսկ մի սպարապետի անուն ենք հանդիպում (Սմբատ գունդատապլ - քագաւորի եղբայր և զօրապետ): Այդ գրականութեան բովանդակութիւնը առօրեայ կեանքի անմիջական պիտոյքներն են. բուժականութիւն, մեղապահութիւն, դատաստանագրեր, արտօնագրեր, դիւանական դոկումենտներ, երգեր, հանելուկներ, առակներ, թեթև դիւրահաս պատմութիւններ և այլն: Ի նկատի ունենալով, որ այդ ամեն տեսակետով հարցասիրական նիւթերից հազիւ մի երկուսը լոյս են տեսել առանձին տպագրութեամբ, հանգուցեալ հայր Յովնանեանի այս գործը արժանի է խորին շնորհակալութեան:

Դեռ երեսուն տարիներ առաջ բազմահմուտ Այտընեանը ցոյց տուաւ նոյն իսկ հինգերորդ դարու հեղինակների մէջ ռամկօրէնի գոյութիւնը, իսկ հայր Յովնանեանը իւր բերած նմուշներով ցոյց է տալիս, որ նոյն ռամկօրէնը գէթ 12-երորդ դարում մի հաստատուն և համարեա կազմակերպւած գրական լեզու էր, որի գործածութիւնից չէր խորշում նոյն իսկ մեր արծաթեայ դարու ամենափայլուն աստղը - Շնորհալին... Դա շատ խրատական է, որովհետև մի երեք տասնեակ տարի առաջ տաք բանակով և կար թէ արդեօք կարելի է՞ կամ պէ՞տք է աշխարհաբար գրել, մինչ մեր նախնիք առանց աղմուկի դեռ 12-րդ դարում աշխարհաբար էին գրում, որի վերայ սակայն, ժամանակի անաջող պայմանները և Ռուբինեան հարստութեան կարճատև կեանքը մահացու ազդեցութիւն ունեցան և նա թառամեց առանց աճել ու զարգանալ կարենալու... Թէև բերած նիւթերը շատ սակաւ են, բայց հէնց եղածն էլ բաւական է տեսնելու, թէ որպէս գրաբարի բազմաթիւ ձևերը լեզւի աստիճանական զարգացմամբ հասել են այն դրութեանը, որ մենք այսօր գտնում ենք կենդանի բարբառներում: Միջնադարեան ռամկօրէնը հին գրաբարի և մեր նորագոյն աշխարհաբար լեզուների

միջին օդը և մանաւանդ արեւմտեան լեզւի (Պոլսի) անմիջական ծնողը կարելի է համարել: Այդ ռամկօրէնը չնայելով իւր հնութեանը շատ բաներով աւելի աշխարհաբար է քան այսօրայ մեր ու Պոլսի գրական լեզուները. տեղ-տեղ նորա մէջ ցոյում է կենդանի լեզւի պատկերը իւր բոլոր իստակութեամբ, որպէս Արարատեան բարբառը Աբովեանի և Պռոշեանի երկերում, և չունի այն խորթութիւններն ու անհարազատ բարդութիւնները, որոնցով հարուստ է մանաւանդ մեր լեզուն: Ոգու և ոճի կողմից, չնայելով բազմաթիւ օտարազգի բառերի գործածութեան՝ այդ լեզուն բուն հայերէն է:

Եթէ այդ միջնադարեան հայերէնը մեզ այնպէս ծանօթ լինէր որպէս գրաբարը, ապա կարիք չէինք ունենայ շատ նոր և անաջող բարդութիւններ հնարելու կամ սխալ գործածելու, որպէս այսօր. օրինակ 12-րդ դարում հայերը մեղապահութեան համար ունէին պարամայր (պարսմայր կամ պարուց մայր), մարի և որձ բառերը այն մեղոների համար, որոնց մենք այսօր շինովի և անաջող բառերով անւանում ենք թագուիի, աշխատաւոր մեղու և բռռ. շարժական կայքը նոքա անւանում էին շարժուն իր և այլն... Բանասէրը առօրեայ կենանքի, իրաւաբանական, բուժական և դիւանագիտական բազմաթիւ ընտիր և հաստատուն տերմիններ կարող է գտնել այդ գրականութեան մէջ, որոնք մենք մուրաժու բառերով ենք արտայայտում:

Այդ գրքի ամենամեծ պակասութիւնն այն է, որ օտարազգի բառերից միայն ֆրանսերէնի թարգմանութիւնը կայ, մինչ արաբերէն, յունարէն և այլ բառերը մնում են առանց բացատրութեան: Յուսանք որ գրքի երկրորդ հատորը այդ պակասութիւնից զերծ հրատարակի:

Առիթից օգտւում ենք «թարգմանել» բառի միջնադարեան նշանակութեան մասին երկու խօսք ասելու. թարգմանել բառը Շահնագարեան վարդապետին առիթ է տւել կարծելու, իբրև թէ Սմբատ սպարապետը իւր տարեգրութիւնը օտար լեզուով է գրել և ապա հայերէն թարգմանել: Գրքիս հեղինակը աշխատում է հերքել այդ կարծիքը, ջանալով ցոյց տալ, որ Սմբատը չէր կարող օտար լեզուով գրած լինել իւր պատմութիւնը. և սակայն կարևոր թարգմանել բառը մնում է անհերքելի: Մեր կողմից կարող ենք աւելացնել, որ հէնց այսօր Բարձր Հայքի գիւղական ժողովուրդը (Ախալքալաք) թարգմանել կամ «թարգմա-

նել» բառը գործ է ածում յօրինել, շարադրել, հեղինակել, հնարել բաների նշանակութեամբ. նոյն մտքով է բանեցրել անտարակոյս և Սմբատ զօրապետը:

Այդ հաստատումն է նորանով, որ նոյն Սմբատը մի քանի այլ տեղեր, ուր խօսքը իսկական թարգմանութեան մասին է, բանեցնում է փոխել բառը, այսպէս էջ 201. «Ես բազում աշխատութեամբ փոխեցի զսա ի մեր հեշտալուր բառս». 202. «և ձեռօք իմովք աշխատեցայ և փոխեցի զսա». մի անյայտ անձն ասում է. «զի սա (Սմբատ) ետ մեզ փոխել ի յիւր լուսաւորեալ գրոցն» (202). Ամիրտովլաթը, մի բոլորովին այլ անձնաւորութիւն, 55-րդ երեսում ասում է. «այնոր համար՝ որ այս գիրքս ի յայլ լեզուէ փոխել է»: Սմբատը անսիզների թարգմանութեան մասին ասում է. «և ես աշխատեցայ և փոխեցի ի հայ լեզուս (190)... և հալածեցայ ի փոխելն և երբ փոխեցի ես...»: Բոլորը՝ թարգմ. բառի մտքով:- Ուրեմն հին ռամկօրէնում փոխել նշանակում էր թարգմանել, իսկ թարգմանել՝ հեղինակել, յօրինել:

«Մուրճ», 1897 թ., N 3, էջ 870-872

ԵԿՍԱԼԵԱՆԻ ներդաշնակած «Պատարագի երգեցողութեանց» առթիւ

Պ. Եկմալեանը գովելի հեռատեսութեամբ իւր պատարագի արարողութեան մի օրինակը նւիրել է Բերլինի երաժշտական ճեմարանին: Մենք առիթ ունեցանք այդ մեծահատոր և բազմավաստակ երկը դիտելու և մի քանի անգամ նորանից հաստածներ լսելու: Դա մի նոր նշան է հայի առաջադիմութեան կուլտուրական մի նոր ասպարիզում, ուր մենք միանգամայն օտար ենք և ո՛չ մի նշանաւոր բան չենք արտադրել մինչև օրս:

Իսկ Վեհափառի կոնդակը այդ գործի ճակատին և նորա ընդունելութիւնը հայ եկեղեցու կողմից մի հաստատուն գրաւական է, որ մեր եկեղեցին թէև դանդաղ, բայց հաստատուն քայլերով առաջադիմելու ընդունակութիւնից դեռ զուրկ չէ՝: Երբ ժողովրդի ականջը սովորի աւելի կիրթ երգեցողութեան, երբ նորա գեղարուեստական պահանջներն աւելի զարգանան ու կազմակերպին, անյուսալի չէ՝, որ դաշնամուրն ու օրգել-ն էլ տեղ գտնեն հայ եկեղեցու մէջ, որովհետև ընտիր երաժշտութիւնը մարդկային զգացման վեհագոյն արտայայտիչն է դէպի երկնայինը, իսկ հայ եկեղեցին սկզբունքով երբե՛ք հակառակ չի եղել ո՛չ կանոնաւոր հոգևոր երգեցողութեանը, ո՛չ էլ երաժշտութեանը:

Անցնելով մեր նիւթին, թող ներելի լինի մեր համեստ դիտողութիւններն անել Գէորգ կաթողիկոսի ճայնագրել տուած պատարագի երգեցողութեանց մասին ընդհանուր-գեղարուեստական տեսակէտով, որ պարոն Եկմալեանը ներդաշնակել է շա՛տ չնչին փոփոխութիւններով: Դիտել ենք տալիս, որ մեր խօսքը պ. Եկմալեանի գործի մասին չէ՛ անմիջապէս. այլ նորա առթիւ:

Ամեն մի արուեստագէտ, որ ձեռնարկում է մի գործի, որի վերայ տարիներով քրտինք ու ջանք է թափում, ի նկատի ունի, որ այդ գործից ծագելու է մի գեղարուեստական ամբողջութիւն, որի մասերը օրգանապէս շաղկապուած են միմեանց հետ և ամեն մի մասը տրամաբանական արդիւնք և գեղարուեստական անհրաժեշտութիւն է մնացեալ

ամբողջութեան. այդ է ամեն մի ստեղծագործութեան իդէալը, եթէ նա իրօք ստեղծագործութիւն է ուզում լինել:

Գէորգ Կաթ. ձայնագրել տուած պատարագը ունի՞ր այդ օրգանական կապը, արդեօք նա մի հասուն գեղարուեստական գո՞րծ է, կարո՞ղ է նա ստեղծագործութիւն կոչուիլ, մեր կուլտուրական կացութեան մէջ մի՞թէ մենք կարո՞ղ էինք մի այդպիսի գործ ունենալ, որ գէթ չափաւոր կերպով համապատասխանէր գեղարուեստօրէն զարգացած ականջի և մտքի պահանջներին. ո՛չ և դարձեալ ո՛չ, պիտի պատասխանէ անտարակոյս ինքը Պ. Եկմալեանը: Այդ տեսակէտով ուրեմն նորա ընտրած նիւթը չունենալով գեղարուեստական ամբողջութիւն, նորա անփոփոխ ներդաշնակութիւնն էլ գուրկ է բնականօրէն նոյն ամբողջութիւնից: Պ. Եկմալեանից անտարակոյս չէ՛ր կարելի պահանջել, որ ամբողջովին վերակազմէր պատարագի երգեցողութիւնը, քանի որ նա ստեղծագործող հեղինակ չէ՛, այլ միայն եղածը մշակող. սակայն, մշակողի իդէալն էլ այնքան աւելի գնահատելի կը լինի, որքան նա մօտեցած կը լինի վերեր դրած պահանջներին:

Սորանով չենք ուզում ասել, թէ մեր պատարագի երգեցողութիւնը գուրկ է առհասարակ արժանիքից. քա՛ւ լիցի. ընդհակառակը, նա ունի շա՛տ ընտիր, տեղ-տեղ նոյն իսկ հիանալի կտորներ... Այդ շա՛տ լաւ է զգացել պ. ներդաշնակողը, որ երբեմն չի՛ խնայել իւր ջանքը հիանալի կերպով ներդաշնակելու համար, երբեմն էլ բաւականացել է միայն ընդհանուր ձայնապահութեամբ:

Էջմիածնում ձայնագրած պատարագի մի այլ մեծ պակասութիւնն էլ այն է, որ նա շա՛տ մասերով հայերէն և հայ հոգու արտայայտութիւն չէ՛: Այդ անյայտ չէ պ. Եկմալեանին, որ իւր առաջաբանում յիշում է նորա կրած ազդեցութիւնը կուլտուրապէս մեզանից բարձր կանգնած ազգերից: Հայրիկն էլ իւր կոնդակի մէջ ցանկութիւն է յայտնում բուն հայկականը գտնելու:

Մենք որպէս հայ ժողովրդի ա՛յն մասի գաւակ, որ դեռ չէ՛ կորցրել հայերէն երգելու, հայերէն ողբալու, ուրախանալու և աղօթելու անհատական յատկութիւնները, կարող ենք պնդել այդ կարծիքը, որ պատարագի երգեցողութիւնը շա՛տ է ենթարկւած օտար ազդեցութեան...: Թող մասնագէտը որոշէ, թէ նորա ո՞ր մասը պարսիկ, արաբական և

կամ յոյն ծագումն ունի և ո՛ր մասը տղետ ու անճաշակ տիրացուների կամայականության արդյունք է. իրողությունն այն է, որ այս տեսակետով էլ փոքրանում է այ. Եկմալեանի գործի նշանակությունը: Երգեցողությունը և երաժշտությունը արւեստներից ամենա-անհատական և ազգայիններից ամենա-ազգայինն են. նոքա մի ազգի անհատականության ցոլապատկերն են (Spiegelbild). մեր պատարագի երգեցողությունը շատ մասերով գուրկ է այդ յատկությունից, որ անդրադառնում է և այ. ներդաշնակողի գործի վերայ:

Առհասարակ այ. Եկմալեանը իրան կրաւոր դեր է յատկացրել, որ շատ էլ ներելի չէ մի արւեստագէտի համար. ցանկալի էր, որ նա ներգործաբար երևար այն տեղերը, որոնք խորթության և օտարության ակնյայտմի հետքեր են կրում կամ գուրկ են գեղարւեստական արժանիքից:

Սակայն գուցէ մենք պահանջում ենք անկարելին, այդ գուցէ ապագայի և կուլտուրայի գործ է, երբ մի հայ Վագներ բիրեղացնելով իւր մէջ իւր ազգի զգացումները, բովէր այն իւր հանճարի բոցով և անհատական կնիքը ճակատին՝ լոյս աշխարհի հանէր որպէս մարդկային ստեղծագործության հրաշալիք... այո՛, այդ ամենը հեռաւոր կուլտուրայի գործ է:

Ո՞րն է ուրեմն այս գործի արժանիքը¹ եղածը, սովորականը քիչ թէ շատ ներդաշնակել, ազատել տիրացուների կամայականությունից, մտցնել կրթւած ականջի համար քիչ թէ շատ տանելի տարր. ամեն տեղ առաջացնել միատեսակություն և կանոնաւորություն:- Ահա դորա արժանիքը:

Ի նկատի ունենալով գործի առաջնությունը և նորությունը, մեր նկատած պակասությունները ներելի մասամբ և հասկանալի են: Պ. Եկմալեանին մենք ցանկանում ենք լիասիրտն աջողություն և եռանդ նոր և աւելի լա՛ւ գործերի համար:

Բերլին, 1898 յունւար

«Մուրճ», 1898, N 4, էջ 533-535

1. Բերլինում մի հմուտ և ձեռնհաս անձի կողմից պատրաստում է քննադատություն այդ գործի ներքին և արտաքին առաւելութիւնների և պակասութիւնների մասին:

* * *

ԷԲԵՐՍ, Գ.- «Մարդ եմ» (Homo sum). Վէպ. Գերմաներեն բնագրից թարգմանեց Ստ. Մալխասեանց. Թիֆլիս. տպ. Մ. Դ. Ռ-օտլինեանի. 1898, սեփ. Թիֆլիսի Հ. Հրատ. Ընկ., ութածալ. 428 էջ. գինն է 50 կոպ.:

Լոկ «Մորճ»-ի խմբագրութեան յանձնարարութիւնը, գրախօսելու և համեմատելու այս գիրքը բնագրի հետ, ինձ համբերութեամբ զինեց ծայրէ ծայր կարդալու այն և տեղ-տեղ ստուգելու թարգմանութեան ճշտութիւնը, որովհետև երկու երեք գլուխ կարդալուց յետոյ՝ արդէն երևում է այս գործի նւազ գեղարուեստական արժէքը և հերոսների անբնական տիպերը:- Չուզելով իմ անհատական տպաւորութիւնը իբրև զուտ ոսկի ծախել, ես դիմեցի մի քանի բանիմաց գերմանացիների կարծիքն իմանալու:

Նրանք զարմանում են, որ գերմանական ծով գրականութիւնից մի «Homo sum» է հայերէն թարգմանում, այն էլ տպւելուց տասնեակ տարիներ յետոյ (առաջին տպագրութիւնը եղել է ուղիղ քսան տարի սորանից առաջ 1878-ին):

«Էբերսը երկրորդ կարգի գրող է. իսկ «Homo sum»-ը նրա երկրորդական գործերից». «տասնիւններորդ դարու գերմանացիներին նա ներկայացնել է ուզում չորրորդ դարու փալասների մէջ».- այսպէս կարելի էր ամփոփել գերմանացիների կարծիքը նրա մասին:

Էբերսի նշանակութիւնն ինձ համար աւելի պարզեց նրա ոչ անակնկալ մահով օգոստ. 7-ին, որովհետև նա վաղուց հիւանդ էր: Նորա գործունէութեանը նւիրած մի յօդւածում մի յայտնի լրագիր հետևեալն է ասում. «Էբերսը մեր գրականութեան հերոսների թւին չէր պատկանում, թէև իր ժամանակին նա շատ կարդացւած հեղինակներից միւնն է եղել»...

Նա ծագում է մի քրիստոնէացած հրեական ընտանիքից, որը լիապէս օժտւած է եղել այդ ազգին յատուկ ընդունակութիւններով և պակասութիւնով:- Ծնել է Բերլինում 1837-ին. ուսել է Գէօտտինգենի և Բերլինի համալսարաններում. մասնագիտութիւնը եղել է եգիպտաբանութիւնը, որով և մեծ գիտական հռչակ է վայելում: Իր գիտական ուսումնասիրութիւնների արդիւնքը նա աշխատել է վէպերով մատչե-

լի դարձնել նաև ընթերցող հասարակութեանը և ժամանակին մեծ ժողովրդականություն է վայելել մանաւանդ «Եգիպտոսի արքայադուստր» վէպով:

Էբերսը, սակայն, այն գրողներից է, որոնք մոդայի շնորհիւ սիրով ընդունելություն են գտնում, շատ կարդացում, շուտ էլ մոռացում են. և վերջին տասնամեակում նա արդէն մոռացւած տաղանդների թիւն էր պատկանում: Ինձ այն չի զարմացնում, որ մի այսպիսի երկրորդական գործ թարգմանութեան է արժանանում, որովհետև ըստ ռուսական առածի «на вкус и цвет товарища нетъ», այլ այն, որ մի Հրատ. Ընկ. արժան է համարում այդ տպագրելու:

«Մարդ եմ» վէպի բովանդակութիւնն աւելորդ եմ համարում այստեղ դնել. ով ուզում է, կարող է կարդալ, ես միանգամայն կորած եմ համարում այն ժամանակս, որ գործ դրի այդ գիրքը կարդալու: Գրքի նիւթը չորրորդ դարու անապատականների կեանքից է առնւած և համեմաւած է արհեստական էֆէկտներով: Միակ արժանիքը, հարաւի բնութեանը նւիրած գեղեցիկ, կարելի է ասել բանաստեղծական նկարագիրներն են: Թէ որքան աջող է այս գրքի թարգմանութիւնը, ընթերցողը կարող է հետևեալ հատւածների համեմատութիւնից դատել, որ մենք արել ենք զանազան պատահական երեսներ դիտելով: Առաջին երեսը սովորաբար ամենից խնամքով է թարգմանւում. ահա դրա համեմատութիւնը:

Und doch, in jener Hohlung des Bergeswand regt sich menschliches Leben, und zwei kleine graue Vogel wiegen sich in der reinen, leichten, von der Mittagssonne durchgluhten Wustenluft und verschwinden hinter einer Klippenreihe, die wie eine Mauer von Menschenhand, eine tiefe Schlucht begrenzt»:

Թարգմանւած է.

«Բայց ահա այնտեղ, լեռնային պարսպի մի խորշում, մարդկային կեանքի նշաններ են երևում, և երկու գորշագոյն մանր թռչուններ սաւառնում են կէսօրայ արևից ջերմացած, անապատի մաքուր ու թեթև օդի մէջ, և անհետանում են քարաժայռի շարքերի ետև, որոնք իբրև մարդկային ձեռքի շինած պարիսպներ՝ խոր ձորի բերանից վեր են ամբառնում»:

Մենք նույնը այսպես կը թարգմանեինք.- Սակայն, այնտեղ, լեռնա-
յին պարսպի մի խոռոչում, մարդկային կեանք է շարժում. և երկու
փոքրիկ, գորշ թռչուն օրօրում են անապատի մաքուր, թեթև ու կեսօր-
ւայ արևից տապացած օդի մեջ՝ և անյայտանում են քարաժայռի շար-
քի յետևը, որը ձեռակերտ պարսպի պես սահմանափակում է մի խո-
րին անդունդ:

Հայերեն չի կարելի ասել մանր թռչուն, մանր երեխայ, մանր մարդ.
այլ փոքր, փոքրիկ, որ գործ է ածում սովորաբար շնչաւոր առարկա-
ների համար: Գերմաներենը չունի այդ նրբությունը, որ շփոթեցրել է
թարգմանչին:- Hohlung այստեղ չի կարելի խորշ թարգմանել. մեր նոր
գրականութեան մեջ այդ բառը շատ փոքրիկ փոսի նշանակութիւն է
ստացել. «արտախորշ», «մախախորշ»... այն ինչ խոռոչ սովորաբար
գործ է ածում գազանների որջը ցոյց տալու համար, ուր և «մարդկա-
յին կեանք կարող էր շարժիլ»:- «Երկու թռչուններ», հինգ մարդիկ,
վեց կանայք. խորթ է հնչում մեր ականջին. աշխարհաբարի առանձ-
նայատկութիւններից մին է այս, որ թւականի մօտ գոյականը եզակի
է դրում, բայց յոգնակի հասկացում:

Grau նշանակում է գորշ. ինչ կարիք կայ մի աւելորդ բարդութեան:-
«Գորշագոյն» կարելի էր այն ժամանակ թարգմանել, եթէ բնագրում
grauarbig լինէր: Wiegen այստեղ նշանակում է օրօրել, տատանիլ,
ոչ երբէք «սաւառնիլ»:

Klippenreihe և դորան յաջորդող ամբողջ նախադասութիւնը եզակի
է, այն ինչ հայերեն յոգնակի է թարգմանւած և այն էլ լիովին սխալ.
«eine tiefe Schlucht begrenzt» - բառացի նշանակում է. «մի խոր ան-
դունդ սահմանափակւած». թարգմանւած է. «խոր ձորի բերանից վեր
են ամբառնում»: Մենք մի քիչ մանրակրկիտ ենք քննում, որ գերմանե-
րենին անծանօթ ընթերցողին գաղափար տանք թարգմանութեան
արժէքի մասին:

«Denn ein Quell benetzt ihren steinigen Boden». «Որովհետև մի աղ-
բիւր է բղխում և ոռոգում է քարեղէն գետինը»... Բղխում է, բնագրում
չկայ և աւելորդ է. իսկ steinig չի նշանակում քարեղէն, այլ քարոտ. նոյ-
նը մենք կը թարգմանեինք. «Որովհետև մի աղբիւր ոռոգում է իր (կամ
նորա) քարոտ գետինը»: Սոյն առաջին երեսում Strauch թարգմանւած

է թուփ. ատելի ուղիղ կը լինէր մացառ թարգմանել. թուփ գերմաներէն Busch է կոչում: Մոռանալու չէ, որ խօսքը անապատի մասին է, ուր միայն մացառներ են աճում սովորաբար:

Ի բաց առեալ նախադասութիւնները, առանձին բառերը շատ անճիշտ են թարգմանած: Այսպէս երկրորդ երեսում. vielzweilige Federpalme, թարգմանած է «սաղարթախիտ փետրատերև արմաւենի».- պիտի լինէր բազմաճիւղ:- «Սաղարթ» մեր լեզուէն բանաստեղծը (Քաթիպա) առաջարկել է հասկանալ ծառի տերևների ամբողջութիւնը (Laub, feuillage) և այդ մտքով էլ գործածական է այսօր.

«Աշունը եկաւ թափեցաւ սաղարթ,

«Էլ մի փնտռիլ մանուշակ ու վարդ», իսկ «սաղարթախիտ» նշանակում է տերևաշատ, կամ տերևախիտ:

Dabei biegt die Hirtin die Zehen so zierlich, als wolle sie einen Zuschauer auffordern ihre Feinheit zu bewundern (երես 3). թարգմանած է. Այս խաղի ժամանակ աղջիկն այնպէս վայելչաբար ծալում է ոտքի մատները, որ կարծես հրաւիրելիս լինէր մի հանդիսատեսի՝ զարճանալ իւր արւեստով: Պիտի լինէր. «միևնոյն ժամանակ հովուհին ոտի մատները այնպէս վայելուչ է ծալում, որ կարծես հրաւիրելիս լինէր մի հանդիսատեսի զարմանալու իւր նրբութեան վրայ»: Նկատել ենք ուզում, որ մեր դրած օրինակները ճշտութիւնից գատ մի առաւելութիւն էլ ունին - կարճ և դիւրընթեռնելի բառեր. ի՛նչ կարիք կայ «ձեռքի», «ոտքի», «վայելչաբար» գրելու, քանի որ ձեռի, ոտի, վայելուչ ատելի կարճ և ատելի ընտիր ձևերն ունենք:

Sie aber regte sich nicht bis er sie mit dem Fusse unzart berührte (5 երես):

Թարգմանած է. «բայց նա տեղիցը չշարժեց, այնպէս որ երիտասարդը վերջապէս նրան ոտքով դրդեց զայրացած»: Պիտի լինէր. բայց նա տեղիցը չշարժեց, մինչև որ երիտասարդը ոտով կոպիտ դրդեց նորան»:

Und liess sich das blonde Haar von einer alten schwarzen Sklavin ordnen (101). «և սև պառաւ ստրկուհին յարդարում էր նրա խարտեաշ մազերը»:- Պիտի լինէր՝ և սև պառաւ ստրկուհուն յարդարել էր տալիս իւր շէկ մազերը:

Sie seufzte, während die Dienerin mit duftigem Oel auf der flachen Hand bald hier bald dort den glänzenden Hauptschmuck ihrer Herrin berührte. «Մինչ սպաստիին, անուշահոտ իւրը ձեռքին ածած՝ օծում էր տիրուհու շքեղ փայլուն վարսերը՝ տիրուհին հառաչանք էր արձակում» (101). Աւելի ուղիղ կը լինէր.- Տիրուհին հառաչում էր, մինչ սպաստիին հոտաւէտ իւրն ավիին ածած շօշափում էր նորա փայլուն վարսերի այս և այն մասերը...

Jetzt fasste die schwarze kraftig in den vollen, lang herabwallenden Strom der goldig schimmernden Faden und theilte ihn mit beiden Händen, um mit dem Flechten der Zöpfe zu beginnen, aber Sirona wehrte ihr und sagte»... «Խափշիկ պառաւր պինդ բռնեց նրա խիտ ու երկար, ոսկեփայլ, ալեծածան վարսերը և երկու մասի բաժանեց, որպէս զի հիւսել սկսէ. բայց Սիրոնան թոյլ չտեց և ասաց» (101 եր.). բնագրի գեղեցկութիւնն այստեղ լիովին կորած է: Մենք նոյնը այսպէս կը թարգմանէինք.- Ահա Սևուկը պինդ բռնեց երկար և ալեծածան հոսանքի ոսկեփայլ թելերը և երկու ձեռով բաժանեց այն, որպէս զի հիւսել սկսէ, բայց Սիրոնան հեռացրեց նորան և ասաց...

Fest vorausbestimmt und scharf abgemessen ist die Bahn jeden Sterns, jede Pflanze trägt Blüten und Früchte genau in der Form und Farbe ihrer Gattung; in den Grundzügen ihrer Anlagen und Neigungen ihrer gemuthlichen und ausseren Bewegungen bleiben auch alle Thiere der namlichen Gattung einander gleich, und der Jäger, der das Rothwild in dem Forste seines Vaters kennt, kann in allen Waldern der Erde wissen, wie das Reh sich in jedem einzelnen Fall verhält. Թարգմանւած է. «Խստիւ նախասահմանւած և ճիշտ որոշւած է ամեն մի աստղի ընթացքը. իւրաքանչիւր բոյս՝ ծաղիկ ու պտուղ է տալիս իւր ցեղի բոլորովին համանման գոյնով ու ձևով. բոլոր անասունները իրանց սովորութիւններով ու ցանկութիւններով, ներքին և արտաքին շարժումներով հիմնապէս նմանում են իրանց ցեղի անհատներին, և այն որսորդը, որ իւր հօր պուրակում ծանօթացել է եղջերուներին՝ կարող է աշխարհիս բոլոր անտառներում գիտնալ, թէ քարայծը մի յայտնի դէպքում ինչպէս է պահում իրան»:- Մենք կը թարգմանէինք.- Հաստատ նախասահմանւած և ճիշտ չափւած է ամեն մի աստղի ընթացքը. ամեն մի բոյս իւր

ցեղի գոյնին ու ձևին յատուկ ծաղիկ ու պտուղ է տալիս. միևնույն ցեղի բոլոր անասունները իրանց ունակութիւնների և հակումների հիմնագծերով իրանց ներքին և արտաքին շարժումներով նման են միմեանց. և այն որսորդը, որ իր հօր պուրակի եղջերուներին ճանաչում է, կարող է աշխարհիս բոլոր անտառներում գիտնալ, թէ եղնիկը ամեն մի դէպքում իրան ինչպէս է պահում:

Ես կը խնդրէի ընդգծեալ բառերի վրայ առանձնապէս ուշ դարձնել. սխալ է Reh «քարայծ» թարգմանել (Steinbock). դա ոչ այժ է, ոչ էլ քարի հետ գործ ունի. ապրում է անտառներում, յայտնի է իւր վերին աստիճանի ազնիւ ու նուրբ կազմածքով ու շարժումներով: Պատկանում է եղջերուների տեսակին, միայն թէ՛ մարմնով և թէ պոզերով անհամեմատ փոքր իսկական եղջերուներից:

Sie War zusammengefahren und hatte... «Մարիամը ինքնիրան ժողովեց և» (369).- Պիտի լինի. Մարիամը սարսռեց, սուկաց և...:

Und er ihr ein frohliches Willkommen zugerufen hatte.- թարգմանւած է. «և նա քաղցրութեամբ բարև տուեց աղջկան» (370).- պիտի լինի՝ ուրախութեամբ բարի գալուստ մաղթեց աղջկան:

Հիմա անցնենք գրքի լեզվին. եթէ սխալ և անճիշտ թարգմանութիւնները մասամբ ներելի են, որովհետև դիրքին չէ թարգմանելիս ամեն անգամ համապատշաճ արտայայտութիւնը կամ բառը գտնել, ապա ամեն մի գրողից և այն էլ մի Հրատ. Ընկ. տպած գրքից պիտի պահանջել կարողանանք, որ նորա լեզուն մաքուր, անարատ հայերէն լինի:

Այս գիրքը այդ կողմից էլ մեծ պակասութիւններ ունի, որոնք մի քանի տեսակի կարելի է բաժանել.

ա. Անորոշ դերբայի սխալ կիրառութիւն.

«Կարծես հրաւիրելիս լինէր մի հանդիսատեսի՝ զարճանալ իւր արուեստով» (3 երես). պիտի լինի՝ զարճանալու իւր արուեստի վրայ:

«Նրա համար միևնույնն է, որ քո մէջ միտք է ծնեցնում՝ քարերով ինձ այս աղբիւրից հալածել» (12) = հալածելու: «Որ անասուններին միջոց տայ աղբիւրին մօտենալ» (15 եր.) = մօտենալու: «Մենք քեզ յանձնեցինք այծերն արածեցնել» (66) = արածեցնելու. և այլն. այս սխալը առհասարակ շատ յաճախ է պատահում թարգմանութեան մէջ:

բ. Բառերի սխալ դասատրոփին.

«Պատմում է եգիպտական դիցաբանությունը» (2 եր.) = Եգիպտական դիցաբանությունը պատմում է:- Անտոնիոսը սկսեց բացատրել նկարն այն կամարի, որը մտադիր էր ձգել ձորի վրայ, ամուր և ապահով» (եր. 52) = ...Թարգմանողը այստեղ հետևել է այն օտարաբանությունը, որ շատ սովորական է արևմտեան հայերենին. դա կատարել է այն նպատակով, որ մտքի կարծեցեալ շփոթութեան առաջն առնի, որովհետև եթե գրեինք «բուն հայերեն» - «Անտոնիոսը սկսեց բացատրել այն կամարի նկարը, որ մտադիր էր ձգել ձորի վրայ, ամուր և ապահով», կարող էինք կարծել, թե ձգողը կամուրջը չէ, այլ նկարն է:- Սակայն, այդպես միայն օտար մտածողն է կարծում. հայի տրամաբանությունը թոյլ չի տալիս կարծելու, որ կարելի լինի «ձորի վրայ ամուր և ապահով նկար ձգել», ուստի և այդ նորամուծությունը գեթ այստեղ աւելորդ է:

«Փախչող Մարիամը մինն էր այն ուրականներից, որոնց տեսքից սարսափել էր Պալտը» (206) = Փախչող Մարիամն այն ուրականներից մինն էր, որոնց տեսքից սարսափել էր Պալտը: - Այստեղ էլ շփոթություն չի կարող լինել, քանի որ «ուրականներ» և յարաբերող դերանունը, «որոնք» - յոգնակի են, իսկ Մարիամ և մին՝ եզակի...

«Որպես թե կամենար հայեացքովը նրան հալեցնել» (136) = Որպես թե հայեացքովը նրան հալեցնել կամենար:

գ. Օտարաբանություններ.

«Գանգուր մագերը, որ առատութեամբ ծածկել էին նրա գլուխը՝ ինչպես առիծի բաշ» (5) = առիծի բաշի պես. «ինչպես փթած փայտը» (21) = փայտի պես:

Այդ կերպով շներին են զարթեցնում. այդպես շներին են զարթեցնում. «և ես նորան շնորհակալ եմ» (9). «Շնորհակալ լինո՞ւմ ես Տիրոջը» (10). Շնորհակալ հայերեն բացառականով է խնդիր առնում. պիտի լինի նորանից, Տիրոջից:

«Տարածում էր մի չափաւոր մեծութեան բարձրաւանդակ» (16). պիտի լինի՝ չափաւոր մեծութեամբ:

«Ոչ ոք չէ կարող լինել աւելի քան մարդը» (23) = Ոչ ոք մարդուց աւելի չի կարող լինել:

«Աւելի քան երեսուն արեւստագէտ մըցում էին» (50) = Երեսունից աւելի արեւստագէտ...

«Աւելի քան երեք քառորդը կը ծածկէ» (52) = Երեք քառորդից աւելին... Այս օտարաբանութիւնն էլ ռուսերէնից է:

«Միայն խնդիրը նրանումն է» (52) = խնդիրն այն է: - «Հարցը միայն նրանումն է» (54) = հարցն այն է: - «Բանն ինչո՞ւմն է» (57): «Լաւագոյն գրանիտ, քան որ հայրս հանում է իմ առիծների համար, ես ոչ մի տեղ չեմ կարող գտնել» = Հօրս հանած գրանիտից աւելի լաւը, իմ առիծների համար... «Եւ ես ինչո՞ւ համար աշխարհից հեռացայ՝ եթէ ոչ որպէս զի նորան հետևիմ» (206) = Եւ ես ինչո՞ւ աշխարհից հեռացայ, որպէս զի նորան հետևիմ... կամ. ես ինչո՞ւ աշխարհից հեռացայ, չէ՞ որ նորան հետևելու...

«Նրա դէմքը աւելի էլ սիրուն էր՝ քան որչափ գեղեցիկ էր».- Այս նախադասութիւնը ես բոլորովին չեմ հասկանում. տարաբաղդաբար բնագիրն էլ մօտս չէ, որ միտքը ստուգել կարողանամ:

«Նա փափագում էր չարչարանքի՝ ինչպէս տենդով հիւանդը» (131) = Տենդով հիւանդի պէս...

«Ձեռներով փնտռեց մատանին, գտաւ նրան» (136) = գտաւ այն:

«Լայն փողոցը փայլում էր այնպէս՝ որպէս թէ սպիտակ մարմարինով սալայատակած լինէր» (138). պիտի լինի. կարծես: «Ոչ մի դատաւճիռ այնքան խիստ չէ լինում՝ քան երբ ստրուկն է ստրուկին դատում» (64):

Գալով բառերի զանազան ձևերին, մենք պատահում ենք նորա և նրա, նորանք և նրանք, նորանցից և նրանցից... մինչև անգամ ներա իզական դերանուան. կուրիօզների թիւն է պատկանում հիմա բառի ուղղագրութիւնը, որ ամեն տեղ հիմայ է գրւած...

Այս սխալների և օտարաբանութիւնների թիւը կարելի էր տասնապատկել: Դա, ասենք, մեզանում ներելի երևոյթ է: Յաւալին այն է, որ մի Հրատարակ. ընկերութիւն, տպագրող գրքերի քանակը շատացնելու եռանդով մոռանում է նոցա որակը և միևնոյն ժամանակ ինչպէս այս օրինակներից կարելի է եզրակացնել, հայերէնին արջի ծառայութիւն է մատուցանում...

Ի վերջոյ, եթէ անտես առնենք գրքի այս պակասութիւնները, պիտի նկատենք, որ պ. Մալխասեանի լեզուն առհասարակ պարզ և մատչելի է. նա բառերի և ձևերի մեծ պաշար, միևնոյն ժամանակ դրանցից խելացի կերպով օգտուելու ընդունակութիւն ունի, որ մի թարգմանչի համար կարևոր յատկութիւն է: Այդ հանգամանքն ի նկատի ունենալով, մենք մի քիչ խստապահանջ եղանք. ում շատ է տրուած, շատ էլ պահանջուում է: Ներելի չէ, որ մի Մալխասեան այն սխալներն անէ, ինչ որ մի համբակի է յատուկ:- Եթէ նա գրքի միւթը խնամքով ընտրէ, թարգմանելի լեզուն աւելի խնամքով ուսումնասիրէ, և հայերէնը աւելի հոգածութեամբ մշակէ, ապա նորանից կարող է մի ընտիր թարգմանիչ զարգանալ:- Մենք այդպիսի թարգմանիչների մեծ կարիք ունինք:

«Մուրճ», 1898, N 10-11, էջ 1540-1547

ՓԱՓԱԶԵԱՆ Վ.- «Հայ բոշաներ» (Ազգագրական ուսումնասիրություն): Արտատպ. «Ազգագր. Հանդէս»ից: Ուրաժալ. 99 էրես. Թիֆլիզ, 1899 թ., տպ. Ռ-օտիկնեանցի. գինն է 50 կոպ.:

Ուրախութեամբ սկսեցինք այս գրքի ընթերցումը, որովհետև առաջին անգամն է սա, որ մեր լեզուով մի առանձին աշխատություն է լոյս տեսնում հայ-բոշաների մասին:

«Մուրճ»-ի մէջ մի ամբողջ գրականութիւն կայ դրանց մասին. Կոլոչիի յօդածից յետոյ գնչուների մասին՝ որ լոյս տեսաւ պ. Արասխանեանցի թարգմանութեամբ, քաղածաբար, տողերիս գրողը մի շարք յօդածների նիւթ է շինել հայ բոշաների կեանքը, լեզուն և սովորութիւնները, որ մի ամբողջ, դեռ ևս անտիպ աշխատութիւնից են եղել քաղած (տես «Հայ բոշաներ», «Մուրճ», 1892 թ. N 7-9, «Պատմական ակնարկներ հայ բոշաների անցեալից», 1894 թ., N 7-8, «Բոշա բանաստեղծուիի Գինա Ռայնիչիչ», 1893 թ., N 3, «Բոշա ծագումով հայեր», 1897 թ., N 10): Մեր յոյսերը, սակայն, այս գիրքը լիովին չարդարացան, և ահա ինչու: Ամեն մի հետազօտութիւն, եթէ նա ուզում է արժէք ունենալ, երեք հիմնական յատկութիւն պիտի ունենայ: Տեղեկութիւնների ճշտութիւն, աշխատանքի ինքնուրոյնութիւն և մանաւանդ նիւթի նորութիւն:

Պր. Փափագեանի աշխատութեան մէջ ես չհանդիպեցայ մի կարևոր կէտի, որ նոր լինէր էութեամբ. չտեսայ գիտական հետազօտութեան ճշտութիւն, ոչ էլ հարցի մի նոր լուսաբանութիւն կամ մի նոր ըմբռնում: Ինչ որ նա ասում է գնչուների կամ հայ բոշաների մասին, ուրիշներն արդէն ասել են նրանից շատ առաջ և, ինձ թւում է, շատ աւելի բարեխիղճ կերպով, առանց այն բազմաթիւ կրկնութիւնների, որ շարունակ հանդիպում ենք այս գրքում: Քանի որ նիւթն անձանօթ և անմշակ չէր, սպասելի էր մի աւելի լուրջ և աւելի խոհուն գործ:

Դիմենք սակայն փաստերին. էջ 34-ում հայ բոշաների թիւը հետևեալն է. «Բոյբաթ 6.000 հոգի, Մարգուան 3.000, Վէգիր-Քէօփրին, Զիլէ, Բաֆրու, ընդամենը 663 տուն, կամ 3.978 հոգի, Էրզրում և շուրջը 300 տ. (1.800 հոգի), Կովկասեան բոշաներն էլ 190 տուն = 1140

հոգի. բոլորը միասին, ուրեմն՝ 15.918 հոգի. այն ինչ, երես 14-ում ասած է, թե Փոքր Ասիայում 67.000 գնչուներ կան, որոնցից «50.000 հայ բոշաներ»: Ո՞րն է ճիշտը: Դեռ 1894-ին, տալով հայ բոշաների մարդահամարը «Մուրճ»-ում, մենք ասել էինք, որ նրանց թիւը 15.000-ից ատել չի կարող լինել. այ. Փափագեանը, որ օգտւել է մեր թերից առանց մեզ յիշելու, մի տեղ գրեթէ համաձայն է մեզ հետ. և այդ համաձայնութիւնը լիակատար կ'լինէր, եթէ նա մեզպէս ամեն մի ընտանիք 5 հոգի հաշւէր. նրա մարդահամարը 15.000-ից ատել է դուրս եկել, որովհետև ամեն մի ընտանիք նա 6-7 հոգի է հաշւում:

«Բոշա տղամարդի գանգի ձևը ընդհանրապէս կլորագլուխ է. բայց գանգի չափը ներկայացնում է 77.40, որի հիման վրայ կարելի է դասել նրան, ըստ մարդաբանական լեզւի, մէզատօսէֆալների կարգում» (եր. 44): Անյայտ է մեզ մի գործ, ուր հայ բոշաները ուսումնասիրած լինէին գանգաբանօրէն. այս նորութիւնը այ. Փափագեանն է տալիս, առանց աղբիւրն յիշելու: Մասնաւոր կերպով նա ինձ ասաց, որ ինքն է կատարել անձամբ այդ չափերը... Յանկալի է որ նա հրատարակէր իր գործը լրութեամբ, դա կ'լինէր մի իսկական նորութիւն, թէ ե՞րբ, ո՞ր տեղ, քանի՞ հոգի են եղել չափւած, որպէս զի գրածը գիտական արժէք ունենար. այլապէս դրանք նազեցնում են գրքի արժէքը:

Մեզ համար նորութիւն էր և «խաչի-պարը», որ որպէս թէ պարում են հայ բոշաները: Կ'ուզէինք իմանալ ո՞ր տեղի: Ակներև սխալ է այ. Փափագեանի ասածը, թէ «աթոռակալութիւնը ժառանգական է» (78 եր.): Ախալքալաքում, մեր աչքի առաջ մի քանի աթոռակալներ են փոխուել և զանազան գերդաստաններից...:

Ինձ համար շատ անհաճելի է յիշատակելը, որ այս գրքում բազմաթիւ հատւածներ կան բառացի կերպով նման իմ յօդւածներում գրւածին. չենք ուզում մեղադրել մեր սիրելի վիպասանին պլագիատի մէջ, որովհետև գիտենք, որ ինքն էլ է զբաղւել բոշաների ուսումնասիրութեամբ. սակայն, ինչո՞ւ չ'յիշել աղբիւրը նաև կարևոր կէտերում, երբ նա քանիցս յիշում է երկրորդական և անմշան տեղերում:

Այդ պատճառով ահա, «Ծաղիկ» թերթի աշխատակիցը վստահ չէ այ. Փափագեանի ասածին, թէ Ալամդարեանն ու Ք. Պատկանեանը բոշաներից են սերում. եթէ յիշւած լինէր աղբիւրը («Մուրճ», 1897, N

10, «Բոշա ծագումով հայեր») այդպիսի թիրիմացութեանց առիթ չէր լինի... Առհասարակ շատ յաճախ նկատելի է, որ հեղինակը մի վիպասան է: Այսպէս՝ Ակրականտայի եպիսկոպոսի պատմութիւնը (երես 31), որ մի լեգենդայի ձևով է բերւած: Դրա ծագումը մեզ յայտնի է և հազիւ մի 10-15 տարւայ հնութիւն ունենայ: Հոդային վէճի պատճառով՝ Ծալկայի Հիւնիա գիղի հայերը շարունակ հալածում են տեղացի բոշաներին, ջանալով ցոյց տալ, որ նրանք հայ չեն: Ժողովրդին օգնութեան է հասնում Այսմաուրք կարդացող տիրացուն, որ նոյնպէս իր շահերն ունէր, Ակրականտացու պատմութեամբ և խեղճ բոշաները, անտեղեակ իրենց անցեալին ու պատմութեանը, ինչպէս երևում է, հաւատում են դրան և, ի զարմանս մեր, պ. Փափագեանին պատմում իբրև մի հին աւանդութիւն: Ժամանակին, սակայն, նրանք բողոքել են դրա դէմ. 1894-ին նրանցից ոմանք մինչև անգամ զանգատի են եկել մեզ մօտ Ախալքալաք, հայ տիրացուն հետներն առած, ապացուցանելու, որ իրանք հայեր են: Եւ նրանք գոհ հեռացան մեր վճռից:

Գրքի մէջ ամենազնահատելի և հարցասիրական մասը, մասնագետի համար, անտարակոյս, բոշայերէն լեզուն, յատկապէս բոշայերէն բառարանն է, որ երբ և իցէ հրատարակածներից լիակատարն է. թերութիւններ, հարկաւ, անխուսափելի էին. սակայն, այդ մասը «Մուրճ»ի գրախօսականի նիւթ չի կարող լինել. միմիայն գովել կարող ենք պ. Փափագեանի ջանասիրութիւնը: Տարօրինակ է թոււմ մեզ սակայն հեղինակի ջանքը, որ նա գործ է դրել Պուշկինի «Ոսկէ ձկնիկը» բոշայերէն թարգմանելու: Սի որ և է հէքիաթ, ազատ պատմած բոշայերէն, աւելի բնորոշ պիտի արտայայտէր այդ լեզուի սակաւիկ ուրոյնութիւնները, քան մի կաշկանդիչ թարգմանութիւն. այն էլ մի լեզուով, որի բառերի թիւը 500-ից աւելի չէ:

Այս ամենը դեռ չի ապացուցանում, թէ գիրքն անպէտք է սովորական ընթերցողի համար, որ մասնագետի պահանջները չունի, և որը մի գաղափար է ուզում կազմել այս հանելուկ ժողովրդի մասին:

Թուղթը և տպագրութիւնը լաւ է. գինը չափաւոր:

«Մուրճ», 1899, N 9, էջ 1079-1081

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

«Բանաստեղծի» վերջին N ամբողջովին նւիրած է մի հարցի, որին վերջին տարիները լարած ուշադրութեամբ հետևում էին հայ բանաստեղծներից շատերը: «Քեթացիք կամ մոռացած կայսերութեան մը պատմութիւնը» վերնագրի տակ պ. Բասմաջեանը թարգմանօրէն տալիս է այն ազգի պատմութիւնը, որ մեզ աւելի ծանօթ է Հաթ կամ Հիթիթ անունով:

Այս ազգի յայտնագործիլն ու գիտութեան նիւթը դառնալը հազիւ երկու տասնեակ տարւայ գործ է, ուստի թէ՛ նրանից մնացած զարմանալի հնակերտներն ու յիշատակարանները և թէ՛ մանաւանդ արձանագրութիւնները, որոնք ցարդ մնում են անկարդալի, հիմնովին ուսումնասիրած և լուսարանւած չեն դեռ ես:

Այս գործը ներկայացնում է մի սիստեմական հաւաքածու այն ամենի, ինչ որ մինչև հիմա յայտնի է Քեթաց մասին Ս. գրքից, ասորական, եգիպտական և քեթական արձանագրութիւններից ու յիշատակարաններից, որ կազմել է անգլիացի հռչակաւոր հնախոյզ Մէյսը:

Քեթաց բնակութեան կենդրոնը համարւում է Տաւրոսի շղթան. Կապադովկիայից և հիւս. Կիլիկիայից սկսած, նրա տիրապետութեան սահմանները երբեմն հասնում էին գրեթէ մինչև Մեծ Հայաստան, Ասորիք և Պաղեստին: Սա մի պատերազմիկ ու զինուորական ազգ էր, որ դարեր շարունակ ոչ միայն մրցման մէջ է եղել Փարսւոնների և Ասորիքի թագաւորների հետ, այլև շատ անգամ փառքով ու յաղթանակով թելադրել է նրանց այնպիսի հաշտութիւն և դաշինք, որոնք ապացոյց են նրա հզօր պետական կազմակերպութեան: Թէև այս ազգը բարձր կուլտուրայի չէր հասել, բայց նրա գրութեան ինքնուրոյն ձևը, զարմանալի հնակերտները և մօտիկ ծանօթութիւնը հանքագործութեան, բաւարար ապացոյց են ընդունելու, որ «Արևելքից քաղաքակրթութիւնը սա հեռաւոր արևմուտքի վայրենի ժողովրդոց մէջ ընդհանրացուց», այնպէս որ սրանց գրութեան և արուեստի հետքերը Մէյսը մատնանիշ է անում Փիւնիկեան և Յունական կուլտուրաների մէջ:

Այս ազգի կեանքը հայերիս համար առանձնապէս հարցասիրա-

կան է այն պատճառով, որ գիտ. Ենգեն, երեք տարի առաջ հրատարակված մի սուար հատորի մէջ ջանք էր թափում ապացուցանելու, որ Հաթերը (ինչպէս նա անուանում է Քեթերին) կամ Հիթիթները նախահայեր են և նրանց արձանագրութիւնները Ենգեն փորձում էր կարդալ հայերէնի միջնորդութեամբ: Սէյսի կարծիքով Քեթերը մոնղոլական տիպար ունէին, ուրեմն չէին կարող հայերը լինել, նրանց լեզուն, որ դեռ մնում է անվերածնելի, հաւանօրէն ո՛չ սեմական է, ոչ արիական, ուրեմն հազիւ թէ կարելի լինի հայերէնով մեկնել: Սի խօսքով հարցը դեռ վիճելի է:

Գ. Վ.

«Տարագ», 1901 թ. ապրիլի 1, N 12, էջ 133-134

О некоторых названіяхъ древней Арменіи въ связи съ дан-
ными ванскихъ надписей Г. Халатьянца.

Յայտնի է, որ մեր երկրի հին-հայկական համարած աշխարհագ-
րական անուններից շատերի ծագումն ու նշանակությունը լեզուաբա-
նություն չի բացատրված. Այրարատ, Վան, Մուշ, Արածանի, Հանձիթ,
Արաքս, Ախուրեան և այլն, յայտնի չէ թե՞ ի՞նչ են նշանակում: Բևեռա-
գրերի ընթերցումը, որ վերջին տասն տարում ահագին առաջադիմու-
թիւն արաւ, մի զարմանալի լոյս է սփռում այս կէտի վրայ: Այս բրոշ-
խրի մէջ պ. Խալաբեան մի ոչ անաջող փորձ է անում ցոյց տալու, որ
այդ և նման անուններից շատերը հայերէն չեն, այլ ուրարտերէն: Մի
լեզու, որ խօսւում էր Հայաստանում մինչև VII դ. Ք. ծ. ա., որով գրւած
են բևեռագրերը: Այնպէս որ հայերն այդ անունները ժառանգել են
Հայաստանում հաստատւելուց յետոյ նրա հին բնիկներից:

Этюды по Армянской діалектологіи Левона Мсеріанцъ, Пр.-
доц. Имп. Моск. Университета. Ч. I. Сравнительная морфологія
мушскаго діалекта въ связи съ морфологіей грабара и средне-
армянскаго. Москва. 1901.

Այտրնեանի հռչակաւոր Քննական քերականութիւնից յետոյ՝ սա
կարծեմ, առաջին աշխատութիւնն է, որ մեր լեզուի այս կամ այն երևոյ-
թը բացատրելու համար ի նկատի է առնւած այդ լեզուն ամբողջապէս.
գրաբարը, միջնադարեան ռամկօրէնր և ներկայի բարբառներից շա-
տերը: Այս գիրքը նւիրւած է Մշու բարբառի համեմատական ուսում-
նասիրութեան և զուտ մասնագիտական մի գործ է, կազմւած Բրուգ-
մանի յայտնի Grundriss-ի ձևով: Հեղինակն ի նկատի է ունեցել նիւթին
վերաբերեալ գրականութիւնն ամբողջովին և մեր բարբառագիտութե-
ան համար իր տեսակի մէջ գրեթէ հազագիշտ մի աշխատութիւն է:

«Տարազի» խմբագրութիւնը տարաբախտաբար չէ ստացած այդ
գրքից:

Գ. Վ.

«Տարազ», 1901 թ. մայիսի 13, N 17, էջ 190-191

«Գերմանական օգնության ընկերությունները Տաճկա-Հայաստանի համար»: Գ. Մելիք-Կարազեօզեան: Թիֆլիս, 1901 թ., 35 կոպ.:

Ուզելով պարզել այն հարցը, թե արդեօք կրօնական դաւանափոխական միտումներ կա՞ն այն օգնության մեջ, որ գերմանական ընկերություններն անում են հայ որբերին, գրքիս հեղինակը մի լուրջ և հարցասիրական հետազոտություն է տալիս օգնության գործի մասին առհասարակ: Գրքից տեղեկանում ենք, որ մինչև 1900 թ. գերման. օգնության ընկերությունը ծախսել է մօտ 2 միլիոն մարկ (800 հազար ռուբլի), կերակրելով սովեալներին և պահելով ու դաստիարակելով մօտ 1800 երկսեռ որբեր: Բաւականի թեր և դժմ դիտողություններից յետոյ, դաւանափոխական հարցի նկատմամբ հեղինակը հետևեալ եզրակացութեանն է գալիս, որ Hilfsbunde-ը հարկաւոր է համարում «վերանորոգել հայոց եկեղեցին ոչ թէ արտաքին, այլ ներքին ճանապարհով, այսինքն այնպէս դաստիարակել հայ երեխաներին (որբերին), որ նրանք մեծանալով նկատեն իրանց մայր եկեղեցու պակասությունները և աշխատեն հեռացնել այդ ամենը, գործելով այդ հարցում աւետարանական ուղղութեամբ»:

Գիրքը, չընայելով լեզւի թերություններին, կարդացում է հետաքրքրութեամբ, և մենք ջերմագին կը յանձնարարէինք նրա ընթերցումը ամենքին:

«Դոկտոր Երւանդ Բոշայեան». կոմեդիա չորս գործողութեամբ. Լևոն Մանուէլեանի: Բագու, 1900 թ., քառաձալ 84 երես. 50 կոպ.:

Մի խումբ իդէալիստներ ընդդիմադրւած են մի այլ խումբ փողապաշտ և կեանքը վայելել իմացող անհատների: Հակադրութեան օրէնքով այդ երկու խմբի մեջ առաջ պիտի գար մի բարոյական կռիւ: Հայրը, հարուստ Ասատուր Բոշայեան, գրկում է որդուն ժառանգութիւնից, որովհետև սա «շռայլօրէն» հօր տներից մինը նւիրել է աղքատ-ապաստարանի, իսկ իդէալիստ որդին (դոկտոր Երւանդ) թքում և հեռանում է հօր տանից, շարունակելու համար իր իդէալական կեանքը: Ահա երկու խօսքով այս գրքի բովանդակութիւնը, որ առնուած է

Բազւի բարքերից, իբրև մի ինքնուրոյն ու միևնոյն ժամանակ շնորհալի գործ, արժանի խորին ուշադրութեան, ի նկատի ունենալով մեր թատերական գրականութեան բացարձակ ամլութիւնը վերջին տարիներում: Թէև գոյները մի քիչ նւազ են և կոնտուրները ոչ այնքան րելիէֆ, բայց գիրքը կարդացում է աճող հետաքրքրութեամբ և ըստ երևոյթին՝ մի բեմական լաւ գրածքի բոլոր յարմարութիւններն ունի: Ըստ երևոյթին ենք ասում, որովհետև մի պիէսի արժանիքն իմանալու համար պէտք է բեմում տեսնել այն, իսկ մենք այդ բախտը չենք ունեցած: Գրքի բացարձակ արժանիքն է նրա կոկ, մաքուր, թեթև, սահուն և մտածւած լեզուն, խուժ-դուժ բառերից ազատ, դիալոգները կարճ և ամփոփ: Ճիշտ և հակիրճ լինելու համար, որ բեմական լեզւի էական պայմաններից մինն է, պ. Մանուէլեանը մի նորութեան է հետևում, որ իսկապէս թիրիմացութեամբ մոռացութեան տրւած մի հնութիւն է. իւր, նորա, նորանք, նորանց, նա գործ է ածում իզական անունների տեղ, իսկ իր, նրա, նրանք, նրանց,- արական: Այդ նորութիւնը, որ տեղ-տեղ ուրիշներն էլ են գործադրում, մենք գտնում ենք և՛ անհրաժեշտ, և՛ խելացի: Կարելի էր գրքից տասնենակ երեսներ առաջ բերել այդ ապացուցանելու համար. բաւականանա՞նք միայն այս մի երկու օրինակով:

Երւանդ.- Եթէ դուք կարողանաք դուրս կորզել նորա գլխից իւր բոլոր դատարկ մտածմունքն ու սնոտի հոգսերը, արդուզարդի և նման առարկաների մասին, և դրանց փոխարէն դնել նորա ուղեղի մէջ մի՛ հատիկ առողջ գաղափար, և այլն:

...Սի՞թէ դուք կարծում էք, որ շրջանի վատ հակումներն այն աստիճան են արմատացել նորա մէջ, որ անկարելի լինի ուղղելը. բայց նորա տասն և ինը տարին դեռ չէ լրացել: (Երես 11):

Սերգէյ.- Նորա հայրը, խեղճը հագիւ է կարողանում ընտանիքի մերկութիւնը ծածկել... նա իսկի մի օրինաւոր հրաւեր էլ չէ կարող անել իր աղջկայ հարսանիքին... (Երես 73):

Առանց այս նորութեան՝ շատ ու շատ տեղեր միտքը պիտի մնար անորոշ ու մութ, որովհետև այդ դերանուններից ենք իմանում, որ խօսքը մի կնոջ կամ մի պարոնի մասին է:

Գ. Վ.

«Տարազ», 1901 թ. մայիսի 20, N 18, էջ 205-206

Кавказоведен е. І. Кавказскіе этюды, изслѣдованія и заметки Г. Вейндебайма. Изданіе Центральной княжнѣй торговли. Թիֆլիս, 1901 թ., 320 էրես, գինն է 1 ռ. 20 կ.

Պ.ս. Արգար Յովհաննիսեան և Ս. Տէր-Իսրայէլեան, գրքիս հրատարակիչները, նպատակ են դրել հրատարակելու և մոռացութիւնից ազատելու այնպիսի յօդածներ և ուսումնասիրութիւններ, որոնք վերաբերում են կովկասագիտութեան այս կամ այն ճիւղին. բայց ցրած լինելով զանազան լրագրների և մասնագիտական թերթերի մէջ, անմատչելի են մեր հասարակութեան: Մի գեղեցիկ և խրախուսանքի արժանի նպատակ, եթէ պ. հրատարակիչները չըսահմանափակւին միայն ռուս մամուլով, այլ օգտւին և հրատարակեն տեղական հայ մամուլի մէջ ցրած ուսումնասիրութիւնները, ուր ընդարձակ նիւթեր կան պատմական, ազգագրական, ճամբորդական և գրական բովանդակութեամբ: Այդ անհրաժեշտ է մանաւանդ այն պատճառով, որ ռուս հասարակութեան համար մեր կեանքն ու մամուլը մի կատարեալ անծանօթ երկիր է և բնիկ ռուսների կողմից կարծեմ դեռ ևս ոչ մի փորձ չի եղած ուսումնասիրելու մեզ, մեր լեզուի և մեր աղբիւրների միջոցով:

Այս գիրքը պարունակում է միայն պ. Վալդենբաումի ուսումնասիրութիւններն ու նկատողութիւնները, ուր աչքի են ընկնում Մեծ Արարատի վրայ բարձրանալու փորձերը, գրաֆ Տոթլենբենի պատերազմը Կովկասում 1769-1771 թ., գրաֆ Պաւել Սերգէեիչ Պոտեօմկին և այլն...

Գ. Վ.

«Տարագ», 1901 թ. հունիսի 3, N 20, էջ 230

3. Յովհաննիսեան. «Բանաստեղծութիւններ». Վաղարշապատ, 1908 թ., ուր-ծալ, 240 եր., 1 ր. 75 կ.*

Տողերիս գրողը մեղաւոր է զգում իրան այս շնորհալի և կիսով չափ մոռացուած տաղանդի առաջ երեք պատճառներով: Առաջին, Լայստի համար կատարած գերմաներէն թարգմանութիւններէս մէջ ես միանգամայն մոռացել եմ այս բանաստեղծին՝ մեծագոյն տեղը տալով ի միջի այլոց ուրիշներին: Երկրորդ, «Հայ հեղինակների» մէջ ո՛չ մի շնորհալի բանաստեղծութիւն չեմ դրել սրանից. հիմա եմ տեսնում, որ լաւագոյն տեղերից մինը պատկանում է Յովհաննիսեանին: Եւ երրորդ, գրականութեան պատմութիւն անցնելիս, աշակերտներիս հետ, գրեթէ կանգ չեմ առել Յովհաննիսեանի վրայ, այն ինչ նորագոյն և լաւագոյն լիրիկներից մինը մոռացել եմ անցնելու:

Այս ամենը շնորհիւ բացակայութեան մի կարգին ժողովածուի, ինչպէս և այս խոստովանութիւնը շնորհիւ երևան գալուն վերջապէս այս գրքի, ուր կատարելապէս հանդէս է դրուած մի տաղանդ առաջնակարգ արժանիքներով:

Օղակը, որ ես որոնում էի Ռաֆայէլ Պատկանեանի և մեր նորագոյն բանաստեղծների մէջ և չէի գտնում, կամուրջը, որով հայ բանաստեղծական միտքը, ազգային հայրենասիրականից պիտի անցնէր լիրիկ անհատական աշխարհը յանձին Աւետիք Իսահակեանի, բաց էր մնում ինձ համար: Այդ օղակը և այդ կամուրջը այժմ լրանում է դարձեալ այս գրքի շնորհիւ, որ քանքարաւոր հեղինակը զլացել է ներկայացնելու հասարակութեանն իր ժամանակին:

Եւ տեսնում ենք այդ երկու աշխարհները՝ հայրենասիրականն ու լիրիկ-զգայականը կողք-կողքի մեր այս բանաստեղծի մէջ: Նա չէր կարող զատուել այն խոշոր մօտիվների ազդեցութիւններից, որոնք երևան էին գալիս նրա անմիջական նախորդների՝ Գամառ Քաթիպայի և Շահազիզի մէջ - ազգային-հասարակականը. ուստի այս

* Ներկայ մատենախօսական յօդուածը հանգուցեալ Գ. Վանցեանը ուղարկել էր խմբագրութեան մահուանից 2 օր առաջ: - Խմբ.

երգերի մի բառական ստուար մասը ազգային-հայրենասիրական բնոյթ ունի... Չենք կանգ առնում այդ երգերի վրայ, որոնք մեծ մասամբ թոյլ և անաջող բաներ են, ու աւելի հրապարակախօսի գործեր են, քան բանաստեղծի: Դրանք նախորդ սերնդի ժառանգությունն են, որոնք այս կամ այն կերպ, իբրև ժամանակի մի անհրաժեշտ արդիւնք, պիտի երևային անմիջական յաջորդի մէջ: Յովհաննիսեանի բուն տաղանդի հետ դրանք ոչ մի էական առնչություն չունեն:

Այդ տաղանդն իր ամբողջ փայլով ու բոցով երևան է գալիս այն երգերի մէջ, ուր զեղում են բանաստեղծի զգացումներն առ կոյսը և առ սիրելին... Դուք այդտեղ տեսնում էք հարաւի տաք զաւակին, որ հաւաքում է իր երկրի բոլոր բոյրերը, բոլոր երևոյթները՝ շլացնելու և գրաւելու համար տարփելի կոյսի աչերը...

Կուգէի լինել կարկաչուն վտակ...
Վճիտ ալիքը, դրախտի բուրմունքով...
Եւ առաւօտեան, ինչպէս ցօղ յստակ,
Երեսդ ոռոգել գոհար շիթերով:
Կուգէի լինել սոսի հովասուն,
Համարձակ փռուած կանաչ սաղարթով,
Եւ միջօրէին այդ դէմքիդ սիրուն
Հովանի լինել հեզիկ շրշիւնով:
Կուգէի լինել ծաղկոցում բացուած
Քաղցրաբոյր մի վարդ, երկնից արժանի,
Եւ սիրոյ ժամին, խանդիցս արբած,
Զարդարանք լինել կուրծքիդ գեղանի...

Երկրից, դրախտից, բոյրից ու ծաղկից, ցօղից ու շիթերից անբաւական բանաստեղծը թռչում է երկինք, այնտեղի գոհարներն էլ ցած բերելու և իր սիրուհու սպասին դնելու...

Եւ շող դառնալով գարնան արևի՝
Կուգէի պայծառ աչերումդ վառուել,
Կամ ինչպէս քնքուշ ոսկեվառ գօտի
Չքնաղ իրանիդ փաթաթուել, փարել:
Լուսափայլ աստղիկ կուգէի դառնալ,

Քաղցր մանկան պէս ծիծաղն երեսին,
Ինչպէս աղամանդ շողշողել, ցոլալ,
Ո՛վ իմ թագուհի, քո բաց ճակատին:
Կուգէի լինել լուսին ամօթխած,
Արծաթի փայլով մազերդ շոյել,
Այտերդ գգուել սիրուց բորբոքուած,
Դողդոջ շրթունքիդ համբոյր դրոշմել:

Երկնքի պերճանքներով էլ անբաւական, բանաստեղծը կրկին
ցած է սլանում յաղթահար և շարունակում է.

Կուգէի լինել սիրահար տխակ
Եւ ձեռիդ գերի, վանդակում փակուած,
Ականջիդ հնչել հրաշալի նրագ,
Մեղմ օրօր ասել հոգուդ զմայլած...

Այս ամենից յետոյ մնում էր միայն սիրուիտն աստուածացնել. ար-
դարև, բանաստեղծի վառ երևակայութիւնը չէ վարանում ծունկ չոքե-
լու և երկրպագելու...

Եւ կախարդական տաճարում կանգնած,
Կուգէի տեսնել ես քեզ Անահիտ,
Եւ երկրպագել, առաջիդ չոքած,
Սուրբ գեղեցկութեան անմահ տիպարիդ:

Այս մօտիվը նոր չէ և՛ համաշխարհային, և՛ մեր գրականութեան
մէջ: Դեռ ևս հեթանոս Անակրէօնը երգում էր. «Թող ես հայելի մը ըլ-
լամ, որպէսզի դուն զիս դիտես: Թող քու շապիկդ ըլլամ, որպէսզի կրես
զիս: Թող վճիտ ջուր ըլլամ, որպէսզի մարմինդ լուսնամ. անուշահոտ
իւր մը, որպէսզի քեզ խնկեն... սանտալ մը, որպէսզի ոտքովդ վրաս կո-
խես»: (Թարգմ. Չօբանեանի):

Նոյնը դարեր առաջ երգել է մեր անգուգական Քուչակը.

Ծիծեռնակի ձագ լինէի, ցերեկը տունդ մտնէի,
Քո բարձր, լայն սրահում ես իմ բունը շինէի,
Հէնց որ մութը մթանար, վայր գայի ծոցդ մտնէի,

Հենց որ լոյսը լուսանար, ելնէի բունս մտնէի.
Մետաքսի գօտի դառած, ցերեկը մէջքդ գրկէի,
Կամ անուշ նրբան գինի, ամանիդ մէջ ածուէի,
Հենց առնէիր խմելու, ցածնայի դունչդ պագնէի:

Մօտիվների նոյնութիւնը որքան ակներև, չէ կարելի սակայն կասկածել, որ բոլորն էլ գրուած են միմեանցից անկախ:

Սրանից մի վեց տարի առաջ Քուչակն անտիպ էր և անծանօթ լիովին. չը գիտեմ, ծանօթ էր արդեօք Յովհաննիսեանն Անակրէօսին... Այսպէս կամ այնպէս բանաստեղծի «սէրն և իղձը», որ մենք անուանում ենք այդ բանաստեղծութիւնը, կրում է ինքնուրոյն ներշնչման անկեղծ և ազդու շեշտը, պատկերների հարուստ, ինքնատիպ և բարձր գեղարուեստական կնիքով դրոշմուած:

Արևելքի գաւակ՝ բնութեան բարձրագոյն բարիքները «աչագեղ կոյսին» նուիրելուց և արբենալուց յետոյ, կարիք է զգում հանգստեան, մի հանգստեան՝ վառ, բանաստեղծական, եղեմային, ո՛չ այն հանգիստը՝ որ յատուկ է հարաւի փիլիսոփային, դադրած, յոգնած, ո՛չ յալիտեմական մրափն ինքնամոռացութեան, այլ նրան հարկաւոր է մի քուն, որ «կեանքից հեռու սլանայ, այն աշխարհը՝ ուր խնդութիւն, ուր սէրն է միշտ անթառամ»:

Քնքուշ վարդեր ինձ բարձ լինեն,
Վառ կանաչից իմ վերմակ...
Նոցա բոյրը զուարթագին
Ծծեմ անվերջ ես անյագ.
Եւ խայտալով իմ առաջին
Վտակն անուշ կարկաչէ,
Սի թարմութիւն եղեմային,
Չորս բոլորքս տարածէ...
Եւ աչագեղ կոյսն ականջիս
Իւր մեղեդին մեղմ հնչէ,
Եւ հերարձակ՝ սիրով վրզիս
Փարէ քնքուշ, փաղաքշէ...

Այս քնից յետոյ կը լրանայ պատկերը, եթէ նկարագրենք բանաստեղծի երևակայած մահը.

Իրաւունք տուր ծծեմ մեղրը շրթունքիդ,
Քաղեմ կարմիր այդ վարդերը թըշերիդ,
Ով որ առնի հոտը շամամ ծըծերիդ,
Էլ կարո՞ղ է միթէ գին տալ իւր կեանքին:

Թէ Աստուած ինձ պիտի մահ տայ, թող մօտ գամ,
Վզովդ ընկնեմ, քեզ համբուրեմ մի անգամ.
Թող ապրեշում մազերովդ ինձ կախ տամ,
Բնաւ մի կեանք էլ չի՛ հասնի այդ մահին:

Միևնոյն տեմպով և միևնոյն թափով դուք տեսնում էք բանաստեղծի զգացման զեղումը բազմաթիւ այլ երգերի մէջ: Վառ երևակայութիւն, գունագեղ պատկերներ, ներշնչման ուժգին թափ ու թռիչք՝ միացած բնական, անարուեստ զգացման խորին անկեղծութեան հետ, ձեր առաջ բաց են անում տաք ու կրակոտ սիրոյ երևակայոտ ու վառվռուն ելևէջները:

Այս երեք բանաստեղծութիւնների խտացումով մենք ուզեցինք ցոյց տալ երեք խոշոր մօմենտ բանաստեղծի իղձերի, ինչ և ինչպիսի է նրա սէրը, նրա երևակայած քունն ու հանգիստը և ի վերջոյ նրա ցանկացած մահը, ուր բնութայն կերպով պատկերանում է բանաստեղծի տեմպն ու տեմպերամենտը, արևելքի և հարաւի գաւակ, գուտարիւն մի լիրիկ:

Այս գրքի երևան գալովը թառամում է ամենագեղեցիկ ծաղիկը Յովհաննէս Թումանեանի բանաստեղծական փնջի մէջ: Նա մի էպիկ է և համեմատելու քիչ տեղ ունի Յովհաննիսեան լիրիկի հետ: Էպիկ բանաստեղծը, քանի որ չունի ներքին զգացման զեղմունք և իր հայեացքն ուղղուած է գլխաւորապէս արտաքին աշխարհի վրայ, մի Leitmotiv է ունենում. ամեն մի բանաստեղծութեան մէջ աշխատում է դնել մի իղէա, որ բանաստեղծական թափ առած պիտի սաւառնի և ազդէ միայն զգացումների վրայ: Աղքատ է սակայն, Թումանեանի երգը իղէաներով. միակ բացառութիւնը «Համերգն» է, ուր, արդարև,

մտքի կորիզ, հղեա կայ: Դուրս է գալիս, սակայն, որ դա մի հետևողութիւն է Յովհաննիսեանի երգին (երես 7).

Որպէս յաղթանդամ, մի ծերուկ հսկայ,
Կախուած է ժայռը ջրերի վրայ.
Ալիքը կայտառ գնում են գալիս
Եւ ժայռին սիրոյ համբոյր են տալիս:

Ի վերջոյ ալիքների բոլոր հրապոյրներին ծեր ժայռը պատասխանում է լռութեամբ.

Ալիքը կայտառ գնում են գալիս,
Սև ժայռը նախկին իւր վիշտն է լալիս,
Խաղում են ալիք, ուրախ կարկաչում -
Նա (ժայռը) անշարժ, նա կրկին տրտում...

Գրեթէ նոյնպէս է վերջանում Թումանեանի «Համերգը», ուր «ժայռը մտախոհ իր մռայլ մտքի ետևից ընկած, լսում է նրան», - վտակի թռիչքին և անտառի արձագանքին:

Ժողովրդական երգերի ձևն էլ, որ վեր առաւ Աւետիք Իսահակեանը Յովհաննէս Կոստանեանից և աջողութեամբ տարածեց՝ ստեղծելով մի խումբ հետևողներ, իր նախորդն ունի յանձին Յովհաննիսեանի, որի արտայայտութեան ձևը թէ՛ աւելի բնական է և թէ աւելի առողջ և կայտառ է քան Իսահակեանինը, որ արդէն ձանձրալի և խեղդամահ է դառնում հէնց իր ծնողի ձեռքով, որովհետև Աւետիքի մօտ այդ ձևն արդէն դառել է բառախաղի ու մինչև անգամ տառախաղի մի տաղտկալի շարան:

Համեմատեցէք, օրինակ, Իսահակեանի որևէ երգը Յովհաննիսեանի «Արագի» հետ, որ ընդգրկած, տոգորուած է ժողովրդական երգի շունչ ու հոգիով:

Արագ եկաւ լափին տալով,
Ժէռ քարափին, ափին տալով.
Ո՞րտեղ թաղեմ ես իմ դարդը
Չոր գլուխս տափին տալով:
Ա՛յ իմ Արագ, ջուրդդ վարար,

Սիրուն եարիս եարաբ տեսա՞ր,
Ես չը հասայ իմ մուրազին,-
Արագ, եարաբ կարօտս առա՞ր:

Ահա՛ դրա օրիգինալը ժողովրդի բերանով.

Կապուտակ ձին հեծել եմ, եամա՛ն եար,
Արագին մօտեցել եմ, եամա՛ն եար,
Արագ, ինձ մէկ ճամբայ տուր, եամա՛ն եար,
Իմ եարին կարօտցել եմ...

Գիրքը թուականներ չէ պարունակում, ուստի հնարատր չէ հետևել տաղանդի զարգացման և բանաստեղծի տրամադրությունների ելևէջին: Ինքնուրույն երգերի վերջին մասը հետզհետե դառնում է թախծալի և ազգային-հասարակական մօտիվները գերիշխող: Թույմ է, որ դրանք գրուած պիտի լինեն 1895 թուականից յետոյ, մեր ազգի աղետալի և ծանր օրերին, որոնք իրանց իսկական երգչին գտան յան-ձին Արամ Զարբգի, որ իսկական բանաստեղծի աիւնով ողբաց ու սգաց իր հայրենիքի տոսկալի օրերը: Յովհաննիսեանի այս գործերը թոյլ են և զուրկ գրական խոշոր արժանիքից:

Այս, ինչ որ գրում եմ, մի ուտյթ չէ՛, որի համար աւելի մեծ էջեր և աւելի շատ ժամանակ էր հարկատր, այլ միայն տպատրութիւններ՝ մի ուշացած տաղանդի արժանիքները ցոյց տալու, որ գալիս է փարատելու «Արցունքի հովիտի» և «Սև ագռաւների» պատճառած մղձաւանջը: Աւետիք Իսահակեանի միալար ախ ու վաշերից յետոյ մարդ հրապոյր է գգում կարդալով այս երգերը առոյգ և առողջ սիրոյ, որ տեղ-տեղ հասնում է Քուշակի բարձունքներին և Քուշակից յետոյ երկրորդ անգամ համոզում մարդուն, թէ հայ լեզուով էլ կարելի է բանաստեղծել առանց արտաստելու, առանց սգալու և առանց ախ-Հուսէին - վախ-Հուսէին ասելով կուրծքը թակելու:

Չեմ խօսում թարգմանութիւնների մասին, որոնք մեծ մասամբ թոյլ են և իսկի համեմատուել անկարող են Ծատուրեանի ընտիր թարգմանութիւնների հետ:

Յովհաննիսեանի լեզուի վրայ նշմարելի է Լազարեան ճեմարանի դրոշմը թեթևակի, և Շահազիզի ազդեցութիւնը՝ մեղմացած: Նրա չափը, յանգը, ոճը և սահունութիւնը աւելի թոյլ են և աւելի անմշակ քան Յովհ. Թումանեանինը, ևս առաւել Շուշանիկ Կուրդինեանի ոճը, որ իր առնական թափով գերազանցելու վրայ է մեր բոլոր տղամարդ բանաստեղծներին, երբ նա չէ հետևում Իսահակեանին և ստեղծագործում է ներագդած իր բնածին տեմպերամենտով:

Շնորհակալ պէտք է լինել Բագուի «Կուլտուրականից», որ կորուստից ազատեց մեր բանաստեղծին: Գրքի գինը, սակայն, քչերին է մատչելի: Խորհուրդ կը տալինք օգտուելու Աւետ. Իսահակեանի խելօք հեռատեսութիւնից, որը 3 կօպէկանոց հրատարակութիւններին է պարտական իր ժողովրդականութեան մի խոշոր բաժնով: Խիստ ցանկալի էր հասարակութեան համար, որ Յովհաննիսեանի երգերից մի էժանագին հատընտիր հրատարակուէր 10-15 կօպէկ արժէքով, որը կը նպաստէր տաղանդաւոր բանաստեղծի ժողովրդականացման:

«Մշակ», 1908 թ. մայիսի 11, N 102

ՆԱՄԱԿՆԵՐ

ՆԱՄԱԿՆԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

16 դեկտեմբերի 1890, Նուխի

Սիրելի Հովհաննես,

Արդյոք գիրքդ տպագրվե՞ց, մի հատ ուղարկելիք ինձ: Իմ բաժանորդաթերթիս վճարը ստացե՞լ ես, թե ոչ, Արամից: Եթե չես ստացել, գրիր, ես կուղարկեմ վճարը: Տպած գրքերը կուղարկես Ախալքալաք բաժանորդների անվան ցանկի հետ, այս հասցեով՝ Ахалкалаки. учит. Джалалы Тер-Григорянц և կխնդրես, որ նա ցրվե ըստ պատկանելւոյն: Դավթից տեղեկություն տուր, արդյոք նա Պետերբուրգ գնա՞ց, թե ոչ: Քո գործերդ ինչպե՞ս են: Բանաստեղծություններդ շարունակո՞ւմ ես: Ընդունիր բարես՝

քո Գրիգոր Վանցյան

Հասցես՝ Нуха. Армянское правление, преслать в Вардашен, Ванцян.

«Թումանյան. Ուսումնասիրություններ և հրապարակումներ», գիրք 4, Երևան, 1985, էջ 291

Սիրելի Հովհաննես,

Ստացա նամակդ, ուրախ եմ, որ սաղ-սալամաթ ես մնացել տիրահալած կամրջի խորտակումից¹: Տո՛ւ, ողորմած հոգի Շալամյանը սա՞ղ է, թե մեռավ, ի՞նչ է շինում նա:

Շնորհավորելուդ համար շնորհակալություն: Ես կասկածել էի, թե խմբագրությունը ստացած չի լինի հոդվածը², այդ պատճառով վաղօ-

1. Խոսքը 1892 թ. հունվարի 6-ի ջրօրհների ծխակատարության համար պատրաստած ժամանակավոր կամուրջի խորտակման մասին է:

2. Խոսքը Գրիգոր Վանցյանի «Հայ բոշաներ» հոդվածի մասին է, որը տպագրվել է «Մուրճի» 1892, N 7-8 (հուլիս-օգոստոս), էջ 1047-1064 և N 9 (սեպտեմբեր), էջ 1310-1321:

որը ուզում էի տեղեկանալ, ուստի և քեզ նեղություն տվի: Հողվածս ինքն ըստ ինքյան մի առանձին բան չէր, եթե ոչ մի խիստ սակավ անձանոթ բոշա ցեղի հարևանցի ուսումնասիրությունը:

Գրքիդ II հատորի այդպիսի շուտափույթ տպագրության հանձնելը ինձ զարմացնում է: Հույս ունե՞ս, որ ծախքդ հանես, կամ առաջին գրքիդ ծախքը հանեցի՞ր...

Մի խոսքով ցանկամ լիովի հաջողություն:

Բաժանորդաթերթդ շատ անժամանակ հասավ. թատրոններով, հանգանակություններով, բաժանորդագրություններով ժողովրդին կատարյալ ձանձրացրել էինք, ուստի քո թերթիդ բանը մի քիչ դժվար էր, երես չէր մնացել: Ուղարկում եմ, ահա, ութ հոգու բաժանորդագինը՝ չորս ռուբլի: Երբ գիրքը դուրս գա, կուղարկես հետևյալ հասցեով, խնդրելով, որ հասցնի բաժանորդներին, որոնց ազգանունները կդրես՝ Дербенд. Александру Шакиджанянц:

Այն դեպքում իհարկե, եթե ես հեռացած լինիմ Դերբենդից:

Ես էլ մի կերպ ապրում եմ: Մինչև հիմա զբաղված էինք թատրոններով, հիմա մի քիչ ազատ ենք:

Դերբենդի կյանքը, ինչ ասեմ, կա էլի, յուր կտանի:

Ընդունիր ջերմագին բարևս, հաղորդիր Շալամյանին և ծանոթներիս:

Քո Գրիգոր Վանցյան

Դերբենդ, 92 թ.,

18-ն փետրվ.

*«Թումանյան. Ուսումնասիրություններ և հրապարակումներ»,
գիրք 4, Երևան, 1985, էջ 304-305*

1892 թ., 25 սեպտ., Ախալքալաք

Միրելի Հովհաննես,

Կարդացի «Իմ եղբայրները օտարության մեջ ինձ ասում էին»¹...

1. Խոսքը «Օտարության մեջ» բանաստեղծության մասին է, որն առաջին անգամ, առանց վերագրի տպագրվել է «Մուրճի» 1892 թ. 7-8-րդ (հուլիս-օգոստոս) համարում, էջ 1045:

և շատ հավանեցա, որովհետև կարծես իմ սրտիցս էին բխել այդ խոսքերը: Կրկնում եմ՝ չմոռանա մախկին ուղղությունը, չմոռանա այն ժողովուրդը, որ քեզ ծնել է, երգիր ժողովրդի ցավն ու վիշտը, հոգսն ու թշվառությունը, սաքոներիդ ձեռից բաց չթողնես:

Տո, մեռած, մի քիչ երկար մամակ գրես կամ թե չէ կարգին նորություններ հայտնես, որ մենք գավառների անկյուններում նստածներս էլ ուրախանանք: Օրինակ՝ Հայրիկի հաստատվելը կամ որևէ նշանավոր դեպք, ինչո՞ւ իսկույն չես հայտնում, թեկուզ բաց մամակով:

Այսուհետև նորություններ քեզանից եմ սպասում: Գիրքդ էլ, եթե դուրս է ելել, ուղարկիր մի 15 հատ, եթե ավելի ծախելը հնարավոր լինի, նորից բերել կտամ:

Ինչպե՞ս եղավ Ջալալի հողվածն, եթե չի տպագրվում հետ ուղարկիր:

Արդյոք օրիորդ Աննա Սահակյանը Թիֆլիս է, կարող ես նորանից իմանալ Իսուֆյանի հասցեն և ինձ գրել: Ինձ հարկավոր է մաս Վրթանես Փափագյանի հասցեն, որ պետք է իմանաս և գրես: Օրիորդ Սահակյանին իմ կողմից ողջունիր, եթե այդտեղ է և եթե այդտեղ չէ, նորա հասցեն ևս գրիր:

Ի՞նչ եմ շինում ուսուցիչները, չկարողացա՞ն Գեղամյանին տալալել: Ուրիշ ի՞նչ նորություններ կան տեղդ, ի՞նչ եղավ հայոց թատրոնի բանը, պիտի կայանա՞ թե ոչ:

Ողջույն ինձանից և Ջալալից¹:

Քո Գրիգոր Վանցյան

Ներփակյալ մամակս հանձնիր «Մուրճի» խմբագրին:

*«Թումանյան. Ուսումնասիրություններ և հրապարակումներ»,
գիրք 4, Երևան, 1985, էջ 311*

1. Ջալալ Տեր-Գրիգորյան (1866-1939) - մանկավարժ, հասարակական գործիչ, թարգմանիչ:

8-ն ապրիլի 1893 թ., Ախալքալաք

Սիրելի Հովհաննես,

Ինչպես երևում է մամակս չստացած ուղարկել ես գրքերդ ու մամակդ, այժմ երևի ստացած կլինիս: Որովհետև Մովսես Կաղնկատվացի ուրիշ տեղից հույս ունիմ ստանալու, այդ պատճառով հարկավոր չէ այլևս քո ուղարկելը, եթե չես առել պրծել: Մնացած հանձնարարությունն աշխատիր կատարել: Անցյալ մամակիս հարցերին մանրամասն պատասխան տուր: Ետ ուղարկիր մաս թշվառ «Մենյակս», զարմանում եմ դորա անհաջողության վերա, մի՞թե թարգմանության լեզուն է վատ, բովանդակությունը գեթ անպայման գովելի է: Ինչի ես հարցնում «Մուրճում» տպված մամակիս մասին¹, մա ինձ վրա լավ տպավորություն բողեց: Գրիր հարցմանդ պատճառը: Չատիկի տոներին Ախալցխա էի, որ Արամը ստացավ մամակդ ու գրքերդ: Տոներին գնացել էի այս ճնշող մթնոլորտն մի քիչ փոխարինելու: Սիմոնին, եթե այդտեղ է, բարևիր և ասա, որ սպասում եմ մի կարգին մամակի:

Ստացանք գրքերդ: Շնորհակալություն մվերներիդ համար: Աղասին միայն տասը հատ վերցրեց ծախելու, մնացածից հրաժարվեց: Դժվար թե բոլորը կարողանանք ծախել, մանավանդ գրքերից մի քանիսի թղթերը ներկոտ են և շատ է խանգարում 35-ի վերա թույլ կպցրած 60 կոպեկը, որ շուտով պոկ է գալիս:

Ուզում էի մի քննադատություն գրել, կանգ առնելով մանավանդ «Կանչի» վերա, սակայն Աղայանը կանխեց² և վախեցա ցենզուրան թույլ չտա:

1. «Մուրճի» 1893 թ. N 2-ում, էջ 346, «Չանագան լուրեր» բաժնում տպված է Գ. Վանցյանի հիշյալ մամակից մի հատված, որ բերում ենք ստորև. «Մուրճը» կարդալու և հասկանալու համար հարկավոր է մի որոշ աստիճանի կրթություն և զարգացումն ունենալ, որ ըստ մեծի մասին գուրկ է մեր տնտեսապես ապահով դասակարգը, այդ պատճառով էլ «Մուրճը» նոցա մեջ դժվար է տարածվում, որոնք իրանց ամբողջ մտավոր պաշարը լրագրական թեթև լուրերով են միայն հարստացնում:

Սակայն, ըստ իս, «Մուրճի» ապագան լիովին ապահով պետք է համարել, քանի որ նորա կողմն են մեր բոլոր հասկացող և բանիբուն երիտասարդները, որոնց հույսն ու հավատը օրավուր ավելանում է «Մուրճի» վերաբերությամբ»:

2. Նկատի ունի Ղ. Աղայանի «Անուշից» մի ճաշակ» վերնագրով մատենախոսությունը, որը լույս է տեսել «Մուրճի» 1893 թ. N 3-ում, էջ 457-460:

«Կանչը» ամեն տեղ ֆուրոր է անում. Это действительно высокохудожественное произведение. Եթե, Հովհաննես ջան, ուրիշ ոչ մի բան չգրեիր, այդ ստեղծագործությունդ բավական էր քեզ բանաստեղծի մեծ կոչմանը արժանացնելու: Ունիս, այո՛, ուրիշ գեղեցիկ բաներ, ունիս և շատ թույլ բաներ, բայց «Կանչը», դա գլուխ գործոցդ է, դա մի գոհար է: Այդպես եմ անվանում ես «Կանչը»՝ գոհար:

Չուտ բանաստեղծական-գրական-գեղարվեստական բաժնում անցյալի հետ համեմատած անտարակույս մեծ առաջադիմություն ես արել, ես քեզանից այդ չէի սպասում, ես և շատերը ինձ հետ քեզանից սպասում էինք ժողովրդական ոգու արտահայտություն գեղարվեստական արվեստով արտաբերված, այդ ուղղությամբ գրածներիցդ այս գրքում ամենահաջողակը «Ախթամարն» է, մնացածներում, ինձ թվում է, թե ոչ թե չես առաջադիմում, այլ մասամբ կանգնած ես մնացել նույն աստիճանի վրա: «Անուշիդ» առաջին մասը շատ է ձգ-ձգված և ըստ իս, շատ էլ աջողակ չէ: «Մերժած օրենքը» գեղեցիկ է: Լիրիկականներդ, ինչպես ասացի, առհասարակ հաջողակ են, թարգմանություններդ, թեև բնագրի հետ չեմ համեմատել, բայց անհաջող են երևում: Թարգմանություններից մի քիչ ձեռք քաշի: Ի վերջո «Գիշերային մտածումներ», «Խորհրդածությունը» և այլք, ընտիր բաներ են: Եթե առիթ եղավ, գիրքս քեզ կտամ և կկարդաս մանրամասն նկատողություններս:

Անուշավան Աբովյանին, եթե դա իմ ճանաչածս է, ուրիշ բան պետք էր նվիրած¹, համաձայն ես:

Ի վերջո ընդունիր անկեղծ համբույրս: Ջալալը ողջունում է:

Միակ խնդիրս, խորհուրդս և պահանջս քեզանից այն է, որ կարդաս, կարդաս և կարդաս, մի ծուլանար*: Զո Գրիգոր

*«Թումանյան. Ուսումնասիրություններ և հրապարակումներ»,
գիրք 4, Երևան, 1985, էջ 313-314*

1. Թումանյանը Ան. Աբովյանին է նվիրել «Անուշ» պոեմը:

* Վերին լուսանցքում՝ «Նորություններ գրիր «Մշակի», Հայրիկի և այլ գործերի մասին»:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Քերին, 16-ին (4) Մարտի

«Մշակ»-ի 24 N-ում տպած պ. Մալումեանի նամակի առթիւ թոյլ տուէք խնդրեմ երկու խօսք ասել:

Հրէա Դրէյֆուսը մատնել է ֆրանսիական զօրքի գաղտնիքը մի մեծ պետութեան. Չինորական դատարանը նորան աքսորի է դատապարտել, ճանաչելով մեղաւոր: Չոլան կարծում է, որ նա անմեղ է, պ. Արասխանեանը կարծում է, որ նա մեղաւոր է: Գաղտնի թղթերին, որոնք պահուում են այդ գործի մասին ֆրանսիական զինորական շտաբում, անծանօթ են և՛ պ. Չոլան, և՛ պ. Արասխանեանը, և՛ ամբողջ աշխարհը: Այդ թղթերին միակ անմիջապէս ծանօթ ատեանը դատապարտել է Դրէյֆուսին: Հարց է. սխալւե՞լ է այդ ատեանը, թե՞ մեղաւոր է Դրէյֆուսը:

Հեռից՝ ընթերցողներս մի՛միայն հաւանական ենթադրութիւններով կարող ենք Չոլայի կամ կառավարութեան կողմը հակիլ: Առանց ուրանալու Չոլայի վեհ և գովելի համարձակութիւնը՝ պաշտպանել իւր համոզմունքը (աւելի լաւ էր ասել ենթադրութիւնը) հրապարակօրէն, ամեն մի անձի անհատական գործն է՝ ա՛յս կամ ա՛յն կարծիքն ունենալ Դրէյֆուսի մասին: Եթէ առաջները տատանողներ էլ կային, Չոլայի գործի քննութիւնը 15 օրայ ընթացքում սրատես և լա՛ւ աղբիւրներից օգտուող ընթերցողի համար ավի-աշկարա բաց արաւ, որ եղած փաստերից առսակաւը 90 % խօսում է ի վնաս Դրէյֆուսի և Չոլայի: Եւ ո՛չ մի խելքը գլխին մարդ չի կարող ենթադրել, որ Ֆրանսիայի նման մի ազատ երկրի դատարանը առանց այլ և այլի դատապարտէր մի անմեղ Դրէյֆուսի և ազատ արձակէր մի մեղաւոր Էստերիագիլի: Այս է գործի էութիւնը երկու խօսքով. հիմա ճաշակի և խելքի բան է մոլեգնօրէն Չոլայի կողմը բռնել և բղաւել, որ Դրէյֆուսը արդար է, որպէս անում է մեր «Մշակ» լրագիրը, որի համար հիմա Չոլան անսխալական մի պապ է դառել. կամ ի նկատի ունենալով Չոլայի պնդումի անհիմն լինելը, մեղաւոր ճանաչել Դրէյֆուսին, որպէս անում է պ. Արաս-

խանեանը, և կամ սառնասրտութեամբ սպասել գործերի աւելի պարզելուն, որպէս անում են եւրոպական շահ տ քերթեր, որոնք առժամանակ բաւանում են լոկ փաստերի անաչառ արձանագրութեամբ¹:

«Մշակ»-ի հետ վիճելը անկարելի է դառնում այն պատճառով, որ այդ լրագիրը բացի անվայել-անգրական ոճերից, սովորութիւն ունի առանց փաստերի, ամեն բան դոգմայօրէն, ամենաընդհանուր, ամենաձայրայեղ բառերով կրկնելու, բղաւելու և մի՛միայն բղաւելու. «մի Ալլահ կայ և նորա մարգարէն Մահամեդն է»։ մի ճշմարտութիւն կայ աշխարհի երեսին, և նորա քարոզիչը «Մշակը» - ահա այդ լրագրի յօդածների սքեման. կարդացէք պ. Յովհաննիսեանի անվայել յօդածը N 24-ում, կամ պ. Մալումեանինը 26-ում, ուր բնորոշ են հետևեալ տողերը. «Երբ Չոլայի դէմ դուրս է գալիս մեր գրականութեան մի օրգան, դա ցոյց է տալիս, որ կան այդ օրգանը «Մուրճ»-ը մինչև այժմ խաբել է հասարակութիւնը (հասարակութեանը), իրան ցոյց տալով որոշ սկզբունքների հետևող, և կամ այժմ է դաւաճանում այդ սկզբունքներին ալլանդակ պատկեր ցոյց տալով մի այնպիսի գործում, ինչպէս է Էմիլ Չոլայի խնդիրը»... գրում է «Մշակը» 26 N-ում: Ապա դիմելով «Մուրճի» աշխատակիցներին, շարունակում է՝ «թող այդ աշխատակից պարոնները բարձր ասեն. համաձայն են արդեօք պ. Արասխանեանին... Դա է պահանջում իրանց պատիւը և թէ այն օրգանի պատիւը, որին իրանք մասնակցում են»...

1. «Մուրճ» ում Չոլայի պնդումների մէջ կշռի ծանրութիւնը չէր նկատւած այն կէտը որ Դրէյֆուսին է վերաբերում, այլ այն, որ վերաբերում է գլխաւոր շտաբի դերին Էստերիագիի քննութեան ժամանակ: Եւ առհասարակ «Մուրճ» N 1-ում այն միտքն էր յայտնում, որ դատավարութիւնից առաջ չպէտք էր դատաւճիռներ կարդալ մէկի մեղաւորութեան, միւսի անմեղութեան մասին: Չոլայի պնդումները այդ մասին մենք անհիմն չէինք յայտնել, այլ (մեր յօդածը գրւած լինելով դատավարութիւնից առաջ) ասում էինք, թէ այդ խնդիրների համար պէտք է սպասել դատավարութեան վախճանին, իսկ մինչև այդ պէտք է հաւատով վերաբերել դէպի դատարանների վճիռը: Մինչև Չոլայի դատի սկսելը թէ ինչ վերաբերմունք պէտք էր ունենալ, մենք արտայայտել էինք մեր յօդածի այս խօսքերով. «Մենք Ֆրանսիան ճանաչում ենք այնքան ազատ և լուսաւոր երկիր, որ կարող ենք հաւատ ունենալ, որ նորա հաստատութիւնների հովանու ներքոյ սուտն ու արդարութիւնը երևան կը գան նաև անկախ օտար ազգերի ճայների միջամտութեան, ազգերի, որոնցից շատերը դեռ միայն պիտի սովորեն Ֆրանսիայից, թէ ինչ է օրէնք, ինչ է արդարադատութիւն» (Մուրճ, N 1, էջ 150-151): - Ծան. Խմբ.:

Պար. Մալումեանին պատասխանում են զանազան միջոցներով, որոնք ես գտնում եմ սաստիկ խիստ ի նկատի ունենալով այն թշուառ հոգեկան վիճակը, որ ցոլում է նորա գրութեան ամեն մի տողից: Ասէ՛ք խնդրեմ, ո՞ր խելքը գլխին մարդը այնպիսի բաներ կը գրէ որպէս Մալումեանը.- «Որովհետեւ պ. Արասխանեանը Ջոլային անսխալական չի համարում, դէ ուրեմն դաւաճանում է իւր սկզբունքներին. և այդ պատճառով, «Մուրճ»-ի պարոն աշխատակիցներ, ասացէ՛ք, համաձա՞յն էք պ. Արասխանեանին. որ դէ, պ. Մալումեանի լոգիկայով դո՛ւք էլ, «Մուրճ»-ն էլ, գուցէ նորա ընթերցողներն և գրաշարն էլ դաւաճան դուրս գան այն սկզբունքին, որ հոգեհիւանդ Մալումեանի համար մի անտարակուսելի դոգմա է դառել».- Այս է պ. Մալումեանի լոգիկան, որ ուղեղի կենդրոնների խանգարման բոլոր նշաններն ունի: Հիւանդ պ. Մալումեանին ես չեմ պատասխանում, այլ այդ փոքրիկ անալիզով ուզում եմ ընթերցողներին մի գաղափար տալ նորա հոգեկան ցաւալի վիճակի մասին, որը ինձ, գուցէ և շատերի համար մի հին և ակնյայտին իրողութիւն է. իմ պատասխանը պ. Մալումեանին՝ ըստ կարելոյն շուտով դիմել մի հոգեբան բժշկի օգնութեանը: Նորա գրած դեղատոմսի մէջ նա կը գտնի «Մուրճ»-ի աշխատակիցներից շատերի պատասխանը՝

«Մուրճ», 1898, N 2-3, էջ 369-371

1. Տպագրելով մեր աշխատակից պ. Վանցեանի այս նամակը, մենք կը նկատենք մեր կողմից միայն մի բան, այն է որ «Մշակի» ակնարկած յօդածում այն, ինչ պախարակում է, մեր կարծիքով միակողմանի կերպով վերագրում է յօդածը ստորագրող Խ. Մալումեանին: Սինդեռ ներկայ դէպքում այդ անձը տիպական ներկայացուցիչ է ամբողջ «Մշակի» ներկայիս ուղղութեան: Նա այդ գրել է լռելեայն համերաշխութեամբ «Մշակի» ոչ միայն բոլոր խմբագրական աշխատակիցների, այլ և «Մշակի» բոլոր կողմնակիցների հետ: Իբր պապացոյց թող ծառայի թէ այն համաձայնութիւնը, որ տեղ է այդ թերթի խմբագրութիւնը յօդածի հրատարակման համար, և թէ այն լռութիւնը որ պահպանում են (և պիտի պահպանեն!) այդ թերթի կողմնակիցները հետեւալ գրականական օյինբազութեան դիմաց: Դատեցէք. այդ Մալումեանը (որին Աստուած լիտերատոր անւանի!) իւր ստորագրութեամբ տպած նոյն յօդածում, իբր թէ կրկնելով «Մուրճի» յօդածի խօսքերը, ասում է ապոմբով.

«Հայ գրողը նրա համար չէ գրում Ջոլայի գործի մասին, որ ներգործի ֆրանսիական կառավարութեան վրայ, ինչպէս երեխայաբար կարծում է Մուրճի խմբագիրը, այլ նրա համար, որ...» (տե՛ս «Մշակ», N 26):

ԲԱՅ ՆԱՄԱԿ «ՄՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ*

«Մշակ»-ի 200 N-ում Դուք դարձեալ մեծարել էիք իմ անունը, այս անգամ մի պարզ մեղադրանքով, թէ Վանցեանն «անազնիւ գրող» է, որովհետև նա վախել և թագցրել է Ձեզանից այն, ինչ որ ապա գրել է «Մուրճ»ին:

Դ-ա մի անբարեխիղճ վարմունք է, երբ հաւատացնում էք Ձեր ընթերցողներին թէ մեր հերքումները «Մշակ»ում և Մուրճում նոյնն են: Վերջինը առաջինի կոպիան չէ՛. գրած է անհամեմատ աւելի ուշ և աւելի մշակած է, որովհետև այնտեղ վկայութեան են կանչւած նոր հեղինակներ, շատն ընդարձակած, շատ կէտերն էլ մեղմացրած են: Մտէք «Մուրճ»ի խմբագրատուն բնագիրը կարդալու և պիտի խոստովանիք, որ մեր ասածը ճիշտ է, որովհետև այնտեղ մի փոքրիկ, անտիպ հատւած ևս պիտի գտնէք, որ պիտի ապացուցանէ մեր ասածի ճշտութիւնը¹ և դրանով պիտի հերքւի նաև այն ցնորալի միտածը, որով Դուք Ձեզ կերակրում էք Ձեր ուժի և դիրքի մասին, որից որպէս թէ «վախենում են»: Սի՛ մոռանաք խնդրեմ այսուհետև, որ մեզ յայտնի է ճանապարհը, տպել տալու մեր հերքումը, Ձեր իսկ կամքի հակառակ և ստիպմամբ, լինէր նա տասնապատիկ աւելի խիստ, քան մեր գրածն

* Սինչդեռ ահա թէ Արասխանեանցը ինչ էր ասել.

«Հարկաւ՝ հայ ընթերցող հասարակութեան համակրութիւնը կամ հակակրութիւնը արդարադատութեան գործում՝ Ջուլայի խնդրի վերաբերեալ՝ դրականապէս ոչ մի նշանակութիւն չունին: Նկատեցէք որ (ստորագծումը բնագրումն է!) հայկական մամուլը ոչ մի ճնշում չի կարող գործել ֆրանսիական երդեալների դատարանի վրայ, և ոչ էլ հայկական հասարակաց կարծիքը կարող է արժանանալ ուշադրութեան նոյն իսկ Ջուլայի կողմնակիցների կողմից Ֆրանսիայում: Բայց մի՞թէ խնդիրը դորանումն է» (տես «Մուրճ», N 1, էջ 151): Էլ ի՛նչ խօսէք այսքան պարզ խօսքերը աղաւաղելու ընդունակ գրական գործիչների հետ!... - Ծան. Խմբ.

1. Կարող ենք վկայել որ «Մուրճ»ում անցեալ ամիս տպւածը պ. Վանցեանը դրկել էր մեզ այն պատճառով, որ «Մշակ»ին դրկածի տպագրութիւնը ուշանում էր, և պ. Վանցեանը կարծել էր, թէ Մշակում իւր պատասխանը չի տպւելու: «Մուրճ»ում տպւածը արդէն շարւած էր ամբողջապէս, երբ «Մշակ»ին դրկածը տպւեց: Այդ դրոյեց մեզ «Մուրճ»ին դրկածից ջնջել մի «յետ գրութեան», ուր խօսքը «Մշակ»ում չտպագրելու մասին էր: - Ծան. Խմբ.

էր: Այսքանը կարծեմ բաւական է Ձեր տարապարտ զրպարտութիւններն հերքելու, սակայն, քանի որ հարցը ազնւութեան մասին է, թոյլ տուէ խնդրեմ մի երկու ոչ հեռաւոր դէպքեր յիշեցնելու Ձեզ:

«Անահիտում» ես մի յօդած էի հրատարակել մեր գրաբարբառներին միութեան մասին: Դուք քաղածներ արիք նրանից և այնպիսի ճարպիկութեամբ աղճատեցիք և այլանդակեցիք մեր մտքերը, որ ստիպւած էինք մի բաց նամակով բողոքելու այդ վարմունքի դէմ: Գրական մարդու տարրական պարտքն էր յարգել հակառակորդի արդարացի բողոքը: Սակայն, Դուք չուզեցիք հանել Ձեր ընթերցողներին մոլորութիւնից, Դուք մի անվայել և դատապարտելի ընթացք ցոյց տուիք մամուլի մէջ և չ'տպագրեցիք մեր կարճ ու քաղաքավարի նամակը: - Այս է ահա վախը:

Վերապատելի Մէնէվիշեան քննադատութիւն էր տալել մեր մի անտիպ, ուրեմն հասարակութեանը դեռ անծանօթ գործի մասին, այն էլ առանց իմ գիտութեանն ու թոյլատւութեանը: Խոստովանեցէք, որ դա, եթէ մեղմ ասենք, մի գրական վարմունք չ'էր: Դուք փոխանակ դատապարտելու, հրճեցաք, գովաբանեցիք այդ վարմունքը. ա՛յլ և պարտք համարեցիք արտատալելու նրա ամենախիստ և Ձեզ համար շահաւէտ կէտերը, զարդարեցիք այն վերևից, միջից և տակից փողոցային հայհոյանքի մի հրաշալի մոզայիկով, տապալելու համար մի գործ, որ Դուք չէիք ճանաչում, որպէս զի սկսցնել ու անւանարկել կարողանաք Ձեր հակառակորդի անունը: Եթէ մենք բառ չենք գտնում անուն տալու Պատուելի Մէնէվիշի վարմունքին Ձեր այդպիսի աջակցութեան համար, միայն զգուսնք կարող էինք զգալ:

Մենք հերքեցինք արտատպածը, անուշադիր թողնելով Ձեր հայհոյանքը: Մի պարտականութիւն կար Ձեր վրայ, նոյնութեամբ և հոգածութեամբ տպագրելու մեր հերքումը: Սակայն, այստեղ էլ ցոյց տուիք, որ Դուք արժանի չէք գրական մարդու կոչմանը: Դուք բաց թողիք մեր նամակից ամբողջ հատւածներ ու նախադասութիւններ, եղածն էլ տպագրեցիք ա՛յնպիսի անհոգութեամբ և սխալներով, որ մի կարևոր կէտում (ւիւնի և վի մասին) ո՛չ մի միտք չէր դուրս գալիս:

Ես իրաւունք ունիմ կարծելու, որ դրանք դիտմամբ էին կատարւած, որովհետև Դուք օգտւելով մեր մեղմ հեզնութիւնից, այնպէս էիք

մեկնել, իբրև թե Վանցեանը պատրաստ է «համեստութեան» դասեր աննելու Չեզանից...

Այդ դեռ բաւական չէ՛. Դուք Չեզ թոյլ էիք տւել անկարելին և աներևակայելին, որ մենք չէինք սպասում նոյն իսկ «Մշակ»-ից: Դուք նենգել էիք մեր բառերը: «Պատուելի Մենեվիշեան»ը Դուք շինել էք «գիտնական», իսկ «գիտնական Աճառեան»ը Դուք դարձրել էք «քանասէր»:- Դուք մեր բերանով Չեր ընթերցողների առաջ բարձրացրել էք մեր հակառակորդին և նուստացրել մեր վկայի հակառակ մեր գրութեան: Որքան էլ մեղմ ցանկանք լինել, մի բառ կայ այդ վարմունքի համար, խարդախութիւն, և գործը մինչև այդտեղը հասցնելուց յետոյ, Դուք, 27 ամեայ լրագրի խմբագրութիւն, գալիս էք դարձեալ մոլորեցնելու Չեր ընթերցողներին, իբրև թե ես «անազնիւ գրող» եմ, որովհետև չորս անմեղ բառերով՝ «Մշակն է այս դասը տուողը» - բաց եմ արել Չեր թիւր մեկնութիւնը:

Ասացէ՛ք, ո՞վ է հիմա անազնիւր:

Այս տողերը գրում եմ ամենամեծ դառնութեամբ և զայրոյթով, որովհետև ստիպւած եմ ցոյց տալ թէ ո՛վ էք Դուք: Չեզ դիւական հաճոյք է պատճառում գտնել և ցոյց տալ երևակայական յանցանք. մեզ անասելի ցա՛ւ է պատճառում, որ մեր գրական ասպարիզում ահա ա՛յդպիսի վարք ու բարքեր են զարգանում: Խաղողն է ուղիղ թէ հաղողը, մանկաբարձը թէ դայեակը, հաւատացէք, մի շատ երկրորդական հարց է այն կրքոտ և յանցաւոր վարմունքի դիմաց, որ Դուք ցոյց տւիք այս վէճի մէջ, գործը հասցնելով մինչև գրանենգութեան, մի՛միայն Չեր հակառակորդին տապալելու ցանկութեամբ¹:

Բագու, 5-ն Հոկտեմբերի

1899 թ.

«Մուրճ», 1899, N 10, էջ 1253-1255

1. Ներկայ գրածքից բաց ենք թողնում վերջին տողերը: - Խմբ.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԻՆԱ ՌԱՆԻՅՉԻՉ - ԲՈՇԱ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒՀԻ
Վլիսլոցկիից

ԳՐԻԳՈՐ ՎԱՆՑԵԱՆ

Aus dem inneren Leben der Zigeuner.
Ethnologische Mittheilungnn, von Dr. Heinrich Wlislocki.

Գիտնական Վլիսլոցկու այս գիրքը՝ բռնաների դիցաբանության, հաւատալիքների և նախապաշարմունքների մի հարուստ հաւաքածու է, որ մասնագիտական նշանակութիւն ունենալով, չենք ուզում քաղածօրէն այստեղ դնել, մինչ նոյն աշխատութեան վերոյիշեալ բանաստեղծուիւն վերաբերեալ մասը, բերում ենք մանրամասնօրէն:

Այդ բռնա կնոջ տարօրինակ կեանքը մեծ լոյս է սփռում եւրոպական բռնաների իրաւաբանական յարաբերութիւնների վերայ և, ինչպէս կը տեսնէ ընթերցողը, մեզ հայերիս համար մի առանձին հետաքրքրութիւն ունի, քանի որ այդ բռնա Սաֆօն իւր սկզբնական կրթութիւնը ստացել է հայի ձեռքով և հայոց ուսումնարանում և թերևս առանց այդ կրթութեան նա կորչէր ինչպէս մի տգէտ և անյայտ անդամ թափառաշրջիկ բռնաների:

Այս տաղանդաւոր և անբաղդ կնոջ կեանքը լի է այնպիսի եղերական դէպքերով, որոնք կարող էին վիպասանին առատ նիւթ մատակարարել:

Գինա Ռանիչիչը եթէ ուրիշ ազգութեան պատկանէր, եթէ նա ուրիշ պայմանների մէջ ապրէր, նորա գեղեցկութիւնն ու դաստիարակութիւնը իւր կեանքի անէծքը չէին դառնայ, և թերևս նորա տաղանդը այդպիսի մեծ համբաւ չը հայթայթէր: Նորա թողած 250 բանաստեղծութիւնների մէջ արտայայտում է նորա ամբողջ կեանքը իւր բոլոր տանջանքներով, անգոր կռով, դառն հիասթափումով և փշուած յոյսերով:

Ունգարիայի յեղափոխութեան ժամանակ Գինա Ռանիչիչը իւր ցեղի հետ Խորւատիայից փախչում էր Սերբիա: Մոլորւելով և յետմնալով իւր ազգականներից, որոնք գողութեան համար հալածում էին թուրք զինուորներից, նա տասներեք տարեկան ժամանակ ընկաւ

հայ վաճառական Օւակիմ Դալենեսի (!?) տունը, որ այն ժամանակ ապրում էր Բելգրադում, բայց շուտով Գինայի հետ այնտեղից վերաբնակւեց հայրենի Կ. Պոլիս քաղաքը:

Ինչպէս երևում է, Դալենեսը սիրեց բոշա աղջկան: Այդ աղջիկը Կ. Պոլսում սկսեց յաճախել հայոց ուսումնարանը և, բացի դորանից, նորա հայ խնամակալը նորա համար գերմաներէնի ուսուցիչ հրաւիրեց, որը երեք տարի պարապեց նորա հետ:

Գինայի դաստիարակը ամուրի էր և ապրում էր իւր ամուրի եղբոր Գաբրիէլի հետ, որը նոյնպէս հասակաւոր էր: Մի անգամ Գաբրիէլը Գինային առաջարկեց, որ իւր կինն ու տան ընկերուիին դառնայ: Գինան համաձայնեց, գերմաներէնի ուսուցչին արձակեցին, և Գինան դարձաւ տանտիրուհի: «Մարդս», ինչպէս նա անուանում էր Գաբրիէլին, մարմնացած բարութիւն էր. և նա այս ծերուկի մօտ իրան բոլորովին բաղդաւոր էր համարում:

Այս ժամանակ ահա նա սկսեց բանաստեղծութիւններ գրել հայերէն, թուրքերէն և բոշայերէն:

Գինայի ամուսնական բաղդաւորութիւնը խանգարեց մի երիտասարդ ալբանացու պատճառով, որը սիրահարեց գեղեցիկ գնչուհու վերայ, որին իւր մարդը զուգում և զարդարում էր արևելեան ճոխութեամբ:

Ալբանացին, որի անունը Գրիգոր Կորոշան էր, մի անգամ մտաւ Դալենես եղբայրների տունը, և Գինայի հետ հետևեալ խօսակցութիւնն ունեցաւ. «Քո մարդը քեզ պապ կարող է լինել. եթէ դու ապրել ես ուզում, այժմեանից ինձ հետևիր, որովհետև սուլթանը հրամայել է այսօր կոտորել բոլոր հայերին»: Եւ Գինան հետևեց «Կիպետարին» - ինչպէս ինքն էր անուանում այդ ալբանացուն,- մերժելով այն ճոխութիւնը, որ նա վայելում էր Կ. Պոլսում, և իւր կեանքը կապելով մի անծանօթ մարդու հետ, որի ով կամ ինչ լինելը չէր ճանաչում: Կ. Պոլսից փախչելու երկրորդ օրը ալբանացին նորան յայտնեց, որ եթէ վերադառնայ իւր մարդու տունը, իսկոյն նորան կը ձերբակալեն և կը տան իշխանութեան, որովհետև երկու Դալենես եղբայրներին էլ գտել են սպանուած այն սենեակում, որտեղ իրանց գանձերն էին պահում և այդ սպանութեան կասկածը ընկնում է Գինայի վերայ:

Իրաւի՝ 1851 թ. Պոլսում սպանել և կողոպտել էր հայ վաճառական Գաբրիէլ Դալենեանը, բայց թէ ո՞վ էր սպանողը, քննութեամբ չի յայտնւած:

Այս հանելուկի վերայ մի քիչ լոյս են սփռում, այդ ժամանակամիջոցի վերաբերեալ, Գինայի մի քանի բանաստեղծութիւնները. բերում ենք նոցանից մինի թարգմանութիւնը, որ կարծել է տալիս, թէ Գինան ճանաչում էր իւր մարդու սպանողին¹: «Թիթեռների պէս, որ սաւառնում են Բալկանի վերայ, սաւառնում են իմ ցանկութիւնները, և ես երբէք չեմ կարող յագեցնել նորանց: Երեխայի պէս իմ ուրախութիւններս վաղանցիկ են և դոքա չեն, որ ժպիտ են առաջացնում: Ո՛չ, իմ ժպիտս առաջանում է վշտից և կարօտից:

«Թիթեռների պէս, որ սաւառնում են Բալկանի վերայ, սաւառնում են մտքերս և թափանցում են ամուսնուս արիւնաշաղախ կտրծքը, և այնտեղից, ինչպէս որ որդերն, սողում են իմ սրտի մէջ, և ո՛չ ոք աշխարհիս երեսին չի՝ կարող նոցա հալածել այնտեղից»:

Սիրո՞ւմ էր թէ ոչ բանաստեղծուիին իւր առաջին մարդուն, բայց շատ բանաստեղծութիւններից երևում է, որ նորա մասին ունեցած յիշողութիւնները նա իւր հետ Ալբանիա էլ տարաւ, ուր նա գնացել էր «Կիպետարի» հետ և որտեղ կատարում էին նորա ամենաչնչին ցանկութիւնները «Կիպետարի» ձեռքով:

Աղբիւսնապոլիս գալուց յետոյ ալբանացին վարձեց մի վաճառականական ընկերութիւնից, որի անդամներին նա ձիով պիտի ուղեկցէր Սերբիա, Բոսնիա և ունգարական սահմանը: Գինան միշտ ուղեկցում էր նորան այս դժարին և վտանգաւոր ճանապարհորդութիւններին, թէև գիտէր, որ իւր սիրեկանը ալբանացի աւագակային խմբի հետ սերտ յարաբերութիւն ունի, որ երևում է հետևեալ՝ հաւանականօրէն դառն մտածութեան թուլէներում գրած բանաստեղծութիւնից.

1. Շատ հաւանական է, որ այդ երգի բնագիրը հայերէն լինի. քանի որ, ինչպէս յայտնում է գիտնական Վիլյոցկին, նա հայերէն էլ գրելիս է եղել բանաստեղծութիւններ: Շատ հետաքրքրական է, թէ մնացե՞լ են արդեօք այդ տաղանդաւոր կնոջ հայերէն բանաստեղծութիւնները: Պոլսեցի հայ գրագէտների վերայ բարոյական պարտք կայ հաւաքել այդ կնոջ բանաստեղծութիւնները, որ անտարակոյս ընտիր բաներ պիտի լինեն, և լուսաբանել նորա կեանքի այն շրջանը որ անց է կացրել հայոց ուսումնարանում և շրջանում: - Ծ.Թ.

«Երբէ՛ք քեզ չեմ պատկանել, ինչպէս որ արևը պատկանում է երկնականմարին. քեզ չեմ սիրել և չեմ սիրում, թէև քեզ արբեցրել եմ երջանկութիւնով:

«Ասա՛, տեսե՞լ ես դու դանակը, արիւնաշաղախ դանակը: Ի՞նչպէս տեսած չը լինիս, քանի որ դու աւազակների հետ ես ընկերանում:

«Մէրը չէ՛ որ կրծում է քո սիրտը և լցնում է նորան տանջանքով ու դողով. նորան կրծում է ամուսնուս արիւնը, որ իւր արևը սևացրեց երկուսիս համար:

«Առաջ դու խաբեբայ էիր, իսկ այժմ մարդասպան դարձար:

«Դանակը ինձ այն մարդկանց ստրուկ դարձրեց, որոնց ձեռները պղծւած են արիւնով»:

Դառն հեզնութիւն են շնչում բանաստեղծուիւ ու մի քանի ոտանաւորները, որոնցից կարելի է եզրակացնել, թէ «մարդը» սպանել է իւր գիտութեամբ և ալքանացին փախել է նորա հետ կողոպտելով մարդու գանձերը: Ճշմարիտ է, որ «Կիպետարի» ձեռքերը մաքուր չէին: Ինքը Գինան պատմել է Վլիսլոցկուն, որ ալքանացին աւազակների ձեռն էր տալիս այն հարուստ վաճառականներին, որոնց պահպանութիւնը իրան էր յանձնւած:

Նոցա սպանում կամ կապոտած գցում էին ճամբու վերայ, իսկ նոցա փողերն և ապրանքը թաքցնում էին ալքանական լեռներում: Այդպիսի քաջագործութիւններից յետոյ «Կիպետարը» իւր սիրուիւն պարզատարում էր շռայլ ընծաներով և ինչպէս երևում է, նորան չափազանց սիրում էր:

Այս արկածներով լի կեանքը Գինային, որպէս օտարոտի և բոշա կնոջ, դուր էր գալիս, բայց մշտական վտանգն ու կռիւները դուր չէին գալիս նորա խաղաղասէր բարոյական բնատրութեանը և նա շատ անգամ խնդրում էր իւր սիրեկանին Պոլիս դառնալ: Ալքանացին, ի հարկէ, նորա ցանկութիւնը չը կատարելու հիմնական պատճառ ունէր:

Երկու տարուց յետոյ Գինան մտադրեց ծածուկ փախչել նորանից, բայց ալքանացին իմացաւ նորա մտադրութիւնը և ծանր վիրաւորեց Գինայի այտը: Այդ վերքի սպին նորա վերայ մնաց մինչև մահը:

Այս դէպքից յետոյ նա հաշտուեց այն ժամանակ, երբ ալքանացին խոստացաւ Սերբիա գնալ և բերել իւր սիրուիւն ծնողներին: Գնալիս

ալբանացին իւր սիրուիուն երեք ամսով ծախեց մի ունգարացու, որ ապրում էր Ադրիանապոլսում: Այս վարմունքը ըստ երևոյթին Գինային բոլորովին չը վշտացրեց: Այն ժամանակներում ալբանացիք սովորութիւն ունէին առժամանակ ծախել իրանց կանանց ստրկուիիներին:

Բայց «Կիպետարը» Գինային փող էր տալիս նորա ունգարացու մօտ մնացած ժամանակն էլ:

Իւր ժամանակաւոր մարդու տանը անհաստատակամ բոշան սիրահարեց մի «սպիտակ մարդու» վերայ, որի անունը նա երբեք մէկին չ'ասաց: Նորան նւիրած երգերում նա նորան անուանում է իւր միակ իսկական սէրը, որ սակայն չէր խանգարում վերջերում կրկին անգամ յայտնելու իւր բոբբոքուն սէրը «Կիպետարին»:

Կորստից պահած նորա ոտանաւորները չորեքտողեան են, որոնց մէջ նա երգում է սէրը. բայց երգում է ո՛չ ընտիր և գովասանական մտքերով. սիրահարներին նա անուանում է «յիմարներ, որոնք ամեն մի խոզի երամակում սիրուիու պատկերն են տեսնում»: Սորանից յետոյ Գինան երկար ժամանակ բանաստեղծութիւն չէր գրում, որովհետև վրայ հասան մռայլ, դառն հիասթափումով լի օրեր:

Մի խայտառակ դէպք ունգարացուն ստիպեց, որի մօտ կենում էր Գինան, դուրս անելու նորան իւր տանից:

Գինայի պատմելով դորա պատճառը այն հանգամանքն էր, որ մի «պարոն», որ ամեն օր յաճախում էր ունգարացու տունը (պէտք է կարծել, որ դա այն «սպիտակ մարդն է», որին նւիրած են այն բոբբոքուն բանաստեղծութիւնները), գողացաւ Գինայի փողերն ու շորերը: Մնալով աղքատ և անապաստան, Գինան մի քանի շաբաթ թափառում էր Ադրիանապոլսի փողոցներում և վերջապէս վճռեց որոնել իւր «Կիպետարին»:

Բարեբաղդաբար նորան գտաւ Ադրիանապոլսից ո՛չ հեռու, որ վերադառնում էր նորա բոլոր ազգականների հետ, որոնց յետևից նա Գինայի խնդրով գնացել էր Սերբիա:

Հանդիպումը ըստ երևոյթին այնքան էլ սիրալիր չէր. Գինայի ազգականները իրանց անյազ բոշայութիւնով արդէն ձանձրացրել էին ալբանացուն:

Բոշաների ցեղը Ադրիանապոլսի մօտ բանակ դրեց և սկսեց ապրել «Կիպետարի» հաշով: Բայց ալբանացին շուտ ձանձրացաւ այդ

սլարապ մարդկանց կերակրելուց և սկսեց պահանջել, որ Գինան յետ ուղարկի բոշաներին Սերբիա: Սիրեկանների յարաբերությունները վատացան և վերջապես բոշաները ստիպւեցան հեռանալու: Բայց նոքա Գինային բամբասանքներով կռեցնելով ալբանացու հետ, տարան իրանց հետ: Սակայն առաջուց նոքա այնքան փող և թանկագին ընծաներ կարողացան կորզել ալբանացուց, որ հայրենիք վերադառնալով 600 խոզ գնեցին: Գինային նոքա տարան այն հաշվով, թե «Կիպետարը» կը կարօտի և կը գայ Սերբիա նորա հետ ապրելու, ուր ծնողները կրկին կ'օգուեն նորա առատածեռնությունից:

Բայց այդ ենթադրութիւնը սխալ դուրս եկաւ. «Կիպետարը» այլ ևս չը վերադարձաւ իւր սիրուիւ մօտ: Գինայի կեանքում մեծ փոփոխութիւն առաջացաւ: Նա կատարեալ գերի դարձաւ բոշաների մօտ, որոնք նորան ակներև ծախում էին և աչք չէին հեռացնում նորանից դեռ յուսալով, թէ ալբանացուն կը գրաւեն: Գինան իսկական գերի էր և վերջերը իւր կեանքի այդ շրջանի մասին խօսելիս նորան նկարագրում է ամենամութ գոյներով:

Այդ ժամանակները նա մօտ քսան և երեք տարեկան էր. և նորա գեղեցկութիւնը իւր կատարելութեանը հասաւ:

Նորա նախընթաց կեանքն էլ լի էր արկածներով, իսկ այժմ սկսեց անվերջ, ճոխութիւնից աղքատութիւնը, փայլից մթութիւնը տանող, փոփոխութիւնների շարքը, մինչև որ վերջապէս նա սաստիկ աղքատութեան մէջ ընկաւ:

Զարմանալին այն է, որ այդ ժամանակ նա ո՛չ մի բանաստեղծութիւն չի գրել: Երբ նորանից հարցրին դորա պատճառը, նա պատասխանեց. «խոզերի մէջ ապրելով, ես բանաստեղծութիւն յօրինելու կարողութիւն չունէի. միևնոյն ժամանակ մտածում էի միայն, թէ ինչպէս վերադառնամ Ալբանիա»: Բաժանման ժամանակ նորա սերը դէպի «Կիպետարը» բորբոքեց նոր ուժով, և նա չարչարում ու նեղում էր ազատութեան համար: Սոցա վերայ աւելացաւ նաև հիւանդութիւնը:

Քանի որ բոշաները փող ունէին, նորա հետ բաւականին լաւ էին վարում. բայց երբ որ «Կիպետարի» փողերը հատան և Գինան չէր կարողանում նոցա համար եկամուտի աղբիւր դառնալ, նորա դրութիւնը անտանելի դարձաւ: Նոքա անամօթաբար իրանց պահանջ-

ներն էին անում. եղբայրները կողոպտեցին նորա թանկագին շորերն ու զարդերը և նա հիւանդացւաւ ու բարոյապէս ճնշւած՝ իր արիւնակիցների մօտ ապրում էր աղքատի պէս: Մինչև անգամ նորա մայրը կարծես իւր յոյսերը աղջկայ գեղեցկութեան վերայ էր դնում, որովհետև նա վերջապէս զանգատեց իւր ցեղին, որ Գինան գիտէ «Կիպետարի» տեղը, բայց չի ուզում յայտնել, որ ազգականները նորանից ընծաներ չը կորզեն: Բանը հասաւ ցեղի արիւնայեղ երկպառակման. Գինայի կուսակցութիւնը յարձակեց նորա ազգականների վերայ և խաղաղութիւն կայացաւ այն պայմանով, որ Գինայի հօրեղբօր որդիներից մինը, Պետրոս Ռանիյիչը (որ սիրահարած էր Գինայի վերայ) գնար «Կիպետարին» գտնելու և համոզելու, որ վերադառնայ Գինայի մօտ, կամ ստիպէ, որ փող ուղարկէ նորան: Բոշաները դորանով առժամանակ հանդարտեցան և Պետրոս Ռանիյիչը գնաց Ալբանիա, որտեղից այլ ևս չը վերադարձաւ: Հաւանականօրէն ալբանացու սուրը վախճան դրեց նորա պահանջներին:

Գինան թէև նախատեսնում էր այդ փորձի անյաջողութիւնը, բայց այնպէս էր ցոյց տալիս, որպէս թէ յոյս ունի իւր սիրեկանի դարձին և դորանով այնպէս վարպետութեամբ խաբեց բոշաներին, որ նոքա ատելի ազատ թողին նորան և թոյլ էին տալիս, որ առանց ուղեկիցների բանակից հեռանայ մօտակայ գիւղերը:

Դորա շնորհիւ և իւր միւս հօրեղբօր որդու օգնութեամբ նա վերջապէս կարողացաւ փախչել ազգականներից: Հանգամանքները օգնեցին նորա փախուստին և հետամուտ եղողները չը կարողացան հասնել նորան: Նա վերջապէս, կարծես ծանր երազից յետոյ մի քիչ թեթևացած, հնչեց և փախուստի ժամանակ գրած ոտանաւորներում յախտեանս հրաժարում է իւր հայրենիքից:

«Թող քեզ աստուած պահպանէ՛, մերժած, անապատ երկիր, ուր այդքան քիչ ուրախութիւն, իսկ վիշտ, աւա՛ղ, այդքան շատ կայ: Երբե՛ք, դո՛ւ, բոշա՛՝ ժողովուրդ, չես գայ իմ գերեզմանին այցելութեան, չես օրհնի ինձ այնտեղ, ուր պիտի գտնեմ յաւերժ հանգիստ», ասում է նա ի միջի այլոց իւր բանաստեղծութիւնների մէջ: Այս ժամանակամիջոցում նա մօտ քսան ոտանաւոր է գրել, որոնց մէջ իւր ցեղն անւանում

է «սև ագռաւ» և իւր սիրելի մօտալուտ տեսութեան առթիւ, Ալբանիայի «սպիտակ լեռների» մէջ, բուն ցանկութիւն է յայտնում:

Երկար ժամանակ գրկանք ու կարիք կրելով նա թափառում էր Ալբանիայում «Կիպետարին» որոնելով, բայց ո՛չ մի տեղ նորա հետքն անգամ չը գտաւ: Այս ժամանակում գրած նորա բոլոր բանաստեղծութիւններից բոլորում է ատելութիւն դէպի մարդիկ և զանգատ բաղդի վերայ: Նորանից մի երկար ոտանատրի մէջ, որ ուղղւած է «ալբանացիներին», յուսահատութիւնը նորան թելադրում է այս ազգի, մանաւանդ նորա կանանց վերայ, ամենադառն գրպարտութիւն, որոնք հաւանականօրէն գեղեցիկ ալբանացու նախկին սիրուիուն հանդիպում էին ո՛չ այնքան բարեկամաբար: Վերջապէս Գինան մի տեղեկութիւն ստացաւ, որ նորա «Կիպետարը», անտարակոյս աւագակութեան համար հալածելով թուրքաց զինուորներից, փախել է Իտալիա մի նորատի ալբանուիու հետ: Այս լուրը այնպէս ազդեց Գինայի վերայ, որ նա խելագարւած վագում էր փողոցներով և յարձակում ալբանների վերայ: Նորան ծեծում էին, և մի կռում, որ ծագել էր նորա խելառութիւններից, կտրեցին նորա ձախ ձեռքի մեծ մատը: Նա խոստովանում էր իւր վերջին պատմութիւններում, որ այն ժամանակ ինքը բոլորովին խելագար էր:

Վերջապէս յոգնատանջ, վիրատուր և հիւանդ նա մի կերպ հասաւ ծովափ, Իտալիա ընկնելով յուսով: Նորա անհաստատակամ, անհանգիստ բնաւորութիւնը, անբաւական ձգտումը մի անհասանելի բանի, արտայայտում է հետևեալ բանաստեղծութեան մէջ, որ գրել է Իտալիա գնալուց յետոյ:

«Չարագուշակ վիշտը ամբողջ կեանքումս հետևում է ինձ քայլ առ քայլ. և Աստուծ ո՛չ մի տեղ չը տուեց ինձ ուրախութիւն ու հանգիստ: Ամեն բան ինձ գրաւում է դէպի հեռուն... դէպի անծայր հեռաւորութիւնը, բայց այն, ինչ որ որոնում եմ, չե՛մ գտնում ո՛չ մի տեղ:

«Թէ սարի վերայ եմ,- ինձ գրաւում է ձորը, թէ մարգերի վերայ եմ,- քարշում է պայծառ աղբիւրի խորքը: Եթէ ես աստղ լինէի, որ փայլում է գիշերային կամարում, անյագ ցանկութիւնս պիտի լինէր պայծառ լուսին դառնալ:

«Եթէ ես Բալկանեան շղթայի վերայ բուսած փարթամ վարդ լինէի, պիտի նախանձէի այն ոսկուն, որ գտանում է նորա սրտում: Երկա-

րանում են ձանձրալի լույսերը, մինչև քեզ հետ տեսնելս: Բայց նորա մասին մտածելիս ես ալեկոծում եմ ուրախութիւնով և երկիւղով:

«Կը զա՞ս դու արդեօք, չե՞ս գալ արդեօք, չը գիտեմ ի՞նչ պիտի պատահի ինձ: Ես էլ չեմ կարողանում հասկանալ ինձ, ուրիշն էլ չի կարող հասկանալ ինձ երբէք: Զեզանից հեռու,- սիրտս պատառում է քեզ համար. նստած ես դու մօտս,- ես պատրաստ եմ քեզ արհամարհելու»:

«Կիպետարին» որոնելիս՝ հարաւային Իտալիայում շրջելու ժամանակ՝ նա ծանօթացաւ մի հարուստ ռումինացի հրէայի հետ, որի անունն էր Եակօֆ Գորշտէյն. այնուհետև ալքանացու հետ ունեցած կապերը կտրեցան առ միշտ: Գորշտէյնը սաստիկ սիրեց գեղեցիկ և կրթւած բոշային և մինչև մահ նորան հաւատարիմ մնաց: Դ-ա, Գինայի նկարագրութեամբ, ո՛չ միայն հարուստ վաճառական էր, այլ և կատարեալ կրթութիւն ստացած մի մարդ: Ունենալով հարուստ մատենադարան, նա իւր բոլոր ազատ ժամանակը անցնում էր կարդալով: Նա մասնատրապէս սիրում էր գերմանացոց նորագոյն գրողներին, որից այդ ճաշակը անցաւ Գինային: Այդ մարդու ազդեցութեան տակ Գինան մի քանի բոշայերէն նկարագրութիւններ և պատկերներ գրեց, որոնցից երեքը նորան մեծ հռչակ կարող են լինել:

Յաճախ գործերի պատճառով Գորշտէյնը գնում էր հիւսիսային Աֆրիկա և երբեմն իւր հետ վերցնում էր Գինային: Այնտեղ Գինան հանդիպեց Աֆրիկայի բոշաներին, որոնց նա առատ պարգևատրում էր. բոշայի արիւնը իսկոյն երևում էր, չը նայելով այն նեղութիւններին, որ նա քաշել էր իւրայիններից:

Գորշտէյնի հետ անցկացրած հինգ տարին նորա փոթորկալի կեանքի միակ բաղդաւոր ժամանակն էր: Բայց բանաստեղծուիւ բոշայական բնատրութեան շնորհիւ այդ պայծառ ժամանակի վերայով էլ մի սև ամպ սահեց: Գորշտէյնը աֆրիկացի բոշաներից գեղեցիկ պատանի Պետրոս Կանդալատարին ծառայ վարձեց, որը իւր տիրոջ բացակայութեան ժամանակ վայելում էր իւր տիրուիւ յատուկ ողորմածութիւնը: Բոշաների բարոյականութեամբ՝ այստեղ ո՛չ մի դատապարտելի բան չը կար, բայց Գորշտէյնը այս բանին ուրիշ կերպ նա-

1. Տես մեր յօդածը «Հայ բոշաներ»-ի բարոյականութեան մասին. «Մուրճ», N 7, 8, 9. 1892 թ.

յեց: Մի օր, Աֆրիկայից վերադառնալուց յետոյ, արձակեց ծառային լաւ վարձատրելով և առանց որ և է նկատողութեան: Գինան այդ իմանալով, սաստկապէս պահանջեց, որ բոշա ծառային վերադարձնեն: Դա աւելի ևս արմատացրեց Գորշտէյնի կասկածը, որ առիթ տեց բանաստեղծուիուն անբարոյականութեան համար անարատելու:

Նոյն գիշերը Գինան անյայտացաւ, իսկ երրորդ օրը նաւաստիները նորան հանեցին ծովից անշնչացած և բերին Գորշտէյնի մօտ: Այդ դէպքից յետոյ Գինան ջերմեց և երբ մի քանի շաբաթից յետոյ նա վեր կացաւ հիւանդութիւնից, «իւր ճակատագրական գեղեցկութեան,- ինչպէս ինքն էր պատմում,- հետքն էլ չը մնաց: Նա անյայտացաւ ինչպէս մի ծանր երազ և հայելու մէջ նա տեսնում էր մի բոլորովին սովորական կնոջ»:

Նորա առաջին զգացմունքը այն վախն էր, թէ Գորշտէյնը այժմ չի սիրի իրան, և այդ զգացմունքը զեղւեցաւ այն բանաստեղծութիւնների մէջ, որոնց տակը նա ստորագրում էր. «Տգեղ Գինա»:

Այդ երկիւղը ըստ երևոյթին գուր էր: Բայց բաղդը նորան ուրիշ աւելի ծանր հարած էր վիճակել: Մի անգամ Աֆրիկա ճանապարհորդելիս Գորշտէյնը հիւանդացաւ և բժիշկների խորհրդով պիտի բնակէր Կ. Պոլսում: Այնտեղ ազգականները համոզում էին Գորշտէյնին, որ նա հեռացնէ գնչուիուն, բայց նա լսել անգամ չէր ուզում այդ բանը:

Այնուամենայնիւ Գինային հեռացրին և միայն հիւանդի խիստ խնդիրքի շնորհիւ ամեն օր թոյլ էին տալիս Գինային մտնելու նորա մօտ մի քանի րոպէով:

Գինան զգում էր, որ իւր դրութիւնը անտանելի է այդ տանը: Այդ բաւական չէր. Գորշտէյնի մահից յետոյ նորա ազգականները բացարձակ յայտնում էին իրանց կասկածը, որ Գինան թունաւորել է նորան, որ շուտով օգտի այն ժառանգութիւնից, որ կտակել էր նորան հանգուցեալը: Կարելի է երևակայել, թէ այս անարդար մեղադրանքը ինչպէս պէտք է ներգործէր գնչուիու կրակոտ հոգու վրայ:

Նա իւր վիշտն ու բարկութիւնը թափեց մի երկար ոտանաւորի մէջ, որտեղ ասում է, թէ նորան «ցեխը կոխեցին, բայց նա ցեխի մէջ էլ չի դադարում մարդկանց արհամարհել և նոցա վերայ ծիծաղել»:

Այսպէս թէ այնպէս Գորշտէյնի մահից յետոյ Գինան մեղադրելով թունաւորելում՝ բանտարկեց: Թէև հանգուցեալի մարմնի դատաս-

տանական քննությունը ապացուցեց նորա անմեղությունը, բայց նա այնուամենայնիւ չ'ազատեց բանտից, որովհետև Գորշտէյնի ազգականները մեղադրում էին, թէ նա գողացել և պահել է ժառանգությունը: Երեք ամիս շարունակ բանաստեղծուհին տանջում էր բանտում, մինչև որ իւր վերայ բարդած բոլոր ամբաստանություններից բոլորովին արդարացաւ:

Այնուհետև նորան պաշտօնապէս յանձնեցին Գորշտէյնի կտակած տասը հազար դուկատը և նա այդ փողերը տեղաւորեց մի հայ բանկիրի մօտ:

Գարձեալ Գինան, թէև հարուստ, մենակ մնաց աշխարհում: Շատ անգամ նա պատրաստում էր հեռանալ Կ. Պոլսից, բայց չէր կարողանում բաժանել իւր սիրեկանի շիրիմից: Այդ ժամանակայ նորա ոտանատրները բուրում են մենակութեան կարօտալի զգացմունք և տխրալի հայեացք իւր անցեալի վերայ: Իւր անբաղդութեան համար նա ինքը մեղադրում է իւր «անհանգիստ բոշայական արիւնը, իւր թափառաշրջիկ կեանքի սիրահար լինելը, իւր մշտական ձգտումը դէպի անորոշ հեռուն, և իրան մմանեցնում է թռչնակին, որ չը գիտէ ո՛չ սահման և ո՛չ վերջ»:

Սակայն Գինան դարձաւ իւր հարստութեամբ Կ. Պոլսի «հետաքրքրաշարժ» կանանցից միւնը. զանազան արկածախնդիր մարդիկ սկսեցին քարշ գալով նորա ողորմածութիւնը հայցել: Սկզբում Գինան փակ կեանք էր վարում և օրերը անց էր կացնում լացով կամ քնած: Սակայն դա երկար չը տևեց. մէկ ու կէս տարուց յետոյ նա իւր փողերը հանեց հայի բանկից և գնաց Սերբիա ազգական բոշաների մօտ:

Բայց «բաւիշ և մետաքս հագած կիւնը» նոցա մօտ երկու օր միայն հիւր մնաց և ազգականներին հազար դուկատ բաժանելով, գնաց Պարիզ: Գորշտէյնը նորան շատ էր պատմել Պարիզի կեանքից և նա ցանկանում էր ճաշակել այդ նոր տպաւորութիւնները:

Պարիզի աղմկալի և բազմատարազ կեանքը օտարոտի բանաստեղծուհու իսկ ճաշակովն էր և նա շուտով մի խումբ կասկածելի անցեալով երկրպագուներ գտաւ: Գինան դոցանից ո՛չ միմի հետ սերտ յարաբերութիւն չունէր և բաւականանում էր նորանով, որ նոցանից սովորում էր, թէ ինչպէս պէտք է կեանքը վայելել: Մէկը միայն, մի

տրանսիլսանացի, գտաւ նորա սրտի բանալին վերջ ի վերջոյ և հեշտացրեց Գինայի Պարիզ բերած ութ հազար դուկատից վերջինը շռայլելը: Թէ դորա հետևանքն ինչ եղաւ, դիւրին է երևակայել: Գինան մի քանի ժամանակ պարտքով էր ապրում Պարիզում: Բայց այնքան պարտք արաւ, որ պարտատէրերը սկսեցին նորան հալածել և բռնաների առաջին բանաստեղծուհին, հռչակած գեղեցկուհին, դատաստանական կարգով ուղարկեց իւր հայրենիքը - Սերբիա:

Այդպէս էր ահա Գինա Ռանիչիչի փայլուն և մրրկալի կեանքը: «Ես խաղացի իմ դերս և իջայ բեմից», իբրև իւր կենսագրութեան վերջաբան ասաց նա Վլիսլոցկուն և արտաստի երկու խոշոր կաթիլներ ցած գլորեցան նորա այտերից:

Գինայի բանաստեղծութիւնների մէջ չի լսում ուրախ ներդաշնակութիւն, նոցա մէջ երգում է աշխարհային աղետը, անհամաձայնութիւն ինքն իրա և աշխարհի հետ, յախտնական յոյսեր և մշտական հիասթափումն, կրքերի անգուսպ կրակ և խիստ իրականութեան դառն գիտակցութիւն...

Իւր աղքատ մայրենի լեզւին շատ բանաստեղծութիւնների մէջ նա կարողացել է չը տեսնւած ոյժ և նրբութիւն տալ, թէև նա գրում էր խառն բարբառներով, վերցնելով բառերը մասամբ թուրքաց, մասամբ սերբիացոց բռնաներից:

Նորա ոտանաւորները ախորժալուր և ներդաշնակ են: Արտայայտութիւնները, պատկերները, խօսքի դարձածները ո՛չ մի ձևական արհեստական բան չունին: Նորա բոլոր բանաստեղծութիւնների մէջ նկատելի է գերմանականի ազդեցութիւնը, որի հետ նա շատ լաւ ծանօթ էր:

Թէ ֆիզիկապէս և թէ բարոյապէս խորտակւած, Գինա Ռանիչիչը իւր կեանքի վերջին քսան տարիները անցկացրեց իւր ցեղի մէջ ծայրայեղ չքաւորութեան մէջ: Իսկ այժմ առաջին բռնա բանաստեղծուհին իւր հանգիստը մի անյայտ շիրմի գրկում գտաւ, որին ճանաչում է միայն նորա վերայ սաւառնող քամին... Նա մեռաւ 1891 թին:

Թարգմանելով այս յօդածը ռուսերէնից, մեր նպատակն էր պոլսեցի հայ գրագէտների ուշադրութիւնը գրաւել այս հետաքրքրաշարժ անձնաւորութեան վերայ, որպէս զի օր առաջ հաւաքւէին և լոյս ըն-

ծայռէին նորա հայերէն ստեղծագործութիւնները, եթէ մինչև օրս կորստի չեն մատնուած նոքա, որոնց մասին յիշատակում է գիտնական Վլիսլոցկին:

Հայերս անտարակոյս իրատունք ունինք այդ եւրոպական հռչակ վայելող գնչուիւ տաղանդով պարծենալու, քանի որ նորան կորուստից ազատողը և հիմնաւոր կրթութիւն տուողը մի պոլսեցի հայ է եղել:

«Մուրճ», 1893, N 3, էջ 408-420

ԿԱՐՄԻՐ ԶԱՏԻԿԻ ԳԻՇԵՐԸ

(Պատկեր В. Короленко-ից)

Նուէր «Մուրճ»-ի ընթերցողներին Ազատ քարգմանութիւն Գրիգոր ՎԱՆՅԵԱՆ

187* աւագ շաբաթ օրն էր:

Երեկոյի մթնշաղը արդէն տարածել էր իւր թները խաղաղած երկրի վերայ: Յերեկւանից տաքացած և հիմա՝ զարմանային իրիկնադիմի թեթև շշունչով հովացած երկիրը շնչում էր լիասիրտոն: Այդ շշունչից ահա փառահեղ, վառվռուն և աստղալից երկնքի հետ խաղալով, դուրս էին ծորում սպիտակաւուն թուխպեր, ինչպէս բուրվառի ծխի քուլաներ, որոնք բարձրանում էին առաջիկայ տօնին դիմաւորելու:

Հանդարտ էր: Մ. փոքրիկ նահանգական քաղաքը, որ ամբողջովին զովացել էր մթնշաղ երեկոյի հովով, լռել էր, սպասելով այն պանծալի թռպէին, երբ մայր-եկեղեցու զանգակատան բարձունքից պիտի հնչէր առաջին հարւածը: Բայց քաղաքը քնած չէր: Խոնաւ մթութեան հովանու տակ, լռիկ, անմարդի փողոցների ստերների մէջ նկատելի էր մի ամոք-սպասողական դրութիւն: Երբեմն միայն անցնում էր ուշացած, վաստակաբեկ բանւորներից մինը, որին տօնը հանդիպել էր համարեա՝ ծանր, անհամբոյր աշխատանքի մէջ. երբեմն գոգոտում էր կառապանի սայլակը - և դարձեալ տիրում էր անմրմունջ հանդարտութիւն... Կեանքը փողոցից փախուստ էր տւել տները, փարթամ պալատները, համեստ խրճիթները և այնտեղ պահուել:

Թէ քաղաքի, թէ դաշտերի և թէ բոլոր երկրի վրայ լսելի էր վերահաս յարութեան տօնի անտեսանելի շշունչը:

Լուսինը չէր բարձրանում և քաղաքը մնացել էր այն բլրակի ստերի տակ, որի վրայ նկատւում էր մի մեծ, մռայլ շինութիւն: Այդ շինութեան տարօրինակ, ուղղաձիգ և խիստ գծերը մռայլ նկարւում էին աստղալից երկնի երեսին, մթին դռները լուսին տալով հազիւ հազ որոշում էին ստերածածկ պատի միջից և անկիւնի չորս աշտարակները դուրս էին ցցւել երկնքում սրածայր գագաթներով:

Բայց ահա մայր-եկեղեցու զանգակատան բարձունքից դուրս թռաւ մտահոգ գիշերայ զգայուն օդի մէջ առաջին դողդոջ հարւածը... երկրորդը... երրորդը... Մի րոպէից յետոյ զանազան տեղերում, զանազան ձևերով հնչում, դողդոջում և երգում էին զանգակները և այդ հնչիւնները հիւսելով կազմում էին մի զօրեղ, ինքնուրոյն ներդաշնակութիւն և տատանում էին հանդարտ, կարծես շրջան էին առնում եթերի ծալքերում:

Այն մթին շինութիւնից, որ ստւերով ծածկել էր քաղաքը, նոյնպէս լսեց խռպոտ, կերկերուն մի դօղանջիւն, որ կարծես խղճալի անգօրութեամբ հե-հեւում էր զօրեղ ներդաշնակութեան յետևից հասնելու եթերային բարձրութեան մէջ:

Ձայնը լեց... Հնչիւնները հալւեցան օդում, իսկ գիշերային հանդարտութիւնը սկսեց աստիճանաբար իւր գահը բարձրանալ, միայն դեռ երկար, մթնշողի մէջ նշմարում էր մի անորոշ, առկայծող արձագանք որպէս անտեսանելի օդածիգ լարի դողդոջ: Տների ճրագները մարում էին, եկեղեցիների պատուհանները վառվում: Աշխարհը 187* դարձեալ պատրաստում էր համբաւելու եղբայրութեան, սիրոյ և խաղաղութեան հին նշանաբանը:

Մռայլ շինութեան մթին դռների ախերը ճռռացին: Ձիւնորների մի խմբակ մթութեան մէջ հրացանները չիկչիկացնելով դուրս եկաւ գիշերապահներին փոխարինելու: Նա մօտենում էր շինութեան անկիւններին առժամանակ կանգ առնելով պահակատեղերի մօտ: Այդ մթին մարդկային խմբից չափած-կշռած քայլերով դուրս էր գալիս մի կերպարանք, իսկ նախկին պահապանը կարծես խորասուզում էր այդ անորոշութեամբ մթին տուղ խմբակի մէջ: Ապա խումբը դարձեալ առաջ էր շարժում պտտելով բանտի բարձր պատերի չորս կողմը:

Արևմտեան կողմը կանգնած պահապանին փոխարինելու դուրս եկաւ մի երիտասարդ նորակոչ: Նորա շարժումնքներից դեռ ևս չէր անհետացել գիւղական անտաշութիւնը, մատաղ կերպարանքը դեռ ևս պահպանել էր լարւած ուշադրութեան արտայայտութիւն, որ նկատելի է առաջին անգամ պատասխանատու պաշտօն ստանձնող անձանց դէմքին: Նա երեսը պատին դարձրեց, հրացանը չիկացնելով երկու քայլ արաւ և մի կիսաշրջան կատարելով, կանգնեց ուս-առ-ուս պահապանի մօտ: Հին պահապանը, իւր գլուխը թեթևութեամբ նորե-

կի կողմը դարձնելով, սկսեց սովորական կարգով նրան խրատներ կարդալ:

- Անկլինից անկլին, լա՛ւ նայիր, չքնես, չնիրհես,- արագ-արագ ասում էր և նրա մոխրագոյն աչքերում թափանցում էր ինչ որ մի տեսակ առանձին տխրութիւն:

- Հասկացա՞ր,- հարցրեց տասնապետը:

- Такъ-точно (այո):

- Դէ՛, լա՛ւ նայիր,- ասաց նա խստութեամբ. ապա տոնը փոխելով, շարունակեց աւելի մեղմօրէն:

- Հա՛, ոչինչ, Ֆադէկ, մի՛ վախիր, ինչ կնիկարմատ չես, սատանայից ինչ փախենալու չես...

- Ինչո՞ւ միայն սատանայից,- միամտաբար պատասխանեց Ֆադէկը և ապա մտազբաղ աւելացրեց,- համա, ախպէր, սիրտս ինչ որ վատ բան է նախագուշակում:

Այս պարզ, միամիտ, համարեա մանկական խոստովանութիւնը ծիծաղ բարձրացրեց զինուորների խմբի մէջ:

- Տես, ահա, բարեկամ, գիտը շատ հեռու չէ՛,- ասաց տասնապետը մի արհամարհական ցաւակցութեամբ և կտրուկ հրամայեց:

- Ружья вольно! Шагом марш!¹ - պահապան² խումբը քայլերի հաւասարաչափ բաղխումով ծածկեց անկլինի յետեր և այդ բաղխումը շուտով լռեց: Պահնորդը ուսին դրեց հրացանը և սկսեց հանդարտ ման գալ պատի մօտով:

Բանտի մէջ՝ զանգակի վերջին հարւածի հետ՝ սկսեց մի շարժումը: Վաղուց բանտի մռայլ և թախծալի գիշերը այդպիսի շարժումն չէր տեսել: Տօնական շնորհաւորութիւնը կարծես ազատութեան համբաւ լինէր բանտի բնակիչների համար: Արգելարանների սև դռները մինը միւսի յետևից բացում էին: Մարդիկ մոխրագոյն վերարկուներով, գունաւոր, ճակատագրական կտորը մէջքին, երկար շարքերով գնում էին նրբանցքի միջով գոյգ-գոյգ և մտնում բանտի եկեղեցին, որ վառվռում էր ճրագների լուսով: Նոքա գալիս էին աջ կողմից, ցածրից

1. Հրացաններն ազատ, քայլեցէ՛ք:

2. Караул - մենք բարգմանում ենք պահապան, իսկ часовой - պահնորդ: - Ծանօթ. բարգմանչի:

բարձրանում էին սանդուխտով և բարձրից ցած էին իջնում. խուլ աղմուկի միջից երբեմնապես լսում էր հրացանի զրնգոց և կապանքների սահուն չիչխկոց: Մոխրագոյն խաժամուժը մտնելով ընդարձակ եկեղեցին, լցում էր վանդակով շրջափակած տեղերը և այնտեղ լռում էր: Եկեղեցու պատուհաններում նոյնպես նկատելի էին երկաթեայ ամուր վանդակներ:

Բանտը դատարկւել էր: Միայն անկիւնի չորս աշտարակներում չորս մենատուր բանտարկեալներ մռայլ թափառում էին իրանց խցերի մի անկիւնից միւսը: Երբեմն նոքա ականջները դէմ էին անում դռանը և ազահութեամբ կլանում էին եկեղեցուց դուրս թռչող երգի բեկորները:

Մէկ էլ ընդհանուր արգելարաններից մինում, թախտի վրայ պառկած էր մի հիւանդ: Վերակացւին յայտնեցին այդ յանկարծահաս հիւանդի մասին. նա մօտեցաւ հիւանդին, երբ կալանատուրներին տանում էին եկեղեցի, և խոնարհւելով նայեց նորա աչքերին, որ վառում էին մի տարօրինակ փայլով և մի անմիտ արտայայտութեամբ ուղղւած էին տարածութեան գիրկը:

- Իւանով, լսի՛ր, Իւանով,- կանչեց վերակացուն հիւանդին:

Կալանատուրը ուշք չդարձրեց. նա մրմնջում էր ինչ որ մի անորոշ-անհասկանալի բան. ձայնը խռպոտ էր, բորբոք շրթունքները դողդոջում էին ճգնութեամբ:

Վաղը հիւրանոց տանելու կարգադրեց վերակացուն և արգելարանի դռան առաջ թողնելով նրբանցքի պահապաններից միին, դուրս եկաւ: Պահապանը ուշադրութեամբ նայեց ջերմող հիւանդին և գլուխը շարժեց:

- Էյ փախտական, փախտական, քո հաշիւը վերջացաւ,- ասաց վերակացուն, և տեսնելով, որ այլևս այստեղ անելու բան չ'ունի, անցաւ նրբանցքով դէպի եկեղեցին և սկսեց լսել ժամերգութիւնը՝ շուտ շուտ գետին կռանալով երկրպագութեան:

Դատարկ արգելարանը երբեմնապէս աղմկում էր հիւանդի անորոշ բացականչութիւններով: Դա մի չափահաս, զօրեղ և ամբակազմ մարդ էր: Նա զառանցում էր մօտիկ անցեալը և նրա կերպարանքը արտայայտում էր մի դառն տանջանք:

Բաղդը այդ փախստականի հետ մի անպիտան խաղ խաղաց: Հայրենիքի վառվռուն կարօտով տոգորված, նա կտրեց հազարաւոր վերստեր. անցնելով վայրենի լեռների և տալգաների¹ վրայով, կրեց հազարաւոր նեղութիւն և զրկանք, առաջնորդւած այն յուսով, «թէ մէկ տեսնեմ... մի ամիս, մի շաբաթ... սպրեմ մերոնց մօտ... իսկ այնուհետև... թէ կուգ... նոյն օրին ընկնեմ»: Հայրենիքից հարիւր վերստ հեռու, նա ընկաւ այս բանտը...

Բայց ահա լռեց անորոշ զառանցանքը. փախստականի աչքերը լայն բացեցան, կտրծքը սկսեց շնչել հաւասարաչափ, միաբարբախ... նրա տաք գլխում երևան եկան աւելի բերկրառիթ ցնորքներ...

Սոսափում է տալգան... նրան ծանօթ է այդ հաւասարաչափ, մոգական և ազատ սոսափիւնը. նա սովորել էր որոշել անտառի ձայնը, ամեն մի ծառի խօսակցութիւնը: Մեծափառ սոճիները հնչում են իրանց խիտ, մթին կանաչով բա՛րձր, բա՛րձր... եղևնիները փսփսում են ձգական և խուլ... ուրախ, պայծառ սաղարթը շարժում է ճկուն ճուղը. բարդին դողդոջում և ճքճքում է հրաշալի, երկչոտ տերևներով... Սուլում է ազատ թռչումը. առակը աշխոյժ շատախօսութեամբ թռչկոտում է քարոտ ձորակի մէջ և տալգայի հետախոյզները² - կրկնան կաշաղակների երամը - թռչում են տեղերով, որտեղից խիտ տալգայի միջով անցնում է փախստականը:

Կարծես տալգայի քամու ազատ հոսանքը բուրեց հիւանդի երեսին: Նա բարձրացաւ, խորը հոգոց հանեց: Աչքերը ուշադիր արտայայտութեամբ առաջ են նայում... բայց յանկարծ նոցա մէջ ինչ որ գիտակցութեան նման մի բան ցոլաց... Սովոր փախստականը իր առաջ մի արտասովոր բան տեսաւ.- բաց դուռ:

Զօրեղ բնագոյումը ցնցեց ամբողջ մարմինը, որ խախտել էր հիւանդութիւնից: Զառանցանքի նշանները արագ անյայտանում կամ խմբում էին այն մտապատկերի շուրջը, որ լուսեղ փայլով թափանցել էր այդ խաօսի մէջ. մենակ եմ... բաց է դուռը...

1. Тайга - այդպէս են կոչում Սիբիրի խիտ, անմարդակոյտ և ճահճուտ անտառները:- Ծան. Թարգմ.

2. Սիբիրի փախստականները պատմում են, որ խուլ տալգայի մէջ կաշաղակները երամով ուղեկցում են խիտ անտառից անցնող փախստականին: Այն ժամանակ՝ երբ օրէնքով այդ փախստականներին սպանելը արգելւած էր, Բուրիաթ որսորդները նոցա հետևում էին կաշաղակների երամի կրկնոցով:- Ծան. Հեղ.

Մի բոպէից նա կանգնած էր յատակին: Բորբոք գլխի բոլոր ջերմը կարծես թափւեց նրա աչքերը, որոնք նայում էին մի տեսակ հաւասարաչափ, յամառ, սարսափելի...

Ինչ որ մէկը դուրս գալով եկեղեցուց, վայրկենաչափ բաց արաւ նրա դուռը... հեռատրութիւնից մեղմացած երգի կանոնաւոր ալիքները հասան փախստականի ականջին և դարձեալ խլացան: Նրա դժգոյն կերպարանքի վրայ երևաց մի տեսակ թմրութիւն. աչքերը մթնեցան և մտքին ընկաւ հին, ցնորալի, փայփայած պատկերը. հանդարտ գիշեր... եղևնու սօսափ, որ թուխ ճղներով հովանաւորում է հայրենի գիւղի հին մատուռը... հայրենակիցների խումբը... գետի ափի ճրագները և այս երգը... Նա շտապել, փախել էր հէնց նրա համար, որ այս բոլորը լսէ այնտեղ, իր տանը, հայրենի գիւղում... մինչդեռ, նրբանցքի մէջ, եկեղեցու դռան առաջ դեռ ևս եռանդով աղօթում էր վերակացուն:

Երիտասարդ նորակոչը հրացանն ուսին շրջում է պատի մօտով. նրա առաջ տարածւում է հարթ, ձիւնից նոր բացւած, հեռուն կորչող դաշտավայրը: Թեթև քամին վազում է դաշտի վրայով, խշխշացնում է աղշպանքը, սուլում է հին տարւայ խոտերի միջով և զինուորի հոգու մէջ արթնացնում է հանդարտ, տխուր մտորմունք:

Երիտասարդ պահնորդը կանգ առաւ պատի մօտ, հրացանը ցած դրեց և ձեռքերը դնելով նրա բերանին, իսկ գլուխը ձեռքերի վրայ, խոր մտածմունքի մէջ ընկաւ:

Նա դեռ ևս պարզ չէր կարողանում երևակայել, թէ ինչո՞ւ այստեղ է, տօնի այս հանդիսաւոր գիշերին, հրացանը ձեռին, պատի մօտ, անմարդի դաշտավայրի առաջ:

Առհասարակ նա դեռ իսկական գիւղացի էր - ռամիկ. դեռ շատ բան, որ գիտեն զինուորները, նա չէր հասկանում, ուստի և իզուր չէր, որ նրան «գիւղացի» էին կանչում բարկացնելու համար: Երէկ չէ միւս օրը նա դեռ ազատ էր, տան, արտերի և իւր աշխատանքի տէրը... Իսկ հիմա, անըմբռնելի, անորոշ, անբացատրելի սարսափը հետևելով երիտասարդ, անտաշ գիւղական զաւակին ամեն մի քայլափոխում, ամեն մի շարժմունքին, միշտ յիշեցնում էր նրան ծառայութեան խստութիւնը:

Բայց այդ բոպէին նա մենակ էր... դաշտավայրի դատարկ տեսքը, որ փռւում էր նրա առաջ և աղշպանքի մէջ ծածանող քամու շուրջը

մրան շնչում էին մի տեսակ անուշ միրի և երիտասարդ մորակոչի առաջ հանդես են գալիս հայրենի պատկերները: Նա ևս տեսնում է հայրենի գիւղը, որի վրայից վազում է միևնույն քամին, և ճրագներով լուսաւորւած եկեղեցին, և այն մթին եղևնիները, որ մրա վրայից շարժում են կանաչ կատարները:

Երբեմն նա կարծես թէ ուշքի է գալիս և այն ժամանակ մրա մոխրագոյն աչքերում արտափայլում է տարակուսանք. այս ի՞նչ բան է... դաշտ... հրացան... պատ... Մի վայրկեան նա յիշում է իրականութիւնը, բայց գիշերուայ քամու անորոշ շնչոցը դարձեալ հանդէս է բերում ծանօթ պատկերներ, և զինուորը հրացանին յենած՝ դարձեալ միրիում է:

Պահնորդի կանգնած տեղից ոչ հեռու, պատի ծայրին երևում է մի մթին իր:- Դա մարդու գլուխ է: Փախստականը նայում է դաշտավայրի ծայրում դժարութեամբ նշմարող անտառի սահմանագծին: Մայր գիշերուայ ազատ, քարմ շունչը ազահաբար ծծելով, մրա կուրծքը լայնանում է: Նա ձեռքերով ցած է իջնում և հանդարտ սուրում է պատի վրայով:

Զանգակների ուրախ հնչիւնը զարթեցնում է գիշերային խաղաղութիւնը: Բանտի եկեղեցու դուռը բացւեց.- դռանը թափօր պիտի լինի: Ներդաշնակ երգեցողութիւնը ալիքներով դուրս հոսեց եկեղեցուց: Զինուորը ցնցւեց, կանգնեց շիմ-շիտակ, ցած առաւ գդակը, որ երեսը խաչ հանէ, և այդ դրութեան մէջ նա պապանձւեց:

Փախստականը գետնին հասնելով, արագութեամբ վազեց աղշոքանքի մէջ:

- Կաց, կաց, սիրելի բարեկամ,- կոչում է պահնորդը սարսափահար բարձրացնելով հրացանը... Ահա, հասաւ մրա գլխին այն սարսափը, որից նա սարսռում էր,- անձև, սարսափելի, ի դէմս այդ մոխրագոյն կերպարանքի:

«Ծառայութիւն, պատասխանատւութիւն», վայրկենաբար մտածեց զինուորը և, բռնելով հրացանը, նշան դրեց փախստականին: Հրացանի ոտը քաշելուց առաջ նա մի խղճալի տեսքով պլշեց աչքերը...

Իսկ քաղաքի վրայով դարձեալ սլանում, շրջան է առնում եթերի մէջ ներդաշնակ, երգեցիկ և դայլայլիկ հնչիւնը, և բանտի հին զանգակը դարձեալ զարկում և ղօղանջում է մի կերկերուն ձայնով որպէս գնդակահար թոչնակի հոգոց: Իսկ պատի տակից ներդաշնակ հոսում

են դէպի հեռու դաշտավայրը հանդիսաւոր շարականի առաջին հնչիւնները. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Եւ յանկարծ ամեն բան խլացնելով պատի տակից որոտաց հրացանի հարւածը, նրան յետեւեց թոյլ, անօգնական մի ճիչ դառն կսկիծով, և ապա, մի վայրկեան ամեն ինչ լռեց:

Միայն անմարդի դաշտավայրի հեռաւոր արձագանքը տխուր տրտունջով կրկնում էր հրացանի հարւածի վերջին արձագանքը:

«Մուրճ», 1894, N 4, էջ 527-534

ԵՐԱԶ ԵՒ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Թարգ. Ֆրանս. Գր. ՎԱՆՅԵԱՆԻ

Ո՛չ մի բան գուցե այնքան զարմանալի չէ, որքան երազի և իրականության մասնությունը: Երազում մենք տեսնում ենք առարկաներ, անձեր և երևոյթներ, որոնք յար և նման են իրականության: Եւ մեր հաւատը դէպի այդ իրերն ու երևոյթները նոյնքան հաստատ է, որքան իրականության մէջ: Չի կարելի մինչև անգամ հաստատել, որ իրականությունը երազի չափ ուժգին ու կատարեալ է: Յուզումները երազի մէջ այնքան խորն են լինում, այնչափ կենդանի, ուրախությունը շատ անգամ այնքան ազդու, ցաւն ու դառնությունը այնքան սաստիկ, որ այդ ամենը երբեմն իրականից էլ աւելի խիստ է թոււմ: Դրանք, աւելի ծակոդ, աւելի ուժգին մի բան ունին, որից համարեա միշտ գուրկ է իրական տանջանքը: Ո՞վ չի յիշում կոշմարի պատճառած զառանցալի տանջանքը: Ո՞վ չի փորձել, երազում, այն հսկայական վիշտը, երբ մարդու հոգին կարծես հալւում, ոչնչանում է ամբողջովին: Ո՞վ չի զգացել, երազում մի սիրելի անձից բաժանելը և դորա պատճառած անսահման տխրությունը, որ ապա, զարթնելուց յետոյ այնպէս դուրեկան, այնպէս հաճելի է դարձնում իրականությունը:

Յամենայն դէպս, երազի պատճառած երկիւղն և ուրախությունը նոյնչափ իրական է, որքան արթնութեանը. երազինը, քնած ժամանակ, մենք համարում ենք նոյնքան հաստատ ու ճիշտ, ինչպէս իրականինը: Մեր բոլոր տեսածի և իմացածի գոյությունը երազում նոյնպէս ակներև է ինչպէս արթնութեան մէջ: Դեկարտը իր դիտողութիւնների մէջ այս միտքը ամենահեշտ և ամենակենդանի կերպով է արտայայտել: «Քանի՞-քանի անգամ է պատահել երազում, որ ես այս ինչ տեղն եմ եղել. հագնւած եմ եղել, կրակի առաջ կանգնած, թէ ես բոլորովին մերկ պառկած եմ անկողնում: Այո, թոււմ է մինչև անգամ ներկայիս, որ այս քնած աչքերով չէ՛, որ ես տեսնում եմ այս թուղթը, որ այս յուզւած գլուխը դեռ քնած, հանդարտած չէ, որ ես, դիտմամբ և հէնց ժամանակին ազատւած, մեկնում եմ ձեռս և շօշափում այն: Եւ ինչ որ կատարւում է երազում, ո՛չ մի բան դորա նման որոշ ու պայծառ

չէ: Բայց հոգածութեամբ դորա մասին մտածելով, ես յիշում եմ, որ յաճախ, քնած ժամանակ, ես խաբւել եմ մման պատրանքներով: Եւ կանգ առնելով այս մտածման վրայ, ինձ համար ակներև է դառնում, որ ոչ մի որոշ կէտ չկայ, որով մարդ երազը պարզապէս զանազանել կարենար իրականից, և իմ զարմանքը այնքան մեծ է, որ համարեա ընդունակ է ինձ համոզելու, որ ես քնած եմ»:

Սակայն, երազն ու իրականութիւնը մենք իրար հակադրում ենք: Արթնութեան աշխարհը մեզ համար իրական, ճշմարիտ և միակն է. երազի աշխարհը մեզ թւում է կատարելապէս «ներքին» քիմերական: Երազների անկապ և անմիտ յաջորդութիւնը մեզ զարմացնում և զարճացնում է: Մենք մնում ենք ապշած, որ քնած՝ հաւատալ ենք կարողացել մմանօրինակ զառանցանքի: Կարճ՝ երազ, մեզ համար նշանակում է պատրանք-զառանցանք, խաբէութիւն: Այսօր երազի մասին եղած թօրիաններից տիրողն և պայծառն այն է, որ իրականի մտապատկերները (perception) ճիշտ են, իսկ երազի մէջ տեսածը սխալ: Նա պատասխանում է երեք հիմնական հարցերին, որ կարելի էր տալ երազի մասին. Ուրտի՞ց են գալիս երազները, ինչո՞ւ նրանք անկապ են, և ինչո՞ւ մենք երազում տեսածը իրականի տեղ ենք ընդունում:

Նախ երազի ծագումը բացատրւում է շատ հասարակ կերպով. երազները հին զգացումներ են, որ վերարտադրւում են միայն ջոկ կապակցութեամբ.- երազները իրականութեան լոկ շփոթ ցոլացումն են: Երբեմն, սակայն, նրանք առաջանում են, երբ մեր զգայարաններից միւր կիսարթուն դրութեամբ մի որ և է ճնշման է ենթարկւում. մի բանի քսելը, պառկելու ձևն ու դիրքը, և մեր օրգանների գործունէութեան դրութիւնը նոյնպէս առիթ կամ պատճառ են դառնում երազելու:

Երազների կապ չունենալը այլ ևս խորհրդատու չի թւում: Դա բացատրւում է երկու պատճառով. ա) որ դատողութիւնը, խելքը (raison), կամքը, ըմտութիւն անելու և ջոկելու ընդունակութիւնը, մի խօսքով «մտածութեան կենդրոնները» համարւում են քնած, ուրեմն չեն կարողանում կառավարել մեր մտապատկերների ընթացքը և բ) այդ պատճառով իսկ, մտապատկերների և երևակայութեան զուգորդութիւնը հասնում է անսանձ տիրապետութեան, իսկ երազում տեսածին հաւ-

ատալը բացատրում է մտապատկերների մեքենական խաղով: Սկզբունքով ընդունած է այն օրենքը, որ «ամեն մի մտապատկեր, երբ չի հանդիպում մի այլ աւելի զօրեղի դիմադրութեանը, մեզ երևում է իրական»: Դորանով հարցը լուծում է ինքնին. քանի որ զգայարանները քնած են, մեր ուղեղում արտադրած մտապատկերները չեն հանդիպում նորմալ զգացումների դիմադրութեանը. ուստի և մենք դրանք ընդունում ենք իբրև իրական: Այլ և մտածութեան կենտրոնները, լինելով քնած, չեն կարող մեր մտապատկերների առաջն առնել, քանի որ դատողութիւնն ու յիշողութիւնը բացակայում են: Ուստի և երազում տեսածին մենք բացարձակ հաւատ ենք ընծայում քնած ժամանակ:

Այսպէս՝ երազի և իրականութեան հակադրութիւնը հաստատ և նւիրագործւած է. մի կողմից պատրանք, մտքերի շփոթ, ցլմունք, անկապութիւն, միւս կողմից հաստատ և տևական իրականութիւն:

Մենք կ'ուզէինք ապացուցանել, որ այդ հակադրումը անկայուն է և երազն ու իրականը այդպէս դիւրութեամբ չեն զանազանում իրարից: Դորանով, ի հարկէ, մենք եզրակացնելու չենք, որ «իրականութիւնը» մի քիմերա է, այլ առ սակաւը ցոյց պիտի տանք, որ նա անցողական և ժամանակաւոր է և որ ամեն բոպէ կարելի է սպասել մի արթնութեան:

I

Արդ՝ տեսնենք այն տարբերութիւնները, որ մարդու ակներև են երևում երազի և իրականութեան մէջ:

Առաջին, ասում են, որ մի անդունդ կայ երազի և արթուն դրութեան մէջ: Արթնութեան մէջ ես համոզւում եմ, որ առարկաներն իրական են. որովհետև իմ զգայարաններից միւնը հսկում և լրացնում է միւսի տարակոյսը: Ես տեսնում եմ մի ծառ. եթէ ես կասկածեցի մօտենում եմ և շօշափում. և իմ կասկածն իսկոյն փարատւում է. ծառը իրական է, և ես չեմ երազում: Ես զգում եմ վարդի հոտ. եթէ տարակոյս ունիմ, որոնում և տեսնում եմ վարդը, բռնում ու շօշափում եմ այն, և իմ համոզումը դառնում է անկասկածելի: Այսպէս, արթուն ժամանակ առարկաների իրական լինելը ապացուցւում է մեր զանազան զգայարանների և զգայութիւնների համաձայնութեամբ: Մինչ, ասում են, երազում, մեր զգայարանները լինելով քնած, մենք չենք կարող ճշտել մեր տեսածի

իրականությունը: Ուստի մենք մնում ենք խաբւած, մինչև մեր զգայարանների զարթնելը, երբ իմանում ենք մեր մոլորւելը:

Հասկանալի է, որ այս հակադրությունը կատարելապէս երևակայական է: Երագումն էլ, ճիշտ որպէս արթուն պահապան, մեր զգայարանները միմեանց հսկում և միմեանց հետ համաձայնում են:

Ես չեմ երագում միայն մի առարկայ տեսնելով. ես երագում եմ միևնույն ժամանակ լսելով նորա ձայնը, շօշափելով նորա մարմինը. ես հաւատացած եմ, որ տեսնում եմ նորա ձեռը, լսում եմ նորա խօսակցությունը: Երագի և արթնութեան նոյնությունը այս կէտում բացարձակօրէն ակներև է: Արթուն թէ երագում, մենք հաւատացած ենք, որ նշմարում ենք մեր բոլոր զգայարաններով: Երագումս տեսած առարկան «զգայութեան մի ցանց է» (*faisceau de sensations*), մկանային տեսողութիւն, լսողութիւն, շօշափումն, մինչև անգամ հոտառութիւն, ճիշտ իրական առարկայի պէս:

Ահա և մի երկրորդ, սովորական տարբերութիւն, որ տեսնում են մարդիկ երագի և արթնութեան մէջ: - Արթուն ժամանակ, առարկաների իրական լինելը ապացուցւում է զանազան անձերի համաձայնութեամբ: Ես չեմ միայն որ տեսնում եմ ծառը. բոլոր ներկայ եղողները տեսնում են նոյնը ինձ նման. ես շօշափում եմ. դուք էլ էք շօշափում. ես լսում եմ նորա տերևների սօսափը. դուք էլ էք լսում նոյնը: Եւ այս հանգամանքն է առաւելապէս, որ ինձ համոզում է, թէ ծառը երևակայութեանս արդիւնքը չէ. եթէ դուք նայելով այս կողմը ոչինչ չըտեսնէք, և ուրիշներն էլ ոչինչ չըտեսնեն, կարելի էր եզրակացնել, որ ես զառանցում եմ: - Գործի մէջ, կեանքում, մեր նշմարածը շարունակ հսկւում և ճշտւում է ուրիշների նշմարածով: - Այն ինչ, ասում եմ, քնած մարդը ենթակայ է միակ իր երևակայութեան խաղին. ուրիշները չեն տեսնում, շօշափում ու լսում այն, ինչ որ նա է տեսնում, շօշափում ու լսում: - Նա փակւած է մի լուսատու բայց օտարի համար միանգամայն անմատչելի տարածութեան մէջ. - նա ուրիշների համաձայնությունը չի՛ կարող առնել իր տեսածի վերաբերմամբ:

Մինչ արթնութեան ժամանակ նշմարածը հասարակական է, երագում նշմարածը անհատական և անհաղորդակից է օտարին:

Այս առարկութիւնն էլ առաջինի պէս անկայուն և անհիմն է:

Ճիշտ է այն, որ, զարթնելուց յետոյ, մենք փոխում ենք մեր տեսակետը, և այդ վայրկեանից միայն գիշերային երևոյթը մեզ թույլ է գոտ ներքին, անհատական և մեկուսի: Սակայն, ի վնաս հասարակական պատրանքի, երազի ընթացքում իրերն ու անցքերը յար և նման են արթնականին: Ի հարկէ արթուն ժամանակ մեզ հետ գործակից են և ուրիշները, որոնք նշմարում են մեր դիտած առարկաները. սակայն, երագումն էլ մեզ հետ գործակից են ուրիշները, որոնք նշմարում ու դիտում են մեր նշմարածն ու տեսածը:

Միթէ չե՞նք երագում երբեմն որ խմբովին դիտում ենք մի որ և է ներկայացում, կամ խօսում ենք մի բարեկամի հետ. փոխանակում ենք մեր տպաւորութիւնները և միմեանց լսում ու հասկանում ենք կատարելապէս: Այստեղ էլ երազի և արթնութեան մէջ մի տարբերութիւն չկայ. այլ բացարձակ նոյնանման ներքին դրութիւնը, զգացութիւնը, հաւատը կատարելապէս նոյնն է. երագողը տեսնում, հաւատում և իրան հաղորդակից է զգում ուրիշների հետ, ինչպէս արթունը տեսնում և հաւատում է իր նմաններին: Միայն զարթնելով մենք զգում ենք մեր մոլորութիւնը. ինչ վնաս, դա չէր խանգարում, որ մենք կատարելապէս հաւատայինք մեր տեսածին երագում: Այս է կարևորը: Որովհետև, այս ամենից յետոյ, մի՞թէ ես վստահ եմ, որ մի քանի օրից յետոյ չեմ վերարթնանայ (reveiler) այն դրութիւնից որ հիմա արթնութիւն եմ կանչում: Եւ դորանից յետոյ, ո՞վ գիտէ, չե՞մ ասի, թէ մեկուսի երագում էի:

Պէտք է նկատել, որ վկաների համաձայնութիւնը երագը իրականից տարբերելու համար, մի վճռական նշան չէ: Յայտնի են հաւաքական զառանցանքի դէպքեր:

Գանք հիմա մի աւելի կարևոր տարբերութեան, որը հիմնովին պարունակելով բոլոր մնացեալները, երագը էապէս որոշելու յատկութիւնն ունի. դա նորա անկապութիւնը, խառնակութիւնը, անկարգ և անտևական լինելն է:

Երագում պատկերները միմեանց յաջորդում են առանց կապի, ո՛չ մի օրէնքի չեն ենթարկում նրանք, երևակայութիւնը սահման և օրէնք չ'ունի, իրերի բնական կարգը այստեղ խափանւած է լիովին: Մենք սլանում ենք մի երկրից միւսը. մանկութիւնից դառնում ենք ծեր վայրկենապէս. պատճառները ամենատարօրինակ հետևանքներ են ունենում այստեղ: Մտածութեան ամենակարևոր օրէնքները այստեղ

անընդհատ բռնադատում են. առաջ են գալիս երևոյթներ առանց որ և է պատճառի, ձևափոխում աներևոյթանում և կրկին երևում կախարդական կերպով: Ամենաանմիտ բանն անգամ այստեղ իրական է և «ընդդիմակադրութեան» որպէս նաև այլ սկզբունքները այստեղ այլ ևս հաշի չեն առնում. մարդ միևնոյն ժամանակ մի՛ և մի այլ տեղում է. մի անձը միևնոյն ժամանակ ինքն է և մի ուրիշը. մարդ այնպիսի խօսքեր է ասում, այնպիսի բաներ է կարդում, որոնց կապը գտնելը անկարելի է լինում զարթնելուց յետոյ, այնքան նորանք հեռու են տրամաբանութիւնից և զառանցական:

Մի հմուտ հոգեբան, Մ. Դելբեօֆը, կարողացաւ գրի առնել երազում կարդացած գրքի վերջին նախադասութիւնը, որ գեղեցիկ բառերի մի անմիտ հաւաքածու է. «L'homme eleve par la femme et separe par les aberrations pousse le faits degages par l'analyse de la nature tertiaire dans la voie duprogress»:

Այս է ականերև արմատական տարբերութիւնը. երազը անկապ է. ընդհակառակը, իրականութիւնը - խելացի-տրամաբանական: Արդեօք այս որոշումը նախորդներից աւելի ճիշտ է. մենք կասկածում ենք: Հարկաւոր է յիշել, որ կան երազներ, ի հարկէ բաւական հազւագիտ, որ ամեն բան ընթանում է մի բնական և կանոնաւոր հետևականութեամբ. և ընդհակառակը, իրականութիւնն էլ երբեմն անհետևականութիւն ու կապրիզներ ունի: Բայց լաւ է, որ էականից չհեռանանք:

Ինձ թում է սակայն, որ երազի անկապութիւնը և իրականութեան հետևականութիւնը, որ հակադրում են միմեանց, երևոյթական է միայն. երազը մեզ անկապ, անկարգ է թում. բայց միայն արթուն ժամանակ. և սա է ամենակարևորը, որ շարունակ անուշադիր է թողնում: Երազելիս ինչ որ մենք տեսնում ենք, երևում է մեզ պարզ, բնական, կանոնաւոր. մեզ բոլորովին չի՛ զարմացնում մեր տեսածը, մենք գտնում ենք բոլորովին բնական այն, որ մենք միևնոյն ժամանակ թէ՛ այս և թէ մի այլ երկրումն ենք, և մեզ համար միանգամայն հասկանալի է, որ մի անձ կարող է ձևափոխւելով դառնալ մի ուրիշ. մեր խօսած ճառը, որ ամենաանմիտ բանն է արթնութեան ժամանակ, յաճախ մեզ թում է հիանալի, մենք ինքներս զարմացած ենք մնում մեր ոգևորութեան, մեր ճարտարախօսութեան և հմտութեան վրայ:

Մենք ուրախանում ենք, որ այդպէս ճարտարութեամբ և հմտութե-

ամբ կարողանում ենք շարաշարել մեր գաղափարները. մեր խօսածը անասահման համոզիչ է: Գուցե երազումն է միայն, որ մենք հասնում ենք բարձրագույն համոզումը զգալու հաւանականութեանը: Վերևի նախադասութիւնը, որ պ. Delboeuf-ը կարողացել էր փրկել, նրան թւում էր արևի պէս պայծառ. երազում, ի հարկէ:

Այս ամենը երազում կատարում է ճիշտ այնպէս, ինչպէս իրականութեան մէջ: Արթուն ժամանակ երևոյթները, եթէ մի կողմ թողնենք բացառութիւնները, մեզ թւում են պարզ ու կանոնաւոր. երազումն էլ, նրանք մեզ թւում են բնական ու կանոնաւոր: Ջարթնելուց յետոյ, ի հարկէ, դրանք մեզ անմիտ են թւում. ի՞նչ անենք. դրանք անմիտ են միայն համեմատութիւնից յետոյ. արթուն մարդու տեսակէտով միայն, որ քնած մարդու տեսակէտը չէ՛: Ո՞վ կ'ասի թէ մենք մի օր վերստին չենք զարթնի այն դրութիւնից, որ հիմա մենք արթնութիւն ենք կոչում և այն ժամանակ մենք անմիտ չենք համարի այն երևոյթները, որոնք մենք հիմա խելացի և իրական ենք համարում: Ո՞վ կ'ասի, որ մենք մի օր պիտի չսթափուինք, տեսնելով որ մենք հաւատացել ենք ծիծաղելի ֆանտոմների և միանգամայն անհաւանական ճշմարտութիւնների:

Մնում է, որ քննենք չորրորդ տարբերութիւնը: Իրական կեանքը, ասում են, շարունակ տևական է, մինչ երազը շարունակութիւն չունի. մինը չի կապում միւսի հետ: Իմ օրերի ընթացքը կազմում է մի կեանք, որ ինքն իրան շարունակում, ինքն իրան ապրում է. այսօրայ իմ կեանքը երեկւանի շարունակութիւնն է և վաղւանը, այսօրւանի: Ես վաղը առաջ եմ գնում ճիշտ այն կէտից, ուր կանգ էի առել երեկոյեան. ես ինձ վերստին գտնում եմ միևնոյն միջավայրում, զբաղւած նոյն մտքերով, միևնոյն հոգսերին ենթակայ, միևնոյն երևոյթների մէջ. սա միևնոյն թելն է, որ վերանորոգում է ամեն առաւօտ: Մինչ, ասում են, երազը ինքն իրան շարունակող մի գոյական չէ՛, մի գիշերւայ երազը չի՛ կապում յաջորդի կամ նախորդի հետ: Այս գիշեր քնելով, ես համարեա հաւատացած եմ, որ տեսնելու չեմ երեկւայ երազած դաշտավայրը, ոչ անձերը, ոչ էլ երեկւայ դէպքերը. դա գուցէ մի դիւական կոշմար կը լինի, որ պիտի յաջորդէ մի գեղեցիկ ռոմանի: Կարճ, պակաս է կապը ոչ միայն մի երազի, այլ և զանազան յաջորդող երազների մէջ: Ի՞նչ կարելի էր ասել այս կէտի մասին. ըստ իս, սա էլ միւսներից

կարևոր չէ՝ Ե՞րբ է, որ մենք մտածում ենք երազների անշարունակ և անկապ լինելու մասին. երազելի՞ս: Ո՛չ երբէ՛ք: Երազի ընթացքում ինձ թուում է, որ ես շարունակում եմ ինքս ինձ, ես մնում եմ շարունակ նոյնը. ես ո՛չ մի տպաւորութիւն չ'ունիմ, թէ այս երազը իրանից անկախ և իրանից անկապ նախորդներ է ունեցել. ընդհակառակը, ճիշտ իրականի նման, ես այն տպաւորութիւնն եմ ստանում, որ երևոյթները անվերջ շարունակութիւն են իրենք իրենց, նրանք անընդհատ առաջ են գնում, անընդհատ փոփոխւում են: Այստեղ էլ ո՛չ թէ տարբերութիւն, այլ մի նմանութիւն աւելի կայ երազի և իրականութեան մէջ: Այստեղ թէ այնտեղ, միևնոյն տեսկանութիւն ու միութիւնն է: Չարթնելուց յետոյ, անշուշտ, պատկերը փոխւում է, մեր երազները թւում են մեզ անկախ ու միմեանցից կապ չունեցող: Սակայն, համոզւա՞ծ ենք, արդեօք, որ մի քանի օրից մենք վերստին չենք զարթնի և այսօրւայ արթնութիւնն ու մեր կեանքի երևոյթական կապը չի՛ թւայ մեզ արդեօք անկապ, անտեսական և հատուկտոր:

Մնացեալ բոլոր տարբերութիւնները, որոնք պնդում են հոգեբանները, շոգիանում են ինքնին: Սէն դը Բիրոնը, օրինակ, հաւատարիմ մնալով իր սխտեմին, կամքի մէջ է տեսնում արթնութիւնն ու երազը բնորոշող տարրը: Նրա ասելով, երազի բնորոշ կողմը, այն է կամքը, կամ այլ կերպ ասենք, ուշադրութիւնը բացակայ է երազի մէջից: Մենք հաւատում ենք երազում տեսածին, որքան էլ դա արտակարգ լինի, որովհետև կամաւոր ուշադրութիւնը պակաս է այդտեղ: Այդ պատճառով ահա երազի մի մասը մենք չենք կարողանում համեմատել նորա միւս մասի հետ, որ մեզ պիտի ապացուցանէր նորա անկապ և սխալ լինելը: «Քունը հեռու է վանում ուշադրութեան գործունէութիւնը ամբողջովին: Այս է անտարակոյս երազների մեծ մասի տարօրինակութեան պատճառը: Արդ ամեն ինչ խօսում է այն բանի օգտին, որ այդպիսի դրութեան մէջ է, որ կամակոր ուշադրութիւնն ու յիշողութիւնը կատարելապէս բացակայում են տեսածի մասերը համեմատելու միմեանց և իրականութեան հետ»¹:

1. M. de Biron. Nouvelles considerations sur le sommeil. Ed. Gousin, հատոր II, էջ 239:

Նշանակենք այստեղ արդեն վերևը յիշած պատրանքը: Այո՛, անտարակոյս, արթուն՝ ես գտնում եմ, որ քնելիս կամքս բացակայ էր: Մինչ հենց երագում ես այն տպաւորութիւնն ունիմ, որ ես իմ կամքից բղխող գործեր եմ կատարում, որ ես ազատում, վճռում եմ, որ ես ուշադիր, մտածող եմ, որ ես համեմատում եմ: Նոյնը կարելի է ասել երագների անբարոյական լինելու մասին, որ երևան են հանում մի քանի հեղինակներ, մասնաւորապէս Ռադէշտոք¹: Այո, անշուշտ, արթուն՝ մենք գտնում ենք, որ քնած ժամանակ մենք մի յանդուգն «անբարոյականութեան» մէջ էինք, բայց քնի ընթացքում մեր գաղափարներն ու զգացումները միանգամայն բարոյական էին. մենք ունենք խղճի խայթ, հոգածութիւն, արհամարհանք, արժանաւորութիւն... ճիշտ ինչպէս արթուն ժամանակ, և միայն զարթնելուց յետոյ ենք իմանում այդ զգացումների տարօրինակ դասաւորութիւնը: Նոյնը կ'ասեն և «ժամանակի ընթացք» փոփոխութեան մասին, որ զարմացնում է բոլոր հոգեբաններին: Այո՛, ժամանակի շարունակութեան ընթացքը փոխւած է երևում, մեզ թուում է, որ մի քանի րոպէում, կամ մի քանի ժամում, քնած՝ ապրել ենք երկար տարիներ: Բայց դա էլ, դարձեալ մի այլ չափով, որ մենք կատարում ենք արթուն ժամանակ, համեմատ կեանքի սովորական չափերի, որով մենք որոշում ենք երագում տեսածը իրական անցքերի հետ: Երագի զանազան պատկերների մէջ մենք երևակայում ենք միջին անցքեր, որոնք սովորական կեանքում անհրաժեշտ էին և որոնք պահանջում են երկար ժամանակ²: Նոյնը կարելի էր ասել անձի և մասնաւորապէս բնոյթի փոփոխման մասին, որ առաջանում է երագում: Սակայն, այստեղ մի աւելի լաւ բան կայ հաստատելու: Ես կը հարցնէի, երագում արդեօք փոփոխւում է մեր բնոյթը, թէ ընդհակառակը մա երևան է գալիս լրացած հենց ինքն իրմով. մի քիչ աւելի մերկացած, աւելի խիստ, քան արթուն ժամանակ:

Ես յաճախ զարմացած եմ մնացել, թէ ինչպէս երագը մերկացնում և վերականգնում է մարդու բնոյթը. այն պակասութիւնը, այն թուլու-

1. P. Radestock. Schlaf und Traum. Leipzig, 1879.

2. Երագը կատարելապէս համեմատելի է թատերական ներկայացման հետ, ուր նոյնպէս վերացած է ժամանակի երկարութիւնը, որը, սակայն, մեզ գործողութեան ընթացքում թուում է բնական և իրական մինչ այն աստիճան, որ մենք ցաւում, կամ լաց ենք լինում սիրած հերոսների հետ: - Ծ. Թ.:

թիւնը, որ մարդ չի խոստովանում արթուն ժամանակ, երևան են գալիս մի զարմանալի պարզութեամբ. մարդ ենթարկւում է այն փորձանքներին, որոնցից նա փախչում է իրականութեան մէջ, որոնք սակայն հաճելի են նրան.- թուլութիւնները, որոնք պարունակւում են մեր հոգու խորքում, լոյս աշխարհ են գալիս, խուլ ցանկութիւնները գլուխ են բարձրացնում, մթին սէրը փայլում է, գաղտնի կիրքը բռնկում է. և մի դրամայի պէս առաջանում են երևոյթներ, որոնք պատառում են վարագոյրը մեր ներքին էակը ծածկող: Եւ յաճախ, զարթնելով մարդ ասում է ինքն իրան. «ճիշտ է, այդ պարագաներում, այդպէս է, որ կը վարուէի.- ես այդ երբէք չեմ մտածել, դորանով ես չեմ հպարտանում, բայց դա ճիշտ է»: Ամենք ոք, ով ինքն իր հետ անկեղծ է, ես համոզւած եմ, նոյն տպաւորութիւնը պիտի ունեցած լինի: Մարդ այդպէս չէ՛ եղել, սակայն, մարդ կարող էր այդպէս լինել:

II

Ընդհանրապէս, երազի և արթնութեան մէջ երկու էական կէտ կայ տարբերող, որոնց արժէքն էլ դեռ կարօտ է գնահատութեան: Առաջին՝ արթուն ժամանակ ես գիտեմ, որ կայ և մի դրութիւն, որ ես երազ եմ անւանում: Ընդհակառակը, երազում, ես բոլորովին գաղափար չունեմ, որ կայ նաև մի այլ դրութիւն, որ կոչւում է արթնութիւն: Արթուն ժամանակ ես գիտեմ, որ երազել եմ, որ իմ գլխով, քնած ժամանակ, անց են կացել այն ցնորական դէպքերը, որ ես երազ եմ ասում, որից ես դուրս եմ եկել իրական կեանքը մտնելու համար, որը կատարելապէս որոշւում է երազից և բաժան է նրանից: Ես մի դրութեան մէջ եմ, որ կոչւում է «առաջին». ես գիտեմ, որ գոյութիւն ունի և մի «երկրորդ դրութիւն» և հէնց այս է կարևորը, որ ես այդ դրութիւնները համեմատել եմ կարողանում և միմը գտնում անմիտ միւսի վերաբերմամբ: Երազում, ընդհակառակը, ես «միւս դրութեան» մասին տեղեկութիւն չունիմ, որից ես դուրս եմ եկել և ուր կրկին վերադառնալու եմ. ես չեմ զգում, որ կայ մի այլ գոյութիւն արմատապէս բաժանւած: Ես երբէք չեմ համեմատում երազիս պատկերները իրական աշխարհում տեսածներիս հետ, որովհետև ես երազում մոռանում եմ իրական աշխարհը: Եթէ ես համեմա-

տել կարենայի, գուցե իրականը գտնէի անմիտ երազի վերաբերմամբ: Բայց ես այդ չեմ անում, ես չգիտեմ, որ գտնուում եմ երկրորդ դրութեան մէջ: Ինձ այնպէս է թւում, որ ես շարունակ ապրել եմ այս կեանքով, որ ինձ այսքան բնական է թւում: Ճիշտ է, երբեմն երազելիս ես հարց եմ տալիս ինձ. չե՞մ երազում արդեօք. բայց դա զուտ բառական է միայն: Այդ խօսքերը ինձ համար դատարկ բառեր են առանց ներքին արժէքի. իրապէս ես չեմ զանազանում երկու դրութիւնը, և շարունակ ինքս ինձ կրկնում եմ, որ տեսածս երազ չէ՛, այլ զուտ իրականութիւն: Արթունը ճանաչում է երազ, երազը չի՛ ճանաչում արթնութիւն:

Ահա և երկրորդ տարբերութիւնը. սա բոլորից պարզը, ամենից ասելի աչքի զարնողը, և ամբողջովին առած միակ ճշմարիտն է, քանի որ նախորդն էլ պարունակուում է սրա մէջ. քնից մարդ զարթնում է, իսկ արթնութիւնից մարդ չի վերարթնանում: Ակներն այս է իսկական պատճառը, որ առհասարակ երազն ու իրականութիւնը իրար հակադրուում են: Այս պատճառով ահա, իրականութիւնը մենք ընդունում ենք լրջօրէն, իսկ երազը ոչ, որովհետև երազից յետոյ մարդ զարթնում է և ապա արթուն, այսինքն մեր տեսակէտը փոխելով, ժպտում ենք երազի վրայ, որից մենք դուրս ենք եկել, մնում ենք զարմացած, որ հաւատալ ենք կարողացել մեր տեսածին, այնքան տանջել, կամ այնչափ խորապէս ուրախացել ենք: Եւ միայն այս վայրկեանից դատելով արթուն մարդու տեսակէտով, արթուն մարդու բանականութեամբ, արթուն մարդու սկզբունքներով, երազը մեզ անմիտ է թւում: Այս վայրկեանից ահա, մենք երազը համարում ենք անկապ և անհետևական, որ մենք տարբեր երազների մէջ շարունակութիւն և հետևում չենք տեսնում: Ընդհակառակը, իրականապէս և մարդկութեան նորմալ դրութեան մէջ մենք երբէ՛ք վերստին չենք զարթնում այն դրութիւնից, որ կոչւում է արթնութիւն: Մենք երբէք չենք լինում մի այլ դրութեան մէջ, որտեղից կարենայինք դատել իրականութեան մասին, իբրև ատելի հեռից և ատելի բարձրից, ինչպէս որ ինքն է դատում երազի մասին: Եթէ մի երազ տևէր ամբողջ կեանքի ընթացքում մենք իսկի գաղափար էլ չէինք ունենայ, որ խաբւած ենք. իրականութիւնը ճիշտ այն երազի պէս է, որը պիտի տևէր մեր ամբողջ կեանքի ընթացքում:

Այս երկու տարբերությունները իրական են: Բայց արդեօք դրանք կարևոր և արմատական են: Դրանք բացատրում են տիրող հասարակ կարծիքը, բայց արդարացի՞ է արդեօք այդ կարծիքը: Արդարև, մենք տեսնում ենք, թե ի՞նչու են հակադրում երազն ու իրականությունը, բայց արդարացի՞ է այդ հակադրությունը: Մինչ երազում են մոռանում են արթնությունը, արթուն՝ են գիտեն երազի գոյությունը: Սա արդեօք այս երկու դրութեան տարասեռութեան¹ մի ակներև նշան է: Չեն կարծում: Ակներև սա մի նշան է, որ դրանք զանազանում են «աստիճանով» (քանակով) բայց ոչ «քնութեամբ» (որակով): Հիպնոզած անձերի հետ այդպիսի դեպքեր յաճախ է պատահում. մարդ նրանց ընկղմում է քնեածության մի յայտնի դրութեան մեջ, որ կոչում է «երկրորդ դրութիւն»², ապա վերցնելով այդ «երկրորդ դրութիւնը» նորից հիպնոզում են, որպէս թէ նա արթուն լինէր, և այդպիսով հիպնոզած անձը մտնում է մի նոր քնեած դրութեան մեջ, որ կոչում է «երկրորդ դրութիւն»: Եւ ի՞նչ է առաջանում. այն, որ այդ անձը, 3-րդ դրութեան մեջ յիշում է «երկրորդ դրութիւնը», այն ինչ, այս վերջինի մեջ, գաղափար անգամ չունի «3-րդ դրութեան» մասին: «Լուցիա 3»-ը կատարելապէս յիշում է նոյնպէս նախորդ քնեածության դեպքերը և այն ամենը, որ կարող էր Լուցիա 2-ը ասել: Այն ինչ, նոյն Լուցիա 2-ը, չի կարող ինձ ասել այն դեպքերը, որ անցել են Լուցիա 3-ի գլխով:

Այսպէս՝ քնեածության միմեանց հետևող երկու դրութեան մեջ նոյն տարբերութիւնը կայ, ինչ որ երազի և արթնութեան մեջ: Երազը մոռանում է իրականութիւնը, որպէս 2 դրութիւնը մոռանում է 3-ը: Արթնութիւնը ճանաչում է երազի գոյութիւնը, որպէս «3 դրութիւնը» ճանաչում է «2-ը». «2 և 3 դրութիւնը» չէ՞ որ միևնոյն անձի երկու դրութիւնն են: Ուրեմն, հաւանական է, որ երազն ու իրականութիւնն էլ միևնոյն անձի երկու դրութիւնը լինեն:

Ի՞նչ արժէք ունի արդեօք երկրորդ տարբերութիւնը: Ասացինք, որ նա շատ հեշտ է, նա միակն է, որ ակներև է և՛ հասարակ մտքի, և՛ ճիշտ մտածողի համար: Մինի կողմը զարթնել կայ, միւսի կողմը ո՛չ: Բայց մի՞թէ սա մի արմատական և վճռական տարբերութիւն է, թէ վերանցիկ

1. heterogene - տարասեռ, homogene - համասեռ:

2. «l'etat 2»:

(superficielle) ու ժամանակաւոր: Այո, ճիշտ է, որ «իրականութիւնից» զարթնիլ չի՝ կարելի. չկայ մի երրորդ դրութիւն, որտեղից «իրականութիւնը» երևայ ցնորական և անհետևական. չկայ մի երրորդ դրութիւն, որ իրականութեանը վերաբերւէր այնպէս, ինչպէս վերջինս երազին: Այս ճիշտ է. բայց միմիայն ներկայումս և մարդկութեան սովորական պայմաններում: Այս երկու կէտի վրայ ևս կ'ուզի մի քիչ երկար կանգ առնել:

Նախ և առաջ, սա ճշմարիտ է միայն ներկայումս: Հարկաւ, կարելի է, որ արթնութիւնից մի նոր արթնութիւն առաջանայ: Կարելի է, որ մի օր մենք դուրս գանք այն դրութիւնից, որ այսօր արթնութիւն ենք անուանում: Կարելի է, որ մենք մտնենք մի նոր դրութեան մէջ, որ արթնութեան համար նոյնը պիտի լինի, ինչ որ վերջինս երազի համար: Հիպնոտիզմի լեզուն խօսելով, կարելի է, որ բացի 1 և 2 դրութիւնից կայ և մի 3 դրութիւն: Կարելի է օրինակ, որ մահը այդ արթնութիւնը լինի և մենք շատ չենք չափազանցում, եթէ աւելացնենք, որ դա է համարեա բոլոր կրօնների հիմքը: Կարելի է, որ այդպէս զարթնելով, միանգամայն զարմանանք, որ մենք կատարելապէս հաւատ ենք ընծայել մեր զգայարանների աշխարհին, անցողականն ընդունելով հաստատ ու որոշ, ցնորականն համարելով եզակի և բացարձակ, ժամանակաւոր գոյութիւնն ընդունելով միակ ճշմարիտ գոյականի տեղ: Եւ վերջապէս կարելի է, որ այդ օրը մեզ թւայ թէ, մեր ամբողջ կեանքը մի երազ էր, չենք ուզում ասել ամբողջովին խաբւած մի քիմերայից, այլ, ինչպէս վարը ցոյց կը տանք, պարզապէս անցողականն ընդունելով իրականի տեղ: Այդ ապագան հաստատ չէ՛, բայց կարելի բան է և հէնց այդ պատճառով մենք իրաւունք չ'ունինք արմատաբար իրար հակադրել երազն ու արթնութիւնը, համարել միմը սխալ, միւսը ուղիղ, հիմնւելով միմիայն մեր զգայարանների վրայ:

Եւ ապա, այդ ամենը ճիշտ է միայն մարդկութեան միջակ - սովորական մասի համար. - ինձ թւում է, որ հէնց ներկայում, մի կարգ մարդոց համար գոյութիւն ունի մի կիսարթնութիւն, որոշ մարդիկ, եթէ չեն էլ հասնում, գէթ մօտենում են այդ երրորդ դրութեանը, ուր կեանքը քնի պէս է երևում: Այս կիսարթնութիւնը ես գտնում եմ յատկապէս գիտութեան, մետաֆիզիկայի և կրօնի մէջ. և ի՞նչ է գիտութիւնը, չէ՞ որ նա առաջ է բերում մի բոլորովին նոր, զգայարանականից բոլորովին տարբեր աշխարհ:

Այնտեղ, ուր մենք լոյս և գոյն ենք տեսնում, նա հաւատացնում է, որ դա անտեսանելի եթերն է վայրկեանում 4-ից 700 տրիլլիոն տատանում ունեցող: Այնտեղ ուր մենք մի ձայն ենք լսում, բարձր կամ ցածր, սուր կամ բութ, նա պնդում է, որ դա նիւթի շարժումն է միայն, աւելի կամ պակաս արագ: Այնտեղ ուր մենք տեսնում ենք տարբեր, բազմաթիւ և խառնակ երևոյթներ, նա մեզ ցոյց է տալիս մի հատիկ երևոյթ. շարժումը: Արդ՝ այս չի նշանակում, ինչպէս շատերն են կարծում, թէ լոյսը, գոյնը, ձայնը գոյութիւն չունին, բայց նա առասկաւր նշանակում է, որ այլ բաներ էլ կան, որ եթէ մենք ունենայինք նոր զգայարաններ, մեր առաջ կը բացւէր մի նոր տիեզերք, որ մենք կը տեսնէինք ո՛չ միայն կարմիր գոյնը, այլ և 400 տրիլլիոն տատանումը վայրկեանում: Այս չի՞ նշանակում, որ գիտնականը կիսով չափ զարթնել է և կիսով չափ մուտ գործել մի նոր բարձր իրականութեան մէջ, ուր ամեն բան տարբեր է սովորականից¹: Մետաֆիզիկան է՛լ աւելի մի նոր արթնութիւն է: Մի իսկական «դոգմատիք» մետաֆիզիկոս, որ կատարելապէս հաւատում է իր վարդապետութեանը,- օրինակ Պլատոնը, կամ Սպինոզան, մի նոր աշխարհում ապրող մարդ է, որը հեռու քաշւած, դիտում է կարծեցեալ «իրականութիւնը», որի մէջ մենք մնացել ենք խորասուզւած: Ի՞նչ է իսկապէս մետաֆիզիկայի պնդածը: Մի քանիսի համար իսկապէս գոյութիւն ունեցողը, անվերջ դատարկութեան մէջ ատոմների յալիտենական անձրևն է. բոլոր մնացեալը երևոյթական է, որովհետև «բոլոր մնացեալը» այն բնութիւնն է, որ մեզ

1. Եւ միայն գիտնականը չէ՛, որ ուղղում է իր զգայարանների սխալը, ամեն մարդ, ամեն օր ուղղում է իր սխալը. մի ուղիղ ալլէյի կամ փողոցի ծայրին կանգնած՝ մենք նկատում ենք որ նրանց ծայրը հետզհետէ մօտենալով միանում դառնում են մի կէտ. սակայն մենք ամենօրեայ փորձից գիտենք, որ զուգահեռ գծերը երբեք չեն միանում. մեր առաջ դրած փոքրիկ լամպը ծածկում է դիմացի ահագին պատը, բայց մենք գիտենք, որ դա պատրանք է միայն: Անդամատութեան կամ մի դժբաղդ դէպքի շնորհիւ կորցրած անդամի տեղը հիւանդը ցաւ է զգում, մքսում է նրա ոտը, կամ բոր է գալիս, այն ոտը, որը վաղուց արդէն գոյութիւն չունի: Այդ պատրանքը հասնում է կատարելութեան վէպերի կամ մանաւանդ թատրոնի մէջ, ուր մենք բաց աչքերով կատարեալ գիտակցութեամբ հաւատում ենք, լաց ենք լիւնում, բարկանում կամ ուրախանում ենք մեր սիրած հերոսների հետ, շարունակ գիտենալով նրանց արհեստական լինելը: Մեր զգայարաններից դուրս չկայ այլ աշխարհ:- Ծան. Թ.:

ներկայանում է մեր զգայարանների միջոցով: Այլոց համար իրապես գոյություն ունին միայն աննիւթ ուժերը, հոգիներ, կամ գիտակցութիւններ. մնացեալը, մարմինների աշխարհն է, որոնց հետ մենք այսպէս ամուր կապած ենք: Կարճ, իրականութիւնը երազ էր, որից «spiritualist»-ը մեզ արթնացնում է: Ուրիշների համար էլ վերջապէս, ինչ որ իսկապէս կայ, դա մի էակ է միայն. մնացեալը երևոյթական է, որովհետև բոլոր մնացեալը անհատականների բազմութիւնն է, իրերի և առարկաների յոգնակին: Կարճ, անհատի կեանքը, բազմութեան կեանքը, մի երազ էր, որից մեզ զարթեցնում է «պանթէիստը»: Մի խօսքով բոլոր մետաֆիզիկների, ինչպէս և Պլատոնի համար, ինչ որ հասարակ մահկանացուն համարում է իրական, ստերների մի շարժում է մի քարանձաւի խորքում: Իսկական իրականը, իսկական արևը, այլ տեղ է. և իմաստունը տեսնում է արդէն այդ արևը կիսով չափ ազատած. այսինքն կիսով չափ զարթնած:

Կրօնն էլ ի մասնաւորի մի վերարթնացում է (reveil). Ի՞նչ է մտածում իսկական հաւատացողը: Որ ներկայի կեանքը ժամանակաւոր է միայն, փորձանքի և նեղութեան կեանք, դա իսկական կեանքի նախերգն է միայն. որ, եթէ այս կեանքը իրական է, այնուամենայնիւ կայ մի աւելի բարձր իրականութիւն, որ ընտրեալները տեսել են և որ մենք կարող ենք նախզգալ: Այն մարդը, որի հաւատը բորբոք է խորն է, համարեա՛ր արդէն բարձրացած, վեր է հասարակ կեանքից. նա կտրւած է ժամանակից, նա արդէն մուտ է գործում յաւիտենութեան մէջ. ներկայի տանջանքը նրան թւում է երազի տանջանք. զգայարանների օրանցիկ ուրախութիւնները նրան չեն դիպչում. մեր աչքին երևող տիեզերքը շոգիանում է այն բանի առաջ, որ նա սկսում է տեսնել. նա հետզհետէ դուրս է գալիս այն քնից, որ տեղից դուրս գալու զուր փորձեր են անում մարդիկ դեռ վաղուց, և նա սկսում է ճանաչել իր անձն ու իր շրջակայքը: Ինչ է մի սրբի կամ մի մարտիրոսի հոգին, չէ՞ որ նա երկրային երազանքից որոշապէս վերարթնացած հոգի է:

Մեր անալիզի արդիւնքից անշուշտ, պէտք չէ ետ փախչել: Եթէ մենք «իրականութեան» մէջ ոչինչ չգտանք, որով նա արմատապէս որոշւէր երազից, այդտեղ ո՛չ սարսափելի, ոչ էլ զարմանալի բան կայ: Մենք այդտեղ հանդիպում ենք կրօնական և մետաֆիզիկական ամե-

նամեն՝ վարդապետություններին: Եթե ոչ թույմ է մի որոշ չափով, թե մենք բաժանում ենք հասարակ զգայություններից (sens) մենք վերստին ուրախանում ենք մեր հաւատի վրայ, որը, նոյն, «հասարակ զգայություն» է, միայն աւելի տաք և աւելի մարգարեական: Բոլոր իմաստունները հաւատում են և բոլոր մտածող մարդիկ յոյս ունին, որ կեանքը երազ է միայն, իսկ մահը նորա վերադարձացումը:

Հիմա ամենամեն՝ հոգածութեամբ նշանակենք այն եզրակացությունների իսկական միտքը, որին մենք հասանք: Ո՛չ մի հիմնական տարբերություն չկայ երազի և իրականութեան մէջ: Ի՞նչ է նշանակում այս: Հետեւում է արդեօք դրանից, որ իրականությունը երազ է, երևոյթական և քիմերիք, «երազի պէս»: Հարկաւ ոչ, այս այն կէտն է, որի վրայ մենք դեռ կանգ չենք առել:

Սովորաբար մարդ հետևեալ ձևով է դատում: Իրականությունն ու երազը նման են. ուրեմն իրականությունը երազ է: Նոյնքան բռնագբօս, սակայն աւելի խելացի է հետևեալ դատողությունը. իրականությունն ու երազը նմանում են իրար. ուրեմն երազը իրականություն է: Այն պնդումը, թէ արմատական տարբերություն չկայ երազի և իրականութեան մէջ, կարելի է բացատրել երկու, միմեանց հակառակ կերպով: Կարելի է եզրակացնել, որ «իրականությունը» կեղծ է, բայց նոյն օրինաւորութեամբ, կարելի է եզրափակել, որ երազը ճշմարիտ է և երազի առարկաները նոյնպէս իրական են, ինչպէս արթնութեանը, ի հարկէ, մի այլ ձևով, բայց վերջապէս իրական: Կը մնար գիտենալ, թէ ինչ մտքով առած և ինչ չափով նրանք իրական են, այդ բառի իսկական մտքով: Այն է երազելիս, երբ տեսնում ենք մի բացակայ բարեկամ և կամ մի անծանօթ դաշտավայր, իրաւ, մենք այդ դաշտավայրի կամ մեր բարեկամի դիմացն ենք կանգնած:

Սրանով մենք վերադառնում ենք այն հիմն հաւատին, որի կարծիքով, հոգին՝ քնած ժամանակ կտրում է տարածությունը: Եւ պիտի նկատենք, այս հաւատը մեր կարծածի չափ անմիտ չէ՝ որովհետև, ճիշտ խօսելով, սա մի հրաշք չէ՝, որ հոգին հաղորդակցութեան մէջ է հեռաւոր առարկաների հետ:

Այսպէս գուցէ կարելի լինէր հասկանալ նաև այն կասկածելի, բայց բազմաթիւ դէպքերը, որ «հեռագալական զառանգք» են կոչ-

ում, նախագագումը, գուշակութիւնները և այլն¹: Երագած առարկաների իրական լինելը կարելի էր հասկանալ մի քիչ այլ մտքով: Կարելի էր ասել, որ մենք երագում տեսնում ենք ոչ թէ հէնց առարկաները, բայց գէթ նրանց այն ձևերը, որոնք անտեսանելի են արթուն աչքերին, բայց տեսանելի հոգու համար. յամենայն դեպս, իսկ և իսկ իրական, իսկապէս մեզանից անկախ: Այս կարծիքը համաձայն կը լինէր այն գիտի (invention) հետ, որի մասին արդէն սկսել են խօսալ որոշ շրջաններում: «Երագների լուսանկարը»: Դա մեզ կը մօտեցնէր spiritների և «occulist»-ներին, որոնց վրայ, լաւ կը լինէր, որ շատ քեթևամտութեամբ չծիծաղէինք, քանի որ William Grookes և Russel Walllake-ի նման գիտնականները մեթօտիք փորձերից յետոյ հաստատում են «psychism»-ի տարօրինակ երևոյթները²: Վերջապէս յիշատակելու արժանին այն է, որ դա մեզ մօտեցնում է ծերունի Էպիկուրի խիստ հարցասիրական, Phantastike epibole tes dianoisas, թեօրիային: Էպիկուրը սովորեցնում է, որ զգայութիւնը մեզ երբէք չի խաբում, երագում լինի մեր տեսածը թէ արթուն, ամեն ինչ իրական է. երբ մի քառակուսի աշտարակ հեռից մեզ կլոր է երևում, դա պատրանք չէ. անցնելով տարածութիւնը, մեզ անյայտ ձևով նա իրաւ դարձել է կլոր, հեռացող (emane) ատոմները ճանապարհին փոխել են իրանց ձևն ու յարաբերութիւնը և մեր առաջ հասել կլոր դիրքով: Երագի մէջ, զգացութիւններն ու մտապատկերները աւելի ճիշտ են. ես երևակայում եմ մի բացակայ առարկայ, այն է, որ այդ առարկայից հեռացած (emane) ատոմները իրաւ կանգնած են առաջիս: Խելագարների երևակայածն էլ միևնոյն բանն է: Մեր զգայութիւնները մեզ երբէք չեն խաբում:

Հասկանալի է, այս թեօրիաներից ոչ մինը վճռապէս մենք չենք կարող ընդունել երագների իրական լինելու մասին: Մենք չենք կարծում թէ նրանից որևէ մինը կատարելապէս ճիշտ լինի. նրանք դէմ են մեր առողջ դատողութեան: Իսկ առողջ դատողութիւնը չի՝ կարելի արհամարհել, ինչքան էլ կամայական լինի այն, որ մենք առողջ դատողութիւնը ընդունում ենք բարձրագոյն ճշմարտութեան «կրիտերիում» (որովհետև մի դարու առողջ դատողութիւնը, մի այլ դարու առողջ դա-

1. Gurney, Myers, Podmore. Les hallucination telepathiques. Այդ երևոյթների մասին մենք առիթ կ'ունենանք խօսելու «Մութ»-ի մէջ:

2. W. Grook. Recherches sur les phenomenes du spiritualism.

տողություն չէ՝ այլ ևս), այնուամենայնիւ, մեծ անզգուշութիւն արած կը լինէինք եթէ միանգամայն անտես առնէինք այդ, կամ բռնազբօս կերպով արհամարհէինք, որովհետեւ նա մարդկային իմաստութեան և փորձառութեան եզրակացութիւնը՝ ամփոփումն է: Եւ դա մի կոպիտ սխալ կը լինէր միայն գերադասել մեր դատողութիւնն ու մեր տեսակետը: Եւ այսպէս, մենք չենք ընդունում վերևի թօրիաներից ո՛չ մինը: Մենք ուզում էինք ցոյց տալ, որ երազը այնպէս ակններն «կեղծ» չէ, ինչպէս կարծում է սովորաբար, որ նա էլ կարող է ունենալ իւր իրականութիւնը, որ մարդիկ մի քիչ շա՛տ են առաջ գնում, պնդելով, որ նա զուտ «ներքին» և քիմերական է: Առանց հերքելու «արտաքին աշխարհի գոյութիւնը», մենք հաստատեցինք, որ էական տարբերութիւն չկայ երազի և իրականութեան մէջ: Մենք պիտի ընտրութիւն անենք այս երկու կարծիքի մէջ. կա՛մ երազն է իրականութիւն, և կա՛մ իրականութիւնն է իսաբոսիկ երազ: Առաջինը մի յանդուգն եզրակացութիւն է, երկրորդը է՛լ աւելի: Առաջինը զարմացնում է հասարական զգացմունքը, երկրորդը գրգռում է նոյն զգացմունքը:

Այսպէս ուրեմն, իրաւունք ունէինք կուրօրէն չընդունելու տիրող կարծիքը երազի մասին, այն, որ մենք անմիջապէս ամփոփեցինք վերևը: Հաւանական չէ, թէ երազը մի վերարտադրութիւն, մի ցոլմունք լինի արթնութեան զգացութիւնների: Դա կարող էր, եթէ նեղը մնանք ենթադրելու, գուցէ մի տարբեր ձևի երևոյթ լինել մի իրական հանդիպումն առարկաների հետ, որ խուսափում է մեր զգայարաններից: Ես կարծում եմ մինչև անգամ, որ մի քանի տարօրինակ երազները և ֆանտաստիք կօշմարները լաւ չեն բացատրում յիշողութեան պարզ կօմքինացիայով, այնքան մեր տեսած աշխարհը տարօրինակ և տարբեր է սովորականից:

Եթէ մեզ կասեն, որ մեր երազները անվիճելի կերպով կախուած են մեր անձնական դրութիւնից և մասնատրապէս մեր օրգանների գործունէութիւնից, ինչպէս օրինակ մարտողութիւնն է, արեան շրջումը և այլն. մենք կը պատասխանենք. պէտք է ի նկատի առնել ինչ որ կապ ունի օրգանական դրութեան հետ, դրանք մեր երազում տեսած առարկաները չեն, դա յուզմունքն է, որ մեզ պատճառում են այդ առարկաները. արթուն, նոյն առարկաները լինելով մեզ տուած, նրանց պատճառած յուզմունքը կախումն ունի մեր ընդհանուր տրամադրութիւնից:

Երազի անկապությունն էլ վիճելի է: Առաջին, տեսանք, որ այդ անկապությունը կարող էր լույս երևութական լինել. նա մեր աչքին է զարնում զարթնելուց յետոյ, և իսկոյն անյայտանում քնած ժամանակ: Այդտեղ գուցէ տեսակէտը փոխելուց աւելի մի բան չկայ: Այլ և, այդ ամենը մտաւոր պարզ «գուգորդութիւնների» մեքանիզմով, կամ «երևակայութեան» կապրիսով բացատրելու տեղ՝ լաւ չէ՞ր լինի գուցէ, եթէ բացատրէինք անտեսանելի առարկաների իրական բայց հրաշալի խաղով, որ մեզ երևում է երագում, կամ ինչպէս Էպիկուրն էր ասում, ատոմների տարօրինակ կապակցութեամբ, որոնք շրջան են անում մեր չորս կողմը: Վերջապէս, երազի առարկաների իրական լինելը, որ բացատրում են, մտապատկերների խաղով, մտապատկերների փոխադարձ կենսամարտով, ամեն մի մտապատկերի երևան գալով, որ չունի հակառակորդ, կարելի էր, առհարկի բացատրել զարմանալի պարզ ձևով. այն, որ այդ առարկաները ճիշտ և իրական են:

Ահա թէ մեզ ի՞նչ է սովորեցնում մեր համեմատութիւնը երազի մասին: Արդ՝ ի՞նչ է սովորեցնում նա «իրականութեան» զգայական աշխարհի և ներկայ կեանքի մասին:

Նա մեզ սովորեցնում է որ եթէ զգայական աշխարհը իրական է, սակայն նա եզակի և վճռական իրականը չէ՛: Նա կայ, նա մեզանից անկախ է, բայց մենք ըմբռնում ենք, որ նա պիտի վերջանայ և տեղի տայ մի ուրիշին, *nous le prenons toujours au serieux, nous le prenons plus au tragique*: Մենք մտածում ենք վերաբնութեան մասին:

Նախ և առաջ, զգայական աշխարհը իրական է. գուցէ կարիք զգացւէր մշակել «արտաքին նշմարումի» (*perception exterieure*) և երազի մասին տիրող թեօրիաները:

Զգայական աշխարհի իրականութեան դէմ միակ և իսկապէս կարևոր առարկութիւնը, որ երազի առարկութիւնն է, վերացած լինելով, կարելի էր փորձել հիմնելու մի նոր թեօրիա, ամբողջովին իրական, ամբողջովին հասարակ զգայութեանը բաւարարութիւն տուող: Սկզբունքով, Էպիկուրի պէս, կարելի էր ընդունել, որ ամեն մի զգայութիւն ճիշտ է, միշտ, ամեն մի դէպքում, կա՛մ նա ծագում է յարաբերութեան մէջ իրականութեան հետ. կամ նա հէնց ինքը իրականութիւնն է, հոգու միջոցով ճանաչած:

Դրանով վերջ դրած կը լինէր այն հոգեբանութեանը, որ այնպէս վաղահաս, դարձել է կլասիք, որի համար զգայութիւնը մի պարզ պատկեր է «մեզանից դուրս դրած»: Պէտք էր մի քիչ պակաս հաւատ ընծայել այս «զգայութեան յարաբերական» լինելու մասին ընդունած մեծ օրէնքին, որ թուում է բանականօրէն հիմնած, ուր սակայն իշխում է «հեղինակութիւն»-ը, քանի որ ապացոյցի ո՛չ մի լուրջ արգումենտ չունի: Մարդ կը դադարէր «երևոյթների արտաքինի» մասին վիճելուց, նկատելով, որ այդ խօսքերը բոլորովին գուրկ են մտքից և որ, այս արտայայտութիւնը, «առարկաներից դուրս» միտք ունի, «հոգուց դուրս» ո՛չ մի միտք չունի: Մարդ մի քիչ զգոյշ կը լինէր ուսուցանելու, որ գոյները, ձայնը, և ընդդիմադրութիւնը «ես-ի վիճակներն են» (etats du moi), որը բազմաթիւ մարդոց համար համարեա միակ փիլիսոփայութիւնն է: Այնուհետև կարիք չէր լինի զգայութիւնը առարկաների յայտկուրնը համարելու, որ նրան իրաւունք է տալիս մի «սուբյեկտիւ» էակ լինելու, ծնեցնելով մի անվերջ հակասութիւն: Այնուհետև հարկ չէր լինի յայտարարելու, որ հոգին բաժանուած է առարկաներից գործարանների միջոցով, ինչպէս օրինակ՝ նեարդ, ուղեղ,- որ համարեա մի հրէշաւոր բանաձև է, քանի որ նոյն մարդիկը որ գործ են ածում այս տերմինները, վճռապէս պնդում են, «որ հոգին ո՛չ մի տեղ չի բռնում տարածութեան մէջ» և մի այլ տեղ ապացուցած են համարում, որ օրգանները, ուղեղը և նեարդները զուտ գործիքներ են միայն:

Կարճ, պէտք է նրանք համաձայնեն, որ զգայարանները ամեն բան չեն ճանաչում, բայց և պէտք է յայտարարել, որ ո՛չ մի լուրջ պատճառ չկայ կասկածելու այն քչի մասին, որ նրանք ճանաչում են: Եւ այսպէս՝ զգայարանական աշխարհն իրական է, հաստատ, անկախ մեր իմացականութիւնից: Բայց դա միակ և վերջնական իրականութիւնը չէ՝: Քանի որ արթնութիւնը ամեն բանով նման է երազին, այս կէտումն էլ նա պիտի նմանի նրան, նա էլ պիտի վերաբոնութիւն ունենայ:

Մենք թաքանօրէն չենք կարող ապացուցանել որ տեղի պիտի ունենայ վերաբոնութիւն, բայց մենք կատարելապէս իրաւունք ունինք նրան սպասելու:

Ահա թէ մեզ ինչ է ուսուցանում երազի և արթնութեան համեմատութիւնը: Երազը մի իրականութիւն է, միայն թռուցիկ: Միևնոյն ժամանակ, ներկայ կեանքը իրական է, միայն ժամանակաւոր:

«Մուրճ» «1899, N 10, էջ 1190-1199, N 11-12, էջ 1412-1423

ԳՐԻԳՈՐ ՎԱՆՑԵԱՆ

ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Մեսրոպ Թադիադեանց, Աբովեան, Ս. Նազարեան, Ելիշան, Պեշիկ-
բաշեան, Դուրեան, Պարոնեան, Ծերենց, Նալբանդեան, Գամառ-
Քաթիպա, Պոռեան, Սունդուկեան, Րաֆֆի, Շահագիր, Աղայեան,
Շիրվանզադե, Մուրացան, Լեօ, Արարունեան, Յ. Յովնաննիսեան,
Թուսանեան, Մատուռեան, Խաչակեան, Շանթ, Կուրդինեան եւ այլն:

ԶՈՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Հրատարակութիւն տիկին Մ. ՎԱՆՑԵԱՆԻ



Թ Ի Ֆ Լ Ի Մ

Ելեքտր. տպարան «ԷՊՈԽԱ» Գանձակալա փող. № 3.

1910

ԱՌՍԱԶԱԲԱՆԻ ՏԵՂ

Երկրորդ տպագրութեանն ահա յաջորդում է երրորդը. պահելով մի անգամ արդէն բռնած ուղղութիւնն ու ընթացքը, բաքիվոխուած ու հարստացրած մենք այս հրատարակութեանն աւելացրինք ըստմաթիւ յօդուածներ թէ՛ արեւմտեան և թէ՛ մանաւանդ արեւելեան գրականութիւնից:

Զանց չառանք նաև տալու թարգմանութիւններ, այնպէս որ այս գիրքը միայն «Հայ-հեղինակներ» չէ, այլ նաև «Հայ-թարգմանիչներ»:

Կենսագրութիւնների և արեւելահայ գրական շարժման էութիւնն ու ամբողջութիւնը լաւ հասկանալու համար, ուսուցիչներին խորհուրդ ենք տալիս գիմել մեր «Պատմաքննական քերականութեանը»:

Այդ քերականութիւնը ըստկացած է երկու մասերից, մինը ուսուցիչների համար, ուր մանրօրէն մշակուած ու պարզուած են միւր լեզուի էվօլուցիան պատմականօրէն. միւսը համառօտ՝ աշակերտների համար, որ ցանկացողը կարող է աշակերտների ձեռք տալ իբրև ձեռնարկ:

Արտիկանի յօդուածներում խիստ անհասկանալի թուրքերէն բառերը փոխարինուած են հայերէն բառերով, և օժանդակ բայի Յ-րդ. դէմքը՝ ա, դարձրել ենք է, մի բան, որ արդէն շատ անգամ քործադրուած է ուրիշ դասագրքերում, և կարող ենք վկայել, օգտաշահ կերպով, ինչպէս որ՝ աւելի հասկանալի լինելու համար, Ե-դիշէի, Ալիշանի, Փարպեցու և մի քանի այլ հատուածներ թարգմանուած են արեւելեան գրաբարբառի՝ աշակերտների դիւրութեան և նիւթի հեշտ իւրացման համար:

Գ. Վանցեան

1908 թ. յունվ. Թիֆլիս.

Ա. ԱՐԵՒԵԼԵՐՆ ԲՆԺԻՆ



1. ՄԵՍՐՈՊ ԹԱՂԵԱՅԱՆՑ

Ծնված է Երևան (Կարբի թաղում) 1803 թ. շուտով հօրից որբանալով, տանում են Էջմիածին և Ներսէսի կարգադրութեամբ յանձնում քուրդ անուանեալ Յովհաննէս վարդապետին, որ ուսուցանէ փոքրիկ Մեսրոպին:

Սրա աշակերտներից Մեսրոպը սովորում է կարգալ Սաղմոս, Ժամագիրք, Շարական:

1816 ին Էջմիածին է գալիս յայտնի հայկաբան Պօղոս վարդապետ Ղարադաղցին, որի մօտ ուրիշ գալիքների և սարկաւազների հետ սկսում է ուսանել Մեսրոպը զբաւար ընդհանուր թիւն, որ այն ժամանակ ամենաբարձր գիտութիւնն էր համարւում: Այնուհետև Մեսրոպը պարսկերէն է կոնդակներ դրելով և հին ձեռագիրներ արտագրելով: 1821-ին Մեսրոպին տալով գալութեան չորս աստիճան, ձեռնադրում են սարկաւագ: 1822-ին նա մտադրւում է գնալ Պարիզ բան սովորելու, բայց պարսից պատերազմի պատճառով փոխում է իր ճամբան և ուղևորւում Հնդկաստան, ուր մի առժամանակ ապրում է Դաքա քաղաքում Երուսաղէմի նուիրակ Աբրահամ վարդ. մօտ: Մեսրոպի խնդիրքով այս վարդապետը միջնորդում է անգլիացի Հիբեր եպիսկոպոսի մօտ, որ Մեսրոպին ընդունի իր ձեմարանի մէջ անգլիերէն սովորելու:

Եպիսկոպոսը սիրով յանձն է առնում և կրթութեան ծախսն էլ վերցնում է իր վրայ. այնուհետև այդ եպիսկոպոսը կանոն է հաստատում, որ երկու հայ մանուկներ

ձրի սովորեն անգլիական հոգևոր ճեմարանում, այդ առթիւ ճեմարանի մէջ հայ տպարան էլ է հաստատուում: 1826-ին մանկիւով ճեմարան Մեսրոպն այնտեղ մնաց մինչև 1830 թ. և անգլիերէնից հայերէնի թարգմանեց Դիցաբանութիւն և Պարկաստին անունով գրքերը՝ հեղինակութիւն Հիւրըր եպիսկոպոսի, մէկ էջը անգլիերէն, միւսը հայերէն և սակեց 1830-ին ճեմարանի տպարանում:

1831-ին Մեսրոպը թողնելով ճեմարանը, գնում է Պարսկաստան և դառնում ուսուցիչ Նոր-Ջուղայի հայոց ուսումնարանում: 1833 թ. կարգւում է ուսուցիչ էջմիածնի զպրոցին և քարտուղար Յովհաննէս կաթողիկոսի: Սակայն, մի տարի չանցած ջուղայեցոց խնդիրով կրկին վերադառնում է Նոր-Ջուղայ և կարգւում ուսուցիչ (1834 թ.): Այս տարին նա թողնելով հոգևոր կոչումն ամուսնանում է: 1835-ին մենք նրան տեսնում ենք Թաւրիզում, որպէս ուսուցիչ արքայազն Մելիք-Ղասում Միրզայի, որին նա սովորեցնում էր անգլիերէն: Թաւրիզում մեռնում է նրա կինը: 1838-ին Մեսրոպը կրկին վերադառնում է էջմիածին և այնտեղից էլ անցնում Պոլիս: Այստեղ էլ իր անհաշտ և անհանգիստ բնոյթի շնորհիւ հազիւ է կարողանում մի տարի գիմանալ: Որովհետև Մեսրոպը յարաբերութիւն ունէր ամերիկայի միսիօնարների հետը, կասկածուելով իրրեւ բողոքական նա ենթարկւում է հայաձանքի և Պոլիսից փախչելով կրկին ուղեորւում է Հնդկաստան. ճանապարհին գերի է ընկնում արաբաց ձեռքը, տարւում է Արվիլայ անապատը, որտեղից մի կերպ ազատուելով, կրկին ընկնում է Հնդկաստան և ապաստան գտնում Կալկաթայի անգլիական ճեմարանում (1840 թ.): Այստեղ նա տպում է «Պատմութիւն հին Հնդկաստանի», ամուսնանում է կրկին անգամ և թողնելով զրական զբաղմունքը սկսում է պարապել մանրավաճառութեամբ, որ ի հարկէ իր գործը չէր: Շուտով հայ վաճառականները Մեսրոպի աշակցութեամբ միանալով հիմնում են «Արարատեան ընկերութիւնը», որի նպատակն էր լրագիր հրատարակելով բարձրացնել տեղա-

ցի հայերի մտաւոր վիճակը և ահա 1845 թ. Մեսրոպի խմբագրութեամբ սկսում է լոյս տեսնել «Ազգասէր» լրագիրը, որ ընդհատումներով տևեց մինչև 1852 թ. Այս լրագրի լեզուն նախ աշխարհաբար էր, ապա դարձաւ գրաբար, որովհետև Հնդկաստանի հայերը չէին համակրում աշխարհաբարին:—Այսպիսով Թաղիադեանը աշխարհաբարի առաջին հիմնադիրներից մինն է:

Լրագրի դադարումից յետոյ Մեսրոպը տեղափոխւում է Զեղրա քաղաքը. շուտով մեռնում է նրա երկրորդ կինը և Մեսրոպը կամենալով կրկին վերադառնալ Նոր-Ջուղայ, մեռնում է 1858-ի յունիսի 10-ին Շիրազում, ուր և թաղւում է հայոց եկեղեցու բակում:

Մեսրոպի գլխաւոր գործերն են.

1. Դիցաբանութիւն.
2. Պաղեստին.
3. Պատմութիւն հին Հնդկաստանի.
4. Ազգասէր լրագիր 1845—1852 թ.
5. Պատմութիւն պարսից.
6. Վէպ Վարդգէսի.
7. Վէպ Վարսենկան.

8. Սօս եւ Սօնդիպի և այլն. նրա գրութիւնների զըլուխ գործոցն է այս վերջինը, ուր հայ իշխանագուն Սօսը սիրահարւում է հնդիկ իշխանուհի Սօնդիպուն. գրութիւնն է բանաստեղծական մեծ տաղանգով և մի սքանչելի լեզւով:

Նրա գրաբար գործերը կեղծ կլասիկ ուղղութեամբ են գրուած, ուր սովորական հերոսների հետ հանդէս են գալիս աստուածներ և բաղդը, որպէս իրական անձեր, և այս կամ այն կերպ տնօրինում հերոսի վիճակը: Այդ գործերի մէջ բացի բանաստեղծական խոշոր տաղանդից երևում է նրա խորին հմտութիւնը գրաբարի մէջ, որ այնպէս պերճ ու սահուն դուրս է ցայտում Մեսրոպի զրչից, կտրծես կենդանի լեզու լինի: Այդ գործերի մէջ երևում է նաև խորին հմտութիւնը դիցաբանութեան, արեւելեան ազգերի պատմութեան և նոյնպէս լեզուաբանու-

թեան մէջ: Այս գիտութիւններն, ինչպէս երեւում է, Մես-
րոպն ուսել էր անգլիական հոգևոր դպրոցում:

Սակայն, Մեսրոպի գլխաւոր արժանիքը նրա աշխար-
հաբար հատուկտոր գործերն են, իր ժամանակի համար
նշանաւոր լեզուի կողմից՝ որպէս ամենահին և ամենա-
մաքուր աշխարհաբար, միւս կողմից որպէս տաղանդաւոր
գործեր մի սուր, անկեղծ և մեր մէջ մի անօրինակ եր-
գիծաբանութեամբ: Մեսրոպի երգիծաբանութեան գլխաւոր
առարկան իր իսկ անձն է, որ քննադատում ու ծաղրում է
մի նախանձելի անաշտութեամբ, կարծես մի օտարական
լինի:

2. ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆՅԻՆԵՐԻՆ

Աստուածասէր և ազգասէր հասարակութեան հայոց
փրկեալ քաղաքին Երևանայ, սրբակրօն քահանայից, բա-
րեծնունդ իշխանաց և համայն բարեպաշտօն ժողովրդոց,
որդիապարտ ռիւոյ նուէր.

Աչքներդ լոյս, որ մեր քաղցր աշխարհն պարսից
դառն չարչարանքիցն ազատուեց, Քրիստոնի տէրութեան
ներքոյ ընկաւ: Փառք բարերարին Աստուծոյ, որ այսու-
հետեւ աւել նեղութիւն չէք ունենալու, ազատ քաղաքի
քաղաքացի պիտի անուանիք, ձեր ազգասիրութեան՝ ի-
մաստութեան լուրն և արուեստից յառաջադիմութիւնն
բոլոր աշխտօր պիտի տարածվին:

Իմ լաւ քաղաքացիք, էսպէս երջանիկ բախտի որ
դուք էք պատահել, կարծեմ որ մեր նախնիքն ևս Արշա-
կունի թագաւորութեան ժամանակումն էլ չէին պատա-
հել, գերա՞ թէպէտ և թագաւորութիւնն իւրանցն էր, սա-
կայն բարբարոսութիւն և զուլումն պակաս չէր: Ուրեմն
աղաչեմ, նախ՝ աղօթքս առնէք, որ Աստուած ամենաողոր-
մած Կայսերն Նիկողայոսի աթոռն միշտ հաստատ պահի,
սուրն կտրուկ և ամեն թշնամեաց վրայ յաղթող: Ապա՝
աղաչեցէք, որ նոյն Աստուածն մեր ազգին սէր, միաբա-

նութիւն տայ, երկար կեանք և բարի յաջողութիւն, որ կարենան ճանաչել թէ ի՞նչ է լաւն և հետեիլ նմին:

Մնաց որ, ես ծառայս ձեր թվին 1823-ումն սրբազնակատար կաթողիկոսի հրամանաւն Հաղբատիցն ելայ, շատ չարչարանքով հասի Հնդստուն, մին տարի պարապ դէս ու դէն ընկայ, երկրորդ տարումն Կալկաթու հայոց վարժարանումն վարպետութիւն արի, յետոյ սաւրբ Երուսաղէմի նուիրակ Աբրահամ վարդապետի շնորհովն ծանօթացայ Ինգլիզի եպիսկոպոսին, որոյ անունն էր Ռիչինսլոք Հիլըր. մին խիստ լաւ և ողորմած կարգաւոր, որ իւր խարճովն տվեց ինձ իւրեանց մեծ վարժատունն, և ես ներկայ Աստուծոյ ողորմութեամբ սովորում եմ լատինի, ինգլիզի, յունաց և պարսից լեզուն և այլ զանազան արհեստանի: Վերջապէս երբ որ լսեցի ներկայ մեր աշխարհի ազատութիւնըն, սիրտս ուրախութեամբ վառվեց, ֆռանգ ազգաց լուսաւորութիւնն տեսնելով և մեր ազգի անլուսաւորութիւն տեսնելով, նախանձ մեծ ընկաւ հոգիս, և թէպէտ ես ոչ շատ փողատէր վարդապետ եմ և ոչ վաճառական, ոչ կարգ ունիմ, ոչ աստիճան, սակայն Աստուած՝ որ միշտ տկարաց ձեռքովն մեծ մեծ բաներ այ կատարել, վստահացնում այ ինձ իմ կարեաց գեօրայ իմ ազգիս, իմ քաղաքիս և իմ ծնող աշխարհիս պիտանի լինեմ ձեր շնորհքովն: Բայց այս իմ պիտանութիւնս ուրիշ կերպով չէ լինելու, եթէ ոչ վարժատուն հաստատէք և մեր երեխայից միտքն լուսաւորէք:

Եւ մին խնդիր գրեցի Վրաստանու Ներսէս արքեպիսկոպոսին թէ՛ որովհետեւ Ձորագեղի մօտի անապատն քաղաքի մէջտեղն լինելով, այսինքն Շհարի, Կոնդի և Ձորագեղի միջումն, հեշտ կլինի մանկանց համար յամէն տեղաց հաւաքելի անդ վասն կարգալու և որովհետեւ բերթին, բազարին ու զետին մօտ այ, շատ յարմար եմ համարում, որ տեղն մին քաղաքական վարժատուն հաստատվի մեր ազգի լուսաւորութեան համար և Երեւնայ առաջնորդի աթոռն փոխվի տանվի Կոզեռի մօտ սուրբ Զինաւոր եկեղեցին: Նաև գրել եմ, որ եթէ սրբազանը

հաճենայ շնորհել մեզ էն տեղն, ուրեմն գրի ինձ, որ ես տեղիցս զանազան ազգի կարդալու գրքեր և տպարան, որքան իմ աղքատ զօրութիւն կը խոստանայ՝ երբեմն և գամ անձամբ աշխատեմ վասն ձեր որդւոց և իմ եղբարց լուսաւորութեան:

Արդ, իմ ազնիւ քաղաքացիք, խնդրեմ, որ զիրս ձեզ հասնելէն ի բաց շնորհ առնէք շհարցիք, կոնդեցիք, կարբեցիք և ձորագետցիքդ հաւաքվիլ նոյն անապատումն, յառաջ սուրբ քահանայիցն խնդրել որ աղօթք առնեն առ Աստուած վասն բարի յաջողութեան գործոյն, ապա էս իմ աղքատ գրութիւնս կարդացէք, խորհեցէք, եթէ ձեզ ընդունելի լինի իմ առաջադրութիւնս, ուրեմն միաբանութեամբ երկու արզի զրեցէք, մինն սրբազնակատար կաթողիկոսն և միւսն Ներսէս սրբազանին: Եւ խնդրեցէք, որ էդ տեղն ազգին ընծայ շնորհեն ձեռագրով, մոհրով և դապալայով: Եւ երբ Աստուած կատարի ձեր խնդիրքն ի բարին, շուտ ինձ մին գիր գրեցէք, կաթողիկոսին և սրբազանին գրած թղթերի օրինակքն նորանում փակեցէք, ուղարկեցէք Թաւրիզու ինգլիզի դեսպան Մէկղոնալդ հազարապետի ձեռքը, նա շուտով կալկաթա կը հասցնի: Երբ ես ձեր գիրն գտնիմ, կը դամ Աստուծով և էնպէս կը գամ, որ կուրախանաք:

Իմ ազնիւ քաղաքացիք, գիտեմ սր մեր աշխարհի այսքան երկար ժամանակաց գերութեան տակ մնալն գիտութեան յարգն ոչ կարէ ներկայ լաւապէս ցուցանել ձեզ, բայց յուսամ, որ շուտով կարողանէք ճանաչել: Գիտութիւնն էն ազնիւ թաղուհին այ, որ հախ այ՝ աղքատ հագուստով բազմաւորաց դռանն կը դեգերի՝ ամմա՝ թագաւորաց թագին պարծանք ու փառք այ: Տէրութիւն չկայ, որ էս անտէր գիտութեամբս կանգնած և պանդում չլինի: Ռուսաց էդ մեծ կայսրութիւնն, թէ յառաջ քան զսուրբ Պետրոս իւրեանց իմաստասէր թագաւորն ի՞նչ էր և ներկայ ի՞նչ, անյայտ է ձեզ: Մին երեսայ եթէ գրել կարդալ գիտենայ, էն արուեստանին, որ բազում չարձարանքով վեց կամ եօթն տարումն այ սովորում, մին երկու տարումն կարէ հեշտ ու հանգիստ սովորել, էն սո-

վորած արուեստն հնարքով հեշտացնել և նոր արուեստանի ևս հնարել:

Իրաւի արուեստից անուան յիշելով այնքան եմ ամաչում, որ կարող չեմ ասել, զերա, մեր խեղճ աշխարհքն ինչ մին լաւ արուեստ ունի, ոչինչ: Եւ արուեստանին, որ չորս հոգար տարով յառաջ աշխարհումն կային, ներկայ էլ էտոնք են մեր Հայաստանու արուեստանին և ինչպէս կոպիտ սովորում են, էնպէս էլ կոպիտ սովորցնելով գնում են: Արուեստ պայծառացնել չեն գիտում, նոր արուեստ դանել չեն կարում, եթէ լսում են, որ մին տեղ աղջիկ գրել կարգալ այ սովորում, զարմանում են. երբ ինզլիկ կամ ֆռանդ են տեսնում, կարծում են թէ՛ Աստուած է յերկնից իջել ոտներն ամպաթաթախ: Եւ ինչ է պատճառն, աղաչեմ, եթէ ոչ գիտութիւնից զուրկ մընալն: Կարծեմ ինձ վրայ կը ծիծաղէք եթէ ասեմ, որ ինզլիկի և ֆրանգի կնանիք և դատերքն վեց և եօթն լեզուի կարգալ գրել գիտեն, մեծ մեծ գրքեր են շարադրում, տպում, ասպարարութիւն, ձեւ, կար, վաճառականութիւն, լաւ սագ ածել, պար գալ և այլն: Բայց յուսամ երբ որ ազնուութեան հոգին կը նորոգվի ձեր միջումն և դառն գերութեան քաշութիւնն կը մօռանաք, էն մաստը կիմանաք թէ ինչ է իմ լացն: Ա՛խ, իմ լաւ քաղաքացիք, ա՛խ, հոգիս հարայ այ կանչում, հին խմորն թողէք, նոր ազգի լուսաւորութեան և պայծառութեան հետեւեցէք:

Ամօթ չի՞ ձեր իշխանագուն որդւոց համար դադարկ բուշէքումն ման գալ կամ մենակ անտաշ դարբնութիւն, խառատութիւն, կատէպանութիւն (այգեպանութիւն) և թթի դուշ քշել սովորել: Ամօթ չի՞ ձեր խաթուն դատերաց համար մենակ տուն սրբել սովորել, և մին գնձոտ մինթանայ (շրջագետ) ձեւու համար դատաքը կռնատակին դնէ դուռ ընկնել: Ո՞ւր է ձեր վեհ հոգին, ո՞ւր է ձեր ազնիւ փառքն, ո՞ւր է ձեր աշխարհի ծանօթացած անունն, կորեան արգեօք, ո՛չ: Աստուծոյ յատուկ ողորմութիւնն բացվել է ձեր վերայ, իմ ազնիւ քաղաքացիք, մի ասէք թէ ջանք անենք, փող ժողովենք, լաւ ապրենք. մոխիր է

սեր փողն, փուշ է մեր կեանքն, սնտախ է մեր յոյսն, եթէ չենք ջանալու, որ մեր ազգի երեսայիցն էն լուսաւորութեան դուռն բանալ, որ վաղն և միւս օրն կարողանան մարդի միջում մարդ երևիլ:

Պարտ է ուրեմն Աստուծոյ ողորմութիւնն ոտնատակ չտալ, նորա ձեզ տուած ազատութիւնն անմահ փրկութիւն համարել. ջանալ որ ձեր խանգաղայ որդիքն կարողանան իմաստութեամբ թուր բռնել ընդդէմ թշնամեաց Աստուծոյ և բարերար կայսրի ձերոյ և ձեր աղջիկներին՝ զրիչ, նոքա՝ քաջութիւն առնեն և սոքա նորանց քաջութիւնն գրեն, նոքա դառնան քաջ զօրք և զօրականք և սոքա քաջ իմաստուն և լաւ տանտիկնայք. և եթէ կարենայ միւր աշխարհն մին անգամ իւր որդիք և դստերքն էսպէս կատարելութեամբ ծաղկած տեսնել, չզիտեմ, որ մին Ֆրանգի աշխարհիցն պակաս կը մնայ, թէ լուսաւորութեամբ, թէ արուեստով, թէ ազնուութեամբ և թէ երջանկութեամբ, և ոչ թէ միւսիցն:

Ահա էս ա իմ ցանկութիւնս իմ քաղցր աշխարհիս համար, եթէ որ հաճելի կը լինի վերն գրածիս համաձայնիլ և կտտարել, ուրեմն հեշտ է, մենք հիմն կը դնենք և լստուած կը շինի և ես ուրախ կլինեմ ապրել ձեզ համար՝ և մեռնել ձեզ համար: Ապա թէ ոչ, էլ ուրիշ չեմ ու չու՝ մի պատճառ չունէք, և եթէ զանց կառնէք գլխից ըստդ անելու համար, առաջի ատենի Քրիստոսի պարտականն դուք էք և դուք պիտի լինէք. ողջ լերուք, մնամ ազնուութեան ձերոյ խոնարհ ծառայ Մեսրոպ Դաւթեան Թաղիադեանց:

Ի Կալկաթա Նոյ. 1. 1828. Ինգլիզի եպիսկոպոսի ձեմարանում:

3. ՏԻԿԻՆ ՍԻՐՎԱՐԴԻՆ

Սիրելի Սիրվարդ իմ, բարով ողջանաս,
Թանգում օրիորդին դիտանի դնաս:

Մեսրոպը նշանուած էր Թանգում օրիորդի հետ, նրանց միջնորդ էր եղած ոմն տիկին Սիրվարդ, որ հիւանդ էր:

Շատ կարօտ բարեւ տաս և հասկանաս,
Թէ էրբ այ իւր կամքն, որ իրար տեսնենք:

Ես քանի օր այ դու տկար տեսայ,
Սիրտս զնաց հետը, միտքս մոլոր այ,
Թէ Աստուած կըսիրես, երբ տեսնես ասա,
Որ եթէ հաճենայ իրար հետ խօսենք:

Թէ որ ինքը թանգ այ, ես էլ չեմ էժան,
Այլոց չհաւատայ, բոլորն էլ գիժ ան.
Ինքն իմն այ՝ ես իւրն մինչև յաւիտեան,
Եթէ որ կամենայ իրար հետ ապրենք:

Աստ ափսոս, որ կարգալ չես գիտում,
Սիրածիդ գրածն սրտում չես գրում.
Քեզ համար պատարաստ է ազնիւ գիտութիւն,
Եթէ շուտ կամենաս իրար գտանենք:

Հայի՛ք որ ջահիլ այ, գեռ հասկանում չի,
Միշտ սիրվել ուզում այ, ինքն սիրում չի.
Բայց և լաւ սիրելոյ կերպն կըսորվի,
Եթէ որ ցանկանայ իրար հետ ընենք:

Մ. Թադևոսեանց

1830—31 թ.

դիտանի գնալ—այցելել: Դոր—դրան: Հայի՛ք—ափսոս:

4. ԽԱՉԱՏՈՒՐ ԱՅՈՎԵԱՆ

Խաչատուր Աբովեանը ծնունել է 1804—5 թ. Երևանի մօտ, Քանաքեռ գիւղում: 10 տարեկան, հայրը նրան տանում է Էջմիածին ուսման տալու և յանձնում է Անտօն եպիսկոպոսին, 1820—21 թ. նա իր հոգաբարձու Անտօն եպիսկոպոսի հետ գալիս է Հաղբատ և ապա Թիֆլիզ, որ Ս. Նազարեանի հետ միասին սովորում էր յայտնի հայկաբան Ղարադաղցի Պօղոս վարդապետի մօտ: 1823-ին բացւում է Ներսիսեան դպրոցը, ուր և մտնում են Նազարեանն ու Աբովեանը:

Այնուհետև Աբովեանն էջմիածնումն էր իբրև սարկա-
ւազ և տիրացու: Երբ 1829 թ. Հայաստան է գալիս պրոֆ.
Պարբոտը Մասիսը բարձրանալու, Աբովեանն ընկերանում
է Պարբոտին իբրև ուղեկից և թարգման. շատ սիրելի է
դառնում պրոֆեսսորին: Լինելով վերին աստիճանի ու-
սումնասէր, Աբովեանը խնդրում է Պարբոտին, որ իրան
տանի հետը Գորպատ ուսումը շարունակելու: Պարբոտի
միջնորդութեամբ ուսւ կառավարութիւնը թոշակ է տալիս
Աբովեանին Գորպատում ուսանելու և 1830-ին մենք ար-
դէն նրան գտնում ենք Գորպատում: Վեց տարի Գորպա-
տում մնալուց և ուսանելուց յետոյ. նա վերադառնում
է հայրենիք, բայց աջողութիւն չի ունենում, սրովհետև այն
ժամանակուայ հայերը կարծում էին, որ բողոքական գեր-
մանացիների մէջ կրթուած Աբովեանը խմորուել է բողոքա-
կանութեամբ, ուստի և Յովհաննէս կաթողիկոսը մերժեց
նրան տալ թէ կուսակրօնութիւն և թէ ուսուցչութիւն:
Ստիպուած՝ Աբովեանը մտնում է արքունի ծառայութեան
և կարգւում է տեսուչ նահանգական դպրոցի: 1839-ին՝
արդէն հոգևոր կոչումից հրաժարուած, ամուսնանում է մի
գերմանուհու հետ: Նա մի դասագիրք է հրատարակում,
բայց աջողութիւն չի գտնում, որովհետև արգելում են աշ-
խատնալար դասագրքի գործածութիւնը: 1840 ին Աբով-
եանը գրում է իր «Վէրք Հայաստանին», որով և դնում
է ամենամեծ հիմնաքարը մեր ներկայ գրական լեզուի: Ին-
քը, սակայն, չտեսաւ իր այս գործի տպագրութիւնը, ոչ
էլ վայելել կարողացաւ գրական մարդու համբաւ:

1843-ին Աբովեանը տեղափոխւում է Երևան աւելի
ցածր պաշտօնով, իսկ 1847-ին բոլորովին արձակւում է
պաշտօնից. 1848 թ. ապրիլի 2-ին, լուսադէմին, հեռանա-
լով իր տանից, անհետ կորչում է:

Աբովեանի «Վէրք Հայաստանին» շատ ու շատ տեսա-
կէտներով մի վերին աստիճանի նշանաւոր գործ է. դա
հայերէն առաջին վիպասանութիւնն էր, գրուած պարզ,
հասարակ, նոյնիսկ ռամիկ լեզուով, այնպէս, ինչպէս խօ-
սում էին Գանաքեռ գիւղում: Այն ժամանակուայ համար,

երբ ամենքը սովոր էին կարգալ ու գրել միմիայն գրաբար, դա մի շտեմնուած քայլ էր, որ կարող էր անել միայն Աբովեանին պէս տաղանդը:

Սկսած նախապատմական ժամանակներից, դուք ոչ մի տեղ հայ ժողովուրդը չէք տեսնում: Աբովեանն է, որ առաջին անգամ ծանօթացնում է մեզ հայ գիւղացու հետ իր տիպային պարզութեամբ. նրա կեանքն ու կենցաղը, նրա ցաւերն ու հոգսերը, ուրախութիւնն ու վիշտը, նրա կինը, մայրը, զաւակը, ընտանիքը, գիւղը, համայնքը սովորոյթները, լեզուն, մի խօսքով հայ գիւղն իր բոլոր բնորոշ գծերով: Դա մի հսկայական գիւտ էր, որ մեր գրականութեան մէջ մտցրեց Աբովեանը՝ լոյս աշխարհ հանելով բուն հայ ժողովուրդը դարաւոր անյայտութիւնից: Մի Նազարեան, մի Նալբանդեան, մի Պատկանեան, Բաֆֆի և Պաօշեան կարող էին երևան գալ ու գործել միայն այդ գիւտից յետոյ: Նոր էին նոյնպէս բնութեան հրաշալի և գունեղ տեսարանները նկարուած մի ճարտար ու զօրեղ վրձինով: Նոր էր հերոսը, Աղասին, որ դարաւոր ստրկութեան դէմ առաջին բողոքող հերոսն էր մեր մէջ:

Աբովեանը նկարագրում է պարսիկների տուած տանջանքներն ու տառապանքը հայ ազգին, նրա վէպի հերոսը՝ Աղասին սպանում է պարսիկ ղինուորներին, որոնք եկել էին Քանաքեռ՝ մի հայ աղջիկ տանելու պարսիկ Սարգարի համար: Աղասին իր ընկերների հետ ստիպւում է փախչելու. անցնում է Տաճկա-Հայաստան, ուր նոյն տառապանքն ու թշուառութիւնն է տեսնում: Ամեն տեղ օգնելով հայերին, Աղասին գնում է Անի, որ նրա վրայ առասելի տպաւորութիւն է թողնում: Վերջը միանում է ռուսաց զօրքին՝ հայրենիքի ազատութեան համար մարտնչելու և սպանւում է Երևանն առնելուց յետոյ մի պարսկի ձեռքով:

Գիրքը գրուած է այնպէս գգացուած, տյնքան տաք ու կրակոտ, հեղինակի երևակայութիւնն այնպէս բոցավառ ու ջերմ է, լեզուն տյնքան հարուստ, պարզ և անպաճոյճ, նկարագիրն այնքան բնական, սրտաբուլիս և ոգեւից, որի

Նմանը մեր դրականությունն մէջ առհասարակ քիչ կարելի է պատահել: Գիրքն ամբողջովին տոգորուած է հայրենիքի, ազգի և ժողովրդի ցաւերի նկարագրութեամբ: Վէրք Հայաստանին մի կանոնաւոր վէպ չէ, այլ մի հայրենասիրական պօէմա, գրուած բոմանտիկ ուղղութեամբ. նկարագրութիւնների ընդարձակութիւնն ու հեղինակի զգացումների անզուսպ զեղումը վնասել են գործի գեղարուեստական ամբողջութեանը դարձնելով նրան «Ողջ հայրենասիրի», ինչպէս գեղեցիկ բնորոշել է ինքը, հեղինակը: Դա բանաստեղծական պատկերների մի հաւաքածու է, իբրև ամբողջութիւն բաւական թոյլ, բայց իբրև առանձին-առանձին հատուածներ, շքեղ, հրապուրիչ, խորապէս անկեղծ, փարթամ և անզուգական: Աբովեանի ոճը նման է մի հեղեղի, որ երկարատև երաշտից յետոյ յանկարծակի թափւում է մի այնպիսի յորդութեամբ, այնքան ուժգին և յորդառատ, որ ամեն ինչ տակն ու վրայ անելով առաջ է տանում, յեղափոխելու ժամանակակից մտքերի հոսանքը, նոր ճանապարհ բաց անելու այդ մտքերի համար և նոր ընթացք տալու նրանց... և նա հասաւ իր նպատակին: Մի հուժկու հարուածով պէտք էր կտրատել զբաւրի կաշկանդիչ կապերը, մի «Հայրենասիրի ողջով» պէտք էր իմաց տալ նորածին լեզուի զարթնելը, մի սրտամորմոք, յուզիչ լեզուով պէտք էր երևան հանել հայ ժողովրդին զարաւոր անյայտութիւնից: Լեզուով, ձևով, նիւթով և էութեամբ պէտք էր մի նոր զրական կոթող ստեղծել: Այդ ամենն արաւ Աբովեանը, և անյայտացաւ, այդ բառի իսկական իմաստով, — առանց վայելել կարենալու իր գիւտի և իր գործի մեծութիւնը: — Մինչև իսկ այսօր, 60 տարի յետոյ, մեր հեղինակներից ոչ մէկը չի կարող մըրցել Աբովեանի հետ զգացմունքների խորութեամբ և ոճի զօրութեամբ: Անցեալից նրա հետ համեմատել կարելի է միայն Գր. Նարեկացուն:

Աբովեանի մանր գործերը

Վէրք-Հայաստանին թէպէտ տպուեց բաւական ուշ, գրուելուց 18 տարի յետոյ, բայց առանց ազդեցութեան չմնաց մեր

գրականութեան վրայ. մեր լաւագոյն հեղինակները Արտվեանի աշակերտներն եղան.

Մինչև այսօր էլ անյայտ մնացին, չգնահատուեցին և ոչ էլ կարգացուեցին Արտվեանի երկու այլ գրուածքները, որոնք սակայն իրանց ժամանակին մի խոշոր բաց պիտի լրացնէին, եթէ տպուած լինէին: Դրանցից առաջինն է «Օվսանայ կամ սիրոյ մի պատմութեամբ»: Դա աշխարհաբար առաջին վէպն է, գրած հաւանօրէն 1841-ին. վէպի ամբողջութիւնը, հանգոյցն ու սիրոյ ինտրիգան պատմուած են ճարտար ու շնորհալի կերպով:

Շատ շնորհալի և նոյն իսկ տաղանդաւոր գործ է «Փէօդորայ կամ որդիական սէրը». գրուած 1841-ին. բաղկացած մի գործողութիւնից և իննը տեսարաններէից:—Սա մեր առաջին թատերական գրուածքն է աշխարհիկ լեզուով:

Զգացման խորութեան ու անկեղծութեան հետ այս պիէսի մէջ Արտվեանը մեծ աջողութեամբ պահպանել է գեղարուեստական չափ և հանգոյցի լարուող հարցասիրութիւն: Եթէ այդ պիէսը ինքնուրոյն գործ է, նա Արտվեանի գափնիններին աւելացնում է մի նոր ու թորմ ճիւղ: Այս երկու գրուածքներում Արտվեանն այլ ևս բովանդակ գրող չէ, այլ ըէալ վիպասան:

Արտվեանը թողել է նաև բաղմամբիւ առականը, գրուած մեծ մասամբ Կոլովի ազդեցութեան տակ, որոնցից շատերի մէջ, սակայն, պարզ երևում են նրա տաղանդի պայծառ շողերը:

Դրանք Արտվեանի գործերից բաղադրուած բացառութեամբ ամենից աւելի տարածուածներն են եղել, որովհետև իր ժամանակին դառել են դասագրքերի նիւթ և սովորուել ու կարդացուել են:

Ոմանք Արտվեանի գլուխ գործոցն են համարում նրա «Զանգի»-ն. դա մի նրաբորբոք նկարագրութիւն է հայրենի գետի: Նրամանաձայն կոչու բառերի անսահման առատութիւնը սակայն, նսեմացնում է այդ գործի գեղարուեստական արժէքը: Զանգին սկսում է բարբառով, դառնում է մաքսւր զրական և ապա վերջանում է գրաբարով, ուր պարզ երևում է նարեկացու ոճի ազդեցութիւնը Արտվեանի վրայ:—Եւ Արտվեանն էլ զգացմունքի ու ոճի կողմից աշխարհաբարի նարեկացին է, ուրի կրօնական էքստազը Արտվեանի մօտ փոխուած է հայրենասիրութեան: Տաղանդի չափը, ոճի յատկանիշները, զգացման խորութիւնն ու անկեղծութիւնը նոյնն են երկուսի մօտ էլ. տարբեր են միայն ժամանակի համեմատ ոգևորութեան նիւթն ու արտայայտութեան եզանակը—լեզուն:

Արտվեանի նշանակութիւնը շատ մեծ է.

ա. նա է աշխարհաբարի ամենամեծ հիմնադիրը.

բ. Նա է առաջին հայ վիպասանը և առաջին թատերագիրը:

գ. Նա էր, որ առաջին անգամ ճանաչել տուաւ մեզ հայ ժողովրդի կեանքն ու կենցաղը:

դ. Նա աշխարհիկ գրականութեան մեծ հիմնադիրներէից միւնն է:

ե. Նա մեր առաջին հեղինակն է և առաջին մանկավարժը և բողոքական մտքով:

Ք. Վանցեան

5. Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Քսան-երեսուն տարուց աւելի է, իմ ազիզ հէր՝ իմ սիրելի ազգ, որ սիրտս կրակ է ընկել, էրուում, փոթոթւում է, գիշեր-ցերեկ լացն ու սուգը իմ աչքիցս, անն ու ձիւր իմ բերնիցս չի պակասում, այ իմ արիւնսիկից բարեկամք, որ մէկ միտքս ու մուրազս ձեզ պատմէի ու յետոյ հողը մտնէի: Ամեն օր գերեզմանս առաջիս տեսնում էի, ամեն ժամ մահուան հրեղէն սուրբ գլխիս պտրտում էր, ամեն բոպէի ձեր սիրտն ու դարձը հոգիս էրում, մաշում էր. լսում էի ձեր քաղցը ձէնը, տեսնում էի ձեր սիրուն երեսը, իմանում էի ազնիւ միտքն ու կամքը, վայելում էի ձեր ազիզ սէրն ու բարեկամութիւնը, մտածում էի ձեր կօրցրած փառքն ու մեծութիւնը, մեր առաջին էն հիւսնալի թագաւորաց, իշխանաց գործքն ու կեանքը, մեր հայրենեաց մեր սուրբ աշխարհքի առաջուան սքանչելիքն ու հրաշքը, մեր ընտիր ազգի աննման բնութիւնն ու արած քաջութիւնները: Մասիս առաջիս էր կանգնած միշտ, որ մատով ցոյց էր տալիս՝ թէ ինչ աշխարհքի ծնունդ եմ ես: Դրախտը մտքումս էր կենդանի, որ ինձ երազում, թէ լուրջ՝ միշտ մեր երկրի անունն ու պատուականութիւնը իմ առաջս էր բերում. Հայկ, Վարդան, Տրդատ, Լուսաւորիչ քնած տեղս էլ ինձ ասում էին՝ որ ես իրանց որդին եմ. Եւրոպա թէ Ասիա ինձ անդադար ձէն էին տալիս, թէ Հայկայ գաւազն եմ ես, Նոյեան թոռը, էջմիածնայ որդին, դրախտի բնակիչը: Դաշտում թէ ժամում, չօլում թէ տա-

նը էն բարերն էլ ուզում էին, որ սիրտս պոկեն, հանեն, որտեղ որ իմ ազգի ոտը կոխել է, ու էս օր էլ կոխում է. շատ անգամ մէկ հայ տեսնելիս՝ ուզում էի եղած շունչս էլ հանեմ, նրան տամ. բայց ան, լեզուս փակ էր, աչքս բաց, բերանս բռնած, սիրտս խոր, ձեռս պակաս, լեզուս կարճ: Գանձ չունէի, որ գործով ցոյց տայի ուզածս, անունս մեծ չէր, որ ասածս տեղ հասնի: Մեր գրքերն էլ գրաբար, մեր նոր լեզուն էլ անպատիւ, որ սրտիս կարօտը խօսքով յայտնէի. հրամայել չէի կարող, խնդրէի, աղաչէի էլ՝ լեզուս մարդ չէր իմանալ, չունքի ես էլ էի ուզում, որ ինձ վրայ չծիծաղեն, չասեն՝ կոպիտ է, յիմար է...

Էսպէս բաները մտածելով, օրս ու ումբոս մաշուել էր: Շատ անգամ ուզում էի իմ գլուխս մահու տամ: Ձէի իմանում՝ թէ սրա չարէն ինչ կրլի թող լսողը չհաւատայ, ամա էս ցաւն էնպէս էր սիրտս առել, որ շատ անգամ գոչումս պէս ընկնում էի սար ու ձոր, ման գալիս, մտածում, էլ եղ սիրտս լիքը տուն գալիս...

Մէկ բարիկենդանի՝ աշակերտներս որ բաց թողի, սկսեցի, ինչ որ երեխութիւնիցս լսած, կամ տեսած բան գիտէի, տակ ու գլուխ անել: Վերջը իմ ջիւան Աղասին միտս բնկաւ. նրա հետ հարիւր քաջ տղերք էլ իրանց գլուխը բարձրացրին ու ամենն էլ ուզում էին, որ իրանց ոտը գնամ: Միւսները մեծ-մեծ մարդիկ էին, շատն էլ դեռ սաղ սալամաթ՝ փառք Աստուծոյ, Աղասին աղքատ ու մեռած, նրա սնւրը գերեզմանին դուրբան: Ասեցի՝ կեղծաւորութիւն չանեմ, նրան ընտրեցի: Միբայ էկել էր, բերնիս հասել, Տեսնում էի, որ էլ Հայի լեզուն խօսող քիչ է գրտնւում: Մէկ ազգի պահողն էլ՝ լեզուն է ու հաւատը. թէ սրանց էլ կորցնենք, վայն էկել է մեր օրին: Հայոց լեզուն առաջիս փախչում էր, երեսուն տարուայ փակ բերանս Աղասին բաց արեց: Մէկ երես բան դեռ չէի գրել, որ իմ մանկական սիրելի բարեկամ ու ազնիւ հայազգի պարոն Գօթօր Աղաֆօն Սմբատեանը ներս մտաւ: Ուզում էի թուղթս ծածկեմ, էլ չկարացի. ինձ համար Աստուած էր նրան էն սհաթին ղրկել, նրա ջանին մեռնիմ: Զօռ արեց

որ կարգամբ. բարեկամիցն ի՞նչ պէտք է թաքցրած: Սիրտս գողում էր կարդալիս՝ մտքումս ասում էի՝ թէ հէնց հմիկ որդի որ է, գլուխը կը պտըտի, սենքերը կը կիտի միւսներէ նման ու իմ օրհանութեան վրայ մտքումս էլ է հօ կը ծիծաղի, որ երեսիս չստի: Բայց փիսը ես էի, որ նրա աղ-նուական հոգին դեռ լաւ չէի ճանաչել: Վերջացնելիս՝ որ հէնց էն է թուրն էկել էր, ոսկորին դէմ առել, որ չասեց. «Թէ որ էդպէս կը շարունակէք, շատ հիւանալի բան կը դառնայ», ուզում էի վրայ թռչեմ, բերանը, էն քաղցր բերանը համբուրեմ:

Նրա սուրբ բարեկամութեանն եմ պարտական, որ մունջ լեզուս բաց արեց: Նա գնաց թէ չէ՝ կրակը ջանս առաւ: Սհաթի տասն էր առաւօտի: Էլ հաց, կերակուր միտքս չեկան: Ճանճը առաջովս անց կենալիս, ուզում էի սպանեմ, էնպէս էի վառուել: Ծնող, տուն, երեսայութիւն ասած, լսած բաներ էնպէս էին կենդանացել, որ էլ աշխարհքը միտքս չէր գալիս: Ինչ խուլ- կորած, մոլորած մտքեր ունէի, բոլորը բացուել, եդ էին եկել: Նոր էի իմասնում, որ զբաղար ու ուրիշ լեզվներ՝ մինչև էն սհաթը միտքս փակել, բխովել էին: Ի՞նչ որ ասում էի, կամ զբ-րում էն ժամանակը՝ գողացած կամ հնարած բաներ էին, էնզուր համար հէնց մէկ երես բան զրում էի թէ չէ՝ ես քունս էր տանում, ես ձեռս բեզարում: Գիշերուան մինչև սհաթի հինգը ո՛չ հացի մտիկ արի, ո՛չ չայի, չիբուխն էր իմ կերակուրը, գրիլը իմ հացը: Տանրցոց խնդրելուն, նեղանալուն, խռովելուն էլ չէի մտիկ անում: Երեսուն թա-բաղէն էն է լցուելով էր, որ բնութիւնը իր պարտքը պա-հանջեց՝ աչքերս դնաց: Սաղ գիշերը ինձ էնպէս էր երե-ւում՝ թէ նստած զրում եմ. երանի՜ կըլէր ինձ՝ թէ էն մտքերը ցերեկն էին միտս ընկել...

Չայեր, թող ինձ այսուհետեւ տգէտ կանչեն... Թող տրա-մաբանութիւն գիտեցողը իրան համբերի համար գրի, ես ձեզ համար:

10. Արուվեան

6. Հ Ա Յ Ր Ե Ն Ի Հ Ո Ղ Ը

Հայաստանի հողն էն հողն է, էն հիանալի աշխարհն է, ուր որ դրախտն էր եղեմական, ուր Աստուած բոլոր աշխարհը ջրհեղեղովը երբ որ կործանեց, Հայոց սուրբ Մաստայ սարը միայն արժան տեսաւ, որ Նոյեան տապալները նստի ու հայոց երկրիցը էլի մարդիկ բազմանան ու ուրիշ երկիրներ էլ շինութիւն գցեն. էն սուրբ հողն է, ուր որ անապարտելին Հայկ իր նիզակը ցցեց ու իր սուրբ անունովը Հայաստան կանչեց, էն ընտիր հողը շատ ուրախութիւն տեսաւ, շատ գեղեցկութիւններով դարգարուեցաւ, շատ թշնամու նախանձելի դառաւ: Դա էն սուրբ հողն է, ուր Բազրատունեանք, Ռուբինեանք՝ իրանց հազար թշնամու ձեռի անտէր մնացած հայրենիքն էլ եղ գերեզմանից հանեցին, էլ եղ նոր հոգի տուին. էն օրհնեալ հողն է, ուր Ասորիք, Պարսիկք, Հոնք, Սլանացիք, Մակեդոնացիք, Հռովմայեցիք, Արաբք, Օսմանցիք՝ ջրհեղեղի պէս վրայ եկան, հարիւրաւոր ազգ ու աշխարհ ոտնակոխ արին, ջնջեցին, սրբեցին, — թրի, կրակի մատաղ արին, որ տեղ որ սար չի մնացել՝ որ արին չտեսնի, քար չի մնացել՝ որ մարդ տակով չանի ու հարիր մեր հարևան ազգեր էնպէս են հողի հետ հաւասարուել, կորել՝ որ էս օր ոչ նրանց շունչը կայ, ոչ անունը:— Բայց սուրբ Հայոց ազգը, անյաղթելի Հայկայ որդիքը, իրանց կեանքը թագաւորութիւնը, մեծութիւնը փառքը, իշխանութիւնը, զօրքը կորցնելէն ետեւ, որ տեսան՝ թէ աշխարհակործան ջրհեղեղին, էս գազան ազգերին չեն կարող զիմանալ, աչքները երկինք գցեցին, զլիսները գոգնեցը դրին ու հազար թրի տակից, հազար կրակի միջից, սիրտ սրտի տուած, հոգի հոգու կպցրած, մինչև էս օր էլ՝ իրանց զուէրը, իրանց սուրբ հաւատը, իրանց սուրբ օրէնքը՝ էն վեհանձնութիւնովը պահպանեցին, որի օրինակը աշխարհում ոչ էլել է, ոչ կըլի: Նոյեան դէսը վեց հազար տարի Հայոց խեղճ ազգը հեթանոսի, կռապաշտի, մահմեդականի, անօ-

րէնի ձեռին էր աչք բաց անում, նրանց հետ քեալլա տալիս ու շատին շատ անգամ իր ոտի տակը գցում... Բայց կարող է վարդը ծովի միջում զօրանալ. կարող է մանուկը կրակի առաջ գիմանալ, կարող է կակող ցորենի հասկը էն կայծակին ու կարկտին համբերել, որ մեր ազգը իր թշնամուն համբերել է կամ գիմադրել:

Հայոց ազգ, Հայոց ազգ, ձեր ջանին մեռնիմ. Հայոց ազգ, Հայոց աշխարհ, էն ո՞ր կաթը ծծեցիք, որ դուք էս հողին ունեցաք, էս սիրտը ձեր միջում պահեցիք, էս հրաշքը աշխարհքին ցոյց տուիք: Էն ի՞նչ քարացած սիրտ պէտք է ըլի, որ ձեզ չսիրի, ձեր փառքը չգովի: Դուք իւրար պահեցէք, ձեր հողն ու ազգը պաշտեցէք, այ Հայ տղէք,—բայց աչքս ճամբի է, ականջս ձէնի՝ ձեր ջանին դուրբան, չթողաք, որ էս մուրազը հետս գերեզման տանեմ ու հողումը մարմինս քթըրուի, երկնքումը հողիս տանջուի, երբ իմանամ՝ թէ ձեր սէրը պակսել է, ձեր բարեկամութիւնը ցամաքել:

Խ. Աբովեան

Շ. Ե Ր Ե Ի Ա Ն Ի Բ Ե Ր Դ Ը

Լեւո քարափի վրայ՝ ցից գլուխը բարձրացնում, թամաշա է անում հանգարտ՝ հազար գլխանի դեի պէս՝ երևանում՝ հազար տարեկան քաւթառ, պառաւած, չորս կողմը խանդակով կապած, բըջիւրով դայիմացրած, սո՛ւր սո՛ւր ատամները գլխին շարած, հինգ դադաչափ հաստ պարսպով երկու տակ բռնած, մէկ ոտը կոնդումը, մէկ ոտը Դամուրբուլաղի զլխին դրած, մէկ բերանը հիւսիս, մէկը հարաւ բաց արած, չորացած գլուխն երկինքը ցցած, լէն փէշերը երկրումը փռած, անամօթ երեսը կոկած, սվաղած, հազար բնով, հազար փանջարայ աչքերը դէս ու դէն չռած, ջուխտ շանգերով Զանգուի քարոտ, զարհուրելի, սևադէմ ձորը խտտած, դռնին կըպցրած, անմազ, անլեզու, մարդակեր բերդը, ու դեղնած երեսը հեռու տեղից ծածկում,

ազան՝ աչքերը գետնին քցում, որ միամիտ տեսնողին դհա շուտով, դհա հեշտ իր ծոցը քաշի ու բիրադի, անձէն, անսաս կուլ տայ, փչացնի:

Պարսիկ նրան շինեց, խորամանկ, խաբեբայ, թէ օսմանցի նրա հիմքը դրեց՝ կատաղի, անհաշտ, ոչ գիր կայ, ոչ թարեդ: Նրա պատմութիւնը խաւարի միջուկն է, մարդ ուղիղ չի գիտի, չի լսել, բայց հազարաւոր ժամանակ՝ անահ, անվախ, պինդ երեսը լիրժ դազանի պէս դէմ տուած, որքան թօփի, թօփխանի գիւլէք էլ նրա կոշտ քամակին, նրա կարող դոշին, նրա բաց գլխին դիպան, ոչինչ չի ազդեց, քեար չարեց: Կորցրած թևերն էլ եդ սաղացրած, ջարդած ոսկոռներն էլ եդ պնդացրած՝ գլուխը վեր քաշեց, էլ եդ շունչ առաւ, վեր կացաւ, կանգնեց ուսերը դգեց, ոյորեց, սարքեց ու էլ եդ հարբա¹⁾ գալով, հաթաթայ տալով²⁾, իր գլուխը քորողի, իր շուաքի հետ խաղացողի՝ թուլութեան, փոքրոգութեան, անզօրութեան ու յիմար յանգգնութեան վրայ ծաղր անելով, ծիծաղելով, ծափ տալով, պպին³⁾ կանգնեց՝ մատը ցցեց էս հողաշէն, այլ ոչ քարաշէն բերդը ու խենէշ գիմօք՝ իր կտորած ոտները Չանգուի բերանը լցկելով, մնաց տեղը նստած, Չանգուի՝ որ գիշեր-ցերեկ, անքուն, անդարար, դժուած, կատաղած նրա բաց դոշին, նրա անիրաւ սրտին՝ իր պլոկած ջրի անբերան թրովը, քարի ուրաքով վէր հատում, զարկում է, բայց տեսնելով՝ թէ չի կարում ջիզրը հանել, վրէժն առնել, նրան քանդել, գոռալով դանգատելով, կական բառնալով, քիչ-քիչ ձէնը փորը քցում ու մոռնջ-մոռնջ երեսը կալնում, Չանգիբասարի ծոցն է մտնում ու յոյսը կտրած, սիրտը կտորած՝ տխուր դէս ու դէն ցրում, ցրնորւում ու հազար բարի, հազար պտուղ ու արդիւնք տալով, բաշխելով: ճամբէն մոլորում, կորչում ու չի կարում իր սիրուն քվորն էլայ՝ Արագին մէկ խաբար տանի, չունքի երևանու թամարգու, կարօտ բնակիչը, նրա ճամբէն բռնում, նրան սիրով խոտում, իրանց մէջը, իրանց հանդն են

¹⁾ Թարձակուել ²⁾ սպառնալ, ³⁾ յամառել:

տանում, որ նրա սուրբ կաթնահամ ջրովը՝ իրանց էրուած սիրտը հովացնեն, իրանց դառը քրտինքը նրանով լուանան, որ նրա տուած պտղովը իրանց գլուխը պահեն:

10. Արուևան

Ի՞նչ բանի է նմանցրած բերդը և ի՞նչ բանի Զանգուռ. կարելի՞ է արդեօք նկարել Արուևանի դրածը, այո՛, զա մի պատկեր է:

8. ԱՂԱՍԻ ԱՊՐ ՆԱՄԱԿԸ

«Աղասի ջան՝ Աղասի. գլխովըդ փարվան ըլիմ՝ Աղասի: —Ընչի՞ չեմ էս սհաթին կրակ դառնում՝ ինձ էրոււմ, ընչի՞ լեզուս չի չորանում, աչքս խաւարում, ընչի՞ չեմ թող դառնում, որ բալքի թէ քամին բերի, գամ, ոտիդ տակին ցրուիմ, սարէսար ընկնիմ, քարէքար, որ իմ երեսը կոխես, որտեղ որ պլուխդ դնես, որտեղ որ քուն մտնես՝ նանն ըմբրիդ մեռնի, իմ թագաւոր, իմ աղա Աղասի»:

«Տնկած ծառերդ փուշ են դառել՝ ինձ սպանում, պահած ծաղիկներդ կրակ են դառել՝ ինձ էրոււմ, խորովում, ման եկած տեղերդ՝ աչքիս լսումը մզրախի պէս ցցւում, սիրտս դուրս ճոթոում:—Ո՞ւր կսրչիմ, որ ձէնս օքմին չիմանայ, ռւր գնամ, որ աչքս՝ քո տեսած բաներն էլ չըտեսնի, միտքս քո ասած խօսքերն էլ չյիշի, ջանս քարանայ, որ էլ անունդ չտամ, սիրտս ջուր կտրի, որ էլ քո սէրը չդգամ, ումբրս փչանայ, օրս խաւարի, որ երկնքի տակին էլ չասեմ, թէ ես էլ եմ մէր, ես էլ եմ որդի բերել, ինձ էլ մէկ օր աչքալիս տուին, ես էլ մէկ օր որդու, դաւակի արևի ձէնը պէտք է ածէի,—ես էլ որ աչքս խփէի՝ մէկ բուռը հող դու պէտք է երեսիս քցէիր, դու իմ նաշը խտտէիր, դու իմ լաշը հողին տայիր, դու մըէս սուգ առնէիր.—«Հողիդ լիս դառնայ՝ այ իմ մէր, այ իմ մէր, ի՞նչ կըլէր, որ մէկ էլ աչքդ աչքիս, բերանդ բերանիս առնէր ու իստոյ Աստուած հողիս տանէր»:

«Հողիս խոր է՝ թէ հանեմ, Աստուծոն տամ. սիրտս ձեռիս չի, որ կրակը քցեմ, էրեմ. երկնքին ձեռս չի հաս-

նում, ականջդ ձենս չի ընկնում: Ղուշ է գլխավերես թըռ-
չում՝ քո անունն եմ տալիս, շունչս է բերնիցս դուրս գա-
լիս՝ քո հասրաթը ջիգեարս էրում, փոթոթում. աչքիս եմ
հուփ տալիս՝ սիրտս է տրաքում, բերանս եմ կախում՝
միտքս է ցնորում. տունն եմ մանում՝ պատերն են ինձ
դժոխք դառել. դուս եմ գալիս՝ սար ու ձոր սև օրս լաց
ըլում. երկնքին եմ նայում՝ մէկ ձէն չի գալիս, երկրին
եմ մոտիկ տալիս՝ մէկ խաբար չիմանում: Բարձին եմ զը-
լուխս դնում՝ շունչս է ինձ խեղդում, քնած, թէ դարթուն՝
դու ես աչքիս առաջին պոխտ գալիս: Արատասուքս ծով է
դառել՝ Աղասի ջան. ախ ու ոխ քաշելով շունչս կտրուել,
հոգիս մաշուել, գլխիս էլ մազ չի մնացել, որ քամուն չտամ,
երեսիս էլ տեղ չկայ, որ չըլիմ կտրատել, տան ու դռն էլ
քար չկայ, որ չըլիմ դռչիս խփել, Գլուխս ծեծելուցը ձեռ-
ներս բեղարեց. շատ լաց ըլելուցը աչքս խաւարեց, բայց
ան... ան... հոգիս իմ տուած չի, որ ասեմ՝ դուս դնա.
սաղ սաղ էլ գերեզման ժանեմ, ում ձէնը լսեմ, ում երեսը
տեսնեմ, ում հոգիս տամ, ում ստի տակին գլուխս դնեմ,
ում էս փէտացած ձեռներովս խտտեմ, ում էս շորացած
լեղևովն ասեմ, Մեռնիմ էլ, Աղասի ջան, հոգիս գլխովդ պոխտ
կըգայ, ապրեմ էլ՝ ո՞րդի ջան՝ ջանս քո ուղուրին դրած է:
Հոգիս երկնքումն ըլի՝ մարմինս քո առաջին փխնդազ.
շունչս վրէս ըլի՝ դու ես իմ սրտի մուրազն: Հոգ կըդառ-
նամ, հոգս քեզ պտուղ կըտայ, ջուր կըկտրուելիմ, քո հանդին,
ծաղկի վրայ կըթափեմ, դրախտումն ըլիմ՝ քո ծառի ճրխի-
ների վրայ բլբուլի պէս կըկանգնեմ, քեզ անուշ քուն կը-
դնեմ, աշխարհքումս ապրիմ՝ ջանս քեզ դուրբան կըտամ,
թաք դու ծաղկիս, ծլիս, զօրանաս՝ անուշիւք մեռնիմ»:

10. Աքովեան

9. ԱՂԱՍՈՒ ԿՆՈՋ ՆԱՄԱԿԸ

«Եարա՞ր որ սիրտս հանեմ, էս թղթումը դնեմ, եարա՞ր
որ բաց անես ու հաղար թուր միջումը ցցուած տեսնես,
կիմանամ էն ժամանակը՝ թէ Նազլուդ, քո ջրատար Նազ-

լուդ ի՞նչ ցաւ է քաշում, ի՞նչ օրումն է, ի՞նչ հալումն, իմ գլխի տէր, իմ ըմբռի թագաւոր՝ Աղասի: Ո՞ր սարերն են առաջդ կապել, որ գետերը ճամբէդ կարում, որ ձեռն է թևիցդ բռնում, եդ քաշում՝ ա՛յ իմ թագ ու պարծանք, որ էսպէս ինձ կրակում թողել ես, ինձ դժոխքը ղրկում, դու ալքայութիւնը վայելում, ինձ սուրը քաշում, դու ձեռներդ լուանում, ինձ դիւանոցը տալիս, դու հրեշտակների միջին արևիդ ձէնն ածում, երեսդ էլայ չես դարձնում, որ ինձ հողը դնես: Աղասի ջան, Աղասի, ետրաբ երեսդ մի երկնքին չես գցում, որ տեսնես՝ թէ ի՞նչ մըրած ամպեր են առաջիդ կանգնած, ի՞նչ կրակ է վերևիցը վեր թափւում. չես իմանում միթէ՝ անիրաւ, անշիգեար՝ թէ էս կրակն ու էս բոցը, էս ծուխն ու էս ամպը իմ բերնիցն են դուրս գալիս, իմ սիրտս է քուլայ քուլայ իրանից հանում, վերեն աստղեղը խաւարացնում, բռնում, ներքեր սար ու ձոր պապանձացնում: անձող շինումս:

«Հարիւր անգամ գերեզմանի դուռը հասել՝ էլ եդ եդ եմ էկել, հարիւր անգամ արեղակը որ մէր մտաւ, ես էլ իմ հոգիս հետը ճամփու քցեցի, ու ա՛խ՝ էլի ծէղը բացուելիս, հէնց իմանում էի հողումն եմ, չէի ուզում շունչ քաշեմ, հէնց իմանում էի, մեռելների կողքին եմ, չէի կամենում, գլուխ բարձրացնեմ. ու էլի մօրդ՝ ա՛խ, քո ումբը խաւարած մօրդ ձէնն որ ականջս չէր ընկնում, էլ եդ աչքս բաց էի անում, մագերս նրա ոտի տակին փռում, որ կամ ինձ սպանի, կամ թէ չէ մահի ձեռիցը չիլի, ինձ սաղ սաղ էսպէս չէրի, չխորովի. ամա էլի որ նրա էն խաւարած աչքերը, էն չորացած, մաղ դառած ջանը որ աչքովս էր ընկնում, որ իմանում էի՝ թէ նա էլ քո ցաւն է քաշում, քո դարդովն է էնպէս փոթոթւում, քո՝ քո ջանին մեռնիմ, միտը էի անում. որ թէ ես էլ մեռնիմ, էլ նրան աշխարհ-քումը պահող չի՛ ըլիլ, որ ես կորչիմ, նա էլ կենդանի հետս պէտք է հողը մանի, կամ ջուրն ընկնի, խեղդուի. որ միտք էի անում, թէ նրա խորոված սիրտը ինձանով է մի քիչ հովութիւն գանում, քո կարօտը, քո հոտն ու համը քիչ թէ շատ՝ ինձանից է սա առնում, ինձ որ չունենայ, կամ սովը

պէտք է նրան սպանի, կամ քարէքար ընկնի, մէկ բուռ-հողի, մէկ օրհնած տեղի էլ հասարակ մնայ: Ի՞նչ պէտք է անէի, որ ջուրն ընկնէի, հողիս իմը չէր՝ որ հանէի, նը-րան տայի, բալքի նա ապրէր, քեզ տեսնէր, քո արդար ձեռք բռնէր, դար գերեզմանս ու գլխիս կանգնէր, ասէր. «Աղասի ջան, էս է նազլուիդ հանգստարանը. էս հողին նա իր ջանը դուրքան տուեց. հետս խօսում չէր, որ դարդն իմանայի, ես էլ չօփ էի դառել, աշխարհքն աչքիս փուշ կտրել, որ մէկ մօտին նստէի, քրտինքը սրբէի, կամ մէկ սառը ջուր տայի, ես իմ տեղումն էի կրակի միջումն եր-ւում, սա իր բարձի վրա, ես իմ գլուխս էի բարձրացնում, որ հողիս տամ, սրա հրեշտակն էի տեսնում գլխին պոխտ-գալիս. եո ախ էի քաշում, որ ձէնս քո ականջն ընկնի, սրա ականջն էր ընկնում, սրան էրում»:

10. Արուսեան

Համեմատեցէք այս երկու նամակը:

10. 2 Մ Ե Ռ

Ձինն եկել դիզուել, սար ու ձոր բռնել էր: Պարզրկայ դիշերը այնպէս էր գետինը սառացրել, որ ամեն մի ոտը կոխելիս հազար տեղից տրաքտրաքում, ճրճրռում, ճրճ-ճրճում էր ու մարդի ջանը սարսրեցնում, ձէն տալիս: Ամեն մէկ ծառի ճղքներից, ամեն մէկ տան կտուրից հա-զար տեսակ սառցի լուլայ, հազար տեսակ ձնի քուլայ կախ էր ելել ու բիզ-բիզ իրար վրայ սառել: Հէնց գիտես սար ու ձոր կամ նոր էր ծաղկել, կամ նոր ծերացել, մահուան դուռն ընկել: շունչն էր մնացել, որ տայ ու աշխարհիս բարով մնաս: ասի: Թռչուն, գազան, անասուն, սողուն, որը փէտացել էստեղ, էնտեղ վէր էր ընկել, որն էլ վա-ղուց, ամսով առաջ բունը մտել, ձէնը կտրել, պաշարը վայելում գարնան գալուն սպասում: Գետերի, առուների երեսները սառիցը մէկ գազ եկել, հաստացել, իրար վրայ դիզուել, էնպէս էր ջրի, աղբրի բերնին հուփ տուել, որ մօտըներին կանգնողը միմիայն նրանց խուլ ձէնն էր լսում,

որ սառցի տակին տխուր տրտում, քլքլում էր ու էլ եղ էստեղ, էնդեղ կամաց կամաց ձենը կտրում, պապանձւում, սառչում:

Արեգակը էս առաւօտ որ զլուխը քնի տեղիցն ու աղօթարանիցը չի բարձրացրեց ու աչքը աշխարհի վրայ քցեց, շողքը սարերի գագաթին, դաշտերի գլխին, էնպէս էր պէծին տալիս, պսպղում, ծիծաղում կանաչ ու կարմրերին տալիս, որ հէնց իմանաս թէ արմատ, զրմբութ, եաղութ ու հաղար տեսակ-տեսակ անգին քարերը ըլէին դաշտերի, սարերի գլխին, երեսին, դռնին փռած: Սարերի սառը բուրբը, ձորերի դառնաշունչ քամին էնպէս էր մէյդան բաց արել, գոռում, փչում, հոսան անում, ձնի թեփը իրար գլխով տալիս, որ ճամբորդի քիթ ու պոռունգը կպցնում, ճաքացնում, երեսը պատռում, գլխին, երեսին հաղար անգամ խփում, աչք ու բերան լցնում, շատին կամ ձորերն էր քցում, խեղդում, կամ ձնումը թաղում, շունչը կըտրում, կամ ոտ ու զլուխ փէտացրած, ճամբից խոկում, սար ու չօլ քցում, խեղդում, կամ քարէքար տալիս:

Եւ Արեգիկան

11. Ա Մ Ա Ռ

Ճաշվայ շոքն անց էր կացել: Սար ու ձոր գլխներն էլ եղ բարձրացնում էին, որ փոքր շունչ առնին: Արեգակը Մասսայ քամակիցը՝ հանդարտ աչքը բաց էր արել ու մոռնջ մոռնջ երևանու բերդին մտիկ էր տալիս ու էն է ուղում էր, որ կամաց կամաց մէր մահի: Թանձր խաւարը, սև դումանը էկել, բոլոր դաշտերի, ձորերի երեսը բռնել, օդը ծանրացրել կալել էր: Ղուշը տեղիցը չէր ուղում ծած դայ, հաւը բնիցը գլուխը հանի: Ամեն տեղից ոտքը խաղաղվել, ամէն տեղից ձենը ձոր լուվել, պապանձվել, փասայ փուսէն քաշվել էր: Զուր ջրողը առվի վրայ էր թեք ընկել, քնած մնացել, վար ու ցանք անողը հանգումը, բաղմանչին՝ իր ծառի տակին՝ շվաքումը քուն մտել, գինջացել:

Մարդ, ինս, ջինս՝ գեղերումն էլ չէին երևում: Բազի կոնդի (բլուր) ծէրից, բազի սարի դռնից, բազի ճամփում, չօլում մէկ սե մազի շափ զարալթու¹⁾ սեկն էր տալիս, ձիու քամակիցը դէս ու դէն թեքվում, երեսի, քամակի վրայ շուռ դալիս, էլ եղ գլուխը դգում, օրգանդուն²⁾ ու դանթարդէն³⁾ ժաժ տալիս, ձիուն քացի տալիս, ես դամշով խփում, որ ոտները մի քիչ եզին⁴⁾ փոխի, թէզ տեղ հասնի: Բազինն էլ ձեռն անկաջի քօքին դրած՝ տխուր, բարակ ձէնով մէկ բայեաթի էր քօքել, քթի տակին, ձիու ջիլաւը⁵⁾ գլխին գցած՝ ինքն իրան բզզում, գնում էր, որ տուն հասնի ու իր բեղարած, ջարդըված ջանը՝ կամ մէկ շվաքի տակի դինջացնի, ես իր տան դուռը, իր օղուշաղի երեսը, քանի որ դեռ մութը վրայ չէր հասել, տեսնի ու սիրտը բաց ըլի:

Հօդաղներն (մեխրէ) էլ իրանց գութանի տաւարը բաց էին թողել, լուծը եղ արել ու մէկ քօլգի տակի՝ գութանը մէկ կողմը, եզրները միւս՝ ջրերի դրաղին վէր էին թափել, քաղցը քուն մտել, նախիրը մէկ դգում, ոչխարի սուրուն միւս՝ շվաք տեղը՝ նստել չանէն շանին⁶⁾ էին քրսում, փնչացնում, արոճ անում: Զօրանն էլ գլուխը մէկ բարի վրայ դրած՝ նղղել, աչքը կպցրել էր, որ շոքը բաշվածին պէս վեր կէնայ, սուրուն իրիգնահովին մէկ լաւ խոտաւէտ տեղ տանի, արածացնի: Օյեաղ շների մէկը էս ցցի վրայ, մէկը միւս թափի ծէրին, ես չոբանի ոտի տակին՝ գլուխը դրել, նօթերը կիտել, մարաղ էր մտել, որ թէ գող, դէլ կամ գաղան սիրտ անի, մօտենայ, բիրդանրէր վրայ թռչի, թիբայ թիբայ անի, իր տիրոնչ ոչխարները պահի: Մէկ կանաչ խոտ, մէկ դալար թուփ, կամ մէկ ծաղիկ, մէկ տեղ էլայ չէր էրևում, որ մարդ հոտն առնի, կամ երեսին մտիկ տայ, սիրտը բացվի ու իր ճամփի երկարութիւնը մոռանայ, կամ շոքի ձեռիցն էրված, խորոված ջանին հովութիւն տայ, էնպէս էր սար ու ձոր, դաշտ ու հանդ չորացել, խանձվել, պապանձվել: Միմիայն խոտերի չօփերն ու քօլերի սուր սուր ծէրերն էին

էստեղ, էնտեղ՝ ցից ցից գլուխ բարձրացրել, տխուր տըր-տում, մոլորված կանգնել, մնացել:

Սև սև ջանդաքակեր ⁷⁾ ակռանները, ես վախուկ տու-լաշներն էին հէնց մէնակ մնացել, որ էստեղ, էնտեղ, մէկ քարափի ծէրի, ես մէկ բըջի գլխի ես թէ չէ մէկ ճամ-փի միջուկ, իրար գլխի հաւաքվել էին, նստել կամ պտիտ էին գալիս, իրար կտցահարում, իրար թևերից քաշում, որ մէկի գտած որսը ձեռիցը, խնն, փայ անին, իրանց ձագերին էլ տան, կամ հետոնները տանին: Օձ, կարիճ, խլէզ, բզեզ ու ինչ կերպ ջանաւար ասես՝ մորեխ, մժեղ՝ մէյդան էին բաց արել, Որը մէկ քօլի տակից, որը մէկ քարափի բաշից, որը խոտերի միջին, կամաց կամաց ժած գալով, պոչ ու գլուխը իրանց քաշելով, կամ ծլուճդ ըլե-լով, էլ եդ տազ անելով, կամ գետնի ապառաժի վրայ սողալով, փշտացնելով, շվացնելով, փշշացնելով, ծվալով, ծղըրտալով՝ ոտն էին էլել, ուզում էին իրանց արևի ձէնն ածեն: Որն էլ իր բնի առաջին արևկող անելով, գլխնե-րը հանել, մունջ մունջ ալանջ էին դրել, սուր սուր ա-կանջները ցցել, պէլացել, շլացել էս կողմն, էն կողմն մտիկ էին տալիս, որ ոտքը խաղաղվելիս դուս գան, մի քիչ շունչ քաշեն, իրանց բէֆն անին, իրանց ողոր ⁸⁾ ճան-կեն, էլ եդ իրանց բունը մտնին, էլ եդ դնան քնին, դին-ջանան:

Բազի սլատածակի արանքից, կամ քարի ծէրից էլ մէկ նաշար բայղուշ (բու) գլուխը խոր վէր թողած, քիթ ու պոռունկ կիտած, ծանրացած, գետնին նայում էր, իր սև օրը լաց ըլում: Հալի թշնամի ուրուրն էլ՝ (ձերէն) թևերը փռած, չանգերը սրելով, բաց ու խուփ անելով կտուցը սրբելով կամ դօշը քուջուջելով, երկնքի տակին գլուխը դօշի տակին քաշ քցած, սուր աչքերը էս դեհն, էն դեհն էր քցում, պտտում, հազըվում, որ բիրդանբիր ական թօթափել վէր վազի, մէկ լիպոր ճախ գլխի, որ իր մօր թևերի տակին, կամ մօր գլուխը բորելով, թևը քա-շելով, ծվծվալով, կտկտալով՝ կամ կտուց կտցի տալով, մօր կրխալուն, ծվալուն անկաջ դնելով, սուս փուս նըս-

տում էին իրար հետ, կամ քուշուշ էին անում, կամ մէկ խեղճ, անճար լորի քամակին խփի ու ճվճվացնելով, ծղրրտացնելով՝ վեր քաշի. քրքրի, թեթի³⁾ ու իր ագահ փորին մատաղ անի: Ահա գեղեցիկ, անդոյգ օրինակ՝ անսիրտ, բարբարոս Պարսից՝ ժանգ բռնակալաց, մաշողաց ազգի, երկրի Հայկայ զաւակաց:

Էսպէս մեռել, լռել էր բնութիւնը ու մէկ շփլթու¹⁰⁾ էլայ մէկ տեղից չէր լսվում: Միմիայն հեռու տեղից սէկ բարակ քամի՝ բազի բազի վախտ փչում. ծառերի տերեւները սլացնում, ժաժ էր քցում՝ ու դոլ գոլ՝ մարդի երեսին, բերնին՝ ձեռը նազուք քսում, շուտով անց էր կէնում ու փշերի, խոտերի, քարափնների, ձորերի մէջ մըտնում: Ինչպէս ծխի մէջը խրված՝ հեռու տեղից, դաշտի գեղերը, հանդերը, փոսերը՝ մթնած, լռված՝ ինչպէս սև ամպի կտորներ, կամ էրված, խանձված տեղեր՝ էս տեղից էնտեղից սկին էին տալիս ու խառնիրխուռն երևում: Արագը ինչպէս մէկ նետ օձ, կամ էրծաթի գօտի, արեւմտեան կողմիցը. ձորերի միջիցը՝ իր սուր լուսափայլ ճակատն ու գլուխը բաց էր արել, ու մրմունջ, հանդարտ, լուռ դալիս՝ Մասսայ փէշին մի քիչ թևով խփում էր, շփում ու էլի ծուռն աչքով նայելով, նրան հաթաթայ տալով, ձէնըձոր անելով, գլուխը պտտելով՝ գնում Զանգւլին ու Գառնու գետն իր ծոցն առնում ու խաղալով, խաչտալով, վռվռալով՝ հեռանում քվերտանց հետ ու պրուռնկ պոռնկի, դօշ դօշի, քամակ քամակի տված, իրար գլխի, երեսի ձեռնները քսելով, փաղաքշելով, հանաք անելով, աչքները խփում, նղղում ու Շարուրի դուզ ծոցումը՝ ծեծված, ջարդված քուն մտնում:

10. Աքովեան

12. Զ Ա Ն Գ Ի

Ինչպէս մէկ կատաղած վիշապ՝ երկնքիցը թռած, գըլխիվայր կախուած, մէկ տուտը Սեանի հանդարտ ծովումը, մէկ տուտը Արագի քրքրուած եզերքումը, սար ու ձոր

¹⁾ Ստուեր, ²⁾ ասպանդակ, ³⁾ սանձ, ⁴⁾ արագ, ⁵⁾ կապը, ⁶⁾ ծնօտ, ⁷⁾ գիշակեր, ⁸⁾ ապրուստ, ⁹⁾ փետրել, ¹⁰⁾ չշունջ:

կիւշոր տալով, քանդելով, տապալելով, բաժնու բրտինքը բերանը կոխած, զըզըզըռած, մագերը գագաթին ցցուած, կապը կտրած, զծուած. բերանը աւազով, քարով, աղբով լիքը, այս կողմը փնջացնելով, ծովընելով, ջարդելով, յատակ ու եզերք ծամելով, բրդելով,—... այն նեղ, չոր, տխուր Կաքաւասարի տակիցը որ յանկարծ դուրս է պրծնում, վազուած ու հրով, սրով, բոցով, բրով, փռնչալով, մռնչալով, խռնչալով, քարի, քարափի գուլար ծեծելով, իր փորը խցկելով, վէժ, ապառաժ իրար խփելով. կայծակին տալով, ճչալով, ճռնչալով, թնդալով, գըրգըլով,—ցած ափերը, սառնահար գետինը պոկելով, պոծոկելով, բըրբըրելով, քրքրուելով, կենդանի, անկենդան, մարդ, անասուն գետնին զարկելով, ըսմըաչելով, խացնելով,—վառուած, կրակուած աչքերը արիւնով լիքը, բաշը ցցած, ատամները կրճըտացնելով, դաշտ ու տափ դըրմըացնելով, դըրմըացնելով ու կայծակի թուրը բերանին՝ վրայ պրծած գալիս է ամենի Զանգին ու Զորագեղ մտնում:

Որ բամին մի կողմից, բուքն ու ըորևազը միւս կողմից՝ ինչպէս կատաղած դահիճ սրարձակ մտրակում, հըրացանով, նիզակով՝ սարերի գլխներիցը, ձորերի միջիցը փոշի, աւազ, հող, աղը առաջն արած՝ փոսերիցը հանում պատէպատ տալիս, դետնիցը պոկում. քարափին խփում ու՝ ծառերը ջարդելով, խոտերը ծովընելով գետինը ճըղելով... մէկ այս քարափին քարով բռնցկում, մէկ այն սարի գլխին խփում ու մէկ կիտուկ հող, աւազ՝ շունչդ քաշելիս կամ աչքդ բանալիս՝ երկու ձեռքով բերանդ ու բաց քիթդ է խցկում, աչքերդ խաւարեցնում ու տկանջիդ տակը հըացանի գնդակի պէս, կամ սուր նետի նման՝ վըզվըզալով, դըղըղըալով յետ դառնում շուտով, երեսիդ այնպէս խփում, որ աչքերդ մթնած՝ կայծակի են տալիս ու դու տեղն ի տեղդ շշմում ես, շուարում, թմրում, սասանում, քար դարձած մնում ու սառած կանգնում:

Ու—այս ժամանակ, այս սարսափելի ժամին՝ որ երբեմն էլ երկինքը իր ալեկոծութիւնն է սկսում, սարերը ջարդում, ամպերը տրաքացնում, կայծակի լախտը աշխար-

հի չորս կողմի գլխին խփում, փշուր փշուր անում. ու
 Զանգին, սարսափելի Զանգին էլ որ մէկ կողմից գոռում,
 մըռնչում ու թոյլ ձեռքերը, անկազմ ոտքերը քարէքար
 տալիս, փողի բարձրացնում, բառաչում է ու քամու վըզ-
 վըզոցը, երկնքի տրաքոցը, քարափի ճըռճըռոցը, սարերի
 դըրմզըրմըռոցը, ձորերի ղըրնգըրնգոցը, ծառերի խըշխը-
 շոցը, այրերի խըռնչոցը, ջրադացների թըրթկթըրթկոցը,
 գետնի զըրնգըրնգոցը, տների թնդալը, պատերի տրաք-
 տրաքոցը. շների, գայլերի, աքշերի, աքաղաղների՝ ծղրտա-
 լը, ճչալը, ծալը, բառաչելը, խառանչելը, վընգվընգոցը,
 կոնձկոնձալը, ճընգճընգալը—որ ահագին ձայնի հետ խառ-
 նում, ոլորում, փորը քաշում...—այս միջոցին՝ որ Աստուած
 մի արասցէ, մէկ անձանօթ անցաւոր Կոնգի դուզն է գը-
 նում կամ Ապարանքափոսիցը վայր իջնում, որ Զանգուի
 վրայով անց կենայ, աչքը շաղւում է, գլուխը շուարում
 ու այնպէս է կարծում, թէ մէկ ահագին սար վրան փուլ
 եկաւ. Քարացած, փէտացած, մնում է տեղն ի տեղը սա-
 ոած, ցցուած... երբ աչքի առաջին կամ Քանաքեռն է
 բացւում կամ Նորագեղի դաշտավայրը...

Խ. Աբովեան

Ի՞նչպէս է նկարագրուած Զանգուն. բնական է թէ չափա-
 դանցած:

13. Է Շ Ն Ո Ի Բ Լ Բ Ի Ի Լ Ը

Բացուել էր դարունը, սար ու ձոր ծաղկել,
 Անուշ հոտն ու հովն ամեն տեղ բռնել.
 Ամեն աշխարհից, հեռաւոր տեղից
 Փախած, կորած զշեր ¹⁾ իրանց բներից
 Եկան, որ դարնան գալն շնորհաւորեն:
 Իսկ պարկեշտ բլբլուն իր էրուած սրտի,
 Իր սիրուն վարդի սէրն ու իր մտքի
 Հասրածն ²⁾ ու էշխը բերան բերելով,

¹⁾ Թռչուններ. ²⁾ կարօտն:

Պոր ձորում նստած, դարդերը լալով,
Նայում էր ջրին, իր վարդի թփին,
Ուզում էր բացուի, ան, իր սիրելին:
Բայց վարդն անիրա՛ն մնացել էր փակ,
Պեղճ բլբլի սիրան դառել էր կրակ:
Մէկ չոր քարի վրայ մնաց կուչ էկած,
Աչքն իրա վարդի երեսին քցած:
Հալիս էր, էրում, «ան, վարդ իմ կարմիր,
Բացուիր՝ երեսիդ մեռնիմ, ան՝ բացուիր:
Կամ իմ հոգիս էլ ան, քո հետը տար,
Կամ էրուած սրտիս արա մէկ հար:

էս դառն հաղաղին ¹⁾ սատանի քամին
Որդիանց հանեց մեր կորած իշին.
Քուռն էր հատել, թէ փալանը ծուռել.
Պորակը պակասել, բիթը բամի մտել,
Գէլն էր յետ ածել, թէ տէրը դնքսել. ²⁾
Նօխտէն ³⁾ կտրուել, թէ բեռից փախել:
Ականջները խլացրած.

Պոչը ցցած, զուռնէն քոքած.
Ուրնըվէր ընկած, որ չեկաւ առաջ,
Էն հաստ գլուխը թափ տուեց, զուռաց,
Էն մուռտառ դունչն էլ՝ որ վրայ բերեց,
Անմեղ վարդի թուփն, կոկոմն, որ բռնեց,
Մշրեց ու զուռաց մեր էշ խնամին.
Սար ու ձոր իրանց աչքը փակեցին.
Ղշերը թռան՝ ան, ո՛խ քաշելով.
Ծաղկներն երեսն ծածկեցին լալով:

Էլի բլբլի էրուած հոգին էր,
Որ միտք անելով իր դարդ ու ցաւեր,
Էկաւ, վարդի վրէն կանգնեց, սուգն սկսեց.
«Աննման իմ վարդ, ողբալով ասեց,
Թագունի իմ վարդ, հոգուս սիրելի,
Անուռդ յիշելով, սիրտս խորովի.
Երկինքն է տեղդ, ընչի՞ ես մնում,

¹⁾ Բոպէ, ²⁾ Թակել, ³⁾ Սանձ:

Իշի կերակուր, էս փշի միջում.
 Բանի փուշ ու էշ դեռ կան աշխարհքում,
 Կըմնաս անտէր, է՛ս եմ միտք անում,
 Ու գլխիս տալիս, էրւում, խորովւում:
 Ես՝) դու ինձ էրի, մէկ օր պըծնեմ,
 Ես թե ան, թռչինք, երեսիդ մեռնիմ»²⁾։

«Լ՛շն ինչ գիտի նուշն ինչ է»
 (Ժողովրդական առած)։

14. ԳԻԺՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ

Հիմիկ էլ զօռ են անում՝ թէ պիտի կարգաս։ Հարամ
 քլի էն հացն էլ, էն ապրուստն էլ, որ ինձ տալիս են։ Էլ
 ո՛չ աչքս է քուն գալիս, ո՛չ սիրտս է հանգստանում։ Գիրքը
 տեսնելիս հէնց իմանում եմ՝ իմ հոգեառըս է։ Վարժա-
 տան անունը լսելիս՝ միսս ջանումս հալչում է։ Երանի՛
 տանն օր նախիրը զրկեն, քանց կէս սհաթ վարժատունը։
 Ի՞նչ անեմ, մէկ հիւանդութիւն էլայ չի պատահում, սա-
 տանի աչքը քօռանայ՝ որ մէկ քանի օր պարկիմ ու իմ
 զրքի երեսը չըտեսնիմ։ Թէ ասում եմ, առաւօտը տանիցը
 դուս գամ, գնամ մէկ պատի տակի կուշ գամ ու իրի-
 կունը տուն գամ, փորս է դադ-բէդատ¹⁾ անում։ Չէ, ա-
 սենք թէ ջէբս²⁾ էլ հացով լցնում եմ՝ որ փորիս ջուղաբը,³⁾
 տամ, իմ անաստուած վարժապետն է եղելիցս մարդ զըր-
 կում, էն ժամանակը վա՛յ իմ օրին, վա՛յ իմ արևին։ Մէկ
 մկան ծակն էլ, որ հազար թումանով⁴⁾ ուղեհամ առնեմ,
 չըկայ։ Ղորդ է՝ բազի անգամ ասում եմ՝ թէ գլուխս ցա-

¹⁾ Կամ։ ²⁾ Սա գրուած է յայտնապէս Կոիլովի ազգեցութեան տակ. Оселъ и соловей. Ինչ նմանութիւն և տարբերութիւն գի-տէք. Կոիլովինը մի առակ է։ սա մի պատմուած, Կոիլովի էը մի կիսակիրթ մարդու է նման, Արովեանի էը մի իսկական էշ է։ Ինչո՞վ են նման կամ զանազան միմեանցից Կոիլովի և Ա-րովեանի ըլլուիլը։

¹⁾ Վեց-վեց, ²⁾ զրպան, ³⁾ պատասխան, ⁴⁾ 10 բուրլի։

ւում էր, եա մաշիկ չունէի ու էստով գլուխս պրծացնուի եմ, ամա էս էլ չի օգտում: Ամեն օր գլուխ չի ցաւիլ, ես էլ լաւ գիտեմ, ո՛ւր մնայ վարժապետս՝ որ հազար ինձ նման սատանի ատամին է խփել ու ճամբու գրել—Այբ, Բեն, գլխիդ գմկեմ. Գիմ, Դա. ջոխին հազիր ա: Ե՛չ, Զա. կայ ու հաղա: Է, Եթ. խաղս մնաց եդ: Խէ, Ծա. կարգացողն է՞ծ ա: Կեն, Չո. եսիր չեմ հօ, Զա, Ղատ. մնացել եմ սախատ ¹⁾: Ծէ, Մեն. ամէն, քօռանայ, ով ձեռք չի վերցնիլ մեղմէն: Յի, Նու, Շա, Ո, Զա, Պէ, Զէ, Ռա. սոված մեռայ: Սե, Վեւ, Տիւն, Բէ, ծանր է: Յո, Հիւն, Փիւր, Գէ. իշի քուրք է: Օ, Ֆէ, ռվվէ՛հ, գլուխս տրաքեցաւ: Մի քիչ տեղ արա՛, որ սիրտս հովանայ: Էնքան ասել եմ էս... էս... էս կորած մոլորած անուաները՝ որ ատամներս թուլացել են, գլուխս էլ դուղ ²⁾ չի մնացել:

Էս պրծար, հիմիկ ասում են՝ այ տղայ, ասա Այբ, Ժէ, Ծէ, Ռա. անպէր, զօռա, մեռայ: Զեր գլխովը դիպչի ձեր այրբենն էլ, ձեր այբ, Ժէ, ճէ, ուն էլ, մեր հոգին հօ չէ՞ք հանիլ: Ի՞նչ էք տուել՝ որ մեզանից էլ յետ չէ՞ք կարում ուղել: Զեմ կարդում, չեմ կարդում. հօ զօռի բան չի— Կարդա՛, կարդա՛, ի՞նչ է: Տօ, ձեր տունը չըբանդուի, ախր էս յիմար կարդալումն ի՞նչ կայ, որ էսպէս մեր ջանը հանում են: Շատ մարդ՝ որ մէկ այբի կտոր էլայ փորումը չսնի, ախ՛ չէ, չէ, գլխումը կուղէի ասել, շշկլեցայ, չունքի ³⁾ էս զահրմար կարդալը փորի խարջ ⁴⁾ բան չի, ներեցէ՞ք ինձ՝ էս էլ կարդալու հարարաթր ⁵⁾ է, որ էսպէս լեզուս շաղուեցաւ, օհ. օհ... բերանս ցաւում է, թթու է, կծու է, աչքիս լիսը թուաւ, այբն էլ ջհանդամը ⁶⁾ գնա՛, ֆէն էլ, էս սհաթս մէկ աման մածունը ըլէր, լաւ կըխփշտէի, իսկ մէկ քոնձոտ այբի անունը տալիս, լեզուս կապւում է:

Ո՛չ աչքդ է մի բան տեսնում, ոչ բերանդ համ է առնում: Շոր չի, որ մէկ օր կարես, առն չի՝ որ շուտով շինես, հաբ ⁷⁾ չի՝ որ իսկոյն կուլ տաս, դեղ չի, որ աչքդ

¹⁾ Կաղ-ֆնաստուած, ²⁾ ուղեղ, ³⁾ որովհետեւ, ⁴⁾ արժանի, ⁵⁾ շնորհք, ⁶⁾ դժոխք, ⁷⁾ պիւրիւ-դեղ:

խփես՝ ու դիվէր քցես, ինչ կըլի, ըլի, փոքր սաղ ըլի: 2) էլ կարելի՞ որ ինչքան գրեր կան, մէկ անգամ կամ ծամես, կուլ տաս, կամ ջուր անես, խմես, կամ թէ չէ քերես, ջնջես՝ որ քօռանան և աչքիդ չի երևին: Հոն կաց ու ոտիդ արած, որ դժոխքի պուճախն) էլ գնաս, էլի քեզ հանում են ու միտք բերանդ տալով՝ ասում են՝ պիտի կարդաս: Ի՞նչ կուզես անել, աշխարհքս բոլոր թարսուել²⁾ է: Երկիրնքն էլ թռչիս, էլի քեզ վէր են բերում, գիրքդ կոնատակդ տալիս ու ճամբու քցում, ուր, Աստուած ոչ գիտէ իրանց գլուխը:

Մէկ գիրքս կորցնում եմ, միւսն են ձեռս տալիս: Մէկ դալամ³⁾ կորցնում եմ, ծեծում, թալում, սպանում են՝ թէ գնա, միւսը բեր: Փոքր յեղի եմ գալիս, վայ իմ օրին: Դասս չըգիտեմ, քանոնը հագիր է: Ձեխըս չեմ դէմ անում, քամակիս են խփում, քամակս եմ քաշում, ոտիս է դիպչում: Ի՞նչ անեմ, որ ջուրը ընկնիմ, ուր կորչիմ, որ էս դժոխքիցը ազատուիմ: Սատանի փայ ըլի, աչքը դուս գայ, ով որ էս կարդալը սահմանել է: Ասում են՝ կարդալով մեծ մարդ կըբառնաս, հաց կըճարես. առ տնաքանդներ՝ էս օր էլ՝ քանի որ մեծանում եմ, էնքան աչքից ընկնում եմ: Մէկ կտոր հաց են տալիս, քթիցս են հանում: Էլ ի՞նչ կանեմ ձեր հացն ու մեծութիւնը, երբ օրս ու ումբոս կըխաւարի: Երանի՛ դշերին՝⁴⁾ որ էսպէս ցաւ չունին ու իրանց քէֆին թռուչում, մտն են գալիս: Բօյս⁵⁾ էլայ շուտով երկարանում չի, որ բալքի թէ ամաչին ու էլ վարժատուն չուղարկեն: Րիկունն եմ գիրքը ձեռս առնում, քունս է տանում, առաւօտն ուզում եմ դասս սերտեմ, էլ ժամանակ չըկայ: Աչքս որ բաց եմ անում, հէնց գիտեմ՝ իմ հոգեառ հրեշտակը բարձիս վերեր կանգնած, ուզում է, հոգիս առնի: Ի՞նչ կըլէր, որ ամեն օր կիրակի էր էլել, որ հէնց մեր քէֆին ման գայինք:

Հիմիկ էլ եկել էք՝ սիրելի ծնողք՝ որ տեսնիք՝ թէ

1) Անկիւն, 2) ծուռել, 3) գրիչ, 4) թռչուն, 5) հասակ:

Ի՞նչ ենք սովորել, Շատ բարի՝ տեսէք և իմացէք, բայց Աստծու խաթեր դուք էլայ մեզ խեղճ էկէք և մեր չար ուստի պէս չի ջգրուիք, չի բարկանաք՝ թէ ոչինչ չենք սովորել, ինչ Աստուած տուել է՝ նրանով ռազի¹⁾ կացէք։ Ասացի՝ որ կարգալը կանֆէթ չի, որ բերադի²⁾ բերանդ քցես և փորդ քաղցրացնես։ Վայ նրան՝ ով որ նրա համը կառնի, կարելի և մինչև մահը էլ չի մոռանայ։

Խ. Աքովեան

Այս նկարագրութիւնը նման է արդեօք ներկայ դպրոցականի կեանքին. համեմատեցէք հին դպրոցը և նրանց կարգալը ներկայիս հետ։

15. Ս Ո Ւ Ն Ո Ւ Ս Ո Տ Ո Ր Ը

«Այ թէ քօռուղուփ¹⁾, դու հոտած գատ ես,

Ժանգի պարկի պէս լցուել, տոգել ես —

Մէկ օր սըխտորը էսպէս խօսք քըցեց,

Խեղճ ոտիս զլիխն թուք ու մուր ածեց։

«Կողքըդ հաստացել, գլուխդ գիրացել,

Ի՞նչ ես դու էդպէս շատ ուռել, փըքուել։

Ինչ պտուղ որ ես, քեզ ով չի գիտի,

Որ ուղում ես՝ թէ հէնց քեզ տեղ ըլի։

Մարդ քեզ ուտելիս, բերանն ես կըծում,

Դանակ դիպչելիս՝ աչքը քօռացնում։

Ձեմ գիտում՝ մարդը ախր ի՞նչ լազաթ է²⁾

Քեզանից տեսնում, որ քեզ ցանում է։

Էլ մարդ ու բօստան³⁾ հէջ չի մընացել,

Բոլոր գէշ հոտովդ բռնել, հոտացրել։

Ընչանք⁴⁾ չեն էփում, քո աչքըդ հանում,

Դու քո փիս հոտը չես պակսացնում»։—

«Տօ, դու քո Աստուածն՝ ով էլ ինչ ասի,

Խօսքը սաղ կը գայ, իրաւունք ունի»։—

Սոխը ջուղաբը⁵⁾ եդ դարձրեց, ասաց։

¹⁾ Կոհ ²⁾ բոլորը։

¹⁾ Անընդունակ, ²⁾ համ. ³⁾ բանջարանոց, ⁴⁾ մինչ, ⁵⁾ պատասխան։

Է՞դ էր մնացել, փառք քեզ՝ Տէր Աստուած,
 Որ դժու էլ ըռերսդ ¹⁾ ցրուես ինձ վրայ:
 Տօ, ա՛յ անգգամ, հոտած բեհայեայ ²⁾,
 Էփէլիս էլ է, ես հոտս քաշում եմ,
 Մարդի բերանը ապականում էեմ,
 Քո գլուխը լսա՝ որ խաշի միջումն
 Է՛ն հոտն ես թողնում ուտողի բերնումն,
 Որ մօտի կանգնողն իրանից գնում,
 Սիրտը խառնըւում ու բեալլէն ³⁾ ծակում:
 Գիտե՛ս՝ իննամի՛ իմ միտքըս լի՛նչ է,
 Ես չեմ ուրանում, իմ հոտըս փխս է:
 Արի, դու էլ քո չափը ճանաչիր,
 Խօսքիս լսիր ու լեզուդ քեզ պահիր:
 Երկուսս էլ ունինք էդ պակասութիւնն,
 Մենք մերը ծածկենք ու պահենք թաքուն:
 Մենք իրար վատն որ ասենք մեր լեզուով,
 Խայտառակ կըլինք, կըմնանք ամօթով:—

Էսպէս սոխ, սխտոր հոտած մարդըկերքն
 Էաւ կանեն, իրանց այիբն ⁴⁾ որ ծածկեն:
 Բայց շատ անգամ, որ էսպէս սխտոր մարդ
 Բերանը բանում չի ու վախտ բէվախտ ⁵⁾
 Ուրիշին փուղ դնում, էս ա մեզ էրում,
 Էս մեզ խորովում:

10. Աքովեան

16. ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆ

Նազարեանը ծնուեց մօտ 1810-ին Թիփլիզում. նրա հայրը, Տէր-Եսայի քահանան, մի շատ բարի և ուսումնասէր մարդ էր: Ստեփաննոսը նախնական ուսումնի ստացաւ հէնց իր հօր մօտ, ապա Ղարաղաղցի Պօղոս հայկաբան վարդապետի մօտ, ուր և սովորում էր Խ. Աքովեանը:

¹⁾ Բերան— հայհոյես, ²⁾ անամօթ, ³⁾ գլուխ, ⁴⁾ պակասութիւն, ⁵⁾ ժամանակ անժամանակ:

1824-ին, երբ Ներսէս Ե. բաց արաւ Ներսիսեան դպրոցը, Նազարեանը Աբովեանի հետ միասին մտաւ այդ դպրոցը և աւարտեց 1827-ին: Նազարեանը իր աշխատասիրութեամբ և ընդունակութեամբ սիրելի էր եղել Ներսէս արքեպիսկոպոսին (ապա կաթողիկոս), ուստի և նրա միջնորդութեամբ բժիշկ Սողոմոն Տէր-Ղուկասեանն ուղարկում է Ստեփանին Դորպատ ուսանելու: Այնտեղ էր արդէն Նազարեանի սիրելի ընկեր Սաշատուր Աբովեանը: Համալսարանն աւարտելուց յետոյ նրանք միմիանցից բաժանուեցին և ալլես միմեանց չհանդիպեցին, Աբովեանն եկաւ հայրենիք, իսկ Նազարեանը դարձաւ ուսուցիչ արար և պարսիկ լեզուների Լազարեան ճեմարանում: Սակայն ինչպէս նրանց կրթութիւնը, այնպէս էլ ապագայ գործունէութեան գլխաւոր արդիւնքն էր՝ աշխարհաբարի մշակելը: 1858-ին Նազարեանն սկսում է հրատարակել «Հիւսիսալիայ» ամսագիրը Մոսկուայում, ուր աշխատակցում էին ժամանակի առաջնակարգ ոյժերը—Նալբանդեան, Ռ. Պատկանեան, Յ. Մելիք-Յակոբեան և այլն: Հիւսիսափայլ փոքրիկ ընդհատումով շարունակուեց մինչև 1865 թ. և իր ութամեայ հրատարակութեամբ մի կատարեալ յեղափոխիչ հանդիսացաւ մեր կեանքի գրեթէ ամեն ասպարիկում: Մեծ է նրա դերը մանաւանդ մեր նորաստեղծ լեզուի մշակման և տարածման մէջ, ժամանակի լուսաւոր դադափարների հետ նա նոր լեզուի ամենամեծ մշակողներից ու տարածողներից մինն էր:

1869-ին մենք Նազարեանին տեսնում ենք Թիֆլիզում, իբրև տեսուչ Ներսիսեան դպրոցի, ուր, սակայն, նա երկար չմնաց, այլ կրկին հրաւիրուելով, գնաց ետ նախկին պաշտօնին, Լազարեան ճեմարան: Նա մեռաւ 1879 թ. ապրիլի 26-ին. Նազարեանը հրապարակախօս էր, նրա գրութեանը մեծ մասամբ նուիրուած էին ժամանակակից հարցերին, ուստի որևէ խոշոր գրական գործ չի թողել մեր համար բացի «Հանդէս նոր հայախօսութեան»ից:

17. Ս. ՍԱՀԱԿ

Հինգերորդ դարի ճակատումը՝ որպէս մի նազելի պարագլուխ հայ լուսաւորութեան, որպէս մի յաւիտեան քաղցր պատկեր հայ դպրութեան, պատմագրի հոգու առաջն կանգնած է պարթեացի Սահակ Մեծը, Հայաստանի 10-րդ հայրապետը: Ծնած Կ. Պօլսի մէջ, Ներսէս Մեծի որդին և ձեռնասունը, 490-ին հասնելով պատրիարքական աթոռի, ամբողջ 50 տարի ամենազգապտ արթնութեամբ կառավարել է նա Հայաստանի եկեղեցին այն բազմապատիկ փոթորիկների տակ, որոնց պէտք է տանէր նա այն միջոցներում: Հայոց պատմութիւնը և պատմագիրը չի կարող լռել թէ այս մեծ և հոյակապ տղամարդը որպիսի անարժան ապերախութեամբ հայ նախարարների և մեծատունների կողմից, որպիսի անարգ մասնութեամբ պարսից թագաւորի առաջ հրաժարուել է իր հայրապետական պաշտօնից և 540-ին կնքել է իր ճոխավաստակ կեանքը մի տխուր առանձնութեան մէջ՝ սիրտը կոտրած, հոգին լցուած տրտում մարգարէութեամբ ապագայի վրայ: Նրա դիտնակահութիւնը և մեծամեծ վաստակները Հայ ազգի կրթութեան ասպարէզի մէջ կարելի է դատել նրա գործերից, որ սրանք են. — աջակցութիւնը տառերի դիւտին, որ նա տուաւ Մաշտոցին, գերազանց թարգմանութիւնը հին կտակարանի՝ եօթնասուն թարգմանիչների հիման վրայ: Մի ճառ եկեղեցու և հոգևորականների բարեկարգութեան մասին: Այս աշխատութեան խորհուրդն այն է, որ արտաքին աստուածապաշտութեան տնտեսութիւնն աւելի լաւ համակարգէ, սաղմոսերգութիւններն աւելի պատճառապէս կանոնաւորէ, այլև տօները սահմանէ մի բարեկարգ տօնացուցի հաստատուն կանոններով: Բացի սորանից, Մովսէս Խորենացին իր Հայոց պատմութեան երրորդ գրքի մէջ պահպանել է մի քանի նամակ, որ Սահակ Պարթեւը գրած է դէպի կայսրը Թէոդոս կրտսերը, դէպի Կ. Պօլսի Աստիկոս պատրի-

արքը և Անատոլէոս զօրավարը: Այլև Սահակ Պարթևի անուամբ գտնուում են մի քանի երգեր Հայոց Շարակնոցի մէջ-

«ՀԻՒՍԻՍԱՓԱՅԼ», Ս. Նազարեան

18. ՆՈՐ ՏՍՐՈՒԱՅ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

Սովորութիւն կայ լուսաւոր ազգի մէջ, տարեմուտի երեկոյին, իւրեանց բարեկամների հետ ընտանեբար հաւաքուել միասին և պատշաճաւոր խորհրդածութիւններով հանդէպ գնալ նոր առաւօտին: Այս նոր տարու խորհրդաւոր երեկոյիս թող ամենայն բանական հայ ձեռքը դնէ իւր սրտի վրայ և արդար խղճմըտանքով պատասխան տայ նորա հետ խօսող հայրենիքին: Հայրենիքը բարձրացնելով իւր ձայնը, հարցնում է իւր մեծատուն զաւակից. ի՞նչ արժանաւոր տուրք ես ձգել դու ազգային շինութեան գանձաւանակի մէջ, ի՞նչ նուէրք ես արել դու քո հայազգի մարդկութեան թէ մարմնաւոր և թէ հոգևոր կարիքը լցուցանելու համար, դու իմ անդրանիկ որդի, ունի՞ս դու և մի տնդրանիկ պարծանք քո ազգի մէջ բացի քո հարստութիւնից, քո բարեկեցութիւնից, քո փառահեղ սարք ու կարգերից: Այսօր հայրենիքը դարձուցանելով երեսը դէպի իւր գիտնական որդիքը, ծանրութեամբ հարցնում է նոցանից ի՞նչ է ձեր գիտութեան և ուսումնականութեան պտղութեանը ազգի համար, արդե՞օք յայտնագործել էք դուք մի հանրաշահ ճշմարտութիւն և նրան պիտանի՞ էք կացուցել ազգի ներկայ կեանքին. արդեօք հասկացել էք դուք ձեր ժամանակի և ձեր ազգի հոգեղէն պիտոյքը... արդեօք ձեր ուսումնական վաստակներով փոքր ի շատէ բարւօքացուցել էք ժողովրդի ընկերական կեանքը... Հայրենիքը լեզու առած հարցնում է այսօր ժողովրդի անդամներից... թէ հոգևորից, թէ աշխարհականից, ի՞նչ բարի գործերով կամ խօսքերով յատաճադէմ էք կացուցել ձեր ազգը, ձեր եկեղեցին, ձեր սիրելի զաւակները... արդեօք մի քանի բայլ յառաջ էք դնացել դուք առաքելութեան սուպարէ-

գումը ազնիւ անձնասիրութեամբ, ազգաշէն եղբայրասիրութեամբ, կենդանի հաւատի կենդանի պտուղներով: Գիտեմ, հայ մարդերի կեանքը, ինչքան ևս չքաւոր լինէր առաքինի գործերով, այնու ամենայնիւ բոլորովին գուրկ չէ դոցանից... Ո՛ւր են մեր հայրենասիրական ընկերութիւնքը, հայկական ուսումնարանները տղաների և աղջիկների կըրթութեան, ուստի կարող էին յառաջանալ խելացի հայրեր և դաստիարակիչ մայրեր. ո՛ւր են ազգային լուսաւորութեան գործիքը, բարեկարգ տպարաններ, գրատունք, պատշաճաւոր մատենագրութիւն ազգի և նորա զաւակների համար: Բոլորը բարձի թողի արած, անհոգ և անուես մնացած թէ հոգևորի և թէ աշխարհականի կողմից, ասես թէ ոչինչ: Վերաբերութիւն չունէին դէպի հայկական ազգը: Եւ ինչ որ մինչև այժմ կամայ և ակամայ արած են հայոց ազգասէրքը, հազիւ թէ մի կաթիլ ջուր է ահագին ովկիանոսի մէջ, մի հատ ծաղիկ հայոց կեանքի լայնատարած չոր ու ցամաք, անմխիթար անապատի մէջ...

Ս. Նազարեան

19. ՄԱՅՐԵՆԻ ԼԵՁՈՒ

Մայրենի լեզու, մայրենի բարբառ,
Ախորժ, ընտանի իմ հոգու համար.
Առաջին դու խօսք ականջիս հասած,
Դու, սիրոյ քաղցրիկ առաջին յօդուած,
Մանկական լեզուիս թոթովանք տկար,
Հնչում ես իմ մէջ դու միշտ, անդադար:

Գեղեցիկ լեզու, հրաշալի լեզու.
Այդ ինչպէս քաղցր հնչում ես ինձ դու,
Կամիմ աւելի բաշ ծանօթանալ
Քո ճոխ գանձերին, հոգով հայանալ.
Ասես թէ ահա կանչում էին ինձ
Պապեր և հայրեր խոր գերեզմանից

Հնչիր, դու հնչիր այժմ և յաւիտեան,
Մայրենի լեզու, բարբառ սիրական,
Արի, բարձրացիր հնութեան փողուց,
Դու իմ հայ լեզու, մոռացուած վտղուց.
Ըզգեցիր նոր կեանք սուրբ զրուածքներով,
Որ ամենայն սիրտ վառուի քո սիրով:
Ս. Նազարեան

Գրեցէք սրա բովանդակութիւնն արձակ շարադրութեամբ:

20. Գ Ա Մ Ա Ռ Ք Ա Թ Ի Պ Ա

(Ռափայէլ Պատկանեան 1830—1892)

Մեր ազգի մտաւոր պատմութեան մէջ քիչ տոհմեր կան, որ մի քանի սերունդ շարունակ նշանաւոր մտածողներ տուած լինին: Այդպիսի երեք տոհմ ունինք մենք, Լուսաւորչիներ 4 - 5 դարերում, Պահլաւունիների տոհմը Ռուբինեանց ժամանակ (Շնորհալի, Գրիգոր Մագիստրոս և այլն) և Պատկանեանների տոհմը 17—18 դարերում:

Պատկանեանների շառաւիղ էր Ռափայէլը, նրա պապը, Սերոբէն և հայրը, Գաբրիէլը, բանաստեղծներ էին, հօրեղբայր Միքայէլն ուսուցիչ էր, խմբագիր, թատերագիր և աշխարհաբարի հիմնադիրներից մինը: Միւս ազգական Բէստէնը, յայտնի դիտնական Բժիշկ էր, հօրեղբոր որդին, Քերոբէն—բանաստեղծ էր և ապա յայտնի դիտնական ու պրօֆեսոր և այլն...

Ռափայէլն աշխարհ եկաւ 1830-ին Նոր-Նախիջևանում և սկզբնական դաստիարակութիւնն ստացաւ իր հօրից. «Հայրս, գրում է Ռափայէլը, իւր ժամանակին համարում էր երեւելի քարոզիչ, հայկաբան և պատմագէտ... Նա Նոր-Նախիջևանի համար ամբողջ 30 տարի մի տեսակ բարոյական արեգակ էր, որ իւր շուրջը սփռում էր լոյս և ճշմարտութիւն»...

Այդպիսի մի հօր ձեռքի տակ ահա Ռափայէլն սկսաւ

իր ուսումը, որ յետոյ նա 10 տարեկանից շարունակեց Լազարեան ճեմարանում: Այնտեղ նա աշակերտեց յայտնի գիտնական և հայագէտ Էմինին մինչև 1849 թ., երբ կիսատ թողնելով եկաւ Թիֆլիզ Ներսիսեան դպրոցն իբրև ուսուցիչ: 1850-ին նրա հայրը տեսուչ էր Ներս. դպրոցում և հրատարակում էր «Արարատ» առաջին աշխարհաբար լրագիրը: Այդ թերթումն է ահա, որ Ռափայէլը տպում է իր անդրանիկ ոտանաւորներն ի միջի այլոց «Մահ Զարմայր նահապետի» պօէման:

1851-ին նա ուղևորւում է Դորպատ ուսումը շարունակելու: Այդ ժամանակ Դորպատի հայ ուսանողութեան ոսկէպարն էր. այնտեղ էին և Ռափայէլի ճեմարանական ընկերները. Դոդոխեան՝ «Ծիծեռնակի» հեղինակը, Միքիմանեան, որ գրեց «Հայոց-աղջիկները», Քերրոէն, որ հեղինակեց «Թնձ համար չէ՛ գարնան գալը» և այլն:

Ուսանողական այդ ուրախ-ազգասէր շրջանումն է, որ սկսում է զարգանալ ու կազմակերպուել Ռափայէլի ի ծնէ բանաստեղծական տաղանդն և աշխարհիկ լեզուի ճաշակը:

Արդեան աշակերտը՝ Գէորգ Աբիմեան Դորպատ էր տարել ձեռագիր «Վէրք-Հայաստանին», որից մեր ուսանողները ծանօթանում էին Երևանի բարբառի հետ: Մի անգամ խմբովին կարդացին այդ դիրքը, որ նրանց վրայ անջնջելի տպաւորութիւն թողեց թէ՛ լեզուի և թէ՛ նիւթի կողմից:

Ուսանողները պարտաւորաբար խօսում էին միմեանց հետ հայերէն, որով թէ՛ իրանք էին վարժւում և թէ՛ նորաբողոք լեզուն հարստացնում էին: Նրանք հեղինակում կամ թարգմանում էին երգեր և բերան անելով երգում էին:

1852 ին Ռափայէլը տեղափոխւում է Մոսկուա, ուր Գէորգ Քանանեանի և Բժիշկ Մինաս Թիմուրեանի հետ կազմում է մի ուխտ-միաբանութիւն, որի նպատակն էր ինքնուրոյն և թարգմանական գրուածքներով զարգացնել աշխարհաբարը և տարածել ժողովրդի մէջ: Վերցնելով ի-

րանց անուններին առաջին տառերը, Գ. Մ. Ռ. մէջերն աւելացրին մի մի ա և ազգանունների առաջին վանկերը Քաթի, Պա, և կազմեցին ԳաՄաՌ-ՔաթիՊա:

Այդ անունով ահա, 1854-ին լոյս տեսաւ մի այբբենաբան և մի տաղարան, ուր առաջին անգամ հրատարակուեց «Մայր-Արաքսին»։ մեր ներկայ լեզուի անդրանիկ գոհարներից մինը, որ խորին ազգասիրութեան հետ, պարունակում է նոր լեզուի քերականութիւնը, ոգին, առաւելութիւններն ու պակասութիւններն ամբողջովին:

Գամառ-Քաթիպան հրատարակեց հինգ տետրակ, ազգային հին ու նոր, ժողովրդական, աշուղային և զրական բանաստեղծութիւններ առանց հեղինակների անունը տալու: Այդտեղ հաւաքուած էին լաւագոյն երգերը Սայաթ-Նովայի, Աբովեանի (Աղասու երգերը), Ազբար-Աղամի, Քերոբէ և Ռափայէլ Պատկանեանների, Դոգոխեանի, Միրիմանեանի և այլն... Նրանց մէջ ամենից փայլունն ու տաղանդաւորը, ամենից եռանդունն ու ոգի տուողը ինքը, Ռափայէլն էր, ընկերութեան հոգին, հրատարակողը և տարածողը:

Այդ երգերի նիւթը, ժամանակի տրամադրութեան համեմատ մեծ մասամբ ազգասիրական և կամ ուրախ ուսանողական էր: Այդ երգերն էին, որ անմիջապէս թե առան և քաղցր ու դուրեկան եղանակներով թռան ամեն տեղ, ուր հայեր կային, մասնակցելու նրանց ուրախութեանն ու վշտին, արտայայտելու նրանց իղձերն ու ցանկութիւնները, զարթեցնելու հայրենասիրութիւն և աւետելու մի նոր լեզուի ծնունդը, մի նոր կեանքի սկիզբը:

Այդ երգերն էին, որ առաջին անգամ անցնելով բերնէ բերան, անբռնաղբօս ու գրաւիչ, արեւելեան հայութեանը տուին նոր-գրական լեզուի համն ու հոտը: Դրանք միայն կարգացողի համար չէին, նրանք երգւում էին մօր և մանկան բերանում, մեծի և փոքրի մօտ: Նրանք այլևս անհատական թոթովանք չէին, այլ հասարակութեան սեփական դարձած նրզներ, բերան արած երգեր, որոնց լե-

դուն համայնացել և ընդունուել էր առանց որևէ դիմադրութեան ու կռուի:

Քանի որ այդ երգերը չէին կրում ոչ մի հեղինակի անհատական անուն, այլ ի մի փնջած ներկայացնում էին ժամանակակից հայ տաղանդի ամբողջութիւնը (սկսած ժողովրդական և աշուղի երգերից՝ հասնելով մինչև խորին և տաղանդաւոր անհատականութիւնները, որպիսի էին Աբովեանն ու Ռափայէլը) մի ընդհանուր *Պատառ-Քաթիպա* անուան տակ, հէնց դա էլ պէտք է համարել աշխարհաբարի խոշոր հիմնադիրներից մինը:

Պատառ-Քաթիպա ասելով, ուրեմն պէտք է հասկանալ հայ տաղանդի միացեալ ամբողջութիւնը, որի մէջ անհատաբար վերև են խոյանում երկու փառահեղ գլուխ—*Խաչատուր Աբովեանն* ու *Ռափայէլ Պատկանեանը*:

Ի մի փնջելով հայ տաղանդների արդիւնքը «Հայոց ազգային երգարանում», Ռափայէլն իր լեզուով էլ մի կատարեալ ծաղկափունջ է ներկայացնում ժամանակակից լեզուի, ուր նա հիւսել, ի մի է ձուլել գրաբար, աշխարհաբար, արեւելեան և արեւմտեան ձևերն անխտիր. «Արաքսն» այդ խառնակ լեզուի լաւագոյն ներկայիչն է:

Մինչև այսօր էլ, վաթսուն տարիներ յետոյ, չըկայ մեր բանաստեղծների մէջ մինը, որ ժողովրդականութեամբ մրցել կարենայ Ռ.-ի հետ: Երգուելու պատուին քչերն են արժանացել, այն ինչ Պատկանեանի մեծութեան զաղտնիքն այն է, որ նրա գրածները մեծ մասամբ երգուել են և երգւում են:

Նա հարուածել զիտէր հայ սրտերի ամենաթունդ լաբերին, նա արտայայտեց իր ազգի վշտերն ամենից վատահ, ամենից համարձակ: Նա խօսել տուաւ լուսնին, պատմելով «Վարդանի մահը», նա առաջինն էր, որ դարաւոր շղթաների միջից «Բողոք բարձրացրեց առ Եւրոպա», մի շանթող լեզուով բաց արաւ դարաւոր լութեան բերանը— «Հիմի էլ լռենք» երգով, նա օրօր երգեց մանկան ականջին և խրախոյս կարգաց հերոսին. ծերունուն մանկութիւն էր քարոզում «պատերազմի դնալու», և կանանց յորգորում

էր «վիրակապ հիւսել իրանց ծամերից եղբօր վէրքերը կապելու համար»։ Նա ծաղրեց ու ծանակեց մայրաքաղաքում կրթուած թուլամորթ երիտասարդին օրիորդին և գովեց ու զրուատեց հայ գեղջուկին, նրա գոմէշն ու արտը։
Նա դարձաւ ամենասիրելին մեր բանաստեղծներից, իրաւամբ արժանանալով «Ազգային երգիչ» պատուաւոր կոչման։

Ռափայէլը խիստ բազմազան և շնորհալի տաղանդի տէր էր։ Թէև նա ժողովրդականութիւն և հոշակ ստացաւ իրրեւ բանաստեղծ, բայց նրա արձակ ու երգիծական դրուածներն աւելի մնայուն ու նշանաւոր են, քան նրա ոտանաւորների մեծ մասը, որոնք արդէն մեծ մասամբ հնացել են։

«Հիւսիսափայլ»-ի ամենաեռանդուն աշխատակիցն էր Ռափայէլը, ուր գետեղում էր թարգմանական և ինքնուրոյն յօդուածներ։ «Փորձ» ամսագրում նա տպեց «Ես նշանած էի», «Տիկին և Նաժիշտ», «Փառասէրը» վէպիկները, որոնք յայտնի ապացոյց են նրա լուրջ վիպական տաղանդին։ Տիպերն այդտեղ բնական են այն աստիճան, որ կարծես լուսատիպ լինին. պատմութեամբ կենդանի, գլուխ և հետու ամեն արուեստողից։ Լեզուն պարզ է, մատչելի և ծայրէ ի ծայր հայերէն։ Անդուգական են Պատկանեանի երգիծական պատկերները Նոր-Նախիջևանի բարբառով, ուր հեղինակը ծաղրում է իր հայրենակիցներին երբեք և կեանքը, վարքն ու բարքը և պակասութիւնները։ Նոր Նախիջևանցիք խիստ վախում էին երգիծաբանի գրչից, որ երբեմն կրքի ազդեցութեան տակ խիստ սուր կերպարանք էր առնում և շատ անգամ դառնում էր թունաւոր։ Ռ. Պատկանեանը շարունակ ապրում էր Նոր-Նախիջևանում՝ վարելով արհեստագիտական դպրոցի տեսչի պաշտօնը. նա մեռաւ 1892 թ. թոքախտից և թաղուեց ս. Խաչ վանքի գաւթում, իր մանկութեան ընկերակից և գլուխ և հետու ամեն արուեստողից։

*) Ռափայէլ Պատկանեանը դարձ էր ածում բազմաթիւ կեղծ

Բանաստեղծը կտակել էր ազգին, որ իրան էջմիածին թաղեն. ազգը չկատարեց նրա կտակը, սակայն հաւաքական հանգանակութեամբ դերեգմանի վրայ կանգնած է արդէն նրա խոհուն կիսարձանը:

Գր. Վանցեան

21. ԽԵԼՔ ԵՒ ԽՈՐԱՄԱՆԿՈՒԹԻՒՆ

Խելօքը կը փնտրէ աշխատանք, խորամանկը՝ հանգրստութիւն. խելօքը գործ ունի բնութեան տարրերի և զօրութիւնների հետ, խորամանկը՝ մարդկային թուլութիւնների հետ: Խելօքը կասէ մարդոց՝ «դուք ալ շահուեցէք, ես ալ շահուիմ», խորամանկը կասէ. «ես ձեր կոնակէն շահուիմ, իսկ դուք ինչպէս գիտէք»: Խելօքը մարդոց առջև ճանապարհ կը բանայ, որ ամենքը ազատօրէն հասնեն օգտի կամ մէկ նպատակի, խորամանկը կը բանայ ճանապարհ, բայց ճանապարհի վրան մէկ փոս ալ կը փորէ, որ անցնողը նրա մէջ ընկնի: Խելօք մարդոց ճանապարհը կը լուսաւորէ, իսկ խորամանկը ձեռքը բռնած ակնախտիկ լոյսը՝ շիտակ մարդոց աչքին կուղղէ, որ շլանան: Խելօքը կապացուցանէ. կը համոզէ, կը խրատէ, խորամանկը կ'աշխատէ իր ճարտար լեզուովը զարմացնելու: Խելօքը որ մէկ ուրիշ խելօք տեսնէ իրեն ընկեր, օգնական կը համարէ. խորամանկը՝ կ'աշխատէ իրան շրջապատել միամիտ, պարզամիտ, խելքի-աղբաւ մարդկանցով, և ուրիշ խորամանկներու հետ չարաշար կը պատերազմէ: Խորամանկը կը փնտռէ այնպէս տեղեր, որ մարդիկ շատ են ու մէջերը կը մտնէ, բայց վերջը իր չորսը կողմն անապատ կը դարձնէ. խելօքը կը մտնէ անապատ տեղ. շուրջը մարդիկ կը ժողովէ և անապատը մարդաշատ տեղ կը դարձնէ: Խելօքը իր գլխու ուղեղը Աստուծոյ ձեռէն է ստացել, խորամանկը ստացել է սատանայէն:

անուններ. Միքայել Վայելչեան, Ախտամբեկեան, Սիւլիւկ, մահաւանդ իրրեւ բանաստեղծ նա յայտնի է Գոմառ-Քաթիպա կեղծ անուամբ:

Նեյօք Արամը կանգնեցուց Հայաստանը, խորամանկ Վասակը կործանեց: Նեյօքի գործը գոհար է՝ կոշտ կճեպով ծածկած, խորամանկի գործը շաքարով փաթթած թոյն է: Նեյօք մարդը սրտանց կը ցանկանայ մարդոց լուսաւորութիւն և կը պատուէ լուսաւորեալներուն. խորամանկը թէև երեսանց կը գովէ լուսաւորութիւն, բայց լուսաւորեալներուն հարաշար կը հալածէ: Նեյօքին երբ Աստուած լեզու տուեց, ասաց. «զրանով սրտիդ խորհուրդները մարդոց պարզէ, յայտնէ», իսկ երբ որ սատանան տուեց խորամանկին լեզու, ասաց. «մտքիդ խորհուրդները շատ խօսելով ծածկէ: Նեյօքի քիչ խօսքէն շատ բան կը հասկացուի. խորամանկը թէև քոյր կեանք խօսէ, ոչինչ չի հասկացնի: Նեյօքը գինի ու օղի չի սիրիլ և եթէ խմէ, կը հարբի. խորամանկը խմել կը սիրէ, և որքան ալ խմէ, չի հարբիլ, բայց միշտ սուտ հարբած կը ձևանայ, Նեյօք մարդը քաղցածին, չքաւորին իր տունը կը բերէ, կը կերակրէ, կը կշտացնէ. խորամանկը մեծատուններուն յարգանք կուտայ:

Քանի աւելի է վաճառականի խելքը, նա այնքան հեռուններէն կը ցանկայ ստակ վաստակել ու իր կեցած տեղը բերել. իսկ խորամանկը կ'աշխատէ որքան կարելի է մօտիկէն ստանալ իր շահը, այսինքն քովի մարդոց գրպանէն: Նեյօքն ինքը կը գործէ և ուրիշին ալ կը քարոզէ, որ մարդս ծնած է աշխարհի համար, իսկ խորամանկը համոզուած է, որ աշխարհը ստեղծուած է մենակ իր համար: Նեյօքը կ'ուզէ իրեն չորս կողմը բարեկամներ տեսնել. իսկ խորամանկը՝ ստրուկներ: Նեյօքին երեսը միշտ տըխուր է, բայց հոգին՝ զուարթ. խորամանկի երեսէն ժպիտը երբեք չի հեռանալ. բայց նրա սիրտը տարին տառներկու ամիս թոյն ու լեղիի մէջ թաթախուած է:

Եւրոպայի մէջ կըթագաւորէ խելքը, Ասիայի, Սֆրիկայի ու Աւստրիայի մէջ՝ խորամանկութիւնը: խորամանկը թէև շատ և շատ-շատ կը կը զարնէ, բայց միշտ ինքը կը յաղթուի. խելօքը առանց զարնելու կը յաղթէ:

Նեյօքը բարութիւն է, խորամանկութիւնը գորութիւն: խորամանկութենէն յառաջացած առաջին պտուղները թէև

շատ են, բայց նրա վերջը միշտ կորստական է. խելքի արգասիքը ի սկզբան թէև չեն երևիլ, կամ շատ սակաւ կ'երևին, բայց զնալով կը շատանան: Խորամանկ Թալէյ-րանի և Նապոլէօնի ոչ մի պտուղները չմնացին, բայց Վա-շինգտոնի սխրագործութիւններէն առաւել կը շահուին չիւսիսային Ամերիկայի Միացեալ-Նահանգները:

Խելքը և խորամանկութիւնը ուղղի տարրեր ոյժեր են. մինը գէպի բարին ուղղուած, միւսը գէպի չարը, բո-լորովին նման այն մարդուն, որ երկու որդի ունի, մինը բարի, շինող, օգտաբեր, իսկ միւսը չար, քանդող, վնասաբեր: Աշխարհքը և պարագան խելքինն են և ոչ խորա-մանկութեանը: Խելքը Աստուծոյ հրեշտակն է, խորաման-կութիւնը սատանայի օձը: Օձի օրհասը կրունկի տակն է: Խելքի և խորամանկութեան մէջ չափազանց մեծ տարբե-րութիւն չըտեսնելը նշան է պակասամտութեան:

Ռ. Պատկանեան

22. ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ ԿՐԹՈՒԱԾ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴ

Տեղը եկաւ՝ Հայ է նա, տեղը եկաւ՝ այլազգի,
Իրօք ոչ այդ և ոչ այն է, այլ ծնունդ մի նոր ազգի,
Հազնվում է նա միշտ en grand, ման է գալիս à la chigue,
Ճաշ է ուտում, ձւր էք կարծում, chez Dussot կամ Dominigue.
Կարգում է նա Morning, Debats. ոչ Բազմավէպ, ah, fi, donc!
Ֆրանսերէն էլ կոտրատում, հայերէնն է movais ton;
Զարթնում է նա ուղիղ մէկին, անկողնի մէջ թէյ խմում:
Նախաճաշիկն է երեքին, գաղղիացի պանդոկում.
Վեցին քառորդ ճաշի ժամ է չնաշխարհիկ մեր հային,
Ոչ թէ ստիպուած է այդ անել, այլ որ վրան շատ խօսեն—
Ուշի ուշով հետևում է Պետերբուրգի լուրերուն,
Դերձակից էլ ճիշտ տեղեակ է новомодный շորերուն.
Թէև զուրկ է մուգիկայից, բայց опера սիրում է,
Bosio-ի անուշ ձէնից նրա խելքը գնում է:
Պինգ խօսում է, ինչ որ կանխաւ feuilleton-ումն է կարդել,
Խօսքով աշխարհ կործանում է մեր պարօնը անարգել:
Նեպիր, Դունգաս ու այլ անձինք են նիւթ նրա զրուցին.

Պախարակում է Hugo-ին ու սիրում է Դիկենսին:
 Նա սիրում է, նա ուտում է ոչ իր բերնի ճաշակով:
 Նրա խելքը feuilleton է, прейс-курантъ է ճաշակը,
 Ու գիտութեանց ճեմարանը է իմ ասես պանդոկը:
 Քանի տարի քաշ է գալիս Պետերբուրգում այս կերպով,
 Ու յետ դառնում իր հայրենիք, դատարկ խելքով ու ջրով:
 Այնուհետև պահանջմունքը նրա մեծ են անհեթեթ,
 Միայն ինքն է խելօք, գիտուն, իսկ այլք կոպիտ ու տգէտ:
 Այդ թնչ զարմանք, որ յիմար ուզէ պատիւ իր անձին,
 Նա յիմար է, որ անարժան տայ պատիւը յիմարին,
 Բնութենէն խելաղուրկին Պետերբուրգը խելք չի տալ,
 Մեծ հունար չէ փողոցներում աննպատակ միշտ ման գալ:
 Ռալփ. Պատկանեան

23. ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ ԿՐԹՈՒՄԸ ՀԱՅ ԱՂԶԻԿ

Շուշան, շուտով դէմքդ ծածկէ, ձիւն գու, թուիր մրտաժ,
 Տես, սրգաճեմ ման է դալիս հայ աղջիկը մեր կրթում,
 Վարդի գոյնը ужъ въ модѣ: то-ли дѣло блѣдный ликъ!
 Այստեղումը блѣдный-ին դիմի՝ հայ աղջկունք, համ կնանիք,
 Ի՞նչ է գաղտնին блѣдный-ութեան—այդ յայտնի չէ ոչ ոքին,
 Միայն կասին, որ շուտուց է կաւիճն ունի բարձր գին:
 Առաւօտ է, մեր աղջիկը հայելուց չի հեռանում,
 Նորա ծնողք այնօր ճաշի гвардеецъ են սպասում:
 Гвардеецъ է, լաւ, միտք արէք, հայ չէ անշնորհ ու տգէտ,
 Гвардеецъ է՝ փայլուն շորով, ուսին դրած эполетъ.
 Տուն կը մտնի, գլուխ կը տայ այնպէս սիրուն, շնորհաշուք,
 Որ մեր կրթած հայ աղջկայ սիրտը կանէ тукъ-тукъ-тукъ.
 Էնտուր համար նա հայելուց օրն ի բուն չի պուկ գալի:
 Гвардеецъ-ին դուր չըգալը խիստ է նրան զգալի:
 Ոչ լուի դէմքով պիտի դուր գայ, այլ և անուշ խօսքերով,
 Ի՞նչպէս, թնչ կերպ, դուք կը հարցնէք, այդ էլ չգիտէ ոչով:
 Բարձի տակը պահած ունի նա George Sande-ի roman-ը,
 Գրեթե չի մօրից թաքուն կարդում է մինչ չորս ժամը:
 Անհատական այդ աղբիւրից նա քամում է անդադար
 Միտք զգացմունք, սիրոյ խօսքեր— կանանց սրտին մխիթար:
 Նա գտաւ իր идеяն և, այսօր ճաշին կը տեսնէ,
 Նա իւր անտես սիրահարին, ում որ սիրտը տուել է:

Հայոց աղջիկ, հայոց աղջիկ՝ զնա առաջ մի վախիլ,
 Блѣднѣй դէմքդ, շինծու խօսքդ ռվին ասես չեն խաբիլ:
 Гвардеецъ-ին դուրս չես գալի—լինչ ավստասնք, ինչ փնաս,
 Քեզ սիրահար ցысаръ, уланъ, артилеристъ կուեննաս:
 Քու փորձ փորձիր նորից դուր գալ, անուշ ժպտա ու խօսէ,
 Քսանմէկդ արդէն մօտ է, տես առաջիդ մեծ փոս է:
 Բայց մի թողնիլ դու George Sande-ին, идеалъ-իդ մուրանալ,
 Թէ ոչ ջահիլ, գոնէ ձերուկ կառնու քեզ ուս գենեալ:
 Բայց զգուշացիր դու հայերից, գին չեն դնիլ, չեն սիրիլ
 Քեզ, ինչպէս ցանկանում ես, դու քեզ հային մի մասնիլ:
 Փորձ փորձեցիր ու դուր չեկար ոչ Үләнъ-ին, ցысаръ-ին,
 Քսանհինգդ մօտենում է, հայ աղջիկ, վա՛յ քու հալին:
 Հայոց աղջիկ, հայոց աղջիկ, զնա առաջ մի վախիլ,
 Блѣднѣй դէմքդ, սիրուն խօսքդ ռվին ասես չեն խաբիլ:
 Տարիներդ ակօս ձգեց քու շնորհալի երեսին,
 Վնաս չկայ,—подругъ-ներդ դուրս համար ճար ունին,
 Երբ որ տանն ես՝ մի հրամայիլ տղոց քեզի մօտենալ,
 Դուրս գնալիս ликъ-իդ ձգէ դու կրկնաձալ հաստ ҮҮҮҮ
 Հարցնողներից ուշի ուշով ծածկէ տարիդ ծննդեան,
 Ու ամենին հաւատացուր, որ տասնութ ես ապրեկան:
 Դիպի. Պատկանեան

24. ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆԻ ԵՐԳԸ

Հիմի էլ լսենք, եղբարք, հիմի էլ,
 Երբ մեր թշնամին իր սուրնէ զրեւի:
 Իր օրհասական սուրը մեր կրծքին,
 Ականջ չի դնում մեր լաց ու կոծին,
 Ասացէք, եղբարք հայեր, ինչ անենք,
 Հիմի էլ լսենք:
 Հիմի էլ լսենք, երբ մեր թշնամին
 Դաւով, հրապուրքով տիրեց մեր երկրին,
 Զնջեց աշխարհքից Հայկայ անունը,
 Հիմքից կործանեց թորգոմայ տունը.
 Խլեց մեղանից թագ, և՛ խօսք, և՛ ղէնք,
 Հիմի էլ լսենք:
 Հիմի էլ լսենք, երբ մեր թշնամին
 Խլեց մեր սուրը—ալաշտպան մեր անձին,
 Մշակի ձեռքիցն էլ խոփը խլից,
 Այդ սուր ու խոփից մեր շղթան կռեց,

Վա՛յ մեզ, շղթայով կապած գերի ենք:

Հիմի է՛լ լռենք:

Հիմի է՛լ լռենք, երբ մեր թշնամին

Սոսկալի զէնքը բռնած մեր գլխին,

Կու՛յ տալ է տալիս արտասուենք առատ:

Մեր գլուխը լալու եփրատ թւո՛ւ պըտրենք,

Հիմի է՛լ լռենք:

Հիմի է՛լ լռենք, երբ մեր թշնամին

Լիրբ դոռողութեամբ լցրած իր հոգին,

Արդարութեան ձայնը հանած իր սրտից

Աբտաքսում է մեզ մեր բնիկ երկրից:

Պանդուխտ, հալածեալ, եղբարք, թւո՛ւ գիմենք,

Հիմի է՛լ լռենք:

Հիմի է՛լ լռենք, երբ մեր թշնամին

Անգոհ մեր բերած ծանր զոհերին,

Իւր լիրբ, նզոված ձեռքը կարկառեց,

Ազգութեանս վերջին կապը պատառեց,

Հայի կորուստը մօտ է, թնչ անենք,

Հիմի է՛լ լռենք:

Հիմի է՛լ լռենք, երբ մեր թշնամին

Արհամարհելով մեր խօսքն ազգային,

Մեր եկեղեցուն ձեռնամերձ եղաւ,

Գայլազգեստ գառին մեզ գլուխ դրաւ,

Սուրբ խորան չուենք, արդ թւո՛ւ ազօթենք:

Հիմի է՛լ լռենք:

Հիմի է՛լ լռենք՝ մարդիկ թնչ կասեն,

Երբ մեր քարինք, ապառաժք խօսեն,

Զե՛ն ասիլ որ հայք արժանի էին,

Այդ ստրկական անարգ վիճակին,

Մեր սուրբ քաջ նախնեաց գործերը գիտենք

Մինչև երբ լռենք:

Թող լռէ մունջը, անգամալոյծը

Կամ յորոց քաղցը է թշնամու լուծը:

Բայց մենք, որ ունենք հոգի ու սիրտ քաջ,

Եկ անվախ ելնենք թշնամու առաջ,

Գոնէ մեր փառքը մահով յետ խլենք

Ու այնպէս լռենք:

Դաւիթ Պատկանեան

25. Ք Ա Հ Ա Ն Ա Յ

Այն ի՞նչ է կանգնած ամբիոնի վրայ,
 Դողդոջուն ձեռքերն երկինք ամբարձած,
 Գրթառատ աչերն լի արտասուքով,
 Բաղմութեան ուշքը դէպի նա դարձած.
 Որին ամենը հայր են անուանում,
 Ծանօթ, անծանօթ՝ հաւասար յարգում,
 Որի լուկ խօսքը բլէնք է նոցա,
 Սրտի դաղտնիքը նորան են յայտնում:
 Քահանայ է նա՝ քաւող մեղքերու,
 Միջնորդ Աստուծոյ մարդկան ազգի հետ,
 Հովիւ է անխոնջ Բրիստոսի հօտին,
 Երկնաբիւր զանձին նա է արթուն դէտ:
 Երբ մենք թաթախուած Աղամայ մեղօք
 Եկանք այս աշխարհ՝ լցեալ ցաւերով,
 Ո՞վ մեզ սփոփեց իր սուրբ խօսքերով,
 Ո՞վ սրեց, մաքրեց մեր հին մեղքերը,
 Կամ՝ երբ ժանտախտած, ընկած մահձումը՝
 Մտատանջ, անյոյս մահ էինք խնդրում
 Պանդխտի նման ամենից թողած՝
 Ո՞վ մեզ առաջին հասաւ օգնութեան,
 Կամ՝ երբ մոլորուած գառներու նման
 Կոյր վաղում էինք դէպի խորխորատ՝
 Ո՞վ արդեօք այն օր փրկեց մեզ մահից,
 Դիւական գրքէն հանեց անարատ,
 Կամ՝ երբ մեղսալի աչքներս բռնաւ
 Չենք համարձակում երկինք ամբարձալ՝
 Որին կանչում ենք միջնորդ հաշտութեան,
 Ո՞ւմով յոյս ունինք թողութիւն ստանալ,
 Եւ կամ՝ ըզբաղած ունայն գործերով,
 Մոռցել ենք Աստուած, կրօն, սուրբ հաւատ:
 Ո՞վ է մեր տեղը մեր մեղաց համար
 Արտասուք թափում աչքէն յորդառատ:
 Քահանան է այն, և միշտ քահանան,
 Մեր միջնորդ, հովիւ քաջ և աղօթիչ,
 Որբոց հայր, եղբայր աղքատ մուրացիկին,
 Արտասուաց սրբող, յանցանաց քաւիչ:
 Եկ պատուենք, եղբարք, այդ սուրբ քահանան,
 Սիրենք միշտ նորան մանկական սիրով,

Որ ամբողջ գիշեր իր որդոց վրայ
 Պատրաստ է հսկել անքուն աչքերով:
 Նա բոլոր կեանքը զոհեց մեզ համար,
 Չուզեց փառք, պատիւ, զբօսանք աշխարհի,
 Քանց սուրբ քահանան էլ թվ է կարող
 Արդեօք մեզ համար լինել հայր բարի:
 ԳԱՄԱՌ-ՔԱԹՈՒՊԱ. — /Ի. Պատկանանան

26. ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ

Մայր Արաքսի ակերով
 Քայլամուր դնում եմ,
 Հին-հին դարուց յիշատակ
 Ալեաց մէջը պըտրում եմ:
 Բայց նորա միշտ յիշողուկ,
 Պղտոր ջրով եղերքին:
 Դարիւ-դարիւ խփելով,
 Փախչում էին լալագին:

— Արաքս, ինչո՞ւ ձկանց հետ
 Պար չես բռնում մանկական,
 Դու դեռ ծովը չըհասած՝
 Սըգաւոր ես ինձ նման:

Ինչո՞ւ արցունք ցայտում են
 Դու սէգ, հպարտ աչերից,
 Ինչո՞ւ արագ փախչում ես
 Այդ հարազատ ակերից:

Մի պըղտորիլ յատակդ,
 Հանդարտ հոսէ խայտալով, —
 Մանկութիւնը քու կարճ է,
 Շուտ կը հասնիս զէպի ծով:

Վարդի թփեր թող բընին
 Դու հիւրընկալ ակի մօտ,
 Սոխակները նոցա մէջ
 Երգեն մինչև առաւօտ:

Մշտադալար ուռիներ
 Սառ ծոցի մէջ քու ջրերին,

Հըկուն ոստըն ու տերե
 Թող թաց անեն տապ օրին:

Ափերիդ մօտ երգելու
 Հովիք թող դան համարձակ,
 Դառն ու ուլը քու վըճիտ
 Զուրը մտնեն միշտ արձակ: —

Ո՛րքը ուռցուց Արաքսը,
 Փրփուր հանեց իր տակից,
 Ամպի նման դոռալով,
 Էսպէս խօսեց յատակից:

«Խիզախ, անմիտ պատանի,
 Նիրհըս ինչո՞ւ դարեր
 Վըրդովում ես, նորոգում
 Իմ ցաւերը բիւրաւոր:

Սիրելիի մահից յետ
 Ե՞րբ ես տեսել, որ այրին
 Ուքից գլուխ պըճնուի
 Իր զարդերով թանկագին:

Որք համար զարդարուիմ,
 Որք աչքը հրապուրեմ, —
 Շատերն ինձ են ատելի,
 Շատերին ես օտար կամ...

Կար ժամանակ, որ ես էլ
 Շքեղազարդ հարսի պէս
 Հագար ու բիւր պըշրանքով
 Փախչում էի ակերէս:

Յատակըս պարզ ու վհիտ,
Կոհակներըս ոլորուն,
Լուսաբերը մինչև այգ
Ջըրիս միջին էր լողում:

Ի՞նչըս մնաց այն օրից,
Ո՞ր ջրամօտ գեղերս,
Ո՞րը իմ շէն քաղաքից,
Ո՞ր բերկրալի տեղերըս:

Ա՛խ կենսատու իմ ջրով
Ափերիս մօտ կըկըղած՝
Իր նամազը կատարե
Քուրք կամ պարսիկը հոտած:

Մինչ իմ որդիք, — ո՛վ գիտե —
Ծարաւ, նօթի, անտէրունչ
Օտար աշխարհ յածուռ են
Քոյլ ոտքերով կիսաշունչ...

Հեռո՛ւ, հեռո՛ւ, քշեցին
Բընիկ ազգըն իմ Հայկեան,
Նորա տեղը ինձ տուին
Ազգ անկրօն, մոլեկան:

Դոցա համար զարդարեմ
Իմ հիւրընկալ ափերը,
Եւ կամ դոցա հրապուրեմ՝
Ճըպրոտ, պըլշած աչերը:

Քանի որ իմ զաւակունք
Այսպէս կու մնան պանդուխտ,
Ինձ միշտ սըղաւոր կըտեսնէք,
Այս է անխաբ իմ սուրբ ուխտը:

Էլ չըխօսեց Արաքսը՝
Յորձանք տուեց ահագին,
Օղակ-օղակ օձի պէս
Առաջ սողաց մոլեգին:

Դ. Պատկաննան

Գրեցէք սրա բովանդակութիւնն արձակ, — Արաքսն ի՞նչպէս
է ներկայացուած այստեղ և ի՞նչ է պատմում: Համեմատեցէք այս
Արաքսը Զանգուի հետ, ցոյց տուէք նմանութիւնն ու տարե-
րոյթը: Համեմատեցէք նոյնպէս Гоголь-ի Дубнуրի հետ:

26.* ՌԱՓԱՅԷԼԻ ԸՆԿԵՐՆԵՐԸ

Ռափայէլի դպրոցական ընկերներէց էին իր հօրեղ-
բօր որդին՝ Քերօրէն, Դոդոխեանը և Միրիմանեանը, երե-
քն էլ Դորպատի ուսանողներ, որտեղ գրեցին իրանց ա-
ռաջին երգերը. Քերօրէի գրչին է պատկանում մի քանի
ուրախ ուսանողական երգեր, գրուած կամ թարգմանած
ընտիր աշխարհաբարով. դրանց մէջ մասնաւորապէս յայտ-
նին է «Ինձ համար չէ» երգը: Քերօրէն վերջը անուն
հանեց որպէս հայերէնի յայտնի պրօֆեսօր Պետերբուրգի
համալսարանում:

Դորպատեան երգերից ամենից աւելի ժողովրդականն
է «Ծիծեռնակը», Դոդոխեանի գրած ընտիր աշխարհա-

բարով և մի դուրեկան ու գողտրիկ եղանակով: Սրանց
ընկերներից էր և Միրիմանեանը, որ գրեց «Հայոց ազ-
ջիկները»: Այս բոլոր երգերն հրատարակուեցան Գամառ-
Քաթիպայի «Ազգային երգարանում»:

27. Ի Ն Ձ Հ Ա Մ Ա Ր Ձ Է՝

Ինձ համար չէ՛ գարնան գալը,
Ինձ համար չէ՛ ծառի ծաղկիլը.
Ուրախութեան սրտի զրգիւրը,
Ո՛չ մի բերկրանք չեն ինձ համար:

Ինձ համար չէ՛ կենաց բաղդը,
Ինձ համար չէ՛ երջանկութիւնը,
Եւ մրայօն ¹⁾ կուսի աչքերը,
Նոցա արցունք չեն ինձ համար:

Ինձ համար չէ՛ փայլուն լուսնի
Անտառ ու սար լուսաւորելը,
Գարնան վարդի երգչի տաղերը,
Սոխակ ու վարդ չեն ինձ համար:

Ինձ համար չէ՛ ծնողաց լացը,
Ինձ համար չէ՛՝ աղջկայ տխրիլը,
Գերեզմանիս վրայ արտասուելը
Բարեկամաց չէ՛ ինձ համար:

Բայց ինձ համար կուգայ ժամը,
Կ'երթամ թշնամու պատերազմը,
Եւ մահառիթ սպանիչ գնդակը
Անդ պատրաստած է ինձ համար:

Թարգմ. Բ. Պատկանեան

Ի՞նչ գաղափար է քարոզում այս երգի մէջ, գրեցէք արձակ:

¹⁾ Սև ունք:

28. ԵՐԳ ՊԱՆԴՈՒԽՏ ՊԱՏԱՆԵԿԻ

Ծիծեռնակ, ծիծեռնակ,
Դու դարնան սիրուն թռչնակ,
Դէպի հար, ինձ ասա,
Թընչում ես այդպէս արագ:

Ա՛խ, թըրիւր, ծիծեռնակ,
Ծընած տեղըս Աշտարակ,
Անդ շինիր քո բունը
Հայրենի կըտուրի տակ:

Անդ հեռու ակոր,
Հայր ունիմ սրգաւոր,
Որ միակ իւր որդուն
Սպասում է օրէ օր:

Երբ տեսնես դու նորան
Ինձնից շատ բարեւ արա,
Ասա, թող նըստի լայ
Իւր անբաղդ որդու վրայ:

Դու պատմէ, թէ ինչպէս
Աստ անտէր ու խեղճ եմ ես,
Միշտ լալով, ողբալով
Կեանքս մաշուել, եղել է կէս:

Ինձ համար ցերեկը
Մութ է շրջում արեգը
Գիշերը թաց աչքիս,
Քունը մօտ չի գալիս:

Ասա որ չի բացուած
Թառամեցայ միացած,
Ես ծաղիկ գեղեցիկ՝
Հայրենի հողից զրկուած:

Դէհ, սիրուն ծիծեռնակ,
Հեռացիր, թռիր արագ
Դէպի հայոց երկիրը
Ծնած տեղս—Աշտարակ:

(Դորպատ, 1854) Դողդիսեան

Համեմատեցէք «Կռունկ»-ի հետ. ցոյց տուէք նմանութիւնն
ու տարբերութիւնը:

29. ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԻԱՆ

Միքայէլ Նալբանդեանը ծնուեց Նոր-Նախիջևան 1829
թ. նոյեմբերի 2-ին: Հայրը՝ ուստա Ղազարը, կպրի առու-
տուր ունէր: Ծնողները տուին նրան Տէր-Գաբրիէլ Պատ-
կանեանին, որ ուսում տայ Միքայէլին:

Քահանան, որ ժամանակի ամենալուսամբտ անձերիցն
էր, տեսնելով իր աշակերտի աշխոյժ բնաւորութիւնը և
ընդունակութիւնները՝ առանձին ուշք դարձրեց նրա վրայ:
Մինչև 1840 թիւը մնաց նա իր վարժապետի մօտ և սո-
վորեց հայկաբանութիւն, կրօնագիտութիւն, հայոց պատ-
մութիւն և մասամբ ռուսերէն: Շատ սիրում էր երգեցո-
ղութիւն, լաւ ձայն և նուրբ լսողութիւն ունէր: Մատթէ-
ոս արքեպիսկոպոս Վեհապետեանը, որ առաջնորդ էր Նա-
խիջևանի և Բեսարաբիայի, 1847 թուին եկաւ Նոր-Նա-
խիջևան և տեսնելով Նալբանդեանի ընդունակութիւնը և
գրագիտութիւնը՝ առաւ նրան իր մօտ և կարգեց քարտու-
ղար: Քարտուղարութեան պաշտօնը նա պարզերեսու-
թեամբ կատարեց վեց տարի շարունակ և արդիւնաւոր
ծառայութեամբ համակրութիւնը գրաւեց թէ հասարակու-
թեան թէ առաջնորդի: Գաբրիէլ քահանան 1850-ին հրա-
տարակում էր «Արարատ» թերթը. իր ուսուցչի թերթու-
մըն է առաջին անգամ հանդէս գալիս Միքայէլը գրելով
նախ գրաբար, ապա աշխարհաբար մի ոտանաւոր, ինչպէս
իր մանկութեան ընկեր Ռափայէլը: 1853 թուին Նալբան-
դեանը գալիս է Մոսկուա և այնտեղից՝ Ս.-Պետերբուրգ,
ուր համալսարանում քննութիւն տալով՝ ստանում է ու-

սուցչութեան վկայագիր և Լազարեան ճեմարանի մէջ կարգուամ է ուսուցիչ Հայոց լեզուի Սակայն այստեղ ևս հանգստութիւն չի գտնում Նալբանդեանը...

Զգալով իր թերի կրթութիւնը նա սկսում է կանոնաւորապէս ուսանել եւրոպական լեզուներ և այն գիտութիւնները, որոնք անհրաժեշտ են համալսարան մտնելու համար, այնպէս որ կարողանում է Մոսկուայի համալսարանի բժշկական բաժնում պրոֆեսսորի դասախօսութիւնները լսել և հասկանալ: Բայց չաւարտած և քննութիւն չտուած՝ թողնում է համալսարանը և պարապում է գրականութեամբ: 1858 թուականին գիտնական և անուանի ուսուցչապետ Նազարեանը հրատարակում է «Հիւսիսափայլ» օրագիրը և Նալբանդեանը լինում է նրա քանքարաւոր գործակիցներից մինը: Նրա յօդուածները «Հիւսիսափայլի» ղլխաւոր զարգն էին և ամեն օրագրի կարող էին պատիւ բերել... Այսպէս երկու երեք տարի շարունակ փառաւորապէս կրեց նա «Հիւսիսափայլ»-ի դրօշը, իր ճարտար գրչի տակ արդի աշխարհաբար լեզուն մշակելով:

1859-ին Նալբանդեանը մասամբ տկարութեան պատճառով և մասամբ բան տեսնելու դիտաւորութեամբ դրնաց արտասահման, շրջելով Պօլիս, Վիէննա, Փարիզ և այլ քաղաքներ: Այս քաղաքներում ծանօթացաւ և բարեկամացաւ հայերի հետ և իր՝ «Հիւսիսափայլին» ուղղած նամակների մէջ նկարագրեց նրանց վիճակն ու գործեր: 1859 թուականի վերջերին վերադարձաւ Պետերբուրգ և սկսեց կանդիդատի վկայագիր ստանալու համար քննութեան պատրաստուել, և իրօք 1860 թ. Պետերբուրգի համալսարանում քննութիւն տալով՝ ստացաւ արևելեան լեզուագիտութեան կանդիդատի աստիճան:

Հնդկաստանի մեծատուն հայերը 90 – 100 տարի սրանից առաջ մեծագումար փողեր էին կտակել զանազան քաղաքների, սրանց կարգում և Նախիջևանի անունով, բայց մինչև 1860 թիւը այս ծանրակշիռ գործը մեր ազգի զանցառութեամբ բարձի թողի էր արուած, այսքան տարուայ միջոցում ոչ ոք յանձնառու չէր եղել այդպիսի

հեռաւոր ճանքորդութիւն անելու և գործն աւարտելու: Նախիջևանցիք Նալբանդեանին ընտրեցին այդ գործին երեսփոխան և նա անցնելով Պօլիս, Պարիզ, Լոնդոն, և անտեղից Պարիզի ու Սուէսի ճանապարհով հասնում է վերջապէս Կալկաթա ու մեծամեծ դժուարութեանց ու արգելքների յաղթելով հանում է կոտակած փողերի մնացորդը... 1862-ին վերադառնում է Նախիջևան և մինչև պատրաստում էր հաշիւ ներկայացնելու հասարակութեան՝ ձերբակալւում է և ուղարկւում Պետերբուրգ, երեք տարի նա մնաց բանտարկուած. բանտումն էլ նա պարապում էր գրականութեամբ. թարգմանեց Ղազար Փարպեցու թուղթը և կազմեց աշխարհաբարի քերականութիւնը, 1865 ին ազատուելով բանտից ուղևորուեց Սարատովի նահանգը, Կամիշին քաղաքը կումիսով բուժւելու:

Բայց այդպիսի անխոնջ պարապմունքը և այլ հանգամանքները շատ վնասակար ներգործութիւն ունեցան նրա արդէն խանգարուած առողջութեան վրայ, էլ առաջուայ աշխոյժն ու կենդանութիւնը վրան չէր մնացել. բոլոր բարեկամների ու ծանօթների սիրտը մորմուքում էր՝ նայելով առաջուայ կրակոտ հայի ուրուականի վրայ: Չորս ամիս դառն և անմխիթար օրեր տեսնելով իբրև արքորական, վախճանուեց մարտ ամսի 31-ին 1866 թ.: Նրա մարմինը, իր ցանկութեան համեմատ, բերուեց Նախիջևան և մեծ հանդիսով թաղուեց Ս. Խաչ վանքի դաւթում:

Նալբանդեանը փորձել է գրականութեան բոլոր ճիւղերը, բանաստեղծութիւն, վիպասանութիւն, հրապարակախօսոյթ և քննադատութիւն. ամենից աւելի նրան աջողւում էր քննադատութիւնն. մանաւանդ հրապարակախօսութիւնը: Նա մեր առաջին ամենատաղանդաւոր հրապարակախօսն էր:

Բանաստեղծականի մէջ նա թողել է մի հատիկ երգ. «Աղաւն Աստուածը», որ համաշխարհային գրականութեան մէջ անգամ պատուաւոր տեղ կարող է բռնել. խիստ տաքածուած և սիրուած է նրա «Մեր հայրենիքը», որ շատե-

քի կարծիքով թարգմանութիւն պիտի լինի, այն ինչ դա մի ինքնուրոյն գործ է:

Ինքնուրոյն գործերից ամենանշանաւորն է «Երկրագործութիւնը»: Դրա մէջ Նալբանդեանն ալն կարծիքն է արծարծում, որ մի անհատի, ինչպէս և ազգի բարեկեցութեան հիմքը տնտեսականն է, իսկ տնտեսականի հիմքը երկրագործութիւնն է:

Աշխարհաբար լեզուի հիմնադիրներէց ու խոշոր մշակողներից մինն էր: Նա ստեղծեց հրապարակախօսութիւնն ու բննադատութիւնը մեր մէջ: «Մեռելահարցուկը», որ Ֆէլիեոսի բնաւորութիւն ունի, սուր կերպով բննադատում է ժամանակակից վարք ու բարքերը ծաղրելով:

Համեմատեցէք սրա և Ռաֆայէլի կեանքը:

Գ. Վանցեան

30. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՆԴՈՒԽՏԸ

Հայ ազգը օր ըստ օրէ թողնում է իր երկիրները և կենդրոնանում է քաղաքներում: Աշխատութիւնը ստիպում է նրան թողնել իր տունը, իր ընտանիքը, իր ամուսինը, իր դաւակները և գնալ Պօլիս կամ այլ քաղաք՝ աղքատութիւնից ազատուելու համար: Բայց այդ տեղերում ևս նրան հանդէպ է դուրս գալիս էսպէս նոյն աղքատութիւնը, գուցէ մէ փոքր քաղաքային ամոք կերպարանքով:

Բացի սրանից՝ ընտանեկան կեանքից զրկուելը, դժուարային աշխատութիւնը՝ որով պիտի շահի նա մի քանի յաւելեալ ղուրուշներ, տնտուն, վարատական և անմաքուր կեանքը, որ պիտի անցուցանէ նա զանազան իջևաններում, երեկոյեան պիտի դայ վաստակեալ, ուժաթափ, շատ անգամ և ֆրասուած անդամներով, իսկ լուսաբացին նոյն եգիպտական ծառայութիւնը, որ սպասում է նրան: Չկայ այն ընտանեկան մխիթարութիւնը, ամուսնու և զաւակների մտերմական և անմեղ հայեացքը, որ առանց ձայնի, առանց խօսելու՝ կարող են ամոքել ճակատագրի դառնութիւնը: Եւ այսպէս, իբրև զրաւստ, իբրև մեքենայ ծառայելով արտա-

սուեկի օտարութեան մէջ տասն-քսան տարի, կամ մեռնում է այնտեղ, թողնելով իր ընտանիքը ծայրացեալ թշուառութեան մէջ, կամ վերադառնում է դէպի իր երկիրը: Վերադառնում է... բայց ոչ այնպէս առողջ և գուարթ՝ ինչպէս դուրս էր եկել այն տեղից, այլ հասակն առած, ուժաթափ և թօշնած: Վերադառնում է իր տունը, երբ կորուսել է աշխատելու ընդունակութիւնը և յարմարութիւն: Ուրեմն՝ վերադառնում է նա միմիայն իր ներկայութեամբ իր աղքատ և կարօտ ընտանեաց թիւը սւեկացնելու համար: Եւ ահա նրա տասն և ութը կամ քսան տարեկան որդին, որ աճել և զօրացել է իրրեւ մի ծաղիկ իր սեփական հողի վրայ՝ առնում է ձեռքը իր հօր պանդխտական գուլագանը և գնում է...

—Ո՞ւր բաւով:

«Պօլիս, Տրապիզոն, և այլն և այլն:

—Ինչի՞ համար:

«Աշխատելու և ընտանիքին օգնելու»:

—Աշխատելու և ընտանիքին օգնելու, — կրկնում է խօսակիցը անհնարին տխրութեամբ:

Անցնում է սրա վրայով մի քանի տարի, յանկարծ, այս նորեկը լուր է ստանում, որ իր ծերունի հայրը վախճանուել է, մայրը հիւանդ է: Մի փոքր ժամանակից, և մայրը մեռնում է:

Պանդխտակիցքը դալիս են նրան մխիթարելու: Մի երկու բաժակ զինի... մի քահանայ, մի «հոգւոց», պանդուխտի սիրտը պաղում է այն աշխարհից, ուր ծնուել էր... Ի՞նչ բանի համար վերադառնայ: Նա դտնելու չէ իր տունը, իր ծնողները, նրա աչքին պիտի հանդիպեն երկու գերեզման և մի ամայի ընակարան, եթէ և այն չէ անցել օտարի ձեռքը, նա որոշում է մնալ պանդխտութեան մէջ, և այս որոշումով յօժարում է մինչև տակը խմել թշուառութեան բաժակը: այո, մնում է նա, բայց տունը մարեց:

Արդևօք որքան զերգաստաններ ընկնում են այսպէս:

Մ. Նալբանդեան

31. ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆԻ ՊԱՏԱՄԽԱՆԸ

Հիմի էլ խօսենք, եղբարք, հիմի էլ,
 Երբ ընտանեկան երկպառակութեամբ
 Ուրիշ բան չունենք, բայց իբար դաւել,
 Եւ սարսափելի ազգութացութեամբ
 Մեր նախնեաց ուխտը ոտքով կոխել ենք:

Հիմի է՞լ խօսենք:

Հիմի էլ խօսենք, երբ քաջն Վարդան
 Վաթսուն հազարից հազարով մնաց,
 Մինչ մնացել էր պարսից լոկ մատեան
 Գունդը, մեր վաթսուն հազարի դիմաց,
 Երբ մեր վատութեամբ ճղջ կորուստի ենք:

Հիմի է՞լ խօսենք:

Հիմի էլ խօսենք, երբ օտարից շատ
 Մենք ենք մեր ազգի արիւնը խմում:
 Մոխրատնով լցրինք Դուին, Արտաշատ,
 Ծխի մէջ կորաւ խաչն եկեղեցուն,
 Երբ այս ամենը մենք կատարել ենք:

Հիմի է՞լ խօսենք:

Հիմի էլ խօսենք, երբ հրապարակում
 Պարսիկը առակ արել է հային,
 «Եթէ ասորու նման աշխարհում
 Զկայ մի վատ ազգ, բայց քան ասորին
 Էլ վատ է հայը», մենք այս տանում ենք:

Հիմի է՞լ խօսենք:

Հիմի էլ խօսենք, երբ իշխանութիւն
 Ծախում է անարդ հացկատակներին,
 Մինչ ասորուկ մարդիկ նստան մեր գլխին,
 Եւ մեզ կարծում են հող իրանց ոտքին,
 Ու մենք մեզ կոխող ոտքը լիզում ենք:

Հիմի է՞լ խօսենք:

Հիմի էլ խօսենք, երբ Լուսաւօրչի
 Բնիկ ժառանգի թեքը կտրած,
 Անարդ պարսիկը՝ այս ու այն թիմի՝
 Կարգում է տեսուչ ըստ իւր չար մտաց,
 Եւ մենք դեռ «կեցցէ արին» գոռում ենք:

Հիմի է՞լ խօսենք:

Հիմի է՞լ խօսենք, երբ ձեռք ենք տալիս,
 Երբ ողջունում ենք մենք այդ չքերին,

Որ դուան շուն են և մեզ տեսնելիս՝
 Սուտ գիմակները դնում երեսին,
 Այգպիսիներին դարձեալ պատվում ենք,
 Հիմի էլ խօսենք,
 Էլ մեր երեսին ֆնֆց մի կաթիլ
 Ամօթի սուրբ ջուր, որ բերան բանանք:
 Ոչ, թէ չենք ուզում հողից հող կորչիլ,
 Թշնամու արիւնով մեր թրին ջուր տանք,
 Ապա թէ խօսենք:
 Միքայէլ Նալբանդեան

32. Ա Ղ Ք Ա Տ Կ Ի Ն

Յուրաքանչեւ ձմեռ սաստիկ,
 Ձիւնը ծածկեց գետինը,
 Ամենայն մարդ մըտաւ իր տուն,
 Պատըսպարուիլ ցրտիցը,
 Ժամի դռանը դողդողալով,
 Կանգնած է մի աղքատ կին,
 Նըրա հանդերձ պատառ-պատառ,
 Զունի շապիկ իր հագին:
 Անհամարձակ նա իր ձեռքը
 Պարզում է անցկացողին—
 «Ողորմութիւն արէք, պարոն,
 Անտուն, անտէր աղքատին»:

Ձեզ, սիրելիք, ասեմ ձիւ էր
 Այս խղճալի աղքատը.
 Այն ցրտումը ոտաբոքիկ
 Կանգնած ժամի դռանը:
 Շատ ժամանակ դեռ չէ անցել,
 Երբ նա փառքով ու պատուով
 Ման էր գալիս փողոցներում
 Իր սեփական կառքերով:
 Այժմ վախով նա իր ձեռքը
 Պարզում է անցկացողին—
 «Ողորմութիւն արէք, պարոն,
 Անտուն, անտէր աղքատին»:

Ամենայն օր նրա դռանը
կանգնած էին շատ կառքեր,
Միշտ հացկերոյթ, ընթրիք, գինի,
Նուազարան ու տաղեր.
Ամենայն ոք ցանկանում էր
Լինել նրան բարեկամ:
Այժմ զըրկուած ասին բանից՝
Չունի անգամ հացի գին:
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»:

Ամենայն օր իր մարմինը
Անուշահոտ ջրերով
Լուանում էր, մազը սանրում
Կըրիայի նուրբ սանրով.
Նա հալնում էր բենեզ, կերպաս,
Դիպակ, թաւիշ թանկագին.
Նա չըգիտէր ինչ ասել է
Կարօտութիւն արծաթին:
Այժմ անլուայ, մազերն արծակ,
Չունի հազուստ, թէն հին:
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»:

Ժամի դռան նա կանգնած է,
Լէքերը կոր, վիզը ճուղ.
Նրա նախկին բարեկամքը
Չեն ասում նրան. «խըղճե՛կ,
Ի՛նչ դու քեզ մօտ, մենք կ'ամոքենք
Քո վիճակի դառնութիւն,
Կը թուլացնենք ճակատադրիդ
Խիստ հարուածի սաստկութիւն»:
Նա տանում է տառապելով
Այս սոսկայի վըշտերին:
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»:

Մ. Նալբանդեան

33. ՄԵՍՐՈՊ ԹԱՂԻԱԴԵԱՆՑ

Զարմանալի բան է, թէ այս մարդու և Աբովեանի կեանքը ի՞նչքան նման են միմեանց։ Երկուքը ևս դուրս գալով էջմիածնից ղնում են օտար և հեռաւոր աշխարհներ և ուսանելով իսկոյն վերադառնում են էջմիածին. ինչո՞ւ համար—մի դպրոց հիմնարկելու, ստացած լոյսը ազգի մէջ տարածելու համար։ Աբովեանը կատարեց երկրորդ անօգուտ փորձը, որի առաջինը կատարել էր Թաղիադեանցը։ Սա վերադարձաւ էջմիածին Յովհաննէս կաթողիկոսի ժամանակին (1835—40) և աղաչելով պաղատելով, սորան միջնորդ և միասին բարեխօս բռնելով կարողացաւ որպէս գլխաւոր ուսուցիչ մտնել էջմիածնի դպրոցը։ Բայց ի՞նչ ուսուցչութիւն. ի՞նչ եղաւ այս եռանդոտ ջանքի հետեանքը։ Կարճ միջոցում ստացաւ նա, ինչպէս սովորական է հայերի մէջ մի անագին բազմութիւն թշնամիների, որոնցից գլխաւորը էին սինոդի պրոկուրոր Ղորղանեանցը և ատենադպիր Քարտաշեանը։ Ինչ զրպարտութիւնը, ինչ հալածանք բարձրացաւ այնուհետեւ խեղճ Թաղիադեանցի վրայ։ Յուրտ սենեակի մէջ փայտ չէր ստանում վառելու, ահա մինչև այս վիճակին հասաւ նորա թշուառութիւնը։ Ոչ ով տաք սրտով արժան չէր համարում նայել դպրոցի և հետևաբար նորա գլխաւոր վարժապետի կամ կառավարչի վրայ... վերջապէս աեռնելով, որ ոչինչ հնար չուկայ մնալու, ստիպուեց վերստին դուրս գնալ աթոռից։

Մի փոքրիկ անցք ճշգրիտ պատկեր է տալիս Թաղիադեանցի վառ աշխուժի մասին։ Վերջին անգամ ղնում է Յովհաննէս կաթողիկոսի մօտ հրաժարական ողջոյն տալու։ Վեհարանում գտնվում են հին ժամանակներից կաթողիկոսին ընծայ ուղարկուած յախճապակեայ թքամաններ։ Սպանից մի փոքրը և գեղեցիկը կաթողիկոսի սարկաւազը շինել է թանաքաման։ Թաղիադեանցը տեսնելով այս փոխարկութիւնը թքամանի դէպի թանաքաման, անպատրաստից ասում է հետեեալ ոտանաւորը.

«Երբ թքաման, թանաքաման
Դարձեալ ետես այս վեհարան,
Ձինչ այլ բեզ յոյս աստէն մնալ
Մեսրոպ Դաւթեան Թաղիադեանց»:

Խեղճ Թաղիադեանց, խաղաղութիւն քու հոգուն,
չարչարվեցիր ազգի լուսաւորութեան համար, բայց չյա-
ջողեցաւ քեզ, որպէս և շատերին տեսանել քո մարգա-
րէական ազդու բարոգութեան պողպարեղութիւնը ազգի
մէջ:

Մ. Նալբանդեան.

34. ԱԶԳԱՍԷՐ ՕՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Ես մինչև այժմ չեմ հասկանում թէ Թաղիադեանցը
ինչ խորհուրդով գործնական լեզու շինեց իւր մատենա-
դրութեան հանդիսում հին և մեռած լեզուն: Ազգասէր
օրագիրը ևս հրատարակում էր այդ լեզուով, Դժուար է
հասկանալ այսպիսի անբնական գործը, մանաւանդ Թա-
ղիադեանցի կողմից, որ եւրոպական կրթութիւն ստացած
ինեւրով և այն մի գործնական ազգից, ինչպէս անգլիա-
ցիք են, չէ մտածել, թէ խօսելու կամ գրելու խորհուրդն
այն է, որ ժողովուրդը կարգայ և բան հասկանայ: Ինձ
շատ ծանր է թուել Թաղիադեանցին այն հայերի կարգում,
որ մտածում էին մեռեալը գործիք շինել, ժողովրդի մէջ
կեանք ներս բերելու համար:

Մ. Նալբանդեան.

35. ՎԷՐՔ ՀԱՅԱՍՏԱՆՈՒ ՄԱՍԻՆ

Բարի յիշատակի արժանաւոր Արովեանի, Վէրք Հա-
յադանի անունով գործը—է ազգային բանաստեղծու-
թեան մի հարազատ գաղափար: Ինձ մինչև այժմ չէր
յաջողվել մի քանի բառ խօսել այդ աշխատութեան մա-
սին: Ահա այդ աշխատութեան մէջ մարմին է առել ազգի

հոգին, ազգի ներկայ վիճակը, ազգի հասկացողությունը: Այստեղ, որպէս մի կախարդական հայելու մէջ ցոյց է տալիս բանաստեղծը հայոց ազգի ընտանեկան կեանքի անշուք և անմխիթար պատկերները. այնտեղ տեսնում ենք գիւղերի տանուտեարքը, ծանօթանում ենք նոցա հասկացողութեան հետ: Բարեխիղճ քանաստեղծը հանդիպեցնում է մեզ հոգեոր մարդերի, խօսեցնում է նոցա իւրեանց հասկացողութեան պէս այս ու այն բանի մասին, պատկերացնում է մեր առաջի ունկնդիրների հասկացողութեան վիճակը, սահմանում է այն տխուր յարաբերութիւնը, որ կար նոցա մէջ: Մենք տեսնում ենք, այդ ապօլոնեան հայելու մէջ հայկական կեանքի մեռած պատկերը, տեսնում ենք թէ ինչպէս այդ մեռելային դաշտի զանազան կէտերում խլրտում է առաքինութիւնը և հովուական կամ նահապետական ժամանակների հասկացողութեամբ ընդգէմ է զինուորովում այս կամ այն անիրաւութեան, թէ ինչպէս հալածւում է այս առաքինութիւնը և պատճառ է լինում բիւր կաթիլներով արտասուելի: Նա ցոյց է տալիս Աղասու ընկերներով, թէ ո՛չ բոլորովին սառել է հայրական արիւնը Հայաստանի զաւակների երակներում, ցոյց է տալիս թէ մի հերոսի հրաւէր, ազգի իրաւունքների, կրօնի և ազատութեան անարգւելու վրէժը մի թշնամուց հանելու համար, դեռ ևս տեղ գտանում է ազգի երիտասարդների սրտի մէջ, ցոյց է տալիս մեզ ազգի ընդհանուրի վնասեալ և յուսահատ դրութիւնից յառաջացած սառնութիւնը դէպի Աղասու ընկերքը, նոցա կիսասիրտ կանացի ցաւակցութիւնը այս կտրիճներին, որով հասկացնում է Աբովեանը թէ Աղասու ընկերների հոգին ընդհանրական չէ բոլոր ազգին, թէ այս ջերմարիւն տղամարդիկը շրջապատված էին սառնարիւն մարդերից, որոնց աչքում ամենայն բարոյական խնդիր կորուսել էր իւր արժանաւորութիւնը և որոնց միակ քաջութիւնը ամփոփւում էր այն բանի մէջ, որ կարող էին լալ, ողբալ և մորմոքել, առանց որոնելու այդ դրութիւնից դուրս գալու հնարը: Տեսնում ենք այն հայելու մէջ պարսիկների

բարբարոս վարեցողութիւնը մեր խեղճ ազգի հետ, մեր ազգի հարստահարված վիճակը, այստեղ ցոյց է տալիս բանաստեղծը այն յարաբերութիւնը, որ մի անկիրթ ազգ կարող էր ունենալ դէպի բռնակալ իշխանութիւն:

Վէրք Հայաստանին ոչ թէ ռամկի ոճով ռամկի համար է գրուած, ինչպէս ասում է Արեւմուտք օրագրի խմբագիր Ոսկանեանը, այլ բոլոր ազգի համար, այնտեղ կայ ուսանելիք ոչ միայն շինականի համար, այլ և քաղաքացու, այլ և հայոց կիսատ թերատ ուսումնականների համար ևս: Հայոց ազգը կորուսած լինելով իւր քաղաքականութիւնը, անհետացած լինելով տոհմական ազնուականութիւնքը տուների, ռամիկը ևս չկայ, որ կարող է լինել այնտեղ միայն, ուր կայ ազնուութիւն: Ազնուութիւնը հաքատութեան վերայ չէ, և ոչ նաև ռամկութիւնը աղքատութեան վրայ. այս քոպէիս մեր ազգի ամեն մի անդամք հաւասար են իւրեանց մէջ: Ազնուական և ռամիկ չլինելով մեր ազգի մէջ, չունենք և այդ կացութիւնների սեպհական բարբառներ, հին և մեռած գրաբար լեզուն ազնուական չէ և ոչ կենդանի ժողովրդականը ռամկական, ինչպէս մի քանի վայր ի վերոյ մարդիկ ասում են:

Մ. Նալբանդեան

36. Ե Ր Գ Ա Զ Ա Տ Ո Ի Թ Ե Ա Ն

Ազատն-Աստուած այն օրից
Երբ հաճեցաւ շունչ սփել:
Իմ հողանիւթ շինուածքին
Կենդանութիւն պարգևել:

Էս անբարբառ մի մանուկ
Երկու ձեռն պարզեցի
Եւ իմ անզօր թևերով
Ազատութիւնը գրկեցի:

Մինչ գիշերը անհանգիստ
Օրօրօցում կապկապած՝

Լալիս էի անդադար
Մօրս քունը խանգարած:

Խնդրում էի նորանից
Բազուկներս արձակել:
Ես այն օրից ուխտեցի.
Ազատութիւնը սիրել:

Թոթով լեզուիս մինչ կապիւրը
Արձակուեցան, բացուեցան,
Մինչ ծնողքս իմ ձայնից
Խընդացին ու բերկրեցան:

Նախկին խօսքն որ ասացի,
 Ձէր հայր կամ մայր կամ այլ ինչ:
 «Ազատութիւն», դուրս թըռաւ
 Իմ մանկական բերանից:
 «Ազատութիւն», ինձ կրկնեց,
 Ճակատագիրը վերնից,
 «Ազատութեան դու զինուոր
 Կամիս դրուիլ այս օրից:

Ո՛հ, փրշոտ է ճանապարհդ,
 Քեզ շատ փորձանք կ'սպասէ:
 Ազատութիւն սիրողին
 Այս աշխարհը խիստ նեղ է:
 —Ազատութիւն,—գոչեցի,
 Թո՛ղ որոտա իմ զլխին
 Փայլակ, կայծակ, հուր, երկաթ,
 Թող դաւ դնէ թշնամին:

Ես մինչ ի մահ կախազան,
 Մինչև անարգ մահու սին,
 Պիտի գոռամ, պիտ կրկնեմ,
 Անզազար, ազատութիւն:

Մ. Նալբանդեան

Արդեօք հեղինակի կեանքը համապատասխան է եղել այն
 դադափարներին, որոնք արժարժուած են այստեղ:

Ի՞նչպիսի ազատութեան է ձգտում հեղինակը. հասարակա-
 կան թէ անհատական:

37. Պ Ե Ր Ը Պ Ռ Յ Ե Ա Ն

Ծնուել է Աշտարակում 1837-ին, ուսել է Ներսիսեան
 դպրոցում, ապա եղել է ուսուցիչ գրեթէ մեր բոլոր դա-
 ւառական քաղաքներում, ուր թէ՛ դպրոց է հիմնել, թէ՛
 թատրոն, և եռանդուն մասնակցութիւն է ունեցել 40 տա-
 րիներ ընթացքում մեր բոլոր հասարակական գործերում,
 աշխատակցելով միևնոյն ժամանակ թերթերին: Եղել է նաև
 թեմական տեսուչ, իսկ դպրոցները փակուելուց յետոյ
 պարապել է լուսանկարչութեամբ և շարունակ կուուել է
 կարիքի և նեղութեան դէմ, ծանրաբեռնուած մեծ ընտա-
 նիքով: 1899 թ. հասարակութիւնը տօնեց նրա յօբելանսը,
 Պոռչեանը մեռաւ 1907 թ. նոյեմբ. 27-ին և թաղուեց
 Խօշիվանքում մեծ յուզարկաւորութեամբ:—Պերճ Պոռչե-
 անը մեր ամենաբեղուն գրողներից է. նրա վէպերի նիւ-
 թըն են հայ գիւղը, մանաւանդ հայրենի Աշտարակը իր
 նիստ ու կացով, սովորութիւններով, լեզուով, աւանդու-

թիւններով, չարով ու բարիով: Դրա համար էլ այդ վէպերը պարունակում են հարուստ նիւթ ազգագրութեան և լեզուական հարստութեան: — Նրա գլխաւոր երկերն են. «Սօս և Վարդիթեր», «Պոռաժաղիկ», «Հացի խնդրի», «Շանէն», «Յեցեր», «Բղբէ», «Յունօն» և այլն. — Նա Աբովեանին հետեւելով՝ շատ անգամ գրում է այնպէս, ինչպէս խօսում է ժողովուրդը Աշտարակում՝ անխտիր գործածելով թուրք և թաթար բառեր: Ձնայելով դրան, Աբովեանից յետոյ, արարատեան բարբառի նրբութիւններն ու կատարելութիւնները ոչ ոք այնպէս ճիշտ և վարպետօրէն չի ներկայացնում, ինչպէս Պոռեանը: — Նրա ներկայացրած տիպերը գիւղական կեանքից, կարծես լուսանկարած լինին, այնքան նրանք ճիշտ են և իրական:

Պոռեանն Աբովեանից մի քայլ առաջ անցաւ նրանով, որ նա աւելի իրական և կենդանի մարդիկ է տալիս. Աղասու նման բովանդակ հերոս նա չունի: Հացի խնդրի մէջ նա դուրս է բերում Միկիտան Սաբօ-ին, որ իր ճիւղանների մէջ առած ամբողջ գաւառը ծծում է նրա արիւնը. դուրս են բերուած կաշառակեր և անարժան դատաւորները ու կառավարիչները, գիւղի տգէտ քահանան, տանուէրը, դղիրը, եասաուլը. — բարի և հիւրասէր գիւղացիները, չարի և հրէշաւորների հետ: Աբովեանի հայ րոսների մէջ վատ հայ չկայ, բոլորն էլ լաւ են. Պոռեանը առաջ է և լաւը և վատը. Նրա վէպերը զուրկ են գեղարուեստական ամբողջութիւնից, որովհետեւ սաստիկ անտեղի և աւելորդ նիւթեր են պարունակում, շնորհիւ միջանկեալ բազմաթիւ շեղումների, որոնք մեծ մասամբ ազգագրական նշանակութիւն ունին: Գիւղական վախճառունների տիպը նա աւելի լայն ծաւալով նկարագրել փորձեց «Յեցեր»-ի և նաև «Բղբէի» մէջ:

Այդ աւելորդութիւնները անշուշտ կապրեն որպէս կենդանի հայ լեզուի և հայ սովորութիւնների ճշմարիտ նկարագրութիւնը. նրա վէպերից մի քանիսը թարգմանուած են ռուսերէն և գերմաներէն:

Հայ թատրոնի և օրիորդաց դպրոցի հիմնողներից մինն է եղել Պոռեանը:

Դր. Վանցեան

38. Ձ Մ Ե Ռ

Ձիւն ձմեռ: Երկու կարճ խօսք ասա՝ ու երեք չորս երկար ու ձիգ ամիսներ մտիր տունդ, գուռը պինդ փակիր, տաք քուրսու տակին, կամ տաւարի շնչով տաք բազնիս դարձած գոմի օդայումը մի կողքի վրայ ձգուելի, արջի նման երեք քառասունք չլայ մտիր:

— Ձիւն ձմեռ. ասում է աշխատանք սիրող երկրագործը և մտքամոլոր տարակուսում: Ի՞նչ պիտի անենք երեք չորս երկար ամիսներ տխուր տրտում, մտածում է նա, ջանս ցեց է մտել, գործելու սովոր եմ, աշխատել եմ ուզում, գործ չկայ: Ձիւնն եկել, հողի երեսը պինդ ծածկել է. պարզիկան ու սառնամանիքը կանաչ ու գուարթ ծառերին մերկացրել, շինել են չոր ցախ, ցուրտն ու բուքը իմ աշխատաւոր չորսոտանի բնկեր եզանը, իմ գոմշին իմ ոչխարին, իմ կթան ու լծկանին կապերի մէջ է կոխել ու չի թողում, որ երկնքի երես տեսնեն, չէս գազի հաստութիւնով սառուցը մեր գոչգոչան գետերին, մեր կշկը՝ չան աւուններին պապանձացրել է. գործ չի մնացել՝ գործենք, անելիք չկայ՝ անենք, ծոյլերի վրայ ծիծաղում ենք, էն օրի ենք հասել, որ ուզենք, չուզենք՝ պիտի մենք էլ ծուլանանք:

— Է՛յ խելքի պտուղ, էդ ի՞նչ ես ասում, յուսահատութեան դուռը հասած ժրաջան ընկերի երեսը քորում, յանդիմանում է նրանից աւելի աշխարհ տեսած, մարդամիջի գտնուած, ծեր պապերի խրատները ականջին գինդ տրած մի ուրիշ աշխատաւոր. ախար դու չգիտես որ աշխարհքիս դիբքն ու կանոնը բոլորը Ստեղծողի կողմից չափած ձևած է. մեռնիմ Ստեղծողի ողորմութիւնին, ի՞նչ կը լինէր շունչ-կենդանու հալը, եթէ ձմեռը չլինէր: Տարին 12 ամիս եզր կը դիմանա՞ր, եթէ ինն ամիս լծի ու բռնան տակ շարժարուելուց յետոյ՝ մի երեք ամիս չհանգրտանար. ջրաղացի քարը, որ պինդ քար է, էն է՛լ իրար շատ քսուելուց մաշուում է, միս ու արիւնից շինուած մարդ:

Թէ անասուն, եթէ ձմեռը չհանգստանային, երկու տարուամբ կը մաշուէին, ոյժ ու զօրութիւնից կընկնէին ու էլ պէտք չէին գալ: Ծառ ու թփի, խոտ ու ծաղիկ արմատները հողի տակին են. աշնանացան ցորենն աշնան վերջին մի քիչ կանաչել, փչչել, բարձրացել էր. ցելը գութանած, թողուած է, թէ որ ձիւնը չգար, վերմակի պէս Աստծու ստեղծած էդ բոլոր կանանչեղէն ու արմատեղէնը չծածկէր, ցուրտը սուր ասեղի պէս գետնի սրտումը կը թաղուէր, ողջը ցրտատար կանէր. էս օրուայ հաստ ձիւնը թէ որ գարունը չհալուէր, ջուր չկտրուէր, քո ծառ ու տունկի արմատները չկակղացնէր—քո ինն ամսուան աշխատանքդ փուչ կը լինէր:

Դեհ, շտապենք, կրկնում են միմեանց պարզասիրտ և աշխատասէր գեղջուկները, քանի տաքութիւնը հողի մէջ չի մտել, քանի ամբարներս չեն գատարկուել, քանի կարասներիս մէջ կատար տաքացնող Բրիստոսի աբիւնը՝ վրան նայելուս՝ երեսներիս ծիծաղում է, քանի ապանի կաթը (արաղ) տկերի մէջ լիւլիւում է, քանի իրար հետ նստել վեր կենալու, սուփրէն բաց անելու, սուփրէն շէն անելու ժամանակ ունինք, Աստծու տուած ազատ օրերից օգուտ քաղենք, Աստծու անունով եկած չքաւորին ու անանկին կշտացնենք, հոգևոր և մարմնաւոր աշխատաւորներին շահենք ու սրտերս, ուրախ, խղճմտանքներս հանգիստ՝ ուտենք, խմենք, պարենք, երգենք, ամեն խէթ ու նախանձ մեր ներսից դուրս շարտենք, որ կարողանանք մեծ պասի երկուշաբթի օրը պարզ սրտով, պարզ երեսով ժամ գնալ, «Լուսցարուք, սրբեցարուքը» լսել ու էդ օրուանից սկսել մեր հագու ճանապարհը մաքրել: Եւ երբ որ աշխատանքի օրերը կը բացուին, մեր կապած տաւարը դաշտը հանենք, գութանը սարքի բցենք. բահ, հօտոց, կացին, ցաքատ, մանգաղ ու ամեն տեսակ դաշտի ու այգիների գործիքներ սրենք, սրենք, պատրաստենք, որ ինչ ժամանակ օրը կը գայ բարին հետը՝ երեսներիս խաչ հանենք, մեր հալալ աշխատանքին կենանք:

Եւ ամակտար հողագործն այլևս տխուր չէ. նա ձմեռ-

Նամտին իր ձմռան կատարելիք ծրագիրը կազմեց և մինչև զարնանամուտը անթերի կատարեց:

Հմի, ընթերցող, քեզ եմ հարցնում, մեր նկարագրած եղանակից ինչ դուրս եկաւ:

Քո կարծիքը չգիտեմ, բայց ես եկայ այն հաստատ համոզմանը, որ աշխարհս իր ամբողջութեամբ կեանք է և տարին իր չորս եղանակով կեանքի գործօնն է:

Պիտժ Պոռչեան

Համեմատեցէք Աբովեանի «Ձմեռ» յօդուածի հետ, որի՞ նկարագրութիւնն է զօրեղ. որի՞ ոճն է հարուստ, զորն է աւելի ճիշտ և իրական: Կայ արդեօք նմանութիւն այս երկուսի ոճի մէջ:

39. Գ Ա Ր Ո Ի Ն

Գարունն է: Օ՛հ, ինչքան սրտեր յանկարծ բարախեցին այս կախարդիչ անուշը լսելիս: Ի՞նչ ուրախութիւն, որ կողմը կուգես՝ աչքդ դարձրու՝ սար ու ձորեր, դաշտ ու անտառներ, շնչաւոր ու անշունչ—բոլորն այսօր այն չեն, ինչ որ երէկ մէկէլ օրը: Ո՞ւմ հոգսն է, թէ դեռ մարտի սկզբին ենք, թիւ է բանի տեղ դնում, թէ երկնքի սիրելի, երկնքի հետ քաղցր համբոյրներ տուող, երկնքի հետ օր ու գիշեր ասուլիսի բռնուած ոստերը՝ սպիտակ պատանում կոլոլուած դեռ խռրմիւսում են ու վախաւիւստ իրանցից բաց թողած կատաղի քամիներով՝ քիչ է մնում, աշխարհքը տակով անեն: Ո՞վ է գիժ մարտի փոփոխական բնութիւնից մազաչափ երկիւղ անում: Թէկուղ դաշտերի երեսին թզաչափ ձիւնը նստած է՝ Աստծու ստեղծած բոլոր արարածների համար՝ ինչ որ զամբարակի ուղտի ականջին մոծակի բզզոցը:

Համեցէք, դուրս արի դաշտը, երեկուան երկաթից պինդ ձիւնը մատով շարժիր, մէկ էլ կը տեսնես մատդ մէջը թաղուեց. խեղճն ալիւրի թեփի պէս փխրցել է ու թէ որ կանգնածդ տեղը քիչ արեկող է, կասկած մի տանիր, ձիւնը յետ տուր:—Ը՛հ, էս ի՞նչ է, տօ, ձիւնի տակից կանաչ խոտի ծլեր են գլուխները խուշ-խուշ դուրս

ցցել, Փառքիդ մեռնիմ, Աստուած խոտի տերևները մէջտեղից լիճ սիրուն գեղին ծաղիկ է կոկոնը պատուել ու բացուել:

—Ձեմ հաւատում, լիճ էք ասում, ձիւն ու ծաղիկ:

—Այո, սիրելիս, պինդ բռնիր, բաց չթողնես, ձեռքով խառնածդ ձիւն է, իսկ տակինը ծաղիկ, իսկական ծաղիկ: Հապա երկու բառը իրար հետ միացրու, տես, լիճ դուրս կը գայ — ձնծաղիկ — գարունքը մեզ աչքալոյս տուող ծաղիկ — ձնծաղիկ:

Էդպէս է գարունը. էս օր ցուրտ, էգուց՝ տաք, էս օր մրրիկ ու մառախուղ, էգուց արև-արքայութիւնը, գիժ մարտի քամիները շնորքը մեծ է, փչեց թէ չէ, ամպ ու թուխպ սրտաճաք կըլինին, գլուխ կառնեն, կը կորչեն, կապուտ երկնքի միջից Աստծու աչք-պայծառ արևը կը փայլի, ձիւն ու սառուցի հոտն ու հետքը չի թողալ: Բոլորը կը հալուին, ջուր կը կտրուեն, գետ ու ձորերը կը լցուն, չորս ամսուան մեռած երկիրը չորեքօրեայ թաղուած Ղազարոսի նման յարութիւն կառնի:

Դէհ, հիմի կացէք ու խնդացէք, Աստծու ստեղծուած արարածներ, գութանդ բան քցիր, աշխատասէր ունչպար, հողը փափկել է, վարիւր ու ցանիր, ճօտդ դաշտը քշիր, դաշտի սիրահար հովիւ, կանաչը դաշտի երեսին ցնծին է տալիս, արածացրու, հօտերդ գիրացրու, մսակալացրու: Այգուդ թաղը վեր տուր, խաղողիդ մատները հողի տակից հանիր, ժրաշան ալգեպան, կեռակառուց հօտոցդ սրիւր, կուզրակիդ մատերն էտիր, կտրատիր ու պապերի ասած յոյս ներշնչող առածն երգի՝ «Մարտի իննը, մատը կտրի քցի ձիւնը» եղանակով ուրախ-ուրախ երգիր:

Բանջարեղիններդ բան քցեցէք, ողջ ձմեռը տներում փակուած, ազապ ու սիրուն աղջիկներ, հարիւր տեսակ բանջարեղէններ՝ գառան դմակից փափուկ ու թարմ ձեզ են դաշտերում սպասում, քաղեցէք երգելով ու խնդալով, դոգնոցներումդ պինդ կապեցէք, ցած դրէք, կանաչ խոտի վրայ բոլորվանքի ընկէք, ձեռք ձեռքի, կուռ կուռի տուէք, մի կողմից երգեցէք, մի կողմից եալի պարեցէք ու իրիկ-նապահին՝ կշկշալով, հռհռալով, ձեր սիրած տղէքանց ա-

Նուճնները ավաշկարայ իրար յայտնելով՝ տուն վերադարձէք: Մի վախէք, ոչ գայլ ու գաղան կրհամարձակուին ամայի դաշտումը ձեզ մօտ գալու, ոչ անիրաւ թուրքերը սիրտ կանեն ձեր շուքին մտիկ տալու: Այ, դուք սատանի ետի ոտներ, հօ լաւ գիտէք, որ պահապան հրեշտակներդ խանչաները կապած, քարերի տակից, քարափների ճեղքերից, ձորաթմբերի փոսերից ողջ օրը ձեզանից աչք չեն հեռացնում, ձեր գաղանիքն իմանում են, ձեր երգերով մայիլ եղած՝ ձեզ վրայ հսկում են: Ի՞նչ ամաչեցիք ու կարմրեցիք, դուք որ սիրտ ունիք, դուք որ սիրում էք, հապա ազապ տղէքը մի՞թէ քար ու պողպատից են, չէ՞ որ նրանց կրծքի տակ ձեր սրտերի պէս մի միկն պատիկ բռնցքաչափ պինդ մսեր ձեր սիրովը տպտուպում, տրոփում են: Վայ էն գայլ ու գաղանին, էն թուրք աւագակին, որ ձեր շուաքիցը եօթն օրէն ճանապարհ հեռու չի փախչիլ, մեր կտրիչ երիտասարդների ձեռից՝ նրանց օրն ու արևը սև կլրինի:

Այո, այո, գարուն է և գարունը տարուան չորս եղանակներից աւելի սիրելի, աւելի կեանք տուողն է: Ծառ ու ծաղիկ, երգող ու չերգող թռչուններ, ուլ ու գառներ գարնան կեանքի բերքն ու պտուղն են, մարտ, ապրիլ... մայիսը տարուան 12 ամսի անմեղ մանկութիւնն են: Կիսամեռ ծերունին էլ գարունը դաշտ է դուրս գալիս, լիքը կրծքով անուշ օդ ու անուշ հոտ է ներս շնչում ու երիտասարդանում, կեանք է առնում, որովհետև գարուն է:

Իսկ այս բոլորի առիթը յուսահատեցնող ձմռան սաստկութիւնն է: Գարունը յոյս է. գարունն էն բժիշկն է, որի դեղով շունչը փչող հիւանդը յոյս ունի, թէ պիտի նորից առողջանայ, նորից կեանք վայելի: Այգալէս էլ լինում է. հաւատը հրաշքներ է գործում, յոյսը երբէք անհետեանք չի մնում:

Թող ուրեմն ամեն ճնշուած ու հարստահարուած, ամեն խեղճ ու տնանկ յուսով ապրի և յոյս ունենայ, թէ իրան

սեղմող, իրան կուչ ածող, իր կեանքի թշնամի ձմռան դէմ
իրան թե ու թիկունք, իրան պաշտպան կը լինի կեանք
սուռող գարունը:

Պերճ Պոշեան

40. Ա Մ Ա Ռ

—Ո՞վքեր են նրանք, որ մի մին սփռոց կապոց են
արել, գլխներին դրել ու դաշտի երեսն ընկած՝ գնում են:

—Նրանք մեր գիւղի ջահել ու սիրուն հարսներն
են, մեր տների տնարար ու աշխատաւոր տանտիկին-
ները: Նրանք առաւօտը վաղ վեր են կացել, իրանց տա-
նու գործը վերջացրել, իրանց սկեսուրների եփած փլաւը
մեծ պղնձներով սուփրի մէջ կապել, գլխներին դրել, մի
ուրիշ կապոցով էլ թղթից սպիտակ, ջուր ցնցրդկած լա-
ւաշներ, աղը դրած, Սևանայ ծովի պտորժակ բաց անող
կողակ ձկան խոտոցներ (կտօր), մի քանի կտոր պանիր
հացերի մէջ փաթաթել, իրանց առջևից վազող 10—12 տա-
րեկան երեխաների շալակներն են կապել ու հարևան հա-
րևանի հետ քաղցր զրոյց անելով, տժժան շոքը չհարցնե-
լով՝ շտապում են արտերը:

Աչքերը լոյս հնձուորների. նրանք հեռուից տեսան ի-
րանց համար ճաշ բերողներին, մանգաղ, գերանդի դէն
շպրտեցին ու բոլորվանքի շարուեցին արտի ավերի կա-
նանչների վրայ:

—Կերէք, ձեզ մատաղ, հալալ ձեր մօր կաթի պէս իմ
քէյվանու (տանտիկին) ձեռով եփած իւղալի փլաւը. դա-
ւար մնայ կռներդ...

Արևը թէպէտ այրում-խանձում է ամեն ինչ, բայց
արևի թէժուծիւնից վախեցողները կեանքերը հովերում
անցկացրած քաղաքացի վաճառականներն են ու աղա մար-
դիկը. առուտուրականները հիմի խանութներում թմրած՝
քնի ու աչքերն ուտող ճանճերի հետ են կռիւ տալի և
սպասում, թէ որտեղից որտեղ մի կորած մոլորած գիւղա-
ցի մուշտարի տուն պիտի ընկնի, որ խաբեն՝ փրած ապ-

րանքները պուլսը կապեն՝ գրպանը դատարկեն, աղս գրագիրներն էլ սարերի ու անտառների հով ու գոմերումն են անգործութիւնից օրերը մթնացնում: Իսկ մեր չարքաշ մշակն արևի տաքութիւնից երկիւղ անողը չի. հակառակի պէս՝ քանի արեգակը զօռ է անում, նրանք կրակ են կըտըրւում ու իրանց ներսը բորբոքուող բոցով սկսած գործերը լափում, վերջացնում:

Էստեղ՝ կալ են կասում, էնտեղ՝ խոտ են հնձում, կամ կրում. այգիներում հօ՝ աչքդ բարին տեսնի, սկսել են իրար ետևից. հասնիլ թութը, կեռաս, բալը, ծիրանը, շոր ու դամբուլը, շաքարկենի, մեղրակենի, թթուաշ ու քաղցր դեղին ու կարմիր խնձորները, մալաչի ու քօլի տանձերը. էս բոլորը թափ տալ, քաղուիլ, ժողովուել են պահանջում. խելը հացի հետ է կերել ուրեմն գործատէրը, որ շոքից վախենայ, կոները ծալի, պարապ նստի:

Կեանք է, կեանք ամառը՝ էն էլ՝ մի ուրիշ կեանք:

Պերմ Պոռնան

41. Ա Շ Ո Ի Ն

Փառք Աստծու, ամարներս բերնէ բերան տըրըգած են, մառանս մինչև շէմքը ձեռիս աշխատանքով լիքն է, կալ ու կուտս հաւաքել—վերջացրել եմ, եկող տարուան ցելերս արած պատրաստ են, քաղցուս կարասներում քաղցրութիւնից սլճաճում, եփ է գալիս, մի քանի օրից եփը կը նստի, մաճառ կը դառնայ, կատարներս կը տաքացնի, իւղ ու պանրիս, պաս ու ուտիսուան բռնուածքներիս ու թթուեղէնիս տարեկան պաշարը կապել եմ, ընչի՞ չեմ ուրախանայ:

Ահա այն խօսքերը, որ առատ տարուայ աշնանը լըսւում են ջանասէր գիւղացու բերանից: Այո՛, ռանչպարի, այգեգործի, անասնապահի ինն ամսուան քրտընքի կաթիլներն աշնան վերջերքին մարգարտի հատիկներ են. արմատ բարի շափաղ տուող ալներ են. գիւղացին իր աշխատանքի

պտուղը քաղել է, նրա հոգին հանդարտ, նրա սիրտն ուրախ է:

Արդարև, ռանչպարի աչքը լի է, ձեռքն առատ, երբ իր աշխատանքն օրհնուել, իր ջանքերը պսակուել են: Այդ պիսի աշնանը՝ գիւղացու քրտինքով ապրուստ անողները բոլորեքեան անխնայ, լի ու լի ստանում են: Սկսած գեղ-ջուկի հոգու փրկութեան համար աղօթող, վանքերում փակուած անքուն սաղմոս քաղող հայր սուրբերից, ժողովրդի ուրախութեանն ուրախակից, ցաւերին ցաւակից, նրան մկրտող, պսակող, թաղող տանու երիցից, Աստծու անունով երկրագործի դուռն եկած մուրացկանից, ժամհարից, նախրապանից, հորթարածից, գլուխ խուզող, աւրին թողնող դալաքից մինչև թաջագլուխ թուրք դարւիչները, ջինգեանէքը, գրբաց, տիրացու ու մօլլաները, նեւո դնող, գարի քցող հմայութիւն անողները, աշուղները ու փահլանները, բոլորը, բոլորը, դատարկ ձեռքով ներս են մտնում ռանչպարի մօտ, լիքը ձեռքով դուրս գնում: Այգեատէրերից ժողոված էջմիածնապատկան պաղի կոշուած կամաւոր տուրքի աւելորդ գինին, բացի սուրբ Աթոռը ղրկուածը՝ մնացածը տէրտէրների, ժամհարների ու աչքածակ երեցփոխների կարամներն էլ է լցնում, թէպէտ վերջիններս իրանց բաժինն էլ յատուկ ստանում են: Վանքին հասանելիք իւր ու պանիրը վանքի միաբաններին էլ են լիացնում, կոնսիստորի գրագիրներին, հոգևոր կառավարութեան անդամներին ու ծառայողներին, մինչև իսկ ծառային էլ են ձուլածեղով կշտացնում: Մի տէրտէրի տարած կալավարձը գիւղի առաջին համփայլ ունեցածից շատանում է: Հոգիները լոյս կարուի վերջին տարուանս մէջ ժամանակի ու անժամանակ մեռնողների. նրանց իրանցապատկան սուրբ խաչի խորովուն, եօթնի, քառասունի, տարելիցքի ժամ պատարագները, գերեզմանօրհնէքներն ու հոգեհացերը անթերի տանում են: Գիւղացին կուշտ թէ քաղցած, բերրի թէ անբերրի տարին իր բերանի պատառը կրկիսի, իր նոր վախճանուածի հոգու փրկութեան հոգսը կրքաշի, իսկ առատ տարին՝ 800 տարուան մեռած պապ

ու տատերն էլ են ժամ պատարագով, հոգեհացերով յիշուում, յիշատակուում:

Վայը կրգայ աշխատաւոր գեղջուկի գլխին, եթէ, բերանիցս թռչի, քամին տանի, երաշտ ու անբերրի տարի լինէր ու մեր չարատանջ գիւղացի եղբօր ցաւերի վրայ հարկ ասուած անտանելի ծանրութիւնն էլաւելանար: Բերանս չի զօրում եռման ջրի վրայ կարկտից սառը ջուր լցնել, պակասաւոր տարու դժուարութիւնները մէկ-մէկ մասնահաշուի տակ դնել, թշուառ մարդ, հարկերի ու գիւղական արդար ու անարդար ծախսերի համար վերջին շապիկդ, օջախիդ պղինձը, երեսեքանցդ ցրտից պատսպարուելու հասարակ կտաւէ վերմակը քանի ու քանի պակասաւոր աշունքներ գիւղամէջ էքաշ տրուել ու ծախուել: Այս բոլորը քեզ ցաւ է եղել, բայց քո համբերատար հոգին չէ ընկճուել, դու չես յուսահատուել, ապագայ տարուայ յուսով՝ քեզ և քո ընտանիքին այս խօսքերով ես յուսադրել. — Աստծու կամքն էր, մեռնիմ Աստծու ողորմութիւնին, մեր սիրտն է նեղ, թէ չէ նրա սիրտը շատ լայն է. ողջ առողջութիւն լինի, եկող տարին էս տարուան քնաններն էլ կը հանենք, մենք էլ ուրախ կապրենք, ուրախ կեանք կը վայելենք»:

Մենք մեղաւոր անարժաններ ենք, խնդրենք գութը շատ երկնային Թագաւորից, որ արժանաւորաց աղօթքը լսի, Իր քաղցը աչքը աշխատասէր հողագործի վրայ պահի, նրա ձեռքի աշխատանքը կարկտից, խորշակից, մարեխից, թրթուրից, մկնից, առնէտից և ամեն ցասում պատահաներից ազատ պահի, մշակի կռանը զօրութիւն, անձին առողջութիւն տայ:

Էն ժամանակ քաղաքացի, գիւղացի, հարուստ, աղքատ, ամենքն էլ կուշտ կը լինին, ամենքն էլ մարդավայել կեանք կուեննան: Որովհետե՞ւ.— Որովհետեւ տարին առատ է, իսկ առատութիւնը կեանք է: Ուրեմն, առատ աշունը կեանք է ու կեանք:

Պերճ Պոռեան

42. ԳԻՒՂԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Տէր Յարութիւնն էլ շատ միտք չարեց, մի քանի օրու մը նրա տունը մի ուսումնարան դարձաւ: Երեխեքանց որի ձեռք մի տախտակի կտոր տուեց, վրէն մի քանի տառեր գրեց փայտէ՝ զրչով, որին մի եզան կամ կովի թխակի ոսկրի վրայ մի տկճորի բերանից յետ արած դազիլ¹⁾ կապեց, շինքը քցեց, մի երկու տառ էլ նշանակեց. մէկին մի պապենական հին օճաղից մնացած բոխի կամ պանրի աքաշի²⁾ բերանին ծածկած՝ ափները մկան կռծուտած, միւր միջին սեացած՝ ապուխտ դառած՝ «բերական», որ է այբենարան» տուեց: Մի քանիսն էլ, որոնք որ չորս հինգ տէրտէր—վարժապետ էին փոխել, տարիներով մի ութ կանոն քրքրուած, կազմահան էլած սաղմոս էին կոնատակներին տարել ու բերել, ամառը վնացել իրանց հորթերը հանդուժի արածացրել, կամ գութանաւորին հաց տարել, ձմեռն էլ յետ եկել տէրտէրենց տունը գուիր երբել³⁾, էգպէսներին էլ Տէր Յարութիւնն էլի էն դգգուած Սաղմոսը տուեց ձեռքները և հրամայեց, որ էլ յետ գլխիցը սկսեն իրանց «Ե—րա—նեալ—է—այր» և այլն:

—Էլ ըստուց յետոյ մեր գոմի օգէն ձմեռները մարդիկ չզան հաւաքունին մասլահաթի. զրա համար Գէորգ խալֆեանց օգէն հերիք ա. հիմի ես մոնթեր պտի կարգացնեմ, կարգադրեց տէր Յարութիւնը:

—Աղջի Սուսամբար, խորհուրդ արեց տէրտէրն իւր տիրուհու հետ, արի՛ մեր աղջկէքին էլ կարգացնենք. Մանուշակն էլ թող երեխեքանց հետ խառնուի:

Տէրտէրի օրինակին մի քանիսն էլ հետևեցան. նրանք էլ ուզեցան իրանց աղջկանցը կոյս շինել:

Ամէն մի երեխայ բերել էր իւր համար մի խուզած ոչխարի մօրթի, կամ մի կտոր թաղիք, կամ մի հին, մաշուած, քրքրուած, տասը տեղից գիւլբաներով կարկատած փայտ, քցել էին իւրեանց տակը և գոմի օգու մը կարգով

¹⁾ Այծի մազից բարակ պարան, ²⁾ աման, ³⁾ ձանձրացրել:

շարուել: Գիւղի միւս ծայրիցը կարելի էր լսել մանուկների ձայնը, որոնք բարձր բարձր իրանց դասերը սերտում էին: — Բէն—ւոյր—բա, եէն—եչ—բե, բէն—է—բէ, զլել է մինը,—ւոյր—շա—աշ, խէ—ւոյր—խա—աշխա, տին—վո—տո, աշխատո, դատ—ւոյր դա—աշխատողա, կէն—ւոյր կա, աշխատո—դաւա, նո—ւոյր—ցո—նաց, աշխատողա—կանաց, ձգում է միւսը:

Տէրտէրն էլ ծանրագոգոթ¹⁾ մի հաստ մորթի իր տակը ձգած վերին անկիւնումը, հանել է իւր պարսկական լայնաբերան եամանիքը²⁾ բազմել ծալապատիկ ու մի կակուղ սերկելիլ ճիւղոտ ձեռքին բռնած՝ դաս է տալիս: Այս բուպէիս նա իւր վարժապետական վեհ պաշտօնի մէջն է:

Չորում է հինգ վեց տարեկան տղայ կամ աղջիկ աշակերտը մեր տէր վարժապետի առաջին և բռնելով տէրտէրի իրան ձգած ճիւղոտի ծայրը, պատասխան է տալիս հետևեալ հարցերին:

Տէրտէր. էս դրտեղից ա եկել:

Աշակերտ. Գրախտիցը:

Տէրտէր. Ի՞նչ ա բերել:

Աշակերտ. Խելք ու խրատ:

Տէրտէր. Դէ ծէրը պաշիր:

Դողդողալով համբուրում է հլու աշակերտը ճիւղոտի ծայրն ու կուչ գալիս: Նա սպասում է տէրտէրի սովորական խօսքերը լսելու:— «Օրհնեալ է փայտն, որով լինի արդարութիւն». ասում է տէր հայրը և մի թեթեւ հարուած էլ միջքին խփելով, աւելացնում. «որ ոչ լուիցէ ունկամը, լուիցէ թիկամը»:

Այս ամենօրեայ բնաբանն է դաս սկսելու, որից յետոյ երեխան կարդում է իւր դասը:

Վայ նրան, ով իւր համարն անգիր չգիտէր, յանկարծ կը կպչէր նրա մէջքին ճկուն սերկելիլ ճիւղքը և դիպած տեղը կը կապտացնէր: Այսպէս՝ հետզհետէ, միմեանց քամակից կը փշրուէին մահաւանները աշակերտի բորիկ, կամ

¹⁾ Փքուած, ²⁾ կօշիկներ:

Թէ ծակ ջորաբներով պաշտպանուած ոտքերի վրայ, մինչև որ տէր հօր կամբքը կը լրանար, մի երկու անգամ հօր կողքերն էլ կօրհնէր քաղցր խօսքերով և կասէր.— զնա, կորի, տեղդ նստիր, էլ յետ էս օրուան դասն եմ թողում, թէ որ էգուց ջրի նման չես կլկլացրել, մենձ թիքէդ անկաջդ կը թողամ:

Կարգով անուշ կանէին ամէնքն առանց բացառութեան միևնոյն կերակուրը և կսպասէին էգուցուան «մեծ թիքէն ականջը դառնալու»: Բայց եթէ մէկը սաստիկ շարժէր տէր հօր բարկութիւնը, մահականների զօրութիւնը նրան զգալ տալուց յետոյ՝ տէր Յարութիւնը կը չօքացնէր նրան բաց ծնկներով խոշոր աւազի վերայ, փէշերքին հող կը լցնէր և կը կնքէր գիւղի ցորեն կնքելու կնքով, որ այս միջոցին միշտ իւր մօտ էր պահում: Թող արիւնն աչքի առաջն առնի այն աշակերտը, որի փէշերքի կնիքը քանդուել է. ինչ անենք, որ ծնկների վերայ մի քանի նկարներ են կազմուել, պէտք է համբերի, թէ չէ ապաղայ պատիժն աւելի խիստ կը լինի:

Չէնց էս երկիւղն էր, որ երբ մի օր մի փէշերքը կնքած երեխայի մօտից տէրտէրենց պոչը ծաղիկ շունը ցած բերեց պատի վերայ կախ արած մի լիտը միսը և քարշ տալով տարաւ մի անկիւնումը երկու թաթերի մէջ բռնած մաքրազարդեց պռօշները լիզելով, նա՝ մեր պատժուած երեխան ոչ միայն տեղիցը չկանգնեց շանն արգելելու, բերանն անգամ չշարժեց և շան վրայ չը բարկացաւ. ի՞նչ անէր ողորմելին, անը շատ էր՝ քան թէ մահը: Տէր Յարութիւնը շատ էլ նեղացաւ իւր միջին երեխի վրայ, բայց լեզուն բռնը դրեց: Մեղաւորն ինքն էր:

Սխալ կը լինի կարծել, որ տէրտէրն այնպէս վարւում էր իւր բարասրտութիւնից: Ընդհակառակը՝ նրա սիրտը ցաւում և լեղըը խաշուում էր ամեն մի երեխայի կսկիծը լսելուս. նա պատժուողից աւելի էր մօրմոքւում: Բայց այդ նրա և ընդհանուրի հայեացքն էր ու համոզմունքը, թէ մինչև երեխային չպատժես, նա մարդ չի դառնալ: Մինչև էս օր էլ եթէ գիւղական բարեխիղճ վարժապետ-

ներից մէկը քաղցր վարուում է իւր սաների հետ, մեղադրանաց առարկայ է դառնում գիւղացիներին. այդ նշանակում է, որ այնպիսի ուսուցիչը զուլս չի դնում, չի աշխատում, երես է տալիս. էլ այդպիսի վարժապետին ո՞վ երեխայք կը յանձնի:

—Միսը քեզ, ոսկորն ինձ, տէր հայր ջան, ջարդիր, ոպանիր, հոգին հանիր ու մարդ շինիր սրան. այս առաջին յանձնարարական խօսքերն են ամեն մի իւր որդու կրթութեան համար հոգացող հօր:

—Միամիտ կնոջ, իմ ճիպտի գօրութիւնը հէնց էս օր կը փորձի դա, էլ իմ ճանգիցը դուս չի պըծնիլ, հալեմ, մեղրամում չի՛նեմ: Ա՛յ, տես ինչ լաւ տղայ կը դուս գայ սա:

Իբրև ապացոյց իւր խօսքերին՝ առաջին ուսումը հօր մօտ էր տալիս տէրտէրը—ճիպտի ծայրը համբուրելն ու զրախտից դուրս եկած լինելը հասկացնելը:

Եթէ տէր հայրն իւր կողմից իւր աշակերտների հետ խիստ էր վարւում, նրանք էլ սլակաս չէին թողնում, նրա օգտիցը գալիս էին:

—Գասպար, արի՛ դասդ ասա, հրամայում էր տէրտէրը մէկին:

Գասպարը շատ ծանր ու ակամայից է շարժւում:

—Ազա՛ լակոտ, ի՛նչ ես պստի հարսի պէս նազով ժած գալիս, ոտներիցդ քրեհ են ուզո՞ւմ, արի՛ էլի:

Գասպարն իբրև թէ չի լսում էս խօսքերը, մինչև մի ոտքը փոխում է, տէրտէրի հոգին դուրս է գալիս:

—Չլլի՛ թէ դաս չես սերտել:

—Գիրք չունիմ, փնթփընթում է Գասպարը՝ այնքան կամաց, որ ես ու դու կողքին եթէ կանգնած լինէինք, չէինք լսիլ, բայց տէր հօր ականջները շատ սուր են:

—Ի՞նչ ես արել գիրքդ:

Երեխայն շատ լաւ գիտէր, որ ինչ փաստ էլ բերէր, դիցուք ստոյգ էլ որ կորցրած լինէր, պէտք է՝ մինչև տէրտէրի քօթակն և եղալի կորկոթները չուտէր, անկաբելի էր գործն ուրիշ կերպ փոխել. հէ պատճառաւ էլ

լիւռ էր մնում և չէր պատասխանում: Բայց երբ ականջներն արմատները տաքանում էին, ձեռները մղկերտում, մի փունջ մազ էլ գլխիցը տէրտէրի ձեռքին էր մնում, նոր էր գոռալով սկսում արդարանալ ու իւր հնարած ապացոյցները մէջ բերել, որից յետոյ տէր հայրը թոյլ էր տալիս:

Տէրտէրն էլ այդպէս ժամանակը շատ հետը չէր ընկնում: Պարապ երեխաների համար էլ իւրեանց տանը գործ կար, մանաւանդ՝ եթէ նա շատ հասկալաւոր էր: Տաւարի տակը պէտք է քերուի, մաքրուի, նրանց աղբը շալակով կալը պէտք է տարուի, բասմա՝) քցուի, որ մինչև ամառ չորանայ, աշնան գէմը կտրեն, միւս ձմեռուան համար վառելիք շինեն: Այգուցը շալակով ցախ պէտք է կրուի, ամեն երեկոյ մարազիցը խոտ ու դարման պէտք է բերուի անասունների համար: Տէրտէրը հասակաւոր որդի չունէր, մի հօտաղն էլ էսքան գործը չէր կարող կատարիլ, գիրք ունեցող աշակերտներն էլ պարտական էին իւրեանց վարժապետին օգնել, ուր մնաց անգիրքները. նրանք պարասոյ են ու պարապ:

Ամառը մանաւանդ, ամենքը միասին հերթով վաղ առաւօտեան իրանց դասերն ասում էին. գիտեն չգիտեն, գրքերը կռնատակներն էին գնում, գնում տէրտէրենց այգումը քար ժողովելու, խչմար՝) տալու, խոտ հնձելու. ես ի՞նչ գիտեմ, հաղարաւոր գործ կայ կատարելու: Ծոյլ աշակերտներին մեր տէր հայրը գործը պրծնելից յետոյ՝ տուն էլ չէր թողնում գնալ. իւրեանց հորթի չաթուովը՝) պինդ կապում էր մի ծառից, որ դաս սովորի ու ինքը գալիս մի ծառի հովում քնում էր իւր համար. երբ որ նա իւր քունը թափեց, կրկին յետ էր անում մեր կալանաւորութեան ու էլի բանացնում:

Միայն տղայքը չէին տէր հօրը պէտք գալիս. աղջ-

1) Տաւարի աղբը ձմեռը փռում են կալումը, մինչև ամառը չորանում է, յետոյ կտրում են վառելիքի համար: Այս է բասման:

2) Նեցուկ, 3) պարան:

կանց համար էլ նրանց տանը միշտ գործ կար. նրանք էլ տներն էին աւելում, ջուր բերում, խմորին օգտում և այլն:

Պերճ Պոռչեան

43. Գ Ա Ք Ր Ի Է Լ Ս Ո Ւ Ն Դ Ո Ւ Կ Ե Ա Ն

Սուսդուկեանը ծնուել է Թիֆլիզում 1825 թ., սովորել է զիմ-նադիպյում և ապա աւարտել Պետերբուրգի համալսարանի պատմա-լեզուաբանական ֆակուլտետը, որից յետոյ մտել է պետական ծառայութիւն՝ հասնելով գեներալի աստիճանի:

Նա իր գրական գործունէութիւնն սկսում է 1863 թւին, մի վօդովիւով: 1871-ին առաջին անգամ ներկայացրին Պէպօն, որ Սուս-դուկեանի գործերից ամենանշանաւորն է: Դրանից առաջ նա արդէն գրել էր «Սթաթաքալա», «Էլի մէկ զոհ», «Կնուհետև լոյս տեսան «Բանդուտ» օջախ», «Օսկան Պետրովիչն էն կիւնքո մը» և «Ամուսիններ»:

Այս բոլոր պիէսները, բացի վերջինից, գրուած են Թիֆլիզի բարբառով, կենդանի և գեղարուեստօրէն ներկայացնում են Թիֆ-լիզեցու կեանքը, նրա չարն ու բարին, լաւն ու վատը, առաքի-նութիւններն ու պակասութիւնները: Դրանց մէջ Թիֆլիզի հին սերունդը՝ վաճառականն ու կիւնտօն, կիւնն ու ծառան, աղնիւն ու անաղնիւր անմահացած են գեղարուեստօրէն:

Ձնայելով մի քիչ նեղ ու գաւառական բնոյթին, այս պիէս-ները լինելով միակը և ամենայնովը մեր ինքնուրոյն բեմական գրականութեան մէջ, շարունակ ներկայացւում են գաւառական հայ բեմերում:—1901 թ. հայ հասարակութիւնը նրա հետ միա-սին ուս և վրացի բեմերը մեծ հանդիսով տօնեցին Պէպօնի ե-րեսնամեակը, որի պատճառով Սուսդուկեանն արժանացաւ մե-ծամեծ պատիւների և ցոյցերի:—Հայերից ոչ պակաս՝ Սուս-դուկեանի պիէսներն աջողութիւն ունին և խիստ սիրուած են վրաց բեմում, անշուշտ շնորհիւ այդ պիէսների խորին գեղա-բուստական արժանիքների, որոնք մշակուած են գերազանցօրէն:

44. Պ Է Պ Օ

Պատակերգութիւն 3 արարուածով, հեղ. Գ. Սունդուկեանի:

Բովանդակութիւն եւ հատուած

Արութիւն աղան պարտ է Պէպօ-ի հանգուցեալ հօրը 1000 ոտրլի: Այդ փողը Պէպօն խոստացել է իր քրոջ նըշանածին: Նշանածը պահանջում է խոստացած փողը, որ պատկուի, ալլապէս թողնելու է աղջկանը: Արութիւն աղան չի ուզում վճարել, մինչև անգամ բացարձակ ուրանում է իր պարտքը, դիտենալով, որ տուած մուրհակը կորած է: Պէպօն բարկացած նրան անպատուում է: Արութիւնը նրան իր տանից դուրս է անում և մինչև անգամ բանտ է քցել տալիս: Այդ ժամանակ միայն բացւում է նրա խարդախութիւնը, որովհետև կորած մուրհակը գտնւում է Պէպօ-ի աղգական Գիքօ-ի մօտ:

Պէպօ, Կակուլի, Շուշան, Գիքօ

ԿԱԿՈՒԼԻ. Բարով, դէգի ջան:

ՇՈՒՇԱՆ. (Կակուլուն) Ապրիտ, վերդի:

ԿԱԿՈՒԼԻ. Օ՛, աղա Գիքօ, բարով 'ես ու դուն (Առաջ գալով եւ Պէպօին ցածր). Սրա վրայ լաւ դճնաղ չըգթմբ, տօ:

ՊԷՊՕ.Մուլափ... (Շուշանին) Ի՞նչ իմացաք:

(Կակուլին Գիքօի նտնից նրա նման իբր թէ քթախոտ է քաշում, քայց իսկոյն դադարում է եւ ուշադրութեամբ լսում խօսողներին),

ՇՈՒՇԱՆ. Էլ ինչ իմացայ. դետինը պատուէ ու ինձ դէվեր տանէ: Թէ էսօր չճարեցինք, Պէպան ջան, էս գիշիր դիփ մէտի մօշլա է ըլում... Այ, երգնքէն առնիս մագիէրն, Արութիւն: (Ղաթիքան վեր առնելով): Նա խօ էսօր չի տայ ու ուրիշ տիղ ճվ ինչ կու աւտայ միգ: Էլի հոգուն վրայ հասայ էն կապ-կտրած Նաթէլին, թէ չէ էն է վերչի խօսքն էր տանում նուր ախչկայ տիրուչմէն էն

միր սիւէրես փեսի մօդ։ Սատանէն անէ նրա դիւանը, հրա՛ն
ՊէՊՕ. Տօ, փեսիմէն ի՞նչ իս ուզում. ինչ խոստա-
ցիլ ինք պիտի տանք թէ չէ։ Նա էլ մարթ է, գլխին գդակ
ունէ ծածկած, միզմէն էլ վո՛ւրդի խափվի. աշխարհն ալան
թալան խօ չէ՞... Էնդադա ասի, վուր մո՛ւլափ, դէդի, ջեր
փուղը դուս գայ, իժոււմ էինք նշնի. ամա ձիւր օխտէմէն
ո՞վ դու քայ... Ինչ հաջաթ ու, ուր կու կորչի ու, Արու-
թինը միր միխին ինչ կ'օնէ ու, հաշա խօմ չի ուտի ու...
դէ, գնա առ, տեսնիմ վո՛ւնց իս առնում։

ԳԻՔՕ. (Նստելով սեղանի լօտ եւ երկար յոգոց հա-
նելով)։ Ախ, իմ գօղալ բարանթ... հարաբ վո՛ւնց կորար։

ՊէՊՕ. Զէնդ, Դիքօ, թէ չէ, մասաբս զիտենայ, ինչ
ջիգրն ունիմ, դիփ քիզ վրայ կու հանիմ էս սահաթիս։
Դուն վուր չէիր խառնելի էս բանումը, էս խայտառակու-
թիւնն էլ չէր գա միր գլուխը. ջնանդամ փուղի գլուխը,
նրա մօգօնօղին էլ ինչ ասիմ...

ԿԱԿՈՒԼԻ. Մո՛ւլափ, մէ բան ասիմ ես, Պէպօ. օքմին
վկայ չկա՞յ, վուր վրահասու ըլի էտ պարտիլին։

ՊէՊՕ. Միթամ դո՛ւն էլ խելքիդ զօր տվիր. էտսվ
վուր բան էր դառի, խօ էս խաթարալէն էլ չէր ըլի։

ԳԻՔՕ. Այ, վկայ չիմ, բաս ինչ դարհուճար իմ... ամա
վուր չէ ըլում։

ԿԱԿՈՒԼԻ. Վահ, ինչի՞։

ՊէՊՕ. (Կակուլուն)։ Էս բանումը վկայ-մկայ չի ըլի,
կօսէ, չիս իմանում։

ԿԱԿՈՒԼԻ. (Ընտանձին, գլուխը շարժելով)։ Զէ՛, ես
նրան պիտի հարիմ։

ՇՈՒՇԱՆ. Ախար, էն օրը սիւ սրտսփն ի՞նչ ջու-
ղաբ էրիտ կարական։

ՊէՊՕ. Միթամ ջեր չիս իմացի... Ասաւ՝ ես միտս չու-
նիմ, կօսէ, դաւթընեբումս չէ էրևում, կօսէ թա բարաթ իմ
տվի ձիզ, բերէք ու փո՛ղը տարէք, կօսէ։

ՇՈՒՇԱՆ. Բաս միթամ հաշա է ուզում ուտի, էտ
վո՛ւնց կօսէ, Պէպան. արա քիմէն չիմ արմընում, էնէնց
հարուստ մարթը ընյիդ պիտի անի էտ հանգի բան. նրա

համար հարուր թումանն ինչ—մէ զբօշ, վուր ուզենայ բաշ-
խելով էլ կու բախշէ:

ՊէՊՕ. Վճանց չէ. դէմ է բերում:

ՇՈՒՇԱՆ. Այ, կու տեսնիս թէ չէ... (լացի ծայնով):
Կէհամ, առչիւր կու չոքիմ, լաց կուլիմ, իմ վուրթկերանց
արիւ սաղազա գուզիմ. երթում կուտիմ, վուր թէ միր
մէշը բարաթ լուս ննգնի, թիքա, թիքա անէ միդ, բա-
թընամա կու տամ, տասը վկի ձեռք կու քաշիլ տամ. մէ օր
հոքի ունէ տալու, իր հոքէմէն ձեռը վճնց կու վիկալնէ:

ՊէՊՕ. Մոլլափ, մոլլափ, դէդի, 'ես կէհամ, 'ես, էս
սահաթիս յեդ գուքամ, ինչրու դուք նասեցէք:

ՇՈՒՇԱՆ. Ջէր մէ թիքայ հաց կի, մի սահաթ առաջ
ըլի, յիդ ըլի, դիփ մէկ է:

ՊէՊՕ. Ջէ, ինչրու չտեսնիմ, բողազումս հաց չի դէ-
վէր գնա. շուրիւս վոլթէնն է:

ՇՈՒՇԱՆ. Էրէզ գանդուկը դրի:

ԿԱԿՈՒԼԻ. 'ես էլ գամ, Պէպօ:

ՊէՊՕ. Ջէ, դուն գնա, բանդդ տիս, էս սահաթին գա-
լիս իմ (Դուրս է գնում աջ դռնից):

ԿԱԿՈՒԼԻ. Դուն գիդիս... (Խփելով իր կրծքին): Ախ,
Արութին, 'ես թէ քու օխտէմէն չէկայ ու կու տեսնիս...

(Դուրս է գնում միջի դռնից):

Շուշան, Գիքօ

ԳԻՔՕ. (Նստած սեղանի մօտ թախտոտ քաշելով), Էհ,
Աստուձ, օրհնվի Գու դատաստանը:

ՇՈՒՇԱՆ. (Նստում է թախտի վրայ եւ ծայնը երկա-
րացնելով): «Ախ, Աստուձ, վախ Աստուձ, վուրին կու տամ
սէլով փէտ, վուրին չիս տա ցախ, Աստուձ»:

ԳԻՔՕ. Հա, հա, Շուշան:

ՇՈՒՇԱՆ. Էհ, օրհնւի նրա դարգահը. վուրին էնդա-
դա դօվլաթ է տալի, վուր իր դօվլաթը չէ կանացի մար-
սի, ու վուրիմէն օրւան թիքէն խլում է ու էն էլ դօվլա-
թաւուրին է տալի... Փանք Իրան, իր կամքն է. հալաթ
միր ճակախն էս էր գրած:

ԳԻՔՕ. Էլի Աստուծ օգորմած է, Շուշան...

ՇՈՒՇԱՆ. Էլ ինչ օգորմած է, ջուրն էկիլ է միդ տա-
րիլ է, էն անաստուծը վուր էլի մի բան մօզօնէ ու փու-
ղը չտայ էսօր, ետրաբ լինչը կուլի միբ չարէն. ճէբք կու
նընգնի խիզ ադճիկս: Թավաթ օրն օրվան վրայ հալվում
է. էլ լինչը կու ապրեցնէ նրան: (Լացով): Խիզ իմ Կէ-
կէլ, նօրչի արիւղ պիտի փչանայ, էլի, թագի մագիէր սիւ
գերեզմանը պիտի մտնիս... (Լաց է լինում):

ԳԻՔՕ. (Լացի ձայնով): Օհ, օհ, օհ... (Աչքերը սըը-
քելով դուրս է գնում ձախ դռնից: Ներս է մտնում Պէ-
պօն զարդի հագուստով):

Զուշան, Պէպօ

ՇՈՒՇԱՆ. Տօ, ախար, ջեր մէ թիբա հաց կ'ուտէիր:

ՊէՊՕ. Հաց չէ, գահրումար ուտիմ... Ի՞նչ կօնիմ
հաց. դանա հացի արժանի իմ... (Գօտիկը կապելով): Հացը
վուր ստիղծած է, դանա լինձ համա է ստիղծած. հացը վուր
ես ուտիմ, ապա Արութիւնը լինչ ուտէ: Եւ էլ հաց ուտէ,
ես էլ հաց ուտիմ... (Դառը ծիծաղով): Հրա, հրա, հրա...

ՇՈՒՇԱՆ. Միվցիլ էր իմ օրը, ահա: (Աչքերը սըըքելով
դուրս է գնում):

ՊէՊՕ. (Մենակ արխալուխի կոճակները մէր գցելով
Գնա, Պէպօ, գեղին լղէ, խալխի վուտներուն պահ արա,
նրանց վուտի ցիխը լղէ... Ո՞վ իս դուն. լինչ իս դու. լինչ
մարդահէսաբուսն իս դուն, լինչ անում ունիս դուն...
Եփօր գուղին, վուտի տակը կու գցին քիզ, վրէտ կու ման
գան, գեղնի հիզ կու հաւարին... լինչ հաջաթ, ջիան-
ճվէլի վրայ ինչո՞վ իս աւել... Դուն խօ մարթ չիս, մարթկե-
րանց համա կերակուր է ստիղծի քիզ Աստուծ... Գիշիր չար-
չըրվի, ցերեկ չարչըրվի, երգնքի տակը լուսացրու, անձրիվի
ու քամու հիզ կոխ տու, ձմեռը ցրտէ մէն կոնկոնա, ամառը
արեգակի շուքումն էրվի ու խօրվի... գնա էնէնց մի թիբա
հաց ճարէ ու էն թիբա հացով դէգիտ ու քվիրդ պահէ...
էս ինչ, լինչ մարթութիւն... էսէնց շունն էլ է ճարում մէ թի-
բա, վուր տունը պահում է... Միթամ դու էլ շուն իս...
քանի աշխրքիս էրեսին ման իս գալի, դուն էլ շան պէս կե-

բակրվի... էս ի՞նչ մարթութիւն է... (Դադար): Մարթ էիր
 ուզում դառնա՛մ. կ'է՛նէիր մարթիք կու թախէիր, գուզու-
 թիւն կ'օնէիր, իմ նման խղճերուն կը գրնէիր. քսանուհինդ
 հազար տիղարէն արաքսունք կու թափիլ տէիր, էն արտը-
 սունքնիրը փուղ կու շինէիր ու էն փուղով օսկէ տնիր...
 մէջը փառաւուր ման գու քէիր... դրօշկա, կալասկա, ձիա-
 նիր կու սարքէիր, քսանուհինդ ինձպէսին գլխիտ դարաւաշ
 կու կանգնէցնէիր... Ա՛յ, էն չախը կօսէի քիզ՝ մարթ իս,
 Պէպօ. ի՞նչ մարթուն պիտի... ի՞նչ քէփզ գուզէր, էն
 սհաթին կու ճարէին... էն չախը դիփունքը քիզ գլուխ կու
 տէին, կու մեծրէին, պատիւ կու տէին ու մէկս մէկու
 գլուխ կու կոտրէին, վուր քու աշկը նրանց վրայ քաղցը ըլի...
 (Դուրս է գնում՝ յիմացի դռնից)

Կարգալ կամ պատմել Պէպօյի բովանդակութիւնն ամբող-
 ջովին. համեմատել տիպերը. Պէպօ, Կակուլի, Գիքօ և Արութին
 աղա:

45. Դ Ե Ի Ի Ե Ր Դ Ո Ի Մ Ը

Երգւում եմ անս ստեղծագործութեան
 Առաջին օրով,
 Երգւում եմ անս նրա կատարման
 Եւ վերջին օրով,
 Նշանակութեամբ մեղապարտութեան
 Տայիս եմ երգում,
 Եւ յաղթանակը սուրը ճշմարտութեան
 Վկայ եմ քերում.
 Երգւում եմ անկման դառն կսկիծով
 Եւ յաղթանակի կարճատե ցնորքով,
 Քո հետ տեսութեամբ երգւում եմ նոյնպէս,
 Եւ հրաժեշտով, որ գալոց է մեզ:
 Ողջ հոգիների ժողովարանով
 Եւ իմ հպատակ միաբանների
 Ճակատագրով,
 Անաչառ և սուրը հրեշտակների,
 Այն է, իմ արթուն թշնամիների
 Մուր սուսերներով:

երկինք ու դժոզ՝ վիայ են խօսքիս,
 երկրի սրբութեամբ երգում եմ ուտում,
 երգում եմ և քո վերջին հայեացքով,
 ես քո առաջին ջերմ հայեացքով,
 Շնչառութեամբ անշար բերանիդ,
 եւ մետաքսեղէն քո գանգուրներով,
 երգում եմ նոյնպէս դառն տանջանքներով,
 Վերջապէս և իմ բոլորքուած սիրով,
 Հրաժարուեցայ ես հին վրէժից,
 Հրաժարուեցայ չար խորհուրդներից-
 Այլ այսուհետեւ թոյնը նենգութեան
 Ոչ ոքի միտքը չունի շփոթել,
 Այլ այսուհետեւ ես միանգամայն
 Կամիմ հրկնի հետ հաշտութիւն կապել,
 Կամիմ սիրել, աղօթել կամիմ,
 Առաքինութեան հաւատալ կամիմ
 եւ զղջում տալով ես արտասուաթոր,
 Ճակատիցդ քեզ արժանաւոր
 երկնային հրոյ հետքը կը սրբեմ,
 եւ թող առանց իմ աշխարհ համօրէն
 Ծաղկի իւր խաղաղ անգիտութեան մէջ:
 Ո՛հ, հաւատն ինձ, ես միայն ցայսօր
 Քեզ ճանաչեցի, դնահատեցի:
 եւ քեզ ընտրելով սրբուհի ինձ նոր,
 Իշխանութիւնս ոտիդ տակ զրի:
 Քեզանից պարգև սէրդ եմ սպասում,
 Նորա բոլէին կը տամ յաւիտեան:
 Հաւատա, որ ես միշտ եմ հաստատուն
 նոյնպէս սիրոյ մէջ, ինչպէս չարութեան:
 ես, որ եթերքի ազատ որդին եմ,
 Քեզ աստղերից վեր կը թռուցանեմ,
 Այն տեղ աշխարհի կը լնիս թագունին
 եւ նախամեծար իմ ընկերուհին,
 Առանց զթութեան և մասնակցութեան
 Կըսկսես նայել դու երկրի վերայ,
 Ուր ոչ ճշմարիտ բաղդ կայ կենսական,
 եւ ոչ յարատեւ գեղեցկութիւն կայ,
 Ուր միայն պատիժն ու մեղքն են իրուլի,
 Որ կեանքն անցնում է փոքրիկ կիրքերով,
 եւ ուր չգիտեն առանց երկուղի
 Ոչ արհամարհել, ոչ սիրել հոգով:

Գուցէ չգիտես, թէ արդեօք թնչ է
 Կարճատև կեանքը մարդկային սեռի,
 Միայն արիւնի նա վըղովմունք է,
 Օրերը կանցնին և այն կը սառի:
 Ո՞վ կարէ տանել հրաժարումը,
 Հրապուրանքը նոր գեղեցկութեան,
 Ծանր վաստակը և խիստ ձանձրոյթը,
 Կամակորոշիւնը երևակայութեան:
 Ձէ, իմանաս դու, ընկեր քաղցրունակ,
 Ճակատագիրդ չէ սահմանել քեզ,
 Որ նախանձաւոր բրտութեանը տակ
 Իբրև մի ստրուկ, անյայտ թառամես,
 Կեղծ ընկերների, թշնամիների,
 Կամ թէ փոքրոգի և չար մարդոց մէջ:
 Ունայն և ծանր աշխատանքների,
 Անպտուղ յուսոյ և երկիւղի մէջ:
 Դու չես շիջանի առանց կիրքերի
 Բարձր պատի տակ լուռ և թախծալից,
 Ազօթք անելով մարդկանցից հեռի,
 Նոյնպէս և հեռի Աստուածութիւնից:
 Ո՞հ չէ, անմեղ արարած սիրուն,
 Այն չէ քո համար զրեւ օրհասը,
 Քեզ ուրիշ կիրք է այնտեղ սպասում,
 Ուրիշ ցնծութեան խոր զգացմունքը.
 Ճակատագրին թող դու ուրեմն
 Թշուառ աշխարհը, իղձերդ նախկին,
 Ես քեզ կը բանամ, նոցա փոխարէն,
 Բարձր գիտութեան անդունդը խորին:
 Եւ սպասուող իմ հոգիների
 Բոլոր ամբոխը ոտքդ կը բերեմ.
 Թեթև նաժիշտներ և սքանչելի,
 Ո՞վ իմ գեղեցիկ, քեզ կը պարզեմ.
 Եւ արեւելեան աստղից կը խլեմ
 Քեզ համար շքեղ պսակը ոսկի,
 Եւ բոլոր շուրջը նորա կը ցանեմ
 Փայլուն ցողովը թարմ ծաղիկների.
 Արեամտի կարմիր նշուով
 Ժապաւէնի պէս մէջքդ կը պատեմ,
 Քաղցրահոտութեան մաքուր բուրմունքով
 Բոլոր շրջակայ օդը կոռոզեմ,
 Եւ հիանալի նուազ հնչելով,

Նուրբ լսելիքդ ժիշտ կը փաղաքշեմ,
 Եւ մեծ պալատներ փտաւոր շէնքով
 Աղամանդներից կը կառուցանեմ,
 Եւ մերթ կիջանեմ ծովի յատակը,
 Եւ մերթ կը թռչեմ աստղերից վերն,
 Ողջը քեզ կը տամ, ողջ երկրայինը,
 Միայն սիրեր ինձ... այս է քո պարգև,
 «Ին» — Լեւոնտովի, թարգմ. Սաղաթւան

Պատմեցէք արձակ այն ինչ որ նկարագրուած է այստեղ

46. ՍՄԲԱՏ ՇԱՀՅԵԶ (1841)

1861-ից «Հիւսիսափայլի» էջերում երևան է դալիս մի երիտասարդ բանաստեղծ, որ կրթուել ու կազմակերպուել էր Նազարեանի և նրա շրջանի անմիջական ազդեցութեան տակ։ Այդ երիտասարդը դեռ այն ժամանակ Լազարեան ճեմարանի ուսանող, Սմբատ Շահազիզեանն էր։

50-ական թուականների սկզբում Շահազիզը դեռ 10 տարեկան երեխայ, իր հայրենի Աշտարակ գիւղից գնում է Մոսկուա, Լազարեան ճեմարանը, ուր աւարտում է 1862-ին։ Դեռ դպրոցական նստարանի վրայ սկսում է գրել ոտանաւորներ։ Սկզբում թունդ զրաբարական էր և նրա առաջին ոտանաւորները, որոնք տպագրուեցին 1859-ին «Ճոբրադի» մէջ, զրաբար էին։ Բայց նա շուտով թուեց թէ գրաբար և թէ «Ճոբրադը» — 1864 թուականը բանաստեղծի գեղեցիկ շնորհքի առատութեան տարին էր, որ աւանդ, այլևս չկրկնուեց։ Այդ տարին Շահազիզը գրեց բազմաթիւ մեծ ու փոքր ոտանաւորներ, ինչպէս նաև «Լիոնի Վիշոր» — պօէման։ Լիոն անունով մի երիտասարդ Մոսկուայից ճանապարհ է ընկնում Կովկաս, տեսնում է Հայաստանը և նկարագրում է իր տեսածն ու զգացածը... Վէպի հիւսուածքը Հայկազանց պարզ ու անարուեստ է. — մի ուղևոր և նրա մտքերը — ժողովուրդը դժբախտ, ենթարկուած բռնութիւնների, չկան դպրոցներ, չկան լուսամիտ առաջնորդներ, կինը ստրուկ, իշխանները հարստա-

հարող, կղերը տգէտ: Այս է պօէմի բովանդակութիւնը:
Մեռաւ 1907 թ.:

Ինքը, Շահազիզն ամենից լաւ է բացատրում թէ ինչ է ինքը. «Նախ քաղաքացի և ապա պոյէտ»: Քաղցր մեղկութեան և անգործութեան, գինու և սիրոյ երգիչ չէ՞ նա, այլ «բաժանորդ է ազգի ցաւի հետ»:

1. է. 0

47. Ե Ր Ա Ձ

Ես լըսեցի մի անոյշ ձայն—
Իմ ձերացած մօր մօտ էր.
Փայլեց նըշոյլ ուրախութեան.—
Բայց ափսոս, որ երազ էր:
Կարկաշահոս աղբիւր այնտեղ
Թաւալում էր մարգարիտ.
Նա յըստակ էր որպէս բիւրեղ.
Այն երազ էր ցնորամիտ:
Եւ մեղեդին տխուր մայրենի
Յիշեց մանկութեան օրեր.
Մօրըս համրոյրն ես ըզգացի.—
Ա՛խ, ափսոս, որ երազ էր:
Կուրծքին սեղմեց կարօտագին,
Աչքերս սրբեց—շատ թաց էր,
Բայց արտասուքս գնում էին...
Ա՛խ, այդ ինչո՞ւ երազ էր:

48. Ա Շ Տ Ա Ր Ա Կ

Գեղեցկանիստ Աշտարակ,
Շատ այգիներ նա ունի.
Այնտեղ երկինքն է կապուտակ,
Այնտեղ օդն է քաղցրալի:

Մեծ, ընդարձակ կանաչ դաշտեր
 Լի են ծաղկով քաղցրահոտ,
 Մարգահասակ, խնկանուէր,
 Բարձրանում է այնտեղ խոտ:
 Այդ սիրուն գիւղն ունի մի գետ,
 Եւ այն լի է ձըկներով:
 Այնտեղ իշխան եւ կարմրախէտ
 Խաղ են կապում խայտալով:
 Եւ հարազատ այգիներից
 Տարածւում է քաղցրութիւն,
 Եւ Քասախը ուրախալից
 Բերում է ձեզ իր ողջոյն:
 Բայց այդ բոլորն ըստրկութեան
 Կաշկանդուած է կապանքով:
 Ժողովուրդը թշուառական,
 Խեղդուած է մեծ խաւարով:

Ի՞նչ մեծ մարդիկ է տուել Աշտարակ գիւղը:

49. Գ Ի Շ Ե Ր

Սիրուն պատկեր պարզ զիշեր էր-
 Եւ օգեղէն ուղկիանում
 Փայլում էին անթիւ աստղեր,
 Եւ ուրախ էր սիրտս զարկում:
 Ամբրոսական ծաղիկներ վառ
 Անուշութիւն էին բուրում,
 Եւ երկնքի ցօղ կենարար
 Բնութիւնն էր զովացնում:
 Ես անխռով երգում էի,
 Իմ երգըս սուրբ, մաքուր էր:
 «Ազատութիւն» էի երգում,
 Հայրենիքի «սլարձանը» ու «սէր»:

Ս. Շահազիզ

Այս երգը համեմատել «Ազատն Աստուածի» հետ:

50. ԳԷՈՐԳ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ

Գէորգ Բարխուդարեանը ծնունդ է թիֆլիզում 1836 թ. նոյեմբերի 10-ին. նրա հայրը, Նիկողայոսը, դերձակի արհեստանոց ունէր: Գէորգը սովորում էր գիմնազիայում. այդտեղ նա աշակերտում էր յայտնի Առաքել վարժապետ Արարատեանին: Այդ միջոցներին Դորպատի անունը սիրելի էր դարձել թիֆլիզի հայ երիտասարդների համար ինչպէս տուր Աբովեանի շնորհիւ. Գէորգն էլ այնքան էր ոգևորւում Դորպատով, որ գիմնազիայի վեցերորդ դասարանից դուրս գալով պատրաստւում է և 1851 թ. սեպտեմբերին ֆուրդոնով ուղևորւում է դէպի Դորպատ: Գէորգի հետ է լինում նաև 10 ամեայ Սմբատ Շահաղիզը: այդ ժամանակ Դորպատի հայ ուսանողութեան ամենածաղկեալ շրջանն էր. ուսանողութիւնը ոգևորւած էր վերածնութեան գաղափարով: Այնտեղ էին՝ Բերորէ և Ռափայէլ Պատկանեանները, Դոդոխեան, Միրիմանեանը, Աբովեանի աշակերտներից շատերը: Գէորգն ընկնելով հայրենասէր երիտասարդների մէջ, ինքն էլ ոգևորւում է դրանց քարոզած գաղափարներով և ամեն կերպ աշխատում լաւ հայերէն սովորել, որովհետև Դորպատ գալով՝ նա միայն թիֆլիզի բարբառով էր կարողանում հայերէն խօսել: Դորպատում Գէորգը երկար չէ կարողանում մնալ. աչքերի հիւանդութիւնը ստիպում է նրան 1853 թ. աշնանը կրկին թիֆլիզ վերադառնալ: Բժշկուելուց յետոյ նա քննութիւն տալով՝ գուլառական ուսուցչի պաշտօն է վարում: այդ միջոցներին Գէորգը ոտանաւորներ գրելու փորձեր է անում և տպագրում «Մեղու Հայաստանի» լրագրում և յետոյ «Հիւսիսափայլ»-ում և ապա դառնում է «Փորձի» ամենաեռանդուն աշխատակիցը, ուր նա զետեղեց Շիլլերի Դոն-Կարլոսը:— 1879 թ. Բարխուդարեանը Վրաստանի և Իմերէթի թեմի Հայոց ծխական-եկեղեցական դպրոցները թեմական տեսուչ նշանակուեց և այդ պաշտօնը վարեց մինչև 1883 թ.: Նրա նախադահութեամբ 1882 թուին տեղի ունեցաւ մեր

առաջին և վերջին ընդհանուր ուսուցչական ժողովը Թիֆ-
լիզում: «Փորձ» ամսագիրը գաղարկուեց յետոյ Բարխու-
դարեանը թէ իր ինքնուրոյն բանաստեղծութիւնները և թէ
թարգմանութիւնը տպագրել է «Արձագանքում», «Հան-
դէս գրականական և պատմական», «Լուսմայ», «Թատրոն»,
«Մուրճ» հանդէսներում:

Թէպէտ Բարխուդարեանն իբրեւ ինքնուրոյն բանաս-
տեղծ աչքի ընկնող տեղ չի գրաւում մեր նորագոյն գրա-
կանութեան մէջ, իբրեւ թարգմանիչ-բանաստեղծ այժմ ա-
ռաջինն է նա և նրա անունը հայ մատենագրութեան մէջ
միշտ շաղկապուած կրմնայ Շիլլէրի ու Գէօթէի անունները
հետ: Բարխուդարեանի թարգմանութիւնները «Գլուխ դու-
ծոցը»՝ «Փառուստը» մի այնպիսի մատենագրական դանձ է,
որ հայ գրականութիւնը երբէք չի մոռանայ նրա առաջին
բանաստեղծ-թարգմանչին:

Պէտքը Բարխուդարեանի գրիչը հաւատարիմ մնաց
«Դորպատեաններ» աւանդական իղէաքներին:

Իսահակ Յարութիւնեան

51. Ձ Օ Ն

Պրկին յայտնում էք, պատկերներ ազօտ,
Որ երկեցաք երբեմն իմ աչքին.
Փորձեմ այս անգամ պահել ձեզ ինձ մօտ,
Զգում եմ իմ սիրտը հակուած այն ցնորքին:
Ոմբում էք իմ շուրջ օդում մշուշոտ:
Շատ լաւ, հակառակ չեմ ես ձեր կամքին.
Կուրծքս զգում է ոյժ պատանեկան,
Դիպչելով ինձ ձեր շունչը դիւթական:

Բերում էք ձեզ հետ ուրախ օրերի
Պատկերներ և սիրելի ստուգներ.
Իբր աւանդութիւն անցած դարերի,
Զարթում է սրտումս առաջին սէր:
Վիշտս նորոգում, սրտիս լարերի

Հնչիւնը կրկնում է հին գանգատներ,
Եւ անուանում է սիրելիներին.
Որոնք հեռացան, թողին ընկերին:

Նորա չեն լսում իմ նոր երգերը,
Որոնց երգեցի երգերս առաջին.
Աւանդ, ցրուած են բարեկամները,
Երգս լսում են անծանօթները,
Ուրախ չեմ անգամ, թէ զովեւ հաճին,
Իսկ որոնք էին երգովս զմալլուած,
Թէեւ ասլուում են, հեռու են ցրուած:

Եւ ինձ քաշում է բուռն ցանկութիւնը
Դէպի կախարդական խաղաղ աշխարհը.
Իմ թոթով երգը արձակում հնչիւն,
Ինչպէս էօլի տաւիղի լարը:
Դողում եմ, լացն է ինձ թեթևութիւն,
Նա հալածում է սրտիս խաւարը.
Այն, ինչ որ ունիմ, հեռու է թւում.
Ինչ որ էլ չկայ, ինձ պարզ երևում:

«ՅԱՌԻՍՏ»-ԳԷՕԹԷ, թարգմ. Բարխուդարևանի

52. Ա Ր Ձ Ա Գ Ա Ն Ք

Խոր ձորի մէջ գնում եմ ես,
Պարզ գիշեր է աստեղազարդ,
Բնութիւնը բնած է կարծես,
Եւ չորս կողմս լուռ հանդարտ:

Ո՛չ սոխակի երգն է լսում,
Ո՛չ վայ տալիս իւր գլխին բուն,
Ծառերի մէջ հով է խաղում,
Չկայ մի ձայն, չկայ ծպտուն:

Ես ընկղմած մտքերիս մէջ
Առաջ եմ գնում և իմ հոգին

Մտածում,—«Կըլինի՞ վերջ
Հայոց ազգի տառապանքին:

Յանկարծ կուրծքիցս դուրս թռաւ,
«Էրնե՛կ մէկն ինձ տար պատասխան»,—
Արձագանքը տարաւ բերաւ
Եւ հնչեցրեց,—«Ա՛ն, պատասխան»:

—Պատգամախօս ահռեա անյայտ,
Մէկ հարցմունքս լաւ ուշ դարձրու.
Արձագանքը միայն կիսատ
Կրկնում է ինձ խօսքս.—(Հ)արցրո՛ւ:

«Ի՞նչ է սպասում խեղճ հայ ազգին,
Միթէ կորսնատ, թէ փրկութիւն».
Արձագանքը որոտազին
Պատասխանում է.—«Փրկութիւն»:

Գէորգ Բարխուդարեան

53. Բ Ա Ֆ Ֆ Ի (1835—1888 թ.)

Բաֆֆին ծնաւ 1835 թ. Սալմաստ գաւառի Փայաջուկ գիւղում, Պարսկաստան: Հայրը, Մելիք-Միրզաբէկ Մելիք-Յակոբեան, իր ժամանակի յայտնի վաճառականներից էր և առևտրական յարաբերութիւն ունէր Ռուսաստանի հետ: Մի անգամ նա իր հետ Թիֆլիզ է բերում մանուկ Յակոբին և տալիս է տեղական գիմնազիա ուսանելու: Յակոբը գիմնազում հասնում է մինչև հինգերորդ դասարան, բայց 1857-ին կիսատ թողնելով ուսումը, ստիպուած է լինում վերադառնալ Պարսկաստան, հօր առևտրական գործերը վարելու: Գիմնազից նա մեծ ուսում չտարաւ, բացի այն, որ ազատ հասկանում ու կարողում էր ռուսերէն, իսկ հայերէն նրա կարգալու գրքերը գրաբար էին և նորաբողոք աշխարհաբարը: 1858-ին նա Սալմաստից ուղևորւում է Տաճկա-Հայաստան, Մուշի ս. Կարապետի վանքն ուխտի, ճանապարհին նա անցաւ Վան, տեսաւ Վարագը և Խրիմեան Հայրիկի հիմնած անդրանիկ դպրոցը, այցելեց Աղթամարայ

կղզին տեսաւ պատմական Հայաստանը և նրա աւերակները, յիշեց անցեալի փառքն ու անդորրութիւնը և այդ ամենը համեմատութեան առաւ ներկայի թշուառութեան հետ. տեսաւ հայի վիշտն ու տառապանքը, ցաւն ու հոգսերը... այն, ինչ որ արդէն տեսել ու զիտել էր իր հայրենի Պարսկաստանում, զիտեց և ուսումնասիրեց նա այդ ամենը քար, աղիւս և աւազ պատրաստելու այն շէնքերի համար, որոնք յետոյ նա լոյս պիտի ընծայէր «Կայծեր», «Ջալալէդդին», «Խենթ», «Խաչագողի Յիշատակարան» և այլն փառաւոր ու հոյակապ բոմանների մէջ...

Այդ համբոյրութեան էպիգոսներից մինն էր, որ նա գրեց ու տպեց առաջին անգամ «Հիւսիսափայլում» — «Աղթամարայ կղզի» վերնագրով, ուր նա Վանայ ծովակին ողբակից լինել էր կանչում թշուառին, «Ձայն տուր, ով ծովակ» գեղեցիկ, տխուր ու մեղամաղձոտ երգով...

Այդ գաղափարներով տոգորուած, հայրենիքի ցաւերով զբաղուած, նա չէր կարող լաւ վաճառական մնալ, ուստի շուտով ամեն բան կորցրած գալիս է Թիֆլիզ մի շորավաճառի մօտ իբրև գործակատար: այստեղ նա ծանօթանում է Գր. Արծրունու հետ, որ նոր էր հիմնել «Մշակը», և դառնում է նրա մշտական աշխատակիցը: Ապա գնում է Թաւրիզ ուսուցիչ, այնտեղից կրկին գալիս է Թիֆլիզ և ուղևորում Ագուլիս, դարձեալ ուսուցչի պաշտօնով: այդ ժամանակ էր ահա, 1877 թուին, որ ծագեց Ռուս-թուրք պատերազմը և Հայաստանը նորից դարձաւ արեան, աւերածի, կողոպտուի և գողթականութեան ասպարէզ:

այդ պատերազմը ահագին կորուստների հետ, հայերի համար բերեց և յուսոյ նշույլ. Բերլինի Կօնգրեսը 61 յօդաւածով ապահովութիւն խոստացաւ հայերին և երաշխիք եւրոպայի կողմից. հարկաւոր էր հարցը վառ պահել և իրերի դրութիւնը ներկայացնել ամենքին տալով նաև գործունէութեան ծրագիրներ:

Ոչ ոք Բաֆֆուց լաւ չէր ճանաչում Հայաստանը և ոչ ոք էլ նրանից աւելի տաղանդաւոր, յուզիչ ու զբրաւիչ կերպով չէր կարող նկարագրել նրա դրութիւնը:

Եւ ահա մէկը միւսի յետեից լոյս են տեսնում «Ջալալէդդին», «Սենթ», «Կայծեր»... ուր ներկայի ծանր ու ճնշող դրութեան հետ ծրագրում են ապագայի վառվռուն, գրաւիչ, յուսալի և խաբուսիկ երազները.— բոցավառ պատկերների մի հակայական կոնտրաստի մէջ նա ներկայացնում էր գեոլիքն իր բոլոր սարսափներով. Հայաստանի ներկան, մօտաւոր հորիզոնի յետևը դրախտի սքանչելիքը ցոյց տալու պատրանքով, Հայաստանի մօտաւոր ապագան. նորը, երիտասարդը, ապագան (Սենթ, Սահրատ, Կարօ) կոխ են մղում հնի, փտածի, ներկայի հետ (Թոմաս Էֆենտի, քաւոր Պետրոս, Տէր-Թողիկ).... Նա հայի ցաւերի երգիչն էր, նրա յոյսերի երազողը և նրա ապագայ գործունէութեան ծրագրողը... վէպերի մէջ... այնքան գունագեղ էին այդ վէպերը, այնքան մօտալուտ և յուսալի այն երազները և այնքան կենդանի ու վառվռուն էին դուրս թռչում Բաֆու բեդֆուաւոր գրչի տակից այդ պատկերները, որ մատաղ սերունդը ուշն և ուրուշը լարած ոչ թէ կարդում, այլ լսւում էր այն ամենը, ինչ որ Բաֆին էր արտագրում իր վառվռուն երևակայութեամբ: Ներկայի սարսափները, ապագայի յարաճուն երազների հետ զուգընթաց նա ներկայացնում էր մօտաւոր անցեալից փառաւոր դէպքեր և հիմնալի արկածներ. Դաւիթ-Բէգը, որ գրեթէ յաղթանակով պիտի վերականգնէր ինն ու մոռացուած հայրենի թաղը, Սամսայի—կիսով չափ անկախ հայ-մելիքները, որոնց երազները օգն էին ցնդել և որոնց ժառանգները գեռ կենդանի են... Ղարաբաղի աստղագէտը (թարգ.), և այլն և այլն... լրացնում էին այն պանօրաման, որ բաց էր արել Բաֆու վառվռուն երևակայութիւնը ծարաւի հայութեան առաջ... անապատի մէջ ծարաւից ու տապից այրուող ճամբորդի նման հայ հասարակութիւնը կլանում էր ամեն մի պատկեր, որ օաղիսի միրափների նման ի ցոյց էր հանում Բաֆին իր տաք և գունագեղ երևակայութեամբ...

Նրա վէպերն անցնում էին ձեռքէ ձեռք և կարդացւում էին յափշտակութեամբ ամեն դասակարգից, ուստի 1888 թուի ապրիլին, Բաֆու անսպասելի և վաղահաս

մահը մի սոսկալի հարուած էր ոչ միայն մեր անքատիկ գրականութեան, այլ ամբողջ հայ հասարակութեան համար, որի բուռն համակրանքն և անկեղծ կսկիծն արտայայտուեց Րաֆֆու այնպիսի թաղմամբ, որին մինչ այն չէր արժանացել և ոչ մի հայ: Յարգ, ոչ ոք Րաֆֆու չափ ժողովրդական չէ՝ և ոչ ոք նրա չափ չի կարդացում. դեռ կենդանութեան ժամանակ նրա գրքերն այնքան էին ծախւում, որ հեղինակին միջոց էին տալիս մի համեստ աւուրուստի: Րաֆֆին առաջին հայ մարդն էր, որ հնարաւոր դարձրեց գրականութեամբ ապրիլը, որ լաւագոյն ապացոյց է նրա անսահման ժողովրդականութեան: Նա ստեղծեց և մշակեց մեր վէպի լեզուն և նա էր, որ այդ լեզուն մատչելի դարձրեց ընթերցող հասարակութեան ամենալայն խւաւերում: Նրա ոճը և պատմելու ձևը ոչ միայն չեն մեռել, այլ հէնց այսօր, երեք-չորսից աւելի հետևակ գրողներ, առանց խոշոր տաղանդի ընթերցող և ժողովրդականութիւն ունին լոկ Րաֆֆուն նմանուելու պատճառով:

Ռ. Պատկանեանից յետոյ, որ ստեղծեց մեր երգն ու նրա լեզուն, Րաֆֆին ամենամեծ մշակողը, տալածողն ու հարստացողն է մեր լեզուի, որին գոյներ, հոգի, արտայայտութիւն և զգացմունք տուող իրօք Րաֆֆին է միայն:

Նրա բացասական տիպերը մեծ մասամբ իրական են և բնական, այն ինչ իդէալական տիպերը երևակայական և անկենդան: Այդ չէր խանգարում, որ մօտիկ անցեալի մեր շարժումներն սկսուէին և գործադրուէին Րաֆֆու դժած ճանապարհով և իրական մարդիկ կրէին Րաֆֆու երեւակայական հերոսների անունները... Նա բաղդաւոր էր, որ երկնեց այդ ամենը և մեռաւ, առանց հետևանքները տեսնելու:

Րաֆֆին մի ազգասէր գրող է, ինչպէս մեր հեղինակների մեծամասնութիւնը. նրա գրչի տակ Հայաստանը դուրս է գալիս մի դրախտ, հայր միշտ քաջ, թէպէտ անբախտ. նրա անբախտութեան պատճառներն են՝ վանքերը, տգէտ հոգևորականութիւնը և բրիտանիզութիւնը: Նրա ամենից յայտնի գործը «Սամուէլն» է. դա Փաւստոսի Հայոց

պատմութեան վերաբարձրութիւնն է գեղարուեստական ձևով.—գեղեցիկ, տեղ-տեղ հիանալի պատկերների մի պանօրամ է դա՛ կարելոյն չափ պատմական, թէև միանգամայն զուրկ գեղարուեստական ամբողջութիւնից: Իր ունեցած պատմական տեղեկութիւնները Բաֆֆին այնքան շատ է տալիս, որ թէ՛ ծանրացնում է վէպը և թէ՛ թուլացնում նրա գեղարուեստական տպաւորութիւնը: Տիպերը, բացի Ումիզզուխից և Արտաւազդ մանուկից, անկենդան են և անաջող: Ամբողջ վէպը ձգտում է պատկերացնելու Քրիստոնեայ Հայաստանի կոխը հեթանոս Հայաստանի և մանաւանդ հեթանոս Պարսկաստանի հետ, հայ թագաւորների կոխը նախարարների և կաթողիկոսների հետ: Լեզուն, միւս վէպերի համեմատութեամբ աւելի հարուստ է և աւելի հայերէն, թէպէտ, ըստ սովորութեան լի կրկնարանութիւններով: Երևակայութիւնը վառ, պատկերները գունագեղ ու կենդանի, զգացմունքներն ու բարոյւղ գաղափարները տաք ու վառվռուն...

Բաֆֆին իր վէպերից շատերում (Կայծեր, Խենթ, Դաւիթ-Բէգ և այն) չի սամանափակում մի ամփոփ գեղարուեստական սահմանի մէջ, այլ նա ուզում է տալ և ստոյգ պատմութիւն, և՛ բացատրել զրա պատմական, տրստեսական և քաղաքական պատճառները, այդ ամենը կապելով մի վիպական հանգոյցի շուրջը: Այդ ամենը նա կատարում է խիստ լայն չափերով, ուստի թուլանում է գործի գեղարուեստական ամբողջութիւնը, որից զուրկ են զրեթէ նրա բոլոր մեծ վէպերը: Խենթի, Կայծերի և Խաչ, յիշտ. մէջ նա քարոզիչ-յեղափոխական և էսնոգրաֆ է: Սամուէլի և Դաւիթ-Բէգի մէջ նա պատմավիպասան է, երբեմն աւելի պատմաբան, քան վիպասան, երբեմն էլ հակառակը: Հրապարակասօսը, պրօպագանդիստը և վիպասանը նրա մէջ նստած են կողք-կողքի, որոնք աւելի միմեանց խանգարում են, քան լրացնում. և որոնց միացնում է և շողկապում է Բաֆֆու վառվռուն հայրենասիրութիւնը և խորին համոզմունքը քարոզած գաղափարների:

Ք. Վանցյան

54. ՄԻ ՊԱՏԿԵՐ ՌՈՒՍ-ԹՈՒՐԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ

1877 տարուայ մայիս ամիսը մօտենում էր իր վախճանին։ Աղբակայ դաշտերից մէկի վրայ մի բանակ էր երևում՝ բազմաթիւ վրաններից բաղկացած։ Մէջտեղը կար մի ընդարձակ հրապարակ, ուր անբացատրելի խռովութեան մէջ շարժւում էին զինուորուած տղամարդիկ, որոնց երեսները արտայայտում էին կատաղի անհամբերութիւն։ Նոցա ամեն մէկ շարժուածքը ցոյց էր տալիս, թէ դոքա մի սարսափելի պատերազմի են պատրաստուում։ Վերջապէս զլխաւոր վրանի առջև կազմուեցաւ սի ամբիոն՝ թամբերը միմիեանց վրայ դարսելով։ Մի պատկառելի ծերունի բարձրացաւ նրա վրայ, որ իր արտաքին կերպարանքով ներկայացնում էր մի անձնաւորութիւն, որ միևնոյն ժամանակ և՛ բարձր հոգևորական է և՛ հզօր զինուորական։ Նա՛ և Շէյխ էր, և՛ զօրավար։ Նա իր ձեռքում բռնած ունէր կարմիր դրօշակ։ Զինուորած ժողովուրդը այս հրաշալի երևոյթը տեսնելով՝ այնպէս էր երևակայում, իբրև թէ իրանց հզօր պապերը կենդանացել են և ոգելից ճառ պէտք է խօսեն։

Շէյխի բարոյը սկսուեցաւ օրհնութիւններով և փառաբանութիւններով։ Ալլահի, Մուհամմէդի և նրա յաջորդների անունները արտասանւում էին մեծ ջերմեռանդութեամբ։ Յետոյ սկսեց քաջալերել այսպէս.

«Ո՛վ Իսլամի որդիք, մեծ մարգարէն, — փառք իր զօրութեան, — կոչում է ձեզ մի սուրբ գործի համար, կոչում է ձեզ պատերազմել իր կրօնի թշնամիների դէմ, որոնք սկսել են թափել Աստծոյ ծառաների արիւնը։ (Եւ թող նզովեալ լինին նոքա)։

Վհատութիւնը, երկչոտութիւնը և կասկածը թող հեռու լինեն ձեզանից, որովհետեւ երկիւղը Աստուծոյ զինուորների համար չէ։ Տէրը ինքը կը տայ ձեր բազուկներին զօրութիւն և թշնամու պարանոցները ձեր սրերի առջև կը կտրատուին, որպէս չորացած հսակը հնձողի մանգաղի առջև։ Դուք ձեր ձեռքով կը բռնէք նրանց գնդակները և դէ-

պի իրանց յետ կը դարձնէք: Ձեր անձերը պաշտպանուած կը լինեն երկաթեայ պարիսպներով, որոնց ձեր աչքերը չեն տեսնի: Ձեզ աջակից կը լինեն կոտորող հրեշտակների աներևոյթ գունդերը, որոնց մարզարէն ձեզ օգնութեան կուղարկէ: Մեծ է Իսլամի Աստուածը և բացի նորանից ուրիշը չկայ:

«Բոլոր գեաւուրները պիղծ են Աստուծոյ առջև: Նրանց կայքը, ընտանիքը և ամեն ինչ, որ պատկանում է անհաւատներին, Աստուած մատնում է ձեր ձեռքը: Յափշտակեցէ՛ք, կողոպտեցէ՛ք, այրեցէ՛ք և կոտորեցէ՛ք, որքանով կը լիանայ ձեր սիրտը: Աւարը և իր կրօնի թշնամիների աբիւնը՝ Աստուած հալալ է անում սուրբ պատերազմի զինուորներին...»

«Սուրբ կրօնի թշնամիների արիւնի հոսումը հաճելի է Տէրի առջև: Անհաւատների աւերակների ծուխը նա ընդունում է որպէս մի ողջակէզ, որից ծուխը ուղիղ բարձրանում է դէպի Յաւիտենականի աթոռը: Կողոպտեցէ՛ք, որքան կարող էք դուք: Եւ ձեր կոտորածների արիւնի իւրաքանչիւր կաթիլի համբարքով՝ դուք կը ստանաք վարձ Աստուծոյ դրախտի մէջ:

Մեծ է ուղղափառների Աստուածը և բացի նրանից չկայ մի ուրիշը:

«Եթէ ձեր վեր առած գերիներից՝ ձեր սրտին հաճելի կը լինի ընտրել կնիկներ կամ աղջիկներ, — եթէ դուք ծառայեցնելու համար կընտրէք պատանի ստրուկներ ձեր ձեռքն ընկած գեաւուրներից, — Աստուած չէ արգելում ձեզ, միայն այն ժամանակ, երբ նրանք կընդունեն Իսլամը: Իսկ եթէ հաստատ քնացին իրանց մոլորութեան մէջ, ձեզ թոյլ է տրւում սպանել: Իսկ ծերերին խնայել չկայ: Անհաւատութիւնը նրանց մէջ ամբացած է իրանց ոսկորների նման»...:

Դեռ ևս երկար խօսում էր Շէյխը. նա կանգնած էր ամբիոնի վրայ, որպէս Իսլամի մարմնացած ոգին, որպէս հալածասիրութեան և մոլեռանդութեան մի կենդանի օրինակ: Նրա ձայնը ազդու էր և սուր, և այն վայրենի ժո-

դովրդեան կարողացաւ ոգևորել մարդկանց մորթելու համար: Երբ վերջացրեց նա ճառը, կրկին դարձաւ դէպի բազմութիւնը այս խօսքերով:

«Աստուած ձեզանից ուխտ է պահանջում, և թող ձեզանից ամեն մէկը կատարէ իր երդումը»:

Երբ երդումը կատարեցին և բոլոր արարողութիւնները վերջացան, լսելի եղաւ թմրուկի ձայնը: Ամեն մարդ վազեց իր ձին նստելու, վրանները հաւաքուեցան, և մի քանի ժամից յետոյ՝ ամբողջ բանակը պատրաստ էր ճանապարհ ընկնելու: Նա շարժուեցաւ, երբ շէյխը իր ձին նստած՝ կարմիր դրօշակը ձեռին՝ առաջ ընկաւ, Աւելիքան տասն հազար քիւրդեր հետեւում էին այդ սարսափելի ծերունուն:

Այսպէս սկսեցաւ Ըէյխ Ջալալէդդինի արշաւանքը դէպի տաճկական Հայաստանը:

Անցաւ մի ամբողջ շաբաթ:

Մի ճանապարհորդ էլ չէր ճանաչում իր ծանօթ լեռները, Այժմ տեսնում է բոլորովին դատարկ, առաջ այսպէս չէր: Սոտակէտ արօտներում արածում էին հօտեր, ձորերի մէջ կազմուած էին խաշնարած հայերի վրանները, և հովիւների սրինգը հեռուից հնչում էր թռչունների տառաօտեան ձայների հետ: Այն ժամանակ հովիտների և լեռնադաշտերի վրայ հողագործ հայր, իր սովորական երգը երգելով, կամ վարում էր կամ հնձում, Իսկ այժմ.—Այժմ ամեն գործ դադարել էր, ոչ մի շունչ չէր երևում, էլ անց ու դարձ անող քարաւաններ չէին երևում, այլ միայն զիւղերի ճարակն ու ծուխը երկինքն է բարձրանում: Աւերակներ և ամայութիւն ամենայն տեղ:

Բաժնի

Ինչ տեսարան է նկարագրուած այստեղ, մի քրիստոնեայ վարդապետ կարճ է այսպիսի քարոզ տալ:

Ձէ կարելի տեսնել և չհիանալ այդ առողջ, կենդանի, մշտագուարթ ժողովրդով, Նա երբէք չէ թառամում, որպէս իր ծմակները մշտականաչ կիպարիսը: Նա երբէք չէ ծերանում, որպէս թառուտների դարևոր-եղևնին, Հզօր կուրծքը մերկ, զօրաւոր բազուկները հոլանի, գլխին թաղիքեայ կոշնաձև քոլողը զրած և նրա վրայ գոյնզգոյն թաշկինակներ փաթաթած, որոնց ծայրերը, ոսկեգոյն մագերի երկայն գիսակների հետ թափւում են լայն թիկունքի վրայ. հագին մի կարճ քաղալայ (բաճկոնակ), որի ամբողջիւնը, երկաթեայ զրահի նման, կարող է դիմանալ ամենասուր դաշոյնի առաջև, ներքին հագուստը մագեղէն գոլ-գոլ անդրալարտիքի մէջ հաւաքած,—դուք կը տեսնէք Ռշտունեաց լեռների այս զաւակին, որ երկայն նիզակը ձեռքին, թեթև, վազրի նման, անցնում է մի ապառաժից դէպի միւսը: Նրա նիզակը, որ երկու ծայրերում սև սուր երկաթներ ունի՝ ծառայում է և՛ իբրև զէնք, և՛ իբրև նեցուկ, որը գետնի մէջ ցցելով՝ յենւում է նրա վրայ և ոստիւններ է գործում սարսափելի վների վրայից: Այդ բոլորը այնպէս արագ է կատարւում, որ դու կարծում ես, թէ նա թռչունի նման թևեր ունի և օդի մէջ սլանում է:

Նրա թաղիքեայ փափուկ տրեխների տակերը ամբողջապէս գամած են սրածայր բեռներով, որ չուհեն, չսայթաքեն ժայռերի վրայ ման գալու ժամանակ: Գօտու մէջ խրած ունի մի կեռ խենջար, որի կոթը գերծանով կապած է պատեանին. այդ կապանքը նրա համար է, որ մինչև արձակելը նրա բարկութիւնը անցնի. իսկ երբ մերկացրեց սուրը՝ գործսղութիւնն արդէն վճռւած է, մինչև արեան մէջ չզոլագնէ՝ իր տեղը չի դնի:

Թշնամու հետ անգութ է՝ իբրև զազան, բարեկամի հետ բարի է՝ իբրև հրեշտակ: Իր հովիտների բարձրահասակ սօսիների նման գեղեցիկ է նա: Երբ նայում է քո երեսին՝ դու զմայլում ես: Նրա կապուտակ աչքերը այն-

պէս լուսափայլ, այնպէս ընդարձակ և այնպէս խոր են, որպէս այն կապուտակ ծովը, որ ծփում է նրա աշխարհի մօտ: Նրա այրական դէմքը այնպէս արձակ ու այնպէս պայծառ է, որպէս Ռշտունեաց պարզ երկինքը:

Ռշտունեաց պարզ երկինքի նման՝ այդ խաղաղ դէմքը յանկարծ մռայլում է, մթնում է, շանթեր է արձակում՝ երբ եղանակը փոխում է, և տեղի է ունենում վերահաս փոթորիկը... Այդ միջոցին նա չէ խօսում, այլ որոտում է և այդ որոտման ձայնի մէջ դու լսում ես նախկին հայի ուժեղ բարբառը իր բոլոր կոշտ և անտաշ ձևերով: Բայց այդ կոշտ հնչիւնները քո հոգուն այնքան ազդու են, քո սրտին այնքան կախարդիչ են, որ որքան էլ ընկած լինես դու հոգով՝ յանկարծ ներշնչւում ես մի անբացատրելի ու գեոքութեամբ...

Բաժֆի

56. ԼՈՒՍԱԼՈՐՉԻ ՏՈՆՎՐԸ

Լուսաւորչի տոնմը ունէր իր սրբազան անցեալը, որ նուիրագործուած էր մեծահռչակ և վսեմ աւանդութիւններով, որ ժողովրդի սրտին և հաւատին շատ մօտ էին, որ նրա համար անմոռանալի էին: Ժողովուրդը պաշտում էր այդ տոնմը և ընդունում էր նրան իբրև ամենաբարձր հոգևոր հեղինակութիւն: Այդ էր պատճառը, որ Հայաստանը սիրում էր այդ տոնմի մէջ միայն տեսնել իր եկեղեցու ներկայացուցչին, նրան միայն արժան էր համարում հայրապետական աթոռը, և միշտ նրա բարեբար ձեռքում էր փափագում տեսնել իր ծայրագոյն հովուապետի գաւազանը: Այդ զգացմունքներից առաջ եկաւ այն ժառանգական կաթողիկոսութիւնը, որ իջնում էր Լուսաւորչի տոնմի մէջ յորդուց յորդի:

Եւ այդ հայրապետական տունը, իր գոյութեան ամբողջ ընթացքում, միշտ արդարացրեց ժողովրդի թէ հաւատը և թէ նրա փափագները: Նա միշտ մնաց անբխձ և

անարատ, և ամենայն անձնուիրութեամբ կանոսեց իր յանձն առած բարձր հոգաբարձութիւնը: Իսկ այդ հոգաբարձութիւնը որքան հաճելի է ժողովրդի համար, նոյնքան ծանր է թագաւորների համար: Ամենայն անաշուտութեամբ սանձահարում էր նա թագաւորների մոլութիւնները և նրանց կամայականութիւններին սահման էր դնում: Նա, իրաւ, ճշում էր գործ դնում թագաւորների վրայ. բայց երբէք զահին չէր դաւաճանում: Հայրենասիրութիւնը և արքայական թագի պաշտպանութեան գաղափարը՝ այդ տոհմի դերագոյն առաքինութիւններից մէկն էր:

Լուսաւորչի հայրապետական տունը, իր վեհափառութեան բարձր դիրքի համեմատ՝ արքայավայել կացութիւն ունէր: Այդ տունը աւելի փայլ ստացաւ Ներսէս Մեծի օրերում, Թագաւորը այնտեղ մտնելու ժամանակ՝ իրաւունք չուներ նստելու, մինչև հայրապետը տեղ ցոյց չտար: Բայց հայրապետը թագաւորի արքունիքը մտնելու ժամանակ ազատ էր ամեն տեղ նստելու: Ծառայողների և զանազան պաշտօնակալների մի ստուար բազմութիւն միշտ ներկայ էր այնտեղ: Տասն և երկու եպիսկոպոսներ հայրապետի անբաժան գործակիցներն էին և խորհրդակիցները: Չորս վարդապետ և վաթսուն երէց միշտ անպակաս էին նրա սպասից: Աշխարհականներից մինչև հինգ հարիւր հոգի ամեն օր սեզան էին նստում: Բացի դրանցից՝ հայրապետը ունէր իր այլ և այլ պաշտօնեաները, որպիսիք էին՝ սենեակապետ, փակակալ, դռան եպիսկոպոս, դպրապետ, հիւրընկալ, սարկաւազապետ, դռան վարդապետ, դռան երէց և այլն:

Հայրապետական տունը, Լուսաւորչի բոլոր ժառանգների օրերում, փակուած չէր այս կամ այն վանքի առանձնութեան մէջ: Նա աշխարհից չէր անջատուած և աշխարհի առջև միշտ բաց էր: Լուսաւորչի ժառանգները՝ Աբրահամի, Իսահակի և Յակոբի նման, միևնոյն ժամանակ թէ՛ ժողովուրդի հայրեր էին և թէ՛ գերդաստանի հայրեր: Նրանք ընտելուած էին իրանց ընտանեկան խաղաղ շրջանում:

Մեծ էր փառքը հայրապետի, երբ նա մի օր և է տեղ

էր գնում: Մի ամբողջ բանակ շարժւում էր նրա հետ: Մի քանի հարիւր սպառազինուած ձիաւորներ իր թիկնապահներին՝ ուղեկցում էին նրան: Մի քանի հարիւր եպիսկոպոս, վարդապետ, երէց և այլ եկեղեցականներ ջորիներով վրայ նստած՝ ընթանում էին նրա առջևից և ետևից: Խնքը հայրապետը նստած էր լինում կամ սպիտակ ջորու վրայ կամ կառքի մէջ, որ նոյնպէս տանում էին երկու սպիտակ ջորիներ, որ միայն թագաւորին իրաւունք ունէր գործածելու: Ջորիների թամբերը և այլ հանդերձանքը զարդարած էին լինում ոսկով: Հայրապետը սովորաբար երեսը ծածկած էր ուսենում սև քօղով: Ուղևից տանում էին հայրապետական գաւաղանը, և իբրև սրբազան դրօշ — բարձր խաչվառը:

«ՍԱՄՈՒԷԼ» — ԲԱՖԶԻ

57. Ա Ր Ա Ք Ս

Հին Արաքսը... զարմանալի քմահաճութիւններ ունէր: Անյիշելի ժամանակներից յամառութեամբ կուռւմ էր իր անհաւատար եզերքի հետ և կարծես, գժգոհ էր այն նեղ շաւղից, որ գծել էր նրա ընթացքի համար նոյնքան քմահաճ բնութիւնը: Նա սիրում էր ազատութիւն: Նեղ շաւղը վրդովում էր նրան:

Երբեմն լեռնային երկու զուգահեռու գօտիները միաբանում էին և սեղմում էին նրան իրանց անձուկ և խորին ձորակի մէջ: Այդ միջոցին նրա կատաղութիւնը չափ ունէր: Անոռի յորձանքներով զարկւում էր իր ապառաժոտ ափերին, գոռում էր, գոչում էր, փրփրում էր, և մարդ, կարծես, լսում էր նրա սոսկալի որոտմունքի մէջ այս ճակատագրական խօսքերը. «նեղ է... խեղդւում եմ»...

Երբեմն լեռնային գօտիների միաբանութիւնը խախտւում էր, բաժանւում էին միմեանցից, հեռանում էին միմեանցից և բաց էին անում նրա առջև լայն, ընդարձակ տարածութիւն:

Այդ միջոցին նրա կամայականութիւնը չափ չունէր։ Ազատուելով իր նեղ կիրճից, մի քար վիշապի նման՝ անխնայ ողողում էր, յեղյեղում էր իր հարթ, կանաչազարդ ավերը,—և կամ, մի արբած հսկայի նման, երբեմն դէպի աջ էր թեքւում, երբեմն դէպի ահեակ էր խոտորւում, և երբէք ուղիղ ճանապարհով չէր գնում։

Նա ազատութիւնը խելացի կերպով վայելել չգիտէր։ Յանկարծ վիթխարի թևերը բաց էր անում, խլում էր ցամաքից մի կտոր հող և, ճնշելով իր զով գրկի մէջ, կըղզիացնում էր նրան։ Առժամանակ երեխայական սիրելութեամբ՝ սկսում էր փայփայել և խնամել իր խաղալիքը։ Կղզին աճում էր, կանաչազարդւում էր, աճում էին թուփերը, վառւում էին ծաղիկները։ Երկնքի թռչունը հիւսում էր այնտեղ իր բոյնը, վայրի անասունը սնուցանում էր այնտեղ իր ձագուկներին։ Կղզին ներկայացնում էր մի գեղեցիկ փունջ, որով զուարճանում էր նա և, պճնասէր երիտասարդի նման, զարդարում էր իր հպարտ կուրծքը։ Բայց յանկարծ կարծես ձանձրանում էր նա. ալիքները փրփրալով բարձրանում էին, կոհակները կատաղաբոր մոնչում էին և մի քանի բոպէի մէջ կլանում, ոչնչացնում էին գեղեցիկ զարդը և նրա հետքն անգամ չէր երևում։

«ՍԱՄՈՒԷԼ».—ԲԱՓՓԻ

Համեմատեցէք «Մայր-Արաքսի» հետ. ինչպէս է նկարագրում Բափֆին և ինչպէս Գամառ-Բաթիպան. ինչ է ճիշտ և համապատասխան իրականին. ինչ գաղափար է արժարժում Բափֆին և ինչ Ռաֆայէլը։ Մի արբած հսկայ և մի սզաւոր ալիք.— Համեմատեցէք Ձանգու հետ, Տերեկի (Լերմոնտով) և Дѣтенышъ-и (Гоголь) հետ։

58. ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆ

Աղայեանը ծնուել է 1840-ին Թիֆլիզից ոչ հեռու գլուխուղ Բօլնիս գիւղում։ Առաջին ընթերցանութիւնը նա սովորել է Շամշուղա գիւղի քահանայից։ 1853-ին նա մըտնում է Ներսիսեան դպրոցը, այնուհետև մի տալարանա-

կան ձուլարան՝ իբրև աշակերտ, ուր Համբարձում Էնֆիա-
ձեանցի հովանաւորութիւնն ու խրախուսանքը նրան աս-
պարէզ են տալիս առաջ գնալու: Էնֆիանձեանցի շնորհիւ
Աղայեանն ընկնում է իր ժամանակի առաջաւոր մարդ-
կանց՝ Ախվերդեանի, Մարկոս Աղաբէգեանի և այլոց շրջա-
նը: Այդտեղ ահա, տպարանում ծառայելիս, նա տպում է
իր անդրանիկ երկը, 1862 թ. «Մեղուի» մէջ: Աղաբէգեա-
նի խորհրդով, արհեստն և ուսումը կատարելագործելու
համար, Աղայեանը թողնում է իր արդէն սպառնով պաշ-
տօնը և գրեթէ առանց որևէ միջոցի ուղևորւում Ռուս-
սաստան, Մոսկուայում նա կրկին մտնում է տպարան
գրաշարութեամբ տպելու և միաժամանակ ուսումը կա-
տարելագործելու նպատակով: Մի քանի տարի շարունակ
Մոսկուայում և Պետերբուրգում փոխ առ փոխ տպելուց և
արհեստի մէջ կատարելագործուելուց յետոյ, Աղայեանը
վերջապէս ընկնում է Եգեանի շրջանը: Վերջինի մօտ այդ
ժամանակ ժողովներ էին տեղի ունենում, ուր ուսանող-
ները պարտաւոր էին գրաւոր շարադրութիւններ կարգալ
թէ անձնական զարգացման և թէ մանաւանդ նորաբոյս լեզ-
ուի մշակման համար: Այդ ժողովների արդիւնքն է ահա Ա-
ղայեանի առաջին յայտնի աշխատութիւնը՝ «Արութիւն և
Մանուէլ»: Ինքն Աղայեանը հետեւեալ կերպով է որոշում
իր գրած վէպի արժէքը. «Ոմանք այն միտքը տարածե-
ցին ընթերցող հասարակութեան մէջ, որ իբրև թէ իմ աշ-
խատութիւնը մի պատերազմ է յայտնում հին գաղափար-
ների, հին դաստիարակութեան դէմ, որոնց վրայ չի ող-
բում, այլ յարձակւում է անխնայ և նրանց տեղը տարա-
ծում նորը և լաւագոյնը»:

1870-ին Աղայեանը հրաւիրւում է Ախալցխա՝ ուսու-
ցիչ, այստեղից էլ Ալէքսանդրապոլ, որպէս տեսուչ, ապա
նոյն պաշտօնով տեղափոխւում է Երևան և Շուշի: Այնու-
հետեւ նա նշանակւում է Թիֆլիզի նահանգում թեմական
տեսուչ: Ապա հինգ տարի շարունակ նա աշխատակցում էր
«Աղբիւր» մանկական թերթին, ուր մի կողմից նա հիանալի
լեզուով խօսում էր մանուկների հետ, իսկ մեծերի բաժ-

նուժ, գրուժ և տարածուժ մտնկավարժական և լեզուական խնդիրներ։ Աղայեանի գործերից յայսնիներն են. «Արու-
թիւն և Մանուէլ» և «Երկու քոյր»։ Իբրև մանկական գրող
նա իր նմանը չունի մեր գրականութեան մէջ. «Անահի-
տը», «Տորք Անգեղ», «Արեգնագան», «Օձամանուկ» և
«Արևահատ», «Արևամանուկ», մեր մանուկների ընթեր-
ցանութեան ամենալաւ գրուածքներն են։

Կ. Վանցեան

59. Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ի Ա Ղ Օ Թ Ք Ը

Ո՛հ, Աստուած իմ, Աստուած, Դու բարի ես, Դու միշտ ողորմած,
Շատ ժամանակ է, որ Դո գթութիւնդ երբէք չեմ յիշած.
Ներիւր ինձ, ներիւր, Հայր իմ Արարիչ, ես մեղաւոր եմ,
Դու ինձ շնարհել ես ուժ ու զօրութիւն, ես մոռացել եմ.
Դու հրամայել ես լինել գործունեայ, ես նոր եմ յիշում,
Ես այսուհետեւ գործել կըսկսեմ իմ բոլոր կեանքում,
Գործունէութեամբ իմ մէջ կըզտնեմ ես ինձ բարերար,
Գործունէութեան դէմ չկայ ոչինչ անհաս և դժուար:
Թող այս ձեռներս, որ այժմ քաջառողջ, պարապին գործով,
Թող այս ձաւատըս, որ այժմ լայնացած, ճոխանայ մտքով,
Թող այս ոտներըս, որ այժմ ամրացած, ուղիղ ընթանան,
Թող այս աչքերըս, որ այժմ բացուած, նոր փայլ ստանան,
Յօժար եմ, յօժար, ամենայն անձամբ գործունեայ լինել,
Հաստատուն յուսով, անվեհեր սրտով միշտ յառաջ դիմել —
Դէպի նպատակ — դէպի կատարեալն և դէպի բարին,
Որին ձգտելը մի անհրաժեշտ պարտք է մարդկային:
Դու մի հաստատուն, ով իմ Արարիչ, կամք տուր ինձ միայն:
Իսկ Բեզ վայել է և՛ փառք և՛ պատիւ այժմ և յաւիտեան:

Պատմեցէք այս արձակ և գրեցէք:

60. Ձ Մ Ե Ռ Ն Լ

Ձմեռն է, ձմեռ, սիրուն երեխէք:
Ձմեռն է, և դուք զողում, մըսում էք,
Բայց դուք մենակ չէք, ես էլ եմ մըսում.
Ես էլ եմ ձեզ պէս զողում, սարսուռում:

Բայց զիտէ՞ք արդեօք ինչ է ձմեռը,
Ըյդ պատկառելի համարուած ծերը,
Ո՛հ, մի հարցնէք, դուք կըսարսափէք,
Երբ դրա բարբը պատմեմ ձեզ մէկ-մէկ:
Ըյդ անիրաւը ուր ոտք է դնում,
Առանց խղճալու մահ է տարածում:
Երեսին առած ըսպիտակ զիմակ,
Մեզանից ծածկում է սև դէմքն այլանդակ:

Շատ ժամանակ չէ, ինչ որ դա եկաւ,
Եւ դուք լաւ տեսաք, թէ ինչեր արաւ,
Դրրա երկիւղից ջուրը քար կտրեց,
Քչքչան առուն լռեց, պապանձուեց,
Գալար բոյսերը սառան, փետացան,
Նախշուն հաւքերը թռան, հեռացան,
Բայց էլի շատին իր ճանկը ձրկեց,
Բուք բորան արաւ, բոլորին խեղդեց,
Սիրուն վարդենու թուփը չորցրեց,
Սոխակի լեզուն տակիցը կտրեց:

Ո՛վ դու կեղծաւոր, փարիսեցի ծեր,
Դու ունիս, զիտենք, շողոքորթներ էլ,
Որոնք բորանդդ, թիփիդ չեն տեսնում,
Ոչ բուք բորեաղիւ տակ ցրտահարւում:
Սառցեղէն սրտին ի՞նչ բուք, ի՞նչ բորան
Կարէ ներդործել, կամ ի՞նչ ցուրտ՝ ի՞նչ բան,
Օրը կարճացել, գիշերն երկարել,
Լոյսը նուաճուել, խաւարն է տիրել,
Երկինքն ամպապատ, գետինքը սառած,
Գարունը հեռու, ցուրտը կատաղած,
Այսպէս է ահա սոսկալի ձմրան
Ալիքով ծածկած պատկերը դաժան...

Ցուրտ է, սաստիկ ցուրտ, սիրուն երեխէք:
Եթէ ինձ նման դուք էլ մըրսում էք,

եկէք միասին մի հնար գտնենք,
 Զմռան ճանկերից մեր գլուխն ազատենք,
 Դուք ձեր մանկական անարատ մտքով,
 Ես իմ հասակիս բազմամեայ փորձով,
 Եթէ կամենաք, խելք խելքի կըտանք,
 Եւ ինչից ասես՝ կրակ կըստանանք,—
 Կրակ լուսատու, պայծառ, անստուեր,
 Որ տաքացնէ սառցեղէն սրտեր,
 Որ կենդանացնէ գոսացած ձեռներ,
 Որ հալեցնէ սառցապատ լեռներ.—
 Օրինակ առնենք մեզ կիզապակին.
 Եւ մենք կըհասնենք մեր նպատակին:

Ղ. Աղայեան

Համեմատեցէք այս Արովեանի և Պոսեանի «Զմեռ»-ները հետ:

61. Ա Շ Ո Ւ Ղ

Ինչպէս ամեն տեղ, նոյնպէս և մեր երկրում երգերը դարերի ընթացքում ապրել են ժողովրդի բերանում, սերնդից սերունդ անցնելով: Երգի հետ միասին առաջ է եկել և երաժշտութեան նախնական ձևը՝ սրինգն ու սազը, որ մի տեսակ պահանջ դառնալով ժողովրդի համար, առաջ է բերել երգող երաժիշտների մի ամբողջ բազմութիւն, որ մեղանում աշուղ են անուանում:

Անդրկովկասի ժողովրդական երգիչներ-աշուղները, որոնք բացառապէս նուիրուած են իրանց արհեստին, թափառական կեանք են վարում: Նրանք տուն չունին, նրանք շրջում են գիւղից գիւղ, դաւառից դաւառ, երգում, ստեղծագործում... Պէտք է ասել, որ ժողովրդական երգիչը մեծ յարգ ունի մեր զաւառներում. նրա կուրուքեան առջև պատկառում է գիւղացին, իսկ նրա ստեղծագործութեան մէջ նախախնամութեան մատը տեսնելով՝ ժողովուրդը երկիւղածութեամբ է վերաբերում դէպի աշուղը:

Օտար աշուղը գիւղում ամբողջ հասարակութեան հիւրն է. ձմեռը նրան տնից տուն են տանում և մի քանի ընտանիք ժողովուրդով մի որ և իցէ դոմում, սաքուի վրայ բոլորուելով երգչի շուրջը, մի իւզէ ճրագի լոյսի տակ, որ մի խորհրդաւոր տեսք է տալիս ժողովին, ականջ են դնում երգչի նուագախառն երգին և սրտի յուզմունքների ըռպէսներում աշուղին սե կոպէկներ նուիրում:

Պէտք է ասել, որ գիւղերում ձմեռուայ համերգները աւելի ընտանեկան բնաւորութիւն ունին, իսկ ամառը, մասնաւանդ յուրընկեայ գիշերները, մի մեծ հրապարակի վրայ գլխաւորապէս կրպակի մօտ՝ ամբողջ գիւղը լցւում է երգչին ականջ դնելու և աւելի հետաքրքրւում է աշուղների մրցութիւնով:

Աշուղների մրցութիւնը, այն էլ յայտնի, արդէն հռչակ ստացած աշուղների մրցութիւնը մի ամբողջ դարագլուխ է կազմում գաւառական կեանքի մտաւոր պատմութեան մէջ, երկու նշանաւոր աշուղների մի գիւղ գալը իմացւում է գաւառում մի քանի օր առաջ, հարեան գիւղերից շատերը գալիս են ներկայ գտնուելու երգերի այդ ճակատամարտին, և ամբողջ գաւառը անհամբեր, լարուած հետաքրքրութեամբ սպասում է մրցումի վախճանին, որի մանրամասն պատմութիւնը սկսում է բերանից բերան շրջել գաւառներում և երկար ապրում է սերունդների յիշողութեան մէջ: Պատմում են, որ աշուղների այնպիսի մրցումներ են եղել, որոնք օրեր ու շաբաթներ են շարունակուել: Այն երգչի մասին, որ տանում է յաղթանակը, ժողովուրդը ասում է, օրինակ՝ «Աշըղ Օհանը աշըղ Դաւթին կապեց»:

62. ԱՇՈՒՂՆԵՐԻ ՄՐՑՈՒՄԸ

Գիւղի քեթխուղաները, քահանան և բոլոր կանայք ու երեխայք հաւաքուել էին և աշուղի շուրջը ծալպատիկ նստոտել գետնի վրայ: Այդ խմբին մօտեցաւ մի ուսուում

առած երիտասարդ Յարութիւն անունով: Սա ոչ ոքի վրայ ուշք չդարձրեց, բացի աշուղի նուագարանից (սաղ), որի մեծութիւնն ու զարդարանքը զրաւեց իրան: Ուստի անվախ ու համարձակ մօտեցաւ աշուղին և գլուխ տուեց նրան, ասելով.

— Է՛շխ օլա, ռւստա ¹⁾:

— Է՛շխն չո՛խ օլա, սաֆա գեալդն ²⁾, պատասխանեց աշուղը:

Նրանք իրանց խօսքերն ու երգերը շարունակեցին տաճկերէն, որոնց թարգմանութիւնն այս է.

ՅԱՐՈՒԹԻԻՆ. Վարպետ, չի՛ կարելի արդեօք, որ մենք գօտիկ գօտիկ խփենք, շնորհք շնորհքի: Ես լսել եմ քո համբաւուող անունը և եկել եմ, որ՝ եթէ կարելի է, մեր շնորհքը իրար հետ համեմատենք:

ԱՇՈՒՂ. Գլխիս վրայ, մեծ ուրախութեամբ, շատ սիրով, շատ բարի, շատ բարի... Բայց, իմ սիրելի, իմ աչքիս լոյս, ես տեսնում եմ, որ դու աշուղ չես, դու նուագարան չունես, նուագարանդ ուրիշի ես տուել, ինձ մօտ առանց նուագարանի եկել... Ոչ: այդպէս չէ լինում... Ինձ մօտ նուագարանով են գալիս, առանց նուագարանի գնում... Դու մոլորուած ես, քեզ խաբել են, դու երիտասարդ ես... Իմ գիրն այնպիսի գիր չէ, որ ամեն մարդ կարդայ. իմ ջուրն այնպիսի ջուր չէ, որ ամեն մարդ խմի... Ի՞նչ կասես, սան եախշի (դու լաւ ասա):

ՅԱՐՈՒԹԻԻՆ (իր մէջ). այս ինչ ճարտար մարդ է, սրան չի կարելի յաղթել: Է՛հ, շատ հոգս չէ, ինչ ուզում է՝ լինի, ձու հօ չեմ, որ կոտորեմ, աշուղ չեմ, որ անունս կոտորուի: (Ձայնը բարձրացնելով) Գիտե՞ս ինչ կայ, վարպետ, դու ուղիղ ես ասում, ես աշուղ չեմ, ուզում եմ աշուղ դառնալ, բայց նուագարան չունիմ: Քո նուագարանը ինձ շատ է դիւր գալիս: Ա՛րի մրցենք (բաւ մտնենք), ինչ ուզում է՝ թող լինի: Եթէ դու յաղթես, ես իմ հրացանը

¹⁾ Զուարթ կաց, վարպետ. ²⁾ Շատ դուարի՞ կաց, բարով եկար:

քեզ կը տամ, որ Ղուիմ բաղչասարայի է, երկու հարիւր
սուրբով է առած: Թող վկայ լինեն այս բոլոր քեթխուդա-
ները: Իսկ եթէ ես յաղթեմ, որ յոյս ունիմ Աստուծով,
նուագարանը, ինչպէս աշուղների օրէնքն է, մեծահոգու-
թեամբ ինձ կը տաս:

ԱՇՈՒՂ. Շատ բարի, շատ բարի... Բայց դու գոնէ ա-
շուղների օրէնքը գիտե՞ս, որ սկզբի ասելու իրաւունքն
իմն է. որովհետեւ դո՛ւ ես եկել ինձ մօտ, դո՛ւ ես ուզում
իմ նուագարանը ձեռքիցս առնել, որ երազով էլ չես
տեսնի...

ՅԱՐՈՒԹԻԻՆ. Գիտեմ, գիտեմ, բոլոր կանոնը գիտեմ:
Պարող էք սկսել:

Նրանք հարցրին իրար անունը. աշուղն ասեց որ իր
անունը Շոհլայի է, Յարութիւնն էլ իր անունը փոխեց,
ասեց՝ «Քերովբէ եմ»... Յարութիւնը իր մահակը նուագա-
րանի տեղ բռնեց և ծունկ չոքեց աշուղի դիմացը: Ամենից
առաջ սկսեցին պարծենալ: Բայց որովհետեւ սկզբի ասելու
իրաւունքը աշուղինն էր, նա առաջ սկսեց: Յարութիւնը
պարտական էր նրա երգի յանգին (ղափիա) ետեւել:

ՇՈՂԱՅԻ (սկսում է երգով պարծենալ).

Ընդունիր ողջոյնս, աշխոյժ պատանի,
Համարձակ, քաջի պէս դուրս արի մէյդան,
Թող չելլէ ասպարէզ, ո՛վ շնորհք չունի,
Աշուղ անուն տալը նրան չէ արժան:

ՔԵՐՈՎԲԷ.— Ընդունում եմ ողջոյնդ, պատուելի վարպետ,
Ես ունիմ խօսքերիդ մէկ մէկ պատասխան.
Չեմ մնայ քո դիմաց յետադէմ, անպէտ,
Համարձակ կանգնող եմ քո դէմ յանդիման:

ՇՈՂԱՅԻ.— Կանչել եմ անունը Մըշու Սուլթանի,
Որ մարդին ¹⁾ նամարդի նա մոհտաջ չանի.
Երեւի քաջ լինել դու չես արժանի,
Քեզանից պէտք է խրլել քո զէնք հրացան:

ՔԵՐՈՎԲԷ.— Ես այդ չեմ ընդունում, դու սո՛ւտ ես խօսում,
Ի գուր ես ինձանից շուտով բամբասում.
Ոսկեռանգ լարերը սազիդ չե՞ն ասում,

Որ յետ երկրոպէի ինձ է սեպհակաւն,
 ՇՈՂԼԱՅԻ.— Իմ ոսկեթիւ սագին շատերն են հաւանել,
 Շատերը, քեզ պէս մէյդան են ելել,
 Բայց նրանք են իրանց սագից զրկուել.
 Եւ սարսափած փախել մինչի չընդոտան:
 ՔԵՐՈՎԻԷ.— Վայ, վարպետ, վարպետ, պա չէս ամաչել.
 Որ այդպէս խոր ու մութ երգեր ես կանչել...
 Այդ ոչինչ, թէն դու սովոր չես փախչել,
 Այժմ նրանց յետքից կերթաս խորասան:
 ՇՈՂԼԱՅԻ.— Դու որ կաս՝ փեսուր ես, ես որ կամ՝ քար եմ,
 Կարծում ես թէ ես էլ քեզ պէս անճամբ եմ.
 Սպասիր, քո առջև մի թակարդ լարեմ,
 Որ դու ընկնես մէջը ճընճողուկի նըման:
 ՔԵՐՈՎԻԷ.— Ես այնպէս տըղայ չեմ, որ թակարդ ընկնեմ,
 Ինձ ի՞նչ պէտք է ասես, որ ես չըզըտնեմ.
 Բայց քո վերադ այնպէս մի քար կը դնեմ,
 Որ հէնց մընաս տակը այժմ և յաւիտեան:
 — Դրան վերջ չկայ, ձայն տուին քեթխուղաները. դու
 կասես, նա կասի... Շուտ արէք, թէ բան էք ասե-
 լու, ասեցէք, տեսնենք որդդ էք յաղթուում, որդդ չէ:
 ՇՈՂԼԱՅԻ.— Ի՞նչ շատ էք շտապում, թող լինի այդպէս,
 Սրա պէս պարծեցողին չեմ անի անտես.
 Աշուղ Շոհրային եմ, գիտուն, սըրտոտես,
 Ձեմ ուզում լինել ցածհոգի, անբան:
 ՔԵՐՈՎԻԷ.— Քո բոլոր գիտութիւնն ինձ վաղուց է յայտ,
 Մի նայիր որ սաղի տեղ ձեռքումս է փայտ.
 Անբաղդ Քերովբէն եմ, աշուղ եմ անյայտ,
 Ո՛հ, թէ այսպէս մընամ մինչև օրն իմ մահուան:
 Սրան հետևում է հանելուկ թեժլիւր, այսինքն
 հարց ու պատասխանը:
 ՇՈՂԼԱՅԻ.— Լըսիր, թէ գիտուն ես, ո՞վ քաջ ձևացող,
 Այն ո՞վ էր, որ ջուր հանեց ոսկրից,
 Այն ի՞նչ պողաւոր էր, երեսին կար քօղ,

¹⁾ «Մարդիկն» բառի մէջ, որ նշանակում է «աղնիւ», դն ք
 չպէտք է հնչել:

Ո՞վ է ծնունել երկու անգամ մօրից,
 Քերձկնի.— Քո ասածներին կամ պատրաստ լրսող,
 Մամխտոնն էր՝ ջուր հանեց ոսկրից,
 Պողաւոր Մովսէսն էր՝ երեսին կար քօղ,
 Յովնանը ծընաւ երկու անգամ մօրից,
 ՇՈՂԱՅԻ.— Ինչ ծառ է, որ անհող, անջուր է ըսնում,
 Առանց տերեւների ճիւղեր արձակում,
 Ի՞նչ բան է սուր՝ քան թուր սըրտի մէջ ցցւում,
 Այն ի՞նչ արարած է, որ ծընաւ հօրից,
 Քերձկնի.— Բախրի եղջիւրները անհող, անջուր են ըսնում,
 Առանց տերեւների ճիւղեր արձակում,
 Դառը խօսքն է սըրտում սըրի պէս ցըցւում,
 Քո կարծիքով եւան ծընել է հօրից,
 ՇՈՂԱՅԻ.— Այն ո՞վ էր, որ սայլով երկինք վերացաւ,
 Սողոմոն իմաստունը ի՞նչ բան չիմացաւ,
 Կարմիր ծովը քանի՞ տեղից պատռեցաւ,
 Շոյլային եմ՝ շատ լաւ տեղեակ բոլորից,
 Քերձկնի.— Եղիան էր՝ սայլով երկինք վերացաւ,
 Սողոմոնն ինձպէսի միտքը չիմացաւ,
 Կարմիր ծովը տասներկ տեղից պատռեցաւ,
 Քերոքէն եմ շատ ու շատ գոհ այս օրից,
 Հարցնելու հերթը հասաւ կեղծանուն Քերովքէին,
 ուստի սկսեց, բայց ո՛չ թէ տաճկերէն, այլ հայերէն,
 Քերձկնի.— Ես քո սուր հարցերը մէկ մէկ լուծեցի,
 Զկամիմ հետեւել քո մոլորութեան,
 Հէնց այժմ մի չընչին խօսք մըտածեցի,
 Ո՞վ է հիմքը դրել Հայոց ազգութեան:
 Աշուղը մնաց լուռ ու գունաթափ. չիմացաւ թէ ինչ
 պատասխանի: Բայց քթթուղաները հարկադրեցին Քերով-
 քէին, որ նա աւարտէր իր երգը, ուստի նա շարունակեց.
 Եթէ դու գովէիր Հայոց Քաջերին,
 Մի համբոյր կըտայի սագիգ լարերին,
 Բայց դու հաւատում ես սուտ սուտ խօսքերին,
 Զգիտես՝ ովքեր են Արամ ու Տիգրան:
 Քեզ Սուրբ Կարապետը շընորհք է տուել՝

Պարզամիտ հային խաբել, սուտ ասել.

Դու հայերէն անգամ չես ուզում երգել.

Ո՞րտեղից կիմանաս՝ ով էր Փայլ Վահան:

— Է՛ վալլա, ասեց աշուղը՝ սազը տալով Յարութիւնին: Յարութիւնը սաստիկ ուրախանալով՝ չիմացաւ ինչ տալի: Յանկարծ միտքն ընկաւ իր սովորական երգը, որ այս էր.

Աշըղ ըմ չալ քչեղակ,

Մհանի կանչեմ քու տեղակ.

Աղջիկ չում, թա հրմանչիւմ,

Տըղայ ըմ, ծիլ ծիլ կը կանչիւմ...

Այս մէկ տունը երգեց ու իսկոյն հեռացաւ, որ սազը ձեռքից յետ չխլեն:

Ղ. Աղայիան

63. Շ Ի Ր Վ Ա Ն Զ Ա Դ Է

Ալէքսանդր Մովսիսեանը (Շիրվանդադէ) ծնունել է Շամախի 1858 թ. ուսել է նախ բողոքական նշանաւոր Սարգիս վարժապետի մօտ, ապա հայոց դպրոցում. այնուհետեւ ուսնաց գաւառական ուսումնարանում (уѣздное училище): 17 տարեկան նա գնում է Բագու, ուր ծառայում է հասանգական ատենում իբրեւ գրագիր, ապա եղել է հաշուապահ զանազան առևտրական տներում, մինչև 1887 թիւը: Բագուից նա արդէն թղթակցութիւններ էր գրում «Մեղու Հայաստանի» և «Մշակ» լրագիրներին:

Շիրվանդադէի առաջին գործը, որ արժանացաւ ուշադրութեան «Հրդեհն» էր, տպուած «Մշակում» 1883 թ. այնուհետեւ Շիրվանդադէն գալիս է Թիֆլիզ 1884-ից սկսում է աշխատակցել «Արձագանքին» ու պարապել միայն գրականութեամբ: Նշանաւոր գործերն. «Հրդեհ»- «Գործակատարի յիշատակներ», «Նամուս», «Օրիորդ Հիգա», «Նորերից մէկը», «Արամբին», «Արսէն Դիմաքսեան», «Յաւագար», «Քաօս» և այլն: Շիրվանդադէի վէպերի նիւթը քաղաքի կեանքն է: Նա էր, որ առաջին անգամ սկսեց խորը մշակել իր ներկայացրած տի-

պերի հոգեբանական կողմը և միջավայրը, որով հիմք դրեց հոգեբանական վեպին մեր մէջ, միանգամայն հեռու մնալով մինչ այն մեզանում սիրուած ու տարածուած ժողովրդական կամ ազգասիրական վեպերից: Նա հետեոյ է Զօլայի և այսպէս անուանած բէալիստ ուղղութեան լաւագոյն ներկայիչն է մեր մէջ: Վերջերս Շ. փորձեց իր տաղանդը և թատրերգութեան մէջ, տալով մեր գրականութեանը Սունդուկեանից յետոյ ամենայաջող պիէսները: Յայտնիներն են. «Եւգինէ», «Ունէր իրաւունք», «Պատուի համար» և այլն:

64. ՀՐԴԵՂԸ ՆՍԻԹԱՀԱՆՔՈՒՄ

Հրդեհն արդէն բաւական ընդարձակուել էր: Այլուում էր ամենաարդիւնաբեր հորերից մինը: Կրակը, բուրդի ստորին մասից սրընթաց դուրս գալով, շտապում էր ընդգրկել ամբողջ աշտարակը: Երկնքի հորիզոնի վրայ ձգուել էր մթին ծխի մի լայն ժապաւէն, որ քամու ընթացքով տարածուում էր հեռու և հեռու:

Մշակները շրջապատել էին վիթխարի խարոյկը և կազմել կենդանի օղակ սարսափած դէմքերի, ապշած աչքերի: Մի խումբ մտել էր ասպարէզ և աշխատում էր դուրս բերել բուրդի տակից մեքենան, միակ բանը, որ կարելի էր կրակից ազատել:

Միքայէլի առաջին միտքն էր, գտնել եղբօր գաւառներին ու կնոջը: Առանց տատանուելու, վազեց դէպի այն պատշգամբը, ուր այնքան ծանր հառաչանքներ էր արձակել կրծքից, նայելով դիմացի լուսամուտներին: Կրակը դեռ չէր հասել բնակարանին, բայց արդէն մօտենում էր: Մշակներն աշխատում էին բուրդի և բնակարանի մէջտեղում գտնուող նաւթային լճակը ապահովել կրակից: Եթէ նա վառուէր, ամբողջ տունը կորած էր:

— Եկէ՛ք ետեիցս, գոչեց Միքայէլը, դառնալով առաջին մշակներին:

Շրջանից բաժանուեցին երեք հոգի՝ Զուպրովը, Ռասուլը

և Գարապետը: Նրանք հէնց նոր էին հասել հրդեհի տեղը և դեռ չգիտէին վտանգը որ կողմումն է: Ամենից առաջ վազեց Չուպրովը, հրելով ընկերներին աջ ու ձախ: Ամբողջ տեսնելով հակային սանդուղքի վրայ, ոգևորուեց: Մի քանի վայրկեան կարմիր շապիկը փափկեց բոսորագոյն լոյսի ներքոյ և չբացաւ:

Ծուխն արդէն շրջապատել էր ամբողջ տունը: Մի քանի բոլակ ևս, և ամեն ինչ կարող էր ուշ լինել: Եթէ կրակ էլ չլինէր, ներսում եղողները պիտի ծխից խեղդուէին: Նախային հրդեհը նման չէ սովորական հրդեհներին: Հանքերում ու գործարաններում կրակը երբեմն տարածւում է հողմի արագութեամբ: Այստեղ այլուում է ամեն ինչ, նոյն իսկ օդն ու երկիրը՝ ամենուրեք տարածուած նաւթի ու գազի շնորհով: Շատ անգամ մարդիկ հազիւ լսում են շուրիչների սուլոցները և արդէն նրանց կեանքը վտանգի մէջ է: Դեռ լաւ է, եթէ կրակն սկսւում է բուրգից կամ շէնքից: Իսկ եթէ կրակն սկսուել է նաւթամբարից, վտանգն անխուսափելի է: Ամբարի ազատ տարածութեան մէջ կուտակուած գազը, ընդհարուելով կրակի հետ, պայթում է հարիւրաւոր թնդանօթների ուժով, և կրակի հեղեղը արուում չորս կողմ:

Չուպրովը պատշգամբի վրայ ուժեղ ձեռներով յետ մղեց Միքայէլին, գոռալով՝

— Այս ձեր տեղը չէ:

Նա վազեց ներս: Նա հասկացել էր, որ այնտեղ մարդիկ կան, որոնց պէտք է ազատել: Թէ ովքեր էին այդ մարդիկ, միևնոյնն էր նրա համար: Արհամարհել ամեն վտանգ և ազատել մարդկանց—այս էր հասարակ մոտեիկի պարզ սկզբունքը:

Լճակը բռնկուեց բուրգից թափուող խոշոր կայծերից: Կրակը մի քանի բոլակում կլանեց կիզանուտ հեղուկը: Սև ծխի թանձր ամպերը պատեցին չորս կողմ:

Չուպրովը լսեց ամբոխի աղաղակը և բնագրումով գուշակեց, որ վտանգն անցնում է բնակարանի ներսը: Նա երեսը խաշակնքեց, չմոռանալով գրակը վերցնել, և

վագեց յաջորդ սենակը: Այս տագնապալի վայրկեանին նա մի ձեռով խեց Ալեօշային, միւսով փետուրի պէս բարձրացրեց Վասիային: Մանուկներն ապշած էին, չբխտէին ինչ է կատարուում:

— Մամա, գոռաց Վասիան, ամուր գրկելով Զուպրովի պարանոցը:

Մի քանի վայրկեան անցած, դռների մէջ երևաց Կարապետը, որ ուսերի վրայ դուրս էր բերում Անտօնինա իվանովնային: Տիկինը արձակում էր յուսահատական ճշեր:

Կարապետի ետևից յայտնուեց Ռասուլը, տիկնոջ աղախինն շալակած:

Միքայէլն իջաւ բակը միայն այն ժամանակ, երբ համոզուեց, որ ներսում ոչ ոք չմնաց:

Այժմ բակում տիրում էր բարեկոնեան խառնակութիւն: Մշակներն աւելի դողդողում էին, քան օգնում: Միմեանց հրում էին, միմեանցից առաջ վագում, վայր ընկնում, վեր կենում թրջուած, ցեխոտուած: Ուրախացան, երբ լսեցին, թէ աղայի ընտանիքը այժմ ապահով է:

Կիզանուտ հեղուկով տոգորուած փայտաշէն բուրգն այժմ ներկայացում էր մի հսկայական ջահ, վառուած ծայրէ ի ծայր: Կրակն արագ լափում էր բուրգի տախտակները, ինչպէս սոված կենդանին լափում է ծառի չոր տերևները: Բիւրաւոր խոշոր կայծերը, փամփուշտների պէս, բարձրանում էին վեր, ծխի ալիքների մէջ կատաղի պտոյտներ գործում և թափում ներքև: Գոյացել էր մի սքանչելի հրեղէն անձրև: Քամին կայծերը հաւաքում էր ու տանում կիտում պատերի տակ, անկիւններում ու երկրի խոռոչներում այնպէս, ինչպէս կիտում է ձիւնը:

Կային միամիտ մշակներ, որ ճգնում էին ջրով հանգսնել բուրգը, մի բան, որ անհնարին էր: Կրակը ծիծաղում էր ջրի բազկաչափ հոսանքի վրայ, որ չբխէր թափով դուրս էր գալիս ուետինի խողովակից, ձեռաշարժ ջրմուղի միջոցով: Այսօրի ահռելի լեզուները, ընդհարուելով հակառակ տարրի հետ, արձակում էին դիւական քրքիջներ:

Ջուրը, մի վայրկեան շոգի դառնալով, աւելի ոյժ էր տալիս կրակին, քան կուռւմ նրա հետ:

Փորձուած բանուորները աշխատում էին նաւթամբարները ապահովել հրեղէն անձրեւից: Այրուող բուրգից ոչ այնքան հեռու կար նաւթով լի մի գետնափոր շտեմարան: Մօտ քառասուն մշակ, մոռսնալով ամեն վտանգ, հաւաքուել էին նրա հողային կտուրի վրայ և թրջուած թաղիքներով ծածկում էին բաց տեղերը, ուսկից դուրս էր գալիս նաւթային դազը: Մի թեթև ընդհարում արովի հետ, և նաւթամբարը պիտի պայթէր, իր հետ օդը ցնդեցնելով մշակներին:

«ՔԱՅՍ» Շիրվանզադէ

Ներկայի բանուորներն էլ այդպէս անձնատուր աշխատում են տէրերի համար: Ինչո՞ւ բանուորները նկարագրուած են երեք ազգից: Շարադրութեան նիւթ. թնչ պարտականութիւն ունի գործառէրը գէպի իր բանուորները:

65. Հ Ո Գ Ե Հ Ա Յ

Տան ընդարձակ բակում խոնուել էր խեղճերի ահագին բազմութիւն: Հանգուցեալի գործակատարներն ու սպասաւորները նրանց կերակուր էին բաժանում: Տիրում էին անասելի աղմուկ և իրարանցում: Կեղտոտ, կիսամերկ մուրացկանները միմեանց հրում էին, խփում, հայհոյում աշխատելով իրարու առաջել և մօտենալ խոհանոցին:

Պղնձէ կաթսաների հնչիւնները, ծառաների գոռում-գոչիւնները, քաղցած խուժանի կառաչիւնը ընդհանուր առմամբ ներկայացնում էին քաօս, ուր տիրում էին կոպտութիւնը, կեղտը, ցնցոտիներն ու հայհոյանքը: Մի կոյր հայ վալստով անխնայ հարուածում էր աջ ու ձախ: Մի պատանի պարսիկ, նրա փէշերից քաշելով, աշխատում էր ինքն առաջ ընկնել: Մի ոռու անդամալոյժ սայթաքեց, ընկաւ մի ասորի կնոջ վրայ և կատաղութիւնից խածեց ոտը: Մի կարմրեբերես լեզգի, որի թևերը մինչև արմուկները կտրած

էին, սրա ու նրա վրայ էր արձակուում, ատամներով խլում մսի կտորները և գրեթէ առանց ծամելու կուլ տալիս: Ծների վեճմակը խառնուել էր մուրացկաններին և մրմռալով կրճատում էր զետնի վրայ թափուած ոսկորները և լակում կերակուրների կեղտոտ հեղուկը:

Բոլոր ուտելիքները բաժանուեցին, խոհանոցի դռները փակուեցին, բայց խուժանը զեռ չէր հեռանում: Նրանց շան պէս փայտերով չէին արտաքսում և այս նշանակում էր, որ մի բան կայ: Ահա սանդուղքի վրայ յայտնուեց Սրաֆիօն Գասպարիչի հանդիսաւոր կերպարանքը: Նա հրամայեց ծառաներին—մէկ մէկ մուրացկաններին թոյլ տան իրան մօտենալու: Ձեռում բռնած էր մի գոյնզգոյն թաշկինակ արծաթի դրամներով լի: Այրի տիկին Ոսկեհասն էր հրամայել սեպհական փողերից հարիւր ոսկւրլի բաժանել մուրացկաններին հանգուցեալի յիշատակին:

Սրաֆիօն Գասպարիչը թաշկինակը շարժեց, դրամները հնչեցին: Արծաթի ախորժալուր ձայնը, էլէքտրական տօկի պէս անցնելով խուժանի մարմնով, ցնցեց նրան: Քանի մի վայրկեան անշարժ էր և ապշած նայում էր վաղեմի ատիճանաւորի դիւթական թաշկինակին: Բայց ահա շարժուեց, դղրդաց և, խուլ աղաղակ բարձրացնելով, արձակուեց թաշկինակի վրայ, որպէս գիշակեր ազգաւների ջուլիւր: Այս ևս ոչ ծառաները ու գործակատարները և ոչ փողոցից եկած ուտիկանները չկարողացան զսպել մերկանդամ բանակը:

Խուժանը շրջապատեց ծերունուն: Հարիւրաւոր կեղտոտ, առողջ և դօս ձեռներ միաժամանակ ցնցուեցին օլի մէջ, կազմուեց մի շարժուն անտառ: Կային անդամալուծներ, զուրկ երկու ոտներից: Ձեռների վրայ սողալով, սրա ու նրա ոտները բռնահարում էին և երբեմն կծոտում, որ իրանց համար ճանապարհ բանան: Պատանիները արմուկների հարուածներով միմեանց քիթը և ծնօտն էին ջարդում: Կանաչ ճչալով իրարու մագերն էին քաշքշում: Պարսիկները օրհնում էին հանգուցեալի յիշատակը և ալերսում նրա համար երկնային դրախտ: Քրիստոնեաները

անգուսպ հայհոյում էին «անհաւատներին» անխնայ ծեծելով նրանց: Խլացուցիչ ժխտրի մէջ լսուում էին ամենակեղտոտ ածականներ, ամենազազրելի յիշոցներ, որ դարերի ընթացքում կազմուել էին ցեխի կոյտերից, այնպատու մթնոլորտում, ուր ապրում ու շնչում է մերկութիւնը:

Տեսարանը հետաքրքրել էր հիւրերից շատերին: Պատըզամբի վրայ հաւաքուած, նայում էին դէպի ցած եզուարձանում: Դրանք մեծ մասամբ հարուստ երիտասարդներ էին:

Այստեղ էր նաև բանաստեղծ-հրապարակախօս-թրդթակից Արմենակ Մարգալետունին, թուխ—դեղնագոյն գէմքով, մեծ քթով, փոքրիկ միրուքով մի երիտասարդ, հագին երկայն մահուդեայ սև սիւրտուկ, որի անթիւ ծալերը ցոյց էին ապլիս, թէ նոր է անգուկից դուրս բերուել: Տեսարանը թելապրում էր նրան մի յօդուած, որ պիտի կրէր «Հակադրութիւն» վերնագիրը: Նայում էր դէպի ցած—քաղցի ու մերկութեան սոսկալի պատկեր, ուր մարդիկ շներից չէին ջուկում: Նայում էր դէպի վեր—կշտութեան ու անհոգութեան կենդանի մարմնացում: Այնտեղ մերկ մարմիններ, կեղտոտ ու զգգոուած մազերով ողորմելի գլուխների քստըմնելի ճահիճ: Այստեղ վերջին տաբաղի հագուստներ, ոսկէ շղթաներ՝ թանկագին «բրեժներով» ազամանդեայ մատանիներ ու փողկապի քորոցներ: Կարելի էր խրդալ ստորինին, գրչով համակրել նրան, բայց գրաւիչը վերինն էր: Ահա ինչո՞ւ Մարգալետունին աշխատում էր իր վրայ դարձնել հարուստ երիտասարդների ուշադրութիւնը, պտոյտ-պտոյտ անելով նրանց շուրջը:

Մօտեցաւ Սմբատին, հանգուցեալի սրդուն, որ դուռում էր իր սեղանի փշրանքների վրայ կռուող խուժանին, և ասաց. —Էս այսօր եթէ կը նկարագրեմ թաղման հանգէսը և կուղարկեմ լրագրին...

—Լաւ, արտասանեց Սմբատը անտարբեր:

—Մեր պարտքն է ասպարէզ հանել հանգուցեալի օրինակելի բարեգործութիւնը...

— Իմ կարծիքով, կարելի է և չգրել այդ մասին:

— Ոչ, անպատճառ պէտք է գրել, որ ուրիշներին օրինակ լինի...

Սմբատը երեսը շուռ տուեց, հագիւ կարողանալով թաղցնել արհամարանքը դէպի թղթակիցը:

Մօտեցաւ աղատամիտ Տէր-Աշոտը:

— Յտեաութիւն, Սմբատ Մարկիչ, թոյլ տուէք կրկին ու կրկին ասել, որ ձեր հայրը իրան անմահացրեց...

Մօտեցաւ պահպանողական Տէր-Սիմոնը:

— Պարոն Սմբատը իր հանգուցեալ հօր արածը մեզանից լաւ է հոսկանում,— ասաց, հակառակորդին մի կատաղի հայեացք պարզեկուց յետոյ, սիրայիւր նայելով հարուստ ժառանգին:

Սմբատը քաղաքավարի, բայց սառն սեղմեց մէկի ու միւսի ձեւը և, երեսը դարձնելով, հեռացաւ:

«ԲԱՍԱՆ». Շիրվանշահէ

Ի՞նչ տիպեր են նկարագրուած այստեղ, իրական և բնական են նրանք թէ՛ երևակայական. — Ի՞նչն է պատճառը այդ աստիճան հարստութեան և աղքատութեան: Հնար կայ առաջն առնելու այդպիսի ծայրահեղութիւններ:

66. ՄՈՒՐԱՅԱՆ — ԳՐԻԳՈՐ ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Ծնուել է Շուշի 1854 թ., ուսել և աւարտել է տեղի հոգևոր դպրոցում 1874-ին և եղել է ուսուցիչ: Թիֆլիզ դպրուց յետոյ շարունակ զբաղուել է հաշուապահութեամբ: 1880-ին «Փորձ»-ում լոյս է տեսնում նրա գրած «Բաղդասար միտրոպոլիտի կեանքը», — 1882-ին գրում է «Ռուզան»-ը, որ իսկոյն ներկայացնում են և այնուհետև դառնում է մեր բեմերի սիրած պատմական պիէսներից մինը:

Մուրացանի միւս նշանաւոր գործերն են. «Հայ. բողոքականի ընտանիքը», «Հասարակաց որդեգիրը», «Իմ կաթիլիկ հարսնացուն», «Անպատճառ իշխանուհի», «2' հաս», «Պորհրդաւոր Միսնձնուհի», տպուած մեծ մասամբ «Նոր-Դարում»: 1896-ին «Արձագանքում» լոյս տեսաւ նրա առաջին պատմական վէպը «Գէորգ Մարգպետունին», որ Մուրացանի գլուխ դործոցն է: Այնուհետև նա գրեց, «Անդրէաս Երէց» և

այլն. նորերս մի հատորի մէջ նա հրատարակեց 1) «Նոյեան արուար», 2) «Առաքելը» և 3) «Սորհրդաւոր Միանձնուհին»։—Նոյեան ազուար ներկայացնում է ծնողների միակ դաւակին, որ գնում է ուսանելու, կլանում է ծնողաց խնամքն ու կարողութիւնն առանց նրանց որևէ օգուտ բերելու և կորչում է ինչպէս «Նոյեան արուար»։ «Առաքելը» հարուստի զաւակ, աւարտում է մեծամեծ խոստումներով, գաղափարով ներշնչուած վերագառնում է հայրենիք, գնում է գիւղ, ապա Սեան, տեսնում է ժողովրդի կարիքն և ըզգում, որ ինքը պիտանի կարող է լինել, սակայն կօնֆորտի պակասութիւնը նրան ստիպում է քաղաք վերագառնալու և մոռանալու իր խոստումները։

Սյս երկուսին հակադրուած է «Սորհրդաւոր Միանձնուհին», մի կոյս, որ գնում է գիւղ, բաց է անում դրարոց, կրթում է մանուկներին, բարեկարգում է եկեղեցին և օգնութիւն է համնում խրատներով ու խորհրդով ամեն նեղեալի... Այն ինչ որ չ'արին պոռոտախօս երիտասարդները, կատարում է մի համեստ հայ-կին։ Մինչդեռ մեր միւս հեղինակները մի զլուխ առաջադիմութիւն և կուլտուրութիւն են քարոզում, Մուրացանը ցոյց է տալիս կուլտուրայի պատճառած փաստակար և քայքայիչ կողմերը։ Մուրացանը բեղմնաւոր հեղինակ է, համարում է պահպանողական, Նրա լեզուն, բառերի ընտրութիւնը, ոճի սահունութիւնը ու կոկոսութիւնը չունի իր նմանը. տարաբաղդաւար ժողովրդին սակաւածանօթ է։ Վերջին տարին ջղային սկարութիւն ստացաւ և մեռաւ հիւանդանոցում 1908 թ. օգոստ. 3-ին։

67. ԵՐԿՈՒ ՃԱՄԲՈՐԴ

Օգոստոսի սիրուն առաւօտներից միին էր, երբ ես ու ընկերս՝ կանխաւ արած մեր որոշման համաձայն, դուրս եկանք քաղաքից ձիով՝ հայրենի գաւառակի գիւղերը պլոտելու և մի քանի աւերակներ անձամբ տեսնելու։

Մենք պատկանում էինք «տուն վերադարձող» այնուրեկների թուին, որոնք ընտանիքի հացը հայթայթելու հա-

մար ստիպուած են լինում տարիներով ապրել մեծ քաղաքում, ծծել միշտ նրա անառողջ օդը, մնուել աւելի փոշիով, քան թէ կերակրով և հետեապէս, կարօտել այնպիսի բարիքների, որ բնութեան մէջ ապրող մարդը վայելում է առատօրէն, առանց սակայն նրանց արժէքը դնահատել կարենալու:

Ի՞նչ բան է, օրինակ, մաքուր օդը, դաշտի կանաչը, հովտի առուակը, անտառի զովը... Մի՞թէ կարելի է կարօտել զրանց, կամ ցանկացած ժամին չվայելել: Լեռնցի գեղջուկը, որ կարիք բառը հասկանում է միայն նիւթաւանի վերաբերմամբ, անշուշտ կը ծիծաղէր, եթէ իմանար թէ մեր զրկանքը կազմում են այդ չնչին, հազիւ երբեմն իր կարիքը լցուցանող բաները:

Բայց ով տարիներից ի վեր ապրել է մեծ քաղաքում, միշտ միևնոյն նեղ փողոցի վրայ, նոյն ապակեանուած մըրժ-նորտի մէջ և գործել շարունակ լուսից ու օդից զուրկ մի գրասենեակում, որի բոլոր հրապոյրը կազմում են եղել չոր հաշուեմատեանները, երկաթէ պահարանը և անմիա համարիչը, իրեր, որոնք առնչութիւն ունեն միայն փողի և հաշուի հետ, բայց որոնց անձանօթ է սիրտը և աւելի ևս զգայուն հոգին, իրեր, որոնք մարդու ուղեղը բթացնում, աշխոյժը մարում և հոգին նուաստացնում են... այդպիսին, հարկաւ, կարօտելով կը կարօտի այն ամենին, ինչ որ անարժէք է բնութեան զաւակի համար. կը կարօտի նրա դաշտին ու մարգին, նրա հովտին ու առուակին, նրա անտառի անոյշ հովերին:

Մենք էլ, ահա, այդ կարօտեալներից էինք: Ընկերս վերադարձել էր Մոսկուայից, իսկ ես Թիֆլիզից: Երկուսս ալժամ միացած՝ զնում էինք բնութեան քաղցրութիւններից մեր կարօտն առնելու:

Պետրոս Մինարեանը (այս էր ուղեկցիս անունը), հայոց հոգևոր դպրոցի սան էր. տակաւին երիտասարդ, միջանասակ, փոքր ինչ թուլակազմ, բայց աշխոյժ ու զրաւչադէմ: Բնաւորութեամբ բաւական անհամբեր և դիւրաբեր էր, երբեմն նոյն իսկ յանդուգն ու անքաղաքավար,

բայց սրտով բարի և անկեղծ։ Ունէր տարօրինակ հայեացքներ, որոնք իր խօսակիցներին մերթ զայրոյթ և յաճախ զուարճութիւն էին պատճառում։ Սիրում էր խառնուել ուրիշների գործին, կամ յաճախ՝ ինքնակոչ դատաւոր հանդիսանալ։ Սիրում էր վիճաբանել, ազատ մտքեր յայտնել, բայց երբեմն աւելի հակառակելու, քան մի ճշմարտութիւն ասելու համար։ Այսուամենայնիւ, այս բոլոր տարօրինակութիւնների հետ միասին, ճանապարհի լաւ ընկեր էր, որովհետև սրտոտ էր, կամարար և սակաւապէտ։

Բաւական ժամեր էին անցել՝ ինչ ելել էինք քաղաքից և թէպէտ առաւօտը զով էր ու հեշտալի, այսուամենայնիւ, քանի արևը բարձրանում էր, այնքան աւելի օդը ջերմանում և նեղացնում էր մեզ։ Միջօրէի մօտ մենք գտնւում էինք արդէն բաց դաշտի վրայ։ Արևի ճառագայթները այրում էին. չկար ոչ հովի շունչ, ոչ ծառերի շքարան։ Այդ պատճառով աշխատում էինք ժամ առաջ հասնել գիւղը, որ գտնւում էր մեր հանդէպ եղող լեռան գեղաղիր լանջի վրայ։

Ձնայելով որ քաղաքից ելածներէս միջօցին ընկերս պատմում էր թէ՛ մի օր հիացմունքով էի մտածում այն ժամի ու վայրկեանի մասին, երբ մայրաքաղաքից հեռացած՝ գտնւում կը լինէր հայրենիքում, նրա ազատ օդի ու դաշտերի մէջ՝ և չնայելով որ այդ ժամին նրա փափայն արդէն կատարուած էր այսուամենայնիւ, նկատում էի, որ երիտասարդի համբերութիւնը ենթարկւում է փորձութեան։ Տօթից, ըստ երևոյթին, նա շատ էր նեղանում, ուստի և յաճախ գանգատւում էր։

Երբ մի ձորակի գետակն անցնելով՝ սկսանք դէպի գիւղը տանող առապարը բարձրանալ, միջօրէի տապը աւելի ևս զգալի դարձաւ, որովհետև արևի ճառագայթներից դատ այրել սկսան մեզ նաև կեծացած ժայռերը, որոնք եղբրում էին առապարը երկու կողմից։

—Ս'ի, մի հասնէինք այն սօսիներին, բացականչեց յանկարծ ընկերս այնպիսի մի կարօտով, որ կարծես գլու-

նրւում էր Սահարայի անապատում և ուր որ է խորշակը շնչասպառ պիտի անէր իրան։

— Համբերութիւն, բարեկամ, սօսիներին էլ կը հասնենք, նկատեցի ես։

— Համբերութիւն... միշտ համբերութիւն, շշնջաց Պետրոսը, դժգոհ իմ խօսքից և ապա գտնալով ինձ, հարցրեց։

— Ի՞նչ ես կարծում, սփբեր են համբերում։

— Ի՞նչպէս թէ սփբեր, համբերատարները, պատառխանեցի ես։

— Իսկ ես չեմ կամենում համբերատար կոչուել։

— Ինչո՞ւ, հարցրի նրան։

— Որովհետեւ համբերում են միայն թողներն ու ակարները։ սյսինքն մարդիկ, որոնք այս կամ այն չարիքը սեփական ուժով իրանցից չհեռացնելով՝ տանում են նրա պատճառած նեղութիւնները ստրկաբար։ Եւ որպէս զի այդ անարգանք չհամարուի իրանց, ասում են թէ՝ «համբերում ենք»։

— Էհ, եթէ չհամբերես ի՞նչ պիտի անես. կարո՞ղ ես արևի հրավառ գունդը հեռացնել քո գլխից, կամ այս շիկացած ժայռերը հովանաւոր ծառերի փոխել։

— Չեմ կարող։

— Ինչո՞ւ ուրեմն ի դուր աղմուկ ես հանում։

— Նրա համար, որ ցոյց տամ թէ՝ անզգայ արարածի մէկը չեմ, թէ իմ մէջ՝ կեանք ու կենդանութիւն կայ, թէ հեշտութիւնն ինձ հաճոյք, իսկ նեղութիւնը՝ դժգոհութիւն է պատճառում։

— Իսկ զրա օգնւտը

— Այն, որ մարդիկ ճանաչելով ինձ՝ զգաստ լինին իմ վերաբերմամբ և զգուշութեամբ վարուեն հետս։ Ինքդ էլ հօ գիտես որ աշխոյժ ու չսանձահարուող ձիուն մօտենում են երկիւղով ու վազաբշանքով և հազիւ ուրեմն կարողանում հեծնել, մինչդեռ համբերատար իշին ականջներից քաշելով՝ բարձում են միշտ որքան կամենում են, առանց նրա կամքն ու ցանկութիւնը հարցնելու։

Եւ ծիծաղեցի։

— Դու այս կարծիքին չե՞ս, հարցրեց ընկերս:

— Ո՛չ, ասացի:

— Ի՞նչո՞ւ:

— Որովհետև համբերել բառը աւելի բարձր նշանակութիւն ունի, քան ինչ որ դու տալիս ես նրան: Էշերի ու ձիաների ընկերութեան մէջ՝ հաւանական է որ համբերութիւնը համարուի անարգ ունակութիւն, բայց մարդկային հասարակութեան մէջ ճանաչուած է այն իբր առաքինութիւն:

— Միջնադարեան վարդապետների կարծիքով, ընդհատեց Պետրոսը:

— Նոյն իսկ դարեւերձի փիլիսոփաների կարծիքով, յարեցի ես:

— Պատճառը:

— Որովհետև համբերութիւնը բարիք է արտադրում, մինչդեռ անհամբերութիւնից միայն չարիք է առաջանում:

— Ի՞նչպէս:

— Աշխարհում համբերում են, առհասարակ, կամբիոյժ, հոգեւոյ արիւթիւն և սրտի կտրով ունեցողները, հետեւապէս, մեծ գործերն էլ ստեղծում են նրանք: Կարգապատմութիւնը և կը տեսնես, որ աշխարհի բոլոր նշանաւոր գիւտերը, բոլոր մեծամեծ գործերը արգիւնք են եղել դժուարատար նեղութեանց ու հերոսական համբերութեանց: Անհամբերութիւնն, ընդհակառակը նշան է թուլութեան և անգօրութեան: Ուստի երբէք չէ տեսնուած, որ անհամբերի մէկը կարողանար մարդկութեան համար ստեղծել մի մեծ բարիք: Այս է ահա պատճառը, որ համբերութիւնը համարւում է առաքինութիւն, և բարոյախօսներից մինը մինչև անգամ, աւելի մեծ փառք է համարում մարդու համար՝ մեծամեծ նեղութեանց համբերելը, քան մեծ գործեր կատարելը:

— Եւ դուցէ այդպէս է, բայց երբ արևն այրում է, հօ կարելի՞ է նրա դէմ տրտնջալ: Չէ՞ որ տրտունջը թեթեւցնում է մարդու նեղութիւնը:

— Ընդհակառակը, պէտք է սովորել՝ երբէք և ոչ մի

բանի դէմ չտրտնջալ, այլ դրա փոխարէն աշխատել՝ նեղութեան պատճառը մէջտեղից հեռացնել: Ծոյլ ու անզօր մարդը ճանճի շիթելու դէմ էլ է տրանջում, փոխանակ զուլթեամբ ձեռքը բարձրացնելու և նրան քշելու:

— Ճանճը կարելի է քշել, արևը ռոտեղ քշենք:

— Այդ դէպքում էլ արևը քշելու փոխարէն քո ձին պէտք է քշես և մի կէս ժամ առաջ հասնես տուն. համբերատար և գործունեայ մարդու համար միշտ փրկութեան ճանապարհ կայ:

Ընկերս լուռ էր: Զգիտեմ համաձայնուեց ինձ հետ, թէ չկամեցաւ անզօր երեւալ իմ աչքում: Երկուստեանս յիշում էր, որ մի նոր առարկութիւն չանելով՝ շարունակեց ճանապարհը առանց այլ ևս տրտնջալու արևի դէմ, որ այրում էր մեզ, արդարեւ, անողորմաբար:

Գիշ ժամանակից յետոյ մենք գիւղը հասանք և ուղղակի դիմեցինք ընկերոջս ազգական զիւղացու տունը: Վերջինի հովանաւոր սրահը և հիւրընկալի քաղցր ընդունելութիւնը շուտով մոռացրին մեզ ճանապարհի շոքից կրած մեր նեղութիւնը:

Մուրացան

68. ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ՄԻԱՆՁՆՈՒՆԻ

Մութը կոխել էր: Լուսնի արծաթափայլ սկաւառակը յուշիկ բարձրանում էր լեռների ետևից և աղօտ լուսով սար ու ձոր լուսաւորում: Շրջակայ գաւաիւյրերը հետզհետէ ծածկւում էին արօտից վերադարձող նախիրներով ու հօտերով: Կովերի բառաչը, մաքիների մայուհւր, տաւաքածի հաճօնները և հովուական սրբնգի մեղմադձիկ երգը, որ հնչում էր մթապատ ձորամիջում, խառնուելով միմեանց, մի հաճելի աններդաշնակութիւն էին կազմում: Որքան մօտենում էինք գիւղին, այնքան աղմուկն ու շրջուկը աւելանում էր: Ն. գիւղը հասնելով մենք իջանք տեղական քահանայի տանը:

Հայոց գիւղերում երկու տուն կայ, ուր ճանապարհորդը վստահութեամբ և առանց հարց ու փորձի կարող է իջևանել: Առաջինը՝ տանուտէրի տունը, որ աւելի պաշտօնական մարդկանց է հիւրընկալում, երկրորդը՝ քահանայի, ուր ամեն բարի հայ սիրով է ընդունւում: Թէպէտ հասարակ գիւղացին էլ իւր հիւրասիրութեամբ յետ չէ մնում այդ երկուսից, այսուամենայնիւ, ճանապարհորդը միշտ չէ վստահանում մօտենալ նրան՝ զգուշանալով աւելորդ նեղութիւն պատճառելուց:

Երբ ներս մտանք քահանայի տան բակը, մեզ իսկոյն դիմաւորեց մի բարձրահասակ և բարեկալի՝ երիտասարդ, որ ուրախ ժպիտով մեզ ողջունելուց յետոյ, մօտեցաւ ինձ օգնելու որ ձիուց իջնեմ: Նա ի հարկէ նեղութիւն չտուի նրան և իսկոյն իջնելով՝ սեղմեցի ձեռը, որ նա կանխաւ ուղղել էր ինձ առանց սպասելու, որ ուղեկիրցս յայտնէ նրան իմ ով լինելը:

Դա, ինչպէս յետոյ իմացայ, քահանայի ամուսնացած որդին էր:

Երիտասարդի հրամանով մի ծառայ սկսաւ մեր ձիերը պտտեցնել մինչև որ նրանց ըրտինքը ցամաքէր և ապա ախոռ տանէր: Իսկ մենք, հիւրընկալի առաջնորդութեամբ մտանք սրահը, ուր երիտասարդի ամուսինը մի ակնթարթում արդէն ընդարձակ թախտի վրայ փռել էր մաքուր գորգ և վրան էլ օթոց:

Քահանան տանը չէր: Իմ հարցին թէ՛ ռւր է նա, երիտասարդը պատասխանեց թէ՛ դեռ եկեղեցուց չէ վերադարձել:

—Միթէ այստեղ այդպէս ուշ են սկսում ժամերգութիւնը, հարցրի ես:

—Միայն շաբաթ երեկոները, որպէս զի հանգից վերադարձողը կտրոգանայ եկեղեցի գնալ:

«Գեղեցիկ կարգ է», մտածեցի ես և հէնց պատրասուում էի հարցնել թէ՛ արդեօք հին սովորութիւն է դա, թէ՛ Տէր-հայրն ինքն է սահմանել, մէկ էլ տեսայ որ վերջինս բակը մտաւ:

Դա բարձրահասակ, առողջակազմ, ալեխառն մօրուքով և քաղցրադէմ մի քահանայ էր, որ առաջին վայրկեանից իսկ լսնորժ տպաւորութիւն առաւ ինձ վրայ, Նրան տեսնելուն պէս ես ոտքի ելայ և յառաջանալով, համաձայն գիւղի սովորութեան, աջը համբուրեցի:

Տէր-հայրը շատ սիրով ընդունեց ինձ և ձեռք բռնած բերաւ իմ տեղը նստացրեց: Շուտով մենք ծանօթացանք միմեանց: Ես իմ սփ, սրտեղացի լինելը և ի՞նչ նպատակով իրենց գիւղը գալս յայտնեցի, իսկ ինքը մանրամասն տեղեկութիւններով, ծանօթացրեց ինձ իւր անձին ու ընտանիքին:

Մենք վայելում էինք տիրուհու պատրաստած բարիքը և շարունակ խօսում:

Տէր-հայրը խիստ հետաքրքրում էր ինձ իր խօսակցութեամբ և յայտնած կարծիքներով: Դրանցից մի քանիսը լսելուց յետոյ, ես եկայ այն եզրակացութեան, որ նա զբաղեցնում էր քահանաների թուին չէ պատկանում: Իբրև գիւղական քահանայ նա միևնույն անգամ աւելի բան գիտէր, քան սպասելի էր: Ինձ շատ զարմացրեց մանաւանդ այն՝ որ նոյն իսկ օրուայ խնդրի մասին, որ այդ ժամանակ կաթողիկոսական ընտրութիւնն էր, նա նորութիւններ գիտէր և յայտնում էր բանաւոր կարծիքներ: Նա ծանօթ էր ոչ միայն Ներսէս պատրիարքի, Խրիմեան Հայրիկի և Մելքիսեդեկ սրբազանի անուններին, այլ և նրանց գործերին, անձնական արժանիքներին և կենսագրութեանը: Նա հարցնում էր ինձանից նաև բացատրութիւններ նկատմամբ լրագրական այնպիսի ակնարկութիւնների, որոնք իւր ուշադրութիւնից չէին վրիպել: Իմ տարակուսանքն ի հարկէ փարատուեց, երբ իմացայ որ Տէր-հայրը ստանում է Թիֆլիզում հրատարակուող հայոց թերթերը: Հասկանալի է, որ լրագիրը շատ բան կը սովորեցնէր նրան: Բայց և այնպէս այդ մէկուսացած լեռների մէջ՝ այսպիսի մի քահանայ տեսնելն ինձ համար մի հաճելի անակնկալ էր:

— Ինչպէս տեսնում էք, մենք բոլորովին կտրուած ենք աշխարհից, ասում էր Տէր-հայրը. օրհնուի լրագիր

հնարողը այս հեռու անկիւնում, ուր տարիներով քաղաքացու երես չենք տեսնում, մեր միակ մխիթարութիւնը լրագիրներն են: Այնքան անձկութեամբ ենք սպասում նորանց, որ եթէ որոշեալ ժամանակից ուշանում են, իսկոյն ձի եմ նստում և նրանց ետևից, կէս օրուայ ճանապարհ, մինչև վանքը գնում: Քաղաքից կօնսիստօրը վանահօր անուամբ է ղրկում թերթերը, իսկ հայր-սուրբը շատ անգամ ուշադիր չի լինում ժամանակին հասցնելու:

Իմ հարցին թէ այդ լրագիրներէց միայն ինքը տէր-հայրն է օգտուում, թէ ժողովրդին էլ մասն է հանում, նստատասխանեց.

— Ինքս էլ շատ տարի չէ, ինչ սկսել եմ լրագիր կարդալ: Օրհնուի մեր կոյսը, նա վաղուց էր թերթ ստանում և յաճախ կարդում ինձ մօտ, աշխատելով սիրելի անել ինձ իւր կարդացածները: Եւ իրաւ մի տարուց յետոյ՝ ես այնքան սիրեցի լրագիրը, որ կարեւոր համարեցի ինքս ստանալ և անձամբ կարդալ, որպէսզի կոյսին միշտ նեղութիւն չպատճառեմ: Փառք Աստուծոյ, ես նիւթապէս ապահով եմ և հեշտութեամբ էլ վճարում եմ լրագրի գինը: Երբ լրագիր կարդալն ու հասկանալը ինձ համար հեշտացաւ, մեր կոյսը խորհուրդ տուաւ ինձ՝ հետաքրքրական և հեշտ հասկանալի կտորները կարդալ և հասկացնել նաև իմ ժողովրդին: Ես հետևեցի նրա խորհրդին և մի կիրակի՝ ճաշից յետոյ, երբ գիւղի գլխաւորները հաւաքուել էին ինձ մօտ, կարդացի նրանց առաջ լրագրի մի քանի կտորներ և բացադրեցի: Այդ նորութիւններն այնքան դուր եկան նրանց, որ այդ օրից սկսած՝ ամեն կիրակի՝ ճաշից յետոյ հաւաքուում է մեր բակը բազմաթիւ ժողովուրդ և սիրով լսում է իմ ընթերցումն ու բացատրութիւնները:

Տէր-հօր հաղորդածները ինձ համար հաճելի նորութիւններ էին: Այդպիսի քահանայի հովուութեան յանձնուած գիւղում, անկարելի էր. որ նաև դպրոց չլինէր: Ուստի ցանկացաւ իմանալ՝ ունի՞ն թէ ոչ:

— Ի՞նչպէս չէ և ի՞նչ հրաշալի դպրոց, բացականչեց Տէր-հայրը հպարտութեամբ. եթէ տեսնէք, կը հաւանէք:

Օրհնուի մեր կոյսը, նա է հիմնողը, ինքն էլ կառավարում է:

Այս քանի՞ երբորդ անգամն էր, որ «կոյսի» անունը լսում էի Տէր-հորից, ուստի հետաքրքրուեցայ իմանալ թէ ո՞վ է այդ կոյսը, արդեօք վարժուհի է, թէ որ և է անապատի հաւատաւոր կին:

— Այդ կոյսը քոյր-Աննան է, մի՞թէ չէք ճանաչում, հարցրեց ինձ Տէր-հայրը:

— Ոչ, չեմ ճանաչում, պատասխանեցի ես:

— Ամբողջ Սիւնիքը ճանաչում է մեր կոյսին, ամենքին յայտնի է նրա անունը, այդ ի՞նչպէս է, որ դուք չէք ճանաչում:

— Ոյդպէս է, Տէր-հայր, չեմ ճանաչում. անունն անգամ չեմ լսել:

— Ծշմարիտ էք ասում, հարցրեց քահանան զարմանալով:

— Ի հարկէ, ճշմարիտ, ի՞նչպէս կարող եմ ստել, նկատեցի ես:

Տէր հայրը սկսաւ մտածել. յետոյ ինքն իրեն մի քանի բառ շշնջաց և ապա դառնալով շարունակեց.

— Իրաւունք ունիք, որդի, մեր այս կորած անկիւնից ո՞վ է ձեզ համար լուր բերում: Ասենք թէ շատ էլ բերին, ի՞նչ նշանակութիւն ունին ձեզ համար գիւղի նորութիւնները:

Քոյր Աննան և նրա գործերը մեր, գիւղացիներին աչքումն են մեծ բաներ երևում. ապա թէ ոչ, դուք այնքան նշանաւոր մարդիկ ու գործեր ունիք, որ մեր հսկաները թղուկներ կերևան ձեզ:

— Ասենք այդտեղ սխալվում էք. մենք ոչ նշանաւոր մարդիկ ունինք, ոչ նշանաւոր գործեր:

Բայց թողնենք այդ հարցը. կարո՞ղ էք կոյս Աննայի ո՞վ լինելն ինձ յայտնել:

— Ի՞նչպէս չէ, ասացի, որ նա մեր գիւղական դպրոցի հիմնադիրն է և կառավարողը. այժմ աւելացնեմ՝ որ դասատուն էլ ինքն է. նա մի բարի, ազնիւ և առաքելի կին:

է, ուղիղ տասն և ինն տարի է, որ գտնուում է մեր գիւղում: Իմ ձեռնագրութիւնից վեց տարի յետոյ եկաւ այստեղ: Այդ ժամանակ ո՞վ գիտէր թէ ինչ բան է գիւղական կանոնաւոր դպրոցը: Ես էի մի քանի տղաներ զլխիս հաւաքել և լաւ, վատ կարդացնում էի: Բայց երբ կոյս Աննան եկաւ, նա իւր ծախքով և, ի հարկէ, նաև մեր օգնութեամբ շինեց դպրոցական տուն, որ անշուշտ կրտսնէք: Նա հաւաքեց իւր մօտ թէ տղայ և թէ աղջիկ երեխաներ և սկսաւ կարդացնել: Այժմ մեր գեւղում քիչ երիտասարդ կայ, որ հայերէն գրել, կարդալ չիմանայ: Այս բոլէին էլ դպրոցը մօտ հարիւր յիսուն աշակերտ և աշակերտուհի ունի՝ ժողովուած թէ մեր և թէ շրջակայ գիւղերից: Դրանք բոլորն էլ կարդում են ձրիաբար: Եւ դեռ պէտք է գիտենալ թէ՛ կոյսի դպրոցն որքան զրագէտներ է տուել մեր գաւառին այսքան տարուայ ընթացքում: Ճշմարիտն ասած՝ այդ կոյսը մեր բարերարուհին է, մենք բոլորս պաշտում ենք նրան: Իմ ու տանուէրի խօսքից աւելի՝ նրա խօսքն ունի արժէք գիւղացու համար. բոլորը նրան լսում են ինչպէս իրենց իմաստուն մօրը: Եւ ի պատիւ նրա՝ պէտք է ասել՝ որ մօր նման էլ խնամք է տանում գիւղացիներին վրայ. օգնում է կարօտեալին, այցելում է հիւանդին, պաշտպանում է այրիներին, անզօր որբուկներին, ես ո՞ր մէկն ասեմ:

Սկսած այն օրից որ կոյսը մեր գիւղումն է, գրեթէ ոչ մի տան կամ ընտանիքում խռովութիւն ու գժտութիւն չէ պատահել: Հէնց որ լսում է թէ մի տեղ անհամաձայնութիւն, մէ՞ծ կամ կռիւ կայ, իսկոյն դիմում է այնտեղ և խաղաղութեան հրեշտակի պէս ամենին հաշտեցնում, երբեմն խրատելով, երբեմն յանդիմանելով, բայց շատ անգամ էլ քաղցրութեամբ համոզելով: Իսկ ով համարձակուում է քոյր-Աննային ընդդիմանալ կամ նրա խրատներն արհամարհել, նրա հետ այլ ևս ոչ ոք չէ խօսում, մինչև որ վերջինս համոզուելով թողութիւն չէ խնդրում: Մեր գիւղական գործերի մէջ նոյնպէս քոյր-Աննան օգնում է մեզ իւր իմաստուն խորհուրդներով և առհասարակ

այն գործը, որ նրա ցոյց տուած ճանապարհովն ենք սկսել և շարունակել՝ միշտ յաջողութեամբ է պսակուել: Բացի այս, դուք մեզ մօտ կը տեսնէք գեղեցիկ կարգեր ու սովորութիւններ, որոնք միւս գիւղերում չկան. դրանք բոլորը նոյնպէս քոյր-Աննային ենք պարտական: Միով քանիւ, այդ կոյսը մեր բարերարը և խնամակալունին է, որին կը խնդրեմ Աստծուն՝ պարգևել երկար կեանք և առողջութիւն:

Տէր-հօր պատածները վերին աստիճանի գրգռեցին իմ հետաքրքրութիւնը:

— Բայց ո՞վ է վերջապէս այդ կինը, որտեղացի է, որի աղջիկն է. որտեղ է սովորել, հարցրի ես շտապով:

— Նա միանձնուհի է, պատասխանեց քահանան միամարար:

— Բայց որտեղից, որ քաղաքի կուսանոցից:

Տէր-հայրը մնաց կանգնած: Նա չէր կարողանում որոշ պատասխան տալ, ուստի մի փոքր մտածելուց յետոյ՝ ասաց,

— Ճշմարիտը խոստովանած չգիտեմ:

— Բայց միթէ այսքան տարիների ընթացքում երբեք չհետաքրքրուեցիք իմանալ թէ՛ որտեղից է նա լոյս ընկել այս լեռների մէջ:

— Ինչ մեղքս ծածկեմ, չեմ հարցրել. այսքանը միայն գիտեմ, որ նա միանձնուհի է և գալով մեր գիւղը, հաւանել է և վճռել՝ ասլրել այստեղ և օգտաւէտ լինել մեզ:

— Իսկ նա հասակաւոր է, թէ երիտասարդ:

— Նրա տարիքը քառասունից ավելի է.

— Ուրեմն, այդքան միայն գիտէք նրա մասին:

— Այո, միայն այսքան:

Այժմ ես տեսայ, որ Տէր-Յովսէփս ինքնիրեն բուսած մի ծառ չէ, այլ անշուշտ, այդ խորհրդաւոր կնոջ ստեղծագործածն է: Տէր-հօր այն խոստովանութիւնը թէ՛ այսքան տարիների ընթացքում չէ հետաքրքրուել այդ կնոջ ո՞վ լինեն իմանալու, ինձ անկեղծ էր թուում, ուստի նրա վարկը որոշ չափով նուազեցաւ իմ աչքում. որովհետեւ, այդպիսի

մի անտարբերութիւնը յանցանքի չափ ծանր էր թւում իմ աչքում: Բայց յետոյ մտածեցի թէ՛ գուցէ այդ կիներ ինքն է փախուստ տուել քահանայի հետաքրքրութիւնից, առիթ չտալով նրան՝ այդպիսի հարցերի դիմելու: Թէպէտ այն էլ դիտէի, որ հեշտ չէր գիւղում այսքան տարի ապրել և ազատ մնալ գիւղացիների հարցասիրութիւնից: Սակայն բոլոր այս մտածութիւններն ուղեղս լարելուց զատ՝ ուրիշ մի եղբակացութեան չէին բերում: Մնում էր, որ ինքս ծանօթանայի այդ կնոջ և նրա մի և ինչ անձնաւորութիւն լինելը ստուգէի անձամբ:

— Ե՛րբ կարող էք ծանօթացնել ինձ ձեր միանձնուհուն, հարցրի Տէր հօրը:

— Երբ կամենաք, ասաց նա, վաղը կիրակի է, ես պատարագ ունիմ. կը գաք եկեղեցի, ներկայ կը լինիք պատարագին և երբ ժամերգութիւնը կաւարտի, ես ձեզ կը ծանօթացնեմ նրան:

— Շատ լաւ, ասացի ես և որովհետեւ ընթրիքն արդէն պատրաստ էր, ուստի շուտով սեղան նստանք:

Տէր-հայրը բոլոր ջանքը գործ էր դնում ամենալաւ կերպով ինձ հիւրասիրելու: Եւ թէպէտ իւր դինին արժանիքով ստոր էր տանուէր Ակոբի գինուց, այսուամենայնիւ, մենք նրանով էլ մի քանի կենաց բաժակներ դատարկեցինք:

Տէր-հօր հիւրասենեակում ինձ համար քնելու տեղ պատրաստեցին, ուր և անանձնացայ խաղաղութեան հրեշտակին յանձնուելու համար:

Չնայելով որ ամբողջ նախընթաց օրը ճանապարհորդել էի, այսուամենայնիւ, երէկ շատ վաղ զարթեցայ: Գիւղը, կարծես, ինքն է զարթեցնում քեզ: Մարդ այստեղ ամաչում է, եթէ չասենք ափսոսում, առաւօտեան դով ժամերը բնին նուիրելու: Երբ դուրս եկայ բակը, արշալոյսը գեռ նոր էր շառաղունում, բայց Տէր-հայրս արդէն վնում էր եկեղեցի:

— Միթէ՞ այսքան վաղ պիտի սկսէք ժամերգութիւնը, հարցրի ես:

— Ոչ, դեռ սաղմոս պիտի քաղեմ, դուք կարող էք
կէո ժամով ուշ գալ, պատասխանեց նա:

Եւ որովհետեւ եկեղեցում երկար կանգնել չէի կարողանում, ուստի որոշեցի օգուտ քաղել ժամանակից և բարձրանալով գիւղի վերնակողմը՝ նրա ընդհանուր գիրքը և շրջապատը տեսնել, որպէսզի հաւաստիանամ թէ որքան յարմար ամարանոց եմ ընտրել:

Բակի մի անկիւնում Տիրուհին և իւր հարսը կթում էին կովերը, որպէս զինախիբրը արօտ ուղարկեն: Սարգիսը մօտ կանգնած՝ օգնում էր նրանց՝ առաջ բերելով կովերը: Որպէս զի նորից տանից դուրս չգալի, մօտեցայ սրանց և մի բաժակ կաթ խնդրեցի: Հերիքնագն իսկոյն վայր դրեց կովկիթը և վազելով տուն՝ բերաւ մի մեծ բաժակ և իւր ձեռքով կթելով կաթը նրա մէջ, աուաւ ամուսնուն և վերջինս՝ ինձ: Եւ ախորժանօք դատարկեցի անուշահամ ըմպելիքը և խնդրեցի երկրորդը, որը նոյն հոգածութեամբ դարձեալ լցուեցաւ և նոյն ճանապարհով յանձնուեցաւ ինձ: Իմ նախաճաշը վերջացել էր, որի համար շնորհակալութիւն անելով՝ հարցրի Սարգսից գիւղի վերին կողմերն անցնելու ճանապարհը և հեռացայ:

Եւ գնում էի մանուածապատ, նեղ և զառիւյր վտայոցներով, օրօնցից շատերը կազմում էին պարտէզների շրջապատ ցանկերը: Ուրախ էի, որ ոչ մի տեղ շներ չըպատանեցին՝ իրենց ազմուկով ինձ ուղեկցելու համար: Երբ գիւղի վերին ծայրը հասայ՝ արևի առաջին ճառագայթներն ընկան մօտիկ բլրի վրայ, որ ծածկուած էր գեղեցիկ անտառակով: Հասնելով այդ բլրին, սկսայ նրա վերին կողմից դիտել գիւղը և նրա շրջապատը:

Ն. գիւղը, որ զուտ հայաբնակ է, գտնւում էր մի գեղեցիկադիր և արեգընդէմ լեռնալանջի վրայ, որի շարունակութիւնը դէպի լեռը՝ ծածկուած էր ամբողջապէս անտառով: Գիւղի գիրքը մասամբ սարահարթ և մասամբ զառիւյր էր: Տները, որոնց թիւը երկու հարիւրից աւելի պիտի լինէին, շինուած էին խառն ի խուռն և, մեծ մասամբ, ետևի կողմից գետնին հաւասար: Գետնի մակե-

ընդթից բարձր տներ, առանձնապէս, գտնուում էին գիւղի այն մասում, որի դիրքը սարահարթ էր: Գիւղն ըստ ամենայնի, նման էր միւս բոլոր հայաբնակ գիւղերին, միայն այն առաւելութեամբ, որ այստեղ ամեն տուն ունէր իւր մեծ կամ փոքր պարտէզը և սարերից իջնող ջրերն այնքան էին առատ, որ գրեթէ ամեն տուն առու ունէր իւր բակում: Գիւղի վերջին ծայրում, մի կանաչագարդ բարձրավանդակի վրայ, կառուցած էր եկեղեցին, որ հեռուից բաւական կոկիկ և գեղեցիկ էր երևում: Նրա մօտ կար միայարի, բայց ընդարձակ և սիրուն ծառերով շրջապատուած մի ուրիշ շինութիւն, որ անշուշտ ուսումնարանը պիտի լինէր: Գիւղի ընդհանուր պատկերն առաջին անգամ ինձ վրայ տխուր տպաւորութիւն արաւ: Սակայն աւելի գեղեցիկ էին շրջակայ տեսարանները: Գիւղի առաջն ընկած էր ընդարձակ և անտառախիտ խորածոր, որի միջից խոխոշալով անցնում էր մի գետակ: Նրանից այն կողմը ինչպէս և գիւղի ետևից բարձրանում էին վիթխարի լեռներ, փառահեղ գաղաթներով, որոնցից մի քանիսի վրայ դեռ նշմարւում էին հին դարերում ապրող Սիւնեցիների զօրութեան ու մեծագործութեան հետքեր—կիսաւեր բերդերի մնացորդներ: Գիւղի աջ կողմից սկսւում էր մի հովտաձև սարահարթ, որ զնալով լայնանում ու դաշտանում էր և որի վրայ տարածւում էին գիւղացիների արտերը:

Այս բոլորը տեսնելուց յետոյ՝ ես կամաց կամաց իջայ գիւղը, բռնելով այնպիսի ուղղութիւն, որ ինձ պիտի տանէր դէպի եկեղեցին:

Ջարմանալի շարժում էր տիրում այդ ժամանակ գիւղի փողոցներում: Կարծես բնակիչները մի հրաշք տեսնելու կամ հրդեհ հանգցնելու համար էին շտապում: Կին, տղամարդ, ծեր և երիտասարդ աճապարում էին դէպի եկեղեցի. նրանք գնում էին ազօթիւլու:

Այս տեսարանը որքան ուրախացնում, նոյնքան և զարմացնում էր ինձ և այդ զարմանքը կրկնապատկուեց, երբ ուրիշների հետ ես ևս եկեղեցին հասնելով՝ տեսայ այդտեղ հաւաքուած ժողովրդի բազմութիւնը: Ես հայոց

շատ զիւղերում էի եղել, բայց ոչ մի տեղ ժողովրդի մէջ այսքան օրհնութեան թիւն չէի նկատել: Սա ինձ յիշեցնում էր Կովկասի գերմանական մի գաղթական, ուր յաճախ գտնուել և միշտ հիացել էի գերման ժողովրդի եկեղեցասիրութեան վրայ և դիտել՝ որ մեր զիւղերում, ընդհակառակը, ժողովուրդն օր ըստ օրէ սառչում է եկեղեցուց, առանց սակայն մի ուրիշ հոգեշահ գործի մօտենալու:

Գրեթէ զօրով ներս մտայ եկեղեցին և զօրով էլ առաջ անցայ, որովհետև խռնուած բազմութիւնն իւր միջից անցնելու ճանապարհ չէր թողել:

Եկեղեցում, ամենից առաջ, ուշադրութիւնս գրաւողը բազմախումբ գալիւնների երգեցողութիւնն էր, որին ես հրէք չէի սպասում: Աւելի յառաջանալով՝ աւելի ևս զարմացայ, տեսնելով, որ մօտ 10 հոգուց բաղկացած խմբի մէջ, ուղաների հետ միասին կանգնած էին և հասակակից աղջիկներ, որոնց ըտլորին դպրապետութիւն էր անում բարձրահասակ, գլուխը սև շղարշով փաթաթած և մթնագոյն շապիկ հագած մի կոյս, յար և նման մեր կուսանոցի միանձնուհիներին:

Իսկոյն յիշեցի Տէր-Յովսէփի կոյս-Աննան և չերկմտեցի, որ իմ առաջ կանգնած դպրապետուհին նա ինքն է: Բայց նախ քան կուսի անձով հետաքրքրուելս՝ իմ լսելիքը գրաւեց Սրբասացութեան խորհրդաւոր երգը, որ նա հրաշալի ձայնով սկսաւ երգել: Բայց ի՞նչ երգ, ի՞նչ ձայն էր այն: Ոչ մի եկեղեցում նմանը չէի լսած: Մի քանի բոպէ ինձ այնպէս թուաց թէ՝ հնչող ձայնը ոչ թէ մարդկային կրճէից, այլ մի կախարդական սրնգից կամ երգեհոնի միջից է բղխում, այնքան հնչեղ և միևնոյն ժամանակ գոգտրիկ ու ախորժալուր էր նա: Երգչուհու ձայնը, նայելով երգի աստիճաններին, գնալով զօրանում ու զուարթանում էր. եկեղեցու կամարները կարծես ձայնակցում էին նրան դիւթական հնչիւններով: Ես հիացայ, յափշտակուեցայ և գիւղական եկեղեցում գտնուելս մոռացայ, ես ամբողջա-

պէս լսելիք էի դարձել, նոյնն էր և ժողովուրդը. ոչ ձայն, ոչ շշուկ, բոլորն էլ յափշտակուած լսում էին հրաշալի մեղեդին և ջերմեռանդութեամբ աղօթում. Եւ ի՞նչ ասէր, ի՞նչ ասէր հաւատ այդ ծնկաշոր և ձեռնամարմն աղաղատողների մէջ... Հգիտեմ ի՞նչպէս, ես էլ արդէն չօքել էի խոնաւ գետնի վրայ (որն ուրիշ տեղ չէի անում) և գիւղացիների հետ միասին աղօթում էի... Եւ իմ երիտասարդական կեանքի մէջ դա առաջին ջերմեռանդ աղօթքն էր...

Շուտով լսումքն էլ սկսաւ դաշնակցիլ դպրապետահունւ. Երգեցողութիւնը յորդոր, բայց ներդաշնակ կերպարանք առաւ: Այս բոլորը լսում էի հրճուախստն հիացմունքով և զգում, որ այդ գիւղական եկեղեցում կատարեալ քրիստոնեայ եմ դարձել՝ նման այն բարեպաշտ քրիստոնեաներին, որոնք ապրում էին այդ սրբազան կրօնի հալածանքների դարերում, երբ իշխանն ու ստրուկը, տիկինն ու աղախինը, միևնոյն միջին գետնափորում, միասին պաշտում և աղօթում էին քրիստոնէութեան հիմնադրին և միևնոյն սեղանի վրայ՝ հաղորդւում Նրա կենսաբար մարմնին և արեանը:

Քաղաքի եկեղեցիներում, խոստովանում եմ, խորշում էի փոքր ի շատէ գծուծ հագնուած մի մարդու մօտ կանգնելուց, վախենալով շորերս կեղտոտել... բայց այստե՛ղ, ժն, ինչպիսի սիրով ողջունեցի ես մի աղքատ, կուրաքամակ և կոշտ հագուստներով ծերուկ գիւղացու, երբ ոտակաւազի «Ողջոյն տուք միմեանց ի համբոյր սրբութեան»... խօսքերը լսեցի: Ես պատրաստ էի՝ իմ ողջունի հետ միասին՝ նոյն իսկ համբուրել ծերուկին... — Ի՞նչ յեղափոխութիւնն էր այս, որ կատարւում էր իմ մէջ. չըզլիտէի: Ո՛ւր էին այն թերահաւատ մտածմունքները, որոնք ճնշում էին ուղեղս մեր եկեղեցիներում. չկային, անհետացել էին: Արդե՛ք հրաշալի երգչուհու և նրա խմբի ներդաշնակ ու ոգևորող երգեցողութիւնը չէ՞ր իմ մէջ կատարուող այս յեղափոխութեան պատճառը...

Ամենամեծ հաճութեամբ լսեցի պատարագի մնացորդ երգեցողութիւնը, շարունակ հիանալով դպրապետահունւ

դիւթական ձայնի վրայ: Սակայն քանիցս փորձ փորձեցի տեսնել նաև նրա գէմբը, բայց այդ չյաջողեց ինձ, որովհետև նա իւր գէմբը ոչ մի կողմ չէր դարձնում, իսկ իմ կանգնած տեղից առաջ գնալ չէի կարող: Բոլոր ժողովուրդը սպասեց մինչև վերջին «Օրհնեալ եղբրուք»-ը, ես ևս նրանց հետ, առանց մի վայրկեան ձանձրանալու:

Դուրս գալով եկեղեցուց, սկսայ նրա շուրջը պտտել և ապա ուսումնարանի կողմն անցայ՝ բայց աչքս միշտ եկեղեցու դրանը, որպէս զի կուսի ելնելը տեսնէի:

Դեռ զբօսնում էի եկեղեցու բակում, երբ Տէր-հայրն ու կոյս-Աննան եկեղեցուց դուրս գալով՝ ուղղուեցան դէպի ինձ: Ես ևս իմ կողմից առաջացայ գէպի նրանց:

Բայց Աստուծո՞ւ իմ, այս կինը ինձ հանդիպող հանելուկների մեծագոյնն էր: Այս յետ ընկած հայ գիւղում, այս վայրենի լեռներում դիմում էր գէպի ինձ Կոմոյետտիի «Բոյր Թերեզան»: Նոյն գեղեցիկ հասակը, նոյն սիւգաճեմ գնացքը, նոյն ազնուական տիպարը, որ ես թատրոնի բեմի վրայ, կուսանոցի պատերում քոյր Թերեզայի մէջ էի տեսել՝ այդ բոլորը ճշտութեամբ գտնում էի այստեղ՝ ինձ մօտեցող կնոջ մէջ: Կարո՞ղ էի միթէ դարմանքս չափաւորել և ապուշի կերպարանք չառնել:

Իմ բաղդից ժամաւոր կանանցից մինը, հէնց ճանապարհի կիսում, կանգնեցրեց երկուսին և ինչ որ լսան էր հարցնում, կամ հաղորդում նրանց: Ես ժամանակ ունեցայ զգաստանալու և, մինչև անգամ, խօսելու նիւթ ընտրելու:

Երբ իրար մօտեցանք, ողջունեցի Տէր-հօրը և կոյս-Աննային ասելով.

— Այսօր ես այստեղ երկու խիստ ուրախացնող անակնկալների հանդիպեցայ. առաջին՝ ձեր եկեղեցում հրաշալի երգեցողութեանը, որի նմանը, խոստովանում եմ, լսած չէի ոչ մի տեղ և երկրորդ՝ այս գեղեցիկ դպրոցական շէնքին, որի գոյութիւնն այսպիսի մի հեռաւոր գիւղում չէի կարող երևակայել:

— Այդ բոլորը, անհ, մենք այս քրոջն ենք պարտական, նրան պէտք է շնորհակալ լինել:

Այս ասելով Տէր-հայրը ծանօթացրեց ինձ կոյս-Աննային, յայտնելով իմ սփ, սրտեղացի լինելս և ի՞նչ նպատակով իրենց գիւղն այցելելս:

Մուրացան

Շատ են արդեօք մեզանում այսպիսի կանանց տիպերը:— Եթէ աշակերտները ծանօթ են, այս տիպը համեմատել Ռուզանի հետ: Ի՞նչ էր Ռուզանի իղէան և ի՞նչ այս կնոջ:

69. Լէօ (ԱՌԱՔԵԼ ԲԱՐԱԽԱՆԵԱՆ)

1860-ին աշխարհ եկաւ Առաքելը Շուշի քաղաքում. նրա հայրը մի խեղճ դերձակ էր, որ վերջը դառաւ ժամկոչ: Լէօն սովորեց նախ թեմական դպրոցում, ապա անցաւ քաղաքային ուսումնարան, ուր և աւարտեց: Հազիւ աւարտած քաղաքային դպրոցը, կորցնում է իր հօրը ստանալով իբրեւ ժառանգութիւն ամբողջ ընտանիքի պահելու հոգսը: Նա դառնում է զրապիր, ապահովագրատան պաշտօնեայ, այնուհետեւ տպարանի կառավարիչ Բագու քաղաքում: Մինչև որ 1895 թ. նրան հրաւիրում են Թիֆլիզ որպէս «Մշակ»-ի մշտական աշխատակից: Այդ լրագրում էլ դեռ 1884-ին լոյս էր տեսել Լէօ-ի առաջին վէպիկը «Մնապաշտութեան քուրմ»: Այնուհետեւ Լէօ-ի անունը մեր մամուլի մէջ ամենասովորականներից մինն է դառնում, իբրեւ վիպասան, պատմա-կենսագիր և մանաւանդ իբրեւ հրապարակախօս: Նա գրում է զգացմունքով ու կրքով, ուստի ընթերցողների հոծ բազմութիւն ունի, չնայելով նրա միակողմանի և կուսակցական հոգուն: Յայտնի գործերիցն են. «Ուխտաւորի յիշատակարանը», «Պանդուխտ», «Ծայրեր», «Գորածներ», «Մելիքի ազնիւը» և այլն: Իր վէպերի մէջ նա հետևող, երբեմն գրեթէ ընդօրինակող է Րաֆֆուն: Պատմական գործերն են. «Հայկական տապալուծութիւն», «2 հատոր, «Ստեփաննոս Նազարեան» (2. հ.), «Գրիգոր Արծրունի» 3. հ., «Յովսէփ կաթողիկոս», «Ս. Մեսրոպ» և այլն...

70. ԼԷՕԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Թիֆլիսի Խօջիվանքի գերեզմանատանը հանգչում են Լէօի երկու ուսուցիչները, հայ ժողովրդի վերածնութեան առաջին ռահվիրաներից՝ Գրիգոր Արծրունին և մեր ազգային վիպական գրականութեան հիմնադիր — Բաֆֆին։ Հայ ժողովուրդը անուշադրութեան մատնեց նրանց կենդանութեան ժամանակ։

Բայց որպէս երևում է, Լէօն բախտաւոր աստղի տակ է ծնուել։ Հայ ժողովուրդը ապերախտ չը գտնուեց դէպի նա, որ իր երիտասարդ տարիներում զօրավիգ էր հանդիսացել իր անմահ ուսուցիչներին և որ նրանց մահուանից յետոյ էլ չը լքեց այն մեծ գործը, որի համար նրանք այնքան տանջուել, այնքան զրկանքներ և նեղութիւններ էին կրել։ Քսան և հինգ երկար տարիների ընթացքում, երբ մեր գրական ու հասարակական ասպարէզում մարդիկ երևացին և անհետացան։ Լէօն կանգնած մնաց այնտեղ, որպէս գրող և հասարակական գործիչ։ Երկդասեան ուսումնարանի սահմանափակ պաշարով հրապարակ դուրս եկած՝ Լէօն այժմ կանգնած է համալսարանական բարձրութեան վրայ։ Եւ մեծ անարդարութիւն կը լինէր հայ ժողովրդի կողմից, անուշադրութեան մատնել նրան, որ իր մէջ է մարմնացնում հայ ժողովրդի կամքն ու տոկունութիւնը և բուռն աշխատասիրութեան ոգին։

Մեր հասարակական կեանքում Լէօն հրապարակ է գալիս որպէս ժողովրդական գործիչ Արծրունու դարոցում։ Տարիների ընթացքում նա աւելի լայն մտաւոր պաշարի տիրանալով՝ աստիճանաբար բարձրանում է։ Լէօն ներկայումս մեր գրական ասպարէզում կարևոր տեղ է գրաւում։ Նրան կարելի է համարել և՛ հրապարակախօս, և՛ պատմաբան, և՛ վիպասան։

Որպէս հրապարակախօս՝ նրան կարելի է ընդունել Արծրունու աշակերտ։

Որպէս վիպասան՝ նա Բաֆֆու աշակերտն է, իսկա-

կան արտայայտիչը Ռաֆֆու հայեացքների, ձգտումների։
 Լէօն ինքնուրոյն, ստեղծող է իր պատմական գրուածք-
 ներում։ Նա այդտեղ չէ պատկանում ոչ մի դպրոցի։
 Նա այդտեղ հիմնադիր է մի նոր պատմաբանական դըպ-
 րոցի։ Նրա պատմական գրուածքները ոչ զուտ նկարա-
 գրական են—խրոդութիւններ արձանագրող—և ոչ էլ պատ-
 մափիլիսոփայական։ Այդ գրուածքներում Լէօն միմեանց
 հետ խառնել է իր վիպական, հրապարակախօսական և
 քննական-պատմական կարողութիւնները, այնպէս որ կա-
 րելի է ժամերով կարդալ այդ գրուածքները՝ առանց յոգ-
 նութիւն զգալու։ Էլի նա երևան է գալիս որպէս մի գա-
 դափարական, մի տենդենցիօզ գրող։ Զնշեցէք նրա գը-
 րուածքների տակից իր անունը, բայց նրան կը գտնէք
 ամեն տեղ, ամեն էջերում։ Մի հայ մարդ է գրողը, որոշ
 ձգտումով, որոշ նպատակով, ե՛ւ գայրանում է, և՛ քննա-
 դատում, և՛ քարոզում։ Հայեացքների, գաղափարների հետ
 նա փոխում է նաև խօսելու եղանակը և ոճը։

Վերջապէս, Լէօն ազատ է իր պատմական գրուածք-
 ներում։ Նա ապրում է իր ստեղծած միջավայրում, ազատ
 և ինքնիշխան...

«Հայրենիք» շաբաթաթանկով,

71. ԹԱԹԱՆԽՄԱՆ ԵՐԵԿՈՅ

Երեկոյ է, գարնանային թարմ, անուշ երեկոյ։ Մութը
 լիովնել է ամեն տեղ. նիրհում է Սիւնիքի հսկայ բնութիւնը,
 ամեն ինչ հանգիստ է, անվրդով։ Աստղերը հեզ ու մունջ
 ճգնւում են բարձրից Տաթևի վանքի վրայ, ճպճւում են,
 կարծես ծանր ու ցածր արտասուքի կաթիլներ են մի
 մի ցած զլորում այն խեղճերի վրայ, որոնք փռուած են
 վանքի բակում։

Տաթևի դրսի մեծ դռների վրայ կայ մի փոքրիկ եկե-
 ղեցի։ Այդ եկեղեցու առաջ, հրապարակում, թափուած է
 մեծ եկեղեցուց դուրս արած ամբոխը։ Այդտեղ վանքի աղ-

քիւրը ամեն օրուայ պէս մեղմ ու հանգարտ քչքչում է, իսկ պարսպի տակ փափուկ դորդի վիայ նստած է թուրք խանը: Վառուած է մի հատ խարոյկ, որ արդէն մոռացուել է, և նուազ ու բարակ բոցերը թրթռում են, մի երեւուն, զոդդոդ լուսով լուսաւորում են տեսակ-տեսակ դէմքեր և խանի կնճռոտ, մաղձոտ դէմքն ու հինայով ներկած նօսր ու սրածայր միրուքը:

Դեռ նոր էին բեռնած ջորիներ ուղարկել վանքից, իսկ խարոյկի մօտ դեռ կուտուած էր վանքի անօթների, թանկագին զգեստների մի կոյտ:

Պանը բարկացած էր, ուզում էր ինքն իրան ուտի:

Ամեն մէկի զլխագինն էին որոշում: Կամ այսքան ուսկի տուր, կամ թէ գլուխդ: Ամենից առաջ Աւթանդիլ տանուտէրի և մէլիք Միհրանի գլուխներն էին գնահատել, վերջացրել: Մնում էր գինը տալ և կապանքներից ազատուել: Սակարկութիւնը դեռ երկար պիտի տւէր. խանը շատ էր գնահատում, իսկ փրկանք տուողները գետնաքարշ սողում էին, աղաչում էին պակասացնել զլխագինը:

— Հա՛, — յանկարծ գոռաց խանը, — Ասադը, Ասադը... տուէք ինձ իմ ամենալաւ մարդը...

Թիւրքերից միայն մէկն էր սպանուել և դա՛ Ասադն էր: Գին էին անում Ասադի արիւնը. եթէ վճռուած գինը չտային, 12 լաւ սղամարդկանց արիւն պիտի թափուէր, որ խանի սիրտը հովանար:

— Ո՛վ սպանեց նրան, դուէք, տուէք ինձ, ես նրա միսը կտոր-կտոր պիտի վերցնեմ ատամներովս, տուէք, շներ, խոզի ճտեր...

Պանն այնքան բորբոքուած էր, որ տեղից կանգնեց, հրկու քայլ առաջ գնաց և ոտը գետնին խփեց:

— Ողորմութիւն արա, — լալահառաչ ձայն արձակեց թափուած ամբոխը:

— Շնուտ, հա, թէ չէ՛ բոլորիդ, բոլորիդ կը կոտորեմ: Տղերք, — ասաց նա իր մարդկանց, — սուր պատրաստեցէ՛ք: Բազմութեան մէջ մի խուլ, յուսահատ մրմունջ ան-

ցաւ: Մուժ անկիւնից դուրս եկաւ մէկը, չոքէչոք մօտեցաւ, վիզը ծռեց և ասաց լացի ձայնով:

— Ես տեսայ, Հալիձորցի թաթոսն սպանեց:

Ամբոխն օրհնեց այդ մարդուն, Բայց խանը աւելի սաստիկ գոռաց:

— Ո՞րն է, ո՞վ է այդ անպիտան շունը, դուրս բերէք, տուէք տեանեմ...

— Խեղդուած փսփսոցը մտաւ ամբոխի մէջ: Անցնում էին բոպէներ, իւրաքանչիւր կապուած խեղդւում էր, հոգի տալ էր պատրաստուում: Ո՞րտեղից գտնեն թաթոսին: Նա չկայ, և այսքան մարդիկ զլուխ պիտի տան նրա պատճառով: Դառնութեան ժամը մօտենում է և ամբոխը կծկւում է անտանելի մորմոքների մէջ:

Բայց կապուած Մէլիք-Միհրանը առաջ է սողում, խօսում է: Խանը նստում է իր տեղը, կարճատե հանգստութիւնը քաղցրացնում է գետնատարած ամբոխի բոպէները:

— Խան, գլխիդ ու արևիդ մատաղ, — ասաց Մէլիքը. — խղճս մեզ, խեղճ ենք, ողորմելի ենք, բո ծառաներն ենք: Նա այստեղ չէ, կորել է, Աստուած վկայ, սուտ չենք ասում: Եթէ այստեղ լինէր, ինքներս նրան կտոր-կտոր կանէինք: Հրաման արա՛. էգուց կամ միւս օրը, երբ որ լինի, կը բռնենք նրան, ձեռքերը կապած ոտդ կը բերենք:

— Տուն, տեղ ունի՞, — հարցրեց խանը մի քիչ ցախ ձայնով:

Ամբոխի միջից մէկն իսկոյն պատասխանեց սիրտ առած.

— Ունի, կնիկ էլ ունի, մէկ էլ մի երեխայ, տասնուչորս ամսական:

— Էգուց առաւօտ կը բերէք ինձ մօտ. — հրամայեց խանը. — Իւզ թափալարի մօտ, այնտեղ է մնացել իմ մարկանց մեծ մասը, ոտաբորիկ. գլխաբաց կը բերէք... Ես գիտեմ, թէ ինչ կանեմ... եթէ չէք ուզում, որ ձեր գիւղերը քարուքանդ անեմ, կը բերէք... Իսկ հիմա արիւնի գինը տուէք, երկու բուռը...

Վերջին խօսքի վրայ խանի ձայնը յանկարծ կտրուեց. վերևից, պարսպի գլխից, մի ահագին քար թռաւ, ընկաւ

խանի գլխին: Նա ցած գլորուեց:

Թուրքերն իսկոյն վրայ վազեցին, բռնեցին խանին: Բայց նրա գլուխը բոլորովին ջարդուել էր:

Անհնարին սուգ ու շիւան ընկաւ բազմութեան մէջ: Ազադակում էին ամենքը, ողբում էին կրօնները ծեծում:

— Երկինք, Աստուած, պաղատում էր ամբոխը:

Մի սոսկալի ահ դողացնում էր ամենքի ծնօտները. կարկամած լեզուները անհասկանալի ձայներ էին հանում: Խանը սպանուած էր... Բազմութեան սիրտը պատուում էր...

Երկու թուրք փախան դէպի դռները, բայց այդ ժամանակ հինգ մարդ վազէվազ իջան եկեղեցու քարի սանդուղքներով:

— Թաթոսն է, Թաթոսն է. — լեղապատառ գոչեցին մի քանիսը և վազեցին, որ բռնեն նրան:

Մնացածները լալով ասում էին.

— Քո տունը քանդուի, դու մեր տունը քանդեցիր, կրակ թափի գլխիդ, այս լինչ բերիւր մեր գլուխը:

Թաթոսը մի մեծ սուր ձեռին ցատկեց, խաբոյկի մօտ կանգնեց: Նրա ընկերներից մէկը մի սարսափելի ձայն, վայրենի աղաղակ հանեց բերանից. ամենքը դողդողացին այդ ձայնից, և ինքը, այդ մարդը, խելագարի պէս սկսեց արագ պտոյտներ գործել, դէս ու գէն թռչկոտալ, նրա ձեռքում էլ կար մի մեծ սուր, որ անդադար շողշողում էր, երբ նա կրակին էր մօտենում: Դրան իսկոյն ճանաչեցին. ահագին փափախի տակ մտած մի մարդ էր, որ ունէր կարճիկ հասակ, բայց բաւական հաստ էր, դէմքը փոքր, թաւամազ. նրա ոտիւնների առաջ մարդ չէր կառողանում կանգնել:

— Դռները փակած են, — գոռաց Թաթոսը. — ո՛վ որ հայ է, քրիստոնեայ է, թող սրանցից մէկին սպանէ:

Բազմութիւնը քարացել էր: «Թող ինքն անէ, — լսուեց ան այս ու այն կողմից ձայներ, — թող ինքն անէ, մենք արնատէր չենք, մենք նեղացած, չարչարուած ենք»:

Խաբոյկի բոցը բարձրացաւ, Թաթոսի հետ եկած մարդիկ փախտ էին դարսում նրա վրայ: Առաջ գնաց Թաթոսը:

Նա տանում էր մի աւելորդ սուր ևս: Նա մօտեցաւ Աւթանդիլին:

Խոնարհ ու հանդարտ կերպով նայեց նրան, գլուխը ցածացրեց և սուրը մեկնեց նրան, կոթը զրաւ նրա ձեռքում, որ չուանով կապկապած էր: Աւթանդիլն ընդդիմացաւ, Թաթոսն ուզում էր արձակել նրա ձեռքը կապանքից, բայց նա թոյլ չտուեց, կոնով դէն հրեց իրան մեկնած սրի կոթը: Բայց Թաթոսը չէր հեռանում, նա զարմացած նայում էր այդ իշխանին և աշխատում էր նրա տխուր, յուսահատ դէմքի վրայ մի պատասխան կարգաւ, Աւթանդիլը առաջ շարժուեց սողալով, և Թաթոսը պատկառանքով ճանապարհ տուեց նրան: Աւթանդիլը խօսեց. նրա ձայնը տխուր էր, սգաւորի ձայնի պէս էր.

— Մարդիկ, եթէ գժուել էք, այս գժին լսեցէք. բայց իմացէք, թէ էգուց մեր գլուխն ինչ կը գայ: Սրա գլուխը ծախուած է, պրծած: Խանի մարդիկ էգուց կը գան... Էգուց կնիկ ու երեխայ գերի կը վնան Բարկուշատ: Ես արիւնի տէր չեմ. տեղիցս չեմ էլ շարժուիլ, կապանքներս չեմ էլ արձակիլ:

Եւ նա գլուխը կախ արած մի կողմն անցաւ, թուրքերին մի ինչ որ քան ասաց:

— Մնիծուի՛ դա,— գոչեց գերիների խումբը:

Թուրքերը սրեր հանած, կանգնած էին: Նրանց և Թաթոսի հետ եկածները մէջ գեռ միայն հայհոյանքներն էին փոխանակում: Բայց Աւթանդիլի խօսքերից յետոյ նրանք առաջ անցան և սուր շողացնելով վրայ թափուեցան: Թաթոսն իր ընկերների հետ խնայել չգիտէր. սրի հարուածները թափուեցան, թուրքերը յետ ու յետ գնացին: Թաթոսը սուրը բռնած ընկաւ ամբոխի մէջ:

— Գոտորեցէ՛ք դրանց,— գոռում էր նա և ձեռք ընկածին հարուածում էր սրի տափակոցով:

Էլի բարձրացաւ բազմութեան ազեկուոր հեծեծանքը:

— Խեղճ ենք, մեղք ենք, վա՛յ... գոռգոռում էին այս ու այն կողմից, Սարսափահար բազմութիւնը այս ու այն կողմ

էր փախչում, վանքի ընդարձակ բակում մի անհնարին խառնակութիւն էր տիրել:

— Կոտորեցէք, — գոչում էր Թաթոսը սարսափելի ձայնով. նա կրճատցնում էր ատամները, նրա աչքերը արիւնով լցուել էին, տրաքւում էին:

Կարճիկ ու բրդոտ մարդն այդ միջոցին վերջացրել էր իր գործը: Թուրքերը գինաթափ էին եղել և հաւաքուած մի անկիւնում՝ լուռ մունջ իրանց դատաստանին էին սղասում. եւ կարճիկ մարդը մօտեցաւ Թաթոսին, շարժւում էր նրա հետ միասին. նա ոչինչ չէր խօսում, այլ միայն բարձրացրած սուրը շարժում էր մարդկանց վրայ:

— Քարերսիւ, քարերսիւ. — լսւում էր Թաթոսի բոլորովին փոխուած ձայնը:

Ամբոխը անից սարսափած, դողահար ընկաւ քարակոյտի վրայ, որ դիզուած էր այդտեղ: Եւ ամեն մէկը մի մի քար վերցնեցով, վազեց գէպի թուրքերը: Սրանցից մի քանիսը փախել էին պարսափ գլխով, Լսեցին, թէ ինչպէս աղաղակում էին նրանք՝ շուն գեաւուրները կատաղել եւս: Մնացածները դեռ կանգնած էին:

Եւ քարերը կարկտի պէս թափուեցան մնացածներէ վրայ: Իսկ կարճիկ ու հաստ վայրենին խրախուսում էր մարդկանց և իր սրի ծայրով մանր-մանր հարուածներ էր տալիս ընկած թուրքերին: Նա, կասեա, հանաք էր անում:

Պարոյկը մարել էր. միայն կրակն էր քիչ լոյս տալիս իր չորս կողմին: Թաթոսը դէս ու դէն էր վազում. նա կրակ էր կտրել. նրա ոտը մի ինչ-որ բանի դիպաւ և նա հազիւ պահուեց վայր ընկնելուց, նա ցած խոնարհուեց և նայեց: Իր ոտներէ տակ դեռ պառկած էր Աւթանդիլը, չուանը դեռ կապկապած էր նրա ձեռքերն ու ոտքերը: Մի սարսուռ ընկաւ Թաթոսի երակների մէջ, մի տկնթարթում նա խղճաց նրան և կռացաւ, որ նրան բարձրացնէ, Բայց Աւթանդիլը գոռաց.

— Կորիր, աւագակ. մարդկանց տունը քանդել ես, իմն է՛լ ես ուզում քանդել...

—Բոլորին կոտորեցին,—ասաց Թաթոսը դողալով։ Նա առաջին անգամն էր մեծ մարդու հետ խօսում։ Եւ աւելւացրեց.

—Վեր կաց, իշխան, ընկնելուց ինչ օգուտ։

Աւթանդիլը երեսը շուռ տուեց և լռեց. Թաթոսը դողալով հեռացաւ նրանից, բայց էլի յետ դարձաւ։

—Մեռած մարդ, գոչեց նա և իր սուրը բարձրացրեց։ Սուրը սաստիկ թափով իջնել էր ուզում ընկածի ուսի վրայ, բայց Թաթոսի սրտում զարմանալի փոփոխութիւններ էին կատարւում. մի վայրկեանում նա փոշմանեց, դէն տարաւ սուրը, մինչև անգամ մի քայլ հեռացաւ, բայց նորից յետ դարձաւ և խոնարհուելով նրա վրայ, խորին զգուհանքով թքեց նրա երեսին. դողոցը այնպէս էր բըռնել նրան, որ նա չկարողացաւ պահուել, նրա սրի ծայրը ծակեց իշխանի կողը։

Աւթանդիլը բղաւեց։ Նրա շուրջը հաւաքուեցան մարդիկ։ Բայց Թաթոսը ուշադրութիւն չդարձրեց. նա հեռացաւ, որոնում էր միւս իշխանին։ Բայց շտեմաւ նրան և անցաւ վանքի փոքրիկ բակը։

Քիչ ևս անցաւ, ամեն ինչ վերջացաւ։ Յոգնած, մի կարճ ժամանակում մաշուած մարդիկ հաւաքուեցան միասին, դառնութեամբ խօսում, աղաղակում էին։

110

72. ԱՍՏՈՒԱԾՆԵՐԻ ԲՈՂՈՔԸ

Արշալոյսը ոսկեզօծեց Մասիսի ձիւնապատ դադաթները։ Աշխարհն արթնացաւ հայր Արամազդի հետ։

Ազատն Մասիս կեանք առաւ. Արամազդն աչքերը բացաւ, նստեց իւր քարեայ գահի վրայ, աչք ածեց քարեայ քնարանի չորս կողմը։ Յաւերժական ծաղիկները շար ի շար բարձրացին իրանց չքնաղ գլուխներ, և՛ ժպտացին և՛ ողջունեցին. «Բարի՛ լոյս, մեծ Արամազդ»։ Գեղամայ ծովակի ալիքները խնդալով, խոխոջելով, միմեանց հրհրելով ծառացան, գլուխ իջեցրին արի Արամազդին, դո-

չեցին. «Քսենդ անոյշ, աստուածների հայր»։ Բացօթեայ թռչնակները հանեցին իրանց փոքրիկ նախշուն գլուխները թևերի տակից, քնաթաթախ աչքներից մէկը բաց, մէկը փակ, բաց արին փոքրիկ մաքուր կտուցներն ու գեղգեղեցին բիւրաւոր դայլայլիկներ։ «Բարի՛ օր, բարի տեսու-թիւն, հայր, ասացին ամենքը։

Աստուածների հայրը զուարթ գէմքով ողջունեց բո-վանդակ աշխարհը, շոյելով իւր սպիտակափառ երկայն մի-րուքը, աւետեց ուրախ օր։ Փափուկ մամուռը, որ թա-ւիշի պէս բռնել էր դահը, աւելի ևս բարձրացաւ, խտա-ցաւ, փափկացաւ, կաթնորակ աղբիւրը, որ նազով, շնորհ-քով ծորում էր այլի աջ կողմից, նոր նոր անուշիկ ձայ-ներ հանեց։ Նրա մաքուր ակունքից դուրս եկաւ մի յա-ւերժահարս ու յցնելով խեցեղէն փոքրիկ դոյլը արշալոյսի կարմրացրած ջրով, մօտեցաւ Արամազդի սպասին։ Հայոց աշխարհի պաշտպանը լուացուեցաւ, սրբուեցաւ յաւերժա-հարսի մազերով, նստեց։

Մինչ այս, մինչ այն, աղօթարանը բոցավառուեցաւ։ Երկինք և երկիր բռնուեցան ծննդական ցաւերով։ Գեղա-մայ ծիրանի ծովն էլ տանջվում էր երկնքի ու երկրի ցա-ւերով, նոյնպէս երկնում էր։ Սար ու ձոր, հովիտ ու ան-տառ պլշած նայում էին անեղ ծննդականներին։ Բայց եր-կար չէին նրանց ցաւերը։ Գեղամայ ծովի վրայ կարմրիկ եղեգնիկն սկսեց ծխախառն բոց ծխել. բոցի միջից վա-զեց մի խարտեաշ պատանեկիկ։ Նրա մազերը հրեղէն էին։ միբութք բոցավառ, երկու աչքը երկու արեգակ։ Արարած աշխարհ լուսաւորուեց, տաքացաւ։ Վահագն էր դա, հայր Արամազդի սիրելի որդեակը։ Նա գինավառ և խրոխտա-պանծ կտրեց, անցաւ օդի տարածութիւնը, մտաւ հայրե-նական այրը։

Հայր ու որդի փաղաքշանքով զրկախառնուեցան։ Եւ աստուածների օրինակով Մասիսի լանջերում և ստորոտ-ներում որքան եղնիկներ ու տատրակներ կային, բերան քերանի դրին, միմեանց համբուրեցին։

Անմահներին ընտանիքը հետզհետեւ ժողովուեցաւ զեղազարդ այրի մէջ:

Եկաւ Աստղիկ զիցունին: Անմահական շուշանները, անթառամ վարդերը շար ի շար թագ կապած նստած էին հրաշագեղ գլխի վրայ: Հայոց աշխարհի լուսինն էր զիցունին: Նա մի գեղեցիկ եղնիկ էր հեծած և երկու յաւերժահարս բամբիռները ձեռքին երգում էին նրա առաջ աստուածային երգեր: Եկաւ, գուրգուրալով փաթաթուեց Արամազդ հօր և Վահագն ամուսնու վրով:

Ապա եկաւ ոսկեմայր Անահիտը: Թէև նրան ոսկի արծան էին կանգնացրել Աշտիշատում, բայց նա պարզ, անպաճոյճ կերպարանք ունէր. նման էր մի աշխատատէր և ժրագլուխ գեղջկուհու, որ աշխատելիս քրտինք ու վաստակ անտես է անում: Իմաստութիւնը և զգաստութիւնը, որի հեղինակն էր զիցունին, այն ժամանակները շրջում էին զծուծ հագուստների մէջ: Այսպէս և աստուածունին: Բայց նրան որդիական յարգանքով գլուխ էին տալիս Մոսիսի քաջերն և բոլոր անմահների սպասաւորները:

Միմեանց ետևից հասան Նանե զիցունին, Մինը սատուածը Բագայառիճն աւանից: Ամենից յետոյ եկաւ Ամանոր աստուածը, բերելով իւր հետ հայ երկրագործի աշխատութեան պտուղներից պարզ և անմահներին: Այդ տարին երկրագործը, այգեպանը շատ գոհ էին նրանից և նա ուրախ էր: Նոր էին վերջացել Նաւասարդի տօները, որ հայոց աշխարհը յատկացրել էր իւր առատածեռն աստուծուն. ուրախ ուրախ տօնում էր, զոհ և երկրպագութիւն էր անում: Այդպիսի պատիւ ունէր նա, որ երկիրը դառն քրտինքով հերկել էր տալիս և փշի ու մացառի տեղ ոսկի ցորեն էր բուսցնում:

Տրտունջ բարձրացաւ անմահների շրջանում առ հայրն Արամազդ: Տրտունջ Արշակունի Արտաւազդ թագաւորի գէմ: Քաջ և աշխարհաշէն հօր այդ չար գաւակը ընդհանուր գալրոյթ էր պատճառել:

Այսպէս տրտնջաց Վահագն.

—Արտաշէս մեռաւ և դեռ գերեզմանի մէջ հանգիստ չառած, որդին նախանձելով նրան արած պատուին և հաւայնական սուգին, շարախօսեց անմահներէ վրայ, որոնց սիրելի էր թագաւորը. դառնութեան լեզի թափելով տաաց, թէ հայրը բոլոր աշխարհն իւր հետ տարաւ և այժմ ինչի՞ վրայ պիտի թագաւորէ ինքը: Արտաշէսը պատանն ուսին եկաւ ինձ մօտ, դառնապէս անիծում էր որդուն: Յիշեցրեց թէ ինչէր էր արել Արտաւազդը, քանի ինքը կենդանի էր: Ի՞նչ կրէնէր մանուկն Արտաշէս, եթէ Սրմբատ Բագրատունին չըննայէր նրան, վտարանդի լինելով նրա հետ Պարսից երկիրը: Սմբատը պահեց, մեծացրեց նրան, մտցրեց Հայաստան, տարաւ նրան հօր գահի մօտ: Բայց անարժան արքայորդին կամենում էր իրանց բարերարին սպանել, Բաւական չէր այդ, Մուրացան ցեղին վերջին պատուհասը հասցրեց: Արքայապատիւ Արգաւանի ապարանքը կործանեց, պատճառ դառաւ նրա և նրա որդու մահուան: Սակայն Արգաւանը Արտաշէսի սիրելին էր: Արգաւանն էր, որ թողնելով իւր բարձն ու պատիւը երուանդի մօտ, գնաց միացաւ մանուկ Արտաշէսի զօրքին, երբ սա գալիս էր Պարսկաստանից վրէժ լուծելու և իւր գահն առնելու: Բարերար էր Արգաւանը, փառաւոր, բայց Արտաւազդը նախանձեց և ապերախտութիւնից կուրացած՝ կարճեց նրա կեանքը:

Զօրաւոր էր ոսկեմայր Անահիտի տրտունջը:

—Երէկ, ասաց նա թախծալի ձայնով,—ես տեսայ այն սուգն ու վայնասունը, որ ընկել էր Արտաշէս թագաւորի ընտանիքի մէջ: Արտաւազդը քշել էր տալիս նրանց, ուղարկում էր հեռու աշխարհ, որպէս զի Արարատեան երկիրը իրան ֆնայ: Արքայազուն մանուկները լալիս էին անպաշտպան, կանայք ամօթահօր ծածկում էին իրանց դէմքերը խոնուած ամբոխի մէջ. վայրագ զինուորները քշում էին... Նրանց հեռացրին և Արտաւազդ հանդիստ նստեց իւր սովորական մոլութիւնների մէջ: Օրեր է անցկացնում մօլի թագաւորը, երկիրը անտէր է ֆնա-

ցել, մարդկանց դատը չեն լսում, հզորն անգործի ուսերին է նստած: Դեռ պատանի էր Արտաւազդը, երբ սկսեց անպատիւ անել իւր հարազատ մօրը, չարախօսելով նրա մասին: Արդաւան Մուրացանին Արտաշէսի աչքում վատաբանելու և նրա պատիւը խելու համար անպատկառ որդին խօսք բարձրացրեց Սաթենիկ տիկնոջ մասին, իբրեւ թէ Արգաւանին պատվում է իւր ամուսնուց շատ:

Աստղիկ գիցուհին էլ իւր գանգատն արաւ, ասելով որ Արտաւազդը սպանել է իւր քրմապետին, որ իւր հարազատ եղբայրն էր, որպէս զի մենակ մնայ: Խօսեցին և միւս աստուածները, ամենից յետոյ առատաձեռն Ամանորը:

—Անմահների հրամանով Արտաշէսը մտաւ մահուան անկողինը: Ես թագաւորի մօտն էի, երբ նա տանջուած յուսակտուր յիշեց Նաւասարդի տօները: Գլուխը բարձրացրեց, անձկութեամբ աչքերը դէս ու դէն դարձրաւ, թառանջ քաշեց: «Ո՛ր, ասաց, կըտար ինձ ծխանի ծուխը և Նաւասարդի առաւօտը, եղնիկների վագելը և երջերունների վագելը. մենք փող էինք ածում և թմբուկ էինք զարնում»: Արտաւազդ լսում էր այդ խօսքերը, տրտնջում, որ հայրը չի մեռնում, որպէս զի ինքը թագաւորէ: Աստուածների դէմ գանգատվում էր, որ այդքան սիրում են նրան և քառասուն տարի նրա արած թագաւորութիւնը բաւական չեն համարում:

Տիրեց լուռութիւն: Այլի աղբիւրը սկսեց իւր բարակ ու անոյշ կարկաշիւնը. հողմերը դադարեցին, աստուածները լուռ ոպասում էին:

Հայր Արամազդը լսեց այդ բոլորը, լսեց լուռ կերպով: Յօնքերը կիտեց, աչքերից բարկութեան շանթեր հանեց, Գաւազանը խփեց քարին և Մասիսի հիմունքները որոտացին: Ապա ասաց բարկացած:

—Կարճուի՛ր Արտաւազդի թագաւորութիւնը, անխժուր՝ նա և նրա պէս զաւակը: Նա որսի դայ Մասիսի ստորոտները. Մասիսի քաջերը բռնեն ձգեն նրան մի խոր վիհի մէջ: Այդտեղ չըմեռնի նա, լոյս չըտեսնէ: Շղթայակապ տանջուի, միշտ տապալիւի լոյս աշխարհ տեսնելու տեն-

չանքով: Դժոխքից երկու շուն սպասաւորեն նրան, օր ու գիշեր լիզեն, կրծեն շղթաները. նա կարծէ թէ իւր շղթաները ահա կըկտրատուին: Բայց դարբինները մուրճով ձեռն իրանց սալերը, շղթաներն ամրապնդեն: Յաւիտեան ազատութիւն չըտեսնէ Արտաւազդը. իւր ականջներով լսի դարբնոցների ձայնը, գայլանայ, բայց իզո՛ւր...

Աստուածները այս հրամանը հասցրին իրանց բո՛ւրմերին:

Անցան դարեր: Հայր Սրամազդն իւր փառաւոր ընտանիքի հետ հալածուեցաւ Մասիսի այրից՝ Հայաստանից: Ազատն Մասիս ձիւներով և սառնամանիքով շղթայուած, ֆնայ անընակ, մենակ: Միայն ալեւոր արծիւը պտոյտներ էր անում նրա կողերով:

Մոռացուեցան հեթանոսական աստուածները... Բայց Հայ դարբինը, ուշադիր ֆնայով պապենտկան խրատին, չըմոռացաւ իւր դորձը: Ամեն կիրակի օր ձեռքն էր առնում ծանր մուրճը, երկու երեք անգամ ձեծում էր սալը:

Արտաւազդի շղթաները հաստանում են, պնդանում... Մնւթ աշխարհում է հօր անխժած անառակ որդին...

Լ է զ

73. ԿՈՍՏԱՆԴԻՆ ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ

(ՏԻՐԱՆՆԻ-ԴՄԱՀԱՆԻ)

Ծնաւ Շուշի 1857-ին. չորս ամեայ զրկուելով հօրից, մեծացել է հօրեղբոր խնամքով. 1874-ին աւարտելով ընդունւեց թեմական դպրոցը, ուղևորոււմ է նորաբաց Գէորգեան ճեմարանը: Այնտեղ նա ֆնում է մինչև 1878 թ. և մի խումբ բնկերների հետ հեռանում ճեմարանի Ե. դասարանից: Մի տարի Դերբենդում վարժապետելուց յետոյ ուղևորոււմ է Մոսկուա և մտնում Լազարեան ճեմարանի

լից էյն որպէս ազատ ունկնդիր: Սակայն նիւթականի սղու-
թեան պատճառով կրկին դառնում է Դերբենդ և վարժա-
պետում է մինչև 1883 թ, երբ ուղևորում է Ֆրանսիա:
Այնտեղ ուսանում է գիւղատնտեսութիւն մինչև 1885 թ.:

Նա աշխատակցել է և աշխատակցում է մեր բոլոր
սլարբերական թերթերին, մասնաւորապէս «Նոր-Դարիւն»
և «Աղբիւրին» նրանց հրատարակման օրից սկսած:

Իբրև ֆելիետօնիստ, նա իր նմանը չունի մեր մէջ,
Ղարաբաղի բարբառով նա ծաղրում ու պախարակում է իր
հայրենակիցների պակասութիւնները Տմբլաչի-Սաչան կեղծ
անունով:

Աղայեանից յետոյ նա մեր շնորհալի մանկական գրող-
ներից մէկն է: Կենդանի և բանաստեղծական լեզու ունի
նա: Ունի հրատարակած գիւղատնտեսական բազմաթիւ
գրքեր:

74. Ի Մ Պ Ա Ն Ա Ր Ա Մ Ը

Ա.

Եո մի ծեր մարդ եմ, սիրելի մանուկներ, իմ ընթեր-
ցողներ. պտըտել եմ շատ գիւղ ու քաղաքներ, անցկացել
գետեր ու ծովեր, շատ բաներ տեսել ու շատ բան լսել,
երբեմն տրտմել, երբեմն ուրախացել, այժմ ուզում եմ
պանարամիս մէջ փոքրիկ պատկերով տեսածս ցուցանել...

Դէհ, շուտով այստեղ, դուք ժիր մանուկներ,

Մեծ ու պատիկներ, խելօք ու չարեր,

Գարգ-կարգ շարուեցէք, ինչ որ կըլսէք

եւ կամ կըտեսնէք, ձեր մտքում ամուր,

Ամուր պահեցէք...

Սկսում է: Ահա մի պատկեր: Մի մեծ քաղաք է, մեծ-
մեծ տներով, լայն լայն քուչէքով, ուր պտըտում են մարդիկ
ոտով ու կառքով, տաք-տաք մուշտակներ ուսերին ձգած,
սիգար, պապիրոս բերանները դրած՝ ֆիռ, ֆիռ, ծծում,
փչում են մուխը թանձրացած:

Թող ծրծեն, փրչեն, փորերն ուռցնեն,
Ի՞նչ ունին պակաս, որ ի՞նչ հոգս անեն...

Ահա մի պատկեր դարձեալ նոյն տեղից. մի խուլ փողոց է, ցեխոտ ու կեղտոտ. խարխուլ տնակներ աջ ու ձախ շինած, երկու դրկիցներ դռան առաջին զրոյց են անում քիթ քիթ տուած: Եւ հեռուն կանգնած մի աղքատ կնիկ, շորերը պատռած, ոտքերը բորիկ, մի հիւանդ մանուկ բռնած իր զրկում, եկող գնացողին ձեռք է դէմ անում...

Այժմ ձեզ ցոյց տամ մի այլ տեսարան.
Դարձեալ նոյն քաղաքում մի լայն փողոց է.
Եղևու ճիւղեր աջ ու ձախ փռած.
Մի մեծ բազմութիւն առաջ է անցնում
Դիակառքի չորս կողմը լըցուած:

Առջևից գնում են բահնանները, ծաղկեայ փիլոններ ուսերին ձգած և նրանց հետ էլ շատ տիրացուներ, մոմ ու խաչվառներ ձեռքներին բռնած. իսկ վերջից, տեսէք, ինչքան կառքեր կան, սևազգեստ կանայք մէջը նստոտած. ան, ինչպէս տխուր, ինչպէս վշտալից, հետևում են սրանք մեռելի ետքից:

Դարձեալ մի պատկեր. քաղաքի ծայրում հինգ վեց մշակներ ուսերի վրայ տանում են անբախտ ընկերի դիակ, որ բանի տարի իր երկրից հեռու, ծանր բեռի տակ մաշել է իր կեանք... չկան յուզարկաւորներ—ոչ քոյր, ոչ եղբայր, չեն տեսնում նաև ոչ հայր և ոչ մայր. լուռ է փողոցը, լուռ են և մարդիկ. տեսնում է այս բոլոր միայն պարզ երկինքը...

Ահա ձեզ մի այլ պատկեր. բարեկենդան է. մի մեծ զարդարուն սենեակ ձեր առաջ. կանթեղ սւ լամպա վառած ձախ ու աջ, մեծ-մեծ հայելիք կախած պատերին, աթոռ, բազկաթոռ ամեն տեղ շարած, իսկ մէջտեղ երկայն սեղանը ձգած, տասնեակ մարդ ու կին ընթրիքի նստած. ինչէր նրանց առաջը, ան, չկան դրած.

Շամպայն ու մադէր, անուշ դինիներ
Պաշած ու խորուած լաւ ձկնեղէններ,

Նաւահար ու պանիր, տապակած հաւեր
Ու քանի տեսակ քաղցրաւենիներ...
Ուտում են, խմում, քահ-քահ ծիծաղում,
Բարեկենդանը լաւ անցկացնում...
Ես էլ մտղթում եմ բարի վայելում:

Ահա նոյն տան կից փոքրիկ խրճիթում, մի թոյլ ու
աղօտ ճրագի լուսում, չոր թախտի վրայ մայրը որդոց հետ
բարեկենդանի ընթրիքն է անում: Ձկայ ոչ սեղան, ոչ
համեղ ընթրիք, չկան դինիներ ու քաղցրաւենիք, այլ մի
հին, մաշուած սփռոց առաջները, հացի կտորաւնք նրա մէջ
դրած ու մի ամանով սկանրի փշրտանք, ուտում են ան-
ձայն, գլուխ քաշ ձգած...

Տխուր է խրճիթը, խոնաւ և անշուք, տխուր են դէմ-
քերը մօրն ու որդոց, միայն չար փխտն նրանց մօտ պը-
պըզած՝ շարժում է պոչը, աչքերը պլըշած...

Այժմ ծերուկիս թողէք որ գնամ,
Եկող անգամը շատ բան ցոյց կըտամ.
Դէ՛հ, ֆեսաք բարեւ, դուք, ժիր մանուկներ,
Մեծ ու սլատիկներ, խելօք ու չարեր:

Բ

Անցան ամիսներ: Բոլորեց տարին, ահա խեղճ ծերուկս
կայ ձեր առաջին. եկէք մանուկներ, իմ աչքի յոյսեր, դառ-
նացած սրտիս դուք միակ յոյսեր. դարձեալ բերի ձեզ հս
իմ պանարամ, մի քանի պատկեր նորից ձեզ ցոյց տամ.

Պատկեր լաւ ու վատ երբոր կը տեսնէք,

Աղաչում եմ ձեզ, մտքից մի հանէք:

Դէ՛հ, սկսում է:

1

«Ամառը սարումն»:

Տեսէք այս սարը կանաչով պատած, այստեղ ու այն-
տեղ վրաններ թողած, վրանի դիմաց հայ, թուրք գիւղա-
կան մի գործ ձեռին բանի է նստած, որը տաշում է, որը

սրում է, որը կար կարում, տղին օրօրում, որը հաց կամ
կաթ տաքացնում, կարագ ու պանիր, մածուն պատրաս-
տում:

Ահա քիչ հեռի նրանց տաւարը, ոչխարի հօտեր, ձի-
անց բօլուկներ, մինչև փորի տակ խոտերում ծածկուած
կամ գլզլան ջրի փր հաւաքուած, տկզած կանգնել են, չեն
շարժւում տեղից, ինչու-որ կուշտ են ու գոհ վիճակից:

Եւ գիտէք ձի է մոթալ փափախով,
Հաստավիզ մարդը իր դագանակով,
Որ աչքը տնկած սարի լանջերին,
Մի բան է երգում գիւ-գիւ խոտերին:

Դա է նախրապանը—տէրը տաւարի,
Որ սար է գալիս ամենայն տարի:

2

Ահա նոյն նախիր, նոյն հօտն ու ձիեր, բայց ոչ թէ
սամառը սարի խոտերում և ոչ քրչքրչան ջրի փերին, այլ
ցուրտ ձմեռը գիւղի գոմերում:

Հալուել է միսը, ոսկրները ցցուել, տկզած փորերնին
մէջքներին կալել, քաղցած է տաւարը՝ խոտ չկայ տալու,
սառել են դաշտեր՝ զարուհն է հեռու:

Կրծում են սովից մսուրի փայտեր,
Դոփում կճղակով, պլըշում աշեր.
Մայում, բառաչում, վիզերնին ծռում,
Թուլացած ընկնում, քաղցից սատակում:

Իսկ մեր գիւղացին, ոհ, ինչպէս խղճուկ
կանգնած նայում է ու թափում արցունք..
Մեծ է նրա վիշտ, մեծ է նրա ցաւ,
Երբ մի անասուն իր ձեռքից անցաւ:

3.

Ահա ձեզ մի ուրիշ պատկեր.

«Գարնան սկզբում գիւղացու յոյսեր»:

Գարուն է, զարոհն, լինչ քաղցրիկ անուն: Արտերը

կանաչել են, ծառերը ծաղկել, ծաղկունքը բացուել, ջրերը փռուել, գեղջուկ մշակը յոյսերով լցուել:

Կըզայ ամառը՝ կըգեղնի ցորեն, հունձը կըհնձէ կը-
ժողովէ ամբար, կըհասնեն պտուղը՝ թափ կըտայ, կըլցնէ
կթոց, կըկախէ շարեր:

Խոտ կայ տաւարին, դարման ձիերին,
Ծաղկունք մեղուին, մեղր մանուկներին.

Ո՛հ, մեր գիւղացին ինչպէս երջանիկ
Կանցնէ այդ տարին...

4

Պատկերը փոխուեց.

Ահա նոյն գեղջուկ ամառ ժամանակ, տխուր
նստած է իրան կտրի տակ, ուր է նրա լոյս, իր արտն
ու այգին, ինչու է ժանգոտ մանգաղ-գերանդին,

Մարախը եկաւ արտերը կերաւ.

Մարախից պըծածը՝ կարկուտը տարաւ.

Թրթուռը խժռեց ծառերի տերև,

Պտուղ չըմնաց՝ ողջ այրեց արև:

Սոված մեղուներ թռան փեթակից,

Իճիճը մնաց զուրկ ծորան մեղրից.

Դաշտը չորացաւ՝ խոտ չըկայ կովին,

Ամբարն է դատարկ՝ մահ է գեղջուկին.

Ո՛հ, ինչպէս թշուառ, ինչպէս յուսահատ

Կանցնէ այդ տարին...

5

Նայեցէք հովտի փոքրիկ քաղաքին, ուր սև-սև ամպե-
րը սարերի նման կանուխել են գլխին: Բնութիւնը խաղաղ
է. խաղաղ է և գետը, որ սարի կողմից իջնում է քաղաք,
ջրում պարտէզներ, պտըտում ջաղացք, վշշալով անցնում,
կորչում ձորերում, ամենայն տարի յոյս և կեանք բերում:

Ահա ամբողջը կանգնած գետափին, ուրախ է հոգով,
 երկնից ամպերին, որ անձրև կըտայ, կըջրէ երկիր, կեանք
 կառնէ մարդը, դաշտ ու այգին...

Իսկ փոքրիկ տղաք տես ինչպէս անհոգ
 խաղում, վազվզում են, «Անձրևը» երգում,
 Որ ցած դայ ջրէ, բսնէ կանաչ խոտ,
 Աւլէ փոշիներ ու մաքրէ վատ օդ:

6

Ահա նոյն քաղաք, նոյն սե-սե ամպեր, որից թըռ-
 չում են կրակէ նետեր, անձրևի փոխանակ կարկուտ է
 թափւում, որոտում երկինք, երկիր դղրդում:

Մարդիկ հաւաքուած իրանց տները, քարացած նայում
 ին այդ անեղ պատժին, որ փշրում է, ջարդում, տուն ու
 տեղ աւրում, այգի ու պարտէզ խլում, հետը տանում:

Լացում է մանուկը մօր վզին փաթթած,
 Բառաչում է տաւարը դրսում մնացած,
 Գոռում գոչում է գետը կատաղի,
 Ահ, սարսափ պատում ամեն սրտերի...
 Եւ ահա յանկարծ մի ձայն է լսւում,
 Մի ձայն գուժաբեր ամենքին հասնում,
 «Հեղեղ, հեղեղ, կանչում են մարդիկ,
 Ա՛խ, մեռանք, կորանք, խնայէ, երկինք»...

7

Հեղեղը եկաւ, հեղեղը գնաց,
 Բայց տեսէք ահա տեղը ինչ մնաց.

Ահա մի ծերուկ խոտած մի դիակ, կիսամեռ ընկել
 էր իր փլած տան տակ. նրանից հեռի գետնին տարածուել
 տասնամեայ մանուկ՝ մօր հատիկ զաւակ:

Ահա քոյր, եղբայր միմեանց զրկած, ընկել են իրանց
 ծնողաց կրծքին, իսկ այնտեղ խեղդուել սկեսուրն ու հարս,
 օրօրոցում կապած մանուկը կողքին...

Սգում է քաղաքը, սգում են ամենքը, որը իր հայրը,
որը իր որդին, քոյրը իր միակ հղբայր թանկագին:

Որբի լացի ձայն երկինք է հառնում, մեծ ու չորբրե
Սիրտ շարժում, մղկրտում...

Ա՛խ, թողէք ծածկեմ այս տխուր պատկեր,

Պատկեր սոսկալի, արիւնով ներկուած,

Որի ժանտ անսիւ դեռ մինչև այսօր

Սարսափ է ազդում դժբախտ բնակչաց:

Կ. Մ. Շահնազարեան

Նման են արդեօք այս պատկերները.—ինչո՞ւ հեղինակը հա-
կադրում է լաւը վատին, հարուստը աղքատին: Ճիշտ ու բնական
են արդեօք այդ պատկերները: Ի՞նչ ենք սովորում այդ հակադ-
րութիւնից: Ծարաղրութեան նիւթ. հարուստի թաղումը (ի նկա-
տի ունենալ Շիրվանդադէի «Հոգեհացը»):

75. ԷՇԸ ԵՒՐՈՊԱՅՈՒՄ ԵՒ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Ա.

Մեզանում իշուկը, բանի որ մէջքին փալան չի դրուեջ
ու կողքերին ճիւղտո չի դիպել, մի շատ ուրախ ու կայ-
տառ կենդանի է. նա մարդից չի քաշուում, ում ասես մօ-
տենում է, հոտոտում, ալանջները խլըշում, լոք-լոք անում,
աջ ու ձախ թռչկոտում, կապկութիւններ անում, մի խօս-
քով՝ նա շատ գրաւիչ է իր խաղերով, բայց ոչ մեծերն են
ուշադրութիւն դարձնում նրան և ոչ էլ փոքրերը. միթէ
արժանի է իշուկը այդ պատուին... Մեր իշուկի տարին դեռ
չլրացած, տեսնում ես խեղճի մէջքին մի ծանր փալան
դրին, փորքաշով պինդ կապկպեցին ու մի քանի փութ
ծանրութիւն բեռնեցին զիւղ կամ քաղաք տանելու: Մեր
իշուկի ուժը չի պատում այդ բեռանը, նա ճըկըռ-ճըկըռ
է անում, մէջքից երկտակում է, ոտքերը զողոզողում են,
ուզում է ճխլուել բեռի տակ, մէկ էլ յանկարծ տիրոջ ճի-
ւղտը զաւակին այնպէս է շրմփում, որ զարմանքից թէ
սարսափից երկու դադ առաջ է թռչում: Էլ կըհամարձա-

կուլ՝ մեր իշուկը տեղը կանգնել կամ ճըկոխի, ճիպոտը ճրմճրմում է ետեից, ինչքան ուզում է թող մէջքը կոտրուի, հվ է նրան հարցնողը...

Գնում է տնքալով մեր իշուկը, քրտինքը ջրի պէս վազում է նրանից, բերանը փրփուր է կապում, աչքերը մթնանում են ու ծուռում է ճանապարհից, ճիպոտն ուղղում է նրա ծուռ քայլը, ուշքը գլուխն է գալիս, տեսնում է որ իր երազած երջանիկ աշխարհը չէ սա, ուր միշտ կարելի է տրտինդներ տալով ապրել, մի բոպէ մտածում է փախչել տիրոջից, սրում է ականջները, խլըռում դէս ու դէն, բայց մի կողմից բեռն է ճնշում, միւս կողմից՝ չնու, թօշ, թօշ՝ լսում է տիրոջ սպառնալի ձայնը...

Շարունակում է լուռ ու մունջ իշուկը իր ճանապարհը. ահա յանկարծ տեսնում է քթի տակին գլխները բարձրացրած փափուկ ու զիլ զիլ խոտեր, բանջարներ, ախորժակը բացւում է, գլուխը ծռում է դէպի բոյսը, բերանը լայն բաց անում ու հէնց որ ուզում է հափ—կծել, տիրոջ դադանակը թրը՛խկ, դիպչում է չոր գլխին, աչքերը կրակ են անում ու դատարկ ծնօտները իրար չըխկչխկում...

Գալիս է մի առու, գըլգըլգըլ, քըչքչում է ջուրը, իշուկը տաքից խաշւում է, լեզուն պապակում է ուզում է վրայ լնկնել մի լաւ խմել, բայց դեռ մտքիցը չի անցել տիրոջ դադանակի զօրութիւնը, դեռ ևս մըմնջում է խփած տեղը, այս անգամ թողնում անցնում է, Գալիս է երկրորդ առուն, երրորդը, մէկը միւսից աւելի պարզ, աւելի վճիտ. ծարաւը աւելի ևս տանջում է. ճար չկայ, որ մեռնի, պիտի խմէ այս անգամ, և ահա վիզը երկարացնում է, գլուխը կախում կամաց ու դեռ խեղճը հաստ շրթունքները ջրի երեսին չդիպցրած՝ շրը՛մփ, էլի դադանակը հասնում է դնչին...

Աչքերը ճպճալով ու ներքեի շրթունքը կախ գցած, տխուր հեռանում է առուից. ահա նրան պատահում են իր ծանօթներից ու ազգականներից շատերը, որը իր նման բեռնուած է, որը անբեռ. նկատում է նրանց մէջ և իր հին ընկեր Զալ-էշին, կուրծքը զանգակներով զարդարուած,

մի բոպէ մոռանում է իշուկը իր վիշտը. հեռուից զոխկ-զոխկ անելով նրան բարեկամ է, քայլերը արագացնում է, որ մի բոպէ շուտ բարեկամի տեսութեանն արժանանայ: Ձալ-էշն էլ պակաս կարօտ չէ նրան, և ահա երկու հին բարեկամները դէմուդէմ են գալիս. քիթ-քիթ դնում, մէկ-մէկու հոտոտելով բարեկամ, և դեռ իրարու ցաւը չընար-ցրած, իրարու կարօտ չառած, փայտը՝ թրանկ՝ դիպչում է երկուսի քիթն ու բաժանում...:

Վերջապէս հասնում է մեր իշուկը տուն բոլորովին թուլացած, բոլորովին յուսահատ, բեռը վեր են առնում մէջքից, մի քիչ դարման կամ չոր խոտ թափում առաջը որ ուտի: Ոգահութիւնով մի երկու բերան հախում է կերակուրից ու յետ կանգնում խռոված երեսի պէս. դարմանը խոնաւ կամ փշոտ է լինում, խոտը ժանգափներով, կոծոծներով լիքը, այնպէս որ ուտելիս տաշում է բերանը: Մի երկու ժամից նրան ջուր են տալիս. նոյն ազահութիւնով խմում, լցնում է դատարկ փորը. այժմ ակոր-ժակը աւելի ևս բացւում է, բայց էլի նոյն կերակուրներն են առաջին, ուզի չուզի՝ պիտի ուտէ...:

Եսպէս նա մի կերպ փորի հոգսը վերջացնում է թէ չէ, այժմ նրան անհանգիստ են անում մի կողմից իշաճանճերը, միւսը կողմից ականջներում հաւաքուած լուսները, փորին ու ոտներին կպած տիգերն ու ցեխի փշուր-տանքը, փայանի հարած տեղերը, մի խօսքով նրա ամբողջ մարմինը բոր է գալիս. ի՞նչ անէ, լեզու չգիտէ, որ իր դրութիւնը մարդկանց հասկացնէ, ձեռներ չունի, որ ինքն իրան քրէ. շատ շատ՝ ատամներով կարողանում է միայն առջևի ոտներն ու գաւակը զրփել և գուգուլ պոչը տատանելով՝ ճանճերին փախցնել, բայց փոքր. մէջքը. նագունում է մի քանի անգամ, բայց չէ, տէրը դաշը չի բերում. ճարահատեալ նա չօքում է թոճի՝ ընկնում կողքի վրայ, ոտները օդի մէջ լարձրացնում, պարան-պարան գալիս ու թաւալ տալիս. վա՛յ նրան, եթէ տէրը այդպիսի դրութեան մէջ տեսաւ, դարձեալ անիծած դազանակը փշրում է գլխին... բայց շատ անգամ էլ պատահում է, որ մեր մօխ-

րաթաւալը տեղից բարձրանալիս, այ քեզ բան, փալանը շուռ է գալիս, ընկնում փոքրի տակը, փորքաշը կտրում մէջքի սէռը. ամբողջ ժամերով նա անշարժ մնում է այսպէս և անիծում իր թաւալ տալու ժամը...

Բոլորում է իշուկի չարչարանքի երեք տարին, այժմ նրա հետ հանաք անել չի լինիլ. նա թողել է իր առաջուան խնդրիկ-խնդրիկ անելը, թռչկոտալը, ուրախ-ուրախ զրոգըռոցը, լաւ քէֆի ժամանակ շանը, կատուին ու չար երեխաներին մի մի աքացի խփելը. այժմ ճիպոտից էլ չի վախենում, ինչքան ուզում ես՝ հասցրու, նրա համար ողջ մէկ է. կեր ու խումի մէջ էլ նազ ու սազ չկայ, ինչ որ տալիս են, ինչքան բեռնում են, ուր տանում են, նա անտրտունջ հպատակում է. մի խօսքով նա կատարեալ էշէ դարձել...

Եւ ահա մենք այդ էշին տեսնում ենք ինչպէս գլուխը քաշ տնքալով, չորս հինգ փութ մէջքին, շատ անգամ տէրն էլ վրան նստած, ոտները գետնին քսքսուելով, գիւղը կամ քաղաքն է մտնում. նրան տեսնում ենք և մեր հրապարակներում, ուր անձրևի, ցելսի կամ ձիւնի մէջ, փայտի փշի, քարի, հողի, ածուխի կամ մրգեղէնի բեռան տակ, սոված, ծարաւ վեց-եօթը ժամ շարունակ մնում է ականջները կախ կանգնած և մեծ թէ փոքր արհամարհանքով նայում են նրան, թօշ-թօշ ասում ու անցնում...

Տարիներ անցնում են և մեր էշը պառաւում է ու առաջուայ ունեցած յարգանքն էլ կորցնում. նրան այժմ օրերով չեն քորում, գարի չեն տալիս, առանց դրան էլ նա կարող է ապրել, մտածում է տէրը. բայց թէ փալանը և թէ ծանր բեռը նրանից չի հեռանում, ի՞նչ ֆլաս թէ ծերացել է: Մի բան որ էշի կեանքում փոխուել է՝ այդ ծեծի եղանակն է. նրա կաշին ծնուած օրից սկսած դադանակի հարուածների տակ այնպէս թմրել, անզգայ է դարձել, որ էլ թալը նրան չի ներգործում. այժմ հնարագէտ տէրը բզած փայտ է բանեցնում, որ զրգըրդալով ծակում է խեղճի կաշին ու աչքերից ջրեր թափեցնում. վայ նրան, որ մի քիչ զանդաղ դնայ ու հազար վայ, երբ պա-

ուսւ էշը ցեխի մէջ մնայ կամ սառուցի վրայ դնալուց սահի ընկնի ու չկարողանայ տեղից շարժուիլ. էլ ոտ, քիթ, բերան, գլուխ, ողջ տեղ չի մնալ, ջարդու-փշուր կըլինի: Նա ամենայն ուրախութիւնով իր շունչը կըփչէր ընկած տեղը, եթէ մարդիկ պոչից, ոտից, գլխից բռնած՝ ծեծելով չբարձրացնէին ու բզբզելով էլի առաջ չքշէին...

Այսպիսի դառն օրերի մէջ անց է կացնում մեղ մօտ էշը իր կեանքը և տասը տասնհինգ տարին դեռ չհասած, մի օր բեռան տակ ընկնում, ոտքերը մի քանի անդամ գետնին խփում ու յաւիտեանս աչքերը փակում:

Խեղճ անասունի սատկելուց յետոյ էլ հանգիստ չի թողնում տէրը. ազցանով հանում է սմբակներից մեխերն ու պայտը, կաշին մաշկում տրեխների համար, իսկ դիակը՝ մի թոկ կապելով, քաշ տալիս դէպի ձորը... այնտեղ միայն ազատւում է նա իր փալանից ու տիրոջ գազանակից...

Բ

Բայց բոլորովին ուրիշ կեանք է կովկասի էշերի այն ազգակիցների կեանքը, որոնք բախտի բերմամբ ընկել են եւրոպայի հողի վրայ:

Նա չեմ խօսիլ մարդուած էշերի մասին, որոնք յայտնի են կրկէաներում իրենց խաղերով, և ոչ էլ այն ուշիւմ կաթ բաժանող էշերի մասին, այլ վեր կառնեմ Փրանսիայի գիւղացու բեռնակիր էշը, որ նոյն չորքոտանի երկայնականջ արարածն է, ինչ որ մեզանում, միայն այն տարբերութիւնով, որ տէրը կովկասցի չէ, այլ եւրոպացի: Նա կըսկսեմ էլի իշուկից:

Իշուկին սիրում են ամենքը. նրան տեսնելիս թէ մարդ, թէ կին, թէ գիւղացի, թէ քաղաքացի, թէ հարուստ և թէ աղքատ փաղաքշում է, «ո՛հ, ի՞նչ ազնիւ է, ի՞նչպէս խելօք է», ասում են փոքրիկները, շփում նրա թաւ ճակատը, ճպոտտ աչքերը, քիթ ու պոռնգը. ով մի քաղցր բան ունի, իշուկին է համեցէք անում. նա էլ խունճիկ-

ձուռնջիկ մօտենում է ամենքին, առնում համեղ սլարգաները, հոտոտում, լիզում նրանց ձեռքն ու երեսն ու փոքրագույն թռչկոտում է նրանց շուրջը:

Քանի մեծանում է իշուկը, տիրոջ խնամքն էլ շատանում է. նրան ամեն օր թիմարում է, տարին մի քանի անգամ լողացնում, անմաս չի թողնում և բազր ճակընդեղից, կաղամբի ու խամբարի (եզիպտացորենի) տերևներից, ուտացնում է և տանը մնացած հացի աւելցուկը, այնպես որ իշուկի աչքը միշտ կուշտ է մնում. նրա գոմը ևս կարգին է, տաք, մաքուր, յատակը խոզանով ծածկած, շուրու փալատը եղանակի համեմատ փոխում է. մի խօսքով՝ իշուկը գոհ է մնում իր վիճակից...

Գալիս է բեռ քաշելու ժամանակը, տէրը գիտէ, որ նա գեռ թոյլ է, ոսկորները չեն ամրապնդուել, նրա ուժի համեմատ մի թեթև սայլակ է կապում ետևից, մի փոքր բան դնում մէջը և ճանապարհ ընկնում ուղած տեղը. իշուկը թռչկոտում է, սայլակի չխշխկոցը նրան գուարճութիւն է պատճառում. տէրը դադանակի փոխանակ նրան գուրգուրում, աշխոյժ է տալիս ամեն քայլափոխում, ճանապարհին պատահած խոտից կտրում, բերանն է կոխում, և նա տոփ տոփ անելով՝ միշտ սրանում է:

Հասնում է տուն իշուկը, նրան արձակում են սայլակից, իսկոյն չփում նրա աչքերը, ականջները, կերակուրը առատ թափում նրա առաջը, եթէ եղանակը ցուրտ է՝ ծածկում մէջքը, փորը, որ չմրսի, ժամանակին ջուր տալիս. փոքրիկները մօտենում են նրան, դարձեալ սկսում է առաջուան փաղաքշանքը երկու կողմից:

Նա մեծ էջ է դառնում, ուժը կրկնապատկուել է. նրան լքում են աւելի մեծ սայլակում, այժմ աւելի մեծ բեռ է քաշում, բայց երբէք չես լսիլ նրա տնքոցը, տիրոջ սպառնալի ձայնը. նա միշտ նոյն աշխոյժ էջն է, ինչ որ առաջ, նրա մէջքը դեռ մտրակի հարուած չի տեսել ու ծեծի մասին գաղափար չունի: Մօտեցիր նրան ուր որ էլ լինի, ապառ թէ բեռն տակ. նա գլուխը կըծոի դէպի քեզ կը-

հոտոտայ, ականջներն ու պոչը ուրախութիւնից կը շարժին ու կը փուրգայ:

Այդպիսի հարիւրաւոր էշեր ամեն օր կը պատահենք եւ ճանապարհներում, շատ անգամ առանց տիրոջ, անագին սայլը քաշելիս, և կամ չորս հինգ կնիկ նստած, սահնձը բերանում գիւղը գնալիս:

Ծերացաւ էշը, պատիւն էլ շատացաւ. նրա բեռը թեթեանում է, աշխատութիւնը քշանում. նա շատ ազատ ժամեր ունի դաշտում արածելու, իր ցանկացած խոտն ուտելու, իր ուզած շուրը խմելու, ոչ ոք նրան չի արգելում, ոչ ոք նրան բէգամաղ չի անում. առաջուան պէս ամենքը սիրում են նրան, ինքն էլ նրանց է սիրում. սէրը՝ սիրոյ փոխարէն...

Մեռնում է եւրոպայի էշը ոչ թէ բեռան տակ, ոսկր ու կաշին մնացած, այլ հանգստութեան մէջ, խոր ծերութեան հասած. նրա վրայ ցաւում էր տէրը, մանրիկները արտասուում են սև էշի վրայ, յարգանքով թաղում գիւղից մօտիկ մի փոսի մէջ:

Սահում են տարիները, փոքրիկ գիւղացին մեծանալով՝ երբ անցնում է այնտեղից, յիշում է հօր սև էշը՝ նրա արած ծառայութիւնը. մի րոպէ կանգնում է տխրադէմ ու հառաչելով անցնում դէպի առաջ...

Ահա այսպէս են վարւում եւրոպացիք, որ յիմար անասուններն էլ խելօք են, իսկ մեզ մօտ մեր խելօքներն էլ յիմարանում են, որովհետեւ մենք չգիտենք նրանց գրաւել, կրթել, խնամել:

Կ. Մ.- Շահնազարեան

Ի՞նչ ենք սովորում այս պատմութեանցից: Ի՞նչպէս պէտք է պահպանել անասուններին: Ի՞նչ ընկերութիւններ կան, որ պաշտպան են կանգնում անասուններին:— Անասունն էլ ցաւ, ուրախութիւն. վիշտ զգում է թէ ոչ: Տարբերութիւնը մարդու և անասունի մէջ: Ի՞նչ զգալարաններ անասունի մէջ աւելի են զարգացած քան մարդու. հոտառութիւն, տեսողութիւն և այլն...

Շարադրութեան ցիւր. թր անասունն է մարդու ամենալուր բարեկամը. յիշել կենդանիների վէճը:

76. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Սա ծնունդ է 1864 թ. ապրիլի 26-ին Վտղարշապատում, սկզբնական ուսումնա առել է տեղական ծխական ուսումնարանում, ապա Վահան վարդապետ Բաստամեանցի մօտ, յետոյ մինչև 1877 թ. Երևանի գիմնազիայում, ուր աւարտելուց յետոյ մտել է Մոսկվայի համալսարանի պատմա-լեզուաբանական բաժինը։ Չորս տարի՝ 1888 թ.-ից ուսուցչութիւն է արել Էջմիածնի Գէորգեան հեմարանում, ապա մինչև 1895 թ. երեք տարի ուսուցչական պաշտօն է վարել Թիֆլիսի Ներսիսեան դպրոցում, այնուհետև կրրկին ստանձնել ուսուցչութիւն Գէորգեան հեմարանում։ Մի տարի տեսչի պաշտօնով եղել է Թիֆլ. Մարիամեան-Յովնանեան օր. դպրոցում։

Յովհաննիսեանն սկսել է գրել 1882 թ.-ից, բայց նրա բանաստեղծութիւնների լիակատար ժողովածուն լոյս տեսաւ միայն 1908 թ. Այդ գրքի մէջ հանդէս է դրուած մեր նորագոյն և լաւագոյն լիրիկը — մի տաղանդ առաջնակարգ արժանիքներով։

Օղակը Ռափայէլ Պատկանեանի և մեր նորագոյն բանաստեղծների մէջ յինչև օրս մեղ անյայտ էր, կամուրջը, որով հայ բանաստեղծական միտքը ազգային հայրենասիրականից պիտի անցնէր լիրիկ անհատական աշխարհը յանձին Աւետիք Իսահակեանի, բաց էր մնում մեզ համար։ Այժմ Յովհաննիսեանի մէջ կողք կողքի տեսնում ենք այդ երկու աշխարհները, հայրենասիրականն ու լիրիկ զգայականը։ Նա չէր կարող զատուել այն խոշոր մոտիվների ազդեցութիւններից, որոնք երևան էին գալիս նրա անմիջական նախորդների՝ Գամառ Քաթիպայի ու Շահազիզի մէջ։ Այդ պատճառով նրա երգերի մի բաւական ստուար մասը ազգային հասարակական բնոյթ ունի։

Նրա տաղանդն իրա ամբողջ փայլով ու բոցով երևան է գալիս այն երգերի մէջ, ուր զեղում են բանաստեղծի զգացումներն առ կոյսը և առ սիրելին։ Նա կրում է ինք-

նուրոյն ներշնչման անկեղծ ազդու շեշտ: Նրա բանաստեղծութիւնները կարդալով տեսնում էք վառ երևակայութիւն, գունազեղ պատկերներ, ինքնատիպ և բարձր գեղարուեստական կնիքով դրոշմուած:

Ժողովրդական երգերի ձևն էլ, որ վեր առաւ Աւ. Իսահակեանը Յով. Կոստանեանից և աջողութեամբ տարածեց ստեղծելով մի խումբ հետևողներ, իրա նախորդն ունի յանձին Յովհաննիսեանի, որի արտայայտութեան ձևը թէ աւելի բնական է և թէ առողջ ու կայտառ:

Մարդ հրապոյր է գգում կարդալով Յովհաննիսեանի երգերը առոյգ և առողջ սիրոյ, որ տեղ տեղ հասնում է Քուչակի բարձունքներին և Քուչակից յետոյ երկրորդ անգամ համոզում է մարգուն, թէ հայ լեզուով էլ կարելի է բանաստեղծել առանց արտասուելու, առանց սրգալու:

Յովհ. Յովհաննիսեանը ունի թարգմանութիւններ էլ. որոնք սակայն թոյլ են և անկարող համեմատուելու Ադ. Ծատուրեանի ընտիր թարգմանութիւնների հետ:

77. ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՍԷՐԸ ԵՒ ԻՂՁԸ

Կուգէի լինել կարկաչիւն վտակ,
Վճիտ ալիքը դրախտի բուրմունքով,
Եւ առաւօտեան, ինչպէս ցօղ յտակ,
Երեսդ ոռոգել գոհար շիթերով:

Կուգէի լինել սօսի հովասուն,
Համարձակ փռուած կանաչ սաղարթով,
Եւ միջօրէին այդ դէմքիդ սիրուն
Հովանի լինել հեզիկ շրշիւնով:

Կուգէի լինել ծաղկոցում բացուած
Քաղցրաբոյր մի վարդ, երկնից արժանի,

Եւ սիրոյ ժամին, խանդիցս արբած,
Զարդարանք լինել կուրծքիդ գեղանի:

Եւ շող դառնալով դարձան արևի՝
Կուզէի պայծառ աչերումդ վառուել,
Կամ ինչպէս քնքոյշ ոսկեվառ գօտի
Զքնաղ իրանիդ փաթաթուել, փարել:

Լուսափայլ աստղիկ կուզէի դառնալ,
Քաղցր մանկան պէս ծիծաղն երեօին,
Ինչպէս աղամանդ շողշողել, ցոլալ,
Ո՛վ իմ թագուհի, բո բաց ճակատին:

Կուզէի լինել լուսին ամօթխած,
Արծաթի փայլով մազերըդ շոյել,
Այտերըդ գգուել, սիրուց բորբոքուած,
Դողդոջ շրթունքիդ համբոյրներ գրոշմել:

Կուզէի լինել սիրահար սոխակ
Եւ ձեռիդ գերի, վանդակում փակուած,
Ականջիդ հնչել հրաշալի նուագ,
Մեղմ օրօր ասել հոգուդ գմայլուած:

Եւ կախարդական տաճարում կանգնած
Կուզէի տեսնել ես քեզ Անահիտ,
Եւ երկրպագել, առաջիդ չոքած,
Սուրբ գեղեցկութեան անմահ տիպարիդ:

Համեմատիր 1) Քուչակի «Կն ձագ ծիծեռնակ պիտէի» 2)
Պէշիկթաշեանի գործերը «Ո՛ւր էր թէ զեփեւսիկ» 3) Աւետիս Խ-
սանակեանի՝ «Կուզես լինիմ վարդի ցօղեր»:

Որպէս յաղթանդամ մի ծերուկ հսկայ,
Կախուած է ժայռը ջրերի վրայ,
Ալիքը կայտառ գնում են, գալիս
Եւ ժայռին սիրոյ համբոյր են տալիս:

Խաղում են անհոգ ալիքը գետի,
Ցույնում են զրկած պատկերն արևի,
Եւ, որպէս ժանուկ ժպիտն երեսին,
Մեղմիկ շշուշով խօսում են ժայռին.

«Ախր, ծերունի, ինչո՞ւ ճակատիդ
Սե կնճիռները չեն տալիս դէմքիդ
Մի օր խնդութեան շողով ցոլանալ —
Ողջը փոխուում է, դու նոյնն ես դարձեալ»:

«Ազատ լեռների ազատ զաւակներ,
Մենք քեզ բերել ենք անթիւ գոհարներ.
Երկնքի դստեր — վարդի լեռնասուն
Կը ցոյցենք կուրծքիդ անուշոտութիւն:

«Մենք հրանաւէտ քնքուշ նուագով
Կը կոչենք խորքից ձկներն երամով
Եւ ոսկէզօծուած դարնան արևից
Քեզ մեր զուարթ պարին կանենք խնդակից:

«Եւ քո ականջին միշտ սիրոյ երգեր
Մենք արշալուսից կասենք մինչ աստղեր.
Եւ քեզ կը փարենք և քո ծեր կուրծքին
Մենք հանգչել կըտանք մեր քաղցրը կըքին...»

Ալիքը կայտառ գնում են, գալիս,
Սե ժայռը նախկին իւր վիշտն է լալիս...
Խաղում են ալիք, ուրախ կարկաշում —
Նա կրկին անշարժ, նա կրկին տրտում...

Համեմատել Յ. Թումանեանի «Համերգ»-ի հետ:

79. ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՔՈՒՆԸ

Ա՛խ, տուէք ինձ քաղցըր մի քուն,
Կեանքից հեռու սըլանամ—
Այն աշխարհը, ուր խնդուեթիւն,
Ուր սէքն է միշտ անթառամ

Քնքուշ վարդերն ինձ բարձ լինին,
Վառ կանաչից իմ վերմակ,
Նոցա բոլրը դուարեթաղին
Ծծեմ անվերջ ես անյագ:

Եւ խայտալու իմ առաջին
Վտակն անուշ խոխոջէ,
Մի թարմութիւն եղեմային
Զորս բոլորքս տարածէ:

Եւ ինձ ժպտի արշալուսին
Գարնան մատաղ արեգակ,
Եւ գիշերով իմ ճակատին
Խաղայ գողտրիկ վառ լուսնակ:

Եւ աչագեղ կոյսն ականջիս
Իւր մեղեդին մեղմ հնչէ,
Եւ հերարձակ՝ սիրով վըղիս
Փարէ քնքուշ, փաղաքշէ...

Եւ յաւիտեան վայելչութիւն
Գրկէ հոգիս, չ'յագնամ...
Ա՛խ, տուէք ինձ քաղցըր մի քուն.
Հեռու, հեռու սըլանամ:

80. ԲԱՆԱՍՏԵՂԹԻ ՄԱՀԸ

Աննաման ես, ինչպէս հրեշտակ երկնային,
 Չեմ կշտանում նայելով քո երեսին.
 Վառ աչերըդ, ինչպէս արև զարնային,
 Ա՛խ, սիրական, բորբոքում են իմ հոգին:
 Իրաւունք տուր՝ ծծեմ մեղրը շրթունքիդ,
 Գաղեմ կարմիր այդ վարդերը թշերիդ.
 Ով որ առնի հոտը շամամ ծծերիդ,
 Էլ կարո՞ղ է միթէ զին տալ իւր կեանքին:
 Թէ Աստուած ինձ պիտի մահ տայ, թող մտա գամ,
 Վզովդ ընկնեմ, քեզ համբուրեմ մի անգամ.
 Թող ապրշում մաղերովըդ ինձ կախ տամ—
 Բընաւ մի կեանք էլ չի հասնի այդ մահին:

81. Ե Ր Գ Չ Ի Ն

«Սովորեցէք բարութիւն անել, որոնեցէք
 իրաւունք, ուղղութիւն ցուցէք զրկուածին,
 որքի դատը տեսէք, որրեայրու դատը պաշտ-
 պանեցէք»:

Եսայեա մարգարէ, Ա. 17.

Մի թողնիր, երգիչ, քնարըդ կախած,
 Որ նորան ժանգով տարիքը պատեն,
 Ոսկի լարերին դու ոգևորուած
 Զարկիր մասներով, թող դարձեալ հնչեն:

Թող հնչեն նորից հին երգը անմահ
 Եւ վառեն սիրով սրտերը մարդկան,
 Թող նոքա նորից օրհներգեն անմահ
 Գործերը բարւոյ և կարեկցութեան:

Ինչպէս չէ կարող ձմեռն արգելիլ
 Գալուստը շքեղ ծաղկաբոյր զարնան,
 Նոյնպէս ճշմարիտ խօսքը խաւիանել
 Չէ կարող ձայնը անմիտ չարութեան:

82. * *

Ամենայն անգամ, երբ թեթևամիտ
Դիպչում է մուսա սրտիս լարերին,
Քնքուշ մատներով խրլում է ժրպիտ
Եւ դընում թախիծն իմ անհոգ ճակտին,—
Անցած պատկերներ խուռն երամով
Լցուում են սիրտըս, զարթնում է հոգիս,
Եւ միտքըս հեռու թռչում է սիրով
Նազելի աշխարհն մանուկ օրերիս:

Եւ կամենում եմ սէր երգել միայն
Եւ քաղցրութիւնը մաքուր հասակի,
Անուշ ժամերը անամպ խնդութեան,
Կենդանի հրճուանք կուսական սրտի:
Բայց միշտ ակամայ լարերը բեկբեկ
Տխուր են հնչում օրհներգը սիրոյ,
Էլ չէ երևում ինձ սէրը երբէք
Իբրև վառ գեղմունք երջանիկ հոգւոյ:

Եւ միշտ լսուում է մի ձայն լարերից,
Որպէս հառաչանք պաղատող սրտի,
Էլ չէ հեռանում նա իմ ականջից,
Այդ ձայնն անմեղին մի խորին վշտի.
«Այնտեղ, ուր արցունք, շղթայ և աւեր,
Ուր լսուում է լոկ հառաչք լալազին,
Քո քնարիցը թող ուրախ ձայներ,
Ո՛վ թշուառ երգիչ, բընաւ չըլսուին»...

83. * *

Դու ծաղկում ես, ինչպէս վարդը հարաւի,
Քեզ փարում է առաւօտեան շողն ոսկի,
Եւ ցօղում է ծաղկանց բոյրը քո կուրծքին
Զեփիւռն անուշ՝ գուրգուրալով հեշտագին:

Եւ աստղերը շողշողալով ճաղատիդ
Քեզ ժպտում են գիշերները խնդամիտ:
Թեթևաքայլ եղնիկի պէս նազ տալով,
Հալեցնում ես մատաղ սրտեր աչերով:
Բայց չգիտես դու քո ոյժը, սիրելի,
Միամիտ ես, անփոյթ, իբրև աղաւնի:
Այրող, մաշող սիրոյ բուռն փոթորիկ
Դեռ չէ յուզել մանուկ կուրծքըդ գեղեցիկ...

Եւ իմ միակ ցանկութիւնն է, որ անբիծ
Սիրտըդ զգար սիրոյ հրճուանք ու թախիծ,
Եւ գուրգուրանքն հասկանայիր զեփիւռի,
Եւ սիրտըդ թունդ զարկել տար բոլոր վարդի,
Եւ ըզգայիր, որ բացի խաղն, անհոգ կեանք,
Կայ ակամայ արցունք, և վիշտ, և տանջանք:

84. * *

Դու երևեցար, ինչպէս վառ գարնան
Լուսաշող այգի նշոյլ ոսկէթոյր:
Դու երևեցար—ժպիտդ անմամն
Քաղցր էր գերթ սիրոյ առաջին համբոյր:

Ծաղկոցում բացուող քեզ վարդ կարծեցի,
Դրբախտի վայելք տեսայ քո աչքում...
Ա՛խ, այդ աչերիդ ես զոհ բերեցի
Եւ անհոգ վիճակ և սրտիս խնդում:

Եւ եթէ դու էլ խաբում ես, ո՛վ կոյս,
Սէր չէ խոստանում հայեացքըդ չքնադ,
Թէ այս անգամ էլ ունայն է իմ յոյս,—
Դարձեալ պիտ օրհնեմ հասակը մատաղ:

Պիտ օրհնեմ ես այն, թէպէտ կարճատև,
Բայց վեհ, հոգեզմայլ հրճուանքի համար,
Որ հոգուս բերիք դու, ինչպէս արև,
Ինչպէս խնկաբոյր մայիս կենարար:

85. *
* *

Արազն եկաւ լափին տալով,
 Ժէռ քարերին, ափին տալով.
 Ո՞րտեղ թաղեմ ես իմ դարդը,
 Զոր գլուխս տափին տալով:

Ա՛յ իմ Արազ, ջուրդդ վարար,
 Սիրուն եարիս եարար տեսմը.
 Ես չըհասայ իմ մուրազին.—
 Սրանդ, եարար կարօտս տեսմը:

Ամպերն ընկան Մասիս սարին,
 Կարօտ մնացի ես իմ եարին.
 Աստօծ սիրես, էրուած սրտիս
 Զուգար բերես էկող տարին:

Գիշերն անքուն գիր կըգրեմ,
 Արտասունքս դետ կըշինեմ.
 Արանդ, ծէգը ջրիդ հառած՝
 Իմ սե դարդը քեզ կը բերեմ:

Վասն շողքը քարին ընկաւ,
 Կըրակըն իմ սրտին ընկաւ.
 Կամար ունքից, թուխ աչքիցը
 Յաւն իմ ջիւան ջանին ընկաւ:

Արազն էկաւ լափին տալով,
 Ժէռ քարերին, ափին տալով,
 Ո՞րտեղ թաղեմ ես իմ դարդը,
 Զոր գլուխս տափին տալով...

86. ԻՄ ԱԶԳԻՆ

Տեսնում եմ ա՜նա—ազգեր են մեռնում,
 Ազգեր են ծնունում, և արմաւենին

Մուրբ աղատութեան՝ դողդոջուն ձեռքում՝
Բաղդն է մօտենում մատաղ աղգերին:
Եւ նախնեաց փառքը նոր արշալուսով
Ցուում է նոցա պայծառ ճակատին,
Եւ անեղ կռուում արիւն քրտինքով
Վաստակած անմահ աճում է դափնին:

Եւ միայն դու ես, իմ խեղճ հայրենիք,
Որ շղթայակապ հեծում ես դարձեալ,
Եւ պատան պատան կուրծքդ գեղեցիկ—
Ընկած ես որպէս կենդանի մեռեալ...
Եւ անցած փառքիդ աւերակներից
Փրկութեան ոստը դեռ չէ կանաչում,
Կրճքիցդ հոսած արեան շիթերից
Քո տանջանքների փունջըն է ցօղում:

Բայց, իմ հայրենիք, դու պիտի չմեռնիս.
Ես հաւատում եմ յարութեան օրիդ.
Մօտ է ժամանակ, գարթիր, սիրելիս,
Փրկութեան աստղը վառում է ճակտիդ:
Ոտքի ել, հոգիս, շղթադ թօթափիր,
Աչքդ բաց արա՛ այդ մահուան քընից.
Թէեւ մահամերձ, դու մի ձայն հանիր—
Որդիքդ օգնութեան կըգան չորս կողմից:

87. Գ Ա Ր ՈՒ Ն

Մի նոր հրաշալի կեանքով շունչ առած
Ժպտում է բնութիւն, դերդ մանուկ չքնաղ-
Եւ նոր զօրութեամբ երկիրն է զարթած,
Եւ երկինքն յստակ ու գեղածիծաղ:

Այս խորհրդաւոր պահուն ես մենակ
Ծնկաչոք անա՛ քեզ եմ աղօթում,
Խաչեցեալ Փրկիչ, Քո հովանու տակ
Ցաւատանջ սրտիս իղձերն եմ բերում:

Թող այս բերկրալից գարնան ջերմ արև
 Իմ հայրենի տան վերայ էլ փայլի.
 Մի օր, գէթ մի օր թող Գո առջև
 Այնտեղ հէք ծիծռան օրհներգը լսուի,
 Թէ անցաւ և մեր ձմեռ ցրտաշունչ,
 Թէ անպարտ արիւնն հասցրեց վարդեր,
 Եւ տառապելոց որբերն ու տրտունջ
 Դարձան գոհութեան խաղաղ մաղթանքներ:

88. * * *

Ճեմում էի բուրաստանում,
 Առաւօտ էր մայիսեան,—
 Խնդում էի, զուարճանում,
 Ուրախակից բնութեան:
 Անհոգ խաղով ես մօտեցայ
 Քնքուշ բացուած ալ վարդին.
 Անուշ հոտից չկշտացայ,
 Զմայլեցայ ալ վարդին:
 Մէկ էլ տեսայ՝ մատաղ կուրծքին
 Զազիր որդն էր բուն զրել.—
 Վայ նազելի իմ ալ վարդին,
 Կեանքի թելն էր կտրուել:

89. Մ Ա Յ Ր Ս

Հոգեմաշ ցաւով ամենայն գիշեր
 Ես քուն եմ մտնում արտասուքն աչքիս,
 Եւ խուռն երամով տանջող պատկերներ
 Շուտ պաշարում են տառապեալ հոգիս...
 Մենակ ապրեցայ կարօտ գգուանքի,
 Փորձով ես ուսայ խորհուրդը կեանքի,
 Օրըս սեացաւ այրող կրքերից,
 Զըգտայ երբէք մի սիրտ կարեկից:

Եւ քուն եմ մտնում ամենայն գիշեր
Արտասուքն աչքիս, հոգեմաշ ցաւով—
Հանգիստ չեն տալիս սև սև պատկերներ,
Որ պաշարում են ինձ խուռն երամով...
Եւ ահա դու ես, որ ինձ այդ պահուն
Երևում ես, մայր, պսակով զարդարուն,
Դու գրկում ես ինձ սիրով կաթոգին,
Դանում ես՝ «որդի» ձայնով անմեղին:

Եւ տեսնում եմ ես քո փշեայ պլսակ,
Սոցերով ծածկուած քո սիրուն ճակատ,
Եւ մի թափանցիկ նուրբ շղարշի տակ՝
Կուրծքիցըդ հոսող արիւնը կաթ-կաթ,
Աչքդ աղերսալիլ տեսնում եմ վերաս,
Կանչում եմ քեզ «մայր» ես ձայնով նրւադ,
Եւ կրկին ելնում անքուն, վշտահար—
Ախ, մայր, ինչ անէ որդիդ քեզ համար...

90. ՔՈՒՆ, ԵՂԻՐ ՀՈԳԵԱԿ

Քնն եղիր, հոգեակ, թող քաղցըր նիրհով
Աչերըդ փակուին ջերմ կուրծքիս վերայ.
Միտոյ անուշիկ մեղեդիներով
Թող մինչև նոր այդ ականջդ հեշտանայ:
Քնքուշ վարդերով ես կը զարդարեմ
Քո գլուխն ու կուրծքդ, որրան փափկութեան.
Քնիր, թագուհիս, մինչև լուսադէմ,
Մինչև արտուտներն երկինք սըլանան:

Եւ երբ առաջին նշոյլն ոսկէփայլ
Արեւ ձըգէ կուսական դէմքիդ,
Թող քեզ զարթեցնէ իմ սիրոյ դայլայլ,
Բոցավառ համրոյրս այդ վարդ շրթունքիդ:

91. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՕՐԸ

Այս դատարկ կեանքի անմիտ խնջոյքում.
 Ուր աննպատակ անցնում են օրեր,
 Ուր ամեն վառ կիրք, ամեն սուրբ զգացում
 Խեղդում են չնչին առօրեայ հոգսեր,
 Ուր բաքոսական զեղխութիւններով
 Մաշուում է, թօշնում ծաղիկն հասակի,
 Ուր ունայն փառքի սին երազներով
 Զոհուում է բերկրանքն ազատ վիճակի.

Երբ ոսկի հորթին տաճարներ կանգնած
 Մենք վաճառում ենք և խիղճ և ամօթ,
 Եւ նորա համար Աստուած մոռացած՝
 Էլ արդարութեան չենք քաշում կարօտ,
 Երբ մեր անզգայ կուրծքին կախ տալով
 Մի ցընորական պատուոյ բոժոժներ՝
 Սիրել են տալիս մեզ նենդ զգումներով
 Անարգ ըստրուկի թունոտ շղթաներ. —

Հողիս դառնացած, արցունքն աչերիս,
 Ես սլանում եմ մաքով այլ աշխարհ—
 Եւ այլ պատկերներ ահա առաջիս,
 Այլ երգի ձայներ ահա ինձ համար.
 Ահա բոնութեան կապանք խորտակած՝
 Սուրբ ազատութեան մատաղ զիցունին
 Ժպտում է հային մարտից թուլացած,
 Զեռին նոր կեանքի ծաղկող ձիթենին:

Գարնան դալարիքն արեամբ հեղեղած,
 Երի կուրծքերից վարդեր են բուսնում.
 Փառաւոր մահուան համբոյրն ընդունած
 Շրթունքն՝ հայրենի երկիրն են օրհնում:
 Դիւցազանց ողին մոռցուած դամբանից
 Յարութիւն առած մեզ շունչ է տուել,

Եւ նոր Աւարայր մեր խորունկ քնից
Զարթած զիմում ենք կռուել ու մեռնել...

Փափկասուն տիկնայք, նազելի կուսան
Շքեղ մագերից վիրակապ հիւսած,
Հեզ ճակատներին վեհ սիրոյ նշան,
Դաշտ են շտապում, պաճուճանք մոռացած.
Եւ մենք մեռնում ենք մեր մահն օրհնելով,
Որ մեծ, սուրբ գործի եղանք նահատակ,
Սուրբ ազատութեան այգը տեսնելով
Եւ անմահութեան անթառամ պսակ.

Եւ անա զեփիւռն անուշ բուրմունքով
Իմ տանջուած հոգուն հրճուանք է բերում:
Ահա երկնային քաղցր բերկրանքով
Ես գրախալ արժան նոր երգ եմ լսում...
Բայց աւանդ ցնորքիս. դեռ մօտ չէ գարուն,
Ոչ ժանգն է ջնջուել մեր շղթաներից,
Ոչ մեր կուրծքն է վարդով զարդարուն,
Ոչ այգն է ջոկուում խաւար գիշերից...

92. * *

Ալագեազ բարձր սարին
Ձին ա կիտուել կատարին.
Սարի ճամբէք, բաց էլէք.
Էթամ, հասնեմ իմ եարին:

Ա՛խ, իմ ճամբէն քարոտ ա,
Սիրտս էրուած, եարոտ ա,
Ղարբբի օրն ընի սի,
Աղիզ եարի կարօտ ա:

Եարիս տեսայ, լալիս էր,
Լալիս, գլխին տալիս էր.
Ճամբայ տուէք, այ սարեր,
Ձեռով արի՛ գալիս էր:

Էն ի՞նչ դուռ ա էն քարին...
 Սիրտս կաթում ա արին,
 Այ իմ թառան, թե տուր ինձ,
 Թռնեմ, հասնեմ իմ եարին:

93. * *

Այ վարդ—աղջիկ, մօտ արի,
 Քեզ եմ կանչում, մօտ արի,
 Նազյուն աղջիկ, շէկ աղջիկ,
 Քեզ եմ կանչում, մօտ արի:

Վարդերի հետ խաղում ես,
 Երեսիս ծիծաղում ես,
 Էրուած սիրտըս քաղում ես—
 Քեզ եմ կանչում, մօտ արի:

Աչքըդ ծով, ունքըդ կամար,
 Աղջի, սիրտըս ռւր տարար.
 Բիւլբիւլ դառայ քեզ համար—
 Քեզ եմ կանչում, մօտ արի:

94. Գ. Ա. Բ. Ո. Ի. Ն.

Քեզ ըստասող չը մնաց,
 Ռ՞ւր ես գալի, ա՛յ դարուն,
 Գովքըդ ասող չը մնաց,
 Զո՞ւր ես գալի, ա՛յ դարուն:

Սև-մուրթ պատեց աշխարհին,
 Սար ու ձոր դառան արիւն,
 Մեզ վա՛յ բերեց էս տարին,—
 Ռ՞ւր ես գալի, ա՛յ դարուն...

Բիլբիւն եկաւ՝ վարդ չունի,
Ծաղկոցը կայ՝ դարդ չունի.
Էլ ո՞վ ա որ դարդ չունի—
Ո՞ւր ես գալի, այ դարուն:
Յ. Յովհաննիսեան

95. Հ Ա Տ Ի Կ

Լոյսը բացւում է, շուտ արտը գնամ,
Փատուեմ սուր խոփով ես կուրծքը հողի,
Եւ, սիրուն հատիկ, քեզ նրան պահ տամ
Մինչև օրերը ամրան արևի:

Թաղեմ քեզ, հատիկ, ե դարդս քեզ հետ,
Թէ Աստուած ուզեց, դու կանաչեցիր,
Թող դարդս մեռնի գետնի տակ անհետ,
Դու ինձ մխիթար, կրկին տուն դարձիր:

Եւ ջերմ աղօթքով Տիրամօր առջև
Ես մոմ կը վառեմ, ես խունկ կը ծխեմ,
Որ քեզ պարգևէ մի առատ անձրև,
Որ քեզ միշտ սիրով նայէ խնդադէմ:

Բայց թէ այդ շնորհին մեղքերիս համար
Արժանի չը լինեմ, ծով կը դարձնեմ
Ես տաք քրտինքը ճակտիս արևառ,
Որ քեզ, իմ հատիկ, ծաբաւ չը թողնեմ:

Ծլի՛ր, կանաչի՛ր, ոսկէ սաւանով
Ծածկի՛ր իմ արտը ողջ ալէժածան,
Նոր այն ժամանակ անուշ շրշիւնով
Տու՛ր ջարդուած սրտիս մի քուն հանգստեան:
Յ. Յովհաննիսեան

96. ԵՐԳՈՒ ԱՆԷՄՔԸ

Դարեր առաջ կար բարձրաբերձ պարխազներով մի զգեսակ,—
 Հոյակապ էր, փառքն հասել էր մինչև ովկիսն կապուտակ.
 Շուրջը փռուած ծաղկեպսակ անուշաբոյր պարտեզներ,
 Թարմ, զովաշունչ շադրուաններ ցայտում էին վառ շիթեր:
 Եւ բազմայաղթ այնտեղ հուսած գոռոզ արքան հողաշատ
 Բազմած էր իր գահի վրայ մոայլ դէմքով ու գունատ,
 Ամեն խորհուրդն արհաւիրք էր, կատաղութիւն աչքերում,
 Նրա ամեն խօսքը կորուստ, արիւն էր նա միշտ գրում,
 Այս ամբողջ երկու ազնիւ երգիչ գնացին մի անգամ՝
 Մէկն ալեղարդ, միւսը մանուկ ոսկեշանգուր ու փարթամ.
 Տաւիղն ուսին, մի գեղեցիկ նժոյց հեծած ծերունին,
 Նրա կողքին ընթանում էր ծաղկահատակ պատանին:
 Ծերունին ասաց իր ընկերին. «Պատրաստ եղիք, իմ որդեակ,
 Մեր սրտառուչ տաղերն յիշիր, երգիր ազատ, համարձակ,
 Երգիր և՛ միշտ, և՛ խնդութիւն մատաղ ձայնով դու հզօր,
 Գոռ արքայի քարէ սիրտը պիտի շարժենք մենք յայօր»:
 Սրղէն շքեղ սիւնաղարդ նրանք սրահումն են կանգնած,
 Գահի վրայ թագաւորը և թագուհին են բազմած:
 Նա սիգապանձ՝ ինչպէս փայլը արինալատ հիւսիսի,
 Իսկ թագուհին քնքուշ՝ նման արուսեակին յուսալի:
 Զարկեց ծերունին ոգևորուած նուրբ լարերին մատներով,
 Հոխ արձագանք տուին նրանք լիահնչիւն ձայներով
 Եւ գեղեցիկ տաղ հրկնարժան չքնաղատես պատանին,
 Ինչպէս համերգ ոգիների, և խլածայն ծերունին:
 Նրան երգն էր զարուն և սէր, երանաւէտ ոսկեղար,
 Ազատութիւն, խօսք ճշմարիտ, արիութեան գործ սրղար,
 Եւ հեշտութեան ամեն վայելք, որ յուզում է սիրտ մարդկան,
 Եւ այն ամենն որ կարող է մարդուն տալ տիպ վեհութեան:
 Պալատական ասպետներ ծաղրի խօսքեր մոռացան:
 Եւ անվեհեր զինուորները հզօր երգիցն յաղթուեցան:
 Իսկ թագուհին, սիրտը շարժուած, աչքին արցունք բերկրալից,
 Ահա հանեց, ձգեց երգչին չքնաղ մի վարդ իր կուրծքից:
 «Գայթակղեցիք դուք իմ ազգը,—պուռաց արքան մոլեգին,
 Զգեց սուսերն, օդում ցրլաց, մատաղ կուրծքը պատուտեց,
 Ոսկեհնչիւն երգերի տակ կուրծքիցն արիւն դուրս ցայտեց:
 Ասես մըրիկն իսկոյն ցրուեց այն ուն՛կողիր ամբոխին:
 Իր վարպետի գրկումն հոգին փչեց անբաղղ պատանին,
 Ծածկեց մարմինն նա թիկնոցով, նստեցրեց երկվար,

Ամուր կապեց և ամրոցից նա հեռացաւ վշտահար:
 Եւ գուրս եկաւ, կանգնեց բարձր դարբասի դէմ ծիրունին
 Եւ ձեռքն առաւ տաւիղն, ամեն տաւիղներից մեծագին.
 Չարկեց նրբան կնեայ սեանը, փշուր-փշուր խորտակեց,
 Դեպի ամրոց ու պարտէզներն սոսկալի ձայն արձակեց.
 «Վայ քեզ, խորխտ դու ապարանք, թող ոչ մի ձայն քաղցրութեան
 Լարի հնչիւն, երգ չլսուի քո յարկի տակ յաւիտեան,
 Այլ ստրուկների երկչոտ քայլեր և հառաչանք, հեծութիւն,
 Մինչ չար ոգին վրէժխնդրութեան քեզ դարձնէ սև աճիւն:
 «Վայ ձեզ և դուք անուշաբոյր, գարնանագեղ պարտէզներ,
 Տեսէք ահա մանուկ երգչի դէմքին վառուած տանջանքներ,
 Թող սրբա տեղ դուք թառամիք, ազբիւրներից ցամաքեն,
 Դալ օրերին թող քար կտրած և ամայի ձեզ տեսնեն:
 «Վայ քեզ, նզովեղ հրգիշներին, վայ քեզ, անարգ մարդասպան
 Արիւնապսակ փառքի համար մարտը լինի թող ունայն,
 Թող մոռացուի քո անունը մշտագիշեր խաւարում,
 Ինչպէս մահուան վերջին հառաչք, սին ձայն ցնդի թող օդում:
 Ծերուկն ասաց, և երկինքը լսեց նրա պաղատանք.
 Պարսպները փռչի դարձած, կործանուած է ապարանք:
 Բարձր մի սիւն դեռ վկայ է հին օրերի փառուոր,
 Այն էլ շուտով պիտի լինի մի փլատակ սըզաւոր:
 Չը կայ բուրմունքն այգիների, շուրջը միայն անապատ,
 Չը կայ վտակ, ապարթախտ չըկայ մի ծառ ստուերաշատ
 Եւ չի յիշում մի տարագիր կամ երգ անուն արքայի.—
 Այսպէս ահա կատարուեցաւ անէ՞քն ահեղ ձեր երգչի:
 ՈՒՆԱՆԴ. Յ. Յովհաննիսեան

97. ԱՆԳՐԱԳԷՏ

Երբէք մէկին չեմ նախանձում եւ աշխարհի երեսին.
 Միայն, զբաղէտ դուք պարոններ, նախանձում եմ ձեր բաղվին.
 Ա՛խ, գթացէք գեղջուկ օրբիս, մի լաւութիւն միայն արէք —
 Տուէք մի թերթ ինձ ձերմակ թուղթ, մի փետուրէ գրիչ տուէք.
 Եւ ինձ գրել սովորեցրէք, սովորեցրէք լաւ, շուտով,
 Որ զըրիշըս կայծակից էլ արագ թռչէ գըրեղով,
 Որ պատմելով թղթի վրայ եւ ձեզ ցոյց տամ ամեն բան —
 Մեր աշխատանքն, մեր չարչարանքն ու մեր խաչը վկայութեան...
 Կը յայտնէի՝ ինչ ցնորքներ ինչ մտքեր կան իմ գլխում,
 Մի ողջ աշխարհ ցոյց կը տայի եւ աննման պատկերում...
 Բայց այժմ անհետ չքանում են բոլորը իմ քաղցր երազներ,
 Ժա անզրագէտ, եւ անուս եմ... Մովորեցրէք, պնդեցրէք:

Կը գրէի, ինչպէս ամառն արշալոյսն է փայլափայլում,
 Եւ քարերին զարնուելով կայտառ ջուրն է կարկաչում,
 Ինչպէս արտում ցորենի հետ զրոյց է անում մեղմ քափին
 Եւ աղօթքի հրաւիրում փոքրիկ զանգը մեր ժամին,
 Ես աղօթել եմ կամենում, բայց չըզիտեմ աղօթքներ—
 Ես անգրագէտ, ես անուս եմ... սովորեցրէք, պարոններ:

Անգիւս գործ է, թէ մարդ գրել իր խօսքերը կարենայ,
 Բոլորն ինչ որ մտածում է, բոլորն ինչ որ գլուխը գայ,
 Գրչով պատմէ այն ամենը, ինչ զիգուել է իր սրտում,
 Ծշմարտութիւն միշտ քարոզէ, բարի գործի մեծութիւն.
 Ես շատ անգամ ծաղր եմ լսում, բայց իմ ուսեալ թշնամումն՝
 Սիրտս այրում է, պատասխանի չունիմ ոչինչ զօրութիւն.—
 Եւ զուր տեղը ես տանջւում եմ և յուզւում եմ և զոգում,
 Ինչ միմիայն թղթի վրայ անմիտ կերպով խաղաղում:
 Ինձ ծաղրում են և ամօթու կարժրում են իմ այտեր...
 Ես անգրագէտ, ես անուս եմ... սովորեցրէք պարոններ,

Շատ լաւ բան է գիր իմանալ. Գլբագէտ է վաշխառուն,
 Դրբագէտ են դատարանի ծառայողներն անկշտում,
 Շուանդով էլ նրանք գրում են, նրանցն է դրախտն աշխարհի,
 Իսկ այդ գրելն ի՞նչ փոյթ, որ խեղճ մարդու հոգին պիտ հանի:
 Շուտով, շուտով, գրբիչ տուէք, սովորեցրէք գործածել,
 Կամիմ գրել տգգի համար, նրա համար աշխատել.
 Եւ ես նրան կը պաշտպանեմ չարագործից, յիմարից,—
 Կ'արտագրեմ Աւետարանն ես բոլորը ըսկզբից...
 Ա՛յ, դու սագ իմ, ճերմակթևիկ, քեզ տուել եմ կերակուր,
 Քեզ սիրել եմ—փոխարէնը թիկեց ինչ մի գրիչ տուր.
 Սիրուն դու սագ, տո՛ւր խնդրում եմ ինձ թռչելու զոյգ թևեր,
 Ո՛ր բոլորը գրբագէտ են.—սովորեցրէք, պարոններ:

ԼԵՆԻՆԷՆԻՑ Թարգմ. Յ. Յովհաննիսեան

98. Մ Ա Յ Բ Ե Բ Ը

Գիւղական փոքրիկ եկեղեցում կիսախաւարի մէջ խնկի
 ծուխը պալան-պալան բարձրանում էր այն երեկոյ և բակ
 կապում փոքրիկ լուսամուտների շուրջը, Կանթեղի աղօտ
 լոյսի առաջ քահանան մոմաւալով քաղում էր աղօթքները և
 բազմաթիւ ժամաւորները մերթ գետնատարած խսիրնե-

րի վրայ, մերթ ոտքի կանգնած ու բազկատարած՝ մրմռն-
ջոււմ էին մի ընդհանուր ու խուլ մոմոտց հանելով: Կա-
նանց բաժնում սևացած սեան վրայ կախուած էր Աստուա-
ծածնի նկարը մի մզլած, դեղնած շրջանակի մէջ և նրա
առաջ կանգնած էր մի տարիքաւոր կին՝ Սուսանը: Այդ
կինը և այդ նկարը երկու մայրեր էին, որոնք նայում էին
իրար ակնապիշ և կարծես ջանք էին անում հասկանալ մի-
մեանց մտքերը, կարգալ միմեանց սրտերը: Տիրամայրը
վերևումն էր՝ սեան վրայ, Սուսանը ներքեւում՝ գետնի վրայ,
մէկը սուրբ էր, կարող և հրաշագործ, միւսը խեղճ, վըշ-
տահար, անզօր մի պառաւ, որ եկել էր նրա առաջ լաց
լինելու, աղերսելու:

Միածնի փոքրիկ, գանգրահեր գլուխը սղմած իր կու-
սական կրծքին, Աստուածամայրը խանդաղատանքով ու ժը-
պիտով նայում էր վար, իր ոտների տակ սողացող, գա-
լարուող բազմութեանը, նայում էր նոյն ժպտով նաև Սու-
սանին, որ եկել էր ցաւոտ կուրծքը նրա առաջ բանալու:

Սուսանն աղօթում էր իր միակ որդու, իր դարեր թա-
փառական Սաքօի համար, որ բանի մի օր առաջ թողեց,
գնաց մութ անյայտը, դէպի հեռուն...

«Ո՛վ սուրբ Տիրամայր, ասում էր նա, բոլոր ցաւոտ
սրտերի, բոլոր վշտացած հոգիների, բոլոր մղկտացող մայ-
րերի դու զթոտ մայր, ձեռքս քո փէշն եմ ձգել, էրուած,
մորմոքուած սիրտս բերել եմ քո սուրբ ոտների տակ դնե-
լու. բաց այն, Տիրամէր, տես, արցունքը մի կողմ, կրակը
միւս կողմն են բռնել սրտիս և սրցունքը վառ կրակը մա-
րել չի զարողանում, բոցերը շատ են. բաց ունայիր, ան-
ճարների մայր. չէ՞ դու սրտերի կրակը հասկանալ, զգալ
գիտես, տես ինչեր կան իմ եփուած սրտում ու յետոյ մի
ճար, մի դարման արա, ողորմած թագուհի: Իմ ծով մեղքից
էս ձեր օրերիս ֆալագը մի դադ քաշեց սրտիս, մի խոր դադ
և էրուած տեղը դեռ մխում է, մխում. դու հօ տեսար,
սուրբ մայր, թէ էն մէկ ջիւանս, սարի պէս տղամարդ,
ինչպէս կտոր-կտոր արին անօրէնները. ան ջաւով ծնած,
մեծացրած զաւակիս էս կտորած ձեռներովս արիւնոտ դե-

րեզման իջեցրիւ Խոջ անեմ, գուցէ իմ մեղքից, գուցէ Աստուած էր վրաս բարկացել, Այս մէկն էլ գնաց... մըղկըտացի, աղաչեցի, լաց եղայ, ձեռքն ու ոտքն ընկայ, որ չըգնայ, բայց գնաց... Թէ ուր, այդ դու ինձանից լաւ գիտես, Տիրամէր... հեռու սարերում, ձորերում. քարը՝ բարձ, ժայռն՝ անկողին, օձերի հետ՝ ջուրը, գազաններին հետ բունը կիսելով՝ նա թափառում է և ես անտէր, անտիրական, ձեռքս չոր գետնին, սիրտս՝ դող, հոգիս՝ ցաւած, օրս սև, թաց աչքս դռանը բռնած գիշեր, ցերեկ մղկտում, վշտում եմ: Փրկի՛ր նրան, իմ գաւակին, Տիրամէր, բարեխօս եղիր նրա մօտ, որ այնպէս սիրով գրկել, սլմում ես քո սուրբ կրծքին. տես նա ինչպէս փարում է քո մայրական ստինքներին, ինչպէս ուզում է լսել քո սրտի ձայնը, մայր, մայր, ախր ես էլ եմ մայր, ես էլ սիրտ ունիմ, մայրական կաթովս քանխի՛ն կերակրեցի, կրծքիս վրայ քանխի՛ն ջերմացրի և էլ չկան, չկան, ոչ մէկը չկայ, ու թ՛ ծնունդ նրատեցի, ու թ՛ երկունք քաշեցի, և այժմ էն մէկն է: Մոմերը մէկիկ-մէկիկ այրուեցին ու մարեցին, Աստուածածնի և Բրիստոսի դէմքերը կամաց-կամաց կորան խաւարի մէջ. քահանայի ձայնը լռեց, աղօթաւորների մրմունջները դադարեցին, եկեղեցին դատարկուեց: Սուսանն այնտեղ մնաց մենակ և դեռ աղօթում էր, դեռ նա աչքերը վար չէր բերում Տիրամօր պատկերից, դեռ չորացած բազուկները տարածած նա օգնութիւն, գլխութիւն էր աղերսում և լալիս էր ու լալիս...

— Սուսան խաթուն, ուշ է. ժամը պրծաւ, որդի: Կինը գլուխը բարձրացրեց. խօսողը ծերունի քահանան էր:

— Տէրտէր ջան, աջիդ մեռնեմ, աղօթում եմ:

— Հա, որդի, գիտեմ, որ աղօթում ես, լաւ եմ անում, թող Աստուած լսի. ասում եմ, որ ժամը պրծաւ, էլ մարդ չկայ, տես:

— Ի՞նչ գիտես, չէ՞, հայր ջան. էն մէկն էնպէս բեմուրազ եղաւ, մէկէնները գնացին, արեան ծով էր, խեղդեց բոլորին, էս մէկն էլ չուերն ընկաւ, ես եկել եմ Աստուածածնի փէշերից կախուել:

— Լաւ ես անում, գաւակս, լաւ ես անում, բայց ուշ է արդէն:

— Գիտես, հայր ջան, չեմ թողնի, չեմ թողնի նրա փէշերը. ամեն օր էսպէս կը գամ, ես լի՛նջ եմ արել, որ էսքան սկը մենակ քաշեմ, որ էսքան ցաւը մենակ ինձ տան, մեղք չեմ, էէ, սա էլ մայր է. էս Տիրամէրը տես, տես ինչպէս գրկել է իր գաւակին, տես ինչպէս սղմում է կրծքին, իսկ ես ոչ ոք չունիմ, ոչ ոք. Դու գիտես չէ՞, տէրտէր ջան, չէ՞ քեզ հետ դրինք հողը արնակոյտը գաւակներին:

— Հա՛ հա, որդի, դէ հիմա բաւական է, մնացածն էլ էգուց:

Սուսանը խաչակնքեց երեսը ու կամաց-կամաց երեքալով դուրս գնաց. Քահանան կանգնած նայում էր նրա յետերից և երբ այդ փոքրիկ, դողդոջուն ստուերն իսպառ ծածկուեց դրսի խաւարի մէջ, նա զլուխն օրօրեց խորհրդաւոր ձևով:

— Խեղճ կին, ասաց նա կամացուկ, լի՛նջ է լինելու վերջը, խելքն արդէն կարծես տեղը չէ. փառք քեզ, Աստուած, հագար բերան փառք:

Դուրսը մութ էր:

Էլի գարուններ եկան, բոլորեցին Սուսանի գլխով, էլի դաշտ ու ձորեր ծաղիկներով ու կանաչներով ծածկուեցին: Բակի մի հատիկ խնձորենին մի քանի անգամ ծաղիկեց և բուրմունք արձակեց իր շուրջը. պատերի նեղ ճեղքերի մէջ ճնճողունները բուն գրեցին և ձագեր հանեցին. հօտերն ու նախիրները դաշտերը կենդանացրին, արագիւններն արդէն քանի անգամ շուրջին հեռու, հեռու և կրկին վերադարձան: Էլի աշուններ և կան իրանց վհատ քամիներով և ծառերի տերևները լիզեցին, թռչուններն ահագին ու տխուր երամներով թռկին ու հեռացան դեղնած դաշտերից, կռուներները վշտոտ կողոցով սև ցելերի վրայ հատիկներ մուրալով երկնքի երեսից անցան, բայց Սուսանի որդին չկար ու չկար:

Ամեն երեկոյ գնում էր եկեղեցի, վեց մօմը դողդո-

ջուռն ձեռքով կպցնում Տիրամօր պատկերի սևացած, այրուած շրջանակի վրայ, ձեռքերը տարածում էր դէպի երկինք և աղօթում, աղօթում: Եւ ամեն երեկոյ աղօթքից յետոյ, երբ բոլոր ժամաւորները դուրս էին գնում, նա դառնում էր տէրտէրին:

— Սաքօն կը դայ, այնպէս չէ, տէրտէր:

— Հա, որդի, ի հարկէ կը դայ, քո այնքան արցունքը, աղօթքները...

— Բերանդ տաճար է, տէրտէր ջան, տաճար բերնիդ մեռնեմ. աստ, աստ, այդպէս աստ. դու որ ասում ես, Տիրամէրն էլ ժպտում է, յոյսը սրտիս մէջ վարդի պէս բացւում է:

— Հապա, որդի, Տիրամէրը զում խնդիրն է թողել անկատար. երկնքի դռները նրա քարեխօսութեան առաջ միշտ բաց են:

Եւ Սուսանը հանգստացած տուն էր վերադառնում:

Սուսանը անքուն է դեռ, նա նստած է և մտածում է իր Սաքօի մասին. զոր է նա այժմ, զոր չոլում, զոր ձորում, զոր այրի մէջ, կամ ժայռի տակ կծկուած: Սարերում այժմ ինչպէս ցուրտ է. նա էլ երեկ թրջուած է, կրակ չունի, ինչպէս վառի, նրանք կրակ չեն անում, այն թափառականները, որ վառեն, լաւ չէ, ասում են... հիմա ի՞նչ պէս մըսում է իր Սաքօն, այսպիսի զիշեր...

Բակի դուռն են թակում, Բօղարը հոփած նետուեց դէպի այն կողմը:

— Թրը՛խկ, թրը՛խկ...

Սուսանը ցնցուեց ու դողաց բոլոր մարմնով, բայց ինքն էլ չիմանալով ինչու, մի վայրկեան միտուած մնաց իր տեղում անշարժ և ամբողջապէս լսողութիւն դարձած. բերանաբաց, շնչակտուր. նա լսում էր, թէ ինչպէս շունը կատաղաբար շանգոռում է դուռը, — թրը՛խկ, թրը՛խկ խրփում են դրսից:

— Ո՞վ է... զի ես դու...

— Ես... ես Աստուծոյ մարդ եմ... անփնաս ու անպէտք. դողում եմ ցրտից, թրջուած եմ. հետուից եմ դա-

լիս... անձրևի տակ մնացի, մուկը վրայ հասաւ սարե-
լում, նոր հասայ, ես անպէտք մարդ եմ, Աստուծոյ ա-
րարած... Տես, դողում եմ, մի տեղ, մի կրակ, մի ճար,
Տիրամօր սիրուն...

—Տիրամօր սիրուն, կրկնեց Սուսանը մեքենայաբար,
մի վայրկեան լռեց, յուսահատ զայրոյթով կրծոտեց շըր-
թունքները մրմնջալով։

—Նա չի, նա չի, օ, անողորմ մարդ։

—Ձար գիշեր է, շարունակեց անծանօթը, խեղճին ու
տեղ կը տայ, քանի՞ դուռ եմ թակել. բացող չկայ, վախե-
նում են, ես անպէտք մարդ եմ, էլի վախենում են. դէ
եւ էլ Աստուծոյ ստեղծածն եմ։

—Ղարիբի տէր եմ, դու էլ ղարիբ ես, ներս արի, ա-
ռաց նա վերջապէս։

—Տիրամէրը հասնի դարիբին։

—Հա, Տիրամէրը դարիբին. սուս, Բօղար, սուս, մի
դայրացիր, ի՞նչ անենք, Աստուծոյ ստեղծածն է, խեղճ է,
անճար է, Տիրամէր, բոլոր անճարներին, բոլոր տառա-
պեալներին հասիր, յետոյ նրան, մրմնջում էր պառաւր ցե-
խերի միջից դանդաղութեամբ քայլելով և օտարականը
հետևում էր նրան։

Ներս մտան. ձէթի ճրագը պլպլում էր. պառաւր դար-
ձաւ, նայեց օտարականին։ Ծեր մարդ էր, սպիտակ մազե-
րով ու միրուքով. խղճուկ զգեստները ողջ թրջուած՝ ծը-
լանքներից ջուրը կաթկաթում էր։ Նա դողում էր ցրտից
ամբողջ մարմնով։ Նրա մի ուսից կախուած էր մի պարկ,
կիսով չափ լի հացով, իսկ միւս ուսից մի երկար բան, որ
սաղի էր նմանում։ Սուսանը նայում էր ուշադրութեամբ։

—Աշո՜ղ ես, հարցրեց նա։

—Ձէ, մէրիկ, աշուղ չեմ, այլ գզրար, ես թափառում
եմ՝ գիւղից գիւղ, դռնից դուռ, գղում եմ բուրդ ու բամ-
բակ, ով տալիս է, այս էլ աշուղութիւն է, մէրիկ. տես, ես
զարկում եմ այս լարին, նա ցոյց տուեց իր գործիքը, և
նրա հաստ լարը լաց է լինում իմ հարուածների տակ, և
լալով բուրդ է գզում, այդ լացի գնով, սև օրով ես ապ-

բուժմ եմ. ի՞նչ անեմ. մէրիկ, ջիւանները արնակոլոր եղան մեր վէրան աշխարհում, ես եմ մնացել, ծեր օրերիս, մէրիկ, անպէտք եմ. Աստուած հոգիս չի առնում, որ ազատ, ուեմ: Օտարականը վար դրեց իր պարկը, ցած բերեց ուսից գործիքները, մօտեցաւ թոնրին, կծկուեց ու մնջեց: Լուսացաւ, անձրեր դադարեց. բացուեց աշնանային մի ցուրտ ու պայծառ օր: Մարդիկ դուրս սողացին բնակարաններից: Սուսանի հիւըը նոյնպէս պատրաստում էր դուրս ընկնելու իր գիշերային ասորաստրանից: Նա դանդաղութեամբ վերցրեց իր պարկը, կախեց ուսից, առաւ նաև բուրդ գզելու գործիքը և դարձաւ Սուսանին.

—Շէն մնաւ, մէրիկ, օջաղդ վառ մնայ:

—Գնում ես:

—Հա, գնում եմ ցնցոտիներս ու անպէտք գլուխս երկրէ երկիր, զիւղէ զիւղ, դռնէ դուռ քաշ տալու, մինչև մի տեղ շանսատակ լինեմ ու մաշուած, տրորուած ոսկորներս հանդիստ առնեն: Եւ մինչ օտարականը խօսում էր, պառաւր մտածում էր, տեսնես սա չի՞ տեսել նրան, է՛ն ասրերի արծուին:

—Լսիր. դու շատ տեղ ես ման եկել:

—Շատ, խիստ շատ:

Պառաւր գլուխը քաշ պեց ու լռեց:

—Ինչո՞ւ ես հարցնում, մէրիկ:

—Էհ, հէնց էնպէս, տեսնում եմ, որ շատ տանջուած ես:

—Հա, մէրիկ, տանջանքը իմ եղբայրն է, մենք միասին ծնուեցինք, իսկ այժմ էլ անբաժան ենք:

—Լսիր, դու սարերում արծիւ տեսել ես, հարցրեց Սուսանը: Նրան թուաց, որ այս օտարականն էլ պիտի հասկանայ, որ արծիւը նա է, Սաքօն է:

—Բան չեմ հասկանում, մէրիկ, ասաց նա, ես արծիւ չեմ տեսել, սև օր շատ եմ տեսել, խեղճ ու կրակ գզրալ եմ, քո յարկի տակ աղ ու հաց կերայ, թէ բուրդ ունիս, բեր գզեմ, գնամ իմ ցաւը հոգամ: Պառաւր աչքերը փայլեցին. նրա գլխով կարծես մի լուսաւոր միտք անցաւ. որդու անկողինը, այդ ի՞նչպէս է, որ նա մոռացել է:

—Բձերդ, հա բուրդ ունիմ, ինչ լաւ ասացիր, ողորմի հօրդ, գզելու բուրդ, որ փափուկ լինի, էնպէս չէ, որ գզեն, բուրդը փափուկ կը լինի, անկողինն էլ լաւ. մատերովս եմ քրքրել, բայց այդ քիչ է: Եւ նա ծալքից ցած բերեց որդու անկողինը, քանդեց, բուրդը դուրս թափեց գլրարի առաջ:

—Ա՛յ, գզիր, գճրկ, լաւ գճրկ լարիդ, թող փափկի: Օտարականը, գործիքը ցած բերեց ուսից, հացի պարկն էլ մի կողմ դրեց, ծունկ չոքեց և սկսեց գարկել իր գործիքի հաստ լարին: Բուրդը գլոււմ էր ամպերի պէս՝ քուլաքուլա բարձրանում, իսկ լարն ասես լալիս, հեծում էր նորա հարուածների տակ:

Սուսանը լռութեամբ և հիացմունքով նայում էր Գործը շարունակում էր, գլրարն այս անգամ և զարկում էր, և՛ երգում, կարծես իր լարի հետ մէկ տեղ հեծեծում էր ու լալիս: Նա ասում էր. «Գարահիսար լերան կրծքին նա էլ ընկաւ վիրաւոր, կուրծքը պատռած, սիրտը խոցուած, չար թշնամու գնդակով. ժէռոտ լեռան լիրկ կատարից վար սլացիր, սև արծիւ, թևերդ բաց, լայն թևերդ ու ջիւանին հով արա»:

«Սոցուած սրտից մուգ արիւնը կաթիլ կաթիլ կը ծորայ, անխ, ջիւանի կեանքն է հոսում ցաւոտ կրծքի լայն վէրքից. ժէռոտ լեռան լերկ կատարից վար սլացիր, սև արծիւ, թևերդ բաց, լայն թևերդ ու ջիւանին հով արա»:

Սուսանը լսում էր սկզբում ուշադրութեամբ, բայց կամաց-կամաց նա կարծես մի մեծ սարսափի առաջ աչքերը չռեց ու գունատուեց:

—Այդ ի՞նչ ես երգում... այ մարդ:

Օտարականը գլուխը բարձրացրեց, գործը թողեց. նայում էր զարմացած այս կնոջ յուզմունքի վրայ և կարծես խօսք չէր գտնում պատասխանելու:

—Սո՛ւս, սո՛ւս, անողորմ, շարունակեց Սուսանը, թող այդ սև արծուի երգը, ես սեր չեմ ուզում:

—Տէր Աստուած, այդ հին բան է, շատ հին, ամենքը գիտեն, հին երգ է, ամենքն են երգում:

—Հի՛ն է... Սուսանը կարծես մի փոքր հանգստացաւ, որ «բանք» այնպէս հին է:

—Հին է, մէրիկ, բանի՛ տարի է, ինչ երգում են ամեն տեղ:

—Ո՞վ է, հի՛ է այն ջիւան վիրաւորը:

—Զգիտե՛ս, արար աշխարհ գիտէ Գարահիսարի բանը, եաման բան էր. վերան մնայ Գարահիսարը. քանի՛սն էին...

—Ո՞վ է ջիւանը, քեզ ասում եմ, անողորմ...

—Մի՞թէ չգիտես, Սաքօն է:

—Սաքօն... ունէ, անաստուած, նոյնք քո շրթունքներին, քո եկած ճանապարհին, քո ծննդին... սուտ է, սուտ է. Տիրամայրը կայ, աղօթքս, մոմերը, սուտ ես խօսում, չար սատանան ես դու, դուրս, դուրս, դուրս... Բայց չէ, կաց, կաց, աղաչում եմ, սուտ էր, այնպէս չէ՞, դու սուտ ասացիր...

Սուսանը դեռ վազվզում էր բակում խելագարի պէս, կուրծքը՝ բաց արած, չորացած ստինքները բռնած ցոյց էր տալիս երկնքին:

—Նայի՛ր վերից, Կապուտաւոր,¹⁾ նայիր էս չորացած աղբիւրներին, քանիսին կերակրեցի սրանցով, քանիսին իմ միս ու արիւնը տուի, մեծացրի, էլ չկան, չկան, ոչ մէկը չկայ... Մէկը Սաքօն է, Սաքօն, էն սարերի արծիւ, էն էլ... ի՛նչ ասաց անիրաւը... ճիշտ է, դու չտեսնիր... Սաքօն, սարը մթնեց, արծիւը սև կապեց, ճիշտ է: Բա դու ի՛նչ ասիր, ի՛նչ արիր: Մայր եմ չէ՞, մայր էի, էլ մայր չեմ, ութը ծնունդ, ութը երկունք, հազար ցաւ, հազար խոց սեւաւոր սրտիս... ունէ... և նա ջարդուած ընկաւ խնձորենու տակ, ծեր գլուխը կախուեց կրծքին, արցունքը թափուեց, թափուեց. իսկ վերից ծառի վերջին, դեղնած տերեւները մէկիկ մէկիկ մաղւում էին նրա գլխին և ճիւղերը մերկ ու դողդոջուն օրօրւում էին աշնան սառն քամու առաջ:

Սուսանը հիւանդ է, Սուսանը մեռնում է. .

¹⁾ Աստուած:

—Հին բան է, որդի, հին բան, ասում էր նրա զլխավերևը նստած ծերունի բահանան, որ եկել էր հիւանդին վերջին մխիթարութիւնն ասելու, վերջին հաղորդութիւնը տալու:

—Հին բան է, կրկնում էր մեռնողը, Տիրամէրն էլ գիտէր, տէրտէր ջան:

—Աշխարհը գիտէր, որդի, բեղանից բացի ամենքը գիտէին:

—Դ՞ռւ էլ գիտէիր:

—Դէ, որդի, թէ բեղ էլ ասէինք, ինչ օգուտ, ցաւդ դրանով չէր թեթևանայ. այնքան մայրեր լաց եղան, այնքան սարեր փշրուեցին, այնքան զուխներ սև կապեցին. է՛հ, ի՞նչ անենք, մեր ճակատագիրն է:

—Ձէ, չէ՛, Տիրամէրը խաբեց, ես խռով եմ ժամից, պատարագից, Տիրամօրից, երկնքից, թո՛ղ այսուհետև զրժոխքի բոցերին բաժին դառնամ:

—Մի ասիր այդ, որդի, մի ասիր, հոգուդ մեղք մի անիր: Ջատկին բահանան եկաւ տունն օրհնելու, մխիթարութիւն խօսելու, մերժեց. այժմ էլ հիւանդ ընկած, անկողնում, նա մեռնում է, չի ուզում հաղորդուել:

—Ձէ, չեմ ուզում, գիտմամբ չեմ ուզում, որ հոգիս սատանայի բաժին դառնայ: Ես կը կանգնեմ Աստուծոյ գահի առաջ և Տիրամօրից գանգատ կ'անեմ և յետոյ այնպիսի բաներ կ'ասեմ, այնպիսի բաներ: Այ, էս չորացած ստինքներս ցոյց կը տամ ու կ'ասեմ՝ Ի՛նչ արիւր, Տէր, մեռանք, փոթոթուեցինք, վարամ ճչացինք, աղերսեցինք, ձայներս աստղերին հասաւ և դու մեզ չ'հասար. հիմա տար ինձ կպրի կարասը, ես ի՛նչ, ես մի կտոր բոց եմ, ձգիր ինձ կրակի մէջ, բոցը բոցին ի՛նչ կանի, հա՛, կպրի կարասը, ես այնտեղ կը պլպլամ ու կը վառուեմ ու կը սպաւեմ, որ ինձ նման սևաւոր բոլոր մայրերը բոց դառած հառնեն ինձ և ամենքս միասին հրդեհ կաղմենք, այնպիսի հրդեհ, որպիսին վարումն է, վէրան սև վաթանում¹⁾), թող

¹⁾ Հայրենիք:

երկինքն էլ վառուի նրա պէս, թող երկինքն էլ մոխիր դառնայ, տանր, տանր ինձ կպրի կարասը, ես բոց եմ, մի կտոր կրակ։ Այ, այսպէս կասեմ։

— Որդի, աղաչում եմ, ասաց լացակամած քահանան, այդ ի՞նչ ես ասում։ Ես, էս ծեր տեղովս ես քեզ աղերսում եմ. մի ասի՛ր այդ, քեզ համար ես էլ պատասխանատու եմ Աստուծոյ առաջ։

— Պատասխանատու ես. դժ էլ. Տիրամէրը խաբեց, մայր էր, սիրտ պիտի ունենար, բայց խաբեց, ինքը երջանիկ է, ինքը գաւակը կրծքին սղմած ունի, իսկ ուրիշին խաբեց...

— Տիրամէրը։

— Հա, Տիրամէրը։

— Նայիր այստեղ։

Քահանան ցոյց տուեց իր Աւետարանը, նրա երեսի խաչելութիւնը։ Սաչուած Քրիստոսի ոտներէ տակ սգում էր Աստուածածինը մի խուրձ սրեր մխուած սրտում։

— Ճանաչո՞ւմ ես, շարունակեց քահանան մատը դնելով Աստուածածնի վրայ. սա էլ է Տիրամէրը։

Պառաւր նայում էր աչքերը լայն, բերանը բաց, զարմացած։

— Նայիր, նայիր, երկար նայիր, ասում էր քահանան, դու միայն երջանիկ Տիրամէրն ես տեսել, տես և այս սգաւոր, այս դժբաղդ մայրը։ Պառաւր ձգուեց տաշ շընչակտուր, դողդոջուն ձեռքերը մեկնեց և բռնեց Աւետարանը, մօտեցրեց աչքերին։

— Տես, քանի սուր է մտել սիրտը, չէ՞ այն էլ նրա որդին է խաչուած վերում։

— Հա, հա, նրա որդին է խաչուած։

— Նա մեռնում է աշխարհի համար, մեր թղթի համար։

— Նա մեռնում է մեր թղթի համար... Իսկ իմ Սաբօս...

— Սաբօն, որդի, էհ, նա էլ մեր սև ու վերան աշխարհի... Այդպէս է, որդի, մայրերը ծնում են երկունքով, սլահում են ցաւերով, մարդակեր աշխարհը տանում է, տանում, ի՞նչ անենք։

—Մայրերը ծնում են երկունքով, պահում են ցա-
ւերով ու աշխարհը տանում է, հա, հա, տանում է անո-
ղորմ աշխարհը:

—Սաքօն էլ գնաց, ուր շատերն են գնացել նրանից
առաջ, եւ ուր շատերն էլ կերթան նրանից յետոյ, ինչ
անենք:

—Սաքօն էլ գնաց, ուր սա է գնացել, հա, տէրտէր
ջան, էս խաչի վրայ մեռնողը:

—Հա, որդի, նոյն ճանապարհով, աշխարհի համար:

—Մեղայ Աստուծոյ, մեղայ Աստուծոյ, ես մեղաւոր
եմ,—պառաւի ձայնը կերկերաց, արցունքները թափուե-
ցին, նա Աւետարանը սղմեց շրթունքներին մրմնջալով.

—Խեղճ մայրեր, խեղճ մայրեր...

Ա. Ահարոնեան

Ի՞նչն է այստեղ բնական և ինչը անբնական: Հնարաւոր է,
որ ութ որդիքն էլ գնացած ու մեռած լինին: Ի՞նչ պատկերներ
կան, որ կարելի է նկարել: Սուսանը Տիրամօր առաջ: Ուրախ գրգռ
է Ահարոնեանը թէ տխուր: Ի՞նչ կեանք է նկարագրում հեղինակը.
Համեմատեցէք Սուսանը Տիրամօր հետ և Սաքօին Քրիստոսի հետ:

99. ՈՂՈՐՄԱԾ ԵՂԻՔ

Երբ ձեր հոյակապ, շքեղ տներում
Անթիւ զարդարանք ձեզ շրջապատած—
Գոհար, ադամանդ, գիպակ, արբեշում,
Դուք ծիծաղում էք՝ կեանքից լիացած.
Եւ այդքան զանձերն առանտ ու անբաւ
Ձեն էլ շլացնում ձեր աչքը բնաւ:

Երբ դուք բաղդաւոր, «կենաց բաժակներ»
Ուրախ պարպում էք փարթամ խնջոյքում,
Ասացէք դուք ինձ, ո՞վ մեծատուններ,
Այդ զուարթ ժամին դուրսը, փողոցում
Դուք նկատում էք անճար աղքատին՝
Հալով նայելիս ձեր լուսամուտին:

Պղծուկը քաշուած փողոցի անկիւն,
 Քաղցած նայում է նա ձեր խնջոյքին
 Եւ խուլ մըմնջում. «Ահա լիութիւն,
 Առատ բարիքներ, ահա խնդադին
 Եւ պայծառ օրեր, ե՛ վիճակ խաղաղ,
 Ահա ամեն ինչ—կեանք, վայելք, ծիծաղ .»

«Իսկ ես... ես թշուառ, ես մերկ, անօթի,
 Իմ օթեանը խարխուլ ու մըթին,
 Վայ ինձ... ես մի այլ դառն վիճակի
 Դատապարտուած եմ երկրիս երեսին.
 Կիսն թոքախտում, տանա հոգս ու ցաւ,
 Ուեղճ զաւակներս քաղցած ու ծարաւ...»

«Եւ շատ քչերին տուած է կեանքում
 Վայելել օրեր լի՛ երջանկութեան.
 Անարդար բախտը կեանքի խնջոյքում
 «Ապրի» —ասում է հարուստ մեծատան.
 Իսկ ինձ—«դու հեռո՛ւ, դու բախտին օտա՛ր,
 Անվերջ երազիւր բախտալից աշխարհ»...»

Օ՛հ, նա, միայն նա կարող է ըզգայ,
 Թէ ի՞նչ ասել են այս դաժան խօսքեր,
 Ով ինքն է եղել թշուառ, տառապեալ...
 Բայց դուք, դուք բախտի հարուստ ընտրեալներ,
 Ձեզ ի՞նչ փոյթ... ձեր կեանքն առատ է, լեցուն,
 Ողորմած եղէք, Աստուծոյ սիրուն:

Ողորմածութիւնն մայր է որբերին,
 Մայր, նոցա, որոնք իրանց սև բախտին
 Խորթ մայր են կանչում: Եւ այնտեղ, ուր միշտ
 Տիրում է տանջանք, ցաւ, կարիք ու վիշտ,
 Այնտեղ է նա միշտ թռչում, սլանում
 Եւ մարդկանց աչքից արտասուք սրբում:

Աղերսում եմ ձեզ յանուն որբերի,
 Հալածուած բախտի անողոք վճռով:

Թո՛ղ մարդս բարի, ողորմած լինի.
Թո՛ղ նա զթառատ, սիրաբուխ սրտով
Իր ճոխ գանձերից և՛ հէք թշուառին
Ջերմ կարեկցութեամբ միշտ հանէ բաժին:

Ողորմած եղէք, Ահա գործ վսեմ...
Երբ անտէր մի որբ կամ ծեր մուրացկան
Ջեր դրոան առաջ ահով, տխրադէմ,
Լուռ սպասում է ձեր ողորմութեան,
Եւ դուք մընում էք անհոգ, անտարբեր—
Դուք Տիրոջ սիրտն էք խոցում, հարուստներ:

Ողորմած եղէք, որ հզօր Աստուած
Ջեզ և ձեր որդոց լինի պահապան,
Որ ձեր ամբարներ ցորենով լցուած՝
Նըրա օրհնութեամբ անսպառ մընան.
Ողորմէ՛ք... և ձեզ ամենայն զիշեր
Կայցեկեն պայծառ, սիրուն երազներ. ,

Ողորմած եղէք, որ մահուան ժամին
Որբին, անճարին ձեր տուած տուրքից
Հանդերձեալ աշխարհ դուք տանէք բաժին,
Որ նա, ում այստեղ կեանքն էր ողբալից,
Նա կարողանայ ձեր դրոան մօտով
Անցնել աննախանձ և խաղաղ հոգով:

Ողորմած եղէք, որ ապրէք գուարթ,
Որ տիրոջ սիրոյն լինիք արժանի,
Ողորմէ՛ք անվերջ, ողորմէ՛ք առատ...
Ջերմ աղօթքները տառապեալների
Թռչում են այնտեղ այն սուրբ օթեան,
Ուր աղքատութեամբ հզօր ենք միայն. ,

Վ. ՀԻԿՕ. Թարգմ. Աղ. Ճատուրեան

100. ԱՐԾԻԻՆ ՈՒ ՃԻՃՈՒՆ

Հսկայ թևերը լայն-լայն տարածած
 Հզոր արծիւն ուղղեց իր թռիչք
 Դէպի բարձրաբերձ լեռներ սեպացած,
 Դէպի անսահման կապուտակ երկինք:
 Երկար սաւառնեց նա խիտ ամպերում,
 Քանի ոյժ ունէր զօրեղ թևերում,
 Եւ վերջ ի վերջոյ՝ յոգնած ու դադրած,
 Նա նստեց հսկայ մի լեռան կրճքին,
 Որի գագաթը մինչ երկինք հասած,
 Սարսափ էր ազդում վերև նայողին:
 Նստեց նա հանդիստ, անվախ, անվրդով,
 Եւ շուրջը զոռոզ հայեացք ձգելով,
 Իր արքայական ձայնով սհեղ
 Որոտաց ուժգին.— «Մենակ եմ այստեղ,
 Մենակ ու ազատ այս լեռան վրայ,
 Որպէս քաջայաղթ լիազօր արքայ.
 Իմ գահն է անհուն այս երկնակամար,
 Որոտ ու ամպեր—ոտքիս սլառուանդան.
 Ո՞վ կայ աշխարհում փառքիս հաւասար,
 Ո՞վ կարէ համնել գահիս բարձրութեան»...
 —Ե՛ս...

Լսուեցաւ յանկարծ մի ձայն թոյլ, բարակ,
 Մեծապանծ թռչնի հէնց ոտների տակ.
 — Ես՝ անձրեային ճիճուս աննշան:
 — Քի՜նչպէս, դու, այստեղ, իմ դէմ յանդիման.
 Ըստ ինձ շուտով, ճիճուս անպատկառ,
 Ո՞րտեղից դու այս ամպերին հասար:
 Աստ, պատմիր ինձ, ի՞նչպէս, ի՞նչ կերպով»...
 — Ի՞նչպէ՞ս.— սողալով, արծիւ, սողալով...

Թարգմ. Աղ. Ժատուրեան

Ի՞նչ ենք սովորում այս բանաստեղծութիւնից.

101. Թէ ՇՐՋՈՒՄ ԵՄ

Թէ շրջում եմ ազմկալից փողոցում,
Թէ մտնում եմ հս մարդաշատ սուրբ տաճար,
Թէ նստած եմ ջահիլների շրջանում,—
Միշտ նոյն մտքերն ինձ յուզում են անզաղար:

Ես ասում եմ—տարիք կանցնեն ու կը գան,
Եւ ամենքըս, որ կանք այստեղ խըմբովին,
Պէտք նընջենք երկրի խորքում յաւիտեան,
Եւ գուցէ, մէկն արդէն մօտ է իւր մահին:

Թէ նայում եմ մենակ կանգնած լուռ կաղնուն,
Ես խորհում եմ—այդ նահապետն անտուռի,
Որ վըկայ է իմ պապերիս մեռնելուն,
Ե՛ւ ինձ թողած՝ էլի կապրի շատ տարի:

Թէ սիրասուն մանուկին եմ փայփայում,
Մըտքումս արդէն ես ասում եմ՝ մնաս բարև.
Քեզ եմ տալիս ես իմ տեղն այս աշխարհում,
Ինձ-մահ, իսկ քեզ—գեռ կը ժպտի նոր արև:

Եւ այսպէս միշտ—ամեն օրն ու տարին
Սովորել եմ մտածմունքիս հետ կապել
Եւ նոցա մէջ ըսպասելով օրհասին,
Աշխատել եմ գալիք մահըս գուշակի:

Եւ, թվ դիտէ, ի՞նչ տեղ է մահ պատրաստում
Ինձ օրհասը—ծովում, մարտում թէ ճամբին,
Գուցէ, հանգչեմ հէնց մօտակայ այս հովտում—
Նա ընդունէ իմ ցըրտացած, անշունչ գին:

Թէպէտ մէկ է, ուր էլ հանգչիմ յաւիտեան,
Ո՛ւր էլ փըտի սառն, անզգայ իմ դիակ.
Բայց, ախ, քաղցր էր, թէ գըտնէի գերեզման
Սիրած երկրում—հայրենիքիս հողի տակ,

Եւ թող կեանքը, մատաղ կեանքը սիրաւէտ
Շփրմիս ափին զուարճանայ ու խաղայ.
Եւ անտարբեր բընութիւնը իւր յաւէտ
Գեղեցկութեամբ շուրջըս փայլէ սւ շողայ:
ՊՈՒՇԿԻՆ. Թարգմ. Ա. Ժատուրեան

102. Մ Ա Ր Գ Ա Ր Է

Յոգնած ու տանջուած, հոգով ծարաւի
 Մութ անապատում թափառում էի.
 Եւ ահա այնտեղ տեսայ վեցթեան
 Ելաւ Սերովբէն իմ դէմ—յանդիման.
 Եւ նուրբ մատներով թեթեւ ու քնքոյշ
 Շրփեց իմ աչերն, կարծես, նինջ անոյշ.
 Եւ զարհուրանքով նոքա բացուեցան,
 Ահաբեկ արծուի աչերի նըման.
 Եւ նա ազանջիւս դիպաւ կամացուկ,
 Եւ իմ լըսելիքն յուզեց ձայն, աղմուկ.
 Անսացի երկնի սասանումն ու դող,
 Հրեշտակների թըռիչք լեռներում,
 Ծովի յատակին զեռունների լող,
 Ողկոյզի աճումն ճոխ հովիտներում:
 Եւ նա հըպեցաւ իմ սառ շրթունքին
 Եւ պոկեց, հանեց լեզուս մեղսալի՝
 Սովոր նենգութեան և նանիւր խօսքին.
 Եւ այնտեղ դըրեց իմաստուն օձի
 Թունաւոր խայթոցն իւր արնոտ ձեռով.
 Եւ նա պատառեց իմ կուրծքը սըրով
 Եւ հանեց սիրտըս դողդոջ, բարախուն.
 Եւ նորա փոխարէն՝ իմ բացուած կրծքում
 Նա դըրեց բոցոտ ածուխ վառվռուն.
 Եւ ընկած էի ես անապատում,
 Որպէս մի գիակ: Եւ ահա բարձրից
 Անսացի Տիրոջ կոչը դէպի ինձ,
 Եւ, ո՞վ մարգարէ, և լուր, և հայիւր,
 Եւ հըզօր կամքիս հըլու, անձնուէր,
 Շըրջիւր դու ծովեր, շըջիւր դու երկիր,
 Եւ խօսքով այրիւր մարդկային սըրտեր:

ՊՈԽԵԿԻՆ. Թարգմ. Ա. Ժառուրեան

103. Հ Ր Ե Շ Տ Ա Կ

Կէս գիշերային անհուն երկնքում
Հրեշտակ էր թռչում մեղմիկ երգում
Եւ լուսին, աստղեր, ամպեր խմբովին
Սըրբազան այդ երգն լուռ լրսում էին:

Երգում էր նա բախտ և երջանկութիւն
Եղեմում ապրող սուրբ ոգիների.
Երգում էր գովեստ նա Տէր Աստըծուն
Եւ այդ գովեստն էր անկեղծ, սըրտայլի:

Մատաղ էակ էր նա գրեկին տանում
Երկրային վըշտի, արցունքի համար.
Եւ երգն հրեշտակի այդ մատաղ սըրտում
Մընաց կենդանի, թէպէտ անբարբառ:

Եւ՝ երկրիս վերայ, լեցուն փափագով,
Երկնի տառապեց այն մատաղ հոգին.
Բայց նորան երկիրն իւր ախուր երգով
Զբփոխարինեց երգը երկնային:

ԼԵՐՄՈՆՏՈՎ. Թարգմ. Ա. Ժատուրեան

104. ԵՐԲ ՄԵՂՄ ԾՓՈՒՄ Է

Երբ մեղմ ծըփում է արտը ոսկեշող,
Դալար անտառում սօսափում քամին.
Եւ կարմրիկ յալորն անտես, գաղտագող
Պահւում է այգում, տերևի միջին:

Երբ անուշաբոյր ցօղով թառամած՝
Ճերմակ շուշանը անպէս սիրալից,
Վառ արշալոյսին կամ մութը պատած,
Ինձ ողջունում է թփերի միջից:

Երբ սառն աղբիւրի կարկաչը ձորում
Յուդիչ ցընորքով սիրտըս պաշարած,
Ինձ խորհրդաւոր երգ է թոթովում
Այն երկրի մասին, ուր ինքն է ծնած.—

Այնժամ դադարում է իմ յուզուած հոգին,
Մըռայլ ճակատիս թախիժը ցըրւում.
Եւ ես զգալով բախտը երկրային,
Հոգով տեսնում եմ Աստծուն երկնքում...

ԼԵՐՄՈՆՏՈՎ. Թարգմ. Ա. Ծատուրեան

105 Լ Օ Ռ Ի

Այն Լօռու ձորն է, ուր հանդիպակայ
Ժայռերը խորունկ նօթերը կիտած՝
Դէմուդէմ կանգնած, յամառ ու անթարթ
Հայկացքով իրար նայում են հանդարտ:
Նրբանց ոտքերում դազազած դալի
Գալարւում է գիժ Դև-Բեդը մոլի,
Ուրազար թըռչում քարերի գլխով,
Փըրփուր է թըքում անզուսպ երախով,
Թըքում ու զարկում ժեռուտ ափերին,
Փընտրում է ծաղկած ափերը հին-հին,
Ու գոռում գիժ-գիժ.
—Վաշ-վիշշ՝ վաշ-վիշշ...

Մութ անձաւներից, հազար ձկերով,
Քաջքերն անհանգիստ հըտպիտ ձայներով
Դէի հառաչանքին արձագանք տալի,
Ծաղրում են նրբան գոռոցն ահելի
Ու կրկնում գիժ-գիժ.
—Վաշ-վիշշ, վաշ-վիշշ...

Գիշերը լռանի երկչոտ շողերը
Հէնց որ մըտնում են այն խաւար ձորը՝
Ալիքների հետ խաղում գոռալով,
Անյայտ ու մռայլ մի կեանքի գալով՝
Ոգի է առնում ամեն բան այնտեղ,
Շընչում է, ապրում և մութն և անեղ:

Այս տախտի վրայ աղօթում մի վանք,
Այն ժայռի զլիխին հսկում է մի բերդ,
Մուժ աշտարակից, ինչպէս զարհուրանք,
Բուռի կռիւն է տարածւում մերթ-մերթ,
Իսկ քարի զլիխը՝ լուռ մարդու նման,
Նայում է ձորին մի հին խաչարձան:

Յովհ. Թումանեան

106. ԻԳԻԹԻ ՍՊԱՆՈՒԻԼԸ

Ինչպէս մի հեղեղ վեր կենար յանկարծ,
Երկընթի մըթնած ամպերից իջնէր.
Ինչպէս փոթորիկ սաստիկ սրընթաց,
Գիւղից սըլացան մի խումբ կըտրիճներ:

Յաւից տաքացած՝ էլ բան չեն հարցնում,
Թըռչում են, ասես ահից հալածուած,
Ու նըրանց առջև ահռելի բացւում,
Թըշշում է ձորը արիւնոյ լըցուած:

Գիւղը դատարկուեց մի ակընթարթում.
Քարտիի զլիխն կանգնած անհամբեր,
Լճու, սըրտատրոփ ականջ են դընում,
Նայում են ներքե... ձայն չի դալի դեռ.

Դեբեղն է միայն անդընդում յուզուած՝
Խըլածայն ողբով սուրում դէպի ցած:

Ու մարդասպանը դուրս եկաւ ձորից,
Դէմքը ալալած, քալուածքը մոլոր.
Սարսափ է կաթում արնոտ աչքերից,
Եւ կերպարանքը փոխուած է բոլոր:

Առանց նայելու մարդկանց երեսին,
Առանց խօսելու, սեականած, դաժան,
Մօտեցաւ սրահին, կախ տուաւ սընին
Սև հրացանը, սև օձի նըման:

Պապաձուեց նոյնպէս ամբոխըն մեխուած,
Ոչ որ ծըպըտալ չի համարձակում,
Մենակ մի հոգի անգուստ կատաղած՝
Հարայ է կանչում, երեսը պոկում:

Մեռած չորանի նանըն է նա՝
Յաւից խելագար բառաչում, լալիս.
Տարաբախտ ծընող, վազում է ահա,
Զորիցն է տըխուր գոռոցը գալիս:

Յովհ. Թումանեան

107. Հ Ա Մ Ե Ր Գ

Վըտակը ժայրից ներքե է թռչում,
Թափ առած ընկնում քարերի գըլխին,
Զարկում աւազին, չաչում է, ճըչում,
Ճըչում անհանգիստ, փրփուրը բերնին:

Ինչպէս ծերունին, ձայնով պառաւած,
Զայնակցում է ժիր թոռնիկի երգին,
Այնպէս է ծերուկ անտառը կամաց
Արձագանք տալի ջրրի աղմուկին:

Սակայն բընութեան զըւարթ համերգի
Ունկընդիրն անխօս, յաւիտենական,
Ժայռը մըտախոհ իր մըռայլ մըտքի
Ետեից ընկած լըսում է նըրան:

Յովհ. Թումանեան

108. ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ՆԿԱՐԻ ԱՌՁԵԻ

Ելած՝ ովկիանի անգուստ ալիքներ
Ծանրը յորձանքով զարկելով զէպ վեր

Լեռնանում էին գոռալով ասեղ,
Եւ մըրրիկն ուժգին շընչում էր այնտեղ
Անեղր ու անվերջ
Տարածութեան մէջ.

«Պանգնեցէք», դոչեց վըրձինը ձեռքին
Կախարդ ծերունին յուզուած տարերքին,
Եւ լուռ, հընազանդ հանճարի ձայնին,
Մութ ալիքները՝ փոթորկի ժամին
Կըտաւի վըրայ
Պանգնած են ասա,
Յովհ. Թովանեան

109. Մ Ա Յ Ր Ի Կ Ս

Հայրենիքէս հեռացել եմ,
Խեղճ պանդուխտ եմ, տունն չունիմ.
Աղիւղ մօրէս բաժանուել եմ,
Տխուր, տրտում, քունն չունիմ:

Սարէն կուգաք նախշուն հաւքեր,
Ա՛խ, իմ մօրը տեսել էք.
Ծովէն կուգաք մարմանդ հովեր:
Արդեօք բարե բերե՞լ էք:

Հաւք ու հովեր եկան կշտիս,
Անձէն դիպան ու անցան.
Պապակ սրտիս,—փափաք սրտիս՝
Անխօս դիպան ու անցան:

Ա՛խ, քու տեսքին, անուշ լեզուին
Պարօտցել եմ, մայրի՛կ ջան,
Երնէ՛կ, երնէ՛կ, երազ լինեմ,
Թըռչիմ մօտդ, մայրի՛կ ջան:

Նրբ քունդ գայ, լուռ գիշերով,
Հոգիդ գրկեմ, համբույր տամ,
Սրտիդ կպնիմ՝ վառ կարօտով,
Լամ ու խնդամ, մայրիկ ջան:

Ա. Խաչակեան

Համեմատեցէք այս և Շահադիզի «Երազը»:

110. Գ Ի Շ Ե Ր

Շղարշ ամպերն երկինքն առան,
Լուսնակն աղօտ կը շողայ,
Լուիկ ճանճում հարհանդ-մարմանդ,
Նուրբ եղեգնը կը գողայ:
Մռայլ-ափին մենակ նստած
Սիրտս անուշ կը թախծի.
Եւ անուրջում միտքս թաղուած,
Քունն աչքերիս կը հանգչի...

Ա. Խաչակեան

111. Ձ Մ Ե Ռ

Պարզեկայ գիշեր...
Աստղերն երկնքում լուռ պսպղում են.
Լուսնի շողերը դիպել են սարի
Ձիւնոտ կողերին, — կողերը ցորում.
Պէծին են տալիս:

Յրտաշունչ քամին
Թևերը փռած՝ փնչում է, թռչում,
Սառած երկիրը՝ ճաքում-ճաքճքում,
Ձեան հատիկներով քարափի կուրծքը
Ծեծում ու ծեծկում...

Անծայր ճանապարհ...
 Առաջ եմ գնում, — հւր. — ես չգիտեմ,
 Սառսյոյ ու ձմեռ,
 Առաջ եմ գնում անյոյս, անընկեր,
 Գամի ու գիշեր.
 — Ախ, եթէ յանկարծ յոյսս շողշողար,
 Նա ինձ ողջունէր...
 Աւ. Իսահակեան

112. $U \quad U \quad \partial \quad 4 \quad U \quad l$

Մահկալ ես, բեզարած ես,
Առը շո՛ւռ առուր, շո՛ւռ արի.
Ծովի պէս քրտորնած ես,
Եղնե՛րն արձակի՛, տո՛ւն արի,

Կաթի սէրը քաշել եմ,
Դրել եմ հովի՛ն՝ սառի.
Այ գոգնոցս փռել եմ,
Արի՛ թառա՛ն, թր՛ռն արի:

Դադրած, բէզարած եմք ջան,
Ամպերն ելան, դէհ, արի,
Բէզարած ջանիդ զուրպան,
Ծաից թև առ, թէզ արի:

Ա. Իսահակեան

113.

—Որովհան աղբէր, սարէն կուգաս,
Սարի մարալ կը փրնտուես.
Ասան, եարսօր դուն չը տեսնիր
Իմ մարայրս, իմ բալէս.

Դարդի ձեռքէն սարերն ընկաւ
Իմ արեւս, իմ բալէս.
Գրլուխն առաւ քարերն ընկաւ
Իմ ծաղիկըս, իմ լալէս...

— Տեսայ, քոյրիկ, նըշխուն բալէդ
Կարմիր-կանաչ է կապիլ,
Սիրած եարի համբուրի տեղ
Սըրտին վարդեր են ծըլեր».

— Որովան աղբէր, առա եարաբ
Ո՞վ է հարսը իմ բալիս,
Ո՞վ է գըրկում չոր գըրլուխը
Իմ մարալիս, իմ լալիս:

— Տեսայ, քոյրիկ, դարդոտ բալէդ
Քարն է գըրեր բարձի տեղ,
Անուշ քընով տաք գընդակն է
Կըրծքում գըրկեր եարի տեղ.

Սարի մարմանդ հոփն է շոյում
Ճակտի փունջը մարալիդ,
Ծաղիկներն են վըրան սըգում,
Ագիգ բալիդ, խեղճ լալիդ»...

Աւ. Խաչապետ

Համեմատիր «Զարմայր Նահապետի մահը» Պատկանեանի.
«Անուշի մահը» Թումանեանի, և «Հերոսի շիրիմը» (մի հոգեհանս
գիստ) Կուրդիսեանի.

Նման գայլերի խըմբին ամենի,
Չըմբան գիշերին օռնում է քամին.
Եւ իմ պարտիզում—մռայ, ամայի,
Խեղճ ուռիներիս ջարդում է քամին:

Ա՛խ, մանկուց լացեց քու սէրը, սիրտ իմ,
Ոչ ոք չհասկացաւ երազըդ աղւոր.

Զուր մի որոնիր սիրտ մի մտերիմ,—
Ծնւել է հոգին յաւէրժ մենաւոր:

Հանիր քու սէրը սրտիցըդ անյոյս,
Այդ խորթ, ապօրէն զաւակն աշխարհի.
Քրցիր այս դաժան, մոռթ գիշերին զուրս՝
Ցուրտ քամու բերան... Թող երթայ սառի...

Թող լայ, հեծեծայ սէրըս՝ որբ, անմայր:
Եւ քամին լացը նորա թող տանի
Ալէկոծ ծովեր, անապատ մի վայր,
Սակայն մարդու մօտ... երբէք չը տանի...

Օռնում է քամին, վայում դժընդակ
Մռայլ գիշերին ձիւն-ձմերայնի.
Ախ, սէրըս ջարդուած ուռիների տակ
Մեռնում է մենակ.— Թող երթայ մեռնի...

115.

Կուղեմ լինիմ վշտի ցողեր	Կուղեմ լինիմ ծառ ու ծաղիկ,
Աչքերիդ մէջ շող-կայծեմ.	Քեզ գրկումըս նինջ սփռեմ.
Հոռ գիշերուայ անուշ հովեր,	Թալուկ ստուեր, թովիչ թռչնիկ,
Փունջ-ծամերդ փայփայեմ:	Օրօր ասեմ, օրօրեմ:

Կուղեմ լինիմ վարդ-նազելի	Ի՞նչ որ ցանկաս, կուղեմ լինիմ,
Կըրծքիդ վերայ վառվում,	Լինիմ երկինք ու երկիր.
Արշալոյսի շողեր ոսկի	Լինիմ ծով, ժայռ, արև՝ լուսին,
Դէմքիդ վերայ փայլիլիմ:	Միայն, միայն ինձ սիրիր...

Տես Յովհաննիսեանի. «Կուղէի լինել». Քուչակի շես ձագ ծի-
ծեռնակ» և Պեշիկթաշեանի «Զուր էր թէ գեփուռիկ»:

116. ԻՄ ՍԻՐՏՆ ԱՅՆՏԵՂ Է

Իմ սիրտն այնտեղ է—հայրենի, հօր
Լեռների գլխին, արծիւների մօտ,
Որ ամպերի պէս՝ խրոխտ, ահաւոր,

Նետում են, շնչում կայծակ ու որոտ
 Դուք, ըմբոստ քաջեր, ուզամիկներ վսեմ,
 Անյաղթ իշխողներ մահին ու կեանքին.
 Ձեզ հետ է հոգիս, և ներբողում եմ,
 Եւ երկրպագում ձեր արնոտ ուղին:
 Դուք, հայրենիքի ազատ ոգիներ,
 Ձեր սպառազէն, կռու բռունցքներում
 Սուրբ իրաւունքի և ազատութեան
 Անշիջանելի հուրն է բռնկւում:
 Իջէք, մրրիկներ, դաշտն ի վայր իջէք,
 Մարդկութեան մրուր — նողկանքը սրէք,
 Փշրէք շղթաներն, լծերը բոլոր:
 Դարերի ծանր խաւարը ցրէք,
 Որ կաշկանդել է ազնիւ մեր հոգին
 Անմահ մեր մտքի թևերը բացէք, —
 Պայթէք, կայծակներ, սլայթէք խստագին...

Աւ. Դսահակեան

117. ՀԵՐՈՍԻ ՇԻՐԻՄԸ

Ո՛չ խաչ, մահարձան... անշուք հողակոյտ
 Ամայի դաշտում լճու առանձնացած
 Ընկած է անսիրտ:

Անթիւ վերքերով վիրաւոր կրծքում՝
 Վեհ գաղափարի անյաղթ փոթորիկ
 Էլ չի աղմկում:

Յոգնած գլուխը մայր հողի կրծքին
 Յաւոտ աշխարհի լացը չի լսում՝
 Քնած է հոգին:

Աստղերը — կանթեղ ցոլքով հրավառ
 Շիրմին լոյս տալիս. բոյսը բուրմունքով
 Խնկարկում բուրվառ:

Քամին թևերով գգւում է, դողում
Ու մահասարսուռ ձայնով վշտացած
Ողորմի՛ ասում:
Ո՛չ խաչ, մահարձան... կեանքի խաչը նա
Այնպէս անվեհեր, ամենքի համար
Տարաւ Գողգոթա...
Շուշանիկ Կուրդինեան

118. Թ Ա Ր Թ Ա Ր

Մռայլ, ահաւոր ձորի անդընդում
Թարթարը անվերջ գոչում է, թնդում.
Հսկայ վիշապի նման կատաղած՝
Ըռաջ է վազում յուզուած, փրփրած.
Առաջ է վազում նա գալարուելով՝
Գետնի ապառաժ կուրծքը ճղքելով,
Բարձր մռնչում, գոչում է ուժգին,
Իր ահեղ ձայնով տատանում չորսդին.
Շարժում է տեղից լեռնոտ գետափը,
Ծեծում ու քերում ժեռ ու քարափը:

Նեղուած ավերից դաժան, անողոր՝
Գետը զայրացած բառնում է բողոք.
Բայց այնտեղ ահա ծառերը դալար
Երկու ավերից կազմել են կամար
Եւ խոնարհուելով՝ կարդում են յորդոր,
Որ հանգստանայ գետը ահաւոր.
Արեն էլ շողքը կապոյտ երկնքից
Գցել է ներքե ճիւղի արանքից,
Ջուրը փայփայում, հետը խաղ անում...
Սակայն նա դարձեալ աղմուկ է հանում:

Եւ անդնդախոր ձորի եզերքին,
Ուր ամբառնում են ծառերը երկին:

Նեղ, օձապտոյտ շաւղի վըրայով,
Տեա, կարաւան է ընթանում անով:
Ձորը բաց արած անեղ բերանը՝
Ուզում է կուլ տալ ողջ կարաւանը.
Մի թեթև՝ շարժում, անզգոյշ մի քայլ —
Նա կը գլորուի անդունդը մռայլ.
Ձայրագին, յուզուած Թարթարը այնտեղ
Քեղդամահ կանի իր զոհին անմեղ...

Յար. Թումանյան

119. Լ Ա Լ Ո Ի Ա Ր Ս Ա Ր Ը

Ծագում է մանուկ արեւ դարնան
Կովկաս լեռների ձիւնի պատնէշից,
Ջարթում են մէկ-մէկ սարերն աննըման
Ձմրան անվրդով քնի մշուշից.
Ահա Լալուարի վիթխարի ուսին
Բազմում է արփին թարմացած ուժով,
Սարեր ու ձորեր իրար երեսին
Նայում են, ժրպտում ամպի մշուշով...
Վերջին ձիւներն էլ ահա հալ ընկան,
Արտասուեց իսկոյն լեռների հսկան.
Ամեն մի ձորից աղբիւր է հոսում,
Ամեն մի թփից բլւլբլւ է խօսում:
Ե՛ւ դալար հովիտ, և՛ ժայռի կրծքեր
Արձադանք տալով գարուն են հընչում.
Ձմրան փարախից հովուական երգեր
Ձեփիւտի թևով սարերն են թռչում:
Ծաղկալից աշխարհ անվերջ ձորերի
Բացում է, ժրպտում կոկոնից զուարթ.
Փարթամ գեղութեան ոգին Գուգարքի
Շընչում է գարնան բոյրով անարատ:
Ամպերն էլ իրար համբոյրներ տալով,
Ջրում են կայտառ, Լալուարը գըրկում,

Առաջին անգամ թունդ որոտալով,
 Գուդարք աշխարհին ողջոյն են երգում,
 Եւ հայրենիքում փայլակ կայծակի
 Գիշերուայ դրոշմած գաղտնի համբոյրներ,
 Երգում են երկրին սէրը երկնքի,
 Դողում են սիրուց սարեր ու ձորեր:
 Եւ խորհրդաւոր մի թովիչ ձայնով
 Խօսում են նըրանք, իրար հետ փարւում,
 Երգում են, խընդում, հագար բերանով
 Լալուարի վիթխարի հասակը գովում:
 Վ. Միլրաքեան

120. Ս Ա Մ Գ Ն Ա Լ Ը

Անձ գարնան հետ և շարան-շարան
 Դաշտավայրերից դէպի գով սարեր
 Ձգուեց սայլերի, ուխտերի քարան—
 Փախչում են շոքից թէ թուրք, թէ հայեր:
 Թընդում են ձորում զանգի հընչիւններ,
 Ձիերի խրխինջ, պայտերի դոփիւն,
 Մէկ-մէկի կըցած անվերջ քարաններ
 Քաշում է նառը, ահեղ մոնչում,
 Ո՛րը տանում է ալաշխի քէշան,
 Կուժն ու խնոցին, ճիպոտն ու չաթան.
 Ո՛րն էլ դարդարուած գիր ու փնջերով
 Օրօրւում, անցնում լեռան լանջերով:
 Բայց նառն ինքնագոհ քայլում է հանդարտ,
 Բոժոժ ու զանգեր վըզին ու կըրծքին,
 Եւ օրօրելով կապերտներ ու զարդ,
 Գեղեցիկ հարսն է նա տանում մէջքին.
 Մերթ բարկանալով, կանգնում է հպարտ,
 Մերթ փրփուր թափում կատաղած բերնով,
 Մերթ երկար շուրթը կախելով բարդ-բարդ
 Նա պարծենում է գեղեցիկ բեռով:

Բռնել է ճամբէն թունդ իրարանցում,
Դոփում են ձիեր, սանձերը կըրծում—
Ազնիւ մետաքսից ոսկեթել գործած,
Աղաջարիներ թամբերին գըցած,

Հուժկու կըրծքերից կապած թալիսման,
Արեւելեան ճոխ արծաթն ու ոսկին,
Ճերմակ դաթիւբան, քողն ամպի նման
Փրփռում են սիրուն հարսների դէմքին:

Լեռների տօնն է. մարդ և անասուն
Ուրախ երգերով դիմում են սարեր,
Մոռնալով ձմռան քաշած վայնասուն,
Ծաղիկ փնջելով անցնում են ձորեր.
Անցնում են արագ քոչ-քոչի միջով,
Գարնան արեւից փայլում են զէնքեր,
Իւ թարմ կենսարոյր թաւիչ կանաչով
Բացւում են, ժրպտում սարւորի դէմքեր:

Փոքրիկ երեխան պինդ մէջքին կապած՝
Խեղճ հովուի կիներն էլ վազում է ոտքով,
Օգնում է մարդուն՝ գոհ և սըրտաբաց
Բախտի որոշած ծանր վիճակով:

Մայում են, բայում գառնն ու մաքին,
Թընդում կովերի, հորթերի բառաչ.
Իսկ տըրլնգալով գոմէշը ձագին
Կանչում է՝ դանդաղ վազելով առաջ:

Վազում են յոգնած շները հօտի,
Եւ լեզուն հանած թանչին են տալիս.
Լսում է յանկարծ ձայնը լակոտի,
Որ քոչից ընկած՝ կալանչ է զալիս:

Քարւանի ծայրը սարերը հասաւ,
Հասաւ ու ձուլուեց թուխ ամպերի հետ,
Վըրան-վըրանի հտեից բըսաւ
Ծաղիկների մէջ գոյն-գոյն, սիգաւէտ:

Այաչուխ, դագա, անվերջ վըրաններ
Շըրջան կազմելով սառն աղբրի ափին,

Խնչպէս ծեր արծուի կարկատած բըներ,
 Յենուեցին մէկ-մէկ բարձրը քարափին:
 Դաշտեցի հայն էլ սառ ջրրի կարօտ՝
 Եկել է, դըրել բինէն այս ամառ
 Լօք, Լալուար, Լեջան աղբիւրների մօտ,
 Շորերից ազատ ապրելու համար:
 Գուգարք սարերի սիզաւէտ լանջին
 Բազմել են հայի, թուրքի բինաներ,
 Բայց դարձեալ խառնուած քոչ-քոչի միջին՝
 Դեռ երերում են ուղտի քարաաններ:
 Խըրժնջում է ձին, կովը բառաշում,
 Բոլորն էլ իրանց իւրտն են ճանաչում:
 Բայում է անուշ ամլիկը գառան,
 Սարեր ու ձորեր նորից կեանք առան:
 Գիշերը հասաւ, մըթին է ճամփան,
 Մարում է կամաց աղմուկը քոչի,
 Առուակի ափին քարուաններն իջան,
 Կանչում են՝ «տըղերք, ապրանք չկորչի»:
 Սայլերի ճրուռոց, ոչխար ու տաւար
 Գրտնելով ձորում գիշերն իջան,
 Հանգիստ են առնում միւս օրուան համար:
 Կըրակի վրայ առուակի ափին,
 Մի տեղ ընթրիք են շտապ պատրաստում,
 Մի տեղ էլ կորած գառանն ու հորթին
 Սար ու ձոր ընկած հովիւն է կանչում:
 Մի այլ տեղ ուրախ շըրջան բոլորած,
 Ուտում են նըրանք կաթ ու խորոված:
 Գիշերն էլ արդէն քնում է, լըռում:
 Յողնած քոչւորին հանգիստ քուն բերում...
 Սարի փէշերը կախած մի ծայրին,
 Լալուարն էլ կարծես նոյն վիշտն է զգում,
 Խնչպէս վիրաւոր արծիւը ժայռին,
 Թեւերը փռած քոչւորին հակում:
 Բայց Լօք սարերի կանաչ լանջերում
 Մի բինա էլ կայ, որ դեռ չի քընում:

Այնտեղ խաբոյկի շուրջը բոլորած՝
Տեսած ու լսած արկածն են պատմում,
Եւ մեծ ու փոքր ականջներ լարած՝
Աշուղ Գիքոյի երգերն են լսում.
Պատմում է, երգում աշուղն անցեալից,
Ձորերում տեսած հին իգիթներից,
Կըրակին դըցած կաղնի մեծ գերան՝
Սարուորն էլ արթուն լսում է նըրան:

Վ. Միրաքեան

121. ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԳԻՇԵՐ

Սարերին բազմեց սեահեր գիշեր
Աստղերը ճակատին
Ու քանդեց-թողեց ծամերը սե-սե
Շաղ տուեց չորսդին:
Հէքիաթի նման աղբիւրն է հոսում
Գիշերուայ դիւթիչ շուրթերի վրան,
Կարծես թէ խորքից Աստուած է խօսում,
Եւ աշխարհ դիւթուած լսում է նրան:

Այն գիժ ձորոխի ժայռերն են ահա,
Որ ինչպէս մթնած երկու մռայլ ամպ
Կարծես դիմարգել երկու աժդահայ՝
Իբար են նայում կանգնած պատանմամբ:

Այն գիժ ձորոխն է, որ անեղ ձորում
Քարուանի նման չըւում է իր չուն,
Որ մէկ գոռում է, մէկ նուազ մարում.
Պտրելով ճամբայ խաւարի միջում:

Հանգչում են, հալչում ձայներն աշխարհի,
Հնչում է ժամը խորին պապանձման,
Դիզւում են, կապւում ջրերը երկրի
Եւ ականջ դնում գիշերն Համբարձման:

Միրուն հարսի պէս զուգուած են ծաղկունք,
Մ'նում է անտառն ուրախ հարսանիքի,
Մինչև որ երկնից կիջնի սուրբ մի տուրք,
Կը խօսեն բոլոր, փարուին մէկ մէկի.

Դերենիկ Դեմիրջեան

Բ. Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

122. Կառավարութիւնը ճիշդ հայոց մէջ

Կառավարութեան սկիզբը խոր հնութեան մէջ ծածկուած է: Իւրաքանչիւր ժողովուրդ, երբ միասին հաւաքւում են՝ ընկերութեամբ կեանք վարելու համար, պէտք է կարգաւորեալ կառավարութիւն ունենայ որոշ օրէնքներով:

Բայց կառավարութեան մէկ կամ միւս ձեր կախուած է երկրի զրութիւնից, ժողովրդական կեանքի հանգամանքներից և շրջակայ ազգերի բնաւորութիւնից: Պատմութիւնից տեսնում ենք որ ժայռոտ, աւազոտ, քարքարոտ տեղերում և ծովային ափերի մօտ բնակող ժողովուրդները իրանց չոր ու ցամաք երկրի պատճառով, շուտով ստիպւում են դաշտային երկիրները ասպատակել՝ կողոպուտ անելու գիտաւորութեամբ: Այսպիսի ժողովուրդների մէջ բնականաբար գերազոյն իշխանութիւնը անցնում է հէնց սկզբից այն գերզաստանի ձեռքը, որից դուրս են գալիս քաջասիրտ և յաջողակ առաջնորդներ, կազմւում է ժառանգական հարստութիւն և միապետական իշխանութիւնը անզգալի կերպով հաստատութիւն է ստանում: Ուրիշ բան է պատահում հովուական ու երկրագործական ժողովուրդների մէջ: Այստեղ առանձին գերզաստաններ են միանում և ցեղական ընկերութիւններ են կազմում առանձին ցեղապետների պաշտպանութեան տակ, որոնց պարտքն է հովուել իրանց ցեղը և պաշտպանել նրա սեփականութիւնը և աշխատանքի պտուղը անիրաւութեան դէմ: Այստեղ արիւնակից գերզաստաններ կամաց-կամաց ցեղական ընկերութիւններ կազմելով՝ գերզաստանի հօր ի-

բաւուրներն էլ անցնում են ցեղապետին և այսպիսով կազմւում է կալուածական կամ տանուտիրական կառավարութիւն, որ հայոց էլ իբրև հովուական ու երկրագործական ժողովրդի, սեպհական էր սկզբնական ժամանակում: Մեր առաջին նահապետները, մինչև Արամը, ժողովրդեան համար ոչ այլ ինչ էին, բայց եթէ հայրեր, որոնք խնամում էին իրանց ցեղը այնպէս, ինչպէս որ գերդաստանի հայրը հոգւում է իր որդւոց պիտոյքը, կամ ինչպէս այժմեան գիւղական կեանքում տանուտէրը կամ ծերը կառավարում է իր գիւղը: Զանազանութիւնը միայն նրանումն էր, որ մեր նահապետների մէջ միշտ կար մէկը, որ ժառանգութեամբ ստանում էր ազգի ընդհանուր կառավարութիւնը և որի հովանաւորութեան տակ գտնւում էին միւս բոլոր ցեղապետները: Այս առաւելութիւնն ունէին Հայկից յետոյ ուրիշ զծով յաջորդող նահապետները, որոնց տանուտիրական իրաւունքների ընդհանրութիւնը հիմնւում էր ժառանգական սեպհականութեան վրայ, որով մէկը, իբրև գլխաւոր նահապետ, իր ուղածին պէս կամ հին սովորութեան համեմատ՝ բաժանում էր կալուածները արիւնակից ցեղերին: Բայց այս գլխաւորութիւնը այնպէս անզգալի էր, որ երբեմն գլխաւոր տանուտէր նահապետը իր հայրերից իրան ժառանգութեամբ ընկած երկիրը թողնում և ուրիշ տեղեր էր գաղթում: Այսպէս՝ Ամասիան թողնում է Արմաւիրը և դնում է Մասիսի ստորոտը գաղթում, Գեղամը գաղթում է Սևանայ լճի ափերը և այն կողմերը իրան սեպհականում: Սրանից երևում է, որ գլխաւոր նահապետի իրաւունքը շատ չէր զանազանւում երկրորդական նահապետների կամ ցեղապետների իրաւունքից:

Այս տանուտիրական խաղաղ ու պարզ կառավարութիւնը տեւեց հայոց մէջ մինչև այն ժամանակ, երբ Հայկի սերունդը սկսեց շփուիլ զբացի ազգերի հետ, որոնց յարձակմունքներից պաշտպանուելու համար՝ հարկ էր բոլոր ցեղերը միացնել և մէկ մարմին կազմել նրանից՝ մէկ անձի հրամանի և իրաւունքների տակ: Այս բանը կատարեց

Արամը, որ միապետական իշխանութեան սկիզբը դրեց Հայաստանում: Արամի հաստատած միապետութիւնը ժողովրդական կեանքի հանգամանքներից բղխելով և ոչ իշխանական փառասիրութիւնից՝ արդիւնաւոր հետեանքներ կ'ունենար հայոց համար, եթէ Ասորեստանի տիրապետութիւնը չընդհատէր այդ բնական ու պարզ կառավարութիւնը: Նինուէի թագաւորները ուրիշ նահանգների պէս Հայաստանն էլ կառավարեցին մինչև ութերորդ դարի սկիզբը և նրանից յետոյ էլ մինչև Պարոյր՝ բնիկ կուսակալների ձեռով, որոնց գլխաւոր պարտքն էր հարկ հաւաքել՝ մէկ մասը թագաւորութեան և միւսը իրանց պիտոյրի համար: Նրանք իրանց ձեռքի տակ ունէին բազմաթիւ դատաւորներ, որոնք ցրուած էին երկրի բոլոր նահանգներում և փոքրիկ գաւառներում: Այս վերջինները ունէին իրանց տեղական կառավարիչները, որոնք առանձին խորհրդի միջնորդութեամբ հոգում էին ժողովրդի պիտոյքը:

Տարակոյս չկայ, որ այս վարչական ձևը առանց ազդեցութեան չմնաց հայոց կառավարութեան վրայ Պարոյրի և նրա յաջորդների ժամանակ, որոնց կառավարութեան եղանակի վրայ թէև ոչինչ չենք իմանում, այնուամենայնիւ հաւանական է, որ սրանց կամ աւելի ճիշտ՝ Տիգրանի ժամանակ, մտած լինին հայոց մէջ առաջին կարգաւորեալ կառավարութեան ձևերը՝ բարեկարգ դատաւորներով, գլխաւոր օրէնքներով և դաշնադրութիւններով և այլն, որոնք պարսից և յունաց լեզուով էին զբրւում:

Ս. Պալասանեան

123. ՀՈԴԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՌԵՒՏՈՒՐԸ ՀԱՅՈՑ ՄԷՁ

Հայերը ի բնէ ժիր և աշխատասէր ժողովուրդ լինելով՝ շատ վաղ ժամանակներից իրանց տուին երկրագործութեան և անասնապահութեան: Հայաստանի բերրի դաշտերն ու ձոխ արօտատեղիքը այն բնական ձգտողութեան զօրաւոր պատճառներն են: Բացի սրանից՝ զրադաշտական

վարդապետութիւնը երկրի մշակութիւնը մարդու հարկաւոր առաքինութիւններից մինն էր համարում: Հայաստանի արգասանդ դաշտերը տարէ ցտարի առատութեամբ տալիս էին ցորեն, գարի, բրինձ, հովիտներն էլ, որոնք լի էին արօտներով, մնուցանում էին անհամար ընտանի կենդանիներ՝ ձի, ջորի, զօմէշ, ոչխար, այծ, էշ ու կով: Բացի սրանից՝ իւրաքանչիւր նահանգ կամ գաւառ կլիմայի և դրութեան համեմատ՝ տեսակ տեսակ բերքեր ու հանքեր էր տալիս: Իւսիսային արևմտեան կողմերը տալիս էին աղ և բիւրեղ, Աղձնիքը և Տուրուբերանը ունէին պղնձի, երկաթի և կապարի հանքեր, Արարատը և Սպերը ոսկի, Փայտակարանի կողմերը բամբակ, Տուրուբերանը՝ գազպէն ու մեղր, Գողթան գաւառը՝ անուշահոտ ու առատ գինի, Տայրը՝ թուզ, նուռ, սերկէիլ ու նուշ, Ուտի նահանգը՝ ձիթինի, Այրարատը որդան կարմիր ներկը: Երասխի ափերը և Սիւնեաց, Փայտակարան նահանգների անտառները տալիս էին ամեն տեսակ ազնիւ փայտեր, որոնց դործ էին ածում պալատների շինութեան համար:

Այսպիսի բնական ու արուեստական բերքերով լի երկիրը, ժողովրդեան պիտոյքը լցնելուց յետոյ, բնականաբար ընդարձակ վաճառականութեան աստարէզ պէտք է բանար հայոց համար: Եւ յիշուի, հայերը նշանաւոր էին իրանց վաճառականութեամբ ամենահին ժամանակներում: Հայաստանը թէև ցամաք երկիր է, բայց իր շուրջը երեք ծով ունի, մէջը չորս երևելի գետ, որոնց միջնորդութեամբ միանում է ծովերի հետ: Ճորոխ գետով կապւում է Սև ծովի հետ, Երասխ գետով միանում է Կասպից ծովի հետ, Եփրատ ու Տիգրիս գետերով միանում է մէկ կողմից Ուկրաինայի հետ, իսկ Եփրատը Սամոսատի և Մարաշի կողմից մօտենում է Միջերկրական ծովին: Այսպիսի դիրք ունենալով՝ Հայաստանը դիւրութեամբ կարող էր վաճառականական յարաբերութիւններ ունենալ նոյն ժամանակի բոլոր ծանօթ ազգերի հետ:

Բայց ծովային վաճառականութիւնից առաջ սկսուեց հայոց մէջ ցամաքայինը. այս վերջինն էլ սկզբումը դրա-

ցի ազգերի հետ էր լինում, որոնց հետ հայերը փոխանակում էին իրանց բերքերը: Յետոյ կամաց կամաց սկսեց հեռաւոր երկրներ դնալ և աւազակների յարձակմունքից ազատ մնալու համար՝ կարաւաններով, այսինքն՝ բազմութեամբ էին ճանապարհորդում ասիական սովորութեամբ, մինչև որ սկսան գետերի ու ծովերի վրայ գնալ: Այնուհետև ցամաքային վաճառականութիւնը, որ մեծ նեղութիւններով էր լինում, երկրորդական տեղն է բռնում և ծովայինը ընդարձակութիւն ստանում: Արևելքում հայ վաճառականները Երասխ և Կուր գետերով գնում էին Կասպից ծովը, այնտեղից էլ Եաքսարտէս և Ոքսոս գետերով բազորիացոց, սոգտիացոց, պարթեաց և հնդկաց երկրներն էին գնում և այնտեղից իրանց ապրանքները բերելով Սև ծովով՝ Յունաստան և մինչև Իտալիա էին ուղարկում: Արևմտեան հարաւում կարաւաններով Կապադովկիայից Փիւնիկէ էին հասցնում հայ երկրի բերքերը: Տիւրոսի և Տարսոսի վաճառանոցներում վաճառում էին հայոց երկրի բազմաթիւ ձիերն ու ջորիները. որոնց վրայ Սուրբ-Պիրքն էլ յիշատակութիւն է անում, և յետոյ տարածւում էին զրացի երկիրները, մանաւանդ Պաղեստին: Նրանց տեղ բերում էին Հայաստանի վաճառանոցները կամ, ինչպէս որ հները ասում էին, «շահաստան քաղաքները: ոսկի, արծաթ, գոհարեղէն, ազնիւ կտակեղէններ ու ներկեր, ցորեն, իւղ ու մեղր:

Աւելի յաճախ երթևեկութիւն ունէին հայերը Նինուէ ու Բաբելոն, ուր եփրատ ու Տիգրիս գետերի միջնորդութեամբ մեր վաճառականները տանում էին Հայաստանի գինին, մրգեղէնները, փայտը, տախտակը և ուրիշ վաճառքները, ու նրանց տեղ բերում էին Բաբելոնի գոյնգոյն թանկագին կտակեղէնները, կերպաները, գորգերը, որոնց մասին հարեանցի ահնարկում է Մ. Խորենացին: Հերոդոտոսը այսպէս է նկարագրում Բաբելոն գնացող հայ նաւերի կազմութիւնը. «Հայաստանում, ասում է նա, նաւերի կողերը ուռիներից են շինում և յետոյ դրսից մորթով պատում են. նաւի ոչ առաջին կողմը յայտնի է, ոչ յե-

տինը, սուր չեն, այլ վահանի նման բոլորակ։ Այսպիսի նաւերի մէջ ապրանք բարձելով՝ մանաւանդ գինի, երկու մարդ թի քաշելով, ասում է, տանում էին գետի վրայ»։ Յետոյ աւելացնում է. «Այս նաւերի մէջ մեծեր էլ կան, փոքրեր էլ. ամենից մեծերը մինչև 1000 լոտղանդ բռն էին տանում։ Իւրաքանչիւր նաւ ունի իր մէջ մէկ էշ, մեծերը աւելի շատ։ Երբ որ նաւավարները Բաբելոն են հասնում և բեռը թափում, փայտն ու յարդը ծախում են, քսկ մորթիքը էշերի վրայ բարձելով՝ Հայաստան են քշում այրովհետև անկարելի է գետի ընթացքին հակառակ գնալ, այնքան սրընթաց է. հէնց այս պատճառով նաւերը փայտից չեն շինում, այլ մորթուց»։

Ս. Պալասանեան

124. ՄԵՀՐՈՒԺԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ ԵՒ ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Ա

Մեհրուժանը Արծրունեաց հայ իշխանական ցեղից էր։ Նա շատ փառասէր էր և մտածում էր մի օր հայոց թագաւոր լինել։

Երբ մեռաւ Արշակ երկրորդը՝ Մեհրուժանը օգտուեց այդ դէպքից, դաւաճանեց իր հայրենիքին, ուրացաւ իր հաւատքը, անցաւ պարսից կողմը և դարձաւ կռապաշտ։ Պարսից թագաւոր Շապուհը, որ վաղուց ուզում էր վերջացնել Հայաստանում քրիստոնէութիւնը, շատ է ուրախանում Մեհրուժանի հաւատուրացութեանը։ Նա վճռում է, նրա օգնութեամբ նուաճել Հայաստանը և հայերին կրակապաշտ դարձնել։ Մատնիչ նախարարին աւելի զրաւելու համար՝ նա ընծայում է նրան շատ զիւղեր, կնութեան է տալիս իր քոյր Որմիգդուխտին և խոստանում է տալ նրան հայոց թագաւորութիւնը՝ եթէ միայն հնազանդեցնէ իրան հայ իշխաններին և մոցնէ իր մայրենի երկրում վռապաշտութիւնը։

Փառասէր Մեհրուժանը ուրախութեամբ ընդունում է

Շապուհի առաջարկութիւնը և ստանալով նրանից բազմաթիւ զօրք՝ արշաւանք է գործում Հայաստան, նա աւերում է շատ գիւղեր և քաղաքներ, առնում է մի քանի բերդեր, դերում է հայ իշխանների կանանց, հաւատացած լինելով, որ զրանով կրստիպէ նրանց ամուսիններին անձնատուր լինել իրան: Բացի այս՝ նա շղթայակապ ուղարկում է Պարսկաստան հայ եպիսկոպոսներին և քահանաներին, որ ժողովուրդը մնայ առանց հովիւների. այրում է ձեռն ընկած գրքերը, արգելում է հայերէն խօսել և ստիպում է բոլորին պարսկերէն սովորել:

Վշտացած Ներսէս կաթողիկոսը չդիմացաւ Մեհրուժանի այս չարագործութիւններին. նա ուղեց զրանց առաջն առնել և դիմեց յունաց կայսեր օգնութեան: Քրիստոնեայ կայսրը խղճաց հայերին, տուեց Յունաստանում գտնուող թագաժառանգ Պապին՝ Արշակի որդուն, օգնակոչութեան զօրք և ուղարկեց նրան Հայաստան:

Շքով և հանգիստով եկաւ Պապը հայրենի երկիրը, որ անհամբերութեամբ սպասում էր իր թագաւորին. խորը խոցուեց նրա սիրտը՝ երբ նա տեսաւ, որ ամենքը սգի մէջ են, երկիրը աւերակ է դարձել և նենգաւոր Մեհրուժանը տիրացել է իր թագաւորութեանը: Ունենալով պատրաստի զօրք՝ նա յարձակուեց գաւաճան իշխանի վրայ և կտրճ միջոցում քշեց նրան իր երկրից:

Զարասիրտ Մեհրուժանը ուղեց իր պարտութեան վրէժն առնել հայ նախարարներից. նա հրամայեց բերդապահներին՝ պարիսպներից կախել գերած կանանց և թողնել նրանց դիակները գիշակեր թռչուններին, ապա ինքը վախկոտ նապաստակի նման վախաւ Պարսկաստան:

Բ

Պարսից արքայ Շապուհը սաստիկ չարանում է իր սկսած գործի անաջողութեան համար. նա հաւաքում է անթիւ զօրք և նոյն Մեհրուժանի առաջնորդութեամբ ուղարկում Հայաստան: Յունաց կայսրը, իմանալով այս մասին՝ անօգնական չէ թողնում Պապ թագաւորին և տա-

լիս է նրան ընտիր գործ՝ պաշտպանելու անօրէն թշնամիների դէմ: Պատերազմը Զիրաւ դաշտում էր, երկու կողմի զօրքերը վստահութեամբ ճակատ ճակատի են տալիս: Սկսում է կատաղի կռիւը. գէնքերի շաշիւնը, զինւորների ազաղակները դրդեցնում են դաշտը: Հայ իշխանների մանուկները իրանց կամքով նոյնպէս վազում են կռուի դաշտը առաջնորդութեամբ Սմբատ Բագրատունու, որ ասպետական ցեղից էր ¹⁾: Նրանք խրոխտ կերպով ձի նստած, վահաններով զինւորուած՝ յարձակում են իրանց հակառակորդ պարսիկ մանուկների վրայ և նիզակահար անելով՝ գետին են գլորում նրանց զիւկները:

Արիւնահեղ տեսարանին վկայ էր Մեծն Ներսէսը, որ նստած Նպատ լեռան գագաթի վրայ, ձեռքերն երկինք ամբարձած՝ խնդրում էր Ամենակարողի պաշտպանութիւնը քրիստոնէայ զինուորներին: Ահեղ էր պատերազմը. զինուորները կռւում էին անասելի քաջութեամբ, կարճեռ ամեն մէկը ուզում էր զարդարել իր գլուխը յաղթութեան պսակով: Յանկարծ, կռուի ամենատաք բոպէին, երկինքը ծածկւում է ամպերով, մութ է պատում շորս կողմը .. Բարձրանում է սաստիկ հողմ, որ փչում էր ուղղակի պարսից դէմ: Զայն, աղաղակ է լսում թշնամեաց զնդերի մէջ, պարսից զինուորները շփոթւում են և յուսահատուած սկսում են փախչել: Բայց Մեհրուժանը յետ է մնում փախուկ պարսիկներից. նրա ձին վիրաւորուել էր: Սմբատ քաջը շտապով վրայ է հասնում, կալանաւորում է նրան և լաւ է դատում՝ չտանել նրան հայոց բանակը, որովհետեւ երկիւղ էր կրում, որ Մեծն Ներսէսը կարող էր իր մեծահոգութեամբ խղճալ դաւաճանին և ազատել նրան մահից: Այս պատճառով նա օգտւում է դէպքից, որ նոյն տեղում կրակի շուրջը նստած են եղել մի խումբ մարդիկ. վերցնում է նրանցից հրաշէկ շամփուրը և պսակաձև բոլորելով այն կալանաւոր մատնիչի գլխով՝ ասում է. «պսակում եմ քեզ, Մեհրուժան, որովհետեւ դու կամենում էիր լինել հայոց

¹⁾ Այս ցեղի իշխանները ասպետ էին կոչւում այն պատճառով, որ նրանք էին թագ ղնում հայոց թագաւորների գլխին:

թագաւոր. իբրեւ ասպետ դնում եմ այս թագը քո գլխին: Չգիմացաւ այս տանջանքին Մեհրուժանը. նա պատժուեց իր անթիւ հարագործութիւնների համար այս խայտառակ մտնով:

11. 11.

125. ԱՒԱՐԱՅՐԻ ԿՌԻԻՆԸ

Բոլոր ուխտապահները որ Աղուանքից եկած և Այրա-րատում դադարած էին ձմեռ ժամանակ, մեծ զատիկի տո-նին ուրախութեան աւետիս տուին իրարու կենարար յա-րութեան պատճառով. մի քանի օրից յետոյ լսեցին, թէ զօրք է եկել Հեր և Ջարեանդ գաւառը:

Մեծն Վարդան բոլորովին չթերահաւատեցաւ և չվա-խեցաւ. սիրտ տուեց ինքն իրեն և քաջալերեց զօրքերին: Իմաց արաւ ուխտապահներին, որոնք տօն օրերի պատ-ճառով իրենց տներն էին գնացել և ասաց, ահա մեծ գունդ է եկել հասել ու բերում է աստուծասէրների հա-մար երկնաւոր պսակներ, դէհ, ո՞վ ցանկանում է առնել, թո՞ղ շտապի. իսկ թէ ուրիշ կերպ մտածող կայ ձեր մէջը, ինչպէս ուրիշները, լաւ է թո՞ղ դադարի մնայ, ուր ո՞ր հա-ճելի կըլինի. որովհետեւ ո՛չ ոք պսակ ընդունել չի կարող, եթէ չտանջուի:

Նյս որ լսեցին ճշմարտութիւն և անմահութիւն սի-րողները, շտապեցին եկան Վարդանի յետեից. և հրամայեց նոցա ժողովուրի Արտաշատում, որովհետեւ դեռ իւր ձեռքն էր բոլոր երկիրը: Այնտեղից ուղարկեց Վարդան բոլոր մե-ծամեծների հաւանութեամբ՝ Ամատունեաց ցեղից մէկ իշ-խանի Առանձար անունով, մօտ երեք հարիւր ձիաւոր զօրք էլ հետը, որ գնան լրտեսեն թէ ի՞նչքան է Պարսից զօրքը, Առանձարն և այն զօրքը որ նորա հետ էր, տեսան պար-սից բանակը, և մի զօրեղ վերջապահ թևի վերայ ընկնե-լով, շատերին սրերի վերայ հանեցին¹⁾, ուրիշներին էլ

¹⁾ Այսինքն կոտորեցին, թրէ անցուցին:

փախցրին Պարսից զօրքի մէջ ձգեցին ու իրենք ողջ առողջ ուրախութեամբ յետ եկան Հայոց բանակը և պատմեցին Աստուծոյ ցոյց տուած զօրութիւնը. զօրագլուխների մասին էլ պատմեցին թէ Մուշկան Նիւսալաւուրտն և Դողմն են. այն էլ հաղորդեցին, որ թշնամին շուտով կը հասնի Հայաստանի միջին գաւառները:

Այս որ լսեց սպարապետը՝ շտապեցան Պարսից դէմ գնալու, գուցէ, ասացին, հէնց այն տեղ չեր և Զարեանդ գաւառում կարելի լինի վերջ տալ պատերազմին:

Բայց աւելի շտապով գալիս էր Պարսից զօրքը և հասաւ Արտագ գաւառը Աւարայր գիւղի մօտ մի շրջափակուած տեղ Տղմուտ դաշտի վերայ, նորա մէջ և բանակ դրին պարսիկները:

Պենտէկոստէի ուրբաթ օրը եկան հասան նոյն տեղերին մօտ և Հայոց զօրքը: Եւ բոլոր զօրքին հանդէս արին տեսան, որ վաթսուներ վեց հազար մարդ կայ թէ հեծեալ և թէ հետևակ: Եկել էին նոցա հետ սուրբ Յովսէփն ու Ղևոնդ երէցը և ուրիշ շատ քահանաներ:

Անպատրաստ գտնելով Պարսից զօրքը, թէ կամենային կարող էին մասնաւորապէս փնաս տալ նոցա. բայց այն օրը թոյլ թողին ու հանգստացան: Պարսից բանակի զօրքին մօտիկ՝ իրիկուայ ժամանակ իրենց սովորութեամբ աղօթք և ժամատացութիւն՝ արին և չափաւոր ուրախութեամբ և կերակուրներով սկսեցին զուարճանալ: Այս ամենը կատարելուց յետոյ սուրբ քահանաներից հրաման առան, որ բոլոր գիշերը արթուն մնան և աղօթքով անց կացնեն: Սուրբ երէցն Յովսէփ, որ կաթողիկոսութեան արթուն էր կառավարում, հրաման տուեց սուրբ Ղևոնդին, որ խրատ ասէ ժողովրդին և քաջալերէ: Սուրբ Ղևոնդն էլ բարձր գիշերն առանց ձանձրանալու ուսուցանում էր ամենքին՝ առականեր բացատրելով. նոցա միտքն էր ձգում ամենից առաջ սուրբ Գրիգորի անպատմելի համբերութիւնը, յետոյ բոլոր ուրիշները. «միքանիսը, ասում է, տանջանքով ու մահով, մի քանիսը պահքով ու գետնատարած անկողիններով, ուրիշներն սղքատասիրութեամբ, շատերն

էլ աշխարհաշինութեամբ և արդար դատողութեամբ երևելի են եղել և Աստուծուն ընտրելի, որովհետև ամէնքին էլ մարդասիրութեան վիճակ չի պատահիր, այլ ժամանակին յարմար, ինչոր Աստուած պարգևէ, և առնողները պարտաւոր են արդար վաճառականութեամբ դնել անցաւորի տեղ անանցը: Թէոր մահը մահով պիտի մեռնի, պէտք է չվախենանք Քրիստոսին մահակից լինելու: որովհետև ում հետ որ մեռնում ենք, նորա հետ և կենդանութիւն կառնինք: Բոլոր ուրիշները, որ հաւաստի համար քաջութիւններ արին զանազան դարերում, մարդիկներից գովեստ ստացան և Աստուած էլ նոցա արգարացրեց: Ձէ՞ որ մի և նոյն Տէրն է սկզբից մինչև հիմայ և մինչև յաւիտեան: Այժմ մեր յոյսը մեզ երկու կերպ է երևում. թէոր մեռնինք, կեանք է. թէոր մեռցնենք, դարձեալ նոյն կեանքն է մեր առաջը:

Ուրիշ շատ խօսքեր ասաց և քաջալերեց մեծամեծներից ամեն մէկին երանելի սուրբ Յովսէփի հետ միասին: Սոցա վարդապետութեանը ուշադրութեամբ ականջ դնելով երանելի Վարդանը խօսել սկսեց զօրքի հետ և աւում է:

«Շատ պատերազմներ մտած եմ ես, դուք էլ ինձ հետ էք եղել. պատահել է, որ քաջութեամբ յաղթել ենք թըշնամիներին, պատահել է, որ նորա են մեզ յաղթել, բայց այն քաջութիւնները անարգ և անօգուտ եմ համարում և այն շատ պարգևներն էլ ոչինչ բան են. որովհետև այդ բոլորն էլ անցաւոր են, Չլինի թէ հեթանոսների շատութիւնիցը վախենանք և ահ քաշենք. թէոր մեր կեանքի վերջը եկել է, պատերազմի բերած սուրբ մահովն ընդունենք նորան ուրախ սրտով, միայն թէ մեր ցոյց տուած քաջութիւնների մէջ վատութիւն չխառնենք: Ես մոռանալ չեմ կարող, ինչպէս մենք անօրէն իշխանին խաբեցինք, երեսանց նորա չար կամքը կատարեցինք մեր սիրելիների պատճառով, որ մեծ նեղութեան մէջ էին, մենք հնար էինք փնտրում նոցա ազատելու. քանի՞ որ նոցա բնաւ օգնել չկարողացանք, անկարելի բան է, որ մարմնաւոր սլ-

րու համար՝ Աստծուն մարդուս հետ փոխենք: Երեք կուրի մէջ Աստուած ինքը մեզի օգնեց մեծ հրաշքով. քաջութեան անունը ժառանգեցինք, թագաւորի զօրքերը կոտորեցինք, մոգերին անողորմաբար մեռցրինք, կռապաշտութեան պղծութիւնը զանազան տեղերից սրբեցինք. եթէ ուրիշներին աստուածային օրէնքների անունով կոտորեցինք ու մեր անձերին պարծանք ժառանգեցինք, ինչքան աւելի կըլինի, եթէ մենք մեր տիրոջ Յիսուսի Քրիստոսի անունը վկայելով մեռնինք, որին երկնաւորներն անգամ փափագում են, եթէ հնար լինի՝ Այն օրը. երբ մարդիկ մեր չար գործի մասին լուր առան, շատ արտասուք թափեցին թէ՛ եկեղեցիներում և թէ՛ մեր սիրելիների մէջ. մեր ընկերներն անգամ մեզ դառն մահ սպառնացան. մեր ծառաներն անգամ մեզանից հեռու էին փախչում, և որ ամենից դժխաւորն է, ոչ միայն մարդիկ աշխարհքիս վերայ, այլ և հրեշտակներն երկնքում իրենց երեսները մեզանից դարձրին, որ չըլինի թէ տխուր դէմքով նայեն մեզ վրայ: Եւ անա եկել հասել է ժամանակը, որ ամեն մի վատ անուն մեզանից հեռու ձգենք: Վախը թերահաւատութեան նշան է. մենք թերահաւատութիւնը մեզնից վաղուց հեռացրել ենք. նորա հետ միասին թող վախն էլ փախչի մեր մաքից ու մեր խորհուրդներից:

Առաքինի զօրավարը կրկին քաջալերեց ծածուկ ամեն մէկին, և բոլոր պակասութիւնները հոգաց իրենից և ընկերներից, ով զէնք չունէր՝ զէնք տուեց, ով հագուստ չունէր՝ հագուստ, և ով ձի չունէր՝ ձի: Առատ ուճիկներով՝ ուրախացնում էր ամէնքին. քաջ մարդիկների յիշատակաբանները միշտ կըրկնում էր նոցա առաջ. Մակաբայեցւոց երեւելի նկարագրութիւնը ձեռքն առած՝ կարդում էր բռլորի առաջ. զօրականի միտքն էր ձգում, թէ ինչպէս Մատթիայի ազգատունը բաժան բաժան եղաւ. մահեաններ շինեցին, Աստծու ճանապարհից դուրս եկան և ընդունեցին մահուան պատիժը սուրբ միաբանեալների ձեռքից:

¹) Օրական պաշար. անունդ:

Երբոր այսպէս խօսաւ պրծաւ սուրբ զօրավարը, հաւախօսի ժամանակ հրամայեցին սուրբ Յովսէփն ու Զևոնդը բոլոր քահանաների հետ միասին ժամասացութիւնը կատարել: Սեղան կազմեցին, ամենասուրբ Խորհուրդը կատարեցին, աւագան կազմեցին, թէ որ զօրքի մէջ մի եւրախայ կար, գիշերը մկրտեցին. առաւօտեան հաղորդուեցան սուրբ Խորհրդին. և բոլոր զօրքի բազմութիւնն աղաղակեց ու ասում էր. «Թող հաւասարէ Աստուած մեր մահը արդարների մահի հետ և չմատնէ իւր եկեղեցին»:

Կեթանոսների ձեռքը՝ Այսպէս շտապում էին առաջիկայ գործին ձեռք տալու, որովհետև արևը դուրս գալուն մօտ էր և պարսից գունդը պատրաստութիւն էր տեսնում պատերազմն սկսելու:

Պարսից գնդի զօրավարն էր տեսաւ առհասարակ, թէ էլ յոյս չկայ ցրուել Հայերին ամուր միաբանութիւնից, յառաջ կանչեց անօրէն Վասակին և բոլոր ուրացեալ հայ իշխաններին, սկսեց հնարներ իմանալ նոցանից թէ ինչպէս պէտք է յաղթեն, հրամայեց յառաջ բերել փղերի երամակները, և ամեն մէկ փղին երեք հազար զինուորուած մարդ նշանակեց. խօսել սկսեց արքունի հրամանով մեծամեծների հետ ու ասաց, «Միտք բերէ թող ամէն մարդ մեծ թագաւորի հրամանը. լաւ է մահ ընտրէք քան թէ կեանք վատութեամբ. դուք ինքներդ լաւ գիտէք հայերի քաջութիւնը և իւրաքանչիւր մարդու անձնագոհութեան հոգին»: Նաև նոցա միտն էր ձգում շատ ընկերակիցներին, որոնք թէև պատերազմից ապրեցան, բայց սրով ընդունեցին իրենց մահուան վճիռը, նոցա որդիքն ու աղջիկներն աքսորուեցան և բոլոր հայրական գաւառները ձեռքերից առան, Կարգի բերեց բոլոր զօրքը և մեծ դաշտի երկայնութեանը ճակատ կազմեց. հրաման տուեց, որ գնդի աջ կողմից պատրաստ գտնուին Հայոց զօրավարի դէմուգէմը:

Քաջ Վարդանը բոլորի խորհրդով զօրագլուխներ նշանակեց. կռուի տեղը որոշեց բոլոր դաշտի երեսովը Արեաց զօրքի դէմուգէմը՝ Տղմուտ գետի ափում. առաջին

գունդը Սրժբունեաց ներշապուհ իշխանի ձեռքը տուեց և նորան նիզակակից նշանակեց Մոկաց մեծ իշխանին: Երկրորդ գունդը տուեց Խորէն Խորխոռունու ձեռքը, և նորան նիզակակից նշանակեց Ընծայինին և Ներսէհ Քաջբերունուն: Երրորդ գունդը տուեց Վանանդեցի Թաթուլին, և նորան նիզակակից նշանակեց Տաճատ Գնթունուն: Իւր վերայ առաւ Հորբորդ գունդը, և իրեն նիզակակից նշանակեց Արշաւիրին և իւր եղբօր Համազասպեանին¹⁾:

Այսպէս կազմուեցան, առան սուրբ քահանաների օրհնութիւնը, Աստուած կանչեցին և երկու կողմն էլ զագանացած զօրութեամբ յարձակուեցան իրար վերայ: Ազմուկի խառութիւնից և ձայների շատութիւնից սարերի քարանձաւները շարժ էին գալիս: Վահանաւորների կոփկոփուին և աղեղների լարերի ճարճատիւն առհասարակ ամենքի ականջը խլացնում էին, խումբ եղած բոլոր բազմութիւնը, գետը մէջերն առան փակեցին. և պարսից գունդը գետի դժուարութիւնից վախենալով տեղնուտեղն սկսեց սրգունքի նման գեռալ, սաստիկ զարնուելով իրարու, երկու կողմից էլ շատ վիրաւորներ գետին ընկած դիմաւալ էին լինում:

Քաջ Վարդանը պարսից գնդի աջ թևը կոտրելով գահանների կողմն էր ձգում. Մինչև անգամ մատեան գունդը քանդուեցաւ բաժանուեցաւ իւր պինդ կազմածքից: Այնպէս որ սկիզբը պարսից զօրքը փախչել սկսեց. իսկ Հայոց զօրքի միւս բազմութիւնից, ով որ կամաւ չէր ցանկացել երկնային բարութիւններին հասնելու, նոյնպէս փախաւ կորաւ: Մուշկան Նիւսալաւուրտը տեսաւ, որ հայոց գնդից մի քանիսը բաժանուել են և յետ են մնացել սարերի հովիտների մէջ, այդ պատճառով սիրտ տուեց Արեաց զօրքին, որ իւր շուրջն էին և Վարդանի գնդի գէմն էին տեղ առել: Այնտեղ երկու կողմն էլ զգացին իրենց յաղթուիլը. քաջ Վարդանը իւր քաջ նիզակակիցների հետ միասին բաւական շատ կոտորած պատճառեց այն տեղումը, և ինքն

¹⁾ Ըստ Ղազարու «մէջտեղի գնդին պիտաւոր նշանակեց:

էլ արժանացաւ կատարեալ նահատակութիւն ընդունելու։
Պատերազմի երկարելուց օրն էլ տարաժամել սկսեց
և երեկոն վերայ հասաւ. շատերի մահուան ըօպէները հա-
սել էին, և երկու կողմի մէջն էլ մեծ իրարանցումն էր
թագաւորած։

Նոքա, որոնք մնացել էին, ջրուեցան ամուր ձո-
րերի լեռնադաշտերը, և երբ սլառահում էին իրարու, մէկ
անգամ էլի նորից իրար արին էին թափում. և մինչև
արևի մայր մանելն անդադար կատարուում էր նոյն ա-
նախորժ գործը։

Որովհետև գարնանային էր ժամանակը, ծաղկալից
դաշտերը արինի գետ էին դառել. մէկը որ տեսնում էր
այն ընկած դիակները անագին կոյտը, սիրաւը դող էր ել-
նում և աղիքը կտրատում. ոչ թէ կողմ կար, որ յաղթող
էր, և կողմ էլ կար՝ որ յաղթուած, այլ քաջիւրը քաջերի
դէմ ելան և երկուսն էլ յաղթուեցան։

Որովհետև Հայոց զօրավարը մեծ պատերազմի մէջ
ընկած էր, չկար այնուհետև մի գլխաւոր, որ նոքա մօտ
ժողովուէին մնացած գունդը. ապրողներն աւելի շատ էին
քանթէ մեռնողները. և ընկան նոքա երկրի ամուր տեղե-
ւրը, զօռով տիրեցին շատ այնպէս բերդերի, որ ոչ ոք չէր
կարող առնել։

Որոնք որ այն ժամանակ սուրբ Վարդանի հետ նա-
հատակուեցան, այս մարդիկն են. Սորխոռունեաց ցեղից
Խորէն, Պալունեաց ցեղից Արտակ, Գընթունեաց ցեղից
Տաճատ, Դիմաքսեան ցեղից Հմայեակ, Քաջբերունեաց
ցեղից Ներսէհ, Գնունեաց ցեղից Վահան, Ընձայնու ցե-
ղից Աբաէն, Սրուանձտեան ցեղից Գարեգին։ Եւ ինչպէս
շատ հետամուտ եղանք, իմացանք նահատակուածների թուի
մասին, պտտերազմի տեղում աւագ նախարարները հետ
մարտիրոսական պաակ ընդունեցին երկու հարիւր եօթա-
նասուն վեց մարդ. և նոցա թիւը, որոնց ամբողջներէց
իջուցին սպանեցին, եօթը հարիւր յիսուն մարդ. բոլորը
միասին հազար երեսուն վեց (1036) մարդ։

Իսկ պալսից զօրքից՝ պատերազմի օրն ընկածները

թիւն է (ինչպէս որ հաստատ տեղեկադել Պարսից զօրագլուխները և ասել են մեզ), երեք հազար հինգ հարիւր քառասուն չորս (3544) մարդ։ Ուրացեալների կողմից կոտորուել են 3544 մարդ։ Մուշկան Նիւսալուուրաւ, երբոր տեսաւ թէ իւր զօրքը եօթն անգամ աւելի է փասուել քան թէ հայերինը, հանգստութիւն չէր կարող գտնել իր մօրի մէջ։

Նղիշէ, Ղաղար. փ.

126. Ե. ԴԱՐՈՒ ՀԱՅ ԿԱՆԱՅՔ

Իսկ թէ բոլոր Հայաստանի մէջ ընդհանրապէս ճրքան են երանելի առաքինիների կանայքը՝ թէ կապուածների և թէ պատերազմում սպանուածների, այդ ես համարել չեմ կարող։ Մօտ հինգ հարիւրին անուն անուն ճանաչում եմ։ Ի՞նչ մեծ, թէ փոքր ամենքն էլ առհասարակ միմիայն հաւատի առաքինութիւնն ունէին սգեցած. և կանանց ընական տկարութիւնը զօրացնելով մարդիկներից աւելի քաջ և յաղթող երեցեցան։

Այն քնքոյշ կանայքն առհասարակ թէ նախարարների աղջիկներն և թէ մեծամեծների կանայքը՝ շարմղուն հացի տեղ կորեկ էին ուտում, անարատ գինու տեղ՝ ջուրը չափով էին խմում. կերպասի և ոսկեկար հագուստի տեղ՝ հասարակ բրդէ հալաւ էին հագնում. և զանազան տեսակ անկողինների փոխարէն՝ չոր խոտի վերայ էին պառկում գետնի երեսին. և նոքա՝ որ առաջ քնկոտ և քնասէր էին՝ հրեշտակների նման անքուն էին մնում։ Իւրով չօծեցին, սանտրով չկոկեցին իրենց գլխի մազերը։ Եւ ինչ որ անկարելի է կանանց համար չկատարել, այն է՝ շատախօսութեանն և շուտ շուտ քօղի տակից այս այն կողմ աչք ձգելուն՝ նոյնպէս յաղթեցին. և իրենց լեզուներին կապ զրին աւերորդ խօսք չխօսելու համար։

Թէպէտ և ամենքն էլ ձեռնասուն սպասաւորներ ունէին, բայց չէր երևում նոյա մէջ թէ ո՞րն է տիկինը և

սրն աղախինը, ամենքն էլ մէկ հազուստ ունէին և երկուսն էլ միակերպ չոր դետնի վերայ էին պառկում. մէկը միւսի համար տեղ չէր ձգում, չունէին նոքա ջուկ կերակուր եփողներ և ոչ էլ փոքրերը մեծերին երեսարթիչ չէին տալիս: Այն քնքոյշ կանանց ձեռներին սապոն չղիպաւ և հանդէսի ժամանակ դուարթութեան համար իւր չմօտեցաւ նոցա. առաջներն իստակ սամաններ չդրին և ուրախութեան համար բաժակալներն առաջ չեկան. նոցա դռները մի խընդրակ էլ է չբացեց և պատուական մարդիկներից ոչ սք չը հրաւիրուեցաւ նոցա դաշիճները. նոցա մտքից չանցաւ թէ մի ընտանի դայեակ կամ գոնէ մի հարազատ սիրելի ունին աշխարհիս վերայ, Փոշի ու ծուխ նստաւ նոքեկ հարսների սրահների և լուացարանների վրայ. և սարդի ու տայններ ձգուեցան նոցա հարսնութեան սենեակներում: նոցա սեղանի պարազաններն անշքացան, նոցա ապարանները քանդուեցան, կործանուեցան և տալն ու վրայ եղան: նոցա ապահովութեան ամբողջները, Չորացան, սևացան ծաղկալից բուրաստաններն և գետնի հետ հաւասար եղան գինեբեր այգիների տունկերը: Նոքա իրենց աչքերովը տեսան իրենց աշխատանքի յափշտակումը և իրենց ականջներովը լսեցին իրենց սիրելիների՝ չարչարանքը: Նոցա գանձերն արքունիս գրաւեցին, և չմնաց ամենևին մի զարդ անգամ նոցա երեսի վերայ:

Հայաստանի այն փափուկ մեծացած տիկիները, որ պահուել մեծացել էին զանազան կակուղ ծածկոցների տակ և պատգարակների մէջ, միշտ բորիկ և հետիոտս էին գրնում ժամ՝ աղօթելու: Նոքա, որ երեխայութիւնից հորթի ուղեղով և որսի փափուկ մտով էին սնուել, վայրենիների նման խոտակեր կեանք էին վարում մեծ ուրախութեամբ: Նոցա մարմինների կաշին սևացաւ, ներկուեցաւ, որովհետև ցերեկն արևից էին այրում և բոլոր զիշերն էլ գետնի վերայ էին ընկած: Նոցա բերանից միշտ է հոնապաղ սաղմոս էր լսոււմ. և նոցա գլխաւոր միտիթարանքը մարգարէների գրքեր կարդալն էր. կռիւ էին բացել և հակառակում էին կարևոր մեղքերին, սիրով լուացին նախանձի կապու-

տագոյն ներկուածը, ազահութեան արմատը կտրեցին և խոնարհութեամբ ոսնակոխ արին ամբարտաւանութիւնն ու հասան երկնաւոր բարձրութեան:

Այն այրի կանայքը, որ նոցա մէջն էին, նորից առաքինութեան հարսներ եղան. իսկ կտպուած նախարարների կանայքը կամաւ կապեցին իրենց մարմնաւոր ցանկութիւններն և հաղորդակից եղան սուրբ կապեալների չարչարանքին: Իրենց կեանքում՝ նմանեցան մահուամբ նահատակուած քաջերին, և հեռուից վարդապետ և մխիթարող եղան բանտարկուածներին: Իրենց մատներով աշխատեցան ու կերակրուեցան և թաղաւորական ռոճիկը տարէցտարի թողակ էին անում և ուղարկում էին ամուսիններին մխիթարելու: Շատ ձմեռների ձիւնիւ հալան, դարուն եկաւ, նորեկ ծիծառներ հասան. կենցաղասէր մարդիկ տեսան այդ և ուրախացան, բայց նոքա երբէք չկարողացան տեսնել իրենց ցանկալիներին: Գոյնան ծաղիկները նոցա միտն էին ձգում իրենց հաւատարիմ ամուսիններին, բայց նոցա աչքերը կարօտ մնացին նոցա երեսի ցանկալի գեղեցկութիւնը տեսնելու:

Որսի բարակներն անհետացան, որսորդների ճանապարհները փակուեցան, ջնջուեցան: Նոցա մարդիկների անուռները բնագիրների մէջ յիշուեցան, և ոչ մի տարեկան տօն չկարողացաւ բերել նոցա հեռու երկրից: Նոցա ճաշատեղերի վերայ նայեցին կանայք և լաց եղան. և ամենայն ատեանի մէջ յիշեցին նոցա անուռները. շատ արձաններ դրած էին նոցա անուանը և նոցա վերայնշանակուած կար իւրաքանչիւրի անուռը:

Եւ երբ այսպէս ամեն կողմից նոցա մտքերն ալեկոծ էին լինում, նոքա դարձեալ չթուլացան ամենևին երկնաւոր առաքինութիւնից: Է՛լ սովորութիւն չարին հարցնելու հեռուից եկած մէկին, թէ երբ կը լինի, որ տեսնենք մեր սիրելիներին. այլ այն էր նոցա փափագն և խնդրուածքն առ Աստուած՝ թէ ինչպէս որ սկսել են, այնպէս քաջ սրբտով և լիքն երկնային սիրով գլուխ հանեն իրենց սկսածը:

Յզիշէ

Մի հանդիսաւոր օր պարսից թագաւոր Յազկերտ հրամայեց ընթրիքի հրաւիրել բոլոր մեծամեծներին և երեւելի իշխաններին: Հրաւիրուած էր և Վասակը: Նա հագաւ այն պատուական զգեստը, որ ստացել էր թագաւորից: Ղըլխին դրեց ոսկէ խոյրը (գլխարկը), մէջքին կապեց մարգարիտներով և ակնեղէններով զարդարուած ոսկէ գօտին, ականջներին կախեց օղերը, վզից՝ մանեակը, ուսերին գցեց ոստոյրը, և բոլոր ունեցած պատուանշանները հագին՝ զնաց պալատ: Արքունիքի բակում շղթայակապ նստած էին մի քանի հայ իշխաններ և քահանաներ: Երբ նրանք տեսան զուգուած և զարդարուած Վասակին՝ սկսեցին ծաղրել նրան և տսել. «Ո՛վ անխելք վաճառական, պատիւդ վաճառեցիր մի քանի կանացի զարդարանքների: Բայց իմացիր, որ շատ շուտ կը զրկուես նրանցից»: Անցնելով դրանց առաջով՝ Վասակը մտաւ ներսի դահլիճը, որ մեծ իշխանների հրապարակն էր, և նստեց: Այս միջոցին գուրս է դալիս արքունիքի թագաւորի ունեակապետը, մօտենում է նրան և ասում. «Թագաւորն ուղարկեց ինձ քեզանից հարցնելու, թէ քո արդար վաստակներից համար ես ստացել այդ պատուանշանները»: յիշեցրեց այն բոլոր չարագործութիւնները, որոնց համար դատապարտել էին նրան, ասաց, որ նա ապօրինի կերպով տիրեց Սիւնեաց աշխարհին, նենգութեամբ և քսութեամբ սպանել տուեց իր հօրեղբայր Վադինակին և ինքը ստացաւ նրա իշխանութիւնը: Դատապարտեց նրան և այլ շատ բաների համար, որոնց վկայ էին բոլոր մեծամեծները: Վասակը պապանձուեց և իրան արդարացնող ոչ մի բան չկարողացաւ ասել: Այնուհետեւ մահուան վճիռ կարգացին նրա գլխին: Դահճապետն եկաւ, հանեց նրանից այն բոլորը պատուանշանները, որ ստացել էր թագաւորից, և հագցրեց մահապարտի զգեստ: Գապեցին նրա ձեռներն ու ոտները, կանացաբար նստեցրին էգ ձի և տարան ձգեցին այն բանտը, ուր գտնուում էին բոլոր

մահապարտները: Սմեն օր դուրս էին բերում նրան հրապարակ, բոլոր զօրքի առաջ խայտառակում էին և ծաղրում: Կողոպտեցին, հանեցին նրանից ամեն բան. որ ունէր իր հետ, և այնպիսի ծայրայեղ աղքատութեան մէջ էին սլանում, որ իր ծառաները հաց էին մուրում և կերակրում նրան: Նա տուեց իր բոլոր կալուածները, նոյն իսկ կանանց զարդերը արքունիքին՝ նա տուեց, բայց էլի չըկարողացաւ հատուցանել այն բոլոր պարտքերը, որ գրեւ էին նրա վրայ:

Այսպէս անարգուեց Վասակը ամեն կողմից. բանտումը նա ընկաւ ծանր ցաւերի մէջ: Մահուան հոս փչեց նրա մարմնից, նոյն իսկ ծառաները փախան նրանից: Միայն լեզուն էր կենդանի նրա բերանում, բայց խոստովանութիւն չէր դուրս գալիս նրա շրթունքներից: Նա ճաշակեց ամենադառն մահ իր բարեկամներն անգամ ոտի տակ տուին նրան, իսկ թշնամիները սաստիկ հարուածներով էլ չկշտացան: Եւ չգտնուեց դերեզմանի տեղ այն մարդու համար, որ կամենում էր մատնութեամբ Հայոց աշխարհի թագաւոր լինել: Նա չէր թողել իր կեանքում ոչ մի շարութիւն, որ արած չլինէր, բայց և չմտաց ոչ մի շարժում, որ չանցնէր նրա զլխով մահուան ժամանակ: Շան պէս սատակեցաւ և էշի նման քաշքշուեցաւ:

Ե Ղ Ի 2 է

Ծառի ճրճին ծառէն է,
Զար թշնամին տանէն է,
Վայ այն տոհմին, այն ազգին,
Որոյ մատնիչն ազգէն է:

128. ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ,

Յագկերտի թագաւորութեան եօթն և տասներորդ տարին Վրաց Աշուշայ իշխանն արքունի դրան մեծամեծներից իւրաքանչիւրին անհամար ընծաներ տալով՝ մանաւանդ Միհրներսէհին՝ խնդրեց և տսել տուեց թագաւորին,

որ նորան բախշեն Մամիկոնեան Հմայեակի որդոցը, որոնց առիւ էր Վասակը դայեակների ձեռքից, և նոքա դեռ շատ երեխայ էին: Մեծամեծներն էլ յօժարեցին թագաւորին և նա կատարեց Աշուշայի խնդիրքը:

Մամիկոնեան Հմայեակի կինն անուանի էր և Հայաստանի կանանց մէջ ամենից բարձր էր, ընտիր և խոհեմ: Նա մեծացրեց Վրաստանում և ուսում տուեց իւր այն որդոցը, որոնց Աշուշան իբրեւ պարգև խնդրեց Յազկերտից և բերեց իրենց մօր Ձուիկի մօտ: Երեսուց Վրաստանում մեծացան մանուկներն և ուսում առան ու ամեն բանի մէջ առաջադէմ ու հռչակաւոր էին. ամեն հասկացող մարդու երևում էին նրանք յաջողակ և դարմանալի, առաջին որդու անունն էր Վահան, երկրորդինը՝ Վասակ և երրորդին՝ Արտաշէս, նրանք մի ուրիշ եղբայր էլ ունէին Վարդ անունով, որ մնացել էր Տայքում, դայեակների մօտ:

Այն ժամանակուայ անպիտան իշխաններն օրէցօր տեսնում էին առաջադիմութեան աճումը Մամիկոնեանների որդոց մէջ. ըստորում նրանք խորհուրդի մէջ ակաշաւոր էին, խելացի և հնարագէտ. նետագձութեան մէջ սիրուն և իսկ տեղին խփող, որսի մէջ թեթև շարժող և ամենից առաջ սպանող, երկու ձեռքից էլ աջողակ էին. նրանցով փայլում էին բոլոր հայոց տանուտէրների ընթերիքները. նրանցով զարգարւում էին ամեն տան մէջ օտարներն ու ընտանիները: Իրանք և հոգս էին քաշում Արշարունեաց տէր երանելի Արշաւիր Կամսարականի որդոցը (որոնք Վարդանի զստեր ծնունդն են) խրատելու և ուղղութիւն տալու իրենց իմաստութեանն ու արուեստին համաձայն: Եւ այսպիսի բարեմասնութիւններ անելու աւելի արի էր Հմայեակի մեծ որդին՝ Վահանը, որովհետեւ խելացի, առողջախորհուրդ և բարեսէր մարդ էր: Մինչև անգամ պարսիկ գործակալները, թէպէտ ակամայ, բայց սիրում և պատուում էին նրան և թագաւորի առաջը գոյում էին նրա լաւութիւնը: Այնպէս որ թագաւորն ինքը տարեալ ծանօթացաւ և լաւերի շարքն էր դնում նրան ու

բոլորի առաջը գտնուում և պատուի արժանի էր համարում։ Քայց նրա նախաճարց գործերը մտաբերելով քաջուում էր արժանաւորը պատիւը տալու նրան, մանաւանդ երբ վրայ-վրայ լսում էր այն նախանձորդների բանասարկութիւնը, ուրոնց սաստիկ վախեցնում էր Մամիկոնեան Վահանի աջո-ղութիւն ունենալը։

Մաղխազ Գաղիչոն և ուրացողների խմբերը՝ երբ տես-նում էին Մամիկոնեան Վահանին լաւ կողմերով այնպէս երեւելի դարգացած հնար էին փնտրում, թէ ինչպէս նը-քան ու նրա եղբայրներին կորցնել կարողանան. պարսիկ-ների միտն էին ձգում նրա նախաճարց մասին՝ թէ նրան-ցից ո՞ր մէկը չէ խռովեցրել Պարսկաստանը. «ուրեմն, ա-սում էին, երբ և իցէ, սա էլ նոյն խռովութիւնները պի-տի հանէ ձեր գլխին»։

Վահանն իր նախանձորդների այսչափ դրգուելը տես-նելով, գնաց դուռը և հաւատը փոխեց, բայց չկարողացաւ դրանով կապել չարախօսների բերանը, որովհետեւ այն՝ որ մի ուղիղ խօսք խօսել անգամ չգիտէր հրապարակի մէջ մի իշխանի առաջ, Վահանին ասում էր. «նստում է, ա-սում էին, և ամենքին քիթուպուռնկ է շինում, ամեն բանի մէջ մտնում է և ոչ ոքի չի թողնում գործ կատարելու»։ Վահանը մի գործակից ունէր Վրիւ անունով՝ ասորի մար-դու որդի, որ չկարողանալով արքունի գործը կատարել, գանգատաւոր էր լինում Վահանի վերայ Պերոզի առաջ թէ «ոսկէհատի գործին ինձ մօտիկ չի թողնում. և ինքն է երկրի բոլոր ոսկին ժողովել ու մտածում է կայսեր մօտը կամ Հունաց երկիրը գնալ և ոսկին նրանց տալով ուզում է զօրք խնդրել և ապստամբել քեզանից»։ Վահանն էլ շու-տով վեր առաւ բոլոր ոսկին ու գնաց Դուռն և ներկա-յացաւ թագաւորին։ Թագաւորն իմացաւ նրանից թէ ինչ-բան է ոսկին, որ նա բերել է իւր հետ, և շատ ուրախա-ցաւ. յետոյ Վահանի առաջը նորէն ասել տուեց Վրիւին այն խօսքերը, որ առաջ խօսել էր նրա վրայ։ Վահանը պատասխանեց թագաւորին և ասում է. «ես այնքան կոյր չեմ, որ Արեաց ոյժը տեսնել չկարողանամ, ես որ՝ դրա

ասելով՝ ապաստամբուել եմ ուզում, դա ինքն էլ լաւ գիտէ, որ մի ծառայ անգամ չունիմ, որ ինձ համար խոհաբարութիւն անէ և երկու երեք պատանի անգամ ձեռքիւ տակ չունիմ, որ ինձ ծառայեն: Իմ զօրքիս ոյժն այդքան է, թէ որ մի օտար երկիր փախչել ուզենայի, ինչո՞ւ այսքան ոսկին այստեղ կը բերէի»: Եւ Վահանն արդարացած դուրս եկաւ այն ատենից և պատուով ճանապարհ ընկաւ եկաւ Հայաստան:

Ղազար Փարպեցի

129. ՎԱՀԱՆԻ ՄԱՐԶՊԱՆՈՒԹԻԻՆԸ

Եյն ժամանակներն Հայաստան եկաւ Անդեկան մարգպանը. սա մի խելացի, մտադիր և հասկացող մարդ էր և կարող էր ճանաչել և ջոկել իմաստունը յիմարից, լաւը վատից. նա հետզհետէ նկատելով Վահանի խելօքութիւնն ու հեռատեսութիւնը, արդարախոհութիւնը, երկրի վերայ հոգս քաշելն և սրտի քաջութիւնը՝ յայտնեց Վաղարշ Թաւուորին լիով ամեն բան:

Անդեկանը Հայաստանից եկաւ անձամբ թագաւորի մօտ և ասում է. «համարձակութիւն եմ առնում յայտնի ասել ձեր առաջը թէ անյարմար է ուրիշ մարդպան նշանակել. որովհետեւ ուրիշ մարդպան, որ Հայաստան է գրնում, երկու երեք տարի հազիւ կարող է ճանաչել նախ՝ այն երկրի հեշտն ու դժուարը և ապա նորա մարդիկներէ լաւն ու վատը»:

Եւ Վահանի պէս մարդու լաւութեան ու յաջողակութեան վերայ նայելով երկար ժամանակ մտածում էի, և երկրի ու թագաւորական գործերի համար լաւ համարելով նորան, վստահութիւն գտայ ասելով, որպէսզի ինչ որ արժան է մտածէք և կատարէք»:

Անդեկանից որ լսեց այս ամենը, Վաղարշը շուտով հրաման արաւ հրովարտակ գրել Հայաստան և Մամիկոնէից տիրոջն ու Հայոց զօրավարին Հայաստանի վերայ մարդպան նշանակել:

Իսկ Վահանը թէպէտ հայ մարդիկներ չնախանձոտութիւնը ճանաչելով, դժուարանում էր ընդունելու, բայց թագաւորի հրամանին հակառակելու էլ իրաւունք չունէր. և երբ հրովարտալն առաւ, շուտով մի անգրուվար ուղեց, որ Աստծու տունը գնայ. այս որ խեցին բաղաքի մարդիկն առհասարակ թէ նախարարներն և աղաւները, թէ քաղաքացիք և ռամիկները, մարդ ու կին, ծեր ու տղայ, մինչև անգամ հարսներն էլ ուրախութիւններից առժամանակ մոռացան իրենց հարսնութեան ամօթն ու դուրս եկան առաքաւաններից և ամենքը վազեցին դէպի եկեղեցի. և Աստծու տունը բաւական չեղաւ. բոլորին իւր մէջն ընդունելու, և դուրսը լցուեցան եկեղեցու սրահներն և փողոցներն և շրջակայ հրապարակի բոլոր տեղերը:

Եւ այն օրը բարեսէրների համար անյագ ուրախութեան օր էր. իսկ խարդախների համար անմխիթար տրտմութեան օր:

Եւ սուրբ Յովհան կաթողիկոսն ուրախ սրտով եկաւ լսողութեան տեղն և խաղաղութեան ողջոյնը տալով ասաց.

«Եկեղեցին սիրողներ, Առաքեալների որդիք, Քրիստոսի արիւնով փրկուածներ, մի ծառայեցնէք ձեր հօգինները մարդկանց երկիւղին. տուէք կայսրինը կայսրին և Սատրժունն Աստծուն»:

«Ահա դուք եկեղեցին սիրեցիք և եկեղեցին էլ ձեզ սիրեց. թագաւորներին դուք տուեց եկեղեցին. գայլերին դառ դարձրեց. ձեզ փառաւորեց և ճշմարտութեան թըշնամիններն ամաչեցին»:

«Իսկ ես այսօր սրախ ուրախութիւնից և մաքիս ցնծութիւնից ձեռքերս երկինք եմ բարձրացնում և աղաղակում. «()րհնուի այն Տէր Աստուածը, որ ինձ արժանի արաւ եկեղեցու որդեցը, որ ինձ էր յանձնել, պատուով ու շքեղութեամբ պայծառացած տեսնելու: Ո՞ւր են առանց Աստծու դուռդացածները. ո՞ւր են արիւն թափողները. ո՞ւր են եկեղեցին արհամարհողները, օրէնքը ստնատակ անողները, սրբութիւն պղծողները, մոխրատուն շինողները, ճշմարտութիւն մոռացողները, արդարութիւն հայհոյողները, փախան, կորան, ամօթով մնացին»:

Ղազար փարսկեցի

130. ՋՐՕՐՀՆԷՔԸ ԼԵՒՈՆ ԹԱԳԱՒՈՐԻ ՕՐՈՎ

Որի եւրոպացի ճանապարհորդ արեւելքում Հաննովերի, Հելտեսհայմ քաղաքացի, կրօնաւոր Վիլլեբրանդ անունով՝ 700 տարի առաջ իր ուղեորութեան ժամանակ՝ գտնուում էր Կիլիկայում, ուր երկու ամսի չափ հիւրաւորեց նրան մեր Լեւոն Ա. Թագաւորը:

Վիլլեբրանդ վարդապետը Սիս քաղաքում 1211 թուին ներկայ լինելով հայոց Ջրօրհնէքի հանդիսին, ահա ինչպէս է այն նկարագրում.

«Սիս քաղաքը՝ տէր թագաւորի մայրաքաղաքն է. բնակիչները անթիւ են և հարուստ. պարիսպ չունի, ուստի նրան աւելի քաղաքաւան կը կոչէի, եթէ մէջը չլինէր հայոց կաթողիկոսարանը: Սակայն ունի մի ամուր բերդ լեռան գագաթի վրայ, որի ոտքից սկսւում է քաղաքը աստիճանաբար դարձիւյր տարածուել: Ջրօրհնէքի հանդէսը հայերը այս կերպով են կատարում. ծննդեան տօնից տասն ներկու օր առաջ՝ որ մենք լատիններս խնդումով, կերութումով ենք անցկացնում, նրանք ապաշխարութիւնով և պատով են անցկացնում, հրաժարուելով մսից, գինուց, իւղից: Իսկ բուն խթման օրը՝ ծոմ են պահում, որպէս զի վերջալոյսից յետոյ պատարագ մատուցանեն: Իսկ երրորդ օրը Քրիստոսի ծննդեան տօնն են կատարում, ասելով՝ Յիսուս նոյն օրը ծնաւ և 30 տարուց յետոյ նոյն օրը մըկրրտուեց: Առաւօտուն ամենքն շտապում էին քաղաքի մօտի գետեզերքը գնալ, ուր որ թագաւոր տէրն էլ գնում էր՝ այս կարգով. ինքը թագաւորը զարմանահրաշ ճոխ պճնուած բարձրահասակ ձիու վրայ հեծած էր, նրա կողքից գնում էին Ալեման ասպետների կարգապետը, Սելեկիոյ հիւրընկալ ասպետների բերդապետը. իրանց կրօնակից հազար ընկերներով. յետոյ գալիս է տէր Ռուբէն Թագաւորազը և զօրականների բազմութիւնը գեղեցկադարձ հազնուած, որոնց մարդիկ ամեն մէկ զօրախմբի դրօշները և վառերը տանում էին ձեռներին բարձրացրած և նրանց

տարած ձիերի սանձից բռնած՝ մեծ թագաւորի առաջից դնում էին: Նրա և այդ խմբի միջով գնում էին շատ զինակիրներ իբրև անձնապահներ թագաւորի, իսկ ժողովրդի բազմութիւնը չորս կողմից ողջունում էր նրան սաստկաձայն աղաղակելով. «Սուրբ թագաւոր»:

Այսպէսի մեծ հանդէսով թագաւորը եկաւ իջաւ գետեզերքում սարքած վրանի տակ. ապա եկան յօյներն իրանց սրբազանով, շատ սրբազան սպասներով, և ապա այնչափ փողերի և երաժշտական նուագների ձայներ էին լսում, որ աւելի մի հանդէս քան թէ մի թափօր էր ձևանում. Սրանք էլ եկան որոշած տեղը կանգնեցին, և ամենքը սպասում էին հայոց եկեղեցական ուխտին, որ դալիս էր խաչելով, խաչվածներով, ոսկեհուռ զգեստաւորուած, օկնախտիղ ծանրագին սպասներով, իրանց կաթողիկոսով, խոնարհական կերպով վայելչակարգ թափօր կազմած: Երբոր բոլոր թափօրը մէկ տեղ եկաւ, սկսեցին քաղցրաձայն երգել, զրքեր, աւետարաններ և աղօթքներ կարդալ, օրհնեցին ջուրը, մկրտեցին ս. խաչը, հեղմամբ սրբալոյս միւռոնի: Այն ժամանակ մէկը գետի մէջ մտաւ և շաքարաբերան կանչեց. «Կեցցէ թագաւորը մեր յաւիտեան»: Բոլոր բազմութիւնը պատասխանեց. «Ամէն»: Յետոյ թագաւորը և ուրիշները օրհնած ջրով իրանց ցօղեցին, իսկ ասորիները մերկացած ընկան ջուրը:

«Այս արարողութիւնն աւարտելուց յետոյ, եկեղեցականները յետ դարձան իրանց տեղը. իսկ թագաւորը և զինուորականները փութացին դէպի դաշտերը, և պալատականները երիվարները վաղեցնելով, նիզակներ նետելով՝ զինուորական խաղեր արին, ամբողջ օրը մեծ ուրախութիւններով անցուցին:

«Այս էլ զիտցէր, որ տէր թագաւորը այդ Սիս քաղաքի մօտ իրան զբօսանքի մի պարտէզ է պատրաստել, որի սքանչելի վափկութիւնները նկարագրելը, խոստովանում եմ, որ իմ կարողութիւնիցս վեր է»:

Գ. ՃԱՄԲԵՐԳԻ ԲԱԿԱՆ

131. Լեհաստանի հայերը

Բաղրատունեաց հարստութեան անկումից յետոյ ԺԲ. դարուայ հայերն սկսան զաղթել դէպի Լեհաստան: ԺՁ. ժէ. դարերում հայոց թիւը Լեհաստանում հասաւ մօտ 200,000 հոգու, որոնք բնակուած էին մեծ մասամբ Լեմբերգ (Իլվով) և Կամենեց քաղաքներում: Լեհաստանում հայերը ձեռք բերին մեծ հարստութիւն, և մեծամեծ արտօնութիւններ: Նրանք իրաւունք ստացան ներքին ինքնավարութեան, որ կոչւում էր վոյթ. դատը վարում էին հայերէն, Միխիթար Գօշի զատաստանադրբով: Հայերի բարեկեցութիւնը հիմնովին խանգարուեց Նիկոլ Թորոսովիչ անունով հայ հոգևորականի շնորհիւ, որ ուրանալով հաւատոն՝ ընդունեց կաթոլիկութիւն և եզուիտներէ աջակցութեամբ սարսափելի հալածանք սկսեց հայերի դէմ: Լեմբերգի 50,000 հայերից այդ հալածանքի շնորհիւ մնաց միայն 5000 հոգի: Երկար դիմադրելուց յետոյ 1689-ին հայերն ստիպուած էին ճանաչելու Հռոմի գերիշխանութիւնը: Այդ օրուանից հայերի հարուստ գաղթը Լեհաստանում սկսեց նուազիլ և այսօր նրանցից մնացել են հազիւ 5,000 հոգի. բոլորն էլ կաթոլիկ, մեծ մասամբ լեզուն մոռացած: Այդ հայերի մնացորդին էր ահա, որ տուգտիս գրողն այցելեց 1899-ին:

Այց Լեմբերգի հայերին

1899 թուի յունիսի վերջերին՝ ես միաս լարով տոացի Լւերդային: Յարմարագոյն ճանապարհը՝ հայրենիք վերադառնալու, ընկնում էր Միւնխէնի, Վիէննայի և Լեմբերգի վրայով:

Լեմբերգ հասայ ես գիշերը ժամը 10-ին: Առաւօտ կանուխ շտապեցի հայ կանոնիկոս Աւգուստ Թէոփորովի տունը, որի հասցէն ձեռիս էր. սակայն մեծ եղաւ հիասթափումս, երբ ժամը 9-ին նրան տանը չգտայ, այն ինչ

ես որոշել էի նոյն օրն և եթ շարունակել ճանապարհս։
Լեհ աղախինը, որ բայի իր մայրենի լեզուից ոչ մի այլ
լեզու չէր հասկանում, առաջնորդեց ինձ մի այլ տուն,
ուր որոնածս անձի մասին տեղեկութիւն պիտի ստանայի։

Զորքորդ յարկում կանգ առնելով, աղախինը նշան
աքաւ, որ դանգահարեմ։ Հազիւ դուռը բացուել էր և այ-
ցեւորմասս ներս էի ուղարկել, որ դռան շէմքում երևեցաւ
բարակ, բարձրահասակ, լուրջ և խիստ զիմացձերով մի կա-
թոլիկ հոգևորական և քաղաքավարութեամբ ներս հրաւի-
րեց ինձ։—Յայտնեցի, որ ես հայ ճամբորդ եմ և ցանկա-
նում եմ անպատճառ տեսնել տեղիս հայ ուսանողներին։
Նա մի տոմսակ տուաւ, որով պիտի գտնէի Թէոդորովչին
համալսարանում։—Շնորհակալութեամբ հեռանալով այդ
ստորուածքանի մօտից, դռանը այցեւորմանի վրայ կար-
դացի, որ նրա անունն էլ Թէոդորովիչ է. ուրեմն հայ է։

Դարբասն անցնելիս՝ աչքս կանգ առաւ շէմքի քանի
վրայ, ուր մի տեսակ ծանօթ և տարօրինակ զծեր դրաւե-
ցին ուշադրութիւնս... և ով զարմանք. մօտիկից նայելով՝
առաջս բացուում է մաքուր Մեսրոպեան գրելով մի կի-
սամաշ արձանագրութիւն, որ ընկած լինելով շարունակ
ոտի տակ, մօտ ապագայում իսպառ կորչելու է։

Համալսարանում չգտայ Թէոդորովիչին։ Ժամը ար-
դէն 11-ին մօտերն էր, ես կամաց-կամաց վերադառնում
էի նրա տունը, երբ մի փողոցի անկիւնում, կարգում եմ
լեհերէն՝ «Հայոց փողոց». մի քիչ յետոյ ներս եմ մտնում
մի փոքրիկ եկեղեցու բակ, ուր դարբասի անկիւնում,
մարմարեայ մի քարի վրայի հայերէն արձանագրութիւնը
տարակոյս չի թողնում, որ հայոց եկեղեցու բակումն եմ։
Մի շարք գերեզմանաքարեր, հին Մեսրոպեան (երկաթա-
գիր) գրերով, փայտառում են ամեն մի կտակած. ես դի-
տում եմ եկեղեցին, անցողաբար կարդում եմ արձանագրու-
թիւնները և կանգ եմ առնում մի նոր—գեղեցիկ յուշար-
ձանի զիմաց... Հնութիւններ շատ ունիմ տեսած... բայց
այն զգացումը, որ ես ստացել եմ անսպասելի կերպով
Եւրոպայի մի անկիւնում մայրենի լեզուի հեաքեր զանելով,

այն միտքը, թէ մի անգամ այստեղ ապրել ու խօսել են հայեր, որոնց հենդանի ապացոյցը տեսնում եմ այս արձանների վրայ, ինձ մի տեսակ թովիչ, կախարդական և երկիւղալի տպաւորութեան մէջ էին դրել: Մարդ չէ ուղում հաւատալ իր աչքերին և միանգամայն շփոթւում է: Կրանք մեր կորոտեան լաւագոյն ապացոյցներն են... Մարդ մտածում է անցեալի, ներկայի և ապագայի մասին, և մի զառանցալի ու տխուր անորոշութիւն ճմլում, կեղեքում է մարդու սիրտը...

«Համեցէք, վերև համեցէք», լսում եմ յետից և հաւատալս իսկի չի գալիս. ո՞վ պիտի այստեղ հայերէն խօսի, ո՞վ գիտէ իմ հայ լինելս: Ինձ այնպէս թուաց, թէ ականջներս խաբում են, թէ այս արձանագրութիւններն են, որ լեզու առած ինձ հետ հայերէն են խօսում: Ճանապարհի բազմաթիւ տպաւորութիւններից և անքնութիւնից յոգնած երևակայութեան համար մի տարօրինակ բան չէ բաց անքով զառանցելը... սակայն ձայնը կրկնւում է: Յետ եմ նայում պատուհանին, որտեղից ձայնն է գալիս և զարմանքով նկատում, որ տեսածս իրականութիւն է. «համեցէք» կրկնում է մի պարոն ժպտն երեսին, վերև համեցէք:

Մի քանի քայլով արդէն երկրորդ յարկումն էի, ուր հաւաքուած գտայ եօթ-ութ հոգի, բոլորեքեան հայ-կաթոլիկ հոգևորականներ: Բոլորն էլ գիտեն մի քանի խօսք հայերէն, ոչ աւել:—Մինը միայն, Դաւիթովիչ, անսայթաք հայերէն է խօսում: Ֆիացեալների հետ սկսեցի զերմաներէն բացատրուել:—Նրանցից տեղեկացայ, որ Թէոդորովիչը իմացել է իմ գալը և ինձ է որոնում: Հայ հոգևորականները տեսնելով ինձ եկեղեցին զիտելիս, ճանաչել են, որ ես պիտի լինիմ նորեկը և ներս են կանչել:—Մի քանի րոպէ խօսակցելուց յետոյ նրանք մի ծառայ տուին, որ ինձ ցոյց տայ Թէոդորովիչի տունը: Հազիւ դռնից դուրս էի եկել, որ մի զոյգ առոյգ և երիտասարդ ձեռներ սեղմեցին իմ բազուկը.— դա Աւգուստ Թէոդորովիչն էր, իմ որոնած հայ ուսանողը, հայ կաթոլիկ հոգևորականի տարագով: Սև ու թարմ դիմադժերով մի տաք ու վառվռուն երիտա-

սարգ էր դա... Նա առաջնորդեց ինձ իր բնակարանը, ուր Եւրոպայի հայ ուսանողների բարենները հաղորդելուց յետոյ, յայտնեցի, որ կ'ուզէի մնացեալ ուսանողներին էլ տեսնել, որ շուտով ճանապարհս շարունակեմ:

Թէոդորովիչն ինձ հայի պէս հիւրասիրելուց յետոյ առաջնորդեց պ. Մանուկեիչի մօտ, ուր երկու սենեակում չորս հայ ուսանող միասին են ապրում: Մի ժամից յետոյ տասնի չափ ուսանողներ արգէն շրջապատել էին ինձ— Հայեր, այնպիսի վառուած հայեր, որոնց նմանը ես երբէք չեմ տեսել: Մի կողմից նրանք ուշ ու միտք դարձած ուզում են անթիւ հարցերով գաղափար ստանալ մեր կացութեան մասին. նրանք հրճւում են, լսելով, որ հայերի մեծամասնութիւնը դեռ հայերէն է խօսում, ժողովրդի մեծ մասը դեռ հոգագործ է, ունինք մամուլ, դպրոցներ ու կրթուած մարդիկ, որ կաթոլիկութիւնը մեզ համար վտանգաւոր չէ... միւս կողմից ամեն ջանք ու ճիգ թափում են ցոյց տալու, որ իրանք էլ դեռ հայեր են, լաւ հայեր, թէև կաթոլիկ ու յեզուէն մոռացած: Մարդ ուղարկեցին և բերել տուին «Հայոց դպրոցից» միակ հայ տղան, որ դեռ չէ մոռացել մի քանի հայերէն բառեր, իսկ երբ նա սկսեց հայերէն «մէկ, երկու» համարել, նրանց հիացմունքը հասաւ հրճուանքի: Խեղճեր, չգիտեն թէ քանի՜ քանի հայ ընտանիքներ դիտմամբ ջանք են թափում մոռանալու հայերէնը... Նրանք ուզեցին ինձ հայավարի հիւրասիրել և բերին բուժէն «այծի միս», որ միմիայն տեղացի հայերի կերակուրն է. դա պատրաստուում է այծի մսից և մի տեսակ երշիկ է... Ճաշից յետոյ, երեկոյեան, հայերի թիւը հասաւ մօտ 16-ի. կանչեցին միակ հայ զինւորին, որին է յանձնուած տեղական զօրքի պաշարը գնելու և մատակարարելու գործը՝ շնորհիւ իր աշխրջութեան:

Ինձ ստիպեցին, որ ազգային տաղեր երգեմ, և նոյն երեկոյեան զրի առան ու սովորեցան «Բամբ որոտանը», որ նրանց սաստիկ դուր եկաւ: Նրանց ոգևորութիւնն այն աստիճանի է հասել, որ որոշել են, միջոցները ներածին պէս, Հայաստան գալ, հայ ազջկայ հետ ամուսնանալ և հա-

յերէն սովորել: Ոմանք՝ ձեռ են քաշել իրանց ընտրած աղջիկներին՝ հայ աղջիկ ուզելու մտադրութեամբ: Կարծելով թէ ինձ համար անդուրեկան է նրանց կրօնը—կաթոլիկութիւնը, օգտուելով կանոնիկոս Թէոգորովիչի բացակայութիւնից, բացատրում էին, որ առաջին յարմար բոլէին նրանք պատրաստ են մայրենի եկեղեցու գիրկը դառնալ:—Ես նրանց հասկացրի, որ անցել են կրօնական մոլեռանդութեան դարերը, թէև ցաւալի է այն, որ հայերից շատերը կաթոլիկ են դարձել, բայց և այնպէս նրանք մեզ համար նոյնպիսի հարազատ ու սիրելի եղբայրներ են, ինչպէս և լուսաւորչականները, միայն թէ իրանց հայ զգան և հայ ճանաչեն...

Այդ երեկոյ թատրոն չլինելու պատճառով, ինձ տաքան ցիրկ, այնտեղից էլ ընթրիքի և ապա իրանց մօտ նընջելու: Առաւօտ կանուխ ես ինձ հրաւիրողներին թողնելով քնած՝ շտապեցի կանոնիկոս Թէոգորովիչի մօտ, որին պատայ պարագելիս: Երիտասարդ հոգևորականը մի լաւ գրագործն ունի, յատկապէս հայերին վերաբերեալ գրքերի՝ եւրոպական բոլոր լեզուներով: Հին լեզուներից զատ նա խօսում է, գրում է ֆրանսերէն և գերմաներէն, իսկ լեհերէնը նրա մայրենի լեզուն է: Չնայելով որ մայրը լեհ է, նա է տեղական հայութեան հոգին ու եռանդը, գրում է լեհ և գերման թերթերում և առանձին բօշխմաներ ունի նուիրած հայոց խնդրին: Ազատ կարգում է հայերէն, միայն շատ քիչ բան է հասկանում: Նրա ցանկութիւնն է կարելոյն չափ շուտով Հայաստան գալ հայերէն սովորելու, որի համար նա ուզում է մինչև անգամ ուսումը կիսատ թողնել: Իմ բարի խորհուրդն էր համոզել, որ նա առաջ վերջացնի ուսումը, ապա նուիրուի հայերէնի ուսոյթին,

Գործն աւելի հեմնաւոր անելու համար, ես նրանց պահանջի համեմատ խոստացայ մի հայ ուսանող ուղարկել, որ ուսուցանէ նրանց, և ինքն էլ ուսանի համալսարանում: Մենք զնացինք հայոց եկեղեցին ժամերգութիւնը լսելու: Չը կարողացայ ըմբռնել. ի՞նչ լեզուով էր կատարւում ժամերգը: Դրբերը գիտելուց տեսայ, որ կար-

դում և երգում են հայերէն. սակայն այն աստիճանի խորթ արտասանութեամբ, որ հասկանալ անկարելի էր: Ամեն բան կորսուել ու մոռացուել է, բացի ծէսից: Պատարագիչն էր հայ կաթողիկ եպիսկոպոսը, Լեհաստանի հայերի առաջնորդը, հայ տիպարով մի քթեղ հոգևորական: Այնուհետև Ա. գուստ Թէոֆորովիչն ինձ ուղեկցեց քաղաքից մի քիչ դուրս գրասենյու... Ճանապարհին նա ցոյց էր տալիս այս կամ այն տունը, այս և այն եկեղեցին ու վանքը, որ ժամանակով հայերին են պատկանել, իսկ հիմա անցել են լեհերի ձեռք: Նա ինձ ցոյց տուաւ քաղաքի կենդրոնում մի հիւանալի արձան, նուիրած մի յայտնի լեհացի թագաւորի յիշատակին, որ հայի դործ է, արուեստագէտն էլ գեռ կենդանի: Պատմեց յայտնի նկարիչներին, մամուլի ներկայացուցիչներին, բանաստեղծներին, ջութակահարներին և այլ նշանաւոր արուեստագէտների ու դիպլոմատների մասին հայ-ծաղումով, որոնցով պարծենում է լեհ ազգը— Հայերն այնքան լաւ անուն են ունեցել այդտեղ և այնքան մեծ հայրենասիրութիւն, որ Սենկեիչը իր մի պատմական վէպի մէջ մեծ համակրանքով է խօսում նրանց մասին...

Այդ օրը ճաշից առաջ հարկ էր այցելել տեղական մի քանի հայերի, միւսին (արձանագործին) տանը չգտանք, երկրորդը — վաճառականը շատ սիրալիր ու զարմացած ընդունեց «հայի» այցելութիւնը, երրորդը պրօֆեսսոր— Յովհաննէս Անտոնիչը— Բոյոցի ասպետ, պատկանում է տեղական արխատոկրատիային, դասախօսում է գեղարուեստի պատմութիւն և յայտնի դիտնական է: Նա բարձրահասակ, մորթու թուխ գոյնով և բուն հայկական տիպարով մի պարոն է, որ հայի լրջութեանը միացնում է կիրթ եւրոպացու մեղմ ու դուրեկան շարժումները:

Նա մեզ ընդունեց վերին աստիճանի սիրալիր, իր զրասենեակում, ուր հաստ գրքերով ծանրաբեռնած սեղանի մօտ սուրճ հրամցուց: Մի քանի վայրկեանից յետոյ սիրալիր խօսակցութիւնը դարձաւ ընկերական, կարող էի ասել եղբայրական: Հասկանալի է, խօսակցութեան նիւթն ինչ կը լինէր... ինձ հետաքրքրողը Լեհաստանի հայերն էին,

խիստ պրոֆեսսորի ցանկութիւնն էր կարելոյն չափ շատ տեղեկութիւններ ստանալ մեր մասին: Այդ ամենի հետ ինձ զարմացնողն ու հիացնողն այն էր, որ մի լեհական ազնուական, մի աւստրիական հպատակ և վերջապէս մի զիտնական, առանձնացած ու դարերով կտրուած հայրենիքից, ոչ միայն արտաքինով, այլ և հոգով մնացել է կատարեալ հայ: Ես առանց քաշուելու ասացի նրան իմ կարծիքը, աւելացնելով, որ նա պարտական է Հայաստան գալու և իր աչքերով տեսնելու այն ամենը, ինչ որ նրան հետաքրքրում է... «Մենք մի Հայրիկ ունինք, որին ուխտ են դալիս ամեն տեղի հայերը, ես պիտի պատմեմ ձեր մասին նրան և նրա սիրտը պիտի ցաւի, եթէ դուք ձեր որդիական յարգանքները չմատուցանէք նրան: Էջմիածնում: Ես ձեզ ճիշտ եմ ասում, մինչև օրս մենք չգիտէինք, որ Եւրոպայում մենք ձեզ նման բանիմաց հայ եղբայրներ ունինք, այդ մասին ես պիտի յայտնեմ մեր մամուլի մէջ, և դուք հայերի յանգիմանութեանը պիտի արժանանաք, եթէ մեզ այցելութեան չգաք: Իբրև արևելցի ես պարզ եմ ասում այն, ինչ որ մտածում եմ, մենք էլ արուեստ ունինք. ձեր վրայ պարտք կայ ճանաչել տալու մեր արուեստը Եւրոպային»:

Իմ խօսակցութիւնը, ինչպէս երևում է, լաւ տպւորութիւն էր թողել պրոֆեսսորի վրայ, որովհետև երբ ոտքի ելանք մեկնելու, նա համարեա զօրով ստիպեց, որ նոյն երեկոյեան անպատճառ իրան կրկին այցելութեան գնանք. տեսնելով որ այդ անկարելի է, քանի որ նոյն օրը ես մեկնելու էի, նա խնդրեց ներկայ գտնուել իր դասախօսութեանը՝ վերջում մի քիչ զրուցելու համար:

Ժամանակի սակաւութեան և ճանապարհի պատրաստութեան պատճառով ես ու իմ բարեկամ Թէոդորովիչը հազիւ դասախօսութեան վերջին մտնել կարողացանք լսարան, ուր խօսում էր պ. Անտօնսիչը: Նա մի այնպիսի ընդունելութիւն ցոյց տուաւ, որ ես պէտք է մինչև ականջներս կարմրէի: Մեր մտնելը նկատելուն պէս, նա վերկա-

ցաւ տեղից և խորը կերպով գլուխ տուաւ, որի պատճառով ամբողջ լսարանը՝ օրիորդներ ու երիտասարդներ, հայեացքները ուղղեցին դէպի մեզ: Դասախօսութեան նիւթը Միքէլ Անջէլօ-ի մի պատկերն էր:

Նա մեզ առաջնորդեց իր աշխատանոցը... և բայց աբաւ մի խումբ ստուար կարտոններ, որոնց վրայ գիտնականի հոգածութեամբ ու խնամքով արտահանած էին բոլոր այն արձանագրութիւնները, ծաղկանկարներն ու քանդակները, որ երբ և իցէ ստեղծել են Լեհաստանի հայերը: Այն զրբերը, որ ես ցաւելով հանդիպել էի հայ հոգևորականի շէմքում կորստի մատնուած, հիացմունքով տեսայ, որ հայ-գիտնականը խնամքով ժողովել և պահում է... Պ. Անտոնիէլը տեղական հայ-եկեղեցու երեցփոխն է, ուղում է նոյն եկեղեցին նորոգել հայ-ճաշակով, ուստի ինձանից տեղեկութիւններ և նիւթեր խնդրեց 17 դարու հայ արուեստի մասին: Վերջացնելով այդ հաւաքածօն դիտելը, մենք նստանք հարեան սենեակում խօսելու: Նկատելով համալսարանի ուսանողների և պրօֆեսորների ցանկը, նա սկսեց հաշուել և ցոյց տուաւ, որ պրօֆեսորներից վեցը հայ ծագում ունին, բայց երկուսն են միայն, որ դեռ չեն մոռացել իրանց ազգութիւնը: Ուսանողների մէջ հազիւ ութ հոգի հայ են զրել իրանց, որի վրայ վրդովուելով, նա պատուիրեց Թէոդորովիչին չիր անունով յանդիմանելու այն ուսանողներին, որոնք իրանց հայ անունը մոռացել են նշանակելու ցանկի մէջ. եթէ ումինը, լինը, գերմանացին այստեղ չեն մոռանում իրանց ազգը, մենք ի՞նչու պիտի մոռանանք: Մինչ այդ, պրօֆեսոր Անտոնիէլը, մանկական պարզութեամբ խնդրեց լսել իր երգածը և հաւատարմացնել՝ արդեօք ճիշտ է եղանակը... և յիսնամեայ գիտնականը սկսեց երգել «Մեր հայրենիք թշուառ անտէր», մի այնպիսի տենչանքով, որ կարելի էր լաց լինել, եթէ մարդ չամաչէր: Այդ երգը նա սովորած է եղել Վենետիկի հայրերից, առանց հայերէն գիտենալու:

Լսելով որ տեղական հայ ուսանողները ուղում են հայրենի ուսուցիչ հրաւիրել, նա սաստիկ ուրախացաւ, աւե-

լացնելով, որ աշակերտներին մինն էլ ինքն ու իր որդին պիտի լինին: Երբ ես կրկին խնդրեցի խոստանալ Հայաստան գալու, նա ասաց, որ առաջիկայ երեք տարուայ ընթացքում այդ չի կարող անել, որովհետև գլխավորն նրա պատակով նա պաշտօնապէս պարտական է ուղևորուել Իտալիա և Պորտուգալիա, իսկ այնուհետև երբ ես հայերէն սովորած կը լինիմ, այն ժամանակ կուգամ Հայաստան իմ աչքով տեսնելու և հասկանալու, որովհետև ես ուսումնասիրած չեմ համարում այն բանը, որ թարգմանների միջոցով է կատարուում: Նա հայերէն սովորելու դասագիրք խնդրեց ինձանից, որ անկարող էի տալ, բանի որ այնպիսին աշխարհաբարի համար գոյութիւն չունի: Խոստանալով նիւթեր ուղարկել հայ արուեստի և հայ երաժշտութեան մասին, յայտնել մանաւանդ՝ արդեօք թիւրքերի ու պարսիկի գործածից, հայի գործած կապերտը, գորգը և կամ որևէ արուեստի գործը որոշում է, ես մնաս բարև ասացի պրոֆեսորին, որ մի անմոռանալի և դուրեկան տպաւորութիւն թողեց վրաս: Իբրև յիշատակ նա ինձ տուաւ մի փոքրիկ բրօշիւր, Լեհաստանի հայերի մասին, որ իր դրածն է և քաղուած է «Աւստրո-Ունգրիան պատկերով ու խօսքով» յայտնի գործից:

Նոյն երեկոյեան ժամը 10-ին, 12 ի չափ երիտասարդ հայեր երկաթուղու կայարանն եկան ուրախ երգերով և յոյսերով ճանապարհ ձգելու «Հայաստանցի բարեկամին» ուղարկելով իրանց լաւագոյն իղձերն ու ցանկութիւնները իրանց հեռաւոր եղբայրներին...

Երկաթուղին սլանում է, ես առանձնացած օթեակում շարունակ մտածում եմ, երանք էր այս ամենը թէ իրականութիւն... Ես յաւիտեան չեմ մոռանայ այդ բարի, ազնիւ ու հիւրասէր երիտասարդներին, որոնք երկու օրուայ ընթացքում այնքան դուրեկան և անջնջելի տպաւորութիւն թողին վրաս...

Գ. Վանցեան

Ալեքսանդրապոլից մինչև Անի մօտ 50 վերստ է։ Անցնելով Ախուրեան գետը՝ դուք մտնում էք մի ընդարձակ դաշտ—Շիրակայ դաշտի շարունակութիւնը։ Այդ դաշտի միջից հեզիկ սահում է Ախուրեանը՝ բաժանելով ոռոսացի և տաճկացի նախկին սահմանները։ Գետի երկու կողմում ձգւում են բազմաթիւ գիւղեր։ Այդ գիւղերի մէջ, որոնցից ոմանք տաճկաբնակ, ոմանք հայաբնակ և ոմանք խառն են, կան կանգուն և անկանգուն, հին և նոր, աւեր և կիսաւեր եկեղեցիներ և վանքեր... որոնք մի առանձին տրպաւորութիւն են գործում առաջին անգամ այդ երկրում ոտք կոխող հայ ճամբորդի վրայ։

Կարծես մի ելեքտրական զօրութեամբ հեռադիտակս դէպի Ալաճայի ստորոտը խոնարհուեց և Անույ աւերակները յանկարծ իմ աչքին դիպան... Աստուած իմ... չեմ կարող խօսքով բացատրել այն՝ ինչ որ նոյն բոլէում ես զգացի... Միտա փղձկաց և արտասուէքներն ինձ հեղձամղձուկ արին։ Սրտատրոփ և տալնապալից կտորիցս վայր իջայ և ջերմ արտասուքով իմ կաթոգին և մոռացուած հայրենիքի սուրբ հողն առաջին անգամ համբուրեցի։

Ոչ թէ հայ այլ ամեն մարդ, ինչ ազգից կուգէ, թող լինի, տեսնելով առաջին անգամ այդ քաղաքը՝ չէ՛ կարող անտարբեր նայել նրա աւերակներին, որոնք մի ծանր, մի սրտաճմլիկ տպաւորութիւն են գործում մարդու վրայ։

Աւերակների շատութիւնը և միասին լինելը, նրանց վիթխարի տեսքը, վսեմութիւնը, փառաւորութիւնը՝ այդ ամենը կենդանութիւն են ներշնչում։ Միւս կողմից՝ փրլատակների, կոյսերի, հողաբլուրների և քարաբլուրների ահռելի տեսարանները իրանց մեռելութեան հոտ փչող լութեամբ մի զարհուրելի գերեզմանոցի պատեր են ներկայացնում։ Ձեր աչքն արագաբար այս և այն կողմն է ձգւում, իսկ ձեր ուշքն ու միտքը անդադար այս և այն կողմն է ուստոստում. ելեքտրական մի ցնցիւն, մի սար-

սուտ էք զգում ձեր ջղերում և կարծես ուզում էք թող-
նել-փախչել այդ անաւոր և փառաւոր, այդ սխրալի ու
տխրալի տարօրինակ քաղաքից, որի ամեն մի անկիւնից,
ամեն մի կողմից տաղաչափի ասածի նման՝

Հետզհետէ քեզ անս նոր-նոր ձայն

Սրտիդ մէջ, տիկին, արձագանք կուտան.

Ամեն մի քարէ մի նոր ձայն կելլէ,

Ամեն մի բեկոր նոր բան կը պատմէ.

Ո՛ր կողմը նայես՝ տխուր տեսարան,

Ո՛ր կողմը դիտես՝ աւերակ միայն.

Կամ հրաշալի սուրբ եկեղեցեաց

Յը տեսնես զու լոկ գմբէթը մնացած,

Կամ մեծակառոյց ի հիմանց ի վեր,

Պիտաւեր կանգնած են աղարանքներ.

Ահա կը շարժին, անս կերերին,

Նոքա էլ հիմա գետին կը փռուին:

Իսկ զու զպացուած, տխուր ցօղաղին

Աչքով կը տեսնես աւերակ Անին:

(Մ'կրտիչ Պալեան)

Անին տեսնող ամեն ճանապարհորդ իր անունն ու
աղբանուներ և մի քանի սրտառուչ տողեր մատիտով, ւ-
ծուխով կամ կաւիճով գրել է այս և այն տեղում:

Այդ արձանագրութիւնները բոլորն էլ սրտացաւ բո-
ւանդակութիւն ունին. նրանց մէջ կան այնպիսիները, որ
աւելորդ չհամարեցի դուրս բերել յիշատակարանիս մէջ:

Ահա այդ տողերը.

1. Գեղածիժաղ զուտ գարունը տիրելու է այս երկրում.

Քաջ և անվախ հայ անունը մնալու է միշտ աշխարհում:

2. Եկի, տեսի և ողբացի.

3. Աստուած իմ, ինչո՞ւ թողիք, որ անօրէնները պղծեն քո
սուրբ տաճարը. ինչո՞ւ թողիք քեզ սիրող և սաշտող ազգդ:

(Այս տողերը ռուսերէն է և նրա գրողը մի ռուս
գնդապետ):

4. Այսքան զօրութիւն ունեցող մի ազգ՝ եթէ մինչև

հիմա չէ՛ անհետացել, այսուհետև երբէք չի անհետանայ:
(Սորա գրողը մի Ֆրանսիացի է:)

5. Ամեն տղայ ունի իրան հէր ու մէր,

Մէջ աշխարհիս դու ես անտէր մնացեր.

Արարածոց լոյս է բացուել անջնջեր,

Քեզի համար մթոտ, ամպոտ սև օրեր:

6. Հեռուից կ'երևին ժամ ու զանգատուն.

Բերդն ու պարիսպ նկուն, կ'իսով քայքայուն,

Քաղաքդ, շէնքերդ անբնակ,

Դէ՛հ, ի՞նչպէս հայու աչք չողբայ անբուն:

Ձերևիր թագաւոր, չերևիր զինւոր.

Հայաստան սգաւոր, վախ, էս լի՛նչ սև օր.

Արարատ, քո տխուր ազգդ ցիր ու ցան,

Երկիրդ ոտաց կոխան, ափսոս քեզ համար:

(Այս գրողիկ տողերը մի պատուական հայ-կաթոլիկ
վարդապետի են):

«ՓՈՐՁ» Դեղամեան

133. ԿԱՐԻՆ ԿԱՄ ԷՐԶՐՈՒՄ

Կարին քաղաքը գտնուում է Եփրատ գետի ափունք-
ների մօտ, թիւրքաց Հայաստանի այն մասում, որ հին ժա-
մանակ կոչւում էր Բարձր Հայք:

Հայաստանի ամեն մի թիզ հող հին ժամանակներից
սկսած օտարները աշխատել են խել. յոյն, պարսիկ, ա-
րաբ, թաթար, թուրք և այլ ցեղեր Հայաստանին տիրելու
համար նրան աւերել են, նրա բնակիչներին կոտորել: Այս-
պիսի բարբարոսութիւնների շատ է վկայ եղել և Կարինը:

Պատմութիւնից յայտնի է, որ դեռ Ե. դարում Ք. յ.
Անատոլ անունով մի յոյն զօրավար Հայոց Կարին գիւղը
ամրացնելով քաղաք դարձրեց և ի պատիւ յունաց Թէո-
դոս կայսեր այդ քաղաքը Թէոդոպոլիս անուանեց: Այնու-
հետև քրիստոնեայ յոյները և կռապաշտ պարսիկները եր-
կար կուռւմ էին իրար դէմ Հայաստանը իրար ձեռքից

խելու համար: Իսկ է՝ դարում Հայաստանի վրայ յարձակուեցին մահմեդական արաբները և տիրելով մեր երկրին՝ զրաւեցին և Թէոդոսովս քաղաքը, որին տունն էր գրուում անունը, որ նշանակում է յոյների (ուռում) երկիր: Արաբներից յետոյ Հայաստանը աւերեցին թաթարներ, որոնց ցեղերից մէկը, այսինքն թիւրքերը, վեցերորդ դարի սկզբում տիրեցին նրան: Այդ ժամանակից մինչև օրս կարինը մնաց թիւրքաց ձեռքում: Զարմանալի չէ, որ այդքան փոփոխութիւններից յետոյ Կարինում այժմ դժուար է հին Հայաստանի յիշատակներ գտնել:

Կարինը այժմ թիւրքաց Հայաստանի ամենամեծ վարչական կենդրոնն է: Նա էրդրումի նահանգի կամ վիլայէթի գլխաւոր քաղաքն է և առաջնակարգ ամրութիւնն է: Կարինը գտնուում է այն մեծ ճանապարհի վրայ, որը Տրապիզոնից տանում է Պարսկաստան: Կարինը թիւրքաց Հայաստանի այն գլխաւոր առետրական կենդրոնն է, ուր Հայաստանի դանազան կողմերից հաւաքւում են ամեն տեսակ բերքեր և ապրանքներ. այսպէս օրինակ, Բաղէշից բերում են կարմիր կտաւ, Վանից շալեր, Արաբկիրից բամբակեայ մի գործուածք, որ կոչւում է մանխալ, Պարբերդից գինի և մետաքսի մի գործուածք, որ կոչւում է գեազի, իսկ Բարձր Հայք դանազան կողմերից ստացւում են մեծ քանակութեամբ գայլի, աղուէսի, կուզի և այլ թանձրամորթ գազանների մորթիներ:

Կարինը կապւում է Անգրկովկասի հետ Կարս քաղաքի միջոցով: Չնայած իր վարչական և արևտրական նշանակութեան՝ Կարինը շատ ողորմելի արտաքին տեսք ունի. նրա փողոցները նեղ են, ծուռ ու մուռ ու կեղտոտ, տները փոքր են և անշուք. չեն երևում եկեղեցիների գմբէթներ, այլ քաղաքի դանազան կողմերում բարձրանում են մզկիթների մինարէներ:

Կարին քաղաքում ապրում են մօտաւորապէս 8 հազար տուն բնակիչներ, որոնցից հազիւ 3 հազար տունը հայ լինի, իսկ մնացածը՝ թուրք: Բացի յայերից և թիւրքերից կան նաև ռակաւաթիւ պարսիկներ, եւրոպա-

ցիք և յոյներու Հայերի թիւը պակասեց՝ երբ 1828 թուականի ուսւ տաճկական պատերազմից յետոյ հոյերի մի մասը թէ քաղաքից և թէ շրջակայ գիւղերից զաղթեց Ռուսաստան: Այդ զաղթականները հաստատուեցին Ալէքսանդրապոլի, Ախալցխայի և Ախալքալաքի կողմերում:

Հ. Սարգսեան

134. ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՆԻՐ

Հայերն Հնդկաստան անցան Պարսկաստանից, մանաւանդ Նոր-Ջուղայից, և իբրեւ ճարպիկ վաճառականներ, հաստատուելով Կալկաթա, Բոմբայ, Մադրաս, Սուրաթ քաղաքներում ձեռք բերին մեծ հարստութիւն և հասան բարձր դիրքերի: Երբ անգլիացիք տիրել ուզեցին Հնդկաստանին, հայերը միջնորդ հանդիսացան նրանց և հնդիկ իշխանների մէջ:

Հնդկաստանի հայերը մեծ դեր են կատարել մեր մշտաւոր վերածնութեան գործում: Հնդկաստանի հարուստ հայերից աղա Շամիրը և Ամիր-խանը փողով ուզում էին գնել Հայաստանը և ազատել թուրքերի և պարսիկների ձեռքից: Առաջին հայ լրագիրը «Ազգարար» հիմնուեց Մադրաս քաղաքում, 1794 թ. Շմաւոնեան քահանայի ձեռքով:

Կալկաթայում հայերն ունին այսօր մի ձեմարան, որին կից մի ժամանակ գոյութիւն ունէր և տպարան, ուր Թադեաթեանի խմբագրութեամբ հրատարակւում էր «Ազգասէր» օրագիրը:

Հնդկահայ Մուրադի և Ռափայէլի թողած փողերով է, որ այսօր պահպանւում է Վենետիկում Մուրադ-Ռափայէլեան դպրոցը. և Նոր Նախիջևանում մի քանի դպրոցներ (տես Նալբանդեանի կենսագրութիւնը): Հնդկաստանից հայ վաճառականներն անցան Զաւա և այնտեղից էլ մինչև Զինաստան ու Ճապոնիա:

(Մի գլուխ «Կայսեր ծամբորդութիւնից ցեպի արեւելք»)

Հնդկաստանում, վաղուց տրդէն աչքի է ընկնում հայ

տարրը մի որոշ ազդեցութեամբ: Նրանք իրանց կապերը չեն կտրել էջմիածնից, և ամեն մի կաթողիկոսական ընտրութեանը մասնակցում են հայ ձայներ և Գանդէսի ափերից: Կովկասը և ռուս-պետութիւնը դորա համար էլ սիրելի են հայ ազգին, որի անդամներից շատերը առևտրով հեռացել են Ասիայի խորքերը և շատ տեղերում գրաւել են աչքի զարնող տնտեսական դրութիւն:

Երբ մեծ մօնղոլներից մինն ամուսնացնել էր ուղում իր մօտ ծառայող անգլիացի բժշկին, նա հրաժարւում էր ոչ քրիստոնեայ ակճկայ հետ ամուսնանալ: այն ռամանակ նրան առաջարկեցին մի հլայ զինուորականի աղջիկ: Երբ անգլիական առաջին դեսպանը Հնդկաստանում, պ. Ռօ, ճամբորդում էր երկրի խորքը, նրա խոհարարը խիստ հարբեց հլայ դուքանչու մօտ:

Առևտրական գործերով Հայկի սերունդը ցրուած է ամբողջ հնդկական թերակղզում և ուր հնարաւոր է եղել, հիմնել է մի մի ծաղկած դաղթաւալը: Այսպէս օրինակ Պալկաթայում հայ կօլօնիան սյնքան հարուստ և փարթամ էր, որ 1724 թ. Ակոր.Նազարը հիմնեց մի հայ-լուսաւորչական եկեղեցի: Սորան կից հայերն ունին հիմա մի ճեմարան և աղքատանոց, իսկ մի ժամանակ այստեղ կար տպարան և հրատարակւում էին հայ գրքեր ու լրագիր:

Կաթողիկոսի ստորագրեալները Պալկաթայում, գիտե՛նալով Ռուսաստանի նշանակութիւնը հայերի վերաբերմամբ, ցանկացան մի ընծայ տալ Ն. Կ. Բ. թագաժառանգ Յեսարեիչին. դորա համար էլ հայ արծաթագործները պատրաստեցին մի արծաթեայ մօդել հռչակաւոր հնդկական տաճարի—«Բուզդա-Հայա», որ և մատուցուեց ըստ հարկին:

Իշխ. Ուխտովսկի

135. ՄԻ ՊՏՈՅՏ ՆԱԳԱՍԱԿԻՓՈՂՈՑՆԵՐՈՒՄ

Առաւօտը շատ վաղ ջինրիկշաները արդէն խմբուել էին լուսամուտների տակ, ուշագիր մեր գուրս գալուն, և

հենց որ երևացինք զոների մէջ, նրանք ուրախ վազ տուին՝ դէպի մեզ, իրար առաջը կտրելով:

Առանց վարանումի չէր, որ մենք տեղի տուինք նրանց խնդրանքին ու հեծանք թեթև կառքերը:

Զինրիկչաները իսկոյն հանգստացան, սրբուեց նրանց դէմքից պաղատանքի արտայայտութիւնը, և մեզ մի թեթև ու խնամածու ժպիտ ձօնելով՝ աշխոյժ լծուեցին ու առաջ վազեցին:

Այլ ու ձախ երևում ու աչքից կորչում էին չինացի դերձակների ու կօշկակարների աշխատանոցներն իրանց ցուցանակներով և այլ այդ կարգի ուրիշ խանութներ, որոնք ծառայում են եւրոպացիների պէտքերին: Զինացիք շատ վարժ եւրոպական շորեր են կարում, ճարպիկ կերպով յարմարուելով մեր ճաշակին ու տարազին, որ նրանց համար այնքան խորթ է:

Այդ տեղակէտից առանձին աջոգութիւն ունին կնոջ հագուստ կարողները, այնպէս որ եւրոպուհիք յօժարութեամբ դրանց են յանձնում իրանց արդ ու զարդը:

Ուրախ է կեանքը եւրոպական թաղում:

Անթիւ գարեջրատների բաց դռներից դուրս են խուժում հարբած երաժիշտների հնչիւնները, որի չափի տակ զուարթ պարում են զլուխները տաքացած օտարազգի նաւաստիները,

Մենք արագ անցանք կամրջով այն բաղմաթիւ ջրանցքներից մէկը, որոնք ցանցի պէս կտրում են քաղաքը, և մտանք արդէն դուռ ճապոնական մասը:

Մի վայրկեան ամեն բան շուրջդ խաղալիքի տպաւորութիւն է անում: ամեն ինչ այնքան մանր է ու փոքրադիր, Փողոցը այնպէս նեղ է, որ եթէ պատահմամբ եւրոպական մի կառք ներս մտնէր, կը խցէր ամբողջ փողոցի շարժումը: Էլ ինչ ասել կուզէ, որ շուռ տալ բացարձակապէս կարող չէր լինի: Ինչքան էլ շատ փոքր լինէին մեր կառքերը, նորից ստիպուած էինք իրար հետից գնալու, ոտքով գնացողների ճամփան չփակելու համար: Մակայն փողոցը ոչ մութ էր թւում, ոչ էլ մռայլ շնորհիւ շէնքերի

ցածութեանը: Տները բոլորն էլ անխտիր երկյարկանի են, կղմինդրէ մի օրինակ թեք կտուրներով և բամբուկի բալակ պատերով: Ցածի յարկում գետեղուած է լինում խանութը կամ արհեստանոցը, վերևում ապրում է տէրը: Ընդհանուր տպաւորութիւնը մօտաւորապէս նոյնն է, ինչ որ ասիական բաղարը Կովկասում: Այստեղ էլ չկան արտաքին պատեր. այստեղ էլ ապրանքը դարսուած է գուրսը: Ամեն ինչ բաց է, ամեն ինչ մատչելի ցանկացողի աչքին: Հիմնական մեծ տարբերութիւնն այն է, որ այստեղ հետք անգամ չկայ ասիական համբաւաւոր անկարգութեան ու կեղտի:

Շուրջը ամեն բան փայլում է մաքրութիւնից: Շէնքերը այնպէս սեղմ ու անընդհատ կցուած են իրար, որ մարդ տկամայ սարսափում է, մտածելով, թէ ի՞նչ է լինելու քաղաքը, եթէ յանկարծ հրդեհ ընկնի: Ի՞նչ ճարակ կայ այստեղ բոցերից: Վարտոնի նման բարակ տները չոր յարդի պէս մի վայրկեանում կայրուեն: Բայց իսկապէս հրդեհը այնքան էլ մեծ ու յաճախ չի լինում այստեղ համեմատաբար: Ճապոնացին կրակի հետ չափազանց զգոյշ է:

Նա երբէք գիշերը չի թողնի նաւթի լամպը վառ: Այլ միայն իւզի կանթեղը, որ հեշտ է հանգչում:

Բացի այդ իր թանկագին իրերը նա միշտ պահում է տան կից մի փոքրիկ քարաշէն մասում:

Իսկ հրդեհի ժամանակ նրանք խմբովին օդնութեան են վազում այրուող տան ներսը. վերջն էլ օգնում են հրկիզեալին, ընդհանուր օժանդակութեամբ նրա համար մի նոր տուն գնելով:

Տները խիստ էժան են և ծախւում են պատրաստ. նրանց թեթևութեան ու կազմի պարզութեան պատճառով հեշտ է և տեղափոխելը:

Փողոցը լի է կեանքով:

Փափուկ գետնի վրայով արագ սլանում են ճարպիկ ջինները, քաշելով իրանց փոքրիկ կառքերի մէջ մի կոկեա՝ ճապոնուհու կամ տուրխտոնների մի ամբողջ շարք:

Անց է կենում մանրավաճառը, կրելով իր ուսին՝ փայ-

տից կախած զամբիւղները, որոնք լի են ամեն տեսակ քանջարեղէնով, պտուղով կամ ձկնով:

Փողոցում անասուն զրեթէ չես տեսնում: Սակաւ, շատ սակաւ է հանդիպում մի ձի կամ եզ, սմբակները յարկով կտպած պայտի փոխարէն: Տիրոջ ցոյց տուած մեծ հագածութիւնից պարզ երեւում է, որ նրանք մի առօրեայ երեոյթ չեն ճապոնացու կեանքում:

Ահա մի փոքրիկ աղջիկ անփոյթ կերպով իր լայն գօտու մէջ տանում է փոքրիկ եղբօրը, որը հանգիստ նիրհում է նրա մէջքին. մինչդեռ աղջիկը հետաքրքրութեամբ կանգ է առնում գոյնղոյն ապակէ գնդակների դէմ, որ ծախու է դրել փողոցում թափառական մանրավաճառը:

Երիտասարդ ճապոնուհիները մանր քայլերով զգոյշ անց են կենում, իրանց բարձր փայտէ կօշիկները շարունակ թխթրխկացնելով: Նրանց մուգ սև մազերի գեղեցիկ շինեօնը հիւսուած է կօրակներով, գլխարկ երբեք չկայ. պաշտպանում են արևից ու անձրևից իրանց տարօրինակ ու գեղեցիկ հովանոցներով: Հագի կլիբմօնը (խալաթ) գրկում է ճապոնուհու մէջքը, սահում է ցած ու պինդ փաթաթում է նրա ոտներին: Չունեն ոչ օդ, ոչ մատանի, ոչ էլ ընդհանրապէս մեր կանանցից այդչափ սիրուած միւս ոսկեղէն զարդերը:

Նրանց գլխաւոր հպարտութիւնն է կազմում գեղեցիկ օբին (գօտի), որ լայն շերտով մի քանի անգամ գալաքուած է նրա մէջքին և մի տեսակ կօրսէտի դեր է կատարում: Այդ գօտին նրա հագածութեան մասնաւոր առարկան է միշտ և նրա ճաշակի ու շնորքի սովորական չափը:

Որքան օբիի կտորը գեղեցիկ է, որքան հարուստ է նրա բանուածքը և որքան շնորհալի կապուածքը, այնքան աւելի է իր ընկերուհիների նախանձը շարժում:

Տղամարդու կլիմօնը (խալաթ) կնոջինից շատ քիչ է տարբերւում, մանաւանդ անվարժ աչքի համար. նա էլ է կապում գօտի, միայն շատ աւելի նեղ:

Իսկ նրանց մինչև ականջները քաշած եւրօպական

զլխարկը, հագի փայտէ ծանր կօշիկներն հետ միասին մի հետաքրքիր խառնուրդ է կազմում եւրոպայի և Ասիայի։ Անբաժան հովհարը կամ մի հովանոց բռնած ձեռին՝ նրանք հանգիստ գնում են ու գալիս իրանց բարի ու մտածկոտ գէմբերով։

Մի շատ բնորոշ գէմբ էր ներկայացնում և ուտիկանը, որ ամբողջապէս եւրոպական սպիտակ զգեստների մէջ, երկար սուրը մէջքին, կանգնել էր այնտեղ իր վսեմ պաշտօնի խորին գիտակցութիւնը երեսին։

Օտիցս լսում է յանկարծ զանգակի սուր հնչիւնը։ Մի բարձրահասակ մարդ կանգ է առել փողոցի ճիշտ մէջտեղը և թատրոնական վեհափառութեամբ, յենած ձեռի դրօշակին, որի վրայ մի քանի ճապոնական տառեր են գրած, մի անբնական ձայնով ինչ-որ ասում է արագ, շարունակ դիմելով աջ ու ձախ շրջապատողներին, որոնք սակայն մի մեծ հետաքրքրութիւն չէին ցոյց տալիս։

Կրկին զանգակ, և ձայնոգը շարժում է առաջ, տանելով հետը իր արտասանած բացականչութիւնների հանելուկը։ Մի այլ տեղ բարձր պոռում է մի ուրիշը, երկի յանձնարարելով իր ձեռքի բռնած գիրքը։ միւս կողմը մի մարդ անդադար զանգահարում, անցորդների ուշքը իր ապրանքի վրայ դարձնելու համար։

Քիչ հեռուն լսում է յանկարծ մեղամաղձոտ մի սուլոց և երևում է մի կոյրի կերպարանք յենած իր գաւազանին, որ զգոյշ առաջ է գալիս շուրջի իրարանցումի միջով։ Դա մի մասսաժիշտ է, որ սուլոցով իր անցնելն է յայտնում։

Այդ արուեստը ճապոնում անյիշելի ժամանակներից կոյրերի մենաշնորհն է կազմում։

Տները մասնաւորապէս հետաքրքիր են նրանով, որ դրսի պատ չունենալով անցորդին միջոց են տալիս ճապոնացու նիստն ու կացը կատարելապէս ուսումնասիրելու և բաց են անում բնորոշ տեսարանների մի ամբողջ շարք։

Ամեն մի տուն կարծես մի շրջանակ լինի, ուր մեզ

պարզ ցուցադրուած են նրանց բնակիչները՝ կեանքն ու աշխատանքը:

Ահա այստեղ բոլորովին ճաղատ մի ճապոնացի շրջապատուած թղթէ լապտերների ու հովանոցների մի ամբողջ կոյտով՝ մեծ հողածութեամբ նկարուած է: Մի անսովոր լըրջութիւն կայ նրա դէմքին: Այն բարեսիրտ ու միամիտ կենդրոնացումը, որով կատարուած է նա իր աշխատանքը, քեզ աւամայ երեխայ է յիշեցնում:

Կից խանութում մետաքս են ծախում. պատերին կախուած են կտորներ քմահաճ նկարներով: Գործավար ճապոնուհիները մէկը միւսի ետեից բաց են անում յաճախորդի առաջ մետաքսի նեղ փաթեթները, մինչ տէրը, չոքած իր մանրիկ սեղանի առջև, բոլորովին խորասուզուել է հաշիւների մէջ:

Մի քիչ դէնը մոմ են պատրաստում, խանութի մեծ մասը բռնում է կանաչ հեղուկով լիքը տաշտը, որի մէջ թաթախում են անդադար փոքր կլոր փայտեւ. չորացնում են, թաթախում նորից. և այսպէս մի քանի անգամ, մինչև մոմը պատրաստ լինի:

Կողբին մի աշխատանցում պատանիներն իրանց ձեռագործի վրայ ծռուած ասեղնագործում են ոսկեթել քմահաճ նկարներ:

Ոռկերիչի խանութում շինում են գեղեցիկ գօտիներ, փոքրիկ բռններ, որոնք սուր են ներկայացնում, և այլ մանր զարդեր. սրանց գլխաւոր գնողները տուրիստներն¹⁾ են: Բայց այնտեղ բնաւ չէք տեսնի թանկագին բարեր, որին ճապոնացին արժէք չի տալիս: Նրան գրաւողը շինուածքի գեղարուեստական կողմն է:

Յաճախ աչքիդ հանդիպում են սափրիչի խանութներ, ուր յաճախորդները բոլոր ուժով գլուխները յետ ճկած՝ նստած են մի յուսահատ դիրքով, քթները յանձնած սափրիչի բարեհաճ տրամադրութեանը, կամ մի ճապոնուհի, որ զբաղուած է իր տուալետն աւարտելով:

¹⁾ Համբորդ:

Ապա նորից գալիս են խանութները:

Հովհարներ, ափսէներ, զամբիւղներ, բոլորն էլ կախուած առաստաղից, ծածանւում են անցորդի քթի տակ: Նրանց հոտից նկատւում է մի ամբողջ շարք յարդէ ոտնամանների իրանց թաւէ զեղեցիկ օղակներով. կամ մի չաստուած, որ իր ահադին փորովը բազմած է սեղանի գլխին:

Շատ են ժամագործները: Ժամացոյցը արեւելքում խիստ է յարգուած: Զինացիք նկարուելու ժամանակ ժամացոյցը դնում են իրանց մօտը սեղանի վրայ, երբեմն նոյն իսկ երկուսը, իրանց աւելի փառահեղութիւն տալու համար:

Լուսանկարիչների ցուցանկարներն էլ բաւական յաճախ են աչքի ընկնում. մանաւանդ եւրոպական թաղի մօտերը: Լուսանկարը շատ էժան է. 12 հատ գեղեցիկ գունաւոր տեսարանը արժէ իէն (մօտ 2 ռուբլի): 12 փոքր նկար վիդիտի դիրքով, այն էլ ամենալաւ լուսանկարչի մօտ, արժէ նոյնպէս 2 ռ, իսկ աշխատանքը չափազանց մաքուր է ու սիրուն:

Ուտեստի շուկան նոյնպէս մօտիկ է եւրոպական մասին: Սնունդները շարուած են իրանց տեսակի համեմատ. մի շարք միայն միս են ծախում, ապա բանջարեղէն, սրտուղ, ձուկ և այլն:

Միսը դրած է ապակէ զանգակների տակ, որ սաստիկ մաքուր են պահում:

Զկան խանութը ներկայացնում է վրան ծածկած մի բակ, ուր խառն թափած են ձկան կոյտերը քարէ յատակին: Եւ ինչ երկակենցաղ ասես, որ այստեղ չլինի, ուհագին քանակութեամբ ժժմակներ, ճիճուներ, խեչափառներ և այլն, որին եւրոպացին նախել անգամ չէ կարող:

Առհասարակ ձուկը ճապոնացու գլխաւոր ու նախընտիր կերակուրն է, և բոնձից յետոյ առաջին տեղն է բռնում:

Ձուկն ուտում են մեծ մասամբ հում: Մեխով տալիս են գլխին, նրա տանջանքին վերջ տալու համար, հանում են փորոտին, կտրատում են, դնում են պնակի մէջ և հրամցնում:

Այսպէս պատրաստած ձուկը նրանց սիրելի կերակուրն է իրրե գէսսերտ:

Միս ուտում են չափազանց քիչ, դերադասում են պտուղն ու բանջարը: Պտուղներից սովորական են բանան, անանաս, կոկոս և երեխի գլխի մեծութեամբ ահագին նարինջներ (սպաղեմուս), այլ և եամամօ, որը մի մեծ ելակի է նման ու մի տեսակ ձիւթի հոտ ունի:

Շատ կան նոյնպէս քաղցրավաճառներ. ճապոնացին սիրում է անուշեղէն. խմորեղէնը լինում է թէ հում, թէ եփած: Նրանց կարկանդակների ու շաքարեղէնների տեսքն այնքան էլ գրաւիչ չէ մեզ համար: Միայն խիստ համեղ է «կաստերա» ասուած տորդը. այն էլ սպանական ծագում ունի:



Բոլոր արտիստները, մանաւանդ ուուները, իրանց պարտքն են համարում այցելել Նագասակի հուշակը կադմոդ վարպետ Իեզակիի արհեստանոցը, ուր կըրեայի պատեանից գեղեցիկ իրեր են պատրաստում:

Իեզակին, որին ամենքը «Ժենեւալ Կրիայ» են անուանում, սովորական, հաստիկ, կարճլիկ մի մարդ է բարի գէմքով: Մեզ ընդունեց մեծ սիրով, սեղմեց ձեռքս եւ բոպավարի, բարեւեց մեզ մի թոթով ոուսերէնով և իսկոյն հրամայեց թէյ բերեն:

Ճապոնական թէյը հրամցնում են փոքրիկ գաւաթներով և առանց շաքարի. բայց համեղ կաստերան լիուլի փոխարինում է շաքարի պակասը:

Թէյից յետոյ Իեզակին մեզ առաջնորդեց վերի յարկը, ուր իրերն էին ցուցադրուած: Փղոսկրի քանդակումը հիանալի է ուղղակի իր նրբութեամբ ու գեղեցկութեամբ: Ամենից աւելի աչքի ընկնող տեղում գետեղուած էին կրիայի պատեանից շինած ճապոնական ու եւրոպական մի քանի ուղմանաւեր:

Կայմերը իրանց կայաններով, պարանները, ելարանները, մինչև անգամ սանդուխքի իւրաքանչիւր աստիճանը դուրս էր բերուած զարմանալի ճշտութեամբ ու մաքուր:

Իեզակիի այն մանրանկար գեղարուեստական փոքրիկ աշխարհից մենք ընկանք ուղղակի ժողովրդական ու եռուն առևտրի տաճարը—Ճապոն Բաղարը, որ մեր՝ կարաւանաւորային համապատասխանող մի բան է:

Դա մի մեծ կլոր շէնք է, ուր խանութների շարքը ձգւում է ճառագայթի ձևով դէպի կենդրոնը, ապա կենդրոնից չես կարող դուրս գալ, մինչև որ այդ ամբողջ լարերին առանց չկենաս իր բոլոր անկիւններով ու թեքումներով, եթէ միայն յուսահատած, կէս ճամբից դուրս չդառնաս,

Ապրանքի տեսակները շատ չեն և շարունակ կրկնւում են: Մամուռորայէս շատ կան զանազան գոյն թաւշեայ քսակներ, զարդ հերկալներ, և անթիւ, անհամար թղթէ հովհարներ ամեն տեսակ ֆանտաստիկ նկարներով ծածկուած:

Պատերից կախուած են ճապոնական տիկնիկներ, աչքերը չուած և մոնգոլական տիպիկի դէմքերով: Մեծ տեղ է բռնում խանութը:

Նրանց գրքերն էլ են իրանց տեսակի: Թուղթը աւելի հաստ է և խորտուբորդ, տպել կարելի է միայն մի երեսի վրայ, այնպէս որ մեր մի թերթին համապատասխանում է նրանց կրկնատակ ծալած երկու երեսը: Կազմն էլ տարօրինակ է. թղթերը կարում են մետաքսէ թելով, որ դրսից մի գեղեցիկ հանգոյց է կազմում:

Ծախողները կին են մեծ մասով: Օտար անցորդներին նրանք կանչում են անգլիերէն կամ ռուսերէն, բաւական յաջող գուշակելով նրանց ինչ ազգից լինելը:

Նագասակիում օտար լեզուներից ամենից աւելի տարածուածը ռուսերէնն է. դրան նպաստում է կամաւոր փոխարին յաճախակի երթևեկը և ռուս ռազմականների այցը:

*
* *

Նագասակիի փողոցներով իմ անցնելը ոչ ոքի ուշադրութիւնը չէր գրաւում: Եւրոպացիներին ընտելացած են աբդէն:

Միայն երբ երկար կանգ էի առնում մի որևէ խանութի առաջ, դիտում էին ինձ ոտից գլուխ՝ զարմանալով

երևի, թէ ինչն էր ինձ այդպէս հետաքրքրողը:

Մի ճապոնուհի նկատելով, որ հայեացքս մի մասնաւոր հետաքրքրութեամբ եմ ուղղում խանութի խորքոյ, խնդրեց, որ ներս մտնեմ նրա բնակարանը, եթէ կըհաճեմ:

Եւ ինչ ասել կուզի, որ մեծ ուրախութեամբ ընդունեցի նրա առաջարկը, և նրա հետ մի նեղ ու փոքր անցքով մտանք ետեւ մասը: Դա արդէն բնակարանն էր, մի մեծ սենեակ, որ հեշտութեամբ կարելի է մի քանիսի վերածել շարժական թեթեւ պատերի միջոցով: Յատուկ այդտեղ քիչ բարձր է նախասենեակից, Հետեւելով տեղական քաղաքավարութեանը, հանեցի կօշիկներս սանդուղքի գլխին և գուլպաներով կոխեցի սենեակի մաքուր հասիւրը:

Շուրջը ամեն-ինչ մաքրութիւնից փայլում էր: Թղթէ պատերին նկարուած էին արագիւններ: Անկիւնում գետեղուած էր սիրուն երկթե ճենապատը և մի փոքրիկ թալար՝ մէջը մանրադիտական մի ծառով: Սենեակի խորքում պատի մէջ ծալքն էր, ուր ցերեկներն անկողիններն են դարսում: Ճապոնացին, ինչպէս յայտնի է, կահ-կարասի չի սիրում, ասելով թէ դրանք փոշի հաւաքելուց զատ ուրիշ բանի պէտք չեն:

Անկողինը փռում են գետնի հասիւրի վրայ, ճաշում են չորած և ամեն մէկի առաջ կայ մի-մի ցածիկ փոքրիկ սեղան, կամ յաճախ ուղղակի գետնին:

Սենեակից դուրս գալով, մտանք ցանկով շրջապատած բակիկը, իր մանրիկ պարտէզիկով, ուր բանտարկուած էր պտուղներով ծանրաբեռնուած մանդարների մի ծառ, կարծես վանդակի լէջ:

Այդ պարտէզիկի կենդրոնում ցուլցում էր մի աւելի փոքրիկ լճակ, մէջն էլ մանրադիտական մի ժայռիկ, որի վրայ հպարտ վեր էր բարձրանում մի մի գաճաճ ծառիկ:

Ճապոնացին շատ է սիրում բնութիւնը. գիւղերում նա աշխատում է շինել իր բնակարանը կարկաշուն առուակի ափին, կամ սարի սիրուն լանջին, որտեղից լայն գեղեցիկ տեսարան է բացւում: Իսկ քաղաքում հեռու այդ

բոլորից նա ուզում է բնութեան գոնէ մի նմուշը, մի փոքրիկ կտոր իր մօտն ունենայ:

Ճապոնացու տանը, թէ ներսը, թէ բակում, ամեն բանի վրայ մի մասնաւոր դրոշմ կայ գոհունակութեան, չափաւորութեան և գեղարուեստական պարզութեան:

Օր. Հ. Մելիք-Հայկազեան

Դ. Ա Ձ Գ Ա Գ Ի Ո Ի Թ Ի Ի Ն

136. ԳՆԵՐԱՆԵՐ ԵՆ ՏԱՂ ԲՅԱՆՈՒՄ

«Ուզան բերանը կթան կովէն լաւ է»:

Բօշ. տոած:

Մի ժողովուրդ, որ ազգութիւն, հայրենիք և կրօն չունի, որ «չի ցանում, չի հնձում, թոչունի պէս ապրում է», որի հայրենիքը աշխարհն է ամբողջապէս, հովանին երկինքը, հարստութիւնը մի աւանակ և քանի չուլ ու փալատ,—դա բօշան է: Նա գիմանում է հիւսիսի սառնամանիքին, տանում է հարաւի խորշակն անմիապէս: Ամեն տեղ նա ապրում է և ընտելանում որպէս իր սեփական տանը. *ubi bene, ibi patria*¹⁾, ահա նրա գաղափարը հայրենիքի մասին: Դաւանում է այն բոլոր կրօնները, որոնց ծանօթ է, ընդունում և խօսում է այն բոլոր ազգերի լեզուները, որոնց հետ մօտիկ յարաբերութիւն ունի: Ամեն երկիր նա անխտիր համարում է իր հայրենիքը, ամեն լեզու, որի գիտենալուց շահ է սպասում, իր մայրենի լեզուն և ամեն ինչ իր սեփականութիւնը: Մի անօրինակ, եզակի աշխարհ-փաղաքացի՝ կօսմօպօլիտի մի կատարելատիպ—դա գնչուն է առհասարակ և բօշան ի մասնաւորի:

Հպարտ իր աղքատութեան մէջ, անկախ և ազատասէր առանց որևէ քաջութեան, աշխարհակալ և հարկառու առանց դէնքի և աշխարհաստան պատերազմների. անհոգ, որպէս երկնքի թռչունը, նա հնձում է այնտեղ, ուր չի

¹⁾ Ուր լաւ, անդ հայրենիք:

ցանել: պահանջում և ստանում է այն, որ չի տուել: Վաճառում է այն, որ իր քրտինքով չի վաստակել: «մի այսուհետև հոգայցէք վասն վաղուի, զի վաղիւն վասն իր հոգացի»», դա բոշայի կեանքի բնաբանն է:

Նա վստահ է, որ ամեն տեղ կիշխէ, կը տիրապետէ, այն մտքով, ինչ մտքով, որ բոշան հասկանում է իշխել և տիրապետել բառերը: Նա համոզուած է, որ ամենքը պարտական են իրան հարկ տալու, և հաւատացած է, որ ամենից կը ստանայ իր պահանջը, ուստի և նա ամենուրեք, ամեն տեղ է, ուր բանաւոր արարածներ կան: Սարերն ու ձորերը չեն խափանում նրա ընթացքը, ծովն ու անապատը արգելք չեն դառնում նրա անընդհատ թափառելուն: Եղանակների յանկարծական փոփոխութիւն, անձրև, արև, ձիւն կամ փոթորիկ երկիւղ չեն ազդում նորան:

Տոկունութեամբ յաղթելով բոլոր բնական արգելքներին և պատահարներին, նա իր թռուցիկ բնակարանով մերթ երևում է հարաւի տօթակէզ անապատներում, մերթ հիւսիսի սառնամանիքում և չքանում է որպէս պատկեր: Նոս չի ճանաչում ոչ սահման, ոչ տարածութիւն և ոչ արգելք: ուստի և թափառում է աշխարհի բոլոր մասերում և բոլոր ազգութիւնները մէջ անխտիր:

Ձուր չէ այն աւանդութիւնը, որ մեր բոշաներն իրանց Կայէնի սերունդ են համարում, հաւատալով, թէ երկնային անէծքն է, որ նրանց «երեբեալ ու տատանեալ» թափառել է տալիս իրանց նախահօր մեղքը քաւելու համար: Ձունենալով հող և մտանաւոր սեփականութիւն, նա ամբողջ աշխարհի բերքն ըի սեփականութիւնն է համարում, ուստի և սեփականատիրոջ վատահոլութեամբ մտնում է ամեն մի օտարականի տուն, ըստ երևոյթին արդարացի պահանջով: Թէև այդ պահանջը քողարկած է լինում աղերսախառն բառերով և արտայայտւում է խնդիրքի ձևով:— Նա իր հաղկը, իր ապրուստն է պահանջում, և վայնրան, որ չի յարգի այն կոսմոպոլիտի խնդիր-պահանջը: Կարկառնման կը թափուի բոշայի բերանից նրա անսպառ անէծքը մերժող տան գլխին: Այդ իր իրաւունքն է համարում նա:

նրա ղէնքը իր կծու անէծքն է և տգէտ ու սնոտիապաշտ ժողովրդի վրայ ազդոււմ է նա այդ միջոցով: Բօշան ապրում է իր ճարտար լեզուի և ռամիկներին սարսափեցնող անէծքի շնորհիւ:

Բօշայի ազնիւ յատկութիւններն աւելի աչքի են ընկնում, եթէ նրան համեմատելու լինինք ոչ թէ մի նըստակեաց և քիչ թէ շատ քաղաքակիրթ ազգի հետ, այլ իր ցեղակից և համարեա նոյն միջոցներով ապրուստ հայթայթող թուրք գնչուի հետ, որ կրօնով մահմեդական է: Թէև սոցա կեանքի հանգամանքները, աւանդական պարապմունքը միևնոյնն են, թէև ծագումով նոքա պատկանում են միևնոյն ցեղին, բայց վարք ու բարքի մաքրութեամբ և հոգեկան ազնիւ յատկութիւնների առաւելութեամբ հայ բօշան շատ ու շատ բարձր է թուրք գնչուից:

Մինչ վերջինը պատրաստ է յարմար ըոպէին՝ առանց առիթը բաց թողնելու թալանել մտած տունը, գողանալ ամեն մի ձեռն ընկած առարկայ, եթէ նրա գործողութիւնը դիտող չկայ. կամ դբաղեցնել տանտիրոջը հմայութիւններով, որ ընկերակիցը միջոց գտնի մի բան թրույնելու, հայ բօշան երբէք, ոչ մի դիպուածում այդպիսի ստորութիւն յանձն չի առնի:

«Չգողանալ»-ը նրա ցեղի աւանդական և սրբազան պատուէրներից մինն է: Երբէք ոչ մի անգամ բօշան չի բռնուած գողութեան մէջ. գոնէ ինչքան հետաքրքրուել ենք, չենք պատահել մէկին, որ մեր ասածի հակառակը պնդէր:

Այդ է պատճառը, որ ոչ մի տեղ արգելուած չէ բօշայի մուտքը. ամեն տանտէր վստահ է նրա հաւատարմութեանը. մինչդեռ ոչ մի թուրք գնչու այդպիսի հաւատ չի վայելում և ազատ մուտք համարեա չունի տներում: Նոյնն է և Եւրոպայի գնչուն, որին առհասարակ հաւատ չեն ընծայում:—Նրանք իրանց արդարացնում են մի բնութոյշ աւանդութեամբ. Եւրոպայի գնչուների ասելով՝ չորրորդ մեխը Քրիստոսի խաչից՝ գողացել է մի գնչու, ուստի այդ օրից նրանց ներքի է համարւում գողութիւնը, և գնչուներից ով շատ գողութիւն անէ, այնքան էլ շուտ դրախտ կը գնայ:

Թուրք գնչուն աւելի գործնական և խորամանկ է, երբ բանը դալիս է մարդկանցից փող կորզելուն: Նա շատ լաւ գիտէ օգտուել ռամիկ ժողովրդի սնահաւատութիւնից չանազան խտրեբայութիւններով: Գնչու թրքուհիները իւրանց Տֆալ» երով (հմայութիւն), եղունգներին նայելով, վիկութեամբ կամ անբարոյական կաքաւով, տղրուկի նման ծծում են միամիտ ամբոխի արիւն-քրտինքով վաստակածը: Հայ-բօշան բոլորովին չգիտէ գործադրել այդ թէև՝ ստոր, բայց դիւրին փող կորզելու միջոցներից և ոչ մինը:

Զգուելի է թուրք գնչուի թախանձանքը. նրա խմբի մօտից չի կարելի անցնել առանց նոցա ագահութեան, բաւարարութիւն տալու: Եթէ կառքով ես և կամ ձիով, նոքա արձակում են իրանց մերկանդամ մանչ և աղջիկ երեխաներին, որոնք ամենաշուտ գնացող կառքի յետից էլ վազում են անընդհատ մի քանի վերստ՝ և մինչև բան չեն ստանում, յետ չեն դառնում: Քարասիրտ անցորդը միայն անբաժին կարող է թողնել այդ ստահակներին, որոնցից ազատուելու ոչ մի հնար չկայ: Հայ բօշաների մէջ այդ սովորութիւնը բոլորովին չկայ. նոցա մանուկները խնդրելու սովորութիւն չունին: Այդ պարապմունքը պատկանում է միմիայն կանանց. այն էլ երբէք նոքա դրամ խնդրելու սովորութիւն չունին, մանաւանդ ճանապարհին: Նոցա խնդիրքը միմիայն տներին է լինում: Յաճախ թուրք գնչուները իրանց հետ ման են ածում կապիկներ ժողովրդիցին ցոյց տալու համար և նոցա պարել տալով, փող են հաւաքում: Այս պարապմունքները անծանօթ են մեր բօշաներին: Նոյն իսկ արտաքին հագուստից կարելի է ճանաչել այս ցեղակից թափառականների բարոյական տարբեր աստիճանները: Թուրք գնչուն կարծես բոլորովին ղուրկ է ամօթխածութիւնից և վայելչութեան զգացմունքից. նա շրջում է համարեա մերկ առանց քաշուելու. նա չիտի է և անպարկեշտ: Մինչդեռ բօշան միշտ խուսափում է մերկութիւնից: Նրա հագուստը թէև հնոտի, ծածկուած անթիւ, բազմագունի կարկատաններով, բայց երբէք անվայել ու չ և պատառոտած չէք տեսնի, նա սաստիկ բարոյական է:

Սակայն պէտք է աչքի առաջ ունենալ, որ նոցա-
նից մինը կրօնով մահմեդական է և այդ կրօնի շնորհիւ
Նրա մէջ պիտի երևան գային որոշ յատկանիշներ, որոնք
կարող են ծնել միայն այդ կրօնից. մինչդեռ հայ բօշան, իր-
րև ըրիստոնեայ-լուսաւորչական ժողովուրդ, որ մշտապէս
ապրում և շփւում է մեզ հետ, շատ բարձր պիտի լինէր
Նրանից: Բացի այս, թէև նոքա միևնոյն ծագումն ունին,
բայց պատկանում են տարբեր ընտանիքներին, այնպէս որ
իրանց ցեղական լեզուները միմեանց անհասկանալի է և
խորշում են միմեանցից:

Գ. Վանցեան

137. ԵՒՐՈՊԱՅՈՑ ԿԱՐԾԻՔԸ ՀԱՅՈՑ ՄԱՍԻՆ

Օսմանեան կայսրութեան մէջ հայերն են ամենամեծ
առևտուր ունեցողները և միևնոյն ժամանակ այդ գործը
ամենից աւելի հմտութեամբ առաջ տանողները: Նրանք
համբերող են, խնայող ու անխոնջ, նրանք ճանապարհոր-
դում են Լսիայում և Հնդկաստանում, նրանք խանութ-
ներ ունին ամեն տեղ: Հայոց մեծ մասը մեքենական ար-
հեստներով են պարապում: Նրանք սեղանաւորներ են, կա-
պալաու և փաշաների ու ուրիշ մեծամեծ անձերի գոր-
ծակալներ: Նրանց մեղադրում են իբրև թէ ոչ մի միջոց
չեն խնայում հարստանալու համար և թէ, երբ կարող են,
խաբում են սալմանքների մէջ: Սակայն պէտք է խոստո-
ւանել, որ ձգտելով ձեռքից եկածի չափ շատ փող աշխա-
տելու՝ հայերը, շատ սակաւ է պատահում, որ ճիշտ չկա-
տարեն իրանց պարտաւորութիւնները և ճիշտ են կատա-
րում իրանց խոստմունքները:

Հայերը խիստ են իրանց վարք ու բարքի մէջ, ճշ-
տութեամբ պահպանում են իրանց հաւատի պատուէրները,
տգէտ են և հախապաշարուած, նրանց պակասում է մի-
այն կրթութիւն և մի տէրութիւն, որ այնքան ճշող չլի-
նէր, որքան տաճկականը և աւելի արդար լինէր, հայերը

վերին աստիճանի յարգելի ժողովուրդ կը դառնային:

Եթէ այս պատկերի վրայ աւելացնենք պարզ ճաշակ, խիստ խնայողութիւն, զարմանալի կանոնասիրութեան ոգի, մեծ ընդունակութիւն առևտրական դործերում, մենք նկարագրած կը լինենք հայերի լաւ կողմերը: Փուլցէ ոչինչ հակադիր պատկեր ներկայացնելու չունենայինք, եթէ հայերը, անկախ ազգ կազմելով՝ միշտ խաղաղ դրութեան մէջ ապրած լինէին և կառավարուէին սեպհական օրէնքներով: Բայց հրէաների պէս, կապուելով իրանց պատմական յիշատակներով աշխարհի սկզբի հետ, նրանց պէս ցրուած լինելով բոլոր Ասիայում՝ նրանք միշտ ենթարկուած են եղել բռնակալ տէրութիւնների, հպատակուած լինելով Տաճկաստանում տարբեր հաւատի տէրերի, որոնք ուրիշ առաջնորդ չեն ունեցել, բայց եթէ իրանց կրօնքը, և ոչ ուրիշ օրէնք, բայց եթէ կամբը:

Նրանց շքեղ ապրուստը, հարստութիւնները կարող էին գայթակղել իրանց բռնակալներին, և նրանք դիւրում էին գանձեր և ժլատ էին: Մի անգգոյշ խօսք, մի անկեղծ կարծիք կարող էր յաճախ կորցնել նրանց—նրանք լուրջ և երեսպաշտ դարձան: Երախտագիտութիւնը դէպի իրանց պատուազուրկ եղած բարբարոսները կարող էին փնտսել իրանց, նրանք երբեմն ապերախտ են զրտնուած: Մահմեդական երկրներում չկարողանալով մեծամեծ պաշտօնների ու պատիւների հասնել՝ վաստակելու սէրը նրանց գործունէութեան միակ շարժառիթը դարձաւ: (Օրվիէ):

Աշխարհիս երեսին եղած հայերի թիւը կարելի է երեք միլիօն համարել: Կիսից աւելին բնակում են Տաճկաստանում: Շատերը ապրում են Ռուսաստանում, մանաւանդ Կովկասեան նահանգներում, շատ հայեր կան նոյնպէս և Պարսկաստանում... Ամենայն տեղ, ուր գտնուում են նրանք, համարուած են ճարտիկ և բանիմաց մարդիկ և բոլորեքեան համաձայն են և խոստովանում են, որ նրանք հասարակ խելքի տէր մարդիկ չեն:

Տաճկաստանում նրանք աւելի բարձր են հանդիսա-

ցել, քան շրջակայ ազդութիւնները իրանց առևտրական դործունէութեամբ և այն ընդունակութիւններով, որ ունին դէպի մեքենական արհեստները: Գլխաւոր վաճառականները հայերն են, ինչպէս և բոլոր սեղանաւորները, և դուք կարող էք համոզուած լինել, որ կը դառնէք նրանց ամեն մի ձեռնարկութեան և գործի պարագլուխ, որ մասնագիտական պատրաստութիւն է պահանջում:

Նրանք տաճկի հաստատամտութիւն ունին՝ առանց նրա անշարժութեան, նրանք յոյնի նուրբ ու թափանցիկ միտքն ունին առանց նրա թեթևամտութեան. միով բանիւ նրանք արևելքի անգլո-սաքսօնացիքն են: (Դվայտ):

Ասում են, որ հայերը արևելքում նոյնն են, ինչ որ դուիցերացիք արևմուտքում. աւելի արդար կը լինէր հոլլանդացիների հետ համեմատել նրանց. նրանց մէջ նկատուում է նոյն յարաս, բայց հանգիստ գործունէութիւնը, նոյն ձգտումը՝ հարստութիւն ձեռք բերելու, թէև դա մի իողքը բան լինէր, նոյն արհամարհանքը դէպի արտաքին փայլը: Նրանց բոլոր առաջադիմութիւնները, որ կատարւում են անդորրութեան մէջ, անյայտ են Եւքոպային, ուր չեն հասնում նրանց գրքերը և պարբերական հրատարակութիւնները: (Դիւլորիէ):

Բոլոր նշաններից երևում է, որ հէնց այս ազգը աստուածային տեսչութեամբ ընտրուած է իբրև առաջնորդ՝ քրիստոնէութիւնը և քաղաքակրթութիւնը տարածելու աշխարհում: Տարակոյս չկայ, որ մեծ պատմական համաշխարհային նշանակութիւն ունի այն հանգամանքը, որ այս քրիստոնեայ ժողովուրդը ցրուած է մի մեծ տարածութեան վրայ, Մարոկկոյից սկսած մինչև Չինաստան և միևնոյն ժամանակ նրա բոլոր անդամները կապուած են միմեանց հետ կրօնական կապերով: (Նաքստհաուզէն):

138. Ա. Վ. ԵԼԻՍԵՎԻ ԿԱՐԾԻՔԸ ՀԱՅՈՑ ՄԱՍԻՆ

(Գարդացուած Ս. Պետրբուրգի Գայսերական Աշխարհազրական
Ընկերութեան նիստում 1887 թ. մարտի 4-ին)

Տաճիկներէջ յետոյ մենք դառնում ենք հայերին, թէ-
պէտ սրանք աւելի տարածուած լինելով Փոքր-Ասիայում՝
գուցէ աւելի բազմաթիւ լինին, քան թէ միւս բոլոր ազ-
գերը այս ազգազրական տարրերով հարուստ աշխարհում:
Հայը, որպէս և հելլենացին կենդանի հանգոյց է կազմել
արեւմտքի և արեւելքի մէջ մարդկութեան կեանքի երկու
նշանաւոր վայրկեաններում, երբ արեւմուտքի քաղաքակր-
թութիւնը թափանցում է մինչև արեւելքի սիրտը նրան
դարևոր նիրհից վարթեցնելու համար: Հայոց դերը այժմ
աւելի պատուաւոր է, որովհետև նրանք տարածում են քա-
ղաքակրթութիւնը մինչև այն լեռները, որոնք հիւսիսից
ներփակում են Միջագետքը: Բացի այդ նշանաւոր պաշ-
տօնից, հայերը արժանի են մեր առանձին ուշադրութեանը
նչ թէ միայն մարդաբանական, այլ և կենսաբանական և
պատմական տեսակէտներից: Մի ազգութիւն, որ կարօ-
ղացել է պաշտպանել իր անհատականութիւնը Նեքրովթի
և Շամիրամի ժամանակներից մինչև մեր օրերը, պահպա-
նելով մասամբ և իր տիպը, սովորութիւնները, լեզուն և
կրօնը՝ չնայելով որ նշ մի ազգ, նոյն իսկ հրէաները, չի
ենթարկուել այսքան տառապանքների,— պատմութեան մէջ
երբէք չպէտք է մոռացուի:

Զարմանք է յարուցանում և գոյութեան կռուի տե-
սակէտից ոյժերի յարատեւութիւնը և տոկոնութիւնը այս
փոքր ազգի, որ այսքան դարեր հզօր ազգերի մէջ սեպածն
մխուսած է: Կործանուեցան Մեծ-Ասորեստանը և Բաբելոնը,
պարսից անագին պետութիւնը, պարթևաց, մակեդոնացոց,
հռովմայեցոց, արաբացոց տէրութիւնները, մեծամեծ ազ-
գեր բնաջինջ անհետացան աշխարհիս երեսից, իսկ հայոց
ազգը նշ միայն կենդանի մնաց, այլ և լի կեանքով և յու-

սով տոչորեում է գիտութեան ծարաւով և սիրով դէպի աշխատանքը: Մինչև այժմ խորհում է նա թօթափել հազարամեայ լուծը, զարգացնում է իր լեզուն, ուսանում է գիտութիւններ, առաջ մղում ինքն իրան և արդէն շատ բանի հասել է:

Այս ազգը մի աւելի խորին հանելուկ է պատմութեան համար, քան թէ հրէաներն ու զնչուները: Այս երկու աշխարհաբաղադրացիները համարենք մշտական թափառականներ են, զուրկ հայրենիքից, որոնց համար *ubi bene ibi patria*. Իսկ երկրագործ հայը չէ թողել իր Հայաստանը, Ղանայ ծովակի ափից չէ դաղթել և Մասիսի ստորոտից չէ հեռացել: Հայ երկրագործի սերտ կապը իր մայրենի հողի հետ՝ կենդանի հերքումն է այն անձանց սխալի, որոնք դասում են նրան հրէաների հետ մի կարգում՝ համարելով հայերին միայն վաճառական ժողովուրդ, ձշմարիտ է, որ ճակատագիրը նշանակելով հային, ինչպէս և յոյսին, միջնորդական կապ արևմուտքի և արևելքի միջև, շնորհել է նրանց հաւասար յատկութիւններ՝ ճարպիկութիւն, հնարագիտութիւն, յայտնի մտքերի նրբութիւն, բնաւորութեան տոկունութիւն, որոնք թէ հայոց և թէ յունաց ընդհանուր յատկութիւններն են: Բայց այս ամենը բաւական չէ՝ բացատրելու համար հանելուկը հայերի գոյութեան, այն հայերի, որոնց հետ Եւրոպան սկսում է փոքր առ փոքր ծանօթանալ, և տակաւին Բերլինի վեհաժողովում նա հրաժարւում էր իբրև ազգութիւն ճանաչել հայերին:

Չնայելով սրանց բազմադարեան պատմութեանը, հազարաւոր արկածներին, որոնց ենթարկուել է այս ազգը, հայոց տիպը ներկայացնում է այնուամենայնիւ աւելի հաստատ տոկունութիւն, քան թէ Փոքր-Ասիայի ազգերի ո՛ր և է ուրիշ տիպ, այնպէս որ ամենամաքուր արիւն պարունակող ազգերի թւում կարելի է դասել և՛ հայերին, որոնք միևնոյն ժամանակ հանդիսանում են և՛ տիպի մաքրութիւնը պահպանող՝ այն չափով, ինչ չափով, որ նրանք իրանց հայրերից ու պապերից ժառանգել են:

Ե. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀԻՄՈՒԹԻՒՆ

139. ԳՈՂԹԱՆ ԵՐԳԵՐ

Վահագի ծնունդը

«Երկնէր երկին և երկիր,
Երկնէր և ծիրանի ծով,
Երկն ի ծովուն ունէր
Զկարմրիկ եղեգնիկն.
Ընդ եղեգան փող՝ ծուխ ելանէր,
Ընդ եղեգան փող՝ բոց ելանէր,
Եւ ի բոցոյն պատանեկիկ վաղէր.
Նա հուր հեր ունէր,
Ապա թէ՛ բոց ունէր մօրուս,
Եւ աչկունքն էին արեգակունք»:

Արտաշէսը փախցնում է Սաթինիկին

«Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեաւըն գեղեցիկ,
Եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն,
Եւ անցեալ՝ որպէս դարձուի սրաթն՝ ընդ գետն,
Եւ ձրգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն՝
Ընկէց ի մէջք օրիորդին Ալանաց,
Եւ շատ ցաւեցոյց ըզմէջք փափուկ օրիորդին,
Արազ հասուցեալ ի բանակն իւր»:

Արտաշէսի հարսանիքը

«Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշէսի,
Տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթենիկան»:

Արտաշէսի մահը

«Ո՛ տայր ինձ զծուխ ծըխանի
Եւ դառաւօտն Նաւասարդի,

Զվագելն եղանց և զվագելն եղջերուաց,
Մեք փող հարուաք և թմբկի հարկանէաք»:

—
Արտաւազդի քողոքը

«Մինչ դու գնացեր, և զերկիրս ամենայն ընդ բեզ տարար-
ես աւերակացս ռոպէս թագաւորեմ»:

—
Արտաշէսի անկծքը

«Եթէ դու յորս հեծցիս յագատն ի վեր ի Մասիս,
Զքեզ կալցին քաջք և տարցին յագատն ի վեր ի Մասիս-
Անդ կացցես և զլոյս մի տեսցես»:

—
Վարդգէս մանուկ

«Հատուած գնացեալ Վարդգէս մանուկն ի Տունաց
գաւառէն զՔասաղ գետով,
Եկեալ նստեալ զՇրէշ բլրով, զԱրտիմէդ բաղաքաւ,
զՔասաղ գետով,
Կռել կոփել զդուռն Երուսնդայ արքայի»:

—
Գողթան երգերը հայ ամենահին բանաւոր ստեղծա-
գործութեան բեկորներն են, որ մեր ձեռն են հասել
շնորհիւ Մովսէս Սորենացու. դրանք երգւում էին Գողթան
գինեէտ գաւառում, դրա համար էլ զողթան նրգեր են
կոչւում:

140. Ի Լէւոն ¹⁾ ՈՐԴԻ ՀԵԹՄՈՅ ²⁾ Ա,

Աւագ ըզլէոնն ասեմ,
Որ տաճկաց դուռն ընկել գերի,
Իմ լուս, իմ լուս, ու սուրբ կոյս,
Սուրբ խաչն օգնական Լէոնին ու
ամենուս:

Սուլղանն ի մօյտան ելել
Իր ոսկի գսւնդն կու խաղայ:

Խաղաց ի Լէոնն երես
«Առ խաղա ու տուր տատայիդ:

Լէոն դու տաճիկ լինիս,
Ես ու իմ տատաս քէ գերի»:

Լէոնն ի բերդին նստել
Դաստուակն աչիցն ու կուլար.
«Քէվանտ որ ի Սիս կերթաս,
Դուն խաղար տանիս պապա-
յիս»:

Ոնց որ պան ալ զան լըսեց
Շատ հեծել քաշեց երամով.
Եկաւ ի սուլղանն ելաւ
Շատ գետեր հհան արընեց:

Իսու զլէոն որդին
Ու հասաւ սրտին մուրառին:
Իմ լուս, իմ լուս, ու սուրբ կոյս,
Սուրբ խաչն օգնական Լէոնին
ու ամենուս:

141. ՈՂԲ ԶՈՒՂԱՅԵՑԻՈՅ

Ափսոս քեզ հայոց խեղճիկ ժողովուրդ,
Ցիրուցան ելաք անմեղ անխորհուրդ,
Դերի գնացաք դէպի ի Խորասան
Գաղցած ու ծարաւ, տկուր թշուառական:

Հարիւր ու հազար ցաւի դիմացաք
Ձեր քաղցրիկ երկրէն ոտ դուրս չըդրաք.
Հիմի ձեր հօր, մօր գերեզման թողաք,
Տներն ու ժամերը ուրիշի տուաք:

¹⁾, ²⁾—Հեթումը Հայոց թագաւոր էր Կիլիկայում, պատե-
րազմի ժամանակ նրա որդի Լեոնը գերի ընկաւ Եգիպտացոց ձեռ-
քը հայ իշխանների մատնութեամբ. Հեթումի օգնութեամբ միայն
նա աղատուեցաւ գերութիւնից:—Այս է ահա երգի նիւթը, որ
13-րդ դարու պիտի է. (Տես պատմական բաժինը. Կիլիկիոյ վրճակ
և Ջորջնէքը Ռուբէն թագաւորի ժամանակ):

էս սիրուն դաշտերը, մեծ մեծ քաղաքներն
Քաղցրիկ ջրերն, ձեր շէն գեղերն,
Ումն էք թողնում դուք, որ մոռանում էք,
Եղպէս կըլինի՛ր, որ մոռանում էք.

Վախում եմ էնպէս մտքերնուցդ ընկնի
Ինչքան որ ողջ էք, մտքերնուդ չընկնի,
Բարի ձեր որդւոց թողանց պատմեցէք,
էսպէս հայրենիքն քանդած թողեցիք:

Մասիսի անունն, Նոյայ տապանի,
Արարատ դաշտի, սուրբ էջմիածնի.
Մեր խոր Վիրապի, սուրբ Գեղարդի, Մուղնի,
Զմոռանան մինչի օրն դատաստանի:

Աչքս կուրանար, շլինքս կստուէր,
Խեղճ Հայաստան, քեզ էսպէս չըտեսէր.
Թէ մեռած էի, ինձ երանի էր,
Քան թէ կենդանի՝ աչքս բաց տեսէր:

Ստեփան վարդապետ

1605 թ. Շահ-Աբասի ժամանակ, երբ ջուղայեցոց քչում էին Ասպահան, Այս երգը գտել և հրատարակել է Գալուստ Շիրմա-
զաննանց:

142. ՍԱՍՈՒՆՅԻ ԴԱԻԻԹ

Քրիստոնեայ Հայաստանը երկու դար շարունակ (Է.
Ժ. դար) կռիւ էր մղում հզօր ու յաղթական արաբների
դէմ, որոնք անտանելի հարկերով ճնշում էին երկիրը:
Հայերը շատ անգամ զէնքի դիմեցին արաբներից ազատու-
լու համար: Նշանաւոր դարձաւ այդ կռիւներից մինում՝
Բագրատ Բագրատունին: Նա իշխում էր Տարօնի և Սասնի
վրայ թ. դարում: Մուսէ արաբ զօրավարը յարձակոււմ է
Բագրատի վրայ. սա միացած այլ հայ իշխանների հետ
հաղածոււմ է Մուսէին յաղթութեամբ: Մուսէի տեղ զախւ է

Յուսուփ ամիրան: Սա խորամանկութեամբ հրաւիրելով Բագրատին իր մօտ, շղթայում և ուղարկում է Բագրատ (851 թ.): Ազատում են Բագրատի որդիքը՝ Դաւիթ և Աշոտ, ապաստանելով Սասուն: Սասունցիք, առաջնորդ ունենալով Յունան անունով մի հերոսի, ցած են գալիս լեռներից, և կոտորում են արաբ զօրքին: Յուսուփին նրանք գտնում են թագնուած եկեղեցու (Մուշ) գմբէթում և շամփրում են:

Այս Յունանն է ահա Ձէնով Օհանը և Բագրատունի Դաւիթն է, Սասունցի Դաւիթը:

Սրանք պատմական անձեր են և սրանց կատարած քաջագործութիւնների շուրջն է, որ հիւսուել է ժողովրդական վէպը «Սասունցի Դաւիթ» անունով¹⁾: Ներկայումս այս վէպից հաւաքուած և հրատարակուած կան մի տասնեակից աւելի վարիանտներ: Սրա առաջին գտնողն ու հրատարակողն եղաւ Գար. Եպ. Սրուանձտեանը: Դրանցից առնելով Յովհ. Թումանեանը մի փոքրիկ հատուած, շնորհալի կերպով փոխադրեց զրական լեզուի, մնալով հաւատարիմ ժողովրդական բնագրին և շատ անգամ նոյն իսկ բառացի ժողովրդական արտայայտութիւններին:

143. ՍԱՍՈՒՆՅԻ ԴԱՒԹԻ ՔԱՋԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Մարայ Մելիքը անհամար զօրքով,

եկաւ ու նստեց Բաթման գետի քով,

Ով եկաւ խըմեց,

Գետը ցամաքեց.

Սասմայ քաղաքում մընացին ծարաւ:

Ձէնով Օհանին զարմանքը տարաւ.

Քուրքը վեր առաւ, սարը բարձրացաւ,

Սարը բարձրացաւ, տեսաւ, ի՛նչ տեսաւ.

¹⁾ Այս դէպքերը գեղեցիկ նկարագրուած են Ծերենցի «Երկունք Թ. դարու» վէպի մէջ, որի հերոս Սասունցի Յովնանը, մեր Ձէնով Օհանն է: Տես այս գրքում Յովնանի Տեսիլքը (Եր. 268):

Ճերմակ վրժանից դաշտը ճերմակել,
 Ասես էն գիշեր ձմեռը եկել,
 Ըսպիտակ ձիւնով ծածկել էր Սասուն:
 Լեզին ջուր կտրեց, կապ ընկաւ լեզուն:
 Հարայ կանչելով՝ փախաւ, տուն ընկաւ:
 —Վայ, փախէ՛ք, եկաւ... հայ, հարայ, եկաւ:
 Մըսրայ թագաւոր ելել է, եկել,
 Եկել մեր դաշտին բանակ է զարկել,
 Թիւ կայ աստղերին, թիւ չըկայ զօրքին...
 Վայ մեր արեին, վայ մեր աշխարքին...
 Եկ, ոսկի տանենք, աղջիկներ տանենք,
 Զոքենք առաջին, պաղատանք անենք,
 Գուցէ մեզ զթայ,
 Մեզ սըրի չըտայ...

—Դու կաց, հօրեղբայր, դու դարդ մի անիր-
 Գընա, քու օգուտ դու հանգիստ քընիր:
 Ըսաց Դաւիթը. ես կելնեմ կերթամ,
 Մըսրայ Մելիքին պատառխան կըտամ:
 Դաւիթը թողեց Զէնով Օհանին,
 Գընաց ախոռից դուրս քաշեց հօր ձին,
 Զըրահը հագաւ, զէնքերը կապեց,
 Զին հեծաւ, կանգնեց ու ձէնով երգեց:

Երգեց Դաւիթը ու ձին քշեց,
 Ելաւ Սասմայ սարի գլուխ,
 Նայեց ներքեւ,—դաշտը խիտ-խիտ
 Կոխած փոշին, կըրակ ու ծուխ:
 Տեսաւ, կանգնեց ամպի տակին,
 Ու էն անծայր ծովի վըրայ
 Գոռաց ձէնովն իր ահագին՝
 Տարածելով սարսափ ու ահ:

—Ով քընած էք—արթնն կացէք,
 Ով արթուն էք—ելէք, կեցէք,
 Ով կեցեր էք—զէնք կապեցէք,
 Զէնք էք կապել—ձի թամբեցէք,
 Զի էք թամբել—հլէք, հեծէք,
 Յետոյ չասէք, թէ մենք քընած,
 Դաւիթը գող-գող եկաւ, գընաց...

Էսպէս գոռաց, ասպանդակեց
 Ու, ինչ ամպից կայծակ զարկի-
 Մըսրայ զօրքի մէջ տեղ զարկեց,
 Շողացնելով թուր—կայծակի:

Զարդեց, փըշրեց մինչև կէսօր:
 Կէս օր արիւնն ելաւ. հեղեղ,
 Քըշեց, տարաւ հազարաւոր
 Մարդ ու դիակ ողջ միատեղ:

Կար զօրքի մէջ մի ալևոր,
 Աշխարհք տեսած ու բանապէտ.
 —Տղէք, ասաւ, ճանալայ տուէք,
 Գընամ, խօսեմ ես Դաւթի հետ:
 Գընաց, կանգնեց Դաւթի առաջ,
 Էսպէս խօսեց էն ծերունին:

—Դալար կենայ կուռըդ, ով քաջ,
Քուռըդ կտրուկ միշտ քո ձեռին:

Ի՞նչ ծերունուս խօսքին մըտիկ,
Տես՝ քու խելքը ինչ է կտրում,
Ի՞նչ են արել քեզ էս մարդիկ,
Հէ՛ր ես սրանց դու կոտորում:

Ամեն մինը մի մօր որդի,
Ամեն մինը մի տան ճըրագ,
Որը կին է թողել էնտեղ՝
Աչքը ճամպին, խեղճ ու կրակ:

Քաղաւորը դօրով-թըրով
Հաւաքել է, էստեղ բերել,
Խեղճ մարդիկ ենք պակաս օրով,
Մենք քեզ ֆուսս ի՞նչ ենք արել:

Քաղաւորն է քու թշնամին,
Կրօն ունիս, իր հետ արա.
Հէ՛ր ես քաջում թուր-կայծակին
Էս անճարակ խալիսի վըրայ:

—Լաւ ես ասում դու ծերունի,
Ասաւ Դաւիթն ալեորին,
Բայց թաղաւորն ո՞ր է հիմի,
Որ սև կապեմ նրա օրին:

—Մեծ վըրանում քընած է նա,
Է՛ն, որ միջից ծուխը կենի,
Էն ծուխն էլ հօ ծուխ չի որ կայ, —
Դողորդին է իր բերանի,

Ասին, դէպի մեծ վըրանը
Ասպանդակեց Դաւիթն իր ձին,
Բըշեց, գընաց ու դըռանը
Գոռաց կանգնած արաբներին:

—Ո՛ւր է, ասա, ի՞նչ է կորել,
Դուրս կանչեցէք, գայ ասպարէզ.
Թէ մահ չունի—մահ եմ բերել,
Գըրող չունի—գըրողն եմ ես:

Միլիքն, ասին, քուն է մըտել,
Օխտը օրով պէտք է քընի.
Երեք օր է դեռ անց կացի,
Զորս օր էլ կայ—քունը առնի:

—Ի՞նչ, բերել է աղքատ ու խեղճ
Խալիսին լցրել ծոֆն արիւնի,
Ինքը մտել վըրանի մէջ,
Օխտը օրով հանգիստ քընի՛ր...

Բընել-մընել չեմ հասկանում.
Վեր կացրէք շուտ, դուրս գայ
մէյդան.

Էնպէս դըրան ես քնացնեմ,
Որ չըզարթնի էլ յաւիտեան...

Ելան մարդիկ ճարահատուած՝
Շամփուր դըրին թէժ կըրակին
Ու զարկեցին խոր մրափած
Մըսրա-Մելիքի բաց կըրընկին:

«Օ՛ֆ, էլ հանգիստ քուն չունի
մարդ

Էս անիծուած լուի ձեռից»,
Խոր մոնչաց հըսկան հանդարտ
Ու շուռ եկաւ, քընեց նորից:

Ելան բերին մեծ գութանի
Խոփը դըրին թէժ կրակին
Ու կաս-կարմիր, կէճկըժալի,
Շիկցած դըրին մերկ թիկունքին:

«Օ՛ֆ, էլ հանգիստ քուն չունի
մարդ

Էս անիրաւ մոծակներից»,
Աչքը բացաւ հըսկան հանդարտ,
Ուզում էր ետ քընել նորից.

Տեսաւ Դաւիթն, գլուխն ահեղ
Վեր բարձրացրեց մըռնչալով,
Փըշեց վըրէն, որ թըրցընի
Էն աժդէնն մի փըշելով:

Տեսաւ, տեղից ժաժ չի գալի,
Զարմանք ու ահ պատեց հոգին.
Արնոտ աչքերն ըսպառնալի
Յառեց խոժոռ Դաւիթի աչքին:

Նայեց թէ չէ—ըզգաց՝ իր մէջ
Տասը գոմշի ուժ պակասեց.
Պառկած տեղից վրայ նստեց
Ու ժպտալով՝ հետը խօսեց.

—Բարո՛ւ, Դաւիթ, յոգնած ես
դեռ,

Ե՛կ, մի նստիր, խօսենք կարգին,
Յետոյ դարձեալ կոխ կանենք,
Եթէ կըրի՛. կուզես կրկին...

Իր վըրանում բըռնակալը
Քառսուն գազ խոր հոր է փորել,

Ճանցով փակել մութ բերանը,
Վըրէն փափուկ խալի փըռել:

Ում որ յազթիւ չէր կարենում,
Շողովելով կանչում էր նա,
Նըստեցնում էր իր վըրանում
էն կորստեան հորի վրայ:

Իջաւ Դաւիթ ձիուցը ցած,
Գընաց, նստեց... ընկաւ հօբը:
—Հա՛, հա՛, հա՛, հա՛, վերից խնդաց
Մարայ դաժան թագաւորը:

—Դէ, թո՛ղ հիմի գնայ խաւար
Հորում փըթի, էնքան մընայ.
Ու ահագին մի ջաղցաբար
Բերաւ զըրաւ հորի վըրայ:

Գընեց էն գիշեր Ձէնով Օհանը,
Գիշերն երազում երևաց ծերին՝
Ո՛րսրայ երկընքում արև ճառագած,
Սև ամպ էր սլտել Սասնայ սարերին:
Սաստիկ վախեցած՝ վեր թռաւ տեղից.
—Վա՛յ, կնիկ, ասաւ, մի ճըրագ արա.
Գընաց մեր մանուկ դաւիթը ձեռից,
Սև ամպ էր իջել Սասունի վրայ:
—Տունըդ չըքանդուի, ասաւ կընիկը,
Ո՛վ գիտէ Դաւիթն ուր է քէֆ անում...
Դու էլ քեզ համար քու տանդ քնած՝
Ուրիշի համար երազ ես տեսնում:
Գընեց Օհանը, Վեր կացաւ դարձեալ.
—Կնիկ, Դաւիթը նեղ տեղն է ընկած.—
Մըսրայ վառ աստղը շողում էր պայծառ,
Մեր աստղը հազիւ ցոլքում դարկացած:
—Ի՞նչ եղաւ քեզ, մարդ, գիշերուան կիսին,
Բարկացաւ վըրէն կընիկն աղմուկով.
Ունչ քաշեց էլ ետ Օհանն երեսին,

Շուռ եկաւ, քննեց խրոտված հոգով:
Մի ուրիշ պատկեր աւելի անեղ.—
Տեսաւ երկնքի բարձր կամարում
Վառուում էր Մըսրայ աստղը փառանեղ,

Սասմայ աստղիկը սուգունեց խաւարում
Զարթնեց վախեցած:—Տունըդ քանդուի կին,
Ես վո՛նց լսեցի քու էգ կարճ խելքին.
Կորաւ մենմենակ մեր ջանէլն անտէր.
Վեր կաց. շուտ արա, գէնքերըս մի բեր...

Ելաւ Օհան, գոմը մտաւ,
Զարկեց ճերմակ ձիու մէջքին.
—Է՛յ ճերմակ ձի, մինչ երբ, ասաւ,
Կը հասցընես Դաւթի կըռուին:

—Մինչև լուսը կըհասցընեմ,
Ու ձին տուաւ փորը գետնին:
—Մէջքըդ կոտորի, լուս ինչ
անեմ,
Լաշի՞ն հասնեմ ես, թէ՛ նաշին:

Կարմիր ձիու մէջքին զարկեց,
Սա էլ էրիտ փորը գետնին:
—Ձան Կարմիր ձի, մինչ երբ,
ասաւ,
Կը հասցընես Դաւթի կըռուին:

—Մի ժամի մէջ, Կարմիրն ասաւ,
Կը հասցընեմ Դաւթի կըռուին:
—Լեզի՛ դառնայ, սև մահ ու ցաւ,
Ինչ տուել եմ քեզ էն գարին:

Հերթը եկաւ, Սին հասաւ,
Գետնին չէրիտ մէջքը սև ձին:
—Է՛յ, ջան Սևուկ, մինչ երբ,
ասաւ,
Կը հասցընես Դաւթի կըռուին:

—Եթէ ամուր մէջքիս մընաս,
Ոտըդ դընես ասպանդակին,

Մինչև մէկէլ ոտըդ շուռ տաս—
Կըհասցնեմ, ասաց Սև ձին:

—

Սև ձին քաշեց Ձէնով Օհան,
Զախը դըրաւ ասպանդակին՝
Աջն էլ մինչև շուռ տար վըրան՝
Կանգնեց Սասմայ սարի գըլխին:

Տեսաւ Դաւթի նըժոյզն անտէր
Սարերն ընկած խըրխընջալով,
Ներքև Մըսրայ զօրքը ծըփում,
Ինչպէս անձայր, ծըփում մի ծով:

Օխտը գոմշի կաշի հագաւ,
Որ չպատրի իրեն զօրից,
Կանգնեց Օհան ու ամպի պէս
Գոռաց Սասմայ սարի ձէրից.

—Դաւթի, գոռաց, ճորտիդ ես
դու—

Յիշիր խաշը պատարագի,
Սուրբ Տիրամօր անունը տո՛ւր,—
Լոյսը դուրս եկ արեգակի...

Ձէնը գնաց դըմրղըմբալով՝
Դաւթի ականջն ընկաւ հորում.
Հայ-հայ, ասաւ, հօրեղբայրս է,
Սասմայ սարերից ինձ է գոռում,

— Ո՛վ Մարութայ Աստուածածին,
Ո՛վ անմահ խաչ պատարագի,—
Ձեզ եմ կանչել,—հասէք Դաւ-
թին...

Կանչեց, տեղից կանգնեց ոտքի:

Էնպէս զարկեց ջաղցաքարին,
Քարը եղաւ հազար կըտոր,
Կտորները երկինք թըռան,
Ու զընում են մինչև էսօր:

Ելաւ հորից, կանգնեց անկող,
Սարսափ կալաւ դե Մեղիքին:
—Դաւիթ, առաւ, եկ դեռ էստեղ,
Սեղան նստենք... խօսենք կար-
գին...

—Էլ չեմ նստիլ ես քու հացին,
Դու տըմարդի, վախկոտ ու նենդ.
Շուտ ղէնքող ան, հեծի՛ր քու ձին,
Դուրս եկ մէյդան, կըռիւ անհենք:

—Կըռիւ անհենք, ասաւ Մեղիք,
Իմն է միայն զարկն առաջին:
—Քո՞նն է, զարկի՛ր, կանչեց
Դաւիթ,
Գընաց, կեցաւ դաշտի միջին:

Ելաւ, կանգնեց Մըսրա-Մեղիք,
Իր գուրզն առաւ, հեծաւ իր ձին,
Քըշեց, գնաց մինչ Դիարբէք
Ու էնտեղից եկաւ կըրկին:

Երեք հազար լիդր էր քաշում
Հսկայական իր մըկունդը.
Եկաւ, զարկեց, կորաւ փոշում
Ու երեւաց երկրի գունդը:

—Երկիր քանդուեց, կամ ժաժք
եղաւ,
Ասին մարդիկ շատ աշխարհում:

—Ձէ, ասացին արնի ծարաւ
Հըսկաններն են իրար զարկում:

—Մեռաւ Դաւիթ էս մի զարկից,
Ասաւ Մեղիք իրեն զօրքին:

—Կենդանի՛ եմ ամպի տակից
Գոռաց Դաւիթ Մըսրա-Մեղիքին:

—Հայ-հայ, մօտիկ տեղից եկայ,
Տես, սրտեղից հիմի կը գամ:
Ու վեր կացաւ, կանգնեց հըս-
կան,

Իր ձին հեծաւ երկրորդ անգամ,

Երկրորդ անգամ քշեց Հալաբ
Ու բաց թողեց ձին Հալաբից:
Բուք վերկացաւ, տեղ ու տա-
րափ,

Արար աշխարհ զողաց թափից:

Եկաւ զարկեց, զարկի ձէնից
Մօտիկ մարդիկ ողջ խըլացան:

—Գընաց Դաւիթ Սասմայ տա-
նից,
Դուժեց գուռդ Մըսրայ արքան:

—Կենդանի՛ եմ, գոռաց Դաւիթ,
Մին էլ արի—հերթն ինձ հասաւ:
—Հայ-հայ, մօտիկ տեղից եկայ,
Կանչեց Մեղիք ու վեր կացաւ:

Երրորդ անգամ հեծաւ իր ձին,
Դընաց մինչև հողը Մըսրայ,
Ու էնտեղից՝ դուրզը ձեռին՝
Քըշեց, եկաւ Դաւթի վըրայ:

Եկաւ, զարկեց ըտլոր ուժով,
Ծանր զարկով հըսկայական,
Փոշին ելաւ Սասմայ դաշտից,
Բըռնեց երեսն արեգական:

Երեք դիշեր ու երեք օր
Կանգնեց փոշին ամպի նման,

Պրեք զիշեր ու երեք օր
Բօթը տուին Դաւթի մահուան,

Երբոր անցաւ երեք օրը,
էն ամպի պէս կանգնած փոշում
Կանգնեց Դաւիթ, ինչպէս սարը,
Գըրգուռ սարը մէզ-մըշուշում:

—Մեղիք, ասաւ, ռեմն է հերթը...
Սարսափ կալաւ գոռ Մեղիքին,
Մահուան դողը ընկաւ սիրտը,
Ու տապ արաւ գոռոց հոգին:

Գընաց, խորուկ մի հոր փորեց,
Իջաւ, մըտաւ վիհն էն խաւար,
Վըրէն քաշեց քառսուն կաշի
Ու քառսուն ջաղացի քար:

Մըռնչալով՝ ելաւ տեղից
էն առիւծի առիւծ որդին,
Իր ձին հեծաւ ու փոթորկեց,
Խաղաց, շողաց թուր-կայծակին:

Առաջ վազեց՝ մազերն արձակ՝
Մեղքի պատաւ մայրը ջաղու,
—Դաւիթ, մազըս առ ոտիդ տակ,
էդ մի զարկը ինձ բաշխի՛ր դու...

Երկրորդ անգամ թուրը քաշեց,
էս անգամ էլ վազեց քորը:

—Դաւիթ, եթէ կուզես, կանւնայ:
Իմ սրտին զարկ երկրորդ թուրը...

Վերջին զարկի ժամը հասաւ,
Ելաւ Դաւիթ երրորդ անգամ:

—էս մի զարկն ու Աստուած,
ասաւ:

էլ մարդ չըկայ, պէտք է որ տամ:

Ասաւ, ելաւ ու փոթորկեց,
Թըռաւ, ցրտաց Դաւթի հուր ձին,
Ձին փոթորկեց, փայլատակեց,
Ու ցած իջաւ թուր-կայծակին:

Անցաւ քառսուն գոմէր կաշին,
Անցաւ քառսուն քարերը ցած,
Միջից կըտրեց ժանտ հըրէշին,
Օխտը դադ էլ դէնը զընաց:

—Կենդանի եմ, մին էլ արի,
Գոռաց Մեղիք հորի տակից:
Լսեց Դաւիթն ու զարմացաւ
Իրեն զարկից, թուր-կայծակից...

—Մեղիք, ասաւ, թնփ տուր մի
քեզ...

Ու թափ տուաւ Մեղիքն իրեն,
Միջից եղաւ ճիշտ երկու կէս,
Մէկն ընկաւ դէս ու միւսը դէն...

Յովհ, Թումանյան

144. ՊԱՆԴՈՒԽՏ ԱՌԻ ԿՌՈՒՆԿ

Կոռնկ, ուստի՛ կուգաս, ծառայ եմ ձայնիդ:

Կոռնկ, մեր աշխարհէն խապրիկ մի հունիս:

Մի՛ վազիր՝ երամիդ շուտով կը հասնիս:

Կոռնկ, մեր աշխարհէն խապրիկ մի հունիս:

Թողեր եմ ու եկեր մէքերս ու այգիս,

Քանի որ ան կ'անեմ, կու քաղուի հոգիս,

Կոռնկ, պահ մը կացիր. ձայնիկդ ի հոգիս.
 Կոռնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս:
 Սրտերնիս կամեցաւ, ելանք զընացինք,
 Այս սուտ աստըւորիտ դարդերն իմացինք,
 Ազունացիներ մարդկանց կարօտ ֆնացինք,
 Կոռնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս:
 Դարիպին ոիրտն է խոց, ջիզեարն է վարամ,
 Կերած հացն է լեղի ու ջուրն է հարամ.
 Կոռնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս:
 Աշունն է մօտեցեր, գնալու ես թէղպիր,
 Երամ ես ժողվեր հազարներ ու բիւր.
 Ինձ պատասխան չտուիր, ելար զնացիր.
 Կոռնկ, մեր աշխարհէն զընա, հեռացիր.

145. ԵՐԳ. ՇԻՆԱԿԱՆԱՅ

Լուսնեակն անուշ, հոփն անուշ,
 Շինականի քունն անուշ.
 Ծագեց լուսնակն երկընուց,
 Հովիւի փողն էր անուշ,
 Հօտաղն եզներ կարածայ,
 Մաճկալ սլառիկեր, քունն անուշ,
 Զրդզըզուն քամին կը փչէ,
 Ծովային հոփն էր անուշ:
 Դաշտեր, ձորեր մընջեր են,
 Զրեր զըլզըլան, ձէնն անուշ.
 Հաւքեր թառան իրենց քուն,
 Բլբլուլի տաղն էր անուշ.
 Անմահական հոտ բուրբէր,
 Քաֆուր վարդի հոտն անուշ:

Ժողովրդական երգ

Շարադրութեան ընդհանուր նիւթ. համեմատել Քուչակի
 «Պանդուխտին երգը, Կոռնկը, Ծիծեռնակը, Ազասու մօր և Կնոջ
 նամակները» և զուրս բերել մի ընդհանուր պատկեր պանդխտ-
 տուքեան:

Զ. Ա Շ ՈՒ Ն Ե Ր

146. Բուշակ Նահապետ

Ծաղիկներու փոքրիկ հաւաքածուն, որ մեզի մնացած է Նահապետ Քուշակէն, ամենէն մաքուր ազամանդն է, զոր մեզ հին զրականութիւնն արտադրած ըլլայ, և ապշեցուցիչ բան մըն է, որ այդ գործը, ինչպէս և անոր հեղինակին անունը, մինչև ցարդ անձանօթ մնացած ըլլայ ոչ միայն մեր հասարակութեան, այլև նոյնիսկ մեր զրագէտներուն:

Ո՛չ մէկ կենսագրական ծանօթութիւն չունինք, դժբաղդաբար, Քուշակի վրայ: Կը կարծուի, որ ծնած և ապրած է ԺԶ դարու առաջին կիսում, Ակն քաղաքում:

Իբրև հեղինակ այս տաղաշարքին, Քուշակ կը դառնայ մեզի համար ամենէն ինքնատիպ և ամենէն անուշ երգիչը հին հայութեան, շատ բարձր՝ միջնադարեան բոլոր միւս ծանօթ քերթողներէն, Գրիգոր Աղթամարցիէն, Մկրտիչ Նաղաշէն, Յովհ. Թլկուրանցիէն, Ֆրիկէն, Սեբաստացի Ղաղարէն, նոյն իսկ բարձր՝ Շնորհալիէն և բոլոր մեր միւս դասական բանաստեղծներէն, իրեն հետ բաղդատուելու արժանի ունենալով միայն Գրիգոր Նարեկացին, որի միատիքական մղձաւանջին, քրիստոնէական խաւարտչին եղերգութեան ձայնն է, ինչպէս Քուշակը՝ անկաշկանդ ու սիրով արբշիւ սրտին հրճուանքներուն, ցաւերուն, երազանքներուն ու խոհանքներուն անմահ դայլայլը:

Ա. Չորանեան

147. ՍԻՐՈՅ ԵՐԳԵՐ

Ծիծեռնակի ձագ լինէի, ցերեկը տունըդ մտնէի,
Քո բարձրը լայն սըրահում ես իմ բունը շինէի,
Հէնց որ մութը-մթանար, վայր դայի տունդ մտնէի,
Հէնց որ լոյսը լուսանար, ելնէի բունս մտնէի:

Մետաքսի գօտի դառած, ցերեկը մէջքդ դրկէի,
կամ անուշ նռան զինի, ամանիդ մէջն ածէի,
Հէնց առնէիր խմելու, ցածնայի դունչդ պաղնէի:

Ջնւր, գըլգըլալէն կուգաս, գետի թոր ¹⁾ ակնէն կուգաս.
Երթաս այդ ձորերդ ի վայր, ձայնըդ գայ ու դուն չերևաս.
Դիտեմ սիրու տէր ես դուն, օտար աշխարհ կու գնաս,
Երթաս ու սիրուդ հասնիս, գիշերն ի քուն չի լինաս ²⁾:

Երեսդ ինչո՞ւ է դեղնել, այտերիդ գոյնը գնացել,
Հօքո որդին չէ մեռել, կամ օտար երկիր գնացել.
Թէ ես լամ, հախ ունիմ, որ գիտեմ, ինչ եմ կորուցել.
Կորել է իմ հոգուս հոգին, անհոգի եմ մնացել:

Երեսդ է լուսնի նման, խոպուպներդ է սև գիշեր,
Այտերդ դրախտի խնձոր, ծովի պէս խոր են քո աչեր.
Ունքեր կեռ ու մեռ ունիս, թուխ աչեր, թարթիչդ է նետեր,
Բերանդ է կարմիր շաքար, մէջը լիքը մարգարիտներ:

148. Խ Ր Ա Տ Ա Կ Ա Ն

Այն օրը որ մօրէդ ծընար, դու լայիր՝ ամեն խնդային.
Հէնց մաքուր ել այս աշխարհէն, որ երկիր լայ՝ դու ծիծաղիս:
Արի, որ մի խրատ տամ, թէ խելք ու միտք ունիս, լըսէ:
Անգէտի հետ մի դատի, թէկուզ հազար էլ քեզ սիրէ:
Անգէտն նրման է հուրի, ուր ընկնի՝ այնտեղը կայրէ,
Դիտունը նրման է ջուրի, ուր երթայ կանաչ կը բուսնի:

149. Պ Ա Ն Դ Ո Ի Խ Տ Ի Ն

«Դնամ ու գնամ», կասէր որդիս, չհաւատացի.
Երբ «մնաս բարով, ասաց, կասկածեցի.

¹⁾ Մաքուր. ²⁾ Ձեռ լինում: Այս հատուածի լեզուն բնագրին
առաջատու սխալ է:

Երբ ոտն ասպանդակեց, ես զարմացած մընացի.

Այլ բան չը կարցայ ասել, «ուր որ երթաս, ճամբադ բարին»:

Այն ճամբան, որ դու երթաս, վարդ ու մուրտ առջևդ
բուսնին.

Մյն բաղաբը, որ դու մտնիս, գրողի ձայնը չհասնի.

Այն խնջոյքը, որ դու նստիս, գաւաթներդ զինով լըցւի.

Ծովերը գինի դառնան, իսկ նաւերը ճաշերով լի:

Քուչակ

150. Ս Ա Յ Ե Ա Թ-Ն Ո Վ Ա

Սայեաթ-Նովան ծնաւ Թիֆլիզ, մօտ 1712 թ.: Նրա հայրը Հալէպցի էր և Թիֆլիզում ժամկոչ, մայրը Հաւլաբարցի էր: Ս. Նովայի անունը Արութիւն էր. պոստիկուց նրան տալիս են ջուհակի մօտ: Խիստ աչքաբաց լինելով, ինքն իրա համար մի մեքենայ է հնարում, կտաւր հեշտութեամբ գործելու համար: Փոքրուց, պաս պահելով, ականջ է դնում ամեն խաղ ասողի և «Ս. Կարապետի կարողութիւնով» սովորում է քամանչա և շօնգուր ածել: Վերջը բոլորովին թողնում է ջուհակութիւնը և իրանսուիրում է աշուղութեան, երգելով թուրքերէն, վրացերէն և հայերէն: Նա այնքան հռչակ է ստանում, որ դառնում է Հերակէթազաւորի պալատական երգիչ, իսկ նրա ժողովրդակահութիւնն այնքան մեծ է, որ մինչև այսօր, մահից հարիւր և աւելի տարիներ յետոյ նրա երգերն և անունը քաջածանօթ են ամեն մի թիֆլիզեցու: Թիֆլիզեցոյ քէփի և ուրախութեան անհրաժեշտ զարդն էր նա, և ով ուզում էր ուրախութիւն տեսնել, Սայեաթ-Նովին էր լսում: Նա արժանի էր ժողովրդի սիրուն ու համակրանքին, ուրախ ու վառվռուն երգերի հետ, նա շատ բարձր էր հասկանում իր նշանակութիւնը և խրատն ու բարի խորհուրդ անպակաս էր անում ժողովրդից. նա իրան ժողովրդի «նօքար» էր անուանում. «արի, համով դուլուղ արա, խալթի նօքար Սայեաթ-Նովա, ով քէզի լեզի պարգեի, դուն տուր շաքար, Ս. Նովա»:

Նա խրատ էր տալիս. «ամօթ սիրէ, ագար սիրէ, ան սիրէ և կամ զիր սիրէ, գրիչ սիրէ գաւթար սիրէ»:

Մէկ էլ, ձանձրացած աշխարհի կեանքից ու վայելքներից, նա ասում է. «կու հագնիմ մազեղէն, կու հագնիմ շախ. կերթամ ու ման կուգամ վանքիւրն մէկ-մէկ», և նա թողնում է տուն, ընտանիք, չորս գաւաղներն ու գնում Հաղպատ, ձեռնադրւում վարդապետ:

Նոր իմացան թիֆլիզեցիք, թէ ի՞նչ կորուստ ունեցան Սայեաթ-Նովի գնալով, որովհետև նրանց կարծիքով նրա նման աշուղ էլ չէ եղել: Պատմում են, որ մի աշուղ գալով Թիֆլիզ, յաղթում է բոլոր աշուղներին և սահները խլում: Սայեաթ-Նովան որ լսում է, գալիս է Թիֆլիզ, հագնում աշխարհիկ շորեր և հէնց մէյդանի կամուրջի տակին, սառած Բոի վրայ նստած՝ վէճի բռնւում նորեկ աշուղի հետ, յաղթում է նրան, հայրենի քաղաքի պատիւը կրկին հաստատելով:

Աղա Մամադ Խանը 1795 թ. երբ տիրում է Թիֆլիզին, Սայեաթ-Նովան գտնւում էր Ս. Գէորգ եկեղեցում. պարսիկներն յարձակւում են նրա վրայ և ստիպում, որ հաւատն ուրանայ. «չխմանամ քիլիսադան, դօմանամ Իսադան», (եկեղեցուց դուրս չեմ գալ, հաւատա չեմ ուրանայ) պատասխանում է և նահատակւում պարսիկների ձեռքով գրեթէ 80 ամեայ ծերունին:

Սայեաթ-Նովան մեր աշուղների մէջ ամենից յայտնին և ամենից նշանաւոր է Գուշակից յետոյ, նա աշուղական տափակ և արհեստական դարձած ձևերի մէջ դնում է խորին զգացմունք և աշխոյժ. նա միևնույն ժամանակ խորին համոզմունքի և գաղափարի տէր մարդ էր, որ քիչ է պատահում բանաստեղծների մէջ, Թողնել սազն ու քամանչան, թագաւորի պալատն ու ժողովրդի ուրախութեան սեղանները և գնալ մտնել վանք աղօթելու համար, մարտիրոսական մահ ընդունել հաւատի համար, այնքան հմայիչ ու զրաւիչ սէր երգելուց յետոյ, դա սովորական մարդու գործ չէ, այլ մի անհատի, որ գիտէ և կարողացել է իր քարոզածը իր կեանքի դնով ապացուցանելու:

Համեմատել «Աշուղների մրցումը» և «Աշուղ»:

151. Խ Ր Ա Տ

Արի ինձ անգաճ կալ, այ դիմանա սիրտ,

Հայա սիրէ, աղաւ սիրէ, առ սիրէ.

Աշխարհս քունն ըլի, ի՞նչ պիտիս տանի՝

Աստուած սիրէ, հոգի սիրէ, ետր սիրէ:

Էն բանն արա՛ Վուր Աստուծո շարքումն է,

Խրատնիրըն՝ գրած Հարանց վարքումն է.

Երիք բան կայ՝ հոգու, մարմնու կարգումն է՝

Գիր սիրէ, դալամ սիրէ, դաւթար սիրէ:

Ե՛կ, արի, սիրտ, մի՛ կենա դու մէ դամաղի,

Հալալ մտիկ արա՛ հացի ու աղի.

Հէնց բան արա, մարդ վըրէդ չծիծաղի՝

Խըրաւ սիրէ, սաբըր սիրէ, շա՛ր սիրէ:

Հըպարտութիւն չանիս՝ դուր կու գաս տէրիդ,

Խոնարութիւն արա՛ քանց քիզ դէվէրիդ.

Աստուած դիպունանցը մին հոգի էրիտ՝

Աղքատ սիրէ, զօնաղ սիրէ, օտար սիրէ:

Սայեաթ-Նովա, էրնէկ քիզ թէ էս անիս,

Հոգուդ խաթրի, մարմնուդ ումըրը կէս անիս:

Թէ գուզիս Վուր դատաստան չտեսանիս՝

Վանք սիրէ, անապատ սիրէ, քա՛ր սիրէ:

1735 թ. 1 մայիսի

152. *
* *

Դուն էն գլխէն իմաստուն իս, խելքդ յիմարէն ըսար մի՛ անի,
Էրագումն տեսածի հիդ միզ մէ հէսար մի՛ անի.

Ես խօմ էն գլխէն էրած իմ, նորմէկանց քարար մի՛ անի.

Թէ վուր, զիդիս, բէզարիլ իս, ուրիշին սարար մի՛ անի:

Զկայ քիզ պէս հուքմի հէքիմ, դուն Ռոստոմի Զալ թագաւուր

Ազգըդ ազգերումն գոված, համ դուն իս զօգալ թագաւուր.

Թէ էսէնց էլ սուչ ունենամ՝ գլուխս արա՛ տալ, թագաւուր,

Մըտիկ արա՛ քու Ստեղծողին, նահախ տիզ դազար մի՛ անի:

Քանի կուզէ քամին տանէ՝ ծովէմէն աւազ չի պակսի.
Թէկուզ ըլիմ, թէկուզ չըլիմ, մէջլիսներուն սազ չի պակսի.
Թէ կու պակսիմ, քիզ կու պակսիմ, աշխարիս մէ մազ չի պակսի,
Սայեաթ-Նովու գերեզմանն Հինդ, Հարաշ, Արար մի անի:

153. ԵՐԳԶԻ ՊԱՐՏԱՃԱՆԱԶՈՒԹԻՒՆԸ

Արբի, համով դուլուդ արան, խալխի նօքար Սայեաթ-Նովա,
Ամեն մորդ չի կանա ճանգի շահով շրքար, Սայեաթ-Նովա.
Ո՛վ քիզի լեզի պարզի, դուն տու շաքար, Սայեաթ Նովա,
Ղաստ արան, շուշէդ չկոտրին, չխրփին քար, Սայեաթ-Նովա:
Թէկուզ դպրատունըն սլահ տաս, ծեծով չի խրատի խիւըն,
Ինչքու անձնէն չդուրս է՛նայ անախտելի էն չար դիւըն,
Բէգասլըն ասըլ չի դառնայ, թօլով չի սիպտակի սիւը,
Ծուռ փէտն չի դրատի ունտան, գուրգեար Սայեաթ-Նովա:
Թէկուզ իմանաս. գիտենաս աստղերու համբարըն սիրուն,
Անբարի գործն կորած է, կարդն Հարանց վարըն սիրուն,
Աւետարանի խօսքիւրն մարգարիտ է, կարդն սիրուն,
Մի՛ ածի խոզի առջիւն լալ ու գովար, Սայեաթ-Նովա:
Վուրտիդ հարսնիք, վուրտիդ սուզ, վուրտիդ սօյրեաթ
խազ է ըլում.
Վուրտիդ ժամ, վուրտիդ պատարագ, վուրտիդ սիրով տաղ է ըլում.
Թէ վուր հոգուդ կամքն իս անում, մարմինդ բէգամաղ է ըլում.
Վճուր մէ դարդին կու գիմանաս դուն, ջրատար Սայեաթ-Նովա:
1758 թ.

Սայեաթ-Նովա

154. * *

Ասում ես՝ դիմացիր, թնց դիմանամ, մի՛թէ ես եմ քար,
Դարդիս արա մէկ ճար:
Կեանքըս մաշել ես բոլորովին, ամենը իսպառ,
Էս ցաւն է դըժւար,
Էսքան նեղութիւն ինձի մի տար անողորմաբար,
Ո՛վ դու իմ սիրահար:
Շատ վախտ է, քաշում եմ կարօտող, չես գալիս երես.
Մինչ երբ դիմանամ ես:

Իմ անբախտութիւնը ինձի բաւ է՝ մի անիւ էդպէս,
 Կեանքըս արեցիր կէս:
 Ողորմութիւն արա՛ աղքատիս, քաշի, մօտըդ տա՛ր —
 Տանջիլ մի՛ հարաշար:
 Վախտ որոտում ես, վախտ ամպում ես, վախտ մթնում ես
 շատ,
 Անձրեւում ես կաթ-կաթ:
 Վախտ բարկանում ես, վախտ նեղանում, կամենում ես
 ինձ հար,
 Սարսափում է աշխարհ:
 Չարակամների խօսքերն քեզ խրատ ես արել,
 Խիստ շատ վատ ես արել,
 Ուրիշների հետ սէր անելը ազաթ ես արել,
 Ինձի ետէ՛ ես արել,
 Ես իմ բաղդից եմ գանգատաւոր, միշտ և մուղարար,
 Ինձ չի տալիս դադար:
 Անգին պարգևիցդ պարգևեա քոյոց զքոյս,
 Բողբոջ ես նորաքոյս:
 Ե՛կ, սէր իմ, աղաչում եմ, խղճան, խղճալոյս,
 Տուր բաւականին յոյս:
 Է՛լ ինքըդ էս անտանելի ցաւին գրտիր հընար,
 Ինձ մի թողիր անճար:
 Յաւերըդ ինձ ես տալիս, ուրիշներին քաղցր խօսքերըդ:—
 Ինձ է՛ս է քու խէրըդ:
 Ինձնից աւելի, ասա տեսնեմ, ո՞վ է քու տէրըդ,
 Ինձ նա տայ քու սէրըդ:
 Դու քու դարդերըդ լաւ դիտես, խեղճ Ադամ-Ազբար,
 Խալխն ի՛նչ է խաբար:
 Ազբար-Ադամ

155. ՄԻՍԿԻՆ ԲՈՒՐՋԻ

Սա ծնունդ է Հին Նախիջևանում 1810 թ. և եղբայրների հետ եկել Գանձակ: Շատ աշխոյժ, չարածճի երեխայ էր, վառող է պատրոյդ պայթեցնելիս դեռ մանկութիւնից մի աչքը փչացրեց: Ոչ մի արհեստի վրայ երկար չէր մշտում, չափազանց ինքնասէր էր, աչքի վերաբերմամբ նրկատողութիւն լսելիս թողում էր վարպետին փախչում, ինչքան էլ Միկիչ եղբորից ծեծւում էր վարպետներ շուտ շուտ փոխելու համար, չէր կոտրւում: Վերջը Բուրջին դարձաւ Գանձակի մի ուսու պաշտօնեայի տանը ծայտահարար: Սրամտութեան շնորհով կարճ միջոցում ոսերէն խօսելու մէջ վարժուեց, յետոյ եղաւ թարգմանը ուսու պաշտօնեաների, երեք լեզու դիտէր, վրացերէն էլ սովորելու համար փախաւ Թիֆլիս: Նրա լեզուի ճարտարութեան վրայ հիացած էին ամենը: Աւելի բան տեսնելու, սովորելու ծարաւից դըրդուած Թիֆլիսը թողեց ու շրջելով հասաւ Թաւրիզ ու այնտեղ վարժուեց ֆարսերէնի մէջ: Շրջմովիկութիւնը շինեց արհեստ, հաստատ գործի չըկըպաւ, որովհետեւ դեռ փոքրուց խաղեր յօրինելու, ասելու շնորհ ունէր, դրանով ապրուստ էր անում: Ականատեսները պատմում են՝ խաղ ասելիս ոգևորւում էր, ամեն ինչ ասում էր անպատրաստից, բառերը վարար ջրի պէս վրխում էին բերանից: Քսան տարեկան հասակում արդէն աշուղ էր և իրան անուանում էր Միսկին Բուրջի, այսինքն խեղճ Բուրջի: Միջին հասակ, բարակ կազմուածք ունէր, կոյր աչքի վրայ կախած պահում էր մի կտոր կաշի: Չքաւոր էր, բայց նրա կծու լեզուից հարուստները խիստ վախենում էին, ամեն սուփրի վրայ նրան հրաւիրում էին, որ խաղ ասի, սրախօսութիւններով զուարճանի: Նրան առատօրէն վարձատրում էին անպատրաստի ասած շնորհալի խաղերի համար, որոնցով ծաղրում էր այս ու այն հարստի անվայել արարքը: Երբեմն մեծ խնջոյքի վրայ հարիւրներ էր ժողովում, բայց երկու օրից ետ գըր-

պանում բան չէր մնում: Ասում են՝ կարօտեալների տներն այցելել շատ էր սիրում, մէկին փող էր բաշխում, մէկին հագի նոր շորը, միւսին գլխի լաւ գտակը: Անփոյթ էր հագնուելու կողմից, մի օր կարելի էր տեսնել զառով, կլապիտոնով կապա վրէն, ընտիր չաքմէքը ոտին, բուխարի գդակը գլխին. ամենը ետնից Բուրջի քէկ էին կանչում, մի երկու օրից ետ երևում էր աղքատի կերպով՝ հնամաշ չուխով, արծաթէ գոտու տեղ թուկի կտոր մէջքին: Հագուստը փոխում էր, բայց խրոխտ, մտրակող լեզուն պահում նոյնը:

Նա նուագել չէր իմանում, շատ էլ ախորժեկի ձայն չունէր, աշակերտներ չէր պահում: Մարիօնեապոլսի օլիսնս-րը բանացնում էր նա գաւառում ձիով շրջելով: Այդ խաղի համար հրաւիրւում էր գիւղերը հարսանիքների. հասարակ ժողովուրդը նրան կանչում էր Օլիսնսազ Բուրջի:

Եղբայրները ստիպմամբ Բուրջուն ամուսնացրել էին, որ թափառական կեանքից ձեռ վերցնի: Երկար չէր քաշել, կինը մեռել էր, զաւակ էլ չէլ: Մնացել, Ծերերի ասելով՝ կնկայ թաղումից ետ Բուրջին իրա տան բոլոր սարք ու կարգը, իրեղէնները դուրս է բերել ժողովրդի առաջ ու ասել. «աշխարհի հետ ինձ կապողը նշանածս էր, ես երկրորդ անգամ պսակողը չեմ, այսուհետև ինձ ոչ տուն է հարկաւոր, ոչ տան սարք, իմ խաղերի հետ ես էլ՝ շահիր Միսկին Բուրջին ժողովրդինն եմ: Եղբայրաբար մօտ եկէք, ձեր խղճով զին կտրեցէք ու էս բաները վերկալէք: Թանկ ու էժանը՝ դուք գիտէք, էնքան փող տուէք, որ քելեխի ծախսը ծածկեմ»:

Ժողովուրդը այդ խօսքերից սրտաշարժուած մի մի կտոր բան է վերցրել ու նրա բոլոր պարտքը վճարել:

Միսկին Բուրջին գրագէտ էր, յօրինած խաղերը սկսած 1832 թ. մուծում էր իրա «դաւթարի» մէջ, որ ես 1892 թ. տեսայ Գանձակում մի մասնաւոր մարդու տան: Կազմի վրայ իրա սեպհական ձեռով գրել էր. «ման էօլում, էս դաւթարին ուրիշ դալամ չըխառնէք»: Խաղերը մեծ մասամբ երգիծաբանական են: Միսկին Բուրջու անունն ա-

ուսյին անգամ յիշել է բժ. Գ. Հախվերդեանը, յետոյ Ոսկան Յովհաննիսեանը, տպագրելով նրա հայերէն երգերից 6-ը «Նոր-Քնար»-ների մէջ, ապա Միք. Միանսարեանցը արտատպելով նրա երգերից 2-ը «Քնար Հայկականի» մէջ, Մ. Բուրջու անտիպ մնացած դաւթարի մէջ կան հայերէնի հետ և թուրքերէն երգեր, բայաթիներ, ամենն էլ իրա ձեռով գրած:

Մ. Բուրջին խաղալու մոլութիւնն ունէր, որը եղաւ նրա մահուան պատճառը: Միանգամ Շուշում Զաֆար Ղուլի բէկից խաղի մէջ տարաւ նրա թէ փողը, թէ դրափէ վերարկուն և թէ թուրը: Երբ Գանձակ էր գալիս Բուրջին, վիրաւորուած բէկը մարդիկ է ուղարկում և Ասկեարանի կիրճում սպանել տալիս: Այդ պատահեց 1847 թ. յունիսի 7-ին: Թաղուած է բերդի պարսպի դրսեր:

Քամ. Ս.

156. Է Զ Մ Ի Ա Ծ Ի Ն

Էջմիածին խիստ սիրուն պայծառ տեսի,
Երկու հարիւր կանթեղ՝ յիսուն ջահ տեսի,
Դիփ ամենը ջերկա ջերկա վառ տեսի,
Վաթսուն աւել հէնց ոսկէ բուրվառ տեսի,
Լուսաւորչի տաճարն մարմար տեսի:

Մարմար քարից շինած էր աւազանն,
Բերին դրին տասներկու գաւազանն,
Որ խաչով խաչակնքեց Սրբազանն,
Իսքն իրան եփեց մեռունի ղազանն,
Համբուրեցի, մէկ էսպէս հնար տեսի:

Ուխտ'ին եկել Հիւսիսոյ մինչ'ի Հարաւ.
Դիփ լի էին, ոչ ուղած'ին, ոչ ծարաւ.
Տասներկու եպիսկոպոս թափոր արաւ,
Տիրացուների ձայնը խելքս տարաւ,
Նրանց ժամ ասելն-ուրիշ բառ տեսի:

Հռիփսիմէն, Շողակաթն, Գայիանէն—
Երեքն էլ խիստ զօրաւոր նշան են.
Մեծ ու փոքր հինգ հարիւր միաբան են,
Աջով, խաշով սիրուն պատարագ կանեն,
Երեք հարիւր ոսկէկապ շուրջառ տեսի:

Միսկին Բուրջին ասում է՝ չիլի հատը,
Սուրբ Լուսաւորիչն է տուել խրատը,
Որ անիծեց՝ խոզ դարձաւ Տրդատը.
Սակի արծաթ պատկեր է ամեն պատը,
Աբրշումէ խալիչէքն զառ տեսի:

Էջմիածին, Նշանակում է միածինն իջաւ Լուսաւորիչը երա-
զում տեսնում է, որ Քրիստոս ցած է տալիս երկնքից և մուրճով
խփում գետնին: Հէնց այդ տեղ էլ նա 302 թ. հիմնեց Հայոց
առաջին մայր տաճարը: Վաղարշապատում, Տրդատ թագաւորի
օգնութեամբ Էջմիածինը 1600 տարիների ընթացքում մի քանի
անգամ աւերուել և նորից շինուել է: Ներկայ շէնքը 618 թուա-
կանից հին պիտի չլինի: Նրանից ոչ շատ հեռու գտնւում են
Հռիփսիմէի, Շողակաթի և Գայանէի վանքերը, որոնցից նշանաւոր
է մանաւանդ Հռիփսիմէն իբրև զօւտ հայ ոճով շինուած մի ե-
կեղեցի: Էջմիածնումն է նստում ամենայն հայոց կաթողիկոսը,
այնտեղ է եփուում Ս. միգոնը և այնտեղից է կառավարւում ամ-
բողջ հայ եկեղեցին: Էջմիածինն ունի հայ ձեռագիրներ և ամենա-
հարուստ հաւաքածու և մի թանգարան հայ հնութիւնների:—Էջ-
միածնումն է գտնւում Գէորգեան ձեմարանը:

Է. ՎԵՐԱԾՆՈՒՆԴԻ ԵՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԱԺԻՆ

157. ՎԵՆԵՏԻՊԻ ԵՒ ՎԻԵՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՆԵՐԸ¹⁾

Վենետիկի նշանաւոր հնութիւնները և յիշատակաւորանները գիտելուց յետոյ՝ զբօսասէր ճանապարհորդներից քչերը միայն կը հեռանան այդ «ծովերի թագուհի» մայրաքաղաքից՝ առանց այցելելու Ս. Ղազարի կղզին, որտեղ, անցեալ դարու առաջին քառորդում շատ դժպտեհհոլթիւններից և թափառուֆներից յետոյ՝ ապաստան գտաւ մի փոքրիկ հայկական գաղութ։ Ս. Ղազարի կղզու մեծահամբաւութեան մասին վկայում են թէ այցելուների ստուար մատեանը, որտեղ մենք կարող ենք կարդալ զանազան ազգութիւններին պատկանող անձանց անունները, և թէ գէպի կղզին անդադար գիմող գոնդոլների երամը։

Մխիթարեան մենաստանի հիմնարկութիւնը տեղի է ունեցել անցեալ դարու առաջին քառորդում, երբ 1717 թւին Վենետիկեան հանրապետութեան հրամանագրով՝ ս.

¹⁾ Մխիթարեան միաբանութիւնը 20% տարուայ ընթացքում մեզ տուել է մօտ հարիւր հեղինակ և մօտ 1000 հատոր աշխատութիւն։ Այդ գրքերը կազմում են հայ ամբողջ գրականութեան մի հինգերորդ մասը։ Ինչպէս մեր մտաւոր վերածնունդը, այնպէս նաև մեր հին գրականութեան ու լեզուի վերստին ծաղկելը մենք պարտական ենք Մխիթարեաններին։ Մխիթարեանները հիմնեցին արեւմտեան աշխարհիկ լեզուն. նրանք առաջինը ծանօթացրին մեզ հւերպացոց հետ։

Ղազարի կղզին, որ երբեմն բորոտների ապաստան էր, յանձնուում է ի մշտական սեփականութիւն Մխիթար վարդապետին և նրա աշակերտներին, որոնք ոտք էին դրել Վենետիկ զրանից երկու տարի առաջ յունական Միթոնէ քաղաքից (Պելոպոնէզի հարաւ-արեւմտեան մասում), որտեղ նրանք շարունակ ենթարկւում էին վտանգների թուրք խաժամուժ զօրքերից: Բայց ո՞վ էր հեռաւոր Հայաստանի այդ զաւակը—Մխիթարը:

Մխիթարը ծնուել է Փոքր-Ասիայի Սեբաստիա քաղաքում 1676 թ. փետրուարի 7-ին. նրա հօր անունը Պետրոս Մանուկեան էր և մօր անունը՝ Շարհիստան: Պատանի Մանուկը (այդպէս էր Մխիթարի անունը մինչև հոգևոր կոչում ընդունելը) երկու լարեպաշտ կանանց դաստիարակութեան և խնամքի տակ մեծանալով՝ որոնց բարեբար ազդեցութիւնն իր վրայ նա միշտ գոհունակութեամբ խոստովանում էր, ցոյց էր տալիս մի առանձին սէր դէպի ուսումն և, զուգընթացաբար, հակումն գէպի կրօնաւորութիւն: Սարկաւագ ձեռնադրուելուց յետոյ՝ Մխիթարը մի փոքր ժամանակ մնաց Սեբաստիայի Ս. Նշանի վանքում, որտեղ նա ուսումնասիրում էր Ս. Գիրքը, մինչև որ նրան ներկայացաւ բարեյաջող առիթ ս. Էջմիածին ուղևորուելու Ս. Էջմիածնում Մխիթարը հիւանդացաւ և երկար չկարողացաւ մնալ: Այստեղից սեբաստացի մի բարեկամի հետ նա Սեանայ վանքը մեկնեց, բայց այստեղ ևս Մխիթարին վիճակուած չէր երկար մնալու, որովհետեւ ամայի կղզու կեանքը չէր կարող դոհացում տալ նրան: Անցնելով երկան հայրենիք վերադառնալու դիտաւորութեամբ՝ նա ընդհատեց իր ճանապարհը Հասան-Կալայում, որտեղ Ս. Աստուածամօր վանքի վանահայրը առաջարկեց նրան դասատուի պաշտօն վանական դպրոցում: Մէկ տարի ու կէս մնալով այս պաշտօնի մէջ՝ Մխիթարը, ինչպէս հաւատացնում են նրա կենսագրողները, հնարաւորութիւն ունեցաւ մօտէն ծանօթանալու կաթողիկէ եկեղեցու դաւանաբանութեանը, որովհետեւ այս կողմերում մանաւանդ Կալինում, պատական պրոպագանդան մեծ ծաւալ էր ստու-

չել, Կարինում Մխիթարը ծանոթացաւ մի անձնաւորութեան հետ, որ եղել էր Հռոմում, սա պատմեց Մխիթարին պապի հզօրութեան, նրա պալատի շքեղութեան, յաւիտենական քաղաքի տաճարների փարթաժութեան և վեհութեան մասին: Այս պատմութիւնները, անշուշտ, դիւրագոյաց երիտասարդի վրայ ունեցան իրանց ազդեցութիւնը: Կարինից Մխիթարը ճանապարհ ընկաւ Երուսաղէմ, որտեղից նա մտադիր էր ուղևորուիլ Իտալիա, սակայն նրա բաղձանքը անկատար մնաց: Ծանապարհին նա հիւանդացաւ և 1655 թ. վերադարձաւ հայրենիք: Յաջորդ տարին այս ուղևորած երիտասարդը Կարինում վարդապետ ձեռնադրուեց: Իր շրջադայութեան ժամանակ Մխիթարը մօտէն ծանոթացել էր իր հայրենակիցների հոգևոր պէտքերի հետ և այդ ժամանակներն է, որ նրա մէջ յղանում է մի միտք՝ հիմնել մի կրօնական-գիտական ընկերութիւն, որի նպատակը լինէր պատրաստել քարոզիչներ և ուսուցիչներ հայ ժողովրդի համար: Բայց մի այդպիսի ընկերութիւն կազմելը Մխիթարի ոյժերից վեր էր, մանաւանդ որ նա ինքը դրա համար բաւարար կրթութիւն չուներ, ուստի նա ուղևորուեմ է Կ. Պօլիս և յայտնում է իր մտադրութիւնը ինչպէս որ վարդապետին, որը ուսել էր կաթօլիկների գալոցում և յայտնի էր իբրեւ գիտնական և եռանդոտ անձին: Փոխանակ խրախուսելու և աջակցելու՝ ինչպէս որ վարդապետը զանազան արգելիչ հանգամանքներ մէջ բերելով, մերժեց Մխիթարի ծրագիրը և վերջինս դարձեալ ձեռնուհանք վերադարձաւ հայրենիք 1698 թ.: 1700 թ.ին Մխիթարը կրկին գալիս է Կ. Պօլիս իր աշակերտների հետ. այդ ժամանակ Թիւրքիայի մայրաքաղաքի հայ հոգևորականութիւնը կատարի կոխ էր մղում ժողովրդի մէջ տարածուող կաթօլիկ պրոպագանդայի դէմ: Մխիթարը՝ հէնց այդ ժամանակ իր լատիներէնից թարգմանած մի քանի հրատարակութիւնների պատճառով հայ հոգևոր իշխանութեան կողմից կասկածի տակ ընկաւ, այնպէս որ նա ստիպուած էր առժամանակ արձակել իր աշակերտներին և պատուարուել Կապուցինների վանքում: 1701 թ.ի սեպ-

տեմբերի 8-ին նա կազմում է իր աշակերտներից մի վա-
նական միաբանութիւն, որի նպատակը պէտք է լինէր՝ ու-
սումնասիրել բոլոր հարկաւոր գիտութիւնները և նպաստա-
մատոյց լինել հայ ժողովրդի հոգևոր պէտքերին: Ամենա-
յարմար երկիրը, որտեղ միաբանութիւնը կարող էր հաս-
տատուել, համարւում է Վենետիկի իշխանութեան տակ
գտնուող Մ'որէանս Վերջապէս բազմաթիւ արկածներից և
վտանգներից յետոյ Մխիթարը իր աշակերտներին հետ փո-
խադրւում է այստեղ: Մխիթարի խնդրանքը Վենետիկի կա-
ռավարութիւնը տալիս է նրան հող վանքը կառուցանելու
համար, և երկու կալուած, որոնց եկամուտներով միաբա-
նութիւնը պէտք է պահպանէր իր գոյութիւնը: Երբ Վենե-
տիկեան հանրապետութեան սահմաններում նոր հաստա-
տուած միաբանութեան լուրը հառաւ Հռոմ, Մխիթարը հար-
կադրուած եղաւ միաբանութեան կանոնադրութիւնը ներ-
կայացնել պապական իշխանութեանը և ձեռք բերել նրա-
նից վաւերացում 1712 թ.: Այս հանգամանքներում յա-
կամայիցս, ինչպէս կարծում են կենսագրողները, տեղի
ունեցաւ Մխիթարի յարումն կաթողիկ եկեղեցուն և պապի
գերիշխանութիւնը ընդունելու անհրաժեշտութիւնը:

Սակայն Մխիթարին և նրա աշակերտներին երկար
չյաջողուեց մնալ Մորէայում: Թիւրքիայի ու Վենետիկի մէջ
ծագած պատերազմը ստիպեց Մխիթարին թողնել Մո-
րէան և որոնել նոր ապաստարան: 1715 թ, նա իր աշա-
կերտների հետ գալիս է Վենետիկ: Վենետիկի հանրապե-
տութեան ծերակոյտը չմերժեց իր հովանաւորութիւնը
փախստականների. թիւրքերից յափշտակած հոգերի փո-
խարէն որոշեց տալ Մխիթարին ի մշտական սեփականու-
թիւն ս. Ղազարի կղզին, որ հեռու չէր նոյն իսկ Վենե-
տիկից, բայց քաղաքի սահմաններից դուրս էր համարւում:
1717 թ. սեպտեմբերի 8-ին՝ միաբանութեան հաստատման
տարեդարձի օրը, Մխիթարը փոխադրուեց կղզին և ձեռ-
նամուխ եղաւ վանական շինութիւնների կառուցմանը. թէ
վանական կառավարութեան և թէ մասնաւոր նուիրատու-
ների նպաստների շնորհիւ Մխիթարեաններին այս անգամ

յաջողուեց Խալիլայի հողի վրայ աւելի հաստատուն հիմք դնել: Երեսուն տարուց աւելի Մխիթարը անցուց ս. Ղազարի կղզու վրայ, բոլորովին նուիրուած լինելով նրան բարեկարգելու հոգսերին: Կառուցուելիք շինութիւններին վերահասու լինելով՝ նա գտնում էր ժամանակ զբաղան աշխատութիւնների համար ու հետաժող էր լինում իր աշակերտների զբաղմունքներին: 1749 թուի ապրիլի 27-ին, 74 տարեկան հասակում, Մխիթարը կնքեց իր բազմադիրն և ճակատագրի փոփոխականութեանը մատնուած կեանքը: Տարեցտարի Մխիթարեան միաբանութիւնը բարդաւաճում էր, սրա հետ միասին և աւելանում էր նրա անդամների թիւը: Ասիայի և Եւրոպայի դանազան տեղերից դիմում էին Ղենեստիկ աշակերտներ՝ ս. Ղազարու վանական վարժարանում Մխիթարի ղեկավարութեամբ կրթութիւն ստանալու համար: Միաժամանակ հարստանում էր և մատենադարանը, որը այժմ հսկայական ձեռագիրների քանակութեան նկատմամբ՝ ս. Էջմիածնի մատենադարանից յետոյ առաջին տեղն է բռնում: Ինքնուրուշ ևս տպարան, որը լոյս է ընծայել շատ ընտիր հրատարակութիւններ և անխոնջ աշխատում է մինչև այժմ: Սնցնենք այժմ Մխիթարեանների գործունէութեանը:

Հայոց զբաղանութիւնը և լեզուն XIV դարուց սկսած հետզհետէ անկման էր մօտենում և հայ ժողովրդի կըրթութիւնը զգալի կերպով ցած իջնում: Առանձին անհատների փորձերը՝ բարձրացնել լեզուն, զբաղանութիւնը և կրթութիւնը կատարեալ անկումից ոչ մի արդիւնաւէտ հետեանք չէին ունենում: Մխիթարեանները, որոնց գլխաւոր նպատակներից մինն էր հայ լեզուի մշակումը, ամենայն եռանդով սկսեցին ուսումնասիրել, մշակել և մաքրել զբարբարը և այդ բանի համար նրանք հրատարակեցին մի շարք քերականական ձեռնարկներ և բառգրքեր: Առաջին լիակատար քերականութիւնը զրաբարի, որ արժանի է այդ անուան, կազմուած է հայր Միք. Չամչեանի ձեռքով: Քերականական աշխատութիւններին կից պէտք է յիշել նոյնպէս բառարանների վերաբերեալ աշխատութիւնները. դեռ

ինքը Մխիթարը, իր միւս աշխատութիւնների թւում, թողեց երկհատոր բառգիրք հայ լեզուի, որ լոյս տեսաւ հեղինակի մահից յետոյ: Իր ժամանակի համար գա մի հսկայական դործ էր, թէ ի նկատի առնենք, որ նա միանգամայն և անդրանիկ էր, իբրեւ այդ տեսակի աշխատութիւն, Միաբանութեան երեք անդամներ՝ Հ. Հ. Աւետիքեան, Սուրմէլեան և Աւգերեան կազմեցին նոր (որ կոչուում է մեծ) Հայկազեան բառարանը. այդ վիթխարի գործը զբոլոյս բերելու համար պահանջուեց յիսնամեայ անդուլ աշխատանք: Գործի կէտ նպատակն էր՝ առաջագրել, որքան հնարաւոր էր ան ժամանակ, ամբողջ և առձեռն ձօխութիւնը գրաբարի. Հայ պատմութեան ուսումնասիրութեան շրջանում Մխիթարեանների գործունէութիւնը նշանաւոր է, յատկապէս նրանով, որ նրանք՝ իբրեւ տոաջինք, ժողովեցին պատմութեան վերաբերեալ շատ նիւթեր, այդ տեսակէտից կարևոր է նոյն հայր Միք. Չամչեանի աշխատութիւնը. վերջինը հրատարակեց գրաբար ընդարձակ պատմութիւն հայոց ամենահին ժամանակներից սկսած մինչև 1784 թ. երեք ստուար հատոր: Հայ աշխարհագրութեան և հնախօսութեան վերաբերեալ երկերից նախ պէտք է յիշել հայր Ինճիճեանի հիմնական աշխատութիւնները՝ «Աշխարհագրութիւն հայոց» և «Հնախօսութիւն հայոց»: Վերջին ժամանակների պատմական-աշխարհագրական աշխատութիւնների մէջ խիստ կարևոր տեղ են բռնում գիտնական բանաստեղծ հայր Դ. Ալիշանի երկերը՝ Սիսուան, Սյրաբատ և Սիսական, որոնք ներկայացնում են Կիլիկիոյ, Այրարատեան և Սիւնեաց նահանգների նկարագրութիւնները: Հայ գրականութեան պատմութիւնը նոյնպէս սկիզբ է առել Մխիթարեանների մէջ. դեռ 1829 թ. արքայր Սուքիաս Սոմալը հրատարակեց եւրոպական լեզուով հայոց գրականութեան վերաբերեալ առաջին համառոտ աշխատութիւնը, իսկ աւելի մշակուած գործ ներկայացնում է հայր Ջարբանալեանի երկհատոր պատմութիւնը հայոց գրականութեան: Վերջապէս Մխիթարեանները յայտնի են իբր անխոնջ հրատարակիչներ և թարգմանիչներ. նրանք

ունին ընտիր թարգմանութիւններ հին և նոր լեզուներից, իբրև հրատարակիչներ՝ Մխիթարեանները մեծ ծառայութիւն են արել, նրանք հրատարակել են և հրատարակում են հին հայ գրականութիւնից բազմաթիւ յիշատակարաններ, որոնք հայ լուսաւորութեան և հրատարակչական գործի մէջ մի դարաշրջան են կազմում՝ թէ իբրև խնամքով սպազբուած և թէ նրբաճաշակ կազմուած:

Եւրոպական գիտութեան առաջ Մխիթարեանների ծառայութիւնները խիստ գնահատելի են այն տեսակէտից, որ նրանք մեծապէս նպաստել են հայագիտութեանը եւրոպայում, Մխիթարեանների հրատարակած քերականութիւնները, բառարանները և հին հեղինակների ընագերեւները եւրոպացի գիտնականների համար միակ և լիակատար աղբիւրներն էին: Մխիթարեանները իրանց ծառայութիւններով համակրութիւն և յարգանք վաստակեցին ոչ միայն հայերի կողմից, նրանք՝ իբրև օրինակելի աշխատաւորներ, յարգւում են և նրանց ապաստան տուող Վենետիկից և ապա ամբողջ գիտական եւրոպայից: Ուսումնականներից շատերը վայելել են նրանց խնամատար ուշադրութիւնը և սրտապին հիւրասիրութիւնը իրանց զբաղմունքների ժամանակ Մխիթարեանների հարուստ մատենադարանում. նրանց հիւրերի թւում մանաւանդ պէտք է յիշել լօրդ Բայրընին, որ Մխիթարեանների մօտ ուսանում էր հայ լեզուն. այն սենեակը, որտեղ պարապել է նա, մինչև այժմ կոչւում է Բայրընի առանձնասենեակ:

Պօսելով Վենետիկի Մխիթարեանների մասին, չի կարելի անուշադիր թողնել և Վիեննայի Մխիթարեաններին: Կրօնական հողի վրայ ծագած տարաձայնութիւնների վախճանը, որոնց մասին երկարաբանելը մենք աւելորդ ենք համարում, այն եղաւ, որ 1773 թւին Մխիթարեանների մի մասը բաժանուեց և, թողնելով Վենետիկը, ուղիւեց նախ Տրիեստ, որտեղ հիմնեց իր մենաստանը՝ աջակցութիւն և հովանաւորութիւն գտնելով աւստրիական թագուհի Մարիամ Թերեզայից, և ապա 1811 թ. տեղափոխուեց Վիեննա: Այստեղ նրանք հիմնեցին դպրոց ու հիանա-

լի տպարան, որը այժմ Վիեննայում համարուում է ընտիր-
ներից մէկը: Վիեննայի Մխիթարեանների մատենադարա-
նը նոյնպէս արժանի է ուշադրութեան. թէև նա հարուստ
չէ Վենետիկոց մատենադարանից, բայց վերջին ժամա-
նակներս ուշի ուշով աշխատում են ձոնացել հայկական
բաժինը՝ մանաւանդ ձեռագիրների ճիւղը, և կազմել ժո-
ղովածու հայ պարբերական հրատարակութիւնների. Վիեն-
նայի միաբանութիւնն ունի և մի փոքր թանգարան, որ
տեղ առանձնապէս աչքի է ընկնում գրամագիտական բա-
ժինը. կայ և հայ դրամների լիակատար ժողովածու:

Վիեննայի Մխիթարեանների գիտական գործունէու-
թիւնը՝ համեմատելով Վենետիկոց գործունէութեան հետ,
աւելի փոքր ծաւալ ունի՝ մասամբ այն պատճառով, որ իբր
ինքնուրոյն հիմնարկութիւն, նա աւելի նորագոյն է, թէև
զրանից երբէք չէ նաեմանում այդ գործունէութեան նշա-
նակութիւնը: Վիեննայի Մխիթարեանները աւելի համբաւ
ունին իբրև լեզուագէտներ. գիտական աշխատութիւնների
մէջ առանձնապէս մատնացոյց անելու է արբանյայր Արսէն
Այտընեանի Վիեննական քերականութիւն հայ աշխարհիկ
լեզուի վրայ:

Թարգ. Յ. Բաղչեան

Братская помощь Л. М.

158. ՂԵՒՈՆԴ ՎՍՐԴԱՊԵՏ ԱԼԻՇԱՆ (1820—1901)

Այրշանն աշխարհ եկաւ Պօլիս: Նրա հայրը հնագէտ
սեդանաւոր էր: Հէնց զրա համար էլ նա մանկութիւնից
սիրեց յարգել և գնահատել հնութիւնները, վերջը դառնա-
լով ամենամեծ հայ հնաբանը: 1832-ին նրան տանում են
Վենետիկ, Մխիթարեանների մօտ ուստնելու, ուր նա իր
ընդունակութեամբ և ջանասիրութեամբ զբաւում է ամենի
ուշքը:

1840-ին նա արդէն կրօնաւոր էր և մի տարի յետոյ
Ռափայէլեան վարժարանի ուսուցիչ: Այդ ժամանակից էլ
սկսւում է նրա զբաւական գործունէութիւնը տեւելով մինչև

Նրա մահուան օրը: Մի գործունէութիւն, որ իր նմանը չունի մեր մէջ. նախ իբրեւ վառվռուն և ազգասէր բանաստեղծ, ապա իբրեւ բանիրուն և անխոնջ պատմագէտ, հնախոյզ և մանաւանդ աշխարհագիր, որ Ալիշանի սիրած ճիւղն էր:

Նա մանկութիւնից նուիրում է իրան հայ-անցեայի ուսոյթին, ուստի գնում է Հոռմ, Մանթուա, Բերլին, Լօնդօն, և ուսումնասիրելով այն ամենն, ինչ որ հայերի վերաբերեալ գտնում է, գրքեր կամ ձեռագիրներ, արտագրում է կարևոր համարուած յիշատակարանները, որոնցից նա յետոյ պիտի կազմէր իր մեծավաստակ գրքերը:

Ալիշանի առաջին գործն էր. «Քաղաքական աշխարհագրութիւն», որ պատրաստել էր ուսանող ժամանակ, ինչպէս և հետեւեալ «Տեղեկագիր Հայոց Մեծաց»-ը. 1881-ից սկսած նա հետզհետէ հրատարակեց. «Երևակ», «Սիւսուան», «Այրարատ», «Սիսական» և այլն, որոնց ամեն մինի մէջ մանրամասն նկարագրում է համապատասխան գաւառը կամ նահանգը պատմական, աշխարհագրական, բուսական, կենդանական և առնասարակ ամեն կողմերից: Դրանք զարդարուած են հիանալի պատկերներով և իրանց նմանը հազուագիւտ է նոյն իսկ եւրոպական լեզուներում, միմիայն դրանց գինը մի քանի հարիւր ըուրլի արժէ:

Թէպէտ այդ գրքերի նիւթը լուրջ գիտական աշխարհագրական է, բայց Ալիշանը զարմանալի ընդունակութիւն ունէր այդպիսի սառը նիւթն արտայայտել բանաստեղծական խանդով և ոգևորութեամբ: Նա չի պատմում, այլ կարծես երգում է: Բանաստեղծելիս նա պատմում է և ուսումնասիրելու կամ քննելու ժամանակ երգում ու բանաստեղծում: Գիտնականն ու բանաստեղծը, ծանր տևական ուսումնասիրողն ու վառվռուն երեակայողը խորին հայրենասիրի հետ հիւսուած էին Նրա մէջ մի զարմանալի ներդաշնակութեամբ. և այդպէս էլ նա մնաց մինչև խորին ծերութիւն:

Իբրեւ կրօնաւոր Նրա բանաստեղծական խանդը սահմանափակուած էր հայրենասիրական պերճ ու ընդարձակ

քերթուածները մէջ միայն, սէրը նա չէր կարող երգել, իսկ հայրենասէր երգերը ընդարձակութեամբ ու խորութեամբ նա ուսուցիչն է մեր բոլոր նոր և նորագոյն բանաստեղծները: Նրա սիրած մոտիւններն են հին հայոց փառքը. «Կարմիրն Վարդան և բլբուլն եղիշէ»...

Փոքր գործերից յայտնիներն են. «Յուշիկը հայրենեաց, Շնորհալի և Պարագայ իւր, Հայ-Բուսակ, Հին հաւատք Հայոց, Հայ-Վենետ, Նուագը» (հինգ հատոր) և այլն: Միայն տպած գրքերի թիւը 40-ից աւելի է. թողել է և բազմաթիւ անտիպ գործեր:

Ալիշանը իր բանաստեղծական և գիտական երկերով մի գրական հսկայ է այդ բառի լայն իմաստով. որ բազմահատոր և լայնածաւալ գործերի ընդարձակութեամբ, երգչի բազմազան և բազմաբեղուն արտադրութիւններով նա կարող է մրցել Եւրոպայի ամենաբեղմնաւոր հեղինակների հետ, իսկ մեր մէջ նա մրցակից չունի և եզակի է: Այդ էր ահա պատճառը, որ նա վայելում էր եւրոպական հռչակ և պատուաւոր անդամ էր շատ համալսարանների և գիտական ընկերութիւնների:

Նա մի թուակազմ, փոքրահասակ ու վտխտ մարդ էր, մի այնպիսի համեստ բնոյթով, որ առակի կարգն է անցել Զանապրութիւնը, տոկունութիւնն ու հայրենասիրութիւնը խորին համեստութեան հետ, այս էր նրա բնոյթի գլխաւոր յատկանիշը: Ուստի նա էր և կը մնայ մինչև այն սակաւաթիւ մտաւոր և բարոյական հսկաներից, որի նմանն երբ և իցէ արտադրել է հայ ազգը:

Գ. Վանցեան

159. Ն Ա Ի Ա Ս Ա Ր Դ Ի Տ Օ Ն Ե Ր Ը

Հայք ունեցել են երկու տարեգլուխ՝ սրբազան և քաղաքական: Սրբազան տարեգլխին բնութիւնը ծաղկափթիթ ծիծաղով կենդանացնում էր մարդկանց, իսկ քաղաքական տարեգլխին, որ Նաւասարդն (օգոստոս) է, կիսով չափ

այրուած բնութիւնը ինքը կենդանանում էր մարդկանց հաստատած տօներով և հանդէսներով: Տարուայ ամենատաք ամիսը՝ հայոց բարեկենդանն էր, կադանդն էր, կրօնական, զինուորական և աշխարհախումբ հանդէսներով՝ հայոց աշխարհը զարնանանման գեղեցկանում էր: Նաւասարդի տօները՝ պահապան աստուածների տօներ էին, նախահայ քաջերի յիշատակներ էին, կտրիճների մրցանք էին, հասարակ ժողովրդեան խաղեր և վայելքներ էին, որ 3000 տարուայ չափ մեր երջանիկ նախնիքը կատարեցին, թընդացին, դոփեցին Բագրևանդայ տափերի և բլուրների վրայ, մինչև նոցա տակ ծածկուեցան: Այդ հանդէսները կատարում էին քրմապետները, նոցա փոխանակեցին խաչապատկ քտանայապետները, որոնք մեհեանների տեղ եկեղեցիներ շինեցին: Բայց դուրսը բնութիւնը իր կերպարանքը չփոխեց, ազգը իր հանդէսները չփոխեց, այլ տօները սրբեց, և աստուածներին նուիրելու փոխանակ՝ ճշմարիտ Աստուծոյ և Նորա նահատակներին նուիրեց: Գրեթէ անկարելի էր, որ Ս. Գրիգոր հայերին հեթանոսութիւնից քրիստոնէութեան դարձնելով, այն հին մեծահանդէս աշխարհաժողով գրօսանքի օրերը անհանդէս, անյիշատակ թողնէր:

Նաւասարդից մի քանի օր առաջ կատարւում էր վարդաձղի, վարդանման Աստղիկ դիցուհու տօնը, որի փոխանակ հայոց առաջին հայրապետը կարգեց Վարդավառ, Քրիստոսի պայծառակերպութեան տօնը, որ և հայերը մինչև այսօր պայծառապէս տօնում են: Իսկ Նաւասարդի առաջին օրը (օգոստոսի 11), որ հայոց տարեգլուխն է, ազգային ամենից մեծ, պանծալի, սրբազան օրն էր, և հանդէսները շատ օրեր տևում էին՝ դանազան յիշատակներով, որոնք մի անունով Ամանորայ էին ասւում, կամ աշխարհաժողով: Այս վերջին անունը ցոյց է տալիս, թէ այդ տօնին Բագրևանդայ բարձրաւանդակների հանդիսականները միշտ մեծ բազմութեամբ էին ժողովւում. թագաւորն իր Այլարատեան չորս բիւր գնդովը, նախարարները ութ բիւր գումարտակներով, 600 զաւառատեաքը և 400 զահակալ իշխաններ, բազմաթիւ քրմեր իրանց պաշ-

տօնեաներով և ուրիշ հաղարաւոր հանդիսականներ այս տօնը զարդարում էին:

Ի՞նչ էր այս Հայոց համաշխարական տօնի պատճառը. նախ՝ ինչպէս գիտենք, հին տարեմուտն էր, որովհետեւ Նաւասարդ նշանակում է նոր տարի: Երկրորդ՝ Նաւասարդը ջրհեղեղի յիշատակն էր, ուստի և այդ օրերը զանազան ջրախաղեր էին կատարում՝ տապանով Արարատ սարի վրայ մարդկանց փրկութեան տօնը յիշատակելու համար: Իսկ մենք հիմա, ինչպէս յայտնի է, ջրի այս հանդէսը՝ Վարդավառի օրն ենք կատարում: Երրորդ՝ տօն էր Ամանորայ ամենաբերից, ինչպէս առաջ յիշեցինք, որը երեկ բերքի և առատութեան չաստուած էր համարւում: Ուրիշ շատ պատճառների հետ մէկն էլ այն էր, իբրեւ թէ Մասիսի վրի մէջ Արտաւազդի շղթանների կրծելուց տարուայ վերջին օրը մաղի բարակութեան և կոտրելու է հասնում, և հազիւթէ Արտաւազդ սպառնում է տարուայ հետ բոլոր աշխարհքը վերջացնել և աշխարհախուժք տօնը համաշխարհական սուգ դարձնել, Նաւասարդի օրը դարբինները իրանց սալը ծեծում են, և այդ ձայնից աշխարհքը Արտաւազդի աւերմունքից ազատւում է: Այժմ ոչ միայն Նաւաւարդի օրը, այլ և ուրիշ օրերին դարբինները սովորութեամբ սալը ծեծում են, զոր օր. ամենայն կիրակի օրերը կամ չարչարանքի ուրբաթ օրը: Այդ ամենայն յիշատակներից վերագոյն և հնագոյն և տօնելի յիշատակ այս օրուանս էր՝ Հ. Ա. Յ. Կ. Ը, մեր ազգի նախահայրը, և նորանով մեր ազգի ձևանալը, որ մեծ յաղթութեամբ ազատեց Բէլի բռնութիւնից: Այս տօնի սկզբնաւորութիւնը համարւում է 2492 տարի Քրիստոս թուականից առաջ օգոստոսի 11-ին կամ Արրահամից մօտ 500 տարի առաջ, այս տօնը բուն Օր հայկական և Տօն ազգային է: Հայկայ մեծ քաջութեան և անուան համար էր, որ նորա յաջորդները Նաւասարդի օրերուն իրանց ազգի ոյժներկայացնողը կըսէին՝ զօրքերի աշխարհագումար հանդէսներ էին անում, և այն մեծ անձի անունը աւելի անմոռանալի արեցին երկունքի համաստեղութեանց մէջ դրոշմելով, որովհետեւ այն հա-

մաստեղութիւնը որ ուրիշ ազգերը Որիոն են կանչում, մենք անուանում ենք Հայկ, եւ այսպէս անա 46 դար է, որ Հայկայ աստղի բարձրանալու օրերը անխափան յիշեցնում են մեր ազգային և հայկական օրը, որ և մենք՝ ինչ միճակի մէջ որ լինենք, պէտք է նորա անունը յիշենք, տօնենք և անմոռաց հանդիսացնենք, քանի որ Հայ ազգի անունն ու լեզուն պահում ենք։ Այն տօնն էլ՝ քրիստոնեայ հայերի մէջ անմահացնելու համար, մեր հայր Լուսաւորիչը այս օրը նուիրեց Ս. Վարապետ Յովհաննուն, որ մեր աշուղներին յայտնի մուրազատու Մշու սուլթանի տօնն է։

Նաւասարդից երկու շաբաթ յետոյ հայերը մէկ աշխարհախումբ տօն էլ ունէին՝ Հայաստանի ամենից սիրելի և ամենից մեծ խնամակալ պահապանի անունը յարգելու համար, որ է Անահիտ դիցունին, որին հայերը շատ պատւում և պաշտում էին և ոսկի արձաններ էին կանգնեցնում։ Մեր Տրդատ Թագաւորի թղթից իմանում ենք, որ այդ Անահիտն է մեր ազգի փառքն ու կեցողիչը, որին ամենայն թագաւորները պատւում էին. նա է մայր ամենայն զգաստութեանց, բարերար ամենայն մարդկան բնութեան, նորանով կայ և կենդանութիւն է կրում հայոց երկիրը, հայերի խնամակալն է։ Ս. Դրիգոր Լուսաւորիչը Անահիտին իջեցրեց Հայոց տիկնութիւնից և տեղը բարձրացրեց Ս. կոյս Աստուածածին։

Այս բոլոր եկեղեցական տօները այժմ շարժական տօներ են, ուստի և ճշտութեամբ նոյն օրերին չեն կատարւում, բայց և այնպէս յիշեցնում են հին Նաւասարդի տօները։

Ղ. Վ. Ալիշան

160. ՍԱՀԱԿ ԿԱԹՈՒԴՈՍ (Ը. դար)

Վաթսուն տարի էր, որ հազարացիք մտեր և տիրեր էին ի Հայաստան։ Իրաւ, երբեմն բարեբաղու և արդարաւիտ ամիրապետաց և ոստիկանաց և մեր ազգի իշխանաց խոհեմութեամբն՝ հանդիստ և խաղաղութիւն կու գտնէք

աշխարհն, բայց շատ անգամ այլ՝ կամ մերայնոց անզգուշութեամբ և կամ հարկահանաց բռնաբարութեամբ՝ նեղութիւն և վտանգ սրկաս չէր:

Սմբատ Բագրատունի՝ նախարարաց զօրագլուխն, իր ցեղակից իշխանները և ուրիշ ցեղերէ այլ գլխաւորներ գաղտուկ ժողովեց ՚ի Խորհուրդ, թէ ի՞նչ ընեն այսպիսի վտանգաւոր առեւն: Ուրիշ ճար չգտան, բայց եթէ իրենք զիրենք ապրեցնել, չափելով յարեմուտս Յունաց կայսեր երկիրը: Զգուշութեամբ երթալով՝ ելան դէպի ՚ի Մասիս լեռը և բանակեցան յանուանի աւանն Ակոռի, և ահա լրացին որ այլազգիք իմացեր են իրենց միտքը, ու նախճաւանի կողմնակայն 80 10 և աւելի հոգւով հտնենուն ընկած՝ եռչ մեխեցան ՚ի հետոյ նոցա. քանզի... կամէին կենդանւոյն կլանել գնոսա: Մերոնք փութացան փրթան յեռէն վար, անցան Երասխ գետը, և Վարդանակերտ ըսուած աւանի մը մէջ բանակեցան, որ կարծեմ Սորվիրապի մօտերն էր. այլազգիք այլ նորէն հտնենուն ընկան: Հայք մէկ կողմանէ բանակին ամրացրնելով և զիշերապահներ դնելով, միւս կողմանէ պատգամ զրկեցին առ արաբացիս և խմացուցին, որ իրենց մտածութիւնն ուրիշ բան չէր, բայց միայն գլուխին ապրեցնել փախստեամբ և օտարութեամբ, իրենց տեղն ու ստացուածքը՝ թողլով անոնց ձեռքը, ուրեմն թող տան՝ որ մնաս բարձր ըսեն, հեռանան իրենց հայրենիքէն,—եւ ոչ այս ցաւալի հրաժարական ողջոյնը տալու ներեցին բռնաւորքն, այլ յարձակեցան հայոց վրայ, որք և ոչ 2000 հոգի էին. սակայն ազօթքով և վերջին ջանքով ու քաջութեամբ միաբանեալ՝ դէմ ելան իրենցմէ չորս և հինգ հեղ բազմաթիւ բանակին այլազգեաց: Ասոնք կէս մը զիշերուան ցրտէն փատցած, (վասն զի ձմեռն էր և ձեան վրայ անցուցեր էին զիշերը), կէս մը ցուրտ հովէն ծեծուած, և այլ աւելի՝ յուսահատեալ քաջաց հարուածներէն, բոլորովին շփոթեցան, քշուեցան, ջարդուեցան, փախչողներն այլ թափեցան Երասխայ վրայ՝ անդին անցնելու. զետն որ սառեր էր՝ անոնց փախստական ոտից դոփմանէն պատռտելով՝ ներքեւ առաւ, և կլկեց, ծածկեց: Եւ

այն անարկու սպառազէն բիւրաշափ բանակէն՝ հազիւ 300 հոգիք կրցան փախչել. զորոնք դարձեալ պիտի ջարդէին հայք, եթէ չապրեցընէր մեր նախարարաց մէկուն տիւրկինն Շուշան, որ և քրիստոնէաբար զըթով՝ անոց վերքերն այլ պատելով, զգետտ և գրատտ տալով՝ դարձուց խաւրեց առ ամիրապետն արաբացւոց՝ Աբդլմէլիք. և ընդունեցաւ անկէց շատ ընծայ և պատիւ ի փոխարէն մարդասիրութեան: Ետդթական գունդն հայոց՝ թշնամեաց աւարներն առին, համարձակ իրենց ճամբան գնացին, մօտն յամուր տեղից մեր Տայոց աշխարհին, որ այն ատեն յունաց իշխանութեան տակ էր, և կայսրէն այլ պատիւ կըտան: — Այս է Վարդանակերտի կռիւն, անուանի մեր պատմութեան մէջ այս ժամանակիս, և ամօթալի յարաբացւոց պատմութեան, որոյ անուանն և տարին անգամ չէին ուզեր յիշեր:

Այս կռուէն սիրտ առած ուրիշ հայ իշխանք այլ ի Վասպուրական՝ զիրենք նեղացընող այլազգեաց գունդերը ջարդեցին: Բայց եթէ ասով՝ իրենց վտանգը քիչ մը հեռացուցին. աւելի այլ ծանրացուցին. Վասն զի ամիրապետն Աբդլմէլիք իր կուսակալաց փախստական. զօրքերը տեսնելով և լսելով եղածը, պատուէր ըրաւ Մանմէդ ոստիկանին, որ երթայ խստիւ պատժէ զՀայս: Մանմէտ առաջինէն աւելի պատրաստութեամբ և սրտամտութեամբ ելաւ զալու, զՀայաստան սրով և հրովը մաշելու. Հիմայ մերոնց՝ ոչ միայն անոր դէմ կենալու ճար չկար, այլ զըրեթէ և ոչ փախչելու: Մէկ հատիկ և յետին հնարք գտաւ Հայաստան՝ որ սրբակեաց և ալէզարդ հայրապետը (Սահակ), փութացնել ընդ առաջ ահաւոր զօրավարին. որ եթէ հրնար է, իր վարուց, հասակին և աստիճանին շնորհօք՝ անոր զէնքերը և ձեռքը կապէ: Սրբակենցաղ հայրապետն՝ որ արդէն վշտահար տառապեալ կեանքը կնքելու մօտ էր, յանձն առաւ այդ դժուար պատգամաւորութիւնը, իբրև յետին և ծանր հայրական պարտ: Ելաւ իր ընդիւ երկրէն և աթոռէն, վերջին ողջոյնները և օրհնութիւնները տալով, թէ հասարակաց որդւոցը, և թէ ամենուն ղեռ Մանմէտ

մեր սահմանաց չհասած՝ ինքն մտաւ յԱսորիս, և հասաւ Ժինչե ի Սառան քաղաք. այլ չկրցաւ յառաջ շարժիլ. յօգ-
հուծիւն, ծերութիւն և սրտցաւութիւն՝ վերջին հիւան-
դութիւնը բերին, թեւերը թուլացուց, ոտքերը կապեց մա-
հը, մահ՝ որ միայն չկրցաւ սիրտը պաղեցնել, ինչուսն
անոր յետին շարժը: Մահն հոս շուտ երեցաւ, բայց ուշ
հասաւ, վասն զի մեռնողն ցրուեց անոր անյաղթելի կար-
ձեցեալ հնարքը. ճարտասան լեզուին և եռանդուն սրտին
թարգման թողուց ձեռացը մէջ կնքած թուղթ մը՝ առ ոս-
տիկան Մահմէտ, պատուիրելով որ իմացընեն անոր իր
փափաղը:

Գնացին աղաչաւորքն առ ոստիկանն, որ և շուտով
հասաւ ի Սառան. բերին տուին իրեն թուղթը՝ յորում
գրեր էր հայրապետն սքանչելի իմաստութեամբ և ծան-
րութեամբ մը, խնդրելով որ խնայէ հայոց, ներէ անոնց
ըրածին, չգիպչի անոնց հաւատքին. այլ ինչպէս առաջին
ամիրապետը թողեր էին՝ ինքն այլ թողու. միայն հարկը
առնու և սահէ զաշխարհը: Եւ եթէ այսպէս ընես, դէ՛ր,
Աստուած քու կամբդ կատարէ և կու յաջողիո, ապա թէ
չես լսեր ինձի՝ ոչ իմ օրհնութիւնս և ոչ Աստուծոյ կու-
գայ վրադ. այլ միտքդ դրածիդ հակառակն՝ կու պատահի,
և ամեն կողմէն վրադ չարիք կու թափին:—Զարմացաւ,
զարհուրեցաւ անեղ զօրավարն. և լսելով որ դեռ թագած
չեն սրբոյն մարմինը, եկաւ անձամբ, և տեսնելով այն
հանդարտեալ հանգուցեալ կերպարանաց վրայ սաստուածա-
խօս պատգամ մը, խոնարհեցաւ պատկառանօք, երկու ե-
րեք անգամ *մէլալ-ալէք* ըսաւ, որուն՝ կըսեն ոմանք, թէ
մեռեալ մարմինն այլ, պատասխան տուաւ խաղաղութեան
ողջունի: Մահմէդ հայրապետին աջը ընելով և վկայ կո-
չելով զԱստուած, իբրեւ կենդանի մարգարէի հետ խօսե-
ցաւ և ըսաւ. Քու թղթէդ ճանչցայ քու իմաստութիւնդ,
հով մարդ Աստուծոյ, դու իմ սուրս կապեցիր, և քու ժո-
ղովուրդդ ապրեցուցիր, եթէ ուզածէդ բան մը չկատա-
րեմ՝ ըսած անէծքներդ գան վրաս, ապա թէ կատարեմ՝
ինչպէս որ խօսք կու տամ. օրհնութիւնդ վրաս ըլլայ:

Գազանացեալ զետոյ պէս վազող զօրավարն՝ դադարեցուց զօրքերը, հայոց դալկահար պատգամաւորները՝ անկարծելի կենաց յուսով նորոգեց, ոչ միայն բանիւ այլ և գրով ազատութեան հրովարտակ կնքելու և տալով, որ առաջին Լիլի ամիրապետին տուածէն ետե գլխաւոր ազատագիրն եղաւ հայոց, և կոչուեցաւ երկրորդ կամ փոքր մանչուր: Այս հրովարտակը՝ սուրբ խաչավառից և դրօշուց հետ պարզած՝ տարին հայրապետին մարմնոյն հետ՝ իրեն հաւատարիմքն և Հայաստան նոր հոգի առած՝ իր մահուչափ սիրող և սիրելի հայրապետը հանգոյց յանմահութիւն...

Հ. Ղեւոնդ Աւիշան

Յազկերտ պարսից թագաւորը պահանջում էր, որ հայերը քրիստոնէութիւնն ուրանան և կրակապաշտ դառնան: Հայերն ընդդիմացան և 451-ին Վարդան Մամիկոնեանի առաջնորդութեամբ դուրս եկան պատերազմի, Աւարայր դաշտում, Տղմուտ գետի ափին: Վարդանը նահատակուեց: Այս պատմութիւնը մեզ աւանդել է ականատես բանաստեղծ և պատմիչ Ներսէս Մանուկը: Նա առթիւ է գրել իր Պղպուլը, նրա կարծիքով Վարդանը նահատակուելով դարձաւ Վարդ. իսկ Ներսէս դարձաւ Բլբլու, որ նստելով վարդի վրայ շարունակ երգէ ու ողբայ նրա կեանքն ու գործերը:

161. ՊԼՊՈՒԼՆ ԱՒԱՐԱՅՐԻ

Ո՞նց գաս իմ լուսնակ, հեզիկ ու հանդարտ
Համասփիւռ լուսովդ ի լեռ, ձոր և արտ,
Եւ ի նահապետս, որ մտօք մօլար,
Գիշերաժամիկ ժուռ գամ յԱւարայր,
Ուր քաջ ու աննրման իմ հարք Հայկազունք
Ընկան գէտ հըսկայ, ելան գէտ զուարթունք:
Միթէ գաս սփռել ոսկերաց սըրբոց
Ձիւնափայլ ամպէդ ոսկեթել ծածկոց,
Թէ՞ ճերմակ ճակտիդ՝ թէպէտ և պայծառ
Քաջացս արենէն ուղես կարմիր վառ.
Թէ՞ լըռիկ մընջիկ ափշիս տակաւին

Թէ ինչպէս ընկաւ Վարդանն ահագին,
Մահու սև ըստուերն ի սիրտ թըշնամեաց,
Զհոգին ձրկելով յերկին առ Աստուած:

Դու ս յլլ հվ Տղճուտ, տրտում ու արիւնուտ,
Որ դաս կամկար լաս ի մէջ շամբերուտ.
Եւ հովիկդ, որ գաս ի Մակուայ քարէն,
Կամ ի ծեր Մասեաց սրբազան սարէն,
Դու այլ ինձ նման դողդող և երբ
Թոյլ թեօք անցնիս սարեր ու ձորեր,
Անտառէ անտառ, տերեւ տերեւ,
Կոծկոծելով դաս ի դաշտիս վերև,
Զայս մաշած շընչիս վերջին հառահանք
Զըզել ի հայոց սրբախց արձագանք:

Ո՛հ, դու բարեկամ այրուած սրբաբու,
Սօսնակ գիշերոյ, հոգեակ վարդերու,
Երգէ, պըլպուլիկդ, երգէ ի սարէդ,
Զանմահ քաջն հայոց երգէ հոգւոյս հետ.
Թաղէի վանուց ձէնիկդ ինձ դիպաւ,
Սըրտիկս՝ որ ի խաչն էր կիս՝ թունդ առաւ,
Ի խաչին թեւն թոյայ ու հասայ,
Դտայ զքեզ ի դաշտ քաջին Վարդանայ:

Պլպուլ, քեզ համար մեր հարբն ասացին,
Թէ չէ հաւ՝ պլպուլ մեր Աւարայրին,
Եղիշեայ հոգեակն է քաղցրազրուցիկ,
Որ զՎարդան ի վարդըն տեսնու կարմրիկ.
Զմեռն յանապատ կու վնայ՝ կայ ի լաց,
յԱրտազ դայ զգարունն ի թուփ վարդենեաց,
Երգել ու կանչել յեղիշէին ձայն,
Թէ պատասխանիկ մ'արդեօք տայ Վարդան:

Ղևտնդ Ալիշան

Դրեցէք սրա բովանդակութիւնն համառօտակիւ: Ո՛ւմ է զի-
մում հեղինակը Վարդանի մասին տեղեկութիւն առնելու. ո՞վ է
սոխակը և ո՞վ Վարդան ըստ բանաստեղծի:

162. ԾԵՐԵՆՅ—ԲԺՇԿ. ՅՈՎՍԷՓ ՇԻՇՄԱՆԵԱՆ 1822—1888

Ծերենցը ծնաւ Պօլիս, 1822-ին. Ալիշանի հետ ուղևո-
րուեց Վենետիկ և դաստիարակուեց Մխիթարեանների:

մօտ, ապա ուսում և աւարտեց Պարիզի համալսարանի բուժական բաժինը:

Վերադառնալով հայրենիք, նա ցոյց տուաւ եռանդուն գործունէութիւն որպէս բժիշկ, ճառախօս, և հրապարակագիր: Կրթուած հայ կաթօլիկներն այդ ժամանակ ցանկացան վերջ տալ այն ատելութեանը, որ կար լուսաւորչական և կաթօլիկ հայերի մէջ, միացեալ ընկերութիւն կազմեցին «Համադգեայ» անունով:—այդ միութեանը խիստ հակառակ էր կաթօլիկների պատրիարք Հասունը, որի հակառակորդները կոչուեցան Հակ-Հասունեան. դրանց մէջ նշանաւոր գեր էր խաղում Ծերենցը, որ մի խումբ կրթուած հայ կաթօլիկների հետ անցաւ մայրենի եկեղեցու զիրկը: 60-ական թւերին նա հիմնում է մի ընկերութիւն, որի նպատակն էր հողագործական դպրոցներ բանալ Հայաստանում և այդ նպատակով ուղևորւում է Կիլիկիա, այնտեղ այդպիսի դպրոց բանալու: Ծառայում է Կիպրոսում որպէս պետական բժիշկ, իսկ Եօթնասնական թուերին գալիս է Թիփլիզ, ուր Ներսիսեան դպրոցում աւանդում է հայոց պատմութիւն, Ռուս-թուրքական պատերազմից յետոյ, երբ սովը ու քուրդերը մեծ աւերումներ էին գործել, Շիշմանեանը Թիփլիզից ուղևորւում է Հայաստան թշուառ հայերին բուժական և նւթական օգնութիւն հասցնելու:

Կիլիկիա և Կիպրոս ճամբարդելով, նա հիմնովին ծանօթացաւ տեղի աշխարհադրութեանը, որ անհրաժեշտ էր նրա անդրանիկ վիպասանութեան «Թորոս-Լեոնիի» համար: Այդտեղ նա ցոյց է տալիս հայերի հետզհետէ կենդրոնանալը ի Կիլիկիա և Ռուբինեան թագաւորութեան հաստատուիլը: Ծերենցը շատ ուշ սկսեց վէպեր գրել, բայց հետեւալ վէպերը. «Թէոգորոս Ռշտունի» և «Երկունք Թ. զարու» ցոյց տուին, որ նա մի տաղանդաւոր վիպասան է և գիտէ անցեալի գէպերն ու տիպերը զարմանալի կերպով կենդանացնել:

Նրա վէպերի մէջ տիրող հիմնական գաղափարն է ազգասիրութիւնն եւ ժողովրդասիրութիւն — ժողովրդի միջից դուրս եկած հերոսներն են, որ ստեղծում և առաջնոր-

դուժ են պատմական գէպերին ազգային ոգով, ընդդէմ իշխանների, որոնք անհատական նեղ շահերից աւելի բան չէին հասկանում: Պատմական յայտնի գէպերի տակ նա արժարժում և քարոզում էր իր սեփական համոզումները մի շնորհալի ֆանտազիայով և աշխոյժ ոճով:

Նա մեռաւ Թիֆլիզ 1888 ին և թաղուեց Խոջի-Վանքի գերեզմանատանը:

163. ՅՈՒՆԱՆԻ ՏԵՍԻԼՔԸ¹⁾

Յոյնանը իր Սասունցի լեռնցիների հետ ցած էր ի-ջել Մշու գաղտը և ոչնչացրել արաբական բանակը, ազատելով Մուշ քաղաքը և Ս. Կարապետի վանքը: Վանքի միաբանները ուրախացած թշնամու կորուստի վրայ, պատքասուում են գոհաբանական աղօթքի, Յոյնան եկեղեցւոյ դուռը կանգնած և սկսած էր սաղմոսերգութեան՝ երբ յանկարծ զգաց, որ ձեռք մը իր ուսին վրայ յեցաւ: Երբ գլուխը դարձուց տեսաւ երկայնահասակ չոր ծեր մը, ուրուն ձիւնի պէս ճերմակ մօրուքը մինչև գոտին՝ լայն մոխրագոյն բուրդ վերարկու մը մինչև ոտքերը կիջնէր, թխամորթ էր իր խորշումեալ երեսին գոյնը, իր սև և մեծ աչքերը փայլ և հրապուրիչ քաղցրութիւն ունէին, միանգամայն, առանց խօսք մը արտասանելու ձեռքէն՝ բռնեց, առաւ դուրս հանեց, և երբ լուսնին ազօտ լուսով երկու հոգի միայն գտնուեցան. «Եկ, Յոյնան, իմ ետեւս, ըսաւ, եթէ կուզես որ ապագային վարագոյրը պատուի և ցոյց տայ քեզի հանդերձեալը՝ գաղտնիք Սասուածային, եկ, մի վախեր»:

— Ե՞րբ վախեր եմ ես, որ հիմա պիտի վախեմ, ըսաւ Յոյնան, զինուոր սասուեցի մօ երբէք չէ վախցեր:

¹⁾ Կարդա այս դրբում Սասունցի Դաւթի առաջաբանը: Քե-ռի կամ Ձէնով Օհանը նոյն այս Խուլթեցի Յովհանն է, որ Սասունցիների հետ ցած գալով լեռներից, կոտորեց արաբաց զօրքը և Մսլամիլիքին:

—Բայց դու խառնուրդ ես զինուորի և քահանայի, դու խառնուրդ ես հաւատոյ և թերահաւատութեան, դու խառնուրդ ես քաջութեան և եթէ ոչ երկիւղի՝ գոնէ կասկածանաց:

—Ես հաստատ եմ իմ հաւատքիս վրայ՝ ես զինուոր եմ...

—Ինձ զբեզ մի ճանչցներ. դու տղայ էիր, զբեզ տեսայ, հեռացար դու սա լեռներէն, իմ աչքերս քեզի հետ էին և զբեզ կը տեսնէին և քու ամեն գաղտնիքդ կը նշմարէին. ուստի քալէ երթանք, չէս ուզեր դու իմանալ ապագան, միթէ դրա համար չէր, որ կաղօթէիր, միթէ երկիւղը, որ մի գուցէ Հայաստան երկրի թշուառութեան պատճառ եղաւ այդ հրոսակին կոտորածովը՝ միթէ այդ չէ, որ զբեզ կը տանջէ:

Ծերուն ցուրտ երկաթեայ ձեռքը կը սառեցնէր Յովնանու ձեռքը և իրենք կը քայլէին ձիւնին վրայ, որ կը մռնչէր իրենց ոտքերուն տակ, և անխօս կը շարունակէին իրենց ընթացքը, Կը բարձրանային՝ կիջնէին և դարձեալ կենէին, սառած առուակներ և գետակներ կանցնէին. անցան նաև մեծ գետ մը, որու սառոյցին ընդարձակութիւնը իմացուց Խութեցւոյն թէ Արածանին էր, որ կանցնէին և դեռ իրենք կերթային լուսնին ազօտ լուսով մինչև Բլուրներու, Ժայռերու, կիրճերու, գահավէժներու և փապարներու մէջ, դարձեալ այս ուղեգնացութեան ծրագիրը կորսնցուց Յովնան, մինչև քարայրի մը մուտք ներկայացաւ իրենց և ծերը առանց իր ընթացից արագութիւնը թողլով՝ մտաւ մութուն մէջ, ուր խաւարը շօշափելի եղաւ և էլ աւելի ամուր սղմելով իր ընկերին ձեռքը կը քաշէր կը տանէր խորէ ի խոր, վասն զի շարունակ կիջնէին. Յովնան առանց երկիւղ զգալու կը խորհրդածէր ինքնիրեն. «Չորս Ժամ է և աւելի, որ մենք այդ ծերուն հետ կարշաւենք և դեռ նա յոգնութեան փոքրիկ նշան մը չի ցոյց տալ, իր ձեռքը, որ կը դողայ և ոչ կը տաքանայ, սառ լինէր իմ ձեռացս տաքութեամբ կը հալէր, իսկ ինք իմ ձեռքս կը սառեցնէ»:

— Յոգնան, ծով է այնպէս հետեւէ ինձ, ըսաւ ծերը, մի շտկուիր մինչև որ քեզ իմաց չի տամ:

Եւ այնպէս մի փոքրիկ ժամանակ երթալէն վերջ, ծերուն յորդորով շտկուեցան և Յոգնան զգաց, որ աւելի համարձակ շունչ կառնուր՝ թէպէտ միշտ գետնափորներու մէջ էին և ոչ նշոյլ կար ոչ բնական և ոչ արհեստական լուսոյ, Բայց վերջապէս հասան այնպիսի տեղ մը, ուր հեռու նշոյլ մը սկսաւ երևալ և մտան ընդարձակ լուսու-
ւորուած սրահ մը, ուր ոսկեծոյլ աշտանակներու վրայ մեղրամոմներ և բազմաթիւ արծաթի կանթեղներ իրենց լոյսը կը ցոլացնէին, և հրաշալի արձան մը կանգնած էր պղնձէ պատուանդանի մը վրայ. այն համբաւաւոր ոսկի-
ածին և ոսկրամօր Անահտայ արձանն էր նա՛ պաշտպանի հին հայրենեաց, և իր աջ կողմը Վահագնի և ձախը Աստղ-
կան արձաններ կանգուն էին, աս երեք արձաններուն պատուանդաններուն յեցեալ. եռոտանի մը կար դարձեալ ոսկեծոյլ. չէր կարելի իմանայ թէ այս տաճարը՝ վասն զի իրօք տաճար մ'էր սա իր գմբէթովը, որու չորս կողմը դեռ ուրիշ փոքր գմբէթներ կային, գետնին տակն է՛ր թէ գետ-
նէն դուրս բարձրացած. վասն զի պատերը բոլոր արձան-
ներով և քանդակներով էին զարդարած և վրայի գմբէ-
թէն կախ էր ահագին ապակեայ ճրագարան մը, ո՛ր զիտէ
ո՛ւստի և ո՛ր հեռաւոր երկրէ բերուած այդ տեղ այդ ան-
դնդախոյս աստուածութեանց պաշտօնը և նսեմացեալ խա-
ւարը շքաւորելու համար:

Այս տեսարանը յանկարծ այնչափս զարմացուց և շա-
ցուց զՅոգնան, որ և ոչ զգաց թէ ինչպէս և երբ հեռա-
ցաւ իրմէ իր ծեր առաջնորդը, ուստի սկսաւ նայիլ և զնն-
նել այդ հին յիշատակաց և արուեստներու հրաշալիքը, ու-
րոնց նմանութիւնը կրմտածէր թէ ո՛ւր տեսած էր ինք, ի
Կոստանդնուպօլիս թէ 'ի Բաղդատ:

Եւ երբ այս մտածութեան վրայ էր, յանկարծ իր ու-
շադրութիւնը շարժեցաւ վասն զի երգելու ձայներ սկսան
լսուիլ և տաճարը լցուեցաւ Արարիոյ և Հնդկաց անուշա-
հոտ խնկերով և եռոտանին իրրև թէ խնկաման կամբուր-

մառ մը լինէր՝ դուրս կը փչէր գմայլեցուցիչ մուխ մը, որ զարմանալի ազդեցութեամբ այդ մարդուն երկըթէ շիղերը փակուող ոսկւոյ սկսաւ դարձնել: Դուռ կը փնտրէր Յովնան, և ահա չէր կարող նշմարել նաև այն դուռը, ուսկից ինք ներս մտեր էր, և իր սուր աչքերը շփոթեցան, վասն զի մուտքը կարող չէր նշմարել, և իրօք կը տեսնէր թէ բանտի մը մէջ էր՝ բայց փառաւոր բանտի մէջ:

Հազիւ թէ այս խորհրդածութիւնը մտքէն անցաւ և ահա Վահագնի և Աստղիկան պզնծէ պատուանդաններուն անյայտ դռները բացուեցան և երգեցիկ քրմաց և քրմունեաց բազմութիւն մը զոյգ զոյգ սկսան զուրս ելնել և արձաններուն առջև շարուիլ: Իրենց հարուստ և ճոխ ոսկեթել և նկարէն զգեստները, հաճոյական էին աչաց, և երբ Յովնան անոնց մանրամասն դիտողութեան զբաղած էր՝ ահա Անահտայ պատուանդանին դռնէն դուրս ելան մեծ քրմապետը և մեծ քրմունին և երգերը լոցին: Մեր լոռնցին քրմապետը մէկէն ճանչեց, թէ պէտ զգեստներուն պերճութենէն փոխուած՝ բայց նոյն ծերն էր, որ զինքն հոն բերել էր. իսկ քրմունին երիտասարդ և շատ գեղեցիկ կին մը էր, որ երբ եռոտանւոյն առջև կանգնեցաւ, թալուկ եկաւ երեսին: Նոյն վայրկենին երգերն լոցին, և զգեայ սրինգներ սկսան փափուկ և տխուր երաժշտութիւն մը հնչեցնել, որ մտիկ ընողին հեշտալի եթէ չէր գալ, վայրկենէ մը վերջը շատ ազդու և սրտաճմլիկ բերկրութիւն մը կը բերէր անձին: Քրմապետը այն ատեն ձեռք տուաւ և հրաւիրեց քրմունին, որ անցնի նստի ոսկի եռոտանւոյն վրայ, և ինք շրջապատեալ իր խումբէն՝ կանգնեցաւ իր աստուածութեանց առաջ թևերը տարածելով և անձայն աղօթելով, հազիւ թէ շրթունքը կը շարժէին: Եւ ահա քանի մը ըտպէ չեղած ամեն աչք որ եռոտանւոյն պշուցեալ էին՝ կը տեսնէին փոքրիկ շղային ցնցմունքներ մեծ քրմունւոյն վրայ, անոնց յաջորդեց լիճակ մը՝ որ իբրև թէ մարմարէ արձան յեղափոխեց այդ եռոտանւոյն վրայ նստողը, մինչև որ աչքերը սկսան բացուիլ անսովոր և սեւեռնայուացքով. ան ատեն քրմապետին բերին դիրք մը, որուն թերթերը

արծաթեայ բարակ տախտակներ էին և նա բացաւ էջ մը ուր ոչինչ չի կար գրուած և ներկայեց քրմուհւոյն. «Կարդա՛, ներշնչեալդ յՍտուածոց» ըսաւ հզօր ձայնով. երաժշտութիւնն դադրեց, և այնպիսի լուսթիւն մը տիրեց և ամեն շունչ այնպէս կեցաւ, որ մէկ բան մը միայն կը լսուէր՝ քրմուհւոյն շնչառութիւնը. և ամեն աչք իրեն կը նայէր:

Եւ քրմուհւոյն հեկեկանաց ձայնը այսպէս խօսեցաւ. «Քիչ են, Հայաստան, քու չարչարանքդ, քիչ են քու տանջանքներդ, դեռ կանգուն են քու քաղաքներդ, դեռ կանգուն են քու տաճարներդ, դեռ հարսի և փեսայի ձայները կը լսուի ի քեզ, դեռ տղայն օրրանին մէջ կը ճուայ, դեռ հուրը վառարանին մէջ կը ճարճատէ, դեռ մուխը երգեաց վրայէն կը բարձրանայ: Դեռ քու որդիքդ բարձրավիզ կը քայլեն, դեռ երկաթը իրենց ձեռքին և իրենց մէջքին վրայ կը փայլի, դեռ սաղավարտը իրենց գլխին վրայ կը ճաճանչէ. դեռ քու աղջիկներդ ծիրանիներով կը զարդարուին, դեռ նոցա վզին վրայ ոսկի մանեակ և թևերնին ապարանջաններ կը նշուկեն. բայց այդ ամենուն վերջն է՝ քու քաղաքներդ պիտի անմարդանան, քու շէներդ անշէն պիտի մնան, քու տաճարներդ կիսակործան, քու տուններդ անկենդան, ուրախութեան և հարսանեաց ձայներուդ՝ ողբերու և լալերու ձայներ պիտի յաջորդեն, քու գէնքերուդ շկամանց՝ շղթայներու ձայներ, քու մանեակներուդ և ապարանջաններու, հնչմանց՝ գիտութեան խարազաններու ճարճատմունք. այո, քու կտրիճներդ գերի իրենց երկրին մէջ՝ գերի օտարութեան մէջ, քու աղջիկներդ աղախին իրենց հայրենի տան՝ և դռան պանդխտութեան մէջ: Երբ արևելք երևող դարձնես՝ թշնամի պիտի գտնես, երբ արևմուտ դառնաս՝ թշնամի պիտի տեսնես, օգնութիւն պիտի խնդրես՝ նախատինք՝ արհամարհանք պիտի գտնես, երկինք աչքերդ պիտի դարձնես՝ նա կայծակ և կարկուտ քեզի պիտի տեղայ, քու զաւակներդ նաև շատ անգամ եղբայրասպան իրենց մօտ սիրտը պիտի վիրաւորեն»:

Ձեռքերը ծալած փայտ կտրեր մնացել էր Յովնան, կը նայէր այդ կնկան երեսին դոյնին, կը նայէր աչքերուն

մարմրուկին և վերջը արցունքներուն, կը լսէր այդ անսովոր ձայնը՝ կը խորհրդածէր ինքնիրեն և կըսէր: «Այդ կինը եթէ գերասան էլ է, շատ լաւ կը խաղայ իր դերը, ես յոյն թատերականաց մէջ նաև այդպիսի մը չեմ տեսած. եթէ ըսածները ճշմարիտ են, վայ է մեզի, վայ մեր հայ ազգին. ի՞նչ ապացոյց կրնայ տալ իր դուշակութեանց այդ անսովոր մարգարէունին»: Այս միջոցին քրմունին զլուխը կուրծքին վրայ իրրև թէ խոր քուն էր, սրինգներն իրենց տխուր երաժշտութիւնը դարձեալ կը շարունակէին, երբ յանկարծ ցնցուեցաւ նա և եռոտանին սարսեցաւ, աչքերը բացուեցան լի տխուր սրտմտութեամբ և ցուցամասը կարկառ գէպ Յովնան. Ո՛վ դու, դռնեց, պէտք է աշխատիս, պէտք է ցոյց տաս՝ օրինակ լինիս հայ թշուառ աշխարհի թէ ժողովուրդը ողորմելի արհամարհելի էակ մի չէ, թէ իր արիւնը ունի այն ամեն առաքինութիւն, որով կրպարծին նորա, որ իրենց հարց անուան վրայ կը գոռոգնան և շատ անգամ զուրկ են նոցա առաքինութենէն... գնա, ասպարէզն ընդարձակ է, գալիք պատուհասը սոսկալի է, զօրացիր վասն զի հեռի չէ օրը, որ վահանները պիտի ջախջախին՝ նիգակները կոտորին՝ սուրբըր փշրին, գնա, ժողովրդեան զինուոր, երկնային զօրութիւնք քեզի օգնական թող լինին»:

Եւ ահա բուրմանց ամպ մը պատեց դարձեալ եռոտանին, լոյսերը ամենքը մէկէն խաւարեցան և Յովնան բեկեալ՝ խորտակեալ և վերջի խօսքերէն սակաւ ինչ կենդանացեալ, թանձրամած խաւարին մէջ կը խարխափէր՝ երբ օգնական ձեռք մը զգաց թէ իր ձեռքէն բռնեց:

— Եկ Յովնան, հետեւէ ինձ, ըսաւ ծանօթ ձայնը:

Եւ սկսան քայլել այդ մթութեան մէջ և մի և նոյն կերպով ինչպէս առաջ մտեր էին: Ծեր քրմապետն էր, որ կառաջնորդէր, մինչև վերջապէս հասան այն քարայրին բերանը՝ լուսնի լուսոյն տեղ արևու լոյսը ամեն բան կը լուսաւորէր:

— Գնա, որդեակ Յովնան, երկնային զօրութիւնք քեզի օգնական լինին, ըսաւ ծերը, և քարայրին մթութեան

մէջ թաղուեցաւ: Իսկ Յովնան քիչ մը տեղ անզգայ քայ-
 քելէն վերջ, արթնացաւ և ճանչեց թէ Աշտիշատի աւերակ-
 ներէն էր շրջապատեալ: Ան ատեն իմացաւ թէ հայկական
 հին կրօնքը 550 տարի վերջը, անհետ եղած երկրի վրա-
 յէն, դեռ գետնի տակ կապրէր յանձանօթս:

«ԵՐԿՈՒՆՔ» — ԺԵՐԵՆՆԵ

Ինչպէս է ներկայացնում հեղինակը հայոց հեթանոսական
 կրօնը. իրական է դա, թէ երևակայական. Ինչ ստույգ բան գիտենք
 հայոց հեթանոսական կրօնից և սվքեր էին հայոց զխաւոր Աս-
 տուածները. Արամաղդ, Անահիտ, Վահագն և Աստղիկ:

164. ԿԻՂԻԿԻՈՅ ՎԻՃԱԿԸ ԺԱ. ԴԱՐՈՒՄ

Արտաքոյ կարգի վիճակ մ' էր այն ատեն Կիլիկիոյ վի-
 ճակը. հայ ժողովուրդ մը Տորոսի լեռներուն մէջ օր ա-
 ռուր կաւեինար, վասն զի Հայաստան և Փոքր-Ասիա տյալի-
 քօնք տիրանալով, անտանելի կրնէին հայրենական, անձ-
 նական և կրօնական ազատութիւնը. հալածանք և դերու-
 թիւն իր և ամենքին բաժինն էր:

Ժողովուրդը, ինչպէս ասիական ամեն ժողովուրդը,
 երբէք չէր երևակայած այնպիսի ազատ կառավարութիւն,
 ինչպիսի ունեցած էին յոյնը և հռովմայեցիք իրենց պատ-
 մութեան մէկ ժամանակին, զոր հանրապետութիւն անուա-
 նած էին: Մեր եկեղեցական հայրապետք հաղիւ թէ
 քրիստոնէական կրօնից գրքեր ու գաղափարներ թարգմա-
 նելու և տարածելու ժամանակ ունեցեր էին, իսկ ազգա-
 յին պատմութեան մշուշ համառօտութիւնը այնչափ տկար
 էր ժողովրդեան մտքին մէջ, որ հայ զօրավարներ իրենց
 զօրաց քաջալերութեան օրինակի համար, հրէից պատմու-
 թեան գլխելու պարտաւորած էին: Ուստի Տորոսի վրայ
 ժողովուած հայուն բաղմութիւնը, ինչպէս ժամանակակից
 օտարազգիք ալ կը վկայեն, երկու կատարելութիւն ունէր.
 պատերազմական քաջութիւն, քրիստոնէական հաւատք.
 ամեն մարդ զինուոր և ամեն մարդ իր հայրենի կրօնին

գերին էր, Իրեն համար ազգային զրօշակ խաչն էր և իբրոյր աստուածաբանութիւնը Լուսաւորչայ կրօնքն անփոփոխ պահպանէին... Ուստի հալածանք Սելճուկեանց, հալածանք Ամիրապետաց և անթիւ մահմեդական Ամիրայից, հալածանք Բիւզանդական կայսերաց, հալածանք նաև ի Վրաց՝ զինք քշել բերեր էին Տորոսի բարձունքը և հոն կը լեցուէր, կը դիզուէր ամպի պէս ժողովուրդը, որ կարելի չէր թէ քիչ-քիչ իբրև վտակ՝ վերջը իբրև գետ և էն վերջին իբրև հեղեղ չիջնէր և դաշտը չողոյէր:

Բայց ժողովուրդը միշտ առաջնորդի պէտք ունէր, ինչպէս ամեն ժողովուրդը ունեցեր են և պիտի ունենան» Հայ ժողովուրդը միշտ կը նկատէր երկու տեսակ մարդիկ, իր կրօնական գլուխները, որ զինք միշտ կը յորդորէին Պօղոսի հետ՝ «հազարնդ լինել մարմնաւոր տէրանց» և նախարարական հին սերնդոց պայագատքը, որ իբրև թէ փառաց ճաճանչ մը գլխուն վրայ կը կրէին, յարգանք, պատիւ և իշխանութիւն աննախանձ և անուրանալի սեփականութիւն անձանց համարելով:

Ամեն ամբողջ, բերդ կամ գղեակ իշխանի մը ստացուածքն էր, որ միշտ Արծրունի, Բազրատունի, Կամսարական, Սիւնի, Պահլաւունի, Մամիկոնեան և ուրիշ ասոնց նման սերնդոց կը վերաբերէին, որը սղնուականաց ընական առաքինութեամբ և թերութեամբ առաջ կամ ետ կ'երթային, յօգուտ կամ ի փրատ անձանց և հայութեան: Ժողովուրդը միշտ իր սրտի ձայնին և մտքին համոզման հետեւելով, այս իշանաց և բերդակալաց մէջ զանոնք կը վերադասէր, իւր առաւել ինքնիշխանութեան և հայրենի հնաւանդ կրօնից և սովորութեանց պաշտպան էին և հետեւապէս նաև իրենց ազգին: Ասկից նաև Ռուբինեանց ժողովրդականութիւնը, որոնք հայութեան բուն ներկայիչքն էին իր աչքին, մինչ իբրև օտարածին կարհամարհէր յունացեալքն և լատինացեալք, որք սերաստութեան, տուքութեան և այլ ուրիշ տիտղոսներով Բիւզանդական կայսերէն մեծապատիւ կը վարձատրուէին:

Կային նաև անոնց մէջ այնպիսիներ, որ ոչ միայն ի-

րենց ազգին պաշտպանութիւնը կարհամարհէին, այլ օտարաց հաճոյ լինելու համար իրենց ազգը արհամարհել և անկից օտարեալն ու զանի հարստահարելն իրենց սովորութիւն ըրած էին:

«Թորոս Լեւոնի» - ծերենց

165. ՄԿՐՏԻՉ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ (1828—1868)

Մկրտիչ Պէշիկթաշեանը իր ճառերից մինում հետեւեալն է ասում. «ասիկա է մեծանձն մարդկանց ճակատագիրը. մեծ ըլլալ, բայց դժբաղդ, ճրպի պէս ուրիշները լուսաւորելով իրենք հատնել»: Ու շատ գեղեցիկ սազում են այս խօսքերն հէնց իր անձին, որ մեծ լինելով անբաղդ ապրեց, ուրեմն լուսաւոր կեանքն ամբողջովին նուիրեց հասարակութեանը:

Ծնաւ Պօլիս, 1828-ին, հայ-կաթոլիկ ծնողներից: Մայրն անմիջապէս մեռնում է և Մկրտչին խնամում է խորթ մայրը, (որ հարազատ մօր պէս շարունակում է խնամել ու մեծացնել Մկրտչին նաև հօր մահից յետոյ): Նորան Պէշիկթաշեանն անուանում է «հրեշտակատիպար մայր». 1839 ին Մկրտիչը մտնում է Մուրատ-Ռափայէլեան դըպրոցը Պատուա քաղաքում: Այդտեղ ահա, իտալական երկնի և իտալացի արուեստի ազդեցութեան տակ դաստիարակւում է Մկրտիչի նուրբ ու մեյամաղձիկ ոգին: Վերադառնալով Պօլիս, նա պարապում է մասնաւոր դասերով: Շնորհիւ իր հեղ ու խոհուն բնոյթին, բարեկիրթ ձեերին և ազնիւ զգացումներին, նա ձեռք է բերում մեծ համակրանք ու դիրք ժամանակակից Պօլսի բարձր շրջաններում և բազմաթիւ համակրողներ է գտնում իր անդուգական տաղանդին:

Նա Պօլսում հայ թատրոն հիմնողներից և պահպանողներից մինն էր: Կաթոլիկ և լուսաւորչական հայերի մէջ մի ժամանակ մեծ ատելութիւն կար. այն աստիճան, որ նրանք միմեանց մատնում էին իրրև դաւաճաններ: Մի խումբ կրթուած հայ կաթոլիկներ այդ խտիրը վերացնելու համար սկսան մօտենալ լուսաւորչականներին և կապ մեցին մի ընկերութիւն «Համազգեայ» անունով, որի հիմ-

Նազդիրներից մինն ու հոգին էր Մկրտիչը: Այդ առթիւ է գրուած «Եղբայր եմք մենք» ոտանաւորը:

Հայերէնն այն ժամանակ դեռ յարգի չէր. Պէշիկթաշիեանը թէ ուսուցչութեամբ և թէ իր ընտիր բանաստեղծութիւններով մէկն էր, որ յարգելի դարձուց և տարածեց մայրենի լեզուի սէրն և ուսուցումը Պօլսի բարձր շրջաններում: Նրա աշակերտահիւններից մինը, հայութիւնից օտարացած օրիորդ Վահանեան, Պէշիկթաշիեանի շնորհիւ դարձաւ մեր յայտնի հեղինակուհիներից մինը, Տիւսաբ անունով:

Պէշիկթաշիեանը կանացի սիրտ ունի. մեղմ ու դուրեկան, փափուկ, սահուն, նուրբ և մեղամաղձոտ: Նրա լաւագոյն ոտանաւորները գրաբար են: Նա մեր առաջնակարգ լիրիկ (քնարական) բանաստեղծներից է:

Նա մեռաւ 1868-ին և թաղուեց Պէշիկթաշի գերեզմանատանը, Պօլս:

Կարգն և համեմատիր Ծերենցի կենսագրութեան հետ:

166. ԵՂԲԱՅՐ ԵՄՔ ՄԵՔ

Ի՛ր ըիւր ձայնից ընտելեան շքեղ
Թէ երգք թռչին սիրողաբար,
Մատուցը կուսին ամենազեղ
Թէ որ զարնեն փափուկ քնար,
Ձուռին ձայն մի այնքան սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն:

Տուր ինձ քու ձեռքդ, եղբայր եմք մեք,
Որ մորկաւ էինք զատուած,
Բաղդին ամեն ոխ չարաննդ
Ի մի համոյր ցրուին ի բաց:
Ընդ աստեղօք ինչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն:

Երբ ալևոր Մայր Հայաստան,
Տեանէ գորդիս իւր քովէ քով,
Մըտին խորունկ վէրքըն դաժան

Քաղցր արտասուաց բուժին ցօղով,
Ընդ աստեղօք թնչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն:

Մէկտեղ լացինք մենք ի հնում...
Եկէք դարձեալ յար անբաժան
Պառնենք զարտօսն և զխնդում,
Որ բազմածնունդ ըլլայ մեր ջան:
Ընդ աստեղօք թնչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն:

Մէկտեղ յոգնինք, մէկտեղ ցանենք,
Մէկտեղ թափին մեր քրտինքներ,
Ըզհունձ րարեաց յերկինս հանենք
Որ կեանք աւնուն հայրոց գաշտեր,
Ընդ աստեղօք թնչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն:

Մ. Պէշիկթաշլեան

167. Գ Ա Ր Ո Ի Ն

Ո՛հ, թնչ անուշ և թնչպէս զով
Առաւօտուց փըչես, հովիկ
Ծաղկանց վրայ գուրգուրալով
Եւ մաղերուն կռտին փափկիկ,
Բայց չես հովիկ իմ Հայրենեաց,
Գնա, անցիր սրտէս ի բաց:

Ո՛հ, թնչ ազու և սրտագին
Ծառոց միջէն երգես, թռչնիկ,
Սիրոյ ժամերն ի յանտառին
Ըզմայլեցան ի բո ձայնիկ.
Բայց չես թռչնիկ իմ Հայրենեաց,
Գնա, թըռիւր սրտէս ի բաց:

Ո՛հ, թնչ մըմունջ հանես, վըտակ,
Ականակիտ և հանգարտիկ.
Քու հայելոյդ մէջ անապակ

Նային զիրենք վարդն ու ազջիկ,
Բայց չես վրտակ իմ Հայրենեաց,
Գլնա, հոսէ սրտէս ի բաց:

Թէպէտ թռչնիկն ու հոնն հայոց
Աւերակաց շրջին վերայ,
Թէպէտ պղտոր վրտակն հայոց
Նոճիներձւ. մէջ կը սողայ,
Նոքա հառաչք են Հայրենեաց,
Նոքա չերթան սրտէս ի բաց:

Մ. Պէշիկ/ժաշկեան

Ո՞ւմ է դիմում հեղինակն այս ոտանաւորի մէջ. հովիկին»
Թռչունին և վտակին: Էլ ո՞վ մեր բանաստեղծներից դիմում է
այդ տարրերին:—Ալիշանը: Այս ոտանաւորն համեմատել. «Բըլ-
րուն Աւարայրի»-ի հետ, ցոյց տալ նմանութիւն ու տարբերու-
թիւնը: Ո՞րքան աշակերտը (Պէշիկ/ժաշկեան) ենթարկուած է վար-
ժապետին (Ալիշան): Հետևողութիւն է սա, նմանողութիւն, թէ
մի ինքնուրոյն ստեղծագործութիւն:—Ալիշանի ազդեցութեան տակ
գրած մի ինքնուրոյն ստեղծագործութիւն է սա: Ալիշանը մի է-
պիկ է, մի պատմող: Պէշիկ/ժաշկեանը մի լիրիկ:

168. ՅԱԿՈԲ ՊԱՐՈՆԵԱՆ (1840—1891)

Ծնաւ Ադրիանօպօլիս, ուր և ստացաւ իր կրթութիւ-
նը: Երեք տարի աշակերտել է Ներսէս Վարժապետեանին
(ապա պատրիարք), որի խորհրդով, հայ դպրոցն աւարտե-
լուց յետոյ, մտնում է յոյն դպրոց, ուստի և միջոց է ու-
նենում ծանօթանալու յոյն կլասիկներին հետ: Գիտէր նաև
ֆրանսերէն և իտալերէն:

Պարոնեանի վրայ ամենից շատ ազդել են Արիստա-
ֆոնն ու Մոլիէրը: Զնայելով իր խոշոր երգիծական տա-
ղանդին, նա ունեցել է մի շատ հասարակ և առօրեայ
հոգսերով լի կեանք:

1860-ին է սկսւում նրա գրական կեանքը «Արևելեան
ատամնաբոյժ» երգիծական զրուածով: Այնուհետև նա ըս-
կսում է հրատարակել «Թատրոն» թերթը, որը շուրջ տա-

րուայ ընթացքում ութ անգամ դադարման է ենթարկւում շնորհիւ իր սուր և կծու լեզուի, մինչև որ պատրիարքի հրամանով իսպառ դադարում է։ Նա շարունակ մասնակցում էր մեր պարբերական թերթերին և ամսագրերին։

1878-ին լոյս տեսաւ նրա գլուխ գործոցը՝ «Ազգային Զոյներ», որ ժամանակակից նշանաւոր հայերի կենսագրութիւնն է երգիծական սուր ու զուարճալի ոճով դրուած, ուր ծաղրի հետ միասին, պախարակելով պակասութիւնները, ծիծաղով էլ զրուատում է նրանց արժանիքը։

Այնուհետև լոյս են տեսնում. «Պտոյտ մը Պօլսոյ փոշոցներուն մէջ», «Մեծապատիւ Մուրացկաններ», «Բաղդասար աղբար», «Հոս-հոսի ձեռատետրը» և այլն...

Մեր գրականութիւնն առանց սխալուելու կարելի է լացի և աղօթքի գրականութիւն անուանել։ Պարոնեանն առաջինն է, որ ժպտալ է տալիս մեզ. Նա հայ գրականութեան առաջին ժպիտն է, առաջին ծիծաղը։ Նրա տաղանդը զուտ երգիծական էր և աչքի ընկնող, որովհետև մեր մէջ նա չունի նախորդ։ Պարոնեանի ծաղրը սուր ու վիրաւորական չէ, այդպէս ծաղրել գիտէր Ռ. Պատկանեանը, այլ թեթև ու խրատական. նա չի ծաղրում, այլ ծիծաղում է և ծիծաղ է յարուցանում նոյն իսկ ծաղրուած անհատի մէջ...

169. ՄԵԾԱՊԱՏԻՒ ՄՈՒՐԱՑԿԱՆՆԵՐԸ

«Մեծապատիւ մուրացկաններ» մէջ Պարոնեանը ներկայացնում է միամիտ, բայց հարուստ Աբխաղոմ աղային, որ Պօլիս գալով, իր թեթևամիտ փառասիրութեան շնորհիւ զոհ է դառնում «Մեծապատիւ մուրացկաններ» շողքօրթ խաբեբայութիւններին, որոնք աւելի խղճալի են քան ծիծաղելի։ «Մեծապատիւ մուրացկաններ» անունն տակ Պարոնեանը ներկայացնում է նոր տեսակի մուրացկաններ, որոնք ողորմութիւն են խնդրում թէև, բայց ոչ աղքատ մուրացկի պէս, այլ իբրև «Մեծապատիւ

պարոններ»։ Այսպէս խմբագիրը, որ գալիս է մի քանի բաժնեգէին կորզելու իր լրագրի համար, լուսանկարիչը, քահանան, բանաստեղծը, փեսայ որոնող մօցիքուհները և այլն, ամենքն գալիս են մատուցանելու իրանց յարգանքը և մի քանի ոսկի կորզելով հեռանում են։ Հետևեալ հատուածը ներկայացնում է այդ տեսարաններից մինը։

Արիստողոմ տղային ներկայացու երիտասարդ մը, որ վաճառականի չէր նմաներ, սեղանաւորի ալ չէր նմաներ, արհեստաւորի ալ չէր նմաներ, գործաւորի ալ չէր նմաներ, և վերջապէս անանկ բանի մը կը նմանէր, որուն նմանը չկայ։ Հազիւ երեսուն երկու տարեկան կը թուէր։ Կասոյտ աչերով, դեղին մազերով զարդարուած ըլլալով, ունէր նաև երկու մատ մօրուք, որ մայրաքաղաքիս մէջ կամ սղոյ նշան է և կամ չքաւորութեան։ Հագուստներն այնքան հին էին, որ նախոյդները զանոնք զնելու համար մեծաքանակ գումար մը կուտային։ Սակայն եթէ հագուստի մասին վանդական էր՝ դէմքի մասին քաշողական զօրութիւն ունէր այս անձը։

— Ծառայ եւ մեծապատուութեանդ, մեծապատիւ Տէր, պօռաց այս երիտասարդն սենեակէն ներս մտնելով և մօտենալով Արիստողոմ աղային։

— Ի՞նչ կայ, ի՞նչ կուզէք, հարցընց Արիստողոմ աղան վախնալով։

— Վսեմափայլ տէր, ձեր գալուստն լսելով, փութացի հոս գալ, իմ խորին մեծարանացս հաւաստին ձեր ոտքերուն տակ դնել։

— Ոտքերդ տակը, շատ աղէկ, դիր, ըսաւ Արիստողոմ աղան, որ կը կարծէր թէ մուճակ բերած էր իրեն։

— Շնորհակալ եմ, բարձրապատիւ տէր, ըսաւ երիտասարդը, զլուխը բացաւ և սեղանի վրայ ելաւ կանգնեցաւ։

Արիստողոմ տղան այս տեսարանին առջև բոլորովին շուարած՝ անհամբեր տեսնել կուզէր թէ ի՞նչ պիտի ընէր այս պարոնը սեղանին վրայ։

Երիտասարդը ծոցէն թուղթ մը հանեց և աչերն

Աբխազոմ աղային սնկելով բոլոր ձայնովը պօռաց՝

— Տեարբ և աիկնայբ...

Աբխազոմ աղա այս ահարկու ձայնէն վախնալով՝ նըստած տեղէն երկու կանգուն վեր ցատկեց և չկրնալով ինքզինքը զսպել պօռաց.

— Ո՞վ է աս մարդը, յիմարանոցէն փախած խե՞նթ է, թէ յիմարանոց երթալու յիմար:

— Հայ ազգն, շարունակեց երիտասարդը ձայնը քիչ մը իջեցնելով, այսօր այնպիսի հանդէս մը կը կատարէ, որ մեր հայրենեաց ամենէն քաջ դիւցազնին նուիրուած է...

— Միտքդ ի՞նչ է, եղբայր...

— Կար ժամանակ մը, ուր խաւարը լուսոյ դէմ կը կուռէր, տգիտութիւնը գիտութեան դէմ, անցեալն ապառնիին դէմ, հրամայականը սահմանականին դէմ, սուրը գրիչի դէմ, ատելութիւնը սիրոյ դէմ, կրակը ջուրին դէմ, միսը բանջարեղէնի դէմ. իսկ հիմա անցան այն ժամանակները, անոնք անցեալ են, մենք ապառնի, անոնք խաւար են, մենք լոյս, անոնք տգէտ են, մենք գիտուն, անոնք սուր են, մենք գրիչ, անոնք ատելութիւն են, մենք սէր, անոնք կրակ են, մենք ջուր, անոնք միս են, մենք բանջարեղէն, անոնք վարունգ են, մենք խնձոր, անոնք փուշ են, մենք վարդ. անցան, անցան այն դարերը. ուր մարդկութիւնը տգիտութեան օրօրոցին մէջ մէյ մը ասդին, մէյ մը անդին կերթար կուգար...

— Միտքդ ի՞նչ է, եղբայրս, ես քեզի բան մը չըրի, ի՞նչ կուզես ինձմէ, գնա քեզի բարկացնողին դրուցէ՛ այդ խօսքերը...

— Այո, մարդկութիւնը կը չարշարուէր, կընախատուէր անգութ բռնաւորներու ձեռքէն և չէր գիտեր, որու երթալ և որու բողոքել:

— Տէր ողորմեա... Տէր ողորմեա, ըսաւ ինքնիրեն Աբխազոմ աղա, քաշելիք ունինք եղբեր... ես կընամ հիմա զինքը սեղանէն վար առնել, բայց կը վախնամ որ ծոցէն ատրճառակ մը կը հանէ և կը դարնէ ինձի, վասն զի խիստ բարկութեամբ կը խօսի:

— Իսկ երբ գիտութիւնն եկաւ, շարունակեց ատենաբանը, և վանեց տգիտութիւնն ինչպէս լոյսն՝ խաւարը, սէրն՝ ատելութիւնը, զըրչն՝ սուրբը, ապագայն՝ անցեալը, այն ատեն, այլ, այն ատեն... այո՛, այն ատեն, այո՛ կ'ըսեմ, այն ատեն միայն հասկցուեցաւ, որ մարդկութիւն, ազգ և հայրենիք բառերը բառարանները լեցնելու համար շինուած բաներ չէին, այլ տմեն մարդու մտքին մէջ, սրտին մէջ, հոգւոյն մէջ երկաթեայ տառերով և անջինջ կերպով դրոշմուելու բառեր էին...

— Եղբայր, կադաշեմ, վար իջիր և այնպէս զրուցէ ցաւդ...

Ատենաբանը կայնած տեղը այնպէս կը դողար, որ Աբիսողոմ աղային սիրտը կը հատնէր թէ երիտասարդը գետինը պիտի իյնար:

Ուստի չուզելով այլ ևս համբերել, պոռաց ինքնակոչ ատենաբանին երեսն ի վեր.

— Վար իջիր սրկէ:

— Կադաշեմ, մի սաստեր զիս:

— Վար իջիր, ապա թէ ոչ...

— Ո՛ր կոտորել իմ ո՛րտոս, որ ազգին համար կը բաբախէ:

— Ինչ ըսելիք որ ունիս, եկուր քովս մարդու պէս նստէ և ըսէ, հոն տեղուանքը երեսը ի՞նչ պիտի ըլլայ:

— Կադաշեմ, թո՛ղ տուր վերջացնեմ, ան, չես գիտեր թէ որչափ կը յուզուիմ, երբ ճառ կը կարդամ:

— Վար իջիր:

Ատենաբանը բեմէն կիջնայ և կերթայ ակոռի մը վըրայ կը նստի:

— Հիմա զրուցէ ինձի, միտքդ ի՞նչ, կըսէ Աբիսողոմ աղա բարկութեամբ:

— Կադաշեմ, մի բարկանար:

— Ի՞նչ կուզես, զրուցէ, շուտ հիմա:

— Բարկութեամբ մի վարուիւր հետս, ոտքդ պազնեմ, սիրտս լեցուած է, հիմա կսկսիմ լալ:

— Լալու ի՞նչ կայ, եղբայրս:

— Ծառադ կը վափաքի գրականութեամբ ազգի ծառայելու, բայց այս ազգը շատ ապերախութեամբ կը վարուի իւր գրապէսներուն դէմ:

— Ատոր մէջ ես ի՞նչ յանցանք ունիմ:

— Դուք յանցանք չունիք և թերևս իրաւունք ունիք... Խոտանաւորներ ունիմ գրած հայրենիքի վրայ, սքանչելի վտորներ, պատուական տողեր, որոնց մէջ երևակայութիւնը, աւիւնը, խանդն, հուրն ու բոցը սաւառնաթիւ կը սլանան:

— Շատ աղէկ, ատոր համար լալո՞ւ է:

Մեր ազգն անոնց յարգն ու պատիւը չճանչնար, դանոնք աղայական բաներ են կը կարծէ և թող կուտայ, որ զանոնք գրողը անօթի ֆնայ:

— Ես ի՞նչ ընեմ:

— Կաղաչեմ, քաղցրութեամբ վարուէ՛ հետս:

— Ի՞նչ ըրած ունիմ քեզի:

— Ձեզի պիտի աղաչէի որ...

— Ի՞նչ, շնուտ ըսէ...

— Մի պօռար երեսս ի վար, հոգիդ սիրես, հիմա վսկսիմ լալ...

Նորէն սկսաւ լալ գրագէտը:

— Տէր Աստուած, Դո՛ւն համբերութիւն տուր ինձի, քսաւ Արիստոյոմ աղան մեկուսի...

— Խնդիրքս սա էր, որ կուգէի տպել տալ քիչ մը առաջ կարդացած ճառս...

— Գնա տպել տուր, քու ձեռքէդ բոնոյ կա՛յ:

— Պիտի խնդրէի ձեր մեծապատուութենէն, որ տպագրութեան ստակը դուք տայիք:

— Ինչո՞ւ... Ի՞նչ պատճառ կայ, որ քու ճառիդ համար ես գրամ տամ: Լսուած բան է, որ մէկը իրեն շահուն համար գիրք տպէ, ծախքն Արիստոյոմը տայ:

— Կը խնդրեմ, սիրաս արդէն խոցուած է, դուք ալ նոր վէրք մի բանաք հոս:

— Ինչո՞ւ վէրք պիտի բանամ եղեր, դնա՞ բանըդ, եղբայր, փորձանք եղար զլիսուս:

—Գիտէ՞ք որքան ծանր է գրագէտի մը ասանկ խօսքեր լսելը...

—Չեմ գիտեր և գիտնալ չեմ ուզեր:

—Բանաստեղծի մը սիրտը շատ փափուկ է, ամենաթեթեւ խօսքէ մը կը վիրաւորուի: Այս նիւթին վրայ ոտանաւոր մը գրած ունիմ, կարդամ, մտիկ բրէք:

—Ոտանաւոր մտիկ ընելու ժամանակ չունիմ:

—Կաղաչեմ, ոտանաւորիս հետ խստութեամբ մի վարուիք, այն ոտանաւորին համար զոր դուք չէք ուզեր մտիկ ընել, երկու ամիս աշխատած եմ ես, և երբ անոր նախատուիլը տեսնեմ՝ արժանապատուութիւնս կը վիրաւորուի: Կաղաչեմ, ոտանաւորիս համար գէշ մի գրուցէք... Կը խնդրեմ, թոյլ տուէք ինձ կարդալ զայն անգամ մը...

—Ես ոտանաւոր մտիկ ընելու չեկայ հոս:

—Շատ լաւ, ողբերգութիւն մը գրած եմ, անոր վրայէն անցնինք:

—Չեմ ուզեր, ես անօթի եմ, հիմա կերակուր պիտի ուտեմ:

—Շատ լաւ, ուտելիքի վրայ ատենաբանութիւն մը լինեմ:

—Ժամանակ չունիմ մտիկ ընելու:

—Կաղաչեմ, այդ խօսքը ուրիշ անգամ մի ըսեր, առկէ աւելի ծանր խօսք չկայ հեղինակի մը համար, որ իւր մէկ աշխատասիրութիւնն ուրիշի կարգալու փափաք կը յայտնէ: Կը խնդրեմ, բարձրապատիւ տէր, քաղցրութեամբ վարուեցէ՛ք հեղինակներու հետ:

—Գլխուս վրայ նստեցունեմ քեզի:

—Ոտքդ պազնեմ, մի ծաղրէ՛ք զիս. ինչո՞ւ ձեր գլխուն վրայ նստեցունէք:

—Ի՞նչ ընեմ հապա. քսակս քեզի՛ տամ՝ հեղինակներու հետ քաղցրութեամբ վարուած ըլլալու համար:

—Ո՛չ, միայն ճառիս տպագրութեան ծախքը:

—Քանի՞ ոսկիով կը լմնայ գործդ:

—Չորս ոսկիով կը լմնայ, բան մը չէ, իմ Մեկենաս...

պիտի ըլլաս, ես ալ քու անունդ ոտանաւորով մը գրքոյկին ճակատը պիտի դնեմ:

— Ճակատը դնես պիտի:

— Այո՛ւ: Ի՞նչո՞ւ համար:

— Որպէս զի ամեն մարդ գիտենայ թէ ձեր ստակովը տպուած է ան գիրքը:

— Շատ լաւ, պատասխանեց Արիստոյ մղան և քսակէն չորս ոսկի հանեց տուաւ: Հեղինակն հազար յարգանք մատուցանելով՝ դուրս ելաւ:

Արիստոյ մղան ետեէն կանչեց զինքը և հարցուց.

— Զ կրնար ըլլալ, որ գրքին ճակատը սպասաւորներուս ալ անունները դնես և իմացունես ազգին, որ Արիստոյ մղան կոյիք, ոչխարներ, էջեր և ազարակներ ունի իր քաղաքին մէջ:

— Ատ ձեր ըսածները հովուերգութեան ճիւղին կը վերաբերին:— Զիմ հասկնար:

— Ատոնց վրայ ոտանաւոր կը գրուի, եթէ կը փափաքե՞ք՝ ոտանաւոր մը շինեմ:

— Ի՞նչ ընեմ ոտանաւորը:

— Լրագրի մը մէջ տպել կուտաք:— Կը տպեն:

— Ինչո՞ւ չպիտի տպին. եթէ կէս ոսկի տալու ըլլաք՝ քառասուն անգամ կը տպեն:

— Շատ աղէկ. ատ ըսածդ դրէ:— Գլխուս վրայ:

— Վաղը առտու կը բերէք:

— Վաղը առտո՞ւ... Ի՞նչ կըսէք... մէկ ամիսէն հազիւ կրնամ պատրաստել:— Մէկ ամիսէն:

— Հաղիւ. ոտանաւոր կարդալը դիւրին է, բայց գրելը դժուար: Գեղեցիկ ոտանաւորի մը համար քիչէն քիչ երկու ամիս պէտք է:— Ի՞նչ կըսէք...

— Այո, բայց ես կաշխատեմ ամիսէ մը լմնցունել:

— Ատ ի՞նչ դժուար բան է եղեր:

— Ի՞նչ կարծեցիք հապա. երկու ամիս պիտի սպասեմ, որ մուսաս զայ և ներշնչէ ինձի, որպէս զի զրիմ, առանց մուսայի ոտանաւոր չգրուիր:

— Եթէ այդ մուսայն գալու չըլլայ ..

— Անպատճառ կուգայ:

— Ձկրնար ըլլալ, որ նամակ մը գրես և աղաչես իրեն, որ շուտ մը գայ և դուն ալ երկու ամիս չսպասես:

— Անիկայ ինքն իրեն կուգայ, նամակի պէտք չունի, մեծապատիւ տէր:

— Ո՞ւր կը չնստի... շատ հեռուն է:

— Այո, շատ հեռու է, բայց կուգայ:

— Ցամաքէն թէ ծովէն:

— Ձէ, մեծապատիւ տէր, չէ:

— Ո՞վ է ուրեմն աս գետնին տակը անցնելու մարդը... ուսկից պիտի գայ... ըսէ որ ճանրայ մը մտմտանք ու բերել տանք... Եթէ մէկ երկու ոսկի տանք՝ այս շաբաթ կուգայ:

— Այո, երկու ոսկի տալուդ պէս գործը կը դիւրանայ և մուսայս այս շաբաթ վաղիւով կուգայ, պատասխանեց անմուսայ բանաստեղծը, ոսկի բառը լսելուն պէս:

— Գրէ ուրեմն իրեն, իմ կողմէս ալ յատուկ բարեներբութիւններ, և ըսէ, որ Աբիսողոմ աղան քեզ տեսնել կուզէ:

— Գլխուս վրայ: Մնաք բարեաւ, տէր, շնորհակալ եմ ձեզմէ. ծառայ եմ ձեր մեծապատուութեանը, և կաղաչեմ որ ընդունիք...

— Ո՛չ, ըսաւ Աբիսողոմ աղան բարկութեամբ, ալ երկար ըրիր. ահա ինչ որ ըսիր ընդունեցի և դեռ ի՞նչ կուգես, որ ընդունիմ...

— Խորին յարգանացս հաւաստիքը, տէր .. որով մնամ ձեր մեծապատուութեան ամենախոնարհ ծառայ:

— Շատ աղէկ:

Մեկնեցաւ բանաստեղծն, երկու ոսկիով բերել տալ խոստանալով մուսայն, զոր ոմանք աւելի աժան գնով բերել կուտան: Մուսայի մ'օրականն հիւսնի մ'օրականէն աւելի չէ այժմ:

Յ. Յ. Պարոնեան

Ի՞նչպիսի մարդ էր Աբիսողոմ աղան, իսկական բանաստեղծ էր արդեօք նրան ներկայացողը. իրական և բնական են արդեօք այդ տիպերը, թէ չափազանցեալ: Ինչո՞ւ է ծաղրոււմ հեղինակն այդպիսի տիպերին և աջո՞ղ է ծաղրոււմ: Ի՞նչ վատ կողմերն է ծաղրոււմ հեղինակը:

170. ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆ (1840—1892)

Ծնաւ զեկտեմբերի 14-ին 1840 թւի, Վանում. աշակերտ էր Վանայ մօտ գտնուող Վարազայ դպրոցում, որ բաց էր արել Խրիմեան Հայրիկը: Շուտով նա ձեռնադրուեց վարդապետ և եղաւ աջակից և ուսուցիչ նոյն դպրոցում.— Սրուանձտեանը յայտնի էր որպէս հիանալի բանահաւաք. ժողովրդական ասանդութիւնները, սովորութիւնները, նախապաշարումներն ու սնտոխապաշտութիւնները նրա գրչի տակ առնում են մի զարմանալի կայտառութիւն ու կենդանութիւն.—նրա «Թորոս Աղբարը», «Գրոց Բրոցը»-ը, «Հնոց-Նորոց»-ը մի մի կոթող են ժողովրդական անգիր գրականութեան: Ներսէս պատրիարքի յանձնարարութեամբ նա ճամբորդեց Փոքր-Ասիա Հայաստան՝ հայերի մասին ճիշտ և մանրամասն տեղեկագիր ներկայացնելու: Այդ ճամբորդութիւնը Թորոս-Աղբարի մէջ նա նկարագրում է այնպէս կենդանի, այնքան պարզ ու բանաստեղծական, որ կարդացւում է ինչպէս մի վէպ:—Սասունցի Դաւթի գիւտը նրան ենք պարտական: Սրուանձտեանը մեռաւ 1892 թ. նոյեմ. 17-ին:

171. Ա Ռ Ա Ի Օ Տ

Ա

Առաւօտ է: Ինչպէս ամեն տեղ՝ այնպէս էլ Հայաստանի գիւղերում ամենքը շարժողութեան մէջ են: Գիւղացիները արդէն զարթել են այն փոքրիկ թռչնիկի ձայնից, որ դալիւ նստում է երդիքների վրայ ու կանչում. «Է՛՛՛, լժէ՛՛: Նրանք արդէն լծել են իրանց եզներն ու գոմէշները և բաւական վարել են զետիւնը: Տների մէջ մատակներն ու կովերը կթել են: Ոչխարների հօտն էլ դաշտումը մատղաշ արօտներից արդէն մի քաղցր նախաճաշ է արել: Տանտիկիւնըն էլ կովերն ու հորթուկներն է դուրս հանում:

Գիւղի աղջկերքն էլ խումբ-խումբ գնում են դէպի

Վանանչ մարգագետինը, ծաղիկները կոխելով, ծաղիկներ քաղելով և իրար վրայ ածելով, ծիծաղելով, խայտալով: Նրաքանք հանգիպում են կաքաւների երամին, լորին, արտուտիկին, որոնք խոտերի տակից թռչկոտում են թփից թուփ ուղենալով իրար նմանիլ, դու ասա, աղջկեքքը թեաւոր թռչուններին, թէ թռչունները ոտնաթոկի աղջկանց: Նրանք անցնում գնում են առաջ՝ բանջարներ ժողովելու և կանչելու, աղջկեքքը՝ «բա՛, քա՛», կաքաւները՝ «գա՛ւ, գա՛ւ»:

Բ.

Կռունկը երամով կարաւան է կազմել սլաքաձև, օդի բարձր տեղերում անցնելով՝ «կոո՛ւ, կոո՛ւ» է կանչում: Ծառայ եմ ձայնին:

Ներկարասրունք արագիլը կռուցը սրած՝ բոյնից դուրս է եկել՝ «հօ՛դ, հօ՛դ» ձայներով գէպի դաշտն է վազում ջրի՝ ու ցամաքի օձերը բռնելու և սպանելու:

Չորթան-տարուկը գիւղի տանիքների վրայ ու բակերի մէջ է թագնուել, որ չորթան յափշտակէ:

Կոյր բուն այս ժամանակ իր համար մի բոյն է որոնում, որ ծածկուի ափստեղ, վերջացնելով իւր «վա՛յ վա՛յ»-ն, որով սգում էր գիշերը, մի չորացած ծառի կամ գերեզմանաքարի վրայ նստած:

Ձկնկուլը դետերի ափերն է վազում ու «ձը՛կ, ձը՛կ» կանչելով՝ ձուկ մուկ է որոնում կուլ տալու:

Բադն ու սազը ջրերի վրայ նստած՝ կայտառ նաւաւարների պէս թռվռում են ու երգում:

Սանրակատար յոպոպը անհանգիստ ուտոտտում է և անդադար աղաղակում՝ «յո՛պ, յո՛պ»:

Դեղնապորտիկը փափուկ ու մաքուր, ճերմակ ու դեղին շորեր հագած՝ փոքրիկ մացառների ու թանձր խոտերի միջից գլխիկը ցոյց տալով ու թագցնելով՝ իր ձայնն է լսեցնում:

Սոխակի ձայնն էլ լսում է բոլոր երգողների ձայները հետ և ամեն լսողի ուշքը ու միտքը վերացնում:

Բարբաբոս բազէն որոտացող ձայնով վեր ու վայր

ալանում՝ մի անմեղ ու անզգոյշ աղաւնի կամ տատրակ պատառտելու։

Անզղները, ձրի ապրող քիւրդերի պէս, մի սպանուածի հոտ առել, գնում են նրա դիակի մասը կողոպտելու։ Ահա արծիւն էլ երևում է. նրա հզօր թևերի բաղխումից օդը շառաչելով պատռում է. բոլոր թռչունները մի անգամից լուռւմ են, մինչև անցնի հեռանայ այդ անեղ ու փառահեղ թագաւորը։

Գ. Վ. Սըրուանձտեան

Համեմատեցէք Պոօշեանի նկարագրած Վարդանան հետ. ցոյց տուէք նմանութիւնը և տարբերութիւնը։

172. ԻՄԱՍՏՈՒՆ ԶՈՒԼՀԱԿԸ

Մի թագաւոր նստած էր իր գահի վրայ։ Հեռաւոր երկրից մի դեսպան եկաւ և, առանց խօսելու, թագաւորի գահի շուրջը մի կլոր դիժ քաշեց ու լուռ ու մունջ մի կողմէ քաշուեց, նստեց։

Թագաւորը այս մարդու արարմունքից ոչինչ չհասկացաւ. կանչեց իր իշխաններին. նրանք էլ մի բան չհասկացան։ Թագաւորը շատ վատ գրութեան մէջ էր։ Նրա համար մեծ ամօթ էր, որ իր տէրութեան մէջ մի խելօք մարդ չէր գտնուում՝ դեսպանի արածը հասկանալու համար։ Թագաւորը սաստիկ նեղացած՝ յայտնեց ամենքին, որ եթէ նրան պատասխան տուող չգտնուի, էլ ոչ ոքի կենդանի չի թողնի։

Թագաւորի կողմից խնդրակներ ման եկան ամեն կողմ, և վերջը մի տան մէջ գտան մի ջուլհակ (ոստախյակ)։ Տեսնում են, որ այն մարդը մի տեղ նստած՝ միկնոյն ժամանակ երեք գործ է շինում. — համ իր կտաւն է գործում, համ երկու երեխայի օրօրոց է օրօրում, համ էլ տանիքի վրայ ցորեն է փռել, մօտը մի ճիպոտ է տնկել. երբ ինքը կտաւի թելերը շարժում է՝ կտաւը գործւում է, օրօրոցները օրօրում են, այն ճիպոտն էլ շարժւելով՝ տանիքի ծառերն են փախչում, ցորենից հեռանում։

Նրանք այս բանի վրայ շատ են դարմանում: Յետոյ նրան պատմում են, թէ հեռաւոր երկրից մի մարդ եկաւ, թագաւորի գահի շուրջը մի գիծ քաշեց, և ոչ ոք չկարողացաւ իմանալ, թէ դրանով ինչ էր ուզում ասել: Վերկաց, գնանք, եթէ դու նրա միտքը իմանաս՝ թագաւորը քեզ մեծ պարգևներ կը տայ»:

Ջուլիակը մի քիչ մտածում է, յետոյ առնում է երկու վէճ ու մի վառիկ և գնում է հետները: Հասնելով թագաւորի մօտ՝ վէճերը հանում է և ձգում դեսպանի առաջը: Դեսպանը գրպանից մի բուռը կորեկ է հանում ու շաղ տալիս գետնին: Ջուլիակը բաց է թողնում վառիկը, որն իսկոյն սկսում է կտցահարել կորեկը:

Այս բանը տեսնելով՝ դեսպանը տրեխները հազնում է ու սուս ու փուս դուրս գնում:

Թագաւորը Ջուլիակին հարցնում է. թէ «Այդ ի՞նչ արիր»: Ջուլիակը պատասխանում է. «Այդ մարդը եկել էր ասելու, թէ «մեր թագաւորը գալիս է քեզ հետ պատերազմելու, քո երկրին տիրելու. խոնարհում ես, թէ կռուով ես ուզում պատասխանել»:

Ես նրա առաջը վէճեր ձգելով հասկացրի, թէ «Դուք մեզ համար երեխաներ էք, գնացէք վէճ խաղացէք, դուք ո՛վ, մեզ հետ կռուողն ո՛վ»: Նա իր շաղ տուած կորեկով ուզեց հասկացնել, թէ «մեր զօրքերը անթիւ, անհամար են. դուք ի՞նչ կարող էք անել»: Եւ երբ ես վառիկս բաց թողի ու նրա բոլոր կորեկը կերաւ, դրանով պատասխանեցի, թէ «մեր մի մարդը ձեր հազար մարդուն կը ջարդէ՝ գնա՛ պատմիր քո թագաւորին»:

Թագաւորը այս բացատրութիւնը լսելով՝ մեծամեծ պարգևներ տուեց Ջուլիակին և ուզեց նրան վէճիբի պաշտօն տալ: Բայց Ջուլիակը պարգևների մի մասովը բաւականացաւ և թագաւորին ասաց. «ո՛չ, թագաւոր, թող ոք ես Ջուլիակ մնամ, վէճիբիդ ինչ պատիւ ուզում ես՝ տուր»:

Միայն Ջուլիակին ու կօշկակարին էլ մարդու տեղ դիր»:

Գ. Վ. Սրուանճտեան

173. ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ (1851—1872)

Դուրեանը ծնաւ 1851-ին Կ. Պօլսոյում. նրա հայրը դարբին էր: Մանկութիւնից նա ճանաչեց կարիքն ու նեղութիւնը իր բոլոր դառնութեամբ: Մի կտոր հաց ճարելու համար նա ստիպուած էր յանձն առնել այնպիսի գործեր, որոնք ոչ մի առնչութիւն չունէին նրա կոչման հետ: Այդ դառն կարիքն էր, որ գերեզման տարաւ Դուրեանին այն ժամանակ, երբ նա նոր էր մտել կեանքի գարունը. 21 տարեկան, հիւժուած թոքախտից, նա պիտի խոնարհէր իր գլուխը մահուան մանգոյի առաջ: Ո՛չ մէկը հայ բանաստեղծներից այնքան փայլուն ապագայ չէր խոստանում, ինչպէս Դուրեանը և ոչ մէկն էլ նրանցից այնքան նեղ, թշուառ ու կարճատև կեանք չունեցաւ, ինչպէս Դուրեանը:

Դուրեանի երգերը դառն են ու տխուր, ինչպէս իր կեանքը. նրա երգերի հիմնական մոտիւն է հայրենիք, սէր և մահ. — մանաւանդ մահ, որի ներկայութիւնը նա զգում էր գրեթէ գիտակցութեան առաջին օրից, որի պատճառով նրա ամեն մի ստղը, ամեն մի բառը տոգորուած է մի անհուն թախիժով, ինչպէս այդ տեսնում ենք հետևեալ երգի մէջ, որ ըստ աւանդութեան՝ գրել է անկողնու մէջ, հիւանդ ժամանակ¹⁾:

174. Տ Ր Տ ՈՒ Ն Ջ Ք

Է՛, մընաք քարով, Աստուած ու արե՛
Որ կը պըլպըլաք իմ հոգւոյս վերեւ...
Աստղ մ'ալ ես կերթամ յաւելուլ երկնից,
Աստղերն ինչ են որ, եթէ ոչ անբիծ
Եւ թըշուառ ոգւոց անէ՛ծք ողբագիւն,
Որք թըռին այրիւ ճակատն երկնքին.

¹⁾ Դուրեանն իբրև մարդ, տես «Հաւաքածոյ ընտիր գրութեան» Երես 90, Ա. 2.

Այլ այն Աստուծոյն՝ շանթերո՛ւ արմատ
 Յաւելու գէնքերն ու զարդերն հըրատ...
 Այլ, ո՛հ, ի՛նչ կըսեմ... շանթահարէ՛ դիս,
 Աստուած, խոկն հսկայ փշրէ՛ հիւլէիս՝
 Որ ժպրհի՛ ձգտիլ՝ սուգիլ խորն երկնի,
 Ելնել աստղերու սանդուղքն անալի...
 Ողջոյն քեզ, Աստուած, դողդոջ էակին,
 Շողին, փըթիթին, ալւոյն ու վանկին,
 Դու, որ ձակտիս վարդն ու բոցն աչերուս
 Խըլեցիր թրթռումս շրթանց՝ թռիչն հոգւոյս,
 Ամպ տըւիր աչացս, հեք տըւիր սրբոտիս,
 Ըսիր մահուան դուռն ինձ պիտի ժպտիս,
 Անշուշտ ինձ կեանք մը պահած ես ետքի,
 Կեանք մը անհուն շողի, բոյրի, աղօթքի.
 Իսկ թէ կորնչի պիտի իմ հուսկ շունչ
 Հոս մառախուղի մէջ համր անշուշտ,
 Այժմէն թող որ շանթ մ'ըլլամ դալկահար,
 Պըտւիմ անուանդ, մոռնչիմ անդադար,
 Թող անէծք մ'ըլլամ ու կողբդ խրիմ,
 Թող յորջորջեմ քեզ. «Աստուած ոխերիմ»:
 Ո՛հ, կը դողդոջեմ, դժգոյն եմ, դժգոյն,
 Փըրփըրի ներսըս գըժոխքի մ'հանգոյն...
 Հառնչ մ'եմ հեծող նոճերու մէջ սե,
 Թափելու մօտ չոր աշնան մէկ տերեւ...
 Ո՛հ, կայծ տըւէք ինձ, կայծ տըւէք, ապրի՛մ...
 Ի՛նչ, երազէ վերջ գըրկել ցուրտ շի՛րիմ...
 Այս ճակատագիր ինչ սե է, Աստուած,
 Արդեօք դամբանի մրուրճվ է գըծուած...
 Ո՛հ, տուէք հոգւոյս կրակի մի կաթիլ,
 Սիրել կուզեմ զեռ 'ւ ապրիլ ու ապրիլ...
 Երկնքի աստղեր, հոգւոյս մէջ ընկէք,
 Կայծ տուէք, կեանք՝ ձեր սիրահարին հէք.
 Գարունն ոչ մէկ վարդ ձակտիս դալկահար,
 Ո՛չ երկնի շողերն ժպտիս մ'իսձ չեն տար.
 Գիշերն միշտ դաճաղս, աստղերը ջահեր,
 Լուսինն յար կուլայ, խուզարկէ վրճեր.
 Կըլլան մարդիկ, որ լացող մը չունին,
 Անոր համար նա դըրաւ այդ լուսին.
 Եւ մահամերձն ալ կուզէ երկու բան.
 Նախ կեանքը, վերջը լացող մ'իր վըրան:

Ի զճուր զրեցին աստղերն ինձի շաւրս,
 Եւ ի զճուր ուսոյց բուլբուլն ինձ շաւրեւ,
 Ի զճուր սիւղեր շաւրս ինձ ներշնչեցին,
 Եւ զիս նորատի ցուցուց ջինջ ալին,
 Ի զճուր թաւուտնէն լրեցին իմ շուրջ,
 Դադտնապահ տերեք չափն երբէք շուրջ,
 Որ չըխսովեն... Երազքըս վըսեմ,
 Թոյլ տըւին, որ միշտ ըզնէ երազեմ,
 Եւ ի զճուր ծաղկունք, փրթիթներ զարնան՝
 Միշտ խնկարկեցին խոկմանցս խորան...
 Ո՛հ, նորա ամենքը զիս ծաղրեր են...
 Աստուծոյ ծաղրն է աշխարհն ալ արդէն...

Պետրոս Դուրեան

Քանի՞ մասերից է բաղկանում այս ոտանաւորը. լինչ մըտքեր և յոյզեր են արտայայտուած այնտեղ. լինչ հոգեկան վիճակի մէջ է գրուած այն. Արդեօք լաւ պատկերացած է աշատեղ Դուրեանի կեանքը իր դառնութիւններով. եթէ կենսադրութիւն չունենայինք, կարճէր էր այս երգը նիւթ դառնալ Դուրեանի կենսագրութեան. — Ինչպիսի բանաստեղծ է Դուրեանը. լիբիք թէ էպիք:

175. Ի ճ Ա Կ

Ինչու ապշած են, լճակ,
 Ու չեն խայտար քու ալեակը,
 Միթէ հայելոյդ մէջ անձկաւ
 Գեղունի՞ մը նայեցաւ:

Եւ կամ միթէ կըզմայլին
 Ալեակքդ երկնի կապոյտին,
 Եւ այն ամպոց լուսափթիթ,
 Որք նմանին փրփուրիդ:

Որքան ունիս դու ալի՜
 Ճակատս այնքան իսկ ունի,
 Ո՛րքան ունիս դու փրփուր,
 Սիրտս այնքան խոց ունի բիւր:

Այլ թէ գոգդ ալ թափին
 Բոյլքն աստեղաց երկընքին,
 Նըմանիլ չես կրնար դուն
 Հոգւոյս՝ որ է բոց անհոն:

Հող աստղերը չեն մեռնիր,
 Ծաղիկներդ հող չեն թոռմիր,
 Ամպերն չեն թըրջիր հող,
 Երբ խաղաղ էք դու և օդ:

Շատերը զիս մերժեցին,
 «Բընար մ'ունի սոսկ» — ըսին.
 Մին՝ «զողդոջ է», գոյն չունի»,
 Միւսն ալ ըսաւ. — «կըմենի»:

Ոչ ոք ըսաւ.— «Հէք տըղայ,
Արդեօք լինչու եր մըխայ,
Թերևս ըլլայ գեղանի,
Թէ որ սիրեմ, չըմենի»

Ոչ ոք ըսաւ. «Սա տըղին
Պատուենք սիրտը տըրտմազին,

Նայինք ինչէր գըրուած կան»...
—Հոն հրդեհ կայ, ոչ մատեան»

Հոն կայ մոխր... յիշատակ...
Ալեակքդ յուզին թող, լըճակ,
Զի քու խորքիդ մէջ անձկաւ
Յուսահատ մը նայեցաւ:

Պետրոս Դուրեան

176. Ի Մ Մ Ա Հ Ը

Եթէ դժգոյն մահու հրեշտակ
Անհուն ժպտով մ'իջնէ իմ դէմ,
Շողիանան ցաւքս ու հոգիս,
Դիտցէք, որ դեռ կենդանի եմ:

Եթէ սընարըս իմ տիպար
Մոմ մը վտիտ ու մահադէմ,
Ո՛հ, նըշուլէ ցուրտ ճառագայթ,
Դիտցէք, որ դեռ կենդանի եմ:

Եթէ ճակտովս արտօսրագօծ
Զիս պատանի մէջ ցուրտ զերթ
վէմ

Փաթթեն, զնեն սև դապաղը,
Դիտցէք, որ դեռ կենդանի եմ:

Եթէ հընչէ տխուր կոչնակ,
Թըթոռն ծիծաղն մահու դժխեմ¹⁾,

Դագաղս առնէ իր համը քայլ,
Դիտցէք, որ դեռ կենդանի եմ

Եթէ մարդիկ այն մահերդակ,
Որք սև ունին ու խոժոր դէմ,
Համասըփոեն խունկ ու աղօթք,
Դիտցէք, որ դեռ կենդանի եմ:

Եթ յարկարեն իմ հողակոյթ,
Եւ հեծեծամբ ու սըլալէն
Իմ սիրելիքը բաժնուին,
Դիտցէք, որ դեռ կենդանի եմ:

Իսկ անըշան եթէ քնայ
Երկրի մէկ խորշն հողակոյտն իմ
Եւ յիշատակս ալ թառամի,
Ա՛հ, այն ատեն ես կըմենիմ:

Պետրոս Դուրեան

177. ԱՐՓԻԱՐ-ԱՐՓԻԱՐԵԱՆ

Արփիարն ծնուած էր Սամսոն, շուրջ 1850 թուակա-
նին, իր ծնողացը Ակնէն Պօլիս գալու ճանապարհին վրայ:
Կը պատկանէր Ակնայ ամենանշանաւոր ամիրայական զեր-
դաստանի մը, որ նախապէս կանուանէր Վառեան: Իր

¹⁾ Ժանտ:

հախնական ուսումը առաւ Պօլիս, Օրթագլուղի ազգ. վարժարանը, որուն շրջանը աւարտելէ յետոյ՝ դնաց Վենետիկ, Մուրատ-Ռափայէլեան վարժարանը, ուր աշակերտեցաւ Ալիշանի, Տաննեօթը տարեկան պատանի, վկայակա-
նը առնելով, վերադարձաւ Պօլիս և առևտրական ասպա-
րէզը թեակոխելով սկսաւ միաժամանակ իր հանրային գործունէութիւնը։ Մասնակցեցաւ բազմաթիւ ընկերու-
թեանց հիմնարկութեան, որոնց մէջ, զլիսաւորաբար, հո-
գին եղաւ Արարատեան ընկերութեան, որուն նպատակն էր Հայաստանի մէջ վարժարաններ հիմնել։ Այս առթիւ յարաբերութեան մտաւ «Մշակի» հիմնադիր ողբացեալ Արծ-
րունիի հետ, որ ընդարձակ հանգանակութեամբ մը մեծա-
պէս քաջակերեց այդ ընկերութիւնը։ Մյու թուականէն ասդին, մինչև վերջին ժամանակներս, Արփիարեան մըշ-
տատեալ աշխատակից մը մնաց «Մշակին», նախ Հայկակ
ձածկանուամբ և վերջին տարիներս ** ստորագրու-
թեամբ։

Արփիար Արփիարեանի մահով (սպանուեց 1908 յուն-
վարի 30-ին Կահիրէում) կաներևութեանայ ժամանակակից
հայ գրականութեան ամենանշանաւոր դէմքերէն մէկը, որ
54 տարեկան ըլլալով, քառորդ դարէ մը աւելի մամուլի
կը ծառայէր։ Պօլսոյ և Կովկասի զանազան հանդէսներուն
ու օրաթերթերուն աշխատակցելէ վերջ, 1892-ին հիմնեց
«Հայրենիք» մեծ օրագիրը, որը եղաւ ազատական կու-
սակցութեան օրգան և իր քարոզած դադափարներովն ու
հրատարակած գրական գլուխ-գործոցներովը շատ մեծ և
ազդեցունաւոր ներգործութիւն մը ունեցաւ ժամանակակից
սերունդին բարոյական ու մտաւորական յառաջդիմու-
թեանը վրայ։ Յեղափոխական շարժումին մասնակցու-
թեանը բերումով՝ 1896-ին անգամ մը մահափորձի են-
թարկեցաւ իր քաղաքական հակառակորդներու կողմէն
Պօլսոյ մէջ։ Վէրքերէն բժշկուելէ վերջ, 1896-ի կոտորած
ներէն ետք, ձգեց Պօլիսը և Լոնդրա հաստատուեցաւ, ուր
երկար տարիներ «Նոր Կեանք» քաղաքական ու գրական
հանդէսը հրատարակեց։

1901-ին քաղաքական կեանքէ հեռանալով Վենետիկ բնակեցաւ, ուր շարունակաբար Ս. Ղազար կղզիին Մխիթարեան նշանաւոր վանքը յաճախեց, բանասիրական և գրական ուսումնասիրութիւններով զբաղելու համար: Վենետիկ ապրած միջոցին էր, որ աղգային ժամանակակից կեանքէ առնուած վէպ մը գրեց «Կարմիր ժամուց» վերնագիրով: Զմայլելի և սրտայոյզ գործ մը, որ կարելի է հրաշակերտ մը նկատել: Այդ ատեն էր նաև, որ երկրորդ անգամ իր վրան մահափորձ մը կատարուեցաւ և հակառակ ստացած վէրքերուն՝ մահէ խուսափեցաւ: Աւելորդ է լսել, որ այս երկրորդն ալ, ինչպէս առաջինը, քաղաքական հակառակորդներուն գործն էր:

1906-ին Եգիպտոս հաստատուելով՝ Կահիրէին մէջ կը հրատարակէր «Լուսաբերն» ու «Շիրակը»:

Իր անձնական համոզումներուն ու քաղաքական հաշիւաքններուն պաշտօնանութեամբը կորովալիք, հակառակ նոյնիսկ մահուան սպառնալիքներուն, Արփիարեան վայրկեան մը իսկ չդադրեցաւ իր թերթովը բուն պայքար մղելէ անոնց դէմ, որոնք Ամերիկայի, Ներսիսի և Եգիպտոսի հայերը կահաբեկեն և հաւանականաբար վրէժխնդրութեան գոհ մը եղաւ ինք:

Աշխատութեամբ ու գործունէութեամբ գեղուն այս նշանաւոր մարդուն ողբերգական վախճանը՝ անփոխարինելի կորուստ մըն է հայ գրականութեան համար, ուր գրաւած տեղը շատ մեծ էր: Յղացումի տարօրինակ յորդութեամբ մը գրական զանազան տեսակի գեղեցիկ յատկութիւններով օժտուած, Արփիար Արփիարեան անզուգական լրագրող մը ըլլալով հանդերձ, նշանաւոր վիպագիր մը, մեծ երգիծաբան ու ջղուտ, սրամիտ և զուարթաբան քրոնիկագիր ալ էր:

178. ՀԻՆ ԷՖԷՆՏԻՆ ԵՒ ՆՈՐ ՔԱԼԱՆԱՆ

—Սրբազան, աս լերան արջը ե՞րբ եկաւ:

—Լերան արջը ով է, էֆէնտի, հարցուց քմծիծաղով մը եպիսկոպոսը, որ բան մը չէր հասկացած:

—Այ, հեռու կարդէն, սա ասօրուան դարիբը:

—Տէր Յուսիկ հայրը կը հարցնէր, էֆէնտի, ընդդիմաբանեց եպիսկոպոսը, շեշտին մէջ արտայայտելով դժգոհութիւնը, զոր կը զգար Աստուծոյ պաշտօնէին նկատմամբ անհարկի լեզուի մը դէմ: Ու շարունակեց.

—Երեք օր է:

—Ո՞վ խրկեց:

—Ո՞վ պիտի խրկէր որ: Պատրիարքարանէն յանձնարարագրով եկաւ, միւս պանդուխտը արդէն գացած ըլլալուն:

—Էհ, ալ ասանկ ատեն հոս խրկելիք ուրիշ մարդ չգտան:

—Ի՞նչ կայ, էֆէնտի, ի՞նչ եղաւ, ի՞նչ ըրաւ, հարցապնդեց եպիսկոպոսը ականերեւ սրտնեղութեամբ:

—Ի՞նչ կայ մի, ի՞նչ եղաւ մի, ի՞նչ ըրաւ մի: Ինծի՞ կը հարցնէր, սրբազան: «Ականջս ունին և ոչ լսեն, աչս ունին և ոչ տեսանեն»:

—Ինչ որ կայ, կաղաչեմ, պարզօրէն ըսէիք էֆէնտի, խնդրեց եպիսկոպոսը: Այս քահանային նկատմամբ եթէ առաջուց բան մը գիտէր, այդ ուրիշ խնդիր է:

Պզտիկ ազնուաշուք մը, որուն աչքը պատուհանն էր, այդ ըոպէին նշմարելով պանդուխտը, որ խնդրակատարէն կելէր, էֆէնտիին իմացուց:

—Ներս կանչեցէք, հրամայեց էֆէնտին:

Հայաստանցի տէրտէրը եպիսկոպոսին առջևը խոնարհութիւն ըրաւ, ու ներկաները համահաւասար ռոյնոյնով մը բարեկէլ յետոյ, ոտքի վրայ մնաց: Էֆէնտին նստիլ հրամայեց: Տէրտէրը չլսելու դարկաւ: Ոտքի վրայ կեցած էր ի յարգանս եպիսկոպոսին և ոչ թէ աշխարհականի մը:

Դիրքի փոփոխութեան հրամանը նուիրապետական բարձունքէն կը սպասէր: Պարտաճանաչ մեծարանքի այս համարձակ արտայայտութիւնը դարիպին վրայ հրաւիրեց եպիսկոպոսին բարեհաջակամ տրամադրութիւնը:

— Նստէ, տէր հայր, նստէ, հրամայեց դաշն ձայնով, Տէրտէրը սրբազանին առջև խոնարհելով նստաւ:

Քանի մը վայրկենի լռութենէ յետոյ, էֆէնտին՝

— Հրամանքդ որ տեղէն ես, տէրտէր, հարցուց, հատիկ-հատիկ արտասանելով իւրաքանչիւր վանի:

— Տոմուզ գեղէն, պատասխանեց Տէր Յուսիկ, առանց «ծառայ եմ, էֆէնտին» նախաբանին՝ որ պանդուխտներուն բերան պարտաւորիչ էր:

— Տոմուզ գեղէն, հրմ, մըթմըթաց էֆէնտին քթին տակէն: Ու բարձրաձայն.

— Է, հոս ալ գիտես ուր է:

— Ստամպոլ չէ:

— Հա, ատ ալ գիտես եղեր: Աղէկ, աղէկ: Է, Հասան փաշան ալ գիտես ո՞վ է:

Ուսերը վեր թոթուելով, երեսը պատին դարձուցած, պանդուխտը արհամարհանքով մը մըմռաց.

— Է, ես ի՞նչ գիտնամ, ո՞վ է: Ով կուզէ՝ թող ըլլայ: Աշխարհիս երեսը շունէն շատ Հասան փաշայ կայ:

Եկեղեցականները սկսան մօրութիւն շոյել: Էֆէնտին պարտաւորուեցաւ լայնկեկ թաշկինակի մը օժանդակութեանը դիմել, արքայապիղծ յանդգնաբանութիւնը չլսած ըլլալու համար: Ազնուաշուքները քթերուն տակէն ամմա հօտիւկա փսփսացին իրարու: Էֆէնտին իր թաշկինակը ծալլելով, շարունակեց ծանրութեամբ.

— Աս Հասան փաշան քու գիտցածներէդ չէ, տէրտէր: Պէշիկթաշի Հասան փաշան է:

Սպառնացայտ շեշտը, զոր էֆէնտին «Պէշիկթաշ»-ին դարկաւ, թէև ժողովականներուն երեսները մթալնեց, բայց բնաւ ներդործել չթուեցաւ Հայաստանի տէրտիրոջ վրայ, որ ալ առ անգամ պոռթկաց.

— Է, ես ի՞նչ ընեմ, որ տեղինը կուզէ թող ըլլայ: Հա-

սան փաշա մըն ալ մեր խասապան կայ: Եւ, ամիրա, ևս քեզի բան մը ըսեմ. ասանկ սուրբ օրով մեծ մեղք է, պատարագէն ետքը անհաւատ շուներուն անունները բերաննիս առնելով ծոմերնիս աւրելլ:

Ու հաւատացեալ քրիստոնէի խղճատանքի խայթէն տանջուած, ոտքի ելաւ և եպիսկոպոսէն մեկնելու հրաման խնդրեց: Սրբազանը՝ խորհրդաւոր հարցումներուն շարժառիթը իմանալու ինքն ալ հետաքրքիր՝ խնդրուած թոյլտւութիւնը զլացաւ:

Էֆէնտին հարցումներն ու վճիռները անայլայլով շարունակեց, առանց շուտափոյտ գոհացում շնորհելու իր շուրջը գտնուող հետաքրքիրներուն անհամբերութեանը:

—Աս հասան փաշա քու վէժլէքէթիդ՝ Հասան փաշաներէն չէ, պոռաց գրեթէ: Ու ձայնը ցածցընելով ցածցընելով:

—Աս հասան փաշան, Նորին Վեհափառութեան աչքն աւականջն է. սորվէ:

—Է, ինծի՞ ինչ, ամիրա, ինչ կուզէ՞ թող ըլլայ, դիմադարձեց տէր Յուսիկ, իր անհոգ արհամարհանքի շեշտով: Կուզէ աչքը ըլլայ, կուզէ ականջը, որ ծակը կուզէ թող ըլլայ:

Եպիսկոպոսը՝ այս մենամարտական հարց-պատասխաններուն ալ վերջը մը դնելու ժամանակը հասած համարելով, էֆէնտիէն խնդրեց, տէր Յուսիկ հօր պարզօրէն յայտնել ինչ որ իմացնել կուզէր:

Էֆէնտին անդրադարձաւ, որ եպիսկոպոսը այս անգամ կը զգուշանար «Ձեր վսեմութեան հրամանները հաղորդել» նուիրագործեալ բանաձևին կիրառումէն: «Խըմպըլ» տէր-տէրի վը կոպտութիւնը նոյն իսկ քարոզչին վրայ կազդէր: Մտքին մէջ իր հեղինակութեանը դէմ կզերական ըմբոստացման կասկածը ծնաւ: Բայց կը զգար թէ կացութեան տէրը ինքն էր: Նախ՝ ձեռքին հինգ մատերը շրթունքէն օդը, օդէն շրթունքը տարուբերելով, գոչեց:

—Ժողովուրդը գրգռող ան ինչ եղանակներ էին: Դու-

ըն հիմակ գնաց Հասան փաշային: Ծոռնալ եղանք, Ծոռնալ:

Ու հազիւ լսելի մրմունջով մը.

— Ան ինչ ւազատութիւն» է, որ պողոտայի, տէրտէր, եպիսկոպոսը, աւագերէցը, աթոռակալը յօնքերնին բռտեցին: Տէր Յուսիկ առանց վարանումի պատասխանեց.

— Մեր հազարաւոր տարիներու աղօթքներն են. մեր սուրբ հայրապետներուն զրած ծէսերն են: Ի՞նչ, աս ժամը հայ քրիստոնէի ժամ չէ:

Ու հայաստանցին աչքերը խօլոր մօլոր ժուռ ածեց եպիսկոպոսին երեսը, քահանաներուն երեսը: Բոպէ մը ամենքն ալ հիազարհուր ցնցուեցան: Այդ հրուռ հայուածքին մէջ Հայաստանի սպառնական ցատումը կը ցոլար: Քատմեցաւ. էֆէնտի ինքն ալ, Մեղմաձայն հազազով մըն էր, որ պատասխանեց.

— Ան երանելիները ուրիշ ատեն կ'ապրէին: Հիմակ դարը ուրիշ դար է: Սուրբ հայրապետները, մեռնինք նէ, անդին հոգիներուս փրկութեանը կ'օգնեն, ամա աստեղ մեղի չեն ազատեր:

Ու ինքզինքը գտնելով՝ հարցուց.

— Դու հոս մնալո՞ւ եկար:

— Այնպէս է. ատեն մը մնալու եկեր եմ:

— Է, մնալու եկիր ես նէ, ան քու Տոմուզ գեղդ մոռցիր դէ, հոս խուզի գեղցի եղիր: Աստուծով նորէն գեղդ երթաս նէ, հոն ինչ կուգես նէ, ան եղիր: Հոս հէմ քեզի կ'ընես, հէմ մեզի: Հոս քաղաքագէտ ըլլալու է: Ականջիդ օղ ըրէ սա պատուիրանը—Օրթագեղ՝ սկիզբն իմաստութեան երկիւղ Հասան փաշայի:

— Անանկ է, էֆէնտի, անանկ է. շատ պատուական խրատներ, աղաղակեց ազնուաշուքներու խմբերգը միասնաբար:

Եպիսկոպոսը միջամտութեան հարկ զգաց:

— Բայց, էֆէնտի, ի՞նչ ընելու է, հարցուց դէմքը խոթոռած: Աս Հասան փաշայ է, աս Հիւսէին փաշայ է ըսելով մեր եկեղեցական արարողութիւնները փոխելո՞ւ

ենք, ջնջելու ենք: Եթէ հինգ հարիւր տարիէ ի վեր առ քաղաքագէտ իմաստութեան դպրոցին աշակերտած ըլլալինք՝ այսօրուան օրս Հայաստանեայց եկեղեցի մնացած չէր ըլլար: Գացող պանդուխտն ալ «ազատութիւնը» կըսէր, աւագերէց հայրն ալ երբ սպասաւորէ՝ կըսէ, ես ալ եթէ սպասաւորեմ, պիտի ըսեմ:

—Սրբազան, սրբազան, խելքդ կանչէ որ տուն գայ, ալադակեց էֆէնտին ըսել ալ կայ, ըսել ալ կայ: Երեսուն տարի է ես աս ժամն եմ. օր մը օրանց մէկերնիդ լսեցի՞ք որ ազատութիւնէն ետքը ժողովուրդը «ամմէն» պոռայ, «տէր ողորմեա» զոչէ, չէ:

Այս ուշագրաւ դիտողութեան վրայ մտածելու համար քանի մը բոպէ շնորհելէ յետոյ, տրտմածայն մըմնջեց.

—Աս մէկ ամիս է ինչ կը դառնան, չիյա՞նք:

Յուլիս տասնհինգի ակնարկութիւնը յուշարար ազդարարութիւն մըն էր. ազգին համար նոր ստեղծուած կացութեան ծանրութիւնը չմոռնալու զեկուցում մը: Լըջացան երեսները, կարկեցան բերանները:

Էֆէնտին շուրջը աչք մը նետեց, դէմքերը այլափոխեալ տեսաւ: Հոգ չէր. թող իրենք ալ քաշէին: Կէս ժամէ ի վեր ինքն ալ կը տագնապէր իր իշխանութեանը դէմ՝ ընդգլուծի նշաններէն: Կը զգար թէ իր ազդեցութեանը տրկարացումը Օրթագեղին աղետաբեր պիտի ըլլար: Անգլուխ մնալով, իր թաղն ալ «անխոհեմութեան» պիտի մղուէր: Ինքն իր մէջը փրկչի կոչում զգացողի զիտակցութեամբն էր, որ ուզած էր Օրթագեղը փորձանքի դէմ ապահովել: Հիմակ որ ալ նպատակին հասած ըլլար կը կարծէր, հարկ տեսաւ մեղմանալ: Վապը կտրելու չէր. ուստի խօսքն անուշութեամբ պանդուխտին ուղղեց:

—Հիմա, տէր հայր, ինձի մտիկ ըրէ, որ ըսեմ, յայտարարեց: Ես ամենէն աւելի նախանձախնդիրն եմ եկեղեցական արարողութիւններու, բայց «հարկը օրէնքը կը լուծէ» ըսել են: Ու դառնալով միւս եկեղեցականներուն, աւելացուց:

—Ես քիչը կըսեմ, դուք շատը հասկցէք:

— Բայց ինչպէս ընելու է, էֆէնտի, հարցուց աւա-
գերէցն անուշութեամբ:

— Ի՞նչպէս ընելու է, հիմակ ըսեմ, պատասխանեց
էֆէնտին, ու տէր Յուսիկին դառնալով, իր հրահանգները
տուաւ:

— Սա «ա»-ն բերնէդ կամացուկ մը կը հանես, հազա-
լով մը: Մարդ ենք, հագերնիս կը բռնէ, ան ալ մեղք չէ՞
եա: «Զատ»-ը կուտես: Կուտես տէրտէր, կուտես, չէ նէ
ան մեզի կուտէ: «Նոյնացի մերոց»-ին հազդ քիչ մը կան-
ցի, «Գերեւոյց»-ին վրայէն, լիութելով էֆէնտիմ, գերե-
ւոյց ըլլալ չեն ուզեր նէ, թող խելքերնին գլուխնին կենան,
Փառք Աստծու, մենք ալ հայ քրիստոնեայ ենք, մեզի՞ ին-
չու գերեւոյց չեն ըներ: Էֆէմ:

— Անանկ է ես, անանկ է ես, ձայնեց նորէն աշ-
խարհականներու խմբերգը միանուագ ու բարեխրատն ալ
շարունակեց:

— «Եւ շնորհ յառաջիկայ»-ին եկա՞ր մի, քեզի խուլա՞ծ
խուլա՞ծ իզին, պոռա ու պոռա, կուգես նէ թող ձանդ
մինչև Շնորհք էֆէնտիին տունը հասնի:

Ընդհանուր քրքիշ մը պատասխանեց այս կատակա-
բանութեան, որ էֆէնտիին հանդարտացմանը բարեգուշակ
նշանն էր:

— Հիմակ «ընտոր ընելու է»-ն սորվեցա՞ր ես, տէր
հայր, ալ երթաս բարով: Տէր ընդքեզ ըսելով հրահանգիչ
էֆէնտին պանդուխտ քահանան արձակեց:

— Էֆէնտի, յայտարարեց տէրտէրը ոտքի ելլելով, ա-
տանկ խօսքերէն հս բան մը չեմ հասկնար: Սրբազանը
եթէ կը հաճի թող հրաման տայ ու ալ կիրակի օրերը ես
սպասաւորութիւն չընեմ:

— Է, էն աղէկն ալ ատ կըլլայ, քրթնջեց էֆէնտին
սրտնեղութեամբ:

Պանդուխտը եպիսկոպոսին առջև խոնարհութիւն ըրաւ,
երկու քահանաներ առանձին ողջունեց, և աշխարհական-
ներուն ալ ընդհանուր մէկ բարե մը տալով դուրս եկաւ:

«ԿԱՐՄԻՐ ԺԱՄՈՒՅ»։ Արփիար Արփիարեան

179. Ա Մ Պ Ը

Ա՛մալ լուսեղէն, ուր երազներս ապրեցան,
 Երկնքին մէջ, լուսնին աշխարհն արծաթի, —
 Ու քեզի հետ փըշրած կիյնան ցիր ու ցան.
 Այդ փըշրանքէն տաք տաք արցունք կը կաթի:

Բաժնըւելով քու շողերէդ մըտերիմ,
 Հովերու բիրտ հարուածին տակ կը փըրթիս.
 Կեանքդ երկինքն էր. հողը կըլլայ քեզ շիրիմ,
 Ուր թաղուեցան հուր տենչանքներն իմ սըրտիս:

Եւ կը ժըպտին վերէն արեւն ու եթեր
 Մեր վիշտերուն անկարեկիր ու անփոյթ,
 Փայփայելով թևերուն մէջ դոր ամպեր,
 Նոր սարսուռներ ու երազներ ջինջ կապոյտ:

Մինչ մենք գոհեր սիրոյ անհուն պապակին՝
 Անձրե կուլաս դուն, ես արցունք ցաւագին:
Տիկին Սիպիլ

180. Խ Ո Ի Ն Կ Ը

Խունկը կը ծըխի խորանին առջին.
 Բուռվտոին մեղմիկ ճօճումովն արծաթ
 Մուխի վարանք մը պըլլըւած խաչին
 Մըշուշով կոծէ սուրբերուն ճակատ:

Պաղատանքներու սարսուռներ երկայն
 Կամարներուն տակ կը մարին տակաւ,
 Մոռերու դրժգսյն բոցերը լալկան
 Քըթթող աչքերով կը հեան կարգաւ:

Սուրբ սիւներուն մօտ շրդարշ մը ճերմակ
 Գաղտուկ հեծքերու դողով կերերայ,
 Սիրտ մը փաթթըւած ըստուերով համակ
 Խունկին պէս լըռին հըրայրքով կ'եռայ:

Խոնկը կը ցընդի բուրվառին ծոցէն
Ու եթերն ի վեր կելլէ խոյանքով,
Նիւթ էր՝ բոյր կըլլայ լափուելով բոցէն
Իր կեանքը ցօղուած լոյսի երանգով:

Հէք կընոջ սիրտն ալ, որ հոն կը մըխայ,
Պիտի չազատի իր պատեանէն կուռ,
Մինչև որ հալի, լուծուի տարրանայ
Հափուելով բոցէն տենչերուն մաքուր¹⁾։
Տիկին Սիւպիլ

181. ՄԻՕԶԹԻՍ (Անմոռնուկ)

Դեռ կը լըսուէր ծառին ետև
Սոխակին երգն այն գիշեր,
Վարդին թերթերն հով մը թեթև
Թուփերուն տակ կը քըշէր:
Մենակ էի, լուռ և խոհուն,
Քունն աչքերէս կու տար խոյս,
Միտքս կերթար հոն այդ պահուն,
Ուր կը թեւն սիրտեր կոյս:
Ու կիշնէի բարձունքէն վար,
Միտքս դատարկ, սիրտս սին:
Զի երկնքի լոյսերն հազար
Հոգւոյս ոչինչ կը խօսին:
Գըրքի մէջ մը բացի իսկոյն
Ինձ համար շատ թանկագին,
Եւ լեցուեցաւ հոգիս անհուն
Արցունքներով դառնագին:
Փունջը զըտայ, ո՛հ, փունջն այն սուրբ
Այն պաշտելի ձեռքին ձօն
Եւ կարդացի զիրերով նուրբ
«Զիս մի մոռնար» գրուած հոն:

¹⁾ Այս ոտանավորների նիւթը համեմատեցէք Ահարոնեանի
«Մայրեր»-ի հետ: Ցոյց տուէք նմանութիւնն ու տարբերոյթը:

Ծառն ունէր շուք, երկինք՝ նըշոյլ
 Լըճակին մէջ սարսըռուն,
 Ուր կը պարէր սիւզն հեղասոյլ
 Հետ եթերին կայծերուն,
 Այլ, ռը իր ձեռն, ռը իր պատկեր,
 Ո՛ւր սիրող սիրտն այդ տաքուկ,
 Ո՛ւր սե աչերն իր լուսայեռ,
 Ո՛ւր անուշ ձայնն իր փափուկ,
 Արդ կը ծածկէ ցուրտ գերեզման
 Զեռքն որ տըւաւ այդ նըւէր.
 Սիրտն, որ ըզգաց, ո՛հ, շատ այնքան,
 Հողերուն տակ է սառեր,
 Եւ դուն հոս ես, միօզօթիս,
 Ո՛վ իր սիրոյն սին պատկեր,
 Անոր սըրտէն ինձ կը խօսիս,
 Մինչ իր շըրթունքն է լըռեր:

Տիկին Սիպիլ

182. 2 Կ Ն Ո Ր Ո

Տիրան մտաւ ծառի սատուերին մէջ ու աջ թևով բռնը
 գրկած, ճակատը յենեց երկու ճիւղերու միացման անկիւ-
 նին. և այդպէս կէս մը հողին, կէս մը ծառին, կէս մըն ալ
 դատարկութեան վրայ առկախ՝ անշարժ մնաց:

Վարը, ափին մօտիկ, ցիր-ցան չեչոտ ժայռերու շըր-
 ջանակի մը մէջ ձկնորսի փոքրիկ նաւակ մը կեցած էր:

Տիրան անսովոր հետաքրքրութեամբ մը կլանուած՝ իր
 բարձունքէն կը դիտէր ձկնորսին զգզուած մօրուքը, այ-
 բուած դէմքը, ձերմակ մազերը, բաց թաւ կուրծքը, մին-
 չև սրունքները բորիկ ոսկրուտ ոտքերը, մաշուած ու թաց
 շաւարին լայն ծալքերը ու կարկտուած մինթանին գոյ-
 նըզգոյն կտորները:

Ծերուկը կրծուէր, կենէր, կը կըծկըւէր. թևի վար-
 պետ շարժում մը — և ուռկանը բացուող հովհարի մի սլէս

կը փոռէր օդին մէջ. չը՛ռփ. ու կապարէ գնդակներու շրջանակը կանծրկէ ջուրին վրայ, իրեն հետ ցանցը դէպի յատակը քաշելով:

Երբեմն պարապ կենէր ուռկանը, երբեմն քանիմը ձուկ, որոնք ճարպիկութեամբ կը բռնէր ալիորը ու կը նետէր նաւակին խորը, ուր ծովուն ջուրը ներս էր ծծուեր ու թեթև մը կօրօրուէր:

«Երկու ձուկ, չէ՛, երեք է». «հը՛, քարին առաւ», «Խեղճ ծերուկ, յոգներ է», «խեչափառ, խեչափառ»: Եւ ուրիշ ոչինչ մտածել չէր ուզեր:

Մտածումներու այս արուեստական սպանումէն այն ատեն միայն սթափեցաւ, երբ ձկնորսը ուռկանը նաւակին քիթը փռեց, թիբըր ձեռք առաւ, ու քանի մը ճարպիկ շարժումով ժայռերու մէջէն դուրս ելաւ ու մտաւ փոքրիկ հրուանդանին ետեր:

Տիրան նայեցաւ շուրջը. արեւ հորիզոնին կը քսուէր: Ժամեր էին անցեր:

Հեռացաւ ծառէն և յարմար տեղէ մը ուրիշներու ոտքի հետքերէն օգտուելով բարձր ափէն իջաւ ծովուն եզրը աւազին վրայ, ուր արդէն բոլորովին ստուերին մէջ էր:

Անգամ մը-երկու գնաց որ եկաւ խիճերուն մէջ ձեռքի գաւազանովը ծովափի թաց փոքրիկ քարերը խշրտեցնելով: Վերջը ջրերու գիրկէն դուրս նետուող տափակ ժայռերու վրայէն մէկն միւսը ցատկելով բաւական հեռացաւ եղերքէն: Ծունկի եկաւ, ու սկսաւ փայտովը ժայռի թաց ու մամոռոտ եզերքին փակած ոտորէ մը փրցընել:

Պինդ էր. գաւազանին ծայրը քարին ու կենդանիին մէջ անցուցած բոլոր ուժովը աշխատելու վրայ էր, երբ իրէն քիչ մը հեռու ծովուն մէջ բան մը ձողբեց և ջուրի կաթիլներու ամբողջ մանեակ մը շարուեցաւ իր դէմքին, պիտուն ու կրծքին վրայ:

Շանթ

183. ԹՈՒՂԹ ԲԱՅ ԱՆՈՂ ՄԱՅՐԸ

Թանձր ու թուխ ամպերը առեր էին երկինքը: Եւ իրիկունը թէն այնքան ուշ չէր գեռ, բայց պարտէզը ծառերուն տակ մութի նուրբ բոդ մը տարածուած էր արդէն ամպերէն ծորոդ. մանաւանդ հսկայ չինարի երկար ու խիտ ոստերուն ներքեւ:

Հոգ, ճիշտ ծառի բունին կից, լայն գորգի մը վրայ ծաղապատիկ կուշ էր եկեր պառաւր ու հնար եղածին չափ ինքն իր վրայ կըքած՝ ձեռքի խաղաթուղթերը կանոնաւոր տողերով իրարու տակ կը շարէր. դանդաղ լնու, լնւրջ, խորհրդաւոր ու թեթեւ մը դողացող ձեռքով:

Թուղթ կը բանար:

Իր աջ կողմը ամբողջ հասակովը դէմքին վրայ փրոռեր էր Հրանտ, և թե ու կըծքով բարձի մը մէջ խրած աւազիր կը հետեւէր մօրը ձեռքերուն:

— Նայէ, բաղդը նորէն թևիդ տակ ինկաւ. նկատեց կինը նոր բացած թուղթը մատնանիշ ընելով. Բաղդաւոր տղաս. մինակ գլխուդ վրան քիչ մը նեղութիւն կայ. աստ աղւոր չէ. մէկ ալ չեմ հասկընար սա երկու շէկերը քեզմէ ինչ կուզեն, սա շէկ մարդը ու սա շէկ կինը, որ ձախ կողմէդ չի հեռանար. շէկերէն զգոյշ եղիր, մանչս. ամեն կնկան ականջ մի կախիր. Աստուած պահէ քեզի անոնց փորձանքէն:

Հրանտ ժպտեցաւ. շատ աղէկ կը հասկընար մօրը ակնարկները:

— Իսկ ճամբորդելու մասին ոչինչ չե՞ն ըսեր թուղթերդ, հարցուց յանկարծ:

— Ի՞նչ ճամբորդել. դարձաւ կինը գաւակին՝ շեշտ ասոր դէմքին գամելով աչքերը:

— Նա, չգիտեմ, դէպի շէկերու աշխարհը:

— Ձէ՞ որ դեռ երկու-երեք ամիս ժամանակ ունիմ, կըսէիր:

— Այո՛. բայց, է՛, սի գիտէ, գործեր կընար պատահիր:

անակընկալ պատահարներ, մարդ կըստիպուի շտապելու...

Բայց նշմարելով, որ մայրը անհանգստանալու սկսաւ, իսկոյն փոխեց տոնը.

— Իմ հարցուցածս ալ այդ է միայն, մարիկ. կուզէի գիտնամ, տեսնե՞ք, թուղթերդ ինչ կըսեն:

— Ճամբանդ, ճամբադ դեռ շատ հեռուն է. տես, շարքին միւս ծայրը, ըսաւ պառաւը հաստատ ու վճռական:

— Հա՛. ուրեմն ադէկ:

Մայրը շարելը աւարտեց. երկու ձեռքերը իրարու վրայ գոգը դրած՝ պահ մը լուռ սկսաւ դիտել խորին ու շաղթութեամբ առջիւր փռուած թուղթերուն գաղտնիքը. և քիչ մը վերջը սկսաւ նորէն հատիկ-հատիկ մեկնել.

— Ինչպէս ըսի գլխուդ վերի դին շատ մտմբառեք կայ. մտմբառեք սիրտ կը մաշէ, հաճելի բան չէ. և այդ մտմբառունքն ալ, նայէ՛ հեռուներէն կու գայ վրադ. ամբ, եթէ անգամ մը ձեռք վերցնէիր այդ հեռուներէն: Ուրիշ բան մըն ալ, որ չեմ հաւնեք, տես, չորս գիդ բոլոր ուրիշ գոյնի թուղթեր են. կարծես օտար, պաղ շրջանակի մը մէջ, որ քու գոյնիդ չի յարմարիր:

— Է՛, ինչ փնտս ունի, մայրիկ. աւելի ադէկ. դանապան գոյները իրարու քով աւելի սիրուն կերևայ:

— Կերևայ, այո՛: Ա՛խ, զաւակս. մի խաբուիր. մարդ իր շրջանակէն դուրս գալու չէ: Նրջանիկը ան է, ով իր գոյնի մարդոց հետ՝ իրեն սովորական շրջանակին մէջը կը դառնայ: Իր շրջանակէն դուրս շատ բան սիրուն կընայ երևար. միայն, հաւատա՛, ոչ իրեն համար: Ամեն մարդ իր գոյնին մէջ:

Հրանտ, որ մինչև հիմա անփոյթ՝ ժամանցի համար միայն մօրը կը լսէր, վերջին խօսքերուն ահամայ բարձրացաւ քիչ մը բարձէն, ու աչքերը յամառ սեւեռեց մօրը հանդարտ ու տխուր դէմքին, ուր վշտերն ու անցեալը յարմարուելու ու համակերպելու անջինջ դրոշմը զարկեր էին:

Առանց որդուն շարժմանը մասնաւոր ուշ դարձնելու կը շարունակէր ան իր գուշակութիւնները, որը աւելի իր

սրտէն քան թուղթերէն կը կարգար: Ծիայց Հրանտ ալ չէր լսեր ոչինչ:

Ամպերու ու ծառի խորհրդաւոր օկէս-մութին տակ, շուրջի գաղջ ու ճնշող օդի լռութեան մէջէն մօրը հատու յստակ ու տրտում շեշտերը պատգամի մը պէս իր ուղեղն էր թափանցեր:

«Երջանիկը ան է, ով իր գոյնի մարդոց հետ, իրենց սովոր շրջանակին մէջը կը դառնայ»...

Ծը՝ 22, տաք հովը յարձակուեցաւ յանկարծ ծառի թաւ ճիւղերուն մէջ ու կիսաշոր, դեղնակարմիր տերեւներու անձրև մը տեղաց վար. քանի մը հատը երերալկալով ու դողդող եկան նստեցան թուղթերուն վրայ:

Շանթ

ՌՈՒՍ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՅ

184. ԶՐԱՀԵՂՁԸ

Ներս վագեցին մանուկները
Ու կանչում են հօրն ըշտապ,
—Ա'պի, ա'պի, եկ, մեր թօռը
Մեռել հանեց գետի ափ,
—Սուտ էք ասում, շան լակոտներ,
Գոռաց հայրը ահաբեկ—
Ըսպասեցէք դուք հալս դեռ,
Մեռելն յետոյ կըտեսնէք:

—Դիւան կըզայ—ջուղարը տուր,
Յաւի միջում կըմըրամ...
Հընար չըկայ. բեր, այ կնիկ,
Շորերըս տուր, մի գընամ:
—Ո'ւր է մեռելն:—Ա'յ ա'պի, ա'յ:
Ճիշտ որ գետի եզերքին,
Թաց թօռի մօտ, գետնի վըրայ
Տարածուած էր մի մարմին:

Զարհուրելի դիակն ուռել,
Կապուտկել էր այլանդակ.
Արդեօք տանջուած մի թշուառ էր,
Հանգիստ գըտած ջըրի տակ.
Մի գետակուր ձըկնորս էր այն,
Թէ գինեմոլ մի ջահէլ,
Թէ անըզգոյշ վաճառական
Հարամու էր պատահել...

Ընչէ՞ն է պէտք. աչք ածելով
Ըշտապում է գիւղացին
Ոտից բըռնած ետ քարչ տալով,
Ջուրն է տանում խեղդուածին:
Ու թիակով գետի եզրից
Ջուրը հըրեց հա նըրան,
Ու զիակը գընաց նորից
Փնտրի լսաչ ու գերեզման:

Մեռելն երկար ջրի միջին
Յած էր իջնում ճօճելով,
Աչքով ճամբեց մեր գիւղացին
Ու տուն դարձաւ կանչելով.
— Դէսը կորէք, այ լակոտներ,
Եկէք, բան տամ ձեզ—տանեմ,
Ամա թէ որ ձէն էք հանել,
Հոգիներդ կըհանեմ:

Գիշերն ուժգին բուք վերկացաւ,
Գետն ելնում է, որոտում...
Մարխն արգէն այրուեց, հանգաւ
Լուռ ու ծըխոտ խըրճիթում:
Ողջ քընած են: Անքուն պառկած
Միտք է անում գիւղացին...
Բուքն ոռնում է... մին էլ յանկարծ
Լուսամուտը բախեցին...

—Ո՞վ ես:—Ներս թող, այ տանտէր, ներս...
—Այ ներս ու քեզ հօռ ու ցաւ.
Ի՞նչ ես շըրջում կայէնի պէս,
Ո՞ր սատանէն քեզ բերաւ:
Ի՞նչ անեմ քեզ ասա, հիմի.
Տեղըս նեղ է, տունը մութ.
Ու ծոյլ ձեռքով, արրտ շնջալով
Բաց է անում լուսամուտ:

Ցողում է լոյսն ամպի տակից:
Ահա կանգնած... մի մերկ մարդ.
Ձուր է հոսում նըրա միլբեից,
Բաց են աչերն ու անթարթ:
Կախ են ընկած բազուկները,
Ողջ կարկամած սոսկալի.
Ուռած մարմնին քառչանգները
Կըպած՝ սևին են տալի...

Ահից մարեց՝ ճանաչելով
Իր մերկ հիւրին նա յանկարծ.
Փեղկը զարկեց: Նա դողալով
— Ա՛յ դու ճաքես, քըրթմընջաց:
Ամբոխուեցին մըտքերը մութ,
Մինչև լոյսը նա դողում,
Մինչև լոյսը լուսամուտ
Բաղխում էին ու բաղխում:

Ամբոխն անդ զրոյց ունի,
Թէ այս դէպքից պիւղացին
Հսպասում է ամեն տարի
Միշտ նոյն օրը խեղդուածին:
Խառնվում է օրն առաւօտից,
Գիշեր գալի բուք ու մութ,
Ու խեղդուածը ամբողջ գիշեր
Բաղխում դուռն ու լուսամուտ:
ՊՐԻՇԿԻՆ. Թարգ. Յովհ. Թումանյան

185. ՍՊԻՏԱԿ ԶԳԵՍՏ

Անճարգ, խայտառակ մահուան մատնուած,
 Հունգարացի կոմսը շղթայակապ էր.
 Նա օգնել ուզեց իր խեղճ հայրենեաց,
 Հպարտութիւնը խիստ վրդովուած էր:
 Նա ստրուկներին, հոգով ստորացած՝
 Վաղուց անողորմ թըշնամի դարձաւ,
 Եւ միշտ կռուելով ընդդէմ այս չարեաց
 Կոմսը կախուելու դատապարտուեցաւ,
 Հազիւ նա եղաւ քսան տարեկան,
 Բայց պիտի մեռնէր: Մահը չարիք չէ:
 Այլ սփոփիչ է վրշտին հոգեկան:
 Բայց մեռնել անարգ, խայտառակ մահով,
 Կախաղան ելած, ծաղր ու ծանակով,
 Դաւնալ կերակուր սև ազուաների—
 Ահա նախատինք, չարիք սուկալի:
 Առաւօտը նա մօրը գրկելով,
 Ասում էր տրտում՝ «Մայր, միան բարով,
 Ահաւասիկ ես միակ որդիդ,
 Մատաղ հասակիս դատապարտուած եմ
 Կարճ օրուայ կեանքից ես անջատուելուն:
 Անհետ պիտ կորչին ինձ հետ իմ անուն
 Եւ իմ պատիւը: Խնդրում է որդիդ,
 Մայր, որ դու փրկես քո խեղճ զաւակիդ:
 Ո՛չ պատերազմի փոթորիկներում
 Ահ չեմ զգացել, ոչ ծըխում, հրում,
 Բայց վաղուան օրը ելած կախաղան,
 Ես պիտի դողամ տերևի նրման:
 Մայրը ասում էր, մխիթարելով՝
 «Դէ՛հ չվախենաս, սիրած զաւակս,
 Ես պալատ կերթամ և աղերսելով,
 Արցունք կըթափեմ. ես իմ լացովը
 Արքայի սիրտը, գութը կը շարժեմ»:

Եւ սուսուտը, երբ կը տանեն քեզ
 Դէպի կախաղան, պատշգամբի վրան
 Թէ սե զգեստով կանգնած լինիմ ես,
 Գիտցիր, զաւակս, անխուսափելի
 Քեզ մահ կը լինի:
 Ո՛չ ասլաքէն, դու հսկայի նման
 Յառաջ պիտ զընաս մահիդ յանգիման:
 Հօքո արիւնը հունգարական է:
 Իսկ թէ սպիտակ շոր իմ վրաս տեսնես,
 Գիտացիր, որ մայրդ իր արցունքներով
 Զաւակի կեանքը դարձրեց ասպնով:
 Թող դահիճներէջ դու բռնած լինիս,
 Բայց երբէք, որդեակ, չդողաս սարսիւս:
 Կոմսը գիշերը հանգիստ է լինում,
 Եւ ամբողջ գիշերը մնում է քնած.
 Իր երագներում նա մօրն է տեսնում,
 Պատշգամբի վրայ՝ սպիտակ շոր հագած:
 Գուժկան գանգալի ձայնն է ղօղանջում,
 Վազում են մարգիկ, Հանդարտ քայլերով
 Եւ շրջապատուած պահապաններով
 Շղթայած կոմսը առաջ է Կնում:
 Քանի-քանի աչք պատուհաններով
 Արցունք են թափում կոմսի յետեից,
 Ինչքան ձգտում են կանացի ձեռքեր
 Վերջին բարեի նորան ծաղիկներ.
 Բայց կոմսը ոչինչ բան չի նրկատում,
 Դէպի հրապարակ է միայն նայում,
 Այնտեղ պատշգամբում մայրըն է կանգնած.
 Հանգիստ, անվրդով, սպիտակ շոր հագած:
 Ո՛հ, կոմսի սիրտը թընդաց խիստ ուժգին.
 Դէպի հրապարակ համարձակ քայլով
 Ընթացաւ կոմսը, ժպիտն երեսին,
 Անտրտում վերե բարձրացաւ փութով,
 Զուարթ և ուրախ դահճի մօտ զընաց
 Եւ ժինչև անգամ կախուելիս ժրպտաց:

Բայց ինչո՞ւ մայրը սպիտակ էր հագուել.
 Ո՛հ, խաբէութիւն: Այսպէս կարող էր
 Սուտ խօսել մի մայր, սոսկ բեկուած անից,
 Որ իր դաւակը չըսարսէ մահից:

Համեմատեցէք. Մայրերը և այս. Ունդարուհի մայրը, Տիրա-
 մայրը և Սուսանը. Սաքօն, Կոմսը և Քրիստոս: Ի՞նչ դադախար-
 ների են ծառայում այս հերոսները. զորն է նրանցից ամենամեծ
 հերոսը:

186. Մ Ո Ի Ր Ա Յ Կ Ա Ն

Ես անցնում էի փողոցով... Ինձ կանգնեցրեց մի ծեր,
 հալից ընկած մուրացկան: Աչքերն արասսուալից, ուռած
 ու կարմրած, շրթունքները կապտած, հաղին լաթեր, մար-
 ֆնի վրայ անմաքուր վէրքեր...

Օ՛հ, ինչ այլանդակ կերպով մաշել-կերել էր այդ ան-
 բաղդ արարածին աղքատութիւնը:

Նա ինձ պարզել էր իր կարմրած, ուռած ու կեղտե-
 րով ծածկուած ձեռքը... Նա հառաչում էր, նա խեղդուած
 ողորմութիւն էր աղերսում:

Գրպաններս սկսեցի տալն ու վրայ անել... Բան չը-
 գտայ—ոչ փող, ոչ ժամացոյց, ոչ էլ նոյն-խակ թաշկինակ...
 Հետո ոչինչ չէի տալ... Խակ մուրացկանը շարունակ սպա-
 տում էր... և նրա կարկառած ձեռքը թոյլ կերպով երեր-
 ւում ու ցնցւում էր:

Ինքս ինձ կորցրած, շփոթուած՝ ես ամուր սեղմեցի
 այդ դողդոջուն, այդ կեղտերով ծածկուած ձեռք... «Թո-
 դութիւն արա, եղբայր, ես ոչինչ չունիմ»:

Մուրացկանն իր կարմրատակած աչքերը յառեց վրաս
 Նրա կապտած շրթունքները քմ)լծաղ տուին, և նա էլ իր
 կողմից պինդ սեղմեց իմ սառած մատները:

«Է՛հ, ի՞նչ արած, եղբայր.— ծածմեց նա.— դրա հա-
 մար էլ շնորհակալ եմ, այդ էլ մի ողորմութիւն է, եղ-
 բայր»:

Ես հասկացայ, որ ինքս էլ ողորմութիւն ստացայ իմ
 հղբօրից:

Տուրգենտով

187. Ա Ղ Ա Ի Ն Ի Ն Ե Ր

Ես կանգնած էի սեսպացած բլրի գագաթին: Իմ առաջ մերթ ոսկեփայլ, մերթ արծաթափայլ շողշողում էր ծովի պէս սփռուած հաճարի հասուն արտը: Բայց այդ ծովը չէր ծփում. նրա երեսին չէին խաղում անհանգիստ ալիքներ: Օգը խեղդուկ ու անշարժ էր և գուշակում էր մի մեծ փոթորիկ:

Իմ շուրջը դեռ ջերմ ու աղօտ լոյս էր սփռում արեգակը. բայց այնտեղ, արտի այն կողմը, ոչ այնքան հեռու, մուգ-կապույտ ամպակոյտը բռնել էր երկնակամարի ամբողջ կեսը:

Ամեն ինչ շունչը կտրել... ամեն ինչ թափացել, նուազում էր արևի վերջին չարագուշակ ձառագայթներէ տակ: Չէր երևում ոչ մի թռչուն, ոչ էլ գէթ ձայն էր լսւում: Ծնճղուկներն անգամ թագ էին կացել: Միայն մի տեղ, մօտերքում, ջրածաղկի մենաւոր, խոշոր տերևը յամառ կերպով շրջուն ու շշուկ էր բարձրացնում:

Ափսինգի սաստիկ բուրմունքը բռնել էր հանդերը: Ես նայում էի կապտագոյն ամպակոյտին... և սիրտս խռուվում, նեղանում էր: Դէ, շուտ արա, մտածում էի ես. փայլեր, փայլատակիր. ո՞վ ոսկի օձ, ճայթիր, դղրդա, ո՞վ որոտ. շարժուիր, գլորուիր, երկիր թափուիր՝ ո՞վ չարադէտ ամպակոյտ, վերջ տուր այս թախծալի հեծութեանը:

Բայց ամպակոյտն անշարժ էր: Նա առաջուայ պէս ճնշում էր լուռ ու մունջ երկիրը... և միայն կարծես աւելի ուռչում, մթնանում էր:

Ահա նրա միագոյն, կապուտակ երեսին մի բան սպիտակին տալով՝ սահուն ու հաւասար սլացաւ առաջ. սլացողը կարծես մի սպիտակ թաշկինակ կամ ձիւնի բուլայ լինէր: Բայց դա մի սպիտակ աղաւնի էր, որ թռչում էր գիւղի կողմից:

Նա թռաւ, թռաւ, միևնոյն ուղղութեամբ... և սուղուեց անտառի յետեր:

Անցաւ մի քանի վայրկեան, նոյն անողոր լուսիւնը

շարունակում էր: Բայց ահա արդէն երևում են երկու թաշկինակ. ձիւնի երկու քուլա, որոնք յետ են դառնում: Դրանք երկու սպիտակ աղաւնիներ են, որոնք հաւասար թռիչքով դէպի տուն են թռչում:

Վերջապէս, փոթորիկն էլ ճայթեց—և սկսուեց տա-
րերքի աղմկայից խաղը:

Ես վազէվազ հագիւ տուն հասայ:

Քամին աղմկում, կատաղի պտոյտներ էր անում: Ցած իջած, շէկ-շէկ ամպերը, կարծես գլխորուած լարերի պէս թռչում սլանում են գլխիվայր: Շփոթ, աղմուկ—ամեն ինչ իրար խառնում, իրարով է անցնում: Անձրևի սաստիկ տարափը, օրօրուող սիւների ձև առած՝ շրջալսով թափում է գետին: Կայծակները հրականչ փայլատակումներով աչք են կուրացնում. ընդհատուող որոտը տրաքում ու դղրդում է, կարծես թնդանօթներ լինի արձակելիս: Օդում ծծմբային հոտ է փչում...

Իսկ կտուրի ծածկի տակ, երդիկի հէնց ծայրին իրար կողքի նստած են երկու աղաւնի. նստած է համ նա, որ թռել էր իր վարուժանի յետեից, համ նա, որին հետը բերել էր, և շատ կարելի է, ազատել նրան կորուստից:

Երկունն էլ մէջքերն ուռցրել են, և ամեն մէկն իր փոքրիկ թևով զգում է զրացու թևի մեղմ շփումը...

Բաղդաւոր են նրանք: Նրանց նայելով՝ ես էլ ինձ բաղդաւոր եմ զգում... թէև ես մենակ եմ... մեն մենակ, ինչպէս և միշտ:

Տուրգենև

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վահե Սարգսյան.

Գրիգոր Վանցյան. Կյանքն ու ստեղծագործական ուղին.....7

Հոդվածներ.....35

Երկու խօսք մեր ուսումնարանների եւ ուսուցիչների ապահովութեան մասին.....36

Օրէնք եւ կազմակերպութիւն.....46

Հում նիւթեր հայ համայնքի ուսումնասիրութեան.....58

Արեւորդոց խնդիրը.....75

Կեանքի ծագումը.....89

Քննական.....98

Երկու խօսք մեր գրաբարբառների միութեան մասին.....109

Նախահայերէնի հետքեր զօկերէնում.....116

Իմ քննադատներին.....120

Քաօս.....125

Լարեր.....128

Այց Լեմբերգի հայերին.....129

Արեւորդոց մասին երկու խօսք.....133

Նախահայերէնի հետքեր զօկերէնում.....138

Եւգինէ. թատերգութիւն երեք գործողութեամբ Շիրվանզադէի.....141

Ղ. Աղայանց.....151

Փիլիսոփայական գրոյցներ.....153

Խաչատուր Աբովեանի կորուստը.....170

Հայ բոշաներ.....174

Պատմական ակնարկ բոշաների անցեալից.....	202
I Բոշաների անունը.....	202
II Բոշաների ծագումը.....	205
III Բոշաների Հայաստան մտնելը եւ բնակութեան այժմեան տեղերն ու թիւը	206
IV Բոշաների քրիստոնէութիւն ընդունելը.....	211
Հայեր բոշաներից.....	223
Մատենախոսութիւններ.....	233
Գրախօսութիւններ.....	234
Լալայեանց Երւանդ «Ջաւախքի բուրմունքը».....	234
Արիստակէս Լաստիվերցի «Հայոց պատմութիւն» (թարգմ.՝ Սիմաս քահանայ Տէր-Պետրոսեանց).....	239
Ազգագրական հանդէս (Ա գիրք, 1896).....	241
Յովնանեան Վ. «Հետազոտութիւնք նախնեաց ռամկօրէնի վրայ».....	251
Եկմալեանի «Պատարագի երգեցողութեանց».....	255
Էբբերս Գ. «Մարդ եմ» (վէպ).....	256
Փափագեան Վ. «Հայ բոշաներ».....	267
Մատենախօսութիւն.....	270
Նամակներ.....	285
Նամակներ Հովհաննէս Թումանյանին.....	286
*** 16.12.1890.....	286
*** 18.02.1892.....	287
*** 08.04.1893.....	289
Նամակ խմբագրին.....	291
Բաց նամակ «Մշակ» ի խմբագրութեան.....	294

Թարգմանություններ.....	297
Գինա Ռանիյչիչ - բոշա բանաստեղծուհի. Վլիսլոցկիից.....	298
Կարմիր զատիկի գիշերը (Պատկեր В. Короленко-ից).....	311
Երազ եւ իրականություն.....	319

ԳԻՐՔ

«ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ», Թիֆլիս, 1910.....	339
Առաջաբանի տեղ.....	340

Ա. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԱԺԻՆ

1. Մեսրոպ Թաղիադեանց.....	341
2. Նամակ երեսանցիներին.....	344
3. Տիկին Սիրվարդին.....	348
4. Խաչատուր Աբովեան.....	349
Աբովեանի մանր գործերը.....	352
5. Առաջաբան.....	354
6. Հայրենի հողը.....	357
7. Երեսանի քերդը.....	358
8. Աղասու մօր նամակը.....	360
9. Աղասու կնոջ նամակը.....	361
10. Ձմեռ.....	363
11. Ամառ.....	364
12. Ջանգի.....	367
13. Էշն ու բլբլը.....	369
14. Գիծն ուսումնարանում.....	371
15. Սոխն ու սխտորը.....	374
16. Ստեփաննոս Նազարեան.....	375
17. Ս. Սահակ.....	377

18. Նոր տարուայ խորհրդածութիւն.....	378
19. Մայրենի լեզու.....	379
20. Գամառ - Քաթիպա.....	380
21. Խելք և խորամանկութիւն.....	385
22. Մայրաքաղաքում կրթուած հայ երիտասարդ.....	387
23. Մայրաքաղաքում կրթուած հայ օրիորդ.....	388
24. Վարդան Մամիկոնեանի երգը.....	389
25. Քահանայ.....	391
26. Արաքսի արտասուքը.....	392
26.* Ռափայէլի ընկերները.....	393
27. Ինձ համար չէ.....	394
28. Երգ պանդուխտ պատանեկի.....	395
29. Սիքայէլ Նալբանդեան.....	396
30. Հայաստանի պանդուխտը.....	399
31. Վահան Մամիկոնեանի պատասխանը.....	401
32. Աղբատ կին.....	402
33. Սեարոպ Թաղիադեանց.....	404
34. Ազգասէր օրագրի մասին.....	405
35. Վէրք Հայաստանու մասին.....	405
36. Երգ ազատութեան.....	407
37. Պերճ Պռօշեան.....	408
38. Չմեռ.....	410
39. Գարուն.....	412
40. Ամառ.....	415
41. Աշուն.....	416
42. Գիւղական դպրոց.....	419
43. Գաբրիէլ Սունդուկեան.....	424

44. Պէպօ.....	425
45. Դեւի երդումը.....	429
46. Սմբատ Շահագիգ.....	432
47. Երագ.....	433
48. Աշտարակ.....	433
48. Գիշեր.....	434
50. Գէորգ Բարխուդարեան.....	435
51. Չօն.....	436
52. Արծագանք.....	437
53. Բաֆֆի.....	438
54. Սի պատկեր ռուս-թուրքական պատերազմից.....	438
55. Ռշտունցի.....	446
56. Լուսատրչի տոհմը.....	447
57. Արաքս.....	449
58. Դազարոս Աղայեան.....	450
59. Արութիւնի աղօթքը.....	452
60. Չմեռն է.....	452
61. Աշուղ.....	454
62. Աշուղների մրցումը.....	455
63 . Շիրվանզադէ.....	460
64. Հրդեհը նախահանքում.....	461
65. Հոգեհաց.....	464
66. Մուրացան.....	467
67. Երկու ճամբորդ.....	468
68. Խորհրդատու միանձնուհի.....	473
69. Լէօ.....	486

70. Լէօի նշանակութիւնը.....	487
71. Թաթախման երեկոյ.....	488
72. Աստուածների բողոքը.....	494
73. Կոստանդին Սելիք- Շահնազարեանց.....	499
74. Իմ պանարամը.....	500
75. Էշը Երոսպայում եւ Կովկասում.....	506
76. Յովի. Յովհաննիսեան.....	513
77. Բանաստեղծի սէրը եւ իղձը.....	514
78. Ժայռ.....	516
79. Բանաստեղծի քունը.....	517
80. Բանաստեղծի մահը.....	518
81. Երգչին.....	518
82. Ամենայն անգամ.....	519
83. Դու ծաղկում ես.....	519
84. Դու երևեցար.....	520
85. Արագն եկաւ.....	521
86. Իմ ազգին.....	521
87. Գարուն.....	522
88. Ճեմում էի.....	523
89. Մայրս.....	523
90. Քուն եղիր, հոգեակ.....	524
91. Վարդանանց օրը.....	525
92. Ալազեազ բարձր.....	526
93. Այ վարդ-աղջիկ.....	527
94. Գարուն.....	527
95. Հատիկ.....	528

96. Երգչի անէծքը.....	529
97. Անգրագէտ.....	530
98. Մայրերը.....	531
99. Ողորմած եղէք.....	542
100. Արծիւն ու ճիճուն.....	545
101. Թէ շրջում եմ.....	546
102. Մարգարէ.....	547
103. Հրեշտակ.....	548
104. Երբ մեղմ ծփում է.....	548
105. Լօռի.....	549
106. Իգիթի սպանուիլը.....	550
107. Համերգ.....	551
108. Այվագովակու նկարի առջեւ.....	551
109. Մայրիկս.....	552
110. Գիշեր.....	553
111. Ձմեռ.....	553
112. Մաճկալ.....	554
113. Որսկան աղբեր.....	554
114 Նման գայլերի.....	555
115. Կուգե՞ս լինիմ.....	556
116. Իմ սիրտն այնտեղ է.....	556
117. Հերոսի շիրիմը.....	557
118. Թարթար.....	558
119. Լալուար սարը.....	559
120. Սար գնալը.....	560
121. Համբարձման գիշեր.....	563

Բ . ՊԱՏՄԱԿԱՆ

122. Կառավարությունը հին հայոց մէջ.....	564
123. Հողագործությունը եւ առեւտուրը հայոց մէջ.....	566
124. Մեհրութան Արծրունի եւ Սմբատ Բագրատունի.....	569
125. Աւարայրի կռիւլ.....	572
126. Ե. դարու հայ կանայք.....	579
127. Վասակի վերջին օրերը.....	582
128. Վահան Մամիկոնեան.....	583
129. Վահանի մարգալանությունը.....	586
130. Ջորոհնէքը Լեւոն թագաւորի օրով.....	588

Գ. ՃԱՄԲՈՐԴԱԿԱՆ

131. Լեհաստանի հայերը.....	590
132. Դէպի Անի.....	599
133. Կարին կամ Էրզրում.....	601
134. Հնդկաստանի հայերը.....	603
135. Սի պտոյտ Նագասակի փողոցներում.....	604

Դ. ԱԶԳԱԳՐՈՒԹԻՒՆ

136. Գնչուներ եւ հայ բօշաներ.....	614
137. Եւրոպացոց կարծիքը հայերի մասին.....	618
138. Ա.Վ. Ելիսէվի կարծիքը հայոց մասին.....	621

Ե. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀԻՄՈՒԹԻՒՆ

139. Գողթան երգեր.....	623
140. Ի Լեւոն որդի Հեթմոյ Ա.....	625

141. Ողբ ջուղայեցոց.....	625
142. Սասունցի Դաւիթ.....	626
143. Սասունցի Դաւիթի քաջագործութիւնը.....	627
144. Պանդուխտ առ կռունկն.....	633
145. Երգ շինականաց.....	634

Զ.ԱՇՈՒՂՆԵՐ

146. Քուչակ Նահապետ.....	635
147. Սիրոյ երգեր.....	635
148. Խրատական.....	636
149. Պանդուխտին.....	636
150. Սայեաթ -Նովա.....	637
151. Խրատ.....	639
152. Դուն էն գլխէն.....	639
153. Երգչի պարտաճանաչութիւնը.....	640
154. Ասում ես՝ դիմացիր.....	640
155. Սիսկին Բուրջի.....	642
156. Էջմիածին.....	644

Է. ՎԵՐԱԾՆՈՒՆԴ ԵՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԱԺԻՆ

157. Վենետիկի և Վիեննայի Միսիթարեանները.....	646
158. Դևոնդ վարդապետ Ալիշան.....	653
159. Նաւասարդի տօները.....	655
160. Սահակ կաթողիկոս.....	658

161. Պլաուլն Աւարայրի.....	662
162. Ծերենց- բժ. Յովսէփ Շիշմանեան.....	663
163. Յովնանի տեսիլքը.....	665
164. Կիլիկիոյ վիճակը ԺԱ. դարում.....	671
165. Սկրտիչ Պեշիկթաշլեան.....	673
166. Եղբայր եմք մեր.....	674
167. Գարուն.....	675
168. Յակոբ Պարոնեան.....	676
169. Մեծապատիւ մուրացկաններ.....	677
170. Գարեգին եպ. Սրուանձտեան.....	685
171. Առաւօտ.....	685
172. Իմաստուն ջուլիակը.....	687
173. Պետրոս Դուրեան.....	689
174. Տրտունջք.....	689
175. Լճակ.....	691
176. Իմ մահը.....	692
177. Արփիար Արփիարեան.....	692
178. Հին Էֆէնտին եւ նոր քահանան.....	695
179. Ամպը.....	701
180. Խունկը.....	701
181. Միօգօթիս.....	702
182. Չկնորս.....	703
183. Թուղթ բաց անող մայրը.....	705

ՌՈՒՄ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

184. Ջրահեղձը.....	708
185. Սպիտակ զգեստ.....	711
186. Մութացկան.....	713
187. Աղանիներ.....	714

ԳՐԻԳՈՐ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՎԱՆՅԱՆ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐՈՎ

I

ՀԱՏՈՐ

ГРИГОР ХАЧАТУРОВИЧ ВАНЦЯН

СОБРАНИЕ СОЧИНЕНИЙ

В ДВУХ ТОМАХ

I

ТОМ


На армянском языке
Ереван “Айастан” 2015

**Հրատ. խմբագիր՝ Վահագն Մարգարյան,
Համակարգչային մակետը՝ Տաթևիկ Գրիգորյանի
Կազմի համակարգչային ձևավորումը՝ Սոնա Մաղարյանի**

Տպագրությունը՝ «Եգեա» տպագրատան



**Ստորագրված է տպագրության՝ 07.07.2015թ.:
Ծավալը՝ 45.5 տպ. մամուլ: Չափսը՝ 60X84 1/16:
Տպաքանակը՝ 400:
Գինը՝ պայմանագրային:
«Հայաստան» հրատարակչություն. Երևան, Իսահակյան 28:**



Գր. Վանցեանի հետ կը շրջինք ո՛չ միայն
մերձաւոր անցեալին, այլ և խորագոյն
հնութեան մէջ: Իր գիրքը կրթութիւն մ'է և զբօսանք.
հաճոյական է, ինչպէս դալարագեղ դաշտի մը մէջ
հնախօսական պեղում մը:

«Բազմավէպ» 1907թ. յունիս